ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1988 – 1989

ԱՆՏԱՐԵՍ
ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 259

ASHOT SARGSYAN

THE HISTORY OF THE KARABAG MOVEMENT 1988-1989

Erevan 2018

Սրբագրիչ խմբագիր՝ **Սեդա Մեսրոպյան**

Սարգսյան Ա.
Ս 259 Ղարաբաղյան շարժման պատմություն 1988–1989/ Աշոտ Սարգսյան:– Եր.: Անտարես., 2018. – 640 էջ + 16 էջ ներդիր:

Գիրքն ամփոփում է Ղարաբաղյան շարժման՝ իր ընդգրկումով, նշանակությամբ եւ քաղաքական արդյունքներով աննախադեպ պատմաշրջանի առաջին երկու տարվա իրադարձությունները: Փաստական ու փաստաթղթային հիմքի վրա ուրվագծվում է նաեւ Հայկական ժողովրդավարական շարժման դերը՝ որպես համաշխարհային պատմության ընթացքի վրա ազդող գործոն:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ) 0

ISBN 978-9939-76-190-9

© Սարգսյան Ա., 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդային Միության դեմոկրատացումը սկսվեց հեռավոր Ղարաբաղի լեռներում
Էլեն Կարեր – դ՚ Անկոս (Ֆրանսիական ակադեմիայի նախագահ)

Կոմունիզմի փլուզումը Խորհրդային բլոկի ներսում սկսվեց ոչ թե Ռուսաստանի սրտում կամ Կենտրոնական Եւրոպայում, այլ Հայաստանում
Ջոզեֆ Լիբերման (ԱՄՆ սենատոր)

Բեռլինի պատը քանդվեց Լեռնային Ղարաբաղում
Լեւոն Տեր-Պետրոսյան

Յուրահատկություն ունի պատմաբանի գործը, երբ նա ձեռնամուխ է լինում իր շրջանի պատմության շարադրանքին: Կարող է թվալ, թե հին շրջանի համեմատ՝ դա ավելի հեշտ է, այն պարզ պատճառով, որ հեղինակը դրան ականատես է եղել, առավել եւս՝ մասնակից, աղբյուրներն առատ են ու մատչելի, կենդանի են տվյալ ժամանակահատվածի դերակատար գործիչները, որոնց կարելի է հարցնել, ճշտել իրողությունները, մանրամասները եւ այլն: Սրանք, անշուշտ, կարեւոր են: Սակայն դեռ մինչեւ վերջ չխմորված, «պատմություն չդարձած» ժամանակաշրջանի պատմությունը գրելը նաեւ դժվարություններ ունի:

Հազար, հարյուր տարի առաջվա դեպքերն ու իրադարձությունները, որ արդեն ուսումնասիրվել ու շարադրվել են պատմաբանների կողմից, առանձին հարցեր ենթարկվել են մասնավոր ուսումնասիրությունների, դրանց շուրջ առատ գրականություն է ստեղծվել, ինչ-որ տեղ միջինացվել, կանոնականացվել, համակարգվել, երբեմն՝ սրբագործվել, ու ստեղծվել է պատմության ինչ-որ մի ողնաշար: Եւ որքան էլ պատմաբանը նույն այդ շրջանի ուսումնասիրությունը կատարի նոր աղբյուրների ընդգրկմամբ, նոր հարցադրումներով, նոր դիտանկյունով, անգամ նախորդներին ժխտելով, այնուամենայնիվ, նա արդեն ունի մի առանցք, որը կարելի է նոր ուսումնասիրությամբ հաստատել, լրացնել, փոփոխել, անգամ լիովին մերժել ու կառուցել նորը, եւ բոլոր դեպքերում՝ արդեն եղածը կարեւոր ու օգտակար մի հենակետ է:

Երկրորդ դժվարությունը կապված է այսօրվա ընթերցողի հետ: Ժամանակաշրջանը, որ պատրաստվում ենք ներկայացնել, ընթացել է այսօրվա սերնդի աչքի առջեւ, շատերի ամենաակտիվ մասնակցությամբ, դերակատարմամբ, եւ ամեն մեկը մտքում ունի նույն այդ շրջանի իր սեփական ամբողջական «պատմությունը»՝ օժտված սեփական տրամաբանությամբ, սեփական համակարգվածությամբ, սեփական գնահատականներով ու եզրահանգումներով, անգամ՝ սեփական ժամանակագրությամբ: Ուստիեւ՝ ընթերցողին միշտ կարող է թվալ, թե իր օրերի պատմության ամեն մի շարադրանք ընդամենն այդ դեպքերի նույնպիսի սուբյեկտիվ մի ընկալում է ու մեկնաբանություն, ինչպիսին ունի նաեւ ինքը, եւ տարբերությունների դեպքում ընդդիմացումն ու «բանավեճն» անխուսափելի են: Մինչդեռ ընթերցողն ավելի քիչ է «վիճում» հին շրջանի պատմության հեղինակների հետ եւ ավելի շատ է վստահում դրան այն պարզ պատճառով, որ չունի ժամանակաշրջանի ընկալման՝ ականատեսի ու մասնակցի իր «սեփական տարբերակը»:

Պատմաբանի աշխատանքը ստեղծագործական պրոցես է: Դա յուրատեսակ «պայքար» է՝ մի կողմից՝ որոշակի նախնական, երբեմն՝ կանխակալ պատկերացումներով ու կանխադրույթներով «զինված» հետազոտողի, մյուս կողմից՝ օբյեկտիվ պատմությունն, այնուամենայնիվ, իր մեջ ամփոփող փաստական նյութի միջեւ: Եւ կողմերից յուրաքանչյուրն ունի իր հավակնությունները: Երբ «պեղածո», հավաքածո նյութի ծավալը նվազագույն անհրաժեշտ չափով բավարարում է ժամանակաշրջանի իրական պատկերն ու տրամաբանական կառույցը տեսնելու համար, եւ հետազոտողի հավակնություններն ու սկզբնական պատկերացումները տեղի են տալիս նյութի տրամաբանության առջեւ, երբ նրա նախապես կազմած «պլան»-ից ու պատկերացումներից քիչ բան է մնում, ուրեմն գիտական-ստեղծագործական պրոցեսը կայացել է, եւ արդյունքը քայլ է «սուբյեկտիվ» պատմությունից դեպի «օբյեկտիվը»: Այսինքն՝ ստացվում է առաջին հայացքից հակասական թվացող իրավիճակ. եթե նյութ – հետազոտող «պայքարում» հաղթում են նյութն ու նրա տրամաբանությունը – դա հետազոտող պատմաբանի հաղթանակն է, եւ նրա շարադրանքը, որպես օբյեկտիվ իրականությանն առավել մոտեցած արտացոլում, հետագայում դժվար է շրջանցել: Եթե տեղի չեն տալիս հետազոտողի ամբիցիաները, եւ նա, կա՛մ ենթակա որեւէ գաղափարախոսական հարկադրանքի, կա՛մ կաշկանդված ներքին թե արտաքին գրաքննությամբ, կա՛մ մտահոգ ստացած պատվերի կատարմամբ, այդ պայքարում ինքն է «հաղթում» նյութին՝ այն խցկելով նախապես ունեցած կամ տրված կաղապարներն ու շրջանակները – դա պատմաբանի

պարտությունն է, եւ նրա շարադրանքը դատապարտված է լուսանցքում մնալու կամ մոռացության տրվելու:

Դեպքերին ժամանակակից լինելու հանգամանքով տվյալ շրջանի պատմության իմացությունը հաճախ խաբուսիկ է, եթե նույնիսկ հետազոտողը շատ հեռու չի գտնվել իրադարձությունների խոհանոցից: Փաստերը, իրադարձությունները, անունները դեռեւս պատմություն չեն, անգամ եթե դրանք խնամքով հավաքված են ամբողջությամբ, դասավորված ճշգրիտ ժամանակագրությամբ: Խոսքը միայն փաստերի եւ իրողությունների քանակական կողմին, իրադարձությունների մանրամասներին ու դրանց պարզ իմացությանը կամ հիշելուն չի վերաբերում: Խնդիրը ցանկացած ժամանակաշրջանի իրադարձությունների ա՛յն անպայման գոյություն ունեցող ներքին տրամաբանական կապի, համակարգերի, հակադրությունների պայքարը պայմանավորող շարժիչ ուժերի ճանաչումն է, որոնք, դարձյա՛լ անպայման, դրված են տվյալ շրջանի հիմնական փաստական նյութերի մեջ, եւ խնդիրը պատմության՝ դրանցով կազմված առանցքը հայտնաբերելն ու ճանաչելն է: Վերջինս էլ, իր հերթին, արդեն օգնում է ճիշտ մեկնաբանել մնացած աղբյուրագիտական նյութը:

Պատմության ամեն մի հեղինակային շարադրանք, որքան էլ՝ սուբյեկտիվ ընկալման անխուսափելի կնիքով, կարող է եւ պետք է ձգտի մոտենալ օբյեկտիվ պատմությանը, ինչը եւ ընդունված է բնորոշել որպես **գիտական պատմություն**: Եւ յուրաքանչյուր պատմաբանի գիտակցված կամ չգիտակցված նպատակն է՝ համոզել ընթերցողին, որ իր շարադրածն անցյալի օբյեկտիվ արտացոլումն է ու մեկնաբանությունը: Դրան հասնելու համար ուսումնասիրողի լավագույն օգնականը, դաշնակիցն ու երաշխիքը փաստաթղթերն են: Դրանց ապավինելով է, որ կարող են պարզվել ժամանակի պատմության շարժիչն ու շարժիչ ուժերը, համակարգը, ներքին տրամաբանությունը, տեսնել, գտնել այն առանցքը, որը եւ հասկանալի ու բացատրելի է դարձնում ժամանակի քաղաքական իրադարձություններն ու իրողությունները:

* * *

Մի կողմ թողնելով Հայոց պատմության ավելի հին շրջանները՝ 1988 թվականից, Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժմամբ, սկսվում է տասնամյա մի շրջան, որից ժամանակագրորեն ներքեւ՝ Հայաստանում՝ կոմունիստական, Սփյուռքում՝ հայդատական գաղափարախոսությունների տիրապետությունն է, ժամանակագրորեն վերեւ՝ գործնական քաղաքականության հիմքում հայդատականությունն է՝ թե՛ Սփյուռքում,

թե՛ Հայաստանում: **Քաղաքական տեսանկյունից՝ տասնամյա այդ շրջանը, իրեն բնորոշ հատկանիշներով, նախորդ եւ հաջորդ շրջաններից որակապես կտրուկ տարբերվող մի «պատուհան» է՝** վերջին, առնվազն մեկուկես դարի Հայոց պատմության մեջ: Այդ հատկանիշներն են.

ա) Գործնական քաղաքականության հիմքում դրված չէր միակը լինելուն հավակնող, կրոնական հավատալիքի մակարդակի բարձրացված որեւէ գաղափարախոսություն՝ հավակնելով «համաշխարհայինի» (ինչպես կոմունիստականը) կամ «ազգայինի» (ինչպես հայդատականություն-պահանջատիրությունը):

բ) Իրագործվում էր մի ծրագիր, որը կազմված էր ոչ թե դրսում (ինչպես միշտ), այլ Հայաստանում՝ նկատի ունենալով Հայաստանի (եւ Լեռնային Ղարաբաղի) ռեսուրսներն ու հնարավորությունները:

գ) Իրադարձությունների պատասխանատվությունը ստանձնած ու պայքարը ղեկավարող ուժը մերժում էր ազգայնականությունը եւ քաղաքական ավանտյուրիզմը, հենվում ժողովրդավարական նորմերի վրա, առաջնորդվում էր հանրահայտ ու իրական քաղաքական կատեգորիաներով, իրատեսական քաղաքական մտածողությամբ, հաշվարկված գործելակերպով:

Նույն այս տասնամյակը Հայոց պատմության ժամանակային ավելի լայն կոնտեքստում որակապես առանձնանում է նաեւ իր գրանցած **քաղաքական տարողությամբ եւ արդյունքներով**.

ա) Հայոց պատմության մեջ դժվար է գտնել այդչափ զանգվածային համաժողովրդական քաղաքական ակտիվության, ընդգրկումի, համաժողովրդական նվիրումի եւ անհատական մակարդակով, փաստորեն, ողջ ժողովրդի պատմական դերակատարման համեմատելի այլ մի շրջան:

բ) Հազարամյակների խորքը չիջնելով (նաեւ նկատի ունենալով պատմության որոշ դրվագների բնական լեգենդացումը), դժվար է Հայոց պատմության մեջ գտնել այլ մի տասնամյակ՝ այդօրինակ քաղաքական արդյունքներով՝ ի դեմս անկախության ձեռքբերման ու պետականության կայացման, ռազմական հաղթանակների, Լեռնային Ղարաբաղի ազատագրման:

գ) Թերեւս, ավելի քան երկու հազար տարի ետ պետք է գնալ՝ գտնելու համար այլ մի շրջան, երբ **Հայաստանը, որպես քաղաքական գործոն, ազդել է համաշխարհային պատմության ընթացքի վրա**՝ պատվաբեր մի դերակատարում, որ կարող էր զարդարել ցանկացած ժողովրդի պատմություն՝ դառնալով նաեւ նրա յուրատեսակ այցեքարտը ժամանակակից աշխարհում:

Սույն հատորը ընդգրկում է Հայաստանի պատմության մեջ բացառիկ այս տասնամյակի առաջին երկու տարիները:

Պատմագիտության միջավայրը

Հայաստանի նորագույն պատմության այս շրջանը, բնականաբար, արդեն դարձել է պատմագիտական ուսումնասիրությունների առարկա, որը, սակայն, ոչ միայն շատ հեռու է տասնամյա հիշյալ պատմաշրջանի իրական պատկերից, այլեւ երբեմն դրա հակապատկերն է:

Կարճառոտ՝ դրա վրա ազդած մի շարք գործոնների եւ օբյեկտիվ իրողությունների մասին:

Գաղափարախոսականացված խորհրդային համակարգը տարբեր բնագավառների, առաջիններից մեկը՝ պատմագիտության համար էր շրջանակներ գծել եւ կաղապարներ հաստատել: Հմուտ պատմաբան, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի՝ այդ փաստի դիպուկ արձանագրումը բանալի է՝ հասկանալու համար այս բնագավառում նաեւ ետխորհրդային տարիների իրողությունները. «**Իշխող քաղաքական դոկտրինայի թույնը**, հոսելով հին պատմությունից դեպի նորը, հետզհետե ուժեղանում էր, իսկ հասնելով նորագույնին, պարզապես կազմալուծում այն: Բայց միայն սա չէր դրա վտանգը: Այն իր օրինակով սովորեցնում էր բոլոր պատմաշրջաններին մերձեցողներին **պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիությունը...** »[1]:

Խորհրդային հասարակարգի անկմամբ վերացավ «քաղաքական դոկտրինայի թույնը», շրջանակների ու կաղապարների պարտադրանքը, ըստ այդմ՝ վերացավ նաեւ պատմագիտության մեջ «պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիությունը» կամ անհրաժեշտությունը: Գաղափարախոսականացված համակարգի դեմ հաղթանակ տարած, հետկոմունիստական նոր ժողովրդավարական իշխանությունը, ինքը դեմ լինելով ամեն տեսակ գաղափարախոսական պարտադրանքի, բնականաբար, որեւէ «պատվեր» չտվեց ու շրջանակներ չգծեց ստեղծագործական որեւէ բնագավառի, նաեւ պատմագիտության համար:

Ազատություն ստացած պատմաբանը կարող էր լիուլի տրվել գիտական-ստեղծագործական պրոցեսի՝ որպես միակ կողմնորոշիչ ունենալով պատմական նյութի ու փաստերի տրամաբանության թելադրանքը: Ոմանց համար դա, իրոք, ցանկալի վիճակ եւ լիարժեք ազատ ստեղծագործական

---

[1] *«Հայաստանի Հանրապետություն», 14.08 – 15.08.1992:*

հնարավորություն էր առաջին իսկ պահից: Սակայն, ի սկզբանե մասնագիտորեն ձեւավորված լինելով որոշակի պայմաններում եւ վարժված աշխատանքի որոշակի մեթոդի՝ ուրիշների համար նախապես տրված գաղափարախոսական գիծը, շրջանակներն ու կաղապարները ժամանակային տեւականության մեջ դարձել էին բնական ու բարեհարմար «ստեղծագործական» միջավայր: Այդ դեպքում որոշակիորեն տրված գաղափարախոսական շրջանակներն ու կաղապարները «Արիադնայի թելի» նման ուղղորդում են հետազոտողին նյութերի ցանկացած լաբիրինթոսից, իսկ **«պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիությունը»** ցանկացած «թեմայի կատարում» հնարավոր ու դյուրին են դարձնում, պատվերի պայմաններում՝ նաեւ շահավետ:

Հայ պատմագիտությունն, անշուշտ, ամբողջությամբ կհարմարվեր ազատ գործելու պայմաններին, եթե չունենար «գայթակղիչ» այլընտրանք: Մեզանում, թերեւս, ի տարբերություն ետխորհրդային շատ ժողովուրդների, գոյություն ուներ խորհրդային-կոմունիստականին հակադիր, նրան մրցակից, բայց էությամբ նույնական մեկ այլ գաղափարախոսական բեւեռ՝ սեփական կաղապարներով, սեփական «քաղաքական դոկտրինայի թույնով», պատմաբանին հանձնարարվող նույնպիսի շրջանակներով եւ «պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիության» ինդուլգենցիայով: Դա կրոնական հավատալիքի աստիճանի բարձրացված Հայ դատ-պահանջատիրությունն էր՝ իր չափորոշիչներով ստեղծված սփյուռքահայ պատմագրությամբ: Բնական էր, որ պատմաբանների մի մասը, ազատ ընտրության մեջ, տրվելով մի կողմից՝ հարմարավետության վերոհիշյալ գայթակղությանը, մյուս կողմից՝ պատվեր ունենալու հույսին՝ պիտի մտնեին նոր «քաղաքական դոկտրինի» հովանոցի տակ[2], մանավանդ, որ վերջինս, ի տարբերություն իր նախկին մրցակցի՝ «ինտերնացիոնալիզմին», ավանդական «ազգային-հայրենասիրական» ընկալումների պաճուճանք ուներ: Մյուս կողմից՝ ինքը հայդատականությունը ակտիվորեն զբաղվեց թափուր մնացած «սուրբ տեղը» զբաղեցնելու գործով: Իսկ 1998-ից հետո, դրվելով պետական քաղաքականության հիմքում, հայ-դատ-պահանջատիրությունը, ըստ էության, ամբողջությամբ ստացավ պարտադրող նույն դերը, ինչ խորհրդային-կոմունիստականը՝ ամբողջ յոթ տասնամյակ:

---

[2] *Հատկանշական է, որ այդ շրջադարձն առաջինը արեցին հենց խորհրդային-կոմունիստական գաղափարախոսության դիրքերից հայդատականությունը եւ այն դավանող ուժերին քննադատող կարկառուն դեմքերը:*

Հայկական ժողովրդավարական շարժումը, ապա նրա իշխանությունն իր քաղաքական էությամբ եւ արժեհամակարգով որքան հակապատկերն էր խորհրդային-կոմունիստականի, նույն կերպ տրամագծորեն հակադրվում եւ մերժում էր հայդատականություն-պահանջատիրությունը:

Բնական է, որ Հայկական ժողովրդավարական շարժման, ապա նրա իշխանության տարիները չէին կարող օբյեկտիվ ուսումնասիրության նյութ լինել, մի կողմից՝ դեռ չավարտված կոմունիստական, մյուս կողմից՝ արդեն հաստատվող, ապա իշխանական դարձած հայդատական գաղափարախոսական թելադրանքի տակ հայտնված պատմագիտության համար, անշուշտ, չհաշված բացառությունները: Եւ դրա հիմքերը մաքուր քաղաքական են. Հայկական ժողովրդավարական շարժման շրջանի օբյեկտիվ ներկայացումը, որպես համեմատության եզր եւ քաղաքական երեւույթ, հերքումն ու բացառումն է հավասարապես թե՛ մեկի, թե՛ մյուսի:

Ժամանակաշրջանի սկզբնաղբյուրները

Սովորաբար՝ հստակ տարանջատվում են պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներն ու գրականությունը: Ժամանակակից պատմության դեպքում այդ տարանջատումը միշտ չէ, որ շատ հստակ է: Դեպքերին ու իրադարձություններին զուգահեռ ստեղծված շատ բան, որոնք ժանրային առումով վերլուծությունների, թերթային հոդվածների, ընդհուպ գիտական ուսումնասիրությունների տեսք ունեն, հաճախ ավելի արժեքավոր կամ խոսուն են ոչ թե որպես այդպիսին, այլ որպես հենց այդ շրջանը, նրա իրողությունները ներկայացնող փաստաթղթեր: Որպես փաստաթղթերի ենք նայել ժամանակի մամուլը, Շարժման տարիներին ոչ տպարանային միջոցներով հրապարակվող զանազան նյութեր, թերթեր, պարբերականներ, բրոշյուրներ եւ այլն: Սկզբնաղբյուրների մեջ ամենակարեւորն ու առաջնայինն, անշուշտ, արխիվային փաստաթղթերն են: Դրանք, ըստ ծագման, կարելի է բաժանել երկու մասի:

ա) Շարժման փաստաթղթեր. Սրանք, առաջին հերթին, «Ղարաբաղ» կոմիտեի թռուցիկներն են, նրա կողմից կազմված ու տարածված զանազան գրությունները: Իսկ ընդհանրապես, բազմաքանակ ու բազմազան է Շարժման գործունեության տարիներին առաջացած «փաստաթղթային արտադրանքը»: Դրանք անհատներից ու հիմնարկներից բազմաքանակ նամակներ ու հեռագրեր են՝ իշխանության ամենատարբեր մարմինների հասցեներով, հայտնի ու քիչ հայտնի մարդկանց հարյուրավոր «բաց նամակներ» են,

աշխատավորական կոլեկտիվների կայացրած՝ գործադուլների որոշումներ, պատգամավորներին տրված պատվիրաններ, Լեռնային Ղարաբաղի եւ այլ խնդիրների մասին քարոզչական բազմազան նյութեր, բազմաբնույթ մասնագիտական վերլուծություններ, իշխանական մամուլում տպագրված հոդվածների ու հեռուստատեսային հաղորդումների առիթով ձեռագիր տարածված այլազան արձագանքներ ու պատասխաններ, զանազան պաշտոնյաների ելույթների արձագանքներ, դեպքերի՝ հընթացս կազմված ժամանակագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ եւ այլն: Այս փաստաթղթերի լեզուն հավասարապես հայերենն ու ռուսերենն է, քանի որ դրանք նախատեսված էին ոչ միայն եւ ոչ այնքան հայկական լսարանի, որքան հանրապետության սահմաններից դուրս տարածելու համար: Դրանց մեջ են նաեւ Ղարաբաղյան շարժման հետ կապված բազմաթիվ արձագանքներ՝ ստացված Խորհրդային Միության առաջադեմ գործիչներից, հայտնի մտավորականներից, զանազան կոլեկտիվներից եւ այլն: Կան Շարժման հետ կապված պաշտոնական արձագանքներ՝ որոշումներ, բանաձեւեր, հոդվածներ, նամակներ եւ այլն՝ ինչպես միջազգային կազմակերպությունների, անհատների, այնպես էլ առանձին երկրների իշխանությունների կամ պաշտոնյաների կողմից[3]:

Առաջնային սկզբնաղբյուրների նշանակություն ունեն Շարժման ղեկավար մարմնի՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամների, ինչպես նաեւ առաջին չորս ամիսներին Շարժման ղեկավարներից հեղինակած գրավոր փաստաթղթերը՝ ելույթներ, հոդվածներ, թռուցիկներ, հուշագրություններ եւ այլն[4]: Պատճենահանման եղանակով նման փաստաթղթերի

[3] *Այսօրինակ եւ այդ տարիների այլ փաստաթղթերի լավագույն հավաքածուն խնամքով հավաքված ամփոփված է Հայաստանի Հանրապետության Առաջին Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հարուստ արխիվում (այսուհետ՝ ՀՀԱՆԱ), որի մշակման շուրջ 6 տարվա աշխատանքները լավագույն հնարավորությունն էին այդ նյութերից առատորեն օգտվելու համար: Հավելվածը կազմելու համար օգտվել ենք Հայոց համազգային շարժման (այժմ Հայ ազգային կոնգրես) ընթացիկ արխիվից:*

[4] *Բազմաթիվ են Լեւոն Տեր-Պետրոսյանի հեղինակած գրավոր նյութերը, որոնց փոքր մի մասը հրապարակվել է ստվար ժողովածուով (**Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երեւան 2006): Հիշողությունների մի հատոր է հրապարակել Ռաֆայել Ղազարյանը (**Ղազարյան Ռ.**, Հաշվետու եմ, Երեւան, 2003): Հավաքվել եւ հրապարակվել են Համբարձում Գալստյանի կազմած թռուցիկները, նամակները, հուշագրության բնույթի նյութերը (**Գալստյան Հ.**, Ցուղարկված նամակներ, Երեւան, 2013): Ալեքսան Հակոբյանը մի հարցազրույց է տվել «Ղարաբաղ» կոմիտեի աշխատանքային խոհանոցի մասին (**Հակոբյան Ա.**, հարցազրույց hambardzum.am կայքին, 11.09.2015թ.): Շարժման առաջին ամիսների իրադարձությունների մասին կարեւոր տեղեկություններ կան Միլվա Կապուտիկյանի հուշերում (**Կապուտիկյան Մ.**, էջեր փակ գզրոցներից, Երեւան, 1997), Ջորի Բալայանի հուշագրական բնույթի մի հոդվածում **Ջ. Բալայան**, Աստծո դատաստանը, «Ավանգարդ», 11.02.1990: Մի քանի հոդված ընդգրկող փոքր մի ժողովածու է հրապարակել Վազգեն Մանուկյանը (**Մանուկյան Վ.** Գնացքից թռչելու ժամանակն է, Երեւան, 2002):*

ժողովածուներ են կազմվել դեռ 1988թ. առաջին ամիսներից, որոնք չեն հրապարակվել[5]: Ավելի ուշ Շարժման շրջանի փաստաթղթերից հրապարակումներ են եղել առանձին ժողովածուների տեսքով[6]: Այլ առիթներով հետագայում հրապարակվել են այլ փաստաթղթեր: Շարժման փաստաթղթերի մի ժողովածու անգլերեն թարգմանությամբ հրապարակել է Ժիրայր Լիպարիտյանը[7]:

բ) Իշխանական կամ «գաղտնի» փաստաթղթեր. Կարեւորագույն սկզբնաղբյուր են հազարավոր այն փաստաթղթերը, որ այս տարիներին ստեղծվել են իշխանական տարբեր մարմիններում, որպես ներքին գրագրություն, ոչ հրապարակման համար, եւ անմիջապես կապված են Շարժման հետ: Ի տարբերություն Շարժման փաստաթղթերի, որ, բնականաբար, ստեղծման պահից բաց են եղել՝ նախատեսված հենց տարածվելու եւ որպես քարոզչանյութ աշխատելու համար, սրանք, համարյա ամբողջությամբ, կրել են «գաղտնի», «հույժ գաղտնի» գրիֆները: Դրանք ՀԿԿ ԿԿ-ում ստացված զեկուցագրեր են ՊԱԿ-ից, ՆԳՆ-ից, հանրապետության դատախազությունից, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեից, Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից, կոմկուսի շրջանային կազմակերպությունների ղեկավարներից, զանազան այլ պաշտոնյաներից, երբեմն՝ Սփյուռքում գործող կազմակերպություններից: Այստեղ կան նաեւ Մոսկվա ուղարկված եւ այնտեղից ստացված փակ փաստաթղթեր: Եթե ՊԱԿ-ից ստացված փաստաթղթերը, որպես կանոն, վերլուծություններ եւ տեղեկատվություն են, նաեւ առաջարկներ, ապա ՆԳ նախարարությունից ԿԿ ուղարկված փաստաթղթերը օպերատիվ զեկուցագրեր են, երբեմն

[5] *Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալության առիթով, գրքի տեսքով, սահմանափակ տիրաժով, ոչ տպարանային եղանակով մի հրապարակում է իրականացրել Մովսես Գեորգիսյանը՝ ի մի հավաքելով 1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Ղարաբաղ» կոմիտեի թռուցիկները, ձերբակալվածների կենսագրությունները եւ մի քանի այլ նյութեր (**Գեորգիսյան**, Մեղադրվում են, Երեւան, 1989):*

[6] *Առաջիններից մեկը՝ Правда о Нагорном Карабахе, составители В.А. Товмасян, Ю.Б. Нерсисян, Степанакерт,1989.*

[7] ***Gerard J. Libaridian** (Editor). Armenia at the Crossroads, Natertown, Massachusetts, 1991.*

«հուշագրություն» վերնագրով՝ հանրահավաքներում հնչած ելույթների անոտացիաներով կամ ընդարձակ սղագրություններով[8]: Սրանց լեզուն, չնչին բացառություններով, ռուսերենն է: Որոշ փաստաթղթեր մեզ մատչելի են դարձել նաեւ Մոսկվայի արխիվներից[9]:

Այս փաստաթղթերից հրապարակումներ են եղել 90-ականների մամուլում: Առաջիններից մեկը, ընդարձակ մեջբերումներով, դրանցից օգտվել է Վլադիմիր Գրիգորյանը[10]: Սփյուռքին վերաբերող փաստաթղթերը խնամքով հավաքել եւ հրապարակել է Գեւորգ Յազըճյանը[11]: ՀԽՍՀ ԱԳ նախարարության տեղեկանքները ի մի է հավաքել եւ հրապարակել Էդգար Հովհաննիսյանը[12] եւ այլն:

գ) Պաշտոնական բաց փաստաթղթեր. Կարեւոր աղբյուր են պաշտոնական, հրապարակված փաստաթղթերը: Նկատի ունենք Հայաստանի, ԽՍՀՄ, Ռուսաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի իշխանության օրենսդիր մարմինների ընդունած որոշումները, որոնք ենթակա էին մամուլում եւ համապատասխան պաշտոնական «Տեղեկագրերում» պարբերական հրապարակման: Այս շարքում պետք է ավելացնել զանազան բարձրաստիճան պաշտոնյաների, տարբեր համագումարներում, գերագույն խորհուրդների նստաշրջաններում, կուսակցական կոնֆերանսներում արտասանած ճառերը, ելույթները, երբեմն՝ հոդվածներն ու հարցազրույցները եւ այլն:

Սփյուռքի, մասնավորապես այդտեղ գործող կուսակցությունների պաշտոնական դիրքորոշումները արտահայտող փաստաթղթեր եւ այլ նյութեր կան նրանց մամուլում: Ռամկավար ազատական կուսակցության նմանօրինակ նյութերը հավաքված եւ հրապարակված են առանձին մի ժողովածուով[13], Դաշնակցական կուսակցությանը վերաբերող նյութերին ծանոթ ենք հիմնականում ՀՅԴ բյուրոյի կենտրոնական օրգան «Դրոշակից»:

---

8 *Այսօրինակ փաստաթղթերը պահվում են Հայաստանի Ազգային արխիվում (ՀԱԱ):*

9 *Մի կարճ ժամանակ աշխատելու հնարավորություն ենք ունեցել Մոսկվայի «Ժամանակակից փաստաթղթերի պահման կենտրոնում» (ЦХСД):*

10 ***Григорян В.** Армения 1988-1989, Ереван, 1999.*

11 ***Յազըճյան Գ.**, Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթղթերու մեջ (1945-1991), Երեւան, 2016:*

12 ***Հովհաննիսյան Է.**, Սփյուռքահայ համայնքների եւ օտարերկրյա լրատվամիջոցների դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման նկատմամբ (ՀԽՍՀ ԱԳ նախարարության տեղեկանքների հրապարակում), Բանբեր Հայաստանի արխիվների, 2013, էջ 126-151):*

13 *ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմէջէն (1988-1991), կազմեց **Եղիա Գայայեան**, Նիկոսիա, 2003:*

դ) Ժամանակի մամուլը. Բնականաբար, պարտադիր է ժամանակի մամուլի նյութերին հետեւելը: Պաշտոնական մամուլը 1988-89թթ. համար որոշակի նյութեր է պարունակում ինչպես իրադարձությունների ժամանակագրությունը ճշտելու, կոմունիստական իշխանությունների պաշտոնական դիրքորոշումներն արձանագրելու, նրա ու նրան ծառայող ու պաշտպանող ուժերի՝ Շարժման դեմ քարոզչության բնույթը պարզելու եւ այլազան հարցերի ուսումնասիրման համար: Երբեմն խոսուն են ոչ միայն Շարժման հետ կապված նյութերը, այլ նաեւ դրանց տեւական բացակայությունը: Խստագույն գրաքննության տակ գտնվելով՝ այս տարիներին մամուլը անմատչելի էր Շարժման մասնակիցներին ու գործիչներին[14]: Եթե որեւէ մեկը փորձի շարադրել այս տարիների պատմությունը միայն պաշտոնական մամուլի նյութերի հիման վրա, ապա բավականին տարօրինակ եւ հակասական մի պատկեր կստացվի: Կստացվի, որ Ղարաբաղյան շարժումը, մեկ՝ խաթարում է ժողովուրդների բարեկամությունը եւ ազգայնականների ու ծայրահեղականների գործ է, մեկ՝ որ այն հետամուտ է հայ ժողովրդի բարձրացրած ամենաարդարացի հարցին: Չի հասկացվի՝ Շարժումը ղեկավարել են Հայաստանի իշխանությունները՞, թե՞, այնուամենայնիվ, այն ունեցել է իր ղեկավարությունը: «Ղարաբաղ» կոմիտեն մերթ կներկայանա «այսպես կոչված» պարտադիր բնորոշմամբ՝ որպես արկածախնդիրների ու կաշառակերների հովանավորող հանցավոր մի կազմակերպություն, մերթ՝ քաղաքական մեծ կշռով ու հեղինակությամբ օժտված մարմին: Այլ խոսքով՝ այս շրջանի մամուլի նյութերը որպես աղբյուր կարող են օգտակար լինել միայն այն դեպքում, երբ այլ աղբյուրների հիման վրա արդեն պարզված ու ճշտված են հիմնական իրադարձությունների առանցքը եւ ամբողջական պատկերը:

Գիտական գրականությունը

«Պատմագիտության միջավայրը» վերնագրի տակ վերեւում ասվածը մասնավորեցնելով՝ պետք է անել մի քանի արձանագրումներ.

ա) Շարժման եւ հետագա տարիների մասին եղել են նաեւ օբյեկտիվ մասնագիտական ուսումնասիրություններ՝ զերծ ամեն տեսակ նախատրամադրվածությունից, գաղափարախոսական եւ այլ կարգի շրջանակներից[15]:

---

14 *Չնայած գործադրած ջանքերին՝ Շարժումն իր բազմատիրաժ թերթը («Հայք») ունենալու իրավունք ստացավ միայն 1990 թվականի սկզբին:*

15 *Օրինակ՝ **Խոջաբեկյան Վ.**, Արցախը փորձության ժամին, Երեւան, 1991, **Ազիզբեկյան Ռ.**, Հայաստանը վերակառուցումից մինչեւ անկախություն, Երեւան, 1992,*

Ստեղծվել են տարեգրության բնույթի օգտակար աշխատանքներ[16]: Հրապարակվել են փաստաթղթերի օգտակար ժողովածուներ[17]:

բ) Պատմական գիտությունը, ընդհանուր առմամբ, շատ հեռու է Ղարաբաղյան շարժման ու դրանով սկսվող տասնամյակի պատմությունը շատ թե քիչ օբյեկտիվ ներկայացնելուց: Դրա հետեւանքով է նաեւ, որ Հայաստանը, որպես քաղաքական գործոն, որպես դերակատար, հանիրավի դուրս է մնացել այդ տարիների համաշխարհային պատմությունից[18]: Մինչդեռ իր ժամանակին արդեն իսկ ուրիշների կողմից արձանագրված այդ իրողության, Հայկական ժողովրդավարական շարժման դերի հիմնավորումը եւ վերջնական արձանագրումը պետք է լիներ հայ պատմագիտության առաջնային խնդիրը:

գ) Խնդրո առարկա տարիների պատմությունը, քաղաքական նկատառումներով, գիտակցված ու նպատակադիր ուրացվել, կեղծվել ու խեղաթյուրվել է (ինչի օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հիմնական պատճառներն ու հիմքերը ներկայացրինք վերեւում):

* * *

Մենք կներկայացնենք փաստաթղթերով ու փաստերով հաստատագրված եղելությունների շարադրանքը՝ ձեռնպահ մնալով տարբեր աշխատություններում իրողությունների ուրացումների, կեղծումների ու եղծումների[19] հիշատակումից ու «բանավեճից»: Կատարվածի մասին ընթերցողին պատկերացում տալու համար, սակայն, որպես նմուշ, ներկայացնենք միայն հետեւյալ փաստը:

Ոչ թե ենթադրելի կամ տրամաբանական, այլ, ըստ էության, պարտադիր է, որ բուհական պատմության դասագիրքը[20], ինչով հարյուրհազարավոր սովորողների Հայոց պատմություն է մատուցվում որպես վերջնական ճշմարտություն, պետք է հենված լիներ այդ պահի գիտական միջավայրում քաղաքացիություն ստացած արդյունքի, ինչպես ասում են՝ «գիտության նվաճումների» վրա: 2012թ. հրապարակված բուհական դասագրքում այս տարիների համար շատ ավելին է «**իշխող քաղաքական դոկտրինայի թույնի**» չափաբաժինը, եւ առավել զգալի՝ «**պատմական փաստերի աղավաղման, նենգափոխման թույլատրելիության**» աստիճանը, քան, թերեւս, գաղափարախոսականացված նախորդ՝ կոմունիստական պատմագրությունում որեւէ պատմաշրջանի համար[21]:

Այստեղ տանք այս պնդումը հաստատող բազմաթիվ փաստերից միայն մեկ նմուշ: Դասագրքի՝ Համաժողովրդական շարժման տարիներն ամփոփող՝ ավելի քան 30 էջ շարադրանքում, որպես իրադարձությունների դերակատար հիշատակված շուրջ յոթ տասնյակ անունների մեջ բացակայում է նույն այդ շարժման լոկոմոտիվը, շարժիչը, իրադարձությունների թիվ մեկ

Григорян В. Армения 1988-1989, Ереван, 1999, Սփյուռքում ***Մելիք-Հակոբյան Ս.****, Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը եւ դաշնակցությունը, Երեւան, 1995,* ***Մարության Հ.****, Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1998-1990) հիմնական առանձնահատկությունները (տե՛ս* ***Գալստյան Հ.****, Ջուղարկված նամակներ, Երեւան, 2013, էջ 9-17),* ***Լիպարիտյան Ժ.****, Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երեւան, 1999: Տե՛ս նաեւ հետեւյալ օտարալեզու գրքերը.* ***P. R. Merzcier****, Aspects des luttes sociales en URSS. – Le mouvement democratique des Arméniens. – Les Balts et la question de l' état de droit, Paris, 1989;* ***Pierre Verluise****, Arménie, La fracture, Éditions Stock, 1989;* ***Joseph R. Masih, Robert O. Krikorian****, Armenia at Crossroads, Harwood academic publishers, Amsterdam, 1991;* ***Shireen T. Hunter****, The Transcaucasus in Transition. Nation – Building and Conflict, Washington D.C., 1994.*

16 *Օրինակ՝* ***Արտյունյան Վ.****, Событие в Нагорном Карабахе (հինգ հատորով, խնամքով կազմված, վստահելի այս ժողովածուն օր օրի ամփոփում է Լեռնային Ղարաբաղին վերաբերող այլազան նյութեր, հրապարակումներ, իրադարձություններ եւ այլն՝ ընդգրկելով 1988-1995 թվականները):*

17 *Կարեւոր է «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» ժողովածուն, Երեւան, 2011 (կազմողներ՝ Հրանտ Աբրահամյան, Կարեն Խաչատրյան: Նույն հեղինակների կազմած երկրորդ ժողովածուն Շարժման շրջանի փաստաթղթեր են («Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Երեւան, 2014):*

18 *Տե՛ս* ***Մարության Հ.****, Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1998-1990) հիմնական առանձնահատկությունները (տե՛ս* ***Գալստյան Հ.****, Ջուղարկված նամակներ, Երեւան, 2013, էջ 9:*

19 *Նման բաներ արվել են դեռ 90-ական թվականներին՝ նրանց կողմից, ովքեր անձնական անբավարարություն են ունեցել Շարժման ղեկավարությունից եւ նոր իշխանությունից: Ցայտուն մի օրինակ է Բագրատ Ուլուբաբյանի մի աշխատությունը (Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997):*

20 *Հայոց պատմություն, դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբագրությամբ Հր. Ռ. Սիմոնյանի, Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 2012:*

21 *Խնդրո առարկա տասնամյա պատմաշրջանի իրողությունների ուրացումների ու կեղծումների ամբողջական պատկերը տե՛ս* ***Մարգսյան Ա.****, Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998թթ.), Երեւան, 2015:*

դերակատարը, այս պայքարի անսակարկելի ու բացառիկ հեղինակություն ունեցող ղեկավարը՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն՝ իր տասնմեկ անդամներով[22]: Եւ եթե, մի կողմից՝ նկատի ունենանք այն փաստը, որ սույն դասագրքի ստեղծմանը մասնակից է դարձել շուրջ մեկուկես տասնյակ պատմաբան-գիտնական, հրատարակության է երաշխավորել ԵՊՀ Հայոց պատմության մասնագիտական ամբիոնը, իսկ հրապարակումից հետո այլ պատմաբանների կողմից չի եղել որեւէ դիտողություն, առարկություն, ուստի ցավով պետք է համարել, որ, ըստ էության, գործ ունեք պատմագիտության բնագավառում առկա լուռ «կոնսենսուսի» հետ[23]: Պատմագիտության մեջ նույն այդ «կոնսենսուսի» արդյունքն է, որ այդ տարիների մեր պատմությունը նսեմացվել է, Հայաստանը դուրս է մնացել այդ տարիների համաշխարհային պատմությունից որպես վերջինիս ակտիվ դերակատար ու նրա ընթացքի վրա ազդած կարեւոր գործոն:

Շարժման տարիների իրողությունները եղել են նաեւ քաղաքական, հրապարակախոսական հոդվածների օբյեկտիվ վերլուծության առարկա: Սակայն, զուտ քաղաքական նկատառումներով, շատ ավելի մեծ ծավալով ու անսեթեւեթ կեղծվել ու եղծվել են Շարժանը, ապա նրա իշխանությանն ընդդիմադիր ուժերի ու լրատվամիջոցների հարյուրավոր, եթե ոչ հազարավոր, ելույթներում ու հոդվածներում, իսկ 1998-ից ի վեր՝ նաեւ ռադիո եւ հեռուստատեսային ամենօրյա հաղորդումներում: Հենց դրա շնորհիվ են հասարակության մեջ պատերազմի ու փառահեղ հաղթանակների տարիները դարձել «ցրտի ու մթի տարիներ», տարածվել՝ ատոմակայանն ու «Նաիրիտը» փակելու, դրսի շինարարներին աղետի գոտուց քշելու, «հոսանքը հողանցելու», «մազութը լափելու» եւ տասնյակ այլ մեղադրանքներ ու անհեթեթություններ[24]:

---

22 *Ավելի ճշգրիտ՝ մի անգամ Կոմիտեն հիշատակվում է բացասական կոնտեքստում, եւ արձանագրվում են նրանց ձերբակալման ու ազատման փաստերը:*

23 *Այսօրինակ գրականությունը, նույն «ուղեգծով» զանազան քաղաքական ու մերձքաղաքական, հրապարակախոսական եւ այլ նյութերի հետ միասին, հետագայում օգտակար նյութ կհանդիսանա հասարակական որոշ խավերի հոգեբանության, քաղաքական կյանքի վրա գաղափարախոսությունների ներգործության եւ այլ ուսումնասիրությունների համար:*

24 *Վերջերս, Շարժման 30-ամյակի առիթով, նաեւ «ոչ ՀՀՇ-ական» մամուլում տպագրվում է իրողություններն օբյեկտիվ ներկայացնող հոդվածաշար «88-ի շարժում–30» խորագրով (տե՛ս Սարգիս Արծրունու հոդվածները «Առաջին լրատվական» (1in.am) կայքում (2017թ. դեկտեմբերի 4, 5, 7, 8, 9, 10, 11....):*

Պատմությունը ներկայի վրա ազդող ակտիվ քաղաքական գործոն է: Դրա անհարկի չափազանցումը, անհիմն հերոսականացումն ու առասպելականացումը (ինչը, սովորաբար, արվում է «հայրենասիրական մղումներից» ելնելով), ազդելով ազգի ինքնապատկերացման ու մտածողության վրա, նրան կարող է բերել սխալ ինքնագնահատականի, մղել իրավիճակին ոչ համարժեք քայլերի, արկածախնդրության: Պատմության իրոք հերոսական եւ ուսանելի դրվագների՝ ցանկացած նպատակով նվաստացումը, ուրացումն ու աղավաղումը (ինչը սովորաբար անում են օտարները, չարակամները) կարող է ազգին զրկել կենսական լիցքերից, ինքնավստահությունից, բերել բարդույթների ու կաշկանդման: Պատմահայր Մովսես Խորենացու «Թէպէտ եւ եմք ածու փոքր...»[25] բառերով սկսվող հայտնի խոսքն **այս իրողության գիտակցումն ու դասական քաղաքական բանաձեւումն է** դեռ 5-րդ դարում: Օբյեկտիվ պատմագրությունը, որ հնարավոր է չգաղափարախոսականացված հասարակությունում, նպաստում է ազգի իրական ինքնապատկերացման ձեւավորմանը, ռացիոնալ ազգային մտածողությանը՝ իր հերթին դառնալով ներկան ապրելու համար այնքա՛ն կարեւոր, ապագա ունենալու համար այնքա՛ն անհրաժեշտ՝ բանական քաղաքական մտքի եւ իրատեսական քաղաքականության հիմք ու կենսական հասարակական միջավայր:

---

25 *«Թեպէտ եւ եմք ածու փոքր եւ զօրութեամբ տկար եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհի, եւ արժանի գրոյ յիշատակի» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանություն, լրացուները Ա. Բ. Սարգսյանի, Երեւան, 1991, էջ 10): «Թեեւ մենք քանակով քիչ ենք, փոքրաթիվ, զորությամբ տկար եւ շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, սակայն մեր աշխարհում էլ են բազմաթիվ արիական գործեր եղել՝ գրով հիշատակվելու արժանի»:*

Առաջին բաժին

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ՎԵՐԱՃՈՒՄԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

1. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ

ա) Խորհրդային Միության մայրամուտը

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ) անվամբ կայսրության շուրջ 70-ամյա կուսակցապետությունը 1980-ական թվականներին մոտեցել էր իր տրամաբանական ավարտի փուլին: Համատարած կաշառակերությունը, պաշտոնեության ծախվածությունը, անտնտեսվարությունը, թալանը, ապրանքների դեֆիցիտի բարձր մակարդակը, այդ ամենի թավալգլոր խորացումը մոտալուտ աղետ էին ենթադրում:

«Երկբեեռ աշխարհի» բեեռներից մեկն արագորեն հալվում էր: 1979 թվականից Աֆղանստանում մղվող պատերազմը ոչ միայն հսկայական ռեսուրսներ, այլ նաեւ տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր էր խլում: Հասարակության վախի, անտարբերության ու համակերպվածության թանձր մթնոլորտը լիցքավորվում էր անհանգստության, բողոքի եւ ըմբոստացման վտանգավոր լիցքերով: Խորհրդային կայսրության քաղաքական ղեկավարությունը 1980-ականների կեսերին ստիպված եղավ իր համար վերջնականապես արձանագրել, որ այդ ընթացքով երկիրը գահավիժում է դեպի անդունդ, համակարգը՝ կործանում: Վերջին երեք զառամյալ ղեկավարները, կարծես, համակարգի կենսունակության աստիճանի խորհրդանիշներն էին: Չեռնոբիլի ատոմակայանի աղետալի վթարն էլ, կարծես, խորհրդանշում էր, թե աշխարհի մասշտաբով ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ Խորհրդային Միության հնարավոր, չկառավարվող փլուզումը[26]:

Իշխանական վերնախավում ակնհայտ դարձավ, որ անհրաժեշտ են կտրուկ փոփոխություններ ենթադրող մեխանիզմներ ու միջոցներ, որոնք կկասեցնեին համակարգի՝ դեպի կանխատեսելի կործանում տանող ընթացքը: Խնդիրն էլ պետք է իրականացներ 1985-ին զառամյալներին

---

[26] *Չեռնոբիլի աղետը տեղի ունեցավ 1986 թվականի ապրիլին՝ որպես հետեւանք հնացած տեխնոլոգիաների, աշխատանքի անկազմակերպվածության, անփութության, անպատասխանատվության: Աղետի մասին ժամանակին անհրաժեշտ եւ արժանահավատ տեղեկատվություն չտալու հետեւանքով հարյուրհազարավոր մարդիկ տուժեցին:*

հաջորդած նոր ղեկավար (ԽՄԿԿ գլխավոր քարտուղար) Միխայիլ Գորբաչովը: Հռչակվեց համակարգի «**Վերակառուցում**» (**«Պերեստրոյկա»**): Իմաստով խոստումնալից, ընդհուպ հեղափոխական այս բառը ենթադրում էր, որ մեռնող համակարգը կենսունակություն պետք է ստանար լուրջ վերափոխումներով՝ ժողովրդավարական իրավունքների տրամադրմամբ, տնտեսական եւ այլ բնագավառներում արմատական բարեփոխումների իրականացմամբ: Հայտարարվեց «Վերակառուցման» երեք հիմնական ուղղություն. **«Ժողովրդավարություն»**, **«Բացախոսություն»** (**«Գլասնոստ»**), որ խոստանում էր մեղմացնել գրաքննությունը, մեծացնել խոսքի ազատության եւ տեղեկատվություն ստանալու շրջանակները, եւ **«Արագացում» («Ուսկորենիե»)**, որ ենթադրում էր տնտեսության զարգացման տեմպերի բարձրացում:

Երեւացին առաջին նշանները: Սկսեցին հրատարակվել մինչ այդ արգելված հեղինակներ: 1986թ. դեկտեմբերին երկարամյա տնային կալանքից ազատ արձակվեց հայտնի իրավապաշտպան Անդրեյ Սախարովը: Համոզվելով, որ Գորբաչովի կարգախոսները ամբողջությամբ միայն հերթական դատարկ դարձվածաբանություն եւ կարճաժամկետ քարոզչական միջոցառումներ չեն, եւ ինչ-որ փոփոխություններ, թեկուզ կոսմետիկ, այնուամենայնիվ, նախաձեռնվում են, տասնամյակներով սեղմված զսպանակը սկսում էր քայլ առ քայլ բացվել, հասարակական կյանքը սկսում էր ակտիվանալ: 1987թ. ավելի ազատ եւ ավելի շատ էին քննարկվում մինչ այդ փակ թեմաներ, եւ դրանց շրջանակը հետեւողականորեն մեծանում էր:

Բարձրացված առաջին արմատական հարցերը բնապահպանության ոլորտից էին: Ծավալուն եւ սուր հոդվածներ էին տպագրվում միութենական թերթերում: Գրաքննությունը դրանք չէր արգելում. դա քաղաքական առումով թերեւս առավել անվտանգ այն ոլորտն էր, որտեղ կարելի էր ցույց տալ, որ հայտարարված «**Գլասնոստն**» իրական է:

Հայաստանում նույնպես հասարակական ակտիվության դրսեւորումները նախ զանազան ժողովների, ապա նաեւ առաջին հանրահավաքների տեսքով վերաբերում էին բնապահպանական հարցերին՝ հսկայածավալ թունավոր արտանետումներ ունեցող, արհեստական կաուչուկ արտադրող «Նաիրիտ» գործարանին, տեխնիկապես անմխիթար վիճակում գտնվող Հայկական ատոմակայանին, աղտոտվող ու ցամաքող Սեւանա լճին, լեռնամետալուրգիական արդյունաբերության վնասակար արտանետումներով որոշ ձեռնարկությունների, Հրազդանի ցեմենտի գործարանին եւ այլն: Նույնիսկ արդեն գրանցվեց այդ պայքարի առաջին արդյունքը. 1987թ. դեկտեմբերի վերջերին որոշում ընդունվեց փակել առավել վտանգավոր

արտանետումներ ունեցող «Կաուչուկ-1» արտադրամասը «Նաիրիտ» գործարանում:

Առանց հրապարակային ելույթների, սակայն աշխույժ խոսակցություններ էին տարածվում եւ 1987 թվականին ստորագրություններ էին հավաքվում նաեւ Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ-ին միացնելու հանրագրի տակ: Լարումն ու հաստատակամությունը մեծացավ հատկապես այն բանից հետո, երբ 1987թ. աշնանը անարգել տեղահանվեց Ադրբեջանի Շամխորի շրջանի Զարդախլու հայաբնակ գյուղի բնակչությունը: Տեղահանությունը, որ կատարվեց շուրջ 200 զինված ադրբեջանցիների եւ տեղական միլիցիայի ուժերով, փաստորեն՝ մնաց անպատիժ: Դա լուրջ ահազանգ էր. որեւէ երաշխիք չկար, որ նույն հեռանկարը երբեւէ չի սպառնալու մյուս հայաբնակ բնակավայրերին, ապա նաեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին: Հասարակական մթնոլորտում խմորվող այս անհանգստությունը որեւէ արտացոլում կամ արձագանք չէր գտնում, սակայն, Հայաստանի իշխանական շրջանակներում:

Բնապահպանական թեմաներով հավաքույթներին եւ առաջին ցույցերին[27] 1987թ. աշնանը իրավապահ մարմինները թեեւ աչալրջորեն հետեւում, սակայն լուրջ խոչընդոտներ չէին հարուցում: Դրանցից մեկի ժամանակ տարածված թռուցիկը հաջորդ հավաքը հրավիրում էր արդեն Լեռնային Ղարաբաղի հարցի օրակարգով: Այս անգամ արդեն Ներքին գործերի եւ ՊԱԿ-ի աշխատակիցները, որ նախապես նշված տեղում էին[28], հանրահավաքի անցկացումը չթույլատրեցին եւ ցրեցին հավաքվող մարդկանց: Բայց դա, թերեւս, ավելի մեծ նշանակություն ունեցավ հասարակական լարումը եւ գրգռությունը մեծացնելու իմաստով, քան կարող էր անել մի քանի հարյուր մասնակիցներով հանրահավաքը:

Եթե Հայաստանի իշխանության դիրքորոշումն ու վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի հարցում չափազանց սառն էր, ապա, կարծես թե, ավելի ոգեւորիչ ազդակներ էին գալիս Կենտրոնից: Այստեղ «վերակառուցման շրջանակներում» հաճախ էր խոսք լինում անցյալի, մասնավորապես, ստալինյան շրջանից եկող սխալներին անդրադառնալու, դրանք ուղղելու, ժամանակին գործված անարդարությունների հետեւանքները վերացնելու

---

[27] *Մարդաշատ ու հախուռն այդ հավաքները տեղի էին ունենում Գրողների միության դահլիճում, դրսում բնապահպանական առաջին ցույցը տեղի ունեցավ հոկտեմբերի 18-ին:*

[28] *Հանրահավաքը նշանակվել էր Մարշալ Բաղրամյան մետրոյի կայարանին կից զբոսայգում:*

մասին: Ընդ որում՝ խոստումները վերաբերում էին նաեւ ամենացավոտ եւ ամենանուրբ՝ ազգային հարցի բնագավառին: Որոշ դեպքերում՝ Ղրիմի թաթարների, մեսխեթցի թուրքերի հարցերով, նույնիսկ բարձր մակարդակի հանձնաժողովներ էին ստեղծվել: Այն ժամանակ դա շատերի կողմից ընկալվում էր որպես իշխանության՝ տվյալ հարցը լուծելու մտադրության կամ արդեն իսկ կայացված քաղաքական որոշման նշան:

Ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում անցյալի անարդարություններից մեկը, բնականաբար, համարում էին պատմականորեն հայկական եւ հայաբնակ Լեռնային Ղարաբաղի հայտնվելը Ադրբեջանի կազմում: Մանավանդ՝ այս որոշման կայացումը կապվում էր անմիջապես Ստալինի անվան հետ: Այսինքն՝ եթե կենտրոնական իշխանությունը «վերակառուցման» շրջանակներում խոստանում էր վերացնել ստալինյան կամայականությունների հետեւանքները ազգային հարցում, ապա, հայ հասարակության համոզմամբ (եւ իրականում էլ), առաջին եւ ամենացայտուն օրինակը հենց Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լիներ: Բնապահպանական թեմաներով սկսված հայկական շարժումն իր մեջ հիմնական խնդիրը փոխելու մեծ լիցք էր պարունակում:

Եւ դա շատ արագ տեղի ունեցավ:

բ) Լեռնային Ղարաբաղի հարցի համառոտ նախապատմությունը

• • •

Հատկապես Շարժման տարիներին հաճախացան օտարակազմ «Ղարաբաղ» անունը ստուգաբանելու փորձերը, որը հիմնավորապես փոխարինել էր հայկական աղբյուրներից հայտնի Արցախին: Լայն տարածում ստացավ «Սեւ այգի» բառացի թարգմանությունը, որ հայտնի է դեռ 16-րդ դարից (տե՛ս Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, Երեւան, 1991, հ. 3, էջ 521):

Հայտնի են օտար տեղանվան առաջացման ուղիներ, տարբերակներ, որոնք եւ ինչ-որ կերպ իմաստավորվում, բացատրվում են: Այն կարող էր առաջանալ, օրինակ, տվյալ տեղանքի կամ տարածքի ինչ-որ յուրահատկության՝ օտարի կողմից իր լեզվով տրված բնորոշումից, եւ այս դեպքում կարեւոր չէ, թե ինչպիսին է եղել դրա նախնական հայկական անվանումը: Արցախն իր պտղատու ծառերով հարուստ անտառներով կարող էր եկվորների կողմից «բաղ» (այգի) համարվել եւ կոչվել: Այդ «բաղն» էլ կարող էր ունենալ «ինչպիսի՞» հարցին պատասխանող իր բնորոշումը, օրինակ՝ «լեռնային», «կանաչ», «փարթամ», անգամ՝ «դեղին» «կարմիր» (աշնանային գույներով) եւ այլն, բայց ինչո՞ւ «սեւ»՝ մնում է անբացատրելի:

Հայտնի է հայկական տեղանունների օտար կազմությունների առաջացման ավելի տարածված մի այլ տարբերակ. հայկական անվանումը հիմք ընդունելով՝ կատարվում է դրա հնչողությանը մոտ այնպիսի մի աղավաղում, որը եկվորների լեզվում իմաստավորված ինչ-որ բան է նշանակում: Այս դեպքում արդեն կարեւոր չէ, թե ինչ է նշանակում դրա բառացի թարգմանությունը: Այսինքն՝ եթե բառն առաջացել է այս ճանապարհով, ապա այս դեպքում «ինչո՞ւ սեւ» հարցը դուրս է գալիս: Ղարաբաղ բառը պետք է որ առաջացած լինի այս երկրորդ, ավելի տարածված, ճանապարհով: Հավակնելով տալ խնդրի վերջնական լուծումը՝ ճիշտ ենք համարում ստորեւ ներկայացնել մի քանի փաստ ու դիտարկում:

*13-րդ դարի հայերեն ձեռագրերից մեկի հիշատակարանը[29] նույն երկրամասի համար օգտագործում է «Առանի Պաղին» անվանումը. «Գրեցաւ տառս ... ի գաւառս **Առանի Պաղին**, ի սրբափայլ լերինս Հայր Մակար կոչեալ...» (**Մաթեւոսյան Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Ե, 1984, էջ 77):*

*Գրաբարով բերված նախադասության մեջ «Պաղին»-ը (ի գաւառս **Առանի Պաղին**) քերականորեն կարող է լինել ներգոյական հոլով, այդ դեպքում նրա ուղղականը կլինի «Առանի Պաղ»՝ նշանակելով Առանի զով, հովասուն մասը: Այսինքն՝ հիմնականում կիսանապատային շոգ կլիմայով հայտնի Առան աշխարհի (որ նույն Աղվանքն է) մեջ մտնող, անտառներով հարուստ եւ զով Արցախն ինչ-որ ժամանակ բնորոշվել է որպես «Առանի Պաղ», եւ այդ բնորոշումն օգտագործվել է որպես հատուկ անուն:*

*Սակայն **«Պաղին»** տեղանունը հենց այս ձեւով՝ որպես ուղիղ ձեւ, շատ հին է եւ տարածված՝ մոտ մեկ տասնյակ կիրառություններով (տե՛ս Տեղանունների բառարան, հ. 4, էջ 294): Այսինքն՝ չի բացառվում նաեւ, որ այդ անվանումը հայտնվեր այստեղ, եւ տարբերակելու համար արդեն այլ տեղում գոյություն ունեցողներից, սա կոչվեր «**Առանի Պաղին**»:*

Այսինքն՝ «Ղարաբաղ»-ի առաջին՝ «Ղարա» բաղադրիչի տակ կարող էր լինել «Առան» անվանումը, իսկ երկրորդ՝ «բաղ» բաղադրիչի հիմքում՝ կա՛մ հայերեն «պաղ» (զով, սառը) բառն է, կա՛մ «Պաղին» հայկական տարածված տեղանունը:

---

[29] *Դրա վրա, այս առիթով, մեր ուշադրությունը հրավիրեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:*

Եկվորների լեզվում «պաղ»-ը կամ «Պաղին»-ը հեշտությամբ կարող էր վերաիմաստավորվել «բաղ»- ով՝ նկատի ունենալով արդեն ասված՝ Արցախի անտառների հիմնականում պտղատու լինելու՝ վերը նշված հանգամանքը, իսկ «Առան» բառից ստանալ հնչողությամբ մոտ «ղառա»-«ղարա»-ն, եւ այս դեպքում ոչ մի նշանակություն չունի, թե այն բառացի թարգմանությամբ ինչ կարող էր նշանակել:

*Բայց կա եւս մի հանգամանք: Պարտադիր չէ, որ վերաիմաստավորողները «ղարա»-ի տակ հենց «սեւ» հասկանային: Որոշ հայկական բարբառներում օգտագործվող օտար կազմությամբ բառերում «ղարա»-ն կցվում է բույսերի անունների՝ նշելու համար դրանց ոչ մշակովի, «**վայրի**», «բնական», լինելը՝ ի տարբերություն մարդու կողմից մշակվող՝ նրանց նույնանուն տեսակների: «Առվույտ» բառի օտար «յոնջա»-ն ունի «ղարայոնջա» տարբերակը. առաջինն օգտագործվում է ցանովի, մշակովի բույսի համար, երկրորդը՝ դրա վայրի տարատեսակի: Աճառյանն ունի «**Ղարաստ**», որ թարգմանում է «**վայրի** սալոր» (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 3, էջ 166): Չի բացառվում, որ այս բառը տվյալ (եկվորների) լեզվում բազմիմաստ է եղել եւ ունեցել է նաեւ այս երկրորդ նշանակությունը: Այս դեպքում՝ «Առանի Պաղ» կամ «Առանի Պաղին» անվան «Ղարաբաղ» օտարակազմությունը կարող է իմաստավորված լինել՝ որպես վայրի, բնական, ավելի գեղեցիկ բառով՝ անձեռակերտ (ղարա) այգի (բաղ): Արեւելքից եկած ցեղերին ծանոթ անտառը պետք է որ լիներ ոչ պտղատու եւ բնական աճած, այգին (բաղը)՝ պտղատու եւ մարդու կողմից հիմնված: Նրանց հանդիպած նոր ու անսովոր երեւույթը՝ բնական անտառ, բայց պտղատու ծառերով, կարող էր հայկական տեղանվան հիմքի վրա առաջացնել հենց այսպիսի վերաիմաստավորում՝ «վայրի, բնական այգի»:*

* * *

1918թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան Սեյմի քայքայումով հոչակվեց երեք պետական միավոր. Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը:

Ըստ Ռուսական կայսրության վարչական բաժանման՝ Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաեւ Զանգեզուրը, գտնվում էին Գանձակի նահանգի կազմում: Այս հանգամանքից ելնելով՝ Ադրբեջանն ի սկզբանե ամեն կերպ աշխատում էր հայաբնակ այս երկրամասերում հաստատել իր գերիշխանությունը:

Լեռնային Ղարաբաղի բնակչության 95% կազմող հայերն ընդդիմացան: Ինքնակազմակերպվելով, 1918թ. հուլիսի 18-ին, Ղարաբաղի հայության՝

ընտրված լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարում Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց ինքնուրույն վարչաքաղաքական միավոր, ստեղծեցին իշխանության մարմիններ. օրենսդիր մարմին՝ Ազգային խորհուրդ, եւ յոթ հոգուց բաղկացած կառավարություն:

Շուրջ երկու տարի Լեռնային Ղարաբաղի հայության լիազոր ներկայացուցիչների մեկ տասնյակ համագումարները, չհաշված իրավիճակով թելադրված մեկ-երկու տակտիկական մասնակի նահանջները, մինչեւ վերջ մերժեցին ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը՝ ընդդիմանալով ինչպես վերջինիս ռազմական ճնշումներին, այնպես էլ՝ 1918թ. ամռանը Բաքու մտած թուրքական, ապա նրանց փոխարինած անգլիական զորքերի հրամանատարության պահանջներին: Ղարաբաղի ձգտումը Հայաստանի հետ միավորվելն ու նրա մաս կազմելն էր[30]:

Առանց Հայաստանի որեւէ օգնության, Լեռնային Ղարաբաղի իշխանությունը, սեփական ուժերով, շուրջ երկու տարի կարողացավ պահել իր փաստական անկախ վիճակը:

1920թ. մարտի 23-ին Հայաստանից ուղարկված էմիսարների դրդմամբ չհաշվարկված արկածախնդրական հարձակումներ կատարվեցին Վարդենիսի (Ստեփանակերտ), Ասկերանի, Շուշիի եւ այլ ադրբեջանական զորանոցների վրա: Որպես ապստամբություն մտահղացված բոլոր հարձակումներն ավարտվեցին անհաջողությամբ եւ ծանր հետեւանքներով[31]: Ամենածանր հետեւանքը գրանցվեց մայրաքաղաք Շուշիում. քաղաքի հայկական մասն ամբողջովին հրդեհվեց եւ ավերվեց, բնակչությունը ենթարկվեց կոտորածի[32] եւ փախուստի: Այս ծանր հարվածից հետո Ղարաբաղի

---

[30] *Այս տարիների պատմության համար պետք է առանձնացնել երկու կարեւոր ընդարձակ աշխատություն-սկզբնաղբյուր, որոնք, ըստ էության, առաջին ձեռքից տրված վկայությունների արժեք ունեն: Առաջինի հեղինակը Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանն է (**Իշխանյան Ե.**, Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երեւան, 1999), երկրորդի հեղինակը Լեռնային Ղարաբաղի կառավարության ռազմական գործերի կոմիսար Հարություն Թումյանը (**Թումյան Հ.**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917-1920 թթ., աշխատասիրությամբ Ա. Բ. Սարգսյանի, Երեւան, 2008):*

[31] *Եղիշե Իշխանյանը դա պարզապես համարում է «չէ թե ապստամբություն, այլ պարզապես ոճիր» (տե՛ս **Իշխանյան Ե.**, Լեռնային Ղարաբաղը..., էջ 615): Այդ ապստամբությունը արկածախնդրություն է գնահատում նաեւ Հարություն Թումյանը (տե՛ս **Թումյան Հ.**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, էջ 283-285):*

[32] *Ըստ Հ. Թումյանի՝ Շուշիի 22000 հայությունից (քաղաքի բնակչության կեսից մի փոքր ավելի) այդ կոտորածին զոհ է գնացել շուրջ 500 մարդ (Տե՛ս **Թումյան Հ.**, Դեպքերը*

հայկական իշխանությունը, փաստորեն, կազմալուծվեց: Հայաստանի Հանրապետությունը Դրոյի եւ Նժդեհի հրամանատարությամբ ապրիլի կեսերին զորամասեր մտցրեց Ղարաբաղ: Կատարվեց այն, ինչին ամբողջ երկու տարի պայքարելով սպասում էին Ղարաբաղում. Լեռնային Ղարաբաղը հռչակվեց Հայաստանի Հանրապետության մաս:

Քիչ անց՝ ապրիլի 28-ին, Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Շուշի ժամանած՝ խորհրդային իշխանության ներկայացուցիչներ Սերգո Օրջոնիկիձեն եւ Սահակ Տեր-Գաբրիելյանը առաջարկեցին Դրոյին եւ Նժդեհին թողնել Ղարաբաղի սահմանները: Դրոն Լեռնային Ղարաբաղի իշխանությունը հանձնեց խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչին, Հայաստանի զինված ուժերը մայիսի վերջին լքեցին երկրամասը: Սա այլ բան չէր նշանակում, քան՝ որ Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը մեկուկես ամիս իր կազմում ունենալուց հետո, հրաժարվեց նրանից՝ հօգուտ խորհրդային դարձած Ադրբեջանի[33]:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանը պաշտոնապես հայտարարեց, որ

*Լեռնային Ղարաբաղում, էջ 285): Եղիշե Իշխանյանը Շուշիի ավերման ու հրդեհի մասին խոսելիս զոհերի թիվ ընդհանրապես չի հիշատակում (տե՛ս **Իշխանյան Ե.**, նշված աշխատությունը, էջ 575, 622-624): Սիմոն Վրացյանի մոտ խոսքը, կարծես թե, 3-400 հոգու մասին է (տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 396): Անհասկանալի ու վտանգավոր չափազանցություն է ինչպես հայ պատմագրության մեջ շրջանառվող՝ Շուշիի հայ բնակչության 35 հազար թիվը, այնպես էլ, որ դրա «մեծ մասը կոտորվեց» (տե՛ս ՀԽՍՀ հանրագիտարան, հ. 8 էջ 600) կամ սպանվածների թիվը «տասնյակ հազարավոր» գնահատելը (տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, հանրագիտարան, Երեւան, 2004, էջ 527):*

33 *Այս դրվագը պատմագրության մեջ ներկայացվում է հետեւյալ կերպ. խորհրդային իշխանությունը ի սկզբանե քաղաքական որոշում ուներ Լեռնային Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին, ինչը եւ նա անում է՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Կարմիր բանակի ուժերով նվաճելով ու հնազանդեցնելով երկրամասը: Լավատեղյակ երկու աղբյուր այլ կերպ են ներկայացնում այն: Ըստ Հարություն Թումյանի՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո «Կարմիր բանակը Ղարաբաղի դեմ գործողություններ չսկսեց եւ թշնամական որեւէ քայլ չարեց» (**Թումյան Հ.**, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, էջ 309): Դարձյալ ժամանակակից մեկ այլ աղբյուր՝ զորավար Սեպուհի շտաբի գրագիրը հաղորդում է (**Անհայտ** գրողի օրագիրը, էջ 53-54), թե Դրոն պարզապես հայտարարել է, որ ինքը ռուսների դեմ գնդակ չի արձակի՝ Ղարաբաղը լքելու Դրոյի արարքը որակելով որպես դավաճանական քայլ (մանրամասն տե՛ս՝ **Սարգսյան Ա.**, Թե իրականում ինչպես է Լեռնային Ղարաբաղը հանձնվել Ադրբեջանին, «Իլուր», 03.05.2017թ.):*

այդ առիթով վերացված է համարում սահմանային վեճերը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եւ Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը ու Նախիջեւանը ճանաչում է Հայաստանի կազմում: Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը պատասխան շնորհակալական հեռագիր հղեց Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովին:

Այս վիճակն ուժի մեջ մնաց ավելի քան կես տարի: Այդ կես տարվա ընթացքում, սակայն, տեղի ունեցան մի քանի իրադարձություններ: 1921թ. փետրվարի 18-ին Դաշնակցական կուսակցությունը ապստամբություն բարձրացրեց Հայաստանում, գրավեց իշխանությունը, սկսվեց քաղաքացիական պատերազմ: Խորհրդային իշխանության դեմ ապստամբություն սկսվեց նաեւ Լեռնային Ղարաբաղում: Փետրվարի 26-ից Մոսկվայում սկսեց աշխատել ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը՝ օրակարգում ունենալով երկու երկրների սահմանների ճշտման հարցը: Կոնֆերանսին հրավիրված էին նաեւ Խորհրդային Հայաստանը եւ Ադրբեջանը: Հայաստանում խորհրդային իշխանության փաստորեն տապալված լինելու փաստը վկայակոչելով՝ թուրքական կողմը առարկեց բանակցություններին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությանը:Նույնպիսի հիմնավորմամբ կոնֆերանսին խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը թույլ չտալու պահանջով Մոսկվա հեռագիր ուղարկեց նաեւ վերականգնված դաշնակցական կառավարության նախագահ Ս. Վրացյանը[34]: Հայաստանի խորհրդային իշխանությունը զրկվեց բանակցությունների արդյունքների վրա որեւէ կերպ ազդելու հնարավորությունից: 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրով հօգուտ Ադրբեջանի եւ Թուրքիայի լուծվեց Նախիջեւանի հարցը:

Այդ կես տարվա ընթացքում Ադրբեջանը շահեց նաեւ քաղաքական իմաստով: Քանի որ Հայաստանում ապստամբության պատճառով խորհրդայնացման հարցերը վերջնականապես չէին լուծվել, Լեռնային Ղարաբաղը, որ հայտարարված էր Խորհրդային Հայաստանի մաս, ստիպված էր մայիսի 6-ին մասնակցել Ադրբեջանի Խորհուրդների առաջին համագումարին: Սա եթե ոչ իրավական, ապա հոգեբանական լրացուցիչ մի հիմք կարող էր լինել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ներառելու համար:

Այնուամենայնիվ, 1921-ի հունիսի 3-ին Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց Ղարաբաղը միացնել Հայաստանին եւ հանձնարարեց Հայաստանի

34 *Տե՛ս **Մսերյան Զ.**, Երեք դաշնագիրեր, Բեյրութ, 1979, էջ 120:*

կառավարությանն այդ մասին պաշտոնապես հայտարարություն անել: Մեկ ամիս անց Նարիմանովի պահանջով տեղի ունեցավ հարցի վերաքննարկում: Հուլիսի 4-ի նիստում, սակայն, ձայների մեծամասնությամբ կրկին անցավ նույն՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմում թողնելու որոշումը: Նարիմանովի պնդմամբ հարցը, այս անգամ նաեւ այստեղ ժամանած Ստալինի մասնակցությամբ, քննարկվեց նաեւ հաջորդ օրը եւ, նոր հիմնավորմամբ, կայացվեց հակառակ՝ մարզը Ադրբեջանի կազմում թողնելու որոշում[35]:

Թվարկված իրադարձություններն ու իրողություններն ավելի շուտ ցույց են տալիս, որ խորհրդային իշխանությունը նախապես չի ունեցել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու ծրագիր կամ որոշում: Հարցը, ինչպես այդ ժամանակ հաճախ էր պատահում, իրավիճակային լուծում պետք է ստանար՝ ըստ կշեռքի նժարներին դրված նույն իրադարձությունների եւ իրողությունների կշռի: Լեռնային Ղարաբաղն ունենալու հարցում Հայաստանի դիրքերն ակնհայտորեն թուլացրել, նրա նժարը թեթեւացրել էին երկու հանգամանք, որոնք եւ ճակատագրական եղան: Առաջին՝ 1920թ. մայիսի վերջին Հայաստանի իշխանության կողմից Լեռնային Ղարաբաղի լուռ հանձնումը Ադրբեջանին, ինչը նշանակում էր, թե Հայաստանն, այնուամենայնիվ, կարող է հաշտվել այդ կորուստի հետ (Նժդեհը դուրս չեկավ Զանգեզուրից, եւ այն մնաց Հայաստանի կազմում): Երկրորդ՝ խորհրդային իշխանության դեմ փետրվարյան ապստամբությունը, ինչը Մոսկվայի աչքում Ադրբեջանին քաղաքական առավելություն պիտի տար:

* * *

Սրանով ամեն ինչ չավարտվեց: Ստորեւ բերվող փաստերի ոչ ամբողջական ժամանակագրությունը ապացույցն է այն բանի, որ ***ո՛չ Հայաստանը համակերպվեց Լեռնային Ղարաբաղի կորստյան հետ, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանի կազմում մնալու փաստի հետ***[36]*:*

[35] *Կուսակցական մարմնի որոշումը նման հարցերում իրավական առումով, անշուշտ, չէր կարող վերջնական եւ օրինական համարվել: Սակայն խորհրդային իշխանությունն ի սկզբանե արդեն դրանց հեշտությամբ իրավական, օրինական ձեւ էր տալիս: Այդպես էլ քիչ հետո 1923 թ. Լեռնային Ղարաբաղում «կազմակերպվեց» հանրաքվեի մի խեղկատակություն, որի արդյունքներով էլ ապահովեցին այդ «օրինականությունը» (Տե՛ս* ***Թումյան Հ.****, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1918-1920թթ., էջ 308):*

[36] *Այս թեմայով համապատասխան փաստաթղթերը տե՛ս «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝* ***Կարեն Խաչատրյանի*** *եւ* ***Հրանտ Աբրահամյան****, Երեւան, 2011, նաեւ՝* ***Մսերլյան Զ.****, Հայկական հարցի մասին, Բեյրութ, 1978, էջ 168-169:*

Ա) Ոչ պաշտոնական տեղեկություններ կան արձանագրված, որ 1936 թվականին, երբ նախապատրաստվում էր ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումը, ըստ որի՝ Անդրֆեդերացիան պիտի տրոհվեր երեք հանրապետությունների, «ներքին հողերի»՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի վարչական տարածքի մեջ ներառելու հարց է բարձրացրել ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը[37]*:*

Բ) 1945 թվականին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու խնդրով, տնտեսական բնույթի մանրամասն հիմնավորումներով Ստալինին նամակ է հղել ՀԿԿ ԿԿ-ի մեկ այլ առաջին քարտուղար՝ Գրիգոր Հարությունյանը:

Գ) *1947թ. աշնանը Գ. Հարությունյանը երկրորդ անգամ է Ստալինի առջեւ բարձրացնում Ղարաբաղի խնդիրը՝ կապված Սփյուռքից սպասվող ներգաղթյալներին տեղավորելու խնդրի հետ:*

Դ) *1949թ. Գ. Հարությունյանը ԽՍՀՄ ղեկավարի առջեւ երրորդ անգամ է բարձրացնում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու խնդիրը*[38]*:*

Ե) 1961-ին ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Հակոբ Զարոբյանը նույն հարցով դիմում է ԽՍՀՄ ղեկավար Ն. Խրուշչովին՝ նրա հայաստանյան այցի ժամանակ:

Զ) Մի քանի հազար ստորագրություններով նման մի նամակ է հղվել Մոսկվա դեռ 1962 թվականին[39]*:*

Է) Հիշատակություններ կան Մոսկվա հղված այսօրինակ նամակների մասին 1963թ. Ստեփանակերտի ավտոբազայի աշխատողների կողմից:

Ը) 2500 ստորագրություններով մի այլ նամակ է հղվել Մոսկվա 1964 թվականին[40]*, եւ այլն:*

գ) Խնդրի բարձրացման նախապատրաստական շրջան

1987թ. վերջին եւ 88-ի սկզբին շրջանառվող զրույցներում բավականին մեծ տարածում գտան Գորբաչովի՝ տնտեսական հարցերով խորհրդական,

[37] ***Զ. Մսերլյան Զ.****, Հայկական հարցի մասին, Բեյրութ, 1978, էջ 168:*

[38] *Գրիգոր Հարությունյանի երկրորդ եւ երրորդ դիմումների մասին տե՛ս «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստան հետ միավորելու համար», էջ 11:*

[39] *Այս նամակը 1965թ. ավարտած իր վերոհիշյալ աշխատությանը որպես վերջաբան է կցել Հարություն Թումյանը (տե՛ս* ***Թումյան Հ.****, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, էջ 312-318):*

[40] *Տե՛ս* ***Մսերլյան Զ.****, Հայկական հարցի մասին, էջ 168-169:*

ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի հայտարարությունները Լոնդոնում եւ Փարիզում՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու տնտեսական նպատակահարմարության մասին: Նա հայտարարել էր, որ ինքն այդ մասին արդեն նամակ է հղել կառավարությանը եւ կարծում է, որ խնդիրը կլուծվի[41]: Շատերի կողմից սա ընկալվում էր նաեւ որպես կենտրոնական իշխանության տեսակետի ու նախաձեռնության համաձայնեցված «տեղեկատվական արտահոսք», քանի որ Խորհրդային Միության պայմաններում, որպես կանոն, նման «ինքնագործունեություն» չէր լինում:

Մինչ այդ Լեռնային Ղարաբաղում կազմակերպվում էին գործնական բնույթի միջոցառումներ. 1987թ. ընթացքում արդեն իսկ ստորագրություններ էին հավաքվում Մոսկվա ներկայացնելու համար[42]: Մարզի բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում, խորհրդային եւ կոլեկտիվ տնտեսություններում[43] հրավիրված ժողովները 1987թ. ընթացքում որոշումներ էին ընդունել մարզը Հայաստանին միացնելու անհրաժեշտության մասին: 1988-ի սկզբին նույնպիսի որոշումներ ընդունեցին նաեւ մարզի ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների նստաշրջանները: Այդ որոշումները պաշտպանեցին շրջանային եւ Ստեփանակերտի քաղաքային կուսակցական կազմակերպությունների ղեկավար մարմինները[44]:

1987թ. դեկտեմբերի 1-ին նույն խնդրով Մոսկվա ժամանած՝ Լեռնային Ղարաբաղի հայության մի պատվիրակություն հանդիպում ունեցավ ԽՄԿԿ կենտկոմի ընդունարանի վարիչի հետ, ապա նրանց ընդունեց Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Պ. Դեմիչեւը: Հունվարի 5-12-ին Մոսկվայում էր 13 հոգուց բաղկացած ղարաբաղյան երկրորդ պատվիրակությունը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ: Նրանց ընդունեց նույն Դեմիչեւը, ապա նաեւ ԽՄԿԿ ԿԿ-ի ազգային հարաբերությունների բաժնի վարիչ Վ. Միխայլովը: Պատվիրակությունների անդամների հավաստմամբ՝ ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնատարները հարուցած խնդրի, այն է՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու հարցի քննարկման մեջ դատապարտելի

[41] *Տե՛ս «Մասիս» (Հնչակյան կուս. պաշտոնաթերթ), 05.12.1987:*

[42] *Աշնանը ստորագրահավաքներ էին կատարվում եւ Մոսկվա ուղարկվող նամակներ պատրաստվում նաեւ Հայաստանի հարյուրավոր հիմնարկներում:*

[43] *Խորհրդային տարիներին գյուղական համայնքները տնտեսական առումով խորհրդային կամ կոլեկտիվ տնտեսություններ էին («սովխոզ», «կոլխոզ»):*

[44] *Տե՛ս Нагорный Карабах, историческая справка, Академия наук Армянской ССР, Ереван, 1988. ст. 59.*

որեւէ բան չէին տեսել եւ պատրաստակամություն էին հայտնել հարցը մտցնել ԽՄԿԿ նախապատրաստվող 19-րդ կոնֆերանսի օրակարգ:

Լեռնային Ղարաբաղի երրորդ պատվիրակությունը փետրվարի 10-ին հանդիպեց Վ. Միխայլովի հետ[45]: Եւ դարձյալ վերջինս խնդրի սկզբունքային քննարկման առումով ոչ միայն որեւէ առարկություն չէր հայտնել, այլեւ ինչ-որ ակնարկներ էր արել հարցի դրական լուծման հնարավորության մասին: Պատվիրակությունն, իր առաքելությունը ավարտված համարելով, վերադարձավ՝ համոզված, որ խնդիրը կարելի է պաշտոնապես բարձրացնել, եւ որ ադրբեջանական իշխանությունների հնարավոր խոչընդոտների դեմ ապահովված է Կենտրոնի աջակցությունը[46]:

Որ «Վերակառուցման» շրջանակներում այս կամ այն կերպ բարձրացվելու էին նաեւ բազմաթիվ ազգային խնդիրներ, կասկածից դուրս էր: Օրինաչափ էր նաեւ, որ դրանց մեջ առաջիններից մեկը լինելու էր հենց Լեռնային Ղարաբաղի խնդիրը, որի՝ խորհրդային շրջանում տրված լուծման հետ հայ հասարակությունը, ինչպես տեսանք, երբեւէ չէր հաշտվել: Բնական եւ օրինաչափ էր նաեւ, որ տվյալ դեպքում նախաձեռնողները եղան Լեռնային Ղարաբաղի պաշտոնեությունը, ինչպես նաեւ Հայաստանում բնակվող ծագումով ղարաբաղցի մտավորականությունը[47]: Դրա համար կարեւոր ազդակ

[45] *Այս պատվիրակությունը գլխավորում էր դերասանուհի Ժաննա Գալստյանը:*

[46] *Չի բացառվում, որ պատվիրակությունները փոքր-ինչ չափազանցված են ներկայացրել իրենց առաքելությունների արդյունքները, ինչը տվյալ դեպքում գուցե եւ բնական է: Միաժամանակ վստահ կարելի է ասել, որ խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաներն էլ իրենց հերթին, թերեւս, չէին կարող մինչեւ վերջ պատկերացնել, թե տվյալ դեպքում գործնականում ինչի սկիզբ կարող են դառնալ եւ ինչպիսի հետեւանքներ կունենան «վերակառուցման ոգով» տված իրենց պատասխանները: Այդ ժամանակ դա չէր պատկերացնում, թերեւս, ոչ մեկը:*

[47] *Տուրք տալով դավադրությունների տեսությանը՝ ենթադրություններ են արվել այն մասին, թե Ղարաբաղյան շարժման մեկնարկը կազմակերպվել է Կենտրոնի կողմից, որպեսզի այն որպես լծակ օգտագործեն «փափուկ հեղաշրջումը» մինչեւ վերջ իրականացնելու՝ կամ Ադրբեջանի եւ Հայաստանի վրա որպես ճնշման լծակ գործադրելու համար, եթե վերջիններս երբեւէ անկախության հարց բարձրացնեն: Որպես դավադրության ավելի որոշակի հեղինակ համարվել է ԽՍՀՄ ՊԱԿ-ը, որն էլ, իբր, դրա համար օգտագործել է Հայաստանում «բարձր դասի» մեջ իր ունեցած «ականջներն ու ձեռքերը», մարդիկ, որոնք Շարժման առաջին օրերին ու շաբաթներին առաջին պլանում էին (տե՛ս* ***Մելիք-Հակոբյան Ս.****, Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը եւ Դաշնակցությունը, Երեւան, 1995, էջ 6-7,* ***Григорян В.****, Армения, ст. 119): Նման ենթադրությունները չափազանցություն են եւ ավելորդ կասկածամտության*

հանդիսացան մոսկովյան պաշտոնյաների կողմից խրախուսիչ կամ այդպիսին թվացող ընդունելությունները, երբ այդ պաշտոնյաները ղարաբաղյան պատվիրակություններին ոչ միայն ընդունել էին, այլ նաեւ նրանց խնդիրը, ինչպես նախկինում, «չոր» չէին մերժել, ավելին՝ գնահատել էին որպես «Վերակառուցման ոգուց բխող» մի հարց: Ազգային հարցում ժամանակին կատարված սխալների եւ անարդար որոշումների վերանայման հռչակած կարգախոսների եւ խոստումների ետնախորքում, առանց դրանց հակադրվելու, գուցեեւ, դժվար էլ էր այլ արձագանք տալ: «Վերակառուցման» դեմքը պահելու խնդրով մտահոգ Մոսկվան ակնհայտորեն չէր պատկերացնում ղարաբաղյան խնդրի հասարակական-քաղաքական տարողությունը:

Ադրբեջանը, ընդհակառակը, փորձում էր կանխարգելիչ միջոցառումների դիմել Լեռնային Ղարաբաղում սկսված գործընթացները կասեցնելու ուղղությամբ: Եւ ամենեւին չի բացառվում, որ ղարաբաղյան պատվիրակություններին ընդունած մոսկովյան պաշտոնյաների հաշվարկներն էլ հենց դրա վրա էին՝ որ տեղում Ադրբեջանի հանրապետական իշխանությունները սեփական ուժերով կկարողանան կանխել իրադարձությունների

արդյունք: Ղարաբաղի՝ Հայաստանին միանալու խնդիրը 1920 թվականից ի վեր ուներ իր չընդհատված պատմությունը, եւ առաջին իսկ շատ թե քիչ նպաստավոր իրավիճակում այն հարուցվելու էր:

Բոլորովին այլ նպատակ է հետապնդում Ղարաբաղյան շարժման սկզբնավորման մասին վերջերս արտահայտված մի այլ պնդում, ըստ որի՝ այն ոչ թե Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ժողովրդի ինքնաբուխ ազատագրական ձգտումների արտահայտություն էր, այլ ՀՅԴ-ի եւ ԽՍՀՄ բանակի գլխավոր հետախուզական վարչության (ԳՌՈՒ) միջեւ կնքված գործարքի արդյունք (տե՛ս ***Minassian G.****, Guerre et terrorisme armeniens 1972-1998, Paris, 2002, էջ 114-115: Երկու կարծիքներն էլ, վերջին հաշվով, հենվում են (կամ միտված են ամրացնել) մասնավորապես Սփյուռքում տարածված այն պատկերացման վրա, որ Հայաստանի (եւ Ղարաբաղի) ժողովուրդն իր սահմանափակ քաղաքական մտածողությամբ ունակ չէր նմանօրինակ նախաձեռնության: Պարզապես՝ եթե առաջին դեպքում ոչ դաշնակցական հեղինակների կողմից այն ենթադրաբար վերագրվում է միայն կենտրոնական իշխանության եւ ՊԱԿ-ի մեքենայություններին, ապա երկրորդ դեպքում, արդեն դաշնակցական հեղինակի կողմից, անթաքույց փորձ է արվում Դաշնակցությանը սեփականաշնորհել Ղարաբաղյան շարժումը նախաձեռնելու պատիվը (շատ լավ իմանալով, որ դա այդպես չէ): Եւ որպեսզի բացահայտ սուտը փոքր-ինչ ճշմարտանման երեւա, վարկաբեկված ՊԱԿ-ի փոխարեն որպես «գործընկեր» ընտրվել է խորհրդային հետախուզական մի այլ «կարող» կառույց՝ Բանակի կենտրոնական հետախուզական վարչությունը:*

վտանգավոր ընթացքը եւ որ, բոլոր դեպքերում, այն հնարավոր կլինի պահել կառավարելիության շրջանակներում:

Փետրվարի 11-ին ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կեւորկովը հայտարարեց, որ Ղարաբաղից մեկնած պատվիրակությանը Մոսկվայում չեն ընդունել, եւ որեւէ հարց չի քննարկվի: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կանավալովի գլխավորությամբ փետրվարի 10-ին Բաքվից Ստեփանակերտ ժամանած մի խումբ պաշտոնյաներ, ըստ Իգոր Մուրադյանի[48] տարածած մի թռուցիկի, ամեն ինչ անում էին նոր ժողովներ հրավիրելու, մինչ այդ ընդունված որոշումները դատապարտելու, անհրաժեշտ վերահսկողություն հաստատելու, իրադարձությունների հետագա խորացումը կանխելու համար[49]: Նրանք, սակայն, որեւէ հաջողության չհասան, իսկ փետրվարի 13-ից սկսվեցին զանգվածային հանրահավաքները: Նույն օրը Ստեփանակերտ մտավ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի մի ստորաբաժանում[50]: Փետրվարի 16-ից հանրահավաքներն արդեն ուղեկցվում էին գործադուլով, իսկ ժողովուրդը չէր լքում Ստեփանակերտի հրապարակը նաեւ գիշերները: Հանրահավաքի մասնակիցները պահանջում էին մարզխորհրդի նստաշրջանի հրավիրում եւ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին միացնելու որոշման ընդունում:

դ) ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը, Շարժման պոռթկումը Հայաստանում

Պատգամավորների դիմումների հիման վրա ժողովրդական պատգամավորների մարզխորհուրդն արտահերթ նստաշրջանը նշանակել էր փետրվարի 20-ին, ժամը 16-ին: Չնայած հարուցած արգելքներին, ընդհուպ ճանապարհները խուլ փակելուն, մարզխորհրդի պատգամավորները «Կոմունկ» կոմիտեի[51] ջանքերով կարողացան հասնել Ստեփանակերտ: Նույն օրը

[48] *Մագումով ղարաբաղցի, երեւանաբնակ, մասնագիտությամբ տնտեսագետ Իգոր Մուրադյանը Լեռնային Ղարաբաղի հետ կապված ստորագրահավաքի եւ նախապատրաստական այլ միջոցառումների կազմակերպիչներից եւ ոգեշնչողներից էր, առաջին ամիսներին՝ Շարժման փաստական ղեկավարը:*

[49] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/10.02.88:*

[50] ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе часть 1, ст. 33-34.*

[51] *Այսպես էր կոչվում Լեռնային Ղարաբաղում շարժման ղեկավար մարմինը, որ ստեղծվել էր մարտի 2-ին («Կոմունկ»-ը ռուսերեն «Комитет революционного управления Нагорного Карабаха» կապակցության հապավումն է): Այս մարմնի ղեկավարն էր Արկադի Մանուչարովը, նրա տեղակալներն էին Ռոբերտ Քոչարյանը,*

շտապ Ստեփանակերտ հասավ Ադրբեջանի կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը՝ ԽՄԿԿ ԿԿ-ի հրահանգիչ Վ. Ցաշինի հետ միասին[52]: Նրանք ամեն ինչ արեցին խափանելու համար նստաշրջանի կայացումը: Ճիշտ է՝ չորս ժամ ուշացումով, սակայն նստաշրջանը կայացավ եւ կեսգիշերից հետո ընդունեց հետեւյալ հայտնի որոշումը.

«Լսելով եւ քննարկելով ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ-ի խորհրդի դեպուտատների ելույթները ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու համար Ադրբեջանական ՍՍՀ եւ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների առջեւ միջնորդության մասին, ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում է.

Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին եւ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խորին ըմբռնման զգացում դրսեւորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն սովետի առջեւ՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծելու համար»[53]:

Որոշումը վավերացվեց պատգամավորների ստորագրություններով, քանի որ մարզկոմի քարտուղար Բ. Կեւորկովը վերցրել էր մարզխորհրդի կնիքը եւ ադրբեջանցիների հետ հեռացել Աղդամ[54]: Փաստաթուղթը հրապարակվեց փետրվարի 21-ին «Սովետական Ղարաբաղ» թերթում: Մոսկվայում կարծես թե հիմա միայն հասկացան կատարվածի քաղաքական ողջ

Վարդան Հակոբյանը, Մաքսիմ Միրզոյանը, մյուս հիմնադիր անդամներն էին՝ Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Ժաննա. Գալստյանը, Համլետ Գրիգորյանը, Արկադի Կարապետյանը, Վալերի Մարությանը, Հ. Հովհաննիսյանը, Յուրի Ներսիսյանը, Բենիկ Օվչյանը (տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, հանրագիտարան, էջ 302): Ղարաբաղյան գործիչներից ոմանք էականորեն այլ կազմ են նշում, օրինակ, ըստ Բորիս Առուշանյանի՝ Մանուչարովի տեղակալ է դառնում Ռոբերտ Բաղդասարյանը (ոչ թե Ռոբերտ Քոչարյանը) իսկ մյուս 9 անդամները եղել են. Արկադի Կարապետյանը, Ռոբերտ Քոչարյանը, Վարդան Հակոբյանը, Ժաննա Գալստյանը, Համլետ Գրիգորյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Մաքսիմ Միրզոյանը, Բորիս Առուշանյանը (տե՛ս, Հակոբյան Թ. Կանաչ եւ սեւ, արցախյան օրագիր, Երեւան-Ստեփանակերտ, 2009, էջ 61, ծթ. 6:

52 *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, ч. 1, ст. 37.*

53 *«Սովետական Ղարաբաղ», 21.02.1988:*

54 *Տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ... Երեւան, 2002, էջ 337:*

վտանգավորությունը. **Խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ իշխանության մարմինը «ներքեւից», առանց վերադաս խորհրդային կամ կուսակցական մարմնի համաձայնության, նրանց կամքին հակառակ, որոշում էր ընդունել**: Ուստիեւ անմիջապես էլ, նույն օրը, հաջորդեց ԽՄԿԿ կենտկոմի դատապարտող որոշումը, որտեղ Շարժման մասնակիցներին «ծայրահեղականներ», «ազգայնականներ» սուր ու վտանգավոր քաղաքական որակումներն էին տրվում:

Այդ որակումները մեծ հուզում առաջացրին եւ ավելի գրգռեցին բնակչությանը:

Լեռնային Ղարաբաղում նախ Բաղիրովը, ապա նաեւ փետրվարի 22-ին այստեղ ժամանած մոսկովյան բարձրաստիճան պաշտոնյաները՝ ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ռազումովսկին եւ ԳԽ-ի նախագահության նախագահի տեղակալ Դեմիչեւը, փորձեցին տեղում հավանություն ստանալ ԽՄԿԿ ԿԿ-ի վերոհիշյալ որոշմանը: Ըստ ՏԱՍՍ լրատվական գործակալության պաշտոնական հաղորդագրության՝ մարզի կուսակցական ակտիվի ժողովն, իբր, լիակատար համաձայնություն էր տվել ԽՄԿԿ ԿԿ-ի՝ փետրվարի 21-ի այս որոշմանը եւ նրա պարունակած գնահատականներին՝ համարելով, որ այդ ամենը հնարավոր է դարձել «անպատասխանատու անձանց կոչերի, ինչպես նաեւ ինքնավար մարզի կուսակցական եւ սովետական մարմինների պասիվ դիրքորոշման շնորհիվ»[55]:

Հաջորդ օրն իսկ ԽՄԿԿ ԿԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ կուսակցության մարզկոմի պլենում, որտեղ պաշտոնանկ արվեց Բ. Կեւորկովը, եւ նրա փոխարեն մարզկոմի առաջին քարտուղար ընտրվեց Հենրիկ Պողոսյանը: Հանդես գալով հանրահավաքում՝ Դեմիչեւը եւ Ռազումովսկին հայտարարեցին, թե իրենք այս այցելությամբ շատ բան հասկացան ու վերադառնալով ամեն ինչ կհաղորդեն Մոսկվայում՝ կոչ անելով դադարեցնել գործադուլները: Սակայն նրանց կոչը եւ աշխատանքի վերադառնալու հորդորները որեւէ նշանակություն չունեցան, հանրահավաքները եւ գործադուլները շարունակվեցին:

Միաժամանակ՝ սկսվեցին ադրբեջանցիների կողմից բռնությունների կիրառման առաջին ակտերը: Մարզի հարեւանությամբ գտնվող Աղդամ քաղաքից փետրվարի 22-ին կազմակերպվեց բազմահազարանոց երթ-հարձակում դեպի Ասկերանի շրջան: Ամբոխը ճանապարհին ավերում ու հրդեհում էր շինությունները, ջարդում արտադրական տեխնիկան եւ այլն:

55 *«Սովետական Հայաստան», 25.02.1988:*

Նրանց դիմագրավելու եւ ավերածությունները կանխելու համար ոտքի ելան Ասկերանի հայ բնակիչները: Ընդհարման հետեւանքով 25 հոգի մարմնական վնասվածքներ ստացան, որոնցից 14-ին տեղափոխեցին հիվանդանոց[56]: Հարձակումը կասեցվեց միայն այստեղ տեղակայված զորամասի միջամտության շնորհիվ: Մարզից դուրս գնացող ճանապարհների վրա վերահսկողություն սահմանվեց ադրբեջանական միլիցիայի կողմից, ինչով փաստորեն սկիզբ դրվեց մարզի շրջափակմանը: Իսկ Ասկերանի վրա գրոհը նախանշում էր, թե հիմնականում ինչ բնույթի է լինելու Ադրբեջանի կողմից հակազդեցությունը: Ըստ ադրբեջանական աղբյուրների, որ կրկնեցին նաեւ կենտրոնական լրատվամիջոցները, ընդհարման ժամանակ զոհվել էր երկու ադրբեջանցի:

* * *

Նույն օրերին Երեւանում նույնպես հանգիստ չէր: Փետրվարի 18-ին հրավիրված հանրահավաքը բնապահպանական թեմաներով էր եւ վերաբերում էր, մասնավորապես, Աբովյան քաղաքում կառուցվելիք մի գործարանի: Հանրահավաքը շարժվեց դեպի ՀԿԿ ԿԿ-ի շենք եւ, փակելով փողոցը, սպասեց այնքան, մինչեւ տեղ հասան Աբովյան քաղաքի հանրահավաքի մասնակիցները՝ Իգոր Մուրադյանի գլխավորությամբ: Բնապահպանական այս հանրահավաքում, սակայն, ցուցապաստառների մեծ մասը վերաբերում էր Ղարաբաղին:

Հաջորդ օրերին Թատերական հրապարակում հրավիրված հանրահավաքը իշխանության կողմից որեւէ խոչընդոտի չհանդիպեց: Փետրվարի 20-ին տարածված թռուցիկը տեղեկացնում էր, որ այդ օրը կայանալու է ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան, որն «անպայման ընդունելու է ՀՍՍՀ-ի հետ վերամիավորման որոշում», եւ ժամը 14-ին հանրահավաքի էր հրավիրում[57]: Հանրահավաքում նույնպես հայտարարվեց, որ սպասվում է ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման կայացումը: Կազմակերպական հարցերը կարգավորելու նպատակով հանրահավաքին ներկայացվեց մի «կազմկոմիտե»՝ Իգոր Մուրադյանի նախագահությամբ, որ հաջորդ օրերից սկսեց կոչվել «Ղարաբաղ» կոմիտե: Դրա մեջ, հանրահավաքների նախաձեռնողների հետ միասին, ընդգրկված էին նաեւ մինչ այդ Ղարաբաղի խնդրով այս կամ այն կերպ զբաղված, ակտիվություն ցուցաբերած եւ կազմակերպիչների

[56] *Տե՛ս* ***Арутюнян В.***, *События в Нагорном Карабахе, ч. 1, ст. 40.*

[57] *ՀՀԱՆԱ, 15/20.02.88: Թռուցիկը ստորագրել էր Գագիկ Սաֆարյանը:*

կողմից ճանաչված մարդիկ: Հաջորդ օրերին այդ կազմը համալրվեց: «Կազմկոմիտեի» մեջ հայտարարվեցին Իգոր Մուրադյանի, Սամսոն Ղազարյանի, Մանվել Սարգսյանի, Հրայր Ուլուբաբյանի, Գագիկ Սաֆարյանի, Աշոտ Մանուչարյանի, Համբարձում Գալստյանի, Սամվել Գեւորգյանի, Վանո Սիրադեղյանի, Ալեքսան Հակոբյանի, Վազգեն Մանուկյանի, Արմեն Հովհաննիսյանի, Վաչե Սարուխանյանի անունները[58]:

«Կազմկոմիտեն» հետապնդումներից զերծ պահելու, ինչպես նաեւ հասարակական վստահությունն ու հնչեղությունն ապահովելու համար ղեկավար մարմնին կից կազմվեց «ավագների խորհուրդ»: Անկանխատեսելի էր իշխանությունների հակազդեցության բնույթը, եւ ամենեւին չէր բացառվում, որ այն հանրահավաքների կազմակերպիչների եւ հոետորների նկատմամբ լիներ շատ կոշտ: Իշխանական մարմիններում եւ բարձր պաշտոնյաների մոտ ազատ ելումուտի հնարավորություն ունեցող եւ հասարակությանը հայտնի մտավորականները նման դեպքերում կարող էին ապահովության որոշակի երաշխիք լինել, ինչպես նաեւ լրացուցիչ վստահություն ներշնչել հասարակությանը: «Ավագների խորհրդում» համաձայնեց լինել ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը, ընդգրկվեցին նաեւ ԳԱ թղթակից-անդամ Ռաֆայել Ղազարյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, գրողներ Ջորի Բալայանը, Սերո Խանզադյանը, խմբավար Հովհաննես Չեքիջյանը, ԳԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, դերասան Սոս Սարգսյանը, նկարիչ Սարգիս Մուրադյանը, գիտաարտադրական հիմնարկի տնօրեն Լեո Գասպարյանը եւ այլն: Առաջին հանրահավաքները վարում էին Համբարձում Գալստյանը, Սամսոն Ղազարյանը, Մանվել Սարգսյանը: Կազմկոմիտեի կոչով հաջորդ օրերին տեղական «Ղարաբաղ» ենթակոմիտեներ ստեղծվեցին բազմաթիվ հիմնարկներում եւ ձեռնարկություններում:

Փետրվարի 21-ին Երեւան հասավ Արցախի պատվիրակությունը՝ ձեռքին ունենալով մարզխորհրդի որոշումը, հուսալով ստանալ Հայկական ՍՍՀ իշխանությունների ու ժողովրդի աջակցությունն ու պաշտպանությունը: Հայաստանի կենտկոմում նրանց հրաժարվեցին ընդունել[59]: Եթե իշխանությունների

[58] *Ավելի ուշ՝ փետրվարի 28-ին, «Ղարաբաղ» կոմիտեի ընդլայնված նիստում Ի. Մուրադյանը հայտարարեց, որ կոմիտեի կազմը համալրվել է Լեռնային Ղարաբաղի վեց ներկայացուցիչներով (տե՛ս* ***Արշակյան Ա.***, *Արցախյան գոյամարտը, էջ 31):*

[59] *Հետաքրքիր է, որ սա ներկայացվում էր որպես անակնկալ. Ղարաբաղի պատվիրակները եթե երեք անգամ եղել էին Մոսկվայում, զարմանալի է, որ մինչ այդ օրը որեւէ կերպ չէին կարողացել նախապես կապ ունենալ կամ ստեղծել Հայաստանի իշխանությունների հետ:*

աջակցությունը նրանք չստացան, ապա հանրահավաքի մասնակիցները որոշման մասին լուրն ընդունեցին բուռն ոգեւորությամբ: Եւ իսկույն ձեւավորվեց փետրվարյան հանրահավաքների առաջին եւ միակ պահանջը. Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրել եւ անմիջապես դրականորեն արձագանքել ԼՂԻՄ դիմումին[60]: **«Սե-սիա»** վանկարկումը դարձավ հանրահավաքների հիմնական պահանջը: Ի նշան հավատարմության «Վերակառուցման» քաղաքականությանը՝ հանրահավաքի մասնակիցները ծածանում էին ԽՍՀՄ պետական դրոշը, Լենինի, Գորբաչովի, Քաղբյուրոյի անդամների (բացի Հեյդար Ալիեւից) դիմանկարները, վանկարկում «Լենին-պարտիա-Գորբաչով», «Միացում» կարգախոսները:

Հանրահավաքի մասնակիցների թիվն արագորեն աճում էր: Տասնյակ հազարավոր մարդիկ էին գալիս նաեւ շրջաններից: Բազմահազարանոց հանրահավաքների ու ցույցերի ժամանակ թույլ չէին տրվում հասարակական կարգի խախտումներ, մարդիկ միմյանց վերաբերվում էին շեշտված հոգատարությամբ՝ որպես միակամության ու համախմբվածության նշան՝ ընդհանուր, համազգային խնդրի շուրջ:

Փետրվարի 22-ի երեկոյան ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը հեռուստատեսային ելույթում արցախյան շարժումը բնութագրեց ԽՄԿԿ ԿԿ-ի՝ նախորդ օրվա որոշման ոգով ու բառապաշարով՝ մասնավորապես նշելով, որ «գոյություն ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Հայկական ՍՍՀ եւ Ադրբեջանական ՍՍՀ աշխատավորների շահերին»[61]: Ակնհայտ էր, որ հանրապետության իշխանությունը դեմ էր Շարժման ծավալմանը, եւ նրանց դիրքորոշումները դույզն ինչ չէին տարբերվում Կենտրոնի դիրքորոշումներից ու գնահատականներից: Բացատրությունը կարող էր լինել մեկը. եթե, իրոք, Մոսկվայում Ղարաբաղի պատվիրակներին ինչ-որ հույս էին ներշնչել, ապա Հայաստանի իշխանությունները դրանից բխող որեւէ հրահանգ չէին ստացել: Ավելի ճիշտ՝ ստացել էին հակառակ հրահանգներ, եւ այդ հրահանգների շրջանակներից երբեւէ դուրս չեկան: Ղարաբաղի բարձրացրած հարցը պաշտպանելու

[60] *Համբարձում Գալստյանի վկայությամբ՝ այդ պահանջն առաջին անգամ հնչեց իր «էքսպրոմտ» ելույթում, եւ դա ամենեւին դուր չեկավ Ի. Մուրադյանին. վերջինիս կարծում էր, որ՝ «հիմարություն է նստաշրջան պահանջելը» (տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 337): Անհասկանալի է, թե ուրիշ ի՞նչ շարունակություն էր տեսնում Ի. Մուրադյանը:*

[61] *«Սովետական Հայաստան», 23.02.1988:*

համար հանրապետության ոտքի ելած բնակչությունը պետք է դիմագրավեր ոչ միայն Կենտրոնի եւ Ադրբեջանի, այլեւ Հայաստանի իշխանությունների դիմադրությունը:

Փետրվարի 22-ին Երեւան ժամանեցին ՍՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դոլգիխը եւ Ա. Լուկյանովը, որոնց մասնակցությամբ փետրվարի 23-ին տեղի ունեցավ հանրապետական կուսակցական ակտիվի ժողով: ԽՄԿԿ կենտկոմի փետրվարի 21-ի դատապարտող որոշման հիմքի վրա ժողովն ընդունեց հետեւյալ բանաձեւը.

«**1.** Ակտիվի ժողովը հավանություն է տալիս եւ ի ղեկավարումն ու անշեղ կատարումն է ընդունում ՍՄԿԿ կենտկոմի 1988 թվականի փետրվարի 21-ի որոշումը՝ որպես ստեղծված պայմաններում միակ ճիշտ որոշումը:

2. Ժողովն ընդգծում է ժողովրդի, կուսակցության առջեւ հանրապետության կուսակցական ակտիվի առանձնահատուկ պատասխանատվությունը եւ գտնում է, որ կուսակցության քաղկոմները, շրջկոմները.... պետք է ձեռնարկեն վճռական միջոցներ, գլխավորեն ստեղծված իրադրության կարգավորման աշխատանքը, լայն աշխատանք ծավալեն մասսաների մեջ, աշխատավորական կոլեկտիվներում պարզաբանելու ՍՄԿԿ կենտկոմի որոշումից բխող խնդիրները....

3. Խնդրել ՍՄԿԿ կենտկոմին ազգային քաղաքականության պրոբլեմներին նվիրված ՍՄԿԿ կենտկոմի պլենումը նախապատրաստելիս մյուս պրոբլեմների կոմպլեքսում բազմակողմանիորեն քննության առնել Լեռնային Ղարաբաղի հարցը»[62]:

Այս որոշումով կուսակցության կառավարող վերնախավն ազդարարեց, որ ինքն աշխատելու է փոթորկուն իրադարձությունները կանխելու ուղղությամբ: Բանաձեւի 3-րդ կետը, որ կարող էր թվալ ծավալված համաժողովրդական պահանջին ընդառաջ արված քայլ, ակնհայտորեն Շարժումը սառեցնելու, ժամանակ շահելու նպատակ ուներ: Ի պատասխան՝ փետրվարի 23-ին բազմահազարանոց հանրահավաքը բուռն օվացիայով ընդունեց քաղաքական գործադուլի դիմելու կոչը[63], ինչպես նաեւ հանրապետության իշխանության հրաժարականի պահանջը[64]: Ողջ գիշեր ավելի քան քսան հազար հոգի քայլարշավով անցան Երեւանի փողոցներով՝ գործադուլի կոչով:

[62] *«Սովետական Հայաստան» 24.02.1988թ.:*

[63] *Գործադուլի կոչն արեց Վազգեն Մանուկյանը (տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 351):*

[64] *Նման պահանջ հնչեց Համբարձում Գալստյանի ելույթում (տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 349) :*

Համընդհանուր գործադուլը հաջորդ օրն արդեն իրականություն էր, իսկ հանրահավաքների մասնակիցների թիվը մոտենում էր կես միլիոնի:

Անկեղծ ակնկալիքը, թե հանրապետության իշխանությունը կմիանա ժողովրդական շարժմանը, ակնհայտորեն չէր իրականանալու: Փետրվարի 25-ին կես միլիոնանոց հանրահավաքում փորձեց ելույթ ունենալ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Կոնտակտն ու փոխըմբռնումը ժողովրդի հետ չստացվեց[65]:

Հանրապետության իշխանության նման պահվածքը պարտադրում էր ժողովրդին իրեն հասու միջոցներով սատար կանգնել Լեռնային Ղարաբաղին՝ թույլ չտալու համար ադրբեջանական իշխանություններին ուժի միջոցով ճնշել Արցախի բնակչության ընդվզումը: Ձեռնարկություններում տեղի էին ունենում աշխատավորական կոլեկտիվների ժողովներ, որտեղ դատապարտում էին ԽՍՀՄ, Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ իշխանությունների դիրքորոշումը ազգային հարցերի լուծման նկատմամբ, դատապարտվում էին, մասնավորապես, Կենտրոնի կողմից Շարժմանը տրվող գնահատականները: Դրության կայունացմանը չնպաստեցին ո՛չ Կ. Դեմիրճյանի, Վ. Դոլգիխի հեռուստաելույթները, ո՛չ ԽՍՀՄ ՆԳ մինիստրության ներկայացուցիչների ժամանելը Երեւան՝ մինիստրի առաջին տեղակալ Վ. Պ. Տրուշինի գլխավորությամբ, եւ ոչ էլ մամուլի ամենօրյա խմբագրականներն ու հոդվածները «ժողովուրդների բարեկամությունը մեր հարստությունն է» եւ նման խորագրերով:

Հանրահավաքներում հնչում էին Լեռնային Ղարաբաղից ստացվող տեղեկություններ՝ շարունակվող բարոյական ու ֆիզիկական ճնշումների մասին, որոնք մեծացնում էին անհանգստությունը: Մարզ ժամանած ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Ֆ. Կատուսեւի ներկայացմամբ (որի հետ հարցազրույցը տպագրվել էր մամուլում փետրվարի 26-ին)՝ մարզում իրավիճակը համարվում էր լիովին վերահսկելի, իսկ ստացվող լուրերը բնակչության նկատմամբ կիրառվող բռնությունների մասին՝ ապատեղեկատվություն: Պաշտոնատար անձանց՝ նման հաղորդումներն ընկալվում էին խոր վերապահությամբ՝ հավատ չընծայելով նրանց անկողմնակալությանը, ուստի

[65] *Երեք ամիս հետո Կարեն Դեմիրճյանին ազատեցին աշխատանքից՝ չնայած նա Շարժման նկատմամբ վերաբերմունքի հարցում մնաց Մոսկվայի կողմից գծված շրջանակներում: Սակայն, ի պատիվ իրեն, հակառակ Կենտրոնի պահանջների, նա բռնություն չկիրառեց ցուցարարների դեմ: Համոզմունք կար, որ եթե Կ. Դեմիրճյանը, ինչպես այն ժամանակ էին ձեւակերպում, «տեր կանգներ շարժմանը», ապա շատ ավելի պաշտպանված կլիներ, ու նրան չէին համարձակվի ազատել աշխատանքից:*

ավելի ու ավելի մեծանում էին դեպի հրապարակ բնակչության հոսքերը՝ վստահելի տեղեկատվություն ստանալու համար:

Անվստահությունը պաշտոնական տեղեկատվության նկատմամբ գնալով խորանում էր՝ կենտրոնական մամուլում հայ-ադրբեջանական հակամարտության մեջ հավասար մեղքի վերագրման, հանրահավաքների անցկացման նկատմամբ բացասական դիրքորոշման եւ արցախահայության առաջադրած բուն հարցը շրջանցելու կամ լռության մատնելու միտումների պատճառով: Այսօրինակ անհաշվենկատ հակազդեցությամբ կենտրոնական, տեղական իշխանությունները եւ լրատվամիջոցները, կարծես թե, ամեն ինչ արեցին Շարժումն առավելագույնս բորբոքելու համար: Անշուշտ, սա ոչ միայն նրանց նպատակը չէր, այլեւ խիստ անցանկալի էր, եւ նրանց գործողությունների բացատրությունը դարձյալ այլ տեղ չպետք է փնտրել, քան նման ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու անկարողության ու ճկունության պակասի մեջ: Ընդամենը մի քանի օրվա ընթացքում տասը հազարանոց առաջին հանրահավաքն անցավ կես միլիոնի սահմանագիծը: Հենց առաջին օրերից հատկապես ակտիվ էին մտավորականության ավելի մեծ տեսակարար կշիռ ունեցող հիմնարկները՝ Գիտությունների ակադեմիան, Բյուրականի աստղադիտարանը, բուհերը, Մատենադարանը, հեռուստապետկոմը, ստեղծագործական միությունները եւ այլն:

Փետրվարի 25-ին եւ 26-ին Երեւանի Թատերական հրապարակը, հարակից զբոսայգին եւ փողոցները լեցուն էին Երեւանի եւ հանրապետության ողջ տարածքից ժամանած ցուցարարներով: Մասնակիցների՝ նման ահռելի թվով հանրահավաքները աննախադեպ երեւույթ էին ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ ԽՍՀՄ կյանքում՝ նրա ողջ պատմության ընթացքում: Նման բռնկում ու ծավալներ, անկասկած, ոչ միայն Կենտրոնը չէր կարող սպասել, ոչ միայն հանրահավաքների կազմակերպիչները, այլեւ, թերեւս, ոչ մեկը: Հանրահավաքների օրակարգի միակ հարցը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրումը եւ ԼՂԻՄ-ի դիմումին համաձայնություն տալու պահանջն էր: Մի կողմից՝ չէր երեւում, թե իշխանությունը ուրիշ ինչ պետք է անի կես միլիոնի սահմանը հատած եւ անընդհատ ավելացող ահռելի այդ ուժի առջեւ՝ բացի նրա պահանջը կատարելուց: Մյուս կողմից, սակայն, դա, ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ին կայացրած որոշումից հետո, որպես «ներքեւից» թելադրված երկրորդ որոշում՝ տասնապատիկ ծանր հարված կլիներ խորհրդային կայսրության քաղաքական հիմքերին՝ վտանգավոր ու վարակիչ նախադեպ: Ուստիեւ՝ կենտրոնական իշխանությունը պարտավոր էր այս վիճակից դուրս գալու միջոց գտնել: Հայտարարված

«Վերակառուցման» մթնոլորտում եւ աշխարհաքաղաքական նոր պայմաններում այդ միջոցն այլեւս չէր կարող լինել բռնի ուժի զանգվածային ու անկաշկանդ գործադրումը, ինչպես դա արել էր նախորդ տասնամյակներում[66]:

ե) Փետրվարյան հանրահավաքների խաբեությամբ կասեցումը

Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում ծավալված իրադարձությունների մասին լուրերը տարածվել էին աշխարհով մեկ: Վտանգավոր չափերի եւ լարման բարձրակետի հասած ժողովրդական շարժման նկատմամբ այդ իրավիճակում ուժի գործադրումը կարող էր պարզապես խաչ քաշել «Վերակառուցման» վրա: Կենտրոնի խնդիրն էր՝ ամեն գնով հանգցնել կամ սահմանափակել, կառավարելի դարձնել ահագնացած «հրդեհը», որն, իրոք, կարող էր սպառնալ տարածվել ողջ կայսրությունով մեկ: Հաջորդ շաբաթների իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ անելու համար հաջողությամբ միջոցառումների մի համալիր իրականացվեց: Հետին թվով դժվար չէ արձանագրել, որ միջոցառումների այդ համալիրը հետեւյալ բաղադրիչներն ուներ, որոնք պիտի իրականացվեին ժամանակագրական այս հերթագայությամբ.

ա) խաբեությամբ «հանգցնել հրդեհը»՝ խոստանալ հանրահավաքի պահանջին համարժեք կամ համարյա համարժեք ինչ-որ բան,

բ) լոկալ ահաբեկչական գործողություններ եւ ուժի ցուցադրում (Սումգայիթ, Երեւան զորքեր մտցնելը),

գ) Շարժման քարոզչական վարկաբեկումը, որ սկսվեց «Ղարաբաղ» կոմիտեի «լուծարումով»:

Նախ՝ անհրաժեշտ էր հետքայլ անել, նահանջել Շարժմանը տրված կոշտ քաղաքական գնահատականներից, հանգստացնել կրքերը, նույնիսկ ինչ-որ հույսեր ներշնչել: Առաջին նման քայլը կատարվեց փետրվարի 24-ին. պաշտոնական հաղորդագրությունը ԽՄԿԿ ԿԿ-ի փետրվարի 24-ի նիստի մասին տեղեկացնում էր, որ այն Հայաստանի եւ Ադրբեջանի կուսակցական եւ սովետական մարմիններին համատեղ հանձնարարականներ է տվել, այդ թվում նաեւ՝ «մշակել եւ իրականացնել ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական եւ կուլտուրական հետագա զարգացման

[66] *Օրինակ՝ 1956-ին՝ Հունգարիայում, 1968-ին՝ Չեխոսլովակիայում, 1980-ին՝ Լեհաստանում եւ այլն:*

միջոցառումներ»[67]: Այսինքն՝ **Հայաստանին որոշակի գործառույթ-պարտավորություն էր տրվում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ**: Սա կարեւոր, նույնիսկ տպավորիչ զիջում էր: Հաջորդ քայլը կատարվեց երկու օր անց՝ փետրվարի 26-ին. Հայաստանի եւ Ադրբեջանի հեռուստատեսությամբ եւ լրատվության այլ միջոցներով հաղորդվեց Մ. Գորբաչովի դիմումը «Հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին»: Երկրի ղեկավարը դրանում, մասնավորապես, հայտարարում էր. «Մենք կողմնակից չենք այն բանի, որ խուսափենք տարբեր գաղափարների ու առաջարկությունների բացահայտ քննարկումից, բայց դա հարկավոր է անել հանգիստ, դեմոկրատական պրոցեսի եւ օրինականության շրջանակներում... չլուծված պրոբլեմներ շատ կան, բայց երկպառակությունների եւ միմյանց նկատմամբ ժողովուրդների անվստահության բորբոքումը միայն կխանգարի դրանց լուծմանը»[68]: Հայտարարություն-դիմումի տոնը տրամագծորեն տարբերվում էր փետրվարի 21-ի որոշման եւ հաջորդ օրերի կտրուկ տոնից: Այստեղ բացակայում էին «էքստրեմիստները», բացակայում էր նաեւ այն միտքը, թե բարձրացված հարցը «դեմ է երկու ժողովուրդների շահերին»: Ավելին՝ ակնարկներ կային իրադրությունը եւ խնդիրը հասկանալու եւ ապա շտկելու պատրաստակամության մասին, ինչի համար խնդրվում էր ժամանակ եւ հուզական մթնոլորտի հանդարտեցում: Գլխավոր քարտուղարը խոստանում էր հարցը քննարկել ազգային հարցերին նվիրված առաջիկա պլենումում, իսկ մինչ հարցի ըստ էության քննարկումը առաջարկվում էր հոգ տանել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ: Գորբաչովի հայտարարություն-դիմումն իր որոշակի դրական լիցքով ժողովրդի կողմից պետք է ընկալվեր որպես բարձրացված խնդիրը ճանաչելու, այն ամենաբարձր մակարդակով քննարկելու խոստում եւ երաշխիք: Բայց դա եւս բավարար չէր մեկշաբաթյա հուժկու հանրահավաքներն ու գործադուլները կասեցնելու համար. դա պետք է երաշխավորեին, այդ հավատը պետք է ներշնչեին նաեւ Շարժման՝ այդ օրերի ղեկավարները, ավելի ճիշտ՝ դա պետք է արվեր հենց նրանց միջոցով:

Այդ դերն իրենց վրա վերցրին, կամ՝ դա հանձնարարվեց հասարակության եւ, մասնավորապես, ցուցարարների մեջ հեղինակություն ու վստահություն վայելող, գրող Զորի Բալայանին եւ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին: Այն բանից հետո, երբ այլեւս չէր երեւում կես միլիոնանոց

[67] *«Սովետական Հայաստան», 25.02.1988:*

[68] *«Սովետական Հայաստան», 27.02.1988.*

հանրահավաքները դադարեցնելու որեւէ տարբերակ, նրանք հրավիրվեցին Մոսկվա, այդտեղից վերադարձան եւ կարողացան համոզել դադարեցնել հանրահավաքներն ու գործադուլները: Նրանք պատմեցին Մոսկվա կատարած իրենց ուղեւորության, Մ. Գորբաչովի կողմից իրենց ընդունելության եւ այն խոստման մասին, թե ԽՄԿԿ կենտկոմի առաջիկա պլենումներից մեկը կնվիրվի ազգային խնդիրների քննարկմանը, որտեղ կդրվի նաեւ Ղարաբաղի հարցը: Նրանց հաջողվեց համոզել հանրահավաքի 700000-ից ավելի մասնակիցներին, որ կենտրոնական իշխանությունը ստանձնում է հարցը քննարկելու եւ լուծելու պարտավորություն: Հանրահավաքները եւ գործադուլները դադարեցին[69]:

Առաջին ձեռքից վկայված որոշ մանրամասներ կարեւոր են կատարված դեպքերի եւ հետագա իրադարձությունների ճակատագրական ընթացքը հասկանալու համար: Ահա Ջ. Բալայանի վկայությունը. «Փետրվարի 24-ին ինձ ընդունեց ԽՄԿԿ ԿԿ-ի բաժնի վարիչ ընկ. Սլյունկովը: 25-ին ինձ ու Սիլվա Կապուտիկյանին ընդունեց Ա. Յակովլեւը, 26-ին՝ Մ. Ս. Գորբաչովը: Մենք գոհ մնացինք հանդիպումներից... Նախորդ օրը Քաղբյուրոն 4 ժամ էր նվիրել Ղարաբաղի խնդրին: Այն ժամանակ մենք ընդամենը հանձնաժողով էինք պահանջում... Դա (հանդիպումը) փետրվարի 26-ի ժամը 10-11-ի ժամանակաշրջանում էր: Այդ նույն ժամանակ Հայաստանում եւ Ադրբեջանական ԽՍՀ-ում զանգվածային լրատվության բոլոր միջոցներով հաղորդում էին երկու ժողովուրդներին ուղղված՝ Գորբաչովի դիմումը: Հրաժեշտի ժամանակ պաշտոնասենյակի տերն ասաց. «Երկրի համար այսքան բախտորոշ ժամանակ վտանգավոր են անգամ փոքր հրդեհները: Խնդրում եմ ձեզ հանգցնել այդ կրակը: Երեւանի հրապարակում արդեն մի ամբողջ շաբաթ է, ինչ կեռ միլիոն մարդ է կանգնած»: Մենք ասացինք, թե դժվար է բառեր գտնել: Նա մեր խոսքը հետ մղեց. «Երբ հրդեհը հանգցնում են, ապակիների մասին չեն մտածում»: Մյուս օրը Թատերական հրապարակում

[69] *Ճիշտ չէ, թե հանրահավաքները դադարեցին Գորբաչովի դիմում-հայտարարության շնորհիվ, որը փետրվարի 26-ին հեռուստատեսությամբ ներկայացրեց Դոլգիխը (տե՛ս* **Армения**: *Проблемы независимого развития, ст. 489): Ըստ «Արմենպրեսի» եւ՝ հանրահավաքի մասնակիցները սկսեցին ցրվել Գորբաչովի դիմումը հրապարակելուց եւ Կ. Դեմիրճյանի ելույթից հետո (տե՛ս «Սովետական Հայաստան», 29.02.1988): Իրականում դրանք որեւէ նշանակություն չունեցան եւ չէին կարող ունենալ. հանրահավաքը դժվարությամբ ցրվեց միայն հրապարակում Ջ. Բալայանի եւ հեռուստատեսությամբ Ս. Կապուտիկյանի ելույթներից հետո ու նրանց հորդորով, որոնց նկատմամբ այդ պահին բացարձակ վստահություն կար:*

(ըստ ավիոլուսանկարահանումների) գտնվում էր արդեն յոթ հարյուր հազար մարդ: Երեկոյան ժամը 6-ին ես ելույթ ունեցա յոթ հարյուր հազարանոց «հանձնաժողովում»: Մեկ միլիոն չորս հարյուր հազար աչքեր ինձ էին նայում: Մարդիկ հավատում էին գրողին, որը նախորդ օրը եղել էր հենց Գորբաչովի մոտ: Ես համոզեցի, որ հարկավոր է գնալ տները: Ես տեսա, թե ինչպես է դանդաղորեն ժողովուրդը թողնում հրապարակը: Բայց ինձ համար այդ օրը հետագայում դարձավ ամենասեւ օրը, իմ կյանքի ամենասեւ ժամը: Որովհետեւ հենց այդ օրը, հենց այդ նույն ժամին սկսվեց «Սումգայիթը»[70]:

Գորբաչովից ստացած հստակ ու կոշտ հանձնարարականի մասին է խոսում նաեւ Ս. Կապուտիկյանը. «Գնացեք, եւ ինչպես էլ լինի՝ հեռուստատեսությամբ թե այլ միջոցներով՝ հանգստացրեք ժողովրդին... Իմացեք, որ դուք պատասխանատու եք դեպքերի հետագա ընթացքի համար»[71]: Փետրվարի 27-ին երեկոյան հեռուստատեսային ելույթով Ս. Կապուտիկյանը համոզում էր, որ «նյութական հաղթանակից շատ ավելի կարեւոր հոգեւոր հաղթանակը» արդեն կայացել է, եւ շարունակությունը պետք է վստահել իշխանություններին[72]:

Կազմկոմիտեն չդիմադրեց, մանավանդ որ ծանրակշիռ եւ հուսադրող էին ներկայացվում Մոսկվայից բերված խոստումները: Բայց նաեւ, խոհեմաբար, մինչեւ վերջ չվստահելով Մոսկվայից եկած պատվիրակներին կամ նրանց տրված խոստումների անկեղծությանը, համենայնդեպս, հաջորդ հանրահավաքի օր հայտարարվեց՝ մարտի 26-ը, մեկ ամսում կատարված իրադարձությունների մասին հաղորդում եւ տեղեկատվություն տալու պատրվակով[73]:

Հանրահավաքների դադարեցումն այդ պահին եթե ճիշտ չէր, սակայն ինչ-որ տեղ օրինաչափ էր: Օրինաչափ էր այնքանով, որ, ի տարբերություն

[70] *«Ավանգարդ», 11.02.1990: Ջ. Բալայանն, ըստ էության, համարում է, թե հակառակ (հանրահավաքները շարունակվելու) դեպքում կարող է եւ տեղի չունենար սումգայիթյան սպանդը: Եւ դա տրամաբանական է. 700 հազար մարդ Երեւանի կենտրոնում ոչ մեկը չէր համարձակվի սկսել այն, ինչը տեղի ունեցավ Սումգայիթում, կամ եթե անգամ սկսվեր, անմիջապես կկանխվեր, ոչ թե կշարունակվեր 3 օր: Նույն համոզման է եղել նաեւ Իգոր Մուրադյանը. «Ջարդը սկսվեց, երբ դադարեց Երեւանյան ցույցը» (տե՛ս Շահմուրադյան Ս., Զմոռանալ ոչինչ, էջ 40):*

[71] *Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, էջ 291:*

[72] *Տե՛ս Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, էջ 285-292 եւ 294-299:*

[73] *Այս առաջարկը հնչեցրեց Վանո Սիրադեղյանը:*

զանգվածների, շարունակմանը անպատրաստ էին Շարժման եւ հանրահավաքների այդ օրերի կազմակերպիչները եւ ղեկավարները: Անպատրաստ էին քաղաքական իմաստով: Մասնավորապես, կարեւոր դեր խաղացող «Ավագների խորհուրդը» պատրաստ չէր հակադրվել իշխանությանը, շարունակել ղեկավարել մի քանի հարյուրհազարանոց հանրահավաքները, գնալ ավելի արմատական, հարկադրանքի քայլերի: Վճռական դեր խաղաց վերջիններիս երկու ներկայացուցիչների՝ Ս. Կապուտիկյանի եւ Ջ. Բալայանի՝ Մոսկվայում ստացած խոստումների չափազանցումը՝ փաստորեն, խաբեությունը, ինչն այդ պահին անհնար էր ստուգել[74]: Վերջին հաշվով՝ նրանց նպատակը սահմանափակվում էր նրանով, որ հարցը մտնի կենտրոնական իշխանությունների քաղաքական օրակարգ, մասնավորապես՝ այդ խնդրով բարձր մակարդակի մի հանձնաժողով կազմվի: Այնպես որ՝ Գորբաչովի տված թեկուզ անորոշ խոստումը նրանց հիմնականում բավարարում էր, իսկ «հրդեհը հանգցնելու» հրահանգը ենթակա էր պարտադիր կատարման: Ու նրանց հաջողվեց Շարժմանը հաղորդել «հավատանք, վստահենք, չխանգարենք» գործելակերպը՝ որպես Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ուղեգիծ:

Ի՞նչ տեղի կունենար, եթե իրականությունը ներկայացվեր չգունազարդված, եւ մեկ միլիոնին մոտեցող հանրահավաքները չցրվեին:

Տեղի չէր ունենա սումգայիթյան սպանդը (ինչպես համոզված էին Ջ. Բալայանը եւ Ի. Մուրադյանը):

Այդ պայմաններում Կենտրոնը ոչ մի դեպքում ուժի չէր կարող դիմել, զորք մտցնել Երեւան (ինչպես դա արեց մեկ ամիս անց, հանրահավաքների բացակայության պայմաններում). դա կնշանակեր սպանել «Վերակառուցումը»: Ցայտնոտում հայտնված, խուճապի մատնված[75] ու նահանջող

[74] *Հետագայում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից Ռ. Ղազարյանը (որ այդ ժամանակ «Ավագների խորհրդի» անդամ էր) այս առիթով կարեւոր բացահայտում է անում. «Գորբաչովի հետ Ջորի Բալայանի ու Սիլվա Կապուտիկյանի հանդիպումը, իրենց ներկայացնելով, շատ հուսադրող էր: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ դա, մեղմ ասած, չափազանցված էր: Սակայն Ջորին համոզել էր տիկին Սիլվային՝ ներկայացնել դա լավատեսորեն՝ ժողովրդի թափը չկոտրելու համար» (տե՛ս Ղազարյան Ռ., Հաշվետու եմ, էջ 144): Կասկածից դուրս է, որ այդ՝ մեղմ ասած՝ «չափազանցելը» իրականում ոչ թե ժողովրդի թափը չկոտրելու նպատակ ուներ, այլ, կեղծելով իրականությունը, կատարել Գորբաչովի հրահանգը. «հանգցնել հրդեհը՝ առանց ապակիների մասին մտածելու», ինչը եւ նրանց հաջողվեց:*

[75] *Կենտրոնի ցայտնոտն ու խուճապը շատ պարզ երեւում են արդեն իսկ Յակովլեւի եւ Գորբաչովի հետ հանդիպումների մասին Ջ. Բալայանի եւ Ս. Կապուտիկյանի արձանագրած հուշերում, եւ դա այն դեպքում, երբ երկրի ղեկավարները ամեն կերպ պետք*

Կենտրոնի համար վիճակից դուրս գալու միակ տարբերակը մնում էր արդեն նաեւ միջազգային հնչեղություն ստացած հարցում գնալ շատ լուրջ, իրական առարկայական զիջումների, զիջումներ, որոնք եթե խնդրի վերջնական լուծում անգամ չլինեին, ապա դրական առումով անպայման ճակատագրական կլինեին Լեռնային Ղարաբաղի համար[76]:

Եթե որպես հանրահավաքների դադարեցման արդյունք՝ սումգայիթյան սպանդը անհնար էր կանխատեսել, ապա հանրահավաքների շարունակման դեպքում Կենտրոնից շատ կարեւոր զիջում ստանալը հնարավոր չէր չտեսնել: Պարզապես դրա համար անհրաժեշտ էր ընդդիմանալ Գորբաչովին, չկատարել նրա հրահանգները, **քաղաքականապես հակադրվել Կենտրոնին, հակադրվել համակարգին,** ինչին պատրաստ չէին ո՛չ Շարժման տվյալ պահի ղեկավարությունը, ո՛չ առավել եւս մտավորական նոմենկլատուրայի՝ Մոսկվա գնացած երկու ներկայացուցիչները:

Եթե չցրվեին երեւանյան հուժկու հանրահավաքները, իշխանությունը չէր կարող իրականացնել նաեւ Շարժման կազմալուծմանն ուղղված հաջորդ քայլերը: Ամբողջ երեք ամիս պահանջվեց Շարժումը բազմաբնույթ հարվածների ու ճնշումների տակից հանելու, կրկին անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու համար: Իսկ, Կենտրոնին ու համակարգին հակադրվելու միջոցով, օրակարգային հիմնական խնդիրը՝ ԼՂԻՄ-ի փետրվարի 20-ի դիմումը ՀՍՍՀ Գերագույն խորհրդի քննարկմանը դնելու ու դրական պատասխան ստանալու հարցը լուծվեց միայն Շարժման որակապես նոր ղեկավարության՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ձեւավորումից հետո ու նրա ջանքերով:

զ) Սումգայիթյան ոճրագործությունը

Սումգայիթյան սպանդն, ըստ էության, Շարժումն ահաբեկելուն ուղղված գործողություն էր: Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող

է իրենց ինքնավստահ պահեին: Դա երեւում է արձանագրված այն փաստում, որ փետրվարի 25-ին Լեռնային Ղարաբաղի հարցով Քաղբյուրոյի նիստը տեւել է չորս ժամ (տե՛ս «Ավանգարդ», 11.02.1990:): Ավելի պարզ դրանք արտահայտված են, անգամ հանրահավաքների կասեցումից հետո, օրինակ՝ փետրվարի 29-ի՝ ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի նիստի սղագրության մեջ (ЦХСД, ф. 89, оп. 42, д. 18, л. 695-715):

[76] *Հետաքրքիր է, որ քիչ անց նույն բանն է ասում ԽՍՀՄ Գխ պատգամավոր Լյուդմիլա Հարությունյանը, եւ ոչ միայն իր անունից. «Ամբողջ երկիրն է ընդունում, որ 1988-ի փետրվարյան օրերին Ղարաբաղյան հարցի լուծման շանսը ձեռքից բաց թողնվեց» («Խորհրդային Հայաստան», 01.02.1990):*

Սումգայիթ քաղաքում փետրվարի 27-29-ին, երեք օր անընդմեջ, տարբեր առարկաներով զինված խմբերը քաղաքային իշխանությունների, ոստիկանության ու անվտանգության ծառայության մարմինների աչքի առաջ ու նրանց թողտվությամբ՝ «մա՛հ հայերին», «կեցցե՛ Ադրբեջանը» կարգախոսներով շրջում էին քաղաքի փողոցներում եւ զբաղվում հայազգի բնակչության որսով:

Հետագայում պարզվեց, որ նախապես կազմվել էին հայ բնակչության բնակարանների հասցեների ցուցակներ, անջատվել այդ բնակարանների հեռախոսները, գործարաններում պատրաստվել էին սրածայր երկաթաձողեր, քաղաքի տարբեր մասերում նախապատրաստվել խճաքարերի կույտեր: Փետրվարի 27-ին քաղաքի կենտրոնական հրապարակում կազմակերպվել էր հանրահավաք, որտեղ հրահրիչ ճառերով ու կոչերով հանդես էին եկել կուսակցական ու պետական պաշտոնյաներ, մշակույթի գործիչներ: Կեղծ լուրեր էին տարածվել, թե Հայաստանից քաղաքի մատույցներ է հասել գնացքի մի շարժակազմ, որը լի է խոշտանգված ադրբեջանցիների դիակներով: Հանրահավաքի մասնակիցներն անմիջապես ձեռնամուխ էին եղել վրեժխնդրության ու հաշվեհարդարի գործողությունների, որը շարունակվել էր նաեւ հաջորդ օրերին: Հանրահավաքում ելույթ էր ունեցել Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղարը եւ կոչ արել թալանել հայաշատ թաղամասերը: Եւ գործողությունները սկսվել էին հենց այդ օրը երեկոյան: Քաղաքի մերձակայքում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումները միայն փետրվարի 29-ին՝ օրվա երկրորդ կեսին էին հրաման ստացել միջամտելու, կասեցնելու հայերի կոտորածները:

Դեռեւս փետրվարի 25-26-ին Սումգայիթում հայտնվել էին «անհայտ» մարդիկ, որոնք ներկայանում էին որպես Հայաստանից մազապուրծ փախած գաղթականներ եւ «վկայում» Հայաստանում ադրբեջանցիների կոտորածների ու տանջանքների մասին: Սա նոր ու անծանոթ միջոց չէր. դեռեւս փետրվարի 20-ին նախորդող օրերին ադրբեջանական իշխանությունները սպառնում էին եւ զգուշացնում, թե Ադրբեջանից անջատվելու ուղղությամբ քայլերին հաջորդելու է հարյուր հազարավոր ադրբեջանցիների արշավանք-հարձակումը Լեռնային Ղարաբաղի վրա: Ասել է թե՝ ազգամիջյան հակամարտությունների բորբոքումն ի սկզբանե համարվում էր միակ արդյունավետ միջոցը, որ Ադրբեջանի իշխանություններն ու Կենտրոնը կարող էին հակադրել Լեռնային Ղարաբաղի քաղաքական պահանջին ու պայքարին: Ուստի զարմանալի չէ, որ փետրվարի վերջերին ադրբեջանական իշխանություններն առավել ակտիվացրին այդ ուղղությամբ ձեռնարկելիք իրենց քայլերը եւ այդ շրջանակի մեջ առան նաեւ Հայաստանում

բնակվող ադրբեջանցիներին: Ադրբեջանից հատուկ առաքված մարդիկ շրջում էին Հայաստանի ադրբեջանաբնակ վայրերում եւ նրանց առատ խոստումներով հրավիրում տեղափոխվել Ադրբեջան:

Պաշտոնական տվյալներով՝ սումգայիթյան ոճրագործության երեք օրերին զոհվել էին 32 հայեր, եւ 400-ից ավելի հայեր ստացել էին տարբեր ծանրության մարմնական վնասվածքներ, կողոպտվել էր ավելի քան 200 բնակարան, թալանվել էին խանութներ, հրկիզվել ավտոմեքենաներ: Քաղաքի շուրջ 17 հազար հայ բնակչությունը իրադարձություններից հետո լքեց քաղաքը: Նրանց մի մասն ապաստանեց Լեռնային Ղարաբաղում, Հայաստան տեղափոխվեց մոտ 3000 հոգի, իսկ մեծ մասը հեռացավ դեպի ԽՍՀՄ տարբեր երկրամասեր, արտասահմանյան երկրներ: Իսկ այն, որ Մ. Գորբաչովի՝ փետրվարի 26-ի ելույթի հաջորդ իսկ օրն սկսված սումգայիթյան դեպքերը հրահրված եւ նախապատրաստված էին, եւ դրա մեջ իրենց մասնակցությունն ունեին ոչ միայն Ադրբեջանի հատուկ ծառայությունները, ակնհայտ դարձավ շատ շուտով:

Առաջին պաշտոնական տեղեկատվությունը տվեց Կ. Դեմիրճյանը՝ փետրվարի 29-ի իր հեռուստաելույթում: Նա հաղորդեց, որ Սումգայիթում «մի խումբ խուլիգանական տարրեր անկարգություններ են հրահրել, տեղ են գտել սանձարձակության եւ բռնության դեպքեր», նշեց, որ մինչ այդ մեր հանրապետությունից էլ են հեռացել ադրբեջանական ընտանիքներ: Կենտկոմի առաջին քարտուղարի մտահոգությունն ու կոչն այն էր, որ դա Հայաստանում պատասխան քայլեր չառաջացնի ադրբեջանական բնակչության նկատմամբ[77]:

Մարտի 1-ին նաեւ կենտրոնական թերթերը փոքրիկ հաղորդագրություն տպագրեցին Սումգայիթում տեղի ունեցածի մասին. «Փետրվարի 28-ին մի խումբ խուլիգանական տարրեր հրահրել են անկարգություններ: Տեղի են ունեցել սանձարձակության ու բռնության դեպքեր: Միջոցներ են ձեռնարկված քաղաքում կյանքը նորմալացնելու, կարգապահության եւ հասարակական կարգի ապահովման համար: Քննչական մարմինների կողմից տարվում է հետաքննություն»[78]: ՏԱՍՍ-ի հաջորդ հաղորդագրության մեջ արդեն հատուկ շեշտվում էր, որ զոհվել են «տարբեր ազգությունների պատկանող մարդիկ»[79], ինչը, աղավաղելով իրականությունը, նպատակ ուներ կատարվածին տալ կենցաղային մի դիպվածի արժեք: Իրականում բռնարարքներն իրենց ե՛ւ կազմակերպման, ե՛ւ իրագործման, ե՛ւ հետեւանքների

---

77 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 01.03.1988:*

78 *«Правда», 01.03.1988.*

79 *Տե՛ս «Коммунист» 05,03,1988:*

առումով հստակորեն ուղղված էին հայ բնակչության դեմ եւ, ըստ էության, ցեղասպանության հատկանիշներ ունեին[80]:

Եղեռնագործությունից հետո հանդես գալով այդ իրադարձությունների կապակցությամբ՝ Գորբաչովը հայտարարեց, թե խորհրդային զորքերը միայն երեք ժամ են ուշացել սպանդը կանխելու համար: Իրականում, սակայն, անհերքելիորեն պարզ էր, որ երեք օր անընդմեջ շարունակվել են բռնությունները եւ հայերի կոտորածները, եւ անհնար է, որ այդ մասին անմիջապես հայտնի չդառնար երկրի բարձրագույն ղեկավարությանը: Իսկ կատարվածը ներկայացվեց որպես «խուլիգանական տարրերի», «անկայուն, տհաս» մարդկանց կողմից իրականացված անկարգություններ՝ կատարված «պրովոկացիոն ասեկոսեների, սադրիչ զրույցների» ազդեցության տակ: Ավելի քան հստակ էր, որ կենտրոնական իշխանությունը ոչ միայն հրաժարվելու էր կատարվածին քաղաքական գնահատական տալ, այլեւ հնարավորինս նենգափոխելու էր դրա էությունը, աշխատելու էր այն դարձնել ոչ ավելի, քան կենցաղային մի պատահար:

Սումգայիթյան ոճրագործությամբ, փաստորեն, խաղի մեջ էր դրվում, այսպես կոչված, «ադրբեջանական գործոնը», այն է՝ առաջ քաշված պահանջներից հայերի չհրաժարվելու դեպքում զանգվածային բռնարարքների կիրառման հնարավորությունը: Որպես իրողություն՝ այն պետք է ակնհայտորեն ցուցադրեր Մ. Գորբաչովի՝ Ղարաբաղի հայության որոշման կապակցությամբ ունեցած «մտահոգության» իրական լինելու հիմքերը: Առայժմ քողարկված պետական այս ահաբեկչությունը նպատակ ուներ ստիպել Լեռնային Ղարաբաղին ետ կանգնել Ադրբեջանից անջատվելու մտադրությունից: Սումգայիթյան ոճրագործությունը, այսպիսով, պետք է դառնար մի համոզիչ փաստարկ, թե ԽՍՀՄ-ում ազգային վարչատարածքային խնդիրների հարուցումը «ներքեւից» ինչպիսի ավարտ կարող է ունենալ: Այն պետք է նպաստեր նմանօրինակ այլ հնարավոր պահանջների դադարեցմանը ու կանխմանը, իսկ իշխանությունները պետք է ստանային ծանրակշիռ հիմք՝ նման շարժումներն ուժի կիրառումով ճնշելու համար:

Սումգայիթյան դեպքերն, իրոք, վերածվեցին սահմանաբաժանման, սակայն ոչ իշխանությունների նախատեսած առումով: Տվյալ դեպքում դրանք ընդգծեցին, որ հարցը քաղաքական լուծում չստանալու դեպքում

[80] *Սումգայիթյան եղերագործության մասին ականատեսներից հավաքած վկայությունները ամփոփել եւ հրապարակել է Շարժման ակտիվ մասնակից, հետագայում Գերագույն խորհրդի պատգամավոր Սամվել Շահմուրադյանը (Шахмурадян С. Сумгаитская трагедия в сведениях Очевидцев, Ереван, 1989).*

Լեռնային Ղարաբաղը նորմալ կյանքի եւ անվտանգության ոչ մի երաշխիք չի կարող ունենալ, որ կենտրոնական իշխանություններն այլեւս չեն կարողանում կատարել բնակչության կյանքի եւ անվտանգության երաշխավորի իրենց դերը, ուստիեւ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման խնդրով պայքարը շարունակելն այլընտրանք չունի:

է) Շարժումը հանգցնելու միջոցառումներ

Հանրահավաքները խաբեությամբ ցրելը այդ պահի համար որքան էլ կարեւոր, սակայն խնդրի լուծում չէր կարող լինել: Դա, այսպես ասենք, խաբեության ծրագրի առաջին քայլն էր: Պետք էր նաեւ ապահովել, որ տուն գնացած ցուցարարը հրապարակ չվերադառնա: Պետք էր ինչ-որ քայլերով ցուցարարին հույս ներշնչել՝ հիմնական խնդրի «վերեւից» լուծելու գործընթացի իմիտացիա ստեղծել:

Մինչ կստացվեր Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությունների մասին տեղեկատվությունը, Հայաստանում արդեն Մոսկվայից «բերված» լավատեսական տեղեկատվության հավաստիության հիման վրա եւ Շարժման ղեկավարների կոչով, աշխատավորական կոլեկտիվների անունից համընդհանուր ոգեւորությամբ հարյուրավոր հեռագրեր էին ուղարկվում Մոսկվա՝ հանրահավաքները եւ գործադուլները դադարեցնելու մասին, արտաժամյա աշխատանքով բաց թողածը լրացնելու խոստումով: Իսկ թերթերի այդ օրերի համարները լիքն էին խնդիրը կենտրոնական իշխանությունների կողմից քննարկվելու խոստումների եւ լուծելու մասին հուսադրող նյութերով: Մթնոլորտը հաջողությամբ լցվեց լավատեսական այդ սպասումով:

Լեռնային Ղարաբաղում գործադուլները դադարեցնելու որոշում կայացվեց ավելի ուշ՝ մարտի 2-ին, երբ արդեն ունեին առաջին լուրերը Սումգայիթի մասին: Սակայն Մոսկվայի նկատմամբ ներշնչված հույսն ու լավատեսությունն այնքան մեծ էին, որ Ստեփանակերտի վերջին հանրահավաքը, որպես ժեստ, անգամ շնորհավորական հեռագիր հղեց Գորբաչովին ծննդյան օրվա առթիվ[81]: Թե՛ Ղարաբաղում, թե՛ Հայաստանում Շարժման ղեկավարները համոզված էին եւ համոզում էին, որ ձեռք բերվածը, այն է՝ ի դեմս Գորբաչովի դիմումի կենտրոնական իշխանության խոստումը, կարեւոր նվաճում է, եւ պետք է ամեն ինչ անել խանգարիչ որեւէ առիթ չտալու համար, որպեսզի խնդրի քննարկումը Մոսկվայում ընթանա բնականոն

[81] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, ч. 1, ст. 47.*

հունով: Անգամ սումգայիթյան աննախադեպ ոճրագործությունը չփոխեց այդ դիրքորոշումը:

Անմիջապես ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ: Դրանք, մի կողմից՝ պետք է նպաստեին անվտանգ մթնոլորտի պահպանմանը, մյուս կողմից՝ բարձրացված քաղաքական խնդիրը նենգափոխել սոցիալ-տնտեսական խնդիրների, որոնք, ինչպես ներկայացվում էր, պատճառ էին դարձել մարզխորհրդի հայտնի որոշման համար: Կենտրոնի համոզմամբ՝ սոցիալական եւ տնտեսական բնույթի խոստումներն ու որոշումները կարող էին թույլ չտալ Շարժման հրդեհի նոր բռնկում:

Մարտի 2-ին Ստեփանակերտ գործուղվեց մոսկվաբնակ, ազգությամբ հայ մասնագետների մի խումբ, որը հանձնարարություն ուներ ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը եւ դրա բարելավման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել կենտրոնական իշխանությանը: Խմբի մեջ էին հայազգի տիտղոսավոր գիտնականներ, ակադեմիկոսներ Տ. Ս. Խաչատուրովը, Ն. Ս. Ենիկոլոպովը, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամներ Ի. Գ. Աթաբեկովը, Ա. Գ. Սարգսյանը, պրոֆեսորներ Մ. Ա. Սարկիսովը, Ռ. Ա. Սրապիոնյանցը: Հայազգի գիտնականների ընտրությունն ակնհայտորեն նպատակ ուներ հանգստացնել Ղարաբաղյան շարժման մասնակիցներին, համոզել, որ նրանց եզրակացությունները կողմնակալ չեն կարող լինել:

Կարճ ժամանակում իր ուսումնասիրություններն ավարտելով՝ այս հանձնաժողովը մարտի 19-ի իր եզրակացություններում անհրաժեշտ էր համարվում համալիր միջոցառումներ ձեռնարկել 1988-1990թթ. տնտեսության զարգացումն արագացնելու համար՝ հստակ ձեւակերպելով մարզային կառավարման մարմինների իրավունքները ներքին խնդիրների լուծման մեջ: Առաջարկվում էր դադարեցնել միտումնավոր հրահրիչ ելույթներն ադրբեջանական ռադիոյով, հեռուստատեսությամբ եւ մամուլով, հաղորդել օբյեկտիվ տեղեկատվություն: Նկատի ունենալով հայերի եւ ադրբեջանցիների լարված փոխհարաբերությունները՝ առաջարկվում էր շտապ կարգով զինվորական ուժեր տեղակայել Ադրբեջանի առանձին վայրերում՝ իրադրությունը լիովին վերահսկելու եւ զենքը կասկածելի անձանցից առգրավելու համար: Սա այն էր, ինչ սպասվում էր այս հանձնաժողովից: Սակայն հանձնաժողովի եզրակացությունը խնդրի վերջնական լուծման առումով այլ բան ստացվեց, քան նրանից ակնկալում էին ուղարկողները: Ըստ այդմ՝ Ադրբեջանի տարածքի 5% եւ բնակչության 2,6% կազմող Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական ու արմատական **լուծումը քաղաքական** է, որը կարող

էր լինել երկու տարբերակով. վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին, որ նաեւ նրա ամբողջ հայ բնակչության ցանկությունն էր, իսկ մյուս տարբերակը՝ միացումը ՌՍՖՍՀ-ին, որին համաձայն է նրա բնակչության մի մասը[82]:

Շարժումն առայժմ հանգստացնելուն եւ ժամանակ շահելուն ուղղված երկրորդ քայլը ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի մարտի 9-ի որոշումն էր, որով ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությանը հանձնարարվեց. «Ինքնավար մարզում կազմակերպել կուտակված պրոբլեմների, նրա շուրջ ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների խոր ու բազմակողմանի ուսումնասիրումը, համապատասխան առաջարկությունների մշակումը հետագայում ՍՄԿԿ կենտկոմում եւ ՍՍՀՄ կառավարությունում քննարկելու համար»[83]:

Նախապատրաստական այս միջոցառումներից հետո մարտի 16-ին Ստեփանակերտ ժամանեց բարձրաստիճան պաշտոնյաների մի պատվիրակություն[84]՝ ԽՄԿԿ կենտկոմի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման մասին որոշման նախագծի հետ մարզկոմի բյուրոյին ու մարզխորհրդի գործկոմին ծանոթացնելու համար: Ղարաբաղում, սակայն, նրանց հայտարարեցին, թե ժողովուրդը պահանջում է լուծել մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը, եւ միայն դրա լուծումից հետո կհամաձայնի քննարկել սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը: Արդյունքի չհասնելով՝ հաջորդ օրը ԽՄԿԿ ԿԿ-ի պատվիրակությունը մեկնեց Ստեփանակերտից[85]:

Իրավիճակը լիցքաթափելու ուղղությամբ ջանքեր էին գործադրում նաեւ Ադրբեջանի իշխանությունները: Մարտի 9-ին մարզ ժամանեցին Ադրբեջանական ԽՍՀ ԿԿ քարտուղար Օրուջեւը, Ադր. ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, հանրապետության պետպլանի նախագահ Մութալիբովը եւ այլ պաշտոնյաներ՝ դարձյալ նույն խնդրով՝ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մասին հանրապետական իշխանությունների մշակած որոշման նախագիծը տեղում քննարկելու եւ ընդունելի դարձնելու

---

82 *Փաստաթղթի ամբողջական հրապարակումը տե՛ս Էդգար Հովհաննիսյան, Մի խումբ մտավորականների պատվիրակության այցը Լեռնային Ղարաբաղ 1988 թվականին, Բանբեր Հայաստանի արխիվների, 2014, էջ 358-371:*

83 *«Երեկոյան Երեւան», 10.03.1988:*

84 *ԽՄԿԿ ԿԿ պրոպագանդայի բաժնի վարիչ Պ. Ալեզկոն, սոցիալական հարցերի գծով ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վ. Լախտինը, ԽՍՀՄ Պետպլանի նախագահի տեղակալ Վ. Սերովը, ԽՍՀՄ թեթեւ արդյունաբերության մինիստրի առաջին տեղակալ Է. Ռազումեեւը:*

85 *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, ч. 1, ст. 60.*

համար: Մարզկոմի բյուրոյի անդամները, սակայն, հրաժարվեցին մասնակցել նման միջոցառմանը, եւ այն նույնպես ձախողվեց: Մարտի 11-ին նույն հարցով կրկին Ստեփանակերտ ժամանեց Օրուջեւը՝ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարի տեղակալ Վ. Վ. Մաքսիմովի հետ: Այս անգամ եւս, ինչպես մարզկոմի բյուրոյի անդամները, այնպես եւ մարզխորհրդի գործկոմը, չհամաձայնեցին քննարկել տնտեսական խնդիրներ՝ պահանջելով լուծել նախ հիմնական խնդիրը՝ ԼՂԻՄ-ի միացումը Հայկական ԽՍՀ-ին, եւ ապա նոր միայն քննարկման դնել տնտեսական ու սոցիալական հարցերը: Մարտի 12-ին նույն անձերի եւ նոր ժամանած ԽՄԿԿ ԿԿ պատասխանատու աշխատող Հ. Դ. Շիշովի մասնակցությամբ, այնուամենայնիվ, քննարկվեց «Առաջարկություններ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ» հարցը, որը, սակայն, կրկին չընդունվեց[86]:

Չնայած այս ամենին եւ մարզին խոստացված հսկայական ֆինանսական հատկացմանը, մարզկոմի՝ մարտի 17-ին տեղի ունեցած պլենումը քննարկեց «Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդներին Գորբաչովի դիմումից բխող ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպության խնդիրները» հարցը: Պլենումը որոշեց դիմել ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյին՝ դրականորեն լուծելու ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը՝ դրանով իսկ ուղղելով 20-ական թվականներին թույլ տրված պատմական սխալը[87]: Այս որոշումը նշանակում էր, որ պայքարը շարունակվելու է նույն՝ փետրվարի 20-ի որոշման օրակարգով:

Եւ այնուամենայնիվ, Մոսկվան (ԽՄԿԿ ԿԿ-ը եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը) մարտի 24-ին ընդունեց եւ հրապարակեց «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 1988-1995 թթ. միջոցառումների մասին» որոշումը, որի իրականացման համար նախատեսվում էր շուրջ 455.000.000 ռուբլու հատկացում[88]:

Շարժման հետագա նոր պոռթկումը կանխարգելելու նպատակով կենտրոնական իշխանությունն, անշուշտ, միայն «քաղցրաբլիթի քաղաքականությամբ» չէր բավարարվելու: Դրան զուգահեռ պետք է կատարվեին նաեւ Շարժումը եւ նրա բարձրացված խնդիրը վարկաբեկելու քայլեր, ինչի համար ամբողջ թափով սկսեց աշխատել խորհրդային հզոր քարոզչամեքենան: Անհրաժեշտ էր ինչպես Խորհրդային Միության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս աննպաստ հասարակական կարծիք ստեղծել,

[86] *Տե՛ս նույն տեղում, էջ 59:*
[87] *«Советский Карабах», 18.03.1988.*
[88] *Տե՛ս «Սովետական Հայաստան» 29.03.1988թ.:*

հակառակ դեպքում ամեն պահի Շարժումը կարող էր բռնկվել նոր ուժով՝ արդեն իսկ դրական ու նպաստավոր ձեւավորված միութենական եւ միջազգային մթնոլորտում: Պետական քարոզչությունը փորձում էր ամեն կերպ նենգափոխել ծավալված Շարժման էությունը, ցույց տալ, որ այն ծայրահեղականության եւ ազգայնականության դրսեւորում է, հողային պահանջ: Մասնավորապես՝ ջանք էր թափվում անմիջական կապ մատնացուցել ու հավասարության նշան դնել Ղարաբաղյան շարժման ու սումգայիթյան իրադարձությունների միջեւ, հավասարակշռել հայկական եւ ադրբեջանական կողմերի գործողությունները: Այդ նպատակով կենտրոնական լրատվամիջոցները շարունակում էին ոչ ճիշտ տեղեկատվություն հաղորդել, ինչը, սակայն, գրգռում էր չափազանց զգայուն մթնոլորտը եւ դժգոհությունների ալիք բարձրացնում: Աչառու քարոզչությունը, ապատեղեկատվությունը եւ բացահայտ սպառնալիքները ճիշտ հակառակ արդյունքն ունեցան: Մեկամսյա միջոցառումներն անցան ապարդյուն. մարտի 23-ին Լեռնային Ղարաբաղում նորից գործադուլ հայտարարվեց:

ը) Պայքարի շարունակումը Հայաստանում առանց հանրահավաքների

Հանրահավաքների դադարեցումը չէր նշանակում պայքարի ավարտ. մի անգամ արդեն դրսեւորված համաժողովրդական բռնկումը չէր կարող այդքան հեշտ պարպվել: Իսկ որ ամեն ինչ հանգիստ ու խաղաղ չէր ընթանալու, վկայում էին սումգայիթյան ոճրագործությունը, կենտրոնական լրատվամիջոցների՝ դրան հաջորդած աչառու ու հրահրիչ տեղեկատվությունը, տեղական իշխանությունների պահվածքը: Հանրահավաքները, թերեւս, կվերսկսվեին սումգայիթյան ոճրագործություններից հետո, սակայն Շարժման այդ օրերի ղեկավարների ու, մասնավորապես «Ավագների խորհրդի» փայփայած ու հասարակության մեջ ամրորեն մտցված այն համոզումը, թե Մոսկվան արդեն իսկ մտադիր է լրջորեն զբաղվել խնդրով, եւ նրան պետք չէ խանգարել, դա թույլ չտվեցին: Կազմկոմիտեի մարտավարությունն ավելի զգուշավոր էր. շարունակել սպասել Մոսկվայում խնդրի ըստ էության քննարկմանը, սակայն, միաժամանակ, Շարժման մասնակիցների միջոցով ձեռնարկել միջոցառումների մի ամբողջ համալիր՝ պատրաստ լինելով նաեւ այլ զարգացումների:

Մարտի 3-ին «Ղարաբաղ» շարժման ներկայացուցիչների խորհուրդ» ստորագրությամբ «Տեղական կոմիտեների գործունեության ծրագիր»

վերնագրով տարածված թռուցիկը հանձնարարում էր տեղական կոմիտեներին, թե ինչով պետք է զբաղվեն նրանք մինչեւ հաջորդ հանրահավաք (որ նշանակված էր մարտի 26-ին) ընկած մեկ ամսվա ընթացքում: Դրանում առանձնացված խնդիրները պատկերացում են տալիս նաեւ Շարժման այդ օրերի ղեկավարների մտահոգությունների եւ որդեգրված՝ սպասելու ու վստահելու ուղեգծի նկատմամբ ունեցած թերահավատության մասին: Տեղական կոմիտեներին հանձնարարվում էր հիմնարկներում եւ ձեռնարկություններում ժողովներ հրավիրել եւ դրանց անունից հեռագրեր ու նամակներ հղել կենտրոնական իշխանության տարբեր մարմիններին՝ պահանջելով, որ ԽՄԿԿ ԿԿ-ը վերանայի փետրվարի 21-ի իր որոշման մեջ Շարժման մասնակիցներին տված «ազգայնականներ» եւ «ծայրահեղականներ» գնահատականները: Մտահոգությունն այն էր, որ այդ որակումները կարող էին հիմք հանդիսանալ հետապնդումների ու ճնշումների համար, եւ առաջին հերթին՝ տեղական իշխանությունների կողմից: Նման դեպքերի մասին Շարժման մասնակիցները պետք է բողոքներ ներկայացնեին անմիջապես իշխանության կենտրոնական մարմիններին: Մտահոգության հաջորդ առարկան ազգամիջյան բախումները եւ ընդհարումները կանխելն էր: Այդ նպատակով էլ պետք է ԽՍՀՄ գլխավոր դատախազություն բողոքներ ուղարկվեին կենտրոնական ու ադրբեջանական լրատվամիջոցների այն ղեկավարների դեմ, որոնց ապատեղեկատվությունը նման ընդհարումների առիթ կարող էր ծառայել: Կենտրոնական իշխանություններից պետք է պահանջվեր հրապարակել Սումգայիթում իրականացված վանդալիզմին զոհ գնացածների անունները, վիրավորներին տեղափոխել Ադրբեջանի տարածքից դուրս գտնվող հիվանդանոցներ, ինչպես նաեւ հատուկ հանձնաժողով ստեղծել ինչպես այս, այնպես էլ Կիրովաբադում, Ասկերանում եւ Շամխորում տեղի ունեցած բռնությունները հետաքննելու համար: Որպես գործնական առաջադրանք՝ Շարժման մասնակիցներին նաեւ հանձնարարվում էր շարունակել միջոցներ հավաքել այն փախստականների համար, ովքեր կնախընտրեին բնակվել Լեռնային Ղարաբաղում: Մի այլ հանձնարարական նպատակ ուներ դիմագրավել Շարժումը վարկաբեկելուն ուղղված իշխանական քարոզչությանը: ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակիցներին կոչ էր արվում տարբեր կոլեկտիվներում պարզաբանել Ղարաբաղյան խնդրի էությունը, իսկ այդ կոլեկտիվներն էլ, իրենց հերթին, նույն բանն անեին ԽՍՀՄ տարբեր ծայրերում իրենց գործընկեր կազմակերպությունների համար: Կազմկոմիտեն տեղեկացնում էր նաեւ, որ տեղական ենթակոմիտեների հաջորդ հավաքը կկայանա մարտի 19-ին՝ Կինոյի տանը՝ եւ

խնդրում էր տարբեր տեղեր ուղարկված փաստաթղթերի պատճենները հանձնել իրեն՝ Գրողների միության տան հասցեով[89]:

Թռուցիկը վկայում է, որ սումգայիթյան եղերագործությունը որոշակի զգաստացնող նշանակություն ունեցել էր, սակայն դեռեւս չէր սասանել Մոսկվայի նկատմամբ ներշնչված այն հույսը, ինչով ավարտվել էին փետրվարյան հանրահավաքները: Դժվար չէ նկատել, որ բողոքների եւ նամակների հասցեատերը միայն կենտրոնական իշխանությունն էր: Տեղական իշխանություններին միայն մի պահանջ էր ներկայացվում. «Ճանաչել «Ղարաբաղ» կոմիտեն՝ որպես հասարակական կազմակերպություն:

Քանի որ, ըստ վերջին հանրահավաքի արդյունքների եւ պայմանավորվածության, գրավը շարունակում էր մնալ կենտրոնական իշխանության վրա, ուստիեւ հիշյալ թռուցիկում բացակայում էր ԼՂԻՄ-ի՝ փետրվարի 20-ի դիմումի քննարկման օրակարգով հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու եւ դրական պատասխան տալու այն պահանջը, որը միակն էր փետրվարյան հանրահավաքներում: Պատճառը միայն Շարժման ղեկավարների մի մասի անվերապահ վստահությունը չէր կենտրոնական իշխանությունների խոստումների նկատմամբ: Այդ վստահությունը օրեցօր մաշվում էր, թեեւ շարունակում էր մնալ որպես Շարժման մյուս ղեկավարների տարտամ ելակետ: Այժմ Շարժումը նաեւ զրկված էր հուժկու հանրահավաքների անմիջական օժանդակությունն ունենալու հնարավորություններից: Ստիպել իշխանություններին նստաշրջան հրավիրել ԼՂԻՄ-ի դիմումի քննարկման օրակարգով հնարավոր էր մի երկրորդ տարբերակով՝ Գերագույն խորհրդի պատգամավորների 1/3-ի պահանջով, ինչը, ճիշտ է, օրենքով նախատեսված էր, սակայն գործնականում երբեւէ չէր կիրառվել ԽՍՀՄ ողջ պատմության ընթացքում: Խորհրդային իրականության մեջ Սահմանադրությամբ իշխանության բարձրագույն մարմին համարվող Գերագույն խորհրդի բոլոր նստաշրջաններն ու նիստերը տեղի էին ունենում միայն իշխող Կոմունիստական կուսակցության սանկցիայով, նրա կողմից սահմանված օրակարգով եւ որոշումների նախագծերով: Ավելին՝ որեւէ պատգամավոր, որեւէ պաշտոնական փաստաթղթի տակ իր ստորագրությունը չէր դնի առանց համապատասխան կուսակցական ղեկավարի թույլտվության կամ հրահանգի:

Միութենական հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի համար աննախադեպ՝ պատգամավորների պահանջագրերի հիման վրա

---

[89] *ՀՀԱՆԱ, 15/03.03.88:*

նստաշրջան հրավիրելու խնդրին ինքնուրույն որոշեցին ձեռնարկել Մատենադարանի «Ղարաբաղ» ենթակոմիտեի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանը, Շարժման ակտիվ մասնակիցներից Սիմոն Շահազիզյանը եւ Բյուրականի աստղադիտարանի գիտքարտուղար Մանուշակ Պետրոսյանը: Նախ՝ կազմվեց ՀԽՍՀ պատգամավորներին ուղղված նամակ-հորդորի տեքստ, որի տակ հնարավոր եղավ հավաքել ճանաչված մտավորականների (որոնց մեջ կային նաեւ ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավորներ) ստորագրություններ: Այն ստորագրեցին ԳԱ նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ակադեմիկոս Էդուարդ Աղայանը, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, հայտնի գրողներ Սերո Խանզադյանը եւ Վարդգես Պետրոսյանը, նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Սարգիս Մուրադյանը, ճարտարապետ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Արթուր Թարխանյանը, Հուշարձանների պահպանության վարչության նախագահ Ալեքսան Կիրակոսյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանը:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներից յուրաքանչյուրին հասցվեց այս դիմում-հորդորի պատճենը[90].

«Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հարգելի դեպուտատ.

Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ ծավալվող իրադարձությունների, ինչպես նաեւ Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ մտնելու մասին ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988թ. փետրվարի 20-ի դիմումի, Ադրբեջանական ՍՍՀ-ի հայ բնակչության ողբերգական դրության եւ դրանց հետեւանքով Հայաստանում առաջացած արտակարգ լարված իրավիճակի կապակցությամբ կոչ ենք անում Ձեզ՝ ընտրողների առջեւ գտնվել Ձեր դեպուտատական պարտականությունների բարձրության վրա եւ կատարել նրանց հրահանգ-պահանջը՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին, որը կքննարկի միայն երկու հարց.

1. Չեղյալ հայտարարել Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի ոչ սահմանադրական որոշումը եւ բավարարել ԼՂԻՄ-ի խնդրանքը՝ նրան ՀՍՍՀ-ի կազմի մեջ վերականգնելու կապակցությամբ:

2. ՍՍՀՄ Սահմանադրության 112-րդ հոդվածի համաձայն, Հայկական ՍՍՀ-ի նախաձեռնությամբ հրավիրել ՍՍՀՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջան եւ ՍՍՀՄ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1 եւ 2 կետերի հիման վրա հաստատել տարածքային նոր կազմակերպումներ Հայկական ՍՍՀ-ի կազմում՝ միութենական հանրապետությունների միջեւ սահմանների փոփոխմամբ:

Ժողովրդի վերոհիշյալ պահանջը բխում է մեր հանրապետության գործող Սահմանադրության դրույթներից՝ Հայկական ՍՍՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՍՍՀՄ Սահմանադրության 112 եւ 73-րդ հոդվածների պահանջներից:

Մենք ձեզ դիմում ենք սովետական ժողովուրդների բարեկամության ամրապնդման խոր գիտակցությամբ, քանի որ դա է մեր սոցիալիստական հայրենիքի հզորության հիմքերի հիմքը: Մեր սրբազան պարտքն է՝ ամեն կերպ խորացնել ու զարգացնել մասնավորապես հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը, որին, սակայն, ինչպես ցույց է տվել պատմությունը եւ ինչպես ի հայտ եկավ վերջին շրջանի իրադարձությունների ընթացքում, լուրջ խոչընդոտ է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի ստատուսի հարցում 1921թ. թույլ տրված ապօրինի գործողությունը: Ուստի քանի դեռ չի ուղղվել այդ սխալը, եւ Լեռնային Ղարաբաղը չի վերականգնվել ՀՍՍՀ-ի կազմում, հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամության ապահովման որեւէ հաստատուն երաշխիք չի կարող լինել:

Կից ներկայացնելով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը հասցեագրված Ձեր դիմումի պատճենահանված նախագիծը, հուսով ենք, որ Դուք համաձայն Հայկական ՍՍՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի կստորագրեք այն, եւ մենք կկարողանանք բոլորս հավաքվել միասին եւ լուծել հույժ կարեւոր, արտակարգ հարց: Հավատում ենք»[91]:

Փաստաթուղթն ստորագրողները իրենց հեղինակությամբ վստահություն եւ համարձակություն ներշնչեցին պատգամավորներին՝ ստորագրելու արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված դիմումի տակ: Ընդամենը երկու-երեք օրում (մարտի 10-12-ին) հաջողվեց հանրապետության ողջ տարածքից հավաքել

---

[90] *Բացի նախաձեռնողներից, պատգամավորական միջնորդագրեր հավաքող խմբի մեջ էին՝ էդվարդ Բաղդասարյանը, Հրաչ Թամրազյանը, Գալուստ Գամազյանը, Գրիգոր Պողպատյանը, Արա Կոզմանյանը, Կարեն Շահինյանը, Մանուշակ Պետրոսյանը, Երջանիկ Աբգարյանը, Ռուբեն Անդալադյանը, Ժոզեֆ Ավետիսյանը, Աշոտ Սարգսյանը, Նիկոլայ Գեւորգյանը, Արշակ Բանուչյանը, Արշակ Ղազարյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Սեյրան Մաթեւոսյանը, Արտաշես Առաքելյանը, Աղասար Հովհաննիսյանը, Սամվել Լաճիկյանը, Արտուշ Պապոյանը, Աշոտ Ղարիբյանը, Հայկ Մինասյանը, Ալեքսանդր Թամանյանը:*

[91] *ՀՀԱՆԱ, 15/08.03.88 (փաստաթղթի բնագիրը):*

պատգամավորների 108 դիմում[92]: Կազմկոմիտեն ողջունեց այս նախաձեռնությունը եւ դրա անակնկալ հաջողությունը: Պատգամավորներից հավաքվող միջնորդությունների անհրաժեշտ թիվը հաջորդ օրերին հեշտությամբ կլրացվեր: Ինչպես փետրվարյան հանրահավաքների ժամանակ, այնպես էլ այժմ, երբ Մոսկվան ու Ադրբեջանը անակնկալի առջեւ եւ դեռեւս շփոթության մեջ էին, այդ հարցով Գերագույն խորհրդի նստաշրջանի հրավիրումով եւ համապատասխան որոշման ընդունումով կարելի էր նրանցից լուրջ զիջումներ ստանալ: Սակայն դա տեղի չունեցավ: Իշխանության կոպիտ միջամտությամբ այս գործընթացը կանխվեց. պատգամավորներին ուղղված նամակ-հորդորի հեղինակներից ոմանց ստիպեցին ետ վերցնել իրենց ստորագրությունները[93], իսկ դիմումներ ստորագրած պատգամավորների մի մասին՝ իրենց դիմումները: Ճիշտ է՝ պատգամավորների միջոցով «ներքեւից» Գերագույն խորհրդին թելադրելու նախաձեռնությունը այս անգամ վերջնական նպատակին չհասավ, սակայն հետագայում հենց այս միջոցը դարձավ հիմնական ձեւը՝ ԳԽ նստաշրջաններ հրավիրելու եւ Շարժման պահանջած որոշումները կայացնելու համար[94]:

Տեղական կոմիտեները եւ ամբողջ բնակչությունը մեծագույն ոգեւորությամբ եւ պատասխանատվությամբ զբաղված էին իրենց տրված հանձնարարականների կատարմամբ: Անգամ Սումգայիթի առիթով որեւէ հավաք տեղի չունեցավ. բոլորը կարգապահ սպասում էին Կոմիտեի հրահանգին: Միայն մարտի 8-ին կանանց տոնի առիթով տպավորիչ լուռ երթ եղավ դեպի Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան, որտեղ ծաղկեպսակներ դրվեցին Սումգայիթում զոհվածների հիշատակին:

Շարժումը պետք է մտածեր գտնել նաեւ քարոզչական պայքարի այնպիսի ուղիներ, որոնցով կարելի կլիներ դիմագրավել իշխանությունների սադրանքները, Շարժման անվանարկման, հասարակական աննպաստ կարծիք ստեղծելու նրանց ճիգերը: Անհրաժեշտ էր պատասխանել մեղադրանքների եւ պիտակավորումների այն տարափին, ինչի օգտագործման մեջ խորհրդային հզոր քարոզչամեքենան մշակված ավանդույթներ ուներ եւ

[92] *Պատգամավորների դիմումների պատճենները տե՛ս նույն տեղում:*

[93] *ՀՀԱՆԱ, 13/13.03.88*

[94] *Պատգամավորների դիմումների հիման վրա արտահերթ նստաշրջան հրավիրելու մի այլ փորձ էլ ձեռնարկվեց մարտի 20-ից՝ այս անգամ հայտնի մարդկանց դիմում-հորդորի փոխարեն պատգամավորներին ներկայացնելով ընտրողների կողմից ստորագրված պատվիրանի տեքստ (Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/21.03.88), սակայն այս փորձը եւս վերջնական նպատակին չհասավ:*

հմուտ էր: Պայմաններն անհավասար էին. իշխանության տրամադրության տակ էին զանգվածային լրատվության բոլոր միջոցները, Շարժումն իր քարոզչությունն ու տեղեկատվության տարածումը կարող էր իրականացնել միայն հանրահավաքների, թռուցիկ-շրջաբերականների եւ զանազան փաստաթղթեր տարածելու միջոցով:

Որպես տեղեկատվական շրջափակումը ճեղքելու միջոց՝ հաճախացավ նամակների հոսքը Խորհրդային Միության տարբեր ատյանների, գիտության ու մշակույթի գործիչների հասցեներով: Խորհրդային մամուլի ապատեղեկատվությանը, կողմնակալ քարոզչության հսկա մամլիչին դիմագրավելու այլ ձեւ չկար, մինչդեռ անհրաժեշտ էր թույլ չտալ Լեռնային Ղարաբաղի որոշման դեմ հասարակական աննպաստ կարծիքի ձեւավորում եւ Շարժման դեմ միասնական ճակատի ստեղծում: Մյուս կողմից՝ անհրաժեշտ էր հասարակությանը տեղյակ պահել նաեւ իշխանությունների ձեռնարկած այն միջոցառումների իրական էության մասին, որոնք ներկայացվում էին որպես, իբր, բարձրացված խնդիրը լուծելու քայլեր:

Հայաստանի գիտական հիմնարկներում կազմակերպվում էին քննարկումներ, դիմումներ, ու շրջաբերականներ էին հղվում միութենական իշխանություններին ու գործընկեր հիմնարկներին՝ ձգտելով պատռել զանգվածային լրատվական միջոցներով Ղարաբաղյան շարժման տեղեկատվական շրջափակումն ու վարկաբեկումը: Դեռ փետրվարի 23-ին ԳԱ պատմության ինստիտուտը տարածեց «Լեռնային Ղարաբաղ եւ Նախիջեւան» վերնագրով պատմական մի տեղեկանք[95]: ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը մարտի 4-ին հատուկ ընդլայնված նիստ հրավիրեց, որի անունից Վ. Համբարձումյանի ստորագրությամբ ընդարձակ մի դիմում հղեց ԽՄԿԿ ԿԿ: Դրանում, մասնավորապես, ասվում էր, որ, ինչպես ցույց է տվել դառը պատմական փորձը, կիսատ-պռատ միջոցառումները եւ խոստումները անհրաժեշտ արդյունքների չեն հանգեցնի[96]: Կոլեկտիվի ժողովի որոշման տեսքով ԽՄԿԿ ԿԿ եւ ԽՍՀՄ ԳԽ-ին ուղղված դիմում հղվեց մարտի 4-ին Մատենադարանի աշխատողների անունից, որով վճռականորեն պաշտպանվում էր ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը, դատապարտվում կենտրոնական իշխանության կողմից Շարժմանը տված գնահատականները, մամուլի ապատեղեկատվությունը եւ այլն[97]:

[95] *ՀՀԱՆԱ, 15/23.02.88:*

[96] *ՀՀԱՆԱ, 15/04.03.88: Հրապարակվել է «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» գրքում, էջ 49-53:*

[97] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/04.03.88:*

Մարտի 11-ին ԳԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի ընդհանուր ժողովում ընդունված նամակի մեջ, որ ուղղված էր Մ. Գորբաչովին, նշվում էր արցախյան խնդրի լուծման անհրաժեշտության մասին, ու դատապարտվում սումգայիթյան եղեռնագործությունը[98]: Մարտի 15-ին ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի ընդհանուր ժողովի անունից կազմված եւ միաթենական լսարանին հասցեագրված դիմումի մեջ մարզային խորհրդի որոշումն ու «միացում» պահանջող Ղարաբաղյան շարժումը գնահատվում էին որպես հայոց ազգային իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման սահմանադրական իրավունքի դրսեւորում: Արձանագրվում էր, որ հայ բնակչության պահանջը առանձին ծայրահեղականների հրահրած գործողություններ չեն, դրան մասնակցում են հանրապետության մտավորականությունն ու բազմահազար ու բազմազգ բնակչությունը, որ՝ այն ուղղված չէ որեւէ ժողովրդի դեմ, համաժողովրդական շարժում է, օրինական ու սահմանադրական, չի հակասում խորհրդային օրենքներին, ավելին՝ այն վերակառուցման եւ բացախոսության ոգով տոգորված շարժում է՝ ուղղված կուսակցության հռչակած սկզբունքներով հասարակական ու ազգային կյանքը դրականորեն բարենորոգելու գործին[99]: Այսօրինակ որոշումներ ու դիմումներ հղեցին հարյուրավոր կազմակերպություններ ու անհատներ: Դրանք, հասցեատերերին ուղարկվելուց բացի, նաեւ բազմացվում եւ տարածվում էին հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս՝ ով որտեղ կարողանում էր:

Իշխանությունների քարոզարշավին հակազդելուն էր կոչված «Ղարաբաղ» շարժման կազմկոմիտե» ստորագրությամբ մարտի 19-ին տարածված «Մեր քաղաքական սկզբունքները» վերնագրով թռուցիկը (հեղինակ՝ Վազգեն Մանուկյան): Այս փաստաթուղթը ուշագրավ է նաեւ այն առումով, որ դրանում արձանագրված են մի քանի կարեւոր սկզբունքներ, որոնք, դուրս գալով հայ իրականության մեջ ավանդական ու տարածված պատկերացումների շրջանակներից ու հակադրվելով դրանց՝ ուրվագծում էին, թե որոնք են լինելու Շարժման գաղափարական հիմնասյուները: Այստեղ, նախ, ցույց էր տրվում, որ Լեռնային Ղարաբաղի բարձրացրած խնդիրը **ինքնորոշման** հարց է եւ, որպես այդպիսին, սահմանադրական: Ապա արձանագրվում էր, որ Շարժումը **կրոնական երանգ չունի** եւ ուղղված չէ որեւէ ժողովրդի դեմ, եւ, ամենակարեւորը, մերժվում են ժողովրդի համար

[98] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/11.03.88:*
[99] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/15.03.88:*

քաղաքական կողմնորոշման, մշտական բարեկամի ու մշտական թշնամու գաղափարները[100]:

Տեղեկատվական շրջափակումը ճեղքելուն էր ուղղված նաեւ «Ղարաբաղ» կազմկոմիտեի մի շրջաբերականը, որտեղ բացատրվում էր Շարժման առաջացման օրինաչափությունն ու օրինականությունը[101]: Խորհրդային Միության ժողովուրդներին ուղղված այս կոչը, որը գրված էր ռուսերեն, ներկայացնում էր տնտեսական այն աղետալի վիճակը, որ ստեղծվել էր Արցախում ադրբեջանական իշխանությունների վարած նպատակասլաց քաղաքականության հետեւանքով:

Լավ կազմակերպված եւ Շարժման բազմահազար մասնակիցների կողմից մեծ եռանդով ու պատասխանատվությամբ իրականացվող փաստաթղթային իսկական տեղատարափը տվեց իր արդյունքը: Դրանց արձագանքեցին շատերը. գիտական եւ այլ հիմնարկներ, կազմակերպություններ, հայտնի ու նշանավոր անհատներ, որոնք ոչ միայն պաշտպանող ու խրախուսական պատասխաններ էին գրում, այլեւ իրենց կողմից դիմումներ հղում կենտրոնական իշխանությանը՝ կոչ անելով չքողարկել ու չկեղծել Շարժման էությունը, Լեռնային Ղարաբաղի խնդրին տալ արդարացի լուծում: Սրանք էլ՝ իրենց հերթին, որպես ոգեւորող փաստաթղթեր՝ տարածվում էին Հայաստանում:

թ) Հանրահավաքների նոր ալիքի կանխումը

Հանրահավաքների՝ խաբեությամբ ձեռք բերված դադարի մեկամսյա շրջանը մոտենում էր ավարտին: Իշխանության բոլոր կարգի միջոցառումները միասին վերցրած՝ էական արդյունք չէին տվել եւ դույզն իսկ չէին ազդել հասարակական տրամադրությունների եւ վճռականության վրա: Ընդհակառակը՝ այս ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները շատերի համար բացահայտել էին Կենտրոնի խաբեությունը՝ ավելի բորբոքելով պայքարելու վճռականությունը: Ակնհայտ էր, որ այդ պայմաններում մարտի 26-ին նշանակված հանրահավաքը կարող էր կրկնել փետրվարյան հանրահավաքների չափերն ու թափը, լինել շարունակական ու իր պահանջներում ավելի վճռական: Այդպիսին էր ընդհանուր տրամադրվածությունը, եւ դա հստակ երեւաց մարտի 19-ին բազմահազար մարդկանցով շրջապատված Կինոյի տանը հրավիրված «Ղարաբաղ» կոմիտեի եւ տեղա-

[100] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/19.03.88:*
[101] *ՀՀԱՆԱ, 15/23.03.1988:*

կան ենթակոմիտեների ղեկավարների հավաքում: Քննարկվող հիմնական հարցը մարտի 26-ի նախապես հայտարարված հանրահավաքի անցկացման նպատակահարմարության խնդիրն էր:

Ըստ ՆԳ նախարարության կազմած տեղեկանքի՝ բուռն քննարկումների ընթացքում Շարժման ղեկավարների կարծիքները տարբեր են եղել: Շարժման ղեկավարների մի մասն առաջարկել է պահպանել Մոսկվայի որոշմանը սպասելու մարտավարությունը: Ի. Մուրադյանը համարել է, որ հանրահավաքը կխանգարի Մոսկվայում Լեռնային Ղարաբաղի հարցի խոստացված քննարկմանը. «Դուք կփոշմանեք... մենք կարող ենք կորցնել նաեւ այն, ինչի հասել ենք այսօր»,– զգուշացրել է նա: Նշանակված հանրահավաքին դեմ են արտահայտվել նաեւ Սոս Սարգսյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ջորի Բալայանը եւ ուրիշներ: Սակայն հավաքի մասնակիցների ճնշող մեծամասնությունը կողմնակից է եղել հանրահավաքները վերսկսելուն: Նույնն է պահանջել նաեւ շենքը շրջապատած բազմությունը, որ բարձրախոսով լսում էր ներսի ելույթները: Եւ բազմամարդ դահլիճը քվեարկել է հօգուտ հանրահավաքները վերսկսելուն, դեմ է քվեարկել ընդամենը ութ հոգի[102]:

Չնայած Մոսկվայից եւ Բաքվից եկած զանազան պաշտոնյաների ամենօրյա ջանքերին, ոչինչ հնարավոր չեղավ փոխել նաեւ Լեռնային Ղարաբաղում: Այստեղ կուսակցական կազմակերպությունների գծով տարվող բուռն աշխատանքն ավարտվեց նրանով, որ մարզային կոմիտեն մարտի 17-ին իր ընդունած որոշմամբ դիմեց ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրո՝ խնդրելով դրականորեն լուծել ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու՝ ժողովրդի բարձրացրած խնդիրը:

Այսինքն՝ ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Ղարաբաղում Շարժման «հրդեհը» հանգցնելու միջոցառումների ողջ համալիրն անցել էր ապարդյուն, եւ իշխանության համար կարող էր կրկնվել փետրվարյան մղձավանջը: Ուստի նրանք, իրենց հերթին, պետք է տրամաբանական ավարտին հասցնեին Շարժումը կազմալուծելուն եւ խոչընդոտելուն ուղղված իրենց միջոցառումները՝ բոլոր երեք ուղղություններով. սոցիալ-տնտեսական բարելավումների խոստումներով, Շարժումը վարկաբեկելուն ուղղված քարոզչության խստացմամբ, բռնի ուժի սպառնալիքով:

Կենտրոնական իշխանության հապշտապ, բայց նաեւ աննախադեպ միջոցառումների այդ համալիրը հստակ ցուցադրում է հանրահավաքների վերսկսման հետ կապված՝ նրանց խորագույն տագնապը:

[102] *ՀԱԱ, ֆ.1, ց.127, գ. 554, թ.79-82: Նույնն է պատմում նաեւ Նիստին ներկա Սամվել Շահմուրադյանը (տե՛ս Շահմուրադյան Ս., «Զմոռանալ ոչինչ», էջ 57-59):*

Քարոզչական ահաբեկչության բարձրակետը եղավ մարտի 21-ին «Պրավդայում» հրապարակված «Հույզեր եւ բանականություն» հոդվածը, որտեղ լուտանքներ էին թափվում Շարժման հատկապես հայաստանյան մասնակիցների հասցեին[103], ինչպես նաեւ նույն օրը ՏԱՍՍ-ի մի հաղորդագրությունը[104], իսկ մարտի 22-ին «Ի հեճուկս ողջամտության» վերնագրով մի այլ հոդված տպագրվեց «Իզվեստիայում»[105]: Բառապաշարից ու որակումներից ակնհայտ էր, որ քարոզչական այս նախապատրաստությունները նպատակաուղղված էին որպես հիմնավորում ծառայելու նաեւ բռնի ուժի կիրառման համար եւ, ահաբեկման մատնելով, կանխելու հանրահավաքների վերսկսումը, հասնելու Շարժման կազմալուծմանը[106]:

Մարտի 22-ին տեղի ունեցան ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահությունների նիստեր նույն օրակարգով, որոնք ընդունեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված միանման դիմումներ՝ խնդրելով «Սահմանադրության շրջանակներում» կարգավորել խնդիրը[107]:

Մարտի 22-ին հեռուստատեսությամբ կրկին ելույթ ունեցավ ՀԿԿ առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, նշելով մասնավորապես հետեւյալը. «Մեզանից յուրաքանչյուրը գիտե, որ դեռեւս երբեք եւ ոչ ոքի չի հաջողվել նյարդայնության, գրգռվածության եւ աֆեկտի պայմաններում ընդունել ճիշտ

[103] *Эмоции и разум, «Правда» 21. 03. 1988: Մարտի 23-ին այն թարգմանաբար հրապարակեց նաեւ «Սովետական Հայաստանը»: Հոդվածի տակ դրված էր երեք թղթակիցների՝ Հայաստանից Յու. Առաքելյանի, Ադրբեջանից՝ Զ. Կադիմիրովի, Թերթի հատուկ թղթակից Գ. Օվչարենկոյի ստորագրությունը: Նույն օրը հայաստանյան թղթակիցը թերթի խմբագրին ուղղված «բաց նամակում» բողոք հայտնեց հոդվածի կապակցությամբ՝ հայտարարելով, որ այն տպագրվել է առանց իր վերջնական համաձայնության եւ որ ինքը համաձայն չէ դրա հիմնական դրույթներին (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/21.03.88):*

[104] *«Правда» 23. 03. 1988.*

[105] *«Известия», 22.03.1988.*

[106] *Ինչպես մինչ այդ, այնպես էլ հետագայում մամուլի նմանօրինակ հրապարակումները բազմաթիվ հիմնարկներում քննարկվում եւ արժանի պաշտոնական պատասխաններ էին ստանում: Օրինակ՝ հիշյալ երեք հրապարակումները Մատենադարանի կուսակցական կազմակերպության ժողովը գնահատել է «սադրանք», «վճռական բողոք հայտնել հայ ժողովրդի նկատմամբ կենտրոնական մամուլի ահաբեկչության առնչությամբ՝ պահանջելով այն անհապաղ դադարեցնել»: Որոշումն ուղարկվել է Գորբաչովի, «Պրավդայի» եւ «Իզվեստիայի» հասցեներով (տես ՀՀԱՆԱ, 15/22.03.1988):*

[107] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 24.03.1988:*

որոշումներ: Մինչդեռ միտինգը, որը մարտի 26-ին առաջարկում են անցկացնել որոշ ոչ ողջամիտ, առանձին սանձարձակ մարդիկ, անկասկած կհանգեցնի հույզերի ու կրքերի նոր բորբոքման, հղի կլինի անգուշակելի, գուցե եւ ողբերգական հետեւանքներով» [108]:

Մարտի 23-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը նիստ հրավիրեց բոլոր միութենական հանրապետությունների ԳԽ նախագահների մասնակցությամբ՝ օրակարգի միակ հարց ունենալով Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված իրադարձությունները: Ա. Գրոմիկոյի եւ Մ. Գորբաչովի զեկուցումները լսելուց հետո ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանական եւ Հայկական ՍՍՀ-ների իրադարձությունների առթիվ միութենական հանրապետությունների դիմումներին առնչվող միջոցառումների մասին» որոշումը: Դրանում միանշանակ հրահանգվում էր հանրահավաքների կազմակերպման եւ Շարժումը շարունակելու դեպքում ուժային մեթոդներ կիրառել. «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների կապակցությամբ Ադրբեջանական եւ Հայկական ՍՍՀ-ներում ստեղծված իրավիճակը վնաս է հասցնում այդ հանրապետությունների ժողովուրդներին եւ ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ի՝ որպես միասնական միութենական բազմազգ պետության ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդմանը: Անթույլատրելի համարել, երբ ազգային-տերիտորիալ բարդ հարցերը փորձում են լուծել պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու միջոցով, հույզերի ու կրքերի բորբոքման, ամեն կարգի ինքնագլուխ կազմավորումների ստեղծման մթնոլորտում, որոնք հանդես են գալիս ՍՍՀՄ Սահմանադրության մեջ վավերացված ազգային-պետական եւ ազգային-վարչական սահմանների վերաձեւման օգտին, ինչը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների: Վճռաբար դատապարտել առանձին անձանց ու խմբերի կողմից թույլ տրված հանցավոր գործողությունները, ինչի հետեւանքով կան մարդկային զոհեր: Ի գիտություն ընդունել, որ դրա մեղավորները ենթարկվում են վարչական եւ քրեական պատասխանատվության.... Ակտիվորեն հանդես գալ նացիոնալիստական եւ էքստրեմիստական ամեն տեսակ դրսեւորումների դեմ: Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը եւ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը՝ իրականացնել անհրաժեշտ համաձայնեցված միջոցառումներ՝ սոցիալիստական օրինականության եւ հասարակական կարգի ամրապնդման նպատակով, ապահովել բոլոր ազգությունների քաղաքացիների օրինական

[108] *«Սովետական Հայաստան», 23.02.1988:*

շահերի պաշտպանությունը, խիստ պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր իրենց գործողություններով ապակայունացնում են իրադրությունը, ձեռք բարձրացնում եղբայրական սովետական ժողովուրդների բարեկամության ու համագործակցության վրա»: Ապա նաեւ նույն որոշմամբ հանձնարարվում էր ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին՝ «մշակել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական եւ սոցիալ-կուլտուրական զարգացման հասունացած հարցերի լուծման նպատակին ուղղված միջոցառումներ», իսկ ՍՍՀՄ դատախազությանը եւ ՍՍՀՄ ներքին գործերի մինիստրությանը՝ «բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել Ադրբեջանական եւ Հայկական ՍՍՀ-ների տերիտորիայում հասարակական կարգուկանոն հաստատելու եւ բնակչության օրինական շահերը պաշտպանելու համար»[109]:

Այսինքն՝ այն հույսերը, որ առաջացել էին դժվարին պահին կենտրոնական իշխանությունների որոշ խոստումներից ու Շարժման ղեկավարների՝ դրանց լավատեսական մեկնաբանություններից, թե նրանք կքննարկեն ԼՂ-ի բարձրացրած հարցը, ինչի շնորհիվ եւ դադարել էին փետրվարյան հանրահավաքները, ի դերեւ ելան: Այժմ հայտարարվում էր «սահմանների վերաձեւման» անթույլատրելիության մասին, օգտագործվում էին նույնպիսի կոշտ որակումներ, ինչպես փետրվարի 21-ին, իսկ «ոչ ֆորմալ լիդերներին» սպառնում պատասխանատվության կանչել:

Մեկամսյա ժամանակը բավարար եղավ Կենտրոնին Շարժումը ուժով ճնշելուն նախապատրաստվելու համար: Մարտի 24-ին, դրան համապատասխան մի քանի հապշտապ որոշումներ էլ ընդունեց Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, որոնք եւս ակնհայտորեն ուղղված էին նշանակված հանրահավաքն ամեն գնով կանխելուն: Դրանցից առաջինը հավանություն էր տալիս նախորդ օրը Մոսկվայում կայացված որոշմանը՝ բառացի կրկնելով նրանում պարունակած գնահատականները: Նույն որոշման 4-րդ կետով դադարեցվում էր «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը (որը ճանաչելու եւ որպես հասարակական կազմակերպություն օրինականացնելու խոստումը հանրապետության իշխանության կողմից տրվել էր ընդամենը մի քանի օր առաջ). «Հաշվի առնելով, որ այսպես կոչված «Ղարաբաղ կոմիտեի» գործունեությունը չի համապատասխանում Հայկական ՍՍՀ Սահմանադրությանը եւ գործող օրենսդրությանը, ձեռք է բերել քաղաքականապես վնասակար բնույթ եւ հակասում է ժողովրդի շահերին,

[109] *Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 13, հոդվ. 195:*

անօրինական ճանաչել այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեն եւ դադարեցնել նրա գործունեությունը»[110]:

Նույն օրն ընդունվեց նաեւ «Հանրապետության քաղաքներում ու շրջաններում քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվող ժողովների եւ այլ մասսայական միջոցառումների անցկացման ժամանակավոր կանոնների մասին», որոշումը, որը իրավական հիմք պետք է տար նման միջոցառումները ուժով խափանելու համար: Դրան զուգահեռ՝ համապատասխան օրենսգրքում պատիժներ սահմանվեցին այդ կարգը խախտողների համար: Ընդ որում՝ փոփոխությունները ուժի մեջ էին մտնում հենց նույն օրվանից՝ մարտի 24-ից[111]: Անմիջապես հաջորդ օրը՝ մարտի 25-ին, մամուլում պաշտոնական տեղեկատվություն տարածվեց, թե հիմնարկներում արդեն իսկ սկսվել է «Ղարաբաղ» ենթակոմիտեների լուծարումը, ինչը կեղծիք էր եւ չէր համապատասխանում իրականությանը:

Միջոցառումների այս ցանկը, բնականաբար, կազմվել էր կենտրոնական իշխանությունների հետ համատեղ կամ նրա հանձնարարությամբ, եւ պատահական չէ, որ նույն օրն էլ Ադրբեջանի ԳԽ-ի նախագահությունը նույնպիսի որոշում էր կայացրել Լեռնային Ղարաբաղում գործող «Կռունկ» կոմիտեի գործունեության արգելման մասին:

Եւ վերջապես հիմնական քայլի՝ Երեւան զորք մտցնելու նախորդ օրը՝ մարտի 24-ին, հրապարակվեց «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 1988-1995 թթ. միջոցառումների մասին» որոշումը՝ այն ներկայացնելով որպես բարձրացված խնդրի լուծում, իսկ քարոզչամիջոցները սկսեցին լայնորեն թմբկահարել այն:

Դրանից հետո՝ մարտի 25-ին, Երեւան մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, եւ մայրաքաղաքի երկնքում հայտնվեցին անկանոն պտույտներ գործող տասնյակ ռազմական ուղղաթիռներ[112]:

Փետրվարյան հանրահավաքներից հետո ստացած մեկամսյա միջոցը Մոսկվան կարողացավ օգտագործել շփոթ վիճակից դուրս գալու համար: Շարժումը ստիպված էր տեղի տալ. Կազմկոմիտեի անունից տարածված թռուցիկը ազդարարում էր, որ «Հայաստանի խաղաղ մայրաքաղաքը զորք է

[110] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ, 1988, հ. 5-6, հոդվ. 20: Նույն օրը Ադրբեջանի ԳԽ նախագահությունն, իր հերթին, նույնպիսի որոշում է ընդունում «Կռունկ» կոմիտեի մասին:*

[111] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 5-6, հոդվ. 21:*

[112] *Դրանց անմիջապես տրված «Վերակառուցման ծիծեռնակներ» սրամիտ անվանումը նշանակում էր, թե հասարակական գիտակցության մեջ առաջին լուրջ ճեղքն է առաջանում «Վերակառուցման» հետ կապված ակնկալիքներում:*

մտել», եւ զգուշացնում, որ՝ «ինչպես չի երաշխավորված ինքնորոշման սահմանադրական կարգը, այնպես էլ չի երաշխավորված այս օրերին փողոցներում ու հրապարակներում գտնվող ժողովրդի կյանքը»: Տեղեկացվում էր, որ դրա պատճառով վերանայված է նաեւ հանրահավաք անցկացնելու մասին որոշումը, եւ կոչ էր արվում մարտի 26-ին մեկ մարդու նման դուրս չգալ տներից[113]: Երեւանը հայտարարվեց մեռյալ քաղաք:

Իշխանությունների ուժային ձեռնարկումները կանխեցին նշանակված հանրահավաքի անցկացումը, սակայն էականորեն նվազեցրին կենտրոնական իշխանությունների նկատմամբ եղած հավատը (որ ներշնչվել էր փետրվարի վերջերին), իսկ հանրապետական ղեկավարության նկատմամբ դժգոհությունը սկսեց վերածվել ատելության:

Երեւանը, փաստորեն, օկուպացված էր, Թատերական հրապարակը՝ պաշարված զրահատեխնիկայով զինված խորհրդային զորքերի կողմից: Նրանք իրենց հսկողության տակ էին առել հանրապետության պետական ու քարոզչական բոլոր կարեւոր գերատեսչությունները, մարմիններն ու կետերը, հսկողություն սահմանել շրջաններից Երեւան մտնող բոլոր ճանապարհների վրա, արգելված էր մամուլում արցախահայության պահանջի մասին որեւէ դրական արձագանքի հրապարակում: Խաբվածության զգացումը եւ խաղաղ ու խիստ օրինապահ հանրահավաքների դեմ ռազմական ուժի դուրսբերման այդօրինակ անհամարժեք քայլը մեծացրին հասարակական ներքին լարվածությունը եւ վիրավորանքը: Ժողովրդի կամքը թեեւ կաշկանդված, սակայն իրականում ընկճված չէր, եւ դրա դրսեւորման առիթը չէր կարող ուշանալ:

ժ) Անհավասար քարոզչական գոտեմարտը

«Ղարաբաղ» կոմիտեն, կանխազգալով իշխանության կողմից հնարավոր միջոցառումները, նախորդ օրերին (հավանաբար՝ մարտի 22-23) տարածեց «Ղարաբաղ» կոմիտեի դիմումը հայ ժողովրդին» վերնագրով մի թռուցիկ, որում տեղեկացվում էր, որ սկսվելու է ծանր փորձությունների շրջանը, ենթադրելով նաեւ, որ Գերագույն խորհուրդը, խախտելով Սահմանադրության 51-րդ հոդվածը, հավանաբար կարգելի Կոմիտեի գործունեությունը: Թռուցիկը հերքում էր Շարժման ու նրա ղեկավարության դեմ տարածվող հիմնական մեղադրանքները, մասնավորապես՝ Շարժմանը կպցված «հակախորհրդային», «ազգայնական», «ծայրահեղական»,

[113] *ՀՀԱՆԱ, 15/25.03.88 (հեղինակ՝ Վանո Սիրադեղյան):*

անօրինական ճանաչել այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեն եւ դադարեցնել նրա գործունեությունը»[110]:

Նույն օրն ընդունվեց նաեւ «Հանրապետության քաղաքներում ու շրջաններում քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվող ժողովների եւ այլ մասսայական միջոցառումների անցկացման ժամանակավոր կանոնների մասին», որոշումը, որը իրավական հիմք պետք է տար նման միջոցառումները ուժով խափանելու համար: Դրան զուգահեռ՝ համապատասխան օրենսգրքում պատիժներ սահմանվեցին այդ կարգը խախտողների համար: Ընդ որում՝ փոփոխությունները ուժի մեջ էին մտնում հենց նույն օրվանից՝ մարտի 24-ից[111]: Անմիջապես հաջորդ օրը՝ մարտի 25-ին, մամուլում պաշտոնական տեղեկատվություն տարածվեց, թե հիմնարկներում արդեն իսկ սկսվել է «Ղարաբաղ» ենթակոմիտեների լուծարումը, ինչը կեղծիք էր եւ չէր համապատասխանում իրականությանը:

Միջոցառումների այս ցանկը, բնականաբար, կազմվել էր կենտրոնական իշխանությունների հետ համատեղ կամ նրա հանձնարարությամբ, եւ պատահական չէ, որ նույն օրն էլ Ադրբեջանի ԳԽ-ի նախագահությունը նույնպիսի որոշում էր կայացրել Լեռնային Ղարաբաղում գործող «Կոունկ» կոմիտեի գործունեության արգելման մասին:

Եւ վերջապես հիմնական քայլի՝ Երեւան զորք մտցնելու նախորդ օրը՝ մարտի 24-ին, հրապարակվեց «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 1988-1995 թթ. միջոցառումների մասին» որոշումը՝ այն ներկայացնելով որպես բարձրացված խնդրի լուծում, իսկ քարոզչամիջոցները սկսեցին լայնորեն թմբկահարել այն:

Դրանից հետո՝ մարտի 25-ին, Երեւան մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ, եւ մայրաքաղաքի երկնքում հայտնվեցին անկանոն պտույտներ գործող տասնյակ ռազմական ուղղաթիռներ[112]:

Փետրվարյան հանրահավաքներից հետո ստացած մեկամսյա միջոցը Մոսկվան կարողացավ օգտագործել շփոթ վիճակից դուրս գալու համար: Շարժումը ստիպված էր տեղի տալ. Կազմկոմիտեի անունից տարածված թռուցիկը ազդարարում էր, որ «Հայաստանի խաղաղ մայրաքաղաքը զորք է

[110] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ, 1988, հ. 5-6, հոդվ. 20: Նույն օրը Ադրբեջանի ԳԽ նախագահությունն, իր հերթին, նույնպիսի որոշում է ընդունում «Կոունկ» կոմիտեի մասին:*

[111] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 5-6, հոդվ. 21:*

[112] *Դրանց անմիջապես տրված «Վերակառուցման ծիծեռնակներ» սրամիտ անվանումը նշանակում էր, թե հասարակական գիտակցության մեջ առաջին լուրջ ճեղքն է առաջանում «Վերակառուցման» հետ կապված ակնկալիքներում:*

մտել», եւ զգուշացնում, որ՝ «ինչպես չի երաշխավորված ինքնորոշման սահմանադրական կարգը, այնպես էլ չի երաշխավորված այս օրերին փողոցներում ու հրապարակներում գտնվող ժողովրդի կյանքը»: Տեղեկացվում էր, որ դրա պատճառով վերանայված է նաեւ հանրահավաք անցկացնելու մասին որոշումը, եւ կոչ էր արվում մարտի 26-ին մեկ մարդու նման դուրս չգալ տներից[113]: Երեւանը հայտարարվեց մեռյալ քաղաք:

Իշխանությունների ուժային ձեռնարկումները կանխեցին նշանակված հանրահավաքի անցկացումը, սակայն էականորեն նվազեցրին կենտրոնական իշխանությունների նկատմամբ եղած հավատը (որ ներշնչվել էր փետրվարի վերջերին), իսկ հանրապետական ղեկավարության նկատմամբ դժգոհությունը սկսեց վերածվել ատելության:

Երեւանը, փաստորեն, օկուպացված էր, Թատերական հրապարակը՝ պաշարված զրահատեխնիկայով զինված խորհրդային զորքերի կողմից: Նրանք իրենց հսկողության տակ էին առել հանրապետության պետական ու քարոզչական բոլոր կարեւոր գերատեսչությունները, մարմիններն ու կետերը, հսկողություն սահմանել շրջաններից Երեւան մտնող բոլոր ճանապարհների վրա, արգելված էր մամուլում արցախահայության պահանջի մասին որեւէ դրական արձագանքի հրապարակում: Խաբվածության զգացումը եւ խաղաղ ու խիստ օրինապահ հանրահավաքների դեմ ռազմական ուժի դուրսբերման այդօրինակ անհամարժեք քայլը մեծացրին հասարակական ներքին լարվածությունը եւ վիրավորանքը: Ժողովրդի կամքը թեեւ կաշկանդված, սակայն իրականում ընկճված չէր, եւ դրա դրսեւորման առիթը չէր կարող ուշանալ:

ժ) Անհավասար քարոզչական գոտեմարտը

«Ղարաբաղ» կոմիտեն, կանխազգալով իշխանության կողմից հնարավոր միջոցառումները, նախորդ օրերին (հավանաբար՝ մարտի 22-23) տարածեց «Ղարաբաղ» կոմիտեի դիմումը հայ ժողովրդին» վերնագրով մի թռուցիկ, որում տեղեկացվում էր, որ սկսվելու է ծանր փորձությունների շրջանը, ենթադրելով նաեւ, որ Գերագույն խորհուրդը, խախտելով Սահմանադրության 51-րդ հոդվածը, հավանաբար կարգելի Կոմիտեի գործունեությունը: Թռուցիկը հերքում էր Շարժման ու նրա ղեկավարության դեմ տարածվող հիմնական մեղադրանքները, մասնավորապես՝ Շարժմանը կպցված «հակախորհրդային», «ազգայնական», «ծայրահեղական»,

[113] *ՀՀԱՆԱ, 15/25.03.88 (հեղինակ՝ Վանո Սիրադեղյան):*

«ազգային էգոիզմով տառապող» պիտակները: Ճշգրիտ էր եզրահանգումը. «Ոչ թե Ղարաբաղը նրանց վախեցրեց, այլ՝ ժողովրդավարությունը»: Կոմիտեն կոչ էր անում առաջիկա օրերին ձեռնպահ մնալ հանրահավաքներից եւ նմանօրինակ այլ միջոցառումներից, սակայն չհուսահատվել ու չընկրկել, ինչպես նաեւ հավաստիացնում էր. «Ոչ մեկը չի կարող չեղյալ հայտարարել ժողովրդական պայքարը, որը պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվել արդարությունը»[114]:

Համարելով, որ հաջողությամբ կանխված է նոր հանրահավաքների հնարավորությունը, իշխանությունն ավելի ու ավելի լայնորեն էր թմբկահարում մարտի 24-ի որոշումը՝ այն ներկայացնելով որպես բարձրացված հարցի սպառիչ լուծում: Դրան չդիմագրավելը կարող էր ոմանց մեջ պատրանք ստեղծել, թե հենց դա է «լուծումը», եւ կազմալուծել Շարժումը: Այս առիթով թռուցիկի տեսքով մարտի 30-ին տարածված մի վերլուծություն լավագույնս բացատրում է Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման մասին մարտի 24-ին ընդունված փաստաթղթի էությունն ու տալիս դրա քաղաքական գնահատականը.

«Քաղաքական այլ իրադրության մեջ բարենորոգումների այս ծրագիրն, անկասկած, լայն խանդավառություն կառաջացներ ինչպես մարզի աշխատավորության, այնպես էլ ընդհանրապես ողջ հայ ժողովրդի մեջ: Սակայն ինչպես պարզվում է կենտրոնական մամուլի հաղորդագրություններից («Իզվեստիա», 1988թ. մարտի 25, 28, 30), ՍՍՀՄ ղեկավարության «հոգատարությունը» սպասված արձագանքը չգտավ Լեռնային Ղարաբաղում: Դա բացատրվում է նախ այն բանով, որ ծրագրում անտեսված եւ լռության է մատնված Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման սահմանադրական պահանջը, երկրորդ՝ որ ոչ մի հայ հավատ չի տածում բարենորոգումների իրականացման հաջողության նկատմամբ: Պատմական դառը փորձը հայ ժողովրդին բերել է այն համոզման, որ ՍՄԿԿ կենտկոմի եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի մշակած միջոցառումները կունենան մոտավորապես նույնպիսի արդյունք, ինչպիսին ունեցան Օսմանյան կայսրության կողմից Արեւմտյան Հայաստանում «իրականացված» բարենորոգումները: Համեմատությունն արտառոց կարող է թվալ միայն առաջին հայացքից. սակայն մի պետություն, որ չկարողացավ կանխել Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ կիրառված եղեռնը, չի կարող երաշխավորել նաեւ նշված ծրագրի իրագործումը»[115]:

[114] *ՀՀԱՆԱ, 15/23.03.88:*

[115] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 21-22, վերնագրված՝ «Լեռնային Ղարաբաղում իրագործվելիք սոցիալ-տնտեսական բարենորոգումների ծրագրի մասին»: Թռուցիկի հեղինակը Մատենադարանի «Ղարաբաղ» ենթակոմիտեի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր:*

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ, իրոք, նախատեսված եւ հատկացված միջոցները ոչ միայն Լեռնային Ղարաբաղի իշխանությունների տնօրինությանը չէին հասնելու, այլեւ Բաքուն դրանք, առաջին հերթին, օգտագործելու էր նույն Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական բնակավայրերն ամրացնելու, վերաբնակեցումներ կատարելու եւ ժողովրդագրական իրավիճակը փոխելու նպատակով: Շարունակության մեջ նույն փաստաթուղթը ցույց է տալիս նաեւ, որ այդ որոշումն էական հետընթաց քայլ է՝ ընդամենը մեկ ամիս առաջ՝ փետրվարի 24-ին նույն Կենտրոնի կողմից ընդունած մեկ այլ որոշման համեմատությամբ, ըստ որի, մարզի սոցիալ-տնտեսական եւ մշակութային հետագա զարգացման միջոցառումների իրականացումը դրված էր հավասարապես Ադրբեջանի եւ Հայաստանի կուսակցական եւ խորհրդային մարմինների վրա, որ նշանակում էր, թե Հայաստանը պաշտոնապես ակտիվ մասնակցություն պետք է ունենար Լեռնային Ղարաբաղում նախատեսված միջոցառումների իրականացմանը: Մինչդեռ այս նոր որոշման մեջ Հայաստանը զրկված էր այդ իրավունքից, եւ ծրագրված բարենորոգումներն ամբողջությամբ դրված էին Ադրբեջանի իշխանությունների եւ միութենական նախարարությունների վրա: Հայաստանին վերապահված էր միայն Կենտրոնի ու Ադրբեջանի հետ միասին՝ «ապահովել ԼՂԻՄ-ում եւ Ադրբեջանական ՍՍՀ-ի մյուս շրջաններում գտնվող հայկական դպրոցներում աշխատանքը կատարելագործելու կազմակերպական-մանկավարժական եւ մեթոդական համատեղ միջոցառումների մշակումն ու իրագործումը»: Սակայն այս գործը, այն է՝ մարզի հայկական դպրոցները դասագրքերով ապահովելը եւ իր բարձրագույն հաստատություններում մասնագետների պատրաստումը Լեռնային Ղարաբաղի դպրոցներն ավարտած շրջանավարտներից, մինչեւ այդ էլ Հայաստանն անում էր: Սույն որոշման ընդունման ժամանակ իսկ արդեն պարզ էր, որ, իրոք, «Մարզի զարգացման գործում Հայաստանի համար ավելի կրավորական դեր դժվար էր պատկերացնել»[116]:

Այսպիսով՝ ակնհայտ էր, որ ընդամենը մեկ ամսվա ընթացքում Կենտրոնը Հայկական ԽՍՀ-ին զրկում էր Շարժման առաջին օրերին Լեռնային Ղարաբաղում իրավունքների ընդարձակման խոստումից: Այդ էր պատճառը, որ տարածվող թռուցիկներով ժողովրդի համար լուսաբանվում էր, թե բարենորոգումների առաջարկված ծրագիրն էժանագին խաբեություն է՝

[116] *Նույնը, էջ 22-23:*

կոչված մեռցնելու հասունացած քաղաքական խնդիրը եւ բթացնելու հայ ժողովրդի զգոնությունը, ուստիեւ՝ խնդրի լուծման միակ միջոցը մարզի վերամիավորումն է Հայաստանի հետ. «Հարյուր տարվա փորձից հետո հայ ժողովուրդը կարող է ճզմվել, տեղի տալ բռնի ուժի առջեւ, բայց այլեւս չխաբվել, չփայփայել որեւէ պատրանք: Գոնե սա պետք է լինի մեր ազգի արթնացման, մեր միամտության թոթափման արտահայտությունը»[117]:

Շարժումը մերժում էր բարձրացված քաղաքական հարցի փոխարեն առաջարկված սոցիալ-տնտեսական լուծումը: Մարզի աշխատավորության անունից Գորբաչովին հղված նամակը, ըստ էության, նույն մտքերն էր արտահայտում. «Երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման մասին ընդունված որոշումը մեզ անհարմար դրության մեջ է դնում ամբողջ խորհրդային ժողովրդի, հատկապես Ոչ սեւահողային շրջանների բնակիչների առաջ, որտեղ ներկայումս կյանքի մակարդակն ավելի ցածր է, քան մեզ մոտ: Մինչդեռ մենք այլ բան էինք պահանջում եւ այլ բան ենք պահանջում: Ապրել նորմալ կյանքով: Ապրել մարդավարի, սեփական տան մեջ, հայրենի հողի վրա»: Ապա ասվում էր, որ այդ պահանջը իրենք չեն դիտում որպես տարածքային խնդիր, այլ որ՝ «Անհնար է շարունակել մնալ նրանց վարչական ենթակայության ներքո, ովքեր ամբողջ յոթ տասնամյակ ցինիկ ձեւով խախտել են լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները»: Որպես նման քաղաքականության արդյունք մատնանշելով Նախիջեւանի հայության ճակատագիրը՝ ընդգծվում էր. «Մենք չենք ուզում մեր տան մեջ նման ողբերգական ճակատագիր ունենալ»[118]:

Կենտրոնը դիմեց քարոզչական ահաբեկչության եւ լրատվական շրջափակման առավել խստացման՝ նպատակ ունենալով ջախջախել եւ վարկաբեկել Շարժման հիմնական գաղափարը: Պետական քարոզչությունը եւ այլ ձեռնարկումները պետք է բացառեին հետագայում Շարժման վերակենդանացումն ընդհանրապես:

Մտավորականությունը, որի բացարձակ մեծամասնությունն առաջին օրերին իր համակրանքն էր արտահայտում Շարժման առայժմ միակ գաղափարին, եւ որն իր ներկայացուցիչներով արտահայտված էր նաեւ Շարժման ղեկավարության մեջ, այնուամենայնիվ, միատարր չէր: Եւ դա ավելի հստակ արտահայտվեց այն բանից հետո, երբ նրանց համար պարզ դարձավ իշխանությունների իրական վերաբերմունքը Շարժման

[117] *Նույնը, էջ 23:*
[118] *ՀՀԱՆԱ, 08/31.03.88:*

նկատմամբ: Նրանց մի մասը՝ իրենց պաշտոնեական ու հասարակական դիրքի, կոչումների եւ արտոնությունների համար իշխանությանը պարտական նոմենկլատուրային հատվածը, բնականաբար, չէր կարող չօգտագործվել իշխանության կողմից: Դրա առաջին ցայտուն օրինակ էր ՀԽՍՀ ԳԱ անդամ Բագրատ Ղարիբջանյանի ապրիլի 2-ի հարցազրույցը «Պրավդային», որ արտատպվեց նաեւ հանրապետական մամուլում: Այստեղ մասնավորապես շեշտվում էր այն գաղափարը, որ փետրվարյան օրերին տեղի ունեցածը ոչ մի կերպ չի տեղավորվում «Վերակառուցման շրջանակներում», իսկ Երեւանում զինվորական ստորաբաժանումներ մտցնելուց հետո «կարելի էր հանգիստ քնել»[119]: Այս հարցազրույցը բուռն ցասում առաջացրեց. վստահ կարելի է ասել, որ այդ առիթով գրված ու լայնորեն տարածված սպանիչ պատասխանները ավելի շատ ընթերցողներ ունեցան, եւ հակադարձ արդյունքը տասնապատիկ ավելի մեծ էր:

Մոլեգնած քարոզչական ահաբեկչության փայլուն նմուշն էր նույն օրերին դարձյալ «Պրավդայում» հրապարակված «Սադրիչները» ծավալուն հոդվածը (Ա. Վասիլկով, Գ. Օվչարենկո)[120]: Նպատակը դարձյալ Շարժման, հանրահավաքների պիտակավարումն ու վարկաբեկումն էր: Հոդվածագիրների կարծիքով՝ «սադրանք» բառը լավագույնս է բնորոշում «արտասահմանի եւ մեր երկրի այն շրջանների եւ անձանց գործողությունները, որոնք կանգնած էին Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ ծավալված իրադարձությունների թիկունքում, ձգտում էին ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների միջեւ ազգային թշնամանք բորբոքել, այդ հողի վրա անվստահություն եւ ատելություն հարուցել երկրում տեղի ունեցող դեմոկրատացման պրոցեսների, կուսակցական եւ պետական մարմինների դեմ»: Ընդ որում՝ հեղինակները դիմում էին բացահայտ կեղծիքի. ծանրանում էին այդ օրերին բոլորովին անծանոթ ինչ-որ Գրիգորյանցի եւ Պ. Հայրիկյանի վրա, որոնք այդ իրադարձությունների ընթացքում որեւէ դեր եւ մասնակցություն չունեին: Ավելին, վերջինս, այդ պահի համար անհարիր իր ելույթի փորձի համար, հենց հանրահավաքի մասնակիցների կողմից դուրս էր վռնդվել հրապարակից: Նմանօրինակ բազմաթիվ հոդվածներ էին հրապարակվում նաեւ այլ թերթերում, որոնց հայերեն թարգմանությունները անմիջապես հրապարակվում էին Հայաստանում: Շարժումը չընկրկեց նաեւ քարոզչական այս ահաբեկչական գրոհի դեմ: Բոլոր այդօրինակ հոդվածների ու հարձակումների

[119] *«Правда», 02.04.1988.*
[120] *«Правда», 04.04.1988.*

արժանի պատասխանները գրվում էին եւ թռուցիկների տեսքով տարածվում ոչ միայն հանրապետությունում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Հասկանալով, որ միայն ճակատային կոշտ պայքարը կարող է հակառակ արդյունքների հանգեցնել, պետական քարոզչամեքենայի կողմից Շարժման մասնակիցների եւ հասարակության վրա ազդելու համար ընտրվում էին նաեւ ավելի նուրբ՝ խաբկանքի մեթոդներ: Այդպիսին էր կենտրոնական հեռուստատեսությամբ ներկայացված «Դիրքորոշում» հաղորդաշարի ապրիլի 26-ի թողարկումը՝ նվիրված Լեռնային Ղարաբաղին եւ նրա շուրջ ծավալված իրադարձություններին[121]: Այն կոչված էր ինչ-որ չափով վերականգնել կենտրոնական իշխանությունների նկատմամբ խաթարված վստահությունը: Կենտրոնական լրատվամիջոցների մինչ այդ եղած կոշտ գնահատականների եւ ապատեղեկատվության ֆոնին, այս հաղորդման մեջ եղած ճշմարտության առանձին փշրանքները բավական էին, որ շատերն իրենց գոհունակությունը հայտնեն: Սակայն ըմբռնվեց նաեւ դրա իրական նպատակը. տարածված ընդարձակ մի թռուցիկ՝ «Ահա մեր պատասխանը Բորովիկին» վերնագրով, ցույց էր տալիս, որ ոչ հիմնական հարցերում ճշմարտություններ ասելով՝ հաղորդման հեղինակը նպատակ ունի շեղել ուշադրությունը հիմնական հարցից[122]:

Փաստորեն՝ չէր լինում աննպաստ որեւէ հոդված կամ ելույթ, որը Հայաստանում հայտնի դառնալուց հետո չստանար արժանի պատասխան: Նույնպիսի պատասխան էին ստանում նաեւ ադրբեջանական մամուլում կատարված հրապարակումները: Պատասխանները լինում էին խիստ օպերատիվ, ոչ միայն առանձին անհատների անունից, այլեւ հիմնարկների ժողովների որոշումների տեսքով, որոնք, որպես բողոք, ուղարկվում էին համապատասխան խմբագրություններ, նաեւ կենտրոնական իշխանության

[121] *Հեղինակ՝ Խորհրդային Միության «Խաղաղության կոմիտեի» նախագահ Գ. Բորովիկ:*

[122] *ՀՀԱՆԱ, 15/26.04.88: Թռուցիկը ստորագրված է «Հեռուստադիտող»: Այս հաղորդմանը եղան նաեւ ավելի մեղմ արձագանքներ՝ հույս հայտնելով, որ դա ճշմարտությունը ասելու միայն սկիզբն է, եւ կասվի նաեւ ամբողջ ճշմարտությունը, նաեւ հիշեցնելով, որ «կես ճշմարտությունը ստից ավելի վատ է» (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/03.05.88, – Երեւանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի ընդհանուր ժողովի կողմից ընդունված ընդարձակ նամակ): Մինչ այդ, մարտի 28-ին, Երեւանում հայ մտավորականության մի մեծ խմբի հետ ունեցած հանդիպման ժամանակ Բորովիկը հայտարարել էր, թե Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին կնշանակի «հավերժական սումգայիթ», ինչի դեմ տարածվել էր հանդիպման մասնակիցների բողոքի հայտարարությունը (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/28.03.88 (հեղինակ՝ Լեւոն Տեր-Պետրոսյան):*

մարմիններ: Վերջիններիս հասցեով ուղարկվում եւ տարածվում էին մտավորականության նշանավոր ներկայացուցիչների ընդարձակ նամակ-վերլուծություններ[123]: Դա մի տարերային ինքնակազմակերպվածություն էր, որ հենվում էր Շարժման յուրաքանչյուր մասնակցի անսահման եռանդի ու պատասխանատվության զգացումի վրա: Ահռելի ռեսուրսների տիրապետող, տասնյակ միլիոնավոր տպաքանակով տարածվող մամուլի ու հեռուստատեսության դեմ առաջին ամիսների քարոզչական անհավասար գոտեմարտում Շարժումը ոչ միայն տեղի չտվեց, այլեւ, դատելով արդյունքներից, հաղթանակով դուրս եկավ խորհրդային ամենազոր քարոզչամեքենայի դեմ անհավասար պայքարում:

ժա) Շարժումը ոչնչացնելու իշխանության ջանքերը

Կենտրոնական իշխանությունն այս փուլում իր գործն ավարտված համարելով, փաստորեն հաստատված արտակարգ դրության պայմաններում, Շարժման դեմ հաշվեհարդարի հետագա միջոցառումները հանձնարարեց հանրապետության իշխանական կառույցներին: Վերեւում բերված փաստաթղթերից արդեն իսկ դժվար չէ տեսնել, որ Մոսկվայի հրահանգների շրջանակներից կես քայլ անգամ դուրս գալու փորձ չարած հանրապետական իշխանությունները պատրաստակամ պետք է ստանձնեին այդ առաջադրանքը:

Ինքնաբուխ, բայց արդեն որոշակի կառույցի վերածված Շարժման դեմ օգտագործվեցին հին, փորձված միջոցներ: Այդ օրերին տարբեր մարմիններից կուսակցության կենտկոմ առաքված զանազան գաղտնի տեղեկագրերը, զեկուցագրերը եւ մատնագրերը երբեմն իջնում են 1937թ. մակարդակին: Ընդ որում՝ դրանք վերաբերում են ե՛ւ անհատ քաղաքացիների՝ ուսանողների, դասախոսների, բանվորների, ե՛ւ ձեռնարկությունների ղեկավարների, ե՛ւ

[123] *Հիշենք լայնորեն տարածված այդօրինակ բազմաթիվ փաստաթղթերից մի քանիսը. «Պրավդայի» գլխավոր խմբագիր Աֆանասեւին ուղղված նամակը ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Արամայիս Սարգսյանից (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/04.04.88), փիլիսոփայության դոկտոր Արամ Գրիգորյանի նամակ Գորբաչովին (ՀՀԱՆԱ, 15/15.04.88), փիլիսոփայության դոկտոր Արամայիս Կարապետյանի նամակ ԽՄԿԿ ԿԿ (ՀՀԱՆԱ,15/08.04.88), Սիլվա Կապուտիկյանի ընդարձակ բաց նամակը Ռուսաստանի արվեստի գործիչներին (Կապուտիկյան Ս., էջեր փակ գզրոցներից, էջ 301-321), Գրականության ինստիտուտի աշխատակիցների անունով հեղինակած «Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած արյունալի իրադարձությունների մասին» (ՀՀԱՆԱ, 15/16.04.88) եւ այլն:*

ամբողջ հիմնարկների կոլեկտիվների: Իշխանությունը խնամքով հավաքում էր մի յուրատեսակ «սեւ ցուցակ», նախ՝ նրանց հետ «աշխատելու», ապա, ավելի լավ պայմաններում, ըստ արժանավոյն պատժելու հեռանկարով:

Այսպես, ՆԳ նախարար Շահինյանի ստորագրությամբ ՀԿԿ կենտկոմ ուղարկված «գաղտնի» գրիֆով «հատուկ հաղորդումը» վերաբերում է պետական համալսարանի մի ուսանողի, որը կոչ է արել բոյկոտել մայիսմեկյան շքերթը[124]: Կից՝ համալսարանի կուսակազմակերպության ղեկավարի պաշտոնական պատասխանն է, որ հիշյալ ուսանողը նման կոչ չի արել, եւ ինքն էլ մասնակցել է այդ շքերթին[125]: ՊԱԿ-ի նախագահի նմանօրինակ մի զեկուցագիր կուսակցության կենտկոմին տեղեկացնում է «Գրանիտ» գործարանի փոխտնօրեն Է. Խալափյանի մասին, որն «իր ծառայողական աշխատասենյակում աշխատակիցների հետ քննարկել էր Ղարաբաղի եւ նրա շուրջ ծավալված իրադարձությունների խնդիրները, ընթերցել այդ մասին հանրապետությունում տարածված զանազան նյութեր, վերապատմել «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հաղորդումների բովանդակությունը, բացասաբար է արտահայտվել Հայաստանում բնակվող ադրբեջանցիների հասցեին[126]: Մի այլ փաստաթուղթ վերաբերում է առանձին հիմնարկների ամբողջությամբ, որոնց անվստահելի կոլեկտիվներին անհրաժեշտ էր պահել«ուժեղացված ուշադրության կենտրոնում»: Սա երկար մի ցուցակ է, որի գիտական եւ կրթական հիմնարկներին վերաբերող մասում թվարկված են գրականության, փիլիսոփայության եւ իրավունքի, մեխանիկայի, պատմության, արեւելագիտության, բիոքիմիայի, ֆիզիոլոգիայի, ֆիզիկայի, լեզվի, տնտեսագիտության գիտահետազոտական ինստիտուտները, Մատենադարանը, բարձրագույն ուսումնական հաստատություններից՝ մանկավարժական ինստիտուտը, պետական համալսարանը, ճարտարագիտական ինստիտուտը, ժողովրդական տնտեսության ինստիտուտը, գեղարվեստաթատերական ինստիտուտը եւ այլն[127]:

Կենտկոմը այդօրինակ տեղեկատվություն էր ստանում նաեւ շրջանային իր կառույցների միջոցով: Դատելով այն փաստից, որ այդօրինակ զեկուցագրեր առկա են բոլոր շրջաններից, նշանակում է, որ բոլորը ստացել էին նման հանձնարարական: Վերջիններս նաեւ զեկուցում են, թե իրենք ինչպիսի միջոցառումներ են ձեռնարկել իրավիճակը կայունացնելու,

[124] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.1:*
[125] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.4:*
[126] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.104:*
[127] *Տե՛ս Григорян В., Армения 1988-1989, ст. 66.*

մասնավորապես՝ «Ղարաբաղ» ենթակոմիտեների գործունեությունը չեզոքացնելու համար: Շարժման դեմ պայքարում իշխանությունների միջին օղակների ստացած առաջադրանքների եւ կատարած աշխատանքի մասին առավել ամբողջական պատկերացում են տալիս շրջկոմներից մեկի՝ Երեւան քաղաքի Մաշտոցի շրջկոմի քարտուղար Արտաշես Գեղամյանի զեկուցագրերը: Արդեն մարտի 3-ին նա զեկուցում է վերադասին, որ հսկողության տակ է վերցրել ազգությամբ ադրբեջանցի հիվանդների բուժումը. «Շրջանի հիվանդանոցներում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները նրանց նորմալ բուժման համար» (խոսքը սովորական հիվանդների մասին է): Ինչ վերաբերում է Շարժմանը, ապա դրա դեմ շրջկոմի քարտուղարը «ոտքի էր հանել շրջանի ամբողջ ակտիվը» եւ «ձեռնարկված միջոցառումների շնորհիվ շրջանի 11 «Ղարաբաղ» ենթակոմիտեներից 7-ը դադարեցրել են իրենց գործունեությունը»: Գեղամյանի հաջորդ զեկուցագիրը վերաբերում է մինչեւ մարտի 28-ն ընկած օրերին: Այս ընթացքում նրան հաջողվել էր աշխատավորական կոլեկտիվներում կանխել հանրահավաքներն ու ժողովները եւ հասնել «այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեների գաղափարական մեկուսացմանը»: Նա նաեւ զեկուցում է, որ անհատական աշխատանք է տարվել շուրջ 400 ակտիվիստի հետ: Սակայն, չնայած այս ամենին, մի շարք ձեռնարկություններում դրությունը չի կարգավորվել, ինչում «իրենց որոշակի բացասական դերն են խաղացել «Ղարաբաղ» ենթակոմիտեները, որոնք ընդլայնել են իրենց գործունեությունը, դիմում են սպառնալիքների եւ շանտաժի, հարձակումներ են գործում կուսակցական եւ խորհրդային մարմինների վրա, դուրս են եկել օրենքի շրջանակներից»: Ուստի եւ շրջկոմը հանձնարարել է կուսակցական, խորհրդային, կոմերիտական կազմակերպություններին՝ «թույլ չտալ կոլեկտիվներում ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ-ին միացնելու հարցով կազմակերպական կառույցների ստեղծումը»: Այնուհետեւ շրջկոմը, Գեղամյանի գլխավորությամբ, մեծ ջանքեր է թափել կանխելու մարտի 26-ին նշանակված հանրահավաքը: Այդ նպատակով շրջկոմ են կանչվել եւ նախազգուշացվել «Ղարաբաղ» ենթակոմիտեների անդամները, շրջանի դատախազությունն իր հերթին է «բացատրական աշխատանք» տարել 61 մարդու հետ եւ պաշտոնապես նախազգուշացրել 7 հոգու[128]: Շրջկոմի բյուրոն պատասխանատվության էր կանչել «Ղարաբաղ» ենթակոմիտեների 12 ներկայացուցչի: Վեջիններս՝ «քանի որ գիտակցել են իրենց

[128] *Զեկուցագրում թվարկված են այդ յոթ հոգու անունները. Սուրիկ Սարգսյան, Հովհաննես Ստեփանյան, Ղուկաս Մեհրաբյան, Ալեքսան Ավունդյան, Էդուարդ Եգորյան, Ստեփան Գրիգորյան, Ալբերտ Պողոսյան:*

գործունեության սխալ լինելը, բյուրոն սահմանափակվել է խիստ զգուշացմամբ»: Այս ամենի հետեւանքով շրջանում մնացած 5 «Ղարաբաղ» ենթակոմիտեները եւս, ըստ շրջկոմի քարտուղարի, «հայտարարել են իրենց ինքնալուծարման եւ գործունեության դադարեցման մասին»[129] :

Կուսակցության շրջկոմների այս յուրատեսակ հաշվետվություններում, թվում է, չափազանցված է «ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցով կազմակերպական կառույցների ստեղծումը թույլ չտալու» եւ դրանք ցրելու ուղղությամբ իրենց աշխատանքի արդյունքը: Անշուշտ, նրանք ջանադրորեն աշխատում էին Շարժման մասնակիցների նկատմամբ զանազան ճնշումներ գործադրելու ուղղությամբ, սակայն չմոռանանք, որ նրանք նաեւ վաղուց սովոր էին ուռճացված հաշվետվություններ ներկայացնելու ձեւին: Համենայնդեպս, հստակ կարելի է ասել, որ փետրվարյան հանրահավաքների օրերին ենթակոմիտեներ էին ստեղծվել համարյա բոլոր հիմնարկներում եւ ձեռնարկություններում:

Իրենց մեթոդներով էին աշխատում ՊԱԿ-ը, ՆԳ մարմինները, դատախազությունը եւ զեկուցում, որ Շարժման հարյուրավոր մասնակիցներ իրենց կողմից «մշակման են» ենթարկվել: Այս ամենից նույնիսկ կարելի է այնպիսի տպավորություն ստանալ, թե շրջկոմներին կցումների, բացատրական աշխատանքի եւ այլ միջոցառումների շնորհիվ հաջողվել է ամենուր կրկին «մասսաներին» տանել իրենց հետեւից, կանխել «Ղարաբաղ» ենթակոմիտեների գործունեությունը, դրանք ամբողջությամբ ինքնալուծարքի ենթարկել եւ այլն:

Իրականությունը, սակայն, բոլորովին այլ էր:

Իրականում Շարժումը, պարզապես, հրապարակային միջոցառումների առումով ժամանակավորապես տեղի էր տվել բռնի ուժի առջեւ, իսկ կուսապարատի, ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի եւ այլ կազմակերպությունների՝ իրավիճակին անհարիր, կոպիտ ու անտաղանդ աշխատանքը որեւէ կերպ չէր ազդում նրա իրական ներուժի վրա: Շարժման համար առայժմ գոյություն ուներ կաշկանդող երկու հանգամանք. առաջին՝ Երեւան մտցված զինվորական ստորաբաժանումները, որոնք, փաստորեն, օկուպացրել էին քաղաքը, եւ երկրորդ՝ անընդհատ մաշվող, սակայն դեռեւս գոյատեւող, Շարժման այդ օրերի ղեկավարների մի մասի կողմից ներշնչվող այն հույսը, որ Մոսկվայում, այնուամենայնիվ, կարող է ինչ-որ ձեւով հարցը լուծվել, ուստի պետք է հնարավորինս օրինապահ լինել եւ դրա ընթացքին չխանգարել:

[129] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.127, ց. 355, թ.9-16:*

Իսկ ինչ վերաբերում է Շարժման պահպանած ներուժին, ապա դա լավագույնս երեւաց ապրիլի 24-ին Մեծ եղեռնի հուշարձան կատարած այցի եւ, մի քանի օր անց, մայիսմեկյան շքերթի ժամանակ: Երկու միջոցառումներից էլ, որ ենթադրում էր մարդկանց մեծ կուտակումներ, իշխանությունը խիստ զգուշանում էր: Ապրիլի 24-ին դեպի Հայոց ցեղասպանության հուշարձան երթը անհնար եւ անիմաստ էր կանխել կամ արգելել: Սակայն այն ավելի անվտանգ դարձնելու համար իշխանությունները որոշել էին, ի թիվս այլ միջոցառումների, նաեւ բազմաթիվ ավտոբուսներ հատկացնել, որոնք պետք է մարդկանց, մասնավորապես՝ ուսանողներին, տեղափոխեին մինչեւ Ծիծեռնակաբերդի բլուրը՝ կանխելու համար զանգվածային երթը փողոցներով: Այս «հոգատարությունը» մերժվեց, եւ երթը տեղի ունեցավ: Այդ ընթացքում տարվեց եւ Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի հարեւանությամբ տեղադրվեց նաեւ սումգայիթյան ոճրագործության զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանը, որը նույնպես քաղաքի կենտրոնից տեղ հասցվեց երթի մասնակիցների ուսերի վրա:

2. ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

ա) Մայիսմեկյան ցույցը, հանրահավաքների վերականգնումը

Մայիսմեկյան ցույցին պատրաստվում էին ինչպես իշխանությունները, այնպես էլ Շարժումը: Իշխանությունն ամեն ինչ անում էր այդ ցույցը ներկայացնելու որպես իր նկատմամբ վստահության արտահայտման միջոցառում: Դրա համար նախօրերին հասարակական տրամադրություններին հակազդելուն, մեղմելուն ուղղված մի քանի քայլեր արվեցին. ապրիլի 30-ին մամուլում հրապարակվեց հաղորդագրություն «Կաուչուկ-1»-ի փակման մասին, հայտարարվեց, որ Ղարաբաղը սկսել է դիտել հայկական հեռուստատեսությունը:

Շարժումն, իր հերթին, ծրագրում էր շքերթի հնարավորությունն օգտագործել՝ եւս մի անգամ ներկայացնելու իր պահանջները եւ արտահայտելու իր վերաբերմունքը հանրապետական իշխանության նկատմամբ: Դեռեւս ապրիլի 20-ին համապատասխան ծառայությունները ՀԿԿ կենտկոմին զեկուցել էին, որ ուսանողական շրջանակներում տրամադրություններ կան կա՛մ բոյկոտել ցույցը, կա՛մ դրան մասնակցել՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու կոչեր պարունակող կարգախոսներով, ցուցապաստառներով, հագուստի վրա արված մակագրություններով եւ այլն: Ըստ զեկուցագրի՝ քննարկվում էր նաեւ այնպիսի քայլ, ինչպես՝ ցույցի մասնակիցների մեծ խմբի կանգ առնելը ամբիոնի դիմաց եւ «Ամո՛թ ժողովրդի շահերի դավաճաններին» եւ նման այլ կարգախոսների վանկարկումը: Չէին բացառում նաեւ Սումգայիթի հետ կապված կարգախոսներ[130]:

Մայիսմեկյան շքերթը իշխանության նկատմամբ դժգոհությունն արտահայտելու համար օգտագործելու հնարավորությունը քննարկվում էր ոչ միայն ուսանողական շրջանակներում: Ապրիլի 22-ին Իգոր Մուրադյանի

---

[130] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.59:*

անունից տարածվեց կոչ՝ վերնագրված «Երեւանում եւ Հայաստանի այլ քաղաքներում մայիսմեկյան լոզունգները», որում հիմնավորվում էր մայիսմեկյան շքերթին մասնակցելու, Լեռնային Ղարաբաղի բնակչության պայքարին սատարելու կարգախոսներով հանդես գալու անհրաժեշտությունը: Կոչի հեղինակը պնդում էր, որ «Ղարաբաղի հարցի չլուծելը սոցիալիզմի կամ խորհրդային իշխանության հետեւանքը չէ», իսկ մայիսմեկյան ցույցը պետք է օգտագործել հաստատելու համար մեր ժողովրդին հատուկ ազգային միասնությունը եւ ինտերնացիոնալիզմը[131]: Մի այլ թռուցիկ (ռուսերեն), վերնագրված «Դիմում հայ ժողովրդին» եւ ստորագրված «Ղարաբաղյան շարժման մասնակիցներ», որպես հիմնական կարգախոսներ առաջարկում էր՝ «Լենինիզմ մինչեւ վերջ, Վերակառուցում մինչեւ վերջ», «Հրապարակայնություն մինչեւ վերջ, ժողովրդավարություն մինչեւ վերջ», «Ո՛չ ստալինիզմին, բրեժնեւականությանը, կորչե՛ն ժամանակակից ստալինականները եւ բրեժնեւականները»: Վերջիններիս տակ այն նկատի ուներ հանրապետության բարձրագույն ղեկավարությանը, քանի որ նույն թռուցիկում մինչ այդ ասվում էր, որ չպետք է թույլ տալ, որ կոմկուսի 19-րդ կոնֆերանսին որպես պատվիրակներ ընտրվեն եւ մասնակցեն երկրի ղեկավարները եւ նրանց դրածոները[132]:

Մայիսմեկյան շքերթը արտահայտեց իշխանության նկատմամբ հասարակական բուռն դժգոհությունը, ինչպես նաեւ ցուցադրեց, որ Շարժման հավաքական ուժից եւ կամքից ոչինչ չի պակասել: Իրավապահ մարմինների աշխատակիցները եւ կոմսոմոլի ակտիվիստների հազարավոր անդամներ աչալուրջ հսկում էին երթը եւ մինչեւ հրապարակ հասնելը մասնակիցներից բազմաթիվ ցուցապաստառներ խլեցին: Այնուամենայնիվ, ցուցապաստառների մի մասը հաջողվեց տեղ հասցնել եւ պարզել ամբիոնում կանգնածների առաջ. «Ողջո՛ւյն վերակառուցման թշնամիներին», «Կորչե՛ն կաշառակեր չինովնիկները», «Կորչի՛ մաֆիան», «Ղարաբաղը վերակառուցման հայելին է» եւ այլն[133]: Ցուցարարների մի մեծ խումբ մի քանի րոպե կանգնեց հրապարակում՝ վանկարկելով «Ղարաբաղ», «Վերակառուցում», «Ժողովրդավարություն», «Ամոթ»:

Իշխանությունները ինչպես շքերթի անցկացումից առաջ, այնպես էլ դրանից հետո փորձում էին բացահայտել տոնական շքերթի ժամանակ «ոչ

[131] *ՀՀԱՆԱ 15/22.04.88, տե՛ս նաեւ այդ մասին զեկուցագիրը ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.92:*

[132] *ՀՀԱՆԱ 15/31.04.88:*

[133] *Տե՛ս* ***Григорян В.****, Армения 1988-1989, ст. 150.*

ցանկալի գործողություններ հրահրող» անձանց ու հաշվեհարդար տեսնել նրանց նկատմամբ: Այսպես՝ ՊԱԿ-ին հաջողվել էր պարզել, որ ցուցապաստառները նախապես պատրաստվել են թիվ 183 դպրոցում, դպրոցի տնօրեն Աշոտ Բլեյանի, նույն դպրոցի ուսմասվար Աշոտ Մանուչարյանի կողմից, համալսարանի ուսանողների կողմից՝ դասախոսներից մեկի բնակարանում, ֆիզիկայի ինստիտուտում, ԳԱ այլ ինստիտուտներում: Արձանագրվել էր շուրջ երկու տասնյակ անուն, ովքեր մասնակցել են այդ գործին[134]:

Մայիսմեկյան ցույցը «ջարդեց սառույցը», լրացուցիչ ոգեւորություն առաջացրեց եւ, փաստորեն, դարձավ Շարժման հրապարակային պայքարի նոր վերելքի սկիզբ: Դրանից անմիջապես հետո սկսեցին լայնորեն շրջանառվել տարբեր հասցեներով առաքված մի ամբողջ շարք փաստաթղթեր՝ նամակներ, դիմումներ, կոչեր, տարածվող ապատեղեկատվությունը եւ հերյուրանքները հերքող պատասխաններ եւ այլն[135]: Իրենց հերթին՝ դրանք օգնում էին Շարժման մասնակիցներին վերագտնել նախորդ ամիսներին մասամբ կորսված ինքնավստահությունը: Այդ առումով կարեւոր դեր խաղաց Հայաստանի յոթ ստեղծագործական միությունների անունից Գորբաչովին, ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ Ա. Գրոմիկոյին, ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ռեկունկովին հղված դիմումը, որտեղ պահանջվում էր կենտրոնական մամուլում մինչեւ սումգայիթյան ոճրագործության մեղավորների դատավարության սկսվելը հրապարակել զոհերի եւ անհայտ կորածների ցուցակը, դատական նիստերին մասնակից դարձնել Հայկական ԽՍՀ-ից հասարակական մեղադրողների, ապահովել Հայկական ԽՍՀ-ից ժողովրդական ատենակալների մասնակցությունը դատավարությանը, ադրբեջանցի իրավաբաններին հեռացնել նախաքննությունից եւ դատավարությունից, կենտրոնական հեռուստատեսությամբ ապահովել ուղիղ հեռարձակում դատարանի դահլիճից, քննության նյութերը հրապարակել կենտրոնական եւ հանրապետական մամուլում[136]:

[134] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.8-9, 16-17:*

[135] *Օրինակ՝ Սուրեն Զոլյանի բաց նամակը «Իզվեստիայի» գլխավոր խմբագիր Լապտեւին (ՀՀԱՆԱ, 15/03.05.88), ընդարձակ մի փաստաթուղթ «Հայաստանի աշխատավորության դիմումը ՍՍՀՄ ժողովուրդներին» վերնագրով (ՀՀԱՆԱ, 15/05.05.88), «Դիրքորոշում» հաղորդաշարի հեղինակ Բորովիկին ուղղված ընդարձակ մի նամակ (ՀՀԱՆԱ, 15/14.05.88) եւ այլն:*

[136] *Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Գագիկ Բաղդասարյանի կազմած եւ մայիսի 6-ով թվագրված այդ փաստաթուղթը ստորագրել եւ կլոր կնիքներով վավերացրել էին Գրողների միության նախագահ Հրաչյա Հովհաննիսյանը, Նկարիչների միության նախագահ Արա*

Թատերական հրապարակը դեռեւս շարունակում էր ամուր շրջափակված մնալ ներքին զորքերի կողմից: Սակայն ստացված այն տեղեկությունը, թե Բաքվից «Բարեկամություն» գնացք է ժամանում Երեւան, առիթ տվեց բողոքի հանրահավաքի, որ տեղի ունեցավ մայիսի 7-ին, Բաղրամյան պողոտայում, Գիտությունների ակադեմիայի շենքի դիմաց: Հանրահավաքի մասնակիցները, միաժամանակ, իրենց բողոքն արտահայտեցին կենտրոնական լրատվամիջոցների ապատեղեկատվության նկատմամբ՝ հենց այստեղ այրելով «Պրավդա» թերթի հազարավոր օրինակներ, որ հատուկ այդ նպատակով բերել էին իրենց հետ:

Շարժումը, փաստորեն, կրկին կարողացավ գրավել փողոցը եւ իշխանությունները սկսեցին նահանջել: Կենտրոնական մամուլը հաղորդագրություններ հրապարակեց Սումգայիթի ոճրագործության մասնակիցների դատավարությունը սկսվելու, Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: Բորովիկի «Դիրքորոշում» հաղորդաշարով մայիսի 12-ին հեռարձակվեց երկրորդ հաղորդումը Լեռնային Ղարաբաղի մասին: Սակայն իրավիճակի մեղմացմանն ուղղված այս միջոցառումները որեւէ կերպ չէին կարող կանխել Շարժման հանրահավաքային նոր փուլը: Հանրապետական մամուլը, որ մինչ այդ հիմնականում թարգմանաբար արտատպում էր այն, ինչ հրապարակվում էր կենտրոնական թերթերում, փորձեց հանդես գալ նաեւ ինքնուրույն նյութերով: Այն հանգստության եւ համբերության կոչ էր անում, խոստանում, որ ազգային հարցերին նվիրված առանձին քննարկումներ են նախատեսվում, եւ փորձում էր համոզել, որ անիմաստ է այդ պայմաններում ցույցերի եւ հանրահավաքների անցկացումը. «Ուրեմն ո՞ւմ է պետք ավելորդ իրարանցումը, ի՞նչ անհրաժեշտությամբ էր թելադրված մայիսի 7-ին Գիտությունների ակադեմիայի նախագահության շենքի մոտ կայացած միտինգը, որտեղ կրկնվում էր արդեն քանիցս ասվածը»[137]:

Հաջորդ հանրահավաքը մայիսի 12-ին փորձ արվեց անցկացնել Թատերական հրապարակում, որը շրջափակված էր ներքին զորքերի զինվորներով:

Շիրազը, Կոմպոզիտորների միության նախագահ Էդուարդ Միրզոյանը, Կինեմատոգրաֆիստների միության նախագահ Սերգեյ Իսրայելյանը, Թատերական գործիչների միության նախագահ Հրաչյա Ղափլանյանը, Լրագրողների միության նախագահ Էմանուել Մանուկյանը, Ճարտարապետների միության նախագահ Արծվին Գրիգորյանը (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/06.05.88): Այս եւ այսօրինակ փաստաթղթերը, սովորաբար նախապատրաստում եւ ստորագրությունները հավաքում էին Շարժման ակտիվիստները:

[137] *«Սովետական Հայաստան», 11.05.1988:*

Կոմկուսի կենտկոմ ներկայացրած հերթական տեղեկանքում ՆԳ նախարարը հաղորդում է, որ մինչեւ ժամը 17-ը մայրաքաղաքի կենտրոնական շրջաններում «օպերատիվ հետաքրքրություն» ներկայացնող փաստ չի արձանագրվել: Ապա Օպերային թատրոնի մոտ հավաքվել են մի քանի տասնյակ հոգուց բաղկացած խմբեր, որոնք դժգոհություն են հայտնել հրապարակը շրջափակող զինվորներից: Կես ժամ անց նրանց թիվը հասել է 3000-ի, որոնք մի քանի անգամ փորձել են թափանցել հրապարակ, սակայն՝ «միլիցիայի վճռական գործողությունների շնորհիվ այդ փորձերը խափանվել են»: Ապա, հրապարակը «գրավելու» փորձը չհաջողելուց հետո, թափորը, անցնելով զինվորների կողքով, հավաքվել է մոտիկ ամենահարմար տեղում՝ Թամանյանի արձանի մոտ («Կասկադ»): Տեղի ընտրության անակնկալ որոշումը հնարավորություն չէր տվել միլիցիայի եւ ՊԱԿ-ի աշխատակիցներին կանխել այն, եւ քիչ անց ցուցարարների թիվը հասել է 17000-ի: Հավաքվելը կանխելու բոլոր փորձերը անցել էին անհաջող: Տեղեկանքը, ինչպես միշտ նման դեպքերում, խնամքով արձանագրում է նաեւ ցուցապաստառների բովանդակությունը, տարածված թռուցիկները եւ «նկատված անձանց» ցուցակը[138]:

Երրորդ հանրահավաքը տեղի ունեցավ Մատենադարանին հարող տարածքում, մայիսի 17-ին: Այս հանրահավաքի մասին ՆԳ -ի «տեղեկանքը» իրադարձությունների նկարագրությունը սկսում է Աբովյան քաղաքից, որտեղ հավաքված 1500 հոգին, հաղթահարելով միլիցիայի հարուցած արգելքները, երթով շարժվել էր դեպի Երեւան եւ միացել Մատենադարանի մոտ ընթացող շուրջ 10000-անոց հանրահավաքին: Հանրահավաքից հետո մոտ 800 հոգուց կազմված մի խումբ շարժվել էր դեպի Թատերական հրապարակ (որ շարունակում էին պահպանել զինվորները)՝ հանրահավաքների հիմնական տեղը գրավելու մտադրությամբ, բայց Օպերային թատրոնի շենքի մոտ Ի. Մուրադյանը նրանց կանգնեցրել եւ համոզել էր «առանց էքսցեսների ցրվել»[139]:

Հաջորդ հանրահավաքը՝ մայիսի 19-ին, արդեն կայացավ Թատերական հրապարակում. հրապարակը մոտ երկու ամիս պաշարած ներքին զորքերի ստորաբաժանումը եւ միլիցիան այս անգամ ստիպված եղան տեղի տալ եւ հեռանալ վճռականորեն այստեղ շարժվող մարդկանց բազմության առջեւ: Սա նշանակում էր, որ «դիրքային այն առավելությունը», որ կորցրել էր Շարժումը փետրվարի 27-ին, փաստորեն՝ խաբվելով կենտրոնական

[138] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.79-81:*

[139] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.174-175:*

իշխանության խոստումներով եւ այդ օրերի իր առաջնորդներ Ս. Կապուտիկյանի ու Ջ. Բալայանի կեղծ հավաստիացումներով, նորից կարողացավ ետ բերել: Այսպիսով՝ Շարժումը փետրվարյան հանրահավաքների կասեցումից հետո երեք ամսվա դիրքային պայքարում կարողացավ հաղթանակի հասնել ոչ միայն քարոզչական պայքարում, այլ, նաեւ, փաստորեն, ուժային: Եւ ոչ միայն:

բ) Նոր իրավիճակը՝ զգաստացման ու վերանայումների հիմք

Հարաբերական տեղատվության, իսկ ավելի ճիշտ՝ դիրքային պայքարի երեք ամսվա իրադարձությունները, մասնավորապես, կենտրոնական եւ տեղական իշխանությունների գործողությունները, ինչպես նաեւ ընդհատակյա դարձած պայքարը, վերլուծության եւ քաղաքական նոր եզրահանգումների հսկայական նյութ էին տվել: Որոշակիորեն տեղի էր տվել կենտրոնական իշխանություններից խնդրելու ու նրան վստահելու միջոցով Լեռնային Ղարաբաղի խնդրում որեւէ ակնկալիք ունենալու՝ փետրվարյան վերջին հանրահավաքում ներարկված հույսը: Կենտրոնը կտրականապես հրաժարվում էր խնդիրն այլ կերպ ընդունել, քան որպես սոցիալ-տնտեսական հարթության վրա առաջացած հարց, եւ համարում էր, որ մարտի 24-ի իր որոշումը պետք է բավարար համարվի՝ որպես դրա լուծում: Գուցե, իրոք, այս որոշումը, դրանով նախատեսված միջոցառումները ինչ-որ չափով աշխատեին՝ հանգստացնելու եւ կանխելու համար Շարժման հետագա ծավալումը, սակայն մի շարք հանգամանքներ չափազանց զգաստացնող նշանակություն ունեին:

Առաջինը սումգայիթյան ոճրագործությունն էր, որը մեկ անգամ եւս հիշեցնում էր, որ հայկական մարզի հետագա գոյությունը Ադրբեջանի կազմում նույն կարգավիճակով եւ ԽՍՀՄ Սահմանադրության նույն երաշխիքներով հեռու էր ապահով լինելուց, եթե անգամ լուծվեին սոցիալ-տնտեսական բոլոր խնդիրները: Այս համոզումն առավել խորացավ նույն այդ ոճրագործության նկատմամբ կենտրոնական իշխանության վերաբերմունքի եւ խայտառակ դատավարության ընթացքի հետեւանքով: Ջանգվածային ոճրագործության փաստին քաղաքական գնահատական չտրվեց, միասնական գործը բաժանվեց առանձին մասերի եւ ուղարկվեց տարբեր դատարաններ: Առաջին դատավճռով ոճրագործներից մեկի համար նույնիսկ մահապատիժ չսահմանվեց, այլ՝ 15 տարվա ազատազրկում: Ոչ մի կասկած չէր մնում, որ պետականորեն ամեն ինչ արվում է կատարվածը պարտակելու համար:

Իսկ դա նշանակում էր, որ նման դեպքեր կարող էին կրկնվել, գուցե եւ ավելի մեծ մասշտաբով, եւ իրական կազմակերպիչները մնային անպատիժ:

Երկրորդ հանգամանքը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրագործման եւ սոցիալական հարցերի լուծման առաջին քայլերի ուղղվածությունն էր: Այն ցույց տվեց, որ որոշումը ոչ միայն սնանկ է, այլեւ հատկացված միջոցները ադրբեջանական իշխանությունները աշխատելու են օգտագործել Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական բնակավայրերն ամրացնելու եւ մարզի էթնիկական հաշվեկշիռը հօգուտ իրենց փոխելու համար:

Այս ընթացքում կենտրոնական լրատվամիջոցների միտումնավոր ապատեղեկատվությունը, իրականության խեղաթյուրումները, հայկական եւ ադրբեջանական կողմերի գործողություններն ամեն կերպ հավասարեցնելու, համառ հետեւողականությամբ մեղքը հավասարապես բաշխելու ջանքերը եւ այլն, շատերին էին համոզել, որ Կենտրոնը «արդար դատավոր» եւ երաշխիք չի կարող լինել:

Երեւան զորք մտցնելը, տեղական իշխանությունների, կուսակցական եւ ներքին գործերի մարմինների, ՊԱԿ-ի, դատախազության կողմից Շարժման մասնակիցների հետապնդումները եւ ահաբեկումները, մամուլի բացարձակ փակ լինելը եւ այլն ցույց էին տալիս, որ սնանկ են նաեւ հռչակված վերակառուցման, ժողովրդավարության, հրապարակայնության կարգախոսները, եւ անհեթեթ է որեւէ խնդրում դրանց ապավինելը: Ուստիեւ ակնհայտ էր նաեւ, որ ճակատագրական սխալ կլիներ նահանջը, սկսված Շարժման դադարեցումը, ճակատագրական կլիներ, առաջին հերթին, Լեռնային Ղարաբաղի համար:

Շարժման սկզբում ցայտուն արտահայտված այն ակնկալիքը, սպասումը, անկեղծ ցանկությունը, որ հանրապետության ղեկավարությունը կմիանա բարձրացված հարցին (կամ ժողովրդի պահանջին), այս ամիսների ընթացքում հիմնականում վերացել էր: Մայիսմեկյան ցույցի, ապա հետագա հանրահավաքների ցուցապաստառները հստակ այդ մասին էին վկայում: Ըստ նույն ցուցապաստառների, սակայն, դեռեւս գոյատեւում էր այն պատկերացումը, թե Վերակառուցումը իշխանության վերին եւ միջին օղակներում ունի նվիրյալներ եւ թշնամիներ: Հանրապետության ղեկավարությունը հստակորեն դասվում էր վերջինների՝ վերակառուցման հակառակորդների ու թշնամիների շարքում: Վերին օղակներում Վերակառուցման հակառակորդների ցայտուն ներկայացուցիչն էր համարվում ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամ Ե. Լիգաչովը: Գորբաչովն, այնուամենայնիվ, դեռեւս դիտվում էր

որպես Վերակառուցման կնքահայր եւ ջատագով. մայիսյան հանրահավաքներում դեռ երեւում էր նրա մեծադիր նկարը[140]: Բայց այդ ամենը շատերի համար արդեն ոչ այնքան անկեղծ հավատ ու համոզում էր, որքան յուրատեսակ «քաղաքական քայլ»՝ հետեւյալ ենթատեքստով. մենք պաշտպանում ենք քո հռչակած քաղաքականությունը, որի շրջանակներում է եւ որից բխում է, ահա, մեր բարձրացրած խնդիրը:

Փետրվարից մայիս ընկած շրջանի համար բնութագրական են մի քանի գծեր: Շեշտը դրվում էր հատկապես Լեռնային Ղարաբաղի հետ կապված պատմական-իրավական փաստաթղթեր կազմելու եւ տարածման հետ: Սա, մի կողմից, լուսավորչական աշխատանք էր, որը ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս պետք է ներկայացներ խնդրի էությունը եւ հասարակական կարծիք ստեղծեր դրա արդարացիության եւ օրինականության մասին՝ պատմական, իրավական եւ հումանիտար առումներով: Հասարակական կարծիքի վրա այս ամենն, անշուշտ, կարեւոր դրական ազդեցություն ունեցավ ե՛ւ ԽՍՀՄ-ում, եւ նրա սահմաններից դուրս: Անկեղծ համոզում կար, որ պատմական իրականությանը տեղեկանալը մեծապես կազդի եւ վճռական նշանակություն կունենա նաեւ իշխանական այն մարմինների եւ պաշտոնյաների համար, որոնցից ակնկալվում էր բարձրացված խնդրի լուծումը: Պաշտոնական փաստաթղթերում, սակայն, խնդիրը հետեւողականորեն դիտվում էր ինքնորոշման իրավունքի սկզբունքի հիմքի վրա:

Այս ամիսներին որոշակի առաջընթաց կատարվեց Շարժման կազմակերպական կառուցվածքում: «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունն արգելելու եւ այն լուծարելու մասին ԳԽ նախագահության մարտի 24-ի որոշումը հասարակական մեծ ընդվզում առաջացրեց, որ արտահայտվեց ոչ միայն հարյուրավոր ու հազարավոր բողոքի նամակներով, կոլեկտիվների որոշումներով եւ այլն, այլեւ բերեց հակառակ արդյունքի՝ հիմնարկներում ու բնակավայրերում նոր «Ղարաբաղ» ենթակոմիտեներ ստեղծելու շարժման ծավալման:

գ) Շարժման առաջին ղեկավարությունը

Փետրվարյան հանրահավաքներում ձեւավորված «Կազմկոմիտեն» կամ «Ղարաբաղ» կոմիտեն, որպես Շարժման ղեկավարություն, բնականաբար, արտացոլում էր Շարժման առաջին օրերի եւ ամիսների հախուռնության եւ զգացմունքայնության որակները: Կոմիտեի հավաքները

[140] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.80:*

կայանում էին, նախ՝ Օպերային թատրոնում հատկացված մի սենյակում, ապա՝ Գրողների միության շենքում: Նիստերին մասնակցում էին շատերը, ակտիվ շատ «ենթակոմիտեների» ներկայացուցիչներ եւ ուրիշներ: Ոմանք կատակով այն անվանում էին «Պուգաչովի վրան»[141]: Դա բնական էր եւ ապացույց այն բանի, որ Ղարաբաղյան շարժումն, իրոք, սկսվել էր ինքնաբուխ, ոչ թե որեւէ կենտրոնից ծրագրված ու պլանավորված: Բոլոր դեպքերում՝ այս փուլի համար, որպես Շարժման ղեկավար մարմին, «Ղարաբաղ» կոմիտեի այսօրինակ գործունեությունը բավարար էր ու բնական: Անբնական կլիներ հակառակը՝ եթե հենց սկզբից այն ունենար կայուն կազմ եւ աշխատանքի այնպիսի հստակություն, ինչպիսին ունեցավ հետագայում, արդեն որոշակի փորձի, քաղաքական հետեւությունների եւ որոշակի ծրագրի, հստակեցված քաղաքական ուղեգծի եւ քաղաքական հիմնադրույթների հիման վրա ստեղծված՝ Շարժման նոր եւ հիմնական ղեկավար մարմինը: Կոմիտեն ի սկզբանե ուներ փաստական ղեկավար՝ Իգոր Մուրադյանը, եւ բոլոր հարցերը համաձայնեցվում էին նրա հետ: Մյուս կողմից, սակայն, որքան էլ նրա հեղինակությունը բարձր, Շարժումը կարճ ժամանակում ձեռք էր բերել իր ներքին տրամաբանությունը, որին ստիպված էր ենթարկվել նաեւ Կոմիտեի ղեկավարը: Կինոյի տան հայտնի հավաքի ժամանակ (մարտի 19), օրինակ, նա հայտնվեց բացարձակ փոքրամասնության մեջ, եւ մարտի 26-ին հանրահավաք հրավիրելու որոշումը կայացվեց հակառակ նրա բուռն դիմադրության:

Շարժման առաջնորդները սկզբից եւեթ հստակ երկու խմբի էին բաժանվում: Առաջինը՝ հասարակությանը լայնորեն հայտնի մի խումբ մտավորականներ (Սիլվա Կապուտիկյանի եւ Ջորի Բալայանի գլխավորությամբ)՝ որպես «Ավագների խորհուրդ»՝ իր ոչ կայուն կազմով: Երկրորդ խումբը մինչ այդ ավելի պակաս հայտնի գործիչներ էին, որոնցից ոմանք շատ արագ հայտնի դարձան առաջին իսկ հանրահավաքներից՝ որպես հանրահավաքների գործնական կազմակերպիչներ, վարողներ եւ հռետորներ (Իգոր Մուրադյան, Սամսոն Ղազարյան, Մանվել Սարգսյան, Հրայր Ուլուբաբյան, Գագիկ Սաֆարյան, Աշոտ Մանուչարյան, Համբարձում Գալստյան, Սամվել Գեւորգյան, Վանո Սիրադեղյան, Ալեքսան Հակոբյան, Վազգեն Մանուկյան, Արմեն Հովհաննիսյան, Վաչե Սարուխանյան): Այս երկու խմբերը սերտ համագործակցության մեջ էին: Սակայն արտաքուստ թվացող, տարիքային հատկանիշը չէ, ոչ էլ նախապես ճանաչված լինելու

[141] *Տե՛ս* ***Григорян В.****, Армения 1988-1989, ст. 115.*

հանգամանքը, որ դրվեց ղեկավար մարմնում առաջացող ջրբաժանի հիմքում, այլ երկու այլ հանգամանք.

Առաջին. իշխանության նկատմամբ **վստահության** հանգամանքը, այն է՝ պետք է պայքարել հանուն բարձրացված խնդրի՝ մինչեւ վերջ մնալով իշխանությանը **վստահելու,** նրանից պահանջելու ու ակնկալելու շրջանակներում.

Երկրորդ. պայքարել հանուն նույն խնդրի՝ նաեւ **չվստահելով** ու ստիպելով, պարտադրելով նույն այդ իշխանությանը՝ կատարելու անհրաժեշտ քայլերը:

Այդ տարաձայնության առաջին խուլ, ենթագիտակցական դրսեւորումը փետրվարի 27-ին էր, երբ Մոսկվայից վերադարձած Ջ. Բալայանն ու Ս. Կապուտիկյանը, կենտրոնական իշխանության անունից տված խոստումները չափազանցելով, համոզեցին դադարեցնել հանրահավաքները՝ վստահել եւ սպասել Կենտրոնի որոշումներին: Ղեկավարների մյուս մասը, այդ պահին բացահայտ չհակադրվելով, այնուամենայնիվ, որոշակի մտավախության հիմքի վրա, մարտի 26-ին նշանակեց հաջորդ հանրահավաքը՝ այդ խոստումների արդյունքներն ամփոփելու պատրվակով:

Երկրորդ սկզբունքային տարբերությունը դրսեւորվեց մարտի 19-ին Կինոյի տան բազմամարդ հավաքի ժամանակ ավելի բացահայտ ու սուր տարաձայնության տեսքով, երբ, փաստորեն, քննարկվում էր իշխանության դրած բացարձակ արգելքի պայմաններում հանրահավաքները շարունակելու հարցը: Խոսքը վերաբերում էր գործելակերպի շրջանակներին եւ նշանակում էր՝ պայքարը կարելի է շարունակել՝ դիմելով անհրաժեշտ գործողությունների միայն իշխանության պասիվ դիմադրության կամ անհաղորդության պայմաններում (ինչպես փետրվարյան հանրահավաքները), թե՞ նաեւ վերջիններիս դրած կտրուկ արգելանքի: Այսինքն՝ ջրբաժանի երկրորդ հատկանիշը վերաբերում էր պայքարի ընթացքում իշխանությանը բացահայտ **դեմ գնալու** քաղաքական կամք դրսեւորելու հնարավորության եւ **դեմ գնալն արմատապես մերժելու** սկզբունքին: Դեմ գնալն արմատապես մերժելու, վստահելու եւ սպասելու կողմնակիցներն այդ հավաքում հայտնվեցին բացարձակ փոքրամասնության մեջ: Սակայն Երեւան մտցված զորքերը կանխեցին նոր հանրահավաքների հնարավորությունը, եւ Շարժման ղեկավար մարմնում տարաձայնությունն առայժմ կարծես թե սառեց: Ավելի ճիշտ՝ Կինոյի տանը փոքրամասնության մեջ մնացած խումբը դա գրանցեց իր օգտին:

Շարժումը մարտի վերջերից պետք է իր գոյությունը շարունակեր կիսալեգալ պայմաններում եւ առանց հրապարակային լայնամասշտաբ դրսեւորումների: Կենտրոնական եւ տեղական իշխանությունները հնարավոր

բոլոր միջոցների գործադրմամբ կարծես թե հասել էին իրենց նպատակին՝ հանգցրել էին փետրվարի վերջերին բռնկված աննախադեպ «հրդեհը», կանխել էին դրա վերակենդանացման փորձը մարտի վերջերին, իրավիճակը վերցրել իրենց հսկողության տակ, տվել իրենց քաղաքական գնահատականները, իսկ քարոզչական մեքենան լծվել էր դրանք ամրապնդելուն: Ավելին՝ պարզվում է, որ Շարժման ղեկավար մարմնում ոմանք նույնպես էականորեն փոխել էին իրենց դիրքորոշումը:

Մարտի 26-ից հետո Շարժման ղեկավարության մարտավարության ու նրանում տիրող մթնոլորտի մասին հանրապետության Պետական անվտանգության ծառայությունը Հայաստանի կոմկուսի ԿԿ ներկայացրած իր հերթական զեկուցագրում (ԿԿ-ում այն ստացվել է ապրիլի 20-ին) ներկայացնում է հետեւյալ պատկերը, որ, չափազանց հետաքրքիր լինելով, արժե ներկայացնել ընդարձակ մեջբերմամբ.

«Մարտի 26-ին չկայացած հանրահավաքից հետո հանրապետությունում ստեղծված իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին «կոմիտեականների» մարտավարության մեջ որոշ փոփոխություններ են կատարվել: Նրանք կարծում են, եւ Հայաստանի ու ԼՂԻՄ-ի իրենց շրջապատում տարածում են այն մտքերը, թե այժմ հարկ չկա կազմակերպել գործադուլներ, հանրահավաքներ, ցույցեր, տարածել թռուցիկներ, քանի որ դա կխանգարի Լեռնային Ղարաբաղի հարցի բարյացակամ քննությանը: Դրա համար էլ Ի. Մուրադյանը եւ մյուսները հանդես եկան Ստեփանակերտում գործադուլների եւ Երեւանում դասադուլների շարունակման դեմ: «Կոմիտեականները» միաժամանակ կարծում են, որ անհրաժեշտ է մշտապես հիշեցնել Լեռնային Ղարաբաղի չլուծված խնդրի մասին եւ այդ նպատակով պետք է ԼՂԻՄ-ից պատվիրակություններ ուղարկել Մոսկվա եւ խորհրդային միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահություններ՝ հարցի էությունը բացատրելու համար, ինչպես նաեւ ուղարկել փաստաթղթեր, որոնք վկայում են Ղարաբաղը Հայաստանին միացնելու անհրաժեշտության մասին:

Այս տարվա մարտի 26-ի չկայացած հանրահավաքից հետո առաջին շրջանում, թվում էր, թե բնակչության մի մասն աստիճանաբար սթափվում է, այն մտքով, թե ԼՂԻՄ-ի Հայկական ԽՍՀ-ին միացման հարցն անլուծելի է: Այդ ժամանակ, օրինակ, Ս. Կապուտիկյանը եւ Ջ. Բալայանը համարում էին, որ մարդաշատ հանրահավաքները, ցույցերը, սումգայիթյան իրադարձությունները «կործանեցին Ղարաբաղի գործը», սակայն իրենց մխիթարում էին նրանով, որ իրենց քիչ բան չի հաջողվել. Ղարաբաղի խնդիրը

հասցվել է երկրի բարձրագույն ղեկավարությանը, եւ այդ խնդրով արդեն զբաղվում է Քարտուղարությունը եւ ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոն: Ընդգծվում էր, որ նրանք («Շարժման ակտիվիստները») իրենցն արել են, իսկ մնացածը հաջորդ սերունդների գործն է:

Սակայն այնուհետեւ նման տրամադրություններին հաջորդեց այն հույսը, թե ԼՂԻՄ-ը, այնուամենայնիվ, կմիացվի Հայաստանին: Այժմ Ի. Մուրադյանը եւ նրա հետ կապված անձինք եռանդուն տարածում են լուրեր՝ որպես աղբյուր մատնանշելով մոսկովյան հայերին, թե իբր Ղարաբաղի հարցը քննարկվում է հայերի համար նպաստավոր հունով: Ընդ որում առաջադրվում են երեք՝ ԼՂԻՄ-ի միացումը Հայկական ՍՍՀ-ին, ԼՂԻՄ-ի միացումը ՌՍՖՍՀ-ին, ԼՂԻՄ-ի կարգավիճակի փոփոխությունը ինքնավար հանրապետության Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում, տարբերակները: Սակայն հանրապետության բնակչության զգալի մասը (ուսանողություն, մտավորականություն, աշխատանքային կոլեկտիվներ) հավատում է, որ կիրագործվի առաջին տարբերակը: Այսպիսով, Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի բնակչության տրամադրություններում գերակշռում է համոզվածության փոխարկվող այն հույսը, թե Ղարաբաղի հարցը դրական լուծում կգտնի: Նման տրամադրությունները ստեղծում են թաքնված լարվածություն, որն արտաքուստ աննկատ է, սակայն կարող է արագ վերածվել դժգոհության զանգվածային դրսեւորման: Ակնհայտորեն նման դրսեւորումները իրենց հերթին կբերեն Հայաստանում եւ Ադրբեջանում ադրբեջանական բնակչության բացասական արձագանքի: Հանրապետությունում (բայց ոչ՝ ԼՂԻՄ-ում) քիչ չեն երրորդ տարբերակի կողմնակիցները, որոնք ենթադրում են, որ այն կարող է ընդունելի լինել Հայաստանի եւ Ադրբեջանի համար: Այդ հարցում կան նաեւ ծայրահեղական դիրքորոշումներ՝ միայն Ղարաբաղի միացումը Հայաստանին, ծայրահեղ դեպքում՝ ՌՍՖՍՀ-ին: Եթե առաջարկվի ինքնավար հանրապետություն Ադրբեջանի կազմում, ապա, ըստ Ի. Մուրադյանի, պետք է պայքարել «մինչեւ հաղթանակ»[142]:

Ինչպես դժվար չէ նկատել, ՊԱԿ-ի տեղեկատվությունը վերաբերում է հիմնականում Շարժման ղեկավարության՝ այդ շրջանում տոն տվող չափավոր թեւին, որը, սակայն, նույնպես միասնական դիրքորոշում չուներ հետագա անելիքների հարցում: Նրանցից երկուսը՝ Ս. Կապուտիկյանը եւ Ջ. Բալայանը նույնիսկ արդեն անցած հանրահավաքները եւ գործադուլներն էին սխալ համարում, եւ խնդիրն արդեն կենտրոնական իշխանությունների

[142] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.58-59:*

առաջ բարձրացված լինելով՝ համարում էին ավարտված: Ի. Մուրադյանը նույնպես համարում էր, որ հարցի լուծումը պետք է թողնել Կենտրոնին եւ շարունակել պայքարը միայն այն դեպքում, եթե վերջինս, որպես լուծում, բավարարվի միայն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը բարձրացնելով (դարձնի ինքնավար հանրապետություն), բայց թողնի Ադրբեջանի կազմում: Երկու դեպքում էլ առայժմ խոսք չկար Հայաստանի իշխանություններից ԼՂԻՄ-ի՝ իրենց ուղղված պաշտոնական դիմումի պատասխանը պահանջելու կամ ակնկալելու՝ առաջին օրերին դրված խնդրի մասին: Վերլուծության մեջ հակիրճ, սակայն ճիշտ է նկատվել նաեւ հասարակության մեջ լարվածության մեծացման փաստը:

Հանրապետության իրավիճակի վրա ներազդող մյուս հանգամանքը, ըստ նույն փաստաթղթի, սումգայիթցիների հարցն էր: Չնայած կուսակցական-խորհրդային մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումներին՝ Սումգայիթից փախած հայ բնակչությանը վերադարձնել իրենց բնակության նախկին վայրը, վերջիններս կտրականապես հրաժարվում էին դրանից եւ հայտարարում, թե եթե թույլ չտրվի մնալ Հայաստանում, ապա կհեռանան երկրի այլ տարածաշրջաններ, սակայն ետ չեն գնա: Դրա հետ կապված՝ «կոմիտեականները» արդեն միասնական վճռական դիրք էին գրավել նրանց «հարկադրաբար Սումգայիթ վերադարձնելու դեմ»: Ի. Մուրադյանը, մասնավորապես հայտարարում էր այդ առիթով բողոքի գործադուլներ եւ ցույցեր կազմակերպելու մտադրության մասին: Նա առաջարկում էր կոմպրոմիսային լուծում. երկու ամսում կազմակերպել սումգայիթցիների փոխադրումը բնակության համար ԼՂԻՄ՝ հուսալով այդ ընթացքում լուծել նրանց բնակարանով եւ աշխատանքով ապահովելու հարցը[143]:

Շարժումը կասեցնելու, սահմանափակելու՝ իրենց մտադրությունների մասին է վկայում նաեւ Ս. Կապուտիկյանն ինքը. «Մոսկվայի ոչ մի հույս չներշնչող կեցվածքը եւ շատ ուրիշ հանգամանքներ իմ մեջ օր օրի ուժեղացրին տարակուսանքը Ղարաբաղյան շարժումն այդպիսի թափով սկսելու եւ շարունակելու մեր հախուռն քայլերի նկատմամբ: Խոսքերումս թաքուն սաղմի պես սկսեց ծիլ տալ Շարժումն առժամյա ընդհատելու, մի որոշ ժամանակ դադար առնելու միտքը: Այս ընդհատակյա տարուբերումների արդյունք էր դեռեւս 1988-ի մայիսի 5-ին գրած նամակս, որ «Խոսք ղարաբաղցիներին» վերնագրով հայերեն եւ ռուսերեն հրապարակվեց «Սովետական

[143] *Տե՛ս նույն տեղում:*

Ղարաբաղ» թերթում»[144]: Այսպիսով՝ Շարժման ղեկավարության «ավագ սերունդը» այն համոզմունքին էր, որ պետք է բավարարվել եղածով, ապավինել Կոմունիստական կուսակցության նախաձեռնած ընդհանուր բարեփոխումներին, ինտերնացիոնալիզմին, «չտրվել սադրանքների», եւ այդ համատեքստում, թերեւս, հնարավոր կլինի հասնել Ղարաբաղի խնդրի «արդարացի լուծմանը»[145]:

Մայիսին իրավիճակն այսպիսին էր. Շարժումն իր պոտենցիալից ոչինչ չէր կորցրել եւ կարող էր շարունակել պայքարը նույն ուժով եւ հաստատակամությամբ: Իշխանությունը, ուժի մեջ պահելով հանդերձ իր խոստումները, ցույց էր տվել, որ ամենեւին հակված չէր բարձրացված հարցի ուղղությամբ գործնական քայլեր կատարել, եւ պատրաստ էր իր այս դիրքորոշումը պաշտպանել ընդհուպ բռնությունների դիմելով: Շարժումը իշխանության նկատմամբ անվստահության հիմքի վրա շարունակելու կողմնակիցները դրանով ստացել էին կարեւոր կռվաններ՝ մերժելու համաժողովրդական շարժումը դադարեցնելու եւ մնացածը իշխանություններին վստահելու ուղեգիծը: Մայիսյան հանրահավաքները ցույց տվեցին, որ այս համոզումն էր տիրապետող դարձել, եւ Շարժման զանգվածները նույնպես հակված են շարունակելու ակտիվ պայքարը:

դ) Ղարաբաղի խնդրի ընկալման՝ Շարժման ուղեգծի հստակեցման խաչմերուկում

Իշխանությանը վստահելը կամ չվստահելը եւ ըստ այդմ էլ՝ Շարժման գործելակերպը որոշելու հարցը մարտավարության կամ ճաշակի խնդիր չէր: Այդ մարտավարությունն ու ճաշակը, վերջին հաշվով, պայմանավորվում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի ընկալման եւ մեկնաբանման հստակեցմամբ: Լեռնային Ղարաբաղի խնդիրը ու նրա լուծումն առաջին ամիսներին, ինչպես հասարակության, այնպես էլ կազմակերպիչներից շատերի ընկալումներում ու պատկերացումներում, մեկնաբանվում էր միմյանցից դեռեւս հստակորեն չտարանջատվող երեք տեսանկյուններից, որպես՝

ա) իրավական-քաղաքական հարց.

[144] *Կապուտիկյան Ս., էջեր փակ գզրոցներից, էջ 335:*

[145] *Թերեւս նաեւ սա էր պատճառը (գուցե նաեւ հատուկ մի հրահանգով), որ հանրահավաքներին մասնակցում էր, փաստորեն, ողջ նոմենկլատուրան (այս հիմքի վրա նրանք հետագայում պետք է պնդեին՝ «մենք բոլորս ենք Շարժման մասնակից»):*

բ) պատմական իրավունքների կամ հողային պահանջատիրության հարց.

գ) ինքնորոշման իրավունքի հարց:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզային խորհրդի որոշումը ֆորմալ բխում էր **առաջին մեկնակետից** եւ իրավական փաստաթուղթ էր. մարզային իշխանության մարմինը դիմում էր երեք իրավասու հասցեներով՝ Խորհրդային Միության **ներքին վարչական սահմանների փոփոխության** միջոցով Մարզը Ադրբեջանի կազմից ՀԽՍՀ-ի կազմ տեղափոխելու խնդրանքով: Դրա համար որպես միակ հիմնավորում՝ մատնանշվում էր «ԼՂԻՄ աշխատավորության ցանկությունը»:

Թեեւ բուն փաստաթղթում այլ հիմնավորումներ չկային, սակայն դրանք հայտնի էին. Ադրբեջանը երկար տարիներ չէր ապահովել եւ չէր ապահովում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգ ու ապահով ապրելու եւ ազատ զարգանալու երաշխիքները: Մյուս կողմից՝ դա դիտարկվում էր ստալինյան շրջանում ազգային հարցերում թույլ տված սխալների ու կամայականությունների ուղղման «վերակառուցողական» կարգախոսների ենթատեքստում:

Հենց որպես ԽՍՀՄ ներքին վարչական սահմանների փոփոխման հարց՝ դրա լուծումը հնարավոր էր: Վարչական սահմանների փոփոխության նախընթաց բազմաթիվ դեպքեր եղել էին ԽՍՀՄ պատմության ընթացքում, իսկ Կենտրոնի՝ «Վերակառուցման» շրջանակներում անցյալի սխալները, այդ թվում նաեւ ազգային հարցում թույլ տված սխալներն ուղղելու մասին պատրաստակամության խոստումները դա դարձնում էին ավելի հնարավոր: Այսինքն՝ ցանկության դեպքում, առանց վտանգելու խորհրդային համակարգի հիմքերը, Մոսկվան կարող էր լուծել հարցը՝ ոչ միայն դրա համար ունենալով առավել քան բավարար եւ ապահով փաստարկային հիմք, այլեւ դա ներկայացնելով որպես համակարգի «վերակառուցման» եւ հռչակված կարգախոսների ու ծրագրերի իրականացման առարկայական մի ապացույց:

Պայմանականորեն՝ սա կարելի է անվանել խնդրի լուծման **իրավական-քաղաքական** ճանապարհ:

Խնդրի ընկալման ու մեկնաբանման **երկրորդ մեկնակետը** կամ լուծման ճանապարհը, որ առավել տարածված էր հատկապես հասարակական պատկերացումներում, հենվում էր, այսպես կոչված, պատմական իրավունքների, Լեռնային Ղարաբաղի՝ պատմականորեն հայկական տարածք լինելու փաստարկի վրա: Ավանդաբար դա կապվում էր «Հայ դատ», «հայդատականություն» կոչվող երեւույթի հետ եւ հանգում էր **հողային**

պահանջատիրությանը[146]: Դրա տակ նախապես նկատի էր ունեցվել Ցեղասպանությունից հետո հայ բնակչությունից դատարկված եւ Թուրքիայի կազմում գտնվող Արեւմտյան Հայաստանի նկատմամբ պահանջը, սակայն, վերածվելով յուրատեսակ մի գաղափարախոսության, այն իր մեջ էր ներառել պատմականորեն հայկական համարվող բոլոր այն հողերի խնդիրները, որոնք տարբեր ժամանակներում հայտնվել էին հարեւան երկրների կազմում: Պահանջատիրությունը տարբերակում էր «արտաքին» եւ «ներքին» հողային հարցեր, եւ Լեռնային Ղարաբաղը երկրորդի մեջ էր: Որքան էլ որ ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշման մեջ այս առումով որեւէ ակնարկ չկար ու նման մեկնաբանման հիմք չէր կարող դառնալ, Շարժման առաջին իսկ օրերից «Ղարաբաղը մերն է» կարգախոսը եւ պատկերացումն ամենատարածվածն էր, իսկ արագորեն կազմվող ու տարածվող զանազան թռուցիկները, նամակները, վերլուծությունները եւ այլ նյութերը հարցը ոգեւորությամբ հիմնավորում էին նաեւ այս տեսանկյունից: Այնքանով, որքանով համաժողովրդական շարժման դեմ ուղղված՝ Ադրբեջանի եւ Մոսկվայի մեղադրանքների հիմքում դրվում էր հարցի հենց այսպիսի մեկնաբանությունը, դա ոչ միայն անհեռանկար, այլեւ վտանգավոր ճանապարհ էր: Հենց այդ պատճառով այն երբեւէ պաշտոնական մակարդակի չբարձրացավ ո՛չ Լեռնային Ղարաբաղում, ո՛չ Հայաստանում:

Երրորդ մեկնակետը հանգում էր ազգերի ինքնորոշման եւ մարդու իրավունքների ոլորտին: ԼՂԻՄ մարզխորհրդի հիշյալ որոշման մեջ չէր օգտագործվում **ինքնորոշում** բառը, սակայն խոսքն, ըստ էության, այդ իրավունքից օգտվելու մասին էր, ինչը ոչ միայն միջազգային իրավունքի նորմ էր, այլ նաեւ ամրագրված էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ: Մարզխորհրդի որոշումը հանգիստ ընդունում էր այս երրորդ մեկնաբանությունը, եւ

---

[146] *«Հայ դատ» – միջազգային Cause Arménienne (Armenian Cause) տերմինի բառացի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է «Հայկական հարց»: Մագելով 1978թ. ռուս-թուրքական պատերազմից հետո որպես միջազգային հարցի անուն՝ այն նախապես այլ իմաստ է ունեցել, այն է՝ Օսմանյան կայսրության հոծ հայկական բնակչություն ունեցող նահանգներում եւրոպական գերտերությունների վերահսկողությամբ բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը: 1923թ. Լոզանի կոնֆերանսից հետո, երբ նշված ծրագիրը վերջնականապես թաղվեց, «Հայ դատ» տերմինը հայկական միջավայրում վերաիմաստավորվեց, եւ վաղուց դրա քաղաքական էությունն այլ բան չէ, քան պահանջատիրությունը, որի միջազգային մոտավոր համարժեքը irredentism բառն է: Ուստիեւ՝ սույն շարադրանքում մենք դրանք կօգտագործենք որպես հավասարազոր հասկացություններ:*

Շարժման կողմից առաջին ամիսներին տարածվող քարոզչական նյութերում այն եթե ոչ նույն հաճախականությամբ, սակայն իր լրջությամբ ու կշռով հետեւողականորեն ավելի ու ավելի կարեւոր տեղ էր զբաղեցնում: Համենայնդեպս, Լեռնային Ղարաբաղի խնդրով 1988թ. հունիսի 15-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի համապատասխան որոշման մեջ որպես հիմք վկայակոչվեց հենց ԽՍՀՄ Սահմանադրության՝ ինքնորոշման իրավունքի մասին հոդվածը:

Առաջին ամիսներին թվում էր, թե խնդրի այս երեք մեկնաբանությունները կամ ընկալումները ոչ միայն խաղաղ գոյակցում են, այլեւ, միմյանց լրացնելով, ուժեղացնում ընդհանուր փաստարկային հիմքը: Սակայն նույն այդ ամիսների ընթացքում բացահայտվել էին մի քանի իրողություններ: Կենտրոնական իշխանությունը, կտրականապես մերժելով վարչական սահմանների փոփոխման տարբերակը, համաձայն էր խնդիրը քննարկել միայն սոցիալ-տնտեսական տեսանկյունից եւ արդեն իսկ մարտի 24-ին կայացրել էր իր առաջին այդօրինակ որոշումը: Առավելագույնը նա կարող էր հանդուրժել խնդրի՝ նույն ասպեկտով քննարկումը կուսակցական ու խորհրդային մարմիններում (հարցի նախապատրաստման հանձնարարականներ էր տվել): Մինչդեռ այն, ինչ ակնկալում էին Լեռնային Ղարաբաղը եւ նրան պաշտպանող Շարժումը, որակվում էր որպես «սահմանների վերաձեւում», ազգայնականության դրսեւորում, հենց՝ «հողային պահանջատիրություն»:

Մայիսին ակնհայտ էր երկու իրողություն. մի կողմից՝ Մոսկվան ամենեւին հակված չէր վարչական սահմանների փոփոխության միջոցով լուծելու Լեռնային Ղարաբաղի խնդիրը, մյուս կողմից՝ Շարժումը, չնայած իր վրա կրած երեքամյա ճնշումներին, չէր կորցրել իր պոտենցիալը եւ կարող էր նույն ուժով շարունակել պայքարը: Պայքարի հետագա ընթացքի հարցը հանգում էր Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեկնաբանման կամ բնութագրման հստակեցմանը. այն պետք է դիտել որպես **վարչական սահմանների փոփոխմամբ** անցյալի սխալի ուղղման իրավակա՞ն, գոյություն չունեցող «պատմական իրավունքի» վրա հենված **հողային պահանջատիրությա՞ն**, թե՞ որպես **ազգի ինքնորոշման իրավունքի** իրականացման ժողովրդավարական խնդիր:

Առաջին դեպքում զանգվածները, կարծես թե, իրոք, այլեւս անելիք չունեին. խնդիրը բարձրացված էր, կենտրոնական իշխանությունը խոստացել էր դրանով զբաղվել, եւ մնում էր ապավինել նրա արդարադատությանը եւ սպասել նրա որոշմանը: Սա, անշուշտ, անվտանգ ճանապարհ էր, քանզի քաղաքական իմաստով չէր դիպչում խորհրդային համակարգի հիմքերին: Սակայն այս դեպքում չէին երեւում պայքարի արդյունավետ շարունակման

ձեւերը ու որեւէ հեռանկար: Այսպիսի մեկնաբանմամբ Լեռնային Ղարաբաղի խնդիրը հեշտությամբ կարող էր մերժվել կամ մտնել իրավական, օրենսդրական փակուղի [147]:

Երկրորդ՝ «հայդատականության» կամ հողային պահանջատիրության ճանապարհն ամենակարճն էր Համաժողովրդական շարժումն իր խնդրով հանդերձ թաղելու համար: Առաջին իսկ օրից հենց դրա վրա էր, որպես մահացու մեղադրանք, կառուցվում Շարժումը վարկաբեկելու՝ կենտրոնական եւ ադրբեջանական իշխանությունների ողջ քարոզչությունը:

Առաջին եւ երկրորդ ճանապարհները, սակայն, քաղաքական իմաստով կարեւոր ընդհանրություն կամ՝ քաղաքական ընդհանուր հայտարար ունեին. երկու դեպքում էլ «ազգային» որեւէ խնդրի, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը հնարավոր էին համարում միայն ԽՍՀՄ պահպանման պայմաններում: Այսինքն՝ բացառվում էր քաղաքական պայքարը, որը կարող էր ուղղված լինել համակարգի դեմ:

Որքան էլ ծանր ու դժվարին, սակայն Լեռնային Ղարաբաղի հարցի **երրորդ**՝ որպես ազգի **ինքնորոշման իրավունքի ժողովրդավարական խնդիր** մեկնաբանությունը, պայքարի շարունակությունն ապահովելու տեսակետից, այլընտրանք չուներ: Այս դեպքում խնդիրը հանգում էր հետեւյալին. ԽՍՀՄ-ում իրական ժողովրդավարություն գոյություն չունենալու պատճառով է, որ չի լուծվում Լեռնային Ղարաբաղի բարձրացրած՝ ազգի ինքնորոշման իրավունքի խնդիրը: Ուրեմն՝ դրան հասնելու ճանապարհը մեկն է՝ պայքարել ընդհանուր ժողովրդավարական այդ հիմքերը ստեղծելու, ապահովելու համար: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը Շարժման քաղաքական օրակարգի միակ հարց լինելուց անհրաժեշտաբար պետք է դարձվեր հարցերից մեկը՝ դրա լուծումը խարսխելով իրական եւ արմատական ժողովրդավարական վերափոխումների իրականացման վրա: Իսկ Շարժումը **«ազգային»** մեկ հարց լուծելու գործողությունից պետք է վերածվեր տեւական **ժողովրդավարական** քաղաքական ընդդիմադիր պայքարի, ըստ էության՝ ուղղված խորհրդային կայսրության բռնապետական քաղաքական համակարգի դեմ:

Հետապնդել որեւէ խնդիր՝ առանց դրա լուծման համար նվազագույն անհրաժեշտ ռեսուրսների ու պայմանների հաշվառման՝ արկածախնդրություն է:

---

[147] *Ինչը եւ, իրոք, արեցին կենտրոնական իշխանությունները. ԽՍՀՄ Գեր նախագահությունը հուլիսի 18-ի որոշմամբ մերժեց ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումը:*

Հիմա, որո՞նք էին այն ռեսուրսները, որոնք հարցի լուծման այլընտրանք չունեցող այս ուղին շատ թե քիչ իրատեսական էին դարձնում.

ա) Շարժման՝ իրոք համաժողովրդական բնույթը եւ ոտքի կանգնած հսկայական մարդկային պոտենցիալը:

բ) Խորհրդային Միության առաջադեմ գործիչների եւ սաղմնավորվող ժողովրդավարական ուժերի կողմից Ղարաբաղյան շարժման համարումն ու աճող վարկանիշը՝ որպես ոչ ազգայնական, ժողովրդավարական շարժում:

գ) Նույն հիմքով միջազգային ասպարեզում ձեռք բերած դրական հնչեղությունը եւ աջակցությունը:

Ակնհայտ էր նաեւ, որ Շարժման օրակարգում ընդհանուր ժողովրդավարական խնդիրների հենքի ներառումը պիտի բազմապատկեր այս ռեսուրսները՝ մեծացնելով հիմնական խնդրի հետապնդման եւ լուծման հասնելու հնարավորությունը:

ե) Շարժման նոր ղեկավարությունը. «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»

Շարժման առաջին ղեկավարության երեք ամիսների ընթացքում գրանցվել էին հետեւյալ կարեւոր քաղաքական արդյունքները.

Ա) Ի դեմս ԼՂԻՄ մարզխորհրդի՝ իշխանության սահմանադրական մարմինը, ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ, առանց համապատասխան վերադաս կուսակցական մարմնի հրահանգի, ինքնուրույն որոշում կայացրեց.

Բ) Փետրվարյան բազմահազարանոց հանրահավաքների կազմակերպումն ու անցկացումը, որպես այդպիսին, նույնպես առաջինն էր ԽՍՀՄ պատմության մեջ.

Գ) ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան քաղաքական պահանջով համապետական գործադուլներ.

Դ) Ի դեմս տեղական «Ղարաբաղ» կոմիտեների՝ բնակավայրերի ու հիմնարկների մակարդակով ստեղծվեցին Շարժման կառույցները.

Ե) Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ մեծ հնչեղություն, եւ Շարժումը՝ դրական համարում ձեռք բերեց ոչ միայն ԽՍՀՄ- ում, այլեւ միջազգային ասպարեզում:

Եւ այնուամենայնիվ, որքան էլ անկեղծ իրենց զգացումներում, գուցե նաեւ համոզումներում, Շարժման ղեկավարության «ավագ սերունդը»՝

հիմնականում նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչներ, չէր կարող գնալ այն ճանապարհով, որը ենթադրում էր հակադրվել քաղաքական համակարգին: Դրա համար անհրաժեշտ կլիներ իշխանության հետ խզել իրենց ունեցած օրգանական կապերը, հաղթահարել այն պարտքի զգացումը, որ նրանք ունեին նույն այդ իշխանության նկատմամբ՝ իրենց ստացած սոցիալական ու հասարակական դիրքի, արտոնությունների առումով եւ այլն: Եւ ոչ միայն. նրանց համար, բնականաբար, գոյություն ուներ նաեւ կարեւոր մի երկրորդ՝ հոգեբանական գործոն. դուրս գալ համակարգի դեմ՝ կնշանակեր անիմաստության մատնել իրենց ապրած ողջ կյանքն ու դավանած արժեքները: Այդ սահմանագիծն անցնելու համար նրանց անհրաժեշտ էր քաղաքական մտածողություն եւ քաղաքական անհատի որակներ, ինչը նրանք չունեին: Ուստիեւ՝ Լեռնային Ղարաբաղի խնդիր նրանց համար կարող էր գոյություն ունենալ միայն այն չափով, որչափով որ այն չէր առնչվում եւ չէր հակադրվում համակարգի հիմքերին: Մինչդեռ ակնհայտ էր, որ ակտիվ պայքարն ավարտված համարելը կփակեր նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը, իսկ ակտիվ քաղաքական պայքարը շարունակելը հնարավոր էր միայն այդ հիմքի վրա: Ահա այս երկու՝ պայքարը շարունակելու եւ այն ավարտելու համոզումների բախման հիմքի վրա անխուսափելի էր այն ջրբաժանը, որ առաջացավ Շարժման ղեկավարության մեջ:

Շարժման ղեկավարության մեջ ջրբաժանի առաջացման հիմքը միայն սոցիալական կամ սերնդային չէր: Իրավիճակը չկարողացան հասկանալ նաեւ ծագումով ղարաբաղցի հայաստանյան գործիչները, որոնք յուրահատուկ խանդով էին վերաբերվում Շարժման օրակարգում որեւէ այլ խնդրի ընդգրկմանը՝ համարելով, թե դա տեղի է ունենում հիմնական խնդրի ու նրա կարեւորության հաշվին: Շարժման առաջին ամիսների փաստական ղեկավար ճանաչված Ի. Մուրադյանը անվերապահորեն համոզված էր, որ Ղարաբաղի խնդիրը հետագա պայքարում եւս պետք է լինի միակը[148]: Նույն

[148] *Այդ բանն արձանագրում էին նույնիսկ դրսի փորձագետները. «Ծագումով ղարաբաղցի այս փայլուն տնտեսագետը ցանկանում է, որ բոլոր ջանքերը կողմնորոշված լինեն... այդ շրջանի (Ղարաբաղի – Ա.Ս.) օգնությանը: Նրա համար ազատ ընտրություններից, կաշառակերությունից, լեզվի պաշտպանությունից, գոյապահպանական հարցերից խոսելն օգտակար է, բայց շեղում, որը կարող է սոսկ վնասել Ղարաբաղի վերամիավորման գործին, իսկ գործադուլային շարժման ծավալումը կարող է միայն ԽՍՀՄ-ը հանել Շարժման դեմ... Ինչին տարբերություններով նույն բանն էին ասում նաեւ Սիլվա Կապուտիկյանը, Ջորի Բալայանը» (Տե՛ս* ***Jean Gueyras,*** *Le reve*

կերպ էին մտածում նաեւ կազմկոմիտեի՝ ծագումով ղարաբաղցի մյուս անդամները, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղում գործիչներից ոմանք: Այս հարցում էլ, ահա, անխուսափելի էր այն քաղաքական բախումը, բաժանումը, որը նույնպես տարբեր սրությամբ պետք է արտահայտվեր նաեւ հետագա տարիների ընթացքում: Այս հիմքի վրա էր հետագայում պարբերաբար հնչելու այն մեղադրանքը, թե Շարժումը «մոռացել է» Ղարաբաղի հարցը[149]: Թե՛ առաջինի՝ նոմենկլատուրային մտավորականության, թե՛ երկրորդի՝ ծագումով ղարաբաղցի գործիչների մի մասի համար ապահով գաղափարական հիմք կարող էին դառնալ եւ դարձավ ԽՍՀՄ-ի ջատագով եւ նրա քաղաքական համակարգի հետ խնդիր չունեցող հայդատականությունը եւ հողային պահանջատիրությունը: Այսինքն՝ հասունացած քաղաքական ջրբաժանի հիմքում դրված էր հետեւյալ երկու մոտեցումը. Լեռնային Ղարաբաղի հարցը համարել եւ հետապնդել որպես ինքնորոշման ժողովրդավարակա՞ն խնդիր (ինչը կապահովեր պայքարը շարունակելու հնարավորությունը)՝ դրանով իսկ առնչվելով նաեւ խորհրդային կայսրության քաղաքական հիմքերին, թե՛ այն դիտել որպես իրավական, հողային պահանջատիրության հարց (ինչը կարող էր հանգեցնել փակուղու)՝ առանց առնչվելու կայսրության քաղաքական հիմքերին:

Իրադարձություններն ու իրավիճակը հասունացրել էին Շարժման ղեկավարության վերակազմավորման խնդիրը, եւ վճռական քայլը կատարելու առիթը տվեց հենց Ի. Մուրադյանը: Մայիսի 20-ին, իր կողմից հրավիրված հանրահավաքում նա կոչ արեց «բենզինով շշերով եւ արմատուրաներով» հարձակվել Նախիջեւանի վրա: Եթե անգամ այդ կոչին որեւէ գործողություն չհետեւեր (իսկ բորբոքված հանրահավաքում շատերը խանդավառվեցին այդ կոչով), միայն նման կոչ հնչեցնելու փաստը կարող էր լավագույն հիմքը դառնալ, որպեսզի նոր միայն հրապարակն ազատած ներքին զորքերը հրաման ստանային վերադառնալ: Միջադեպը մյուս հոետորների ջանքերով դժվարությամբ հարթվեց[150]:

democratique des Armeniens, Le Monde, 22.10.1988: Օգտվել ենք հայերեն թարգմանությունից. ***Գերաս Ժան,*** *Հայերի դեմոկրատական երազանքը, (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/22.10.88):*

[149] *Դաշնակցությունն, օրինակ, ավելի ուշ նույն այս մեղադրանքը կրկնեց «Արցախի գինուն ջուր էր խառնվում» պաթետիկ ձեւակերպմամբ (Տե՛ս «Դրոշակ», 07.06.1989, էջ 7):*

[150] *Դժվար է ասել, թե ինչով էր պայմանավորված Ի. Մուրադյանի այդ վտանգավոր քայլը (նախորդ հանրահավաքներում միշտ ինքն էր ամենից շատ զգուշանում եւ*

Բարեբախտաբար, Շարժման ղեկավարության մեջ գտնվեցին մարդիկ, ովքեր ճիշտ հասկացան եւ գնահատեցին իրավիճակը. հաջորդ օրերին նրանցից յոթ հոգու՝ Համբարձում Գալստյանի, Վազգեն Մանուկյանի, Սամսոն Ղազարյանի, Վանո Սիրադեղյանի, Աշոտ Մանուչարյանի, Սամվել Գեւորգյանի եւ Ալեքսան Հակոբյանի ստորագրությամբ տարածվեց մի թռուցիկ, որի մեջ դատապարտվում էին Ի. Մուրադյանի «ինքնագլուխ գործողությունները եւ ծայրահեղորեն լարված այս իրադրության մեջ հայ ժողովրդի շահերը վտանգող արկածախնդրական կոչերը», որ նա կատարել էր Թատերական հրապարակում իր նախաձեռնությամբ գումարված հանրահավաքում[151]: Դիմումի հեղինակների գնահատմամբ՝ այդօրինակ կոչերը կարող էին օգտագործվել Կենտրոնի հետադիմականների կողմից՝ ազգամիջյան պատերազմ հրահրելու եւ ղարաբաղյան հարցը ընդմիշտ փակելու համար[152]:

Դրանից հետո մայիսի 31-ի հանրահավաքում հայտարարվեց եւ հաստատվեց նաեւ Շարժման նոր ղեկավար մարմինը, որը նախորդից տարբերվելու համար իրեն կոչեց «**Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե**» եւ միշտ այդպես էր ստորագրում պաշտոնապես իր անունից տարածվող

զգուշացնում սադրանքներից): Այն կարծիքը, թե Ի. Մուրադյանը Շարժման մյուս ղեկավարների կողմից կասկածվում էր ՊԱԿ-ի հետ ունեցած կապերի մեջ, եւ դա է եղել նրան Շարժման ղեկավարությունից դուրս մղելու պատճառը (Տե՛ս ***Григорян В.****, Армения 1988-1989, ст. 116), Կոմիտեի անդամները չեն հաստատում: Ռաֆայել Ղազարյանը, Ի. Մուրադյանին Կոմիտեի կազմից հեռացնելու մի այլ միջադեպ է հիշում. «Երբ հավաքվել էինք Վազգեն Մանուկյանի տանը, Վազգենի կինը՝ Վարդուհին, եւ անները՝ պրոֆ. Ռ. Իշխանյանը խիստ եւ ուլտիմատիվ տոնով հայտարարեցին Իգորին, որ նա իր հայերենի աղքատիկ բեռով չի կարող հավակնել հայ ժողովրդի շարժման առաջնորդի դերին» (****Ղազարյան Ռ.****, Հաշվետու եմ, էջ 170): Սակայն սա եւս չէր կարող հիմնական պատճառ լինել: Հայտնի է, որ Ի. Մուրադյանը հաճախ դուրս էր գալիս հավասարակշիռ վիճակից: Ահա «Ղարաբաղ» կոմիտեի՝ Գրողների միության դահլիճում տեղի ունեցած նիստերից մեկին ներկա Սամվել Շահմուրադյանի օրագրային վկայությունը. «Երեւաց Սարուխանյանը, Իգորը բոլորի առաջ հարձակվեց, հրեց: Բոլորը խառնվեցին, Իգորը Սարուխանյանին անվանեց «подонок», «клоун», նորից հարձակվեց, ճչաց... (տե՛ս* ***Շահմուրադյան Ս.****, Զմռռանալ ոչինչ, էջ 32):*

151 *Սամվել Շահմուրադյանի օրագրային գրառումներից. «Իգորը... կոչ արեց դուրս գալ երկաթի կտորներով եւ կացիններով: Խելքը թոցրե՞լ է Իգորը...Աշոտ Մանուչարյանն այսպես է մեկնաբանում. Իգորի եւ Կոմիտեի մեջ երկու լուրջ տարաձայնություն կա. ա) պաշտպանել Դեմիրճյանին... բ) հարկավո՞ր են արդյոք ստեղծված իրավիճակում ընդհարումներ ադրբեջանցիների հետ: Իգորը համարում է, որ արյուն է պետք» (տե՛ս* ***Շահմուրադյան Ս.****, Զմռռանալ ոչինչ, էջ 72):*

152 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.99:*

փաստաթղթերը, սակայն ժողովրդի մեջ շարունակեց կոչվել նախկին՝ ավելի հարմար ու կարճ՝ «**Ղարաբաղ» կոմիտե** տարածված անունով[153]:

Նոր Կոմիտեի կազմը տասնմեկ հոգի էր: Կոմիտեի մեջ մտան նախկին ղեկավարությունից վերոհիշյալ յոթ հոգին եւ այդ ընթացքում իրենց կատարած աշխատանքով, նախաձեռնողականությամբ, Շարժմանը բերած իրենց վաստակով, հրապարակային ելույթներով համարում ձեռք բերած եւ լայն զանգվածներին հայտնի դարձած եւս չորս հոգի: Նոր ղեկավար մարմինն ուներ հետեւյալ կազմը (ըստ ազգանունների այբբենական հերթականության).

Բաբկեն Արարքցյան – Պետական համալսարանի դասախոս, դոցենտ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

Համբարձում Գալստյան – պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ,

Սամվել Գեւորգյան – հեռուստալրագրող,

Ալեքսան Հակոբյան – պատմական գիտությունների թեկնածու,

Ռաֆայել Ղազարյան – ԳԱ թղթակից անդամ,

Սամսոն Ղազարյան – ուսուցիչ եւ լրագրող,

Վազգեն Մանուկյան – Պետական համալսարանի դասախոս, դոցենտ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

Աշոտ Մանուչարյան – դպրոցի ուսմասվար,

Վանո Սիրադեղյան – գրող,

Դավիթ Վարդանյան – լաբորատորիայի ղեկավար, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

Լեւոն Տեր-Պետրոսյան – Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր[154]:

Որքան էլ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի մեջ ընդգրկված 11 հոգուց 7-ը նաեւ նախորդ ղեկավար մարմնում էին, այնուամենայնիվ, այն **որակապես տարբերվում էր նախորդից**: Սա կարեւոր արձանագրում է, առանց որի անհնար է հետագա իրադարձությունների ճիշտ բացատրությունն ու մեկնաբանությունը[155]:

153 *Հարմարության համար սույն շարադրանքում մենք եւս զուգահեռ կօգտագործենք նաեւ այդ տարբերակը:*

154 *Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ էր ընտրված նաեւ Մանվել Սարգսյանը, որը, սակայն, մեկ նիստի մասնակցելուց հետո դուրս եկավ նրա կազմից:*

155 *Այս փաստի քաղաքական կարեւորության արձանագրումը, պատմագիտական մեզ ծանոթ աշխատություններում, հանդիպել ենք միայն Ռ. Ազիզբեկյանի մոտ. «Եթե*

Նոր ղեկավարությանը միավորում էր քաղաքական այն համոզմունքը, որ՝

Ա) Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման համար սկսված պայքարը չի կարելի ընդհատել կամ սառեցնել՝ տեղի տալով ուժային ճնշումներին եւ ապավինելով Կենտրոնի կիսատ-պռատ խոստումներին:

Բ) Ելք չի կարող լինել նաեւ արկածախնդրության հավասար ծայրահեղականությունը:

Գ) Շարժման շարունակությունը հնարավոր է ապահովել եւ արդյունքների հասնել միայն այն դեպքում, եթե խնդիրը լիովին դուրս բերվի պահանջատիրական հարթությունից, հեռու պահվի ազգայնականությունից, առավելագույնս հստակեցվի որպես **ժողովրդավարության մաս կազմող ինքնորոշման իրավունքի քաղաքական հարց եւ խարսխվի ընդհանուր ժողովրդավարական խնդիրների համապարփակ մի օրակարգի**:

Դ) Միայն այս կերպ Ադրբեջանի եւ խորհրդային Կենտրոնի դաշինքի կողմից կիրառվող **բռնության գործոնի** դեմ կարելի էր հուսալի հակակշիռ **հայկական գործոն** ստեղծել՝ մեծացնելով արդեն իսկ առկա դաշնակիցների՝ ԽՍՀՄ-ում նոր սկսվող ժողովրդավարական շարժումների, առաջադեմ գործիչների համակրանքը, ինչպես նաեւ միջազգային առաջադեմ հանրային կարծիքի աջակցությունը:

Համաժողովրդական շարժումը թեւակոխում էր որակապես նոր փուլ՝ բացահայտ քաղաքական ընդդիմություն դառնալով իշխող համակարգին:

Կատարվածը, այսպես ասենք, սովորական «իշխանափոխություն» չէր Շարժման մեջ: Խորհրդային կայսրությանը քաղաքական ընդդիմություն դառնալու ընտրված ճանապարհը՝ փողոց դուրս եկած հարյուր հազարավոր զանգվածների պայմաններում, պատասխանատվություն, բայց նաեւ մեծագույն անձնական ռիսկ էր՝ առաջին հերթին: Անձնական այդ ռիսկը

*սկզբնական շրջանում արցախյան շարժումն ուներ զուտ ազգային բնույթ, ուղղված չէր կոմունիստական վարչակարգի դեմ, եւ Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի կենսագործումը... իրագործելի էր թվում ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում, ապա իրադարձությունների հետագա զարգացման թելադրանքով հետզհետե առաջնային պլան մղվեցին ազգերի ինքնորոշման իրավունքի եւ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ճանաչված նորմերը: Ղարաբաղյան շարժումը աստիճանաբար ազգայինից վերածվեց ազգային-ժողովրդավարականի» (**Ազիզբեկյան Ռ.**, Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, 2, էջ 56):*

անհամեմատ ավելի մեծ էր, քան առաջին Կոմիտեի դեպքում, որը համակարգի դեմ քաղաքական պայքարի խնդիր չէր դնում իր առջեւ: Անգամ «Վերակառուցման» շրջանակներով իրեն սահմանափակած խորհրդային իշխանությունը դեռ ունակ էր բռնության ցանկացած քայլի: Չմոռանանք, որ խոսքը վերաբերում է մի համակարգի, որը հաստատվել եւ գոյատեւել էր տասնյակ միլիոնավոր մարդկանց արյան վրա: Ամենեւին չէր բացառվում, որ «վերակառուցման» այդ ուղեգիծը պարզապես մի օր կարող էր խզվել եւ ամեն ինչ շուռ գալ տրամագծորեն հակառակ ուղղությամբ (ինչպես նման փորձ արվեց 1991թ. օգոստոսին): Շարժման ղեկավար նոր մարմնի մեջ մտնող յուրաքանչյուրն, անշուշտ, շատ լավ գիտակցում էր անձնական այդ ռիսկի չափը[156]:

Նոր Կոմիտեն հենց սկզբից իր համար մշակեց աշխատանքի հստակ համակարգ եւ սկզբունքներ: Այն կոլեկտիվ մարմին էր՝ անդամների բացարձակ հավասարության սկզբունքի վրա, չուներ եւ երբեւէ չունեցավ ֆորմալ ղեկավար կամ նախագահ[157]: Կոմիտեի բոլոր անդամները ազատորեն

*[156] Դա շատ լավ հասկանում էին նաեւ քաղաքական պայքարի մեծ փորձ ունեցող մարդիկ: Լեւոն Տեր-Պետրոսյանի 80-ամյա հայրը այդ առիթով որդուն զգուշացրել էր. «Այդ ճանապարհն ընտրողը պետք է պատրաստ լինի գնալ մինչեւ կախաղան: Եթե այդպես չէ, ավելի լավ է հիմա ետ կանգնես» (տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, էջ 708):*

[157] Շարժման ղեկավար նոր մարմնի բնույթի եւ խոհանոցի մասին՝ մի քանի խոսք նույն Կոմիտեի անդամ Ալեքսան Հակոբյանից. «Ղարաբաղ» կոմիտեն բացարձակ կոլեգիալ մարմին էր: Աշխատանքի որոշակի բաժանում կատարվում էր... Բայց, միեւնույն ժամանակ, յուրաքանչյուրս անում էր նաեւ այլ բաներ, եւ դա անում էինք չգրված ձեւով: Եթե քննարկման հնարավորություն չկար, ապա մեզնից յուրաքանչյուրը կարող էր նաեւ կոնկրետ պահի որեւէ կոնկրետ հարցի լուծման պատասխանատվությունն ամբողջությամբ իր վրա վերցնել: Ընդհանրապես՝ Կոմիտեն մի մարմին էր, որը պատմական վճռորոշ պահին ուղիղ ձեւով, հրապարակավ եւ անվերապահորեն հռչակեց պատասխանատվությունն իր վրա վերցնելու մասին (իհարկե՝ ընկալելով ժողովրդի դրած պահանջը), որը նաեւ պատմական կտրվածքով կարելի է ֆենոմենալ, եզակի փաստերի շարքին դասել»: «Ղեկավարում որպես այդպիսին, «Ղարաբաղ» կոմիտեում չի եղել (չի եղել «նախագահ», «տեղակալ» եւ այլն). ես սա ասում եմ, որովհետեւ Վազգեն Մանուկյանը երբեմն ասում է, թե ինքը եղել է «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատորը՝ դրա տակ հասկանալով ղեկավարը: Բայց դա եղել է իրական կոորդինացիա, որը վերաբերել է ընդամենը մարդկանց հավաքելուն (այսինքն՝ բացարձակապես տեխնիկական գործառույթ), այլ ոչ թե որոշումներ կայացնելուն... Հարցերը քննարկվում էին հիմնավոր ու առանց ժամանակային սահմանափակման: Երբեմն ծայրահեղ կարծիքներ էին հնչում, բայց, միեւնույն է, շատ արագ էլ կոնսենսուսի էինք գալիս: Քվեարկություն ասվածը հազվադեպ էր

արտահայտվում էին, որոշումներն ընդունվում էին ընդհանուր համաձայնությամբ. նրանցից յուրաքանչյուրն ուներ նաեւ աշխատանքի իր հստակ ոլորտը: Նիստերին կողմնակի մարդիկ չէին մասնակցում (եթե նրանք հատուկ չէին հրավիրվում իրենց առնչվող հարցերի բերումով), եւ դրանք միանգամից դադարեցին հիշեցնել «Պուգաչովի վրանը»: Սակայն դա չէր նշանակում, թե այս 11 հոգին էին տանում պայքարի կազմակերպման ողջ ծանրությունը: Կոմիտեն ուներ իր շուրջը հավաքված մի քանի հարյուր ակտիվիստների խիստ գործուն մի «աշխատակազմ», որոնցից յուրաքանչյուրը մեծ ծանրաբեռնվածություն ուներ: Ի տարբերություն նախորդ Կոմիտեի, որն իր մեծագույն հաջողությունը կհամարեր, եթե Շարժման ղեկավարումը ստանձներ հանրապետության իշխանությունը, նոր Կոմիտեն ոչ միայն նման պատրանք այլեւս չէր կարող ունենալ, այլեւ արդեն եղած փորձով համոզված էր, որ Շարժման պայքարը լինելու է, առաջին հերթին հենց այդ իշխանության դեմ: Ընդ որում՝ այդ պայքարը լինելու է ոչ թե իշխանության համար (նման խնդիր գործնականում առայժմ դժվար էր դնել), այլ համաժողովրդական ճնշմամբ, գործող օրենքների հիման վրա ստիպել նրան աշխատեցնել իշխանության սահմանադրական մարմինները, ընդունել Շարժման պահանջած որոշումները եւ լուծել առաջացած խնդիրները:

* * *

Ի. Մուրադյանի հետ միասին Շարժման ղեկավար կազմից դուրս մնացածները (հիմնականում՝ ծագումով ղարաբաղցի գործիչներ) «Ղարաբաղ կոմիտե» ստորագրությամբ մի քանի թռուցիկներ տարածեցին, սակայն շուտով այդ խումբը դադարեցրեց իր կազմակերպական գոյությունը: Ի. Մուրադյանը չնայած երբեմն ելույթներ էր ունենում հանրահավաքներում, իր գործունեության համար որպես հիմնական ոլորտ ընտրեց Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի տնտեսական ինտեգրման ասպարեզը: Մյուսները եւս, յուրաքանչյուրն՝ իր պատկերացումներով եւ ուժերի չափով՝ օգտակար եղան ընդհանուր գործին:

Այլ՝ հակադրման ուղի ընտրեց «Ավագների խորհուրդը»:

Հակադրությունը Շարժման նոր ղեկավարության հետ անխուսափելիորեն պետք է խորանար Շարժման օրակարգում նոր՝ ընդհանուր

*լինում...»: Կոմիտեին շատ մոտ կանգնած ավագ սերնդի մտավորականներից Ա. Հակոբյանը առանձնացնում է, մասնավորապես, պրոֆեսորներ Ռաֆայել Իշխանյանին, Վարագ Առաքելյանին եւ նախկին քաղբանտարկյալ Խաչիկ Սաֆարյանին (**Հակոբյան Ա.**, հարցազրույց, hambardzum.am կայքին, 11.09.2015թ.: 11.09.2015):*

ժողովրդավարական հարցեր դնելով՝ կոմունիստական վարչակարգին քաղաքական ընդդիմություն դառնալու պատճառով: Դա նրանց կողմից գնահատվեց «հակասովետական», «հակառուսական», «հակակուսակցական» նույն պիտակավորումներով, ինչը նաեւ իշխանական քարոզչության հիմնական բառապաշարն ու միջոցն էր: Ի տարբերություն Ի. Մուրադյանի եւ նրա հետ Շարժման ղեկավարությունից հեռացածների՝ մտավորականության այս խումբը մինչեւ վերջ շարունակեց իր պայքարը՝ չհամակերպվելով իր ղեկավար դիրքի կորստի հետ: Քիչ անց նրանք «Ավագների խորհրդի» հիմքի վրա ստեղծեցին «Վերակառուցմանը սատարող ավագների խորհուրդ» անունով մի հասարակական կազմակերպություն, որը, ըստ Կապուտիկյանի՝ «ամեն կերպ պետք է ջանար ձեւավորել, հուն ու ափերի մեջ առնել արդեն տարերային եւ ինչ-որ իմաստով անկառավարելի դարձող Ղարաբաղյան շարժումը, պետք է ձգտի որքան հնարավոր է հակազդել մեջտեղ նետված հակապետական, հակառուսական շեշտեր ունեցող կարգախոսներին, որոնք օգտակար լինել չէին կարող ո՛չ Հայաստանին, ո՛չ Ղարաբաղին»[158]: Այս կազմակերպությունը ղեկավարում էր Ս. Կապուտիկյանը, որը եւ իր «տեղակալն» էր համարում Լենդրուշ Խուրշուդյանին[159]: Շարժումն իրենց պատկերացրած հունի մեջ առնելու կամ «ժամանակավորապես դադարեցնելու» նրանց ծրագիրը չէր կարող չբախվել Շարժման հարյուր հազարավոր մասնակիցների նորից բարձրացած հորձանքին:

Այսպիսով՝ Շարժումը եւ նրա ղեկավարությունը, ի դեմս մտավորականների այս խմբի, իշխանությունների կողքին ձեռք բերեց նոր ընդդիմախոսներ, որոնց գնահատականները ամենահիմնական հարցերում նույնանում էին հանրապետության իշխանության մոտեցումներին: Նրանք հաճախ պետք է դառնային նույն այդ իշխանությունների խոսափողը,

[158] *Կապուտիկյան Ս., էջեր փակ գզրոցներից, էջ 371: Կապուտիկյանը բողոքում է, թե իրենց այս կազմակերպությունը իշխանությունները չգրանցեցին, այն դեպքում, երբ ՀՀՇ-ին արդեն գրանցել էին (տե՛ս նույն տեղում, էջ 372): Դա ճիշտ չէր. ՀՀՇ-ի պաշտոնական ճանաչումը տեղի ունեցավ միայն մեկ տարի հետո՝ 1989-ի հունիսին, իսկ գրանցումը՝ 1989-ի նոյեմբերին:*

[159] *Անդամներից նա թվարկում է. Սոս Սարգսյան, Ջորի Բալայան, Սեն Արեւշատյան, Էդվարդ Ջրբաշյան, Վլադիմիր Բարխուդարյան, Գագիկ Սարգսյան, Լեո Գասպարյան, Հրաչիկ Սիմոնյան, Լենսեր Աղալովյան (տե՛ս **Կապուտիկյան Ս.**, էջեր փակ գզրոցներից, էջ 371): Նրանց միայն մի մասը հետագայում շարունակեց գործակցել այս խորհրդին: Շարժման դեմ պայքարելուց ձեռնպահ մնացին, մասնավորապես՝ ակադեմիկոսներ Գագիկ Սարգսյանը, Սեն Արեւշատյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Հրաչիկ Սիմոնյանը:*

փորձեին համախմբել մտավորական նոմենկլատուրայի ողջ խավը, ձգտեին այլընտրանք դառնալ «Ղարաբաղ» կոմիտեին՝ ջանալով վերցնել Շարժման ղեկը եւ այն տանել համակարգի համար անվնաս ուղղությամբ:

Հետաքրքիր է Շարժման ղեկավարության մեջ կատարված փոփոխության իշխանական ընկալումը:

Շարժման ղեկավարության փոփոխության, «առաջին» եւ «երկրորդ» սերունդների որակների եւ տարբերության մասին հանրապետական ՊԱԿ-ը «Ղարաբաղ» կոմիտեի մասին» վերնագրով մի վերլուծական տեղեկանք է կազմել (1988թ. հուլիս) ՀԿԿ կենտկոմի համար: Փաստաթուղթը հետաքրքիր է նաեւ իր մանրամասներով՝ ըմբռնելու համար նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչների հետագա վարքագիծը եւ դերակատարությունը.

«Կոմիտեականների շուրջ ձեւավորվող իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմա մենք գործ ունենք, այսպես ասած, նրանց երկրորդ սերնդի հետ: «Առաջին սերունդը»՝ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը[160], բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, լրագրող Ջ. Բալայանը, տնտեսագետ Ի. Մուրադյանը եւ ուրիշներ, թեեւ սկզբնական շրջանում հակաօրինական գործողությունների կոչ չէին անում, սակայն հանրապետությունում այսպես կոչված զուգահեռ կառույցների հիմք դրեցին: Ներդրվելով «կոմիտեականների» «առաջին սերնդի» մեջ, երկրորդը, օգտվելով «շարժման» ղեկավարների որոշակի ապատիայից, եւ իրենց ծայրահեղական արտահայտություններով ամբոխի մեջ ժողովրդականություն նվաճելով, վերջին հաշվով դուրս մղեցին «առաջին սերնդին» եւ զբաղեցրին նրա տեղը: Պետք է նշել, որ երբ ինչ-որ ժամանակ «կոմիտեականների» երկու սերունդները միասին էին, հանրապետության ՊԱԿ-ը որոշակի ջանքեր էր գործադրում նրանց մեջ սեպ խրելու եւ գժտեցնելու համար: Այդ մտադրությունը հաջողվեց, եւ Ի. Մուրադյանն, օրինակ, կոպտորեն, ֆիզիկական ուժի գործադրմամբ բառացիորեն դուրս շպրտվեց ամբիոնից[161]: Թերեւս միայն Ջ. Բալայանն է, որ ինչ-որ չափով ընդունվում է «երկրորդ սերնդի» կողմից: «Առաջին սերնդի»

[160] *Աշխարհահռչակ աստղագետ, Հայաստանի ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի անունը «Ավագների խորհրդում», ըստ էության, խորհրդանշական էր: Ինչպես ի սկզբանե, այնպես էլ հետագայում նա մնաց իր բարձրության վրա՝ բարոյական եւ գործնական մեծ աջակցություն ցուցաբերելով Շարժմանը եւ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին:*

[161] *Թերեւս նկատի ունի Ի. Մուրադյանի՝ մայիսի 19-ի սկանդալային ելույթը եւ, դրանից հետո նրան շարժման ղեկավարությունից հեռացնելու փաստը:*

ներկայացուցիչները տարբեր ուղիներով տարածում են «երկրորդ սերնդին» մեկուսացնելու անհրաժեշտության մասին միտքը: Այստեղ անպայման արտահայտվում է եւ մրցակցային պայքարը, սակայն, դրա կողքին, «առաջին սերունդը», տեսնելով «երկրորդ սերնդի» վտանգավոր մտադրությունները, հասկանում է նաեւ իր պատասխանատվությունը նրանց բեմահարթակ դուրս գալու համար: Իրենց հերթին «երկրորդ սերնդի» ներկայացուցիչները մեր ուշադրությունն են հրավիրում այն բանի վրա, որ իրենց հետամուտ նեղում են շատ ավելի ագրեսիվները (օրինակ այնպիսիք, ինչպես Ա. Պողոսյանը, որ կազմակերպեց օդանավակայանի շրջափակումը), եւ համարում են, որ վերջիններիս անհրաժեշտ էր ձերբակալել: Այն դեպքերում, երբ «երկրորդ սերնդի» ներկայացուցիչների հետ խիստ նախազգուշական զրույցներ են տարվել, նրանք դիվանագիտորեն հայտարարել են, որ եթե մենք ուզում ենք, իրենք կարող են դադարեցնել իրենց գործունեությունը եւ թողնել հրապարակը, բայց այդ ժամանակ կգա «երրորդ սերունդը», որը շնչում է իրենց թիկունքին, եւ որը կարող է ժողովրդին մղել ամենածայրահեղ գործողությունների: Ի. Մուրադյանը միայն վերջերս սկսեց երեւալ հանրահավաքի մասնակիցների մեջ եւ շատ կարճ ու անվստահ ելույթ ունեցավ: «Առաջին սերունդը» իր ծառայություններն է առաջարկում այն բանի համար, որ զսպող ազդեցություն ունենա մարդկանց վրա, բայց նաեւ անմիջապես էլ վերապահություն են անում, որ գործադուլների դեմ չեն կարող արտահայտվել, քանի որ իրենց սուլում են եւ թույլ չեն տալիս խոսել: Մեր ունեցած տվյալներով «առաջին սերունդն» իրոք չի պաշտպանում գործադուլները, սակայն չի համարձակվում այդ մասին խոսել»[162]:

զ) Հանրապետության ղեկավարության փոփոխությունը

Մայիսյան հանրահավաքների վերսկսման շրջանում իրավիճակի որակական փոփոխությունը գնահատեց, հետեւություններ եւ դրանից բխող քայլեր արեց նաեւ կենտրոնական իշխանությունը: Համենայնդեպս, նրա համար պարզ էր, որ մինչ այդ գործադրված միջոցները՝ սումգայիթյան ոճրագործությունից մինչեւ քարոզչական ահաբեկչություն, սոցիալ-տնտեսական բարեփոխումների խոստումներից մինչեւ Երեւան զորքեր մտցնելը եւ հանրահավաքներն արգելելը, որեւէ արդյունքի չհանգեցրին: Գորբաչովին անհանգստացրած «հրդեհը» առժամանակ որպես անթեղված կրակ

[162] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.15, թ.36-37:*

մնալով՝ այժմ բորբոքվում էր ոչ միայն նոր ուժով, այլեւ նոր որակով: Որեւէ արդյունքի չհանգեցրին նաեւ հանրապետական իշխանությունների միջոցով կիրառված կոշտ հակազդեցությունը, նրանց ձեռքով Շարժման հարյուրավոր մասնակիցների նկատմամբ գործադրված ճնշումներն ու ահաբեկումները: Բռնի միջոցների ավելի կոպիտ օգտագործումը արդեն աշխարհում ճանաչված եւ դրական վերաբերմունքի արժանացած Ղարաբաղյան շարժման նկատմամբ խնդիրներ կստեղծեր միջազգային ասպարեզում, իսկ անառարկայական խոստումներն իրենց ամբողջությամբ սպառել էին:

Հանրապետության ղեկավարության նկատմամբ վերաբերմունքը հատկապես ցայտուն արտահայտվեց մայիսյան հանրահավաքներում, որոնց հիմնական խնդիրներից մեկը ԽՄԿԿ նախապատրաստվող 19-րդ կոնֆերանսին «արժանի» պատվիրակներով հանրապետությունը ներկայացնելու հարցն էր: Ընդ որում՝ հարցը դրվում էր ոչ միայն անձերի առումով, այլեւ ընդունված այն պրակտիկայի դեմ, երբ որպես պատվիրակներ՝ հանրապետությունից «ընտրվում» եւ ներկայանում էին այստեղ չբնակվող եւ որեւէ կապ չունեցող մարդիկ՝ Մոսկվայից պարտադրված ցուցակով:

Շարժման այս «միջամտությունը» ներկուսակցական գործերին, անխնդրաբար լինելով, բավականին մեծ անհանգստություն էր առաջացրել: Այդ մասին են վկայում ՊԱԿ-ի՝ այս օրերին ամենօրյա հանգամանալից զեկուցագրերը ՀԿԿ կենտկոմ, որոնցում ներկայացվում են տվյալ խնդրի հետ կապված բոլոր ելույթները: Այսպես՝ մայիսի 17-ի հանրահավաքում Աշոտ Մանուչարյանը եւ Ալեքսան Հակոբյանն առաջարկում էին անվստահություն հայտնել եւ չընտրել նախապես արդեն որոշված թեկնածուներին, այդ թվում ամենաբարձրաստիճան պաշտոնյաներին՝ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանին, Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանին, ՀԿԿ ԿԿ-ի երկրորդ քարտուղար Յուրի Կոչետկովին, ՀԿԿ ԿԿ-ի քարտուղար Ռոբերտ Արզումանյանին եւ այլն: Սփյուռքահայ ուսանողների պահանջով մերժվող թեկնածուների թվում ավելացվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Կարլեն Դալլաքյանը: Շարժումն առաջարկում էր դրանց փոխարեն պատվիրակներ ընտրել Վիկտոր Համբարձումյանին, Սուրեն Հարությունյանին, Հայկ Քոթանջյանին[163], Կամո Վարդանյանին[164], Սիլվա Կապուտիկյանին, Բագրատ

[163] *Կուսակցական վերնախավի անդամներից, որը վերջին տարում մի քանի ելույթներ էր ունեցել Կ. Դեմիրճյանի դեմ:*

[164] *«Երեկոյան Երեւան» թերթի խմբագիր, «Ավագների» խորհրդի անդամ:*

Ալլուբաբյանին[165], Հրաչիկ Սիմոնյանին[166], Աշոտ Մանուչարյանին, Իգոր Մուրադյանին եւ այլն[167]:

Իշխանության անհանգստությունն, անշուշտ, տեղին էր: Ըստ նույն աղբյուրի՝ հանրապետության բնակչության զգալի մասը գտնվում է ԼՂԻՄ-ի հարցի շուրջ ծավալվող իրադարձությունների տպավորության տակ, եւ «Ղարաբաղյան շարժման ակտիվիստների գործունեությունը կարող է ազդել 19-րդ կուսկոնֆերանսի պատվիրակների ընտրության ընթացքի վրա»: Այստեղ ճշտենք, որ խոսքն իրականում վերաբերում է ոչ թե հանրապետության բնակչությանն ընդհանրապես, այլ հենց այդ պատվիրակներին ընտրող կուսակցական կազմակերպություններին, որոնք, ահա, մտավախություն կար, թե կարող են առաջնորդվել ոչ թե «վերեւից» իջեցված ցուցակներով (ինչպես միշտ եղել է), այլ հանրահավաքներում հնչած կոչերով: Այսինքն՝ ոչ միայն հիմնարկների աշխատավորական կոլեկտիվները, այլեւ դրանցում գործող Կոմունիստական կուսակցության կազմակերպությունները անվստահելի էին դիտվում այլեւս: Դա հերթական աննախադեպ փաստը կլիներ ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ ԽՍՀՄ-ի մասշտաբով: Շարժման առաջարկած թեկնածուներին անցկացնելու փորձեր իրոք կատարվեցին՝ «Մերգելյան» ինստիտուտում, Ֆիզիկական քիմիայի ինստիտուտում, Երեւանի պետական համալսարանում եւ այլն[168]:

Շարժմանը որակական այս նոր փուլում դիմագրավելու համար անհրաժեշտ էր բոլորովին այլ դեմքով՝ «ժողովրդի ձայնին ունկնդիր» կերպարով ղեկավար, մինչ այդ հասարակական դժգոհության առիթ չտված նոր մարդ: Ու քանի որ ղեկավարություն ասածն այդ ժամանակ ընկալվում էր հանրապետության կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի դեմքով, ապա վերջինիս փոփոխությունը բավարար էր՝ համարելու համար, որ հանրապետությունը նոր ղեկավարություն ունի, եւ այդ նոր ղեկավարությունը կարող էր փորձել հանդես գալ նոր կերպարով: Թերեւս որոշ հիմքեր կային նաեւ Ադրբեջանում նման փոփոխություն կատարելու համար, օրինակ՝ սումգայիթյան ոճրագործությունը: Սակայն, եթե անգամ դա չլիներ,

[165] *Ղարաբաղում պաշտոնավարած կուսակցական գործիչ, որը 60-ական թվականներին հետապնդումներից ապաստանել էր Հայաստանում, զբաղվում էր պատմությամբ եւ գրականությամբ:*

[166] *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, որը անմասն էր մնացել Շարժման դեմ իշխանության ծավալած պայքարից:*

[167] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.60:*

[168] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.73-74:*

Մոսկվայի՝ երկու հանրապետությունների եւ ժողովուրդների համար ամեն ինչ «հավասարակշռելու»՝ երբեմն անհեթեթության աստիճանի հասնող սկզբունքն էլ բավարար էր, որ նույնպիսի փոփոխություն կատարվեր նաեւ Ադրբեջանում:

Եւ կենտրոնական իշխանությունը այս նոր իրադրության հանդիման դիմեց Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարներին փոխելու միջոցին:

Մայիսի 20-ին Երեւան ժամանեցին ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամ, ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ա. Ն. Յակովլեւը եւ Քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Վ. Ի. Դոլգիխը: Բաքու ժամանել էին համապատասխանաբար նույն կարգավիճակն ունեցող Ե. Կ. Լիգաչովը եւ Գ. Պ. Ռազումովսկին: Մայիսի 21-ին Երեւանում եւ Բաքվում տեղի ունեցան երկու հանրապետությունների Կոմունիստական կուսակցությունների կենտկոմների պլենումներ, որոնցում նույն՝ «առողջական վիճակի պատճառով», առաջին քարտուղարի պաշտոնից հեռացվեցին եւ «թոշակի ուղարկվեցին» Կ. Դեմիրճյանը եւ Ք. Բաղիրովը: Հայաստանում կոմկուսի առաջին քարտուղար «ընտրվեց» Սուրեն Հարությունյանը, իսկ Ադրբեջանում Ա. Խ. Վեզիրովը:

է) Համաժողովրդական ճնշման մեծացումը, հիմնական հարցերը

Շարժման առաջին ղեկավարության հորդորով Լեռնային Ղարաբաղում նույնպես մարտ-ապրիլ ամիսներին հրապարակային պայքարը հիմնականում դադարեցված էր՝ Մոսկվային «չխանգարելու» համար: Բացի այդ, այստեղ եւս ներքին զորքեր էին մտցվել մարզկենտրոն: Նույն հույսն էին տալիս նաեւ հաճախակի այստեղ այցելող մոսկովյան պաշտոնյաները: Սակայն Ստեփանակերտում նույնպես մայիսմեկյան շքերթը վերածվեց Հայկական ԽՍՀ-ին միանալու իրենց պահանջը եւս մեկ անգամ բարձրաձայնելու ցույցի: Իսկ երբ հայտնի դարձավ, որ մարզային դատախազի տեղակալի պաշտոնում ադրբեջանցի է նշանակվել, մայիսի 11-12-ին համընդհանուր գործադուլ տեղի ունեցավ, ինչի շնորհիվ չեղյալ հայտարարվեց այդ նշանակման հրամանը[169]:

Իրենց հերթին՝ Շուշիում հանրահավաքներ էին կազմակերպում ադրբեջանցիները: Հաճախակի հնչող բռնության կոչերը շուտով վերածվեցին գործողությունների, քաղաքից արտաքսված հայ բնակչության առաջին

[169] *Арутюнян В., События в Нагорном Карабахе часть 1, ст. 79.*

խմբերը մայիսի 16-17-ին հասան Ստեփանակերտ: Միաժամանակ՝ Շուշիում սկսվել էր ադրբեջանցիների զանգվածային գրանցում, մարդիկ, որոնք մինչ այդ մարզի տարածքում չէին ապրել[170]:

Լեռնային Ղարաբաղում նոր գործադուլների առիթ հանդիսացավ Բաքվում մայիսի 21-ին ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ե. Լիգաչովի այն հայտարարությունը, թե Լեռնային Ղարաբաղի հարցն ըստ էության արդեն լուծված է՝ Քաղբյուրոյի փետրվարի 21-ի որոշմամբ, եւ՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է[171]:

Մայիսի 27-ին ԼՂԻՄ կուսակցական կազմակերպության եւ մարզգործկոմի կողմից համատեղ ընդարձակ դիմում հղվեց Մոսկվա՝ մարզը ժամանակավորապես, մինչեւ հարցի վերջնական կարգավորումը, Ադրբեջանի ենթակայությունից հանելու խնդրանքով[172]:

Լիգաչովի՝ Բաքվում արած սադրիչ հայտարարությունը, սումգայիթյան ոճրագործության հետ կապված դատավարության հիասթափեցնող առաջին արդյունքների հրապարակումը, ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում ընդունվեցին որպես նոր մարտահրավեր:

Ժողովրդական բողոքին ու վրդովմունքին հանրապետության «նոր իշխանությունների» արձագանքն անհամեմատ մեղմ էր: ՀԿԿ ԿԿ-ի օրգան թերթերի առաջնորդողում ասվում էր. «Վերջին օրերս Երեւանում նորից բազմամարդ միտինգներ տեղի ունեցան: Միտինգներ տեղի ունեցան նաեւ Բաքվում, Ստեփանակերտում, Կիրովաբադում: Ինչպես հայտնի է, դրանց ընթացքում իրավակարգի խախտումներ թույլ չեն տրվել... Այսօր կարծես յուրաքանչյուրին է հասկանալի. առանց դեմոկրատացման ազգամիջյան պրոբլեմներն անհնար է լուծել... Երեւանում տեղի ունեցած վերջին միտինգներում բացահայտորեն նկատելի էր, որ շատերը հրապարակ են եկել, որպեսզի շահագրգիռ խոսեն այն մասին, թե ինչպես են ընթանում առաջիկա կուսակցական կոնֆերանսին հանրապետության պատվիրակների ընտրությունները... անեն կոնկրետ առաջարկություններ, որոնք կոչված լինեն ապահովելու հանրապետական կուսակցական կազմակերպությունից առավել արժանավոր ներկայացուցիչների ընտրությունը: Բայց այդ ակտիվ քաղաքական դիրքորոշումն էլ ոմանք փորձեցին օգտագործել այլ բանի համար»: Ճիշտ է՝ պաշտոնական մամուլը դժգոհ էր, որ ոմանք որոշեցին «վճռական ցուցումներ» տալ, թե «ում պետք է ընտրել եւ ում՝ բոյկոտել»:

[170] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.135:*

[171] *Арутюнян В., События в Нагорном Карабахе часть 1, ст. 90.*

[172] *Դիմումի լրիվ տեքստը տե՛ս նույն տեղում, էջ 91-101:*

Բայց, այդուամենայնիվ, ընդունում է, թե՝ «այս ամենը դուրս չէր գալիս դեմոկրատիայի շրջանակներից, միտինգում արված պոզիտիվ առաջարկություններն այժմ ուշադրությամբ ուսումնասիրվում են հանրապետության ղեկավարության կողմից եւ երկրի համապատասխան մարմիններում»: Իհարկե, միաժամանակ նաեւ զգուշացվում էր, թե «սրվել է պայքարը հանուն վերակառուցման եւ ընդդեմ դրա»[173]: Այսինքն՝ «նոր» ղեկավարությունն առաջին իսկ օրից փորձում էր ներկայանալ, գոնե առերես, ավելի ժողովրդավար եւ ժողովրդի ձայնին ավելի ունկնդիր: Շարժման մասին երկար ժամանակվա քար լռությունից հետո տպագրվեց ռեպորտաժ հանրահավաքների մասին, ընդ որում՝ առանց դատապարտող գնահատականների եւ պիտակների[174]:

Մայիսյան հանրահավաքների հիմնական հարցերից մեկն էլ Սումգայիթից փախստական դարձածների եւ սումգայիթյան դատավարության հարցն էր: Շարժումը պահանջում էր դատավարությանը մասնակից դարձնել Հայկական ԽՍՀ-ի եւ միութենական այլ հանրապետությունների ներկայացուցիչների: Ըստ ՆԳ նախարարության անցկացրած «հատուկ միջոցառման» արձանագրած տվյալների՝ Երեւանում «բոլոր հարցվողները միասնական են եղել այն կարծիքում, որ Սումգայիթում ընթացող դատավարությունը չի կարող օբյեկտիվ լինել, քանի դատական կոլեգիայի բոլոր անդամները Բաքվից են: Պահանջվում էր, որ դատավարությունը, ելնելով հանցանքի ծանրությունից, կայանա Մոսկվայում կամ Ռուսաստանի որեւէ այլ քաղաքում: Ինչպես նաեւ զայրույթ են հայտնել այն բանի համար, որ դատավարությանը Հայաստանից մասնագետներ չեն մասնակցում, դա ծաղր են համարել հայ ժողովրդի նկատմամբ»[175]:

Նոր ղեկավարությունը, բնականաբար, նախորդի նման չշարունակեց համոզել փախստականներին վերադառնալ Սումգայիթ: Ընդհակառակը՝ սկսեց խոստումներ եւ հաշվետվություններ տալ նրանց տեղավորման եւ աշխատանքով ապահովելու միջոցառումների մասին, ինչը փախստականների եւ Շարժման պահանջն էր: Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդում քննարկելով այդ հարցը՝ արձանագրվեց, որ «մարտի 2-ից մինչեւ այսօր (1 հունիսի) Հայաստան է տեղափոխվել 802 ընտանիք՝ թվով 3189 մարդ»:

[173] *«Սովետական Հայաստան», 23.05.1988:*

[174] *Տե՛ս «Երեկոյան Երեւան», 27.05.1988: Այստեղ չպետք է անտեսել նաեւ Թերթի խմբագրի՝ Կամո Վարդանյանի դրական դերակատարությունը, որը բխում էր Շարժման նկատմամբ նրա բացահայտ համակրանքից:*

[175] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.135:*

Նշված քանակից 489 մարդ վերադարձել էր Լեռնային Ղարաբաղ, իսկ մնացածներին որոշվում է տեղավորել Բաղրամյանի, Ապարանի, Սիսիանի, Հրազդանի, Աշտարակի, Նաիրիի, Թալինի շրջաններում՝ հարկ եղած դեպքերում նրանց արտոնյալ պայմաններով հատկացնելով պետական վարկ:

Մայիսի 23-24-ին Թատերական հրապարակում կայացած հանրահավաքները պահանջում էին վերակառուցումը եւ ժողովրդավարացումը տարածել կյանքի բոլոր ոլորտներում, սումգայիթյան եղեռնագործության դատավարությունը կազմակերպել հրապարակայնության պայմաններում, ապահովել Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերում հայ բնակչության անվտանգությունը եւ այլն: Միաժամանակ՝ կրկին գործի էր դրվել կենտրոնական իշխանություններին բազմաթիվ գրավոր դիմումներով ոմբակոծելու միջոցը: Դրանք վերաբերում էին Բաքվում Ե. Լիգաչովի հայտարարությանը, պահանջվում էր ապահովել սումգայիթյան դատավարության օբյեկտիվությունը, իսկ որպես ԼՂԻՄ-ի հարցի ժամանակավոր լուծում՝ առաջարկվում էր այն դնել ՌՍՖՍՀ-ի վարչական ենթակայության ներքո[176] :

Իրադրությանն առավել լարվածություն էր հաղորդում մայիսի 26-ից սկսված՝ ուսանողների նստացույցը Թատերական հրապարակում, ինչի շնորհիվ այն մարդաշատ էր ոչ միայն ցերեկները, այլեւ օրվա բոլոր ժամերին, իսկ հանրահավաքները դարձել էին ամենօրյա: Կենտրոնական իշխանությունից պահանջվում էր նոր հավաստիացում, որ ուժի մեջ է Լեռնային Ղարաբաղի խնդրով ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությանը տրված հանձնարարականը[177]: Իշխանությունն անհանգստացած էր հատկապես այն լուրերից, որ մայիսի 28-ի՝ Առաջին հանրապետության օրվա առթիվ, նախատեսվում էր ցույցեր կազմակերպվել եւ եռագույն դրոշներ բարձրացնել: Այսպիսի կոչերով թռուցիկներ էին տարածվում հատկապես ուսանողության մեջ: ՊԱԿ-ը քրտնաջան փնտրում էր թռուցիկները պատրաստողներին ու տարածողներին[178]:

Լարվածության թուլացմանը չնպաստեցին նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների նորանշանակ քարտուղարներ

[176] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.86:*

[177] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.136:*

[178] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.84 եւ 90: Հետագայում կատարված այն արձանագրումը, թե մայիսի 28-ին Ազատության հրապարակում եռագույն դրոշ բարձրացվեց ՀԿԿ-ի նորանշանակ առաջին քարտուղար Ս. Հարությունյանի թույլտվությամբ (Թոմաս դե Վաալ, Սեւ այգի, Երեւան, 2014, էջ 100), առնվազն տարօրինակ է:*

Ս. Հարությունյանի եւ Ա. Վեզիրովի՝ մայիսի 29-ին կայացած հանդիպումները Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանագլուխ Իջեւանի եւ Ղազախի շրջաններում, որոնցում, իբր, քննության էին առնվել «տնտեսական ու մշակութային կապերի ուժեղացման, աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հետ կապված հարցեր»[179] : Նույն օրը կայացած հանրահավաքում արդեն նաեւ նոր գործադուլներ սկսելու անհրաժեշտության մասին էր խոսվում: Այստեղ որոշում ընդունվեց հեռագիր հղել Գորբաչովին եւ այդ օրերին Մոսկվայում գտնվող ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանին՝ «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու գործին աջակցելու խնդրանքով»[180]:

Նոր թափ հավաքած, նաեւ կազմակերպական ավելի հստակ որակներ ձեռք բերած Շարժման համար հիմնականը, բնականաբար, մնում էր Լեռնային Ղարաբաղի հարցը, եւ այստեղ անհրաժեշտ էր նոր քայլ կատարել: Իսկ այդ քայլն այլ բան լինել չէր կարող, քան այն, ինչ փետրվարյան հանրահավաքների առաջին օրերի պահանջն էր՝ ստանալ հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնական դրական պատասխանը Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի դիմումին: Այդ պահանջն էլ առաջ քաշվեց մայիսի 31-ի՝ 75000-անոց հանրահավաքում: Մինչ այդ, դեռ ապրիլի կեսերին, ՊԱԿ-ը արդեն ահազանգել էր, որ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում բլանկներ է հայտնաբերել, որոնք նախատեսված էին Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում այդ հարցը քննարկելու պահանջով պատգամավորներից ստորագրություններ հավաքելու համար[181]: Ապրիլի 13-ով թվագրված այդպիսի մի պատվիրան՝ ուղղված թիվ 61 ընտրատարածքի պատգամավորին, պահանջում էր այդ հարցով արտահերթ նստաշրջան հրավիրելու դիմում հղել ԳԽ նախագահություն, իսկ եթե արտահերթ նստաշրջան չգումարվի, ապա հարցը մտցնել հերթական նստաշրջանի օրակարգ[182]: Հունիսի առաջին օրերին կենտկոմում ստացված զեկուցագրերում արդեն արձանագրվում էր, թե հանրապետական մասշտաբով գործադուլի վտանգը դարձել է իրական: Այն կանխելու համար դատախազություն էր կանչվել Ի. Մուրադյանը եւ հատուկ զգուշացվել նման քայլի չդիմելու համար[183]:

---

179 *«Երեկոյան Երեւան», 31.05.1988:*

180 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.137-138:*

181 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ. 49:*

182 *ՀՀԱՆԱ, 15/13.04.88: Հերթական նստաշրջանը նախապես նշանակված էր մայիսի 15-ին, սակայն այն տեղափոխվեց հունիսի 15:*

183 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.144: Ի. Մուրադյանի վրա ազդելու համար օգնության էր կանչվել Զ. Բալայանը. ըստ փաստաթղթի՝ «օգտագործվել է այն հանգամանքը, որ վերջինս խիստ սուր դատապարտում էր Մուրադյանի ելույթներն ու գործողությունները: Նախապես պատրաստված լինելով Զ. Բալայանը դատախազությունում զրույցի ժամանակ ակտիվորեն օժանդակեց Ի. Մուրադյանի վրա ճնշում գործադրելու համար: Դրա շնորհիվ Ի. Մուրադյանը հրաժարվեց իր մտադրություններից»: Ըստ մի այլ զեկուցագրի՝ նույնպիսի «կանխարգելիչ» զրույց էր անցկացվել նաեւ Աշոտ Մանուչարյանի հետ (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ .14, թ.161):*

Ազատության հրապարակում շարունակվում էին ուսանողական նստացույցը եւ հանրահավաքները, հունիսի երկուսին Թատերական հրապարակում նստացույցի մասնակիցների թիվը հասավ 450-500 մարդու, եւ հարթակի աստիճանների վրա տեղ չլինելու պատճառով նստացույցի լրացուցիչ վայր ընտրվեց նաեւ մետրոյի Մարշալ Բաղրամյան կայարանամերձ տարածքը՝ Գերագույն խորհրդի նախագահության շենքի հանդիման: Նույն պահանջներով Թատերական հրապարակում հացադուլ էին հայտարարել մի խումբ երիտասարդներ՝ Շանթ Հարությունյանի գլխավորությամբ:

ը) Շարժման առաջին նշանակալի նվաճումը. ԼՂԻՄ դիմումին համաձայնություն տալու՝ ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 15-ի որոշումը

Թատերական հրապարակը՝ բազմամարդ նստացույցով, հացադուլավորներով ու ամենօրյա հանրահավաքներով, վերածվել էր Շարժման շուրջօրյա կենդանի կենտրոնի: Շարժումը բորբոքվում էր նոր ուժով եւ չէր զիջում փետրվարյան հանրահավաքների բարձրակետին: Սակայն անցած երեք ամիսների փորձն ու եզրահանգումները նկատի ունենալով՝ հանրահավաքներն իրենց բնույթով որակապես տարբեր պետք է լինեին: Այլեւս պարզ էր, որ նույնիսկ ամենաբազմամարդ հանրահավաքները եւ դրանց միասնական պահանջը չեն կարողանում ստիպել իշխանությանը կատարել պահանջված քայլը: Ուստիեւ Շարժման մասնակիցներին ոչ թե գեղեցիկ ու հուզիչ ելույթներ, այլ գործողությունների ծրագիր եւ առարկայական գործ պետք է առաջարկվեր, ընդ որում՝ ամենօրյա գործ, եւ հաշվարկված այնպես, որ սայթաքումներ չլինեն, ու ամեն ինչ տեղավորվի օրինականության շրջանակներում:

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն այդպիսի մի ծրագիրը ներկայացրեց հունիսի 4-ի հանրահավաքում: Այն հիմնավորում էր ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի դիմումը ՀԽՍՀ ԳԽ-ի կողմից քննարկելու անհրաժեշտությունը՝ արձանագրելով, թե ինչ հետեւանքներ է ունեցել այս

խնդրից խուսափելը անցած ամիսների ընթացքում: Ընդ որում՝ խուսափելու համար խնդրի քննարկումից, ՀԽՍՀ ԳԽ-ը անգամ հետաձգել էր նախապես մայիսի 15-ին նշանակած իր հերթական նստաշրջանի անցկացումը: Իսկ քննարկման եւ դրական որոշման անհրաժեշտությունը հիմնավորվում էր նրանով, որ միայն այդ դեպքում կապահովվի խնդրի հետապնդման սահմանադրական ուղին, Հայաստանն արտահայտած կլինի իր վերաբերմունքը ոչ թե հանրահավաքներում կատարված քվեարկությամբ, այլ՝ իրավական փաստաթղթով, ինչով նաեւ կվերահաստատվի Ղարաբաղի որոշման իրավաբանական ուժը: Կոմիտեն իրավացիորեն համարում էր, որ ինչպիսի պատասխան էլ ակնկալելի լինի Ադրբեջանից եւ Կենտրոնից, միեւնույն է՝ Հայաստանի ԳԽ որոշումը պարտադիր է, եւ այն չի կարող բացասական զարգացումների պատճառ հանդիսանալ[184]:

Հանրահավաքում քննարկումից հետո տարածված թռուցիկը, վերնագրված՝ «Առաջիկա գործողությունների ծրագիր», հանձնարարում էր.

«Կազմակերպել ընտրողների հանդիպումներ ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների հետ եւ նրանց տալ հետեւյալ պատվիրանները.

- 1988թ. հունիսի 15-ի նստաշրջանի օրակարգում ընդգրկել ԼՂԻՄ մարզխորհրդի 20.02.88թ. դիմումի քննարկումը,
- քննարկել այդ դիմումը եւ դրան տալ դրական պատասխան,
- պահանջել ԳԽ նստաշրջանում բոլոր պատգամավորների ելույթների ուղիղ հեռարձակում հայկական հեռուստատեսությամբ,
- տեղեկացնել նստաշրջանին այն մասին, որ նստաշրջանի օրը՝ հունիսի 15-ին, ժողովուրդը չի աշխատելու եւ սպասելու է որոշմանը:

Դրական որոշման դեպքում (ԼՂԻՄ մարզխորհրդի խնդրանքին ՀՍՍՀ ԳԽ համաձայնության) կոչ ենք անում առաջիկա շաբաթ օրը հայտարարել աշխատանքային օր... նստաշրջանը չկայանալու, կամ հարցը չքննարկելու դեպքում հունիսի 15-ից կհայտարարվի մեկշաբաթյա համընդհանուր գործադուլ, որի ամբողջ պատասխանատվությունը կընկնի Գերագույն խորհրդի պատգամավորների վրա: Այդ մի շաբաթվա ընթացքում սույն պատվիրանները չկատարած ՀՍՍՀ ԳԽ-ի բոլոր պատգամավորները ետ կկանչվեն»[185]:

Առաջին հայացքից կոշտ ու սպառնական թվացող այս պահանջները եւ առաջարկված գործողություններն ամբողջությամբ տեղավորվում էին գործող օրենքների մեջ: Գերագույն խորհրդի պատգամավորն ուներ

[184] *ՀՀԱՆԱ, 04.06.88:*

[185] *ՀԱԱ, ֆ.1. ց.4516, գ.15, թ. 11-12:*

հրամայական մանդատ, այսինքն՝ պարտավոր էր կատարել իր ընտրողների պատվիրանները, հակառակ դեպքում՝ ընտրողների իրավունքն էր նրան ետ կանչել եւ ընտրել նոր պատգամավոր: Ճիշտ է՝ այս դրույթը խորհրդային իրականության մեջ երբեւէ չէր աշխատել, եւ խնդիրն այժմ դա աշխատեցնելն էր: Դեռ մարտին՝ պատգամավորների 1/3-ի պահանջով Գերագույն խորհրդի նիստ հրավիրելու եւ որոշում ընդունելու այս միջոցն օգտագործելու փորձերը ոգեւորիչ էին: Այն ժամանակ դրանք վերջնական արդյունքի չհասան միայն իշխանության կոպիտ միջամտության պատճառով, իսկ այդ կոպիտ միջամտությունն, իր հերթին, հնարավոր եղավ Շարժման ղեկավարության որդեգրած սպասողական ուղեգծի եւ հանրահավաքների բացակայության պայմաններում: Այժմ այլ էր ուղեգիծը, եւ առկա էին հզոր հանրահավաքները:

Թե որքան էին հանրապետության իշխանություններն անհանգստացած այս ծրագրից, Շարժման ահագնացող թափից, վկայում է այն փաստը, որ հունիսի առաջին կեսին ՊԱԿ-ը ոչ միայն ամեն օր, այլեւ երբեմն օրը երկու անգամ էր մանրակրկիտ զեկուցագրերով ժամ առ ժամ ներկայացնում կատարվող իրադարձությունների մանրամասները: Վերջիններիս եւ օրվա մամուլի հաղորդումների միջոցով էլ, ահա, հնարավոր է վերականգնել այդ օրերի չափազանց լարված իրադարձությունների հետեւյալ ամբողջական պատկերը:

Հունիսի 1-ի առավոտյան Թատերական հրապարակում հիշյալ զեկուցագրերով արձանագրված հարաբերական հանգստությունը եւ «անկազմակերպվածությունը» բացատրվում է այն հանգամանքով, որ նույն օրը «կանխարգելիչ» աշխատանք էր տարվել Ա. Մանուչարյանի հետ, իսկ Ի. Մուրադյանը դժգոհ էր մնացել, որ իրեն չեն ընդգրկել նոր Կոմիտեի կազմում: Ապա նստացույց անող ուսանողներին ոգեւորողների եւ նստացույցին մասնակցողների մեջ հիշատակվում են ԵՊՀ-ի դասախոսներ Բաբկեն Արարքցյանը, Վազգեն Մանուկյանը, Սվետլանա Գալստյանը, Լեւոն Սարգսյանը: Իսկ հանրահավաքը վարողների մեջ հիշատակվում են Ռուբեն Սեդրակյանը, Մելիք Ստեփանյանը եւ ուրիշներ:

Հրապարակում հավաքվածները երեկոյան շարժվում են դեպի ՀԿԿ կենտկոմի շենք, որի դիմաց հավաքվել էր եւս 6000 մարդ: Նրանք սկսում են վանկարկել «Հարությունյան» եւ «Ղարաբաղ»[186]: Ցույցի մասնակիցներն ուզում էին Ս. Հարությունյանի կենդանի խոսքից հավաստիանալ, թե

[186] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.161-162:*

որքանով է համապատասխանում նոր քարտուղարի ներկայացվող կերպարն իրականությանը, եւ որքանով է նա պաշտպանում Շարժման խնդիրները: Երկու ժամ հետո վերջապես Ս. Հարությունյանը ստիպված էր ելույթ ունենալ հանրահավաքի առջեւ: Նա ժողովրդի դժգոհության պատճառը համարեց հանրապետության տնտեսության, սոցիալական եւ «գաղափարաբարոյական ոլորտներում» չլուծված պրոբլեմները: Ղարաբաղի առիթով Ս. Հարությունյանը հիշեցրեց միայն, որ Քաղբյուրոյի որոշմամբ ՍՄԿԿ կենտկոմի քարտուղարությանը հանձնարարված է կազմակերպել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառների «խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը, համապատասխան առաջարկությունները մշակել եւ դրանց պատրաստ լինելուն պես ներկայացնել ՍՄԿԿ կենտկոմի ու ՍՍՀՄ կառավարության քննարկմանը»: Նա վկայակոչեց մարտ ամսին հայտարարված՝ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու վերաբերյալ ՍՄԿԿ կենտկոմի եւ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի հայտնի որոշումը[187]: Իսկ ԳԽ-ի առաջիկա նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի դիմումի հարցի քննարկման մասին Ս. Հարությունյանը որեւէ խոստում չտվեց:

Չբավարարված առաջին քարտուղարի խոսքից՝ հանրահավաքի մասնակիցների մի մասը չհեռացավ, նստեց եւ մնաց փողոցում մինչեւ առավոտ, մյուս մասը՝ բաժանված շուրջ 3000 հոգանոց երկու խմբի, համընդհանուր գործադուլի կոչով քայլարշավի դուրս եկավ Երեւանի փողոցներով: Համընդհանուր գործադուլի վտանգը ՊԱԿ-ի նախագահը համարում էր իրական, հատկապես այն բանից հետո, երբ «պառակտում» տեղի ունեցավ ղարաբաղյան շարժման ղեկավարության մեջ: Նոր՝ «քիչ հայտնի» մարդիկ (նկատի ունի Շարժման նոր ղեկավարությունը), նրա համոզմամբ, կարող էին դիմել «անկանխատեսելի գործողությունների»[188]:

Հունիսի 2-ին ՀԿԿ կենտկոմի շենքի առջեւ նոր հանրահավաքի փորձը հաջողվեց կանխել, նրանց համոզեցին մտնել ԳԱ-ի դահլիճը, որտեղ Ակադեմիայի կուսակտիվը պետք է նրանց համոզեր, որ հանրահավաքներն ու գործադուլներն անիմաստ են: Սակայն այստեղ էլ՝ «գիտական-ստեղծագործական մտավորականության ոչ բոլոր ներկայացուցիչները պաշտպանեցին այդ գիծը»[189]: Փաստորեն՝ այն վերածվեց առաջիկա անելիքներն ու պահանջները քննարկելու մի հավաքի, ավելի որոշակիացած կրկնվեցին ընթացիկ եւ

[187] *«Երեկոյան Երեւան», 02.06.1988:*
[188] *ՀԱԱ, ֆ.1 ց.87, գ.14, թ.163:*
[189] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.171:*

մոտակա խնդիրները՝ հանրապետական իշխանություններից պահանջելով Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում, կենտրոնական իշխանություններից՝ պատասխանատվության կանչել սումգայիթյան եղեռնագործության բուն կազմակերպիչներին, դատը վարել հրապարակայնորեն, պաշտոնական ցավակցություն հայտնել անմեղ զոհերի հարազատներին:

Նույն օրը Թատերական հրապարակում հավաքվածներից մոտ 1000 հոգի ուղեւորվեցին դեպի հեռուստաստուդիա՝ պահանջելով, որ վերջինս ճշմարիտ տեղեկատվություն տա Ղարաբաղյան շարժման մասին: Իսկ ժամը 21-ից նոր երթ սկսվեց մայրաքաղաքի փողոցներով՝ կոչ անելով գործադուլի դիմել՝ Լեռնային Ղարաբաղի դիմումի քննարկման հարցը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի օրակարգ մտցնելու պահանջով: Ու թեեւ ամբողջ օրը Թատերական հրապարակում հանրահավաք, որպես այդպիսին, տեղի չունեցավ, այնուամենայնիվ, այստեղ հավաքված մարդկանց քանակը, անգամ ժամը 22-ին, կազմում էր շուրջ 35000, որոնք ցրվեցին միայն գիշերվա ժամը 2-ին[190]:

Այս ամենի շնորհիվ էր, որ հաջորդ օրերին լրատվամիջոցներն անդրադարձան իրադարձություններին, մասնավորապես, հեռարձակվեց «Ձեր կարծիքը» խորագրով մի հաղորդում:

Թատերական հրապարակում, ըստ Երեւանի շրջանների թվի, հունիսի 4-ից սկսած, 8 սեղան էր դրված, որտեղ համապատասխան շրջանների բնակիչները հատուկ մշակված ձեւաթղթերի վրա իրենց պատգամավորներին ուղղված դիմումներ էին ստորագրում՝ առաջիկա նստաշրջանում իրենց պահանջը ներկայացնելու համար: Առաջին այդպիսի դիմումը Գերագույն խորհրդի նախագահությունը ստացել էր հունիսի 1-ին՝ պատգամավոր, պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր Ռ. Մովսիսյանից: Ընտրողներից հավաքած բազմահազար ստորագրությունները թեւի տակ՝ հանրահավաքների մասնակիցները գնում էին համապատասխան շրջանների գործադիր կոմիտեներ՝ հանդիպելու պատգամավորներին եւ նրանցից ստանալու Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված համապատասխան միջնորդությունները՝ տվյալ հարցը նստաշրջանի օրակարգում ընդգրկելու պահանջով: Այն պատգամավորները, որոնք հրաժարվում էին գալ այդպիսի հանդիպման, ստիպված էին ակտիվիստների խմբերին ընդունել իրենց տներում:

[190] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.172:*

Հարցը օրակարգ մտցնելու համար անհրաժեշտ էր հավաքել պատգամավորների ընդհանուր թվի (350) 1/3-ի միջնորդությունները: Կազմակերպվեցին «Սահմանադրական խմբեր» (այս խմբերը ղեկավարում էր Արշակ Սադոյանը), որի անդամները նույն առաքելությամբ ուղեւորվեցին նաեւ Հայաստանի շրջանները: Միաժամանակ՝ նույն խնդրով ԳԽ նախագահություն եւ իրենց կողմից առաջադրված պատգամավորներին էին դիմում բազմաթիվ հիմնարկներ ու ձեռնարկություններ՝ իրենց ընդհանուր ժողովներում ընդունված համապատասխան որոշումներով: Այս գործընթացի մեջ ինքնամոռաց ընդգրկվել էր, փաստորեն, ողջ հասարակությունը:

Հունիսի 4-ի հանրահավաքում առաջարկվեց մեծացնել «ճնշումները» այն պատգամավորների վրա, որոնք հրաժարվում են միջնորդություններ ներկայացնել, եւ նման դեպքերում կազմակերպել նրանց ետկանչը: «Վերակառուցմանն աջակցող խմբերի» հետ միասին այս գործին սկսեցին լծվել աշխատավորական կոլեկտիվների խորհուրդները, արհմիութենական կազմակերպությունները, երբեմն նույնիսկ Կոմունիստական կուսակցական սկզբնական կազմակերպությունները[191]: Ընդ որում՝ նստացույցի մասնակիցները սպառնում էին, որ հունիսի 10-ից իրենք էլ կմիանան նույն պահանջներով հացուդուլ հայտարարած 12 հացադուլավորներին[192]: Հունիսի 5-ին Շարժման մասնակիցներին հաջողվել էր արդեն 100 պատգամավորի միջնորդություններ ապահովել Գերագույն խորհրդի նախագահությունում[193]:

[191] *Հայաստանի կոմկուսի ոչ նոմենկլատուրային մասը՝ 90%-ից ավելին, իրականում գաղափարական առումով ոչ մի կապ չուներ այս կուսակցության հետ եւ ամենագործուն մասնակցությունն ունեցավ Շարժմանը:*

[192] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.179:*

[193] *ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընտրվում էր կուսակցական մարմիններում նախապես կազմված ցուցակներով, որտեղ հասարակության տարբեր շերտերի համար նաեւ քվոտաներ կային: Ճիշտ է՝ դրանում ապահովված էր կոմունիստական ու խորհրդային ղեկավար աշխատողների մեծամասնության ներկայությունը, սակայն ցուցադրելու համար պետության բանվորագյուղացիական լինելը, զգալի թիվ էին կազմում նաեւ սովորական աշխատավոր մարդիկ՝ կթվորներ, հովիվներ, բանվորներ, մտավորականներ եւ այլն: Վերջիններս համազգային ոգեւորության պայմաններում հաճախ չէին ենթարկվում իշխանության մարմինների տված հրահանգներին եւ ստորագրում էին Շարժման ներկայացուցիչների կողմից բերված փաստաթղթերը: Այսինքն՝ իրենց բնական ազնվությամբ նրանք ավելի ճիշտ էին կողմնորոշվում, քան պարտավորությունների որոշակի կապանքների ենթակա իշխանական եւ մտավորական նոմենկլատուրայի շատ ներկայացուցիչներ:*

Այս օրերին տարածված մի թռուցիկը կոչ էր անում հունիսի 14-ի լույս 15-ի գիշերը 500-700 հազար մարդկանցով գիշերել Բաղրամյան պողոտայում եւ միասին դիմավորել «ազատության լուսաբացը»: Մի այլ թռուցիկում կոչ է արվում Լեռնային Ղարաբաղի խնդիրը Գերագույն խորհրդի նստաշրջանում չքննարկելու կամ դրական պատասխան չտալու դեպքում հունիսի 15-ից հայտարարել համազգային գործադուլ[194]:

Հաջորդ օրերին նույնպես շարունակվում էին պատգամավորներից միջնորդագրեր ստանալուն ուղղված աշխատանքը: Հունիսի 7-ին հավաքվել էր եւս 21 պատգամավորների միջնորդություն[195]: Այսինքն՝ անհրաժեշտ 1/3-ն արդեն ապահովված էր: Հունիսի 7-ին հացադուլ հայտարարած երիտասարդներին միացավ նաեւ սոցիալիստական աշխատանքի հերոս Գառնիկ Մանասյանը: Նստացույցեր էին կազմակերպվել նաեւ Լենինականում: Շարժման մասնակիցները շարունակում էին դժգոհություն արտահայտել զանգվածային լրատվության միջոցներից, մասնավորապես ռադիոյից եւ հեռուստատեսությունից, որոնք պատշաճ ձեւով չէին լուսաբանում նստացույցը, հացադուլը եւ այդ օրերին Թատերական հրապարակում եռացող իրադարձությունները: Մի քանի անգամ այդ պահանջով հանրահավաքների մասնակիցների մեծ խմբեր շրջափակել էին ռադիոյի եւ հեռուստատեսության շենքը, մասնավորապես պահանջելով, որ ՀԿԿ ԿԿ-ի աշխատակիցները գրաքննության չենթարկեն պատրաստված ռեպորտաժները: Հանրապետությունով մեկ տարածում էր ստանում նաեւ Շարժման կազմակերպական հստակ կառույցների ստեղծման գործը: Որոշ տեղերում դրանք անվանակոչվում էին որպես «Վերակառուցմանն աջակցող խորհուրդներ» եւ փորձում էին պաշտոնական գրանցում ստանալ որպես հասարակական կազմակերպություններ[196]:

Չնայած իշխանության մարմինների բուռն դիմադրությանը՝ փաստորեն, 5-6 օրում հնարավոր եղավ հավաքել պատգամավորների անհրաժեշտ թվով միջնորդություններ ԼՂ դիմումի հարցը ԳԽ-ի նստաշրջանի օրակարգ մտցնելու պահանջով: Հունիսի 7-ի հանրահավաքում Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ հարցն, ըստ էության, վճռված է, քանի որ անհրաժեշտ թվով պատգամավորական միջնորդություններն արդեն առկա են: Նա առաջարկեց, որ այդ նստաշրջանում, բացի հիմնական հարցին դրական պատասխան տալուց, Գերագույն խորհուրդը որոշումներ կայացնի նաեւ

[194] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.180:*

[195] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.188:*

[196] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.189:*

հետեւյալ հարցերի մասին. **ա)** ապօրինի ճանաչի Կովկասյան Բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին, **բ)** պաշտոնական բողոք ներկայացնի Ադրբեջանի կառավարությանը՝ Սումգայիթում իրագործված ցեղասպանության փաստի առիթով, **գ)** դիմի ԽՍՀՄ գլխավոր դատախազություն, որպեսզի վերջինս կատարվածը որպես ցեղասպանության ակտ գնահատի եւ այդ հիմքի վրա իր ձեռքը վերցնի հետաքննությունը, **դ)** Ադրբեջանի Գերագույն խորհրդից պահանջվի ընդունել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, **ե)** ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ առաջարկ ներկայացվի հաստատելու ՀՍՍՀ Գերագույն խորհրդի որոշումը ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմի մեջ անցնելու մասին[197]:

Ուժային պայքարում անխուսափելի պարտության հեռանկարի առջեւ իշխանությունները ստիպված էին տեղի տալ: Ծավալվող բուռն իրադարձությունների մասին լրատվամիջոցները ամբողջ մայիս ամսվա ընթացքում համառ լռություն էին պահպանում, այդ լռությունը շարունակվում էր նաեւ «նոր ղեկավարության» առաջին շաբաթներում: Ճիշտ է՝ ինչ կատարվում էր, հայտնի էր ողջ հանրապետության բնակչությանը, հատկապես պատգամավորների հետ «աշխատելու» շրջանում: Միայն հունիսի 7-ին (երբ արդեն առկա էին ԳԽ պատգամավորների 1/3-ի միջնորդությունները) մամուլում ծավալուն ռեպորտաժ հրապարակվեց Թատերական հրապարակից, ընդ որում՝ խիստ մեղմ տոնով, նստացույցի մասնակիցների եւ հացադուլավորների հետ հարց ու պատասխանով, նրանց պահանջները ներկայացնելով[198]:

Հանրահավաքների ահագնացող ճնշման տակ հունիսի 9-ի երեկոյան իշխանությունները ստիպված էին պաշտոնական հայտարարություն անել այն մասին, որ ԼՂ մարզային խորհրդի փետրվարի 20-ի դիմումի հարցը ընդգրկված է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի օրակարգում, ինչը եւ հրապարակվեց մամուլում: Սակայն վստահությունը խարխլված էր, եւ դրանից հետո էլ հանրահավաքի մասնակիցների մեծ մասը չցրվեց, նստացույցը, հացադուլը եւ հանրահավաքները չդադարեցին: Ավելին՝ նույն օրը նստացույց սկսվեց նաեւ Կիրովականում: Նվաճված հաջողությունն ամենեւին չէր նշանակում, թե այն կհանգի հենց այն վերջնական արդյունքին, ինչի համար այդքան ջանք ու եռանդ էր թափվել:

Նույն օրը՝ հունիսի 9-ին, Մոսկվա էին հրավիրվել Ս. Հարությունյանը, Ա. Վեզիրովը եւ Հ. Պողոսյանը: Վերադարձից հետո, հունիսի 11-ին,

[197] *Տե՛ս* ***Григорян В.****, Армения 1988-1989, ст. 154.*

[198] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 07.06.1988:*

Հ. Պողոսյանը Ստեփանակերտում ներկայացրեց ԽՄԿԿ կենտկոմում տեղի ունեցած հանդիպման մանրամասները, իսկ Ս. Հարությունյանն այցելեց Թատերական հրապարակ, խոստացավ, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջիկա պլենումը համակողմանիորեն կվերլուծի հանրապետությունում տիրող իրավիճակը, հավաքվածներին պատմեց այն միջոցառումների մասին, որ ձեռնարկվում են Սումգայիթից եկած ընտանիքներին հանրապետությունում տեղավորելու համար, խոսեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումը քննարկելու մասին, իսկ հարցի վերջնական լուծումը պայմանավորեց ԽՄԿԿ կենտկոմի ազգային քաղաքականության խնդիրներին նվիրված առաջիկա պլենումի գումարման հետ, որը կահմանի «անցյալից մեզ ժառանգություն մնացած բազմաթիվ բարդ հարցերի լուծման ուղիները»[199]:

Բայց այնուամենայնիվ, դժվար էր ենթադրել, թե իշխանությունները համակերպվել են Շարժման առաջ քաշած խնդիրը լուծելու հետ: Հունիսի 12-ին լուրեր տարածվեցին այն մասին, որ առաջիկա նստաշրջանում, ճիշտ է՝ քննարկվելու է ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումը, բայց նախատեսված է այն մերժել: Ըստ երեւույթին, հենց այսպիսի հանձնարարություն էր տրվել Մոսկվայում: Վաղ առավոտյան Ազատության հրապարակում (հունիսի առաջին օրերից այդպես էին կոչում Թատերական հրապարակը) անմիջապես հավաքվեցին 5000 ցուցարարներ, որոնց մի մասը հունիսի 13-ից գործադուլ սկսելու կոչով երթ սկսեց քաղաքով մեկ, երթը շարունակվեց մինչեւ ժամը 17.30: Երեկոյան հանրահավաքի մասնակիցների թիվն անցնում էր 70000-ը: Հանրահավաքի ավարտին Վազգեն Մանուկյանն առաջարկեց, որ հանրապետության ղեկավարությունը հաջորդ օրը հանրահավաքում հավաստիացնի, որ Լեռնային Ղարաբաղի դիմումի հետ կապված դրական որոշում կընդունվի:

Հաջորդ օրն առավոտյան համընդհանուր գործադուլը սկսված էր[200]: Ամբողջությամբ կանգ էր առել քաղաքային տրանսպորտը, եւ բոլորը ոտքով գալիս էին Ազատության հրապարակ: Այստեղ էին եկել նաեւ շատերը

[199] *«Սովետական Հայաստան», 12.06.1988:*

[200] *Գործադուլները, սովորաբար, ոչ միայն հայտարարվում էին, այլեւ յուրաքանչյուր կոլեկտիվ իր ընդհանուր ժողովում համապատասխան որոշում էր կայացնում արձանագրելով նաեւ գործադուլի պահանջները, իսկ որոշման պատճենը ներկայացնում «Ղարաբաղ» կոմիտեին: Առավել ակտիվ կոլեկտիվներ ավելի վաղ էին սկսել գործադուլը. օրինակ՝ Բյուրականի աստղադիտարանի աշխատողների համապատասխան որոշումը թվագրված է հունիսի 7-ով (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/07.06.88):*

մերձակա բնակավայրերից: Կենտկոմի առաջին քարտուղարը ստիպված էր ներկայանալ եւ հանրահավաքի մասնակիցների պահանջը բավարարող խոստում տալ. նա հրապարակեց պատրաստված որոշման նախագիծը, նաեւ խոստացավ, որ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքը ուղիղ հաղորդմամբ կցուցադրվի հեռուստատեսությամբ:

Սակայն իշխանության որեւէ խոստում այլեւս հավատ չէր ներշնչում, ուստի Վանո Սիրադեղյանը առաջարկեց երեկոյան եւս հավաքվել՝ հաջորդ օրերի անելիքները ճշտելու համար: Լուրեր էին տարածվում, թե Գերագույն խորհրդի կողմից մերժողական որոշման դեպքում ոմանք պատրաստվում են որպես բողոքի նշան ինքնահրկիզվել[201]: Հանրահավաքում հռետորներից ոմանք (Վլադիմիր Նազարյան, Շահեն Թաթիկյան, Ռաֆայել Ղազարյան) թեեւ կոչ էին անում դադարեցնել գործադուլները եւ «նորմալ պայմաններ ստեղծել հանրապետության ղեկավարության աշխատանքի համար», այդուհանդերձ կոչերը ընդհատվում էին «գործադուլ» հզոր վանկարկումներով: Մյուսները գործադուլը շարունակելու կոչ էին անում: Վ. Սիրադեղյանն, օրինակ համարում էր, որ՝ «այն ամենը, ինչի հասել ենք, հասել ենք ուժի շնորհիվ»: Այդ օրը, տարբեր ժամերի, Ազատության հրապարակ էր այցելել մոտ 750000 մարդ: Գործադուլն ընդգրկել էր հանրապետության ողջ տարածքը, բազմահազարանոց հանրահավաքներ էին եղել նաեւ այլ քաղաքներում, նստացույցեր էին սկսվել եւս երկու քաղաքում՝ Սպիտակում եւ Ալավերդիում[202]:

Հայտնի չէ, թե հունիսի 9-ին Մոսկվա հրավիրված՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ ԼՂ ղեկավարներն ինչ հարցեր էին քննարկել եւ ինչ հանձնարարություններ ստացել: Բոլոր դեպքերում՝ Ադրբեջանի ԳԽ նստաշրջանը հունիսի 10-ից տեղափոխվել էր 17-ին, դրա փոխարեն, հունիսի 13-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը շտապեց քննարկման առարկա դարձնել մինչ այդ իր կողմից անտեսած ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը եւ մերժել դիմումը. «Բազմակողմանիորեն քննարկելով Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի դեպուտատների խնդրանքը ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահությունը համարում է անընդունելի, քանի որ դրա իրականացումը կհակասեր հանրապետության ադրբեջանական եւ հայ բնակչության շահերին, չէր ծառայի մեր երկրի բոլոր ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդմանը, վերակառուցման խնդիրներին»[203]:

Հունիսի 14-ին հայկական հանրապետական մամուլում հրապարակվեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշման մասին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընդունելիք որոշման նախագիծը, որի առաջին կետով սահմանվում էր, թե ղեկավարվելով ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածով՝ համաձայնություն է տրվում ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ անցնելուն, իսկ երկրորդ կետով ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը դիմում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդին եւ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ քննարկել եւ դրական լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու հարցը: Միաժամանակ, հույս էր հայտնվում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջեւ եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները, ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից»[204]:

Հունիսի 14-ին գործադուլը շարունակվում էր, չնայած քաղաքային տրանսպորտը սկսել էր աշխատել: Հեռուստապետկոմը շրջապատած մոտ 2000 ցուցարարներ ճշմարտացի տեղեկատվություն էին պահանջում Բաքվում կատարվող իրադարձությունների մասին (որտեղ, ըստ լուրերի, սրվել էր իրավիճակը), պահանջում էին նաեւ հեռուստակամուրջի կազմակերպում Ստեփանակերտի եւ Երեւանի միջեւ: Այդ օրվա հանրահավաքը սկսվեց երեկոյան ժամը 9-ին՝ 60000 մասնակիցներով: Հիմնական ելույթը Լեոն Տեր-Պետրոսյանինն էր, որը, վերլուծելով Գերագույն խորհրդի որոշման հրապարակված նախագիծը, առաջարկեց, որ դրանում անմիջական դիմումը ուղղվի միայն ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, իսկ առանձին կետով դիմում ուղղվի Ադրբեջանի Գերագույն խորհրդին՝ չխոչընդոտել հարցի դրական լուծմանը: Այսպիսի փոփոխությունն անհրաժեշտ էր, քանի որ Ադրբեջանի ԳԽ նախագահությունը արդեն նախորդ օրը ընդունել էր մերժող որոշում, ինչը, բնականաբար, պետք է կրկներ նաեւ նրա Գերագույն խորհուրդը, կամ չքննարկեր այն, ինչով եւ խնդիրը կմնար կախված կամ փակված:

---

[201] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.204-205: Այսօրինակ սադրիչ լուրերը սովորաբար տարածում էր ՊԱԿ-ը: Հետաքրքիր է, որ այդ օրերին, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների վկայությամբ, նրանց է դիմել Ջորի Բալայանը՝ առաջարկելով համոզել որեւէ մեկին հանրահավաքների թափը ուժեղացնելու համար, իրոք, ինքնահրկիզվել Ազատության հրապարակում: Կոմիտեի անդամները նրան պատասխանել են, որ դրա համար ամենահարմար եւ տպավորիչ թեկնածուն, թերեւս, հենց ինքն է: Դրանից հետո նրա հարաբերությունները Կոմիտեի հետ էականորեն փչացան:*

[202] *Տե՛ս, ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.225:*

[203] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе часть 1, ст. 102.*

[204] *«Սովետական Հայաստան» 14.06.1988:*

Հունիսի 15-ի վճռական օրը առավոտյան Ազատության հրապարակում հավաքվել էր 60000 մարդ, որոնք հեռուստացույցով դիտում էին ուղիղ հեռարձակվող նստաշրջանը: Ըստ համապատասխան զեկուցագրի՝ ժամը 11.30-ի մոտ՝ ցուցարարներին ինչ-որ բան դուր չեկավ նիստի ընթացքից, եւ բոլորը միասին «գործադուլ», «Սումգայիթ», «դավաճաններ» վանկարկումներով շարժվեցին դեպի Բաղրամյան փողոցում գտնվող Շահումյանի անվան քաղլուստուն (այժմ Ամերիկյան համալսարանի շենքը), որտեղ ընթանում էր նստաշրջանը: Մեկ ժամ անց շենքի շուրջը հավաքվածների թիվը հասավ 120000-ի[205]: Չնայած նախօրերին իշխանությունների տված խոստումներին եւ հրապարակված որոշման նախագծին՝ Շարժումն արդարացված կասկածներ ուներ: Ելույթներից, այդ թվում նաեւ Ս. Հարությունյանի եզրափակիչ ելույթից հետո, դժվար չէր ենթադրել, որ քվեարկության դրական արդյունքը երաշխավորված չէ: Նախագահողը հրաժարվեց ելույթի հնարավորություն տալ ձայն խնդրող պատգամավոր Հովհաննես Չեքիջյանին, ինչի առիթով տեղի ունեցավ իրարանցում, եւ ընդմիջում հայտարարվեց, առանց հարցը քվեարկության դնելու:

Մինչեւ ցուցարարների տեղ հասնելը[206] դեպի շենք տանող մուտքերը փողոցի կողմից շրջափակված էին վահաններով եւ ռետինե մահակներով զինված սաղավարտավոր զինվորների խիտ շարքերով: Ցուցարարներով լցվեց փողոցը, ինչպես նաեւ հարակից շենքերի տանիքները: Լարումը հասել էր իր բարձրակետին: Շտապ օգնության տասնյակ մեքենաներ միմյանց հետեւից տանում էին ուշաթափվածների: Որոտում էին՝ «Ոսկանյան – դավաճան», «ֆաշիստներ», «ետ տարեք զորքերը» վանկարկումները: Ցուցարարների առջեւ փորձ արեց ելույթ ունենալ ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը, բազմությունը միահամուռ մեջքով շուռ եկավ դեպի նա եւ խլացրեց նրա ձայնը «դավաճան» վանկարկումով: Ամեն րոպե կարող էր տեղի ունենալ անկանխատեսելի: Զորքերի հրամանատար, ԽՍՀՄ ՆԳՆ նախարարի տեղակալ, գեներալ Տրուշինը պահանջում էր, որ իջնեն հարակից շենքերի տանիքներին գտնվող մարդիկ: Գեներալի հետ անմիջապես բանակցող «Ղարաբաղ» կոմիտեի անդամները պահանջում էր, որ նախ դուրս բերվեն զորքերը: Վերջապես գեներալը տեղի տվեց եւ հանեց զորամիավորումը:

Ստիպված էին տեղի տալ նաեւ Հայաստանի իշխանությունները. հայտարարվեց, որ որոշման նախագիծը վերջնական տեսքի բերելու համար

[205] *ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.14, թ.230: Այսինքն՝ այստեղ շտապեցին նաեւ նրանք, ովքեր տանն էին դիտում նստաշրջանի ընթացքը:*

[206] *Ցուցարարներին գլխավորում էր «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Սամսոն Ղազարյանը:*

ստեղծվում է խմբագրական հանձնաժողով՝ դրա մեջ ընդգրկելով նաեւ Կոմիտեի անդամ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Որոշումն ընդունվեց վերջինիս հիմնական առաջարկներն անցկացնելուց հետո՝ հետեւյալ երեք կետերով.

1. «Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988թ. փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը եւ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաեւ ԼՂԻՄ-ի եւ Հայկական ՍՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ՍՍՀՄ սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն:
2. Խնդրել ԽՍՀՄ Գերագույն սովետին քննարկել եւ դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու հարցը:
3. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը, դիմելով Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին, հույս է հայտնում, որ այդպիսի որոշումը չի խախտի երկու հանրապետությունների միջեւ եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները, եւ այն ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից»[207]:

Ընդունված մեկ այլ որոշմամբ, հինգ ամիս ուշացումով, Հայաստանի Գերագույն խորհուրդը վերջապես պաշտոնապես դատապարտեց սումգայիթյան ոճրագործությունը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի պնդմամբ արձանագրելով, որ այն կատարվել է **ազգային հողի վրա**, եւ ուշացումով ցավակցություն հայտնեց զոհվածների ընտանիքներին ու հարազատներին[208]:

Հաղթանակած բազմությունը ցնծությամբ վերադարձավ Ազատության հրապարակ՝ այդ օրվա ձեռքբերումը գնահատելով որպես կարեւոր մի փոքր հարցի վերջնական լուծման ճանապարհին: Ապա շնորհակալության խոսքեր ուղղվեցին նստացույցի եւ հացադուլի մասնակիցներին եւ խնդրեցին դադարեցնել բողոքի այդ միջոցները: Հացադուլի մասնակիցները փոխադրվեցին հիվանդանոց՝ վերականգնողական բուժման համար:

Շարժումը տոնեց իր, փաստորեն, առաջին փառավոր հաղթանակը: Հաղթանակը հնարավոր եղավ Ղարաբաղյան շարժման Հայաստանի

[207] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 11, հոդվ. 72:*

[208] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 11, հոդվ. 73:*

կոմիտեի (նոր «Ղարաբաղ» կոմիտեի)՝ իրավիճակի ճիշտ գնահատման, անսխալ ղեկավարման, քաղաքական խիզախության եւ, իրոք, համաժողովրդական ահռելի ալիքի բարձրացման եւ այն ճիշտ կառավարելու կարողության շնորհիվ: Շարժումը ձեռք բերեց չափազանց կարեւոր եւ հետագա գործունեության համար կենսական՝ ինքնահաստատման եւ ինքնավստահության լուրջ չափաբաժին: Այն ապացուցեց, որ իշխանությունների անգամ հրապարակային եւ պաշտոնական խոստումներին չի կարելի վստահել, եւ պետք է մինչեւ վերջին պահը չկորցնել զգոնությունը: Դա նաեւ նշանակում էր, որ առաջիկայում էլ ամեն մի հեթական խնդրի լուծում պահանջելու էր նույնպիսի համաժողովրդական ջանքեր: Նշանակալից մի հաղթանակ էր դա, որ գրանցվեց ոչ թե նամակների, խնդրագրերի տարափի, այլ սեփական ուժերին ապավինելու, եւ այդ ուժի ճիշտ գործադրման միջոցով:

Կատարվածի նշանակությունն ակնհայտորեն դուրս էր գալիս Հայաստանի շրջանակներից. **Խորհրդային Միությունում սա, փաստորեն, առաջին դեպքն էր, երբ միութենական հանրապետության իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը ընդունում էր ոչ թե իր ծրագրած ու նախատեսած, այլ «ներքեւից» թելադրված որոշումը**[209]: Դա 70-ամյա կոմունիստական իշխանավարման համակարգի մեջ բացված առաջին լուրջ ճեղքն էր, որ այլ հանրապետություններում քիչ անց ծավալվող ժողովրդավարական շարժումները պետք է միայն խորացնեին: Հայաստանյան Շարժումը դրանով արձանագրեց իր գոյությունը՝ որպես պաշտոնական իշխանությունների քաղաքական ընդդիմություն՝ ոչ միայն հանրապետական մասշտաբով, այլ նաեւ ընդհանրապես իշխող քաղաքական համակարգի: Ուստիեւ հասկանալի է այս առիթով ՊԱԿ-ի հետեւյալ «վերլուծությունը», որի տակ հեռուն գնացող անհանգստություն եւ չարտահայտված դժգոհություն կա. «Վերլուծելով այսպես կոչված «ղարաբաղյան շարժման» ակտիվիստների գործունեությունը, կարելի է եզրակացնել, որ նրանք օգտագործելով ԼՂԻՄ-ի ակտիվիստների փորձը, ճնշման աստիճանական ուժեղացմամբ, բազմահազարանոց հանրահավաքների ու ցույցերի կազմակերպմամբ եւ բազմօրյա գործադուլների սպառնալիքով հասան իրենց հիմնական

[209] *Ճիշտ է, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ նույն կերպ էր կայացել նաեւ ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի հայտնի նստաշրջանը եւ ընդունել «ներքեւից» թելադրված որոշումը: Սակայն Լեռնային Ղարաբաղում մարզային պաշտոնեությունն ամբողջությամբ (եզակի բացառություններով) շարժման մասնակից ու ղեկավարն էր եւ ձգտում էր հասնել այդ որոշման կայացմանը: Հայաստանի կոմունիստական պաշտոնեությունը հակառակ դիրքերում էր:*

պահանջների կատարմանը: Այս առիթով կարելի է ենթադրել, որ հետագայում եւս նույն միջոցների կիրառումով նրանց կողմից փորձեր կձեռնարկվեն արագացնել ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանի կողմից որոշման ընդունման եւ հարցի դրական լուծման հասնելու համար»[210]: Սա ՊԱԿ-ի կողմից Շարժմանը ակամա տրված բարձրագույն գնահատական էր:

Ինքնահաստատման կարեւոր քայլ կատարեց Շարժման նոր ղեկավարությունը՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն: Նման դեպքերում, որպես կանոն, ժողովրդական ահռելի զանգվածը իր տրամաբանությանն է ենթարկում նաեւ ղեկավարությանը, եւ նրա գործողությունները դուրս են գալիս ամեն տեսակ օրենքների եւ օրինականության շրջանակներից: Այս դեպքում դա տեղի չունեցավ՝ չնայած ժողովրդական զանգվածի ահռելի թվին, երկու տասնօրյակ տեւած՝ փաստորեն շուրջօրյա հանրահավաքներին, մարդկանց հույզերի վրա ազդող այնպիսի հանգամանքների, ինչպես՝ նստացույցերը, հացադուլները, կենտրոնական լրատվամիջոցների սադրիչ ապատեղեկատվությունը, վիրավորական գնահատականները, վահաններով ու մահակներով զինված զինվորների խիտ շարքերը եւ այլն: Կոմիտեն կարողացավ վստահորեն իր ձեռքում պահել Շարժման ղեկը եւ հաջողությամբ լուծել իր առջեւ դրված առաջին ոչ դյուրին խնդիրը: Դա քաղաքական խիզախումի, ինչպես ցույց տվեց արդյունքը՝ ճշգրիտ հաշվարկված խիզախումի մի օրինակ էր, որ ավարտվեց հաղթանակով: Այն, ըստ էության, Շարժման նոր ղեկավարության առաջին փայլուն քննությունն էր:

Երկու օր հետո, ինչպես եւ սպասվում էր, Ադրբեջանի ԳԽ-ը ընդունեց հակառակ որոշումը՝ ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումը համարելով անընդունելի: Այս պայմաններում, բնականաբար, հարցի հաջորդ քննարկումը արդեն պետք է տեղի ունենար ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունում: Կարելի էր նաեւ չկասկածել, որ վերջինս եւս կլիներ մերժողական՝ սահմանադրական այն դրույթի հիմքով, ըստ որի՝ երկու հանրապետությունների միջեւ սահմանային փոփոխությունները կարող են հաստատվել, եթե առկա է երկուսի համաձայնությունը: Սահմանադրական այս փակուղուց խույս տալու համար ԼՂԻՄ մարզային խորհրդի պատգամավորների պահանջով հունիսի 21-ին հրավիրվեց արտահերթ նստաշրջան: Վկայակոչելով մարզում առաջացած չափազանց լարված իրավիճակը՝ նստաշրջանը խնդրում էր ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը՝ «մինչեւ Լեռնային Ղարաբաղի մասին հարցի վերջնական դրական լուծումը, որպես տվյալ փուլում միակ ընդունելի տարբերակ,

[210] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.231:*

ամենակարճ ժամկետում մարզը հանել Ադրբեջանի կազմից եւ ենթարկել անմիջապես ԽՍՀՄ կառավարությանը»[211]:Հուլիսի 12-ին ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանը ընդունեց ընդարձակ առաջաբանով մի նոր որոշում, որի առաջին կետը հռչակում էր ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս: Այս անգամ այլեւս չէր նշվում ԽՍՀՄ կառավարությանն անմիջապես ենթարկվելու մասին միտքը եւ որպես հարցի վերջնական լուծում էր համարվում ՀԽՍՀ ԳԽ-ի հունիսի 15-ի որոշման իրագործումը[212]:

թ) Շարժման դեմ սադրանքներ, «Ջվարթնոց» օդանավակայանի դեպքերը

Չնայած գործադրված ջանքերին՝ Շարժմանը չհաջողվեց ազդել ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսի՝ Հայաստանից ընտրված պատվիրակների կազմը որոշելու վրա, եւ պատվիրակներ դարձան նրանք, ովքեր նախապես որոշվել էին: Ինչպես եղել էր միշտ՝ դրանց մեջ կային նաեւ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության մարմինների տարբեր պաշտոնյաներ, որոնք ոչ մի կապ չունեին հանրապետության եւ նրա կուսակցական կազմակերպության հետ: Իշխանություններն այնքան նրբանկատ չգտնվեցին, որ գոնե լարված այդ իրավիճակում հրաժարվեն այս անհեթեթ ավանդույթից: Այնուամենայնիվ, Շարժման ջանքերով Լեռնային Ղարաբաղի հարցով 19-րդ կոնֆերանսին հղվեցին հազարավոր քաջալերող հեռագրեր եւ պահանջներ, եւ ոչ միայն Հայաստանից, այլեւ Խորհրդային Միության տարբեր ծայրերից: Հատուկ ձեւաթղթերի վրա նույն պահանջներով հավաքվեց եւ 19-րդ կոնֆերանսին ուղարկվեց Հայաստանի Կոմունիստական կուսակցության 40000 անդամների ստորագրություն[213]: Կոնֆերանսին ուղղված ընդարձակ դիմում հղվեց նաեւ հունիսի 25-ի բազմամարդ հանրահավաքի անունից[214]:

---

[211] *Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 23.06.1988: Այս որոշումը հրապարակվեց նաեւ Հայաստանի թերթերում, նույնիսկ «Պրավդան» այդ փաստն արձանագրեց առանց իրեն բնորոշ բացասական որակումների (տե՛ս «Правда», 24.06.1988):*

[212] *«Սովետական Ղարաբաղ» 13.07.1988:*

[213] *Կոմունիստների պահանջների տեքստը եւ ստորագրահավաքի ձեւաթուղթը կազմվել էին «Ղարաբաղ» կոմիտեի կողմից: Սա բազմաթիվ փաստերից մեկն է, որը ցույց է տալիս, որ շարքային կուսակցականները լիարժեք ընդգրկված էին Շարժման մեջ եւ, ի հեճուկս իրենց կուսակցական վերադասների,կատարում էին Շարժման կոչերն ու հրահանգները:*

[214] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/25.06.88:*

Կոնֆերանսը սկսվեց հունիսի 28-ին: Գորբաչովի ելույթը ցույց տվեց, որ ազգային հարցերի ասպարեզում կուսակցության քաղաքականության մեջ էական որեւէ փոփոխություն տեղի չի ունենալու, ուրեմն եւ՝ չեն նախատեսվում այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք կարող էին նպաստավոր լինել Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար[215]: Սովորական կուսակցական ելույթի չափորոշիչներից դուրս չէր գալիս նաեւ Հայաստանի կոմկուսի ղեկավարի ելույթը, որտեղ անգամ չհիշատակվեց ո՛չ Սումգայիթի, ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղի հարցով հանրապետության Գերագույն խորհրդի՝ նոր միայն ընդունած որոշման մասին[216]: Ժողովուրդն ապրեց հերթական հիասթափությունը, հիասթափություն, որը, սակայն, մղում էր առավել կազմակերպվածության, պատրանքների մնացորդներից ազատվելու, իրատեսական եզրահանգումների եւ ավելի վճռական գործողությունների:

Հենց այդ օրերին լուրեր էին տարածվում, թե Լեռնային Ղարաբաղի հարցը կարող է ԽՍՀՄ ԳԽ-ի քննարկման առարկա դառնալ արդեն հուլիսի 5-ին[217]: Հունիսի 28-29-ի հանրահավաքներում սկսեցին նոր համընդհանուր գործադուլի դիմելու կոչեր հնչել՝ այն միջոցի, որն արդյունավետ աշխատեց հանրապետության ԳԽ-ի հունիսի 15-ի որոշման կայացման համար: Գործադուլի համար կային նաեւ լրացուցիչ այլ պատճառներ. մի քանի օր առաջ՝ հունիսի 23-ին, Մասիս ավանի «Գարուն» արտադրական միավորումում միանգամից ծանր թունավորվել եւ հիվանդանոց էին տեղափոխվել 51 բանվորուհի: Բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ թունավորումը տեղի էր ունեցել շնչառական ուղիներով: Տրիկոտաժի ֆաբրիկայում այդ օրերին, ըստ տարածված լուրերի, աշխատել էին Սումգայիթից ստացված հումքով:

---

[215] *ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսն ավելի կարեւոր որոշումներ ընդունեց, քան դրան նախորդած 27-րդ համագումարը. որոշվեց վերականգնել ԽՍՀՄ առաջին տարիներին գործած բարձրագույն օրենսդիր մարմինը՝ ժողովրդական պատգամավորների համագումարը: Այն պետք է բաղկացած լիներ 2250 պատգամավորներից, ընտրված՝ 750-ական տարածքային, ազգային-տարածքային սկզբունքով եւ նույնքան հասարակական կազմակերպություններից (կոմկուս, կոմսոմոլ, արհմիություններ, Կանանց միություն, Գիտությունների ակադեմիա, ստեղծագործական միություններ): Համագումարը պետք է ընտրեր Գերագույն խորհուրդ՝ 450 անդամից, եւ կարող էր ընտրել ԽՍՀՄ Նախագահ:*

[216] *Տե՛ս «Սովետական Հայաստան» 30. 06. 1988թ.:*

[217] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.271-272:*

Համընդհանուր գործադուլը սկսվեց հուլիսի 4-ին միանգամից եւ մեծ թափով, «Ղարաբաղ» կոմիտեի առաջադրած պահանջներով[218]: Այն ընդգրկեց նույնիսկ ռազմաարդյունաբերական համակարգը, որի 19 խոշոր ձեռնարկություններից 14-ը ամբողջությամբ կամ մեծ մասամբ դադարեցրին աշխատանքը[219]: Իսկ հանրահավաքները կրկին իրենց սովորական՝ 50-100 հազարի հասնող չափերը ստացան: Վերսկսվեց նստացույցը: Հիմնական պահանջներն այս անգամ արդեն ուղղված էին կենտրոնական իշխանություններին. **ա)** ԼՂԻՄ-ի անջատումը Ադրբեջանից, **բ)** սումգայիթյան դատավարության հանձնումը ԽՍՀՄ Գերագույն դատարանի վարույթ, **գ)** զորքերի դուրսբերում Երեւանից, **դ)** Մասիսում տեղի ունեցած թունավորումների պատճառների համակողմանի ուսումնասիրում եւ դրանց արդյունքների լուսաբանում, **ե)** Լեռնային Ղարաբաղի շրջափակման վերացում: Ակնհայտ էր, որ սա նաեւ անհրաժեշտ նախապատրաստություն էր ԽՍՀՄ ԳԽ-ի այն նիստի, որը պետք է վերջապես քննարկեր Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Ինչպես ցույց էր տվել փորձը՝ համընդհանուր գործադուլի պայմաններում է, որ իշխանություններ ստիպված էին լինում առավել զիջումների գնալ: Ակնհայտ էր նաեւ, որ իշխանությունն, իր հերթին, չէր կարող համապատասխան հակաքայլեր չձեռնարկել, ինչի համար, սակայն, անհրաժեշտ էր առիթ ստեղծել: Նման առիթ ստեղծել նրանց հաջողվեց:

Ըստ ՆԳՆ կազմած մանրակրկիտ տեղեկանքի՝ հուլիսի 4-ին Ազատության հրապարակը վաղ առավոտից սկսեց լցվել մարդկանցով, տեղի ունեցավ հանրահավաք 35000 մասնակիցներով: Հանրահավաքի ավարտից եւ «Ղարաբաղ» կոմիտեի հեռանալուց հետո անծանոթ մի տղամարդ, ներկայանալով որպես օդանավակայանի աշխատակից՝ Խաչատրյան ազգանունով, հայտարարեց, որ օդանավակայանի ղեկավարությունը խոչընդոտում է աշխատողների՝ գործադուլ սկսելու պահանջին: Մոտ 3000 հոգի (հանրահավաքների ավարտից հետո մարդկանց մի մասը շարունակում էր մնալ հրապարակում) շարժվեց դեպի օդանավակայան[220]: Մինչեւ ժամը 15-ը օդանավակայանը շրջապատող բազմության թիվը հասավ 10-12 հազարի: Նրանք պահանջում էին, որ օդանավակայանի ղեկավարությունը պաշտոնապես

[218] *Կոմիտեի՝ նախօրեին տարածած թռուցիկը տե՛ս ՀՀԱՆԱ, 15/03.07.88):*

[219] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ. 58:*

[220] *Ըստ ՊԱԿ-ի ներկայացրած զեկուցագրի՝ այս ակցիայի իրական կազմակերպիչը ոմն Արթուր Պողոսյան էր, որը մինչ այդ, վերջին հանրահավաքներում երկու անգամ հանդես էր եկել խիստ ծայրահեղական ելույթներով (տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.15, թ. 30):*

հայտարարի օդանավակայանի աշխատողների հայտարարած գործադուլի մասին: Երեկոյան «Ղարաբաղ» կոմիտեի՝ այստեղ եկած անդամներից Սամսոն Ղազարյանին, Համբարձում Գալստյանին, Սամվել Գեւորգյանին եւ Խաչիկ Ստամբոլցյանին հաջողվեց էականորեն հանգստացնել կրքերը, համոզել մեծ մասին վերադառնալ Ազատության հրապարակ: Սակայն մի մասը շարունակեց մնալ եւ սպասել օդանավակայանի ղեկավարների պատասխանին: Օդանավակայանի ղեկավարությունը խոստացավ հաջորդ օրը կոլեկտիվի ընդհանուր ժողով գումարել եւ քննարկել համազգային գործադուլին միանալու հարցը: Մոտ 600 մարդ գիշերը մնաց օդանավակայանում[221]:

Շարժման ղեկավարությունը երեկոյան հանրահավաքում, որին 80000 մարդ էր մասնակցում, զգոնության, կարգի պահպանման, ՆԳ մարմինների հետ կոնֆլիկտների մեջ չմտնելու կոչ արեց (նշվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վանո Սիրադեղյանի ելույթները), հորդորեց ճնշումներ չգործադրել այն հիմնարկների եւ ձեռնարկությունների վրա, որոնք չեն ուզում մասնակցել գործադուլին եւ այդ որոշումը թողնել նրանց հայեցողությանը[222]: Եւ այնուամենայնիվ, զայրույթի բռնկումը չափազանց մեծ էր, եւ առանձին խմբեր, տարբեր մարդկանց նախաձեռնությամբ, երթեր էին կազմակերպում քաղաքով մեկ՝ դեռեւս աշխատող գործարաններին կոչ անելով միանալ գործադուլին: Ցուցարարների մի այլ մեծ խումբ շրջափակել էր Առողջապահության նախարարությունը եւ պահանջում էր պարզաբանումներ տալ Մասիսում կատարված թունավորումների մասին, ինչը նրանք համարում էին, ըստ էության, քիմիական զենքի օգտագործման փաստ:

Հուլիսի 5-ի առավոտյան օդանավակայանում հավաքվածների թիվը կրկին հասավ 10000-ի: Օդանավակայանի 250-300 աշխատողներ հայտարարեցին, որ միանում են գործադուլին մինչեւ հուլիսի 9-ը: Ցուցարարները նստացույց կազմակերպեցին շենքի առաջին հարկում եւ պահանջում էին ղեկավարության պաշտոնական հայտարարություն եւ գրավոր որոշում: Լուրեր ստանալով այն մասին, որ զինվորական ստորաբաժանումներ են մոտենում օդանավակայանին, անվտանգ հանգուցալուծում գտնելու համար, անմիջապես այստեղ եկան Կոմիտեի անդամներ Բաբկեն Արարքցյանը, Սամվել Գեւորգյանը եւ Սամսոն Ղազարյանը: Ժամը 18.15-ին զորք մտցվեց օդանավակայան[223]: Սկսվեց դաժան հաշվեհարդարը նստացույցի մասնակիցների նկատմամբ: Ցուցարարների դեմ գործողությունները միաժամանակ

[221] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.50-57:*

[222] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.41:*

[223] *Պատժիչ գործողությունները ղեկավարում էր գեներալ Մակաշովը:*

սկսվեցին նաեւ օդանավակայան տանող ճանապարհի բոլոր հատվածներում: Ըստ ՆԳՆ կազմած փաստաթղթի՝ պատժիչ գործողության ընթացքում մարմնական վնասվածքներ ստացած եւ բուժհիմնարկներ դիմած քաղաքացիների թիվը կազմում էր 96 հոգի, այդ թվում՝ 10 կին, 9 անչափահաս: Նրանցից 59-ը բուժօգնություն ստանալուց հետո ուղարկվել էին տուն, մյուսները ծանր, 13-ը՝ անգիտակից վիճակում մնում էին հիվանդանոցում: Երեւանի բնակիչ, 1966թ. ծնված Խաչիկ Զաքարյանը հրազենային վնասվածքով մահացավ հիվանդանոցում: Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղի բնակիչ Կ. Աբրահամյանը կրծքավանդակի շրջանում հրազենային վնասվածքով ծանր վիճակում տեղափոխվել էր հիվանդանոց: Երեւանում ծեծվել էր բանակի մի սպա, զինվորներ տեղափոխող յոթ ավտոբուս քարկոծված եւ ջարդված ապակիներով տեղափոխվել էին Մասիսի շրջան[224]:

Օդանավակայանում կատարվածի մասին լուրերը շուտով հասան Ազատության հրապարակ՝ տեղի տալով սուր անհանգստության եւ ցասման: Վանո Սիրադեղյանը հանգստության եւ ինքնագլուխ գործողությունների չդիմելու կոչ արեց՝ հայտարարելով, որ այնտեղ են ուղարկված «Ղարաբաղ» կոմիտեի չորս անդամներ, եւ պետք է սպասել նրանց տեղեկատվությանը: Խուսափելու համար հակամարտության եւ բախումների ավելի խորացումից, Կոմիտեին հաջողվեց համոզել հանրահավաքի արդեն 50-60 հազարի հասնող մասնակիցներին ցրվել եւ հաջորդ օրերին գործադուլը շարունակել առանց հանրահավաքների՝ զգուշացնելով, որ չի բացառվում Ազատության հրապարակի շրջափակումը զորքերի կողմից: Իրոք՝ հաջորդ օրը վաղ առավոտյան մեծ քանակությամբ զինվորներ շրջափակեցին հրապարակը՝ պահանջելով այստեղ գիշերողներին հեռանալ: Վերջիններս ենթարկվեցին զինվորականների պահանջին: Ազատության հրապարակը կրկին շրջափակվեց զինվորներով, եւ այստեղ հանրահավաքներն արգելվեցին[225]: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի՝ հուլիսի 6-ին տարածած հայտարարությունը, դատապարտելով Շարժումը «բռնի ուժով ճնշելու հրեշավոր ծրագիրը»՝ կոչ էր անում շարունակել գործադուլները՝ «հասցնելով իսկապես համազգային ծավալի»: Դրանց առաջին պահանջը զորքերի անհապաղ դուրսբերումն էր մայրաքաղաքից եւ բռնության նախաձեռնողների դատավարությունը: Կոմիտեն, միաժամանակ հորդորում էր

[224] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.64-65: ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.97: ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.98-102:*

[225] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.70-76:*

«տեղիք չտալ պրովոկացիաների, խուճապի եւ հակաօրինական գործողությունների», ինչին փորձում են մղել իշխանությունները[226]:

Օդանավակայանի սադրանքով լավագույն առիթը տրված էր բռնությունների եւ քարոզչական ահաբեկչության անցնելու համար: Անմիջապես Երեւան ժամանեց ԽՍՀՄ դատախազության քննչական խումբը՝ ԽՍՀՄ գլխ. դատախազի ավագ օգնական Նիկոլաեւի գլխավորությամբ: Նրա գործողություններն, իրենց հերթին, ակնհայտորեն սադրիչ էին եւ նպատակ ունեին ոչ թե բացահայտել իրողությունը, այլ ավելի բորբոքել կրքերը. նա հրահանգեց խուզարկել մեքենաները եւ դրանցում հայտնաբերած ամեն տեսակ կտրող-ծակող գործիքներ կցել «Զվարթնոցի» գործին: Նաեւ հայտարարեց, որ գործը կքննվի ԽՍՀՄ Գերագույն դատարանում, այն դեպքում, երբ Սումգայիթի գործի որոշ մասեր միայն դժվարությամբ տեղափոխվել էին Ռուսաստանի մարզային դատարաններ: Անմիջապես էլ սկսվեց քարոզչական տեռորը, փորձ էր արվում «Զվարթնոցը» զուգակշռել Սումգայիթի հետ: Հուլիսի 7-ին եւ 14-ին կենտրոնական հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվեց «Զվարթնոցի» թեմայով՝ սադրիչ բնույթով եւ ծայրահեղ տենդենցիոզ երկու հաղորդում: Ամեն ինչ արվում էր՝ «նպաստավոր» մթնոլորտ ստեղծելու ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստի համար:

Կրկին սկսվեց կենտրոնական իշխանության տարբեր մարմինների հասցեներով բողոքի հեռագրերի, հիմնարկների ժողովների բանաձեւերի, դիմումների, գործադուլին միանալու որոշումների տեղատարափ: Շրջանառության մեջ դրվեցին այդ օրերի եղելությունների հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր: «Ղարաբաղ» կոմիտեն, իր հերթին հավաքեց եւ առանձին գրքույկով հրապարակեց չեզոք ականատեսների շուրջ 3 տասնյակ վկայություններ[227]: Այս ամենը նույնպես առաքվում էր Խորհրդային Միության եւ նրա սահմաններից դուրս բազմաթիվ հասցեներով: Հենց այդ օրերին (հուլիսի 7-ին) Շարժմանը մեծ աջակցություն էր Եւրոպական խորհրդարանի ընդունած երկրորդ բանաձեւը՝ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միանալու պահանջի[228]:

Երեւանի քաղխորհուրդը Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու «Ղարաբաղ» կոմիտեի հերթական հայտը մերժեց՝ առաջարկելով այն անցկացնել «Հրազդան» մարզադաշտի մոտ: Այդ առաջարկը

[226] *ՀՀԱՆԱ, 15/06.07.88:*

[227] *ՀՀԱՆԱ, 15/17.07.88:*

[228] *Եւրոպական խորհրդարանի բանաձեւը Լեռնային Ղարաբաղի մասին, տե՛ս «Յառաջ», 12.07.1988:*

Կոմիտեն չընդունվեց եւ հաջորդ օրերի հանրահավաքները գումարում էր Մատենադարանին հարող տարածքում:

Շարժման ղեկավարությունն, իրոք, ամեն ինչ արել էր «Ջվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցած իրադարձությունները կանխելու եւ այնտեղ հավաքված ժողովրդին ետ բերելու համար: Եւ դա շատ լավ հայտնի էր իշխանությանը[229]: Այս սադրիչ նախաձեռնության իրական մեղավորներն այդպես էլ «չպարզվեցին»: Ըստ անվտանգության մարմինների զեկուցագրի (ինչի հավաստիությանն առավել եւս այս դեպքում անհնար է կասկածել)՝ Շարժման ղեկավարները «...օդանավակայանի շրջափակման հետ անմիջական կապ չեն ունեցել եւ, իմանալով այդ մասին, ջանացել են կանխել այդ ակցիան, մտահոգվելով, որ պատասխանատվությունը, վերջին հաշվով, իրենց վրա է ընկնելու: Դեպի օդանավակայան երթի եւ շրջափակման կազմակերպիչ է հանդիսացել ոմն Արթուր Պողոսյան, որի հետեւում հնարավոր է եղել են առայժմ անհայտ կազմակերպիչներ»[230]: Շարժման մասնակիցներն, իրենց հերթին, համոզված էին, որ դա կենտրոնական իշխանությունների կազմակերպած սադրանքն էր՝ ժամանակավորապես օդանավակայան զորք մտցնելու պատրվակ գտնելու համար, որպեսզի կարողանան, հնարավորինս աննկատ, մեծ քանակությամբ զորք տեղափոխել հանրապետություն:

Բոլոր դեպքերում, «Ջվարթնոցի» դեպքերը որոշ առումով բեկումնային նշանակություն ունեցան: Մասնավորապես, խորհրդային զորքի հետ տեղի ունեցած ընդհարման հետեւանքով բանակի դեմ աննպաստ տրամադրություններ սկսեցին առաջանալ: ՊԱԿ-ի նույն փաստաթուղթն արձանագրում է եւս մի որակական փոփոխություն. եթե նախորդ գործադուլների ժամանակ մարդիկ պատրաստակամություն էին հայտնում լրացուցիչ աշխատանքով վերականգնել բաց թողածը, ապա այժմ հաճույքով հաշվում են գործադուլների շնորհիվ խորհրդային պետությանը հասցված վնասի չափը: Եւ վերջապես՝ հանրապետության ՆԳ աշխատակիցներից շատերն արդեն բարձրաձայն հայտարարում էին՝ «մերոնց դեմ չենք գնա»[231]: Նույնիսկ պաշտոնական մամուլը, որպես նոր երեւույթ՝ արձանագրեց **հակասովետական** բնույթի թռուցիկների տարածման փաստը[232]:

---

229 *Այդ երկու օրերի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը տե՛ս նաեւ ՀՀԱՆԱ, 15/05.07.88 (հեղինակած «Ղարաբաղ» կոմիտեի՝ օդանավակայան գնացած անդամներից մեկի կողմից. ստորագրությունը չի պահպանվել):*

230 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.15, թ.30:*

231 *Տե՛ս նույն տեղում, թ. 31:*

232 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 18.07.1988:*

Որակական փոփոխությունների հետ միասին հասարակության ավելի ու ավելի լայն շերտեր էին ակտիվորեն ներգրավվում Շարժման մեջ՝ մեծացնելով նրա թափը: Մոսկվայում սպասվող քննարկման նախօրյակին Շարժման ալիքը մոտենում էր իր հերթական բարձրակետին, իշխանությունների անհանգստությունն ու տագնապը՝ նույնպես: Վերջիններս ստիպված էին գործի դնել իրենց զինանոցի վերջին միջոցները: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եւ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի հեռուստաելույթները որեւէ բան չփոխեցին: Իրենց «զգաստացնող» ելույթներով սկսեցին հանդես գալ «ազգային մտավորականները»՝ նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչները: Հուլիսի 17-ի հանրահավաքում Սիլվա Կապուտիկյանը կրկին համոզում էր դադարեցնել պայքարը. «Տեղի տանք ժամանակավորապես... ստեղծված պայմաններին համապատասխանեցնելով մեր քայլերը՝ հետագայում եւս շարունակենք մեր արդար պայքարը Ղարաբաղի համար...»[233]: Դժվար էր պահել համընդհանուր գործադուլի թափը, որ արդեն շարունակվում էր շուրջ երկու շաբաթ, ուստի Կոմիտեն կոչ արեց «տակտիկական նկատառումներով» ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստի նախօրյակին գործադուլը դադարեցնել, պայմանով, որ եթե ԽՍՀՄ ԳԽ հաջորդ օրվա որոշումը չարդարացնի սպասումները, ապա կպահանջեն ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջան՝ քննարկելու համար ԼՂԻՄ մարզխորհրդի հուլիսի 12-ի՝ Ադրբեջանի կազմից իրեն դուրս հայտարարելու մասին որոշումը[234]:

Իշխանության տագնապի իրական չափը լավագույնս ցուցադրում են իշխանության միջին օղակների «գործնական» քայլերը: Այսպես. Երեւանի Մաշտոցի շրջկոմը, Արտաշես Գեղամյանի գլխավորությամբ, հուլիսի 16-ին կայացրած որոշման մեջ հանձնարարում է. «պարտադիր ձեւով ստեղծել ինքնապաշտպանական բանվորական դրուժիններ՝ դրանց անդամներին ազատելով իրենց ծառայողական պարտականությունների կատարումից», «խուզարկել շենքերի ձեղնահարկերը եւ ներքնահարկերը» եւ այլն: Նույն որոշման մեջ հստակ արձանագրվում է նաեւ տագնապի պատճառը, այն է՝ հանրահավաքներում «Լեռնային Ղարաբաղի հարցն այլեւս երկրորդ պլան է մղված», իսկ իրական նպատակը «իշխանության ձգտումն է եւ ազգամիջյան թշնամանքի սերմանումը»[235],– զեկուցում էր շրջկոմի աչալուրջ քարտուղարը: Իշխանության ներկայացուցչի այս վերջին տագնապն անհիմն էր.

---

233 *Կապուտիկյան Ս., էջեր փակ գզրոցներից, էջ 356:*

234 *ՀՀԱՆԱ, 15/16.07.88:*

235 *ՀԱԱ, ֆ.1, ց.27, գ.554, թ.22-23:*

Շարժումը եւ նրա ղեկավարությունը իշխանության հասնելու խնդիր չունեին. նրանց խնդիրն էր աշխատեցնել գործող իշխանության սահմանադրական մարմինները եւ նրան կատարել տալ ընտրողների պատվիրանները, ինչպես որ սահմանված էր սովետական օրենսդրությամբ:

Այսպիսով, Շարժումը թուլացնելու եւ ընդհանուր մթնոլորտն ի վնաս Շարժման փոխելու՝ Կենտրոնի եւ տեղական իշխանության ջանքերն անցան ապարդյուն, եւ հուլիսի 18-ին ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը ստիպված պետք է լիներ աշխատել իր համար աննպաստ պայմաններում՝ տարաբնույթ ճնշումների տակ:

ժ) ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի որոշումը, Շարժումը խեղդելու հերթական փորձը

Հուժկու գործադուլներն ու հանրահավաքները՝ կենտրոնական իշխանություններին ուղղված պահանջներով, շոշափելի արդյունքներ էին տվել: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի՝ հուլիսի 10-ով թվագրված թռուցիկում այդ արդյունքներն են համարվում. **ա)** Սումգայիթյան դատավարության գործը Ադրբեջանից Ռուսաստանի Ֆեդերացիայի մարզային դատարաններին հանձնելը, որ տվյալ հարցով առաջ քաշված պահանջի մասնակի բավարարում էր, **բ)** Մասիս ավանում զանգվածային թունավորման հարցում որոշ հստակություն մտցնելը, **գ)** Ղարաբաղը Հայաստանին կապող ճանապարհները Ռուսաստանյան Ֆեդերացիայի պետավտոտեսչության հսկողության տակ դնելը: Կոմիտեն կոչ էր անում շարունակել գործադուլները մինչեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունում Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկումը՝ համարելով, որ դրանից կախված կլինեն Ղարաբաղը Ադրբեջանի կազմից անհապաղ դուրս բերելու եւ Երեւան մտցված զորամիավորումները հանելու հարցերի լուծումը:

Գործադուլների շարունակումը, որպես կարեւոր բարոյական ու գործնական պաշտպանություն, անհրաժեշտ էր նաեւ ԼՂԻՄ մարզային խորհրդի՝ հուլիսի 12-ին նշանակված նստաշրջանին, որը նախատեսում էր մարզը հայտարարել Ադրբեջանի ենթակայությունից դուրս: Կոմիտեն համոզված էր, որ «Ջվարթնոցում» կատարած վայրագություններին տրված պատասխանը «չի կարող չզգաստացնել կենտրոնական իշխանություններին եւ նրանց չստիպել հանգելու այն եզրակացության, որ բռնությունների շարունակումը Հայաստանում հղի է ժողովրդի վճռական դիմադրությանը հանդիպելու եւ խոշոր բախում առաջ բերելու վտանգով: Նման բախման գնալու

դեպքում Սովետական Միությունը, որն արդեն սումգայիթյան եղեռնագործությամբ վարկաբեկվել է քաղաքակիրթ աշխարհի առջեւ, պետք է խաչ քաշի իր որդեգրած դեմոկրատացման քաղաքականության վրա, հաստատելով ասիական բռնապետության իր համբավը»[236]:

Այս ընթացքում ազգամիջյան հարաբերությունները շարունակում էին սրվել Լեռնային Ղարաբաղում: Հատկապես Շուշիում եւ խառը բնակչություն ունեցող բնակավայրերում հայազգի բնակչությունը ենթարկվում էր բռնությունների ու կամայականությունների: Համոզված, որ հունիսի 21-ին իր ընդունած՝ մարզը Ադրբեջանի կազմից հանելու եւ մինչեւ հարցի վերջնական կարգավորումը կենտրոնական կառավարությանը ենթարկելու մասին դիմումը եւս մնալու է անպատասխան, կամ՝ առավել առարկայական դարձնելու համար այն, ԼՂԻՄ-ը հուլիսի 12-ին կատարել էր հաջորդ քաղաքական քայլը. մարզխորհրդի նստաշրջանը մարզը դուրս էր հայտարարել Ադրբեջանի կազմից:

Լեռնային Ղարաբաղի խնդրի օրակարգով ԽՍՀՄ ԳԽ նախագահության երկար սպասված նիստը տեղի ունեցավ հուլիսի 18-ին: Ընդունված որոշումն անհնար էր համարում երկու հանրապետությունների միջեւ սահմանների փոփոխություն կատարել՝ վկայակոչելով գործող Սահմանադրության 78-րդ հոդվածը, ըստ որի՝ հանրապետության սահմանները չեն կարող փոփոխվել առանց նրա համաձայնության: Սա որքան էլ Ղարաբաղյան շարժման եւ նրա առաջադրած վերջնական նպատակի տեսանկյունով անընդունելի, սակայն սպասելի որոշում էր: Դա միակ սպասելին էր արդեն այն բանից հետո, երբ Ադրբեջանը հունիսի 17-ին ԼՂԻՄ-ի դիմումը մերժելու որոշում էր կայացրել:

Հզոր հանրահավաքների եւ գործադուլային նոր ալիքի սպառնալիքի հանդիման, բազմապիսի այլ ճնշումների պայմաններում, Կենտրոնը չհամարձակվեց հարցը փակել միայն այսպիսի «չոր» մերժումով: Շարժման ծավալվող եւ օր օրի ահագնացող թափը, առավել եւս՝ նրա ներսում արձանագրվող որակական փոփոխություններն այնպիսին էին, որ անհրաժեշտ էր նաեւ դրանք մեղմելու որոշ քայլեր ձեռնարկել կամ խոստումներ տալ: Չէր կարելի անտեսել նաեւ այն հանգամանքը, որ խնդիրը ու դրան հետամուտ համաժողովրդական շարժումը միջազգային լայն հնչեղություն էր ձեռք բերել, եւ նրա նկատմամբ համակրանքի ու պաշտպանության դրսեւորումները պաշտոնապես արտահայտվում էին ընդհուպ երկրների

---

[236] *ՀՀԱՆԱ, 15/10.07.88:*

իշխանությունների ու միջազգային հայտնի ու հեղինակավոր կառույցների անունից: Հուլիսի 6-ին Լեռնային Ղարաբաղի հարցով երկրորդ բանաձեն էր ընդունել Եւրոպական խորհրդարանը (առաջինն ընդունել էր մարտի 10-ին), որով «աջակցում էր Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու պահանջին»[237]:

ԽՍՀՄ ԳԽ նախագահության որոշման մեջ կրկին արձանագրվեց, որ ժամանակին Լեռնային Ղարաբաղում իրոք չեն լուծվել հայ բնակչության ազգային շահերը շոշափող շատ հարցեր, կատարվել են սխալներ: Ուստի, որպես գործնական քայլ, նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղ ուղարկել ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության ներկայացուցիչներ, որոնք «Ադրբեջանական ՍՍՀ եւ Հայկական ՍՍՀ ներկայացուցիչների հետ սերտորեն համագործակցելով կգործեն ընդունված որոշումների պարտադիր կատարման համար»: Նկատի ուներ, մասնավորապես, մարտի 24-ին ընդունված որոշումը, որով զգալի ֆինանսական միջոցներ էր հատկացվել Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման համար, ինչպես նաեւ որոշակի դերակատարություն վերապահվել Հայկական ԽՍՀ-ին: Որոշվեց նաեւ ստեղծել Ազգությունների խորհրդի հատուկ մի հանձնաժողով, որը պետք է շարունակեր ուսումնասիրել Նախագահության նիստում առաջադրված հարցերը եւ իր առաջարկությունները «պատրաստ լինելուն պես» ներկայացներ ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության քննարկմանը[238]: Հուլիսի 25-ին հաստատվեց նաեւ այս հանձնաժողովի կազմը՝ ԳԽ-ի Ազգությունների խորհրդի նախագահ Ա. Վոսսի նախագահությամբ[239]: Այսինքն՝ հարցի վերջնական լուծումը սրանով, այնուամենայնիվ, ձեւականորեն թողնվում էր առկախ՝ այն տպավորությունը ստեղծելով, որ տվյալ հանձնաժողովի եզրակացությունները դեռեւս կարող են նշանակություն ունենալ խնդիրը նաեւ այլ կերպ կարգավորելու համար:

Մի քանի օր հետո՝ հուլիսի 27-ին, որպես ԽՄԿԿ ԿԿ-ի եւ ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության լիազոր ներկայացուցիչ, Լեռնային Ղարաբաղ գործուղվեց ԽՄԿԿ կենտկոմի անդամ, ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավոր, ԽՄԿԿ ԿԿ-ի բաժնի վարիչ Արկադի Վոլսկին: Վերջինս պետք է ապահովեր Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ մինչ այդ ընդունված որոշումների կատարումը՝ համակարգեր այդ ուղղությամբ Հայաստանի, Ադրբեջանի կուսակցական եւ

[237] *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, հանրագիտարան, էջ 188: Տե՛ս նաեւ ՀՀԱՆԱ, 15/06.07.88:*

[238] *Տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 29, հոդվ. 464:*

[239] *Տե՛ս նույն տեղում, հոդվ. 484:*

տնտեսական մարմինների աշխատանքը: Թեեւ նշված էր, որ նա օժտված է «համապատասխան լիազորություններով», սակայն այդպես էլ մինչեւ վերջ նրա լիազորությունները չճշտվեցին:

Կարելի է չկասկածել, որ հուլիսի 18-ի որոշումն առանց գործադուլային ճնշումների կունենար միայն առաջին մաս, այն է՝ կմերժվեր Ղարաբաղի եւ Հայաստանի դիմումը ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածի վկայակոչմամբ: Ջիջումները, որ արվում էին Մոսկվայի կողմից, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղ իր ներկայացուցիչն ուղարկելը, գեթ առերեւույթ, Ադրբեջանի ինքնիշխանության սահմանափակում էր նշանակում: Որպես այդպիսին՝ այն, անշուշտ, մի քայլ էր «անջատման» պահանջի ուղղությամբ եւ Շարժման ձեռքբերումն էր: Բայց թե որոշակի ինչ գործողություններ կձեռնարկեր տվյալ պաշտոնյան, ինչ իրական բովանդակություն եւ ուղղվածություն կունենար նրա գործունեությունը՝ անհայտ էր: Ուստի բնական է, որ Նախագահության ընդունած որոշումը չէր կարող բավարարել ո՛չ Լեռնային Ղարաբաղին, ո՛չ Շարժմանը Հայաստանում: Ձեւական որոշումներն ինչ-որ իրական բովանդակությամբ լցնելու եւ դրական հետեւանքներ գրանցելու համար անհրաժեշտ էր պահպանել Շարժման թափը, առժամանակ՝ նաեւ գործադուլները:

Մինչդեռ խորհրդային իշխանությունը համարում էր, որ ինքը հերթական զիջումներն է արել, եւ, ինչպես միշտ նման դեպքերում, պետք է սկսեր քարոզչական հուժկու հակահարձակումը Շարժման դեմ եւ սաստկացներ այլ բնույթի ճնշումները: Պետական քարոզչամեքենան սկսեց լայնորեն շեփորել Կենտրոնի «հոգատարությունը», փորձեց իր կողմը գրավել հասարակական կարծիքը, Շարժման դեմ ահաբեկչական մթնոլորտ ստեղծել, վարկաբեկել նրա ղեկավարներին եւ գործուն մասնակիցներին՝ ջանալով կասեցնել խորացող պայքարը:

Հարձակումները սկսվեցին արդեն նախագահության նիստի օրը. հուլիսի 18-ին «Պրավդան» հրապարակեց «Գործադուլ» վերնագրով մի հոդված (իբր՝ Բաքվում բնակվող մի հայ բնակչի անունից), որտեղ հեղինակը ամոթանք էր տալիս իր հայրենակիցներին՝ գործադուլների պատճառով երկրի տնտեսությանը 71 միլիոն ռուբլու վնաս հասցնելու համար, մեղադրում էր, որ դրա հետեւանքով տուժել են շատերը Միության տարբեր ծայրերում[240]: «Իզվեստիայի» հրապարակումը՝ վերնագրված «Նրանք չեն կարող ժողովրդին տանել իրենց ետեւից», ուղղված էր հատկապես Շարժման

[240] *Տե՛ս «Правда», 18.07.1988.*

ղեկավարության դեմ[241]: Այսօրինակ հրապարակումների նպատակն ակնհայտորեն միութենական հասարակությանը Շարժման դեմ տրամադրելն էր: Մտավախությունը հասկանալի էր. Շարժումն առավել վտանգավոր էր դառնում ոչ միայն իր զանգվածայնությամբ ու հզորությամբ, այլեւ նրանով, որ գտել եւ արդյունավետորեն կիրառում էր իշխանություններին «ներքուից» որոշումներ թելադրելու ձեւերը, իսկ իր օրակարգում նաեւ ընդհանուր ժողովրդավարական խնդիրներ էր դնում: Այս ամենը վտանգավոր օրինակ եւ վարակիչ էր դառնում կայսրության մյուս ժողովուրդների համար:

Հուլիսի 21-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրով Պ. Հայրիկյանը (որ ձերբակալվել էր մի քանի ամիս առաջ) զրկվեց ԽՍՀՄ քաղաքացիությունից եւ արտաքսվեց Խորհրդային Միությունից: Հայտնի այս դիսիդենտը կապ չուներ Շարժման հետ[242], եւ տվյալ իրավիճակում վաղաժամ ու վտանգավոր նրա կարգախոսներն ու ելույթները մերժվում էին հենց Շարժման մասնակիցների ու ղեկավարների կողմից[243]: Ընդհանրապես, այս այլախոհի նկատմամբ իշխանությունների վերաբերմունքին ու գործողություններին, Շարժման եւ իրավիճակի տրամաբանությունից ելնելով, դժվար է միանշանակ բացատրություն տալ[244]:

---

[241] *Տե՛ս «Известия», 22.07.1988.*

[242] *Դրանից ընդամենը մեկ ամիս առաջ էր, որ ձերբակալված Պ. Հայրիկյանը Վ. Մանուկյանի միջոցով խնդրել էր «հեղինակավոր» մի վկայություն բերել իր համար այն մասին, որ ինքը կապ չունի Ղարաբաղյան Շարժման հետ: Եւ այդ վկայությունը գրավոր նրան տվել էր Ս. Կապուտիկյանը (տե՛ս* ***Կապուտիկյան Ս.****, էջեր փակ գզրոցներից, էջ 332):*

[243] *Հայրիկյանին դեռ փետրվարյան հանրահավաքների օրերին ուժի գործադրմամբ դուրս քշեցին հարթակից, երբ նա փորձեց օգտագործել հսկողությունից մի պահ դուրս մնացած խոսափողը եւ կոչ անել պայքարել անկախության համար: Այժմ էլ նրա «գաղափարների» նկատմամբ վերաբերմունքն առանձնապես չէր փոխվել: Ահա իրավապահների զեկուցագրերից մեկում 1988թ. հուլիսի 5-ի մասին հաղորդումը. «Ժամը 18.30-ին հարթակ բարձրացան Հայրիկյանի կողմնակիցները: Ելույթ ունեցավ Մ. Գեորգիսյանը, որը ներկաներին կոչ արեց միավորվել իրենց շարժման շուրջ: ՄԱՐԴԿԱՆՑ մեծամասնությունը չարձագանքեց այդ կոչին» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.21, թ.70):*

[244] *ԽՄԿԿ ԿԿ-ին հասցեագրված մի փաստաթղթի համաձայն՝ Հայրիկյանը ձերբակալվելուց հետո դիմել է ԽՍՀՄ ԳԽ նախագահություն՝ իրեն քրեական պատասխանատվությունից ազատելու եւ ընտանիքի հետ ԱՄՆ-ում մշտական բնակություն հաստատելու խնդրանքով, ինչի հիման վրա եւ կազմվել է նրա արտաքսման հրամանագիրը (տե՛ս ЦХСД, ֆ.89, ց.19, գ.41, թ.1-4):*

Գործի անցավ նաեւ հանրապետական իշխանությունը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն նույնացնելով առաջին «Ղարաբաղ» կոմիտեի հետ, նրանք հանկարծ նորից հիշեցին, որ ժամանակին նրա գործունեությունը կասեցվել է ԳԽ-ի նախագահության որոշմամբ, իսկ նրա անվան կողքին սկսեցին կրկին օգտագործել վաղուց մոռացված «այսպես կոչված» քամահրական բառակապակցությունը: Եւ դա այն դեպքում, երբ ընդամենը մեկ ամիս առաջ ստիպված էին ամենակարեւոր որոշումն ընդունել Կոմիտեի ներկայացուցչի կատարած փոփոխություններով ու վերջնական խմբագրմամբ: ՀԿԿ ԿԿ օրգանի խմբագրականը «Ղարաբաղ» կոմիտեին մեղադրում էր «անսկզբունքայնության», «զրպարտությունների», «անապացույց դեմագոգիայի», «Ջվարթնոցի միջադեպի», «իրավակարգի հիմքերը խարխլելու» մեջ եւ եզրափակում այսպես. «Էլ ինչո՞ւ ենք հապաղում: Ժամանակն է, որպեսզի բոլորս միասին համարձակորեն եւ վճռականապես ամուր փակենք նրանց ճանապարհը»[245]:

Մի այլ հոդված՝ «Ո՞ւր էին տանում նրանք ժողովրդին» վերնագրով (ստորագրել են ՏԱՍՍ-ի երկու թղթակից) սկսում է շատ բուռն. «Ժամանակն է անվանապես նշելու նրանց, ովքեր սեփական ժողովրդին հրում են դեպի անդունդ, ովքեր ազգային երկպառակություն են սերմանում, ովքեր փորձում էին սեփական անարգանքի (*այսպե՛ս*) գնով ծածկույթ ապահովել ստվերային էկոնոմիկայի գործամոլների համար, կարիերիստների եւ կաշառակերների խմբի համար»: Ապա թվարկելով «Ղարաբաղ» կոմիտեի տասնմեկ անդամների անունները՝ շարունակում է. «Ձեւականորեն նրանք բոլորը մտավորական, կիրթ մարդիկ են: Իրականում նրանք ազգային քաղքենիներ են, համոզմունքից զուրկ մտավորականներ, քաղաքական արկածախնդիրներ, որոնք հույս ունեն կարիերա ստեղծել սադրանքների եւ ահաբեկման հիման վրա»: Ապա, որպես այս գնահատականների համար փաստարկ, բերում է նրանց ելույթներում հնչած «ամենավտանգավոր» մտքերը. Վ. Սիրադեղյանից՝ «Մինչեւ ինչ վիճակի կարող է հանգեցնել երկրի վրա արդեն 70 տարի իշխող նոմենկլատուրային բանդիտիզմը եւ վելիկոռուսական բթամտությունը: Դա ողբերգություն է ոչ միայն մեր երկրի, այլեւ բովանդակ աշխարհի համար», Լ. Տեր-Պետրոսյանից՝ «Մեր պայքարը մինչեւ հաղթական ավարտ անժամկետ է... Այսօր մեր զենքը գործադուլն է, հետեւաբար՝ պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր», Ա. Մանուչարյանից՝ «Հուլիսի 18-ին անցկացնել ժողովներ, վերընտրել աշխատավորական կոլեկտիվների

---

[245] *«Սովետական Հայաստան», 23.07.1988:*

խորհուրդների անդամներին, արհմիութենական կոմիտեները»: Հոդվածագիրը հռետորական հարց է տալիս. «Ինչպե՞ս կարող է մինչեւ օրս իր խժդժությունը շարունակել «Ղարաբաղ» կոմիտեն, երբ նրա գործունեությունը դեռ մարտին դադարեցվել է Գերագույն սովետի նախագահության որոշմամբ»: Եւ վերջում կոչ է արվում. «Եւ այժմ յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու պարտքն է՝ վճռականորեն մերկացնել եւ կասեցնել ինքնակոչ «լիդերների» փորձերը՝ մեզ շեղելու այն կուրսից, որը մշակել է կուսակցությունը եւ որն արժանացել է երկրի բոլոր ժողովուրդների պաշտպանությանը»[246]:

Որոշ դեպքերում իշխանական քարոզչությունը դուրս էր գալիս կոռեկտության շրջանակներից, դիմում ցածրորակ բառապաշարի (օրինակ՝ Կոմիտեի հասցեին ասված՝ «Ո՞վ է իրավունք տվել որոշ թափթփուկների խոսել հայ ժողովրդի անունից...») [247], ինչը, ավելի շատ մատնելով իշխանության խուճապն ու անճարակությունը, բնականաբար, բոլորովին հակառակ հասարակական ներգործություն էր ունենում:

Քարոզչական գրոհին անմիջապես հաջորդում է ՀԿԿ ԿԿ-ի բյուրոյի «քաղաքական գնահատականը»: Դրանում հանրահավաքներում հնչած ելույթները որակվում են «հրահրիչ», «ծայրահեղական», «հակահրավական», «հակասահմանադրական», եւ կուսակցական կառույցներին կոչ անում «հարձակողական ակտիվ աշխատանք ծավալել լուծարքի ենթարկված «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների գործունեության հակաժողովրդական բնույթի մերկացման ուղղությամբ՝ այդ նպատակով օգտագործել մասսաների վրա քաղաքական ներգործության բոլոր ձեւերն ու մեթոդները»[248]: Սրան էլ հաջորդում է Ս. Հարությունյանի հեռուստատեսային ելույթը նույն ոճով, նույն որակումներով եւ պահանջներով[249]: Անմիջապես գործի անցան նաեւ «ազգային մտավորականները»: Քանի որ Երեւանում նրանք արդեն հանրահավաքների մասնակիցների հետ հաղորդակցվելու խնդիր ունեին (սուլում ու չէին ընդունում գործադուլը դադարեցնելու նրանց կոչերը), Սիլվա Կապուտիկյանը, Սոս Սարգսյանը, Արմեն Հովհաննիսյանը, Վլադիմիր Նազարյանը մեկնեցին Լեռնային Ղարաբաղ՝ այստեղ ընթացող գործադուլները դադարեցնելու նպատակով[250]:

---

246 *«Սովետական Հայաստան», 23.07.1988:*

247 *«Սովետական Հայաստան», 09.08.1988:*

248 *«Սովետական Հայաստան», 26.07.1988:*

249 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 27.07.1988:*

250 *Ս. Կապուտիկյանի վկայությամբ՝ իրենց հաջողվեց կատարել այդ «առաքելությունը» (տե՛ս **Կապուտիկյան Ս.**, էջեր փակ գզրոցներից, էջ 364-366):*

Այս բոլոր հարձակումներն, անշուշտ, ստանում էին նաեւ իրենց արժանի պատասխանը, եւ ոչ միայն հանրահավաքներում: Արդեն համարյա ինքնաբերաբար մշակված մեխանիզմով, սկսում են հանրապետական եւ կենտրոնական իշխանության ու լրատվության միջոցների հասցեներով հղվել հազարավոր բողոքի հեռագրեր եւ կոլեկտիվների ժողովների որոշումներ՝ Շարժման ղեկավարության վճռական պաշտպանությամբ[251]:

Ընդ որում՝ դժվար չէր նկատել, որ իշխող կուսակցությունը հատկապես ահաբեկված էր այն փաստից, որ Շարժումը կարողանում է ամենատարբեր ընտրողի մարմիններում կամ պաշտոններում անցկացնել իր թեկնածուներին, ինչպես նաեւ՝ անհանգստացած էր Շարժման տեղական կառույցների տարածման գործընթացից: Ավելին՝ շատ տեղերում այդ կառույցների մեջ էին մտնում նաեւ հենց Կոմունիստական կուսակցության սկզբնական կազմակերպությունների անդամներ, երբեմն՝ բոլորը: Մտավախությունը բնական էր. դրանով Շարժումը կարող էր դառնալ լուրջ քաղաքական այլընտրանք: Իսկ վտանգը ոչ միայն այն էր, որ դրանից ինչ-որ ժամանակ հետո նա կվիճարկեր նաեւ իշխանության հարցը, այլ՝ որ հասարակական այդքան հզոր պաշտպանությամբ, մինչ այդ էլ՝ հենց կոմկուսի ձեւական դարձող իշխանության պայմաններում դառնում էր իրական փաստական իշխանություն:

Քարոզչական-հոգեբանական բուռն գրոհին ու քարոզչական ահաբեկչությանը զուգահեռ սկսվեց օրենսդրական գրոհը, որ արտահայտվեց մի ամբողջ փաթեթով: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հուլիսի 28-ին հրամանագիր ընդունեց «Ժողովների, միտինգների, փողոցային երթերի եւ ցույցերի կազմակերպման եւ անցկացման կարգի մասին»[252]: Այն, մասնավորապես, նախատեսում էր նման միջոցառումների համար դիմումներ տալ 10 օր առաջ, իսկ իշխանության մարմիններին իրավունք էր վերապահվում, ըստ իրենց հայեցողության, հանրահավաքների համար առաջարկել այլ տեղ եւ

---

251 *Ահա մի հատված Արեւելագետների համամիութենական ասոցիացիայի հայկական բաժանմունքի նամակից. «Համաժողովրդական հարգանքի եւ վստահության արժանացած մարդկանց դեմ հարձակումների բացահայտ ստալինյան ոգին խիստ անհանգստություն է առաջացրել Հայաստանի արեւելագետների մեջ, որոնք լի են վճռականությամբ՝ անելու իրենցից կախված ամեն ինչ՝ մեր հասարակության մեջ ստալինիզմի վերակենդանացումը կանխելու համար: Մենք պահանջում ենք պաշտպանել «Ղարաբաղ» եւ «Կռունկ» կոմիտեների անդամներին քաղաքական եւ այլեւայլ պիտակներից...» (ՀՀԱՆԱ, 15/27.07.88):*

252 *Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 31, հոդվ. 504:*

այլ ժամանակ: Նույն օրն ընդունվեց եւս երկու օրենսդրական ակտ, առաջին՝ «Հասարակական կարգը պահպանելիս ՍՍՀՄ ՆԳ նախարարության ներքին զորքերի պարտականությունների եւ իրավունքների մասին»[253], եւ երկրորդ՝ հանրահավաքների ու ցույցեր մասնակիցների համար վարչական ու քրեական պատասխանատվություն սահմանող հրամանագիր՝ «ՍՍՀՄ որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին»[254]: ՀԽՍՀ ԳԽ-ը անմիջապես կրկնեց նույնը՝ նաեւ պատժաչափեր սահմանելով հրամանագրի պահանջները խախտելու համար՝ սկսած դրամական տուգանքից մինչեւ մեկ տարվա ուղղիչ աշխատանք եւ վեցամսյա ազատազրկում[255]:

Այս ամենին ի պատասխան՝ բազմաթիվ հիմնարկներից կոլեկտիվների ընդհանուր ժողովների որոշումների տեղատարափ սկսվեց հանրապետական իշխանությունների, մասնավորապես՝ ՀԿԿ կենտկոմի, ԳԽ նախագահության եւ ՊԱԿ-ի հասցեներով, որոնցում անընդունելի էր համարվում ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի որոշումը, դատապարտվում էր կենտրոնական լրատվամիջոցների արշավը Շարժման եւ նրա ղեկավարության դեմ, պահանջվում էր, որ իշխանությունները նույնպես պաշտոնական բողոք ներկայացնեն դրանց դեմ, բարձր գնահատական էր տրվում «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությանը եւ զգուշացվում, որ նրանց նկատմամբ որեւէ ճնշում կամ հալածանք կարող է «աննախադեպ հուզումներ առաջացնել ժողովրդի մեջ եւ երկիրը կանգնեցնել անելանելի ու անկառավարելի վիճակի առաջ»[256]: Ջանգվածային այս հակազդեցությունը զգաստացրեց իշխանությանը:

Այսպիսով, եթե հուլիսի 18-ի որոշման մեջ փոքր ձեռքբերումները Շարժումն իրավացիորեն կարող էր համարել իր պայքարի արդյունքը, ապա իշխանության համար դա ընդամենը կոշտ հակահարձակման անցնելու անհրաժեշտ պատվանդան էր: Կենտրոնը հերթական անգամ հանրապետական իշխանությանը «հաղթաթուղթ» էր տվել՝ Շարժումն արմատախիլ անելու համար: Ընկճվելու եւ նահանջի դեպքում, հասկանալի է, ինչպես այդ, այնպես էլ բոլոր մյուս ձեռքբերումները հօդս կցնդեին, իսկ Լեռնային Ղարաբաղը կհայտնվեր տեղահանման նույնպիսի վտանգի առջեւ, ինչպիսի վտանգի առջեւ էին արդեն Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերը:

[253] *Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 31, հոդվ. 505:*

[254] *Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 31, հոդվ. 506:*

[255] *Տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 13-14, հոդվ. 93:*

[256] *Մատենադարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովի հուլիսի 23-ին ընդունած բանաձեւից (ՀՀԱՆԱ, 23.07.88):*

Շարժումը հաջողությամբ դիմագրավեց իշխանությունների քարոզչական եւ ուժային հարձակումը: Հետագա հանրահավաքներում բուռն քննադատության էր ենթարկվում հուլիսի 18-ի որոշումը, դրա դեմ բողոքի ու անհամաձայնության բազմաթիվ նամակներ ու հեռագրեր էին հղվում Մոսկվա:

Իրավիճակի ամբողջական ու բազմակողմանի գնահատականը տրվեց «Ղարաբաղ» կոմիտեի ստորագրությամբ, հուլիսի 25-ով թվագրված, «Ղարաբաղյան շարժման անցած ուղին եւ հեռանկարները» վերնագրով ընդարձակ վերլուծության մեջ: Այս փաստաթուղթն[257], ի թիվս այլոց, լավագույնս ցույց է տալիս, որ Շարժման ղեկավարությունը, ոչ թե մխրճված թեժ իրադարձությունների մեջ՝ գնում էր դրանց պարտադրած ընթացքով եւ ենթարկվում դրանց տարերքին, այլ կարողանում էր նաեւ «կողքից» նայել ու գնահատել դրանք, ճշգրիտ ու սառնասիրտ գնահատել ԽՍՀՄ-ի ներքաղաքական զարգացումների առանձնահատկությունները, զգալ ուժերի հարաբերակցությունը, իրական հնարավորությունները եւ այս հիմքի վրա որոշել առաջիկա արդյունավետ քայլերն ու մարտավարությունը:

Շարժման ու նրա ղեկավարության դեմ հարուցված՝ հակառուսական տրամադրություններ սերմանելու, իշխանության ձգտելու, կոռումպացված շրջանակների հետ կապ ունենալու եւ այլ անհիմն մեղադրանքներն ու հերյուրանքները ստանում էին արժանի պատասխաններ[258]: Իր ձեռքում ունենալով հանդերձ միլիոնավոր օրինակներով հրապարակվող ողջ մամուլը՝ խորհրդային հզոր քարոզչամեքենան այս անգամ էլ որեւէ արդյունքի չհասավ:

Հուլիսի 18-ի որոշումն, ըստ էության, նշանակում էր, որ կենտրոնական իշխանությունը պաշտոնապես մերժում է Ղարաբաղյան շարժման բարձրացրած հիմնական հարցը եւ դա է լինելու նրա հետագա ռազմավարությունը: Այսինքն՝ հավաստեց, որ ինքը դույզն չափով իսկ չի հետեւելու հոչակած ժողովրդավարական վերափոխումների եւ անցյալի սխալներն ուղղելու իր իսկ հոչակած կարգախոսներին ու հավատարիմ է մնալու է իր բռնատիրական էությանը: Ինչ վերաբերում է նրա «զիջումներին»՝ ի դեմս համապատասխան հանձնաժողովի ստեղծման եւ իր ներկայացուցիչը Լեռնային Ղարաբաղում նշանակելուն, ապա դրանք էլ այն մարտավարական քայլերն էին, որոնցով ճնշումների սաստկացման հետ մեկտեղ, պետք է հանգցներ նոր «հրդեհը» եւ խնդիրն աստիճանաբար հաներ իր քաղաքական օրակարգից:

[257] *Այն հեղինակել եւ հանրահավաքում հրապարակել էր Լեւոն Տեր-Պետրոսյանը (տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 25-31):*

[258] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 33-36, 37-41:*

Դրան ի պատասխան՝ Շարժումը հրապարակեց իր համարժեք ռազմավարությունը եւ մարտավարական քայլերը: Վերջիններս ոչ թե պաշտպանական, այլ հարձակողական բնույթ ունեին: Դա **Շարժման քաղաքական ծրագրի հրապարակումն** էր՝ համապարփակ ժողովրդավարական բարեփոխումներով, ինչի վրա խարսխվում էր Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը, ինչպես նաեւ՝ այդ ծրագրի իրականացման համար ավելի հստակ կազմակերպական կառույցի ստեղծման մեկնարկը: Իսկ մարտավարական առաջին քայլը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նոր նստաշրջանի հրավիրման ու հունիսի 15-ի՝ վերամիավորման խնդրով ԼՂԻՄ դիմումին տված համաձայնության վերահաստատման պահանջն էր:

ժա) ՊԱԿ-ը՝ որպես կոմկուսի իշխանության պատվար

Իր 70-ամյա իշխանության ողջ ընթացքում կոմկուսի ամենահզոր զենքը եւ ամենահուսալի հենարանը եղել է Պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ): Այն, փաստացի, քաղաքական ոստիկանության գործառույթ ուներ եւ անվերապահ ու անմիջականորեն ենթարկվում էր ԽՄԿԿ քաղաքական ղեկավարությանը: Դա հսկայական լիազորություններով մի պետություն էր պետության մեջ, երբեմն նրա հզորությունը հասնում էր այն աստիճանի, որ նույնիսկ կարող էր մտածել դուրս գալ կուսակցական վերահսկողությունից ու դառնալ ինքնուրույն քաղաքական գործոն: Այս կառույցը կենտրոնացված մի համակարգ էր, նրա հանրապետական ստորաբաժանումները երկակի ենթակայություն ունեին եւ հանրապետական կուսակցական կազմակերպության ղեկավարից առաջ ենթարկվում էին կենտրոնական ՊԱԿ-ին: Կոմկուսի եւ խորհրդային իշխանության համար նման մի ճակատագրական ժամանակաշրջանում ՊԱԿ-ը պետք է աշխատեր իր բոլոր հնարավորություններով եւ հզորությամբ՝ գործադրելով իր զինանոցի բոլոր միջոցները:

Այստեղ անհրաժեշտ է ներկայացնել միշտ մութ, խորհրդավոր, շատերի համար սարսափազդու մնացած այս կառույցի էությունն ու գործելակերպը բնութագրող մի շարք իրողություններ, որոնք կօգնեն ճանաչել Շարժման ընթացքում դրանց դրսեւորումների հնարավոր արտահայտությունները կամ կապը որոշ իրադարձությունների հետ: Իրողությունների այդ նկարագիրը կազմելիս հիմնականում կօգտվենք ԽՍՀՄ ՊԱԿ-ի բարձրաստիճան մի պաշտոնյայի՝ գեներալ-մայոր Օլեգ Կալուգինի տված հետաքրքիր մի հարցազրույցից[259], որտեղ եւ ներկայացվում են ՊԱԿ-ի խոհանոցի այն

[259] *«Ավանգարդ», 24.06.1990թ.: Չակերտված խոսքերը սույն հարցազրույցից են:*

կարեւոր մանրամասները, որոնք կարող են բանալի ծառայել Շարժման դեմ ծավալված պայքարի որոշ դրվագներ կամ իրադարձություններ հասկանալու համար:

Հետախուզության եւ հակահետախուզության իր օրինական գործառույթներից զատ եւ դրանցից առաջ ՊԱԿ-ի հիմնական եւ առաջնահերթ խնդիրը երկրի ներսում քաղաքական հետախուզությունն էր: Դրա նպատակն էր ապահովել կոմկուսի իշխանությունը, զերծ պահել այդ իշխանության եւ նրա գաղափարախոսության դեմ հնարավոր ցանկացած ամենափոքր վտանգներից ու ոտնձգություններից, կուսակցության «գծի» նկատմամբ ամենափոքր շեղումներից: ՊԱԿ-ը անմիջապես ենթարկվում էր կուսակցության բարձրագույն ղեկավարությանը, նրա բյուջեն առանձին հաստատում էր ԽՄԿԿ կենտկոմը՝ բարձրագույն ղեկավարության մակարդակով: Իսկ ընդհանրապես՝ «պետական գանձարանից այնքան ռուբլի եւ դոլար էին ստանում, որքան խնդրում էին»: ՊԱԿ-ը ամենուր էր. պետական ու հասարակական կյանքում, տնտեսության, մշակույթի, գիտության, սպորտի, կրոնի եւ մյուս բոլոր բնագավառներում. «Չկա կյանքի մի այնպիսի ոլորտ, որտեղ ներկա չլիներ ՊԱԿ-ի ձեռքը եւ ստվերը»:

Քաղաքական հետախուզությունը իրականացվել է գործակալների չափազանց լայն ցանցի միջոցով: Գործակալները բաժանվել են երկու մասի: Մի մասը ստորագրություն էր տալիս եւ կանոնավոր վարձատրվում աշխատանքի դիմաց: Մյուս մասը՝ որպես «վստահված անձինք», ձեւականորեն որեւէ պարտավորություն չէր ստանձնում, եւ նրանց ծառայությունները վարձատրվում էին «նրբանկատ» եղանակով՝ ծննդյան օրը թանկարժեք նվեր, օգնություն՝ բնակարան կամ ավտոմեքենա ստանալու համար եւ այլն: Իսկ ընդհանրապես՝ «եթե դուք ցանկանում եք լավ գործակալ ունենալ, հարկավոր է հոգ տանել նրա առողջության, ընտանիքի մասին, օգնել ծառայության մեջ առաջ գնալուն: ՊԱԿ-ի սպան պետք է փոխարինի նրա ե՛ւ մորը, ե՛ւ հորը»: Դժվար թե գտնվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կվկայեն այդ շրջանում գործակալական ցանցի միջոցով Շարժման դեմ ՊԱԿ-ի համապատասխան գործունեության եւ ձեռնարկած միջոցառումների մասին: Այդօրինակ միջոցառումների մի մասն էլ հազիվ թե փաստաթղթային տեսք էր ստանում, կամ, եթե ինչ-որ փաստաթղթեր ստեղծվում էին, հազիվ թե մատչելի լինեն առաջիկայում:

Այս կառույցի գործունեության հիմքում, ըստ ՊԱԿ-ի գեներալի, ընկած էր հին՝ ստալինյան շրջանի հմտավարժեցումը, եւ աշխատում էին նույն մեթոդներով: Դրանք հետեւյալն էին.

1. «Գործեր» էին կազմվում միլիոնավոր մարդկանց վրա, մի պրակտիկա, որ սկսվել էր դեռ 1918 թվականից: Եթե ժամանակին դրանք մենշեւիկներն ու էսեռներն էին, տրոցկիստները, զինովեւականները, աշխարհաքաղաքացիները, ազգայնականները, եկեղեցականները եւ այլն, ապա այժմ՝ ոչ պաշտոնական կազմակերպությունները, գործադուլային կոմիտեները, նոր քաղաքական կուսակցությունները, շարժումները:
2. Կտրականապես արգելվել է նյութեր հավաքել եւ գործեր կազմել կուսակցական եւ կոմերիտական նոմենկլատուրայի բարձրաստիճան չինովնիկների վերաբերյալ:
3. Հատուկ հանձնարարվել է «գործեր» կազմել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների, ԽՄԿԿ-ին ընդդիմադիր բոլոր կազմակերպությունների եւ կառույցների համար, եթե նույնիսկ նրանց ներկայացուցիչները դառնում էին բարձրաստիճան պաշտոնյաներ:
4. Աշխատանքի ձեւը եղել է հետեւյալը. հավաքագրում էր կատարվում նոր ստեղծված կազմակերպությունների անդամներից կամ իր գործակալներին մտցնում տվյալ կազմակերպության մեջ, վարկաբեկում կազմակերպության կամ շարժման ակտիվիստներին եւ, վերջին հաշվով՝ քայքայում այն ներսից:
5. Նախապես իմանալով, թե ինչ շարժում կարող է սկսվել, ՊԱԿ-ը հաճախ ինքն էր վերցնում նախաձեռնությունը՝ նպատակ ունենալով այն վերահսկողության տակ պահել: Ընդ որում՝ սա վերաբերում էր ոչ միայն քաղաքական շարժումներին: Այսպես՝ երբ արդեն անխուսափելի էր, որ ԽՍՀՄ-ում պետք է ստեղծվեին «Ռոք» խմբերը, առաջին այդօրինակ խումբը ստեղծեց ՊԱԿ-ը: Ըստ այսմ՝ կարելի է պատկերացնել, թե որքան ավելի ուշադիր պետք է լինեին քաղաքական շարժումների եւ կազմակերպությունների նկատմամբ:
6. Ստեղծում էր նույն գործով զբաղվող այլ կազմակերպություններ՝ շարժումները պառակտելու եւ ներսից քայքայելու համար:
7. Ունեցել է հատուկ ստորաբաժանում, որն զբաղվել է ապատեղեկատվության հորինմամբ եւ տարածմամբ՝ առանձին մարդկանց կամ կազմակերպություններին վարկաբեկելու համար: Նրանց մասին տարածվում էին կեղծ լուրեր, անստորագիր թռուցիկներ: Երբեմն նման լուրերին արժանահավատություն տալու համար որեւէ ձեւով հաջողեցնում էին դրանք հրապարակել արտասահմանում, ապա արտատպել տեղական թերթերում:

Սրանք, անշուշտ, չեն ամփոփում ՊԱԿ-ի գործունեության մեթոդների ողջ զինանոցը, սակայն ավելի քան տպավորիչ են: Ընդ որում՝ դժվար չէ տեսնել կամ ենթադրել դրանց գործադրման հետքերն ու օրինակները նաեւ 1988-ից ծայր առած իրադարձությունների ամբողջ շրջանում:

Վճռական պահին կոմկուսի իշխանությունն ամեն գնով պահպանելու խնդիրը ՊԱԿ-ի համար միայն վերադասի հանձնարարության կատարման կամ հավատարմության հարց չէր: Նա օրգանապես էր կապված այս կուսակցության հետ, նրան սերտաճած օրգանական մասն էր: Եթե կոմկուսը կորցներ իշխանությունը, ապա ՊԱԿ-ը իր հիմնական գործառույթով եւ կառույցներով (բազմաթիվ մարդկային ճակատագրեր եւ բարեկեցություն) անօգտագործելի կարող էր լինել որեւէ այլ իշխանության համար: Այսինքն՝ այս պայքարը նրա համար նաեւ իր կյանքի, կենաց ու մահու խնդիր էր՝ ըստ էության:

Նկատի ունենալով այս պատկերը՝ կարելի է ենթադրել, թե գործնականում ինչպիսի դրսեւորումներ է ունեցել ՊԱԿ-ի աշխատանքը մինչ այդ: Համենայնդեպս՝ փաստ է, որ Շարժման ողջ ընթացքն ուղեկցվել էր նաեւ զանազան կազմակերպությունների ստեղծմամբ, Շարժումը պառակտելու փորձերով, ապատեղեկատվության, Շարժման ղեկավարներին վարկաբեկող զանազան վարկաբեկիչ լուրերի, երբեմն անստորագիր ու սադրիչ գրությունների տարածմամբ եւ այլն:

ժբ) Ղարաբաղյան շարման արձագանքներն առաջին կես տարում

Ղարաբաղյան շարժումն անմիջապես լայն արձագանք գտավ ԽՍՀՄ-ում եւ աշխարհում: Պատճառները մի քանիսն էին: Առաջին հերթին, անշուշտ, հանրահավաքների աննախադեպ մեծ մասշտաբները, բարձր կազմակերպվածությունը, պահանջների քաղաքական բնույթը: Երկրորդ՝ այն հսկայածավալ ու ինքնամոռաց աշխատանքը, որ կատարվեց տեղեկատվական շրջափակումը ճեղքելու, խնդրի նենգափոխմանն ուղղված պաշտոնական քարոզչությունը չեզոքացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը նաեւ հանրապետությունից դուրս՝ ԽՍՀՄ-ում եւ արտասահմանում տարածելու ուղղությամբ. առանց չափազանցելու՝ դրան ինքնաբուխ մասնակից եղան Շարժման հարյուր հազարավոր մասնակիցներ: Երրորդ պատճառը պայմանավորված էր այն անվիճելի հասարակական հակակրանքով, որ ձեւավորվել ու կուտակվել էր կոմունիստական բռնապետության՝ որպես «Չարիքի

կայսրության» դեմ, ինչպես Խորհրդային Միության ներսում, այնպես էլ՝ աշխարհում: Եւ ահա այդ կայսրության դեմ զարմանալի միակամությամբ, հերոսությամբ ու նախանձելի կազմակերպվածությամբ, ինքնամոռաց, ամբողջ հասակով ծառս էր լինում նույն այդ կայսրության ամենափոքրաթիվ ժողովուրդներից մեկը:

Շարժումն իր բոլոր հատկանիշներով աննախադեպ էր եւ հարգանք էր ներշնչում, իսկ նրա անկեղծությունը՝ մղում նույնպիսի պատասխան վերաբերմունքի: Առաջին խրախուսական ու պաշտպանական արձագանքները ստացվեցին ռուս մտավորականության լավագույն ներկայացուցիչներից: Հոգուտ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի սահմանադրական պահանջի, դեռ փետրվարի 25-ին համատեղ մի նամակով հանդես եկան ռուս բանաստեղծ Մ. Դուդինը եւ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ա. Թախտաջյանը[260]: Մարտի 21-ին Մ. Գորբաչովին նամակ հղեց հայտնի իրավապաշտպան Անդրեյ Սախարովը[261]: Հիմնավոր մի նամակով ԽՄԿԿ կենտկոմին դիմեց Լենինգրադի Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Պիատրովսկին[262]: Ճանաչված պատմաբան Ռոյ Մեդվեդեւը հանդես եկավ երկու մասից բաղկացած ընդարձակ վերլուծական հոդվածով, որ լայնորեն տարածվեց մեքենագիր վիճակում[263]: Շարժմանը ու նրա գործիչներին շատ արագ հաջողվեց լայն կապեր հաստատել բազմաթիվ հիմնարկների ու կազմակերպությունների հետ, որոնք կարեւոր պահերին չէին զլանում ցուցաբերել իրենց օժանդակությունը[264]:

Դրական արձագանքներ ստացվեցին Մերձբալթյան հանրապետություններից, երբ այնտեղ, մի քանի ամիս անց, դեռեւս մեծ զգուշավորությամբ, պիտի սկսվեին առաջին հասարակական խմորումները: Էստոնական ռադիոն Լեռնային Ղարաբաղի խնդրի եւ սումգայիթյան ոճրագործության

[260] *ՀՀԱՆԱ, 15/25.02.88*

[261] *ՀՀԱՆԱ, 15/21.03.88:*

[262] *Տե՛ս* ***Погосян В.*** *Советские ученые о Карабахском конфликте. Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, 3, էջ 338-342:*

[263] *ՀՀԱՆԱ, 15/30.03.88. Հոդվածը վերնագրված է «Ազգային հակամարտությունը Անդրկովկասում եւ Գլասնոստի քաղաքականության ճգնաժամը»: Այն ապրիլին հրապարակվեց «Լոս Անջելես թայմս» թերթում (տե՛ս* ***Ուլուբաբյան Բ.****, Արցախյան գոյապայքար, էջ 73):*

[264] *Օրինակ. Մշակույթի սովետական ֆոնդի Լենինգրադի բաժանմունքի էկոլոգիայի խորհուրդը Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի քննարկումից հետո դիմում հղեց ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսին՝ պաշտպանելով Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու պահանջը եւ հորդորելով արագացնել մարտի 9-ին այդ խնդրով ԽՄԿԿ կկ-ի քարտուղարությանը տված հանձնարարականի կատարումը (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/01.06.88):*

մասին մեկ ժամանոց ծավալուն հաղորդում հեռարձակվեց մայիսի 27-ին[265]: 1988թ. հուլիսի 9-ին «Լիտվայում հանուն վերակառուցման շարժման» հանրահավաքի անունից հեռագիր հղվեց Լեռնային Ղարաբաղ՝ Հ. Պողոսյանին, եւ պատճենը՝ Գորբաչովին, որում ասվում էր. «Խոր մտահոգություն ենք հայտնում Լեռնային Ղարաբաղի իրադրության առթիվ... առաջարկում ենք հարցը լուծել ԼՂ բնակչության հանրաքվեի միջոցով՝ միութենական հանրապետություններից եւ մամուլից դիտորդների ներկայությամբ»[266]:

Եւրոպական հայտնի կառույցներից Ղարաբաղյան շարժմանն առաջինն արձագանքեց Եւրոպական խորհրդարանը. 1988թ. մարտի 10-ին նրա ընդունած բանաձեւը կոչ էր անում եւրոպական համայնքի անդամ երկրներին՝ պաշտպանել Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ժողովրդի կողմից բարձրացված խնդիրը[267]: Իսկ նույն թվականի հուլիսի 7-ին այս մարմինն ընդունեց նույն հարցով իր երկրորդ բանաձեւը, որում, դատապարտելով հայերի նկատմամբ կիրառվող բռնությունները՝ կրկին իր աջակցությունն էր հայտնում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ Հայաստանի հետ միավորվելու խնդրին, պահանջում ապահովել Ադրբեջանում հայ բնակչության անվտանգությունը եւ պատժել սումգայիթյան ջարդերն իրականացնողներին[268]: Առաջին արձագանքողներից մեկն էր Ֆրանսիան, ինչի մասին տեղեկատվությունը Պետական անվտանգության մարմիններից է. 1988-ի մարտին նրա Սոցիալիստական կուսակցությունը Լեռնային Ղարաբաղի հարցով հանրահավաքներ է կազմակերպել: Ընդ որում՝ հանրահավաքում այս հարցում նրանց տեսակետները համընկել են մրցակից կուսակցության («Միավորում հանուն հանրապետության»), հետ. մասնավորապես՝ նախագահ Միտերանը եւ պրեմիեր-մինիստր Շիրակը համաձայնության էին եկել

[265] *Հաղորդման գրավոր տեքստը անմիջապես տարածվեց Հայաստանում (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/27.05.88):*

[266] ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе часть 1 ст. 117. Կարծես թե ընդհանուր էր Մերձբալթյան հանրապետությունների ժողովրդական ճակատների դիրքորոշումը. էստոնիայի ժողովրդական ճակատը, ավելի ուշ, անդրադառնալով ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի որոշմանը, նույնպես համարում էր, որ Սահմանադրությանը հղումները այս դեպքում տանում են փակուղի, հարցը կարող է լուծվել միայն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հանրաքվեի իրականացմամբ (տե՛ս ՀՀԱՆԱ,15/01.10.88):*

[267] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/09.03.88:*

[268] *ՀՀԱՆԱ, 15/06.07.88:*

Արեւմուտքի եւ արտասահմանյան հայերի անունից խորհրդային իշխանություններին մտահոգություն հայտնելու Լեռնային Ղարաբաղի հայերի վիճակի վերաբերյալ[269]:

Ամերիկյան մայրցամաքից առաջին արձագանքներից մեկը ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանի՝ մարտի 25-ով թվագրված նամակն էր Գորբաչովին[270]: Իսկ մինչ այդ ամերիկյան «Թայմ» ամսագիրն իր մարտի 13-ի համարում «Հայկական մարտահրավեր» վերնագրով վերլուծական հոդվածում, համեմատելով Ղարաբաղյան շարժման առաջին օրերի իրադարձությունները մինչ այդ՝ Ալմա Աթայի իրադարձությունների, Ղրիմի թաթարների բարձրացրած խնդրի եւ 1987-ին Մերձբալթյան հանրապետություններում իրենց անկախության օրերը նշելու փաստերի հետ, կատարեց երկու կարեւոր արձանագրում. առաջին՝ «Գորբաչովը մի խնդրի առջեւ է, որն ամենայն հավանականությամբ չի անհետանա եւ կարող է վերածվել նրա իշխանության երեք տարիների ամենասուր ճգնաժամերից մեկի», երկրորդ՝ ազգային հարցերի ակտիվացումը կարող է փաստարկ ծառայել կուսակցական հետադիմական գործիչների համար՝ ընդդեմ հետագա ազատականացման[271]: Ամսագրի վերլուծաբաններն, ըստ էության, ճիշտ էին կանխատեսել–գնահատել Ղարաբաղյան շարժման դերն ու նշանակությունը:

ԱՄՆ-ի կառավարության կողմից պաշտոնական արձագանքը հետեւեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1988թ. հուլիսի 18-ի որոշմանը: Հուլիսի 27-ին Սենատը միաձայն վավերացրած մի օրինագծի կից հավելվածում արձանագրվում էր, որ Լեռնային Ղարաբաղի բարձրացրած բնական խնդրին ԽՍՀՄ կառավարությունը ռազմական ուժ է հակադրել, եւ պահանջում էր հարգել հայ ժողովրդի օրինական ձգտումները, դադարեցնել նրա նկատմամբ մարդու իրավունքների լուրջ խախտումները, եւ նշվում էր, որ հակառակ դեպքում դա կազդի ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների վրա: Օրինագծի առիթով ելույթ ունեցող սենատորները համարում էին, որ Հայաստանին միանալու՝ Ղարաբաղի հայության պահանջը «ընդունելի է մարդու իրավունքների հիմունքով»[272]:

---

269 *ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 13, թ. 123:*

270 *ՀՀԱՆԱ, 15/25.03.88:*

271 *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/13.03.88 (հոդվածի ռուսերեն մեքենագիր թարգմանությունը):*

272 *ՀՀԱՆԱ, 08/27.07.88 (փաստաթուղթը ներկայացնում է մի ռադիոհաղորդման սղագրություն): Տե՛ս Հովհաննիսյան Է., Սփյուռքահայ համայնքների եւ օտարերկրյա լրատվամիջոցների դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման նկատմամբ (ՀԽՍՀ ԱԳ նախարարության տեղեկանքների հրապարակում), Բանբեր Հայաստանի արխիվների, 2013, հ. 1, էջ 145-146:*

Խորհրդային իշխանությունն անհանգստացած էր Ղարաբաղյան շարժման հատկապես արտասահմանյան արձագանքների առատությունից եւ մակարդակից: Եւրոպական խորհրդարանի՝ մարտի 10-ին ընդունած բանաձեւին սուր արձագանքեց «Իզվեստիան»՝ քամահրանքով հարց տալով. «Այդ երբվանի՞ց է արեւմտաեւրոպական ընկերակցությունը իր խնամակալության տակ վերցրել Անդրկովկասը»՝ ծիծաղելի համարելով նրա հնարավորությունները տվյալ խնդրում եւ խորհուրդ տալով զբաղվել սեփական հոգսերով[273]: Մոսկովյան թերթերից մեկը անհանգստությամբ ու ցասումով արձանագրում էր, որ հայտնի ռադիոալիքները («Գերմանական ալիք», «Բի-Բի-Սի», «Ամերիկայի ձայն»), արտասահմանյան օրաթերթերը (հիշատակում է՝ «Թայմս»), առաջին իսկ օրերից լարված ուշադրությամբ հետեւում են Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ ծավալող իրադարձություններին եւ լուսաբանում դրանք: Իհարկե՝ այդ ուշադրությունը նա գնահատում է որպես «ոչ անկողմնակալ», համարում, որ դա պայմանավորված է Խորհրդային Միությունը եւ սոցիալիստական համակարգը փլուզելու՝ Արեւմուտքի ցանկությամբ: Եւ, այնուամենայնիվ, հետաքրքիր են հենց այստեղ բերված՝ արտասահմանյան վերլուծաբանների կանխատեսումները, թե՝ Ղարաբաղյան շարժումը կարող է լինել այն սկիզբն ու օրինակը, որից հետո Միության այլ ժողովուրդներ կսկսեն պայքարել ինքնորոշման իրավունքի եւ իրական ինքնիշխանության հասնելու համար[274]: Նույն օրերին «Բի-Բի-Սին» հատկապես տպավորվել էր ի նշան բողոքի՝ խաղաղ մայրաքաղաք զորք մտցնելու դեմ մարտի 26-ին հայտարարված եւ մեծ կազմակերպվածությամբ իրականացված «մեռյալ քաղաք» ակցիայով[275]: Արտասահմանյան արձագանքներից մեծ էր նաեւ հանրապետական իշխանության անհանգստությունը: Մամուլը խիստ մտահոգված քննադատում էր, օրինակ, Մոսկվա այցի առիթով ԱՄՆ նախագահին՝ մայիս 29-ի հանրահավաքի որոշմամբ ուղարկված դիմումը[276]:

Կենտրոնական իշխանության ստացած արձագանքների մեջ կային նաեւ այնպիսիք, որոնք արդեն ոչ մի կապ չունեին անձնական համակրանքի եւ այլ զգացումների հետ, այլ Խորհրդային Միության ամենալուրջ

---

273 *Տե՛ս «Известия», 30.03.1988.*

274 *Տե՛ս «Московские Новости», 03.04.1988.*

275 *Տե՛ս «Аргументы и факты», 2-8.04.1988.*

276 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 02.06.1988:*

փորձագիտական կենտրոնների ու նրանց աշխատակիցների վերլուծություններ էին: Այս առումով կարեւոր է «Համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների» միութենական ինստիտուտի մի խումբ աշխատակիցների անունից նույն ինստիտուտի նախկին տնօրեն, ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամ Ա. Ն. Յակովլեւին ուղղված՝ մայիսի 19-ով թվագրված նամակը[277]: Այն հետաքրքիր է, նախ, գնահատականների առումով, եւ երկրորդ՝ նրանով, որ դրանում արված եզրակացությունները եւ գործնական առաջարկները, ինչպես երեւում է, ինչ-որ չափով հիմք դարձան կենտրոնական իշխանության առաջիկա որոշումների եւ վարքագծի համար: «Տպավորություն է ստեղծվում,– գրում են հեղինակները,– (տա Աստված, որ դա սխալ լինի), որ մեր ղեկավարությունը, դատելով նրա առաջին արձագանքից, թերագնահատել է Հայկական ազգային շարժման ուժն ու թափը: Հնարավոր է, որ միտում կա նրան վերաբերվել հին ստերեոտիպերի ոգով («ծայրահեղականները ջուր են պղտորում», «լարում են հասարակությանը», «ձգտում են խարխլել», «ջրաղացին ջուր են լցնում»...) եւ դրան համապատասխան էլ միջոցներ ձեռնարկել, այն է՝ Լեռնային Ղարաբաղում սահմանափակվել կոսմետիկ բարեփոխումներով, իսկ եթե Հայաստանում հուզումները շարունակվեն, ապա՝ մեկուսացնել հրահրիչներին, կարգ հաստատել եւ այլն: Որպես արտասահմանյան Արեւելքի ազգային շարժումներով զբաղվող մասնագետներ, մենք համարում ենք, որ նման մոտեցումը սխալ կլիներ, կործանարար եւ հակառակ արդյունքների հանգեցնող»: Չժխտելով, որ Հայաստանում էլ կան ծայրահեղ ազգայնականներ, նրանք ծավալված Շարժումը առանձնացնում են ազգայնականությունից ու գնահատում որպես «իրական, զանգվածային, համաժողովրդական շարժում», որի հիմքում դրված է հայ ժողովրդի գլխին թափված պատմական անարդարության, դժբախտության ու վիրավորանքի խորը համոզմունքների արմատացած համալիրը»: Նամակի հեղինակները կոպիտ սխալ են համարվում Շարժմանը կենտրոնական իշխանության կողմից տրված կոշտ գնահատականները եւ միամիտ՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում պահելով՝ «ժողովուրդների բարեկամության» եւ նման կոչերով այն հանգստացնելը: Արդարության տեսանկյունից նրանք լավագույն լուծումը համարում են Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելը: Բայց, համոզված լինելով, որ «կառավարությունը չի գնա այդ քայլին», ինստիտուտի մասնագետները, ելնելով երկրի ու նրա վարկանիշի համար հետագա զարգացումների հետեւանքների

[277] *Աշխատակիցների խմբի անունից նամակը ստորագրել է Գ. Միրսկին:*

«չարյաց փոքրագույնը» ընտրելու սկզբունքից, առաջարկում են «ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ», սակայն նվազագույն անհրաժեշտ հետեւյալ լուծումը. Լեռնային Ղարաբաղում հաստատել նախագահական կառավարում կամ այն ընդգրկել Ռուսաստանի կազմի մեջ: Նամակի հեղինակները կանխատեսում են, որ այդօրինակ որոշումն իր մեջ վտանգներ ունի: Բայց նաեւ ցույց են տալիս, որ այդ վտանգները եւ բացասական հետեւանքները Խորհրդային Միության համար տասնապատիկ մեծ կլինեն հակառակ դեպքում՝ եթե Կենտրոնը Լեռնային Ղարաբաղը շարունակի թողնել Ադրբեջանի կազմում: Այս դեպքում նրանք հնարավոր են համարում զանգվածային քաղաքացիական անհնազանդության դրսեւորումներ, դիմումներ ՄԱԿ-ին, Գորբաչովից խորը հիասթափություն, Մոսկվայի դեմ բացասական տրամադրությունների խորացում, ինչը «ճակատագրի նվեր» կլինի նրանց համար, ովքեր դրսում շահագրգռված են «ընդհանրապես մեր հասարակարգի եւ մասնավորապես Վերակառուցման արժեզրկմամբ»: Փաստաթղթի հեղինակները Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու հաջորդ վտանգը համարում են այն, որ հայ երիտասարդության մեջ կմեծանա «ուղիղ գործողությունների» կողմնակից ծայրահեղական կազմակերպությունների առաջացման, տեռորիզմի վտանգը: Երրորդ վտանգը համարվում է այն, որ Լեռնային Ղարաբաղում կսկսվեն արյունալի ազգամիջյան բախումներ, Կենտրոնը ստիպված կլինի զորքեր մտցնել, կրակել հայերի եւ ադրբեջանցիների վրա, ինչը շատ ծանր կանդրադառնա նրա միջազգային վարկանիշի վրա: Եւ վերջապես՝ այդ դեպքում ենթադրվում էր ազգամիջյան ընդհարումներ նաեւ Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում եւ հայերի զանգվածային բռնագաղթ Ադրբեջանից[278]:

Դժվար չէ նկատել, որ մասնագետների կազմած, Կենտրոնի համար անսպասելի այս կանխատեսումների մի մասն, իրոք, իրականացավ: Սակայն վերլուծաբան մասնագետները չէին կարողացել ենթադրել հնարավոր վտանգների մեջ ամենակարեւորը, որը ոչ թե Խորհրդային Միության վարկանիշի վրա կարող էր ազդել, այլ դառնալ կայսրության բռնատիրական հիմքերի խարխլման լծակ եւ կործանման սկիզբ. նրանք չէին տեսնում Հայկական համաժողովրդական հուժկու ընդվզումը համապարփակ ժողովրդավարական շարժման վերածվելու վտանգը: Իսկ Հայկական համաժողովրդական շարժումը, ընդամենը երկու ամիս անց, տեղափոխվեց հենց այս՝ բռնապետության համար ամենավտանգավոր ու կործանարար ճանապարհ:

[278] *ՀՀԱՆԱ, 15/19.03.88:*

ժգ) Շարժման առաջին փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները

«Ղարաբաղ» կոմիտեի՝ 1988թ. հուլիսի 25-ով թվագրված «Ղարաբաղյան շարժման անցած ուղին եւ հեռանկարները» վերնագրով ընդարձակ վերլուծական թռուցիկն արձանագրում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշմամբ եզրափակվում է Լեռնային Ղարաբաղի խնդրով ծայր առած հայկական համաժողովրդական շարժման առաջին փուլը[279]: Հետադարձ հայացքով նույնպես, Շարժման ամբողջ պատկերի վրա, այս պարբերաբաժանումը համապատասխանում է իրականությանը[280]:

Նախ եւ առաջ՝ դա մի ամբողջական փուլ էր ֆորմալ առումով. 1988թ. ԼՂԻՄ մարզխորհրդի հայտնի որոշում-դիմումն ուղղված էր երեք սուբյեկտների՝ Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին: Առաջին երկուսն իրենց պատասխան որոշումները կայացրել էին հունիսին, իսկ հուլիսի 18-ին իր որոշումը կայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը՝ ի դեմս իր նախագահության:

Դա ամբողջական մի փուլ էր նաեւ ըստ էության՝ Շարժման եւ պայքարի որակական հատկանիշների առումով. արտաքուստ ազգային, իսկ հիմքում ժողովրդավարական, մեկ խնդիր ունեցող Շարժումը դրանից հետո հաջորդ փուլ էր մտնում՝ իր օրակարգում ներառելով արմատական ժողովրդավարական բարեփոխումների մի ողջ համալիր: Որակական այս փոփոխությունը տեղի էր ունեցել Շարժման ներսում կատարված կարեւոր շրջադարձով. առաջին երեք ամիսների՝ **վստահել, պահանջել եւ սպասել** մարտավարությանը փոխարինել էր **չվստահել, պայքարել եւ հասնել** գործելակերպը: Սակայն նույնն էր մնացել հիմնական՝ օրինականության շրջանակներում գործելու սկզբունքը՝ նպատակ դարձնելով նաեւ նույն այդ օրինականության շրջանակներն ընդարձակելը:

Առաջին կես տարվա ընթացքում արձանագրվել էին հետեւյալ քաղաքական իրողություններն ու արդյունքները.

1. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին միացնելու խնդրով սկսված համաժողովրդական շարժումն ինքնաբուխ էր, իր էությամբ (ազգի եւ մարդու իրավունքների հիմունքով) եւ գործելակերպով՝

[279] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 25:*

[280] *Իրականությանը համապատասխանում են նաեւ դրանում կատարված արձանագրումներն ու գնահատականները, ուստիեւ դրանք կներառվեն սույն ամփոփման մեջ:*

ժողովրդավարական: Չհամակերպվելով 1921 թվականին տրված կամային լուծմանը, ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում, այդ խնդիրը պարբերաբար բարձրացվել էր, երբ դրա համար շատ թե քիչ հարմար պահ էր նկատվել: Օգտվելով հոչակված «Վերակառուցման» կուրսի պատեհությունից՝ Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միացման հարցը նախաձեռնեց, բարձրացրեց եւ առաջին ամիսներին ղեկավար դեր խաղաց հիմնականում ծագումով ղարաբաղցի մտավորականությունն ու մարզի պաշտոնեությունը:

2. Խորհրդային Միության 70-ամյա պատմության մեջ Ղարաբաղյան շարժումն իր մասշտաբներով եւ դրսեւորման ձեւերով եզակի էր եւ աննախադեպ: Շարժման համաժողովրդական բնույթը եւ ժողովրդավարական էությունը պայմանավորված էին նաեւ նրանով, որ խնդիրը միահամուռ պաշտպանվում էր ինչպես մարզի՝ շուրջ 85% կազմող հայ բնակչության կողմից, այնպես էլ մարզային իշխանության, պաշտոնեության բոլոր մակարդակներում: Բացի իշխանական նոմենկլատուրայի շատ նեղ մի շերտից, այն նույնպիսի պաշտպանություն ուներ նաեւ Հայաստանում: Կենտրոնական իշխանության հոչակած «Վերակառուցման» շրջանակներում խնդիրը դրվում էր որպես վարչական սահմանների փոփոխման միջոցով ազգային հարցում ստալինյան շրջանում թույլ տրված սխալներից մեկի շտկման, պատմական արդարության վերականգնման, ազգի ազատ ինքնորոշման իրավունքի իրացման հարց: Այն ամբողջությամբ տեղավորվում էր ոչ միայն ԽՍՀՄ Սահմանադրության եւ օրենքների, այլեւ նախադեպերի շրջանակներում:

3. ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը ԽՍՀՄ պատմության մեջ **առաջին դեպքն** էր, երբ պաշտոնական որեւէ փաստաթուղթ նախապատրաստվում եւ ընդունվում էր «ներքեւից» եկող նախաձեռնությունների շնորհիվ, առանց համապատասխան վերադաս կուսակցական մարմնի հետ համաձայնեցնելու, ավելին՝ ի հեճուկս վերջիններիս հարուցած կոշտ արգելքների: Խոսքը վերաբերում էր ոչ թե հանրահավաքի, ցույցի կամ գործադուլի, այլ ինքնավար մարզի սահմանադրական իշխանության մարմնի մակարդակով կայացված որոշման, որ, ըստ էության, հավասարազոր էր համակարգի դեմ ապստամբության:

4. ԽՍՀՄ պատմության մեջ **առաջին անգամ** տեղի ունեցան այնպիսի զանգվածային ցույցեր ու հանրահավաքներ, որոնք ընդհանուր մասնակիցների թվով մոտեցան շուրջ մեկ միլիոն մարդու, եւ դա՝ 3,5 միլիոն բնակչություն ունեցող հանրապետությունում: Խորհրդային բռնության մեքենայի նկատմամբ հասարակությանը համակած ու ժառանգաբար փոխանցված

վախի զգացումը, որ գիտակցական կամ ենթագիտակցական մակարդակով տիրապետող էր ողջ Խորհրդային Միությունում եւ նրա ազդեցության տակ գտնվող «սոցիալիստական ճամբարում», առաջինը Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի տվեց համաժողովրդական շարժման միասնականության ինքնաբուխ ցուցադրանքի ու դրա ուժի գիտակցության առջեւ: Հատկապես մեծ տպավորություն էր թողնում ինչպես հանրահավաքների ու ցույցերի, այնպես էլ գործադուլների կազմակերպվածության բարձր մակարդակը, Շարժման համառությունը[281]: Այս ամենն օրեցօր բազմապատկում էր յուրաքանչյուրի ինքնավստահությունը, հետեւողականորեն հաղթահարում վախի եւ այլ հոգեբանական խոչընդոտները, հավատ ներշնչում սեփական ուժերի նկատմամբ:

5. Խորհրդային Միության պայմաններում եւ նրա հասարակության գիտակցության մեջ մասնավոր տնտեսական պահանջներով լոկալ գործադուլն անգամ աներեւակայելի մի հանդգնություն էր: Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցան **առաջին քաղաքական, տեւական, համընդհանուր գործադուլները**:

6. Անակնկալի եկած կենտրոնական իշխանության գործողությունները՝ Շարժումը պիտակավորումներով, ռազմական ուժի ցուցադրանքով, բռնություններով, քարոզչական ահաբեկչությամբ ճնշելու, խոստումներով դադարեցնելու, ինչ-որ կերպ իր կողմից կառավարելի դարձնելու նպատակով արված քայլերը որեւէ արդյունքի չհանգեցրին: Անպարտելի թվացող խորհրդային քարոզչական մամլիչի դեմ անհավասար գոտեմարտում Շարժումը «մերկ ձեռքերով» կարողացավ ապահովել օբյեկտիվ տեղեկատվության տարածումը աշխարհով մեկ: Դրա շնորհիվ հնարավոր եղավ ապահովել ինչպես խորհրդային ժողովուրդների, այնպես էլ միջազգային հանրության բարենպաստ կարծիքն ու արձագանքը, ինչը կարեւոր պատնեշ դարձավ բռնությունների կիրառման դեմ եւ լրացուցիչ լծակ՝ կենտրոնական իշխանության վրա ազդելու համար:

7. Պայքարի առաջին ամիսների փորձն արդեն ցույց տվեց, որ սահմանադրական եղանակով բարձրացված խնդիրը, որքան էլ այն անմնացորդ համաժողովրդական սատարման արժանացավ, չէր որդեգրվելու Հայաստանի իշխանության կողմից: Ոտքի կանգնած ժողովրդի եւ իշխանության մարմինների այն միասնությունը, որ կար Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում չկայացավ: Հայաստանի իշխանության վարքագիծն ամբողջությամբ պայմանավորված էր եւ պայմանավորված էր մնալու Կենտրոնի թելադրանքով:

8. Շարժման առաջին ամիսներին Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միացման հարցը ներկայանում եւ ընկալվում էր որպես ազգային հարցում ժամանակին կատարված սխալներից մեկի ուղղման, պատմական արդարության վերականգնման, ստալինյան կամայականության հետեւանքներից մեկի՝ ազգի երկու հատվածների արհեստական եւ անհասկանալի բաժանման վերացման խնդիր: Այս տեսքով այն լիակատար հասկանալի եւ ընդունել էր նաեւ դրսում, հատկապես Վերակառուցման հռչակած սկզբունքների ու կարգախոսների շրջանակներում: Որպես ներքին վարչական սահմանների փոփոխության հարց՝ խնդիրը լուծելի էր Մոսկվայի ցանկության դեպքում: Ի դեմս Եւրոպական խորհրդարանի բանաձեւերի եւ այլ արձագանքների՝ այդպիսի լուծումն էր պաշտպանում նաեւ միջազգային հանրությունը: Ընդամենը հինգ ամսվա ընթացքում Եւրոպական խորհրդարանի ընդունած երկու բանաձեւերը՝ 1988թ. մարտի 10-ին եւ հուլիսի 7-ին, ԱՄՆ Սենատի պաշտոնական արձագանքը պաշտպանում էին Լեռնային Ղարաբաղը՝ Հայաստանին միացնելու պահանջը: Այդ պաշտպանության հիմքում դրված էր Շարժման՝ իր խնդիրներով եւ գործելակերպով ոչ թե ազգայնական, այլ ժողովրդավարական լինելու իրողությունը եւ գնահատականը:

9. Խնդիրը, որ բարձրացվել էր որպես Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման, նույն պետության ներսում վարչական սահմանների փոփոխության միջոցով Հայաստանի հետ միավորելու հարց, իհարկե, չլուծվեց: Սակայն արձանագրվեցին որոշակի տեղաշարժեր եւ հաջողություններ. կենտրոնական իշխանությունն իր հայտարարություններով եւ որոշումներով, փաստորեն, ստիպված եղավ պաշտոնապես ընդունել խնդրի օրինակարգությունը՝ որպես մինչ այդ վարված սխալ ազգային քաղաքականության հետեւանք: Ճիշտ է՝ հարցի լուծման նրա առաջարկած դեղատոմսերը հեռու էին բավարար լինելուց, բայց, այնուամենայնիվ, քայլեր էին, որոնք ցույց էին տալիս, որ պայքարը շարունակելու դեպքում կարելի է արդյունքների հասնել:

10. Շարժման առաջին ղեկավարությունը, որ հսկայական գործ էր կատարել թե՛ մինչեւ հանրահավաքները սկսելը, թե՛ Շարժման առաջին ամիսներին, օրակարգում պատկերացնում էր **միայն մեկ խնդիր**՝ Լեռնային Ղարաբաղի հարցը, եւ գործում էր **իշխանությանը վստահել, խնդրել եւ սպասել** գործելակերպի շրջանակներում: Մայիսին այլեւս հստակ էր, որ այդ կերպ խնդիրը մտնելու է փակուղի: Շարժման շարունակականությունն

[281] *Ըստ ԽՍՀՄ ՆԳՆ տեղի ներկայացուցչի՝ 1988-ի փետրվարի 13-ից մինչեւ մայիսի 31-ը Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքում եւ շրջկենտրոններում հաշվառվել է մոտ 120 հանրահավաք եւ ցույց (տե՛ս ՀՀԱՆԱ, 08/01.06.88):*

ապահովելու համար անհրաժեշտ էր վանել ամեն տեսակ ազգայնականությունը, օրակարգում ներառել արմատական ժողովրդավարական բարեփոխումների լայն ծրագիր եւ հիմնական հարցը խարսխել դրա վրա: Անհրաժեշտ էր նաեւ որդեգրել նոր՝ **իշխանությանը չվստահել, պայքարել եւ հասնել** գործելակերպը: Սա կնշանակեր ճակատային մարտահրավեր քաղաքական համակարգին, մի սահմանագիծ, որ չէր կարող անցնել Շարժման ղեկավարության մի մասը, հատկապես ավագ սերունդը: Բարեբախտաբար, նույն ղեկավարության մեջ գտնվեցին մարդիկ, ովքեր գնացին քաղաքական ու անձնական այդ մեծագույն ռիսկին եւ մայիսի վերջերին ձեւավորեցին նոր ղեկավար մարմին՝ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն», որն էլ իր անփոփոխ կազմով ղեկավարեց Շարժումը մինչեւ վերջ:

11. Ընդամենը կես ամսվա ընթացքում, համաժողովրդական ջանքերով, զանգվածային հանրահավաքների, երթերի, ցույցերի աջակցությամբ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն» կարողացավ հասնել Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում ԼՂԻՄ-ի՝ ՀԽՍՀ-ի կազմի մեջ մտնելու՝ դեռ չորս ամիս առաջ ընդունած դիմումին դրական պատասխան տվող՝ հունիսի 15-ի որոշման կայացմանը: Եթե ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը ընդունելու նախաձեռնությունը Ղարաբաղի ժողովրդինն էր, բայց միաժամանակ նաեւ մարզային իշխանություններինը, ապա այս երկրորդ դեպքում նման մի որոշման հնարավոր եղավ հասնել միայն համաժողովրդական պայքարի շնորհիվ, կենտրոնական եւ հանրապետական իշխանությունների ծանր դիմադրությունը հաղթահարելով: Շարժման ոգեւորությունը մեծացնում եւ հեղինակությունը բարձրացնում էր այն հանգամանքը, որ նրա առջեւ, ըստ էության, ընկրկում ու նահանջում էին ոչ միայն հանրապետական, այլեւ կենտրոնական իշխանությունը:

12. Իշխանություններին խնդրելու եւ համոզելու, նրանց աջակցությունը ստանալու միջոցի փոխարեն՝ Շարժման նոր ղեկավարությունը որդեգրեց զանգվածների միջոցով քաղաքական ճնշում բանեցնելու, պահանջելու եւ ստիպելու միջոցը: Հաջողությամբ գործի դրվեց մարտի առաջին տասնօրյակում մի անգամ արդեն կիրառված՝ Գերագույն խորհրդի պատգամավորների հետ անհատական աշխատանքի, բարձրագույն իշխանության սահմանադրական մարմինը՝ Գերագույն խորհուրդը գործող օրենքների ընձեռած լծակներով աշխատեցնելու ու նրա միջոցով անհրաժեշտ որոշումներն ընդունելու մեխանիզմը: «Ամբողջ իշխանությունը սովետներին» կարգախոսը, որով խորհրդային իշխանություն էր հաստատվել 70 տարի առաջ, եւ որը երբեք չէր գործել, Ղարաբաղյան շարժման շնորհիվ առաջին անգամ

սկսեց աշխատել Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում: Ու հենց դրանով պիտի փլուզվեր խորհրդային կուսակցապետությունը:

13. ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունում հուլիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկումը, վերջին հաշվով, Շարժման ճնշման տակ էր, որ իրականացավ: Խնդիրը հնարավոր եղավ մերժել՝ **ինքնորոշման իրավունքը հողային պահանջատիրությամբ նենգափոխելու** միջոցով: Ընդունված որոշումը, բնականաբար, շատ հեռու էր Շարժմանը բավարարելուց, սակայն, նախ, բազմաժամ քննարկման փաստն ինքնին կարեւոր էր, եւ երկրորդ՝ այստեղ նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղում ունենալ կենտրոնական իշխանությունների լիազոր ներկայացուցիչ, որ, այնուամենայնիվ, Շարժման «**անջատում**» պահանջի ուղղությամբ արված կես քայլ կարելի էր դիտել: Իշխանությունների նկատմամբ վստահության հիմքը վերջնականապես փոխարինվեց նրանց նկատմամբ անվստահության հիմքով: Ժողովրդավարության խնդիրներով Շարժման քաղաքական օրակարգի ընդլայնումը կատարվեց պայքարի տեւականության հստակ գիտակցմամբ, ինչի համար պետք էր ստեղծել համալիր քաղաքական ծրագիր, դրա շուրջ համախմբված հզոր կազմակերպական կառույց: Մեկ խնդիր հետապնդող Շարժումը ոտք դրեց որակապես նոր փուլ՝ վերածվելով, բառի ամենալայն իմաստով, ժողովրդավարական շարժման, որպես այդպիսին՝ մարտահրավեր նետելով խորհրդային համակարգի հիմքերին:

14. Ղարաբաղյան շարժումն առաջին կես տարվա ընթացքում, ըստ էության, միայնակ լինելով ԽՍՀՄ ողջ տարածքում եւ Արեւելյան Եւրոպայում, ճանապարհ հարթեց խորհրդային ամբողջատիրության դեմ այլ երկրների ժողովրդավարական շարժումների առաջացման համար եւ հսկայական ազդեցություն թողեց դրանց առաջացման, ծավալման ու հետագա ընթացքի վրա: Կես տարվա ընթացքում Խորհրդային Միության ամբողջատիրական համակարգը Ղարաբաղյան շարժման շնորհիվ ապրեց առաջին լուրջ ցնցումները: Աննախադեպ զանգվածայնությամբ, միաժամանակ՝ համախմբվածության ու կազմակերպվածության բարձր աստիճանով, օրինապահությամբ, ժողովրդավարական խնդիրների օրակարգով եւ պայքարի որդեգրած օրինական ու սահմանադրական ճանապարհով Ղարաբաղյան շարժումը որպես գործոն ճանաչվեց ու անմիջապես հայտնվեց համաշխարհային հանրության ու ժողովրդավարական ուժերի ուշադրության կենտրոնում: Որպես այդպիսին՝ նրա նկատմամբ առաջացած համակրանքը դարձավ նրա կարեւոր հաղթաթուղթը, ապահովության երաշխիքը, որի հզորացումով էին նաեւ էականորեն պայմանավորվելու հետագա հաջողությունները:

Երկրորդ բաժին

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

1. ՇԱՐԺՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ, ՓԱՍՏԱԿԱՆ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

ա) Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) Ծրագիրը

Հունիս-հուլիսյան իրադարձությունները, ըստ էության, սպառեցին Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական-իրավական հարթության վրա՝ վարչական սահմանների փոփոխությամբ լուծելու հնարավորությունը: Դրանով վերջնականապես բյուրեղացավ նաեւ քաղաքական այն եզրահանգումը, որ Ղարաբաղի հարցը, Շարժման օրակարգում միակը մնալով, որեւէ հեռանկար չունի, եթե չխարսխվի արմատական ժողովրդավարական խնդիրների մի համակարգի վրա: Խնդիրն ի սկզբանե հարուցվել էր ոչ թե որպես հողային պահանջատիրության (ինչպես նենգափոխում էին կենտրոնական իշխանությունը եւ Ադրբեջանը), այլ որպես ազգի ազատ ինքնորոշման իրավունքի ժողովրդավարական հարց: Այն հենց այդպես էլ ընկալվում էր դրսում, որտեղ Ղարաբաղյան շարժումն ավելի հաճախ կոչվում էր «Հայկական ժողովրդավարական շարժում»: Այսինքն՝ հետագա պայքարն անհրաժեշտաբար ընդունելու էր ավելի ցայտուն արտահայտված քաղաքական բնույթ, որի ղեկավարումը մայիսի վերջին ստանձնել էր Շարժման վերակազմավորված նոր ղեկավարությունը՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն:

Բայց ղեկավարության փոփոխությունը բավարար չէր: Անհրաժեշտ էր եւս երկու պարագա: Առաջին՝ այդ խնդիրներն ամփոփող եւ համակարգված հստակ քաղաքական ծրագիր, երկրորդ՝ կազմակերպվածության ավելի բարձր մակարդակ՝ ավելի կուռ կազմակերպական կառույց: Կազմակերպական ավելի կուռ կառույց ունենալու անհրաժեշտությունը Շարժման եւ նրա ղեկավարության համար առավել առարկայական պիտի դառնար ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի որոշումից հետո իշխանության սկսած բուռն հարձակումներով: Սակայն արդեն մինչ այդ նոր «Ղարաբաղ» կոմիտեն իր կազմավորումից քիչ անց, հունիսի կեսերից,

սկսել էր համապատասխան քաղաքական ծրագրի եւ Շարժման կառույցի կանոնադրության մշակումը[282]:

Շարժման կազմակերպական կառույցը Կոմիտեի առաջարկով կոչվեց «**Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ)** անունով: Օգոստոսի 19-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ստորագրությամբ հրապարակվեց նրա առաջին ծրագիրն ու կանոնադրությունը[283]: Կոմիտեն պետք է գործեր որպես նախաձեռնող խումբ, ընդուներ համապատասխան դիմումները, գրանցեր շրջանային եւ այլ կազմակերպություններ եւ հանդիսանար համակարգող մարմին՝ մինչեւ կազմակերպության հիմնադիր համագումարի հրավիրումը: Ծրագիրը եւ կանոնադրությունը ընթերցվեց հանրահավաքում, տարածվեց թռուցիկների ձեւով: Պաշտոնական մամուլի որեւէ օրգան, բնականաբար, այն չհրապարակեց:

Գործող Սահմանադրությամբ քաղաքական կազմակերպություն լինելու մենաշնորհը Կոմունիստական կուսակցությանն էր: Սահմանադրությունը թույլատրում էր միայն հասարակական կազմակերպությունների ստեղծում, եւ Հայոց համազգային շարժումը կարող էր գրանցվել միայն որպես այդպիսին[284]: Այդպիսի կառույցի համար շատ կարեւոր հիմք գոյություն ուներ՝ ի դեմս դեռ փետրվարյան օրերին բազմաթիվ հիմնարկներում ու ձեռնարկություններում կազմավորված, հետագայում ավելի տարածված «Ղարաբաղ» ենթակոմիտեների ցանցի: Շարժումը պետք է հասներ իր կազմակերպական կառույցի՝ որպես հասարակական կազմակերպության իրավական ճանաչմանը եւ օրինական գրանցմանը:

---

282 *ՀՀՇ Ծրագրի նախնական տարբերակը կազմվել էր Վազգեն Մանուկյանի, լրացվել ու խմբագրվել Սամվել Գեւորգյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, իսկ վերջնական տեսքի բերվել «Ղարաբաղ» կոմիտեի նիստում:*

283 *Մեքենագիր բնագիրը՝ ՀՀԱՆԱ 15/19.08.88: Նույնությամբ հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ», փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 2016, էջ 11-24:*

284 *Խորհրդային իրականության մեջ կային սահմանափակ թվով ու բնույթի հասարակական կազմակերպություններ, որոնք կոմկուսի համար օժանդակող դեր էին խաղում տվյալ բնագավառում գաղափարախոսական վերահսկողության իրականացման համար: Վերակառուցման շրջանում այս շրջանակներից դուրս այլ հասարակական կազմակերպությունների գրանցման հնարավորություն էր տրվել: Դա որոշակի կարգավիճակ էր, որը ոչ միայն ապահովում էր որոշակի պաշտպանվածություն, այլեւ օրենքով սահմանված էական իրավունքներ: Դեռ փետրվարի վերջին օրերին «կազմկոմիտեն» դիմել էր ՀԽՍՀ ԳԽ՝ որպես հասարակական կազմակերպություն գրանցվելու համար, ինչն այդպես էլ տեղի չունեցավ:*

Հայոց համազգային շարժման Ծրագիրը ԽՍՀՄ-ում սկիզբ առնող ժողովրդավարական շարժումների հիմնադիր փաստաթղթերի մեջ առաջիններից մեկն էր[285], իր հարցադրումների արմատականությամբ, ժողովրդավարական խնդիրներով ու համակարգվածությամբ՝ անվիճելիորեն առաջինն ու առաջատարը:

Ծրագրի ներածական մասն արձանագրում էր առկա իրավիճակը, Շարժման օրակարգում նոր խնդիրներ ընդգրկելու եւ կազմակերպական կառույց ստեղծելու անհրաժեշտությունը հիմնավորում հետեւյալ կերպ. Ղարաբաղյան շարժումն առաջացել է որպես հետեւանք այն բանի, որ Խորհրդային Միությունը չի ապահովել իր կազմի մեջ մտնող հայ ժողովրդի իրավունքների, մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը: Ղարաբաղյան շարժումը, ունենալով հանդերձ հիմնական, այն է՝ Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի իրականացման խնդիր, «բնական եղանակով իր մեջ ընդգրկել էր նաեւ հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր գլխավոր հարցերը»: Ղարաբաղի հարցը պարզապես առիթ դարձավ ժողովրդի զարթոնքի համար, որից հետո այն «սկսում է ավելի սուր զգալ նաեւ իր մյուս չլուծված խնդիրների ցավը, հասկանալ, որ այդ խնդիրները կազմում են մի շղթա, եւ դրանցից յուրաքանչյուրի լուծումը պայման է ստեղծում առաջխաղացում կատարելու մյուս խնդիրների լուծման ուղղությամբ»[286]:

Իսկ կազմակերպական կառույցի ստեղծման անհրաժեշտությունը Ծրագիրը հիմնավորում է հետեւյալ կերպ. «Շարժման շրջանակների լայնացումը, նրանում նորանոր խնդիրների ընդգրկումը, ինչպես եւ բազմաթիվ մարդկանց գործուն մասնակցություն ունենալու պատրաստակամությունը մեզ բերել է այն համոզման, որ անհրաժեշտ է Շարժմանը տալ կազմակերպական ավելի հստակ ձեւ»: Կազմակերպության համար առաջարկելով հանդերձ **«Հայոց համազգային շարժում»** անվանումը՝ զուգահեռաբար,

---

285 *Էստոնիայի ժողովրդական ճակատի ծրագրային փաստաթղթերը հրապարակվեցին նույն օրերին՝ «Ընդհանուր ծրագիրը»՝ օգոստոսի 19-ին, եւ «Հիմնական փաստաթուղթը» սեպտեմբերին (Общая программа Народного фронта Эстонии, «Молодежь Эстонии» 19.08.1988, Основной документ Народного фронта Эстонии, 06.09.1988):*

286 *Ղարաբաղյան շարժումն իր հսկայական հասարակական հնչեղությամբ շատ արագ իր մեջ ներառեց մինչ այդ արդեն ձեւավորված բնապահպանական շարժումը, հայոց լեզվի եւ այլ խնդիրներով սկսված շարժումները, ուստիեւ նրանց հետապնդած հիմնական խնդիրները եւս ներառվեցին ՀՀՇ Ծրագրում:*

մինչեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը, պետք է պահպանվեր նաեւ «**Ղարաբաղյան շարժում**» անունը, ինչը ցույց էր տալիս, թե, այնուամենայնիվ, որն էր լինելու գլխավոր հարցը: Բնականաբար, դա հստակ արձանագրված է նաեւ Ծրագրում. «Մեր շարժման առաջնահերթ նպատակը եղել եւ մնում է Արցախի եւ Հայաստանի վերամիավորումը, որի իրականացումը սերտորեն կապված է հայ ժողովրդի մյուս չլուծված խնդիրների հետ»:

Քաղաքական-բովանդակային առումով պետք է առանձնացնել Ծրագրի երեք հատկանիշ:

Առաջին. Ֆորմալ առումով, իր ամբողջության մեջ այն տեղավորվում էր «Վերակառուցման» հռչակված (բայց չիրականացվող) սկզբունքների եւ գաղափարների մեջ, ուստիեւ՝ չէր կարող ծայրահեղականության կամ անօրինականության մեղադրանք առաջացնել: Բայց նաեւ, իր հիմնական ժողովրդավարական դրույթներով, այն գոյություն ունեցող համակարգին եւ իշխող Կոմունիստական կուսակցությանը արմատական քաղաքական ընդդիմություն, այլընտրանք լինելու ամենալուրջ հայտն էր ներկայացնում:

«Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները» բաժնի առաջին կետը հռչակում էր. «Անժխտելի է, որ հայերը, ինչպես ամեն մի ազգ, լավագույն ձեւով կարող են դրսեւորել իրենց ընդունակությունները եւ նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ ապրելով ազատ ժողովրդավարության պայմաններում, առանց արտաքին ճնշման, ինքնուրույն որոշելով իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքի ձեւերը: Ակնհայտ է նաեւ, որ միայն այդպիսի պայմաններում է հնարավոր պահպանել յուրաքանչյուր անհատի՝ ի ծնե տրված իրավունքները...»:

Ծրագիրը ձեւական իմաստով դեռեւս անկախության հարց չէր դնում, ավելի ճիշտ՝ դրանում չէր օգտագործվում **անկախություն** բառը. դրա համար պատրաստ չէին ո՛չ Շարժման մասնակիցները, ո՛չ էլ իրավիճակն էր անհրաժեշտ չափով հասունացել: Սակայն «Գաղափարական սկզբունքները» բաժնի վերոբերյալ առաջին կետն ինքնին անկախության գաղափարի արձանագրումն էր, իսկ դրանից բխող «մոտակա նպատակները»՝ նույն անկախության բովանդակությունը. տնտեսական ինքնուրույնություն, ազգային զորամիավորումների վերականգնում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում եւ հյուպատոսությունների փոխանակում այն երկրների հետ, որոնք ունեն մեծ հայկական համայնքներ եւ այլն:

Ծրագիրը որպես պետական կազմավորման գերագույն իշխանություն հռչակում էր **ժողովրդի կամքը**, ինչը պետք է առարկայանար համաժողովրդական հանրաքվեներով եւ ազատ ընտրությունների միջոցով ձեւավորված իշխանության մարմինների միջոցով. սա ժողովրդավարության ընդունված եւ հանրահայտ նորմ էր: Այսինքն՝ իշխանության (կամ իշխանափոխության) հարց նույնպես չէր դրվում, սակայն եղած օրենքների ընձեռած հնարավորություններով խնդիր էր դրվում ունենալ իրոք ընտրված, օրինակարգ իշխանություն, որը կկատարի ժողովրդի կամքը: Հակառակ դեպքում **իշխանափոխության** (կոմկուսից իշխանությունը վերցնելու) հարցը հասարակական գիտակցության մեջ եւ գործնականում կծագեր ինքնին:

Եւ վերջապես, բոլոր, այդ թվում նաեւ հիմնական՝ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը հնարավոր էր համարվում, առաջին հերթին, ժողովրդավարության խորացման հիմքի վրա. «Նպաստել ժողովրդավարության խորացմանը մեր երկրում՝ ելնելով ժողովրդի շահերից եւ գիտակցելով, որ միայն ժողովրդավարության պայմաններում է հնարավոր լուծել այն խնդիրները, որոնք դրված են Հայոց համազգային շարժման առջեւ[287]»:

Ձեւական իմաստով տեղավորվելով հանդերձ «Վերակառուցման» կարգախոսների շրջանակներում եւ իրավական առումով չհակասելով որեւէ օրենքի՝ Հայոց համազգային շարժման ծրագիրը հստակ ուղղված էր խորհրդային 70-ամյա ռեժիմի քաղաքական հիմքերի դեմ: Որեւէ փաստաթուղթ ինքնին, միայն իր բովանդակությամբ չի կարող վտանգավոր լինել որեւէ համակարգի համար. խորհրդային համակարգի համար ՀՀՇ ծրագրի վտանգը առարկայական էր նրանով, որ այն իր հետեւում ուներ ոտքի կանգնած մի ամբողջ ժողովուրդ՝ իր պայքարի հարաճուն միջազգային հնչեղությամբ եւ հեղինակությամբ:

Երկրորդ. Ծրագիրը որդեգրում էր սկզբունքներ, որոնք կտրուկ հակադրվում էին հայ հասարակական-քաղաքական մտքի մի քանի հարյուրամյա հնության պատկերացումներին ու կարծրատիպերին, դրանց հիմքում սրբագործված արժեքային համակարգին:

19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի տասնամյակներում ազատորեն գործած ավանդական պատկերացումները եւ չափորոշիչները «ստերիլ» վիճակում պահպանվել էին Սփյուռքում, իսկ Հայաստանում խորհրդային տարիներին չէին վերացել, այլ ձեւափոխվել, հարմարեցվել էին

[287] *Ծրագրի «մոտակա նպատակները» բաժնում արձանագրված մյուս խնդիրներն էին. որպես պետական լեզու՝ հայոց լեզվի եւ հայկական կրթության հարցը, բնապահպանության ասպարեզում կենսոլորտի մաքրության պահպանումը, մասնավորապես՝ ատոմակայանի եւ «Նաիրիտի» փակումը, եկեղեցու ազատ գործունեությունը, պատմական տեղանունների վերականգնումը եւ այլն:*

համակարգին: Խոսքը վերաբերում է այն միջոցներին եւ երաշխիքներին, որոնք տվյալ ժողովուրդը տեսնում է իր ներկայի ապահովման, խնդիրների լուծման, հարատեւման եւ ապագայի համար:

Ըստ հայ հասարակական-քաղաքական մտքի հաղորդած ժառանգության՝ հայ ժողովրդի գոյատեւումը եւ «ազգային հարցերի» լուծումը հնարավոր էր միայն **արտաքին որեւէ ուժի** միջոցով: Դրա խորհրդային տարբերակը հնչում էր այսպես. Ռուսաստանը մեր մշտական բարեկամն է («հավերժ Ռուսաստանի հետ»), իսկ Թուրքիան՝ մեր մշտական թշնամին: Դրանց դեմ ՀՀՇ Ծրագիրն արձանագրում էր այս ամենը հիմնավորապես ժխտող դրույթներ. «Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս **պետք է ապավինի իր ուժերին**, հույս չդնի ուրիշի հովանավորության վրա: Ամեն մի հակառակ պնդում ժխտվում է պատմական փորձով եւ ծառայում է մեր ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու գործին: **Ստրկամտության արտահայտություն է նաեւ այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ եւ մշտական թշնամի**»:

Հայ քաղաքական մտքի ժառանգություն հանդիսացող երկրորդ դրույթն այն պատկերացումն էր, ըստ որի՝ որեւէ ազգի անընդհատ հավատարմություն հայտնելը դիվանագիտություն է, եւ որ կրոնական նույնությունն ու տարբերությունն արդեն բավարար հիմք են տվյալ ժողովրդի կամ պետության հետ հարաբերությունների բնույթը որոշելու համար: ՀՀՇ Ծրագիրը կտրուկ մերժում էր այդ հիմքը. «Մենք մերժում ենք անբարոյական եւ մեր ազգի համար անպտուղ այն քաղաքականությունը, որը, մի կողմից, իբրեւ «դիվանագիտություն»՝ ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ եւ համաժողովրդական քծնանք այլ ժողովուրդների նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել ուրիշ ժողովուրդների կամ կրոնների դեմ: Մեր Շարժումն ուղղված չէ որեւէ ժողովրդի դեմ: Մեր սկզբունքն է՝ **խաղաղ եւ համերաշխ ապրել հարեւան բոլոր ժողովուրդների հետ**: Բայց մենք համոզված ենք, որ խաղաղությունը եւ համերաշխությունն ամուր են լինում միայն այն դեպքում, երբ հիմնվում են արդարության վրա, երբ չեն ոտնահարվում որեւէ ժողովրդի իրավունքները»:

Ավանդական քաղաքական ընկալումների հիմքում ամուր նստած երրորդ հիմքը, որ սերտորեն կապված էր առաջին երկուսի հետ, վերաբերում էր այն պատկերացմանը, որ մեր անհաջողությունների պատճառն **աշխարհագրական դիրքն** է, կամ, որ՝ մեր անհաջողությունների համար պատասխանատու են միայն ուրիշները: Այս պատկերացումը, բացի «հավերժական բարեկամ» ունենալու անհրաժեշտության եւ անկախ ապրելու անհնարինության

հիմնավորում լինելուց, վտանգավոր էր նաեւ նրանով, որ անզորության զգացում առաջացնելով՝ կարող էր նպաստել «անհեռանկար» ու «վտանգավոր» երկիրը լքելուն: Սրան հակադրվող սկզբունքը ՀՀՇ Ծրագրում ձեւակերպված էր այսպես. «Ժողովրդի պատմության մեջ արտաքին գործոնները, անշուշտ, կարեւոր դեր են խաղում, բայց վտանգավոր է, որ ժողովուրդն իր հաջողությունների ու անհաջողությունների պատճառը միայն իրենց դուրս է որոնում: Դա կազմալուծում է նրան եւ տանում ազգային ինքնավերացման: Անբարենպաստ պայմանները, արտաքին ճնշումը ժողովրդին կարող են ստիպել դիմելու նահանջի, բայց այն ազգերը, որոնք իրենց մեջ ապագայի նկատմամբ հավատ, բարոյական եւ հոգեկան ուժ են պահպանում եւ դրանք դրսեւորում վճռական պահերին, ոչ միայն ապահովում են իրենց ազգային գոյությունը, այլեւ հասնում են իրենց իղձերի իրականացմանը»:

Կեղծ ազգայնականների կողմից տարածված եւ հատկապես հետագայում թմբկահարվում էր այն մեղադրանքը, թե ՀՀՇ-ն անտեսում էր Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Մինչդեռ՝ «մոտակա նպատակների» մեջ Ծրագիրը առաջնահերթ խնդիրների շարքում արձանագրում էր. «Հասնել այն բանին, որ Հայկական ՍՍՀ եւ ՍՍՀՄ Գերագույն սովետներն ընդունեն 1915թ. հայերի ցեղասպանության փաստը եւ դիմեն Միացյալ Ազգերի Կազմակերպությանը՝ այդ փաստը ճանաչելու պահանջով: Ապրիլի 24-ը Հայաստանում հայտարարել Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր՝ այն համարելով ոչ աշխատանքային: Մշտապես առաջ քաշել պատմականորեն Հայաստանի մաս կազմող, ինչպես նաեւ միջազգային փաստաթղթերով հայկական ճանաչված տարածքների վերամիավորման պահանջ, գիտակցելով, որ այդ պահանջի իրականացումը հնարավոր է միայն այնպիսի ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ, որը հիմնված է մեր շարժման գաղափարական սկզբունքների վրա»[288]:

ՀՀՇ ծրագրում ընդգրկված էին նաեւ խնդիրներ, որոնք իրենց հետ բերել էին Ղարաբաղյան շարժմանը միացած՝ բնապահպանական, հայոց լեզվի համար պայքարող շարժումները եւ այլն:

ՀՀՇ Ծրագիրը համարձակ մարտահրավեր էր հայ հասարակության մեջ արմատավորված, ավանդական պատկերացումներին ու դրանց գաղափարական հիմքերին, այն իր ամբողջության մեջ ավանդական քաղաքական մտածողության եւ արժեքային համակարգի մերժում էր եւ իրական հե-

[288] *ՀՀՇ-ն, իր ծրագրի հրապարակումից երեք ամիս անց, առաջինը հասավ հենց ՀԽՍՀ ԳԽ կողմից Ցեղասպանության դատապարտման որոշման ընդունմանը:*

ղափոխություն[289]: Ուստիեւ վտանգը, որ դրա պատճառով շատերը կարող են երես թեքել Շարժումից, ավելի քան իրական էր: Դարերով սրբագործված տաբուներին, ինքնության առանցք համարվող ու ազգային ամենանուրբ զգացումների հիմքում դրված հիմնադրույթներին, անքնին եւ անփոփոխելի ճշմարտություններ համարվող գաղափարներին հակադրվելը քաղաքական խիզախություն էր պահանջում, առաջին հերթին: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, ունեցավ ինչպես խորհրդային քաղաքական համակարգին, այնպես էլ ազգային ավանդական պատկերացումներին հակադրվելու խիզախությունը: Անշուշտ, դա ո՛չ ինքնանպատակ էր, ո՛չ քմահաճույք, ո՛չ էլ ցուցամոլության համար: Դա բխում էր Ղարաբաղի խնդրի հետապնդման գործնական անհրաժեշտությունից. սպասվում էր տեւական եւ իրական քաղաքական պայքար, ինչը անհնար էր վարել նման պայքարին հակացուցված կեղծ-քաղաքական պատկերացումներ ունեցող զանգվածներ առաջնորդելով: Հաջողության գրավականը հասարակությանը իրական քաղաքական հասկացություններով իրական քաղաքական պատկերացումներ տալն էր ու դրանցով առաջնորդվելը: Կոմիտեն, մի կողմից՝ իր ամենօրյա պայքարի ոգեշնչող գործնական արդյունքներով, մյուս կողմից՝ հրապարակը քաղաքական կրթության բաց համալսարան դարձնելով՝ հետեւողականորեն պիտի կարողանար փոխել լայն զանգվածների մտածողությունը եւ պատկերացումները:

Երրորդ. ՀՀՇ Ծրագիրը նախատեսում էր պայքարը շարունակել միայն սահմանադրական մեթոդներով. «Լիովին օգտվել գործող Սահմանադրությամբ քաղաքացիներին տրված իրավունքներից, այն է՝ ակտիվորեն մասնակցել պետական եւ հասարակական մարմինների բոլոր կարգի ընտրություններին, հասնելով այն բանին, որ այդ ընտրություններում արտահայտվի ժողովրդի իրական կամքը, ետ կանչել այդ կամքը չկատարող կամ արհամարհող դեպուտատներին, անհրաժեշտության դեպքում ժողովրդի

289 *Խոսքն այն մասին չէ, թե այդ գաղափարներն ու ծրագրային դրույթները նորություն էին ընդհանրապես: Դրանք քաղաքակիրթ աշխարհում վաղուց հայտնի ու ընդունված չափորոշիչներ եւ ճշմարտություններ էին: Ավելին՝ նաեւ հայ իրականության մեջ կարելի էր դրանք գտնել տարբեր ժամանակների ու գործիչների մոտ: Խոսքն այն մասին է, որ դրանք քաղաքական ծրագրի, առավել եւս՝ գործողության մեջ դրված քաղաքական ծրագրի տեսքով երբեւէ չէին համակարգվել, ժողովրդին երբեւէ չէին մատուցվել, գործողության մեջ չէին դրվել, իսկ «հեղափոխական» եւ «ազգային» գաղափարախոսություններն ամուր շրջափակել էին ժողովրդին՝ դրանց հետ չհաղորդակցվելու համար:*

ձայնը լսելի դարձնել միտինգների, ցույցերի ու գործադուլների միջոցով»: Սահմանադրական եւ օրինականության շրջանակներում պայքարելը, սակայն, չէր նշանակում համակերպվել գործող օրենքների ոչ ժողովրդավարական նորմերի հետ, այլ նաեւ՝ «Հասնել գործող Սահմանադրության այն հոդվածների վերանայմանը, որոնք կաշկանդում են ժողովրդավարությունը, եւ մտցնել նոր հոդվածներ, որոնք համապատասխանում են ժողովրդավարության սկզբունքներին»: Ժողովրդի կամքը կատարելու ուղղությամբ գործնական հաջողություններ Շարժումն արդեն իսկ արձանագրել էր՝ ի դեմս հանրապետության ԳԽ-ի հունիսի 15-ի որոշման: Իսկ շուտով նա կարողանալու էր ե՛ւ «ժողովրդի կամքը չկատարող» պատգամավորներ ետ կանչել, ե՛ւ իր թեկնածուներին ընտրել Գերագույն խորհրդում, ե՛ւ սեփական նախաձեռնությամբ ԳԽ նստաշրջան հրավիրել ու որոշումներ ընդունել:

Կազմակերպական կառույցի սկզբունքները համապատասխանում էին ինչպես առաջադրված խնդիրներին, այնպես էլ Շարժման ծավալին ու բնույթին. «Մենք կարծում ենք, որ ճիշտ չէ ժողովրդական լայն շարժումը դնել մեկընդմիշտ որոշված կաղապարի մեջ: Իր կառուցվածքով մեր կազմակերպությունը պետք է լինի մի կենդանի մարմին, որը կզարգանա ու կփոփոխվի իր գործունեության ընթացքում՝ առաջացող խնդիրների լուծման տրամաբանությամբ»: Կազմակերպության անդամների համար կանոնադրական պարտավորություններ չէր նախատեսվում, յուրաքանչյուրն ինքն էր որոշում իր մասնակցության ձեւն ու չափը: Կազմակերպությունը ենթադրում էր կոլեկտիվ անդամություն՝ ըստ հիմնարկ-ձեռնարկությունների. եթե վերջիններիս աշխատողները ընդհանուր ժողովում ընդունում էին Հայոց համազգային շարժման սկզբունքները, նպատակներն ու գործելակերպը, ապա համապատասխան որոշումը ներկայացնում էին «Ղարաբաղ» կոմիտեին եւ դառնում կազմակերպության կոլեկտիվ անդամ: «Ղարաբաղ» կոմիտեն պետք է ղեկավարեր կազմակերպությունը մինչեւ նրա հիմնադիր համագումարը:

Որպես նախաձեռնող խումբ՝ «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամների ստորագրությամբ սեպտեմբերի 13-ին դիմում հղվեց ՀԽՍՀ ԳԽ նախագահությանը՝ «Հայոց համազգային շարժում» հասարակական կազմակերպությունը գրանցելու համար: Դիմումն, իհարկե, մնաց անհետեւանք եւ անպատասխան:

* * *

ՀՀՇ Ծրագիրն էականորեն տարբերվում էր Խորհրդային Միությունում նոր միայն ծայր առնող, այդ թվում՝ նաեւ Մերձբալթյան երկրների

շարժումների ծրագրերից, եւ բարձր գնահատվեց ԽՍՀՄ-ում տեղի ունեցող հասարակական գործընթացներին ակնդետ հետեւող միջազգային քաղաքական-փորձագիտական մտքի կողմից: Այդօրինակ գնահատականներից հիշատակենք միայն մեկը: Ֆրանսիացի հայտնի վերլուծաբան-քաղաքագետ Ֆ. Ռ. Մերսյեն ԽՍՀՄ-ում ընթացող քաղաքական գործընթացների մասին 1989 թ. հրապարակած մոտ 100 էջանոց վերլուծության մեծ մասը նվիրում է Հայկական ժողովրդավարական շարժմանը, իսկ դրա ավելի քան 10 էջը (ըստ հայերեն թարգմանության՝ էջ 64-75)՝ Հայոց համազգային շարժման այս Ծրագրի՝ որպես կարեւորագույն փաստաթղթի մանրակրկիտ ներկայացմանը: Ելնելով փաստաթղթի հիմնական դրույթներից՝ ֆրանսիացի վերլուծաբանն այն համարում էր ամբողջությամբ ժողովրդավարական ծրագիր. «**Հայերի շարժման կարեւոր, հիմնական խնդիրը հանդիսանում է ժողովրդավարությունը**: Դա է համարվում հիմնական հարցը, որի հիման վրա կարող են լուծվել մնացած բոլոր հարցերը»: Նա անգամ համարում էր, որ կազմակերպության անվան մեջ «ազգային» բառը բնորոշում է Շարժման հենց ժողովրդավարական բնույթը եւ չի նշանակում զուտ հայկական շարժում: Ապա արձանագրում է, որ Ծրագրում հստակորեն տարբերակված է ազգը պետությունից, մերժվում է ազգայնականությունը, եւ որ՝ «այստեղ արտահայտված է հայերի ինտերնացիոնալիստական կամքը»[290]:

Հայոց համազգային շարժման ծրագիրը հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող, գործողության մեջ դրված առաջին քաղաքական ծրագիրն էր, որ կազմվել էր ոչ թե դրսում, այլ Հայաստանում:

Այս փաստաթուղթը վերջին դարերի հայ իրականության մեջ հայ քաղաքական մտքի բարձրակետն էր ոչ միայն իր փիլիսոփայությամբ, այլ նաեւ քաղաքական որակով[291]:

---

[290] ***Mercier P. R.*** *Aspects des luttes sociales en U.R.S.S., Paris, 1989 (Մերսյե Ֆ., Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, Փարիզ, 1989): Օգտվում ենք հայերեն ձեռագիր թարգմանությունից (որ նույն թվականին իրականացրեց Մատենադարանի աշխատակից Ամալյա Շահումյանը) եւ հղում ենք թարգմանության էջերը, ՀՀԱՆԱ, 15/01.03. 89, էջ (64-66):*

[291] *Քաղաքական ծրագրի որակը դրա իրատեսականությունն ու կատարելիությունն է: ՀՀՇ ծրագիրն ավելի ուշ դրվեց Հայաստանի անկախության մասին հռչակագրի, ապա եւ առաջին Սահմանադրության հիմքում: Դա հայ իրականության մեջ միակ քաղաքական ծրագիրն է, որին վիճակված էր ընդամենը 10 տարվա ընթացքում իրականություն դառնալ իր բոլոր կետերով:*

* * *

Հայոց համազգային շարժման ծրագրի հրապարակումը նշանակում էր ձեռնոց նետել խորհրդային ողջ համակարգին: Դա նույն կերպ նշանակում էր ձեռնոց նետել նաեւ հայ հասարակության մեջ ծանր ինքնցիայով նստած հայդատական ավանդական, սրբագործված պատկերացումներին ու դրանք կրող ուժերին, հասարակական խմբերին ու խավերին: Ուստիեւ՝ Շարժումը, ի դեմս իր որդեգրած քաղաքական ծրագրի եւ գործելակերպի, պետք է ունենար երեք քաղաքական հակառակորդ կամ պայքարի երեք ճակատ.

- ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունը.
- Հայաստանում՝ հանրապետական իշխանությունը եւ խորհրդային համակարգից սնվող կուսակցական պաշտոնեությունը, նոմենկլատուրային մտավորականությունը եւ նույն համակարգին հարմարված քաղքենիությունը.
- Սփյուռքում՝ պահանջատիրական գաղափարներ կրող կուսակցությունները, դրա վրա հիմնված յուրատեսակ «հայրենասիրության» ինդուստրիայի շահառուներն ընդհանրապես:

բ) Իշխանության կազմակերպական հակազդեցությունը

Ինչպես ցույց են տալիս հավաստի աղբյուրներն ու իրողությունները, իշխանությունը Շարժման հրապարակված Ծրագրից ահաբեկվել ու խուճապի էր մատնվել շատ ավելի, քան մինչ այդ որեւէ ամենաբազմամարդ հանրահավաքի, ամենաընդգրկուն գործադուլի, նստացույցի, հացադուլի փաստից կամ հեռանկարից: Այդ է վկայում անմիջապես հաջորդ օրերին հանրապետական ՊԱԿ-ից ՀԿԿ ԿԿ-ի ստացած մանրակրկիտ զեկուցագիրը, որ ՀՀՇ Ծրագրի վերլուծությունն է եւ դրա դեմ պայքարելու միջոցների ու ձեւերի՝ հապշտապ արված առաջարկություններ: Եւրոպացի վերլուծաբանների համեմատ՝ այստեղ, բնականաբար, բոլորովին այլ են գնահատականներն ու եզրահանգումները. Ծրագիրը համարվում է «Ղարաբաղ» կոմիտեի **ազգայնական ձգտումների** արտահայտություն, որը նեղ ազգային շահերը հակադրում է համապետական խնդիրներին եւ տանում է դեպի ազգային մեկուսացում: Սեփական ուժերի վրա հենվելու, մշտական բարեկամի եւ մշտական թշնամու թեզի մերժման դրույթները ստանում են **«հակառուսական»** որակավորում: Այսպիսին են գնահատվում նաեւ հայոց լեզվին վերաբերող դրույթները, որի տակ ռուսական դպրոցների դեմ վտանգ էր նկատվում:

Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի հետ կապված խնդիրների մեջ ՊԱԿ-ը մերձեցում էր տեսնում դաշնակցական գաղափարախոսության հետ[292]: Իսկ հանրապետության ինքնիշխանության ընդարձակմանը վերաբերող դրույթներում կապ էր նկատում Էստոնիայի Ժողովրդական ճակատի ծրագրերի հետ:

Հետաքրքիր է, որ ՊԱԿ-ը իր զարմանքն է հայտնում այն առիթով, որ այս փաստաթղթի հեղինակները այն գաղտնի չեն պահում լայն զանգվածներից, ընդհակառակը՝ դրան ժողովրդականություն տալու համար այն կարդում են հանրահավաքներում, կախում ձեռնարկություններում եւ այլն: Ջեկուցագրի հեղինակի եզրահանգմամբ՝ դա այլ բան չէ, քան **«իշխանության ձգտելու»** ծրագիր, ուստի եւ դրա դեմ պայքարելու համար անում է հետեւյալ չափազանց հետաքրքիր առաջարկները.

1. «ՀԿԿ ԿԿ-ին կից ստեղծել բարձրակարգ մասնագետների (պատմաբաններ, իրավաբաններ եւ այլն) խումբ, որը կարճ ժամկետում կնախապատրաստի հակափաստարկներ՝ Ծրագրում շարադրված բոլոր անընդունելի դրույթների համար:
2. Մամուլում եւ հեռուստատեսությամբ պարբերաբար քննադատել Ծրագրի դրույթները՝ կապելով դրանք հանրահավաքներում հնչող ելույթների նույնօրինակ մտքերի հետ:
3. Արդեն այժմ հարձակողական քննադատության ենթարկել Ծրագիրը կուսակցամակերպությունների հաշվետու-ընտրական ժողովներում, այսինքն՝ ակտիվացնել աշխատանքը աշխատավորական կոլեկտիվներում:
4. Մտածել **ՀԿԿ ԿԿ-ի հովանու տակ այլընտրանքային կազմակերպություն** ստեղծելու հնարավորության մասին, որն իր առջեւ կդնի վերակառուցմանն օժանդակելու, բարեգործության, մանկատների նկատմամբ հոգատարության, բնապահպանական եւ այլ խնդիրներ: Այդ կազմակերպությունը կարելի է կոչել Խաչատուր Աբովյանի անունով»[293]:

[292] *Սա խոսուն մի վկայություն այն բանի, թե երբեմն որքան մակերեսորեն էին ընկալում եւ հասկանում խորհրդային անգամ բարձրաստիճան պաշտոնյաները քաղաքական փաստաթղթերը եւ երեւույթները: Իրականում, որպես ամբողջական քաղաքական փաստաթուղթ, ՀՀՇ ծրագիրն, անգամ իր այս՝ նախնական տարբերակով, Դաշնակցության ծրագրի գաղափարական ճիշտ հակապատկերն էր: Ինքը Դաշնակցությունը դա շատ լավ հասկացավ եւ անմիջապես ՀՀՇ Ծրագրի դեմ անզիջում պայքար սկսեց:*

[293] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.15. թ.120-122:*

Սակայն ՀԿԿ ԿԿ-ը ՊԱԿ-ի արված ոչ բոլոր առաջարկներից օգտվեց: Մասնավորապես՝ խոհեմաբար ձեռնպահ մնաց ՀՀՇ Ծրագրի հրապարակային քննադատությունից: Դրանով, մի կողմից՝ խուսափեց Ծրագրի դրույթները տարածելուց (հերքելու համար դրանք՝ պետք կլիներ նախ ներկայացնել), մյուս կողմից՝ անշուշտ, որոշակի դեր էր խաղացել արդեն եղած փորձի վրա հենված այն մտավախությունը, որ հրապարակային քննադատությունները ջախջախիչ հակահարված կստանային հանրահավաքներում եւ պատասխան թռուցիկներում: Այսինքն՝ հրապարակային քննադատությունը իշխանության եւ կուսակցական մարմինների ու պաշտոնյաների կողմից կարող էր տրամագծորեն հակառակ արդյունքի հանգեցնել, եւ իշխանությունը չգնաց այդ ռիսկին:

Ծրագրի գրավոր եւ հրապարակային քննադատությունը առայժմ իր վրա վերցրեց (կամ այն հանձնարարվեց)՝ Հայաստանում՝ նոմենկլատուրային մտավորականությանը, արտասահմանում՝ ՀՅԴ մամուլին:

Սակայն ՊԱԿ-ի վերոբերյալ առաջարկություններից վերջինը (**ՀԿԿ ԿԿ-ի հովանու տակ այլընտրանքային կազմակերպություն** ստեղծելու մասին) իրականացնելու համար կենտկոմը միջոցառումներ ձեռնարկեց անմիջապես, եւ ստեղծեց ոչ թե մեկը, այլ՝ երկուսը[294]: Սույն գրությունը ստանալուց հետո ընդամենը չորս օրվա ընթացքում կենտկոմի չորս բաժինների վարիչներ այդ մասին սեպտեմբերի 16-ին առաջին քարտուղարին զեկուցում են.

«Այսպես կոչված Հայոց համազգային շարժման ծրագրում շարադրված դրույթները ԿԿ-ի բաժինները համարում են անընդունելի: Նախաձեռնող խումբ է կազմվել «Հայկական ԽՍՀ վերակառուցմանը սատարող **ժողովրդական ճակատ** ստեղծելու համար»: Այս խմբի փաստաթղթերի նախագծերի դրույթները քննարկման փուլում են: Նախապատրաստված է ՀԿԿ ԿԿ-ի գրություն՝ կոնկրետ առաջարկություններով եւ դիտողություններով»[295]:

Հասկանալի է, որ Հայոց համազգային շարժմանն այլընտրանքային կազմակերպություն ստեղծելու համար անիմաստ էր նոր մարդիկ փնտրել, դրանք պետք է լինեին Շարժման ընթացքում արդեն հայտնի անհատներ: Ընտրությունը կանգ էր առել Շարժման առաջին ղեկավարության մաս կազմող, նոմենկլատուրային մտավորականների հենց այն խմբի՝ «Ավագների խորհրդի» վրա, որոնք գժտվել էին «Ղարաբաղ» կոմիտեի, ավելի ճիշտ՝

[294] *Հիշենք, որ ՊԱԿ-ի գեներալ Կալուգինը սա համարում էր այդ կազմակերպության աշխատանքի հիմնական մեթոդներից մեկը:*

[295] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.15. էջ 123:*

Շարժման հետ[296]: Ս. Կապուտիկյանն, օրինակ, իր վրդովմունքն էր հայտնում, որ «Ղարաբաղ» կոմիտեի կազմից դուրս մնացին Շարժման սկզբնավորողները, եւ «ասպարեզ եկան նոր գործիչներ, ու նրանց մեջ այնպիսիները, որ ունեն որոշակի համոզմունքներ, եւ նպատակասլաց գործողություն ծավալեցին Շարժումն իրենց համոզմունքների համաձայն առաջ տանելու համար... ես որոշակի առարկություններ ունեմ Ղարաբաղյան շարժման այս կարգի ուղղվածության դեմ եւ գտնում եմ, որ դա մեր ժողովրդի ճակատագրի համար ոչ միայն վնասակար է, այլեւ կործանարար»[297]: Վերջիններս ակտիվ պայքարից հրաժարվելու, մասնավորապես՝ գործադուլների դեմ քարոզչության պատճառով Շարժման մեջ կորցրել էին իրենց հեղինակությունը, այնքան, որ սեպտեմբերյան հանրահավաքներից մեկում ելույթ ունենալու՝ Ս. Կապուտիկյանի համառ փորձը հանդիպեց լսարանի ընդդիմացմանը, չնայած՝ «Ղարաբաղ» կոմիտեն նրան հարգալից ու պատրաստակամորեն տրամադրեց խոսափողը[298]: Շարժման առաջին ամիսներին հաճախ թելադրող հանդիսացող այս խումբն իր դիրքերը կորցնելուց հետո

[296] *«Ավագների խորհուրդը» փետրվարյան հանրահավաքների առաջին իսկ օրերին մտահղացվել եւ ստեղծվել էր Շարժման ղեկավարների համար ապահովական նկատառումներով: «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն» նրանց հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունների պայմաններում, բնականաբար, պիտի հրաժարվեր պաշտպանվածություն այս «մեխանիզմից»:*

[297] *Տե՛ս **Կապուտիկյան Ս.**, էջեր փակ գզրոցներից, էջ 390 (հարցազրույց 1988-ի հոկտեմբերի 4-ին): Մի քիչ տարօրինակ է Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին ուղղված՝ «որոշակի համոզմունքներ ունենալու» մեղադրանքը. մի ամբողջ Շարժում ղեկավարողները ինչպ՞ես կարող էին որոշակի համոզմունքներ չունենալ: Եւ, եթե մարդիկ դարձել են Շարժման ղեկավարներ, ուրիշ ո՞ւմ համոզմունքներով պիտի առաջ տանեին Շարժումը, եթե ոչ իրենց: Հետագայում (արդեն 1996թ.) Ս. Կապուտիկյանը ակամա մի կարեւոր խոստովանություն է անում. «Քանի որ հիմա է պարզ դառնում **գորբաչովյան բազմերեսության** աստիճանը...» (տե՛ս **Կապուտիկյան Ս.**, էջեր փակ գզրոցներից, էջ 408): Սա այլ բան չէ, քան հետին թվով իրողության գիտակցում եւ արձանագրում՝ այն իրողության, որը ժամանակին գիտակցել էր «Ղարաբաղ» կոմիտեն: Ստացվում է, որ Ս. Կապուտիկյանի ղեկավարած մտավորականության այս խավի ամբողջ պայքարն ու կռիվը «Ղարաբաղ» կոմիտեի դեմ, սկսած 1988-ի ամռանից մինչեւ 1990-ի խորհրդարանական ընտրությունները եւ դրանից հետո, հենվել է, փաստորեն, այն հիմքի վրա, որ իրենք, ի տարբերություն «Ղարաբաղ» կոմիտեի, չեն հասկացել «գորբաչովյան բազմերեսության աստիճանը», ու իրենց գործունեությունը կառուցել են հենց այդ՝ իրողությունների սխալ ընկալման, չհասկանալու հիմքի վրա:*

[298] *Տե՛ս **Կապուտիկյան Ս.**, էջեր փակ գզրոցներից, էջ 379-380:*

ստեղծել էր մի կազմակերպություն, որ նախապես կոչվում էր «Վերակառուցմանը սատարող ավագների խորհուրդ», քիչ ավելի ուշ վերանվանվել էր «Հայկաշեն»:

Ինչպես երեւում է, Կոմիտեի հռչակած Հայոց համազգային շարժմանն այլընտրանք ստեղծելու գաղափարին մեծ կարեւորություն էր տրվել, այնքան, որ նրա համար ստեղծվել էր աննախադեպ ծավալով ծրագրային մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Հայկաշեն» հայոց համազգային ծրագիր»[299]: Փաստաթղթի գաղափարական առանցքը «պանթուրքիզմի վտանգն»[300] է եւ պահանջատիրությունը[301]: Կարգախոսներից հատկանշական են. «Մեր դրոշը համայն հայության դրոշն է» (էջ 138), «Մահ կամ հայրենիք» (էջ 140): «Հայկաշենը» հավակնում էր լիակատար փոխարինել Շարժման ղեկավարությանը եւ լայնածավալ ֆինանսական միջոցներ հավաքել եւ տնօրինել[302]:

ՊԱԿ-ը, բնականաբար, ուշադիր հետեւում էր իր մտահղացած եւ կուսակցական ղեկավարության կողմից հավանության արժանացած ու գործադրված ծրագրի իրականացմանը ու զեկուցում արդյունքների մասին: Ահա, ըստ նրա հերթական զեկուցագրի՝ հոկտեմբերի 25-ին «Հայկաշենի» հերթական նիստում, որին մասնակցում էին 25 հոգի (հիշատակվում են՝

[299] *ՀՀԱՆԱ, 15/01.10.88: Ընդարձակ այդ փաստաթուղթը (145 մեքենագիր էջ), թվագրված չէ, գրվել է, հավանաբար, 1988-ի ամռան երկրորդ կեսին-աշնանը (հիշատակվում են «Զվարթնոցի» դեպքերը (էջ 48), չի բացառվում հենց օգոստոսի 19-ին, Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) ծրագրի հրապարակումից հետո՝ որպես հակակշիռ (հատկանշական է նույն՝ «հայոց համազգային» կապակցության օգտագործումը): Հեղինակն, ակնհայտորեն, Զորի Բալայանն է (երբեմն առաջին դեմքով է խոսում, հիշատակում «իմ «Օջախը» գիրքը» (էջ 29), հանդիպումը Գորբաչովի հետ (էջ 117) եւ այլն): Միաժամանակ, սակայն, այս կազմակերպության գործունեության մասին ՊԱԿ-ի տված տեղեկություններում Զ. Բալայանի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում:*

[300] *«Պանթուրքիզմի վտանգն» ընդարձակ ներկայացնելուց հետո ասվում է. «Միայն «Հայկաշեն» ծրագրի իրականացումը կստիպի Թուրքիային ետ կանգնել պանթուրքիզմի ծրագրի իրականացման քայլերից ու փորձերից» (էջ 127):*

[301] *Շեշտվում էր, որ՝ «Ղարաբաղյան շարժման սխալն այն էր, որ պայքարում էր միայն Ղարաբաղի ինքնավար մարզի համար, դրանով իսկ Նախիջեւանը եւ հայկական պատմական մյուս շրջանները Ադրբեջանի կազմում գտնվելը օրինականացնելով» (էջ 56):*

[302] *Իր ծրագրերի իրականացման համար «Հայկաշենը» նախատեսում էր. «Սփյուռքի երեք միլիոն հայերից յուրաքանչյուրը «Հայկաշեն» դրամատան պետքերին ամերիկյան մեկական դոլար պետք է տրամադրի: Ոմանք երկուսը կարող են տալ, ոմանք՝ հարյուր դոլար, մի քանիսը՝ միլիոն, սակավաթիվները՝ ամբողջ ունեցվածքը» (էջ 122-123):*

Լենդրուշ Խուրշուդյան, Սիլվա Կապուտիկյան, Կամո Վարդանյան), նկատի ունենալով, որ «Հայկաշենը» ստեղծման պահից լայն աջակցություն չի ստացել, եւ «բնակչության զգալի մասը գտնվում է «այսպես կոչված» «Ղարաբաղ» կոմիտեի ազդեցության տակ», այսպիսի որոշում են կայացնում. «Ղարաբաղյան շարժման կողմնակիցներին իրենց կողմը գրավելու, ուժերն ու ռեսուրսները չփոշիացնելու համար միավորվել Հայոց համազգային շարժման հետ մի կազմակերպության մեջ: Նրանք մտադիր են այդ նպատակով հանդիպել ՀՀՇ-ի ղեկավարության հետ՝ նրանց համոզելու համար ետ կանգնել իրենց ծրագրի մի շարք դրույթներից, որոնք հակախորհրդային, ազգայնական եւ ծայրահեղական ուղղվածություն ունեն»[303]: Որքան հասկացվում է, հենց այստեղ «Հայկաշենը» իր անվանը կցում է **«ժողովրդական ճակատ»** անվանումը (Ժողովրդական ճակատ-«Հայկաշեն»), քննարկվում են անգամ դրա ծրագրային դրույթները, որոշվում է «Ժողովրդական ճակատի» ստեղծման մասին հռչակագիր հրապարակել «Երեկոյան Երեւան» թերթում, ԳԽ նախագահություն է ուղարկվում համապատասխան դիմում՝ այն որպես հասարակական կազմակերպություն գրանցելու համար[304]:

Սակայն «ստեղծագործական եւ գիտական մտավորականության նշանավոր ներկայացուցիչներից» ստեղծված «Ժողովրդական ճակատ-«Հայկաշենին», ըստ նույն հաստատության նոյեմբերի 2-ի զեկուցագրի, վիճակված չէր կայանալ: Ընդամենը մեկ շաբաթ հետո այն պառակտվում է երեք մասի. առաջին մասը «նախաձեռնող խումբն»՝ էր Ս. Կապուտիկյանի եւ Լ. Խուրշուդյանի գլխավորությամբ, երկրորդ մասը՝ հետեւեց Կարեն Սիմոնյանին, եւ երրորդ մասը՝ «տեխնոկրատները», անջատվեցին պետական համալսարանի դոցենտ Պ. Պետրոսյանի գլխավորությամբ: Այս վերջինն անմիջապես բանակցությունների մեջ էր մտել «Ղարաբաղ» կոմիտեի հետ՝ միասնական կազմակերպություն ստեղծելու նպատակով: Ընդ որում՝ սրանց միակ պայմանն այն էր, որ ՀՀՇ-ն **անկախության** հարց չդնի: Նույնիսկ նախատեսվում էր համատեղ հիմնադիր համագումարի հրավիրում դեկտեմբերի 10-ին: Առաջին խումբը, իմանալով սրանց «սեպարատ» բանակցությունների մասին, դնում է նրանց «Ժողովրդական ճակատից» վտարելու հարցը: Իշխանության հետ բանակցություններում «Ժողովրդական ճակատի» ղեկավարները պնդում էին, որ «Ղարաբաղ» կոմիտեի բացասական գործունեությունը չեզոքացնել հնարավոր կլինի միայն այն դեպքում,

[303] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.153:*
[304] *Նույն տեղում:*

եթե Կենտրոնը Ղարաբաղը Ադրբեջանից անջատելու որոշում ընդունի: Հակառակ դեպքում իրենց կազմակերպությունն ակամա ստիպված կլինի միավորվել ՀՀՇ-ի հետ՝ «բայց արդեն վերջինիս գաղափարական պլատֆորմի վրա»[305]:

Այսպիսով, վստահ կարելի է ասել, որ իշխանությունների նախաձեռնությամբ նոմենկլատուրային մտավորականների ուժերով «Ժողովրդական ճակատ» ստեղծելու գաղափարը եւ նախաձեռնությունը պայմանավորված էր ՀՀՇ-ի Ծրագրի հրապարակմամբ՝ դրա մեջ քաղաքական մեծ վտանգ տեսնելով: Այդ գաղափարը թխվել էր ՊԱԿ-ՀԿԿ ԿԿ-ի աշխատանոցներում եւ նպատակ ուներ գաղափարական ու կազմակերպական այլընտրանք ստեղծել ՀՀՇ-ին: Առկա փաստաթղթերը աներկբա այդ են հաստատում: Այս կազմակերպության խնդիրն էր՝ ՀՀՇ-ին ու նրա Ծրագիրը քննադատության թիրախ դարձնել **«Վերակառուցման» եղակետից**՝ ցուցադրել Շարժման «հակավերակառուցողական», «հակառուսական» լինելը, մեղադրանքներ, որ լայնորեն օգտագործում էր իշխանական քարոզչամեքենան:

Երկրորդ «այլընտրանքային կազմակերպությունը» ՀՀՇ-ն ու նրա Ծրագիրը պետք է հարվածի թիրախ դարձներ **«ազգայինի» եղակետից**: Այսինքն՝ միաժամանակ նախագծվել էր նաեւ մի երկրորդ կազմակերպություն, որը պետք է ՀՀՇ Ծրագրին այլընտրանք լիներ **«ազգային»** գաղափարների հիմքի վրա եւ ցույց տար Շարժման «ապազգային» լինելը, մի մեղադրանք, որ մինչ այդ էլ հարուցվում էր կեղծ ազգայնականների կողմից: Սրա ստեղծման մտահղացման հետ կապված փաստաթղթերն, ի տարբերություն առաջինի, մեզ հայտնի չեն, սակայն ժամանակի, նպատակի ու ձեռագրի նույնությունը հուշում են նույն խոհանոցը: Խոսքը վերաբերում է «Ազգային ճակատ» անունով մի կազմակերպության՝ Սոս Սարգսյանի գլխավորությամբ: Դրա մասին ունենք միայն ՊԱԿ-ի հերթական զեկուցագրի հետեւյալ ուշագրավ դիտարկումը. «Այս խումբը մեղադրել է «Ղարաբաղ» կոմիտեին **ազգային շարժումը** միավորելու, դրա գլուխն անցնելու, դրա շնորհիվ «ղեկավար կուսակցության դափնիները» սեփականացնելու, իրենց հետ բանակցությունները խոչընդոտելու, «Ազգային ճակատի» մեջ մտնել չցանկանալու համար»[306]: Աչքի է զարնում արձանագրված մեղադրանքի, մեղմ ասած՝ յուրօրինակությունը, այն է՝ «Ղարաբաղ» կոմիտեն մեղադրվում է մի բանում («ազգային շարժումը միավորելու» մեջ), ինչին

[305] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.176-177:*
[306] *ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.16, թ.203:*

ձգտում եւ իր նպատակն է համարում նաեւ ինքը՝ մեղադրողը: «Ազգային ճակատի» նախաձեռնությունը կարող էր նաեւ զուգահեռ՝ դաշնակցական արմատներ ունենալ: Այսպիսի ենթադրությունը ամրապնդվում է «Ազգային ճակատի»՝ սկզբունքային հարցերում «Ղարաբաղ» կոմիտեին ուղղված մեղադրանքների բնույթով: Նույն աղբյուրի վկայությամբ՝ այս կազմակերպության «Նախաձեռնող խումբը, մեղադրելով «կոմիտեականներին» Հայաստանը «ինքնուրույն հանրապետության» վերածելու, «Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ մանյովրելու» պլանների համար, համարում է, որ «տեսանելի ապագայում Հայաստանը կարող է գոյություն ունենալ միայն Ռուսաստանի հետ միության մեջ»[307]: Իսկ սրանք Դաշնակցության հավատամքի, նրանց գաղափարախոսության անշարժ հիմնասյուներն էին[308]:

Այսպիսով, թե՛ «Ժողովրդական ճակատ «Հայկաշենը», թե՛ «Ազգային ճակատը» ունեին նույն ելակետերը, այն է՝ **ա)** չի կարելի հանրապետության ինքնուրույնությանը, անկախությանը միտված ծրագրեր ունենալ, եւ Հայաստանի գոյությունը տեսանելի է միայն ԽՍՀՄ կազմում, **բ)** դա համարում էին հակառուսականություն, ազգային շահերին դեմ, **գ)** չի կարելի դիմել իշխանության դեմ քաղաքական պայքարի գործուն միջոցների, դա նշանակում է դեմ լինել Վերակառուցմանը: Բայց սա հենց մեղադրանքների այն համալիրն էր, որի վրա ի սկզբանե իրականացվում էր իշխանության քարոզչական ահաբեկչությունը Շարժման դեմ:

Եւ վերջապես, Շարժման Ծրագրի հրապարակումից հետո է, որ իշխանությունը որոշեց օգտագործել նաեւ իր զինանոցի այն միջոցը, որին մինչ այդ չէր դիմել: Օգնության կանչվեցին սփյուռքյան «ազգային» կուսակցությունները: Մինչ այդ իշխանությունները Շարժման դեմ պայքարը մղել էին սեփական միջոցներով ու սեփական հնարավորությունների չափով: Այս

[307] *Տե՛ս նույն տեղում:*

[308] *Մոտ մեկ տարի անց «Դրոշակը» ծանուցում է մի այլ՝ «Հայ ազգային միության» անվամբ կազմակերպության ստեղծման մասին, որի հիմնադիրների մեջ առաջինը հիշատակվում է Սոս Սարգսյանի անունը (հիշենք, որ ավելի ուշ՝ 1991 թ., Սոս Սարգսյանը ՀՅԴ կողմից առաջադրված ՀՀ նախագահի թեկնածուն էր, երբ հայտարարել էր, որ արդեն մի քանի տարի է, ինչ այդ կուսակցության անդամ է): Հրապարակում է նաեւ դրա ընդարձակ ծրագիրը՝ պնդելով, որ այն «կհանդիսանա առաջին հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որ ըստ ամենայնի ամբողջական ծրագիր-կանոնագիր-ուղեգծով կներկայանա հայ ժողովրդին» (տե՛ս «Դրոշակ», 13.09.1989 էջ 26-34): Այս կազմակերպության մասին այլ տեղ, մամուլում կամ արխիվներում, որեւէ վկայություն կամ հետք գտնել չհաջողվեց:*

քայլը եւս իր հիմքում որոշակի հաշվարկ ուներ, այն է՝ հայաստանյան հասարակության մեջ տարածված չափազանցված դրական պատկերացումը Սփյուռքի մասին: Իսկ ստացված օգնությունը հետեւյալն էր. ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի եւ ՍԴՀԿ-ի կողմից սեպտեմբերի 29-ին ստորագրվեց եւ հաջորդ օրերին հրապարակվեց Հայաստանի ժողովրդին ուղղված մի դիմում: Այդ դիմումի իմաստը, իր պաճուճանքներից ազատելուց հետո, Հայաստանի ժողովրդին ուղղված կոչ էր՝ դադարեցնել պայքարը եւ Ղարաբաղի հարցի լուծումը վստահել կենտրոնական եւ տեղական իշխանությունների տնօրինությանը:

Ճիշտ է՝ այս երեք կուսակցությունները, անգամ միասին վերցրած, իրենց իրական ազդեցություններով շատ հեռու էին Սփյուռքն ամբողջությամբ ներկայացնելուց, սակայն հայաստանյան հանրության մեջ տարածված պատկերացումներում դրանք նույնացվում էին ամբողջ Սփյուռքի հետ: Ու քանի որ վերջինս էական դեր էր խաղալու նաեւ հետագա քաղաքական իրադարձությունների հետ կապված, ուստի այս հարցին անհրաժեշտ կլինի անդրադառնալ առանձին: Այստեղ միայն արձանագրենք հետեւյալը. ՀՀԾ քաղաքական առաջին Ծրագրի հրապարակման, Շարժման թափի անընդհատ ավելացման եւ նրա ղեկավարության հեղինակության բարձրացման պայմաններում առավել հստակ էին առարկայանում նաեւ այն ուժերը, որոնք պետք է հակադրվեին դրան, սատար կանգնեին իշխանություններին եւ պայքարեին Շարժման դեմ:

Որքանո՞վ էին Շարժման դեմ հարդարված այս երեք ճակատները միմյանց հետ համագործակցում, կամ որքանո՞վ էին նրանց գործողությունները համակարգվում կոմունիստական իշխանության կողմից: Քաղաքական նույն՝ Հայաստանի անկախությունը բացառելու հիմնադրույթի վրա հենվող այս միավորների համագործակցությունը բնական էր, ինչպես որ բնական է, որ իշխանությունը համակարգեր դա: Վերեւում բերված նյութն արդեն իսկ նման պնդման համար բավարար հիմքեր տալիս է, առաջիկա շարադրանքում կհանդիպենք նմանօրինակ այլ փաստարկների եւս[309]:

[309] *Այստեղ վկայակոչենք միայն մի օրինակ. «Ժողովրդական ճակատի» ղեկավար Ս. Կապուտիկյանը իր մի հարցազրույցում շտապում է ընդարձակ մեջբերում կատարել «ազգային» կուսակցությունների հիշյալ հայտարարությունից՝ այն որպես իմաստուն խոսք հակադրելով Կոմիտեի եւ Շարժման գործելակերպին (տե՛ս «Երեկոյան Երեւան», 29.10.1988): Հարցազրույցը տեղի էր ունեցել հոկտեմբերի 4-ին (տե՛ս Կապուտիկյան Ս., էջեր փակ գզրոցներից, էջ 397):*

գ) Շարժման դեմ ուղղված հիմնական մեղադրանքները եւ դրանց հերքումը

«Ղարաբաղ» կոմիտեի հեղինակած քաղաքական ծրագիրն իր ամբողջության մեջ հրապարակավ քննադատելուց խուսափելով հանդերձ՝ այդ Ծրագրին կատարվեցին վերագրումներ, եւ Շարժման դեմ առաջ քաշվեցին մի շարք մեղադրանքներ, որոնք իրականության հետ ոչ մի կապ չունեին: Մեղադրանքները սկսել էին հնչել ավելի վաղ, մասնավորապես՝ մայիսի երկրորդ կեսին Շարժման ղեկավարության մեջ կատարվող խմորումների շրջանում եւ նոր ղեկավարության հաստատվելուց անմիջապես հետո: ՀՀՇ Ծրագրի հրապարակումից հետո դրանք դարձան ավելի հաճախադեպ: Այդ վերագրումների եւ մեղադրանքների մեջ հիմնականը երկուսն էին:

Հակառուսականությունը. Հակառուսականության մեջ մեղադրանքը հավասարապես ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին սպառման համար էր: Այն հենվում էր հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ դեռ նախորդ դարերից արմատավորված այն պատկերացման վրա, որ հայ ժողովրդի միակ փրկությունը Ռուսաստանի հետ (կամ կազմում) լինելն է: Մեղադրանքը Շարժման հասցեին հնչում էր որպես «հակառուսական տրամադրությունների սերմանում»: Դրա համար որպես փաստարկ վկայակոչվում էր, մասնավորապես, հանրահավաքներում վաղուց հաճախակի հնչող, ապա ՀՀՇ Ծրագրում արտահայտված երկու դրույթ:

Առաջինը՝ հայերենի, որպես Սահմանադրությամբ ամրագրված պետական լեզվի գործառույթի ոլորտների լայնացումը (Հայաստանում պետական-պաշտոնական գրագրությունը գրեթե ամբողջությամբ տարվում էր ռուսերեն լեզվով), հայ երեխաներին հայկական դպրոցներում մայրենի լեզվով կրթություն տալու հորդորը, գիտական թեզերը հայերենով գրելը, հայ մշակույթի զարգացմանը նպաստելը եւ այլն: Խնդիրը, բնականաբար, նոր չէր, այն վաղուց անհանգստացնում էր հայ հասարակության մտավորական շրջանակներին եւ չէր կարող ավելի մեծ ուշադրության չարժանանալ Շարժման ընթացքում: Մայրենի լեզվով կրթության ապահովման, հայերենի՝ որպես պետական լեզվի գործառույթների լիակատար ապահովման խնդիրներով դեռ 1988-ի ապրիլին ստեղծվել էր «Մաշտոց» հասարակական կազմակերպությունը[310]: Իսկ մայիսի սկզբին Ի. Մուրադյանի եւ Վ. Մանուկյանի

[310] *«Մաշտոցը» հետագայում ընդգրկվեց ՀՀՇ-ի մեջ եւ գործում էր որպես նրա մաս՝ զբաղվելով հատկապես այս ոլորտով: Հայոց լեզվի եւ հայերենով կրթության ապահովման անխոնջ ջատագովն էր պրոֆ. Ռաֆայել Իշխանյանը:*

անունից տարածվել էր հայ երեխաներին ռուսական դպրոցներ չտալու հորդորով մի թռուցիկ[311]: Այս ավելի քան բնական պահանջն, ահա, գնահատվում էր որպես Շարժման հակառուսականության փաստարկներից մեկը:

«Հակառուսականության» մեղադրանքի երկրորդ փաստարկը վերաբերում էր հանրապետության ինքնուրույնության ընդլայնման պահանջին, մասնավորապես՝ Ծրագրի այն դրույթին, որ որեւէ ժողովուրդ, ուստի նաեւ հայ ժողովուրդը, չի կարող ունենալ մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ եւ իր առջեւ դրած խնդիրները լուծելիս պետք է հենվի միայն սեփական ուժերի վրա: Այս դրույթը նույնպես, մինչեւ ՀՀՇ Ծրագրում ամրագրվելը, արտացոլվել էր դեռ մարտի 19-ին «Ղարաբաղ» կազմկոմիտեի անունից տարածված «Մեր քաղաքական սկզբունքները» թռուցիկում: Շարժմանն ուղղված՝ «հակառուսական տրամադրություններ» տարածելու մեղադրանքը հաճախակի էր հնչում կենտրոնական քարոզչամիջոցներով: Իսկ առավել հաճախակի դա կրկնում էին հանրապետական իշխանությունները, «Ազգային ճակատը» եւ «Ժողովրդական ճակատը»: Առաջին դեպքում այն կոչված էր Շարժման դեմ հակակրանք առաջացնելու ռուսական շրջանակներում՝ կանխելու ռուսական առաջադեմ մտավորականության ժողովրդավարական ուժերի կողմից օրեցօր մեծացող աջակցությունը, երկրորդ դեպքում այն հասցեագրված էր հայաստանյան հասարակության այն խավին, որի պատկերացումների մեջ դեռեւս նստած էր ավանդական մտածողությամբ եկած ռուսական կողմնորոշման՝ որպես փրկության միակ խարիսխի գաղափարը:

Այն հիմքերը, որոնց վրա կառուցվում էր այս մեղադրանքը, ՀՀՇ Ծրագրում շատ ավելի հանգամանորեն էին շարադրված, եւ կանխատեսելի էր, որ Ծրագրի հրապարակումից հետո մեղադրանքն ավելի է ահագնանալու: Ու թերեւս պատահական չէ, որ նույն օրը՝ օգոստոսի 19-ին միաժամանակ հրապարակվեց նաեւ դրա հիմնավոր պատասխանը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթով՝ «Այսպես կոչված հակառուսական տրամադրությունների մասին, որոնք իբր բորբոքվում են Ղարաբաղյան շարժման հանրահավաքներում» վերնագրով[312], որը «Ղարաբաղ» կոմիտեի ստորագրությամբ, որպես պաշտոնական փաստաթուղթ, տարածվեց հայերեն եւ ռուսերեն լեզուներով: Դրանում ցույց էր տրվում, որ մեղադրողները պարզապես չեն ուզում տարբերակել ռուս ժողովրդին եւ խորհրդային ռեժիմը, որի հակահայկական

[311] *ՀՀԱՆԱ, 15/07.05.88:*

[312] *Տեր-Պետրոսյան Լ, Ընտրանի, էջ 35:*

եւ հակաժողովրդավարական դրսեւորումների դեմ է իրականում հաճախ հանդես գալիս Շարժումը. «Իրոք, մոտ 300 տարի հայ ժողովուրդն իր հույսերը կապում է Ռուսաստանի հետ, չնայած բազմակի հիասթափություններին նաեւ այսօր չի կորցրել իր բարի զգացումները ռուս ժողովրդի հանդեպ՝ հստակ տարանջատելով նրա վերաբերմունքը Հայաստանի եւ հայերի նկատմամբ իշխանությունների վարած մեծապետական շովինիզմի քաղաքականությունից»:

Իսկ ինչ վերաբերում է իրական հակառուսական տրամադրություններին, ապա դրանք հրահրողներ էր հայտարարվում հենց հանրապետական ղեկավարությունը՝ արձանագրելով հետեւյալ փաստերը. «Ինչի՞ է նման, երբ հենց բոլոր նոմենկլատուրային աշխատողների երեխաները սովորում են ռուսական դպրոցներում, ղեկավար անձինք չեն տիրապետում մայրենի լեզվին եւ գերադասում են ռուսերեն ելույթ ունենալ, ռուսական դպրոցներն օգտվում են հատուկ արտոնություններից, նախարարություններում, հիմնարկներում եւ ձեռնարկություններում հայոց լեզուն դուրս է մղված գործածությունից... Այս բոլորը, բնականաբար, ժողովրդի մոտ ռուսերեն լեզվի համար առանձնաշնորհված սոցիալական գերակայության եւ ծրագրված ռուսականացման պատկերացում է ստեղծում...[313]: Մինչդեռ կարեւոր ու այդքան շահարկվող այս հարցի մասին Շարժման ծրագրային դրույթը հստակ էր. «Անկեղծ ձգտում հայ եւ ռուս, ինչպես նաեւ Սովետական Միության բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ, սակայն դրա հետ մեկտեղ անհաշտ պայքար ազգային շահերի ոտնահարման, մեծապետական շովինիզմի եւ ռուսականացման քաղաքականության ցանկացած դրսեւորման դեմ»[314]:

Երկրորդ մեղադրանքն այսպիսին էր. Շարժումը **հակավերակառուցողական** է. Շարժումն, իբր, խրախուսվում է Վերակառուցման հակառակորդների եւ կաշառակերների կողմից: Այսինքն՝ վերջիններս դրանով երկրում խառնաշփոթ վիճակ են ստեղծում, որպեսզի չնկատվի իրենց ապօրինի գործունեությունը: Այս մեղադրանքը հաճախ էր օգտագործվում հատկապես կենտրոնական մամուլում[315], այն կրկնում էին նաեւ Հայաստանի մամուլն ու

[313] *Նույն տեղում:*

[314] *ՀՀԱՆԱ, 15/19.08.88:*

[315] *Տե՛ս, մասնավորապես, «Հակահարված սադրիչներին» վերնագրով հոդվածը «Իզվեստիա» թերթում. «Ովքե՞ր են նրանք, ինչու են նրանք այդպես համառորեն հակված սադրանքների, սպառնալիքների... Նրանց հավատամքն է՝ վարկաբեկել վերակառուցումը, դա անել ցանկացած եղանակով...» («Известия», 02.10.1988):*

իշխանության ներկայացուցիչները: Նպատակը կրկին Խորհրդային Միության մեջ Շարժումը վարկաբեկելն էր, նրան ժողովրդավարական շարժումների եւ հասարակական կարծիքի պաշտպանությունից զրկելը:

Իշխանության մտավախությունն ավելի քան հասկանալի էր. մեկ հարցի հետապնդումից վերաճելով լայն հիմքով ժողովրդավարական շարժման՝ հայկական Շարժումը վտանգավոր եւ վարակիչ օրինակ էր դառնում մյուս հանրապետությունների համար: Ու քանի որ «Վերակառուցումը» առայժմ շարունակում էր խոստումներ տալ, եւ շատերն էլ դեռ դրա հետ հույսեր ունեին կապված, ապա «**վերակառուցման հակառակորդներ**» պիտակավորումը կարող էր նրանց վրա ազդել: Այսինքն՝ այդ պիտակավորումն ավելի շատ արտաքին՝ Հայաստանից դուրս սպառման համար էր: Հայաստանում, որտեղ բնակչության մեծագույն մասը նույն այդ Շարժման մասնակիցն էր եւ ականատեսը, այդ մեղադրանքը շատ նեղ լսարան կարող էր ունենալ:

Վերոհիշյալ մեղադրանքին ի պատասխան՝ հնչում է Կոմիտեի անդամ Լեւոն Տեր-Պետրոսյանի մի այլ ելույթ, հոկտեմբերի 14-ին, ապա դրա գրավոր տեքստը, որպես թռուցիկ («Վերակառուցման հակառակորդները եւ Ղարաբաղյան շարժումը» վերնագրով), լայնորեն տարածվում է: Եւ այս դեպքում էլ՝ մեղադրանքը բումերանգի նման շրջվում է նրա հեղինակների դեմ: Ահա հիմնական թեզերը. «Դժվար չէ նկատել, որ մենք գործ ունենք ստալինյան գաղափարաբանության զինանոցից հանված մի հերթական մտապատճենի (ստերեոտիպ) հետ, որի հիմքում... ընկած է այն ավանդական պատկերացումը, որ Խորհրդային Միությունն առանց ներքին թշնամու չի կարող ապրել: Այդ իսկ պատճառով **սպիտակգվարդիական – կուլակ – ժողովրդի թշնամի** շղթային շատ բնական կերպով այժմ միահյուսվում է **վերակառուցման հակառակորդ** օղակը.... Որ Ղարաբաղյան շարժումը ոչ մի կապ չունի վերակառուցման հակառակորդների հետ, նույնպես հարկ չկա ապացուցելու, քանի որ այն ծագել է ոչ թե այսօր, այլ տասնյակ տարիներ առաջ... Մեր երկրում հռչակված վերակառուցման, հրապարակայնության եւ ժողովրդավարացման արդի պայմաններում հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ ավելի վճռականորեն բարձրացնելու իր արդար դատը... Ուստի միանգամայն ծիծաղելի են նրա առաջացումը մի խումբ ծայրահեղականների, արեւմտյան գործակալների, սադրիչների, անպատասխանատու անձանց կամ վերակառուցման հակառակորդների ջանքերին վերագրելու մեկը մյուսին հաջորդող եւ մեկը մյուսից շուտ սնանկացող փորձերը... Կույր պետք է ձեւանալ չտեսնելու համար, որ հայ ժողովուրդը

պատմական հանգամանքների բերումով հայտնվել է խորհրդային հասարակարգի իսկական վերակառուցման եւ ժողովրդավարության հաստատման ավանգարդում: Խորհրդային Միության ժողովուրդների շարքում հայ ժողովուրդն առաջինն է, որը դրսեւորել է այնպիսի հասարակական ակտիվություն, որն, ինչպես հավաստվում է երկրի նոր քաղաքականության ջատագովների կողմից, վերակառուցման եւ ժողովրդավարության հաղթանակի միակ գրավականն է...»[316]: Այս փաստաթուղթը եւս ռուսերեն թարգմանությամբ, Շարժման բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ միասին, ուղարկվում էր ամենատարբեր հասցեներով:

Իսկ ընդհանրապես, այս եւ այլ մեղադրանքներն ունեին հստակ ենթատեքստ, որ երբեմն նաեւ պարզորոշ արտահայտվում էր: Խոսքը վերաբերում է իշխանության խնդրին. այսինքն՝ կար մտավախություն, որ Շարժման օրակարգում եղած հարցերն իրականում պատրվակ են՝ իշխանության հասնելու համար: «Ղարաբաղ» կոմիտեն իր թռուցիկներից մեկում (տարածված հուլիսի 29-ին) փորձում է ցրել իշխանության այս մտահոգությունը. «Մենք պրոֆեսիոնալ քաղաքական գործիչներ չենք, ունենք մեր մասնագիտությունը, որոնցից հրաժարվել չենք պատրաստվում: Շարժման կազմակերպիչներ մենք դարձել ենք ամենածանր օրերին եւ ակամա: Հենց որ հանրապետության ղեկավարությունը կհայտնի իր մտադրությունը Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու պայքարը շարունակելու մասին, մենք պատրաստ ենք ժողովրդի կողմից տրված մանդատը հանձնելու եւ նրա զինվորը դառնալու»[317]: Կոմիտեն այս դեպքում էլ անկեղծ էր. հանրապետության իշխանության կողմից հիմնական խնդիրը որդեգրելը եւ հետապնդելը Շարժման մասնակիցների ակնկալիքն ու ցանկությունն էր ի սկզբանե, իսկ դրա չգոյության պայմաններում հիմնական գործելակերպը այլ բան չէր, քան ստիպել իշխանությանը կատարելու այդ դերը:

[316] *Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 37-40: Իշխանությունները, որքան էլ հանդես էին գալիս «Վերակառուցման» անունից եւ «հակառակորդներ» էին փնտրում, իրականում իրենք էին վերակառուցմանն աջակցողներից շատ խիստ վախենում: Ահա արձանագրված մի ցայտուն օրինակ. Գիտությունների ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտում նախաձեռնել էին ինստիտուտի վերակառուցմանն օժանդակող կազմակերպություն ստեղծել: Այդ մասին ՊԱԿ-ը անմիջապես տեղյակ էր պահել ՀԿԿ կկ, որի համապատասխան պաշտոնյան էլ, իր հերթին, հարցը կարգավորել էր եւ զեկուցել. «Այժմ այդ առաջարկությունը կոլեկտիվում չի քննարկվում» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.15):*

[317] *ՀՀԱՆԱ 15/29.07.88:*

դ) Փաստական երկիշխանության առաջացումը

Հուլիսի 18-ի որոշումն, այնուամենայնիվ, իրավական առումով կարող էր նաեւ փակուղի դառնալ: Հայոց համազգային շարժման Ծրագրի հրապարակումը նաեւ այդ փակուղին հաղթահարելուն էր ուղղված: Սակայն անհրաժեշտ էին նաեւ գործնական քայլեր:

Շարժման եւ նրա ղեկավարության նկատմամբ հուլիսի վերջին քարոզչական վճռական հակահարձակման անցնելու հերթական փորձը, Ազատության հրապարակը զինվորներով շրջափակելը, հետապնդումները եւ այլն առարկայական արդյունք չտվեցին: Հանրահավաքները յուրաքանչյուր ուրբաթ հրավիրվում էին Մատենադարանի մոտ: Քննարկման հիմնական հարցերը շարունակում էին մնալ հուլիսի 18-ի որոշումը, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները, կենտրոնական եւ տեղական լրատվամիջոցների խեղաթյուրումների քննադատությունը, սումգայիթյան դատավարությունը, «Ջվարթնոցում» զինվորականների վայրագությունները, Մասիսի թունավորման հետաքննությունը, գործադրվող ճնշումների փորձերի քննադատությունը եւ այլն: 1988-ի օգոստոսին շրջում էր մի ձեւաթուղթ, որտեղ քաղաքացիների ստորագրություններ էր հավաքվում հետեւյալ պահանջի տակ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի որոշումը հակասում է ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածին, ազգերի ինքնորոշման սկզբունքին եւ միջազգային իրավունքի նորմերին, պահանջում ենք ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 12-ի, ինչպես նաեւ ՀԽՍՀ ԳԽ-ի հունիսի 15-ի որոշումների բավարարում[318]:

Լեռնային Ղարաբաղում նույնպես ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի որոշումից հետո գործադուլները դադարեցվել էին՝ միաժամանակ հայտարարելով, որ այդ որոշումն իրենց չի բավարարում: Իշխանություններն, իրենց հերթին, փորձում էին ինչ-ինչ միջոցառումներով ցույց տալ, որ այդ որոշումը եւ Վոլսկու առաքելությունը գործնական արդյունքներ են տալիս: Որպես այդպիսիք՝ նրանք մատնանշում էին Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտոնյաների հանդիպումները, որոնք տեղի ունեցան Վոլսկու նախաձեռնությամբ, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ղարաբաղի մի քանի ձեռնարկությունների միջեւ գործարար կապեր հաստատելու եւ մշակութային փոխայցելությունների մի քանի ցուցադրական նախաձեռնություններ:

Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանը օգոստոսի 24-ին ընդունած նոր որոշմամբ անբավարար գնահատեց հանրապետական եւ միութե-

[318] *ՀՀԱՆԱ 15/01.08.88:*

նական գերատեսչությունների կողմից մարզում իրականացվող աշխատանքները, պնդեց Ադրբեջանի կազմից դուրս գալու եւ Հայաստանի կազմում ընդգրկվելու իր նախորդ որոշումները խնդրեց ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների խորհրդի հանձնաժողովին՝ ամփոփել իր ուսումնասիրությունները եւ առաջարկներ ներկայացնել ԳԽ-ի քննարկմանը[319]: Օգոստոսի 26-ին Երեւանում հրավիրված հանրահավաքը ոգեւորությամբ ընդունեց ԼՂԻՄ մարզխորհրդի նոր որոշումը եւ պահանջեց ՀԽՍՀ ԳԽ-ից նույն կերպ՝ նստաշրջանի նոր որոշմամբ վերահաստատել իր համաձայնությունը:

Իրավիճակի հերթական սրումը սկսվեց այն բանից հետո, երբ սեպտեմբերի սկզբին Ադրբեջանը նշանակալի՝ 3 միլիոն ռուբլի գումար հատկացրեց Հայաստանից «փախած» ադրբեջանցիների համար Շուշիում բնակարաններ կառուցելու նպատակով: Վերսկսվեցին հանրահավաքներն ու երթերը, արդեն հայտնի պահանջներին ավելացան նաեւ մարզում «փախստականների» բնակեցման արգելման, ԼՂԻՄ դատախազությունն անմիջապես ԽՍՀՄ դատախազության ենթակայության տակ դնելու պահանջները:

Ղարաբաղում իրավիճակի սրվելը, բնականաբար, անմիջապես նույնպիսի հետեւանք ունեցավ նաեւ Հայաստանում: Սեպտեմբերի 1-ին 100 ուսանող, թողնելով դասերը, ի նշան բողոքի հուլիսի 18-ի որոշման դեմ՝ նստացույց սկսեցին Թատերական հրապարակում[320]: Հաջորդ օրն առավոտյան նստացույցը հայտնվեց զինվորների շրջափակման մեջ[321]: Ժամը 19-ին տասնյակ հազարավոր մարդիկ ճեղքեցին զինվորների շարքերը եւ մտան հրապարակ: Առանց ընդհարման՝ զինվորները ստիպված էին հեռանալ: Քաղաքային իշխանություններն անջատեցին հոսանքը, ամբողջ երկու ժամ ժողովուրդը վանկարկում էր «Արցախ» եւ «Կոմիտե»: Իշխանության ներկայացուցիչները, չհամարձակվելով շփման մեջ մտնել ժողովրդի հետ, վերջի-վերջո ստիպված էին խնդրել Կոմիտեի անդամներին՝ ներկայանալ հրապարակ եւ կեսժամանոց տեղեկատվություն տալ՝ խոստանալով դա չհամարել չարտոնված հանրահավաք: Սեպտեմբերի 2-ին Ազատության հրապարակը հսկող զինվորները կրկին ստիպված էին տեղի տալ այնտեղ առաջացող բազմահազար մարդկային զանգվածի դանդաղ, բայց անհողդողդ

[319] *Տե՛ս «Սովետական Ղարաբաղ», 25.08.1988:*

[320] *Սեպտեմբերի 1-15-ի իրադարձությունները օր օրի նկարագրված են ՀՀՇ-ի «Լրատու» տեղեկատվական բյուլետենում (տե՛ս ՀՀԱՆԱ 15/18.09.88):*

[321] *Քանի որ տեւական մի շրջան հանրահավաքները տեղի էին ունենում միայն ուրբաթ օրերը, զինվորները հրապարակը պաշարում էին միայն այդ օրը՝ առավոտից մինչեւ երեկո:*

ընթացքի առջեւ, եւ հանրահավաքներն այլեւս տեղափոխվեցին այստեղ, ընդ որում՝ արդեն առանց իշխանությունների թույլտվության:

Իշխանության պատասխանը ճնշումներն էին հանրահավաքի մասնակիցների եւ ելույթ ունեցողների նկատմամբ. «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամները դատական կարգով տուգանվեցին մինչեւ 300-ական ռուբլի՝ չարտոնված հանրահավաքում ելույթ ունենալու համար: Սեպտեմբերի 9-ի հանրահավաքը նույնպես արտոնված չէր: Հանրահավաքի մասնակիցները սպառնացին, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների դեմ գործ հարուցելու դեպքում կդիմեն համընդհանուր գործադուլի: Իսկ իշխանությանն առաջարկվեց՝ հաջորդ օրը ներկայանալ Ազատության հրապարակ՝ բաց երկխոսության: Իշխանությունը ստիպված էր ընդունել իր կողմից չարտոնված հանրահավաքին մասնակցելու հրավերը[322]: Կոմիտեի անունից երկխոսությունը վարում էին Լեւոն Տեր-Պետրոսյանը: Բազմահազարանոց լսարանի առջեւ, իրենց համար ոչ սովորական պայմաններում, երկրի ղեկավարները ստիպված էին պատասխանել ոչ հաճելի բազմաթիվ հարցերի, ըստ էության՝ հաշվետվություն տալ՝ հաճախ արժանանալով հանրահավաքի բարձրաձայն դժգոհությանը:

Սեպտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղում սկսվեց հերթական գործադուլը, որի համար առիթ ծառայեց Ադրբեջանի դատախազության աշխատակիցների կողմից մարզում ստուգումներ անցկացնելու հերթական փորձը: Իսկ պատճառների համախումբն արձանագրված էր «Հայաստանի աշխատավորներին ուղղված ԼՂԻՄ աշխատավորների դիմումում».

«Բաքվի իշխանությունները ձգտում են Արցախը լցնել ադրբեջանցի փախստականներով, Բաքվից անընդհատ հանձնաժողովներ են ուղարկվում խառնվելու նրա ներքին գործերին, իրավապահ մարմիններում եւ հատկապես դատախազությունում գործեր են սարքվում հայերի վրա, եւ հետապնդումներ իրականացվում: Այդ պատճառներով էլ սեպտեմբերի 12-ից հայտարարվել է համընդհանուր գործադուլ՝ հետեւյալ պահանջներով.

ա) ԼՂ-ը անհապաղ դուրս բերել Ադրբեջանի կազմից,

բ) ԼՂ-ից անհապաղ քշել, այսպես կոչված, փախստականներին,

գ) դադարեցնել Բաքվից հանձնաժողովներ ուղարկելը,

դ) դադարեցնել շարժման ակտիվիստների հետապնդումները»[323]:

[322] *Իշխանությունների կողմից ներկայացել էին ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը, ՀԿԿ կգ-ի քարտուղար Ղամբարյանը, Երեւանի քաղխորհրդի նախագահ Ջ. Ավագյանը, Երեւանի քաղկոմի քարտուղար Մ. Մինասբեկյանը եւ ուրիշներ:*

[323] *ՀՀԱՆԱ, 08/12.09.88:*

Գործադուլավորները աջակցություն էին խնդրում, եւ Կոմիտեի կոչով[324] Հայաստանում Շարժումը սատարեց նրանց՝ սեպտեմբերի 16-ին հայտարարված մեկօրյա գործադուլով: Նույն օրը ցուցարարների մեծ խմբեր շրջափակել էին ՀԿԿ ԿԿ-ի շենքը եւ Հրազդան հյուրանոցը՝ պահանջելով, որ ադրբեջանական պատվիրակությունը հեռանա հանրապետությունից: Իսկ երեկոյան հանրահավաքին հրավիրվել էր Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Վ. Մովսիսյանը՝ պատասխանելու փախստականներին վերաբերող հարցադրումներին: Շարժման պահանջով իշխանության ղեկավարների հաշվետվությունները հանրահավաքներում վկայում էին, որ հանրապետությունում հաստատվում է փաստական երկիշխանություն:

Սեպտեմբերի 18-ին լուրջ ընդհարում տեղի ունեցավ Ստեփանակերտի եւ հարեւան ադրբեջանաբնակ Խոջալու բնակավայրի բնակիչների միջեւ: Նախօրերին հայտնի էր դարձել, որ ադրբեջանցիները Ստեփանակերտից հանում են իրենց երեխաներին, կանանց եւ նախապատրաստվում են ինչ-որ լուրջ գործողության: Սադրանքը չուշացավ. ուսանողներ տեղափոխող ավտոբուսը քարկոծվեց Խոջալուով անցնելիս: Լուրն առնելով՝ Ստեփանակերտում ընթացող հանրահավաքի մասնակիցները շարժվեցին այդ ուղղությամբ: Այստեղ նրանց դիմավորեց զինված ամբոխը: Ընդհարման հետեւանքով 40 հոգի վիրավորվեցին, հիմնականում՝ հրազենից: Այդ եւ հաջորդ օրերին հայ բնակչության նկատմամբ հրազենի օգտագործման բազմաթիվ փաստեր գրանցվեցին նաեւ այլ տեղերում: Շուշիում եւ Ստեփանակերտում տեղի ունեցան հայերի տների հրկիզումներ[325]: Սեպտեմբերի 21-ից ԼՂԻՄ-ում եւ Աղդամի շրջանում հատուկ դրություն եւ պարետային ժամ մտցվեց: Ըստ երեւույթին՝ հենց սա էր սադրանքի նպատակը: Ընդ որում՝ զինվորականները բնակչության հետ չափազանց կոպիտ էին ու ցինիկ: Սկսվեց որսորդական զենքերի առգրավումը: Սակայն հենց սկզբից էլ ակնհայտ էր հատուկ դրության ռեժիմն իրականացնողների տարբերակված՝ ագրեսիվ եւ կոպիտ վերաբերմունքը հայերի, եւ ներողամիտ վերաբերմունքը՝ ադրբեջանցիների նկատմամբ: Այսպես՝ Շուշիի հայ բնակչությունն այդ

[324] *ՀՀԱՆԱ, 15/14.09.88:*

[325] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе часть 1, ст. 139-141. Ըստ ԽՍՀՄ ՆԳՆ-ի ԼՂԻՄ «Օպերատիվ խմբի» տեղեկանքի՝ այդ օրերին մարմնական վնասվածք ստացած 54 քաղաքացիներից 33-ն ադրբեջանցիներ են, 21-ը՝ հայեր, 233 ավերված ու թալանված տներից 88-ը պատկանել է հայերի, 145-ը՝ ադրբեջանցիների, հրկիզված 41 տներից 6-ը պատկանել է հայերին, 35-ը՝ ադրբեջանցիներին եւ այլն (ՀՀԱՆԱ, 08/31.12.88, թ. 1.):*

օրերին, զինվորականների կողմից չկանխված բռնությունների հետեւանքով, ստիպված էր ամբողջությամբ թողնել քաղաքը եւ տեղափոխվել Ստեփանակերտ:

Եթե ինչ-ինչ հույսեր դեռեւս կարելի էր կապել հուլիսի 18-ի որոշման եւ կենտրոնական իշխանության՝ ԼՂԻՄ գործուղված ներկայացուցչի հետ, դրանք արագորեն ի դերեւ էին ելել արդեն մի քանի շաբաթվա ընթացքում: Ուստի Երեւանի հանրահավաքներում որպես օրակարգի հարց՝ ավելի ու ավելի սուր էր դրվում Հայաստանի ԳԽ-ի արտահերթ նստաշրջանի հրավիրման, իրավիճակի քննարկման եւ հունիսի 15-ի որոշման վերահաստատման խնդիրը: Դրա անհրաժեշտությունը թելադրված էր նաեւ այն հանգամանքով, որ ՀԽՍՀ ԳԽ-ի նախագահությունն իր հուլիսի 25-ի նիստում արձանագրելով, որ ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 18-ի որոշումը քաղաքական մեծ նշանակություն ունի, կարեւոր ուղենիշ է հանդիսանում վերակառուցման պրոցեսում եւ տվյալ պայմաններում բխում է երկու ժողովուրդների արմատական շահերից, որոշում էր կայացրել՝ «Հավանություն տալ եւ ընդունել ի ղեկավարություն եւ անշեղ կատարման... »[326]:

Առանց Հայաստանի Շարժման հզոր աջակցության Լեռնային Ղարաբաղում կարող էին տեղի ունենալ անդառնալի գործընթացներ: Ղարաբաղում կատարված բռնություններին արձագանքը եղավ նույն օրը: Տարածվեց «Ղարաբաղ» կոմիտեի՝ «Համաժողովրդական պատվիրան ՀԽՍՀ ԳԽ դեպուտատներին» թռուցիկը: Այն առաջարկում էր հրավիրել Հայաստանի ԳԽ արտահերթ նստաշրջան եւ որոշմամբ պահանջել ԽՍՀՄ ԳԽ-ից Լեռնային Ղարաբաղը անհապաղ դուրս բերել Ադրբեջանի կազմից՝ որպես նրա ինքնորոշման իրավունքի մասնակի բավարարում, պահանջել իրական անվտանգության երաշխիքներ Լեռնային Ղարաբաղի բնակչության համար, եւս մեկ անգամ հաստատել իր համաձայնությունը մարզը ՀԽՍՀ-ին միացնելու դիմումին, դատապարտել 1915թ. հայերի ցեղասպանությունը[327]: Թատերական հրապարակում նույն պահանջներով հացադուլ հայտարարեց Խաչիկ Ստամբոլցյանը:

Կրկին սկսվեց պատգամավորներից նստաշրջան հրավիրելու դիմումներ հավաքելու գործը: Հանրապետության իշխանությունը կանգնած էր Շարժման կողմից պարտադրվող երկրորդ նստաշրջանը հրավիրելու անհրաժեշտության առաջ, որ ակնհայտորեն, ինչպես ցույց էր տվել հունիսի

[326] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 13-14, հոդվ. 97:*

[327] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/18.09.88 «Համաժողովրդական պատվիրան ՀԽՍՀ ԳԽ դեպուտատներին» :*

փորձը, կրկին պետք է ավարտվեր նաեւ վերջինիս պահանջած որոշումներն ընդունելով:

Սեպտեմբերի 22-ին հրապարակվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության ԿԿ-ի, ԳԽ նախագահության եւ կառավարության՝ «Հանրապետության կոմունիստներին, աշխատավորներին» ուղղված համատեղ ընդարձակ մի դիմում[328]: Դիմումը ահաբեկված տոն ուներ, այստեղ այլեւս չկային այն սուր պիտակները, որ ընդամենը մեկ ամիս առաջ փակցվում էին Շարժմանը եւ նրա ղեկավարներին:

Սակայն քանի որ իշխանության վարկը չափազանց ցածր էր, ուստի նա ժողովրդական ըմբոստության բարձրացող նոր հուժկու ալիքը կանխելու համար միաժամանակ օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները: Ինչպես միշտ նման դեպքերում, իրենց խրատական հորդորներով հանդես եկան «հայտնի» մտավորականներ, ԲՈՒՀ-երի ռեկտորներ եւ այլն: Դրան ի պատասխան, ցրելու համար այն պատկերացումը, թե հենց սրանք են արտահայտում Հայաստանի մտավորականության տեսակետը, կազմվեց Գորբաչովին ուղղված բավականին խիստ մի դիմում՝ Հայաստանի ստեղծագործական եւ գիտական աշխատողների արտակարգ մի ժողովի անունից, որն ստորագրողների մեջ մտավորականության բոլորովին նոր, ոչ պակաս հայտնի անուններ էին, դրանց մեծ մասը մինչ այդ հրապարակային առումով չէր կապվել Շարժման հետ. ակադեմիկոս Սուրեն Երեմյան, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյան, բանաստեղծներ Մարո Մարգարյան, Գեւորգ Էմին, Հրաչյա Թամրազյան, Արմեն Շեկոյան, արվեստի գործիչներ Լուսինե Ջաքարյան, Վահագն Ստամբոլցյան, Սոս Սարգսյան, հայտնի կինոռեժիսորներ, նկարիչներ, ճարտարապետներ, գիտնականներ եւ այլն, որոնց իրենց ստորագրություններով միացել էին այս բնագավառների այլ աշխատողներ[329]:

Հանրապետության իշխանություններն իրենց հերթին, դիմեցին եւ կարողացան ստանալ Սփյուռքում գործող հայկական երեք կուսակցությունների համատեղ դիմումը՝ գործադուլները դադարեցնելու կոչով:

Այս ամենը որեւէ արդյունք չտվեց, գործադուլները դառնում էին ավելի ու ավելի զանգվածային, պահանջված օրակարգով արտահերթ նստաշրջան հրավիրելու համար անհրաժեշտ քանակի դիմումները պատգամավորներից արդեն հավաքված էին: Նստաշրջան հրավիրելուց խույս տալու համար

[328] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 22.09.1988:*
[329] *ՀՀԱՆԱ, 15/22.09.88:*

սեպտեմբերի 23-ին ԳԽ նախագահությունը քննարկման առարկա դարձրեց «ԼՂԻՄ-ում տեղի ունեցած վերջին իրադարձությունների կապակցությամբ հանրապետությունում ստեղծված իրադրության նորմալացման միջոցառումների մասին» հարցը: Ընդունված որոշման մեջ արձանագրվում էր հունիսի 15-ի՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ ընդունելուն համաձայնություն տալու մասին որոշումը, միջնորդություն էր արվում կենտրոնական իշխանություններին՝ արագացնել ԼՂԻՄ-ի հարցի ուսումնասիրումը եւ վերջնական քննարկումը, խնդրանք էր հղվում ադրբեջանական իշխանություններին՝ հայազգի բնակչության անվտանգության երաշխիքներն ապահովելու համար եւ այլն[330]: Նախագահության այս որոշումն ընդունելուց հետո իշխանությունը կարողացավ «համոզել» պատգամավորների մի մասին (նրանցից ոմանց արդարանալու հիմք տրվեց) ետ վերցնել իրենց դիմումները, ինչն անհրաժեշտ էր արտահերթ նստաշրջան հրավիրելուց խուսափելու համար:

Սակայն այս միջոցառումը եւս էական նշանակություն չունեցավ Շարժման ծավալվող թափը մեղմելու համար: Սեպտեմբերի 25-ի հանրահավաքը, որ նաեւ հանդիպում էր Գերագույն խորհրդի՝ այստեղ հրավիրված շուրջ 40 պատգամավորների հետ, ՀԽՍՀ ԳԽ նախագահությանն ուղղված դիմումում պահանջում էր չխախտել Սահմանադրությունը եւ հրավիրել պահանջվող արտահերթ նստաշրջանը[331]: Հանրահավաքներում սկսեցին հնչել ԳԽ-ի նախագահությանն անվստահություն հայտնելու, նրա հրաժարականի պահանջներ՝ Սահմանադրությունը խախտելու եւ պատգամավորների 1/3-ի դիմումների առկայության պայմաններում նստաշրջան չհրավիրելու մեղադրանքով: Սեպտեմբերի 25-ին «Հայաստանի աշխատավորներին» ուղղված դիմում հղեց Ստեփանակերտի «Տնօրենների խորհուրդը», որտեղ արձանագրվում էր, որ հուլիսի 18-ի որոշումը եւ Կենտրոնի ներկայացուցչի Ղարաբաղում գտնվելու հանգամանքն իրականում որեւէ դրական արդյունքի չեն հանգեցրել, Ադրբեջանը շարունակում է իր նույն գործելակերպը, հայ բնակչության համար չկան անվտանգության երաշխիքներ, ուստիեւ կոչ էր արվում՝ բոլոր ձեւերով սատար կանգնել արցախահայությանը[332]:

[330] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 18, հոդվ. 140:*
[331] *ՀՀԱՆԱ, 25.09.88, ստորագրված՝ «Միտինգի մասնակիցներ»:*
[332] *ՀՀԱՆԱ, 08/25.09.88: Տնօրենների խորհուրդը Լեռնային Ղարաբաղում Շարժումը ղեկավարող նույն «Կոունկ» կոմիտեն էր, որ արգելվելուց հետո գործում էր այս անունով: Փաստաթղթի տակ կա 17 ստորագրություն: Լեռնային Ղարաբաղում որոշ*

Իրավիճակի սրման հետ կապված, բացի բոնարարքներից, կենտրոնական իշխանությունը, ինչպես միշտ նման դեպքերում, ստիպված էր նաեւ ձեռնարկել ինչ-ինչ խոստացված քայլեր: Հոկտեմբերի 3-ին Ա. Վոսսի գլխավորությամբ Ստեփանակերտ ժամանեց հուլիսի 18-ի որոշմամբ նախատեսված՝ Ազգությունների խորհրդի հանձնաժողովը: Հերթական անգամ ինչ-որ հույսեր արթնացան Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ, եւ նրանք դադարեցրին գործադուլները: Դրան հաջորդեց հոկտեմբերի 11-ին Սուրեն Հարությունյանի եւ Վեզիրովի հանդիպումը Ստեփանակերտում: Ըստ հաղորդագրությունների՝ նրանք ինչ-որ պայմանավորվածություններ էին ձեռք բերել, մասնավորապես՝ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերում: Սակայն դրան հաջորդող էական որեւէ քայլ Հայաստանը չկատարեց: Ադրբեջանը, ընդհակառակը, հսկայական շինարարական եւ այլ հզորություններ նետեց ԼՂԻՄ-ի ադրբեջանական բնակավայրերը:

Հոկտեմբերի 17-ից սկսած՝ ամբողջ մի շաբաթ Ադրբեջանի ղեկավարությունը Աղդամում էր եղել: Այստեղ էր հավաքվել հսկայական շինարարական տեխնիկա, շինանյութ, եւ հոկտեմբերի 24-ին այս ամբողջը 400 բեռնատարներով մտցվել էր Լեռնային Ղարաբաղ, մասնավորապես՝ Խոջալու բնակավայրը: 2500 բնակիչ ունեցող ադրբեջանական այս գյուղում սկսվել էր ապօրինի հսկայական մի շինարարություն, որի նպատակն էր այն վերածել ադրբեջանցիներով բնակեցված քաղաքի, փոխել ժողովրդագրական պատկերը: Մարզի իշխանությունների ջանքերը՝ կանգնեցնելու ապօրինի շինարարությունը, ապարդյուն էին անցել: Ապօրինի շինարարությունը պաշտպանելու համար գյուղը շրջապատվել էր զինվորական տեխնիկայով: Նույնպիսի շինարարություն սկսվեց նաեւ Շուշիում: Ընդ որում՝ Խոջալուն գտնվում էր Ստեփանակերտ-Ասկերան, իսկ Շուշին՝ Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի վրա: Այսինքն՝ երկուսն էլ կարեւոր ռազմավարական դիրքեր էին զբաղեցնում: Ջանգվածային շինարարություն սկսվեց նաեւ մարզի մյուս ադրբեջանական բնակավայրերում: Մի երրորդ բնակավայրի հիմքեր դրվեցին Մալիբեյլի գյուղի մերձակայքում՝ Ստեփանակերտ-Մարտունի ճանապարհի վրա: Հսկայական մի քաղաքի կառուցման նախապատրաստություններ էին գնում Շուշիի դիմաց գտնվող մոտ 500 հեկտար զբաղեցնող տարածքի վրա: Եզրակացությունը, տվյալ դեպքում կարծես թե իրոք մեկն էր. Կենտրոնը եւ Ադրբեջանը միասին կազմակերպեցին սադրիչ

գործիչներ մինչ այդ ավելի լավատեսորեն էին վերաբերվում հուլիսի 18-ի որոշմանը եւ կողմնակից էին պայքարի թափը նվազեցնելուն:

գործողություններ, ԼՂԻՄ-ում մտցվեց հատուկ դրություն, եւ զինվորականների պաշտպանությամբ հսկայական շինարարություն էր ծավալվել ժողովրդագրական հաշվեկշիռը հօգուտ ադրբեջանցիների արագորեն եւ կտրուկ փոխելու համար:

Եթե այս ամենը շարունակվեր մի քանի ամիս, այդ խնդիրը հաջողությամբ լուծված կլիներ, դրանով ադրբեջանական տարբերակով լուծված կլիներ նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցը: Ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղում որեւէ նման նախաձեռնություն չցուցաբերեցին, կամ՝ դրան հակադրելու որեւէ բան չունեին: Փաստերի համեմատությունը առարկայորեն ցուցադրում է երկու հանրապետությունների իշխանությունների գործելակերպի տարբերությունը. Ադրբեջանը Խոջալուում երեք օրվա ընթացքում «փախստականների» համար կառուցեց 45 առանձնատուն, Հայաստանի իշխանությունները Սումգայիթից բռնագաղթվածների համար 8 ամսվա ընթացքում կառուցել էին այդպիսի ընդամենը 10 տնակ[333]:

Հանրապետության իշխանությունն ակնհայտորեն նահանջում էր իր դիրքերից, մասնավորապես՝ պարտականությունների կատարման բնագավառում: Շարժումը ստիպված էր իր վրա վերցնել իշխանության մարմինների բազմաթիվ գործառույթներ: Հնարավոր ամեն կարգի միջոցառումները, օգնությունները, ընդհուպ փախստականների տեղավորման հետ կապված հարցերն իրականացվում էին Շարժման ղեկավարների եւ, նրանց հսկողությամբ, հասարակական կարգով աշխատող բազմաթիվ ակտիվիստների ջանքերով: Նյութական տարաբնույթ օգնություն էր ցուցաբերում նոր ստեղծված եւ հոկտեմբերի 3-ին Շարժման համառ ջանքերի շնորհիվ պաշտոնապես գրանցված «Գթություն» բարեգործական ընկերությունը՝ Խաչիկ Ստամբոլցյանի ղեկավարությամբ[334]: Անգամ իշխանության միջին ու ստորին օղակներ, հիմնարկների ղեկավարներ վստահում եւ կատարում էին «Ղարաբաղ» կոմիտեի ցուցումները եւ հրահանգները: Հանրապետական իշխանությունը քայլ առ քայլ կազմալուծվում եւ բարոյալքվում էր: «Ղարաբաղ» կոմիտեն ակամա դառնում էր փաստական երկրորդ մի իշխանություն՝ հասարակական վստահության հսկայական պաշարով:

[333] *Այս ամենը նոյեմբերի 5-ի հանրահավաքում մանրամասն ներկայացրեց Լեւոն Տեր-Պետրոսյանը, որը նոր էր վերադարձել Լեռնային Ղարաբաղից (տե՛ս ՀՀԱՆԼ, 12/05.11.88):*

[334] *«Գթության» կանոնադրությունը կառավարության կողմից հաստատվեց հոկտեմբերի 8-ին:*

Այդ վստահության եւ Շարժման ուժի առարկայական դրսեւորումներից ու ապացույցներից մեկը կարելի է համարել, անշուշտ, 1988թ. նոյեմբերի 13-ին կայացած ընտրություններում Կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանի եւ «Գթություն» բարեգործական կազմակերպության նախագահ Խաչիկ Ստամբոլցյանի՝ ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր ընտրվելը թափուր մնացած ընտրատարածքներում: Եւ դա՝ այն դեպքում, երբ այս ընտրությունները Կոմիտեի կողմից, այսպես ասած, առաջին ճակատ չէին հայտարարվել: Այս փաստը կարեւոր էր մի քանի առումով: Դա Խորհրդային Միության պատմության մեջ առաջին դեպքն էր, որ նախ՝ իշխանության բարձրագույն մարմնի անդամների ընտրությունը կատարվում էր այլընտրանքի հիման վրա, երկրորդ՝ ընտրվում էին ոչ թե կուսակցական մարմիններում նախապես որոշված, այլ՝ սուր քաղաքական ընդդիմության թեկնածուները, երրորդ՝ նրանք հաղթում էին հասարակական ամենալայն եւ անվերապահ պաշտպանությամբ, եւ հաղթում են բարձր պաշտոնյաների[335]:

Դա Կոմունիստական կուսակցության առաջին լուրջ քաղաքական հրապարակային պարտությունն էր, հասարակության համար՝ հոգեբանական լուրջ մի արգելքի հաղթահարում, ինքնահաստատման առիթ եւ սեփական ուժերին վստահելու կարեւոր հիմք: Արդեն այդ ժամանակ հստակ էր, որ եթե տեղի ունենային Գերագույն խորհրդի ընդհանուր ընտրություններ, ապա Շարժումը վստահ հաղթանակ կտաներ:

Մինչ այդ Հայկական ժողովրդավարական շարժումն արդեն մշակել եւ արդյունավետ օգտագործում էր պայքարի շատ կարեւոր եւ արդյունավետ՝

[335] *Ընտրական հանձնաժողովները զանազան պատրվակներով հրաժարվեցին գրանցել նրանց թեկնածությունները: Հոկտեմբերի 16-ին կայացած քվեարկության ժամանակ ընտրողներից յուրաքանչյուրն իր քվեաթերթիկում ձեռքով ավելացնում էր Շարժման թեկնածուի անունը եւ քվեարկում նրա օգտին: Այդ պայմաններում անգամ նրանց հավաքած ձայները 3-4 անգամ գերազանցեցին իրենց հակառակորդների՝ հանրապետության ՆԳ նախարար Հուսիկ Հարությունյանի եւ ԱԳ նախարար Անատոլի Մկրտչյանի ստացած ձայներին: Ընտրությունները չկայացած հայտարարվեցին, եւ նշանակվեց կրկնական ընտրություն: Հասկանալով, որ ցանկացած կարգի պաշտոնյա դատապարտված է նույն ճակատագրին, իշխանությունն այս անգամ Շարժման թեկնածուների դեմ առաջադրեց «անբիծ հեղինակությունների»՝ բանաստեղծ Վահագն Դավթյանին, դերասան Սոս Սարգսյանին, մարզիկ Շավարշ Կարապետյանին: Վերջիններս արագ հասկացան, որ տվյալ դեպքում իրենք կարող են կորցնել իրենց, իրոք ունեցած հեղինակությունը, եւ հրաժարվեցին: Շարժման թեկնածուներն ընտրվեցին, եւ նրանց ստիպված էին ԳԽ պատգամավորի մանդատ տալ (մանրամասները տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 385-388):*

գործող օրենքների շրջանակներում իշխանության սահմանադրական լեգալ մարմինները՝ Խորհուրդներն աշխատեցնելու մեթոդը: Սրանով սկիզբ դրվեց քաղաքական պայքարի նույնքան կարեւոր ու արդյունավետ եւս մի ուղղության կամ մեթոդի՝ նույն գործող օրենքների շրջանակներում, օգտվելով հասարակական ամենալայն աջակցությունից, սեփական օրակարգի խնդիրները լուծելու համար մտնել իշխանության նույն այդ լեգալ մարմիններ: Սա ընդօրինակելի փորձ էր մյուս շարժումների համար:

ե) Երկիշխանության բարձրակետը. Գերագույն խորհրդի նոյեմբերի 24-ի նիստը

Եթե սեպտեմբերի վերջին իշխանությանը ինչ-որ կերպ հաջողվեց խուսափել արտահերթ նստաշրջան հրավիրելուց, ապա հերթական նստաշրջանից, որ նշանակված էր նոյեմբերի 22-ին, անհնար էր խուսափել: Շարժումը, որ ուներ հարցերի իր օրակարգը, բնական է, որ ամեն ինչ անելու էր դրանք քննարկման առարկա դարձնելու եւ համապատասխան որոշումներ ընդունել տալու համար: Հենց այդ խնդրին էր նվիրված նոյեմբերի 6-ի հանրահավաքը, որը եւ ԳԽ պատգամավորներին ուղղված համաժողովրդական պատվիրանի տեսքով պահանջում էր, որ երկրի իշխանության բարձրագույն մարմինը որոշումներ ընդունի հետեւյալ 11 հարցերի մասին.

ա) Վերահաստատել 1988թ. հունիսի 15-ի իր որոշումը ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումին դրական պատասխան տալու մասին, դիմել ԽՍՀՄ ԳԽ-ին՝ առաջարկելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին վերաբերող ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածը գերակա համարել ազգային հարաբերությունները կարգավորող մյուս նորմերի համեմատ.

բ) ՀԽՍՀ ԳԽ-ը պետք է պահանջեր չեղյալ հայտարարել Կովկասյան Բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշումը, որի հիման վրա Լեռնային Ղարաբաղը բռնակցվել էր Ադրբեջանին.

գ) կազմել հատուկ պատգամավորական հանձնաժողով՝ քննելու եւ քաղաքական գնահատական տալու 1920-88թթ. Լեռնային Ղարաբաղում, Նախիջեւանում եւ Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում ադրբեջանական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ կիրառված սոցիալական ճնշման, ազգային խտրականության, բռնի տեղահանության, պատմական հուշարձանների ոչնչացման եւ ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը.

դ) պահանջել ԽՍՀՄ ԳԽ-ից՝ քաղաքական գնահատական տալ սումգայիթյան ոճրագործությանը, հարուցված քրեական գործը դիտել որպես խմբակային բանդիտիզմի մեկ միասնական գործ եւ այն տեղափոխել ԽՍՀՄ Գերագույն դատարանի վարույթ.

ե) պաշտոնական բողոք հայտնել զանգվածային տեղեկատվության կենտրոնական եւ ադրբեջանական միջոցների նկատմամբ՝ Լեռնային Ղարաբաղի հարցը միակողմանի լուսաբանելու, սադրիչ հրապարակումների, հայ ժողովրդին ուղղված վիրավորանքների, հերյուրանքների համար եւ պատասխանատվության կանչել դրանց հեղինակներին.

զ) պահանջել ԽՍՀՄ ԳԽ-ից Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարել՝ հաշվի առնելով ազգային հարաբերությունները սահմանող հոդվածների կատարելագործմանն ուղղված՝ Հայաստանի եւ ԼՂ-ի առաջարկությունները (դրանք պետք է կցվեին որոշմանը).

է) ԽՍՀՄ Սահմանադրության մեջ նախատեսվող փոփոխությունները եւ ԽՍՀՄ ժող. պատգամավորների ընտրության մասին օրենքի նախագծերը գնահատել որպես ժողովրդավարացման գործընթացը խոչընդոտող եւ միութենական հանրապետությունների ինքնիշխանությունը սահմանափակող, մերժելի համարել դրանց ընդունումը, առաջարկել հանրապետությունների ներկայացուցիչներից կազմել հանձնաժողով՝ նոր նախագծեր պատրաստելու համար[336].

ը) դատապարտել 1915-22թթ. Հայոց ցեղասպանությունը, ապրիլի 24-ը հայտարարել զոհերի հիշատակի օր, դիմել ԽՍՀՄ ԳԽ-ին, որպեսզի այն եւս պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը.

[336] *ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի ինստիտուտը վերականգնելու որոշման հետ կապված՝ 1988թ. հոկտեմբերի 21-ից համաժողովրդական քննարկման էին դրվել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին եւ գործող Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու ԽՍՀՄ օրենքների նախագծերը: Հասկանալով, որ այլեւս դժվար է կուսակցական մարմիններում նախապես կազմված ցուցակներով ընտրություններ անցկացնել, եւ ժողովրդական պատգամավորների համագումարը կարող է անկանխատեսելի կազմ ունենալ, նախատեսվում էր առանձին քվոտաներ կոմկուսին, կոմսոմոլին, արհմիությունների եւ որոշակի հասարակական կազմակերպությունների համար, եւ պատգամավորների միայն մի մասն էր, որ պետք է ընտրվեր ուղիղ քվեարկությամբ: Սա ապահով ձեւ էր Կոմունիստական կուսակցության եւ նրան հավատարիմ նոմենկլատուրայի մեծամասնությունն ապահովելու համար: Սրա դեմ բողոքում էին բոլոր ժողովրդավարական ուժերը:*

թ) հանրաքվեն ընդունել որպես կարեւորագույն հարցեր լուծելու միջոց, հանրաքվե անցկացնել ոչ միայն ԳԽ-ի որոշմամբ, այլեւ ընտրողների 10%-ի պահանջով.

ժ) չհաստատել ՀԽՍՀ ԳԽ նախագահության որոշումը «Ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի մասին», որ կենտրոնական իշխանության համապատասխան որոշման կրկնությունն էր եւ նախապես համաժողովրդական քննարկման չէր դրվել.

ժա) հայտարարել, որ ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 28-ի «հասարակական կարգը պահպանելիս ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ներքին զորքերի պարտականությունների եւ իրավունքների մասին» հրամանագիրը պարունակում է հակասահմանադրական եւ հակաժողովրդավարական դրույթներ, եւ միջնորդել ԽՍՀՄ ԳԽ-ի առջեւ այն վերանայելու համար:

Եւ վերջապես՝ պահանջվում էր, որ նիստերի ողջ ընթացքը ուղիղ հաղորդմամբ հեռարձակվի հեռուստատեսությամբ[337]:

Փաստական երկիշխանության հաստատման ցայտուն մի պատկեր է ներկայացնում 1988թ. նոյեմբերի 7-ի շքերթը: Եթե մայիսի 1-ի շքերթի ժամանակ իրավապահ մարմինները կարողացան շատ բան կանխել, ապա այս օրվա միջոցառումը հստակ ցուցադրեց ժողովրդի իրական վերաբերմունքը, մի կողմից՝ իշխանությունների, մյուս կողմից՝ Շարժման ղեկավարների նկատմամբ: Քաղաքի կենտրոնական հրապարակը լցվեց մի քանի հարյուր հազար ժողովուրդ, իսկ հոսքը շարունակվում էր: Լենինի արձանի տրիբունայում տեղ էին զբաղեցրել Կոմունիստական կուսակցության ղեկավարները: Ցուցարարները պահանջում էին Կոմիտեի ելույթը: Ս. Հարությունյանն ստիպված էր «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին հրավիրել «իրենց» ամբիոնից ելույթ ունենալու, որ, իհարկե, չընդունվեց: Կոմիտեի համար ներքեւում առանձին խոսափող տեղադրվեց: Լեփլեցուն հրապարակում տեղի ունեցավ հերթական հսկայածավալ հանրահավաքը, ինչով ավարտվեցին նաեւ օրվա տոնական միջոցառումները: Երկրի ղեկավարությունը հեռացավ տրիբունայից:

Շարժումն ավելի կոշտ սկսեց խոսել նաեւ կենտրոնական իշխանության հետ: Եւ դրա իրավունքն ուներ՝ մասնավորապես կապված Սումգայիթի ոճրագործության՝ խորհրդային արդարադատության դատական ֆարսի հետ: Նոյեմբերի 12-ի հանրահավաքի անունից Ռաֆայել Ղազարյանի,

[337] *Փաստաթուղթը տե՛ս ՀՀԱՆԱ, 15/06.11.88:*

Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի ստորագրությամբ դիմում հղվեց Գորբաչովին, ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահ Վ.Ի. Տերեբիլովին եւ ՀԿԿ ԿԿ-ի 2-րդ քարտուղար Յու. Կոչետկովին: Դրանում պահանջվում էր քաղաքական գնահատական տալ կատարվածին, հրապարակել սպանվածների եւ անհետ կորածների լրիվ ցուցակը, անվավեր ճանաչել արդեն իսկ տարբեր տեղերում կայացված դատավճիռները, գործը՝ որպես մի ամբողջություն՝ հանձնել ԽՍՀՄ Գերագույն դատարանի քննությանը: Վերջում հեղինակները հայտնում էին, որ պահանջները չկատարելու դեպքում ստիպված կլինեն լայն հասարակական լսումներ կազմակերպել եւ «դիմել միջազգային համապատասխան իրավասու մարմինների»[338]:

Նոյեմբերի 14-ից Լեռնային Ղարաբաղում կրկին սկսվեցին գործադուլները: Նոյեմբերի 16-ին արտոնված հանրահավաքը զինվորականները ցրեցին ուժի եւ մահակների գործադրմամբ: Փորձ արվեց ձերբակալել «Կոունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովին, ինչն ավարտվեց բնակչության հետ ընդհարմամբ, եղան վիրավորներ: Նոյեմբերի 18-ից համընդհանուր գործադուլներ սկսվեցին նաեւ Հայաստանում: Հանրահավաքները կրկին մոտեցան կես միլիոնի սահմանագծին: Ահազնացող վտանգի այս պայմաններում ավելի ու ավելի էր տեսանելի ու ակնհայտ դառնում հանրապետության իշխանությունների անգործությունը, իրավիճակի վրա որեւէ կերպ ազդելու անկարողությունը: Իր ուսերին ունենալով հերթական անգամ ծանր վիճակում հայտնված Ղարաբաղին եւ Ադրբեջանից բռնագաղթի ենթարկվողներին օգնելու ծանրագույն խնդիրը՝ Շարժումը, միաժամանակ, նախապատրաստվում էր մի քանի օր հետո տեղի ունենալիք՝ ԳԽ-ի հերթական նստաշրջանին:

Շարժման հերթական բարձրակետի պայմաններում, ինչպես միշտ՝ նման դեպքերում, հանրապետության իշխանության պահվածքը դարձավ ավելի զիջող ու հանդուրժողական: Մամուլում մեծ տեղ սկսեց զբաղեցնել ղարաբաղյան թեման, սկսեցին արձանագրել փաստեր, մտքեր ու գնահատականներ, որոնք մինչ այդ հնչում էին միայն հանրահավաքներում, իսկ պաշտոնական տեսակետը ժխտում էր դրանք: Այսպես՝ հանրապետական մամուլում Լեռնային Ղարաբաղում կենտրոնական իշխանությունների որոշումների կատարման ընթացքը գնահատվում էր «անբավարար», անբավարար էր գնահատվում նաեւ հանրապետության օգնությունը մարզի բնակչությանը՝ շինարարական, կուլտուր-կենցաղային ձեռնարկումները,

[338] *ՀՀԱՆԱ, 15/12.11.88:*

անհամաձայնություն էր հայտնվում սումգայիթյան ոճրագործության դատավարությունը անջատ-անջատ, տարբեր դատարաններում անցկացնելու առիթով: Նույնիսկ արձանագրվում էր, որ «այժմ էլ մարզի բնակչությունը հարցի լուծման միակ ճանապարհը շարունակում է տեսնել մարզը Ադրբեջանի կազմից անհապաղ դուրս բերելու մեջ ու հավատում է արդարության հաղթանակին»[339]: Դրանից ընդամենը մեկ ամիս առաջ ԿԿ-ի Առաջին քարտուղար Ս. Հարությունյանը խստորեն քննադատում էր այսօրինակ մտքերը, ժխտում էր իշխանությունների կտրվածությունը ժողովրդից, փառաբանում հուլիսի 18-ի որոշումը եւ համարում, որ այն «բարձրացրեց մարզի հեղինակությունը եւ ընդլայնեց նրա ինքնուրույնությունը»[340]: Իսկ նոյեմբերի 18-ին ինքնակամ Ազատության հրապարակ եկան ԳԽ-ի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը եւ կոմկուսի կենտկոմի քարտուղար Գ. Գալոյանը՝ զեկուցելու հանրահավաքին, թե առաջիկա նստաշրջանում ինչ հարցեր են պատրաստվում քննարկել:

Նոյեմբերի 22-ին բացված նստաշրջանն ընթանում էր, բնականաբար, համաժողովրդական «վերահսկողության» պայմաններում: Առաջին օրն այն հասցրեց քննարկել բյուջեի հետ կապված հարցեր եւ ընդունել Շարժման պահանջած՝ Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին օրենքը: Օրենքը նաեւ նախատեսում էր առաջարկություն ներկայացնել ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը 1915թ. Ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու համար[341]: Սա ՀՀՇ Ծրագրում արձանագրված խնդիրներից առաջինն էր, որի կատարումն արդեն իրականություն դարձավ[342]:

[339] *«Սովետական Հայաստան», 19.11.1988:*

[340] *«Սովետական Հայաստան», 08.10.1988:*

[341] *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 22, հոդվ. 180:*

[342] *Դեռ սեպտեմբերի 18-ին «Ղարաբաղ» կոմիտեի տարածած «Համաժողովրդական պատվիրան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներին» թռուցիկում արդեն այս հարցը առաջարկվում էր մտցնել արտահերթ նստաշրջանի օրակարգ (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/18.09.88): Սեպտեմբերին դա չստացվեց: Նույն խնդիրը դրվել էր նաեւ նոյեմբերի 6-ին տարածած հերթական «Համաժողովրդական պատվիրանում» (ՀՀԱՆԱ, 15/06.11.88): Իր ծրագրում արձանագրված այս խնդրի լուծման համար ՀՀՇ-ն ստեղծել էր «Հայոց համազգային շարժման՝ 1915թ. ցեղասպանության պաշտոնական ճանաչմանն աջակցող խորհուրդ», որը եւ մանրակրկիտ նախապատրաստել էր այս հարցի քննարկումը Գերագույն խորհրդում: Մասնավորապես՝ նրա կողմից նախապատրաստվել, տարածվել եւ պատգամավորներին էր բաժանվել ընդարձակ մի փաստաթուղթ, որն ավարտվում էր հետեւյալ պահանջներով.*

Ակնհայտ էր, որ որեւէ կերպ անհնար պետք է լիներ կասեցնել Շարժման ներկայացրած նաեւ մյուս բոլոր որոշումների նախագծերի ընդունումը: Դա հնարավոր էր կանխել միայն լավ մտածված սադրանքով: Հաջորդ օրն անակնկալ ելույթ ունեցավ նստաշրջանին մասնակցելու հրավիրված՝ ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչ Ա. Վոլսկին եւ հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի մի շարք շրջաններում (մասնավորապես Կիրովաբադում) իրավիճակը չափազանց սրվել է, եւ ինքը պետք է վերադառնա: ԳԽ նախագահության նախագահն իր հերթին, նույն հիմնավորմամբ, առաջարկեց մնացած հարցերի մասին որոշումներն ընդունել առանց քննարկումներ ծավալելու: Իսկ օրակարգում դեռեւս մնացել էին ամենակարեւոր հարցերը. Հանրապետության սովետական եւ տնտեսական մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի վերաբերյալ ԽՄԿԿ ԿԿ-ի, ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի մասին, «Պետական կյանքի կարեւոր հարցերի ժողովրդական քննարկման մասին» Հայկական ԽՍՀ օրենքի նախագծի մասին, ԽՍՀՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու առաջարկների մասին եւ այլն: Հասկանալով, որ Վոլսկու ելույթն ու Ոսկանյանի առաջարկը ընդամենը ծուղակ են նման հեռանկարից խուսափելու համար, Ա. Մանուչարյանը (որ նիստին արդեն մասնակցում էր որպես ընտրված պատգամավոր), իր հերթին, առաջարկեց ոչ թե հարցերը քվեարկել առանց քննարկման, այլ 1-2 օրով հետաձգել նստաշրջանը եւ շարունակել բոլոր հարցերի քննարկումը՝ ըստ

ա) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա հերթական նստաշրջանի օրակարգի մեջ մտցնել 1915թ. թուրքական կառավարության կողմից կազմակերպված՝ Արեւմտյան Հայաստանի եւ Փոքր Ասիայի այլ շրջանների հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածի, տեղահանության եւ աքսորի գործողությունները որպես ցեղասպանություն ճանաչելու, ապրիլի 24-ը սգո եւ ոչ աշխատանքային օր հաստատելու հարցերը:

բ) ՀԽՍՀ-ի Գերագույն խորհրդի կողմից պաշտոնական դիմում ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդին, պահանջելով վերջինիցս, որ նա իր հերթական նստաշրջանի օրակարգի մեջ մտցնի 1915թ. Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու հարցը:

գ) ՀԽՍՀ-ի եւ ԽՍՀՄ-ի կառավարությունների կողմից պաշտոնական դիմում ներկայացնել Միավորված Ազգերի Կազմակերպությանը՝ 1915թ. հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու պահանջով (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/01.11.88:

էության: Ընդունվեց այս վերջին առաջարկը, եւ նստաշրջանն ընդհատվեց[343]:

Քիչ հետո պարզ դարձավ, որ 1-2 օրից նստաշրջանը չի վերսկսվի, իսկ կատարվածն իրականում նպատակ ուներ ցանկացած գնով խուսափել մյուս օրակարգային հարցերի քննարկումից եւ որոշումների ընդունումից: Սկսված նստաշրջանը ամեն կերպ տապալելու հրահանգը վստահաբար եկել էր Մոսկվայից: Վերջինս անհանգստացած էր հատկապես ԽՍՀՄ Սահմանադրության մեջ առաջարկված փոփոխությունների մասին բացասական որոշման ընդունման, ինչպես նաեւ ՀԽՍՀ գործող Սահմանադրության 75-րդ՝ հանրապետության ինքնիշխանության հետ կապված հոդվածում փոփոխություն մտցնելու առաջարկված նախագծից: Այդպիսի մի որոշում քանի օր առաջ արդեն ընդունել էր Էստոնիան[344]: Նստաշրջանը չընդհատելու դեպքում Մոսկվան մեկ շաբաթվա ընթացքում կունենար երկրորդ հանրապետության նմանօրինակ, խիստ անցանկալի որոշումը: Իսկ որ սկսված նստաշրջանը խափանելու հրահանգը եկել էր Մոսկվայից, վկայում է նաեւ հետեւյալ փաստը. նոյեմբերի 23-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հրամանագիր էր ընդունել «Ադրբեջանական ՍՍՀ-ում եւ Հայկական ՍՍՀ-ում հասարակական կարգի հաստատման անհետաձգելի միջոցների մասին», որով, մասնավորապես, իրավունք էր տրվում այն վայրերում, որտեղ պարետային ժամ է մտցված, 30-օրյա կալանքի ենթարկել հաստատված կարգը խախտողներին[345]: Այս հրամանագիրը նախատեսված էր, առաջին հերթին,

[343] Շուտով պարզվեց, որ այս տարբերակը եւս բավարարում էր իշխանություններին, եւ նստաշրջանն ընդհատումից հետո նրանք այն պարզապես չէին շարունակելու:

[344] Նոյեմբերի 16-ին Էստոնիայի ԳԽ-ը իր Սահմանադրության մեջ կատարած փոփոխություններով ու լրացումներով սահմանել էր, որ ԽՍՀՄ օրենքները Էստոնիայում կարող են գործել միայն Էստ. ԽՍՀ ԳԽ նախագահության կողմից գրանցվելուց հետո, հանրապետության ԳԽ-ը կարող էր կասեցնել միութենական օրենքների գործողությունը, ԽՍՀՄ Սահմանադրության փոփոխությունները եւս պետք է գործեին միայն հանրապետության օրենսդիր մարմնի կողմից վավերացումից հետո, հռչակվել էր հանրապետության օրենքների գերակայություն միութենականի նկատմամբ, բացառապես հանրապետության սեփականությունն էին հռչակվել հողը, նրա ընդերքը, ջրերը, արտադրական ձեռնարկությունները եւ այլն, ճանաչվել էր մասնավոր սեփականության իրավունքը: Սահմանադրական փոփոխությունների համապատասխան հոդվածները եւ Հռչակագրի դրույթները անվավեր ճանաչվեցին ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության նոյեմբերի 26-ի հրամանագրով (տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 48, հոդվ. 720):

[345] Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 47, հոդվ. 712:

Երեւանի համար, որտեղ եւ հաջորդ օրվա՝ նոյեմբերի 24-ի վերջում հատուկ դրություն ու պարետային ժամ մտցվեց:

«Ղարաբաղ» կոմիտեն անմիջապես ձեռնամուխ եղավ խաբեությամբ ընդհատված նստաշրջանը վերսկսելու միջոցներ փնտրելուն: Նրա ներկայացուցիչներ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Աշոտ Մանուչարյանի եւ Վազգեն Մանուկյանի՝ ողջ գիշեր տեւած բանակցությունները հանրապետության ղեկավարների հետ որեւէ արդյունքի չհանգեցրին: Նոյեմբերի լույս 24-ի գիշերը, առավոտյան ժամը 4-ին նրանք Ազատության հրապարակում իրենց սպասող հարյուր հազարավոր մարդկանց ներկայացրին իշխանությունների հետ բանակցությունների արդյունքները եւ Կոմիտեի որոշումը՝ հրավիրել պատգամավորներին եւ նստաշրջանը շարունակել այդ նույն հրապարակում:

Նոյեմբերի 24-ին նրանց կոչով եւ Շարժման մասնակիցների ամենագործուն ջանքերով, ի հեճուկս իշխանությունների, ԳԽ-ի պատգամավորների մեծ մասը՝ 210 հոգի, հավաքվեց Ազատության հրապարակում: Օպերային թատրոնի շենքում վերսկսվեց ընդհատված նստաշրջանը, որը եւ ընդունեց օրակարգում եղած հարցերի մասին համապատասխան որոշումներ՝ մերժելով ԽՍՀՄ սահմանադրական եւ ընտրական օրենսգրքի փոփոխությունների պարտադրվող նախագծերը[346]: Կենտրոնի համար խիստ կարեւոր այդ նախագծերին դրական եզրակացություն տալու խնդիրը Հայաստանի իշխանությունը ստիպված եղավ լուծել ՀՍՍՀ ԳԽ նախագահության որոշման մակարդակով[347]:

Խորհրդային Միության պատմության ընթացքում առաջին անգամ հանրապետություններից մեկի բարձրագույն իշխանության մարմինը նիստ գումարեց կոմկուսի կտրուկ արգելքի պայմաններում, ընդդիմադիր քաղաքական ուժի նախաձեռնությամբ, նրա սահմանած օրակարգով եւ նրա նշած վայրում: Այսպիսով, արձանագրվեց, որ Շարժումը ոչ միայն կարող է իր ուզած որոշումներն անցկացնել երկրի օրենսդիր մարմնում, այլեւ ինքը կարող է հրավիրել այդ մարմնի նիստերը: Սա, թերեւս, Շարժման այն

---

[346] *Այդ նիստն ու նրա ընդունած որոշումները ՀԽՍՀ ԳԽ նախագահությունը նոյեմբերի 25-ին անօրինական հայտարարեց (Տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ Գերագույն սովետի, 1988, 22, հոդվ. 191): Ավելի ուշ, Շարժման իշխանության գալուց հետո, նոր Գերագույն խորհրդի նախագահությունը 1990թ. հոկտեմբերի 9-ին չեղյալ համարեց «Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի՝ «1988 թվականի նոյեմբերի 24-ի անօրինական նիստի մասին» որոշումը եւ վերականգնեց 1988թ. նոյեմբերի 24-ին ընդունված փաստաթղթերը իրավազորությունը (տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1990, 19, հոդվ. 364):*

[347] *Տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՀ Գերագույն սովետի, 1988, 22, հոդվ. 190:*

բարձրակետն էր, որն արդեն ոչ թե երկիշխանություն էր նշանակում, այլ անցում Շարժման փաստական միիշխանության հաստատման: Ճիշտ է՝ ձեւականորեն որեւէ օրենք չէր խախտվել, սակայն աննախադեպ այս քայլն անօրինակ քաղաքական խիզախության ապացույց էր: Կոմիտեն, անշուշտ, հասկանում էր, որ դա իրեն կարող է եւ չներվել, եւ որ դրանով իրենք փաստորեն ստորագրում են սեփական ազատազրկման սանկցիան: Սակայն նրանք նաեւ հասկանում էին, որ ամենապատասխանատու պահին նահանջելով՝ կարող էին դեպրեսիայի եւ կազմալուծման մատնել Շարժումը, ինչի հետեւանքները կարող էին անդառնալի լինել: Կոմիտեն գիտակցված ընտրեց առաջին ճանապարհը:

զ) Ազգամիջյան հակասությունների սրումը, բռնագաղթ Ադրբեջանից եւ ադրբեջանցի բնակչության հեռանալը Հայաստանից

Ադրբեջանական մամուլով, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ ծայրահեղ աստիճանի հասան ահաբեկումները եւ բացահայտ կոչերը հայերի դեմ: Սկսվեց հայաբնակ շրջաններից՝ Կիրովաբադից, Շամխորից, Նախիջեւանից հայերի բռնի ու զանգվածային արտաքսումը: Նոյեմբերի 23-24-ին հատուկ դրություն եւ պարետային ժամ հաստատվեց այդ շրջաններում եւ Բաքվում, սակայն դա այս վերջին դեպքում ավելի շատ ձեւական բնույթ ուներ, հանրահավաքները եւ բռնությունները շարունակվում էին: Լեռնային Ղարաբաղում կատարվեց հերթական քաղաքական քայլը. ԼՂԻՄ մարզային կուսակցական կազմակերպությունը նոյեմբերի 25-ին որոշում ընդունեց դուրս գալ Ադրբեջանի հանրապետական կազմակերպությունից եւ դիմեց ԽՄԿԿ ԿԿ՝ անմիջապես նրա ենթակայության տակ անցնելու խնդրանքով[348]:

Հայ-ադրբեջանական խառը բնակչությամբ բնակավայրեր կային Հայաստանի Արարատի, Մասիսի, Վայքի, Եղեգնաձորի, Ամասիայի եւ այլ շրջաններում: Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ վայրերում հայ բնակչության նկատմամբ բռնությունների մասին լուրերն անմիջապես հասնում էին Հայաստան: Ադրբեջանն աշխատում էր բացառել Լեռնային Ղարաբաղի որեւէ շփում Հայաստանի հետ՝ փաստորեն շրջափակման մեջ պահելով մարզը: Հունիսի կեսերին բերքահավաքին օգնելու նպատակով Գորիսի շրջանից Լեռնային Ղարաբաղ ուղեւորվող 15 բեռնատարներ երկու անգամ ետ դարձվեցին Լաչինի շրջանից, երրորդ փորձի ժամանակ

---

[348] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе часть 1, с. 151-152.*

բեռնատարները քարկոծվեցին, վարորդները ենթարկվեցին ծեծի: Շուշիից շարունակվում էր հայ բնակչության դուրս մղումը: Մյուս կողմից՝ շարունակվում էր Շուշիում եւ մարզի այլ ադրբեջանական բնակավայրերում ադրբեջանցիների գրանցումն ու բնակեցումը: Դրանց, հիմնականում, տանում էին Հայաստանից:

Սումգայիթում իրականացված ոճրագործությունը, դրան հաջորդած փախստականության հոսքը Հայաստանում ապրող ադրբեջանցիների համար որոշակի հիմք էին մտածելու, որ իրենց համար դժվար է լինելու այստեղ ապրել: Չնայած նրանց նկատմամբ հանրապետության կոմունիստական ղեկավարության ցուցաբերած ուշադրությանը՝ այնուամենայնիվ, ոմանք արդեն իսկ գարնան ամիսներին լքեցին Հայաստանը, մյուսները ճամպրուկային տրամադրության մեջ էին: Մայիսի սկզբներին Բաքվից եւ Ադրբեջանի այլ բնակավայրերից Երեւանի հետ բնակարանի փոխանակման հայտ էր ներկայացրել 432 հայ ընտանիք, Երեւանից՝ Բաքվի հետ փոխանակության հայտ ուներ 11 ադրբեջանական ընտանիք[349]: Հանրահավաքների նոր վերելքը, սումգայիթյան դատավարության ծաղրուծանակը եւ այդ առիթով Հայաստանում աճող դժգոհությունը, Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի հայաշատ բնակավայրերում հայ բնակչության նկատմամբ կոպիտ ոտնձգությունների մասին լուրերը եւ այլն, նրանց հեռանալն առավել տրամաբանական էին դարձնում: Ադրբեջանցի բնակչության նկատմամբ ուշադիր էին ոչ միայն Հայաստանի իշխանությունները, Շարժումը նույնպես, սկզբունքային նկատառումներով, աշխատում էր բնակչությանը հեռու պահել ազգամիջյան բախումներից: Հանրահավաքներում, դրանց կազմակերպիչների ջանքերով, հանրապետության ադրբեջանական բնակչության դեմ ելույթներ չէին հնչում. ի տարբերություն Ադրբեջանի՝ դրանք կարող էին Շարժման դեմ կենտրոնական իշխանության ճնշումների եւ ուժի գործադրման առիթ դառնալ: Հայաստանից ադրբեջանցիների դուրս գալը տվյալ պահին ձեռնտու էր Ադրբեջանին, եւ խրախուսվում էր կենտրոնական իշխանության կողմից: Վերջիններիս, որպես «փախստականներ», փորձում էին բնակեցնել Լեռնային Ղարաբաղում՝ նպատակ ունենալով այդ կերպ փոխել մարզի բնակչության ազգային հաշվեկշիռը:

Դժվար էր ամենուր, մասնավորապես՝ մայրաքաղաքից դուրս, գյուղական վայրերում վերահսկողության տակ պահել իրավիճակը: Երբեմն կրքերը բորբոքվում էին, եւ մանր ընդհարումներ էին լինում խառը բնակչություն

[349] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.18, թ.36:*

ունեցող բնակավայրերում եւ շրջաններում: Ադրբեջանի հրահրմամբ Արարատի շրջանի Շիրազլու գյուղի մի խումբ ադրբեջանցի բնակիչներ՝ մոտ 300 հոգի, ցուցադրաբար հեռացել էին գյուղից եւ Թուրքիայի հետ պետական սահմանի մոտ ստեղծել վրանային բնակավայր: Նրանց օրինակին էին պատրաստվում հետեւել մեկ այլ՝ Շիդլու գյուղի ադրբեջանցիները: Ընդորում՝ հաճախ հենց ադրբեջանցիներն էին իրենց ագրեսիվ պահում: Արտաշատի շրջանի Դեղձուտ գյուղում հինգ ադրբեջանցիներ ծեծել էին հայ տղամարդու եւ կնոջ, որի հետեւանքով առաջացել էր պայթյունավտանգ իրավիճակ: Բայց իսկույն գյուղ էր մտել 100 հոգուց բաղկացած խորհրդային զորամիավորումը, որը եւ ստանձնել էր գյուղի 14 ադրբեջանցի ընտանիքների պաշտպանությունը, ինչից վերջիններս խիստ գոհ էին մնացել[350]: Ազգամիջյան հողի վրա հունիսի 17-ին ընդհարում էր տեղի ունեցել Մասիսի շրջանում, հրազենային վնասվածքներ էին ստացել տասը հայ երիտասարդներ:

Սումգայիթյան ոճրագործությունից հետո բռնագաղթի թափը կտրուկ մեծացավ նոյեմբերին, երբ ահաբեկումները, հայկական բնակավայրերի ու թաղամասերի վրա հարձակումները, թալանը, սպանությունների դեպքերը հաճախադեպ դարձան Կիրովաբադում, Շամխորում, Խանլարում, Դաշքեսանում, Բաքվում, այսինքն՝ Ադրբեջանի բոլոր հայաբնակ վայրերում: Շարժման հիմնական խնդիրներից մեկը դարձավ, ըստ հնարավորի, այդ վայրերում հայ բնակչության ֆիզիկական անվտանգության հետ կապված միջոցառումներ ձեռնարկելը, ինքնապաշտպանության կազմակերպումը, ինչպես նաեւ օրական հազարավոր փախստականների ընդունումը, արագ տեղավորումը: Բռնագաղթվածների թիվը նոյեմբերի դրությամբ հասավ 28000-ի[351]: Դեկտեմբերի առաջին օրերին թվերն աճում էին երկրաչափական պրոգրեսիայով: Զանգվածային բռնագաղթը չէր կարող համարժեք քայլեր չառաջացնել նաեւ Հայաստանում: Մի կողմից՝ անհրաժեշտ էր տեղավորել նրանց, մյուս կողմից՝ ադրբեջանցիներն իրենք էլ հասկանում էին, որ հարյուր հազարավոր տուն ու տեղ կորցրած մարդկանց ներկայությամբ անհնար է լինելու իրենց մնալը Հայաստանում: Ուստի նույնպիսի մեծ թափ ստացավ նաեւ նրանց արտագաղթը: «Ղարաբաղ» կոմիտեն արձանագրում էր, որ՝ «տեղական եւ զինվորական իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում հայ եւ ադրբեջանցի բնակչության զանգվածային տեղափոխությանը, այլեւ, ընդհակառակը, կարծես արագացնում են այդ պրոցեսը,

[350] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.221-122:*
[351] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 30.11.1988:*

ակնհայտ է դառնում, որ այն եթե ոչ ծրագրվել, ապա գոնե խրախուսվում է Մոսկվայի կողմից»[352]: Համարելով դա ազգամիջյան զանգվածային բախումների տեսակետից չափազանց վտանգավոր՝ Շարժման ղեկավարությունը ստիպված էր իր հսկողության տակ վերցնել նաեւ այս գործընթացը եւ զբաղվել նաեւ դրանով: Ճիշտ է՝ լուրջ դժվարություններ առաջացան հատուկ դրություն եւ պարետային ժամ մտցնելու հետ կապված, սակայն այս գործընթացը հնարավոր եղավ պահել վերահսկողության տակ:

Դեկտեմբերի 2-ին տարածած թռուցիկում Կոմիտեն կոչ էր անում «անել ամեն ինչ՝ խուսափելու համար տեղահանություններին ուղեկցող բախումներից, որոնք հանրապետության տարբեր շրջաններում արդեն հանգեցրել են որոշ ցավալի հետեւանքների»[353]: Շարժման ու նրա ղեկավարության բացառիկ հեղինակության եւ ամենօրյա աշխատանքի շնորհիվ ցավալի միջադեպերը մեծ ծավալներ չընդունեցին: Դա այն նվազագույնն էր, որից անհնար էր խուսափել այսպիսի լարվածության պայմաններում եւ մի հսկայածավալ գործողության ընթացքում:

Հատուկ դրության եւ պարետային ժամի հաստատումից հետո, հանրահավաքների անհնարինության պայմաններում, «Ղարաբաղ» կոմիտեն ամենօրյա թռուցիկներով տեղյակ էր պահում իրավիճակի մասին: Իրավիճակը լարված էր եւ վտանգավոր հատկապես Կիրովաբադում: Քաղաքի հայկական թաղամասը ստիպված դիմել էր ինքնապաշտպանության: Այստեղ էր տեղափոխվել նաեւ մյուս թաղամասերում ապրող հայ բնակչությունը: Նրանց անվտանգությունը որոշ չափով հսկում էին նաեւ ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումները: «Ղարաբաղ» կոմիտեի՝ դեկտեմբերի 1-ին տարածած թռուցիկը հայտնում էր, որ Կիրովաբադի իշխանությունները հայերին առաջարկել են մի փաստաթուղթ ստորագրել քաղաքը կամավոր լքելու մասին եւ մերժում են ստացել: Քաղաքի 35 հազար հայերից 7-8 հազարը կորցրել են իրենց ունեցվածքը: Նրանց պատկանող 1028 բնակարանները թալանված եւ հրկիզված են: Զգալի թիվ են կազմում անհետ կորածները, որոնց մեջ կան նաեւ երեխաներ: Գետաշենից անհնար է դարձել Կիրովաբադի հայերին սնունդ ուղարկելը[354]: Հաջորդ օրվանից սկսվում է ինքնաթիռներով եւ ուղղաթիռներով կանանց եւ երեխաների տարհանումը: Օրական հարյուրավոր եւ հազարավոր բռնագաղթված է մուտք գործում հանրապետություն նաեւ Բաքվից, Դաշքեսանից, Շամխորից, Գետաբեկից եւ այլ

[352] *ՀՀԱՆԱ, 15/02.12.88:*
[353] *Նույն տեղում:*
[354] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/01.12.88:*

բնակավայրերից: Կոմիտեի կողմից տարածված հատուկ մի հայտարարության մեջ այս ամենը համեմատվում էր 1915թ. հետ. «Փաստորեն՝ խաղաղ պայմաններում կատարվում է կազմակերպված, իր ծավալներով աննախադեպ բռնի տեղահանություն, այն, ինչը իրականացրեց Թուրքիան Արեւմտյան Հայաստանում, պատերազմի իրավիճակում»[355]:

Եթե Բաքվում, Ադրբեջանի մյուս քաղաքներում ու շրջաններում հայտարարված հատուկ դրությունն ու պարետային ժամը ձեւական էր, եւ ամենեին չէր խանգարում հանրահավաքների, ցույցերի եւ զանգվածային բռնությունների կազմակերպմանը հայ բնակչության դեմ, ապա Երեւանում այն գործում էր ամենայն խստությամբ: Դեկտեմբերի 1-ին Կոմիտեն ստիպված էր դիմել աննախադեպ մի քայլի. նրա կողմից տարածված «Դիմում աշխարհի ժողովուրդներին» փաստաթուղթը, Միավորված ազգերի կազմակերպությանը, նրա անդամ երկրների կառավարություններին ու պառլամենտներին ներկայացնելով Ադրբեջանում շուրջ կես միլիոն հայության գլխին կախված վտանգը, արձանագրում էր, որ խորհրդային կենտրոնական իշխանությունները կամ չեն կարողանում, կամ չեն ուզում ապահովել իրենց քաղաքացիների անվտանգության երաշխիքները: Դրա հետ միասին արտակարգ դրություն եւ պարետային ժամ մտցնելով Երեւանում՝ անհնար են դարձնում բռնությունների ենթարկվողներին որեւէ օգնության տրամադրումը: Այս հիմքերի վրա Կոմիտեն խնդրում էր. «Անհապաղ հրավիրել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ՝ քննարկելու համար Ադրբեջանում ստեղծված կացությունը»[356]:

Հատուկ դրության եւ պարետային ժամի պատճառով Երեւանում դրա հնարավորությունը չունենալով՝ Կոմիտեն ստիպված էր դեկտեմբերի 4-ին հանրահավաք հրավիրել Էջմիածնում: Քննադատելով Լեռնային Ղարաբաղի հարցի մասին ԽՍՀՄ կառավարության՝ նախորդ օրն ընդունած որոշումը, Կոմիտեն, նկատի ունենալով բռնագաղթվածների հսկայական հոսքը, նրանց օգնելու անհրաժեշտությունը, կոչ արեց դադարեցնել գործադուլը, որ շարունակվում էր արդեն 10 օրից ավելի:

Հատուկ դրություն մտցնելուց հետո էլ ամեն օր, երբեմն՝ օրը մի քանի անգամ, Կոմիտեի անունից տարածվում էին տեղեկատվական թերթիկներ եւ այլ թռուցիկներ: Ներքաղաքական կյանքի հսկողությունը եւ կազմակերպումը այս պայմաններում էլ շարունակում էր մնալ Շարժման եւ նրա ղեկավարության ձեռքում:

[355] *ՀՀԱՆԱ, 15/29.11.88:*
[356] *ՀՀԱՆԱ, 15/01.12.88*

է) Կենտրոնական իշխանության նոր ձեռնարկումները Շարժման դեմ

Հանրապետական իշխանությունների՝ Շարժման դեմ ուղղված ձեռնարկումները որեւէ արդյունք չէին տալիս: Այդ է վկայում հանրապետության դատախազ Վ. Նազարյանի՝ ԽՍՀՄ գլխավոր դատախազին եւ ՀԿԿ ԿԿ ուղղված տարեկան զեկուցագիրը: Դրանում նշվում է, որ 1988թ. ընթացքում միայն դատախազական մարմինների կողմից նախազգուշացումներ են տրվել «լուծարված «Ղարաբաղ» կոմիտեների 800 անդամների եւ ձեռնարկությունների 200 ղեկավարների, սակայն դրանք «ցանկալի արդյունք չեն տվել»: Փողոցային երթերի, հանրահավաքների, ցույցերի, ժողովների անցկացման կարգի մասին ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրից եւ ՀԽՍՀ ԳԽ նախագահության կողմից դրա հետ կապված պատիժների սահմանումից հետո կազմակերպվել էր 85 այդօրինակ չարտոնված միջոցառում, որոնց համար պատասխանատվության է կանչվել «միայն մի քանի տասնյակ մարդ»: Հանրապետության դատախազը համարում է, որ դատախազական մարմինները 1988-ին ավելի հաճախ «քարշ են եկել իրադարձությունների պոչից»[357]: Փաստորեն՝ նույն վիճակում էին նաեւ մյուս իրավապահ մարմինները: Պատճառը, մի կողմից՝ նոր իրավիճակում գործելու փորձի բացակայությունն էր, անձնակազմի ունակությունների պակասը, մյուս կողմից՝ Շարժման համաժողովրդական բնույթը, այնպիսի գաղափարների ու խնդիրների առաջքաշումը, որոնք վարակում էին նաեւ նույն այդ մարմինների միջին եւ ստորին օղակների աշխատողներից շատերին:

Եթե հանրապետական իշխանությունները բացարձակ անզոր վիճակում էին եւ բավարարվեցին միայն Օպերային թատրոնում կայացած ԳԽ նիստը ապօրինի եւ նրա որոշումները անվավեր ճանաչելով, ապա կենտրոնական իշխանությանը[358] այլ բան չէր մնում, քան դիմել ուժային միջոցների:

[357] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.31, թ.22:*

[358] *Կենտրոնական իշխանության մեջ, այն ավելի գործուն դարձնելու նպատակով, էական փոփոխություններ էին կատարվել: Հոկտեմբերի 1-ին ԽՍՀՄ ԳԽ-ի արտահերթ նստաշրջանում ԽՄԿԿ ղեկավար Մ. Գորբաչովը ստանձնել էր նաեւ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի պաշտոնը (այդ պաշտոնից ազատված Ա. Գրոմիկոյի փոխարեն), եւ նոր առաջին տեղակալ էր ընտրվել Ա. Լուկյանովը: Նոր ղեկավարներ էին ստացել նաեւ ուժային նախարարությունները. ՊԱԿ-ի նախագահ էր նշանակվել Վ. Կրյուչկովը, ՆԳ նախարար՝ Վ. Բակատինը:*

Նույն օրը՝ նոյեմբերի 24-ին, ժամը 00-ից[359], Երեւանում մտցվեց հատուկ դրություն եւ պարետային ժամ: Եւ հիմնավորումը ոչ թե «ապօրինի» նստաշրջանն էր, այլ տարածաշրջանում ազգամիջյան հակասությունների սրված լինելը: Հանրահավաքի տասնյակ հազարավոր մասնակիցները, որոնք Ազատության հրապարակում սպասում էին նստաշրջանի ավարտին, տեղեկանալով այդ մասին, որոշեցին դրան պատասխանել բողոքի համազգային գործադուլով եւ շարունակել այդ գործադուլն այնքան, մինչեւ Երեւանում կվերացվի հատուկ դրությունն ու պարետային ժամը, իսկ Ադրբեջանում կապահովվի հայ բնակչության անվտանգությունը:

«Ղարաբաղ» կոմիտեն ստիպված էր ավելի խիստ լեզու բանեցնել՝ խորհրդային զորքերը կոչելով «գաղութարար» ու «զավթիչ», հանրապետության ղեկավարությանը՝ «թուլամորթ» ու «Մոսկվայի հլու կամակատար»: Հաջորդ օրը տարածած թռուցիկում արձանագրվում էր. «Հայաստանի խաղաղ մայրաքաղաքը վերստին նվաճվեց սովետական գաղութարար բանակի կողմից: Կարգուկանոն հաստատելու պատրվակով Երեւանում հայտարարվեց պարետային ժամ, որը Ադրբեջանում սանձազերծված վայրագության նոր ալիքի պայմաններում կարելի է բնութագրել ոչ այլ կերպ, քան հայ ժողովրդին հավասարակշռությունից հանելու անպատկառ քաղաքական պրովոկացիա»: Միաժամանակ կոչ էր արվում՝ «արտակարգ զգոնություն հանդես բերել, խստորեն կատարել պարետային ժամի թելադրած պահանջները, բացարձակապես շփման մեջ չմտնել զորքի հետ եւ շարունակել գործադուլը մինչեւ նրա պայմանների լիակատար բավարարումը»: Նկատի ունենալով Ադրբեջանում, մասնավորապես՝ Կիրովաբադ քաղաքում ստեղծված տագնապալի վիճակը, Կոմիտեն հայտնում էր, որ կարող է «ավելի կտրուկ գործողությունների անհրաժեշտություն առաջանալ», եւ խոստանում ամենօրյա թռուցիկներով տեղյակ պահել իրավիճակի մասին[360]:

Հատուկ դրության եւ պարետային ժամի պահանջները բավականին խիստ էին: Երեւանի զինվորական պարետ, գեներալ-լեյտենանտ Վ. Սամսոնովի հրամանով պարետային ժամը գործում էր ժամը 22 -ից մինչեւ առավոտյան 6-ը: Սահմանափակվեց Երեւանում գրանցում չունեցողների մուտքը մայրաքաղաք, տրանսպորտի աշխատանքային ժամերը սահմանվեցին առավոտյան 7-ից մինչեւ 21-ը, խանութների աշխատանքը՝ ժամը 7-ից մինչեւ

[359] *Ընդ որում այդ մասին պաշտոնական հայտարարությունն արվեց դրանից ընդամենը 15 րոպե առաջ՝ 23.45-ին:*

[360] *ՀՀԱՆԱ, 15/25.11.88:*

20-ը, արգելվեցին ժողովները, ցույցերը, մտցվեց անձնագրային ռեժիմ[361]: Այս ամենը քիչ նշանակություն ունեցավ: Հայտարարված գործադուլը շարունակվում էր, հանրահավաքները հրավիրվում էին այլ բնակավայրերում: Պայքարի թափը չկոտրվեց, Շարժումը ծավալվեց շրջաններում. ըստ ՆԳՆ մի ամփոփագրի՝ դրանով «ընդլայնվեց հանրահավաքների եւ երթերի աշխարհագրությունը. Լենինական, Կիրովական, Զարենցավան, Արտաշատ, Կամո, Հրազդան, ընդամենը 28 քաղաքներում եւ շրջաններում» [362]: Մի քանի օր անց հատուկ դրություն եւ պարետային ժամ հայտարարվեց Հայաստանի նաեւ այլ շրջաններում: Այս ամենը կենտրոնական իշխանության նախաձեռնությունների մի մասն էր:

Իրավիճակի վրա ազդելու նպատակով հարցին անդրադարձավ նաեւ այդ օրերին սկսված ԽՍՀՄ ԳԽ-ի արտահերթ նստաշրջանը՝ որոշելով Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մասնակցությամբ համատեղ խորհրդակցություն անցկացնել եւ միջոցառումներ մշակել: Լեռնային Ղարաբաղում կենտրոնական իշխանության լիազոր ներկայացուցիչ Ա. Վոլսկին իր ելույթում իրավիճակը երկու հանրապետություններում գնահատեց որպես «բացահայտ սպառնալի»՝ պատճառը համարելով «նախկին ղեկավարության» քաղաքականությունը եւ այն, որ՝ «առաջվա պես տարբեր կլանների ձեռքին են մնում իշխանության շատ լծակներ»: Նա Լեռնային Ղարաբաղում շարժման ղեկավարներին անվանեց «կաշառակեր» եւ անհանգստություն հայտնեց, թե՝ «ավելի վաղ լուծարված «Ղարաբաղ» կոմիտեն ամեն գնով փորձում է արմատավորվել քաղաքական կառուցվածքների մեջ, նախադրյալներ ստեղծել հենց որպես իշխանություն օրինականացման համար»[363]: Լեռնային Ղարաբաղի առիթով նստաշրջանն ընդունեց հերթապահ եւ ոչինչ չասող մի որոշում[364], որի տոնից կարելի էր ենթադրել, թե իշխանությունները համարում են, որ նախաձեռնությունն արդեն ամբողջությամբ իրենց ձեռքում է, իրադրությունը՝ համարյա խաղաղված, եւ իրենք հանգիստ տիրապետում են իրավիճակին:

Իրականությունը, սակայն, բոլորովին այլ էր. Մոսկվան եւս տեսնում ու հասկանում էր, որ իրադարձությունների բնական ընթացքը կտրուկ միջոցներով չխոչընդոտելու դեպքում Շարժումը Հայաստանում դառնում է փաստական իշխանություն՝ իրավական առումով իշխանության գալու

[361] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 26.11.1988:*
[362] *«Коммунист», 11.01.1989.*
[363] *«Երեկոյան Երեւան», 02.12.1988:*
[364] *Տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 49, հոդվ. 733:*

ամենաիրական հնարավորություններով: Նա դրա հետ ոչ մի կերպ չէր կարող հաշտվել եւ պետք է փնտրեր լրացուցիչ միջոցներ ու լծակներ՝ արմատախիլ անելու համար վտանգավոր աստիճանի հասած հայկական ժողովրդավարական Շարժումը:

ՍՄԿԿ ԿԿ-ը եւ ՍՍՀՄ Նախարարների խորհուրդը դեկտեմբերի 5-ին ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ում քաղաքացիների սահմանադրական իրավունքների ամենակոպիտ խախտումների մասին»[365], եւ դեկտեմբերի 6-ին՝ «Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ պետական մարմինների առանձին պաշտոնատար անձանց անթույլատրելի գործողությունների մասին, որոնք քաղաքացիներին ստիպում են հեռանալ բնակության վայրերից»[366] որոշումները: Իրականում սրանք երկուսն էլ քող էին՝ ծածկելու համար այն իրականությունը, որ հայերի բռնագաղթը Ադրբեջանից կատարվում է կենտրոնական իշխանության լուռ համաձայնության կամ անճարակության պայմաններում, եւ ներքին զորքերն ամենափոքր ջանքերն իսկ չէին գործադրում դա կանխելու նպատակով, իսկ երբեմն օժանդակում էին: Իսկ Հայաստանում նույն այդ զորքերը մտահոգված էին միայն այն բանով, որ ադրբեջանցիների հեռանալը լինի անվնաս եւ ապահով:

Կենտրոնական իշխանությունը բարոյալքված եւ կազմալուծված հանրապետական իշխանությանը օգնելու նպատակով ձեռնարկում էր նաեւ այլ քայլեր, որոնք, սակայն, չէին հրապարակվում: Դեկտեմբերի 2-ին ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի ընդունած, հրապարակման ոչ ենթակա որոշմամբ նշվում են այն «առաջնահերթ միջոցառումները», որոնք պետք է ձեռնարկվեին անմիջապես: Դրանք հիմնականում վերաբերում են զանգվածային լրատվության միջոցների վրա հսկողությունը եւ գրաքննությունը խստացնելուն: Մասնավորապես՝ ԽՍՀՄ «Գլավլիտին» հանձնարարվում էր «ժամանակավոր գրաքննություն մտցնել տեղական զանգվածային միջոցների բոլոր հրապարակումների վրա»: Նախատեսվում էր «օգնելու» նպատակով ԿԿ-ի գաղափարախոսական բաժնից 2-3, իսկ «առաջատար» լրագրողներից 8-10 հոգի գործուղել երկու հանրապետություններ: Հանձնարարվում էր նաեւ պատժել հանրապետական այն լրատվամիջոցների ղեկավարներին, որոնք թույլ էին տվել այնպիսի նյութերի հրապարակում, որոնք ուղղված են եղել «ազգամիջյան թշնամանք հրահրելուն» եւ «իրավիճակի ապակայունացմա-

[365] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 06.12.1988թ.:*
[366] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 06.12.1988թ.:*

նը»[367]: Դեկտեմբերի 3-ին նույնպիսի գաղտնի որոշում է կայացնում ԽՍՀՄ կառավարությունը «Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ում տպագիր նյութերի եւ զանգվածային լրատվության միջոցների վրա ժամանակավոր գրաքննություն մտցնելու մասին»[368]:

Այս որոշումների գործնական հետեւանքը հստակ երեւում է հայաստանյան մամուլում: Այդ օրերին կազմված անանուն մի զեկուցագրից պարզվում է, որ լայն տարածում ունեցող «Երեկոյան Երեւան» եւ «Ավանգարդ» թերթերն, օրինակ, իրավունք չեն ունեցել Շարժմանը, ազգամիջյան հարաբերություններին եւ Ղարաբաղյան խնդրին առնչվող որեւէ տող գրել: Նրանք պարտավոր էին այդօրինակ նյութերն արտատպել միայն «Կոմունիստ» ռուսալեզու թերթից, որն էլ գտնվում էր Մոսկվայից եկած գրաքննիչների աչալուրջ հսկողության տակ[369]:

Միջոցառումների համալիրը, որ մշակում եւ իրականացնում էր կենտրոնական իշխանությունը, ընդամենը կանխում էր զանգվածային հանրահավաքները, երթերը եւ այլն: Համընդհանուր գործադուլը շարունակվում էր՝ Ադրբեջանի տարածքում հայ բնակչության կյանքի անվտանգության ապահովման, Երեւանում անհիմն մտցված պարետային ժամի վերացման եւ ԳԽ-ի նոյեմբերի 24-ի նստաշրջանի որոշումների ճանաչման պահանջներով: Շարժումն ու նրա ղեկավարությունը շարունակում էին իրենց գործունեությունը՝ ստիպված լինելով ստանձնել նաեւ հեղինակազրկված եւ կազմալուծվող հանրապետական իշխանությունների պարտականությունները: Շարժման ղեկավարության հեղինակությունը նաեւ այս պայմաններում շարունակում էր աճել, ազդեցության ոլորտները՝ ընդլայնվել: Ու դժվար է ասել, թե ինչով կավարտվեր այս ընթացքը, եթե ամեն ինչ իրար չխառներ այն մեծ բնական աղետը, որ դեկտեմբերի 7-ին պատուհասեց Հայաստանին:

---

367 *ЦХСД, ф.89, оп.4, д.6, л.1-3.*

368 *ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.30, թ. 3-4:*

369 *Անթվակիր եւ անստորագիր այս հաշվետվությունը ներկայացնում է «Կոմունիստ» թերթի մոտ երեք տասնյակ նյութերի այն ցանկը, որոնք թարգմանաբար հրապարակվել են հայերեն թերթերում 1988թ. դեկտեմբերի 1-ից մինչեւ 1989թ. մարտի 20-ը ներառյալ: Հաշվետվությունը կազմվել է «Երեկոյան Երեւան»-ի կողմից մարտի 9-ի համարում հրապարակված մի հոդվածի առիթով, որը, հավանաբար, գրաքննության կողմից համարվել է այս հրահանգից շեղում: Զեկուցագրի հեղինակը, հավաստիացնելու համար, որ «հոդվածը դրական է»՝ կից ուղարկում է դրա ռուսերեն թարգմանությունը (ՀՀԱՆԱ, 15/20.03.89):*

ը) Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը

1988թ. դեկտեմբերի 7-ին, առավոտյան ժամը 11 անց 41 րոպեին, Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ հսկայական ուժի երկրաշարժ: Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում էր Գյումրի (Լենինական) քաղաքից 25 կմ հյուսիս-արեւելք: Երկրաշարժն ընդգրկել էր 700000 բնակչություն ունեցող հսկայական մի տարածք: Փաստորեն՝ լրիվ ավերվել էր Սպիտակ քաղաքը, Գյումրի քաղաքի 80%-ը, մեծ վնաս էր հասել Ստեփանավան, Կիրովական քաղաքներին, ավերվել էր 365 գյուղ, որից 58-ը՝ լիովին: Զոհերի թիվը կազմում էր մոտ 25000, վիրավոր եւ խեղանդամ դարձածները՝ մի քանի անգամ ավելի, 500000 մարդ մնացել էր անօթեւան:

Առաջին հաղորդագրության համաձայն (ՏԱՍՍ լրատվական գործակալություն)՝ երկրաշարժի ուժգնությունը էպիկենտրոնում կազմել էր 8 բալ[370]: Տեղական աղբյուրները երկրաշարժի ուժգնությունը գնահատեցին 10 բալ[371], իսկ եւս երեք օր հետո՝ 10,5 բալ[372]:

Ավերածությունների զոհ դարձան հատկապես 60-80-ական թվականների կառույցները: Կատարված շինարարության հանցավոր անորակության մասին, որպես ավերածությունների եւ մարդկային բազմահազար զոհերի պատճառ, գրեց հենց պաշտոնական մամուլը. «Ամբարձիչը փլատակներից հանում է երկաթբետոնե ծածկասալը, որը օդում փշրվում, կտոր-կտոր է լինում, պողպատաձողը հեշտությամբ դուրս է գալիս բետոնից՝ ասես ապացուցելու համար, որ երկաթբետոնե կոնստրուկցիայում երկաթի եւ բետոնի կապ չի էլ եղել»[373]: Անորակ շինարարության նույն մեղադրանքը Հայաստանի 70-80-ական թվականների իշխանությունների հասցեին պաշտոնապես հնչեցրեց նաեւ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը: Նրա մի զեկուցման մեջ իմիջիայլոց տրվում է խորհրդային տարիներին, մասնավորապես՝ նրա վերջին երկու տասնամյակներում, իրականացված շինարարության յուրօրինակ «քաղաքական գնահատականը».

«Մոլեգնած տարերքը, իսկ շատ դեպքերում մարդկանց հանցավոր անբարեխղճությունը, որոնք ցածր որակական մակարդակով էին կատարել մինչնախագծային, նախագծային ու շինարարական աշխատանքները, մի

---

370 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 08.12.1988:*

371 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 10.12.1988:*

372 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 13.12.1988:*

373 *«Երեկոյան Երեւան», 21.01.1989:*

ակնթարթում խլեցին 25 հազար մարդկանց կյանք եւ հազարավոր մարդկանց հաշմանդամ դարձրին: Այսօր այդ գոտում քիչ են այն ընտանիքները, որոնք չողբային իրենց կորուստը, զայրույթով չխոսեին ինժեներական վրիպումների, այն մարդկանց մասին, ովքեր շինհրապարակներից գողացել են ցեմենտ, ամրաններ եւ այլ շինանյութեր, ովքեր խոտան աշխատանք են կատարել, բոլոր աստիճանի այն ղեկավարների մասին, ովքեր շեղումներ են թույլ տվել շինարարական նորմաներից ու կանոններից, իրենց անպահանջկոտությամբ անմեղ մարդկանց մահվան ու նյութական կորուստների պատճառ դարձել... շինարարի անունը երկար ժամանակ ժողովուրդը կընկալի որպես բացասական անուն, զգուշավորությամբ եւ հանդիմանությամբ: Մեծ աշխատանք պիտի կատարվի վերականգնելու համար լավ վերաբերմունքն ու վստահությունն այն մարդկանց հանդեպ, ովքեր կրում են շինարարի հպարտ անունը, ինչը հին ժամանակներից ի վեր հայ ժողովրդի պարծանքն է եղել»[374]:

Որքան էլ հուզական, սակայն գնահատականները ճշգրիտ էին:

* * *

Երկրաշարժը հարվածեց ամենածանր պահին, երբ Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերում, մասնավորապես՝ Կիրովաբադում, Դաշքեսանում, Խանլարում, Բաքվում՝ իր բարձրակետին էր հասել բռնությունների ալիքը: Բռնի տեղահանվածների հոսքը Հայաստան հաշվվում էր օրական հազարներով, երբեմն՝ տասնյակ հազարներով: Տեղերում ինքնապաշտպանության կազմակերպման, բնակչության շատ թե քիչ ապահով տեղափոխման, տեղավորման ու նրանց բազմաթիվ խնդիրների հոգսը փաստացի ընկած էր Շարժման կառույցների վրա: Եւ դա՝ Երեւանում եւ հանրապետության մեծ մասում հաստատված հատուկ դրության պայմաններում:

«Ղարաբաղ» կոմիտեն դեկտեմբերի 7-ին աղետի գոտում լինելուց հետո սկսեց կատարել այն գործնական քայլերի շարքը, որոնք անհրաժեշտ էին նման իրավիճակում: Առաջին գործն, անշուշտ, փրկարար խմբերի կազմակերպումն ու առաքումն էր: Կոմիտեն անմիջապես հանդես եկավ ինքնատիրապետումը պահպանելու, ծանրագույն փորձությանը դիմակայելու, «զոհողություններով ու արյան գնով ձեռք բերած ոգու կորովը» չկորցնելու կոչով: Դրանում նաեւ գործողությունների եւ իրավիճակը հաղթահարելուն ուղղված քայլերի որոշակի ծրագիր կար: Չնայած հանրապետության

[374] *«Խորհրդային Հայաստան», 26.06.1989:*

իշխանությունների կազմալուծված, բարոյալքված եւ հեղինակազրկված վիճակին, Կոմիտեն ծանրագույն այս պահին պատրաստակամություն էր հայտնում աղետյալ շրջաններում աշխատել նրանց հետ կողք-կողքի. «Ղարաբաղյան շարժման տեղական կոմիտեներին կոչ ենք անում կազմակերպվածության եւ զգաստության: Կոմիտեներին կից ստեղծվում են արտակարգ իրավիճակի շտաբներ, որոնք կազմակերպում են փրկարար աշխատանքների ջոկատներ եւ անօթեւաններին տեղավորող խմբեր: Փրկարար ջոկատները ղեկավարվում են աղետի վայրերում գործող կառավարական հանձնաժողովի շտաբներում Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ներկայացուցիչների ցուցումով: Խմբերը համագործակցում են տեղական իշխանությունների հետ եւ խնդիր ունեն լուծելու աղետյալներին տեղավորելու, կյանքի ապահովության, երեխաների ուսման գործը կարգավորելու հարցեր» [375]:

Կոմիտեն օգնություն կազմակերպելու համար նույն փաստաթղթով դիմեց Սփյուռքի կուսակցություններին, ընկերություններին ու հայրենակցական միություններին, Էջմիածնի եւ Կիլիկիո Աթոռներին: Դիմեց նաեւ ՄԱԿ-ին՝ խնդրելով մասնագետների համապատասխան հանձնաժողով ուղարկել՝ գնահատելու համար աղետի իրական չափերը եւ պատասխանելու երկու հարցի. առաջին՝ արդյո՞ք հնարավոր չէր կանխագուշակել երկրաշարժն ու նախազգուշական միջոցներ ձեռնարկել, երկրորդ՝ աղետի հետեւանքների մեջ ի՞նչ բաժին ունի բնությունը, եւ ի՞նչ բաժին՝ հանցավոր քաղաքաշինությունը: Կոմիտեն հույս էր հայտնում, որ երկրի ղեկավարությունը նման ողբերգության պայմաններում ողջամտություն հանդես կբերի եւ հնարավորություն կտա հայ ժողովրդին դրսեւորել իր կարողությունները՝ ապաքինվելու համար իրեն հասած ծանրագույն հարվածից: Դրա համար անհետաձգելի էին համարվում հետեւյալ միջոցառումները.

«**ա)** Վերացնել պարետային ժամը Երեւանում, որի առկայությունը, սկզբից ելնելով անհեթեթ լինելով, այժմ արդեն հեգնանք կարող է դիտվել մեր ազգային ողբերգության նկատմամբ եւ ավելի ելս սրել լարվածությունն ու գրգռվածությունը մայրաքաղաքում: Իսկ գործնական տեսակետից՝ պարետային ժամի վերացումը, Երեւանի բնակչության գործողությունների ազատությունը ապահովելով, հնարավորություն կտա լիովին նվիրվել տուժածների օգնության գործին, որին իրենց մասնակցությունը կարող են բերել նաեւ Երեւանում գտնվող զինվորական ստորաբաժանումները:

[375] *ՀՀԱՆԱ, 15/08.12.88:*

բ) Անհապաղ փակել Հայկական ատոմակայանը, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը, Կիրովականի քիմիական կոմբինատը, դադարեցնել խոշոր ջրամբարների, հատկապես՝ Եղվարդի ամբարտակի կառուցումը, որոնց հետագա գործարկումը հղի է հայ ժողովրդի գոյությանը սպառնացող աղետալի հետեւանքներով:

գ) Ադրբեջանից Հայաստան գաղթած փախստականների մի մասին տեղափոխել Լեռնային Ղարաբաղ, որը հնարավորություն կտա նրանց համար նախատեսված բնակելի տարածությունները տրամադրել երկրաշարժից տուժած հազարավոր ընտանիքների: Դրա համար նախ եւ առաջ հարկավոր է շուտափույթ վերացնել Լեռնային Ղարաբաղի շրջափակումը՝ Գորիս-Լաչին ճանապարհի հսկողությունը դնելով Հայաստանի պետավտոտեսչության եւ հանրապետության զինվորական հրամանատարության իրավասության տակ»[376]:

Կենտրոնական կառավարությանը կոչ էր արվում ողբերգությունը առիթ չդարձնել եւ՝ «...տուժած շրջանները համամիութենական կառույց հայտարարելով, չփորձել փոխել հանրապետության ազգային կազմը: Հայաստանը երախտագիտությամբ կընդունի կենտրոնական կառավարության եւ հանրապետությունների նյութական օժանդակությունը եւ գործի կդնի աշխատող ձեռքերի իր մեծաթիվ ավելցուկը»[377]:

Իրավիճակն այնպիսին էր, որ հաճախ անհրաժեշտ էր լինում ամենակարեւոր որոշումներն ընդունել րոպեների ընթացքում: Դեկտեմբերի 8-ին կենտրոնական իշխանության կողմից որոշում ընդունվեց Մոսկվայի Արտաքին առեւտրային բանկում աղետի գոտու համար հաշիվ բացելու մասին: Ընդամենը կես ժամ անց «Ղարաբաղ» կոմիտեն հրապարակեց եւ լրատվական գործակալությունների միջոցով աշխարհով մեկ տարածեց իր հետեւյալ պաշտոնական հայտարարությունը.

«Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, դիմելով ողջ աշխարհի երկրների կառավարություններին, հասարակական կազմակերպություններին եւ բարի կամքի տեր բոլոր մարդկանց, ովքեր պատրաստակամություն են հայտնել նյութական օժանդակություն ցույց տալ Հայաստանի աղետյալներին, խնդրում է հրաժարվել ՍՍՀՄ Արտաքին առեւտրի բանկին վայրուտա փոխանցելու մտքից եւ առաջարկում է Եւրոպայում եւ Ամերիկայում ստեղծել օգնությունը կազմակերպող երկու կենտրոն, որոնց նպատակը

[376] *Նույն տեղում:*
[377] *Նույն տեղում:*

պետք է լինի Հայաստանին օգնել միմիայն շինարարական տեխնիկայով, պատրաստի արտադրական ձեռնարկություններով, դեղորայքով, հագուստով, սնունդով եւ համապատասխան մասնագետներով: Որպես եւրոպական կենտրոնի պատասխանատու անձ՝ Կոմիտեն առաջարկում է Շառլ Ազնավուրի, իսկ Ամերիկյան մայրցամաքի համար՝ Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանի թեկնածությունը»[378]: Նույն օրը Կոմիտեի անունից համապատասխան առաջարկությամբ հեռագրեր ուղարկվեցին Շառլ Ազնավուրին եւ Ջորջ Դոքմեջյանին:

Էական հետեւանքներ ունեցավ «Ղարաբաղ» կոմիտեի՝ Մոսկվայի Արտաքին առեւտրային բանկին չվստահելու եւ այնտեղ ֆինանսական միջոցներ չփոխանցելու՝ ճիշտ ժամանակին արած կոչը: Եւրոպայում եւ ԱՄՆ-ում իրոք ստեղծվեցին օգնության այդ կենտրոնները՝ Շառլ Ազնավուրի եւ Ջորջ Դոքմեջյանի հանձնարարությամբ՝ Քրրք Քրրքորյանի ղեկավարությամբ, ինչի շնորհիվ օգնության համար տրամադրված ֆինանսական միջոցների մեծ մասը ծառայեց իր նպատակին: Դրանից, իհարկե, խիստ դժգոհ մնաց խորհրդային իշխանությունը: Այդ է վկայում երկու ամիս անց խորհրդային հետախուզական տվյալների հիման վրա կազմված զեկուցագիրը. «Նկատվում է կայուն եւ Արեւմուտքի կողմից հրահրվող կարծիք՝ ԽՍՀՄ Արտաքին տնտեսական բանկ փող փոխանցելու աննպատակահարմարության մասին»[379]:

Դեկտեմբերի 9-ին Կոմիտեն տարածեց նաեւ մի ուղերձ՝ ուղղված աշխարհի բոլոր մասնագետներին եւ սեյսմոլոգներին՝ խնդրելով տալ տեղի ունեցած երկրաշարժի երկրաշարժագրական տվյալների վերլուծությունը եւ դրա հիման վրա պատասխանել մի քանի հարցերի. **ա)** Հնարավո՞ր էր նախապես հաշվարկել այդ երկրաշարժի հավանականությունը, եւ՝ կանխատեսումների բացակայությունը բացատրվում է գիտության այսօրվա մակարդակո՞վ, թե՞ այլ պատճառներով: **բ)** Ի՞նչ ուժի է եղել երկրաշարժը: **գ)** Երկրաշարժի պատկերի վրա չե՞ն եղել մանրամասներ, որոնք պայթյուն են ենթադրում երկրաշարժից առաջ կամ հետո: **դ)** Ինչպիսի՞ն են կանխատեսումներն այս շրջանում մոտակա ժամանակում եւ տեսանելի ապագայում[380]:

[378] *ՀՀԱՆԱ, 15/08.12.88: Կոմիտեի՝ արտասահմանյան ֆինանսական օգնությունների հետ կապված անհանգստությանը լիովին արդարացված էր. ԽՍՀՄ Արտաքին առեւտրային բանկում աղետի գոտու համար հավաքված շուրջ 7 միլիոն դոլարը հետագայում այդպես էլ հնարավոր չեղավ ստանալ:*
[379] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.14:*
[380] *ՀՀԱՆԱ, 15/09.12.88:*

* * *

Տրամագծորեն այլ էր հանրապետության իշխանությունների վարքագիծը եւ գործելակերպը: Մ. Գորբաչովի հեռագիրը ուղղված «Հայաստանի քաղաքացիներին» գնահատվում էր որպես «անգնահատելի բարոյական աջակցություն», երախտագիտությամբ նշվում էր աղետից հետո նրա կողմից արտասահմանյան ուղեւորությունն ընդհատելը եւ Հայաստան գալը: Իսկ առանցքային միտքն այն էր, որ արհավիրքին դիմակայելու գործնական միջոցառումների եւ աշխատանքների հարցերում պետք է ամբողջությամբ ապավինել կենտրոնական իշխանություններին, նրանց կազմած հանձնաժողովներին եւ նրանցից ակնկալվող օգնությանը[381]:

Դեկտեմբերի 7-ին Կոմիտեի բոլոր անդամները մեկնեցին աղետյալ շրջանները, իսկ երեկոյան, հանրապետության կառավարության հետ պայմանավորվեցին փրկարարական եւ այլ աշխատանքները համատեղ եւ համակարգված կազմակերպելու եւ իրականացնելու միջոցառումների մասին[382]: Իշխանությունն, իհարկե, չէր կարող չընդունել առաջարկը: Սակայն հաջորդ օրը երեկոյան արդեն պարզ դարձավ, որ գործնականում անհնար է աշխատել իշխանության տեղական մարմինների, աղետի գոտում գտնվող նրանց կառույցների ու պաշտոնյաների հետ: Կոմիտեն ստիպված էր հստակեցնել իր պարտականություններն ու անելիքները, տեղերում ստեղծել իր շտաբներն ու այդտեղ ուղարկել իր ներկայացուցիչներին: Առաջին օրվանից սկսած՝ Կոմիտեի շտաբից օրական 60-70 ավտոբուս կամավորներ էին ուղարկվում փրկարարական աշխատանքներին մասնակցելու համար: Ուշադրության կենտրոնում էին հատկապես գյուղական շրջանները, որոնք առաջին օրերին կարծես մոռացվել էին: Կոմիտեի շտաբը ստեղծվեց Սպիտակի շրջանի Շիրակամուտ գյուղում: Շարժման ղեկավարության գրագետ, իրավիճակին համարժեք եւ հստակ աշխատանքը չէր կարող անմիջապես չնկատվել: Նույնիսկ օտարերկրյա կազմակերպությունները գերադասում էին հումանիտար օգնության գծով իրենց անելիքները համաձայնեցնել եւ համակարգել ոչ թե իշխանության մարմինների, այլ Կոմիտեի եւ նրա ստեղծած կառույցների հետ: Առիթը, որքան էլ ողբերգական, բայց ակամա ցույց էր տալու, որ Շարժումն ի վիճակի է ոչ միայն քաղաքական պայքարի, այլեւ

381 *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԽ-ի, 1988, 23, հոդվ. 192:*

382 *Այս օրվա մանրամասները արձանագրել են Կոմիտեի անդամներ Համբարձում Գալստյանը (տե՛ս* ***Գալստյան Հ.****, Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 196-198 եւ 411-428) եւ Աշոտ Մանուչարյանը՝ նույն օրերին տարածած ռուսերեն մի թռուցիկով (ավելի ուշ այն հրապարակվեց, տե՛ս «Դրոշակ» 01.02.1989, էջ 10-14):*

ամենաարտակարգ իրավիճակներում կարող է դրսեւորել բացառիկ կազմակերպական ունակություններ եւ արդյունավետ աշխատանք: Փրկարարական աշխատանքների կազմակերպմանը, հումանիտար օգնության ստացման եւ բաշխման դժվարին գործը հաջողությամբ իրականացնելուն մեծապես օգնում էր Կոմիտեի բարձր բարոյական վարկանիշը: Որեւէ մեկի մտքով չէր կարող անցնել թերանալ նրա հանձնարարությունները կատարելիս, չարաշահումների, կաշառակերության փաստեր թույլ տալ եւ այլն: Ավելին՝ առաջին մի քանի օրում հենց Կոմիտեի ներկայացուցիչների կողմից բացահայտվեցին ու կանխվեցին ստացվող օգնությունների հետ կապված՝ որոշ չինովնիկների կողմից չարաշահումների մի քանի փորձեր[383]:

Գլուխը կորցրած իշխանության, չարաշահումների սովոր եւ ծանրաշարժ բյուրոկրատական ապարատի ֆոնի վրա այս ամենն առավել ցայտուն էր երեւում: Եթե այս ընթացքը շարունակվեր մեկ-երկու շաբաթ, Շարժման ղեկավարությունը, ըստ էության, դառնալու էր հանրապետության միակ իրական, փաստական ճանաչված իշխանությունը:

թ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատազրկումը

Երկրաշարժի առիթով Հայաստան ժամանած Գորբաչովը խոստովանում է, որ իր համար չափազանց անակնկալ էին թե՛ աղետի գոտում[384], թե՛ Երեւանում սովորական մարդկանց բարձրացրած հիմնական հարցերը. «Ես երեկ ցնցված էի մի փաստից. Երեւանում փողոցում ինձ հարց են տալիս. «Իսկ ինչպիսին կլինեն հարաբերությունները, մենք ինչպես երկխոսություն կհաստատենք ոչ պաշտոնական կազմակերպությունների հետ: Ու նորից Ղարաբաղի թեման... Այդ ի՞նչ աստիճան մարդ պետք է բարոյազուրկ լինի»[385]: «Ոչ պաշտոնական կազմակերպությունն» այս դեպքում «Ղարաբաղ» կոմիտեն էր եւ ՀՀՇ-ն: Այն, ինչ երկրի առաջին դեմքը բարձրաձայն

383 *Եւ ամբողջ զավեշտն այն էր, որ քիչ անց (Կոմիտեի անդամների ձերբակալություններից հետո) իշխանության ներկայացուցիչների եւ պետական քարոզչամեքենայի կողմից Կոմիտեն կրկին ամենից ավելի մեղադրվում էր այն բանում, որ իբր նրանց թիկունքում կանգնած են եղել կաշառակերներ եւ կոռումպացված տարրեր (տե՛ս, օրինակ՝ «Коммунист», 04.01.1989.*

384 *Գորբաչովին չափազանց սառն էին ընդունել Լենինականում: Եւ որքան էլ թիկնազորն աշխատել էր նրան շրջափակված պահել բնակչության հետ անմիջական շփումից, այնուամենայնիվ, ոմանք կարողացել էին մոտիկից հայտնել իրենց վերաբերմունքը երկրի առաջին դեմքին:*

385 *«Երեկոյան Երեւան», 12.12.1988:*

անվանում էր «բարոյազրկություն», իրականում նրան մատուցված անառարկելի փաստն էր, որ ժողովրդի մեջ Շարժման ղեկավարությունը բացառիկ հեղինակություն էր վայելում, իսկ Ղարաբաղի խնդրին շարունակում էր մեծ կարեւորության տրվել: Եւ դա էր զայրացրել ու ափերից հանել Գորբաչովին: Նրան հարցնում են ոչ միայն ավերված երկրի վերաշինման, այլ նաեւ Ղարաբաղի մասին, ոչ թե Հայաստանի իշխանությունների, այլ «ոչ պաշտոնական կազմակերպությունների» հետ համագործակցության մասին: Անշուշտ, Գորբաչովը սպասում էր, որ աղետն իր ահավորությամբ հասարակության համար առաջնահերթ եւ միակ խնդիր դառնալով՝ պետք է նրանց համար օրակարգից հանած լիներ թե՛ Ղարաբաղի հարցը, թե՛ դրա հետ կապված «ոչ պաշտոնական կազմակերպություններին»: Մինչդեռ, ահա, պարզվում էր ճիշտ հակառակ պատկերը: Եւ դրա հիմքում ոչ թե աղետի հետեւանքներն արհամարհելու «բարոյազուրկ» մտածողությունն էր, այլ այն փաստը, որ բոլոր, այդ թվում նաեւ աղետի հետեւանքների վերացման հարցերում հասարակությունն իր հույսերը կապում էր Շարժման ղեկավարության, ոչ թե հանրապետական իշխանության մարմինների հետ:

Այս իրավիճակի հետ հաշտվել՝ կնշանակեր Հայաստանում վերջնականապես կորցնել իշխանությունը: Հանրապետության իշխանությունը ոչ թե դեմքն էր կորցրել, այլ ծանր հոգեվարքի մեջ էր, եւ նրան փրկելու համար էր, որ Գորբաչովը կայացրեց Շարժումը ֆիզիկապես գլխատելու՝ «Ղարաբաղ» կոմիտեին մեկուսացնելու քաղաքական որոշումը, ինչն ի կատար ածվեց անմիջապես՝ դեկտեմբերի 10-ին:

Դեկտեմբերի 10-ին Կոմիտեի անդամները Գրողների միության շենքում, իրենց տրամադրված երկու սենյակներում, զբաղված էին փրկարարական եւ այլ աշխատանքների կազմակերպման գործով: Շենքի առջեւ հավաքված էր անհանգստացած բազմություն՝ մարդիկ, որոնք, ինչպես նախորդ օրերին, եկել էին իրենց օգնությունն առաջարկելու եւ աղետի գոտի մեկնելու համար: Հավաքված էին նաեւ մեծ թվով կանայք, որոնք մամուլից տեղեկանալով, որ Խորհրդային Միության տարբեր տեղերից ցանկություն են հայտնել որբ մնացած երեխաներին որդեգրել, եկել էին դա թույլ չտալու եւ իրենց պատրաստակամությունն էին հայտնում որբերին պահելու ու խնամելու համար: Մարդկային բազմության առկայությունը համարելով հատուկ դրության ռեժիմի խախտում՝ այստեղ խուժեցին զինվորականները՝ գեներալ Մակաշովի գլխավորությամբ, ցրեցին բազմությունը եւ ձերբակալեցին շենքում ներկա Կոմիտեի անդամներ Լեւոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Վազգեն Մանուկյանին, Սամվել Գեւորգյանին,

Ալեքսան Հակոբյանին եւ աշխատանքների կազմակերպմամբ զբաղված այլ մարդկանց, ընդհանուր հաշվով՝ 22 հոգու: Հայտարարվեց, որ ձերբակալությունները կատարվել են հատուկ դրության ռեժիմի խախտման համար, եւ նրանց ենթարկել են դրա համար սահմանված առավելագույն՝ 30-օրյա կալանքի: Կոմիտեի մյուս անդամները ստիպված էին անցնել ընդհատակ: Դեկտեմբերի 14-ին իր գրասենյակում ձերբակալվեց «Գթություն» բարեգործական միության նախագահ Խաչիկ Ստամբոլցյանը: Դեկտեմբերի վերջերին հաջողվեց ձերբակալել Կոմիտեի եւս երկու անդամների՝ Վանո Սիրադեղյանին եւ Սամսոն Ղազարյանին, ինչպես նաեւ՝ Կոմիտեի «փոխարինող կազմից»՝ Արշակ Սադոյանին եւ Ալբերտ Բաղդասարյանին:

Դեկտեմբերի 11-ին, չնայած Շարժման ղեկավարների մի մասը ձերբակալված էր, մի մասն էլ՝ աղետի գոտում, Երեւանում տարերային հավաք ու երթ տեղի ունեցավ, որին մասնակցեց 15-20 հազար մարդ: Ջանգվածային այս բողոքի պատճառը, նախ, խոր վիրավորանքն էր[386], անհանգստությունը ձերբակալվածների համար, եւ այն արդարացի համոզմունքը, որ առանց Կոմիտեի աղետի գոտում փրկարարական աշխատանքները կդատապարտվեն ձախողման: Երթի մասնակիցները պահանջում էին ազատ արձակել ձերբակալվածներին կամ հրապարակել ձերբակալման պատճառը, հանրապետությունում վերացնել պարետային ժամը, որը տվյալ պայմաններում հայ ժողովրդի համար վիրավորական լինելուց բացի, լրջորեն խոչընդոտում էր փրկարարական աշխատանքներին[387]: Երթն սկսվելուց մեկ ժամ հետո, երկաթուղային կայարանի մոտակայքում, առանց զգուշացման, ետեւից ցուցարարների վրա հարձակվեցին մահակներով եւ հրազենով զինված զինվորներ: Նրանք նաեւ արցունքաբեր գազ օգտագործեցին, սակայն ցուցարարները հաջողությամբ դիմադրեցին եւ փախուստի մատնեցին զինվորներին: Քիչ անց զինվորները նույն կերպ հարձակվեցին նաեւ «Նաիրի» կինոթատրոնի մոտ հավաքվածների վրա: Ընդհարումների ժամանակ օգտագործվեց նաեւ հրազեն: Նույն օրը երեկոյան տարածվեց «Ղարաբաղ» կոմիտեի թռուցիկը, որը նախորդ օրը կատարված ձերբակալությունների եւ

---

[386] *Ձերբակալության օրվա ընտրությունն իր հիմքում ակնհայտորեն սադրիչ բնույթ ուներ. դեռ նախորդ օրը երկրաշարժի բազմահազար զոհերի հիշատակը հարգելու համար Խորհրդային Միության մասշտաբով սգո օր էր հայտարարված: Դեկտեմբերի 10-ին Կոմիտեն աշխատում էր նույն կերպ, ինչ նախորդ օրերին, արտառոց ոչինչ չկար, եւ ոչինչ չէր խանգարում նրանց ձերբակալման որոշումն իրականացնել հաջորդ օրը:*

[387] *ՀՀԱՆԱ, 15/14.12.88:*

հետագա բռնությունների հեղինակ էր համարում Գորբաչովին եւ տալիս այսպիսի գնահատական. «Իր պղծությամբ անգերազանցելի, համազգային սուգն անարգող նման գործողություն իրեն թույլ չի տվել անելու Արեւմուտքի որեւէ բռնակալ, Արեւելքի որեւէ բռնապետ»[388]:

Իշխանություններն անմիջապես ցրեցին Շարժման ստեղծած համազգային համագործակցության շտաբը, աղետի գոտու քաղաքներում, շրջաններում, օդանավակայաններում ստեղծված դրա մասնաճյուղերը: Ընդ որում՝ դրանք ստեղծվել էին հանրապետական իշխանությունների համաձայնությամբ: Դրանով իսկ վերացվեց ժողովրդական վստահելի վերահսկողությունը ստացվող բազմաքանակ օգնությունների հաշվառման եւ նպատակային բաշխման վրա:

Ձեռնարկված պատժիչ գործողությունները ժամանակավոր միջոցառումներ չէին: Իշխանությունն իր առջեւ նպատակ էր դրել հարմար առիթն օգտագործել՝ ժողովրդավարական Շարժումը մինչեւ վերջ արմատախիլ անելու համար: Դա առանձնապես հստակ երեւաց ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի կտրուկ փոխված բառապաշարից: Ձերբակալությունից երկու-երեք օր անց, մի հեռուստատեսային ռեպորտաժի ժամանակ, նա համարելով, որ արդեն հասել է ժամը, ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ն. Ռիժկովի թիկունքից կոչ էր անում «խփել դրանց ատամներին»[389]: Նա, որ մինչ այդ ամեն կերպ աշխատում էր չսրել հարաբերությունները Կոմիտեի հետ, հրապարակավ նրա հասցեին սուր արտահայտություններ չանել, իսկ մյուս կողմից էլ՝ ստիպված էր եղել շատ դեպքերում տեղի տալ Շարժման պահանջներին, դեկտեմբերի 17-ի հեռուստաելույթում բոլորովին այլ կեցվածք ուներ: Նրա արդեն համարձակ որակումներն ու պիտակավորումները «այսպես կոչված Ղարաբաղ կոմիտեի» հասցեին [390] հուշում էին, թե ԿԿ-ի առաջին քարտուղարին վստահեցրել էին, որ Կոմիտեն

[388] *ՀՀԱՆԱ, 15/11.12.88:*

[389] *Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 207, ծթ. 36:*

[390] *Ահա նրա ելույթից մի քանի հատված. «Քաղաքական արկածախնդրությունը, նախաձեռնությունը խլելու, բարձրագոչ ճշմարտություններով սին հեղինակություն ձեռք բերելու ձգտումը», «(Լեռնային Ղարաբաղը եւ երկրաշարժից տուժածները) այդ ուժերի համար ոչինչ չարժեն, քան մանրադրամ մեծ քաղաքականության իրենց խաղերում», «բացահայտ պայքար են մղում իշխանության համար», «նրանց ցինիկ կարծիքով, մեր ժողովրդի գլխին պայթած դժբախտությունը չպետք է շեղի միտինգներից, իշխանությունների վրա ճնշում գործադրելուց» եւ այլն (տե՛ս «Սովետական Հայաստան», 18.12.1988):*

այլեւս չի վերադառնա: Այսինքն՝ ակնհայտ էր, որ իշխանությունները չէին բավարարվելու 30-օրյա վարչական կալանքով. նրանք մտադիր էին կալանավորել Կոմիտեի բոլոր անդամներին եւ նրանց, ծանր մեղադրանքներ առաջադրելով, տեւական ժամանակով մեկուսացնել: Հակառակ դեպքում՝ 30-օրյա կալանքի ժամկետը լրանալուց հետո ստիպված պետք է լինեին ձերբակալվածներին ազատ արձակել, քանի որ նրանց դեմ ո՛չ ձերբակալման պահին, ո՛չ էլ անմիջապես հետո, պաշտոնապես որեւէ այլ մեղադրանք չէր հարուցվել, համենայնդեպս, այդ մասին չէր հայտարարվել:

Պետական ահաբեկչության ալիքը, որ սկսվել էր նոյեմբերի 24-ին հատուկ դրություն եւ պարետային ժամ հայտարարելով, Կոմիտեի անդամների ձերբակալումից հետո ավելի խորացավ: Ըստ ՆԳՆ ամփոփագրի՝ ընդամենը մեկ ամսվա ընթացքում պարետատներ բերման էին ենթարկվել 5000 եւ ձերբակալվել 270 մարդ[391]: Կոմիտեի՝ ընդհատակ անցած մյուս անդամներին՝ Դավիթ Վարդանյանին, Համբարձում Գալստյանին, Աշոտ Մանուչարյանին, Ռաֆայել Ղազարյանին ձերբակալել հնարավոր եղավ հունվարի 7-ին, առաջին ձերբակալվածների հայտարարված վարչական կալանքի ժամկետի լրանալուց 2 օր առաջ, անլեգալ բնակարանում հրավիրված մի նիստի ժամանակ: Նրանց հետ միասին ձերբակալվեցին նաեւ Դավիթ Շահնազարյանը, Երջանիկ Աբգարյանը, Ավետիք Իշխանյանը, Աշոտ Դաբաղյանը եւ ուրիշներ, ընդամենը՝ 13 հոգի:

Այս ընթացքում ձերբակալվել էր նաեւ Իգոր Մուրադյանը, չնայած նա վաղուց որեւէ կապ չուներ Շարժման ղեկավարության հետ[392]: Ավելի վաղ ձերբակալվել էր Լեռնային Ղարաբաղի «Կոունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովը:

ժ) Կոմիտեի դեմ գաղտնի հարուցված քրեական գործը

Քաղաքացիական եւ զինվորական իշխանությունները հայտարարում էին, թե ձերբակալությունները կատարվել են հատուկ դրության ռեժիմի խախտման համար, եւ որ դրա համար նրանք պատժվում են 30-օրյա վարչական կալանքով, ինչից հետո ազատ կարձակվեն: Նրանք պարզապես ստում էին: Կոմիտեի անդամների դեմ իրականում քրեական գործ էր

[391] *Տե՛ս «Коммунист», 11.01.1989.*

[392] *Չնայած նա էլ պահվում էր նույն բանտում եւ ազատ արձակվեց Կոմիտեի հետ միասին, սակայն նրա գործը կազմվել եւ վարվում էր առանձին: Առանձին էր նաեւ Ա. Մանուչարովի գործը:*

հարուցվել, որ այդ պահին զգուշանում էին խոստովանել, իսկ դրա մտահղացումն էլ որոշակի պատմություն ուներ: Մի շարք փաստաթղթերի համադրումը արդեն ծանոթ իրադարձություններին օգնում է պարզել իրականությունը:

1988թ. նոյեմբերի 22-ին ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամներ Ա. Յակովլեւը, Վ. Չեբրիկովը, Գ. Ռազումովսկին եւ Ա. Լուկյանովը ԽՄԿԿ ԿԿ ուղղված գրության մեջ անհանգստություն են հայտնում երկու հանրապետություններում զանգվածային անհնազանդության մասին եւ արձանագրում. «Եղած իրավական միջոցներով կանխել այդ հակահասարակական գործողությունները, ինչպես նաեւ **մեկուսացնել դրանց կազմակերպիչներին, սադրիչներին եւ ակտիվ մասնակիցներին, անհնար է»** (ընդգծումը մերն է,-Ա.Ս), եւ որպես «ժամանակավոր միջոց» առաջարկում են ԳԽ նախագահության այնպիսի մի հրամանագիր, որը հնարավորություն կտար «հասարակական կարգը պահպանող ուժերին լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել նմանօրինակ գործողությունները կանխելու համար»[393]: Անմիջապես հաջորդ օրը բավարարվում է այս պահանջը. նոյեմբերի 23-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը հրամանագիր է ընդունում Ադրբեջանում եւ Հայաստանում հասարակական կարգի պահպանման մասին, որով հատուկ դրության եւ պարետային ժամի խախտման համար մինչեւ 30-օրյա վարչական կալանք էր սահմանվում[394]:

Պատահակա՞ն էին այս գրության եւ դրա հիման վրա ԽՍՀՄ ԳԽ նախագահության հրամանագրի ընդունման օրերը: Դիտարկենք դրանք նույն օրերի հայաստանյան իրադարձություններին զուգահեռ: Նույն՝ նոյեմբերի 22-ին սկսված ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանում Շարժումն անց էր կացրել իր կողմից թելադրված առաջին որոշումը, եւ ակնհայտ էր, որ անց էր կացնելու իշխանության համար խիստ անցանկալի մյուս որոշումները եւս, մասնավորապես՝ մերժվելու էին ԽՍՀՄ Սահմանադրության մեջ եւ ընտրական օրենսգրքում առաջարկված փոփոխությունների նախագծերը: Նստաշրջանը խաբեությամբ ընդհատվեց, եւ դա արվեց Մոսկվայի ներկայացուցիչ Ա. Վոլսկու նախաձեռնությամբ: Այսինքն՝ նա անմիջապես զեկուցել էր իրավիճակի մասին եւ Կենտրոնից հրահանգ ստացել ցանկացած գնով խափանել նստաշրջանի շարունակումը: Պետք է ենթադրել, որ հենց դրանից անմիջապես հետո է կազմվել եւ ԽՍՀՄ ԳԽ նախագահություն ուղարկվել Յակովլեւի

[393] *ЦХСД, ф.89, оп. 4, д. 6, л. 5.*

[394] *Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, հոդվ. 712:*

եւ մյուսների գրությունը: Հաջորդ օրվա՝ նոյեմբերի 23-ի հանրահավաքը անզիջում պահանջում էր վերսկսել նստաշրջանը: Իր հերթին, նույն օրը Մոսկվայում ընդունվեց ԽՍՀՄ ԳԽ նախագահության՝ 30-օրյա վարչական կալանք նախատեսող հրամանագիրը: Այնուհետեւ, Հանրապետության իշխանության հետ նոյեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը բանակցությունների ձախողումից հետո «Ղարաբաղ» կոմիտեն հայտարարեց նստաշրջանը սեփական ուժերով Օպերային թատրոնում հրավիրելու մասին, ինչը եւ տեղի ունեցավ նույն օրը երեկոյան: Դրան ի պատասխան էլ մի քանի ժամ անց Երեւանում հատուկ դրություն եւ պարետային ժամ հայտարարվեց: Այսինքն՝ հատուկ դրություն եւ պարետային ժամ մտցնելու մասին որոշումը քաղաքական էր, եւ դրա միակ նպատակն էր՝ կանխել Հայաստանի ԳԽ-ի խիստ անցանկալի որոշումները՝ ծայրահեղ դեպքում Կոմիտեի անդամներին վարչական կալանքի ենթարկելու միջոցով: Հավանաբար, չենթադրվեց, որ Շարժումը կկարողանա նոյեմբերի 24-ին ժամերի ընթացքում անհրաժեշտ թվով պատգամավորներ հավաքել Օպերային թատրոնում, կամ պարզապես չհասցրին անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները հատուկ դրությունն ավելի վաղ հայտարարելու համար: Առաջացած մի քանի ժամվա «պատուհանը» Շարժումը կարողացավ օգտագործել ԳԽ նստաշրջան հրավիրելու եւ համապատասխան որոշումներ կայացնելու համար: Հատուկ դրությունը հայտարարվեց օրվա վերջում, իսկ հաջորդ օրը՝ արդեն հատուկ դրության ապահով պայմաններում, ՀԽՍՀ ԳԽ նախագահությունը ապօրինի ճանաչեց նստաշրջանը եւ անվավեր՝ նրա ընդունած որոշումները:

Շարժումը չգնաց առճակատման անիմաստ ու վտանգավոր խորացման: Իշխանությունն, իր հերթին, որ տվյալ պահին իր հիմնական խնդիրը լուծել էր, կարծես թե առայժմ բավարարվեց դրանով եւ հետագա օրերին էլ ձեռնպահ մնաց, թեկուզ, վարչական կալանքի պատրվակով, նրա ղեկավարներին ազատազրկելուց, կամ՝ սպասելով հարմար առիթի, կամ՝ մինչ այդ ձեռնարկելու համար եւս մի քանի անհրաժեշտ նախապատրաստական քայլեր: Ակնհայտորեն այդ նախապատրաստությունների շղթայի օղակներից պետք է համարել դեկտեմբերի սկզբներին կենտրոնական իշխանության մարմինների ընդունած՝ Հայաստանում գրաքննությունը խստացնելու եւ այն Կենտրոնի լիակատար վերահսկողության տակ վերցնելու մասին որոշումները եւ կատարված քայլերը[395]: Իսկ Կոմիտեի անդամներին

[395] *ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի դեկտեմբերի 2-ի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի դեկտեմբերի 3-ի որոշումների մասին խոսեցինք վերեւում:*

ձերբակալելու համարձակությունը նա ստացավ միայն ահավոր երկրաշարժի շնորհիվ եւ Գորբաչովի անմիջական հրահանգով: Ավելին՝ այդ առիթը այնքան հարմար թվաց, որ որոշվեց նրանց դեմ քրեական մեղադրանք հարուցել եւ տեւական ազատազրկմամբ գլխատել Շարժումը: Այս վերջին որոշումը, սակայն, առայժմ պետք է գաղտնի պահվեր, չհրապարակվեր՝ միանգամից հասարակական մեծ ընդվզում չառաջացնելու համար:

Հատուկ դրության ռեժիմի խախտման պատրվակով Կոմիտեի անդամների մի մասի ձերբակալումից երեք օր անց՝ դեկտեմբերի 13-ին, ԽՍՀՄ դատախազության քննչական բրիգադի ղեկավար Յու. Ա. Բուրցեւի որոշմամբ արդեն քրեական գործ էր հարուցվել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ[396]: Ընդ որում՝ դրա համար որպես հիմք էր ծառայել «ՀԽՍՀ ՆԳ նախարարության կողմից ստացված «Ղարաբաղ» կոմիտեի անդամների գործունեության մասին» զեկուցագիրը: Խոսքը վերաբերում է դեկտեմբերի 9-ի ամսաթվով ՆԳ նախարար Հուսիկ Հարությունյանի «Ինֆորմացիային»՝ ուղարկված հանրապետության դատախազ Վ. Նազարյանին: Ահա այս հիմքի վրա ԽՍՀՄ դատախազության քննչական բրիգադի ղեկավարը որոշում է քրեական գործ հարուցել ՀԽՍՀ ՔՕ 69 հոդվածի հատկանիշներով, այն վերցնել սեփական վարույթ եւ սկսել քննությունը: Սակայն առայժմ, քրեական գործի շրջանակներում, որեւէ քննություն չսկսվեց:

Դեկտեմբերի 11-ի երթի առիթով մի այլ քրեական գործ էլ հարուցվել էր ՀԽՍՀ ՆԳ հատկապես կարեւոր գործերով քննիչ Աղայանի կողմից՝ «Վ. Սիրադեղյանի, Հ. Գալստյանի եւ մյուսների նկատմամբ», որը եւ դեկտեմբերի 20-ին ուղարկվել էր հանրապետության դատախազություն: Հաջորդ քայլը կատարվեց դեկտեմբերի 20-ին. ԽՍՀՄ գլխ. դատախազության որոշմամբ ստեղծվեց 42 հոգուց բաղկացած քննչական խումբ՝ դատախազության,

[396] *Այս, հաջորդ եւ մի քանի այլ տեղեկություններ Կոմիտեի դեմ հարուցված քրեական գործի հանգամանքների մասին սիրահոժար մեզ է տրամադրել Վ. Նազարյանը 1995 թվականի սկզբին, երբ միասին աշխատում էինք Սահմանադրական հանձնաժողովում ու նրա աշխատանքային խմբում: Այդ տարիներին (1988-89) նա էր հանրապետության դատախազը, քաջածանոթ էր գործի հանգամանքներին, եւ հենց ինքն էր պարբերաբար, քննչական խմբի միջնորդությամբ երկարաձգում Կոմիտեի անդամներին կալանքի տակ պահելու ժամկետները՝ քննչական գործողությունները ավարտին հասցնելու համար: Այս ամենով հանդերձ, հետագայում Հայաստանի նոր իշխանության ղեկավարները նրա նկատմամբ քինախնդիր չեղան, այլ, նկատի ունենալով նրա մասնագիտական գիտելիքներն ու ունակությունները, վստահեցին կարեւոր պաշտոններ եւ ընդգրկեցին նաեւ Սահմանադրական հանձնաժողովի կազմում:*

ՊԱԿ-ի եւ ՆԳ համակարգերի աշխատողներից՝ ԽՍՀՄ դատախազության գլխավոր քննչական վարչության պետի տեղակալ Վ. Ա. Տիտովի ընդհանուր ղեկավարությամբ, խմբի ղեկավար հաստատվեց նույն Յու. Ա. Բուրցեւը: Վերջինս էլ իր որոշմամբ միավորեց դեկտեմբերի 13-ի՝ իր կողմից եւ դեկտեմբերի 12-ի՝ Աղայանի կողմից հարուցված գործերը, այն վերցրեց սեփական վարույթ, իսկ քննչական խումբը համալրեց եւս 20 անդամով:

Այս ամենը կատարվում էր գաղտնի, եւ ինչպես ձերբակալվածները, այնպես էլ բոլորը համոզված էին, որ Կոմիտեի անդամները 30-օրյա կալանքի ժամկետի լրանալուց հետո ազատ կարձակվեն, ինչպես որ պաշտոնապես հայտարարել ու նրանց տեղեկացնում էին իրավասու մարմինները:

Ո՞րն էր այս գաղտնապահության, իրականում՝ խաբեության պատճառը: Իշխանությունը կարիք ուներ ստուգել այդպիսի մի քայլի նկատմամբ հասարակության եւ հայկական Շարժումը պաշտպանող այլ ուժերի հակազդեցության աստիճանը: Ինչպես ցույց տվեց դեկտեմբերի 11-ի բուռն բողոքի ակցիան, եւ ինչպես ցույց պիտի տար միութենական եւ միջազգային մասշտաբով ծավալված հաստատակամ եւ համընդհանուր պաշտպանությունը, կենտրոնական իշխանության մտահոգությունը հիմնավորված էր: Եւ նա չհամարձակվեց միանգամից հայտնել Կոմիտեի նկատմամբ քրեական գործ հարուցած լինելու մասին: Նրան ժամանակ էր անհրաժեշտ լայնամասշտաբ քարոզչության միջոցով հասարակական կարծիքի վրա ազդելու, այն նախապատրաստելու, հնարավոր հակազդեցությունը մեղմելու համար: Երկրորդ պատճառն այն էր, որ դեկտեմբերի 10-ին ձերբակալվել էր Կոմիտեի անդամների միայն մի մասը, մյուս մասը, ազատության մեջ գտնվելով, կարող էր իշխանության դեմ հասարակական այդ հակազդեցությունը հասցնել ամենաբարձր աստիճանի: Երբ խոսքն ընդամենը 30-օրյա վարչական կալանքի մասին էր, իշխանության համար երկու վտանգներն էլ անհամեմատ ավելի փոքրանում էին: Միայն Կոմիտեի բոլոր անդամների ձերբակալումից հետո կարելի էր խոսել քրեական գործի մասին, ինչը եւ արվեց՝ մյուսներին ձերբակալելուց եւ մոսկովյան «Բուտիրկա» եւ «Մատրոսսկայա տիշինա» բանտեր տեղափոխելուց հետո:

* * *

Այսպիսով, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ձերբակալելուն եւ նրանց քրեական մեղադրանք հարուցելուն կենտրոնական իշխանությունը գնաց նման մտահղացում ունենալուց մոտ մեկուկես ամիս մանրակրկիտ նախապատրաստվելուց հետո եւ օգտվելով այդ ընթացքում տեղի ունեցած

ծանր երկրաշարժի ընձեռած բարենպաստ առիթից: Նման քայլ կատարելու համար խորհրդային իշխանությունն ուներ հիմնական շարժառիթ, այն է՝ ԽՍՀՄ-ում եւ Արեւելյան Եւրոպայում հայկական ժողովրդավարական շարժման՝ ժողովրդավարական շարժումների փաստական լոկոմոտիվը լինելու՝ իր համար մահացու հանգամանքը: Իսկ տվյալ պահին դրան գումարվել էին մի քանի այլ շարժառիթներ:

Առաջին. Ղարաբաղյան շարժման սկզբից ի վեր Մոսկվան ստիպված էր եղել ճանաչել խնդիրը, մի շարք որոշումներ ընդունել, որոնք, ըստ էության, սահմանափակում էին Ադրբեջանի ինքնիշխանությունն այս տարածքում, իսկ հուլիսի 18-ի որոշմամբ այնտեղ նշանակել էր իր լիազոր ներկայացուցչին: Այս ամենը Շարժմանը չէր բավարարել, եւ համաժողովրդական պայքարը շարունակելը հանգեցրել էր նրան, որ Կենտրոնը ստիպված էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդրում նոր զիջում կատարել: 1988-ի դեկտեմբերին ԽՍՀՄ Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը տրվեց արտակարգ դրություն եւ կառավարման հատուկ ձեւ մտցնելու լիազորություն: Ակնհայտորեն, դա արվում էր, առաջին հերթին, ԼՂԻՄ-ի համար, ինչը եւ քիչ անց կիրառվեց: Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը (եթե այն ըստ նշանակության գործեր), փաստորեն, նշանակում էր մարզն անջատել Ադրբեջանից: Չէր կարելի թույլ տալ, որ Շարժումը դա համարեր իր հաղթանակը: Ուստի եւ պետք էր, նախ, մեկուսացնել նրա ղեկավարներին եւ փորձել խեղդել Շարժումը: Եւ իրոք՝ Հատուկ կառավարման կոմիտեի մասին որոշումն ընդունվեց եւ հրապարակվեց հենց այդպիսի պայմաններում:

Երկրորդ. Նույն այդ, փաստորեն Շարժման կողմից պարտադրված՝ Կենտրոնի որոշման դիմաց Ադրբեջանին պետք էր ինչ-որ կերպ փոխհատուցել: Այդ փոխհատուցումը կարող էր լինել հենց Կոմիտեի ձերբակալումը եւ նրան քրեական մեղադրանք ներկայացնելը: Միայն այս դեպքում հնարավոր կլիներ նրան հավաստիացնել, թե Հատուկ կառավարման կոմիտեի հիմնելու որոշումը ժամանակավոր մի միջոց է, իրական բովանդակություն չի ունենալու, իսկ հետո կարելի է վերականգնել իրերի նախկին վիճակը:

Երրորդ. ընդունված է, որ ավելի արդյունավետ է «մտրակի» եւ «բլիթի» քաղաքականությունը՝ միաժամանակ: Լեռնային Ղարաբաղի հարցում կատարված արտաքուստ էական զիջումը՝ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումն, իր հերթին, յուրատեսակ փոխհատուցում էր հայկական կողմին՝ «Ղարաբաղ» կոմիտեի դեմ հարուցված քրեական գործի դիմաց:

Կենտրոնը համոզված էր, որ դա շատերը կընդունեն որպես «Անջատում» կարգախոսի փաստական իրականացում, եւ դրանով, գեթ սկզբնական շրջանում, էապես կկրճատվի Շարժման սոցիալական բազան, մանավանդ՝ Լեռնային Ղարաբաղում[397]:

Չորրորդ. եւ վերջապես՝ Կոմիտեի ձերբակալմամբ պետք է լուծվեր խիստ գործնական խնդիր. երկու-երեք ամիս հետո նշանակված էին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունները: Հայաստանում արդեն իսկ կայացած փորձը[398] եւ ամենապարզ հաշվարկները ցույց էին տալիս, որ բացառիկ ժողովրդականություն վայելող Շարժումը կարող է իր թեկնածուներին անցկացնել, թերեւս, բոլոր ընտրատարածքներում: Եւ դրա դեմ այլ միջոց կարծես թե չկար, քան նրա ղեկավարության մեկուսացումը:

«Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը, այնուամենայնիվ, ռիսկ էր. հիշենք Յակովլեւի եւ մյուս բարձրաստիճան պաշտոնյաների՝ վերեւում բերված փաստաթղթի շատ կարեւոր՝ «մեկուսացնել դրանց կազմակերպիչներին անհնար է» կտրական միտքը: Դա ճիշտ դիտարկում էր, եւ Կենտրոնի քաղաքական որոշումը եղել էր ծայրահեղ անհրաժեշտության դեպքում Շարժման ղեկավարության նկատմամբ առավելագույնը 30-օրյա վարչական կալանքի կիրառումը: Այսինքն՝ Կոմիտեին ձերբակալելու ու նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու կոլեգիալ քաղաքական որոշում Մոսկվայում չէր կայացվել: Այդ որոշման մեջ շատ մեծ է Գորբաչովի անձնական վճիռը, իսկ այդ վճռի հիմքում եղած շարժառիթների մեջ ոչ երկրորդական դեր է խաղացել Հայաստանում նրան ցուցաբերված ընդունելությունը: Չի բացառվում, որ Հայաստանում նրան ոմանք նաեւ լրացուցիչ դրդել են այդ քայլին: Երկրի ղեկավարը բազմիցս խոսելով հույզերին տրվելու անթույլատրելիության մասին՝ ինքը չկարողացավ խուսափել դրանից եւ կատարեց

---

397 *Պետք է ասել, որ այս հաշվարկներում ռացիոնալ ինչ-որ բան կար: Թե ինչ արձագանք տվեցին դրան Ղարաբաղում եւ Հայաստանում զարաբաղցի գործիչները, ինչպիսի օվացիայով ընդունեցին, ներկայացնում է Բ. Ուլուբաբյանը. «(Հունվարի) 11-ին սրտատրոփ սպասում էինք բախտորոշ լուրի... Առավոտյան ժամը 9-ը չկար, որ հեռախոսն աղմկոտ զանգեց... Վարդան Հակոբյանն էր, ողջունեց ուրախ-ուրախ, ապա խառնվեցին Գուրգեն Գաբրիելյանն ու Հրաչիկ Բեգլարյանը, եւ եռաձայն խորը ցնծությամբ հաղորդեց՝ «Բաժանել են, է՛, բաժանել են: Էլ ոչ մի կապ չունենք Թուրքի հետ, ոչ մի կապ... հիմա ամբողջ մարզն իրար խառնված է» (Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքար, էջ 99): Սակայն դա հերթական խաբեությունն էր, եւ Շարժումն իր հիմնական մասով դա հասկացավ:*

398 *Աշոտ Մանուչարյանի եւ Խաչիկ Ստամբոլցյանի՝ 1988թ. աշնանը ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր ընտրվելը:*

իր ճակատագրական սխալներից մեկը, ճակատագրական՝ ոչ միայն իր, այլ նաեւ խորհրդային կայսրության համար: Դրանով ԽՍՀՄ-ում ժողովրդավարական շարժումների լոկոմոտիվ՝ Հայկական ժողովրդավարական շարժումը չխափանվեց, ընդհակառակը՝ հաջորդ ամիսներին համընդհանուր պայքարը դարձավ առավել արմատական, ժողովրդավարական գործընթացներն՝ անդառնալի, եւ դա ոչ միայն Հայաստանում: Եւ ընդամենը 6 ամիս անց նա ստիպված պետք է լիներ առանց մեկնաբանության ազատ արձակել Շարժման առաջնորդներին, ճիշտ է՝ քայքայված առողջությամբ, սակայն բազմապատկված հեղինակությամբ, ճանաչմամբ ու քաղաքական կշռով:

ժա) Անհավասար քարոզչական գոտեմարտը

Միայն բռնությունները բավարար չէին Շարժումն արմատախիլ անելու համար: Հաջորդ քայլը պետք է լիներ այն նաեւ գաղափարապես ջախջախելուն, նրա ղեկավարությանը պիտակավորելուն ու վարկաբեկելուն ուղղված քարոզչական ահաբեկչության հերթական փուլը: Դա սկսվեց անմիջապես, եւ դրա դեմ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անունից (քանի դեռ նրանց մի մասը գործում էր ընդհատակում) տարածվեց երկու փաստաթուղթ:

Առաջինը (դեկտեմբերի 14-ին), «Համայն աշխարհի հայությանը» վերնագրով թռուցիկն էր, որը սփյուռքահայությանը կոչ էր անում իրենց երկրներում ներկայացնել իրականությունն ու իրողություններն այնպես, ինչպես կան, պայքարել համաշխարհային կարծիքը Հայաստանում ծավալված ժողովրդավարական շարժման դեմ տրամադրելու փորձերի դեմ[399]:

Երկրորդը բաց նամակ էր՝ ԽՍՀՄ քաղաքացիներին. հատկապես վերջիններս անհամեմատ անպաշտպան էին խորհրդային քարոզչամեքենայի շահատակումների դեմ, քանզի պաշտոնական մամուլը խստագույն գրաքննության տակ էր եւ հրապարակում էր միայն այն, ինչը պատվիրված, հրահանգված ու թույլատրված էր: Սակայն քանի որ հետաքրքրությունը Հայկական ժողովրդավարական շարժման նկատմամբ չափազանց մեծ էր, իսկ Կոմիտեի համարումն ու հեղինակությունը՝ շատ բարձր, նրա անունից հրապարակվող փաստաթղթերը տարածվում եւ հասնում էին բոլոր հետաքրքրվողներին: «Բաց նամակը» հանգամանորեն ներկայացնում էր Շարժման էությունը, նրա հիմնական նպատակը, ինչպես նաեւ իշխանության մարմինների

[399] *ՀՀԱՆԱ, 15/14.12.88:*

կազմալուծված լինելն ու անգործության պայմաններում նրա գործողությունները՝ կապված փախստականների տեղավորման, բնական աղետից հետո փրկարարական աշխատանքների կազմակերպման եւ իրականացման հետ, ապա նկարագրում Գորբաչովի այցից հետո կատարված ձերբակալությունները, հերքում էր լայնորեն քարոզվող անհիմն մեղադրանքները եւ այլն[400]:

Շարժման դեմ «գաղափարական» համազարկի ազդանշանը տրվեց դեկտեմբերի 13-ին՝ «Դժբախտության ժամ եւ պատասխանատվության ժամ» վերնագրով անստորագիր ընդարձակ հոդվածով[401], որը հրապարակեցին հանրապետական բոլոր թերթերը: Նորից երեւացին, թվում էր՝ արդեն մոռացված՝ «քաղաքական արկածախնդիրներ» եւ նմանօրինակ այլ պիտակներն ու որակավորումները: Առաջ քաշվեցին հին մեղադրանքները, եւ ձեւակերպվեցին նորերը: Մեղադրանքներից առաջինը վերաբերում էր աղետի գոտում կատարվող աշխատանքների կազմակերպմանը. «Ղարաբաղ» կոմիտեի լիդերները այսքան ծայրահեղ պայմաններում անխուսափելի սխալներ եւ թերություններ գտնելով, ձգտում են հանրապետության աշխատավորներին ցույց տալ, որ իրենք եւ միայն իրենք են գլխավոր դերը խաղում երկրաշարժի հետեւանքների վերացման գործում»: Այդ բանը ցույց տալու համար Կոմիտեն չուներ ոչ լրատվամիջոցներ, ոչ էլ պետական լրատվամիջոցներից օգտվելու հնարավորություն: Դա նա կարող էր անել եւ անում էր միայն գործով: Իշխանությանը գազազեցրել էր հենց այդ ***գործը***, որի մասին նույն հոդվածում քամահրանքով ասվում էր. «Շտաբ են ստեղծել... շուրջօրյա հերթապահություն կազմակերպելով, հրահանգներ են ուղարկում ենթակոմիտեներին, ընդունում այցելուներ, ինֆորմացիա ստանում հանրապետության բոլոր շրջաններից, կապեր հաստատում ամեն տեսակ հիմնարկների ղեկավարների հետ, որոնց տեխնիկա եւ մարդիկ հատկացնելու «ցուցումներ են տալիս», միջոցառումներ, որոնք իրականում արդեն ձեռնարկում են իշխանությունները»[402]:

Եթե մի կողմ դնենք քամահրական ու մեղադրական շեշտը, ապա այս արձանագրումը վկայում է, որ Կոմիտեն լիակատար իրականացնում էր գործադիր իշխանության գործառույթներ: Եւ իրականացնում էր, որովհետեւ իշխանությունները անգործության էին մատնված: Բնականաբար, նա այդ ամենը չէր կարող անել, եթե հենց իշխանության միջին օղակների եւ

[400] *ՀՀԱՆԱ, 15/15.12.88:*

[401] *«Սովետական Հայաստան», 13.12.1988:*

[402] *Տե՛ս նույն տեղում:*

ձեռնարկությունների ղեկավարները չենթարկվեին նրա «ցուցումներին»: Իսկ վերջիններս ենթարկվում էին, որովհետեւ Կոմիտեն հսկայական հեղինակություն, կշիռ եւ համաժողովրդական աջակցություն ուներ: Եւ սա անանուն հոդվածագիրը համարում է ոչ ավել, ոչ պակաս, քան՝ «անմաքուր ձեռքերով ժողովրդի վշտից մերկացած հոգուն դիպչել»: Կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսին կլինեին մեղադրանքները, եթե Կոմիտեն այդ օրերին աղետի գոտու հետ կապված այսօրինակ որեւէ քայլ չձեռնարկեր:

Հաջորդ մեղադրանքը կապվում էր փախստականների հետ: Նրանց տեղավորման եւ օգնության գործով Կոմիտեն նախորդ ամիսներին իրոք զբաղվել էր, եւ դարձյալ՝ զբաղվել էր, քանի որ իշխանությունը չէր զբաղվում, սակայն վերջիններս այդ ժամանակ համարձակություն չունեին այսպիսի մեղադրանք հնչեցնելու: Այժմ, երբ Կոմիտեի մի մասը ձերբակալված, մյուս մասը հետապնդումների տակ էր, ահա հնչում էր նաեւ այսպիսի մեղադրանք: Նույն կերպ հիշվում են Կոմիտեի նաեւ այլ «մեղքերը»՝ չարախնդալով հիշեցնում հանրահավաքները, Օպերային թատրոնում ԳԽ նստաշրջանի հրավիրումը, որի հետ կապված, անգամ հատուկ դրություն մտցնելուց հետո, այդ օրերին չհամարձակվեցին բարձրաձայն մեղադրանք ներկայացնել:

Մյուս մեղադրանքը, որքան էլ մերկապարանոց սուտ, ցույց էր տալիս, թե հատկապես ինչից էր սարսափած իշխանությունը. «Ղարաբաղ» կոմիտեի լիդերներին այսօր ամենից քիչ է հուզում ԼՂԻՄ-ի պրոբլեմը: Նրանք չքաշվելով ո՛չ ամբոխավարությունից, ո՛չ էլ հակադեմոկրատական մեթոդներից, պայքար են մղում իշխանության համար, լայն մասսաների վրա ազդեցություն ունենալու համար»[403]: Իսկ ամենաանընդունելին եւ զայրացուցիչը հոդվածագիրը համարում էր հետեւյալը. «...եւ արդեն չտեսնված բան՝ առաջարկում էին համագործակցություն» (հիշենք, որ երկրաշարժից անմիջապես հետո գլուխները կորցրած իշխանություններն իրենք էին ընդունել համագործակցության այդ առաջարկը): Ապա անցում էր կատարվում հաջորդ ու հիմնական խնդրին եւ սուր քննադատության ենթարկում ՀՀԾ-ի Ծրագիրը: Սա նույնպես առաջին անգամն էր, չնայած այդ Ծրագիրը վաղուց էր հրապարակվել: Եւ իհարկե, բոլոր մեղքերից հետո նրանց հետ էին կապում «երեկվա եւ այսօրվա կաշառակերներին», որոնք՝ «նայելով «Ղարաբաղ» կոմիտեի փարիսեցիական գործունեությանը, գոհունակությամբ իրենց ձեռքերն են շփում»[404]:

[403] *«Սովետական Հայաստան», 13.12.1988:*

[404] *Տե՛ս նույն տեղում: 1988-89թթ. իրադարձությունները մասնավոր քննության առարկա դարձրած հետազոտող Վլադիմիր Գրիգորյանը, այս դեպքերի հետ կապված,*

Սա ծրագրային հոդված էր[405], եւ այդ ծրագրի էությունը «Ղարաբաղ» կոմիտեի դեմ քրեական մեղադրանք հարուցելով՝ նրան տեւական ժամանակով մեկուսացնելն էր, Շարժումն արմատախիլ անելը, «գաղափարապես ջախջախելը»: Այդ հոդվածի մոտիվներով, նրա հիմնական գաղափարները, բառապաշարը, որակումներն ու պիտակները կրկնելով, երբեմն էլ պարզապես ընդարձակ վերապատմելով կամ պարզունակ արտագրությամբ, սկսվեց հրապարակումների մի իսկական հեղեղ. հոդվածներ հրապարակվեցին կենտրոնական մամուլում «Պրավդան»՝ «Մարտահրավեր բանականությանը եւ պատվին»[406], «Իզվեստիան»՝ «Կամուրջներ եւ անդունդներ»[407], որոնք որպես կանոն, անմիջապես թարգմանվում եւ հրապարակվում էին նաեւ հանրապետական մամուլում: «Արդյո՞ք քարերը հավաքելու ժամանակն է» վերնագրով մի այլ հոդված՝ «Սովետական Հայաստանը»[408] եւ այլն: Շարժման «գաղափարական ջախջախման» եւ նրա ղեկավարների «մերկացման» քարոզարշավն ավարտվեց «Ղարաբաղ» կոմիտեի նաեւ մյուս անդամներին հունվարի 7-ին ձերբակալելուց, մոսկովյան բանտեր տեղափոխելուց եւ հարուցված քրեական գործի մասին հայտնելուց քիչ հետո՝ ակնհայտ ապացույց այն բանի, որ այդ ամենը Կոմիտեի դեմ հարուցված

*բոլորովին հակառակ եզրահանգման է գալիս. «Իշխանությունները չկարողացան հաշտվել այն մտքի հետ, որ ընդդիմությունը գերազանցում է իրենց արտակարգ իրավիճակների պայմաններում գործունեության բոլոր դրսեւորումներում, եւ վարվեց այնպես, ինչպես դա միշտ է արվում, երբ հողը փախչում է ոտքերի տակից. նրանք դիմեցին բռնի գործողությունների» (**Григорян,** Армения, ст. 219):*

[405] *«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Համբարձում Գալստյանը, համոզված, որ դրա հեղինակը ՀԿԿ կկ-ի քարտուղար ակադեմիկոս Գալուստ Գալոյանն է, ընդհատակյա իր բնակարանից նրան ուղղեց սարկազմով ու «տաք» բնութագրումներով լեցուն մի բաց նամակ (տե՛ս **Գալստյան Հ.**, Հոդվածներ, հուշագրություններ... էջ 390-395):*

[406] *Правда», 16.12.1988.*

[407] *«Известия», 17.12.1988.*

[408] *«Սովետական Հայաստան», 28.12.1988:*
Այնքան ընդարձակ ու բառացի են այս օրերին իրար հաջորդած մոտ մեկ տասնյակ հոդված-հերյուրանքների տեքստային, երբեմն՝ ընդարձակ, պլագիատ հիշեցնող բառացի համընկնումները, բնորոշումների կրկնությունը, կաղապարվածությունը, որ ակամա ստիպում են մտածել, թե դրանք կամ ստեղծվել են բոլորը մի տեղում, կամ հրահանգվել է առավելագույնս հավատարիմ մնալ առաջին եւ հիմնական «Դժբախտության ժամ եւ պատասխանատվության ժամ» հոդվածի կաղապարներին ու ձեւակերպումներին: Չի բացառվում նաեւ, որ զարմանալի այս «գրագողության» բացատրությունը կարող են լինել պարզապես կատարողների սահմանափակ մտավոր կարողություններն ու էրուդիցիայի խեղճությունը:

քրեական գործի մասին հայտարարելու քարոզչական նախապատրաստության շրջանակներում էր: Այժմ որոշվեց որդեգրել նրանց մոռացության տալու[409] եւ ստեղծված իրավիճակը (մասնավորապես՝ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը) որպես Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական լուծում գովերգելու գործընթացը:

* * *

Դեկտեմբերի 13-ին լույս տեսած «Դժբախտության ժամ եւ պատասխանատվության ժամ» հոդվածին պատասխան թռուցիկը գրվեց ու տարածվեց նույն օրը: Դրա սկիզբը կատարվածի ճշգրիտ քաղաքական գնահատականն էր. «Հայ ժողովրդին չի ներվում իր սահմանադրական պայքարը, եւ նրա հետ հաշվեհարդար են տեսնում: Իրավական պետություն դառնալու խոստումներ տվող պետությունը ամենաանողոք ոստիկանական ռեժիմին վայել անսահմանափակ լիազորություններ տալով բանակին՝ օկուպացրել է Հայկական մարզն ու Հայկական հանրապետությունը եւ տեւական պաշարումով փորձում է կոտրել ժողովրդի ազատ կամքն ու սապոգների տակ տրորել ժողովրդավարության ծիլերը: Դեմոկրատական պետություն դառնալու խոստումներ տվող պետությունը հայ ժողովրդին չի ներում հանրապետությունում ազգային ինքնագիտակցության հուժկու վերելքի եւ ժողովրդավարական շարժման ալիքի համար: Երկրի ղեկավարին հունից հանում է այն հանգամանքը, որ, աղետից հետո անգամ, մենք չենք մոռացել 10 ամիս փայփայած մեր ազգային երազանքը: Ըստ երեւույթին նա հույս ուներ հայ ժողովրդին ոչ միայն ֆիզիկապես, այլեւ հոգեպես ջախջախված գտնել: Չգտնելով՝ վճռեց ջախջախել»[410]: «Դժբախտության ժամ եւ պատասխանատվության ժամ» հոդվածի դեմ ընդարձակ պատասխան հոդված գրեց Սերո Խանզադյանը. «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրություն, զզվեցի ձեր այս հոդվածի ողջ պարունակությունից: Դուք մղում եք հայ ժողովրդին նոր աղետ պատճառելու, այս անգամ նրա ազգային եւ

[409] *Թերեւս դա պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ Շարժման ու Կոմիտեի դեմ հերյուրական հրապարակումները, ըստ էության՝ առանց բացառության, այժմ էլ արժանի պատասխաններ էին ստանում, եւ դրանք պարունակող թռուցիկներն ավելի մեծ ազդեցություն էին ունենում հասարակական կարծիքի վրա, քան այդ հրապարակումները: Այսինքն՝ իշխանությունը հերթական անգամ համոզվեց, որ նաեւ Կոմիտեի ազատազրկված լինելու պայմաններում քարոզչական պատերազմում ինքը տանուլ է տալիս, ուստիեւ դադարեցրեց այն:*

[410] *ՀՀԱՆԱ, 15/13.12.88:*

հոգեբանական վիրավոր աշխարհում»: Հոդվածն, իհարկե, չտպագրվեց, բայց տարածվեց ձեռագիր վիճակում[411]:

Քարոզչական այս ահաբեկչությունն, ինչպես ասվեց, նպատակ ուներ մշակել հասարակական կարծիքն այնպես, որ Շարժման ղեկավարության ձերբակալումն ու մեկուսացումը շատ մեծ հասարակական ընդվզում չառաջացնի, իսկ այնուհետեւ էլ հնարավոր լինի նրանց դեմ քրեական մեղադրանքներ հարուցելը: Դեկտեմբերի 10-ից հետո Կոմիտեի եւ նրա առանձին անդամների անունից հրապարակած մեկուկես տասնյակ թռուցիկներն ուղղված էին քարոզչական այս ահաբեկչությանը դիմակայելուն, դրա հետեւանքները կանխելուն: Լայնորեն տարածվեց Աշոտ Մանուչարյանի ստորագրությամբ մի փաստաթուղթ՝ «Ինչպես է դա պատահել» վերնագրով, որտեղ մանրամասն նկարագրված են երկրաշարժի առաջին պահից ի վեր կատարված իրողությունները, առաջին ձերբակալությունները, հաջորդ օրվա երթի եւ բախումների մանրամասները, ինչպես նաեւ մեկ առ մեկ հերքվում են Շարժման եւ Կոմիտեի դեմ տարածվող հերյուրանքները[412]: Գորբաչովին ուղղված ընդարձակ մի «Բաց նամակ» տարածեց Ռաֆայել Ղազարյանը[413]: Մի քանի թռուցիկներ հեղինակեց Համբարձում Գալստյանը[414]:

Տարածվող ու ձեռքից ձեռք անցնող թռուցիկներն ակնհայտորեն շատ ավելի արդյունավետ էին աշխատում, քան իշխանական միլիոնավոր տիրաժով թողարկվող քարոզչությունը: Հաջորդ ամիսներին «Ղարաբաղ կոմիտեի» գաղտնի կազմով ղեկավարվող Շարժումը, տեղի տալով բռնություններին, եթե իր արտաքին դրսեւորումներում թվացյալ ինչ-որ տեղատվություն ապրեց (հնարավոր չէին հանրահավաքները, գործադուլները եւ այլն), ապա ներքուստ այն շարունակեց հզորանալ, ամրանալ եւ գալ նոր, ավելի արմատական քաղաքական հետեւությունների, նաեւ գործնական քայլերի:

[411] *ՀՀԱՆԱ, 15/18.12.88:*

[412] *ՀՀԱՆԱ, 15/18.12.88:*

[413] *ՀՀԱՆԱ, 15/19.12.88:*

[414] *Տե՛ս Գալստյան Հ., Զուղարկված նամակներ, էջ 136-154. («ՀԿԿ Կ քարտուղար Գալուստ Անուշավանի Գալոյանին», «Բաց նամակ «Սովետսկայա կուլտուրա» թերթի թղթակից Ան. Մակարովին, «Բաց նամակ ՀԿԿ Կ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին»:*

ժբ) Հայկական ժողովրդավարական շարժումը՝ ժողովրդավարական շարժումների հիմնադիր եւ առաջատար

Շարժումը փշրեց կարծրատիպերը. Ղարաբաղյան ժողովրդավարական շարժումը, ըստ էության, 1988 թվականի ամենակարեւոր ու ամենահայտնի երեւույթն էր Խորհրդային Միության քաղաքական կյանքում, կենտրոնական իրադարձությունը: Որպես այդպիսին էլ այն հայտնի էր նաեւ աշխարհում: Նրա ազդեցությամբ, կարելի է ասել՝ հարթած ճանապարհով, ժողովրդավարական շարժումներ կամ այդօրինակ քաղաքական գործընթացներ էին սկսվել եւ սկսվում ոչ միայն ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների մոտ, այլեւ Արեւելյան Եւրոպայում: Նաեւ այս հանգամանքի բերումով հայկական թեմատիկային հաճախ էին անդրադառնում ոչ միայն միջազգային մամուլը, այլեւ միջազգային կազմակերպություններ եւ առանձին երկրների կառավարություններ[415]:

Խորհրդային բռնապետության կերպարը քաջածանոթ էր ինչպես նրա հասարակությանը, նրա քաղաքացիներին ու ժողովուրդներին, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս: Այդ կերպարը մարդկանց գիտակցության մեջ՝ թե՛ ներսում, թե՛ դրսում ձեւավորել էին նրա ոչ վաղ անցյալի այն գործողություններն ու վարքագիծը, երբ «հակախորհրդային» համարված որեւէ առիթ էր եղել՝ անհատական, խմբային թե ողջ մի ժողովրդի մասշտաբով: Եթե անգամ չիջնենք լենինյան եւ ստալինյան ժամանակները, 1988-ին նախորդած տասնամյակներում էլ դաժանության ու անհանդուրժողականության մի շարք փաստեր տեսել էին ե՛ւ Խորհրդային կայսրության, ե՛ւ Արեւելյան Եւրոպայի ժողովուրդները:

Խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի իր թիկունքում միշտ զգացել էր ամենախորհրդավոր ու սարսափազդու ՊԱԿ-ի շունչը: Որեւէ մեկի հասցեին ասված, ամենասովորական թվացող «քաղաքականությամբ է զբաղվում» արտահայտությունը ամենածանր ու ամենավտանգավոր մեղադրանքն էր համարվում: «Քաղաքական անեկդոտներ» պատմում էին միայն մտերիմներին ու՝ շշուկով, «քաղաքականության հետ գործ չունես» խրատը

[415] *Այս շրջանի՝ Հայաստանի Արտաքին գործերի նախարարության զեկուցագրերը վկայում են, որ աշխարհի առաջատար լրատվամիջոցներով հայկական թեմատիկայի շոշափումը եղել է հաճախակի, երբեմն ամենօրյա (Տե՛ս Հովհաննիսյան Է., Սփյուռքահայ համայնքների եւ օտարերկրյա լրատվամիջոցների դիրքորոշումը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2013, էջ 126-151):*

վկայում էր դիմացինի նկատմամբ անկեղծ հոգատարության մասին: Պաշտոնական բնութագրում առանց «քաղաքականապես կայուն է» երաշխավորության որեւէ մեկը որեւէ առիթով չէր կարող հատել պետական սահմանը:

Ճիշտ է՝ այս ընթացքում մարդկանց մեջ ավելացել էր նաեւ բռնությանը, անարդարություններին ու անազատությանը հակադրվելու ներքին մղումը: 1985 թվականից էլ Գորբաչովը հռչակել էր նոր կարգախոսներ, իսկ որոշ հարցերում տեղի էին ունենում նաեւ տեղաշարժեր, անգամ եղել էին տնտեսական բնույթի գործադուլներ: Արտաքուստ, կարծես թե, ինչ-որ բան փոխվել էր, բայց, այդուամենայնիվ, վախի, «սովետի հարատեւության» պատկերացումն ու անելանելիության զգացումը դեռեւս ծանր իներցիայով նստած էր գրեթե յուրաքանչյուրի գիտակցության թե ենթագիտակցության մեջ ե՛ւ Խորհրդային Միությունում, ե՛ւ Արեւելյան Եւրոպայում:

Այսպիսի մթնոլորտում պայթեց Ղարաբաղյան ժողովրդավարական շարժումը, եւ ընդամենը 10 ամսվա ընթացքում ծանր ու հուժկու հարվածներ ստացան տասնամյակներով ձեւավորված ու կարծրացած, հոգեբանություն դարձած պատկերացումներն ու կարծրատիպերը:

Խորհրդային Միությունում հանրահավաք, երթ կամ ցույց կարելի էր պատկերացնել միայն իշխանության նախաձեռնությամբ եւ որոշակի տոնական օրերի՝ նախապես հայտնի ու հաստատված կարգախոսներով: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցան ինքնաբուխ ու այն էլ քաղաքական բնույթի հանրահավաքներ, երթեր ու ցույցեր, գործադուլներ, որոնք իրենց զանգվածայնությամբ, համառությամբ ու կազմակերպվածությամբ աննախադեպ էին ԽՍՀՄ պայմաններում: Փետրվարի 25-26-ին Երեւանում հանրահավաքների մասնակիցների թիվն անցնում էր 700000-ը[416], եւ դա՝ ընդամենը մեկ միլիոնանոց քաղաքում, կամ՝ 3,5 միլիոնանոց հանրապետության մայրաքաղաքում:

Մի երկրում, որտեղ անգամ տնտեսական լոկալ գործադուլը արտակարգ պատահար էր համարվում, Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում հայտարարվեցին ու իրականացվեցին տեւական համընդհանուր գործադուլներ՝ քաղաքական պահանջներով: Բազմահազարանոց հանրահավաքում առաջին անգամ հրապարակավ հնչեց հանրապետության բարձրագույն ղեկավարության հրաժարականի պահանջ, կես միլիոնանոց լսարանը

[416] *Այս թիվն արձանագրում է Ջորի Բալայանը՝ վկայակոչելով «ավիոլուսանկարահանումները» («Ավանգարդ», 11.02.1990): Նման լուսանկարներ կարող էին անել միայն իշխանության համապատասխան ծառայությունները, այսինքն՝ Ջ. Բալայանի աղբյուրը հավաստի է:*

հանրապետության առաջին դեմքին դիմավորեց ոչ թե «բուռն ծափահարություններով», ինչպես եղել էր 70 տարի շարունակ, այլ միահամուռ սուլոցներով: 1988թ. փետրվարից ի վեր տեղի էր ունեցել հարյուրից ավելի հանրահավաք, իսկ դրանցից յուրաքանչյուրի մասնակիցների թիվը հաշվվում էր նվազագույնը տասնյակ, ավելի հաճախ՝ հարյուր հազարներով: Այդօրինակ հասարակական ընդգրկման եւ ինքնակազմակերպվածության բարձր աստիճանի, պայքարի խտության, շարունակականության, տեւականության շատ թե քիչ մոտ որեւէ զուգահեռ դժվար էր գտնել ԽՍՀՄ պատմության մեջ:

Խորհրդային Միությունում ի սկզբանե ֆիկցիա էին ինչպես ընտրությունները, այնպես էլ իշխանության ընտրովի համարվող մարմինները: Ամբողջ իշխանությունն անմնացորդ գտնվում էր Կոմունիստական կուսակցության կառույցների ձեռքում, իշխանության սահմանադրական խորհրդային մարմինները միայն քող էին, եւ դրան համակերպված էին բոլորը: Ղարաբաղյան շարժումն իր առաջին իսկ քայլով արդեն ճեղք առաջացրեց 70-ամյա այս պրակտիկայի եւ պատկերացման մեջ: ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի նստաշրջանը նախաձեռնվեց ու տեղի ունեցավ «ներքեւից»՝ պատգամավորների համապատասխան դիմումների հիման վրա, հակառակ կտրուկ արգելքի, սպառնալիքների եւ հարուցված խոչընդոտների: Այն ընդունեց որոշում, որը ոչ միայն համաձայնեցված չէր համապատասխան կուսակցական մարմիններում, այլեւ՝ ի հեճուկս նրանց բոլոր մակարդակների ամենաբուռն դիմադրության: Նույն կերպ «ներքեւի» թելադրմամբ գումարվեց եւ՝ համաժողովրդական ճնշմամբ նույն խնդրի մասին հունիսի 15-ին իր որոշումն ընդունեց նաեւ ՀԽՍՀ ԳԽ-ը: Անգամ ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստը հուլիսի 18-ին, անկախ իր ընդունած որոշումից, քննարկեց «ներքեւից» թելադրված հարց՝ դրանով իսկ, ակամա, օրինական դարձնելով այն, ինչը եւս առաջին անգամ արձանագրվող երեւույթ էր:

Հանրապետության իշխանությունը մայիսին դժվարությամբ կարողացավ խուսափել անգամ Կոմունիստական կուսակցական 19-րդ կոնֆերանսի պատվիրակների ընտրության վրա Շարժման ազդեցությունից: Մեկ ամիս հետո նա ստիպված էր ԳԽ նստաշրջանի աշխատանքներին հրավիրել Շարժման ողջ ղեկավարությանը, իսկ որոշումների վերջնական տեքստերն ընդունել Շարժման ներկայացուցչի խմբագրած տարբերակով: Եւս մի քանի ամիս անց՝ իշխանությունը ստիպված էր ընդունել իր պարտությունը ԳԽ-ի մասնական ընտրություններում եւ պատգամավորական մանդատ տալ Շարժման երկու ներկայացուցիչների: Իշխանությունը ստիպված էր կուլ տալ Շարժման «շտաբ-կայանում»՝ Օպերային թատրոնում նոյեմբերի 24-ին

գերագույն խորհրդի նիստ հրավիրելու եւ որոշումներն ընդունելու փաստը[417]: Մի ամբողջ հանրապետություն մի քանի ամիս, փաստորեն, ապրում էր երկիշխանության պայմաններում: Իրադարձությունների մի քանի դրվագներում ցուցարարների դեմ փորձ արվեց գործի դնել պատժիչ զորքը, եւ մեկ անգամ չէ, որ զորքն ստիպված եղավ տեղի տալ, ինչը նույնպես անանախադեպ երեւույթ էր ԽՍՀՄ ողջ պատմության ընթացքում եւ անհարիր նրա ավանդական կերպարին:

Այսինքն՝ ընդամենը 8-9 ամսվա ընթացքում, խորհրդային ողջ համակարգի դեմ միայնակ պայքարի դուրս եկած Հայկական ժողովրդավարական շարժումը, սեփական ռիսկով, աշխարհին առաջին անգամ ցույց տվեց, որ իր կտրականությամբ, անզիջողականությամբ ու դաժանությամբ հայտնի խորհրդային իշխանությանը կարելի է նաեւ ստիպել հանդուրժել, համակերպվել, զիջել, անգամ՝ տեղի տալ, նահանջել:

Այս ամենն անհավատալի իրողություններ էին Խորհրդային Միության ուժի եւ բնութագրի մասին եղած ավանդական պատկերացումների խորապատկերի վրա եւ խաթարում էին այդ պատկերացումները: Այն ոչ միայն խրախուսիչ, ոգեւորիչ օրինակ, այլեւ, ըստ էության, հարթված ճանապարհ էր ԽՍՀՄ հանրապետությունների եւ Արեւելյան Եւրոպայի բոլոր ժողովուրդների ազատության ձգտումների ու ժողովրդավարական շարժումների մեկնարկի համար:

Ինչպե՞ս դա հնարավոր եղավ:

Ճիշտ է՝ կար նոր հանգամանք. Խորհրդային Միությունը հոչակել էր համակարգի վերակենդանացնելուն ուղղված քաղաքական նոր ուղեգիծ «Վերակառուցում» անվամբ, ինչը ենթադրում էր կերպարի եւ գործելակերպի փոփոխություն, եւ դա ուղղված էր ոչ միայն սեփական ժողովրդին, այլեւ աշխարհին: Սա զսպող հանգամանք էր: Բայց այնպես չէ, որ այս ամենը տեղի կունենար ցանկացած զանգվածային ընդվզման դեպքում: Այնպես չէ, թե Խորհրդային Միությունը ընդմիշտ մի կողմ էր դրել իր ավանդական ու դեռեւս չհաղթահարված բռնատիրական էությունը եւ ուժի գործադրման գործելակերպը: Մի քանի անգամ բազմաքանակ պատժիչ զորք մտցվեց Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ՝ սպառազինված ծանր տեխնիկայով ու ռազմական ուղղաթիռներով, հաստատվեց արտակարգ դրություն եւ պարետային ժամ: Մեկ անգամ չէ, որ սպառազեն պատժիչ

---

[417] *Դրան հաջորդած հատուկ դրությունն ու պարետային ժամը մտցվեց այլ մոտիվացիայով:*

զորքը եւ ժողովրդական զանգվածը կանգնեցին տառացիորեն դեմ դիմաց, շունչ շնչի՝ երկուստեք ապրելով ծանրագույն հոգեբանական պահեր: Եղան նաեւ ընդհարումներ: Մասշտաբային ընդհարումներից հնարավոր եղավ խույս տալ բարձր կազմակերպվածության, Շարժման ղեկավարության եւ մասնակիցների կողմից սադրանքները շրջանցելու կարողության, ինչպես նաեւ Շարժման ժողովրդավարական էության, օրինական, սահմանադրական գործելակերպի շնորհիվ ձեռք բերած միութենական եւ միջազգային համարումով պայմանավորված դժվար խոցելիությամբ: Խորհրդային իշխանության հզորագույն քարոզչամեքենայի փորձերը՝ Շարժմանը փակցնել «ծայրահեղական», «ազգայնական», «պահանջատիրական» եւ այլ պիտակներ, որոնք բռնությունների արդարացման ու ոչնչացման հիմք կտային, անհաջող անցան:

Եղան բռնություններ ու հետապնդումներ, կալանքներ, եղան վտանգավոր պիտակավորումներ, քարոզչական լայնամասշտաբ ահաբեկչություն: Եւ, այդուամենայնիվ, 1988 թվականը Հայկական ժողովրդավարական շարժում – ԽՍՀՄ իշխանություն դիմակայությունը, քաղաքական արդյունքի տեսակետից, Հայկական ժողովրդավարական շարժման քայլ առ քայլ առաջընթացի եւ ԽՍՀՄ իշխանության՝ քայլ առ քայլ նահանջի մի շրջան էր:

Հայկական ժողովրդավարական շարժման համեմատական գնահատականը. Հաջողությամբ խույս տալով ազգայնականության գայթակղիչ ճանապարհից՝ Շարժումը կարողացավ իր առաջին եւ հետագա խնդիրները ձեւակերպել եւ հետապնդել ժողովրդավարության հենքի վրա, իսկ 1988թ. ամռանից այն արդեն առաջնորդվում էր պաշտոնականացված համապարփակ ժողովրդավարական ծրագրով (օգոստոսի 19-ին հրապարակված ՀՀԾ ծրագիրը)՝ միջազգային փորձագիտական գնահատմամբ ամենահասունն ու ժողովրդավարականը այլ շարժումների ծրագրերի մեջ: Խնդիրների բնույթին համապատասխանում էր նաեւ պայքարի գործելակերպը: Այդ գործելակերպը բաց էր, եւ հիմնական միջոցը գոյություն ունեցող, բայց երբեւէ չաշխատած օրենքներն աշխատեցնելն էր, անվանապես իշխանություն կրող, բայց այն երբեւէ չունեցած սահմանադրական մարմինները՝ Խորհուրդներն աշխատեցնելը, համաժողովրդական կամքը նրանց համապատասխան որոշումների վերածելը: Այս հանգամանքներն էին դրված նաեւ միջազգային դրական գնահատականների ու վերաբերմունքի հիմքում:

Հայկական ժողովրդավարական շարժման առաջին տարին, նույն տարվա ավարտին, իրադարձությունների թարմ ազդեցությամբ, ընդարձակ

վերլուծել է դրանց ուշադիր հետեւած, ֆրանսիացի քաղաքագետ Մերսյեն՝ ձեռքի տակ ունենալով Հայաստանից եւ ԽՍՀՄ-ից եկած տարաբնույթ տեղեկատվությունը, ԽՍՀՄ եւ միջազգային մամուլի նյութերը եւ այլն՝ այն համեմատելով նաեւ արեւելաեւրոպական եւ մերձբալթյան նմանօրինակ շարժումների հետ[418]:

Հայկական շարժման էությունը ֆրանսիացի վերլուծաբանը գնահատում է որպես լայն հիմքով ժողովրդավարական պայքար, իսկ այդ որակը Շարժման մեջ վերջնականապես առարկայացված է համարում արդեն 1988-ի ամռան սկզբներին[419]: Արձանագրելով, որ առաջին ամիսներին Շարժումն ուներ նաեւ որոշ ազգայնական երանգ, նա, միաժամանակ, արձանագրում է. «որքան Շարժումը սթափ էր դառնում, այնքան ազգայնականները կորցնում են իրենց ազդեցությունը»[420]: Որպես փաստարկ՝ նա նշում է պահանջատիրությունից, մասնավորապես՝ Նախիջեւանի նկատմամբ պահանջից հրաժարվելը: Ապա ավելացնում է, որ ազգայնական գաղափարները եւ դրանց կրողները հետագայում էլ տարբեր (հիմնականում՝ սրված) իրավիճակներում ակտիվացման պահեր պետք է ունենային, բայց ամբողջ Շարժման ժողովրդավարական էությունն ու հիմքը միշտ մնաց որպես հիմնական: Եւ այս հիմքի վրա է, որ «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու հարցը, ներգծվելով ոչ թե ազգայնական, այլ միայն ժողովրդավարական հեռանկարի մեջ, պիտի փոխեր իր իմաստը... Հայաստանի եւ Ղարաբաղի հայերին կապում է ոչ միայն էթնիկական կողմը, այլեւ հակաբյուրոկրատական պայքարը եւ ժողովրդավարական ծրագիրը, այնպես, որ վերամիավորումը արժեքավորվում է որպես ժողովրդավարական ուժերի միավորում.... Ահա թե ինչու վերամիավորման համար պայքարը՝ պայքար է անմիջականորեն կուսակցության (կոմունիստական) դեմ, այն հիմնասյունի դեմ, որի վրա է հենվում խորհրդային սիստեմի ամբողջությունը»[421]:

---

[418] *Իրողությունների ներկայացման եւ գնահատականների օբյեկտիվության նկատմամբ վստահությունն ավելի է աճում, եթե դրանց հեղինակն անձամբ դուրս է այդ գործընթացներից, դրանց նայում է «կողքից»: Ուստիեւ՝ սույն հեղինակի վերլուծական հետազոտությունը, որին մի առիթով արդեն հակիրճ անդրադարձել ենք, այս հարցերի հետ կապված կանդրադառնանք ավելի ընդարձակ:*

[419] *Դա փաստորեն համընկնում է Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի (կամ հիմնական Ղարաբաղ Կոմիտեի) կազմավորման ու գործունեության սկզբի հետ:*

[420] *Մերսյե Ֆ., Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 28:*

[421] *Նույն տեղում, էջ 30:*

Հետաքրքիր է նաեւ, որ Մերայեն հայկական Շարժման պարտության հնարավորությունը տեսնում է միայն մի դեպքում՝ **եթե ազգայնականությունը գա առաջին պլան եւ դրվի նրա պահանջների հիմքում**[422]:

Հայկական ժողովրդավարական շարժման հետ վերլուծաբանի համեմատության առաջին եզրը լեհական հայտնի **«Սոլիդարնոստն»** է. «Հայերի շարժման երկարակեցությունը եւ դրա ժողովրդավարական վճռականությունը հիշեցնում է «Սոլիդարնոստի» բարձրացրած լեհական ժողովրդավարական շարժումը 1980թ. օգոստոս ամսից մինչեւ 1981թ. դեկտեմբեր ամիսը: Առաջին անգամ Արեւելքում **նոր միջոցներով** (ընդգծումը հեղինակինն է), որոնք տարբերվում են 1956թ. հունգարական զինված ապստամբությանը հանգեցրած միջոցներից, մի ամբողջ ժողովուրդ քիչ մնաց գետին տապալեր կենտրոնացված բյուրոկրատական իշխանությունը»[423]: Ապա հեղինակն արձանագրում է, որ, ինչպես նշված շրջանում «Սոլիդարնոստը», այնպես էլ Հայկական Շարժումը, կարողացան հասնել նրան, որ նույն նպատակով պայքարի դուրս եկածների մեջ դասակարգային ու դասային որեւէ հատկանիշ դեր չէր խաղում: Այսինքն՝ այն իրոք համաժողովրդական բնույթ էր ընդունել՝ հօգուտ իրեն տրամադրելով նույնիսկ պետական ծառայության մեջ գտնվող միջին ու հատկապես ներքեւի օղակների մեծ թվով պաշտոնյաների: Ինչպես «Սոլիդարնոստը», այնպես էլ Հայկական ժողովրդավարական շարժումը կարողացան հասնել փաստական երկիշխանության իրավիճակի: Սակայն, ի տարբերություն լեհական «Սոլիդարնոստի», որի ղեկավարները համաձայնության գնացին իշխանությունների հետ եւ իշխանության մեջ տեղեր ստացան, «Հայաստանում չեղավ եւ ոչ մի պահ, երբ ուղիներ փնտրվեին ինստիտուտի վերածված համագործակցության համար: Հակառակը, երբ Շարժման սկզբում քիչ մնաց կայանա նման համագործակցություն, ապա հանպատրաստից ընտրված պատվիրակները ետ կանչվեցին: Ավելի ուշ՝ 1988թ. նոյեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը, «համագործակցությունը» խզվեց «Ղարաբաղ» կոմիտեի պատվիրակների կողմից: Այդ գիշերը Խորհրդային Միությունում տեղի ունեցավ սոցիալական պայքարի կտրուկ շրջադարձ»[424]: Այսինքն՝ ֆրանսիացի վերլուծաբանի հայացքով,

---

[422] *Նույն տեղում, էջ 29:*

[423] *Նույն տեղում, էջ 4):*

[424] *Նույնը, էջ 6-7: Նկատի ունի նոյեմբերի 22-ին ընդհատված նիստը շարունակելու խնդրով իշխանության հետ բանակցությունները, որտեղ մերժում ստանալուց հետո Կոմիտեն որոշեց նոյեմբերի 24-ին ինքը հրավիրել պատգամավորներին՝ կազմակերպելու եւ անցկացնելու այդ նիստը Օպերային թատրոնում: Երկու դեպքում էլ խոսքն,*

դեռ 1988-ի արդյունքներով, ժողովրդավարական հիմքի եւ պայքարի մեթոդների արդյունավետության առումով՝ համեմատությունը լեհական «Սոլիդարնոստի» հետ խոսում էր հօգուտ հայկական ժողովրդավարական Շարժման:

Համեմատության մյուս եզրը 1988-ի երկրորդ կեսին արդեն բավականին թափ հավաքած մերձբալթյան շարժումների, մասնավորապես՝ նրանց առաջատար Էստոնական ժողովրդական ճակատի հետ է[425]: Այս դեպքում էլ որակական տարբերությունը՝ հօգուտ Հայկական ժողովրդավարական շարժման, նույնքան ցայտուն է: Էստոնական ժողովրդական ճակատի հետ ընդհանրությունը համարվում է այն, որ երկուսն էլ ազգայնական որակվել չեն կարող (ինչպես դա համառորեն երկուսի համար էլ փորձում էր անել Մոսկվան), եթե անգամ ինչ-ինչ ազգայնական տարրեր ունեն: Իսկ տարբերությունն այն էր, որ Էստոնական ժողովրդական ճակատի ծրագրի հիմքում դրված էին **իրավական պետություն** ստեղծելու խնդիրներ[426], այն դեպքում,

---

իրոք, այդ պահի որոշակի խնդրի լուծման շուրջ բանակցությունների մասին էր, եւ ոչ մի կապ չուներ քաղաքական այնպիսի համագործակցության հետ, ինչը հետապնդում էր «Սոլիդարնոստը»:

[425] *«Վերակառուցմանն աջակցող Էստոնիայի ժողովրդական ճակատը» ստեղծվել էր 1988-ի ապրիլի 30-ին՝ հիմնական նպատակը ձեւակերպելով այսպես. «Պաշտպանել մեր հասարակության նորացման ԽՄԿԿ-ի կուրսը»: Ժողովրդական ճակատի ղեկավար Էդգար Սավիսաարը դրա առաքելությունը ձեւակերպում էր այսպես. «Մենք մեր առաքելությունը տեսնում ենք նրանում, որպեսզի ապահովենք վերակառուցման անշրջելիությունը եւ Էստոնիան վերածենք Խորհրդային Միության մի ֆորպոստի» («Вестник Народного фронта», 1, 17.06.1988).*

[426] *Էստոնիայի ժողովրդական ճակատի «Ընդհանուր ծրագրի» նախագծում նախատեսվում էր. «Հասնել Էստոնական ԽՍՀ-ի քաղաքական, տնտեսական եւ մշակութային ինքնիշխանությանը՝ ԽՍՀՄ կազմում... ԽՍՀՄ-ը դարձնել պետությունների իրական միություն՝ ֆեդերալիզմի լենինյան ծրագրի հիման վրա» («Молодежь Эстонии», 19.08.1988): Իսկ ծրագրային մի այլ՝ «Հիմնական փաստաթուղթ»(«Խարտիա»), հիմնական նպատակների մեջ առանձնացնում էր. «Ժողովրդական զանգվածների օժանդակությամբ, հանուն ԽՄԿԿ-ի վերակառուցման քաղաքականության պաշտպանության, կանխել Էստոնիայում ժողովրդավարացման եւ հրապարակայնության գործընթացն արգելակող ցանկացած փորձ, դառնալ հասարակության նորացման պատվար: Օժանդակել Էստոնական ԽՍՀ-ը իրավական պետություն դառնալուն.... Պայմաններ ստեղծել նվազագույն ժողովրդապետությունից Էստոնիայի ժողովրդի իրական լիակատար ժողովրդապետության անցնելու համար, պայքարել այն բանի համար, որպեսզի միութենական հանրապետությունները ճանաչվեն որպես սուվե-*

երբ Ղարաբաղյան շարժման հիմքում **լայն ժողովրդավարական** խնդիրներ էին: Սակայն երկուսի իրականացումն էլ ուղղված էր գոյություն ունեցող բյուրոկրատական իշխանության դեմ[427]:

Միջազգային վերաբերմունքը Խորհրդային Միության նկատմամբ. Ղարաբաղյան, նաեւ մյուս շարժումների նկատմամբ միջազգային հանրության վերաբերմունքն ու քայլերը ճիշտ հասկանալու ու գնահատելու համար կարեւոր է նաեւ նույն այդ միջազգային հանրության վերաբերմունքը ԽՍՀՄ-ին՝ ի դեմս գորբաչովյան «Վերակառուցման»:

Աշխարհը ուշի-ուշով հետեւում էր Խորհրդային Միությունում ծավալված ներքաղաքական գործընթացներին, Գորբաչովի հռչակած կարգախոսների, ձեռնարկած միջոցառումների հետեւանքով ծավալվող նոր իրադարձություններին եւ երեւույթներին: Եւ դա ամենեւին պարզ հետաքրքրասիրությունից չէր: «Չարիքի կայսրության» վերակառուցում–վերափոխումը ինչպիսի ծրագրով էլ իրականացվեր, միշտ աշխարհի համար վտանգավոր անկանխատեսելի շրջադարձերի, պայթյունների, անակնկալների հնարավորություն էր պարունակելու: Մյուս կողմից՝ «Վերակառուցման» հռչակած կարգախոսները, գեթ արտաքուստ, ուղղություն էին դեպի համամարդկային արժեքներ եւ զարգացման բանական ճանապարհ: Եւ անկախ այն բանից՝ դա հաջողությամբ կիրականացվեր, ու մի օր ԽՍՀՄ-ը կդառնար նույն արժեքային համակարգի վրա հենված երկիր, թե կտրոհվեր տարբեր անկախ պետությունների, միեւնույն է՝ երկու դեպքում էլ «Չարիքի կայսրությունը» կդադարեր գոյություն ունենալուց, եւ միջազգային հանրությունը

բեն պետություններ» (Основной документ Народного фронта Эстонии, «Молодежь Эстонии», 06.09.1988):

427 *Մեջբերենք նաեւ հեղինակի նուրբ մի դիտարկումը մերձբալթյան շարժումների եւ հայկական շարժման «վերնախավի», ըստ էության՝ ղեկավարությունների բնութագրերի տարբերության մասին. «Այն, ինչ ճիշտ է Մերձբալթյան հանրապետությունների համար, ճիշտ չէ հայերի համար: Սոցիալական շարժումը Հայաստանում, իր վերջնական նպատակով հանդերձ, գոյություն ունի ինքնուրույն կերպով: Այն մտավորականները, որոնք մասնակցում են այդ շարժմանը, հանդիսանում են **ժողովրդի մի մասնիկը** եւ ոչ թե պաշտոնական ընտրանու մաս, որը ձգտում է Վերակառուցման շնորհիվ թափանցել իշխանության շրջանակներ: Ինչ վերաբերում է այն մտավորականներին, որոնք ցանկացան օգտվել Շարժումից իշխանությունների աչքում իրենց վարկը բարձրացնելու եւ նրանց հետ երկխոսություն սկսելու համար, ապա նրանք ընդդիմախոսների կողմից մերժվեցին: Այդ բանը տեղի ունեցավ հենց Ս. Կապուտիկյանի եւ Ջ. Բալայանի դեպքում» (**Մերսյե Ֆ.**, Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 47):*

դրանում շահագրգռված էր: Նա շահագրգռված էր նաեւ, որ դա տեղի ունենար հնարավորինս կանխատեսելի ընթացքով եւ խաղաղ ճանապարհով: Երկու դեպքում էլ քաղաքական այս նոր ուղեգծի հեղինակ ու իրականացնող Գորբաչովի նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքը պետք է լիներ որոշակիորեն ուշադիր ու զգուշավոր, երբեմն՝ նաեւ անկախ այն բանից, թե որքանով են միմյանց համապատասխանում նրա հռչակած կարգախոսներն ու իրական գործը: Նրանք, մասնավորապես, չէին ուզում նկատել ներքաղաքական, այդ թվում՝ ազգային հարցերում ԽՍՀՄ իշխանությունների հակաժողովրդավարական քայլերն ու գործողությունները, բռնությունների կիրառման բազմաթիվ փաստերը: Այնքան, որ հենց նույն այդ Արեւմուտքի անկախ վերլուծաբանները երբեմն խիստ բացասաբար էին գնահատում սեփական երկրների իշխանությունների նմանօրինակ վարքագիծը. «Արեւմտյան քաղաքական եւ լրատվական շրջանակները ստրկամտորեն աշխատում են այն պատրանքը ստեղծել, թե Խորհրդային Միությունում ընթացող Վերակառուցումը հանդիսանում է բյուրոկրատական սիստեմի «ժողովրդավարականացում»[428]: Իսկ հետեւյալ բողոքը, որ հայտնում է մեզ ծանոթ հեղինակը, եւ որը վերաբերում է ֆրանսիական իրականությանը, հաստատում է դա. «Այն, որ հայերի շարժման մասին իրականությունը եւ նպատակը անհայտ են մնում հասարակությանը, հետեւանք է հիմնականում քաղաքական եւ լրատվական շրջանակների պարբերաբար տարվող խաբեության եւ գաղտնապահության: Եթե այդ շրջանակները չեն թաքցրել հայերի գործողությունները, ապա նրանք այդ տեղեկությունները նվազագույնի են հասցրել այն աստիճան, որ շարժման ժողովրդավարական էությունը շարունակաբար ջնջվել է՝ իմաստի գաղափարական ձեռնածության միջոցով այն հայտարարելով ազգայնական: Ի՞նչ ուժեր են խաղի մեջ մտել: Ի՞նչ հատկանիշներ ունեն դրանք: Մի կողմից՝ սոցիալական եւ ժողովրդավարական, մյուս կողմից՝ կառավարական եւ, որոշակիորեն ավտորիտար. այդ մասին ոչինչ չի ասվել»[429]:

Պաշտոնական խորհրդային լրատվամիջոցները, ինչպես արդեն գիտենք, առավելագույնս խեղաթյուրում եւ գլխիվայր էին ներկայացնում իրողությունները: Նույն կերպ էլ ներկայացնում էին արտասահմանյան առաջատար լրատվամիջոցները, ինչը պայմանավորած էր, թերեւս, ոչ

428 **Մերսյե Ֆ.**, *Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 42:*

429 *Նույնը, էջ 9: Հանուն արդարության պետք է նշել, որ դրա համար կար նաեւ օբյեկտիվ պատճառ. ողջ 1988թ. ընթացքում Մոսկվան խստորեն արգելել էր արտասահմանյան լրագրողների մուտքը Հայաստան:*

միայն իրական տեղեկատվություն ձեռք բերելու անհնարինությամբ, այլեւ ԽՍՀՄ-ը «վերակառուցող» Գորբաչովին չնեղացնելու, չվնասելու եւ սեփական շահերը հետապնդելու մտահոգությամբ: Ֆրանսիացի հեղինակը սուր քննադատում է «Մոնդ», «Լիբերասիոն», «Յումանիտե» եւ առաջատար մյուս պարբերականներին՝ խորհրդային ապատեղեկատվությունը տարածելու եւ իրականության դեմ աչք փակելու մեջ: Նույնքան խիստ նա քննադատում է նաեւ իր երկրի նախագահ Ֆ. Միտերանին. «Այն պահին, երբ Ադրբեջանում սպանում են հայկական շարժումը, Միտերանը... Բայկանուրում հայտարարում է, որ ինքը հույս ունի մոտ ժամանակներում համոզել Թեթչերին, որպեսզի նա չխոչընդոտի Մոսկվայում 1991թ. կայանալիք մարդու իրավունքների վերաբերյալ կոնֆերանսի ծրագրերին: Բոլորը մրցակցում են Վերակառուցմանը եւ Արեւմուտք-Արեւելք կապերի «նոր կուրսին» օժանդակելու հարցում»[430]:

Արեւմտյան երկրների զգուշավորությունն ու գորբաչովյան Վերակառուցմանը «չխանգարելու» քաղաքականությունը արտահայտվում էր նաեւ գործնական քաղաքականության մեջ: Այդպիսի ծայրահեղ զգուշավորության մասին է վկայում պետական անվտանգության մարմինների հայթայթած, հայ իրականության հետ կապված հետեւյալ տեղեկատվությունը. «Արեւմտյան երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում եւ Հունաստանում, պետական մարմինների եւ ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք նախորդ տարիներին մասնակցություն էին ունեցել մայիսի 28-ի դաշնակցական տոնակատարություններին, ձեռնպահ մնացին դրանց մասնակցել ընթացիկ տարում»: Ավելին՝ Հունաստանում, օրինակ, իշխանությունները պահանջեցին, որ տոնական միջոցառումները ունենան միայն «մշակութային եւ ոչ քաղաքական ծանրաբեռնվածություն»: «Այդ միջոցառումների ժամանակ,– արձանագրում է փաստաթուղթը,– որեւէ ելույթ չհնչեց: Ունեցած տեղեկությունների հիման վրա դա պայմանավորված է համարվում ԼՂԻՄ հարցի նկատմամբ այս երկրների դիրքորոշումներով՝ որպես «ԽՍՀՄ-ի

[430] *Նույնը, էջ 11: Ավելի ուշ արեւմտյան նշանավոր պարբերականները տպագրում էին նաեւ Մոսկվայի քաղաքականությունը քննադատող հոդվածներ. «Մոսկվայի պաշտոնական մամուլի վարքագիծը, որ ամենաանճարակ ձեւով փորձեց նսեմացնել Սումգայիթի ջարդերի ընդգրկումն ու վայրագությունը, այն փաստը, որ դաժանությունների համար պատասխանատու հանցագործները երկար ժամանակ չհայտնվեցին անաչառ դատավորների առջեւ, վստահության ճգնաժամ ստեղծեցին հայ ժողովրդի եւ Մոսկվայի հարաբերություններում» (տե՛ս* **Գերաս Ժ.**, *Հայերի դեմոկրատական երազանքը):*

զուտ ներքին խնդիր», ինչպես նաեւ՝ Թուրքիայի հետ հարաբերությունները չփչացնելու համար»[431]:

Բայց որքան էլ Գորբաչովի «նոր կուրսին» նպաստելու քաղաքական դիրքորոշումն, իրոք, համընդհանուր էր եւ դրված էր պետությունների վերաբերմունքի հիմքում, Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում ծավալված պայքարը, որպես արմատական եւ համապարփակ ժողովրդավարական շարժում, նույնպես դրական վերաբերմունքի էր արժանացել ի սկզբանե: Ուստիեւ՝ պահպանելով հանդերձ Ղարաբաղյան շարժման նկատմամբ որպես «ԽՍՀՄ-ի զուտ ներքին խնդիր» լինելու մոտեցումը, Արեւմուտքը ժամանակ առ ժամանակ, նաեւ «հորդորում էր» ԽՍՀՄ ղեկավարությանը՝ լուծումներ գտնել բարձրացված խնդրի համար: Դա արվում էր, անշուշտ, արեւմտյան երկրներում ձեւավորված բարենպաստ հասարակական կարծիքի ճնշմամբ, կարեւոր հիմք՝ ԽՍՀՄ-ում նաեւ մյուս ժողովրդավարական շարժումների նկատմամբ իրենց երկրների դրական վերաբերմունքի համար[432]: Կարեւոր այս հաղթաթուղթը պահպանելու համար Շարժումը լուծել էր երկու խնդիր: Առաջին՝ ապահովել էր օրակարգային խնդրի ժողովրդավարական բնույթը եւ պայքարի մեթոդների օրինականությունը: Երկրորդ՝ հաղթահարել էր ոչ միայն հանրապետական ու միութենական, այլ նաեւ միջազգային տեղեկատվական կոշտ շրջափակումը: Տարբեր ճանապարհներով երկրից դուրս էր գալիս նաեւ օբյեկտիվ տեղեկատվությունը, դառնում նաեւ ոչ կառավարական շրջանակների ուսումնասիրության եւ տվյալ երկրներում նպաստավոր հասարակական կարծիքի ձեւավորման հիմք:

Ժողովրդավարական այլ շարժումների վերաբերմունքը. Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժումն անվերապահ պաշտպանություն եւ աջակցություն էր ստանում Արեւելյան Եւրոպայի երկրների ժողովուրդների կողմից, որոնք 1988թ. երկրորդ կեսից նույնպես ձեռնամուխ եղան սեփական ազատության համար պայքարի: Նույնպիսի անվերապահ աջակցություն կար Մերձբալթյան եւ ԽՍՀՄ այլ հանրապետությունների ժողովրդավարական շարժումների կողմից: Դրանց մեջ ամենակարեւորն, անշուշտ, նոր ձեւավորվող ռուսական ժողովրդավարական

[431] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.14, թ.241:*

[432] *Նկատենք, որ տարբեր երկրներում Ղարաբաղյան շարժման համար դրան մեծապես կարող էր նպաստել հայկական Սփյուռքը: Սակայն Շարժման դեմ ավանդական կուսակցությունների դիրքորոշումը այդ նպաստը հասցնում էր նվազագույնի:*

շարժումն էր: Հայկական ժողովրդավարական շարժման ճշգրիտ գնահատականն արձանագրեց աշխարհահռչակ իրավապաշտպան Անդրեյ Սախարովի գլխավորած «Մոսկովսկայա տրիբունան»[433]: «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ապօրինի ձերբակալության առիթով ընդունած ընդարձակ հայտարարության մեջ այդ գնահատականը ձեւակերպված է այսպես. «Չի կարելի, վտանգավոր է ու անարդարացի չտեսնել հետեւյալը: Սկզբում դնելով բնապահպանական եւ մշակութային խնդիրներ, ապա պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի հայ մեծամասնության կամքը, Հայաստանի հասարակական շարժումը դարձավ զանգվածային ժողովրդական շարժում՝ հանուն հանրապետությունում ազգային-մշակութային վերածննդի եւ ժողովրդավարական բարենորոգման, ընդդեմ չինովնիկական կլանների իշխանության, ընդդեմ կոռուպցիայի եւ երեսպաշտության, որոնք խորապես քայքայել էին հասարակության սոցիալական կյանքը եւ բարոյական հիմքերը: Ժողովրդական զանգվածների այդպիսի ժողովրդավարական ինքնակազմակերպման մեջ է վերակառուցման հույսը եւ հիմնական երաշխիքը»[434]:

Միջազգային հեղինակություն ունեցող այս կազմակերպության գնահատականը կարեւոր էր մի քանի առումներով: Առաջին՝ ոչ թե Շարժման թիկունքում են կաշառակերներ եւ «կոռումպացված տարրեր» կանգնած, ինչպես ամեն կերպ փորձում էին ներկայացնել իշխանական քարոզչամիջոցները, այլ՝ ընդհակառակը, կոռուպցիան եւ կաշառակերությունը հենց իշխանություններին են բնորոշում, իսկ Հայկական շարժումը պայքարում էր այս երեւույթների դեմ: Երկրորդ արձանագրումը շատ ավելի կարեւոր է. Հայաստանի զանգվածային ժողովրդական շարժումը ժողովրդավարական խնդիրներ է հետապնդում եւ, որպես այդպիսին, իրականացնում է հենց այն, ինչ հռչակել է իշխանությունը՝ ի դեմս «Վերակառուցման» կարգախոսների: Ստացվում էր, որ պայքարել դրա դեմ՝ այլ բան չէ, քան պայքարել հռչակած սեփական կարգախոսներն իրականացնողների դեմ: Այլ խոսքով՝ իշխանությունները մեղադրվում են երեսպաշտության եւ ստախոսության մեջ հենց այն հարցում,

[433] *Մոսկվայի առաջադեմ մտավորականության այս կազմակերպությունը ստեղծվել էր 1988 թ. հոկտեմբերի 12-ին, 120 հիմնադիր անդամներով, Անդրեյ Սախարովի նախաձեռնությամբ: Ստեղծումից անմիջապես հետո՝ հոկտեմբերին, ապա նոյեմբերի 26-ին իր ընդունած կոչերում նա առաջարկում էր սկսել Հայաստանի, Ադրբեջանի եւ այլ հանրապետությունների բազմակողմ երկխոսություն եւ կասեցնել նորանոր զոհեր պատճառող հակամարտության խորացումը (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/26.11.88):*

[434] *ՀՀԱՆԱ 15/04.02.89:*

որով դարձել էին համաշխարհային հետաքրքրության, նաեւ միջազգային օժանդակության առարկա: Այստեղ կարեւորը ոչ միայն այն հանգամանքն էր, որ սույն գնահատականը հեղինակավոր կազմակերպություն էր արձանագրում, այլեւ այն, որ այդ գնահատականը ճշգրիտ համապատասխանում էր իրականությանը: Այս առումով Շարժումն իրոք դարձել էր դժվար խոցելի, ավելին՝ իր նկատմամբ դիրքորոշում ունենալ էր պարտադրում նաեւ միջազգային պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջանակներին:

Այսպիսով, Հայկական ժողովրդավարական շարժումը 1988 թվականի ընթացքում ստեղծեց այն հիմքը, որի վրա գոյացան ու հզորացան նմանատիպ շարժումներ նաեւ ԽՍՀՄ այլ հանրապետություններում եւ Արեւելյան Եւրոպայում: Եւ եթե Շարժումը, խորացնելով իր ժողովրդավարական բնույթը, Հայաստանում ձեռք էր բերում զանազան մանր ընդդիմադիր ճակատներ, ապա ի դեմս այլ ժողովրդավարական շարժումների՝ վաստակում էր կարեւոր դաշնակիցներ եւ միջազգային հեղինակություն: Դրանք էլ հետագա տարիներին լինելու էին նրա հաջողությունների ապահովման կարեւորագույն ռեսուրսը:

ժգ) Ղարաբաղյան շարժումը եւ Սփյուռքը 1988 թվականին

Ղարաբաղյան ժողովրդավարական շարժման եւ հետագա տարիների քաղաքական իրադարձությունների վրա հայկական Սփյուռքը, տարբեր տեսանկյուններով, որոշակի ներգործություն է ունեցել: Այդ ներգործությունը եղել է երբեմն առարկայական ու երեւացող, երբեմն՝ միջնորդավորված եւ ոչ ակնհայտ: Բոլոր դեպքերում՝ սա մի ասպեկտ է, առանց որի ճիշտ պատկերացման թերի կմնան շատ իրադարձությունների հիմքերը, ընկալումներն ու բացատրությունները:

1988-ին հայաստանյան հասարակության եւ Սփյուռքի պատկերացումները միմյանց մասին՝ ձեւավորված խորհրդային իշխանության 70 տարիներին, հավասարապես հեռու էին իրականությունից: Հայաստանում պատկերացումները Սփյուռքի մասին դրական առումով չափազանցված էին եւ անիրական[435]: Նույնքան անիրական էին Սփյուռքի պատկերացումները

[435] *Փիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, էջ 135: Սփյուռքում տարածված պատկերացումների ամբողջական համապատկերը եւ բնութագիրը 1988-ին տե՛ս նույն տեղում, էջ 149-183:*

Հայաստանի ու նրա հասարակության մասին, սակայն տրամագծորեն հակառակ՝ բացասական իմաստով[436]:

Երեք կուսակցությունների՝ սեպտեմբերի 29-ի հայտարարությունը. Այսպիսով, փետրվարից ի վեր, Ղարաբաղյան Շարժման ավելի քան յոթ ամսվա լարված ու աննախադեպ պայքարի ընթացքում սփյուռքահայ կուսակցությունները, կարելի է ասել, դեռեւս հրապարակավ չէին արտահայտել իրենց պաշտոնական դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման ու նրա առաջ քաշած խնդրի նկատմամբ: Սակայն քաղաքական այդ դիրքորոշումն իրականում կար ի սկզբանե, կար չափազանց հստակ, ինչը դրանց ղեկավար մարմիններն ամեն կերպ աշխատում էին ծածուկ պահել ինչպես իրենց շարքերից, այնպես էլ, մանավանդ, սփյուռքյան հասարակությունից: Այդ դիրքորոշումը հրապարակավ ցուցադրեց այն առաջին պաշտոնական քաղաքական հայտարարությունը, որ ընդունվեց սեպտեմբերի 29-ին, ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի եւ ՍԴՀԿ-ի բարձրագույն մարմինների ստորագրությամբ, եւ հրապարակվեց հաջորդ օրերին[437]: Նախորդ ամիսների նրանց գործունեության, դրսեւորած իրական վարքագծի խորապատկերին գաղափարախոսական նույն հայդատական

---

436 *Դա հաստատող երկու քաղվածք՝ նշանավոր պատմաբան, Արեւմտահայոց պատմության հմուտ հետազոտող, կուսակցական եւ սփյուռքահայ կյանքին քաջատեղյակ Լեւոն Զորմիսյանից. «Կուսակցությունները հերոսներ, գաղափարական գործիչներ պատրաստեցին, բայց ո՛չ մեկ քաղաքական դեմք» (Զորմիսյան Լ., Կուսակցությունները էջ 46): «Արտասահմանի հայ կյանքին ուշադրությամբ հետեւող մը ցավով կհաստատե, որ քաղաքական մտածողության ունակ անձեր շատ ցանցառ են, չսելու համար անգո: Նույնիսկ «ազգային» կոչված մարմիններու, կուսակցական ղեկավարներու եւ հրապարակագիրներու կողմե կարելի չէ նշմարել որեւէ մտավորական բացառիկ ճիգ՝ մեր կացությունը հատկանշող հիմնական տվյալները երեւան հանելու եւ անոնց վրա հիմնելու համար քաղաքական բանավոր ուղեգիծ մը» (նույն տեղում, էջ 10): Անկախաբար նույն բանն է ասում սփյուռքյան գործիչ «Ֆրանս-հայկական համերաշխություն» կազմակերպության ղեկավար Քրիստիան Տեր-Ստեփանյանը. «Մինչ այդ (1988 թվականը, – Ա. Ս.) Սփյուռքի քաղաքական կազմակերպությունները Հայաստանը չէին դիտում իբրեւ քաղաքական ակտիվ ուժ: Սփյուռքն իրեն համարում էր միակ ուժը, որը կարող է քաղաքական հարցեր լուծել ի նպաստ հայերի: (Տեր-Ստեփանյան Ք., Մենք փոխվել ենք, անտիպ, տե՛ս ՀՀԱՆԱ, 15/07.11.89):*

437 *Հաճախ չէ, որ կուսակցությունները հանդես էին գալիս համատեղ խոսքով: Դա լինում էր, որպես կանոն, կարեւոր համազգային հարցերի առիթով (օրինակ՝ Ցեղասպանության) կամ ճակատագրական համարված պահերին: Այսինքն՝ երեքը միասին սա ճակատագրական պահ են համարել իրենց համար:*

Հանրահավաք Ստեփանակերտում
(ելույթ է ունենում «Կռունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովը)

Իգոր Մուրադյան,
Ղարաբաղյան շարժման
հիմնադիր, «Ղարաբաղ»
կոմիտեի առաջին
կազմի նախագահ (1988
փետրվար-մայիս)

Հատուկ դրություն Երևանում (մարտ, 1988)

Ընդդեմ Մոսկվայի ապատեղեկատվության
Լուս.՝ Մ. Վարդանյանի



Հանրապետական Գրադարան (Սարգսյան) հրապարակում

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ («ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵ)

Բաբկեն Արարքցյան



Ալեքսան Հակոբյան

Համբարձում Գալստյան

Ռաֆայել Ղազարյան

Սամվել Գեւորգյան

Սամսոն Ղազարյան

Վազգեն Մանուկյան

Վանո Սիրադեղյան

Աշոտ Մանուչարյան

Դավիթ Վարդանյան

Լեւոն Տեր-Պետրոսյան



ԼՂԻՄ՝ դիմումին համաձայնություն տալու պահանջով ցույցը Բաղրամյան պողոտայում (15 հունիս, 1988թ.)

պլատֆորմի վրա գտնվող, ուստիեւ նույն «վտանգի» առջեւ հայտնված այս կուսակցությունների այդօրինակ մի հայտարարություն սպասելի էր եւ բնական: Այն անսպասելի էր եւ անբնական հայաստանյան հասարակության, մասնավորապես՝ Շարժման հարյուրհազարավոր մասնակիցների համար, որոնք դեռեւս սպասում էին իրենց պատկերացմամբ «հայրենատենչ» Սփյուռքի ու նրա «հայրենասեր» կուսակցությունների վճռական խոսքին հօգուտ Համազգային շարժման: Այդ խոսքը հնչեց, սակայն սպասվածի ճիշտ հակառակ ուղղությամբ: Այն իր մեջ ուներ երկու հիմնական միտք.

ա) «Կպահանջենք, որ Խորհրդային Հայաստանի պետական իշխանությունները, առավել վճռականությամբ, հարազատ թարգմանը հանդիսանալով համաժողովրդական իրավացի պահանջներուն, հետեւողական նախանձախնդրությամբ եւ օրինական ու քաղաքական բոլոր միջոցներով Ղարաբաղի հարցը դարձնեն իրենց առաջնահերթ հարցը, արդար եւ ամբողջական լուծման մը հանգեցնելու առաջադրությամբ, անգոհացուցիչ եւ՝ Ղարաբաղի ու Հայաստանի ժողովուրդի իրավունքներու եւ ցանկության անհամապատասխան նկատելով ցարդ նախատեսված միջոցառումները»:

Եթե այս միտքը հրապարակվեր փետրվարյան օրերին, կլիներ, թերեւս, ճիշտ ժամանակին. այդ օրերին Թատերական հրապարակում հավաքված մեկ միլիոն մարդ նույնպես պահանջում եւ ակնկալում էր, որ հանրապետության ղեկավարությունը լինի վճռական եւ դառնա իր պահանջների թարգմանը: Հաջորդող ամիսների իրադարձությունները բազմաթիվ ապացույցներով հաստատեցին, որ դա չի կարող տեղի ունենալ: Բայց սա հանրապետության իշխանություններին ուղղված պարզապես ուշացած կոչ չէր, իսկ թե ինչ էր՝ պարզ է դառնում հաջորդ մտքից:

բ) «Կոչ կուղղենք նաեւ Հայաստանի եւ Ղարաբաղի մեր արի ժողովուրդին, որ խուսափին այնպիսի ծայրահեղական կեցվածքներե, ինչպես՝ գործադուլները, դասադուլները եւ ծայրահեղական կարգ մը կոչերն ու արտահայտությունները, որոնք կխանգարեն կարգն ու կանոնը մեր հայրենիքի հանրային կյանքին, ծանր կորուստներու կենթարկեն մեր երկրի տնտեսական, արդյունաբերական, կրթական, մշակութային կյանքը եւ վնաս կբերեն մեր ժողովուրդի վարկին, ինչպես նաեւ բնականոն հարաբերություններուն, ըլլա խորհրդային վերին իշխանությանց, ըլլա խորհրդային մյուս հանրապետություններու հետ, եւ կծառայեն մեր ժողովուրդի թշնամիներու հետին նպատակներուն»[438]:

---

[438] *«Դրոշակ», 12.10.1988, էջ 2:*

Դժվար չէ նկատել, որ ոչ միայն երկրորդ, այլ նաեւ առաջին դեպքում «կոչի» հասցեատերը Շարժումն էր եւ ժողովուրդը: Նրանց ասվում էր, որ Ղարաբաղի հարցը **պետք է վստահել իշխանություններին,** եւ դրանով պետք է զբաղվեն նրանք: Այսինքն՝ բացարձակ վստահություն էր արտահայտվում իշխանությունների նկատմամբ: Մինչդեռ Շարժմանը տրված գնահատականը հակառակն էր. **դատապարտվում են գործադուլները, դասադուլները, հանրահավաքները** եւ այլն, փաստորեն՝ պայքարի ամենաարդյունավետ միջոցները, ավելին՝ համարվում էր, որ իր պայքարով Շարժումը վնաս է բերում բոլոր բնագավառներում: Դժվար չէ նկատել, որ Ղարաբաղի հարցը իշխանություններին վստահելու քաղաքական այս դիրքորոշումը նույնանում էր նոմենկլատուրային մտավորականության դիրքորոշմանը: Դժվար չէ նկատել նաեւ, որ նույն այս մեղադրանքներն ու գնահատականները տարբեր ձեւակերպումներով տասնյակ անգամներ կրկնվում էին խորհրդային քարոզչամիջոցների կողմից: Իսկ երկու անգամ հանդիպող ծանոթ «ծայրահեղական» բնորոշումը ամեն ինչ իր տեղն է դնում: Բայց կուսակցությունները ավելի հեռուն են գնում եւ տալիս գնահատական, որ, կարծես թե, չէր հանդիպել մինչ այդ Շարժման դեմ գրված ամենաթունավոր ու կոպիտ հոդվածներում ու գնահատականներում անգամ, այն է՝ Շարժումն իր պայքարով իրականում ծառայում է «մեր ժողովրդի թշնամիների հետին նպատակներին»:

Ինչպե՞ս էր ծնվել այս փաստաթուղթը եւ ի՞նչ նպատակ էր հետապնդում:

Հարցի պատասխանը, դարձյալ, օգնում են գտնել Հայաստանի ՊԱԿ-ի փաստաթղթերը: Սփյուռքյան երեք կուսակցությունների ստորագրությամբ այս փաստաթուղթը ստանալու համար խորհրդային իշխանությունն ինչպես երեւում է, իրոք նախնական մեծ աշխատանք էր կատարել: Այս կուսակցությունների ղեկավարների հետ ամռան եւ աշնան ամիսներին կենդանի շփումներ են եղել (սեպտեմբերին Դաշնակցության ղեկավարների՝ Հ. Մարուխյանի եւ Հ. Տասնապետյանի հետ[439]: Վերջիններիս հետ հանդիպել են

439 Նույն մարդկանց հետ առաջին հանդիպումը ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանն ունեցել է դեռ փետրվարյան հանրահավաքների օրերին. «Երբ զանգվածային ցույցեր եւ գործադուլներ էին տեղի ունենում, նրանք ինձ հետ հանդիպեցին գաղտնի մի օբյեկտում, ուր եւ քննարկեցինք բոլոր հարցերը: Նրանք գիտեին, որ քաղաքում ցույցեր եւ գործադուլներ են, եւ հանդես էին գալիս Շարժման ու նրա պայքարի ձեւերի դեմ... դատապարտում էին ե՛ւ ցույցերը, ե՛ւ գործադուլները, ե՛ւ Շարժումը: Դեմ էին հակամոսկովյան ելույթներին եւ ասում էին. «Եթե ուզում եք՝ թույլ տվեք մասնակցել ցույցերին, եւ մենք կջախջախենք հռետորների բոլոր փաստարկներն ու ելույթները» («Հայաստանի Հանրապետություն», 04.07.1992):

Սուրեն Հարությունյանը[440] եւ Պետական անվտանգության կոմիտեի ղեկավարները՝ «ԽՍՀՄ ՊԱԿ-ի սանկցիայով» ու նախապես համաձայնեցված ՀԿԿ-ի առաջին քարտուղարի հետ[441]: Նպատակի ձեւակերպումը նույնն է՝ «նրանց վրա ԽՍՀՄ-ին ձեռնտու քաղաքական ներգործություն ունենալ, այդ թվում նաեւ այսպես կոչված «Հայ դատի» ներքին հողային հարցերի առումով»: Հանդիպումն, իհարկե, արդյունավետ էր անցել. «Դաշնակցության ղեկավարները հավաստիացրեցին ՊԱԿ-ի ներկայացուցիչներին, որ իրենց կուսակցությունը պաշտպանում է խորհրդային ղեկավարության եւ ՀԿԿ ԿԿ-ի՝ ԼՂԻՄ-ի հարցի լուծմանն ուղղված գործնական քայլերը»[442]: Չի բացառվում, որ հենց այս հանդիպումներում էլ հղացվել է քիչ անց հրապարակված կոչի գաղափարը, եւ որոշվել դրա ուղղվածությունն ու բովանդակությունը: Իսկ դրա հրապարակման առիթով Մ. Յուզբաշյանի կողմից մի առանձին զեկուցագիր է հղվում ՀԿԿ ԿԿ: Դրանում նշվում է, որ Հայաստանի ՊԱԿ-ը ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ համատեղ շարունակում է միջոցառումները՝ «Լեռնային Ղարաբաղի հարցում արտասահմանյան հայերի վրա մեզ համար բարենպաստ ազդեցություն ունենալու աշխատանքի գոյություն ունեցող պլանի համաձայն»: Աշխատանքի նպատակը համարում է Սփյուռքը նշված հարցի առիթով հակախորհրդային բնույթի ելույթներից հեռու պահելը, ինչպես նաեւ՝ «հանուն ԼՂԻՄ-ի սփյուռքահայության շարժումը» հայ-ադրբեջանական հարաբերությունների եւ Ղարաբաղի հետ կապված հարցերում հանրապետությունում «սրվող կրքերը, հակաիրավական, հակախորհրդային գործողությունները կանխելու համար» օգտագործելը: Նա համարում է, որ այդ ասպարեզում որոշակի արդյունքների հասել են, մասնավորապես՝ Սփյուռքը գործնականում միասնաբար դատապարտել է

440 Ավելի ուշ այս հանդիպման մասին Ս. Հարությունյանը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում, մասնավորապես, որ՝ Մարուխյանը դատապարտում էր շարժումը, որ իրենք «ընդհանուր լեզու գտան հիմնական հարցերում», եւ, որ իրեն հաջողվեց Յու. Յակովլեւի եւ ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Կրյուչկովի առջեւ Հայաստանի տարածքում ՀՅԴ-ն օրինականացնելու հարցում «ուժի մեջ թողնել ՀԿԿ ԿԿ-ի դիրքորոշումը» (տե՛ս Հարությունյան Ս., Անցյալի եւ ներկայի մասին, Երեւան, 2008 էջ 208-211):

441 Այդ հանդիպման մասին փաստաթուղթը տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.160, հրապարակված՝ «Հայաստանի Հանրապետություն», 05.03.1995: Փաստաթուղթը ստորագրել է ՊԱԿ-ի նոր նախագահը՝ Վ. Բագամյանցը, որ հոկտեմբերի վերջին փոխարինել էր Մ. Յուզբաշյանին:

442 ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.160:

Ղարաբաղյան շարժումն ամբողջությամբ հակախորհրդային ուղու վրա դնելու՝ ԽՍՀՄ-ից արտաքսված Պ. Հայրիկյանի գաղափարը: Ապա շարունակում է. «**Կարծում ենք, որ Սփյուռքի այս դիրքորոշման օգտագործումը հակաքարոզչական միջոցառումներում կարող է նպաստել Ղարաբաղյան շարժման համապատասխան գաղափարները եւ նրա լիդերներին վարկաբեկելու համար**»: Եւ այս համատեքստում, ահա, որպես խոշորագույն ձեռքբերում, Սփյուռքի երեք կուսակցությունների հիշյալ կոչ-հայտարարությունը ներկայացվում է հետեւյալ կերպ. «Սույն թվականի սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբին Բեյրութում ընդունվել եւ հրապարակվել է դաշնակցական բյուրոյի, ռամկավարների եւ հնչակների կենտրոնական վարչությունների համատեղ հայտարարությունը, որտեղ բացասական գնահատական է տրվում հանրապետությունում «Ղարաբաղյան շարժման» սադրիչ գործողություններին եւ հակապետական կոչերին»: Ապա նույն փաստաթղթից կատարելով այդ բանը հավաստող համապատասխան մեջբերում՝ տեղեկացնում է. «Նշված քաղաքական կուսակցությունների կողմից հայտարարության տեքստը հեռագրով ուղարկվել է ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի, ԳԽ նախագահության նախագահի անուններով»[443]: Սա նշանակում է, որ այս փաստաթուղթը սպասվել է, այն ունենալուն մեծ կարեւորություն է տրվել հիշյալ պաշտոնյաների կողմից, ուստիեւ անմիջապես ուղարկվել է նրանց հասցեներով: Այդ փաստաթղթի նպատակի եւ Շարժման ու նրա ղեկավարության դեմ օգտագործելու գործառույթի մասին է խոսում նաեւ Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Կ. Դալլաքյանը՝ ՀԿԿ ԿԿ ուղարկված զեկուցագրում: Նա մասնավոր գոհունակությամբ հայտնում է, որ դրանում «կտրականապես դատապարտվում են ԽՍՀՄ-ից դուրս գալու կարգախոսները, ռուս ժողովրդի եւ մյուս ժողովուրդների հետ բարեկամության խախտումը, գործադուլների տակտիկան»[444]:

Որպես Շարժման դեմ քարոզչության իրականացման նոր եւ թարմ նյութ, համարվում էր, որ հզոր փաստարկ էր տրված Հայաստանում հասարակական կարծիքի վրա ազդելու համար, որ պետք է ունենար հետեւյալ մեկնաբանությունը. անգամ հայկական «ազգային» կուսակցություններն իրենց «հայրենասիրությամբ», հարյուրամյա քաղաքական փորձով, մերժում են Շարժման գործելակերպը: Այն, բնականաբար, հաճույքով

[443] ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.53-54:
[444] ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.10, թ.195:

ընդունեցին իշխանությունները եւ նույնքան հաճույքով՝ Հայաստանի նոմենկլատուրային մտավորականությունը: Ս. Կապուտիկյանն, օրինակ, իր հերթական հարցազրույցում, որպես «Ղարաբաղ» կոմիտեի դեմ փաստարկ, նույն մեկնաբանությամբ անմիջապես ընդարձակ մեջբերում կատարեց դրանից[445]:

Երեք կուսակցությունների անունից ստորագրված սույն հայտարարությունը ստացավ նաեւ իր արժանի գնահատականը:

Շարժման ղեկավարությունը, որ մինչ այդ աշխատում էր հնարավորինս շրջանցել սփյուռքյան թեման, թիկունքից անսպասելի հարված ստանալուց հետո ստիպված էր ինչ-որ արձագանք տալ, որ, սակայն, ստացված հարվածի համեմատ՝ չափազանց մեղմ էր: Վ. Սիրադեղյանը հանրահավաքներից մեկում հայտարարեց. «Ես կցանկանայի խնդրել Սփյուռքին, որպեսզի այն ոտքի չկանգնի միայն ողբերգության դեպքում: Այն տասը ամիսների ընթացքում, երբ հայերն այստեղ մոբիլիզացվել եւ տանջվել են, գնահատելի կլիներ, եթե Սփյուռքն իր քաղաքական ուժը եւ որոշակի վերաբերմունքը ցուցադրեր Մոսկվային: Սփյուռքը միավորել է իր ուժերը (ավելի լավ կլիներ, եթե նրանք այդ բանը չանեին) այս անընդունելի փաստաթուղթը՝ երեք կուսակցությունների դեկլարացիան ստեղծելու համար, որը քննադատելով մեր Շարժումը, մեծ վնաս է հասցրել նրան եւ վտանգի է ենթարկել»[446]:

Երեք կուսակցությունների այս «կոչը» զարմանք առաջացրեց ոչ միայն Հայաստանում եւ Ղարաբաղում, այլեւ Սփյուռքում, ընդհուպ՝ նույն կուսակցությունների շարքերում[447]: Փաստաթղթերի տեսքով մեզ հայտնի են ՀՅԴ անդամների փոքր-ինչ ավելի ուշ տրված գնահատականներ: Այսպես՝ Կանադայի «մի խումբ մտահոգ դաշնակցականներ» ՀՅԴ Միհրան Փափազյան կոմիտեությանն ուղղված շրջաբերականում (դեկտեմբեր, 1990) սույն փաստաթուղթը գնահատում են հետեւյալ կերպ. «Այդ կոչը մենք կնկատենք խորհրդային կեդրոնական կառավարության եւ Հայաստանի համայնավար կուսակցության ջաղացքին ջուր լեցնող արարք: Այդ արարքին մեջ մենք կտեսնենք Հայաստանի ազգային շարժումը կոնակեն հարվածող քայլ եւ ձգտում՝ խիստ անպատվաբեր ՀՅԴ-ի համար»[448]: Այն նույն կերպ է գնահատվում նաեւ Ֆրանս-հայկական համերաշխություն կազմակերպության ներկայացուցիչ Ժիրայր Մալխասյանը (ՀՀՇ 2-րդ համագումարի իր

[445] *Տե՛ս Կապուտիկյան Ս., Հարցազրույց, «Երեկոյան Երեւան», 29.10.1988:*
[446] *Տե՛ս Մերսյե Ֆ., Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 29:*
[447] *Տե՛ս Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, էջ 171:*
[448] *ՀՀԱՆԱ, 25/01.12.90*

ելույթում՝ 1990թ.). «Երեք կուսակցություններ 1988թ. հոկտեմբերին սահմանակցող հայտարարություն մը ստորագրեցին, ուր կդատապարտեին հայության մղած պայքարը, ընկերային տարածքները, կոչ ուղղելով, որ հարգվի Կեդրոնին կարծեցյալ իրավարարի հանգամանքը: Դաշնակցությունը, որ անկախության իտեալին պահապանը ըլլալ կը դավաներ, առարկայորեն որպես համայնավարության գործակիցը չհայտնվեցա՞վ, անկախության եւ ժողովրդավարության համար ՀՀՇ-ի առաջնորդած շարժումին դեմ դիրքավորվելով»[449]:

Սփյուռքյան կուսակցությունների համատեղ հայտարարությունն անմիջապես խիստ բացասական գնահատեցին չեզոք, օտար վերլուծաբանները՝ դրա նպատակը համարելով Կրեմլին օժանդակելը: Ֆրանսիացի վերլուծաբան Մերսյեն գրում է. «Եթե ԱԻՄ-ը համարում է, որ «Ղարաբաղ» կոմիտեն զսպում է անկախության համար հայերի շարժումը, ապա Դաշնակցական կուսակցությունը հակառակը՝ համարում է, որ նրանք շատ հեռու են գնում դեմոկրատիայի համար իրենց պայքարում: Միավորվելով խորհրդամետ Ռամկավար եւ Հնչակյան կուսակցությունների հետ, նրանք իրենց երեք կուսակցությունների հայտարարության մեջ, որի նպատակն է օժանդակել Կրեմլին, *վերակառուցողական* դարձած դաշնակցականները ուղղակիորեն հարձակվում են «Ղարաբաղ» կոմիտեի վրա»[450]: Վերլուծաբանը դա համարում է «Ղարաբաղ» կոմիտեին Շարժման ղեկավարությունից մեկուսացնելու հերթական անհաջող փորձ. «Հայաստանում այս կոչն ազդեց այդ պահի գործադուլների վրա: Եթե նույնիսկ այդ պահին ցուցարարների շարքում շփոթություն ծագեց, ապա «Ղարաբաղ» կոմիտեի ամենօրյա հավաքները դրան վերջ տվեցին: Ղարաբաղյան շարժման կոլեգիալ ղեկավարությունը, չնայած այս հարձակումներին, մնաց Շարժման արժանավոր խոսնակը»: Իսկ կոչի հեղինակներին օտար վերլուծաբանի գնահատականն այսպիսին է. «Դժվար է ավելի ստրկամիտ լինել»[451]:

* * *

Սեպտեմբերի 29-ի հայտարարությունից հետո երեք կուսակցությունները, այս անգամ իրենց առանձին կազմակերպությունների դեմքով, ստորագրեցին եւս երկու փաստաթուղթ, որոնք ընդամենը ամրապնդում

[449] *Տե՛ս ՀՀԱՆԱ 15/23.11.90:*
[450] *Մերսյե Ֆ., Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 28:*
[451] *Նույնը, էջ 29:*

էին առաջինի հիմնական դրույթները: Դրանցից մեկը՝ Կանադայի մասնաճյուղերի ղեկավար մարմինների կողմից, ըստ էության՝ կրկնում էր նախորդը, մասնավորապես՝ կրկին կոչ անելով «Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի գիտակից մեր զանգվածներուն... դադրեցնեն երկրի կյանքը եւ տնտեսությունը անդամալուծող գործադուլներն ու դասադուլները, որպեսզի այդ վիճակեն չօգտվին մեր թշնամիներ...»[452]: Երկրորդը նույն կուսակցությունների Լիբանանի մասնաճյուղերի ղեկավարների անունից ուղղված նամակ էր Գորբաչովին, որի հիմնական միտքն էլ իրենց անկոտրում հույսն էր, թե՝ «Ղարաբաղի հարցը կգտնե արդարացի լուծում... եւ հավելյալ ուղի կհարթե Ձեր բարենորոգչական ողջունելի շարժման համար»[453]:

Հայտարարությունից հետո իրավիճակի մասին հետախուզական մարմինների տեղեկատվությունը հավաստում է, որ Դաշնակցությունը «պահում է իր տված խոստումները»: Եւ բերվում է այդ բանը հաստատող հետեւյալ օրինակը: ՀՅԴ-ի նախաձեռնությամբ դեկտեմբերին Վենետիկում նախատեսվում էր հրավիրել հայկական Սփյուռքին հուզող խնդիրներին վերաբերող միջազգային կոնֆերանս: Կոնֆերանսի գլխավոր հարցը պետք է լիներ Լեռնային Ղարաբաղի խնդրի քննարկումը: Վենետիկի քաղաքապետը (որը ֆինանսավորում է այս միջոցառումը), «առաջարկել է կոնֆերանսին պատվիրակություն հրավիրել նաեւ Լեռնային Ղարաբաղից, բայց այդ առաջարկությունը Դաշնակցության ղեկավարությունը չի պաշտպանել»[454]: Այս կոնֆերանսը նպատակ ուներ ներկայացնել եւ պաշտպանել ԼՂԻՄ հարցում ՀՅԴ-ի պաշտոնական դիրքորոշումը, որ պետք է ամփոփեր հետեւյալ հիմնական դրույթները.

- «Դաշնակների ղեկավարությունը պաշտպանում է՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու պահանջը, բայց այդ խնդիրը համարում է ԽՍՀՄ ներքին գործը, ինչի հետ կապված, մտադիր չէ բացահայտ ու սուր վիճաբանության մեջ մտնել Խորհրդային Միության ղեկավարության պաշտոնական գծի հետ:
- Դաշնակցությունը դատապարտում է ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալու պայքարի կոչերը, Հայկական ԽՍՀ-ն համարելով որպես հայկական պետականության համար գոյություն ունեցող միակ իրական ձեւը:

[452] *ՌԱԿ-ի խոսքը, էջ 25:*
[453] *ՌԱԿ-ի խոսքը, էջ 27:*
[454] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.161:*

- Դաշնակցության ղեկավարությունը դատապարտում է Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մոտեցումների հետ կապված ծայրահեղականության ցանկացած դրսեւորում եւ համարում է, որ ԽՍՀՄ-ում վերակառուցման հաղթանակը նոր հեռանկարներ է բացում խնդրի քաղաքական կարգավորման համար:
- Դաշնակցությունը Լեռնային Ղարաբաղի հարցը իր համար կարեւոր է համարում ոչ միայն այն որպես Հայ դատի մի մասի լուծում պատկերացնելով, այլ գլխավորապես այն բանի համար, որ ԼՂԻՄ հարցը նոր ուժով է միջազգային հանրության ուշադրությունը գրավում արտասահմանյան հայության՝ 1915թ. ցեղասպանության ճանաչման եւ զավթված հայկական պատմական տարածքները վերադարձնելու պահանջներին:
- Դաշնակցությունը եւ Սփյուռքի՝ նրա կողմից վերահսկվող կազմակերպությունները, ԼՂԻՄ խնդրի հետ կապված, արտասահմանում խորհրդային հիմնարկների կամ քաղաքացիների դեմ որեւէ ակցիա չեն ծրագրում»[455]:

Սրանք կարեւոր արձանագրումներ են եւ այն հիմքերն են, որոնց վրա այս կուսակցությունը պիտի շարունակեր իր պայքարը Շարժման դեմ:

Չորրորդ ճակատը Շարժման դեմ. Ինչո՞վ էր պայմանավորված տեւական ու համառ լռությունից հետո, ի դեմս իր երեք «կուսակցությունների» հայտարարության, Սփյուռքի «արթնացումը» եւ առաջին անգամ պաշտոնական դիրքորոշում հայտնելը 1988-ի սեպտեմբերի վերջին: Ինչո՞վ այլեւս անբավարար համարվեց Շարժման նկատմամբ «չեզոք» մնալու եւ դրանով իսկ՝ Սփյուռքը Շարժմանն ակտիվ աջակցելու եւ զորավիգ կանգնելու դերից հնարավորինս հեռու պահելու գործառույթը, եւ որոշվեց նրանց խոլ եւ քողարկված պայքարը դարձնել բացահայտ ու ճակատային:

Դրա շարժառիթը չէր կարող լինել Հայաստանում եւ Ղարաբաղում իրավիճակի նոր լարումը սեպտեմբերի վերջին. սա առաջին դեպքը չէր, մինչ այդ էլ եղել էին նույնպիսի ու ավելի սուր իրավիճակներ, երբ այս կազմակերպությունները բարձրաձայն որեւէ արձագանք չէին տվել: Բացի այդ, եթե սեպտեմբերի վերջին տասնօրյակի իրադարձությունները լինեին դրա պատճառը, այդ դեպքում էականորեն, եթե չասենք տրամագծորեն, ուրիշ պետք է լիներ հայտարարության բովանդակությունը եւ ուղղվածությունը:

[455] *Նույն տեղում, թ. 161-162:*

Վտանգը կամ դրա զգացողությունը չի կարելի փնտրել ո՛չ գործադուլների վերսկսման, ո՛չ հանրահավաքների ակտիվացման մեջ:

Վտանգը, որ դրդեց այդ քայլին, շատ ավելի մեծ էր, եւ այն պետք է փնտրել բոլորովին այլ հարթության վրա, անմիջապես նախորդ շաբաթներում: Դա **ՀՀՇ առաջին ծրագրային փաստաթղթի հրապարակումն էր** օգոստոսի 19-ին, որն, ինչպես տեսանք իր տեղում, շատ ավելի մեծ տագնապ էր առաջացրել իշխանությունների մեջ, քան բազմօրյա գործադուլներն ու դրանց սպառնալիքները: Այդ Ծրագիրը մարտահրավեր էր՝ ուղղված երկու հիմնական թիրախների.

Առաջին՝ խորհրդային գաղափարախոսությունը, որն անսակարկելի իշխանություն էր ապահովում Կոմունիստական կուսակցության համար՝ ամրագրված Սահմանադրությամբ (6-րդ հոդված): Այդ վտանգն ամփոփված էր, մասնավորապես, ծրագրում տեղ գտած ժողովրդավարական վերափոխումների համալիր ամբողջությամբ:

Երկրորդ՝ պահանջատիրությունը, որը Սփյուռքում իշխանություն էր ապահովում կուսակցությունների համար՝ ամրագրված ավանդական պատկերացումների կարծրատիպերով եւ կուսակցությունների, մասնավորապես Դաշնակցության ինքնապատկերացմամբ: Այդ վտանգն ՀՀՇ ծրագրում հռչակված գաղափարական սկզբունքներն էին, որ տրամագծորեն հակադրվում էին պահանջատիրության սրբագործված առանցքային դրույթներին ու պատկերացումներին:

Այս մարտահրավերի դեմ միայն քողարկված գործողություններով Սփյուռքը զսպելու գործառույթը կուսակցությունների համար այլեւս բավարար չէր: Նրանք պետք է նաեւ գաղափարական կոշտ ճակատ բացեին Շարժման դեմ: Իսկ հասարակական կարծիքի ձեւավորմանն ուղղված պայքարը չէր կարող լինել այլ կերպ, քան բացահայտ: Սույն հայտարարությունն այդ պայքարի մեկնարկն էր: Այսպիսի մի բացատրություն համահունչ է ինչպես «Կոչի» հեղինակների ասելիքին, այնպես էլ հաստատվում է վերեւում բերված փաստաթղթերի վկայություններով ու թափանցիկ ակնարկներով: Երեք կուսակցությունների համատեղ հայտարարության տեսքով Սփյուռքի միջամտությունը բխում էր ինչպես խորհրդային իշխանության, այնպես էլ ավանդական կուսակցությունների կենսական շահերից: Սա վերջին ռեսուրսն էր, որ խորհրդային իշխանությունը կարող էր օգտագործել Շարժման դեմ: Այդ պահից սփյուռքահայ կուսակցությունների «բլոկը» լրացրեց Շարժման քաղաքական հակառակորդների՝ կենտրոնական իշխանության, հանրապետական իշխանության, նոմենկլատուրային մտավորականության

շարքը՝ դառնալով Շարժմանն ընդդիմադիր, խոչընդոտող չորրորդ ուժը կամ ճակատը:

Իսկ իշխանության տագնապի հիմքում դրված էր երեք կարեւոր հանգամանք: Առաջին՝ որ այդ խնդիրները եւ դրանց իրականացման համար որդեգրված պայքարի մեթոդները, ամբողջությամբ դրված լինելով ժողովրդավարության հիմքի վրա՝ Շարժման համար ԽՍՀՄ-ում եւ նրա սահմաններից դուրս ապահովում էր համակիրների հզոր բանակ ու այն դարձնում դժվար խոցելի: Երկրորդ՝ Հայկական ժողովրդավարական շարժման ազդեցությամբ ԽՍՀՄ-ում եւ Արեւելյան Եւրոպայում ծավալվում էին ժողովրդավարական շարժումներ: Երրորդ՝ Հայկական շարժումը տիրապետում էր հսկայական պոտենցիալի, վայելում հասարակության բացարձակ մեծամասնության համակրանքը եւ անցնում, օրինական, սահմանադրական ճանապարհով ի վիճակի էր լուծելու իր առջեւ դրված խնդիրները:

Չեզոք Սփյուռքը՝ Ղարաբաղյան շարժման պաշտպան. Սակայն Սփյուռքը շատ ավելի լայն էր, հեռու միատարր լինելուց: Ղարաբաղյան շարժման աննախադեպ թափը եւ միջազգային հնչեղությունը չէր կարող անտարբեր թողնել սփյուռքահայությանը, որի մեծագույն մասը դուրս էր կուսակցությունների ազդեցության ոլորտից:

Վստահելի փաստաթղթերի արձանագրումներից դժվար չէ կռահել, որ սփյուռքահայ համայնքների ընդհանուր տրամադրությունները Ղարաբաղյան շարժման նկատմամբ ի սկզբանե արմատապես դրական են եղել եւ տարբերվել էին կուսակցությունների վերաբերմունքից: ՀԿԿ Կենտկոմ հղված զեկուցագրերից մեկը տեղեկացնում է, որ «հայ ընտրողների ձայները շահելու համար» Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության նախաձեռնությամբ, ի պաշտպանություն Ղարաբաղյան շարժման, 1988-ի մարտին հրավիրված հանրահավաքները խորհրդային ծառայությունները գնահատում են բնույթով «հակախորհրդային»[456]: Սա նշանակում է, թե այդտեղ հնչել են հենց Շարժմանն անվերապահ աջակցության կոչեր, ինչը եւ համահունչ է եղել հայկական համայնքի ընդհանուր տրամադրություններին: Հետագա մի շարք զեկուցագրերում եւս միշտ ընդգծվում է, որ Սփյուռքում տիրապետող վերաբերմունքն ու գնահատականները Ղարաբաղյան շարժմանը եղել են խրախուսական:

[456] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.123:*

Խորհրդային իշխանության կարեւորագույն խնդիրն էր՝ կանխել բարձրացված հարցի եւ այն հետապնդող Շարժման միջազգային հնչեղություն ստանալը: Եթե այս առումով Սփյուռքի կուսակցությունների հետ խորհրդային մարմինների համապատասխան աշխատանքն արդյունավետ էր ու հուսադրող, ապա նույնը չի կարելի ասել կուսակցությունների անմիջական վերահսկողությունից դուրս գտնվող կազմակերպությունների հետ կապված: Առաջին իսկ օրերից փաստաթղթերում անհանգստություն է հայտնվում ԱՄՆ-ում գործող «Հայ ազգային կոմիտեի» եւ «Հայկական համագումարի» համար: Մտավախությունն այն էր, որ սրանք կարող են ազդել երկրի Սենատի եւ Պետդեպարտամենտի վրա եւ ԼՂԻՄ խնդիրը մտցնել ԱՄՆ-ի պետքարտուղարի ու ԽՍՀՄ արտգործնախարարի՝ մարդու իրավունքների հարցերով սպասվող հանդիպման քննարկումների օրակարգ[457]:

Կուսակցությունների անմիջական ազդեցության ոլորտից դուրս գտնվող Սփյուռքի լայն շրջանակների եւ կազմակերպությունների չվերահսկվող վարքագծի հետ կապված մտահոգությունները հայտնվում են պարբերաբար: Հատուկ այդ խնդրին է վերաբերում ՀԿԿ ԿԿ ուղարկված, հոկտեմբերի 6-ով թվագրված զեկուցագիրը: Դրանում տեղեկացվում է Շվեյցարիայում գործող «Ղարաբաղի օժանդակության կոմիտեի» կողմից ԽՍՀՄ կառավարությանն ուղղված միջնորդության մասին՝ ԼՂԻՄ-ի հայ ընտանիքներին նյութական օգնություն ցուցաբերելու համար: Այս նախաձեռնությունը իրականացվել էր «Համաշխարհային հայկական շարժում» կազմակերպության Շվեյցարիայի բաժանմունքի ակտիվ աջակցությամբ: Նախատեսվում էր այդ պահանջը հատուկ պատվիրակության միջոցով փոխանցել Ժնեւի՝ ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսություն, կամ դա անել հյուպատոսարանի առջեւ ցույց կազմակերպելով: Փաստաթուղթը մտահոգություն է հայտնում, որ հայկական համայնքում աճում են «ազգայնական տրամադրությունները»՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու պարտադիր պահանջի տեսքով: Ընդ որում՝ այս պահանջին էր միացել նաեւ Հայ առաքելական եկեղեցու Շվեյցարիայի ներկայացուցիչը[458]:

Խորհրդային իշխանության համար վտանգն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի խնդրում հայկական համայնքներում դիրքորոշումների այսօրինակ

[457] *Նույն տեղում, թ.122: «Հայկական համագումարը», իրոք, արդարացրեց այդ մտավախությունը եւ կարեւոր գործ արեց հատկապես «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամներին ազատելու հարցում ԱՄՆ-ի ճնշումը ԽՍՀՄ-ի վրա ապահովելու համար:*

[458] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.56-57:*

«տեղաշարժերը» կարող են հանգեցնել «շղթայական ռեակցիայի» ամբողջ Սփյուռքում, ինչն իր հերթին կարող է հանգեցնել ԽՍՀՄ-ի վրա միջազգային կազմակերպությունների եւ առանձին երկրների կառավարությունների ճնշումների[459]: Նույն փաստաթուղթը հատկապես անհանգստություն է հայտնում այնպիսի ցուցական գործողությունների հետ կապված, ինչպիսիք էին Մարսելում «Աերոֆլոտի» ներկայացուցչության եւ Փարիզում «Ինտուրիստի» խաղաղ գրավումը 1988-ի սեպտեմբերի 28-ին, նմանօրինակ գործողության պլանավորումը Ժնեւում: Իսկ մտավախությունը նույնն էր՝ այդօրինակ գործողությունները կակտիվացնեն Սփյուռքի ճնշումները ԽՍՀՄ-ում հասարակական կարծիքի վրա, ինչպես նաեւ ոգեւորող ազդակ կծառայեն Ղարաբաղյան շարժման գործողությունների եւ պահանջների հետագա խստացման համար: Ընդ որում՝ այդ ցույցերում արդեն կրկնվում էին Շարժման հիմնական պահանջները[460]: Եւ վերջապես՝ հաջորդ անհանգստությունը վերաբերում է հենց Դաշնակցության տեղական կազմակերպություններից մեկին, որը, կարծես թե դուրս էր եկել բյուրոյի գծած շրջանակներից. «Եթե առաջ դաշնակները ձգտում էին պաշտոնապես սահմանազատվել ԼՂԻՄ-ի եւ նրա շուրջ իրավիճակի կարգավորման հետ կապված խորհրդային կառավարության միջոցառումների դեմ Սփյուռքի բողոքի ցույցերից, ապա ներկայումս նկատվում են տարբեր ուժերի ուղղված նրանց ուղիղ կոչերը՝ նմանօրինակ միջոցառումներ կազմակերպել խորհրդային դիվանագիտական ներկայացուցչությունների առջեւ: Այդպիսի կոչով է հանդես եկել մասնավորապես Ֆրանսիայի դաշնակցական կազմակերպությունը»[461]:

Սփյուռքը ոչ միայն միատարր չէր, իսկ կուսակցությունների ազդեցության շրջանակներն էլ՝ շատ նեղ, այլեւ հենց այս կուսակցությունների մեջ շատերը, մանավանդ մտավորական անդամները, ի հեճուկս կուսակցությունների ղեկավար շրջանակների, բոլորովին այլ կերպ էին վերաբերվում Ղարաբաղյան շարժմանը: Օրինակ, ՀՅԴ անդամ, ճանաչված պատմաբան Անահիտ Տեր-Մինասյանը գնահատում է. «Ղարաբաղյան Շարժումը, որ իր զանգվածային ցույցերով, կառավարությանը եւ խորհրդային իրավակարգին ուղղված մշտական մարտահրավերներով, հաղթանակ էր ստալինյան ժամանակներից ժառանգված վախի դեմ, շշմեցրեց Սփյուռքին՝ բոլորովին անպատրաստ Խորհրդային Հայաստանին ակտիվ աջակցողի դեր խաղալ, սակայն գրգռեց խանդավառությամբ եւ աղոտ հույսերով»: Իսկ Շարժման

[459] *Տե՛ս նույն տեղում:*
[460] *Տե՛ս նույն տեղում, թ. 57:*
[461] *Տե՛ս նույն տեղում:*

նկատմամբ վերաբերմունքի մեջ որակական փոփոխության ազդակ հանդիսացավ երկրաշարժը եւ Շարժման ղեկավարության ձերբակալումը. «Երկրաշարժը ոչ միայն մերկացրեց խորհրդային համակարգի բոլոր թերություններն ու արատները, այլեւ ստիպեց Սփյուռքին խորհրդային ռեժիմի պայմաններում Հայաստանի հաջողությունների դաժան ու ցավագին վերագնահատում կատարել... Շարժման ղեկավարների ձերբակալումը, որոնք արդեն 10 ամիս իրենց մեջ մարմնավորում են հայերի կամքն ու ընդդիմությունը, Սփյուռքին բերում են այն մտքին, որ խորհրդային կառավարությունն այդ առիթից օգտվեց, որպեսզի խստացնի հատուկ դրությունը եւ գլխատի Հայկական շարժումը: Այսպիսով՝ երկրաշարժը քաղաքական տեսանկյուն ստացավ: Սփյուռքի հայությունը, որ դեռ երեկ համակրանքով էր լցված *Վերակառուցման* եւ *Հրապարակայնության* նկատմամբ, սկսեց ավելի ու ավելի մեծ հիասթափությամբ վերաբերվել գորբաչովյան փորձարկմանը»[462]:

Լիակատար Շարժման հետ էր նաեւ Հայաստանում սովորող սփյուռքահայ ուսանողությունը, որը մեծ դեր էր խաղում հատկապես Շարժման մասին տեղեկատվությունը եւ Շարժման փաստաթղթերը Սփյուռքում տարածելու գործում: Պատահական չէ, որ այդ ուսանողները ընդհուպ անհատապես գտնվում էին ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում[463]:

[462] *Տեր-Մինասյան Ա., Մուրադյան Կ., Հայկական Սփյուռքը (տես ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.700, թ.6-7): Շարժման եւ նրա ղեկավարների նկատմամբ այսօրինակ դրական վերաբերմունքի համար Ա. Տեր-Մինասյանը (որ 20-րդ դարասկզբի դաշնակցական նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հարսն է եւ այս կուսակցության պատմության լավագույն գիտակը), ինչպես նաեւ նույնպիսի վերաբերմունք ունեցնող շատերը, վտարվեցին կուսակցությունից:*
[463] *Տե՛ս Յազըճյան Գ., Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները... էջ 113-116 եւ այլուր:*

2. ՇԱՐԺՈՒՄԸ «ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

ա) Շարժման դեմ ճնշումների սաստկացումը 1989-ի ձմռանը

Միայն առաջին հայացքից կարող էր թվալ, թե Կոմիտեի ձերբակալումից ու բանտարկությունից հետո իշխանությունն այլեւս լուրջ պատճառներ պիտի չունենար բռնաճնշումները խորացնելու համար: Շարժման թափը նախորդ ամիսների համեմատությամբ արտաքուստ որոշակիորեն կոտրված էր, ահավոր երկրաշարժն, այնուամենայնիվ, իշխանությունների համար շահարկման լավագույն առիթն էր տվել: Սակայն իշխանությունը, թերեւս, ավելի լավ էր հասկանում վտանգի մեծությունը, քան ուրիշները եւ Շարժման մասնակիցները:

Մեծաթիվ քննչական խմբի բուռն գործունեությունը վկայում էր, որ իշխանությունը նպատակ ուներ Շարժման ղեկավարության դեմ լուրջ մեղադրանքներ հարուցել, դատել եւ տեւականորեն ազատազրկված վիճակում պահել նրանց: Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտեի հաստատումը շատերն ընկալում էին որպես «փաստական անջատում» ու դրանով բավարարված էին: Սակայն բռնաճնշումները շարունակելը, Շարժումը մինչեւ վերջ արմատախիլ անելու ակնհայտ ձգտումը մատնում էր իշխանության խորն անհանգստությունն ու խուճապը: Այդ անհանգստության հիմքում կային մի քանի պատճառներ: Առաջին՝ դա օրգանական շարունակությունն էր այն իրարանցման, որը հաջորդեց ՀՀՇ առաջին ծրագրային փաստաթղթի ի հայտ գալուն եւ գաղափարական այդ հիմքի վրա նրա կազմակերպական կառույցների լայն ցանցի ստեղծմանը: Դրանից հետո իշխանություններն ի դեմս «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ-ի տեսնում էին վերջին հաշվով, դեպի անկախության տանող քաղաքական ծրագրով զինված ու գրագետ գործելակերպով ընդդիմության, իշխանության պոտենցիալ հավակնորդի, որին արդեն իսկ հաջողվել էր տեւական մի շրջան երկիշխանության վիճակ ստեղծել երկրում: Երկրորդ՝ որքան թուլանար Շարժումը,

այնքան ավելի հեշտ կլիներ ձերբակալված Կոմիտեի հետ հաշվեհարդարը: Եւ երրորդ, գուցեեւ ամենակարեւորը՝ Հայկական ժողովրդավարական շարժումը ոչ միայն ժամանակագրական, այլեւ բոլոր առումներով առաջինը լինելով ԽՍՀՄ եւ նրա շրջանակներից դուրս ծավալված ժողովրդավարական շարժումների մեջ՝ նրա դեմ հաղթանակը հոգեբանական առումով ծանր հարված կլիներ մյուսների համար, զգուշացման, կանգառի ու նահանջի հիմք: Այսինքն՝ խնդիրը կոմունիստական իշխանության համար շատ ավելի մեծ էր, քան ձերբակալված 14 հոգին կամ Ղարաբաղյան շարժումը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ 70-ամյա իշխանությունն իրեն զգում էր կենաց ու մահու պայքարի վիճակում եւ Կոմիտեին տեւականորեն վնասազերծելով՝ լուրջ հնարավորություն էր տեսնում այդ վիճակից դուրս գալու համար: Դրա վկայությունն են այն փաստերը, որոնք կներկայացվեն ստորեւ: Այնպես որ՝ Շարժմանը եւ նրա «պահեստային» ղեկավարությանը (այս մասին տե՛ս ստորեւ) սպասվում էր նույնքան, գուցե շատ ավելի պատասխանատու, դժվարին ու ճակատագրական մի շրջան:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամների դեմ քրեական գործ հարուցելուց եւ մոսկովյան բանտեր նետելուց հետո ուժեղացան ճնշումները նաեւ Շարժման մյուս առավել գործուն անդամների նկատմամբ: Ձերբակալվեցին Շարժման ամենագործուն անդամները՝ ընդհանուր թվով շուրջ 300 հոգի: Երեւան ժամանեց ԽՍՀՄ դատախազության բազմամարդ (62 հոգի) քննչական խումբը՝ Կոմիտեի դեմ հարուցած մեղադրանքների համար անհրաժեշտ նյութեր հայթայթելու նպատակով: Հարցաքննվեց շուրջ 1500 մարդ, ոչ միայն Շարժման մասնակիցներ, այլեւ իշխանության միջին եւ ներքին օղակների ներկայացուցիչներ, մասնավորապես սահմանամերձ շրջաններից: Հարուցված կամ նախատեսված մեղադրանքների շրջանակներում պետք է ապացույցներ հավաքվեին Կոմիտեի կողմից ազգամիջյան թշնամանքի բորբոքման, ադրբեջանցի բնակչության հետ ընդհարումներ հրահրելու, վերջիններիս հեռանալը հանրապետությունից որպես Կոմիտեի կողմից հրահրված բռնի գործողությունների արդյունք ներկայացնելու, ապօրինի զենքի եւ զինամթերքի ձեռքբերման, զինված ջոկատների ստեղծման մասին եւ այլն[464]: Հետագայում պարզվեց, որ հարցաքննվածներից որեւէ

[464] *Ձերբակալությունները եւ հարցաքննությունները կատարվում էին առանց որեւէ իրավական հիմքի: Բավարար հիմք էր արդեն Շարժման ակտիվ մասնակից, տեղական «ենթակոմիտեներում» ընդգրկված լինելը: Այսպես՝ Ջարենցավանի «ենթակոմիտեի» 9 անդամներից հարցաքննության ժամանակ աշխատել են հատկապես ցուցմունք կորզել «Ղարաբաղ» կոմիտեից զենք ստանալու, պայթուցիկ նյութեր պատրաստելու, ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու հանձնարարականներ ստացած լինելու մասին: Այդպիսի ցուցմունքներ ստանալ չի հաջողվել, սակայն արդյունքը համարվել է գոհացուցիչ այնքանով, որ՝ «Գործով իրականացված բազմաթիվ հարցաքննությունները եւ քննչական այլ գործողություններ օգտագործվել են գործով անցնող անձանց եւ նրանց շրջապատի վրա կանխարգելիչ ազդեցության համար» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.99-100):*

[465] *1500 հարցաքննվածներից միայն երեք հոգի էին ցուցմունք տվել Կոմիտեի դեմ (տեղեկության աղբյուրը տե՛ս ծթ. 396): Մինչդեռ իրենց չափազանց կոռեկտ էին պահել Հայաստանի ՆԳՆ եւ ՊԱԿ-ի շարքային եւ միջին օղակների աշխատակիցները, ոմանք՝ ընդհուպ անձնական ռիսկի դիմելով: Այսպես. ձերբակալությունից հետո միլիցիայի բաժանմունքում Լ. Տեր-Պետրոսյանից առգրավված կարեւոր հեռախոսահամարներով ծոցատետրը եւ Իգոր Մուրադյանից ստացված մի վտանգավոր նամակ միլիցիայի սպան չէր կցել գործին, պահել ու նրան էր վերադարձրել ազատվելուց հետո: Մեկ ուրիշը նույն կերպ պահել էր Կոմիտեի մեկ այլ անդամի մոտ հայտնաբերված ատրճանակը: Ոստիկանության մի այլ աշխատակից Բաբկեն Արարաքցյանին էր առաջարկել իր օգնությունը: ՊԱԿ-ի մի աշխատակից էլ, որ քննչական խմբի համար թարգմանում էր Կոմիտեի անդամների՝ հանրահավաքներում հնչած բոլոր ելույթները, Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ «որպեսզի ոչ մի հայի գլխից մազ չպակասի» արտահայտությունը ռուսերենի էր վերածել «որպեսզի ոչ մի ադրբեջանցու գլխից մազ չպակասի» (այս փաստերի մասին մասնավոր զրույցում մեզ պատմել են Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Բաբկեն Արարքցյանը): Համբարձում Գալստյանի վկայությամբ՝ դեկտեմբերի 10-ին Գրողների միությունում կոմիտեի անդամների ձերբակալության ժամանակ, որից ինքը խույս էր տվել, իրեն է մոտեցել ու իր օգնությունն առաջարկել Երեւանի Սպանդարյանի շրջանի ոստիկանական բաժնի պետի տեղակալ Ալեքսանդր Վասիլյանը, եւ միասին տարբեր բնակարաններից հավաքել եւ թաքցրել են այն ամենը, ինչը կարող էր «հետագայում տհաճությունների պատճառ դառնալ» (տե՛ս Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 199): Այսօրինակ փաստերը կարեւոր վկայություն են Շարժման համաժողովրդական բնույթի, հասարակության նաեւ այդ շերտերում Կոմիտեի բարձր հեղինակության եւ նրա նկատմամբ ջերմ վերաբերմունքի մասին:*

[466] *Այս որոշումը ձեռքի տակ չենք ունեցել, այն հիշատակվում է ՀԿԿ կ-ի փետրվարի 27-ով թվագրված մեկ այլ որոշման նախագծում (տե՛ս ՀՀԱՆԱ, 31/27.02.89, թ. 2):*

մեկի վկայությունները մեղադրանքներ հարուցելու լուրջ հիմք չէին տվել դատախազությանը[465]:

Շարժման դեմ ձեռնարկվող միջոցառումները ծրագրվում էին Մոսկվայում եւ խստագույն հսկողության տակ էին ԽՄԿԿ ԿԿ-ի կողմից: Կոմիտեի բոլոր անդամներին ձերբակալելու հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, ԽՄԿԿ ԿԿ-ը ընդունում է «Որոշ ինքնագործ կազմավորումների գործունեության մեջ բացասական միտումների հաղթահարման մասին» որոշումը[466], որով եւ համապատասխան խնդիրներ է դնում Հայաստանի իշխանության առջեւ:

Շարժումը վերջնականապես արմատախիլ անելու որոշման մեջ հանրապետության իշխանությունները սկզբնական շրջանում ոգեւորված էին եւ վճռական: Այս ուղղությամբ նրանց կտրուկ քայլերն ու քարոզչական բուռն հարձակումները ցույց էին տալիս, որ այս անգամ, օգտվելով երկրաշարժի հարմար առիթից, նրանք մտադիր են գնալ մինչեւ վերջ: Անգամ լուրջ կադրային փոփոխություններ կատարվեցին իշխանության բարձր էշելոններում. ԿԿ-ի երկրորդ քարտուղար Յուրի Կոչետկովին փոխարինեց Օլեգ Լոբովը, Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանին՝ Վլադիմիր Մարգարյանցը, մինչ այդ՝ ՊԱԿ-ի նախագահի պաշտոնում Մ. Յուզբաշյանին փոխարինել էր Վ. Բաղամյանցը: Կադրային էական փոփոխություններ եղան նաեւ միջին օղակներում:

Սկսվեց հետապնդումների մի ամբողջ մարաթոն: Ակտիվացավ հատկապես չինովնիկության այն նեղ շերտը (գործարանների ու հիմնարկների տնօրեններ եւ այլն), որն ստիպված էր եղել Շարժման վերելքի ու երկիշխանության շրջանում լռել, համակերպվել, թաքնվել կամ հանրահավաքներում քննադատության էր ենթարկվել: Երեւանում նստած ԽՍՀՄ գլխավոր դատախազության բազմամարդ քննչական խումբը հարցաքննում էր բոլոր նրանց, ովքեր որեւէ կերպ «նկատվել էին» նախորդ ամիսների իրադարձությունների ժամանակ, շփումներ ունեցել Կոմիտեի անդամների հետ:

Շարժման դեմ դեկտեմբերի 13-ից սկսված քարոզչական տեռորը շարունակվեց նաեւ 1989թ. հունվարի ընթացքում: Իշխանության առաջին դեմքի՝ Ս. Հարությունյանի բառապաշարում նրանք կրկին «այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական արկածախնդիրներ» էին, որոնք՝ «դեմոկրատական մեխանիզմներն օգտագործում էին կրքեր բորբոքելու... Ղարաբաղի հարցի արդարացի լուծման պահանջի քողի տակ բացահայտ պայքար էին սկսել իշխանության համար... կանգ չէին առնում մարդկանց անկարգությունների դրդելու, չարամիտ լուրեր տարածելու, իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու, վերջնագրեր ներկայացնելու առջեւ»[467]: Ապա նա նաեւ

[467] *«Սովետական Հայաստան», 18.01.1989: Կոմկուսը համարում էր, որ իշխանությունը իր մենաշնորհը, ուստիեւ դրա համար պայքարը որեւէ ուժի կողմից (եթե անգամ այն համաժողովրդական համակրանք եւ վստահություն վայելեր) համարում էր ծանրագույն հանցանք ու մահացու մեղք: Ոչ միայն իշխող կուսակցությունը, այլեւ հասարակության զգալի մի մասը դեռեւս համարում էր, որ միայն կոմկուսն իրավունք ունի իշխանական կուսակցություն լինելու, մի պատկերացում, որ հասարակության մեջ ներարկված էր ամբողջ 70 տարի, եւ որը, որպես իրավունք, ըստ էության, ամրագրված էր նաեւ գործող Սահմանադրության հայտնի 6-րդ հոդվածով:*

իր դժգոհությունն է հայտնում «մտավորականների մի փոքր մասից», որը փորձում էր արդարացնել «ինքնակոչ լիդերներին», եւ ընդհակառակը՝ իր գոհունակությունը հայտնում այն «բազմաթիվ նամակների» հեղինակներին, որոնք, իբր, պաշտպանում էին իշխանության «սկզբունքային դիրքորոշումը»[468]: Իրականում, չնայած ահաբեկման մթնոլորտ ստեղծելու գործողություններին, դեպի ե՛ւ հանրապետական իշխանության, ե՛ւ հատկապես կենտրոնական իշխանության մարմիններ նամակների ու բողոքների մի իսկական տարափ էր տեղում հօգուտ «Ղարաբաղ» կոմիտեի:

Իշխանական քարոզչամեքենան, ամեն կերպ խուսափելով գաղափարական բնույթի բանավեճից, պիտակավորումների միջոցով փորձում էր հասարակությանը հոգեբանորեն նախապատրաստել Շարժման ու նրա ղեկավարության հետ ծրագրված հաշվեհարդարին: Հանրապետության դատախազությունը, ցուցադրելու համար իր վճռականությունը, հրապարակավ ոչ միայն բողոքում էր «այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների եւ նրանց հետեւից գնացող ծայրահեղական տարրերի հակահիրավական ու անպատիժ» գործողությունների դեմ, այլեւ որոշում է պատժել այն դատախազներին, որոնք հանդուրժողականություն են ցուցաբերել[469]:

Մթնոլորտի մասին պատկերացում տալու համար ներկայացնենք մի քանի փաստաթղթեր: Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը («Մերգելյան ինստիտուտ») ամենաակտիվ հիմնարկներից մեկն էր եղել Շարժման ընթացքում: Անստորագիր մի տեղեկանք, որ հանգրվանել էր ՀԿԿ ԿԿ-ում, թվարկում է ակտիվիստների անունները (Ալբերտ Բաղդասարյան, Ռոմեն Եպիսկոպոսով, Բագրատ Կանայան, Շահեն Պետրոսյան), ովքեր եղել են հանրահավաքների ու գործադուլների կազմակերպիչներ կամ քարոզել են Շարժման գաղափարները: Ընդ որում՝ ակտիվիստների եւ դրանց աջակիցների մեջ կան նաեւ տարբեր օղակների ղեկավարներ, մինչեւ իսկ տնօրենի առաջին տեղակալը (ակադեմիկոս Ռոբերտ Աթոյան): Հետաքրքիր է տեղեկանքում այն փաստի արձանագրումը, որ հիմնարկի կուսակցական կազմակերպությունը կազմալուծվել է, եւ՝ «շատ կոմունիստներ անսկզբունքային դիրք են գրավել ու տրվել Ղարաբաղյան շարժման ակտիվիստների ազդեցությանը»[470]: Սա տարածված երեւույթ էր. իրոք՝ Կոմունիստական կուսակցության ոչ նոմենկլատուրային

[468] *Տե՛ս նույն տեղում:*
[469] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 04.01.1989:*
[470] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.6-8:*

հսկայական զանգվածը, թերեւս 90%-ից ավելին, Շարժման մասնակից էր եւ պաշտպանում էր նրա գաղափարները:

Կան նաեւ այսօրինակ ստորագրված փաստաթղթեր: Երեւանի ռելեների գործարանի ամբողջ ղեկավար անձնակազմի անվանական ստորագրությամբ նման մի դիմում է հղվել հանրապետության դատախազին՝ գործարանի «Ղարաբաղ» ենթակոմիտեի ղեկավարների մասին: Ընդ որում՝ բողոքը, ինչպես եւ նախորդ դեպքում, նրանց ոչ միայն նախորդ շրջանի գործունեությանն է վերաբերում, այլեւ տվյալ պահի (հունվարի կեսեր): Դրանում նշվում է, որ ենթակոմիտեի անդամների ղեկավարությամբ աշխատողների մի մեծ խումբ շրջափակել էր ադմինիստրատիվ շենքը, պահանջել ընդհանուր ժողով հրավիրել եւ որպես ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի պատգամավորության թեկնածու առաջադրել «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լեւոն Տեր-Պետրոսյանին կամ գրող Կարեն Սիմոնյանին: Գործարանի ղեկավարությունը մտահոգված էր. եթե այս պահանջն իրենք չընդունեն, ապա նրանք կարող են ամբողջ գործարանում գործադուլ կազմակերպել, իսկ եթե ընդունեն, ապա կստացվի, որ տեղի տվեցին «Ղարաբաղ» ենթակոմիտեի ճնշմանը: Ընդ որում՝ այս ամենը հատուկ դրության եւ պարետային ժամի պայմաններում: Նամակագիրները հայցում են հանրապետության դատախազության միջամտությունն ու օգնությունը[471]: Նույնն էր վիճակը մյուս ձեռնարկություններում:

Մի այլ փաստաթուղթ հստակ ցուցադրում է, որ հանրապետության իշխանությունը, ի դեմս նրա առաջին դեմքի, որքան էլ հրապարակավ ներկայանում էր որպես հաղթող, ինքնավստահ եւ վճռական, իրականում շփոթված էր: Կարճ ժամկետում ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի սեղանին դրվեցին, ըստ հիմնարկների, Շարժման գործուն մասնակիցների ցուցակները, որոնք ոչ միայն կազմակերպական մեծ աշխատանք էին տարել մինչ այդ, այլ նաեւ այժմ էլ շարունակում էին նույն կերպ գործել: Այդ ցուցակները կազմվել էին նույն հիմնարկների ղեկավարների կողմից: Յուրաքանչյուրի համար նշված էր ինչպես աշխատավայրը, այնպես էլ բնակության հասցեն, ինչը նշանակում է, որ նրանց հետ իրավապահ մարմինները պետք է «աշխատեին» ե՛ւ հիմնարկում, ե՛ւ տանը՝ անհատապես ու լրջորեն: Հունվարի 20-ին արդեն ներկայացված էր այդօրինակ 50 ցուցակ,

[471] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.3-4: Դատախազությունը ընդառաջում է այս խնդրանքին եւ պատգամավորության թեկնածուների առաջադրման ժողովից հետո ձերբակալում գործարանի ենթակոմիտեի ղեկավարներին:*

որոնցում արձանագրված էր 323 անուն[472]: Փաստաթղթի վրա Ս. Հարությունյանը ԿԿ-ի չորս քարտուղարների անունով որպես հանձնարարական մակագրել է. «Խնդրում եմ մտածել եւ առաջարկություն մտցնել «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների գործունեությունը չեզոքացնելու ուղղությամբ»[473]: Հավանաբար՝ այս չորս քարտուղարների մտածած առաջարկների թվում եղել է նաեւ այն, որ պետք է հանձնարարել կոմկուսի համապատասխան շրջանային կոմիտեներին՝ զբաղվել «ակտիվիստների» հարցերով, քանի որ փետրվարի 5-ին այդ ցուցակների հետ ծանոթացվում եւ դրանք տրամադրվում են այն շրջկոմների եւ քաղկոմների քարտուղարներին, որոնց տարածքներում բնակվում կամ աշխատում են ակտիվիստները[474]:

Կուսակցության կենտկոմից ստացված հանձնարարականների կատարման արդյունքների մասին շրջկոմների քարտուղարները եւ իրավապահ մարմինները պարտավոր էին պարբերաբար զեկուցել: Սակայն ԿԿ-ի 1-ին քարտուղարը շտապում էր, ինչը եւ մատնում է նրա խուճապը. հինգ օր անց՝ փետրվարի 10-ին, նա նույն ցուցակների առիթով ԿԿ-ի քարտուղարներ Օ. Լոբովին, Գ. Գալոյանին եւ Երեւանի քաղկոմի քարտուղար Մ. Մինասբեկյանին կոշտ դիտողություն է ստորագրում. «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում անբարեհույս կոլեկտիվներում անհրաժեշտ աշխատանքներ տանելու հանձնարարության անբավարար կատարման վրա: Երեւանի քաղաքային կոմիտեն պետք է հատուկ հաշվառման վերցնի այդ կոլեկտիվները եւ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի դրանցում իրավիճակն առողջացնելու համար»[475]: Առաջին քարտուղարն իրավունք ուներ անհանգստանալու. ձեռնարկված միջոցառումները որեւէ արդյունքի չէին հանգեցնում, եւ Շարժումը շարունակվում էր: Անգամ հատուկ դրության եւ պարետային ժամի եւ զանգվածային միջոցառումների անհնարինության պայմաններում այն ամբողջությամբ ու մեծ ոգեւորությամբ տրվել էր իշխանությունների համար շատ վտանգավոր մի գործի՝ մեկնարկ վերցրած ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրություններում սեփական թեկնածուների եւ առաջին հերթին «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամների թեկնածության առաջադրմանը[476]:

[472] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.13-72:*

[473] *Տե՛ս նույն տեղում, թ. 11:*

[474] *Տե՛ս նույն տեղում, թ. 12:*

[475] *Տե՛ս նույն տեղում, թ. 73:*

[476] *Օրենքը դա թույլ էր տալիս, քանի դեռ նրանք մեղավոր չէին ճանաչվել դատարանի կողմից, եւ չկար ուժի մեջ մտած օրինական վճիռ: Մթնոլորտն այնպիսին էր, որ գրանցման դեպքում նրանք բոլորն, անկասկած, կընտրվեին:*

Տրված հանձնարարականների կատարման արդյունքներից դժգոհ էր նաեւ ԽՄԿԿ ԿԿ-ը, որը եւ հունվարի 30-ին ընդունում է մի այլ որոշում՝ շատ ավելի խիստ ու բաց վերնագրով. «Հակասոցիալիստական տարրերի՝ ԽՄԿԿ-ին ընդդիմադիր քաղաքական կառույցներ ստեղծելու փորձերին հակազդելու միջոցառումների մասին»[477]: Դատելով դրա կատարմանն ուղղված միջոցառումներից, Կենտրոնը, ըստ երեւույթին, խստագույնս պահանջել էր ոչ միայն արմատախիլ անել Շարժումը, այլեւ իշխանության բարոյալքված կառույցները զգաստացնելու նպատակով ձեռնարկել պատժիչ միջոցառումներ նաեւ իրենց պարտականություններում թերացած պաշտոնյաների նկատմամբ: Հունվարի 31-ին ՀԿԿ ԿԿ Առաջին քարտուղար Ս. Հարությունյանը Կենտրոնին զեկուցում է հետեւյալը. ՀԿԿ ԿԿ-ը, քաղկոմները, շրջկոմները եւ սկզբնական կազմակերպությունները սկսել են ավելի ակտիվ եւ համառորեն աշխատել այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի եւ տեղերում նրա ակտիվիստների ավանտյուրիստական եւ սադրիչ գործունեությունը մերկացնելու ուղղությամբ: Պատասխանատվության է կանչվել 271 մարդ, հարուցվել է 154 քրեական գործ: Քարոզչության նպատակով շրջաններն են ուղարկվել 23 «տեղեկատվական քարոզչական խմբեր»՝ դասախոսություններ կարդալու համար: Տպավորիչ են նաեւ պաշտոնատարների նկատմամբ պատժամիջոցները. միայն դեկտեմբերին կուսակցության շարքերից վտարվել էր 13 ղեկավար աշխատող, աշխատանքից հեռացվել էր 36 ղեկավար աշխատող, 87 կուսակցական ենթարկվել էր կուսակցական տույժի: Աշխատանքից եւ կուսակցությունից հեռացվածների մեջ կային շրջկոմների քարտուղարներ, շրջգործկոմների նախագահներ, դատախազներ, ներքին գործերի ղեկավար աշխատողներ եւ այլն[478]: Եթե տարբեր օղակների պաշտոնյաներին պատժելը կազմալուծվող ու բարոյալքված համակարգը կազդուրելու, զգաստացնելու նպատակ ուներ, ապա «անգործության, ազգամիջյան երկպառակությունների բորբոքումը չկանխելու», Շարժման նկատմամբ «լոյալ» վերաբերմունքի պատճառաբանություններով այդ պատիժների մասին հաղորդագրությունների հրապարակումներն ուղղված էին հասարակության վրա հոգեբանական ճնշում գործադրելուն, ահաբեկելուն, իշխանության «վճռականությունը» ցուցադրելուն:

[477] *Այս փաստաթուղթը ձեռքի տակ չենք ունեցել, այդ որոշման կենսագործման գործնական միջոցառումների մշակմանն է նվիրված ՀԿԿ ԿԿ-ի 1989թ. փետրվարի 27-ով թվագրված որոշման նախագիծը (տե՛ս ՀՀԱՆԱ, 31/27.02.89, թ. 2):*

[478] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.27, թ.31-36:*

Կենտրոնը, ինչպես երեւում է, դժգոհ է մնացել նաեւ այս արդյունքներից եւ պահանջել ավելի վճռական գործողություններ, եւ այդ դժգոհությունը հայտնել է արդեն իր դրածոյին՝ ՀԿԿ երկրորդ քարտուղար Օ. Լոբովին[479]: Վերջինիս՝ մարտի 13-ի զեկուցագիրը նախորդին հավելում է. «Հաղորդում ենք, որ հանրապետության կուսակցական կոմիտեները եւ իրավապահ մարմինները շարունակում են աշխատանք տանել ազգամիջյան թշնամանք բորբոքողներին եւ հակաօրինական գործողություններ կատարած մարդկանց ի հայտ բերելու եւ պատժելու, ինչպես նաեւ նրանց՝ ովքեր արգելակում են անզիջում հարձակողական պայքարը ծայրահեղական, ազգայնական տրամադրություններ կրողների դեմ եւ խոչընդոտում հանրապետությունում բարոյա-քաղաքական իրավիճակի առողջացմանը»: Նա տեղյակ է պահում, որ հակահիրավական գործողությունների, պասիվության եւ այլ խախտումների համար կուսակցությունից հեռացվել է եւս 10 մարդ, այդ թվում՝ 2 ղեկավար, պաշտոնազրկվել է 5 հոգի, 43 մարդու, որոնցից 33-ը՝ ղեկավար աշխատողներ, կուսակցական տույժեր են տրվել եւ այլն[480]:

Խորհրդային պատժիչ մեքենային հանձնարարված էր աշխատել ամբողջ ճակատով: Հետապնդման թիրախ էին ոչ միայն հիմնարկ-ձեռնարկությունների, մտավորական կենտրոնների աշխատողները, բուհերի ուսանողները, այլեւ մինչեւ անգամ դպրոցներում ուսուցիչներն ու աշակերտները: Դրա փայլուն ապացույցն է հունվարի սկզբին հանրապետության դատախազ Վ. Նազարյանի թ. 21/16-89 գրությունը ՊԱԿ-ի նախագահ Վ. Բադամյանցին, որտեղ նա խնդրում էր վերջին 9 ամիսների համար տրամադրել հետեւյալ տվյալները.

«**1.** Նշված ժամանակաշրջանում հանրապետության ո՞ր դպրոցում եւ պրոֆտեխնիկական ուսումնարանում են դասադուլներ արվել, ինչ տեւողությամբ:

2. Հիշյալ ուսումնական հաստատություններում ովքե՞ր են եղել դրանց կազմակերպիչները:

3. Ո՞ր դպրոցների ու ՄՊՏՈՒ-ների[481] մանկավարժներն ու սովորողներն են չարտոնված միտինգներին ու ցույցերին ակտիվորեն մասնակցել:

[479] *Հանրապետական կուսակցական կազմակերպություններում 2-րդ քարտուղարը, սովորաբար՝ ազգությամբ ռուս, ըստ էության՝ Կենտրոնի վերահսկիչն էր, վստահելի անձը՝ եւ օժտված լայն լիազորություններով:*

[480] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.27, թ.81-82:*

[481] *Բանվորական մասնագիտական կրթություն տվող ուսումնարաններ, որտեղ, որպես կանոն, սովորում էին 8-ամյա կրթությունից հետո:*

4. Հիշյալ ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների անդամներից եւ սովորողներից ովքե՞ր են այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստներ եղել եւ ինչպիսի հակաօրինական գործողություններ են ծավալել:
5. Կուսակցական, սովետական եւ կոմերիտական մարմինների եւ նրանց աշխատակիցների նկատմամբ ինչպիսի՞ հակաօրինական գործողություններ են թույլ տրվել: Ովքե՞ր եւ երբ են նրանց նկատմամբ բռնություններ գործադրել: Եթե նման դեպքեր եղել են, նշել պաշտոնատար անձի եւ բռնություն գործադրողի անուն, ազգանունը եւ զբաղմունքը:
6. Դպրոցների եւ ՄՊՏՈՒ-ների մանկավարժներից ու սովորողներից քանի՞սն է նախազգուշացվել, ե՞րբ եւ ինչի՞ համար (նշել անուն, ազգանունը, զբաղմունքը եւ արարքը): Ձեռնարկված միջոցառումներից հետո նրանք ինչպիսի՞ վարքագիծ են դրսեւորում»[482]:

Եթե դատախազությունը նմանօրինակ տեղեկատվություն էր հավաքում Շարժման առաջին իսկ օրից սկսած նրա մասնակիցների հետ «աշխատելու» համար, ապա ՆԳ նախարարության համար բավարար էր նաեւ ամենօրյա գործը: Վերջինիս պարբերական զեկուցագրերը մանրամասն եւ մեկ առ մեկ ներկայացնում են կատարված ձերբակալությունները: Ձերբակալությունների հիմնական առիթը թռուցիկների բազմացումը, պահպանումը եւ տարածումն էր: Ընդ որում՝ իրավապահ մարմինները դրանք հայտնաբերում էին ե՛ւ հիմնարկներում, ե՛ւ քաղաքացիների տներում: Դա նշանակում էր, որ փաստորեն, ապօրինի խուզարկություններ էին կատարում: Ձերբակալություններ էին կատարում նաեւ հանրահավաքների կոչ կամ փորձ անելու դեպքում: Եթե չէին ձերբակալվում, ապա արձանագրում եւ ուշադրության տակ էին պահում այն անձանց, ովքեր, օրինակ, կոչ էին անում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատ արձակելու պահանջով ստորագրություններ հավաքել[483]:

Ձեռնարկված միջոցառումները, նույնիսկ այն չնչին մասով, որ կարելի է վերականգնել փաստաթղթերով, առաջին հայացքից, անհամարժեք են թվում իրավիճակին: Դրանք ոչ այնքան Շարժումն արմատախիլ անելու՝ իշխանությունների վճռականությունն են ցուցադրում, որքան նրանց ահաբեկվածությունն ու խուճապը: Եւ դրա վկայությունը հունվարի 30-ի ամսաթվով

[482] ՀՀԱՆԱ, 31/15.01.89:
[483] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.5-6:

ԽՄԿԿ ԿԿ-ի որոշման միայն վերնագրում պարունակած ինֆորմացիան էր («Հակասոցիալիստական տարրերի՝ ԽՄԿԿ-ին ընդդիմադիր քաղաքական կառույցներ ստեղծելու փորձերին հակազդելու միջոցառումների մասին»): Այսինքն՝ կենտրոնական իշխանության ամենամեծ անհանգստությունը ամեն տեսակ գործադուլներից, հանրահավաքներից, երթերից, շրջափակումներից ու տեղահանություններից առաջ «ԽՄԿԿ-ին ընդդիմադիր» քաղաքական կառույցների ստեղծումն էր: Եւ դա բնական է՝ քաղաքական ընդդիմության կազմավորումը որոշակի ծրագրով եւ կառույցի տեսքով վաղ թե ուշ վիճարկելու էր իշխանության հարցը: Եւ անգամ այդ իշխանության՝ սահմանադրորեն ամրագրված լինելը (ԽՍՀՄ Սահմանադրություն 6-րդ հոդված), այլեւս ամրության բավարար պաշար չէր համարվում:

ԽՄԿԿ ԿԿ-ի վերոհիշյալ որոշումը, առաջին հերթին, վերաբերում էր «Ղարաբաղ» կոմիտեին եւ նրա ղեկավարած Հայոց համազգային շարժմանը: Ուստիեւ այդ առիթով ՀԿԿ ԿԿ-ի որոշման մեջ շեշտվում է. «Հակասոցիալիստական տարրերի՝ երկրում ԽՄԿԿ-ին ընդդիմադիր քաղաքական կառույցներ ստեղծելու փորձերի դեմ պայքարը համարել բոլոր կուսակցական կոմիտեների քաղաքական, գաղափարախոսական եւ կազմակերպչական աշխատանքի կարեւորագույն բաղկացուցիչ մասերից մեկը»[484]: Քիչ անց, դրա հիման վրա, ՀԿԿ ԿԿ-ը մշակում է 13 կետից բաղկացած միջոցառումների մի ամբողջ ցանկ, որի նպատակն էր «...վճռականորեն կանխել այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստների, ինչպես նաեւ այլ ինքնակոչ միավորումների՝ որպես «ժողովրդի ներկայացուցիչներ» քաղաքական կառույցներում ներդրվելու փորձերը»[485]: Մինչդեռ իրավիճակը, ըստ նույն փաստաթղթի, այսպիսին էր. «Ղարաբաղ» կոմիտեի եւ այլ ինքնակոչ կազմավորումների գործունեությունը բերել է զանգվածներից եւ կոլեկտիվներից կուսակցական կոմիտեների կապի խզմանը, շատ աշխատավորական կոլեկտիվներում նրանց ազդեցության նվազմանը: Մի շարք դեպքերում, ոչ սովորական իրավիճակներում, հակահասարակական տարրերի ակտիվացման պայմաններում նկատվում է կուսակցական աշխատողների շփոթվածություն, կուսակցական, խորհրդային եւ տնտեսական աշխատողների մի մասի մոտ ի հայտ է գալիս մարդկանց համոզելու անկարողություն»[486]:

Ինչպես եւ սպասելի էր, այս պայմաններում օգնության է կանչվում նաեւ մտավորական նոմենկլատուրան. «Ներգրավել որակավորում ունեցող

[484] ՀՀԱՆԱ, 31/27.02.89, թ. 4:
[485] ՀՀԱՆԱ, 31/27.02.89, թ. 12:
[486] ՀՀԱՆԱ, 31/27.02.89, թ. 3:

մասնագետների՝ գնահատելու համար ինքնակոչ հասարակական կազմավորումների ծրագրային փաստաթղթերը, նրանց ոչ պաշտոնական տպագիր հրատարակությունները եւ այդ հիմքի վրա կուսակցական եւ գաղափարական ակտիվի համար կոնկրետ հանձնարարականներ պատրաստել»[487]:

Իսկ Շարժումը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալումից հետո էլ նույն կերպ շարունակվում էր: Կոմիտեի փոխարինող կազմը, որ հանդես էր գալիս նաեւ որպես ՀՀՇ-ի նախաձեռնող խումբ (ինչպես «Ղարաբաղ» կոմիտեն), ի թիվս այլ խնդիրների, շարունակում էր պայքարել նաեւ կազմակերպությունը կայացնելու, օրինականացնելու, գրանցելու համար: Այս ընթացքում, որքան էլ արդյունքներով արտաքուստ համեստ, սակայն ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններում Շարժման գործունեությունը չափազանց տպավորիչ էր. մեծ ջանքեր եւ օրինախախտումներ պահանջվեցին իշխանություններից նախապես որոշված իրենց մարդկանց որպես թեկնածուներ գրանցելու, պատգամավոր դարձնելու համար: Այնպես որ՝ քաղաքական ընդդիմության կայացման գործընթացը բոլորովին չէր դադարել, ուստի եւ չէր վերացել իշխանության համար ամենամեծ վտանգը: Խնդիրը շարունակում էր ամբողջ սրությամբ ծառացած մնալ, ինչի վկայությունն է հանրապետության դատախազի մի այլ զեկուցագիր, որում հայտնվում է. «Այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի եւ մի քանի այլ ոչ պաշտոնական կազմակերպությունների կողմից գործնական քայլեր են ձեռնարկվում իրենց գաղափարակիցներին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ եւ այլ ընտրովի օրգաններում անցկացնելու համար: Այս կազմակերպությունների ղեկավարները չեն թաքցնում իրենց նպատակը՝ կազմակերպել ԽՄԿԿ-ին ընդդիմադիր քաղաքական կառույցներ»[488]:

բ) «Ժամանակավոր» Կոմիտեն ու նրա խնդիրները

«Ղարաբաղ» կոմիտեն իր ստեղծման պահից եւ գործունեության ամբողջ ընթացքում, հատկապես 1988-ի սեպտեմբերյան բուռն իրադարձությունների շրջանում, չնայած իր հեղինակությանը եւ հսկայական

[487] *Նույն տեղում, թ. 5:*

[488] *ՀՀԱՆԱ, 31/27.04.89, թ. 1-7: Այլ կազմակերպություններից հանրապետության դատախազի զեկուցագրում առանձնացված են ԱԻՄ-ը (Մ. Գեորգիսյան), «Հայ դատի պաշտպանության ընկերությունը» (Ա. Մարգարյան), «Հայ ուսանողների դաշինքը» (Ս. Հակոբյան), «Երիտասարդության ձայնը» (Ս. Կարապետյան), «Սահմանադրական խումբը» (Ա. Սադոյան), «Մաշտոցը» (Մ. Վանոյան): Այս կազմակերպություններից վերջին երկուսը ՀՀՇ-ի մեջ էին մտնում:*

համաժողովրդական աջակցությանը, հասկանում էր, որ ամեն պահի իշխանությունները կարող են իրենց նկատմամբ կիրառել նաեւ ուժային եւ ապօրինի միջոցներ, ընդհուպ՝ ձերբակալել: Ընդ որում՝ այդ վտանգն այնքան ավելի մեծանում էր, որքան երկիշխանությունը խորանում, եւ Շարժման ղեկավարությունը դառնում էր իրավիճակի փաստական տերը: Սակայն դա որեւէ կերպ չազդեց Կոմիտեի քաղաքական վարքագծի ու գործելակերպի վրա: Շարժումը գլխատված վիճակում չհայտնվելու եւ շփոթի չմատնվելու համար, հոկտեմբերի 23-ին Կոմիտեն, սառնասրտորեն, ընտրեց իր «պահեստային» կամ «փոխարինող» մի կազմ՝ իրենց ձերբակալելու դեպքում Շարժումը ղեկավարելու համար: «Ժամանակավոր» այդ մարմնի մեջ մտնում էին՝ Երջանիկ Աբգարյանը, Դավիթ Շահնազարյանը, Ավետիք Իշխանյանը, Արշակ Սադոյանը, Ալբերտ Բաղդասարյանը[489]: Ձերբակալվելու վտանգը հստակ էր հատկապես նոյեմբերի 24-ին Օպերային թատրոնի շենքում նրանց կողմից հրավիրված ԳԽ նստաշրջանի հետ կապված, ինչը եւ շուտով իրականություն դարձավ: Հետագա ամիսներին, իրենց ակտիվ գործունեության շնորհիվ «պահեստային» Կոմիտեի փաստական անդամ էին դարձել նաեւ Վիտյա Այվազյանը եւ Սմբատ Հակոբյանը[490]: Կոմիտեի հիմնական կազմի հետ դեկտեմբերի 10-ից ի վեր տարբեր ժամանակներում ձերբակալվել եւ 20-30 օրվա վարչական կալանքի տակ էր նաեւ փոխարինող այս կազմը: Ազատվելուց հետո, մինչեւ մայիսի վերջը, դժվարին պայմաններում նրանք կարողացան փայլուն կերպով ղեկավարել Շարժումը՝ պահպանելով նրա թե՛ միասնականությունն ու վճռականությունը, թե՛ օրակարգի բոլոր հարցերը:

Ձմռան եւ գարնան ամիսներին Շարժման խնդիրների եւ պահանջների մեջ առաջին տեղում «Ղարաբաղ» կոմիտեի անդամների կալանքից ազատելու, ինչպես նաեւ հատուկ դրության եւ պարետային ժամի վերացման, զորքերը հանրապետության տարածքից դուրս բերելու պահանջներն էին: Ժամանակավոր Կոմիտեի տարածած թռուցիկը կոչ էր անում. «Մեր խնդիրն է, որ բոլոր ժողովներում, բոլոր կոլեկտիվներում դրվի Կոմիտեի անդամների ազատման հարցը... Անհրաժեշտ է բողոքի նամակներ գրել

[489] *Նկատի ունենալով, թե ինչ պայմաններում է գործելու փոխարինող կազմը, նրանց անունները չէին հրապարակվել:*

[490] *Տե՛ս, Տեր-Պետրոսյան Լ. Վերադարձ, Երեւան, 2009, էջ 51-52: Կոմիտեի անդամ Ռ. Ղազարյանը իր հուշերում «պահեստային» Կոմիտեի կազմում թվարկում է այլ անձանց էլ (տե՛ս Ղազարյան Ռ., Հաշվետու եմ, էջ 15) ինչը, Կոմիտեի այլ անդամների պնդմամբ, իրականությանը չի համապատասխանում:*

իշխանության պաշտոնական մարմիններին, պահանջել նրանց ազատ արձակումը: Կոմիտեի անդամների ազատության համար պայքարը ժողովրդավարության համար համաժողովրդական պայքարի շարունակությունն է»[491]: Այս հանձնարարությունը սրբորեն կատարվեց:

Միաժամանակ, Շարժման ուշադրության կենտրոնում էին շարունակում մնալ իր հիմնական խնդիրները: Հանրահավաքների անհնարինության պայմաններում աշխատում էին թռուցիկները, որոնք ստորագրության փոխարեն հաճախ ունեին «Պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ վերջ» կոչը[492]: Դրանք վերաբերում էին հանրապետությունում առկա բոլոր սուր հիմնախնդիրներին: Այսպես, օրինակ՝ փետրվարի 2-ի եւ մարտի 10-ի թռուցիկները անհանգստություն էին հայտնում աղետի գոտու վիճակի կապակցությամբ, հանրապետության ժողովրդագրական իրավիճակը արհեստականորեն փոխելուն նպատակաուղղված քայլ համարում այն փաստը, որ դրսից մեծ քանակությամբ աշխատուժ էր ներմուծվում 800000 անօթեւան եւ 600000 գործազուրկ ունեցող հանրապետություն: Եւ դա այն դեպքում, երբ գործազուրկ եւ աշխատունակ հսկայական զանգվածն աշխատանք չունենալու պատճառով ստիպված հեռանում էր հանրապետությունից: Պահանջներից առաջինը վերաբերում էր գործազուրկ բնակչությանը աշխատանքով ապահովելուն (մասնավորապես՝ աղետի գոտում), երկրորդը՝ բռնագաղթածներին գրանցելուն եւ աղետի գոտու բնակավայրերում տեղավորվելու հնարավորություն ստեղծելուն, երրորդը պահանջում էր «կտրուկ հրաժարվել դրսի աշխատուժից եւ այլազգի վերաբնակիչներից»[493]: Մի այլ թռուցիկ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ զգուշացնելով, որ ԼՂԻՄ-ում Մոսկվայից կարգված Հատուկ կառավարման կոմիտեն հարցի լուծում չէ, այն ստեղծվել է Շարժումը ջլատելու եւ մարզը Ադրբեջանի կազմում պահելու նպատակով[494]:

Այս ամիսներին իրավապահ մարմինների ներկայացրած զեկուցագրերում այդպես էլ չի արձանագրվում Շարժման գործունեության շատ թե քիչ անկում: Ընդհակառակը՝ հենց փետրվարի սկզբներից, երբ Կոմիտեի փոխարինող կազմն ազատվեց վարչական կալանքից, համապատասխան ծառայությունները պարբերաբար զեկուցում են «ենթակոմիտեների գործունեության հետագա ակտիվացման մասին»: Նշվում է, որ հատկապես մեծ

[491] *ՀՀԱՆԱ, 18.01.89: Այս թռուցիկը ստորագրված է «ժամանակավոր «Ղարաբաղ» կոմիտե»:*

[492] *Սովորաբար՝ այս կոչով էր ավարտում իր ելույթները Լեւոն Տեր-Պետրոսյանը:*

[493] *ՀՀԱՆԱ, 15/10.03.89:*

[494] *ՀՀԱՆԱ, 15/11.03.88:*

ոգեւորությամբ են քննարկվում «Մոսկովսկայա տրիբունայի» նիստի արդյունքները, Անդրեյ Սախարովի եւ Գալինա Ստարովոյտովայի[495] որոշումը նոր ստեղծվող «Ղարաբաղ» կոմիտեի անդամ դառնալու մասին եւ այլն[496]: Շարժման առօրյա գործունեությունը եւ նրա դեմ պայքարի բազմազանությունը ներկայացված է ՆԳՆ փետրվարի 17-ի մի զեկուցագրում. թռուցիկներ տարածելու համար ձերբակալվել են Մովսես Գեորգիսյանը, Դանիել Հակոբյանը, Դավիթ Բիչախչյանը, Չարենցի անվան թանգարանում հայտնաբերվել է «ապօրինի բազմացված ազգայնական բնույթի արտադրանք», Մաշտոցի շրջանում հայտնաբերվել են Եռագույն դրոշներ կախելու կոչով թռուցիկներ, Երիտասարդական մետրոյի մոտ՝ նախընտրական բնույթի «սադրիչ թռուցիկներ», Աբովյանի շրջանում սպասվում է հանրահավաք՝ կառուցվող գազապաստարանների դեմ, Նոր-Հաճնի «Սապֆիր» գործարանի կուսակցական ժողովում կոչ է արվել ստորագրություններ հավաքել «Ղարաբաղ» կոմիտեի ազատման պահանջով, Երեւանի ուսանողները նախապատրաստվում են մասնակցել Չարենցավանում նախատեսվող «չարտոնված միջոցառումների», նախապատրաստվում է երթ եւ խաչքարի տեղադրում Սումգայիթի զոհերի հիշատակին եւ այլն[497]:

Իշխանության անհանգստությունը մեծ էր հատկապես Կոմիտեի անդամներին որպես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորության թեկնածուներ առաջադրելու՝ Շարժման ծավալած բուռն գործունեության հետ կապված: Հիշատակվում է, մասնավորապես, «Բազալտ» գործարանը, որի առաջադրած թեկնածուին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին չգրանցելուց հետո 70 հոգու ստորագրությամբ օրինախախտման դեմ բողոք էր հղվել Մոսկվա՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով[498]: Երեւանի պետական համալսարանի դասախոսները եւ ուսանողները պահանջում էին ի պաշտպանություն

[495] *Էթնոհոգեբան գիտնական, իրավապաշտպան Անդրեյ Սախարովի խմբի անդամ: Առաջիններից մեկը ռուս մտավորականներից, որը հրապարակային պաշտպանեց Ղարաբաղյան շարժման պահանջը՝ ակտիվորեն համագործակցելով նրա ղեկավարության հետ:*

[496] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.70:*

[497] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.5-6:*

[498] *Տե՛ս նույն տեղում: Այդպիսի բողոքներից մեկը նախընտրական ժողովի «Մերգելյան» ինստիտուտի 20 պատվիրակների ստորագրությամբ ուղարկվել էր թ. 734 ընտրատարածքի վերաբերյալ, որտեղ անհիմն կերպով առաջադրվածների ցուցակից հանվել էր Լ. Տեր-Պետրոսյանի անունը (տե՛ս ՀՀԱՆԱ, 23.02.89): Նույն կերպ էին վարվել, ըստ էության, բոլոր ընտրատարածքներում:*

Բաբկեն Արարքցյանի եւ Վազգեն Մանուկյանի ժողով հրավիրելու թույլտվություն[499]: Ընդհանրապես՝ Շարժման կառույցներն ամենայն ջանադրությամբ աշխատում էին պատգամավորության թեկնածուներ գրանցել բոլոր ընտրատարածքներում, նախ՝ «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամներին, եւ ապա նաեւ Շարժման այլ ներկայացուցիչների:

գ) Զանգվածային միջոցառումները հատուկ դրության պայմաններում

Հանրահավաքները հատուկ դրության պայմաններում անհնար էին: Բայց նաեւ չէր կարելի հրաժարվել պայքարի այդ արդյունավետ ձեւից: «Ժամանակավոր» Կոմիտեն նույնպես կարողացավ զուգորդել արդարացված զգուշավորությունն ու հաշվարկված ռիսկը: Փետրվարի 20-ին լրանում էր Ղարաբաղյան շարժման առաջին տարեդարձը, եւ այդ առիթով կարող էին չնախատեսված հավաքներ ու միջոցառումներ լինել, ինչը իշխանության կողմից կօգտագործվեր նոր բռնությունների դիմելու համար: Ժամանակավոր Կոմիտեի փետրվարի 16-ի թռուցիկը կոչ էր անում. «... մոտ օրերս ոչ մի զանգվածային միջոցառում, ոչ մի միտինգ ու երթ չկազմակերպել, զորքի հետ ընդհարման փոքրագույն առիթ անգամ չտալ»[500]: Սակայն նաեւ չէր կարելի որեւէ կերպ չնշել կարեւոր այդ տարեդարձը, եւ որպես այդպիսի միջոցառում՝ առաջարկվում էր՝ «Բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, բուհերում գումարել ժողովներ ու հավաքներ եւ պահանջել՝ **ա)** ազատ արձակել Շարժման ղեկավարներին, **բ)** անհապաղ վերացնել հատուկ դրությունը հանրապետությունում եւ դուրս բերել պատժիչ զորամիավորումները»[501]:

Շարժումը երբեք չկորցրեց իր հարձակվողական բնույթը, իսկ Կոմիտեի փոխարինող կազմը, երբեմն ավելի համարձակ էր իր որոշումներում եւ գործողություններում: Եթե հանրահավաքներն այլեւս անհնար էին, ապա այդ նպատակով օգտագործվում էին զանազան այլ առիթներ եւ միջոցառումներ: Այդպիսի մի առիթ էր փետրվարի 28-ին սումգայիթյան եղեռնագործության տարելիցը: Սումգայիթից բռնագաղթվածների ներկայացուցիչները դիմել էին՝ այդ օրը դեպի Ծիծեռնակաբերդ սգո երթի թույլտվություն

[499] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.71:*
[500] *ՀՀԱՆԱ, 15/16.02.89, թ. 2:*
[501] *Նույն տեղում: Այսօրինակ հանձնարարականները սրբորեն կատարում էին հարյուրավոր հիմնարկներ եւ համապատասխան փաստաթղթերը ուղարկում իշխանության պատկան մարմիններ:*

ստանալու համար: Խնդիրը նուրբ էր, եւ իշխանությունը կանգնած էր ծանր կացության առաջ. երթի թույլտվության դիմումը մերժելը էականորեն կազդեր նրա առանց այն էլ բացասական վարկանիշի վրա: Մյուս կողմից՝ նման մի երթ արտոնելու համար համարձակություն էր պետք. հասարակության նյարդերը ծայրահեղորեն պրկված էին, եւ երթը կարող էր վերածվել հակահիշխանական զանգվածային միջոցառման: Որքան էլ իշխանությունը արտաքուստ ինքնավստահ էր, եւ նրա գործադրած բռնությունները, քարոզչական եւ այլ միջոցառումները կտրուկ էին, այնուամենայնիվ, «մարդկային կուտակումների» ամեն մի առիթ նրան սարսափեցնում էր: Տվյալ դեպքում դա հիանալի բացահայտվում է Շարժման դեմ տրամադրված ամենառեակցիոն պաշտոնյաներից մեկի՝ Երեւանի քաղկոմի քարտուղար Մ. Մինասբեկյանի՝ հիշյալ դիմումի առիթով կազմած մի զեկուցագրում: Երեւանի քաղկոմի քարտուղարը փետրվարի 28-ին սգո երթի անցկացումը համարում է «պայթյունավտանգ, ժողովրդի շահերին հակասող» եւ առաջարկում անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել այն կանխելու համար: Ամենամեծ վտանգը քաղկոմի քարտուղարը տեսնում էր նրանում, որ երթը կարող է վերածվել «այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի անդամների պաշտպանության հանրահավաքի»[502]: Ըստ այդմ էլ՝ առաջարկում է մերժել սգո երթի դիմումը եւ կիրառել քարոզչական, հոգեբանական մշակում, սպառնալիքներ եւ այլ միջոցառումներ: Սակայն, այնուամենայնիվ, վստահ չլինելով, որ հնարավոր կլինի երթը կանխել, հաղորդում է նաեւ այն աշխատանքի մասին, որն իրականացվում էր դրա ընթացքն անվտանգ դարձնելու համար[503]:

Նույն խնդրով, բնականաբար, զբաղվում էր նաեւ ներքին գործերի նախարարությունը: Նա ոչ միայն հավաքում էր այդ մասին ամբողջ օպերատիվ տեղեկատվությունը, այլեւ հընթացս դիմում պատժիչ ու կանխարգելիչ միջոցառումների: Թռուցիկներ տարածելու, Եռագույն դրոշներ կախելու, ժողովներ եւ հավաքներ կազմակերպելու համար ձերբակալվել էր 29 հոգի: Նախարարությունը հաղորդում է առավել ակտիվ մեկուկես տասնյակ խոշոր ձեռնարկությունների անուններ, որոնք չնայած կանխարգելիչ միջոցառումներին, այնուամենայնիվ՝ դուրս կգան երթի, եւ նրանց կմիանա նաեւ ուսանողությունը: Դրությունը բարդացած էր համարվում այն տեղեկության տարածմամբ, որ ԼՂԻՄ-ում այդ օրը սգո երթն արտոնվել է[504]:

[502] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.5-6:*
[503] *Տե՛ս նույնը, թ. 7-8:*
[504] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ. 33-34:*

«Ժամանակավոր» Կոմիտեի հանձնարարությամբ եւ Շարժման տեղական կառույցների նախաձեռնությամբ մեծացվեց ճնշումը. հարյուրավոր կոլեկտիվների անունից նույնպիսի դիմումներ ներկայացվեցին՝ փետրվարի 28-ին սումգայիթյան ոճրագործության զոհերի հիշատակին Ծիծեռնակաբերդում ծաղիկներ դնելու թույլտվություն ստանալու համար:

Փետրվարի 23-ին Շարժման անունից տարածվեց թռուցիկ, որից հստակ հասկացվում էր, որ անկախ այն բանից՝ այդ երթը կարտոնվի, թե ոչ, միեւնույն է՝ այն տեղի է ունենալու, եւ նշվում էր երթն սկսելու ժամը: Երթի պահանջները պետք է լինեին. **ա)** քաղաքական գնահատական տալ սումգայիթյան եղեռնագործությանը, **բ)** ազատ արձակել Ղարաբաղյան շարժման ղեկավարներին ու ակտիվիստներին, դադարեցնել հալածանքներն ու հետապնդումները, **գ)** անհապաղ վերացնել հատուկ դրությունն ու պարետային ժամը, դուրս բերել պատժիչ զորքերը հանրապետության տարածքից[505]: Իսկ երթի նախօրերին տարածված մի այլ թռուցիկ՝ ստորագրված «Հայոց Համազգային Շարժում»՝ կոչ էր անում, ի պատասխան «Ղարաբաղ» կոմիտեի անդամների դեմ քրեական գործ հարուցելու մասին ստացված տեղեկության, երթի ընթացքում անվստահություն հայտնել Հանրապետության կառավարությանը եւ պահանջել նրա հրաժարականը[506]:

Շարժման անունից տարածված թռուցիկների անսքող վճռականությունը տպավորիչ էր ու մարդկանց վստահություն էր ներշնչում[507]: Դիրքային ու հոգեբանական այս լարված պայքարն ավարտվեց նրանով, որ իշխանությունը

[505] *ՀՀԱՆԱ, 15/23.02.89:*

[506] *ՀՀԱՆԱ, 15/28.02.89:*

[507] *Ահա մի հատված փետրվարի 23-ին տարածված թռուցիկից. «Ձերբակալություններով, հալածանքներով ու հետապնդումներով գալոյաններն ու ոսկանյանները, նազարյաններն ու մինասբեկյանները, չկայացած անասնաբույժ-փիլիսոփայի (նկատի ունի Ս. Հարությունյանին – Ա. Ս.) ղեկավարությամբ փորձում են կասեցնել Հայոց Համազգային Շարժումը: Մարդկային տարրական արժանապատվությունից զուրկ «ղեկավարները» ուժ ու ջանք չեն խնայում ամեն օր իրենց տերերին քսու հավատարմության եւ նվիրվածության ապացույցներ տալու, նրանց պահանջները գերակատարելու համար: Եւ այժմ հանրապետության ղեկավարներն ու նրանց պնակալեզները նորից ձեռնամուխ են եղել ահաբեկող լուրեր տարածելուն, «խորհուրդ չեն տալիս» փետրվարի 28-ին, սումգայիթյան եղեռնագործության օրը բողոքի երթի դուրս գալ: Սակայն ժողովրդի կամքը պարզորոշ է ու միարժեք. ազգը նշելու է եղեռնի տարեդարձը, նշելու է ամբողջ հանրապետությունում խաղաղ երթով: Երթը դեպի Ծիծեռնակաբերդի մեծ եղեռնի հուշահամալիր սկսվելու է փետրվարի 28-ին, ժամը 12-ին»:*

վերջին պահին ստիպված եղավ տեղի տալ Շարժման հաստատակամության առջեւ: Երեւանի քաղխորհրդի եւ հատուկ շրջանի զինվորական պարետի կողմից հայտարարություն հրապարակվեց, որ նրանք չեն խոչընդոտի հարգել զոհվածների հիշատակը: Իշխանությունների մտահոգությունները, որ սգո երթը կարող է օգտագործվել այլ հարցեր առաջ քաշելու, այլ գործողությունների դիմելու համար, անտեղի էին: Կազմակերպիչներն իրենք էին մտահոգված երթը պատշաճ մակարդակով անցկացնելու եւ իրավապահների ու զինվորականների հետ ընդհարումներ թույլ չտալու մեջ: Երթը, որին մասնակցեց, թերեւս, մեկ միլիոնի չափ մարդ (շատերն էին եկել նաեւ շրջաններից), անցավ բացարձակ կազմակերպված, ընդ որում՝ այդ կազմակերպվածությունն ապահովվում էր ոչ թե այստեղ հավաքված «կոմերիտական եւ կուսակցական ակտիվի», այլ Շարժման կողմից նշանակված հսկիչների կողմից: Ծիծեռնակաբերդում Շարժման կողմից կանգնեցված խաչքարին ստիպված էր ծաղիկներ դնել նաեւ հանրապետության ղեկավարությունը:

Փետրվարի 28-ի հզոր երթը ցույց տվեց, որ շարունակում է նույն՝ բարձրագույն մակարդակի վրա մնալ ինչպես Շարժման ներուժը, այնպես էլ բացառիկ կազմակերպվածություն ապահովելու նրա ունակությունը: Եւ այս երկու իրողությունների արձանագրումը խիստ կարեւոր էր ոչ միայն Շարժման, այլեւ իշխանության համար. առաջինը դրանով վերականգնում էր մասամբ կորցրած ինքնավստահությունը, երկրորդը հասկանում էր, որ Շարժման դեմ իր «հաղթարշավն», այնուամենայնիվ, երեւութական է:

Հաջորդ զանգվածային միջոցառումը կազմակերպվեց մի քանի օր անց՝ մարտի 8-ի առիթով[508]: Ըստ ՆԳ նախարարի զեկուցագրի՝ այդ օրը, ժամը 12-ին, Երեւանի Դրամատիկական թատրոնի մոտ էր հավաքվել մոտ 500 մարդ, հիմնականում՝ կանայք, որոնք կրում էին եռագույն դրոշներ, վանկարկում էին Շարժման կարգախոսները եւ պահանջում «Ղարաբաղ» կոմիտեին ազատ արձակել: Ապա նրանք շարժվում են դեպի ՀԿԿ ԿԿ-ի շենք, եւ նրանց թիվն արագորեն հասնում է 2000-ի: Այստեղ էլ իրենց պահանջները վանկարկելուց հետո նրանք շարժվում են դեպի Լենինի հրապարակ: Զինվորականները եւ ՆԳ ուժերը փակում են նրանց ճանապարհը եւ «համոզման մեթոդով» ցրում՝ ձերբակալելով առավել ակտիվ մասնակիցներին[509]:

Մարտի 8-ի ցույցի ու նրա ընթացքի մասին մանրամասն նկարագրությամբ Մոսկվա զեկուցագիր է ներկայացրել անձամբ ՀԿԿ ԿԿ-ի առաջին

[508] *Այն ձեւակերպվել էր որպես նախընտրական հանդիպում (այդ հանրահավաքի մանրամասները տե՛ս ՀՀԱՆԱ, 15/08.02.89)*

[509] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.735, թ.1-2:*

քարտուղարը, որ, կարծես թե, եզակի դեպք է: Այս պաշտոնյան սովորաբար ավելի ընդհանուր եւ կարեւոր հարցերով էր զեկուցում վերադասին: Այս դեպքում բացատրությունը պետք է փնտրել կա՛մ կենտրոնական իշխանության համապատասխան հրահանգը կատարելու, կա՛մ իշխանական մարմիններում շփոթության ու շփոթվածության, Շարժման ամեն մի գործողությունից ահաբեկվելու փաստի մեջ[510]:

Իշխանությունների համար «մարդկային կուտակումներն», ինչպես ասացինք, արդեն ամենալուրջ հոգսն էին, եւ նա իրեն զգում էր «փշերի վրա»: Ինչ առիթով էլ որ դրանք լինեին, կարող էին ինքնաբերաբար վերածվել հզոր ցույցի, ժողովրդի ասելիքի ամբիոնի: Այդպիսին էին անգամ ֆուտբոլային հանդիպումները: Այդպիսի միջոցառումների մասին է պատմում «ՀՀՇ-ի Խոսնակ» թերթի 1-ին համարը: Մարտի 11-ին ֆուտբոլային հանդիպումից հետո երթ կազմակերպվեց դեպի ՀԿԿ ԿԿ-ի շենք՝ «Արցախ», «Ազատություն Կոմիտեին» վանկարկումներով եւ եռագույն դրոշներով: Տեղ չհասած՝ երթը ցրվեց ներքին զորքերի կողմից, ձերբակալվեց 20 մարդ: Սակայն ձերբակալություններն ու հետապնդումները բոլորովին հակառակ արդյունք էին ունենում ու ավելի մեծացնում հասարակական ակտիվությունը: Նույնպիսի երթ կազմակերպվեց նաեւ ֆուտբոլային հաջորդ հանդիպումից հետո՝ մարտի 17-ին, որին մասնակցում էր շուրջ 20000 մարդ: Այն նույնպես ցրվեց, սակայն այս անգամ ձերբակալություններ չեղան: Մարտի 26-ին, ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների ընտրությունների օրը, պարետային ժամի եւ հատուկ դրության պայմաններում ընտրություն անցկացնելու դեմ ԱԻՄ-ը բողոքի ցույց եւ երթ կազմակերպեց, որը նույնպես ցրվեց եւ եղան նոր ձերբակալություններ: Հաջորդ օրը, կատարված ձերբակալությունների դեմ ի նշան բողոքի, մի շարք խոշոր բուհերի ուսանողներ դասադուլ հայտարարեցին, որ տեւեց մեկ շաբաթից ավելի եւ դադարեց նրանց պահանջների մասնակի բավարարումից հետո: Ապրիլի 3-ին մեկուսարանում պահվող 18 ձերբակալվածներ իրենց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դեմ որպես բողոքի նշան հացադուլ

[510] *Համոզիչ չէ այս փաստի առիթով Վ. Գրիգորյանի բացատրությունը, թե այսօրինակ զեկուցագիր ուղարկելով եւ դրանում վավերական ձեւով ներկայացնելով տվյալ ցույցի մանրամասները, կարգախոսները եւ այլն, Ս. Հարությունյանը ուզում էր Կենտրոնին հասկացնել, որ «Ղարաբաղ» կոմիտեն հասարակության մեջ շարունակում է մեծ համարում ու հեղինակություն վայելել (տես* ***Григорян****, Армения, ст. 226): Այդ բանն անելու համար, նախ, նա հազիվ թե այլ ձեւեր չունենար, երկրորդ՝ դա ոչ մի կերպ չէր կարող տեղավորվել նրա մտահոգությունների շրջանակում:*

հայտարարեցին[511]: Մինչ այդ կանխվել էր ԱԻՄ-ի անդամների կողմից կազմակերպված հավաքը փետրվարի 18-ը (1921թ. Հայաստանում դաշնակցական խռովության օրը) նշելու առիթով: Ցույց եւ երթ էր տեղի ունեցել մարտի 25-ին՝ Երեւանի «Անուշ» արտադրական միավորման աշխատողների զանգվածային թունավորման պատճառով: Մասիս ավանի նույնանման թունավորումից հետո այս դեպքը բուռն զայրույթ առաջացրեց, եւ բանվորները դուրս եկան բողոքի ցույցի ու երթի: ՆԳ աշխատակիցների «վճռական գործողությունների շնորհիվ» հավաքվածները ցրվեցին, իսկ կազմակերպիչը ձերբակալվեց[512]:

Մարտի 21-ի թվակիր զեկուցագրում ՊԱԿ-ի նախագահը ներկայացնում է այսպիսի իրավիճակ. Ղարաբաղյան շարժման ակտիվիստների կողմից հանրահավաքներ կազմակերպելու փորձեր են արվել մարտի 8-ին, 11-ին եւ 17-ին, որոնք «բնակչության կողմից պաշտպանություն չգտան եւ կանխվեցին իրավապահ մարմինների ու զինվորական ստորաբաժանումների կողմից»[513]: Մինչդեռ նրա զգուշացումները հակառակի մասին են վկայում. նա զգուշացնում է, որ նրանք ցանկացած զանգվածային միջոցառում փորձում են վերածել հանրահավաքի, եւ, մասնավորապես շեշտում է, որ այդպիսի վտանգ կա Ա. Ռոզենբաումի նախատեսվող համերգից հետո[514]: Զգուշավորությունը երբեմն հասնում էր ծայրահեղ աստիճանի, այսպես՝ նույնպիսի հերթական առիթից խուսափելու համար հանրապետական ՊԱԿ-ը միջնորդում է, որ Երեւանի «Արարատ» եւ Թբիլիսիի «Դինամո» ֆուտբոլային թիմերի հանդիպումը, որ նախատեսված էր մայիսի 14-ին, տեղափոխվի ավելի ուշ ժամկետի[515]:

դ) Շարժման մասնակցությունը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններին

Շարժման համար պայքարի հիմնական ճակատներից մեկը մնում էր մարտի 26-ին նշանակված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների

[511] *«ՀՀՇ Խոսնակ», 10.04.89 (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/10.04.89):*

[512] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.38:*

[513] *Դժվար չէ նկատել, որ «բնակչության կողմից պաշտպանություն չգտնելը» անհարիր է «իրավապահ մարմինների եւ զինվորական ստորաբաժանումների կողմից կանխվելու» հետ:*

[514] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.102:*

[515] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.36, թ.33:*

ընտրությունները[516]: ՀԽՍՀ ԳԽ թափուր մնացած տեղերում 1988-ի աշնանը կայացած ընտրությունները ցույց էին տվել, որ Շարժումը ցանկացած ընտրական տեղամասում հաղթանակի հասնելու լիակատար հնարավորություն ունի: Այս հանգամանքը հիմք է տալիս մտածելու, որ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը եւ կալանքի տակ պահելը, ի թիվս այլ պատճառների, ուներ նաեւ այս ընտրություններին նրանց մասնակցությունը կանխելու նպատակ: Հակառակ դեպքում՝ ոչ միայն բացառված չէր, այլեւ ակնհայտ էր, որ Կոմիտեն ամբողջ կազմով ու նրանց հետ Շարժման այլ ակտիվիստներ, հայտնվեին ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարում[517]: Ակնհայտ էր նաեւ, որ Հայաստանի հեղինակազրկված ու կազմալուծված իշխանությունն ի զորու չէր լինելու դա կանխել: Անգամ նրանց ազատազրկված լինելու, հանրապետությունում հատուկ դրության, պարետային ժամի ու սանձազերծված բազմաթիվ բռնությունների պայմաններում դա մեծագույն դժվարությամբ հաջողվեց անել:

Այժմ, երբ Կոմիտեն ձերբակալված էր, ընտրություններին մասնակցելը նաեւ այլ իմաստ էր ստացել: Քանի դեռ նրանց նկատմամբ դատարանի՝

[516] *1988թ. դեկտեմբերի 1-ին ընդունված սահմանադրական փոփոխություններով ԽՍՀՄ-ում իշխանության բարձրագույն մարմին էր հռչակվել ժողովրդական պատգամավորների համագումարը (տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 49, հոդվ. 727) ինչպես նաեւ օրենք էր ընդունվել ընտրության կարգի մասին (տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1988, 49, հոդվ.729): Օրենքը պատգամավորական 1500 տեղերից 750-ը հստակ նախատեսել էր կոմկուսի համար. դրանք պետք է ընտրվեին ոչ թե ընդհանուր քվեարկությամբ, այլ հասարակական կազմակերպությունների ներսում (այդպիսին էր համարվում նաեւ ԽՄԿԿ-ն): Սակայն մնացած տեղերի համար առաջադրման իրավունք ունեին աշխատավորական կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները, ըստ բնակության վայրի ընտրողների ժողովները: Հայաստանում Շարժումն, ըստ էության, որեւէ խնդիր չուներ իր թեկնածուներին այս կերպ առաջադրելու եւ ընտրելու համար, եւ դա կարելի էր կանխել միայն օրինախախտումներով եւ կոպիտ ուժի գործադրմամբ:*

[517] *«Ժամանակավոր» Ղարաբաղ կոմիտեի տարածած թռուցիկում (թվագրված 18.01.89) այդպես էլ գնահատվում է. «Իշխանությունները բացահայտ վախենում են ժողովրդի ակտիվությունից, որն առաջին անգամ ընտրեց իր իրական ժողովրդական պատգամավորներին: Որպեսզի կանխեն նման ելքը առաջիկա ընտրություններում, իշխանությունները որոշեցին նրանց ամուր փակել բանտերում»: Ընդ որում այս փաստը նույն կերպ է գնահատվում նաեւ քիչ ավելի ուշ, Եւրոպական խորհրդարանի մայիսի 25-ի բանաձեւում. «Նրանց կալանավորման իրական շարժառիթը ընտրություններին նրանց մասնակցությանը խանգարելն էր» (ՀՀԱՆԱ, 15/25.05.89):*

ուժի մեջ մտած օրինական վճիռ չկար, նրանց կարելի էր առաջադրել որպես պատգամավորության թեկնածուներ: Պատգամավորության թեկնածուներն անձեռնմխելիության իրավունք ունեին, եւ որպես այդպիսին գրանցվելուց հետո շատ ավելի դժվար կամ անհնար պետք է լիներ նրանց կալանքի տակ պահելը: Իսկ գրանցումից հետո (անգամ հատուկ դրության պայմաններում) անհնար կլիներ նրանց ընտրությունը կանխելը: Բնական է, որ այսպիսի մի հնարավորություն Շարժումը չէր կարող ձեռքից բաց թողնել:

Ընտրական հանձնաժողովների կազմավորումը սկսվել էր դեկտեմբերի սկզբից: Շարժումը հնարավորություններ ուներ հանձնաժողովներում մեծամասնություն ստանալ կամ զգալի թվով մարդիկ ունենալ: Սակայն ընտրական հանձնաժողովների կազմավորումն իշխանությունները հապճեպ կազմակերպեցին եւ դրանց նախագահներ նշանակեցին երկրաշարժին անմիջապես հաջորդող մի քանի օրերին, երբ Շարժման բոլոր ուժերը զբաղված էին աղետի գոտում փրկարարական աշխատանքներով[518]: Իսկ հանձնաժողովները, ըստ գործող օրենքի, կարեւոր դեր ունեին թեկնածուների առաջադրման եւ գրանցման գործում:

Չնայած դժվարագույն պայմաններին, երբ ձերբակալված էր Կոմիտեն ամբողջ կազմով, վարչական կալանքի տակ էին Կոմիտեի փոխարինող կազմի անդամները եւ բազմաթիվ գործուն մասնակիցներ, այդուամենայնիվ, Շարժումը չնահանջեց եւ հունվար ամսին ամեն ինչ արեց հանրապետության բոլոր ընտրատարածքներում իր թեկնածուներին առաջադրելու համար: ՊԱԿ-ի համապատասխան զեկուցագիրը հունվարի 20-ին այս մասին հաղորդում է. «Ղարաբաղյան շարժման ակտիվիստները մեծացնում են ջանքերը՝ որպես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ իրենց թեկնածուներին առաջադրելու համար: Դա իրականացնելու համար կոմիտեականները գործուն ձեւով օգտագործում են ձեռնարկությունների, հիմնարկությունների եւ շրջանների ենթակոմիտեների ուժերը՝ աշխատելով հասնել նրան, որ հանրապետության բոլոր 42 ընտրատարածքներում ուրիշների թվում առաջադրված լինեն «Ղարաբաղյան շարժումը» ներկայացնող թեկնածուներ»[519]:

Հունվարի 24-ին ավարտվեց թեկնածուների առաջադրման փուլը: Չնայած զանգվածային բռնություններին ու ձերբակալություններին, իշխանություններին դժվարությամբ էր հաջողվում առաջադրել իրենց թեկնածուներին:

[518] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.7:*

[519] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.1:*

Դրա համար նրանք ստիպված էին լինում դիմել ամենածայրահեղ մեթոդների: Առաջադրումների ընթացքը ներկայացնող տեղեկագիր-թռուցիկը[520] բերում է այդպիսի մի քանի բնորոշ օրինակներ: Երեւանի Ռելեի գործարանը որպես թեկնածու պետք է առաջադրեր գործարանի տնօրենին: Սակայն աշխատողների ժողովը բացարձակ մեծամասնությամբ մերժեց այդ առաջարկը եւ նրա փոխարեն առաջադրեց գրող Կարեն Սիմոնյանին: Կատարված փաստից հետո ժողովը հայտարարվեց անօրինական, իսկ միլիցիայի աշխատողները փորձեցին խլել ժողովի ձայնագրությունը: Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները առանց պատճառի բոյկոտեցին «Լույս» արտադրական միավորման ժողովը, իսկ ՆԳ աշխատակիցները խաբեությամբ ձերբակալեցին Շարժման ներկայացուցիչներին: Էջմիածնում հենց նախընտրական ժողովի ժամանակ ձերբակալվեց Շարժման ներկայացրած պատգամավորության թեկնածու Համլետ Նահատակյանը: Չնայած այսօրինակ բռնություններին եւ ապօրինություններին՝ Շարժումը մի շարք տեղերում հաջողության հասավ եւ կարողացավ որպես պատգամավորության թեկնածուներ առաջադրել Լեւոն Տեր-Պետրոսյանին, Կարեն Սիմոնյանին, Ռաֆայել Ղազարյանին, Սոս Սարգսյանին, Սարգիս Մուրադյանին, Աշոտ Մանուչարյանին, Սամսոն Ղազարյանին, Արշակ Սադոյանին եւ ուրիշների: Ապա թռուցիկը տեղեկացնում է այն միջոցառումների մասին, որոնք անհրաժեշտ էին առաջադրված թեկնածուների գրանցումն ապահովելու համար:

Որքան որ Շարժման համար կենսական հարց էր իր թեկնածուներին ԽՍՀՄ ԳԽ առաջիկա ընտրություններում որպես թեկնածու գրանցելը, իշխանությունների համար նույնքան կենսական էր դա ամեն գնով թույլ չտալը: Կասկածից դուրս էր, որ այդ դեպքում Շարժման թեկնածուները եւ, առաջին հերթին՝ ձերբակալվածները, քվեաթերթիկում հայտնվելուց հետո կընտրվեին պատգամավոր, ինչը ոչ միայն Շարժման տպավորիչ հաղթանակը կլիներ, այլեւ ժողովրդից իշխանություններին հասցված ծանրագույն մի հարված: Ուստի իշխանությունն ամեն ինչ պետք է աներ, եւ արեց, կանխելու այն թեկնածուների գրանցումը, ում առաջադրման փուլում չէր հաջողվել կասեցնել: Թեկնածուների գրանցման ժողովները պետք է տեղի ունենային փետրվարի 15-ից: Շարժումը լայնածավալ եւ բազմաբնույթ գործունեություն էր ծավալել տարածքային ընտրական ժողովներում իր պատվիրակներն ունենալու համար, տարածում էր թռուցիկներ, կազմակերպում «կլոր

[520] *ՀՀԱՆԱ, 15/25.01.89:*

սեղաններ» եւ այլն: Հանրապետության իրավապահներն, իրենց հերթին, ամեն ինչ անում էին այդ միջոցառումների կազմակերպիչներին ի հայտ բերելու եւ պատժելու համար[521]:

Բազմաթիվ ապօրինությունների դիմելով՝ հաջողվեց չգրանցել Շարժման՝ օրինականորեն առաջադրված թեկնածուներին: Դրան հետեւեցին բողոքի բազմաթիվ ակցիաները: Իրավապահ մարմնի զեկուցագիրն արձանագրում է, որ փետրվարի 20-ին Երեւանի Խորհրդային շրջանի գործկոմի շենքի մոտ, որտեղ տեղի էր ունենում օկրուգային ընտրական հանձնաժողովի նիստը, հավաքվել էր բազմություն եւ պահանջում էր գրանցել որպես պատգամավորության թեկնածու առաջադրված Լեւոն Տեր-Պետրոսյանին: Նրանք փորձում էին շենք թափանցել, խանգարում էին հանձնաժողովի աշխատանքները: Հավաքվածները պլակատներ ունեին՝ «Առանց տանկերի եւ մահակների», «Ազատություն հայ գործիչներին» եւ այլ կարգախոսներով[522]: Պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի փետրվարի 21-ի ընդհանուր ժողովն իր զորակցությունն էր հայտնում, պահանջում ազատել ձերբակալվածներին եւ հայտարարում, որ առաջիկա ընտրությունները լինելու են ֆարս ու ոչնչով չեն տարբերվելու «լճացման շրջանի» ընտրություններից[523]:

Բազմաթիվ այսօրինակ միջոցառումները, բողոքի հնարավոր բոլոր գործողությունները, այդ թվում նաեւ Մոսկվա՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ապօրինությունների առիթով դիմումներ հղելը որեւէ արդյունք չտվեցին: Սակայն դրանք ստիպեցին իշխանություններին դիմել բացահայտ ապօրինությունների, ինչը նոր լիցք հաղորդեց հասարակական դժգոհությանը, մեծացրեց լարումն ու քաղաքական ակտիվությունը: ՀԿԿ ԿԿ-ը ստիպված էր զանգվածային լրատվության միջոցներին լրացուցիչ հանձնարարական տալ. «Ուժեղացնել հասարակության մի մասի մոտ տարածված ոչ ճիշտ, սխալ տրամադրություններին հակահարված տվող, հանրապետությունում առաջացած իրադրությունը խորապես վերլուծող եւ նրանում առողջ բարոյական մթնոլորտի ձեւավորմանը նպաստող նյութերի հրապարակումը»[524]: Իրավիճակն այնպիսին էր, որ անգամ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը ձեռնպահ մնաց մայրաքաղաքում իր թեկնածությունն առաջադրելուց եւ առաջադրվեց Լենինականում: Ընտրական հանձնաժողովն, իհարկե, ապահովեց, որ նրա հետ մրցակից թեկնածու

[521] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.87:*
[522] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.29:*
[523] *ՀՀԱՆԱ, 15/21.02.89:*
[524] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.75:*

չգրանցվի: Այս առիթով Կոմիտեի՝ լենինականցիներին ուղղված թռուցիկը նրանց կոչ էր անում բոյկոտել այդ ընտրություն-խեղկատակությունը եւ թույլ չտալ, որ նա «վշտից առաջացած անտարբերության, դրսից ներմուծված մեծաքանակ աշխատուժի եւ զինվորների սվիններին ամրացրած քվեների օգնությամբ մարտի 26-ին դեպուտատ դառնա»[525]:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններում Շարժման թեկնածուներին չգրանցելով՝ իշխանությունները դեռ մասամբ էին լուծել իրենց խնդիրը: Շարժումը չէր նահանջում: Մարտի 12-ին տարածած թռուցիկը զգուշացնում էր ընտրական հանձնաժողովների անդամներին, որ իշխանության ցուցումները կատարելու, օրենքը խախտելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրելու[526]: Մարտի 16-ին տարածած թռուցիկը կոչ էր անում ողջ բնակչությանը՝ բոյկոտել բացահայտ անօրինականություններով եւ բռնություններով ընթացող ընտրությունները[527]: Մեքենագրական եղանակով պատրաստված ու պարզագույն միջոցներով բազմացված այս թռուցիկները տարածվեցին հանրապետությունով մեկ: ՊԱԿ-ը, ՆԳՆ-ն եւ դատախազությունը իրենց բոլոր ուժերը նետեցին թռուցիկների պատրաստումն ու տարածելը կանխելու[528]: Սա վտանգավոր կոչ էր իշխանության համար, քանզի, ըստ գործող օրենքի, ընտրողների ընդհանուր թվի 50%-ից պակաս մասնակցության դեպքում նա ստիպված կլիներ ընտրական ամբողջ գործընթացը սկսել սկզբից: Մյուս վտանգը համարվում էր այն, որ ՀՀՇ-ն, Հայրիկյանի ԱԻՄ-ի եւ «Ազգային ճակատի» հետ միասին, կազմավորել էր խմբեր՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար 3-5 հոգի՝ ընտրությունները որպես դիտորդ հսկելու համար, եւ որ վերջիններս իրականում պետք է համոզեն քվեարկության մասնակիցներին ջնջել բոլոր թեկնածուներին[529]:

Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման «հաղթական» ավարտի մասին իր զեկուցագրում ՆԳ նախարար Հուսիկ Հարությունյանն արձանագրում է, որ միայն մարտ ամսին ձերբակալել են Շարժման 25 ակտիվիստների, 12-ին տուգանել են եւ 87-ին՝ նախազգուշացրել, երկուսին՝

525 *ՀՀԱՆԱ, 15/15.03.89:*
526 *ՀՀԱՆԱ, 15/12.03.89:*
527 *ՀՀԱՆԱ, 15/16.03.89:*
528 *Այդ մասին տե՛ս, օրինակ՝ ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.107:*
529 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.102: Ընտրական օրենքը սահմանում էր քվորում, իսկ ընտրվելու համար՝ ձայների որոշակի տոկոս, որոնք չապահովելու դեպքում ընտրությունը համարվում էր չկայացած:*

քրեական պատասխանատվության ենթարկել, իսկ թռուցիկներ տարածելու համար ձերբակալվել է 12 մարդ: Մարտի 26-ին՝ ընտրության օրը, ուժի գործադրմամբ ցրվել է մի երթ, ձերբակալվել 17 «իրավախախտ»[530]:

Չի կարելի ասել, թե ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններում Շարժումը էական հաջողությունների չհասավ: Արդյունքները կարող են այդպես գնահատվել միայն՝ նկատի ունենալով Շարժման իրական պոտենցիալի եւ հասարակության տրամադրությունների համեմատ ընտրված պատգամավորների կազմը: Սակայն հատուկ դրության ու պարետային ժամի, տասնյակ ձերբակալությունների եւ ուժային ամեն տեսակ ճնշումների պայմաններում հազիվ թե հնարավոր էր ավելին անել: Իրականում Շարժումը կարողացավ կազմակերպել ընտրությունների բոյկոտը: Երբ պարզ դարձավ, որ շատ ընտրատարածքներում ընտրությունները չեն կայանալու, իշխանությունը, խախտելով օրենքը, մեկուկես ժամով երկարաձգեց քվեարկությունն ավարտելու ժամը, շատ դիտորդների ու լիազոր ներկայացուցիչների ուժով հեռացրին ընտրատարածքներից, ոմանց ձերբակալեցին[531]: Եւ այնուամենայնիվ, հաջողվեց հասնել նրան, որ չորս ընտրատարածքում ընտրությունները չկայացան: «Ժամանակավոր» կոմիտեն ապրիլի 6-ի իր թռուցիկով կոչ արեց պայքարել այդ ընտրատարածքներում Շարժման թեկնածուներին առաջադրելու եւ ընտրելու համար[532]: Իշխանությունը կրկին կարողացավ դա թույլ չտալ, սակայն կրկնական ընտրություններում Շարժմանը հաջողվեց ունենալ իր պատգամավորները: Թափուր մնացած չորս ընտրատարածքներից երեքում Շարժման ամենաակտիվ պաշտպանությամբ մայիսի 14-ին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ ընտրվեցին Գալինա Ստարովոյտովան, Սոս Սարգսյանը եւ Կարեն Սիմոնյանը[533]:

* * *

«Ղարաբաղ» կոմիտեի փոխարինող կազմը զբաղվում էր նաեւ սեփական լրատվամիջոցը ստեղծելու, ՀՀՇ կառույցներն ամրապնդելու, նրա

530 *Տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.35, թ.37-39:*
531 *Տե՛ս «ՀՀՇ խոսնակ», 10.04.1989 (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/10.04.89):*
532 *ՀՀԱՆԱ, 15/06.04.89: Շարժումը կրկին փորձեց թափուր մնացած ընտրատարածքներում առաջադրել Կոմիտեի անդամներին (օրինակ՝ «Լույս» արտադրական միավորման կոնֆերանսն առաջադրեց Վանո Սիրադեղյանին (ժողովի արձանագրությունը տե՛ս ՀՀԱՆԱ, 15/12.04.89), սակայն ընտրական հանձնաժողովները նրանց կրկին չգրանցեցին:*
533 *«ՀՀՇ Ազդակ», թ. 2, 22.05.1989 (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/22.05.89):*

պաշտոնական գրանցման հարցը լուծելու խնդիրներով: Նա հրատարակեց «Հայոց համազգային շարժման խոսնակ» շաբաթաթերթը: Խմբագրակազմի մեջ մտնում էին Երջանիկ Աբգարյանը (խմբագիր), Ալեքսանդր Արզումանյանը, Դավիթ Շահնազարյանը: Առաջին համարը հրապարակվեց 1989թ. ապրիլի 10-ին: Ապրիլի 16-ին խմբագրակազմը ստորագրությամբ դիմեց Գերագույն խորհրդի նախագահությանը՝ թույլ տալու թերթի բազմատիրաժ հրատարակությունը՝ դրան կցելով մեքենագրման միջոցով բազմացված եւ տարածված 1-ին համարը: Դիմումն, իհարկե, մնաց անպատասխան: Սկզբնական կազմակերպությունների ջանքերով, մեքենագիր եղանակով «ՀՀՇ ազդակ» անվամբ մի թերթ էլ հրապարակվեց մայիսին[534]:

Որպես ՀՀՇ նախաձեռնող խումբ՝ «Ղարաբաղ» կոմիտեն դեռ 1988թ. սեպտեմբերի 13-ին դիմում էր հղել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն՝ ՀՀՇ-ն որպես հասարակական կազմակերպություն գրանցելու համար: Այդ դիմումը մնացել էր անպատասխան: Այժմ՝ Կոմիտեի փոխարինող կազմի նախաձեռնությամբ, 1989-ի ապրիլի 8-ին հանրապետության տարբեր շրջաններից եկած 100 պատվիրակների մասնակցությամբ, տեղի ունեցավ նախաձեռնող խմբի նոր ժողով, որի անունից (95 ստորագրությամբ) նոր մի դիմում «Հայտագիր» հղվեց ԳԽ-ի նախագահությանը՝ հիմնադիր համագումար հրավիրելու հնարավորություն տալու եւ ՀՀՇ-ն պաշտոնապես գրանցելու ու ճանաչելու համար[535]: Այս դիմումը եւս մնաց անպատասխան: Նախաձեռնող խմբի այս ժողովը, մինչեւ հիմնադիր համագումարի հրավիրումը, ընթացիկ գործերը վարելու համար ընտրեց նախաձեռնող խմբի կոմիտե, որի մեջ մտնում էին Երջանիկ Աբգարյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Ավետիք Իշխանյանը, Սմբատ Հակոբյանը, Դավիթ Շահնազարյանը, Արշակ Սադոյանը[536]:

Ե) Հայկական ատոմակայանի փակման որոշումը

Հայկական ատոմակայանի, Սեւանի, «Նաիրիտի», քիմիական այլ արտադրությունների խնդիրները Ղարաբաղյան շարժումը ժառանգեց 1987թ. թափ հավաքած բնապահպանական շարժումից: Լեռնային Ղարաբաղի խնդրի բարձրացումից հետո բնապահպանական շարժումը ներծծվեց

[534] *ՀՀԱՆԱ, 15/10.05.89, 15/22.05.89:*
[535] *«ՀՀՇ խոսնակ», 10.04.89:*
[536] *Տե՛ս նույն տեղում:*

Ղարաբաղյան շարժման մեջ՝ դառնալով նրա օժանդակ հարցերից մեկը: Ատոմակայանի հարցը բնապահպանական շարժման համար առավել հրատապ էր դարձրել 1986թ. տեղի ունեցած Չեռնոբիլյան աղետը: Ինչեւէ, Հայկական ատոմակայանը դարձել էր Շարժման օրակարգային հարցերից մեկը եւ որպես խնդիր արձանագրվել նրա առաջին ծրագրում:

Թե 1987 թվականի բնապահպանական շարժման կազմակերպիչներին ու ղեկավարներին որքանով էր հայտնի ատոմակայանի վիճակը եւ հետագա շահագործման վտանգավորության աստիճանը՝ դժվար է ասել: Բայց դա ամենայն մանրամասնությամբ, բնականաբար, հայտնի էր իշխանություններին: Ատոմակայանի աշխատանքի անհուսալիության եւ վտանգավորության մասին միայն 1988թ. ապրիլի 18-ից մինչեւ մայիսի 3-ը հանրապետական ՊԱԿ-ի կողմից չորս գրավոր զեկուցագրեր են ներկայացվել ՀԿԿ ԿԿ: Դրանցից առաջինը վերաբերում է ատոմակայանի հակահրդեհային անվտանգության «էական թերություններին»: Թվարկվում են երկու տասնյակ նման թերություններ, որոնց մասին ատոմակայանի ղեկավարությունը 1986-ից թեեւ տեղյակ է պահվել, սակայն դրանք չեն վերացվել[537]: Հաջորդ փաստաթղթում 11 այլ «էական թերություններ» են նշվում ռադիոակտիվ թափոնների տեղափոխման եւ թաղման բնագավառում: Ընդ որում՝ զեկուցագրի հեղինակին ոչ այնքան անհանգստացնում է դրա «անցանկալի հետեւանքները», որքան այն հանգամանքը, որ դա «տենդենցիոզ ձեւով կօգտագործվի» բնապահպանական շարժման, արտասահմանյան հակախորհրդային կազմակերպությունների զանգվածային լրատվության միջոցների կողմից[538]: Երրորդ զեկուցագրից հայտնի է դառնում, որ ատոմակայանի տարածքը, որ նախապես ծառայել էր որպես ռազմական հրաձգարան, բավարար չափով չէր հետազոտվել եւ վտանգազերծվել: Եւ ահա այնտեղ պատահաբար հայտնաբերվել է ֆուգասային մի ռումբ, որի պայթյունը անկանխատեսելի հետեւանքների կարող էր հանգեցնել[539]: Եւ վերջապես՝ չորրորդ զեկուցագիրը վերաբերում էր ատոմակայանի կաբելային տնտեսության անմխիթար վիճակին՝ այս բնագավառում արձանագրելով եւս մեկ տասնյակ թերություններ[540]:

Դեռ 1988թ. սեպտեմբերի 13-ին ՀԿԿ ԿԿ-ի պլենումում Ս. Հարությունյանը հայտարարեց ատոմակայանի հարցի նկատմամբ «նոր վերաբերմունքի»

[537] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.62-64:*
[538] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.76-77:*
[539] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.131:*
[540] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.13, թ.70-71:*

մասին եւ դրա կառուցումը համարեց «անհեռատես տեխնաքաղաքականության արգասիք»: Նա հավաստիացրեց, որ հանրապետության իշխանությունները Կենտրոնի առջեւ արդեն հարց են դրել շահագործումից հանել եւ առաջիկա երեք տարվա ընթացքում փակել ատոմակայանը[541]: Դժվար է ասել, թե որքանով էր անկեղծ ԿԿ-ի Առաջին քարտուղարը: Բայց փաստ է, որ ատոմակայանի իրական տեխնիկական վիճակը թելադրում էր կայացնել այն փակելու կամ շատ մեծ ծախսերով վերակառուցելու ու անվտանգ դարձնելու երկու որոշումներից մեկը:

Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը զգաստացրեց նաեւ իշխանություններին: 1989թ. հունվարի 17-ին ԽՍՀՄ կառավարության նախագահ Նիկոլայ Ռիժկովը Հայկական ատոմակայանը շուտափույթ փակելու՝ կենտրոնական իշխանության մտադրության մասին արեց հետեւյալ հայտարարությունը. «ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը քննության է առել Հայաստանի ատոմակայանի հետագա ճակատագրի վերաբերյալ Հայաստանի կոմկուսի կենտկոմի եւ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի եւ առաջատար մասնագետների առաջարկությունները: Հաշվի առնելով երկրաշարժի կապակցությամբ ստեղծված ընդհանուր սեյսմիկ իրադրությունը, ինչպես նաեւ հանրապետությունում տիրող հասարակական կարծիքը, կառավարությունը շատ բարդ որոշում ընդունեց Հայաստանի ատոմակայանը կանգնեցնելու ավելի շուտ, քան նախատեսված էր»[542]: Ընդ որում՝ այժմ երկրի կառավարության ղեկավարը խոսում էր այն «ավելի վաղ ժամկետում» (ոչ թե երեք տարի հետո) փակելու մասին, որ նշանակում էր, թե ատոմակայանը փակելու սկզբունքային որոշումն արդեն, ըստ էության, կայացված էր կենտրոնական իշխանության կողմից: Փակելու որոշման փաստարկներից հիմնականը, բնականաբար, առաջինն էր՝ վատ տեխնիկական վիճակում գտնվելը: Իսկ այդ փաստը, ինչպես տեսանք, կենտրոնական իշխանություններին չէր կարող հայտնի չլինել Շարժումից դեռ տարիներ առաջ: Բնականաբար, այս ամենը հայտնի է եղել նաեւ միջազգային վերահսկող կազմակերպություններին, ուստի ատոմակայանի փակման հարցում առկա է եղել նաեւ միջազգային ճնշում: Ընդ որում՝ ներդրումներ անելով այն վերակառուցելու եւ նրա շահագործումն անվտանգ դարձնելու մասին խորհրդային իշխանությունները երբեւէ չեն խոսել, նրանք խոսել են միայն փակելու մասին: Երկրաշարժը եւ միջազգային

[541] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 15.09.1988:*
[542] *«Սովետական Հայաստան», 18.01.1988թ.:*

ճնշումը պարզապես արագացրին այդ որոշման կատարումը: Մարտի 16-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը հայտարարեց, որ ատոմակայանի առաջին բլոկը «միութենական մարմինների ընդունած որոշումների համաձայն» արդեն փակվել է փետրվարի 25-ին[543]: Իսկ մի քանի օր անց պաշտոնապես հայտարարվեց «ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման համաձայն» ատոմակայանի ամբողջական փակման մասին[544]: Այսինքն՝ Հայկական ատոմակայանը փակվեց մասնագիտական եզրակացությունների հիման վրա, զուտ տեխնիկական հիմնավորմամբ, այն ժամանակ, երբ «Ղարաբաղ» կոմիտեն բանտում էր, իսկ Շարժման օրակարգում բոլորովին այլ, շատ ավելի հրատապ խնդիրներ էին[545]:

զ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատության համար պայքարը Հայաստանում

Կոմիտեի անդամների մի մասի ձերբակալման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած տարերային հզոր երթ-ցույցը, որ ոչ մի կերպ հնարավոր չեղավ կանխել, արդեն իսկ ակնհայտ էր դարձնում, որ Շարժումը չէր ընկճվելու ու չէր համակերպվելու իր ղեկավարների ազատազրկման փաստի հետ: Այս ուղղությամբ պայքարի ձեւերը եւ մեթոդները, մինչեւ նրանց Մոսկվա տեղափոխելը, պայմանավորված էին այն համոզմունքով, որ կալանքը վարչական է եւ չի կարող 30 օրից ավելի տեւել: Իսկ Կոմիտեի անդամների մի մասն էլ առայժմ ազատության մեջ էր (ընդհատակում), ուստիեւ այդ շրջանում հիմնական խնդիրը մոլեգնող քարոզչական ահաբեկչությունը չեզոքացնելն էր:

[543] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 16.03.1989թ.:*
[544] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 19.03.1989թ.:*
[545] *Հետագայում ՀՀՇ-ին վերագրված «մեղքերից» մեկն էլ Հայկական ատոմակայանի փակման մեղադրանքն էր: Ժամանակի ընդդիմությունը չխորշեց անընդհատ կրկնել այս բացահայտ կեղծիքը եւ այն մտցնել հասարակական գիտակցության մեջ: Ատոմակայանի հարցը ՀՀՇ-ն ժառանգել էր բնապահպանական շարժումից եւ արձանագրել էր իր Ծրագրում բնապահպանական այլ խնդիրների շարքում: Ի տարբերություն, ասենք՝ «Նաիրիտի», ատոմակայանի փակման որոշման վրա Շարժումը որեւէ ազդեցություն չունեցավ: Ընդհակառակը՝ իշխանության գալուց հետո, ամենածանր տարիներին, ՀՀՇ իշխանությունները կարողացան միջոցներ հայթայթել (մոտ 70 միլիոն դոլար) եւ վերագործարկել ատոմակայանը՝ ապահովելով նրա աշխատանքի անվտանգության անհրաժեշտ պայմանները եւ էներգետիկ խնդիրներ ունեցող նորանկախ երկրների մեջ առաջիններից մեկն ապահովել շուրջօրյա էլեկտրամատակարարում:*

Հասարակական կարծիքը փոխելու նպատակով իշխանության իրականացված կտրուկ ու կոպիտ միջոցառումներն ու պարզունակ քարոզչական տեռորը ակնհայտորեն հակառակ արդյունքն էին տալիս: Հրապարակվող հոդվածները, որպես կանոն, անստորագիր էին կամ կեղծանուններով: Քչերը համարձակվեցին հրապարակավ կրկնել Գորբաչովի եւ անստորագիր հոդվածագրերի որակումները: Այդ քչերից մեկն էր, օրինակ, ԿԿ-ի քարտուղարներից մեկը՝ ակադեմիկոս Գ. Գալոյանը: Սակայն վերջինիս մի հեռուստաելույթի եւ անստորագիր հոդվածի առիթով «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Համբարձում Գալստյանի ոչնչացնող պատասխանը (որ արագ տարածվեց ձեռագիր վիճակում) բավարար էր, որպեսզի որեւէ մեկն այլեւս չհամարձակվեր նմանօրինակ հրապարակային ելույթ ունենալ[546]:

Հասարակական մթնոլորտը տեղի չտվեց: Առաջին իսկ օրերից շատերը համարձակորեն հանդես եկան Կոմիտեի հրապարակային պաշտպանությամբ: «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատելու դիմումների եւ պահանջների ինքնաբուխ մի հսկայական տարափ սկսվեց ամենատարբեր հասցեներով՝ կենտրոնական իշխանության մարմիններից սկսած՝ մինչեւ հանրապետական իշխանության տարբեր մարմիններ: Մատենադարանի կոլեկտիվը ՀԽՍՀ զինվորական պարետ Մակաշովի, ԿԿ-ի քարտուղար Ս. Հարությունյանի, հանրապետության դատախազ Վ. Նազարյանի անունով դեկտեմբերի 19-ին գրված նամակում ամենաբարձր գնահատականներն է տալիս իր Կոմիտեի անդամներին, բողոքում պաշտոնական քարոզչության կողմից նրանց կաշառակերների եւ ազգայնականների հետ կապելու դեմ, միջնորդում նրանց ազատ արձակման համար[547]: Նմանօրինակ նամակներ հղվեցին Կոմիտեի մյուս անդամների աշխատանքային հիմնարկներից: Դեկտեմբերի 22-ին Գորբաչովի անունով համատեղ նամակ հղեցին Հայաստանի գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, ճարտարապետների, թատերական գործիչների, կինեմատոգրաֆիստների ստեղծագործական միությունները՝ իրենց նախագահների՝ Հրաչյա Հովհաննիսյանի, Արա Շիրազի, Էդուարդ Միրզոյանի, Արծվին Գրիգորյանի, Խորեն Աբրահամյանի, Սերգեյ Իսրայելյանի ստորագրությամբ: Դրանում հավաստվում էր, որ Հայաստանի ստեղծագործական մտավորականությունն ի սկզբանե պաշտպանել եւ գործուն մասնակցություն է ունեցել Ղարաբաղյան շարժմանը: Այն Կոմիտեի անդամներին բնութագրում էր որպես համեստ ապրելակերպի

[546] *Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ..., էջ 390-395:*
[547] *ՀՀԱՆԱ, 15/19.12.88:*

տեր, ազնիվ, արժանապատիվ մարդիկ, որոնք ոչ թե իրենք են նախաձեռնել Շարժումը, այլ Շարժումն է որպես առաջնորդներ նրանց առաջ քաշել, իսկ նրանք ազնվորեն ձգտում էին զանգվածների շարժումն ուղղել օրինականության հուն: Ըստ այդմ էլ՝ Կոմիտեի անդամների ձերբակալումը գնահատվում էր որպես «ժողովրդավարության դեմ քայլ»[548]: Հունվարի 2-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության, ՀԽՍՀ ԳԽ նախագահության եւ ԽՍՀՄ Գրողների միության վարչության նախագահությանն ուղղված հեռագիր հղվեց Հայաստանի Գրողների միության կողմից, որը կտրուկ հակադրվում էր պաշտոնական քարոզչության գնահատականներին, «Ղարաբաղ» կոմիտեն համարում հանուն ղարաբաղյան հարցի արդարացի լուծման ծավալված սահմանադրական պայքարում ժողովրդի ներկայացուցիչը: Այն անարդարացի էր գնահատում նրանց կաշառակերների հետ կապելու եւ ազգամիջյան թշնամանքի բորբոքման մեղադրանքները, պահանջում ձերբակալվածների ազատ արձակումը[549]: Ֆիզիկայի ինստիտուտի կողմից նույնպիսի դիմում հղվեց Գորբաչովին, ՀԽՍՀ ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանին, Երեւանի զինվորական պարետ Ա. Մակաշովին, «Իզվեստիայի» խմբագրություն եւ այլն[550]: ԽՍՀՄ ղեկավարության անունով նույնաբովանդակ դիմում հղվեց Վիկտոր Համբարձումյանի ղեկավարած Աստղադիտարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովի անունից[551]:

Թռուցիկների տեսքով տարածվող այսօրինակ հարյուրավոր գրությունները, նամակները, բողոքները եւ այլն, հաջողությամբ չեզոքացնում էին հարյուր հազարավոր տիրաժով տպագրվող թերթերի քարոզչական տեռորը:

Իշխանությունը Կոմունիստական կուսակցական շրջկոմներին հանձնարարեց աշխատել փորձված մեթոդով: Նրանք սկզբնական կազմակերպությունների քննարկմանն ուղարկեցին մի նամակ, որում Կոմիտեի գործունեությունը գնահատվում էր որպես «հակաօրինական», «հակասոցիալիստական», «ծայրահեղական», «ազգայնական» եւ այլն՝ հույս ունենալով ստանալ սկզբնական կազմակերպությունների հավանությունն ու պաշտպանությունը: Եթե անգամ 1-2 կուսակցական կազմակերպություն դրական արձագանքեին դրան, ապա այդ բանը լայնորեն կօգտագործվեր որպես քարոզչական նյութ: Մինչդեռ այդ մասին բացարձակ լռությունը մամուլում

[548] *ՀՀԱՆԱ, 15/22.12.1988:*
[549] *ՀՀԱՆԱ, 15/02.01.89:*
[550] *ՀՀԱՆԱ, 15/07.01.89:*
[551] *Տե՛ս «14-ի պաշտպանության խորհրդի տեղեկագիր», հ. 3, էջ 30:*

վկայում է, որ շրջկոմները սկզբնական կազմակերպություններից կա՛մ ոչինչ չստացան, կա՛մ ստացան բոլորովին հակառակ արձագանքներ: Սկզբնական կազմակերպությունների արձագանքների բնույթի մասին պատկերացում է տալիս, օրինակ, Հայաստանի նկարիչների միության սկզբնական կուսակցական կազմակերպության ընդլայնված ժողովի ընդունված «Բաց նամակը»: Այն նման որակումները գնահատում է որպես իրականության աղավաղում, Շարժումը գնահատում որպես ժողովրդավարական եւ հենց իրական վերակառուցողական երեւույթ, իսկ «Ղարաբաղ» կոմիտեն՝ որպես նույն այդ Շարժման անցած 9 ամսվա ընթացքում ընտրված, հղկված, բյուրեղացված ղեկավար մարմին»: Ավելին՝ որպես Կոմիտեի հակապատկեր է բնորոշվում «կուսակցական եւ պետական մարմինների ղեկավարների մեծամասնությունը», որոնք՝ «վայրի վախ են ապրում, թե կկորցնեն իրենց աթոռները եւ աղայական բարեկեցությունը»[552]:

* * *

Կոմիտեի անդամների ձերբակալությունը ներկայացվում էր որպես վարչական կալանք՝ հատուկ դրության ռեժիմը խախտելու համար: Միայն հունվարի 11-ին (երբ այդ ժամկետն ավարտված էր, սակայն որեւէ մեկին ազատ չէին արձակել), ձերբակալվածների հարազատների դիմումներին ի պատասխան՝ առաջին անգամ հայտնվեց, որ Կոմիտեի անդամների դեմ քրեական գործ է հարուցվել[553]:

Նոր բացահայտված իրավիճակը պահանջում էր նաեւ պաշտպանական գործելակերպի որոշակի փոփոխություն: Բողոքների ու նամակների հոսքը պետք է զուգակցվեր նաեւ իրավաբանորեն գրագետ ու հետեւողական գործողություններով: Քրեական գործ հարուցած լինելու մասին տեղեկանալուց անմիջապես հետո, այն հիմնարկները, որոնցում աշխատում էին Կոմիտեի անդամները, ընդհանուր ժողովների հատուկ որոշումներով ԽՍՀՄ գլխավոր դատախազին ուղղված միջնորդություններ ուղարկեցին հարուցված քրեական գործը կարճելու, կալանքից ազատելու եւ գործն ընկերական դատարան ուղարկելու համար[554]: Նույն եւ այլ հասցեներով

[552] *ՀՀԱՆԱ, 15/25.12.88 (փաստաթուղթն անթվակիր է, կազմվել է, հավանաբար, դեկտեմբերի վերջին):*

[553] *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/11.01.89 (Քննչական խմբի ղեկավար Բուրցեւի պաշտոնական պատասխանը Լյուդմիլա Տեր-Պետրոսյանի հարցմանը):*

[554] *Մատենադարանի այսօրինակ միջնորդությունը կազմվեց եւ ուղարկվեց արդեն հունվարի 14-ին (Տե՛ս ՀՀԱՆԱ, 14.01.89):*

ուղարկվեցին նրանց համար լավագույն բնութագրեր: Կոլեկտիվների ընդհանուր ժողովներն ընտրեցին ձերբակալվածների հասարակական պաշտպաններ՝ դատական նիստերին մասնակցելու համար:

Վարչական կալանքից ազատվելուց անմիջապես հետո «Ղարաբաղ» կոմիտեի պահեստային անդամները հունվարի 18-ին տարածած թռուցիկով Շարժման մասնակիցների առջեւ որպես հիմնական խնդիր դնում էին հենց ձերբակալվածների ազատության համար պայքարի խնդիրը. «Մեր խնդիրն է, որպեսզի բոլոր ժողովներում, բոլոր կոլեկտիվներում դրվի Կոմիտեի անդամների ազատության հարցը... պետք է նամակներ գրել պաշտոնական մարմիններին, պահանջել նրանց ազատ արձակումը»[555]: Հունվարի 30-ից մինչեւ փետրվարի 10-ը՝ 12 օրվա ընթացքում՝ միայն ՀԿԿ ԿԿ-ի հասցեով 9 հիմնարկների, ձեռնարկությունների եւ ուսումնական հաստատությունների կոլեկտիվներից եւ 11 անհատ քաղաքացիներից 20 նամակ եւ դիմում էր ստացվել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատ արձակելու պահանջով[556]: Պետք է նկատի ունենալ, որ ՀԿԿ ԿԿ-ը, վարկաբեկված լինելով, արհամարհված էր եւ ամենահետին տեղում էր հասցեատերերի շարքում, իսկ դիմումների հիմնական հասցեատերերը Մոսկվայում էին: Բոլորի համար ակնհայտ էր նաեւ, որ Կոմիտեի ազատազրկման որոշումը կայացվել էր կենտրոնական իշխանությունների կողմից, ուստի եւ դիմումների ու բողոքների հոսքն ամբողջությամբ ուղղված էր դեպի Մոսկվա: Շուտով ստեղծվեց այնպիսի մթնոլորտ, երբ ոչ միայն իշխանական խոհանոցներում թխված պիտակներն ու գնահատականները կրկնելը, այլեւ պարզապես լռելը էականորեն կարող էր վնասել ցանկացած շատ թե քիչ հայտնի մտավորականի ու գործչի վարկանիշին: Վերջիններս, նաեւ նրանք, ովքեր արդեն կես տարուց ավելի Կոմիտեի հետ բուռն հակասությունների մեջ էին, այժմ ստորագրում էին պաշտպանական դիմումներ ու հայտարարություններ, որոնցում բոլորովին այլ՝ հիացական գնահատականներ էին տրվում Կոմիտեի անդամներին ու նրանց գործունեությանը:

Իշխանությունն, իր հերթին, հույս ուներ, որ Շարժման ղեկավարների հետ հարցերը կլուծվեն այնպես, որ նրանք տեւական ժամանակ այլեւս չեն վերադառնա: Նման համոզում հայտնեց Ս. Հարությունյանը՝ «Գիտական-ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչների» հետ փետրվարի 23-ին կազմակերպված հանդիպման ժամանակ, պատասխանելով

[555] *ՀՀԱՆԱ, 15/18.01.89:*

[556] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.76-77:*

Հրանտ Մաթեւոսյանի՝ կալանվածների ճակատագրի եւ մեղադրանքների մասին հարցին. «Ես կարծում եմ, որ չպետք է նույնացնել Ղարաբաղյան շարժումը եւ այն անձանց, որոնց նկատմամբ քննություն է անցկացվում: Քննությունն ավարտվում է, շուտով բաց դատ կլինի: Եւ այն ժամանակ բոլորիս համար ակներեւ կդառնա, թե ով ինչում է մեղավոր»[557]:

«Ժամանակավոր» կոմիտեի նախաձեռնությամբ մարտի 10-ին ստեղծվեց «14-ի պաշտպանության խորհուրդ»[558]: Խորհրդի կազմի մեջ ընդգրկվել էին Հրանտ Մաթեւոսյանը, Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Մարո Մարգարյանը, Կարեն Սիմոնյանը, Ռազմիկ Դավոյանը, Ռուբեն Հովսեփյանը, Անահիտ Սահինյանը, Արմեն Շեկոյանը, Սոս Սարգսյանը, Սարգիս Մուրադյանը, ԲՈՒՀ-երի դասախոսներ, գիտահետազոտական հիմնարկների գիտաշխատողներ, ուսուցիչներ եւ այլն[559]: Կազմակերպության անունից լիազորված էին հանդես գալ Լյուդվիգ Խաչատրյանը, Ալբերտ Կիրակոսյանը եւ Բելլա Հարությունյան-Կոզակը: Խորհրդի հայտարարության մեջ ասվում էր, որ այդ ձերբակալությունները «փորձ են քողարկելու համար քաղաքական նպատակները, մասնավորապես՝ ցանկացած գնով հաշվեհարդար տեսնել Ղարաբաղյան շարժման հետ», եւ խորհրդի նպատակն է հասնել բոլոր ձերբակալվածների ազատ արձակմանը, նրանց լիակատար արդարացմանը եւ բարի անվան վերականգնմանը[560]: Տեղեկագիրը պատճենահանման եղանակով հրապարակեց երեք համար: Դրա մեջ ամփոփվում էին Հայաստանում, ԽՍՀՄ-ում եւ այլ երկրներում Կոմիտեի պաշտպանության համար գրված նամակներ, հոդվածներ, դիմումներ, եւ այլն: Բազմաթիվ դիմումներ, բաց նամակներ եւ այլ նյութեր էին հղվում հանրապետությունից դուրս եւ արտասահման՝ նշանավոր մարդկանց, ինչպես նաեւ տարածելու համար: Ապրիլի վերջին «14-ի պաշտպանության խորհրդի» բաց նամակը տեղեկացնում էր, որ ձերբակալվածներից ոմանք հացադուլ են հայտարարել, եւ որ ծանրագույն պայմաններում վտանգված է բոլորի առողջությունը: «Այս ազնիվ եւ անկաշառ մարդկանց ճակատագիրը

557 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 01.03.1989:*

558 *Նկատի ունեին Կոմիտեի 11 անդամներին, նրանց հետ ձերբակալված Ի. Մուրադյանին, Խ. Ստամբոլցյանին եւ ավելի վաղ ձերբակալված՝ «Կռունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովին:*

559 *Հրապարակված ցուցակում 41 անուն էր: «Տեղեկագիրը», հայերեն եւ ռուսերեն լեզուներով, կազմվում եւ բազմացվում էր Մատենադարանում, ոչ լեգալ պայմաններում:*

560 *ՀՀԱՆԱ, 15/10.03.89:*

հոչակած դեմոկրատիայի փորձաքարն է,– ասվում էր փաստաթղթում,– որի առաջամարտիկը եւ առաջին քաղբանտարկյալներն են նրանք: Սա քաղաքական ցինիզմի օրինակ է, եւ լռելն այս դեպքում կարող է կործանարար լինել»: Խորհուրդը խնդրում էր լրատվական միջոցներին «նամակը հասցնել հնարավոր հասցեատերերին՝ աշխարհի բոլոր ծայրերում», որպեսզի աշխարհի բարի կամքի տեր մարդիկ իրենց ձայնը բարձրացնեն «հայ ժողովրդի արդար պահանջների իրականացման, նրա լավագույն զավակների ազատ արձակման համար»[561]: Խորհրդային Միությունում ժողովրդավարական ուժերի եւ միջազգային արձագանքները վկայում են, որ Շարժումն այս ամիսներին էլ անհավասար քարոզչական մենամարտում փայլուն հաղթանակ տարավ:

է) ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության պաշտպանությունը Կոմիտեին

Կոմիտեի պաշտպանության համար մեծ նշանակություն ունեցավ ռուսական ժողովրդավարական ուժերի եւ առաջադեմ մտավորականության հայտնի ներկայացուցիչների ջանադիր աշխատանքը: Առաջիններից մեկը, որպես Ղարաբաղյան շարժման ջերմ աջակից, բողոքի իր ձայնը բարձրացրեց Հայաստանում արդեն լավ հայտնի, Ղարաբաղյան շարժման ամենահին պաշտպաններից մեկը՝ Գալինա Ստարովոյտովան: Դեկտեմբերի 18-ով թվագրված նրա «Հայաստանի իմ քույրերին եւ եղբայրներին՝ ամանորյա շնորհավորանքների փոխարեն» ջերմ ու հուսադրող խոսքն ամփոփող թռուցիկը արագ տարածվեց Հայաստանում[562]: Աղետից հետո Հայաստան ժամանած Անդրեյ Սախարովը, Գալինա Ստարովոյտովան, Լեոնիդ Բատկինը եւ «Լիտերատուրնայա գազետայի» թղթակից Յուրի Ռոստը մեծ դժվարությամբ կարողացան կապվել նաեւ «Ղարաբաղ» կոմիտեի՝ ընդհատակում գտնվող անդամների հետ[563]: Դա բարոյական լուրջ աջակցություն էր ընդհատակում գտնվողների եւ Շարժման համար:

Կոմիտեի պաշտպանության ծանրակշիռ միջոցառումներից մեկն էր փետրվարի 4-ին «Մոսկովսկայա տրիբունա» կազմակերպության ընդհանուր ժողովի միաձայն ընդունած հայտարարությունը՝ «Ուղղել վտանգավոր սխալը» վերնագրով: Խստագույնս քննադատելով իշխանությունների

561 *ՀՀԱՆԱ, 15/24.04.89:*

562 *ՀՀԱՆԱ, 15/18.12.88:*

563 *Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 10.09.1991, 11.09.1991:*

կողմից բռնի մեթոդների գործադրումը եւ բարձր գնահատելով Կոմիտեի անդամների գործունեությունը, նրանք Հայկական ժողովրդավարական շարժումը գնահատում էին հետեւյալ կերպ. «Հայաստանյան հասարակական շարժումը դարձավ զանգվածային ժողովրդավարական շարժում՝ հանուն հանրապետության ազգային-մշակութային վերածննդի եւ ժողովրդավարական բարեփոխման, ընդդեմ բյուրոկրատական կլանների, ընդդեմ կոռուպցիայի եւ երեսպաշտության, որոնք քայքայում էին սոցիալական կյանքի բարոյական հիմքերը: Այդպիսի ժողովրդավարական ինքնակազմակերպման մեջ է Վերակառուցման հույսն ու գլխավոր երաշխիքը»[564]: Հայտարարությունը, որի տակ ավելացավ նշանավոր ու հայտնի գործիչների եւս 332 ստորագրություն, ավարտվում էր նրանով, որ «Մոսկովսկայա տրիբունան» որոշում էր հիմնել «Արդարության կոմիտե» անունով կազմակերպություն՝ ձերբակալվածների ընտանիքների եւ պետական մարմինների հետ կապ պահպանելու, իրավական օգնություն ցույց տալու, հասարակությանն իրադարձությունների ընթացքի մասին տեղեկություններ հաղորդելու համար»[565]: Այսինքն՝ Ռուսաստանում ստեղծվում էր երկրորդ կենտրոնը, որը պետք է համակարգեր եւ ուղղորդեր Կոմիտեի պաշտպանության աշխատանքը բոլոր ուղղություններով՝ հասարակական կարծիքի վրա աշխատելուց սկսած՝ մինչեւ դատավարության հետ կապված խնդիրներ: «Մոսկովսկայա տրիբունայի» ակտիվ վերաբերմունքը գոտեպնդող ու ոգեւորող նշանակություն ունեցավ[566]:

Խոսակցություններ էին տարածվում, թե՝ «երկրում եւ արտասահմանում հայտնի իրավապաշտպաններ Ա. Սախարովը եւ Գ. Ստարովոյտովան ցանկություն են հայտնել դառնալ նոր կազմակերպվող «Ղարաբաղ կոմիտեի» անդամներ (նկատի ունեին հիշյալ «Արդարության կոմիտեն»): Դա մեծ իրարանցում առաջացրեց իշխանական ճամբարում. «Այս մտադրության իրականացման դեպքում,- անհանգստացած գրում է ՊԱԿ-ի նախագահ Վ. Բաղամյանցը,- կոմիտեականներին կհաջողվի համաշխարհային հանրության եւ երկրի մտավորականության որոշակի մասի աչքում էականորեն ամրացնել իրենց հեղինակությունը: Իրավապաշտպաններն ակտիվորեն կոնսուլտացիաներ են անցկացնում կոմիտեականների հարազատների եւ «Ղարաբաղյան շարժման» մյուս ակտիվիստների հետ, ուղղորդում

[564] *ՀՀԱՆԱ, 15/04.02.89, թ. 1-114):*

[565] *Նույնը, էջ 104:*

[566] *«Московская Трибуна»-ի բյուլետենի 1-ին համարում երեք ընդարձակ նյութ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, Շարժմանը եւ նրա ղեկավարությանը:*

նրանց գործունեությունը փաստաբանների ընտրության, նրանց հետ համագործակցության եւ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամների պաշտպանության գործողությունների մարտավարության հարցերում»[567]: Նույն աղբյուրի վկայությամբ՝ Ա. Սախարովի օժանդակությամբ ձերբակալվածների հարազատներին «հաջողվեց ընտրել 12 փաստաբան, որոնք համաձայնել են առաջիկա դատական պրոցեսում պաշտպանել ձերբակալվածների շահերը»[568]: Ա. Սախարովը «Ղարաբաղ» կոմիտեի ազատման հարցը, որպես առանձին խնդիր, մտցրել էր նաեւ իր նախընտրական ծրագրի մեջ:

Մոսկվայում, իրոք, ստեղծվեց Շարժման ձերբակալված ղեկավարների պաշտպանության մի կոմիտե՝ «Արդարություն» անվամբ: Դրա մեջ մտնում էին Անդրեյ Սախարովը, Յուրի Աֆանասեւը, Բուլատ Օկուջավան, Անատոլի Պրիստավկինը, Գալինա Ստարովոյտովան եւ նշանավոր այլ մարդիկ: Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը ներկայացնող մտավորականների անունից փետրվարի 28-ին սումգայիթյան ոճրագործության 1-ին տարելիցի առիթով ստորագրվեց «Բաց նամակ Հայաստանի բարեկամներին», որը գոտեպնդում էր Հայկական ժողովրդավարական շարժմանը. «Ստալինյան գազանություններից հետո մեր երկրում տեղի չի ունեցել նմանօրինակ այլ մի բան, որը մեզ այդքան հեռու շպրտեր քաղաքակրթությունից դեպի վայրենություն.... Մենք ի վիճակի չենք վերացնել ռազմական դրությունը ձեր քաղաքներում, մեզ դեռ չի հաջողվել օժանդակել «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամների ազատմանը: Սակայն մենք ուզում ենք իմանաք, որ մենք ձեզ հետ ենք»[569]: Հավանաբար՝ հենց Անդրեյ Սախարովի եւ Գալինա Ստարովոյտովայի նախաձեռնությամբ (առաջինը նրանց ստորագրություններն են) ԽՍՀՄ 40 ժողովրդական պատգամավորներ մի միջնորդագիր-երաշխավորագիր ստորագրեցին՝ Կոմիտեի կալանավորված անդամների խափանման միջոցը փոխելու խնդրով՝ ուղղված ԽՍՀՄ դատախազ Ա. Սուխարեւին եւ ՀԽՍՀ դատախազ Վ. Նազարյանին[570]:

Հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի Ազգային-ժողովրդավարական կուսակցությունը. Գորբաչովին ուղղված այս բողոքի հեղինակ-

[567] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.70:*

[568] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.87:*

[569] *ՀՀԱՆԱ, 15/28.02.89. Նամակը ստորագրել էին. Լ. Յա. Գոզմանը, Լ. Մ. Բատկինը, Գ. Վ. Ստարովոյտովան, Յու. Ս. Լեվադան, Վ. Ա. Զելիկովան, Վ. Լ. Շեյնիսը, Ա. Կ. Նազիմովան, Մ. Ս. Եգորովան, Ա. Մ. Էտկինդը, Տ. Ա. Նոտկինան, Վ. Ս. Մագունը, Յու. Ե. Ալյոշինան:*

[570] *ՀՀԱՆԱ, 15/15.05.88:*

ները, Կոմիտեին բնութագրելով որպես «հայ ժողովրդի կամքի արտահայտիչը», պահանջում էին նրանց ազատ արձակել՝ հակառակ դեպքում սպառնալով «հայ-վրացական միասնական պայքար սկսել ի պաշտպանություն «Ղարաբաղ» կոմիտեի, ինչը, դժվար չէ ենթադրել, անցանկալի հետեւանքներ կունենա Ձեր իշխանության համար»[571]:

Կոմիտեի անդամների պաշտպանության նախաձեռնություններում ակտիվ դեր ստանձնեցին Մերձբալթյան երկրներում թափ հավաքած ժողովրդական շարժումները: Էստոնիայի Ազգային անկախության կուսակցությունը հունվարի 26-ի իր հայտարարության մեջ նշում էր. «Հայաստանի իշխանությունների ադմինիստրատիվ կաթվածահարության, երկրաշարժից հետո առաջին երեք օրերի փաստական անգործության ֆոնի վրա «Ղարաբաղ» կոմիտեն կարողացավ տուժածներին ակտիվ եւ իրական օգնություն ցույց տալ... Սակայն ժողովրդի մեջ «Ղարաբաղ» կոմիտեի հեղինակության աճը իշխանությունների մոտ առաջացրեց ոչ վաղ անցյալի տխրահռչակ ռեակցիան՝ բացառիկ ցինիզմով ուղեկցվող ձերբակալություն եւ բռնություններ. դրանք իրականացվեցին դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների միջազգային օրը, որ, բացի այդ, նաեւ ԽՍՀՄ-ում հայտարարված էր որպես երկրաշարժի զոհերի հիշատակի սգո օր»: Հայտարարությունը պահանջում էր Հայաստանում հատուկ դրության եւ պարետային ժամի վերացում, բռնությունների դադարեցում, ձերբակալվածների ազատում[572]: Իսկ մի քանի օր անց՝ հունվարի 31-ին, նույն առիթով ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը եւ ԽՍՀՄ Գլխավոր դատախազին ուղղված համատեղ դիմում հրապարակեցին Էստոնիայի, Լատվիայի Ժողովրդական ճակատները եւ Լիտվայի «Սայուդիսը»: Նրանք համարում էին, որ «Ղարաբաղ» կոմիտեի դեմ մեղադրանքները քաղաքական նպատակ են հետապնդում, եւ պահանջում էին վերահսկել կալանքի տակ գտնվողների նկատմամբ օրինականությունը, հասարակությանը տեղեկացնել ձերբակալման պատճառների, օրինական հիմքերի եւ հարուցված մեղադրանքների մասին, ազգամիջյան հարաբերություններում հրաժարվել ուժի գործադրումից, գործնականում իրականացնել ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը: Դիմումն ավարտվում էր այսպիսի գնահատականով. «Հայաստանի ժողովրդի ճանաչված առաջնորդների ձերբակալումը իշխանության չարաշահում է, ինչը դժվարացնում է առանց այդ էլ բարդ հիմնախնդիրների լուծումը: Աներեւակայելի է այդպիսի

571 *ՀՀԱՆԱ, 15/12.01.89:*
572 *ՀՀԱՆԱ, 15/26.01.89:*

բեռով ընդառաջ գնալ ԽՄԿԿ ԿԿ-ի ազգամիջյան հարցերով պլենումին եւ պատրաստվել Մոսկվայում նախատեսվող՝ մարդու իրավունքներին նվիրված միջազգային կոնֆերանսին»[573]: Այս կազմակերպությունների՝ մայիսի 14-ին կայացած՝ «Բալթյան ասամբլեայի» նիստում ընդունած փաստաթղթերից մեկը Գորբաչովին եւ ԽՍՀՄ գլխավոր դատախազին ուղղված հուշագիր էր, որը, կրկնելով նույն գնահատականները, նրանցից պատասխան եւ տեղեկատվություն էր պահանջում «Ղարաբաղ» կոմիտեի մասին: Գորբաչովի եւ մի շարք թերթերի հասցեներով իր բողոքի ձայնը բարձրացրեց Լատվիայի գիտնականների միությունը[574]: Ամբողջությամբ «Ղարաբաղ» կոմիտեի պաշտպանությանը նվիրված նյութեր էր պարունակում Լատվիայի հայկական համայնքի նախաձեռնությամբ ռուսերեն լեզվով հրապարակվող «Լույս» տեղեկատվական բյուլետենի առաջին համարը[575]:

* * *

Միջազգային մակարդակում «Ղարաբաղ» կոմիտեի պաշտպանության կազմակերպական երրորդ կենտրոնը դարձավ Ֆրանսիան՝ ի դեմս այստեղ գործող «Ֆրանս-հայկական համերաշխություն» կազմակերպության[576]: Քրիստիան Տեր-Ստեփանյանի ղեկավարությամբ՝ այս կազմակերպության բազմաբնույթ ու եռանդուն գործունեության շնորհիվ աննախադեպ մի շարժում առաջացավ Արեւմտյան Եւրոպայում եւ նրա սահմաններից դուրս:

573 *«Информационный Бюллетень НФЛ, «Пробуждение», 5, 06.02.1989.*
574 *«Советский Молодежь», 25.03.1989 (Латв.).*
575 *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/30.04.88:*
576 *«Ֆրանս-հայկական համերաշխություն» կազմակերպությունը ստեղծվել էր 1984թ. եւ կարեւոր դեր խաղացել 1987թ. հունիսին Եւրոպառլամենտի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործում: Նրա ջանքերի արդյունքն էր 1988թ. հուլիսին Եւրոպական խորհրդարանի ընդունած որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի հետ կապված, որով պաշտպանություն էր հայտնվում Հայաստանի հետ վերամիավորման խնդրին: Իսկ երկրաշարժից հետո «Ֆրանս-հայկական համերաշխությունը» միացավ «Սոս-Արմենիա» կազմակերպությանը, որը գործնական հսկայական օգնություն ցուցաբերեց աղետից տուժած շրջաններին: Ի տարբերություն ավանդական «կուսակցությունների»՝ «Ֆրանս-հայկական համերաշխությունը» կարողացավ շատ արագ հաղթահարել Սփյուռքում տարածված պատկերացումների կաղապարները, ջերմ վերաբերմունք ուներ Շարժման եւ նրա ղեկավարների, ՀՀՇ ծրագրերի նկատմամբ: Կազմակերպության ղեկավարներից ու ակտիվ գործիչներից էին նաեւ Ավդա Գառնիկյանը, Ժիրայր Մալխասյանը, Միշել Մարյանը, Պատրիկ Տոնապետյանը, Վիգեն Սարգսյանը, Ժիրայր Կերկերյանը, Սահակ Սուքիասյանը:*

Դեկտեմբերի 23-ին այս կազմակերպությունը հրապարակեց առաջին հայտարարությունը: Իր բյուլետենում կազմակերպությունը հրապարակեց Կոմիտեի անդամների կենսագրությունները, ՀՀԾ Ծրագիրը, պարբերաբար հաղորդագրություններ էր տարածում մամուլի համար եւ այն:

Արդեն 1988թ. դեկտեմբերի 17-ին ֆրանսիական կառավարության պաշտոնական տեսակետներն արտահայտող «Լը Մոնդը» շեշտված դրական գնահատականներով եւ բնորոշումներով հոդված տպագրեց Շարժման եւ նրա ղեկավարների մասին. «Հայաստանի կառավարությունը՝ բոլորովին անպետք եւ անօգնական, կորցրել էր իր նկատմամբ հարգանքը եւ փաստորեն զիջել իր տեղը «Ղարաբաղ» կոմիտեին, որը կազմված էր 11 ինտելեկտուալներից...»[577]: Հօգուտ Կոմիտեի անդամների ազատության՝ երկու անգամ իր խոսքն է ասել Փարիզի քաղաքապետ Ժակ Շիրակը[578]:

Անմիջապես իրենց բողոքի ձայնը բարձրացրին ֆրանսիացի հայտնի հայագետներ, պրոֆեսորներ Ժան Պիեռ Մահեն եւ Բեռնար Ուտիեին: Վերջինս մի նամակով (հունվարի 19-ով թվագրված) հայտնում է, որ կդիմի նախագահ Միտերանին՝ խնդրանքով, որ նա ամեն ինչ անի Կոմիտեի անդամներին ազատ արձակելու համար[579]: Բացի այդ տեղեկացնում է, որ թարգմանել էր Լեւոն Տեր-Պետրոսյանի աշխատությունների մատենագիտությունը՝ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորներին բաժանելու համար: Իսկ պրոֆ. Մահեի նախաձեռնությամբ Կոմիտեի անդամների անհապաղ ազատման պահանջով հավաքվեց ամերիկյան եւ եւրոպական երկրների ավելի քան 60 նշանավոր հայագետ գիտնականների ստորագրություն[580]:

Հունվարի 9-ին Եւրոպական խորհրդարանը հատուկ բանաձեւ ընդունեց՝ ի պաշտպանություն Կոմիտեի անդամների, պահանջեց նրանց ազատ արձակել[581]:

Ձերբակալվածների հարազատները «Ֆրանս-հայկական համերաշխության» օգնությամբ ֆրանսիացի բարձրորակ փաստաբաններ նշանակեցին: Նույն կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցան հանրահավաքներ ու ցույցեր, Ֆրանսիայի խոշոր քաղաքներից յուրաքանչյուրն իր

---

577 *Կարագյուլյան Մ., Հայաստանը պաշարված ամրոց, «Լը Մոնդ», 17.12.1988 (ՀՀԱՆԱ, 15/17.12.88):*

578 *Տե՛ս «14-ի պաշտպանության խորհրդի» տեղեկագիր, հ. 3 էջ 20:*

579 *ՀՀԱՆԱ, 03/19.01.89:*

580 *Տե՛ս «Յառաջ», 09.03.1989: Փաստաթղթերը տե՛ս ՀՀԱՆԱ, 32/01.02.89:*

581 *Հունվարի 9-ին ընդունված բանաձեւին հղումը տե՛ս հաջորդ՝ մայիսի 23-ին ընդունած բանաձեւի (ՀՀԱՆԱ, 23.05.89) տեքստում:*

վրա վերցրեց Կոմիտեի անդամներից մեկի հովանավորությունը[582]: Այդ քաղաքներում կազմակերպվեցին բազմաթիվ մարդաշատ հավաքներ եւ ցույցեր՝ հօգուտ Կոմիտեի ազատման: Շուտով «Ֆրանս-հայկական համերաշխությունը» հանդես եկավ ծանրակշիռ մի հայտարարությամբ[583], որտեղ կոչ էր անում Հայաստանում վերացնել զինվորական հատուկ դրությունը, ժողովրդավարական վերափոխումներ կատարել, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին համարելով «Հայաստանի մտավորական էլիտայի» մաս՝ պահանջում էր նրանց ազատ արձակել: Հայտարարության մեջ անհամատեղելի էր համարվում Մոսկվայում անցկացվելիք մարդու իրավունքների միջազգային կոնֆերանսը եւ Կոմիտեի դեմ նախապատրաստվող քաղաքական դատավարությունը: Հայտարարությունն, ի թիվս այլոց, ստորագրել էին Եւրոպական խորհրդարանի նախկին նախագահ Սիմոնա Վեյը, Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Ժակ Շաբան-Դելմասը, ակադեմիկոս Էժեն Իոնեսկոն, Նոբելյան երկու մրցնակակիր՝ Ֆրանսուա Ժակովը եւ Անդրե Լվովը: Կոմիտեի անդամներին ազատելու խնդրով Կանադայի Նոր ժողովրդավար կուսակցության անունից Գորբաչովին ուղղված դիմում հղեց Կանադայի խորհրդարանի պատգամավոր Բիլ Բլեյքը[584]:

Եւրոպական խորհրդարանը եւս մի անգամ քննության առարկա դարձրեց «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալման հարցը եւ մայիսի 23-ին ընդունեց երկրորդ բանաձեւը: Դրանում կատարվածը գնահատվում է որպես մարդու իրավունքների բացահայտ խախտում, իսկ ձերբակալվածներին՝ քաղաքական բռնությունների զոհեր: Բանաձեւը ձերբակալությունների իրական պատճառը համարում է այն, որ դրանով պարզապես նրանց թույլ չի տրվել մասնակցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններին: Խորհրդային իշխանությունները դատապարտվում էին այն բանի համար, որ ձերբակալվածների հարազատների կողմից նշանակված ֆրանսիացի չորս փաստաբաններին հնարավորություն չի տրվում մուտք գործել երկիր եւ կատարել իրենց պարտականությունները: Կոմիտեի «ծրագիրը», ըստ Եւրոպական խորհրդարանի բանաձեւի, այլ բան չէր, քան Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու պարզ պահանջ, եւ որ այն «Մերձբալթյան հանրապետությունների ժողովրդավարական ճակատների

---

582 *Այսպես՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին հովանավորում էր Փարիզը, Վազգեն Մանուկյանին՝ Գրենոբլը, Բաբկեն Արարքցյանին՝ Մոնպելյեն, Վանո Սիրադեղյանին՝ Բորդո, Ռաֆայել Ղազարյանին՝ Լիոնը եւ այլն:*

583 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.700, թ.128:*

584 *Տե՛ս «14-ի պաշտպանության խորհրդի» տեղեկագիր, հ. 3, էջ 25-26:*

նման ուղղված է այդ հանրապետության քաղաքական կյանքի ժողովրդավարացմանը»: Եւրոպական Խորհրդարանը դիմում էր խորհրդային իշխանություններին՝ ոչ միայն անմիջապես ազատ արձակել Ղարաբաղ կոմիտեն, այլեւ օրինականացնել ու ճանաչել այն[585]: Այս փաստաթուղթն ուղարկվեց եւրոպական երկրների արտաքին գործերի նախարարներին, ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարին եւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին:

Ավելի վաղ՝ 1989-ի մարտի 10-ին, Ժնեւում, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն անդրադարձել է նաեւ «Ղարաբաղ» կոմիտեի հարցին՝ «զորակցելով» նրանց ազատ արձակմանը[586]:

Ղարաբաղյան շարժման ղեկավարների ազատման օգտին կարեւոր գործ կատարեց նաեւ Վաշինգտոնում գործող «Հայկական համագումար» կազմակերպությունը՝ հաջողությամբ այս խնդրի մեջ ներգրավելով ԱՄՆ-ի ամենաբարձրաստիճան պաշտոնյաների: Կազմակերպության հորդորով[587] ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերը ղեկավարել է Պետքարտուղարության՝ այս ուղղությամբ կատարված աշխատանքը, այլեւ ինքը խորհրդային պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ պահանջել է Կոմիտեի անդամների ազատ արձակումը: Հունիսի 2-ին «Հայկական համագումարի» գործադիր տնօրեն Ռոս Վարդյանը նրան շնորհակալություն է հայտնում ցուցաբերած օգնության համար, ինչպես նաեւ խնդրում, որ նա շարունակի հետեւել այդ գործին՝ «մինչեւ բոլոր տեսակի ամբաստանությունները վերացվեն»[588]: ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ենթահանձնաժողովում մայիսի 28-ին քննարկման առարկա էր դարձել Ադրբեջանից հայ փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը բռնի վերադարձման հարցը[589]:

Ինչպես Հայաստանում եւ Ռուսաստանում, այնպես էլ Արեւմուտքում եւ աշխարհում հասարակական կարծիքը վճռականորեն դատապարտում էր Հայկական ժողովրդավարական շարժման ղեկավարներին կալանքի տակ պահելը, այն համարում էր քաղաքական հետապնդում՝ եւ օր օրի մեծանում

585 *Տե՛ս ՀՀԱՆԱ, 15/23.05.89:*

586 *Տե՛ս «Դրոշակ», 29.03.1989, էջ 24:*

587 *Կազմակերպության անունից մարտի 23-ին այս խնդրով պաշտոնական նամակ հղվեց ԱՄՆ պետքարտուղարին (տե՛ս կազմակերպության՝ մարտի 30-ին տարածած հաղորդագրությունը. ՀՀԱՆԱ, 27/30.03.89):*

588 *ՀՀԱՆԱ, 27/20.06.89:*

589 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1 ց.87, գ.34, թ.41:*

էին ճնշումները խորհրդային իշխանության վրա: Խնդիրը դարձել էր յուրատեսակ մի փորձաքար ոչ միայն անհատների, այլեւ պետությունների եւ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների վարկանիշի համար: Եւ Մոսկվան ստիպված էր ընտրություն կատարել՝ կորցնել վերակառուցվող պետության իր վարկանիշը, թե ազատ արձակել Շարժման առաջնորդներին:

ը) Հատուկ կառավարման կոմիտեն Լեռնային Ղարաբաղում

«Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամներին ձերբակալելուց անմիջապես հետո Լեռնային Ղարաբաղում կառավարման հատուկ ձեւ մտցվեց, ինչով ԼՂԻՄ-ը անցնում էր անմիջապես Կենտրոնի ենթակայության տակ: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության համապատասխան հրամանագիրն ընդունվեց հունվարի 12-ին[590]: Գործող մարզային խորհրդի եւ գործկոմի լիազորությունները դադարեցվեցին մինչեւ նոր ընտրությունները, եւ դրանք տրվեցին «Հատուկ կառավարման կոմիտեին»: Վերջինս անմիջականորեն ենթարկվելու էր կենտրոնական իշխանությանը, Լեռնային Ղարաբաղը ԽՍՀՄ բյուջեում ֆինանսավորվելու էր առանձին տողով: Կոմիտեի նախագահ նշանակվեց Արկադի Վոլսկին[591]: Այս քայլն արտաքուստ կարող էր ներկայացվել եւ շատերի կողմից ընկալվել՝ որպես Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմանն ուղղված միջանկյալ՝ Ադրբեջանի ենթակայությունից մարզը դուրս բերելու՝ «Անջատում» կարգախոսի փաստական իրականացում: Որոշումն, իրոք, ոգեւորությամբ ընդունվեց շատերի կողմից, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղում:

Պետական քարոզչամեքենան ամեն ինչ արեց այն որպես Մոսկվայի բարեհաճություն ներկայացնելու եւ ներբողելու համար: Կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին հանդիպումներ ունեցավ Բաքվում՝ Ադրբեջանի եւ Երեւանում՝ Հայաստանի ղեկավարների հետ: Հայաստանից մի քանի համերգային խմբեր այցելեցին Լեռնային Ղարաբաղ, այստեղի մի քանի ձեռնարկություններ եւ արտադրամասեր կապ հաստատեցին Հայաստանի ձեռնարկությունների հետ՝ նրանց հետ արտադրական միավորումներ կազմելով: Լեռնային Ղարաբաղից մշակութային խմբեր եկան Երեւան: Նրանց

590 *Տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1989, 3, հոդվ. 14:*

591 *Հատուկ կառավարման կոմիտեի անդամներ նշանակվեցին Սեմյոն Բաբայանը, Վ. Ջաֆարովը, Ս. Կուպրեեւը, Վ. Պլասովը, Վ. Սիդորովը, Վ. Թովմասյանը, Վ. Միշինը, Ի. Դյատլովը (տե՛ս Տեղեկագիր ՍՍՀՄ ԳԽ-ի, 1989, 3, հոդվ. 18):*

ներկայացուցիչներին ընդունեցին ՀԿԿ ԿԿ-ում: Առաջին շրջանում այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե Հատուկ կառավարման կոմիտեն, իրոք, իրավիճակի լիակատար տերն է, եւ բացառվում էր Ադրբեջանի անմիջական թելադրանքը եւ միջամտությունը մարզի գործերին: Այս ամենը Ղարաբաղում բավականին ոգեւորություն եւ հույս առաջացրեց[592]: Ընդամենը երկու ամիս պահանջվեց հասկանալու համար, որ ոչինչ չի արվելու սույն որոշումը բովանդակությամբ լցնելու, այն գործնականում իրականացնելու համար, իսկ ցուցադրական միջոցառումներն անհրաժեշտ էին որպես քարոզչական նյութ, եւ ոչ ավելին: Եւ այդ քարոզչությունն առատորեն իրականացվում էր ե՛ւ Լեռնային Ղարաբաղում, ե՛ւ Հայաստանում, ե՛ւ կենտրոնական մամուլի միջոցով:

Արդեն մարտի սկզբին ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ խմբի շտաբի պետ Վ. Պոբերեժնին ՆԳՆ նախարար Բակատինին տեղեկացնում է, որ «իրավիճակը լարված է», եւ որ մարտի 6-ին որոշ ձեռնարկություններում գործադուլ է սկսվել: Նա ներկայացնում է դժգոհության հիմնական պատճառները եւ գործադուլավորների հետեւյալ պահանջները. **ա)** Հատուկ կառավարման կոմիտեն անվճռական է մարզի ձեռնարկություններն ու հիմնարկները Ադրբեջանի ենթակայությունից հանելու խնդրում եւ վարում է Բաքվին ձեռնտու քաղաքականություն, **բ)** Հատուկ կառավարման կոմիտեի անդամ դարձնել Հենրիկ Պողոսյանին, **գ)** մարզին հատկացված 400 միլիոն ռուբլին դնել անմիջականորեն կոմիտեի տրամադրության տակ, **դ)** ազատել Ա. Մանուչարովին եւ չհետապնդել «Կոունկ» կոմիտեի անդամներին, **ե)** մարզգործկոմի շենքի վրա Ադրբեջանի դրոշը փոխել՝ ԽՍՀՄ կամ ՀԽՍՀ դրոշով[593]:

Իրավիճակը կտրուկ սրվեց ապրիլի կեսերից, իսկ առիթը հանդիսացավ այն, որ Ա. Վոլսկին գնաց Բաքու եւ հաշվետվություն տվեց Ադրբեջանի կոմկուսի բյուրոյին, այն դեպքում, երբ նախատեսված էր, որ նա հաշվետու է անմիջապես կենտրոնական իշխանություններին: Իսկ իրական պատճառն այն էր, որ Բաքուն, առանց մարզային իշխանությունների հետ որեւէ համաձայնեցման ու թույլտվության, ինչպես նախատեսվում էր գործող օրենքով, մարզի ադրբեջանաբնակ բնակավայրերում լայնածավալ շինարարական աշխատանքներ էր սկսել: Դրան Հատուկ կառավարման կոմիտեն որեւէ կերպ կա՛մ չէր ուզում, կա՛մ չէր կարողանում հակազդել: Կարճ ժամանակում ադրբեջանական բնակավայրերից Խոջալուում արդեն կառուցվել էր

[592] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе часть 2, с. 23, 26.*

[593] *ՀՀԱՆԱ, 08/06.03.89: Ուշագրավ է, որ այս պահանջների մեջ «Ղարաբաղ» կոմիտեի ազատման խնդիր կամ մտահոգություն չի արձանագրվում:*

42 տուն, 110 մեքենայով ավտոտնտեսություն, երկու արտադրական մոդուլ, Մալիբեյլիում՝ 40 տուն, Գուշչուլայում՝ 30 տուն եւ այլն: Ադրբեջանական բնակավայրերի համար կառուցվում էին նոր ճանապարհներ, գազամուղ, արտադրական ձեռնարկություններ: Նոր կառուցված տներում տեղավորում եւ գրանցում էին ադրբեջանցի փախստականներին, մինչդեռ հազարավոր հայ փախստականներին մարզի տարածքում արգելվում էր գրանցել կամ նրանց համար բնակարաններ կառուցել: Այս ամենը մանրամասն նկարագրված է Լեռնային Ղարաբաղից «Հայկական ԽՍՀ մեր հայրենակիցներին» վերնագրով, ապրիլի 22-ին հղված ուղերձում: Ուղերձի հեղինակները համոզված են, որ կենտրոնական իշխանությունների՝ մինչ այդ ընդունած պաշտոնական որոշումներն ընդամենը քող են, ինչի տակ նույն այդ կենտրոնական իշխանությունների հրահանգով Ադրբեջանը, ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի հետ գաղտնի պայմանավորվածությամբ, իրականացնում է մարզի հայ բնակչության շահերն ու իրավունքները ոտնահարող ձեռնարկումներ: Ուստի՝ ուղերձի հեղինակները խնդրում էին Հայաստանի ժողովրդին՝ սատար կանգնել իրենց «Մոսկվա-Հատուկ կառավարման կոմիտե-Բաքու բլոկի» դեմ: Եւ ոչ միայն. նրանք միաժամանակ խստորեն քննադատում են «ՀԽՍՀ ղեկավարության անգործությունը» եւ կոչ անում՝ «Հակադրենք մեր կամքը ՀԽՍՀ ղեկավարության անկամությանը, նրա անգործությունը մեզ կործանում է բերում»[594]:

Մայիսի 3-ին Գորբաչովին հղած իրենց բաց նամակում մարզի կուսակցական եւ խորհրդային մարմինների ղեկավարներն արդեն արձանագրեցին, որ Հատուկ կառավարման կոմիտեն չի կարողանում պաշտպանել մարզը Ադրբեջանի կոպիտ ու անսեթեւեթ միջամտություններից, ընդհակառակը՝ կանգնել է Ադրբեջանի դիրքերում, եւ միասին ձեռնարկել են մարզը ադրբեջանականացնելուն: Որպես լուծում՝ նրանք առաջարկում էին Ադրբեջանից լիակատար անջատում, մարզային իշխանության մարմինների վերականգնում, իսկ Հատուկ կառավարման կոմիտեի համար պահանջում էին հանրապետական իշխանության իրավասություններ[595]: Այսօրինակ դիմումները, բնականաբար, պետք է մնային ու մնացին անպատասխան:

Մայիսի 4-ից Լեռնային Ղարաբաղում կրկին սկսվեցին գործադուլները: Նույն օրը Լեռնային Ղարաբաղի կուսակցական եւ խորհրդային իշխանության մարմինների ղեկավարների ստորագրությամբ հերթական

[594] *ՀՀԱՆԱ, 08/22.04.89:*

[595] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, с. 33.*

տագնապալի դիմումը հղվեց Մ. Գորբաչովին: Մի այլ դիմում նույն այդ օրը հասցեագրվել էր «ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ ԳԽ նախագահություն, Նախարարների խորհուրդ եւ հայ ժողովրդին»: Դրանում, իմիջիայլոց, տրվում էր նաեւ Հայաստանի իշխանությունների՝ Ղարաբաղի խնդրով կատարած գործերի գնահատականը. «Ստեղծված իրադրությունում մենք, ցավոք, զրկված ենք մայր Հայաստանի օգնությունից՝ ե՛ւ բարոյական, ե՛ւ նյութական: Մի՞թե Հայաստանի օգնությունը Լեռնային Ղարաբաղին դա միայն եզակի համերգների կազմակերպումն է, կամ առանձին կոոպերատիվների բացումը: Այն դեպքում, երբ միութենական բոլոր մարմինների կողմից ԼՂԻՄ-ի վերաբերյալ ընդունված որոշումներում որոշակի պարտավորություններ են դրված նաեւ Հայկական ԽՍՀ-ի վրա... Մենք համոզված ենք, որ Հայաստանի ժողովուրդը հանրապետության ղեկավարության մեղքով անտեղյակ է Լեռնային Ղարաբաղում գործերի իրական վիճակին, հակառակ դեպքում հազիվ թե մենք մեն-մենակ մնայինք՝ առանց օգնության եւ պաշտպանության»[596]: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի մայիսի 5-ի համարն ամբողջությամբ նվիրված էր սկսված ընդհանուր գործադուլին եւ դրա պատճառների ներկայացմանը:

Հատուկ կառավարման կոմիտեն, ըստ էության, մտահղացված էր երկու խնդիր լուծելու համար.

ա) ԼՂԻՄ-ը Ադրբեջանից անջատելու տպավորություն ստեղծելով՝ ինչոր չափով մեղմել հասարակական ընդվզման ալիքը «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին մոսկովյան բանտեր տեղափոխելուց ու նրանց նկատմամբ քրեական գործ հարուցելուց հետո:

բ) Մարզը զրկել իշխանության իրավասու սահմանադրական մարմիններից եւ իրավական իմաստով օրինակարգ որոշումներ ընդունելու հնարավորությունից, մի բան, որ հետագայում այնքան անհրաժեշտ եղավ, բայց հնարավոր չեղավ վերականգնել:

թ) Շարժումը վերանվաճում է ազատ գործելու հնարավորությունը

Կոմիտեի բացակայության ամիսներին նրա փոխարինող կազմի ղեկավարությամբ շարունակվող պայքարը որակական փոփոխությունների էր հանգեցրել: Դժվար չէր նկատել, որ իշխանությունների համար կոպիտ ուժային ճնշումների, ապօրինի ու հակասահմանադրական միջոցների

[596] *Նույն տեղում, էջ 36:*

կիրառման շրջանն անցել էր ապարդյուն: Ո՛չ բռնաճնշումները, ո՛չ քարոզչական ահաբեկչությունը որեւէ արդյունքի չէին հանգեցրել, իշխանությունը ձախողվել էր հասարակական կարծիքը փոխելու բնագավառում, ձախողվել էր ոչ միայն Հայաստանում, այլեւ ԽՍՀՄ-ում եւ միջազգային ասպարեզում:

Մինչդեռ այդ ընթացքում մեծացել էր Շարժման ղեկավարների ճանաչվածության աստիճանը, եւ բարձրացել վարկանիշը՝ նրանց ազատազրկման անհեռատես քայլի հետեւանքով: Ճիշտ է՝ հատուկ դրության եւ պարետային ժամի պայմաններում անհնար էին դարձել գործադուլները եւ հանրահավաքները, սակայն Շարժումը բոլոր հարմար առիթներն օգտագործել էր տպավորիչ երթերի ու ցույցերի միջոցով իր կենսունակությունն ու ուժը ցուցադրելու համար: Իշխանության առարկայական ձեռքբերումն իրականում ավելին չէր, քան ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններին Շարժման ղեկավարների մասնակցելը եւ ընտրվելը կանխելը: Սակայն անգամ հատուկ դրության պայմաններում իրականացված ընտրություններում Շարժմանը հաջողվել էր անել առավելագույնը, ինչի հետեւանքով ե՛ւ կենտրոնական, ե՛ւ հանրապետական իշխանության ղեկավարությանը դա շատ թանկ էր արժեցել, նրանք ծանր բարոյական պարտություն էին կրել: Ոչ թե սեփական հնարավորությունների, այլ Մոսկվայի տրամադրած ռազմական ուժի վրա հենված՝ նրանց ցինիկ պահվածքը հանգեցրել էր նրան, որ հանրապետության ղեկավարության նկատմամբ մի քանի ամիս առաջվա արհամարհանքն ու քամահրական վերաբերմունքը վերածվել էին համընդհանուր ատելության եւ արգահատանքի: Բացահայտվել էր նաեւ, որ Լեռնային Ղարաբաղում հաստատված Հատուկ կառավարումը, ինչն Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի «անջատում» պետք է ընկալվեր ու նպաստեր հասարակության հանդարտեցմանը, ամենեւին էլ չէր կատարում իր դերը, ուստիեւ հիասթափություն էր առաջացրել ե՛ւ Ղարաբաղում, ե՛ւ Հայաստանում: Այսինքն՝ «Ղարաբաղ» կոմիտեի բացակայության եւ բռնաճնշումների ծանրագույն շրջանը Շարժումը հաղթահարել էր իր պոտենցիալից ոչինչ չկորցնելով, մինչդեռ իշխանությունը էական կորուստներ էր ունեցել:

Ապրիլի 9-ին Թբիլիսիում զենք էր գործադրվել խաղաղ ցուցարարների, հացադուլի եւ նստացույցի մասնակիցների դեմ: Առանձնակի դաժանությամբ աչքի ընկած այս գործողությունների հետեւանքով 18 մարդ էր զոհվել, շատերը ստացել էին մարմնական վնասվածքներ[597]: Ե՛ւ ԽՍՀՄ

[597] *Ցուցարարների հիմնական կարգախոսը եղել է «Կեցցե անկախ Վրաստանը»: Զոհվածների թիվը այդ օրերի վրացական ոչ պաշտոնական տեղեկատվությունը շատ ավելին է գնահատում մինչեւ 120 մարդ:*

ժողովրդավարական ուժերի, ե՛ւ համաշխարհային հանրության կողմից այս փաստը խստագույնս դատապարտվում էր: Մոսկվան հուսահատ ձեւեր էր փնտրում իրողությունները պարտակելու եւ պատասխանատվությունից խուսափելու համար: Այս ողբերգական փաստը զայրույթով դատապարտեց նաեւ Հայկական ժողովրդավարական շարժումը. բազմաթիվ հեռագրեր հղվեցին Մոսկվա, մեծ հանրահավաք տեղի ունեցավ Երեւանի պետական համալսարանում եւ այլն[598]: Այսինքն՝ թբիլիսյան արյունոտ դեպքերը Շարժման վրա ոչ թե ահաբեկող կամ ճնշող ազդեցություն էին ունեցել, այլ բարձրացրել էին նրա համախմբվածությունը եւ վճռականությունը, հասարակության մեջ խորացրել կենտրոնական իշխանության նկատմամբ բացասական տրամադրությունները: Մյուս կողմից՝ ակնհայտ էր, որ Կենտրոնի համար հեշտ չէր լինի նմանօրինակ մի քայլի կրկնությունը հատկապես սպասվող ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի նախօրյակին:

Շարժման ձեռնարկած ակտիվ քարոզչական եւ կազմակերպչական միջոցառումների շնորհիվ «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակումը պահանջող հուժկու շարժումը ամենալայն ծավալներն էր ստացել ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Ժողովրդավարական ուժերի, նշանավոր անհատների եւ միջազգային հասարակական կարծիքի ճնշումները Մոսկվայի վրա ոգեւորություն եւ հույս էին առաջացնում:

Իրավիճակը հասունացել էր իշխանությունների կողմից պարտադրված կապանքները, այդ թվում՝ հատուկ դրության ու պարետային ժամի սահմանափակումները վերջնականապես ճեղքելու եւ նորից զանգվածային միջոցառումներով հրապարակային գործունեության վերադառնալու համար, ինչը եւ տեղի ունեցավ մայիսի առաջին տասնօրյակում:

Ապրիլի 24-ի առիթով դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր կազմակերպված երթը ու դրան հաջորդած հանրահավաքը հերթական անգամ ցուցադրեցին հասարակության համախմբվածությունը Շարժման գաղափարների եւ խնդիրների շուրջը[599]: Իշխանությունը հասկանալով, որ

[598] *Տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.37, թ.43-51:*

[599] *Ապրիլի 24-ի նախօրերին տարածված մի թռուցիկ՝ «Սահմանադրական իրավունք միություն» եւ «Հայ կանանց միաբանություն» ստորագրությամբ, սկզբունքային հարցերում հենվում էր ՀՀՇ առաջին ծրագրի դրույթների վրա. «Այդ օրը շահարկվում է նրանց (իշխանությունների – Ա.Ս.) կողմից, որպեսզի ջարդերի ահասարսուռ տեսարաններով ժողովրդի մեջ պատվաստվի սարսափը թուրքի նկատմամբ, որ արմատավորվի ստրկական այն մտայնությունը, որ մենք անզոր ենք մեր հարեւանի առջեւ եւ փրկվել ենք միայն խորհրդային բանակի շնորհիվ, միաժամանակ մղելով*

անիմաստ է այն արգելելը, մանրակրկիտ նախապատրաստվել էր այդ օրվան՝ իր համար ոչ ցանկալի զարգացումներ թույլ չտալու համար: ՆԳ նախարարի ներկայացրած միջոցառումների ցանկը գաղափար է տալիս իշխանական ճամբարում շփոթվածության եւ ահաբեկվածության աստիճանի մասին. «Ապահովված է ՊԱԿ-ի, խորհրդային բանակի հետ իրավապահ մարմինների աշխատանքի համաձայնեցվածությունը: Գործողությունների որոշակի պլաններ են մշակված՝ ապահովելու համար սգո երթի մասնակիցների շարասյուների հնարավոր անցման տեղերում հասարակական կարգի պահպանությունը: Օպերատիվ խմբեր են կազմվել փաստագրելու համար երթի ղեկավարների եւ առավել ակտիվ մասնակիցների գործողությունները: Միջոցառումներ են ձեռնարկվում հանրապետության այլ շրջաններից դեպի Երեւան մարդկանց հոսքը թույլ չտալու համար»[600]:

Հասկանալի է, որ իշխանության հերթական մտահոգության առարկան պետք է լիներ մայիսմեկյան ավանդական շքերթը: Այնքան մեծ էր վախը, թե սույն միջոցառումը կարող է վերածվել իշխանության դեմ ուղղված հուժկու ցույցի, որ նա դիմեց ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ քայլի՝ որոշելով չիրականացնել այդ միջոցառումը: Անշուշտ, գտնվեց ձեւական պատճառաբանություն-առիթ՝ իբր տեղի ունեցած երկրաշարժից հետո պատշաճ չէ մայիսմեկյան տոնակատարությունը: Չնայած զգուշացումներին, մայիսի 1-ին Շարժման կողմից ոչ միայն երթ, այլեւ հանրահավաք տեղի ունեցավ, իսկ հաջորդ հանրահավաքը հայտարարվեց մայիսի 6-ին:

Ապրիլի 24-ի եւ դրան հաջորդած մայիսմեկյան երթերը եւ հանրահավաքները տեղի ունեցան հատուկ դրության եւ պարետային ժամի պայմաններում: Քաղաքացիական եւ զինվորական իշխանությունները ոչ միայն երթի եւ հանրահավաքի արտոնություն չէին տվել, այլեւ նախապես զգուշացրել էին դրանց անթույլատրելիության եւ վտանգավորության մասին: Եւ, այնուամենայնիվ, հանրահավաքները կայացան, ու դրանց դեմ ուժ չգործադրվեց: Մայիսմեկյան հանրահավաքի առիթով Երեւանի զինվորական պարետի արձագանքը խիստ բացասական էր ոչ միայն որպես չթույլատրված միջոցառում, այլ նաեւ՝ ըստ էության: Նա արձանագրում էր հանրահավաքի ընթացքում ԽՍՀՄ պետական զինանշանի եւ դրոշի անարգման փաստը

մեզ դեպի «հավերժական թշնամու եւ, համապատասխանաբար՝ «հավերժական բարեկամի» վնասակար գաղափարները»:

[600] *ՀԱԱ, ֆ.1, ց.87 գ.37, թ.35:*

ինչ-որ խմբի կողմից[601], նաեւ վճռականորեն սպառնում էր հաջորդ՝ մայիսի 6-ին նշանակված հանրահավաքից չհրաժարվելու դեպքում դիմել ուժի գործադրման[602]: Սակայն վճռական գտնվեց նաեւ Շարժումը, եւ, չնայած սպառնալիքին, մայիսի 6-ին Մատենադարանի[603] մոտ հավաքվեց մոտ 200000 մարդ, եւ այս անգամ էլ նրանց չհամարձակվեցին խոչընդոտել: Իրենց դեմքը փրկելու համար իշխանությունները ստիպված էին բանակցությունների մեջ մտնել եւ արտոնված հանրահավաք խոստանալ մայիսի 11-ին, եթե այդ օրը չարտոնված հանրահավաքը չկայանա: Շարժման ղեկավարները, տեսնելով իշխանության նահանջը, որոշեցին չգնալ անիմաստ առճակատման. նրանց խնդրանքով այդ օրը հավաքված ժողովուրդը ցրվեց՝ մայիսի 11-ին հավաքվելու պայմանով:

Հանրահավաքի հերթական հայտը մայիսի 11-ի համար, ինչպես խոստացել էր իշխանությունը, ընդունվեց: Դա 1989-ի ընթացքում առաջին արտոնված հանրահավաքն էր լինելու, չնայած, անկախ դրանից, Շարժումն արդեն իսկ սեփական ուժերով հաղթահարել էր հոգեբանական արգելապատնեշը, եւ, այսպես թե այնպես, հանրահավաքները շարունակվելու էին: Այսինքն՝ հատուկ դրության պայմաններում հանրահավաքների թույլտվություն տալն, ըստ էության, հարկադրական նահանջ էր նորից ահագնացող Շարժման ճնշման տակ: Շարժումն իրավացիորեն դա համարեց իր համառության արդյունք եւ կարեւոր հաղթանակ:

Մայիսի 11-ին խոստացված հանրահավաքի պայմանավորվածության մեջ էր մտնում նաեւ այն, որ դրան պետք է մասնակցեն նաեւ իշխանության ներկայացուցիչները, ինչին հանրահավաքի հայտ ներկայացնողները սիրով համաձայնեցին:

Պահպանվել է իշխանական մարմիններում կազմված անստորագիր մի հետաքրքիր փաստաթուղթ՝ «Երեւանում մայիսի 11-ին արտոնված հանրահավաք անցկացնելու պլան-առաջարկություն» վերնագրով[604]: Այն որպես գաղտնի փաստաթուղթ՝ բազմացվել էր 10 օրինակով եւ տրվել ԿԿ-ի 1-ին,

601 *Նման փաստերը հարիր չէին Շարժմանը եւ անմիջապես դատապարտվում էին նրա կողմից: Շատ նման է, որ այն, որպես սադրանք, կազմակերպել էին, օրինակ՝ անվտանգության ծառայությունները:*

602 *Տե՛ս Հատուկ շրջանի զինվորական պարետի դիմումը Երեւանի քաղաքացիներին, «Խորհրդային Հայաստան», 04.05.1989:*

603 *Ամբողջ ընթացքում Օպերային թատրոնի հրապարակը՝ հանրահավաքների հիմնական վայրը շարունակում էր պաշարված մնալ զինվորներով:*

604 *ՀԱԱ, ֆ1, ց.87, գ. 39ա, թ.2-4:*

2-րդ եւ մյուս քարտուղարներին, կառավարության նախագահին, Երեւանի քաղկոմի քարտուղարին եւ քաղխորհրդի նախագահին, զինվորական պարետին, ՆԳ եւ ՊԱԿ-ի ղեկավարներին[605]: «Պլան-առաջարկը» նախատեսում է մինչ այդ աշխատավորական կոլեկտիվներում ժողովներ հրավիրել եւ նրանց նախապատրաստել, որ հանրահավաքներում լինեն կարգապահ եւ «ճիշտ վարքագիծ» դրսեւորեն: Հանրահավաքում ելույթ ունենալու համար նախատեսվում էր հրավիրել ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեից մի ներկայացուցիչ: Հանրապետության դատախազին հանձնարարվում էր կապվել Մոսկվայի համապատասխան մարմինների հետ եւ հանրահավաքում տեղեկություններ տալ սումգայիթյան դատավարության ընթացքի, թունավորումների գործերի եւ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների գործի քննության ընթացքի մասին: «Թույլատրվում էր», որ հանրահավաքում ելույթ ունենան նաեւ «ոչ ֆորմալները», հասարակության ներկայացուցիչները: Ապա ենթադրվում էր, թե ինչ հարցեր կբարձրացվեն հանրահավաքում, մասնավորապես՝ ԳԽ արտահերթ նստաշրջան հրավիրելու, մայիսի 28-ի ճանաչման, ԽՍՀՄ ժող. պատգամավորների համագումարին նախապատրաստվելու, «գաղափարախոսական բնույթի ու ազգամիջյան հարաբերությունների վերաբերյալ այլ հարցեր» եւ, ըստ այդմ էլ, մի շարք պաշտոնյաների հանձնարարվում էր պատրաստվել պատասխանելու բարձրացված հարցերն: Նախատեսվում էր նաեւ, թե իշխանության որ ներկայացուցիչը ինչ հարցերի մասին պետք է ելույթ ունենա: Քաղխորհրդի նախագահը հանրահավաքի նախօրյակին պետք է ելույթ ունենար հեռուստատեսությամբ եւ խոստանար «անհրաժեշտության դեպքում» հանրահավաքներ հրավիրել ամեն ամիս եւ պատասխանել բոլոր հուզող հարցերին: Խոսափողը «հսկելու» համար պետք է կազմվեր 50-60 հոգուց բաղկացած մի խումբ, իսկ հանրահավաքի մասնակիցներին պետք է հսկեին նրանց մեջ ցրված առանց թեւկապի «դրուժիննիկներ»: Նախօրյակին թերթերում պետք է հրապարակվեին «մտավորականների»՝ կարգապահության կոչ անող ելույթներ: Նախատեսվում էր հանրահավաքից 1-1,5 ժամ տեւողությամբ հեռուստատեսային ռեպորտաժ կազմակերպել: Եւ վերջապես՝ Երեւանի քաղկոմի քարտուղարին, գործկոմի նախագահին եւ զինվորական պարետին հանձնարարվում էր հանրահավաքը նախաձեռնողների հետ պայմանավորվել, որ

605 *Հետաքրքիր է, որ այս ցանկում չկա ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանի անունը, ինչը վկայում է սույն պաշտոնյային եւ պաշտոնին տված կարեւորության աստիճանի մասին:*

այն պետք է վարեն «հավասար հիմունքներով»[606]: Այս «պլանը», առաջին հայացքից, կարող է այնպիսի տպավորություն թողնել, թե այն վկայում է իշխանության՝ սեփական ուժերին վստահ լինելու մասին: Եթե նրանք ենթադրում էին, որ այսօրինակ սցենարը գեթ մասամբ հնարավոր կլինի իրականացնել, ուրեմն փաստաթուղթն իրականում խոսում է իշխանությունների կողմից իրավիճակն ընկալելու եւ վերլուծելու անկարողության մասին: Իրականում, սակայն, դրանով իշխանությունը դիմում էր վերջին, միակ հնարավոր, հուսահատ քայլին՝ փորձել ինչ-որ կերպ դուրս գալ պարտված վիճակից, փորձել նոր կերպարի մեջ մտնել, ինչ-որ նախաձեռնություն վերցնել: Եւ դա նրանց միակ հնարավոր ու հուսահատ քայլն էր:

Շարժումը եւս ուներ իր պլանը, որ, ի տարբերություն իշխանությունների, հրապարակավ էր տարածել՝ «Կոչ հայ ժողովրդին» վերնագրով թռուցիկի տեսքով՝ «Հայոց համազգային շարժման նախաձեռնող խմբի կոմիտե» ստորագրությամբ: Ներկայացնելով հանրապետության իրավիճակը՝ այն անհետաձգելի անհրաժեշտություն էր համարում առաջիկա օրերին ՀԽՍՀ ԳԽ-ի արտահերթ նստաշրջան հրավիրել եւ քննարկել հետեւյալ հարցերը.

ա) Իրադրությունն Արցախում եւ Հայաստանի ԳԽ-ի դիրքորոշումը.

բ) Աղետալի երկրաշարժի հետեւանքների վերացման եւ գաղթականության հետ կապված խնդիրների լուծման առավել արդյունավետ ուղիների մշակումը.

գ) Հատուկ դրության եւ պարետային ժամի վերացման, բռնությունների դադարեցման եւ Ղարաբաղյան շարժման առաջամարտիկների ազատման խնդիրը.

դ) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման պահանջի առաջադրումը[607]:

Վստահ, որ որքան էլ համաժողովրդական լինի պահանջը, իշխանություններն իրենք նստաշրջան չեն հրավիրի, թռուցիկը կոչ էր անում պատգամավորներին իրենց ստորագրություններով պահանջել նման օրակարգով նստաշրջանի հրավիրումը: Շարժումը հատկապես պետք է պնդեր իր այս պահանջը: Իշխանության բարձրագույն մարմինն իր վերջին նստաշրջանը հրավիրել էր 1988-ի նոյեմբերի 22-ին (որ նույն օրը ընդհատվել էր), եւ չնայած դրանից հետո տեղի ունեցած կարեւորագույն իրադարձություններին՝

[606] *Հանրահավաքի հայտը ներկայացվել էր ՀՀՇ նախաձեռնող խմբի՝ նույն «Ղարաբաղ» կոմիտեի փոխարինող կազմի անունից:*

[607] *ՀՀԱՆԱ, 15/10.05.89, կամ ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.39ա, թ.10:*

երկրի իշխանության բարձրագույն մարմինը շուրջ կես տարի անգործության էր մատնվել:

Մայիսի 11-ին Մատենադարանի մոտ կայացած հանրահավաքի հենց առաջին րոպեներից արդեն հստակ էր, որ իշխանությունների կազմած սցենարը չի աշխատելու: Հանրահավաքում ՀՀՇ-ի ներկայացուցչի ներածական խոսքի մեջ իշխանության ներկայացուցիչների մասնակցության մասին հայտնելն արդեն անմիջապես բուռն բացասական արձագանք առաջացրեց՝ «հե-ռա-ցե՛ք», «ա-մո՛թ» վանկարկումներով եւ սուլոցներով եւ «Կո-միտե» պահանջով: Իսկ քիչ անց, ի պատասխան Լեռնային Ղարաբաղում սկսված գործադուլների մասին տեղեկության, հանրահավաքի մասնակիցները միահամուռ գործադուլի որոշում պահանջեցին[608]: Շուտով այլ ելույթ ունեցողներ բացառեցին իշխանությունների հետ որեւէ երկխոսություն, քանի դեռ ձերբակալված են Շարժման ղեկավարները եւ մի շարք այլ գործուն մասնակիցներ: Թեեւ իշխանության ներկայացուցիչներին հարթակում պատշաճ ձեւով խոսք տրվեց, սակայն հանրահավաքը հրաժարվում էր նրանց լսել: Հանրահավաքի համար նախապես խնամքով կազմված իշխանական մանրակրկիտ «պլանի» հետքն անգամ չմնաց: Ավելին՝ տեղի ունեցավ մի իսկական սկանդալ հենց իշխանության ներկայացուցիչների մեջ: Երեւանի զինվորական պարետ Պիշչեւը հայտարարեց, որ հատուկ դրությունը եւ պարետային ժամը 1988-ի նոյեմբերի 24-ին մտցվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության համաձայնությամբ: Երբ այդ հայտարարությունը բուռն բացասական գնահատականի եւ մեղադրանքի ալիք բարձրացրեց, ԳԽ-ի նախագահի տեղակալն, իր հերթին, հայտարարեց, որ նման համաձայնություն չի եղել[609], ինչը նշանակում էր, թե հատուկ դրությունը եւ պարետային ժամը ապօրինի են մտցվել:

Հանրահավաքի հիմնական պահանջն, իհարկե, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատ արձակումն էր, ապա՝ հատուկ դրության եւ պարետային ժամի վերացումը, արտահերթ նստաշրջանի հրավիրումը: Իսկ որպես այդ պահանջների կատարման ամենագործուն միջոց՝ հանրահավաքի մասնակիցները պահանջում էին գործադուլ:

Մայիսի 11-ի հանրահավաքում արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջին իշխանության ներկայացուցիչը պատասխանել էր, թե դա հնարավոր է միայն պատգամավորների 1/3-ի պահանջով՝ հավանաբար

[608] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ. 39ա, թ.10:*

[609] *Տե՛ս նույն տեղում, թ. 11, 20:*

ենթադրելով, որ այս անգամ Շարժման համար դա հնարավոր չի լինի ապահովել: Շարժումն անմիջապես ձեռնարկեց այդ խնդրին, եւ մի քանի օր հետո ԳԽ պատգամավորներից անհրաժեշտ թվով դիմումներն արդեն հավաքված էին: Ավելին՝ նույն պահանջով դիմել էին նաեւ հարյուրավոր կոլեկտիվներ: Խախտելով Սահմանադրությունը՝ ՀԽՍՀ ԳԽ նախագահությունը արտահերթ նստաշրջան չհրավիրեց: Դրան ի պատասխան, հաջորդ օրը, մայիսի 17-ին հրավիրված չարտոնված հանրահավաքի 150000 մասնակիցների անունից ընդունված փաստաթղթում արձանագրվում էր հանրապետության ղեկավարության «անճարակությունը եւ անկարողությունը» աղետի գոտու վերականգնման ու գործազուրկներին աշխատանքով ապահովելու, տարագրությունը կանխելու, Ադրբեջանից բռնագաղթվածներին օթեւանով եւ աշխատանքով ապահովելու հարցերում: Նույն փաստաթուղթը իշխանությանը մեղադրում էր նաեւ Հայաստանում հատուկ դրություն եւ պարետային ժամ մտցնելու դեմ չպայքարելու, Շարժման ղեկավարների ապօրինի ձերբակալությունների եւ հետապնդումների, Սահմանադրությունը բազմիցս խախտած լինելու, զանգվածային թունավորումները չբացահայտելու մեջ եւ այլն: Այս ամենը նկատի ունենալով՝ հանրահավաքը որոշում էր. «Հայ ժողովրդի ազգային շահերը չարտահայտելու, նրա դեմ ուղղված գործողություններին հակահարված հասցնելուց խուսափելու, անկամության, անվճռականության եւ անպատասխանատվության համար ՀԽՍՀ-ի ղեկավարությանը՝ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Հրանտ Ոսկանյանին, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վլադիմիր Մարգարյանցին անվստահություն հայտնել, նրանց համարել ՀԽՍՀ եւ ողջ հայ ժողովրդի շահերը ներկայացնելու լիազորություններից զրկված, չճանաչել նրանց դեպուտատական մանդատի վավերականությունը եւ պահանջել նրանց հրաժարականը զբաղեցրած պաշտոններից»[610]: Եւ հենց այս պահանջներով մայիսի 18-ից հայտարարվում էր երկօրյա համազգային գործադուլ:

Մայիսի 18-ից ոչ միայն համընդհանուր գործադուլ սկսվեց[611], այլեւ բազմամարդ շուրջօրյա նստացույց: Առաջինն, այդ օրը, մինչեւ հանրահավաքի

[610] *ՀՀԱՆԱ, 15/17.05.89:*

[611] *Գործադուլի մասին որոշումները, ինչպես 1988-ին, նախապես ընդունվում էին հիմնարկների ու ձեռնարկությունների ընդհանուր ժողովներում եւ վավերացնում արհմիութենական կազմակերպությունների կլոր կնիքներով, ապա դրանք ներկայացնում Շարժման ղեկավարությանը: Ընդ որում՝ անգամ ամենալարված իրավիճակներում գործադուլային շարժումը դուրս չէր գալիս որոշակի շրջանակներից: Նույն՝*

սկսվելը, գործադուլ եւ նստացույց հայտարարեցին Մատենադարանի աշխատողները՝ կոլեկտիվի ընդհանուր ժողովի համապատասխան որոշմամբ պաշտպանելով «իր անճարակությունը վերջնականապես ցուցադրած հանրապետության ղեկավարության» հրաժարականի պահանջը, այդ ցանկում ավելացնելով նաեւ ՀԿԿ ԿԿ-ի քարտուղար Գ. Գալոյանին, հանրապետության դատախազ Վ. Նազարյանին[612]: Այդ օրվա հանրահավաքից հետո նստացույցին միացան ուրիշները:

Մատենադարանի շրջակայքը նստացույցով, հացադուլավորներով եւ ամենօրյա հանրահավաքներով դարձավ Շարժման շուրջօրյա կենդանի կենտրոնը՝ մինչեւ «Ղարաբաղ» կոմիտեի վերադարձը: Հանրահավաքները դարձան ամենօրյա, ավելի ու ավելի կտրուկ պահանջներով: Մատենադարանի շրջակայքում նստացույցի մասնակիցների թիվն անընդհատ ավելանում էր: «Սահմանադրական իրավունք» միությունը նստացույց կազմակերպեց Գերագույն խորհրդի նախագահության շենքի առջեւ: Միաժամանակ, քանի որ մայրաքաղաքում շարունակվում էր հատուկ դրության ռեժիմը, հանրահավաքների կազմակերպիչները դիմել էին անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների: Սադրանքներից խուսափելու համար հրահանգված էր հավատալ միայն ՀՀՇ-ի անունով թռուցիկներին ու հայտարարություններին, դպրոցականներին արգելվում էր մասնակցել հանրահավաքներին, նստացույցը պետք է լիներ միայն Մատենադարանի մոտ, իսկ դրա շրջակայքում հաստատված էր հատուկ կարգուկանոն, եւ կարգված էին Շարժման հսկիչները:

Մայիսի 31-ին հայտնի դարձավ, որ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներն ազատ են արձակվել եւ նախորդ օրը տեղափոխվել են Երեւան՝ Սովետաշենի մեկուսարան: Երեկոյան ստացված այն լուրը, թե նրանք որպե առ որպե կարող են հայտնվել, հարյուր հազար մարդ պահեց Մատենադարանի մոտ մինչեւ կեսգիշեր: Բանտային դաժան կյանքի ակնհայտ հետքերն իրենց վրա կրող Կոմիտեի անդամները հայտնվեցին ժամը 00.30-ին[613]: Կեսգիշերին,

Շարժման ղեկավարության թելադրանքով չէին կանգնում կենսապահովման կարեւոր ձեռնարկությունները, նաեւ այն հիմնարկները, որոնց աշխատանքն անմիջապես կապվում էր աղետի գոտու վերականգնման աշխատանքների հետ: Վերջիններս սակայն, աշխատելով հանդերձ, նույնպես որոշումներ էին ընդունում ի պաշտպանություն համընդհանուր գործադուլների պահանջների:

[612] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.37, ՀՀԱՆԱ, 15/18.05.89:*

[613] *Մինչ այդ՝ ապրիլի 25-ին, ազատ էր արձակել Ալեքսան Հակոբյանը, եւ մայիսի 6-ին՝ Խաչիկ Ստամբոլցյանը: Ինչպես նրանց, այնպես էլ նոր ազատվածների համար*

լսելով իր սիրելի առաջնորդներից յուրաքանչյուրի հակիրճ խոսքը, Շարժումը տոնեց իր ամենամեծ ու ամենաոգեշնչող հաղթանակներից մեկը[614]:

* * *

«Ղարաբաղ» կոմիտեն ազատ արձակվեց Մոսկվայի քաղաքական որոշմամբ: Եւ դա հարկադրված որոշում է: Ամեն ինչ տեսած եւ ամեն ինչ արած խորհրդային արդարադատության համար խնդիր չէր նրանց երկար տարիների ազատազրկման դատապարտելու հիմքեր ստեղծել: Որքան էլ առաջին հայացքից անհամեմատելի, Հայկական շարժման մեկ տասնյակ ղեկավարներ – հսկա խորհրդային բռնապետական կայսրություն մենամարտն ավարտվեց վերջինիս պարտությամբ: Սա կարեւոր որակական փուլ էր, յուրատեսակ մի «փորձարկում», ինչի հիման վրա կարող էին փոխվել Մոսկվայի դեմ ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ Արեւելյան Եւրոպայի ժողովուրդների պայքարի մեթոդները, մարտավարական ու ռազմավարական խնդիրները:

Հաղթանակը նաեւ խիստ առարկայական էր. վեցամսյա բանտարկությունից ազատ էր արձակվել «Ղարաբաղ» կոմիտեն՝ բազմապատկված հեղինակությամբ:

Եւ վերջապես՝ դա հաղթական ավարտ էր պայքարի կարեւոր եւս մի փուլի, եւ հաջորդ՝ որակապես նոր փուլի սկիզբ: Կատարվածի իմաստավորումը եւ երկրում ընթացող գործընթացների առանձնահատկությունների վերլուծությունը բավարար հիմք էին՝ վերանայելու Շարժման քաղաքական օրակարգի առաջնահերթությունները: ՀՀՇ Ծրագրի առանցքային գաղափարը՝ քաղաքական անկախության ձեռքբերումը, դառնալու էր Հայկական Ժողովրդավարական շարժման առաջնային խնդիրը՝ մնացած բոլոր հարցերի լուծման բանալին:

ձեւակերպվել էր խափանման միջոցի փոփոխություն, այսինքն՝ քրեական գործն, ըստ այդմ, շարունակելու էր մնալ ուժի մեջ, եւ քննությունը շարունակվելու էր: Ակնհայտ էր սակայն, որ գործի նման շարունակության հեռանկարի ոչ մի հիմք չկար: Կոմիտեն իրականում ազատ էր արձակվել, մի կողմից՝ հարուցված մեղադրանքների համար ապացույցների բացակայության, եւ մյուս կողմից՝ հայաստանյան, միութենական եւ միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ:

614 *Հաջորդ օրվանից դադարեցին նաեւ գործադուլները: Հետաքրքիր է այս առիթով ԿԿ ներկայացված զեկուցագրերի «հաղթական» տոնը. «Ղարաբաղ» կոմիտեի անդամների խափանման միջոցը փոխվել է, «Բազալտ» գործարանի կոլեկտիվն աշխատում է նորմալ ռիթմով...» ՀԿԿ ԿԿ-ի սոց-տնտեսական բաժնի վարիչ Գ. Հարությունյան» (ՀԱԱ, ֆ1, ց.127, գ.193, թ.62):*

ժ) Սփյուռքի դերակատարությունը

Տեսանք, որ Սփյուռքն իր կուսակցությունների դեմքով, 1988-ի ամբողջ ընթացքում խորհրդային իշխանություններ – Ղարաբաղյան շարժում հակամարտության մեջ անվերապահորեն իշխանության կողմն էր, ոչ կուսակցական մասով՝ Շարժման: Ընդ որում՝ առաջին յոթ-ութ ամիսների արտաքուստ հայեցողական, «չեզոք» վերաբերմունքը ծավալվող իրադարձությունների նկատմամբ 1988-ի աշնանից կուսակցությունների կողմից վերածվեց իշխանությունների ակտիվ ու բացահայտ աջակցության եւ Շարժման վարկաբեկման անսքող քայլերի: Հասկանալի է, որ դա սպառնում էր հայկական համայնքներում նրանց հեղինակության եւ դիրքի կորստով, ուստի ինչ-որ կերպ պետք է փոխհատուցվեր խորհրդային իշխանությունների կողմից: Այդ փոխհատուցումը եղել է նրանց ճանաչման խոստումը[615]: Դրա դիմաց էլ նրանք վճարեցին՝ Շարժման դեմ նոր մի բացահայտ ճակատ ստեղծելով:

«Հայրենասիրական ճակատը». Իրենց «վաստակի» դիմաց փոխհատուցման համար առաջին հայտը սեպտեմբերի 29-ի վերոհիշյալ համատեղ հայտարարությունից անմիջապես հետո ներկայացրել են ռամկավարները: Արդեն հոկտեմբերի 17-ին նրանց ընդունել էին ՀԿԿ ԿԿ-ում ու լսել նրանց ակնկալիքները: Այս հանդիպման մասին վկայող փաստաթուղթը, սակայն, ընդամենը համառոտ արձանագրում է, որ հանդիպումը տեղի է ունեցել՝ «ամրապնդելու այս կուսակցության հայտնի դիրքորոշումը Հայաստանում եւ ԼՂԻՄ-ում իրավիճակի հարցում»[616]: Իսկ հանդիպման իրական մանրամասները բացահայտվում են նույն հանդիպմանն անդրադարձող հետագա այլ փաստաթղթերով: Դեկտեմբերի 5-ին ՌԱԿ-ի ԱՄՆ եւ Կանադայի

---

615 *Խորհրդային իշխանությունների կողմից ճանաչման խնդրին շատ մեծ կարեւորություն էր տրվում: Ընդ որում կուսակցություններն այս հարցում առաջինը լինելու համար մրցակցում էին ոչ միայն միմյանց հետ, այլեւ խիստ անհանգստացած էին, որ խորհրդային իշխանության կողմից առաջինը կարող է ճանաչվել Շարժումը՝ ի դեմս «Ղարաբաղ» կոմիտեի (Կոմիտեն դիմել էր իշխանությանը՝ Հայոց համազգային շարժումը որպես հասարակական կազմակերպություն ճանաչելու համար): Օրինակ՝ ոչ ճիշտ մի լուր այն մասին, թե ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղարը դիմել է «Ղարաբաղ» կոմիտեին՝ կոչ անելով նրան ազդել բնակչության վրա գործադուլները դադարեցնելու համար, խիստ անհանգստացրել է Լիբանանի դաշնակցական կազմակերպության ղեկավարությանը, որը դա գնահատել էր որպես միութենական իշխանությունների կողմից «Ղարաբաղ» կոմիտեի փաստացի ճանաչում (տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.15, թ.241-242):*

616 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.16, թ.35, 38:*

Արեւմտյան եւ Արեւելյան շրջանային վարչությունները ընդարձակ մի ուղերձով դիմում էին ներկայացրել ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Ս. Հարությունյանին՝ շարադրելով իրենց սպասելիքները[617]: Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահն այս ուղերձը համարում է «աննախադեպ», բայց ոչ թե նրա բովանդակությունը նկատի ունենալով, այլ այն, որ, իրեն շրջանցելով, այն ուղղված է եղել անմիջականորեն ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարին, մինչդեռ՝ «...մինչեւ այժմ բոլոր հարաբերությունները իրագործվում էին Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի խողովակով»,- բողոքում է նա: Իրեն շրջանցելուց վիրավորված պաշտոնյան այս առիթով հիշեցնում է. «Հենց վերջերս էլ ՌԱԿ-ի բարձր ղեկավարության պատվիրակությունը (Գյոնջյան, Ուզունյան, Ավետիքյան) Սովետական Հայաստան ժամանեց կոմիտեի (այսինքն՝ իրենց – Ա.Ս.) խողովակով եւ հանդիպում ունեցավ ընկ. Գալոյանի հետ՝ նրան ներկայացնելով խնդրո առարկա նամակում շարադրված գրեթե բոլոր հարցերը եւ նրանից ստանալով սպառիչ պատասխաններ կամ լուսաբանություններ: Այնուամենայնիվ, չբավարարվելով, ՌԱԿ-ը որոշել է փութացնել իրերի ընթացքը՝ մեզ դնելով որոշակի փաստի առաջ»[618]: Այսինքն՝ նույն հարցով ՌԱԿ-ի ներկայացուցիչները հոկտեմբերին հրապարակված փաստաթղթից հետո, մինչեւ դեկտեմբերի 5-ն ընկած շրջանում դիմել էին Հայաստանի իշխանություններին (բնականաբար, դա նույն՝ հոկտեմբերի 17-ի հանդիպումն է), եւ, ինչպես երեւում է, ՀԿԿ ԿԿ-ի գաղափարախոսության գծով քարտուղարի խոստումները նրանց չէին բավականացրել, եւ որոշել էին հատուկ ուղերձով դիմել անմիջապես հանրապետության առաջին դեմքին:

ՌԱԿ-ի դիրքորոշումն ու էությունը լավագույնս է երեւում ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարին դեկտեմբերի 5-ի այդ ուղերձում: Փաստաթղթին արժե, միջանկյալ, փոքր-ինչ մանրամասն անդրադառնալ, քանզի այն

[617] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33, թ.236-238:*

[618] *ՀԱԱ, ֆ1, ց.87, ց.33, թ.245: Ընդ որում իր գլխավորած գերատեսչությունը շրջանցելու եւ անմիջապես հանրապետության առաջին դեմքին դիմելու փաստից վիրավորված, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ղեկավարը հարկ է համարում տեղեկացնել. «Զարմանալի է, բայց փաստ, նաեւ, որ երկրաշարժի առաջացրած համահայկական շարժմանը մինչեւ օրս որեւէ լուրջ մասնակցություն չեն բերել միայն ռամկավարները: Իսկ նրանց գաղափարական-կազմակերպական վերահսկողությամբ գործող Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական մարմինը մինչեւ այժմ, ուրիշ հայկական կազմակերպությունների համեմատությամբ, շատ չնչին քայլեր է կատարել այդ ուղղությամբ» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33. թ.248):*

հիանալի պատկերացում է տալիս ոչ միայն մեզ հետաքրքրող հարցի մասին, այլեւ լուսաբանում մի քանի՝ շատ ավելի կարեւոր երեւույթներ եւ իրողություններ: Ընդարձակ այս փաստաթղթում ո՛չ Ղարաբաղյան շարժման, ո՛չ առավել եւս նրա ղեկավարների մասին որեւէ խոսք, բնականաբար, չկա: Չկա նաեւ մտահոգության որեւէ արտահայտություն ո՛չ Լեռնային Ղարաբաղի վիճակի հետ կապված, ոչ՛ էլ նույնիսկ հենց այդ շրջանում արդեն աղետալի չափերի հասած բռնագաղթի: Փաստաթուղթը ոչ միայն պատասխանում է այն հարցին, թե ինչ էին ուզում ռամկավարներն իրենց ծառայությունների դիմաց, այլ նաեւ՝ թե ինչպես էին ուզում: Ընդ որում՝ վերջին հարցը ամենաեւին երկրորդական նշանակություն չունի: Այստեղ 1988-ի հիմնական իրադարձությունների մասին ասվում է. «Այս տարվան մայիս 23-ի Հայաստանի համայնավար կուսակցության կենտկոմի կատարած բախտորոշ եւ խոհեմ ընտրութենեն ետք[619], Ռամկավար ազատական կուսակցությունը հպարտությամբ ողջունեց Ձեր ղեկավարության օրով՝ հունիս 15-ին, Հայաստանի Գերագույն սովետին առած պատմական որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Խորհրդային Հայաստանին վերակցումը պահանջող: Կուսակցությունը մեծ գոհունակությամբ հետեւեց Ձեր՝ հուլիս 18-ին գլխավորած պատվիրակության խիզախ, ազգաշունչ եւ քաղաքական հասունությամբ ունեցած ելույթներուն՝ Խորհրդային Միության Գերագույն Սովետի նախագահության նիստի ընթացքին եւ մանավանդ ուրախությամբ ողջունեց եւ սփյուռքահայության փոխանցեց իմաստը ձեռք բերած հաջողության՝ Լեռնային Ղարաբաղի հարցով նախապես (մարտի 24) առնված որոշումը որպես վերջնական եւ վախճանական ընդունիլ չտալու: Ձեր նախաձեռնությամբ, նոյեմբերի 22-ին, օրինականացումը Ապրիլ 24-ը պաշտոնական սուգի օր հայտարարելու՝ Խորհրդային Հայաստանեն ներս...»[620]:

Քծնելը ու դրա չափի ու բառապաշարի ընտրությունը յուրաքանչյուրի իրավունքն է, բայց նաեւ՝ բնութագրող հատկանիշը: Սակայն փաստերի եւ ամենաթարմ իրողությունների այսօրինակ խեղաթյուրումը վեր է ամեն երեւակայությունից: Եթե անգամ օտարներին Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը մատչելի էր այն չափով, որ կարող էր լուրջ, օբյեկտիվ եւ ընդարձակ վերլուծության նյութ դառնալ, բնական է, որ իրականությունը առավել մանրամասն ծանոթ էր նաեւ

[619] *Նկատի ունի Ս. Հարությունյանին ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար նշանակելը:*

[620] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33, թ.236: Ընդ որում սույն պաշտոնյան անմիջապես էլ զգուշացնում է, որ այսօրինակ խնդիրները «քաղաքական տարողություն» ունեն» եւ որպես այդպիսին՝ ենթակա միայն Մոսկվայի իրավասությանը (տե՛ս նույն տեղում, էջ 246-247) :*

սփյուռքյան կուսակցություններին: Մինչդեռ, ահա, ըստ ռամկավարների ղեկավարների, 1988-ին գրանցված բոլոր քաղաքական ձեռքբերումները ոչ թե համաժողովրդական Շարժման, այլ՝ անձամբ Ս. Հարությունյանի վաստակն են: Ընդամենը շաբաթներ ու ամիսներ առաջ տեղի ունեցած իրադարձությունների անսեթեւեթ ու անբարո այս խեղաթյուրումները սկսվում են արժանի նախաբանով. «Խորհրդային Հայաստանի պատմության անկյունադարձային այս օրերուն մեզ խորապես կոգեւորե եւ կգոտեպնդե այն իրողությունը, որ Ձեր ղեկավարությունը կվայելե հայրենի պետությունը»[621]:

Դժվար է խուսափել առնվազն երեք արձանագրումից: Առաջին՝ ռամկավարները հաճոյանում ու քծնում են հանրապետության առաջին դեմքին, ազգային հերոս հռչակում մի մարդու, որը մի քանի ամսում հասցրել էր Հայաստանում ոչ միայն համատարած ատելության, այլեւ համընդհանուր ծաղրի առարկա դառնալ, եւ որի վարկանիշը հանրապետությունում արդեն շատ ցածր էր: Երկրորդ՝ կեղծում եւ գլխիվայր շուռ են տալիս բոլորի աչքի առաջ ու ողջ ժողովրդի մասնակցությամբ կատարված իրողությունները, ուրանում դրանց հեղինակներին ու վերագրում ուրիշների[622]: Երրորդ՝ դժվար չէ ենթադրել, թե ինչ իրական արժեք ուներ նրանց համար Ղարաբաղի հարցը, եւ ինչպիսի իրական վերաբերմունք կարող էր ունենալ այս կուսակցությունը Շարժման ու նրա ձերբակալված ղեկավարների նկատմամբ:

Ո՞րն էր պատմական այդքան թարմ եւ այդքան բացահայտ իրողությունների անպարկեշտ խեղաթյուրումների դիմաց ՌԱԿ-ի ղեկավարների ակնկալիքը, նրա գերնպատակը: Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահը բացահայտում է ՌԱԿ-ի ամբողջական օրակարգը. **ա)** որ ՌԱԿ-ն իրավունք ստանա հնարավորին չափ բարձր մակարդակով խորհրդակցություններ ունենալ Հայաստանի ղեկավարության հետ, **բ)** որ իրենց նախապես տեղյակ պահեն «համազգային մտահոգություններով» կատարված քայլերի մասին, **գ)** Հայաստանում հրատարակվեն ՌԱԿ որոշ նախկին գործիչների քաղաքական-հրապարակախոսական ստեղծագործությունները, **դ)** պաշտոնապես ճանաչել ՌԱԿ-ը որպես Սփյուռքի

[621] *Նույն տեղում:*

[622] *Կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսի բացասական բուռն վերաբերմունքի կարժանանային ռամկավարները, եթե այդ օրերին սույն փաստաթուղթը հայտնի դառնար հասարակությանը: Ճիշտ նույն կերպ՝ այսօրինակ փաստերի լույսի տակ կարելի է նաեւ պատկերացնել, թե ինչպիսի ահավոր խեղաթյուրումների է ենթարկվել սփյուռքյան կուսակցությունների «գաղափարական» վերահսկողության տակ ստեղծված պատմագրությունն ընդհանրապես:*

ինքնուրույն քաղաքական միավոր՝ «նման կարգի ճանաչումից բխող բոլոր անհրաժեշտ պարագաներով հանդերձ»[623]: Այսինքն՝ հենց այս հարցերն էին քննարկել նրանք հոկտեմբերի 17-ին ՀԿԿ ԿԿ-ի քարտուղար Գալոյանի հետ, եւ այժմ նույնը կրկնում էին արդեն ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարին հղված իրենց ուղերձում:

ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի անունով մի դիմում էլ հղել է Հնչակյան կուսակցությունը: Ի տարբերություն ռամկավարների ուղերձի՝ այն անհամեմատ համառոտ է եւ քիչ ավելի համեստ պահանջներով: Հնչակները պաշտոնական հանդիպում էին խնդրում ՀԿԿ ԿԿ-ում եւ առաջարկում քննարկվելիք հարցերի հետեւյալ օրակարգը. «**ա)** Հնչակյան կուսակցության փոխհարաբերությունը Խորհրդային Հայաստանի եւ այդ գծով Խորհրդային Միության կոմկուսի եւ կառավարության հետ, **բ)** Հայրենիք-Սփյուռք կապերու ներկա վիճակը եւ մեր ժողովրդի համազգային խնդիրները, **գ)** համագործակցություն եւ աշխատանքի ներդաշնակում ընդհանուր նպատակների շուրջ»[624]:

Իրենց ծառայությունների համար նույնպիսի փոխհատուցման ակնկալիք ունեին բոլոր երեք կուսակցությունները, եւ, ինչպես երեւում է, նույն կերպ էին պատկերացնում այդ փոխհատուցումը: Ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրը փորձել է մյուսներից առաջ անցնել ՀԽՍՀ իշխանությունների կողմից ճանաչվելու հարցում: Երկրաշարժի առիթով եւս մի քանի համատեղ հայտարարություններ անելուց հետո նրանք, կարծես թե, փորձել են հրաժարվել միմյանց հետ մրցակցությունից եւ, ըստ տեղեկությունների, հունվարի վերջին պայմանավորվել համատեղ պատվիրակությամբ այցելել ՀԽՍՀ՝ հանրապետության ղեկավարության հետ քննարկելու երկրաշարժի հետ կապված խնդիրների, Սփյուռք-Հայաստան կապերի, Սփյուռքում փոխհարաբերությունների հետ կապված հարցեր: Ընդ որում՝ հատուկ շեշտվում է, որ «պատվիրակությունը մտադիր է հանրապետության ղեկավարության հետ քննարկել **միայն այդ հարցերը եւ չի նախատեսում քաղաքական բնույթի հարցեր արծարծել**»[625]: Վերոհիշյալ պայմանավորվածությունն էլ, ըստ երեւույթին, չի հարգվել: Այդ է վկայում 1989-ի փետրվարի 5-ին ՌԱԿ-ի

[623] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33, թ.246:*

[624] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33, թ.252-253: Հնչակյան կուսակցությունը ամբողջությամբ եւ առանց որեւէ վերապահման պաշտպանում էր ԽՍՀՄ-ում հայտարարված եւ ընթացող «Վերակառուցման» քաղաքականությունը՝ որպես «դեպի իրական սոցիալիզմ ուղու միակ ընտրություն» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.27, թ.35-36):*

[625] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.25:*

անունից Դաշնակցության դեմ տարածված ընդարձակ մի հայտարարություն, որում պատմական կտրվածքով հակադրվում էին ՌԱԿ-ի «հայրենասեր» եւ ՀՅԴ-ի «ոչ հայրենասեր» ու ազգային միասնությունը պառակտող կերպարները[626]:

* * *

ՀԿԿ ԿԿ-ը, որ արդեն ստացել էր իր ակնկալածը կուսակցություններից, ինչպես երեւում է, չէր շտապում կատարել իր խոստումը, կամ պարզապես չէր կարողանում Մոսկվայից թույլտվություն ստանալ այս կուսակցությունների ներկայացուցիչներին հրավիրելու, պաշտոնական հանդիպում կազմակերպելու եւ նրանց հետ բարձր մակարդակով եւ մշակութային հարցերի ոլորտից դուրս այլ հարցեր քննարկելու համար: 1989թ. ապրիլի 23-ին ՀԿԿ ԿԿ-ի գաղափարախոսական բաժնի վարիչն առաջարկում է այդ հանդիպումը եւ քննարկումը հետաձգել մինչեւ մայիսի 30-ը[627]: Ձգձգումը հասկանալի էր. իշխանությունները հույս ունեին, որ «Ղարաբաղ» կոմիտեի դեմ հարուցված քրեական գործը կկարողանան բարեհաջող ավարտին հասցնել եւ վերջնականապես վնասազերծել Շարժումը: Այդ դեպքում սփյուռքյան կուսակցությունների ծառայություններից օգտվելու նոր կարիք չէր լինի, ուստի եւ նրանց տված խոստումը կարելի էր չկատարել, մանավանդ որ՝ իրենց օժանդակության համար հիշյալ կուսակցությունները խորհրդային չափանիշներով բավականին «թանկ» փոխհատուցում էին պահանջում: Փաստաթղթերը վկայում են, որ, իրոք, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին հասարակական ու միջազգային հանրության կարծիքի ճնշման տակ ազատ արձակելու մասին քաղաքական որոշումն ընդունելուց անմիջապես հետո միայն սփյուռքյան «այլազան քաղաքական խմբավորումների» օժանդակությունը ստանալու հարցը նորից դրվեց իշխանության օրակարգում: Ճիշտ է՝ նրանց խոստացված «բարձր մակարդակի» ընդունելությունն առայժմ չիրականացավ, սակայն մայիսի վերջին Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահը հանդիպեց ՌԱԿ-ի եւ ՍԴՀԿ-ի ներկայացուցիչների, սփյուռքահայ կոմունիստների եւ «հայրենասիրական ճակատի տարբեր գործիչների» հետ: Հունիսի 16-ին նա ՀԿԿ ԿԿ-ին զեկուցում է սրանց հիմնական մտահոգությունները՝ հետեւյալ կետերով.

626 *Խոսքը վերաբերում է հատկապես Հայ եկեղեցու պառակտմանը (տե՛ս ՌԱԿ-ի խոսքը, էջ 32-36):*

627 *ՀԱԱ, ֆ1, ց.87 գ.33, թ.239:*

ա) Նրանք «իրենց հուսախաբությունը հայտնեցին այն մասին, որ Խորհրդային Հայաստանում գործադրվող եւ ամբողջ ազգին վերաբերող կարեւորագույն քայլերը կատարվում են առանց խորհրդակցելու, կամ գեթ՝ կանխավ տեղյակ պահելու իրենց»:

բ) «Տագնապը հատկապես նկատելի է ՌԱԿ-ի տարբեր շրջանակներում: Դա մասնավորապես կապված է նաեւ երկու կաթողիկոսների միջեւ տեղ գտած համաձայնության հետ, որը ռամկավարները դիտում են որպես իրենց թիկունքում կայացած դաշնադրություն: Այդ համաձայնությունը Ա. Գյոնջյանն անվանեց «անձնատվություն առանց պայմանի»[628]:

գ) «Բոլոր խմբավորումներին հուզում է մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի ընդունման քաղաքական լրջմիտ հիմնավորման եւ մեկնաբանության խնդիրն այն հաշվով, որպեսզի տարբեր ուժեր բարոյական հաղթանակի պատրանք չունենան»[629]:

դ) Պաշտոնական հանդիպումներ կազմակերպել ամենաբարձր՝ առաջին քարտուղարի մակարդակով, եւ այդ մասին հրապարակային տեղեկատվություն տալ:

Այս, եւ, մասնավորապես, վերջին պահանջի կատարման դեպքում միայն, ըստ զեկուցագրի հեղինակի՝ Սփյուռքում «կարելի է ակնկալել հայրենասիրական ճակատի դիրքերի որոշ ամրապնդում»: Եւ նա պնդում է, որ այդ հանդիպումներն արագ կազմակերպվեն[630]: Հուլիսի 27-ին այդպիսի հանդիպման շուտափույթ կազմակերպման անհրաժեշտության մասին իր եզրակացությունն է տալիս ՀԿԿ ԿԿ-ի գաղափարախոսական բաժինը[631]: Սակայն այս հանդիպումը շարունակում է ձգձգվել, եւ օգոստոսի 4-ին նույն խնդրով եւ բառացիորեն նույնպիսի հիմնավորումներով ու միջնորդությամբ ՀԿԿ ԿԿ է դիմում է նաեւ հանրապետության ՊԱԿ-ի նախագահը: Ընդ

628 *Խոսքն, անշուշտ, վերաբերում է 1988-89-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ի ակտիվացած փոխհարաբերություններին, վերջինիս Հայաստան կատարած այցին եւ միասին շրջագայությանը: Թվում է՝ տրամաբանական կլիներ փաստը գնահատել որպես կուսակցությունների կողմից այդքան թմբկահարվող «ազգային միասնության» ուղղությամբ արված կարեւոր մի քայլ, քանի որ դրան խանգարող ամենացցուն հանգամանքը եկեղեցու պառակտված վիճակն էր: Ինչպես տեսնում ենք, ավանդական այս կուսակցության համար եւս սեփական հավակնությունները բավարարելը շատ ավելի կարեւոր է, քան ամենուր թմբկահարած «ազգային միասնությունը»:*

629 *Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի ընդունման մասին տե՛ս ստորեւ:*

630 *Տե՛ս ՀԱԱ, ֆ1, գ.87, ց.33, թ.263-264:*

631 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.232-233:*

որում՝ վերջինս տեղեկացնում է, որ այդ հանդիպումների ընթացքում քննարկվող հիմնական հարցը այս կուսակցությունների կողմից լինելու է նրանց խիստ անհանգստացրած՝ Եռագույն դրոշի եւ Մայիսի 28-ի ճանաչման հետ կապված խնդիրը[632]: Հավանաբար, այսօրինակ հանդիպման համապատասխան թույլտվությունը Մոսկվայից, այնուամենայնիվ, չէր ստացվում[633]:

Այսպիսով, ինչպես Շարժման բարձրակետի ամիսներին՝ 1988-ի աշնանը, այնպես էլ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումից հետո, Ղարաբաղյան շարժման դեմ բռնարարքների ու նրա համար ամենածանր ամիսներին, սփյուռքյան կուսակցությունները, ի դեմս իրենց ղեկավարների, հստակորեն կանգնած են եղել խորհրդային իշխանությունների կողքին, պաշտպանել նրանց քաղաքական գիծը եւ շարունակել պայքարել Շարժման դեմ: Գեթ անմիջական հարաբերություններում ու փակ գրագրություններում

---

632 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.45: Եռագույն դրոշի եւ Մայիսի 28-ի ընդունումը ՀԽՍՀ ԳԽ-ի կողմից իրականում զիջում էր Շարժմանը եւ վերջինիս հաղթանակներից մեկն էր: Դա մտնում էր այն միջոցառումների մեջ, որոնցով հանրապետության իշխանությունը «Ղարաբաղ» կոմիտեի ազատման նախօրերին աշխատում էր Շարժման պահանջներին ընդառաջ քայլերով փրկել սեփական դեմքը, ինչ-որ չափով բարձրացնել իր խաթարված վարկանիշը: Այնուամենայնիվ, Սփյուռքի «հայրենասիրական ճակատի» համար դրանք ոչ թե ազգային, այլ դաշնակցական խորհրդանիշեր էին: Ըստ այդմ նրանց մտահոգությունն այն էր, որ դրանով այս կուսակցությունը կարող էր իրենցից առաջ անցնել եւ խախտել վերջին տասնամյակներում սփյուռքահայ կյանքի վրա իրենց ունեցած ազդեցությունների ձեւավորված հավասարակշռությունը:*

633 *Ստորեւ կտեսնենք, որ նման ճանաչման խնդիրն առաջնային էր նաեւ Դաշնակցության համար: Գիտենք արդեն, որ այս երեք կուսակցությունների հետ հարաբերությունները Մոսկվայի մենաշնորհն էին, եւ Հայաստանի բարձրագույն իշխանության հետ նրանց հանդիպումների թույլտվությունը այստեղից է, որ ձգձգվում, չէր ստացվում: Տրամաբանական բացատրությունը պետք է որ լիներ հետեւյալը. այո՛ դա կբարձրացներ այս կուսակցությունների վարկանիշը Սփյուռքում (ինչում եւ շահագրգռված էին այս կուսակցությունները), բայց կիջեցներ նրանց վարկանիշը Հայաստանում որպես իշխանության հետ համագործակցող ուժերի: Իսկ սա չէր բխում իշխանության շահերից. «չեզոք» ռամկավարների եւ հնչակների եւ «հակախորհրդային» Դաշնակցության խոսքը (Շարժման դեմ) հայաստանյան հասարակության վրա ավելի մեծ ազդեցություն կարող էր ունենալ, քան եթե նրանք ընկալվեին որպես արդեն խորհրդային իշխանության հետ համագործակցող ուժեր: Իսկ Մոսկվային, գործնական իմաստով, նախ ա՛յս խնդիրն էր հետաքրքրում:*

նրանք ոչ միայն որեւէ բողոք, այլեւ որեւէ ակնարկ անգամ չեն արել ո՛չ Կոմիտեի ձերբակալման, ո՛չ Շարժման այլ մասնակիցների նկատմամբ իշխանությունների բռնարարքների, ո՛չ Ադրբեջանից իրականացվող բռնագաղթի, ո՛չ Լեռնային Ղարաբաղի խնդրի առիթով: Անգամ այն ամիսներին, երբ Կոմիտեի ազատության համար պայքարը ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս հասել էր իր գագաթնակետին եւ միջազգային լայն հնչեղություն ստացել, Ռամկավար եւ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչների բարձրացրած հարցերի թվում ոչ մի անգամ չի շոշափվում այս խնդիրը: Այս ընթացքում նրանք չեն անդրադարձել անգամ Ղարաբաղի հարցին: Նրանց հիմնական, եթե ոչ միակ մտահոգությունը եղել է իրենց ծառայությունների դիմաց հանրապետության իշխանություններից հօգուտ իրենց քաղաքական զիջումներ պոկելը: Այս «հայրենասիրական ճակատը» եւս՝ ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի եւ «առաջադիմական» այլ կազմակերպությունների ու անհատ գործիչների մասնակցությամբ, մինչեւ 1989-ի կեսերը Սփյուռքում հեղինակության կորուստ էր ունեցել: Դա, անշուշտ, տեղի էր ունեցել Հայաստանում ծավալված ժողովրդավարական շարժման նկատմամբ նրանց հենց այսօրինակ վերաբերմունքի հետեւանքով: Իսկ Հայաստանի իշխանություններն, ահա, մտահոգված են եղել «Հայրենասիրական ճակատի» վարկը բարձրացնելու հարցում եւ դրա համար միջոցառումներ են նախատեսել:

* * *

Արված դիտարկումները եւ եզրահանգումները, կապված Սփյուռքի «հայրենասիրական ճակատի» մեջ մտնող ուժերի ղեկավարների հետ, հենվում են խորհրդային իշխանությունների հետ անմիջական հարաբերություններին առնչվող այն փաստաթղթերի վրա, որոնք հրապարակման ենթակա չէին: Սակայն միջազգային հնչեղություն ստացած Հայկական ժողովրդավարական շարժման ղեկավարների ձերբակալումը դատապարտվում էր ոչ միայն Հայաստանում, այլեւ ԽՍՀՄ-ում օր օրի աշխուժացող ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության կողմից: Այս հարցերում բացարձակ լռություն պահպանելը կարող էր խաթարել ցանկացած «հայրենասիրական ուժի» եւ ցանկացած կազմակերպության ղեկավարության հեղինակությունը: Ուստիեւ՝ հրապարակավ, թվում էր, նրանք փոքր-ինչ այլ կերպ պետք է ներկայանային ինչպես իրենց շարքերին, այնպես էլ իր մեծագույն մասով կուսակցական անմիջական ազդեցություններից դուրս գտնվող սփյուռքահայ շրջանակներին: Սակայն մեզ

հասու փաստաթղթերում նույնպես շատ թե քիչ էական նման արձագանք չգտանք[634]:

Հետաքրքիր է, սակայն, որ այս իրողությունից փոքր-ինչ տարբերվում է հետախուզական ծառայությունների ներկայացրած հետեւյալ տեղեկատվությունը.

«Ստացված տեղեկությունների համաձայն Սփյուռքի՝ գործնականում բոլոր ուժերը բացասաբար են ընդունել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների 30 օրով վարչական կալանքի, եւ հետագայում զանգվածային անկարգությունների կազմակերպման եւ հանրապետությունում հատուկ դրության ռեժիմին չենթարկվելու համար նրանց դեմ հարուցված քրեորեն պատժելի մեղադրանքների մասին լուրերը: Խորհրդային կառավարության հիշյալ միջոցառումները հայ-ադրբեջանական ազգամիջյան գժտությունները կարգավորելու նպատակով, Սփյուռքի կողմից գնահատվում են որպես «հայերի նկատմամբ ճնշման եւ նրանց արդարացի պահանջների մերժման սկիզբ»[635]: Դժվար չէ հասկանալ, որ տվյալ դեպքում տեղեկատվությունը վերաբերում է ոչ թե կուսակցությունների ղեկավարությանը, որոնք միայն կարող էին հանդես գալ այդ կազմակերպությունների անունից, այլ կա՛մ շարքային անդամներին, կա՛մ, գուցե նաեւ առանձին երկրների կուսակցական կառույցների: Եւ այնուամենայնիվ, Սփյուռքի համար որպես ընդհանրական վարքագիծ եւ դիրքորոշում, նույն զեկուցագիրն ավելացնում է. «Դրա հետ միասին, ի պաշտպանություն այդ «կոմիտեի» (խոսքը «Ղարաբաղ» կոմիտեի մասին է, – Ա. Ս.) որեւէ գործողություն Սփյուռքը համարում է ոչ տեղին»[636]: Այսպիսի վարքագիծն էլ, իբր, պայմանավորված էր երկրաշարժի հետեւանքների վերացման համար հանրապետությանը ցուցաբերելիք առաջնահերթ խնդիրներով[637]:

---

634 *Տե՛ս, օրինակ՝ «ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմեջեն» ժողովածուն (էջ 31-38), որտեղ ամփոփված են այդ ամիսներին ՌԱԿ- ի առանձին կամ մյուս կուսակցությունների հետ համատեղ ընդունած փաստաթղթերը:*

635 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.18:*

636 *Հետագայում, կուսակցություններին նկատի ունենալով, Լեւոն Տեր-Պետրոսյանն արձանագրում է. «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալման շրջանում քար լռություն էր ու համագործակցություն ՀԿԿ-ի հետ: Միայն երբ հեղինակավոր միջազգային կազմակերպություններ իրենց ձայնը բարձրացրին, նա սկսեց թույլ ձայնակցել» («Հայաստանի Հանրապետություն», 30.06.1992):*

637 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.18:*

Դաշնակցությունը. Ի տարբերություն «հայրենասիրական ճակատի», կամ «առաջադիմականների»՝ Հայաստանի իշխանությունները, հետեւելով ավանդույթին, շարունակում էին որպես «հակախորհրդային» ուժ դիտել Դաշնակցությանը: Եւ դա՝ հակառակ 1988թ. ընթացքում այս կուսակցության ղեկավարների՝ «ԽՍՀՄ ՊԱԿ-ի խողովակով» անլեգալ Հայաստան այցելությունների, նրանց հետ ձեռք բերված պայմանավորվածությունների, Ղարաբաղյան շարժման դեմ նրանց որդեգրած կեցվածքի, խորհրդային իշխանությանը պաշտպանող կոչերի եւ այլն: Խորհրդային իշխանությանը չնեղացնելու համար ՀՅԴ-ն այնքան հեռու գնաց, որ հրաժարվեց անգամ իր ավանդական տոնակատարություններից[638]: Սակայն առայժմ Դաշնակցությունը իշխանության մարմինների անգամ փակ գրագրություններում շարունակվում էր համարվել «հակախորհրդային»: Պատճառն, անշուշտ, միայն ավանդույթի իներցիան չէր. գնահատականը եւ վերաբերմունքը կարելի էր փոխել միայն Մոսկվայի թույլտվությամբ, ինչն այս դեպքում դեռեւս չկար: Թերեւս ինքը՝ ՀՅԴ-ն նույնպես չէր ուզի ամբողջությամբ եւ անմնացորդ ձերբազատվել «հակախորհրդայինի» համարումից, այն պարզ պատճառով, որ հասարակական պատկերացումներում նաեւ դրա վրա էր հենվում «ազգայինի» նրա լեգենդը:

Դաշնակցությունը, ինչպես եւ մյուս կուսակցությունները, բացի Ղարաբաղյան շարժման գաղափարների հետ սկզբունքային անհամաձայնության հիմքից, ձերբակալված «Ղարաբաղ» կոմիտեին պաշտպանելու համար ունեին նաեւ այլ, այսպես կոչենք, «տեխնիկական անհարմարություն»: Դա, ըստ Մելիք-Հակոբյանի, հետեւյալն էր. «Դրոշակը» ողջ 1988-ի ընթացքում գրեթե անտեսեց «Ղարաբաղ» կոմիտեի գոյությունը: Ցույցերը եւ հավաքները կարծես տեղի էին ունենում ինքնաբուխ: Սկզբում «Դրոշակը» բարի վերաբերում ուներ առաջին Կոմիտեին՝ Սիլվա Կապուտիկյան, Արմեն Հովհաննիսյան եւ այլք, իսկ հետո Կոմիտեն կարծես չքացավ, եւ Սփյուռքի անտեղյակ ընթերցողը կարող էր կարծել, թե Հայաստանի համայնավար կուսակցությունն է Սուրեն Հարությունյանի գլխավորությամբ առաջնորդում շարժումը»[639]: Ապա ավելացնում է. «Դրոշակը» եւ ուղեկից մամուլը հենց

---

638 *Օրինակ՝ 1989 թվականին նրանք ձեռնպահ մնացին նշել իրենց ավանդական տոներից մեկը՝ փետրվարի 18-ը (տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.96):*

639 *Մելիք-Հակոբյան Ս., Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը, էջ 22: Որպես իր խոսքի հիմնավորում հեղինակը հղում է ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխյանի հետ մի հարցազրույցը «Ասպարեզ» թերթի 1989թ. դեկտեմբերի 16-ի*

սկզբից մերժեցին Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ մյուսներին: Եթե հետո (1989-ին եւ ավելի ուշ) նրանք իրենց ընդդիմությունը բացատրում էին Թուրքիո հանդեպ կողմնորոշումով եւ այլեւայլ, հաճախ անիմաստ, տեսական հարցերով, ապա 1988-ին չկար որեւէ պատճառ, եւ, քննադատել չկարողանալով, նրանց պարզապես անտեսում էին»[640]: Սակայն Սփյուռքն այդ ընթացքում, այնուամենայնիվ, հայաստանյան իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանում էր: Նույն հեղինակի վկայությամբ՝ «Գաղութներ այցելող մտավորականությունը, մեզ հասած թռուցիկները, վիդեոերիզները վկայում էին, որ ամեն շաբաթ, երբեմն ամեն օր Կոմիտեի անդամները՝ հատկապես Աշոտ Մանուչարյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ ուրիշներ, ելույթներ էին ունենում: Սփյուռքի մամուլը համառորեն չէր տպում ո՛չ ելույթները, ո՛չ սղագրությունները կամ թեկուզ ելույթների համադրված համառոտ նյութը: Մինչ «Դրոշակը» եւ մյուս թերթերի էջերը լայն տեղ էին տալիս Սուրեն Հարությունյանի, Հրանտ Ոսկանյանի ելույթներին, եւ նրանց շուրթերից դուրս եկած չնչին արտահայտությունները, որ կարելի էր ազգագուտ որակել, մեծացվում էր հերոսապատումի աստիճան: Այս մարդիկ իրենց ելույթներով, սոսկ ելույթներով, հռչակվում էին «ամենայն հայոց կառավարություն (տե՛ս «Դրոշակ», հունիս 21, թիվ 5, էջ 59), բայց անտեսվում էին այդ ելույթներին նախորդած պահանջները, հրապարակներում կազմված հուշագրերը, որոնք վերջնագրի պես տրվում էին այս «հերոսներին»[641]:

Ահա այսպիսի լռությունից հետո «Ղարաբաղ» կոմիտեի մասին խոսելը, առավել եւս՝ ի պաշտպանություն խոսելը, եւ իշխանություններին մեղադրելը կտրուկ կհակադրվեր Դաշնակցության (եւ մյուս կուսակցությունների՝ մինչ այդ որդեգրած եւ ցուցադրած դիրքորոշմանը, կառաջացներ անպատասխանելի հարցեր: Մյուս կողմից, սակայն, Կոմիտեի պաշտպանության շարժումը միջազգային լայն հնչեղություն էր ստացել, եւ դրան գեթ արտաքուստ, նվազագույն չափով մասնակից չլինելը անդառնալի վնաս կհասցներ նաեւ Դաշնակցության հեղինակությանը: Եւ ավանդական կուսակցությունները ստիպված էին իրենց դեմքը փրկելու համար ինչ-որ միջոց գտնել: Այդպիսի մի միջոցառում ձեռնարկեց ՀՅԴ-ն: Նա Ֆրանսիայում 1989-ի գարնանը տեղական ինքնակառավարման ընտրություններում Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությանն իր օգնությունը պայմանավորել էր

համարում: Ինչպես վերեւում տեսանք՝ ամեն ինչ հենց այդպես էին գնահատում նաեւ ռամկավարները:

[640] *Տե՛ս Մելիք-Հակոբյան Ս., Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը, էջ 22-23:*

[641] *Նույնը, էջ 22:*

նրանով, որ վերջիններս իրենց հետ միասին հանդես գան «հայ ազգային հերոսների» պաշտպանության գործողություններով: Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը, սակայն, մտահոգված՝ ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները չփչացնելու խնդրով, այս հարցում պարզ դիրքորոշում չուներ եւ ավելի հակված էր «ճկուն» մեթոդների: Օրինակ՝ նախատեսվում է, որ Հայաստան այցելության ժամանակ նախագահ Միտերանի տիկինը «մասնավոր կարգով» կհետաքրքրվի «Ղարաբաղ» կոմիտեի ճակատագրով: Ինչ վերաբերում է Դաշնակցության այսօրինակ այլ նախաձեռնություններին, այդ թվում՝ նաեւ կազմակերպած մի քանի ցուցադրական մանր ակցիաներին ու հանրահավաքներին, ապա դա հենց նույն պահին էլ, դրանց էությանը քաջատեղյակ խորհրդային պաշտոնյայի կողմից ստացել է իր ճշգրիտ գնահատականը. «Նրանք հաշվարկում են, որ այս հարցի վրա սպեկուլյացիայի միջոցով, «կոմիտեականների» ազատման դեպքում իրենք քաղաքական ակցիաներ կստանան»[642]:

Ինչպես արդեն ասվել է, կուսակցությունների, այդ թվում նաեւ Դաշնակցության ոչ միայն շարքային, այլ նաեւ հայտնի անդամներ, նաեւ առանձին երկրների կազմակերպություններ, հաճախ տարակուսանքով էին վերաբերվում ղեկավար մարմինների՝ Ղարաբաղյան շարժման նկատմամբ որդեգրած գծին: Այսպես՝ Կանադայի «մի խումբ մտահոգ դաշնակցականներ» ստորագրությամբ ՀՅԴ Միհրան Փափազյան կոմիտեությանն ուղղված շրջաբերականում (դեկտեմբեր 1990) իրենց անհամաձայնությունն են հայտնում, ինչպես նաեւ դատապարտում «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալության շրջանում ՀՅԴ գերագույն մարմնի «անշարժությունը»[643]: Դաշնակցության իրական վերաբերմունքի մասին վկայում է ՀՅԴ գործիչներից Հ. Թուրիկյանն իր մի «Բաց նամակում»՝ ներկայացնելով հետեւյալ իրականությունը. «Աղետալի երկրաշարժեն ետք, երբ «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարությունը ձերբակալվեցավ, ինչպես նաեւ արտակարգ դրություն հաստատվեցավ ամբողջ Հայաստանի տարածքին, Դաշնակցությունը ոչ մեկ կերպով պաշտպան կանգնեցավ այդ շարժման ղեկավարության եւ կասկածելի լռությամբ ոչ մեկ ճնշման միջոց գործածեց անոնց ազատ արձակման եւ արտակարգ դրության վերացման համար»[644]: Այսօրինակ վարքագծի պատճառով է, որ, հակադրվելով պաշտոնական գծին, հետագայում նախաձեռնվեց «ՀՅԴ վերականգնումի շարժում» կազմակերպության ստեղծումը:

[642] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.26:*

[643] *ՀՀԱՆԱ, 25/01.12.90:*

[644] *ՀՀԱՆԱ, 25/20.11.91:*

Այսպիսով, ինչպես 1988 թվականին՝ Ղարաբաղյան շարժման սկզբնավորման եւ վերելքի շրջանում, այնպես էլ երկրաշարժից հետո, նրա ղեկավարության ազատազրկման եւ Շարժման համար ամենածանր վեց ամիսների ընթացքում, Սփյուռքը իր «կուսակցությունների» դեմքով, հակառակ կուսակցական ազդեցություններից դուրս «չեզոք Սփյուռքի», շարունակում էր ունենալ մեկ միասնական դիրքորոշում: Այդ դիրքորոշումն ուղղված էր Շարժման դեմ եւ հօգուտ խորհրդային իշխանությունների: 1988-ի աշնանը դա արտահայտվեց երեք կուսակցությունների պաշտոնական հայտարարությամբ, իսկ հետագա ամիսներին այն որեւէ փոփոխություն չկրեց: Այսինքն՝ **Շարժման դեմ պայքարող երեք ճակատներին՝ կենտրոնական իշխանություն, հանրապետական իշխանություն, այսպես կոչված՝ «ազգային», իրականում՝ նոմենկլատուրային մտավորականություն, ավելացավ նաեւ չորրորդ ճակատը՝ ի դեմս սփյուռքյան կուսակցությունների:** Երեք կուսակցությունների համար էլ հիմնական խնդիրը մնում էին ոչ թե Ղարաբաղի եւ Շարժման օրակարգի այլ հարցերը, այլ՝ իրավիճակն օգտագործելով եւ առիթից օգտվելով՝ քաղաքական շահաբաժին ստանալը: Դրա իրականացման կարեւորագույն հիմքերից մեկը համարում էին Խորհրդային Հայաստանի ղեկավարության հետ «բարձր մակարդակով» պաշտոնական հրապարակային հարաբերություններ հաստատելը, նրա կողմից ճանաչվելը: Դա նրանք համարում էին Սփյուռքում (իսկ հետագայում՝ գուցե նաեւ Հայաստանում) սեփական վարկանիշի բարձրացման եւ ազդեցության ոլորտների ընդլայնման կարեւորագույն գրավական: Սփյուռքյան կուսակցությունների համար Շարժման դեմ պայքարը եւ հօգուտ խորհրդային իշխանությունների գործելու պատրաստակամությունը միասնական քաղաքական հենքի էր վերածվել: Ավելին՝ այս երկու ասպարեզներում առաջինը լինելու համար նրանց միջեւ յուրատեսակ մրցակցություն էր առաջացել: Այդ մրցակցությունը, սակայն, հասկանալի պատճառով, հրապարակային չէր կարող լինել: Յուրաքանչյուրը դա անում էր ոչ միայն հասարակական կարծիքից, այլեւ միմյանցից գաղտնի: Իսկ հրապարակային՝ Լեռնային Ղարաբաղի եւ Շարժման ձերբակալված ղեկավարության խնդիրներով նրանց ուշացած եւ ոչ էական նշանակություն ունեցող սակավաթիվ ելույթներն ու ձեռնարկումներն ավելի շատ ցուցադրանքի, քարոզչական նշանակություն ունեին եւ բխում էին ոչ միայն հասարակության մեջ, այլ նաեւ իրենց իսկ շարքերում սեփական վարկանիշը, դեմքը եւ ազդեցությունները վերջնականապես չկորցնելու մտահոգությունից:

Չեզոք Սփյուռքը. Ինչպես ի սկզբանե էր, Ղարաբաղյան շարժման նկատմամբ իրենց ջերմ վերաբերմունքը շարունակեցին պահել կուսակցությունների ազդեցությունից դուրս գտնվող Սփյուռքը եւ կազմակերպությունները: Նրանք պաշտպանում էին Շարժումը, տարածում նրա գաղափարները եւ որոշակի դեր խաղացին հատկապես «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամների պաշտպանության եւ ազատության համար միջազգային հզոր շարժում ծավալելու գործում: Փարիզում գործող «Ֆրանս-հայկական համերաշխություն» եւ Վաշինգտոնում գործող «Հայկական համագումար» կազմակերպությունների վճռորոշ գործունեության մասին արդեն խոսվեց այլ առիթով:

Այդպիսին էր նաեւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը: Նրա ղեկավարությունը որոշել էր Կոմիտեի ձերբակալության առիթով ԽՍՀՄ կառավարության վրա ազդելու նպատակով «նախազգուշական բնույթի» լուրջ միջոցառումների դիմել: Լուիզ Սիմոն Մանուկյանի ստորագրությամբ նամակներ էին հղվել Ռամկավար եւ Հնչակյան կուսակցություններին՝ իրենց բնակության երկրներում ԽՍՀՄ դեսպանների հետ հանդիպելու, «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության առիթով բողոք հայտնելու եւ զգուշացնելու, որ ԽՍՀՄ-ում հայ բնակչության նկատմամբ ճնշումների դեպքում ամբողջ աշխարհում բողոքի գործողություններ կձեռնարկվեն[645]: Մինչդեռ վերջիններս ոչ միայն չէին կատարել այս հանձնարարականը, այլեւ, չհամարձակվելով հանդերձ դրան առարկել՝ դիմել էին խաբեության. «Մի շարք գաղթավայրերում, մասնավորապես՝ Ավստրալիայում, հնչակների ղեկավարությունը աննպատակահարմար է համարել հետեւել այս ցուցումին, միաժամանակ, սակայն, Դետրոյթ՝ «Բարեգործականի» ղեկավարության հասցեով հաշվետվության նման մի բան է ուղարկել՝ խորհրդային դեսպանի հետ, իբր, հանդիպած լինելու մասին»[646]: Ավելին, իրենք ոչինչ չանելով, հնչակները կանխել են այս ուղղությամբ ուրիշների գործողությունները: Ըստ նույն փաստաթղթի՝ «Հնչակների կողմից միջոցներ են ձեռնարկվել Ավստրալիայի հայկական գաղութի հակախորհրդային ուժերի կողմից Հայկական ԽՍՀ-ի ազգայնական շարժման օժանդակելու համար

---

[645] *Այս կուսակցությունները ֆինանսական օժանդակություն էին ստանում Բարեգործականից, եւ վերջինս կարող էր նրանց նմանօրինակ հրահանգներ տալ: Հատկանշական է, սակայն, որ անգամ Բարեգործականի ղեկավարությունը չգիտեր այս կուսակցությունների ղեկավարության իրական դիրքորոշումների, քայլերի ու նպատակների մասին:*

[646] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.18-19:*

միջոցների հավաքագրումը եւ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալման դեմ Սիդնեյում ցույցի անցկացումը խափանելու համար»[647]:

ժա) Շարժման երկրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները

1. Ղարաբաղյան շարժման առաջին շրջանում գերիշխող պատկերացումները եւ հույսերը, թե ներքին վարչական սահմանների փոփոխության միջոցով Լեռնային Ղարաբաղի հարցը վերակառուցման հռչակած սկզբունքների ու կարգախոսների շրջանակներում կլուծվի որպես ստալինյան կամայականության շտկման, պատմական անարդարության վերացման, պատմական իրավունքի վերականգնման, ինքնորոշման իրավունքի իրացման խնդիր, մերժվեց: Բնույթով ժողովրդավարական խնդիրը Մոսկվան, ըստ էության, նենգափոխեց տարածքային պահանջի, եւ, այդ հիմքի վրա, ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության 1988 թվականի հուլիս 18-ի որոշմամբ այն համարվեց անընդունելի: Դրանով ամրապնդվեց այն եզրահանգումը, որ փակուղուց խուսափելու միակ ճանապարհը Շարժման օրակարգի ընդլայնումն է ընդհանուր ժողովրդավարական խնդիրներով եւ տեւական պայքարի հեռանկարի անհրաժեշտության հետ հաշտվելը: Դրա համար անհրաժեշտ էր ժողովրդավարական խնդիրների հենքով կուռ, մանրամասն եւ իրատեսական քաղաքական ծրագիր, կազմակերպական հստակ կառույց ունեցող կազմակերպություն: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն 1988-ի օգոստոսին 19-ին հրապարակեց այդ Ծրագիրը՝ ինքը հանդես գալով որպես Ղարաբաղյան շարժման հիմքի վրա ստեղծվող կազմակերպության՝ նախաձեռնող խումբ: Շարժման կազմակերպական կառույցի համար ընտրվեց **Հայոց համազգային շարժում** (ՀՀՇ) անունը:

2. Ձեւական առումով ամբողջությամբ տեղավորվելով հանդերձ սահմանադրականության եւ «Վերակառուցման» հռչակած կարգախոսների շրջանակներում, Շարժման Ծրագիրը ժողովրդավարական լայն եւ արմատական վերափոխումների խնդիրներ էր արձանագրում: Որպես քաղաքական ծրագիր այն աննախադեպ էր ԽՍՀՄ պատմության մեջ ոչ միայն իշխող համակարգի հիմքերի դեմ ուղղված լինելու, այլ նաեւ ամենօրյա հրապարակային պայքարում հարյուրհազարավոր հետեւորդներ ունենալու հանգամանքներով: Ծրագիրը հենվում էր նոր արժեքային համակարգի վրա, որտեղ գերագույն նպատակը երկրի քաղաքացու ազատությունն էր,

[647] *Նույն տեղում:*

արժանապատիվ կյանքի ապահովումը, իսկ դրա միջոցը՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ ինքնիշխանությունը: ՀՀՇ Ծրագիրը արմատական ժողովրդավարական վերափոխումների միջոցով քաղաքական անկախության տանող ծրագիր էր: Շարժման կազմակերպական կառույցին անդամագրության պարզ եւ ժողովրդավարական ձեւը հնարավորություն տվեց, որ արագորեն նրան անդամագրվեն հազարավոր կոլեկտիվներ, հարյուր հազարավոր անդամներով:

3. ՀՀՇ Ծրագիրը քաղաքական մարտահրավեր էր ոչ միայն իշխող համակարգին: Սեփական ուժերին ապավինելու եւ ըստ այդմ քայլեր կատարելու, քաղաքական իրատեսությամբ առաջնորդվելու, «մշտական բարեկամի» եւ «մշտական թշնամու» գաղափարները մերժելու, հարեւանների հետ խաղաղ գոյակցության եւ նմանօրինակ այլ հիմնադրույթներով Ծրագիրը նույնպիսի մարտահրավեր էր հայ հասարակական-քաղաքական մտքի ավանդական կարծրատիպերին, ժամանակի ընթացքում սրբագործված կեղծ քաղաքական հասկացություններին, պատկերացումներին ու կաղապարներին: Այն հակադրվում էր նաեւ հայ իրականության մեջ քաղաքական գործունեության ավանդական գործելակերպին: Ոչ միայն վերջին հարյուրամյակում, այլ նաեւ դրան նախորդած դարերում հայ ժողովրդի ազատությանը միտված որեւէ քաղաքական ծրագիր եթե կազմվել էր, ապա դա, որպես կանոն, եղել է Հայաստանից դուրս, առանց նրա ժողովրդի հնարավորությունների հաշվառման եւ նրա կամքից անկախ: Այդօրինակ բոլոր ծրագրերում Հայաստանն ու նրա ժողովուրդը դիտվել էին ավելի շատ որպես օբյեկտ, որպես պասիվ միավոր, խիստ սահմանափակ գործառույթով, իսկ հիմնական դերը վերապահվել էր արտաքին կամ երրորդ մի ուժի: Առաջին անգամ Հայաստանի ժողովուրդն ինքն էր դուրս եկել իր ապագայի համար պայքարի, իր հողի վրա եւ իր կազմած սեփական ծրագրով, եւ ըստ այդ ծրագրի՝ ինքն էր լինելու դրա իրականացման դերակատարն ու երաշխավորը: ՀՀՇ Ծրագիրը զերծ էր կործանարար քաղաքական ռոմանտիզմից եւ առաջադրում էր խնդիրներ ու նպատակներ, որոնք լուծելի էին Հայաստանի ժողովրդի ուժերով: Ծրագիրը նոր էր իր փիլիսոփայությամբ. չմերժելով անցյալը եւ դրանից ժառանգված խնդիրները՝ նրա քաղաքական օրակարգը ձեւավորված էր ոչ թե նախորդ սերունդների չլուծած խնդիրների կուտակումով, այլ ուղղված էր ներկային, ներկայի իրողությունները եւ խնդիրների լուծելիությունը նկատի ունենալով:

4. Հիմքում ժողովրդավարական խնդիրների լուծման ճանապարհով անկախ պետականության հասնելու առանցքագաղափար ունեցող Ծրագրի դեմ, բնականաբար, դուրս էին գալու ուժեր, որոնք իրենց սոցիալական

դիրքի բերումով կենսականորեն շահագրգռված էին իշխող համակարգի պահպանմամբ, եւ ուժեր, որոնք կենսականորեն շահագրգռված էին ավանդական պատկերացումների պահպանմամբ: Առաջինը Կոմունիստական կուսակցությունն էր՝ Սահմանադրության եւ օրենքների ուժով ժողովրդին պարտադրված մենիշխանությամբ՝ որպես սոցիալական հենարան ունենալով մակաբույծ պաշտոնեությունը, նոմենկլատուրային մտավորականության նեղ շերտը եւ համակարգին հարմարված, որեւէ փոփոխության հակառակորդ քաղաքենիությունը: Երկրորդը Սփյուռքում գործող, հայության վրա ընդհանրապես մենիշխանության իրավունքի հավակնություն ունեցող կուսակցություններն էին, որոնց հայդատական գաղափարախոսությունն ու «ծրագրերը» հենվում էին ԽՍՀՄ պահպանման պարտադիր պայմանի վրա: Որպես Շարժման՝ որակապես նոր փուլի անցման եւ Ծրագրի հրապարակման անմիջական հետեւանք՝ նրա դեմ, կենտրոնական հանրապետական իշխանության կողքին, հայդատականության հիմքի վրա ձեւավորվեց գաղափարախոսական երկու ճակատ՝ Հայաստանում՝ ի դեմս նոմենկլատուրային մտավորականության, Սփյուռքում՝ ի դեմս ավանդական կուսակցությունների:

5. Այն սպասումը եւ հույսը, թե Սփյուռքը ջանադիր գործողությունների կդիմի սատար կանգնելու Շարժմանը, ինչպես Հայաստանը՝ Լեռնային Ղարաբաղին, չիրականացավ: Սփյուռքյան երեք կուսակցությունները տեւական մի շրջան լռելուց հետո, ի վերջո, ամիսներ անց հանդես եկան Շարժման գործելակերպը դատապարտող եւ կոմունիստական իշխանություններին պաշտպանող հայտարարությամբ: Այս վարքագիծը պայմանավորված էր մինչ այդ խորհրդային իշխանությունների հետ արդեն ունեցած կապերով ու պարտավորություններով, հավակնոտ ինքնապատկերացմամբ, Հայաստանի ժողովրդի ու նրա ունակությունների նկատմամբ քամահրական վերաբերմունքով, Շարժման ու նրա Ծրագրի հետ ունեցած գաղափարական հակադրությամբ: Կուսակցությունների ազդեցությունների ոլորտից դուրս գտնվող սփյուռքյան կազմակերպությունները, բազմաթիվ անհատներ ամենաջերմ վերաբերմունքն ունեին Ղարաբաղյան շարժման նկատմամբ եւ կարեւոր նպաստ բերեցին միջազգային ասպարեզում Շարժման հանդեպ բարենպաստ հասարակական կարծիք ձեւավորելու գործում:

6. Հայաստանի իշխանությունների անգործության պայմաններում, դիմագրավելու համար Լեռնային Ղարաբաղում ժողովրդագրական իրավիճակը կտրուկ փոփոխելու նպատակով կենտրոնական իշխանության հովանավորությամբ Ադրբեջանի սկսած լայնածավալ նախաձեռնությունները, Շարժումը ստիպված էր գործնական բազմաթիվ միջոցների դիմել՝

սկսած Լեռնային Ղարաբաղին բազմաբնույթ օգնության ցուցաբերման միջոցառումներից, սահմանամերձ շրջանների պաշտպանության նախապատրաստություններից մինչեւ փախստականների տեղավորման, ազգամիջյան հարաբերությունների սրում թույլ չտալու ու բազմաթիվ այլ խնդիրներ: Հստակ եւ արդյունավետ աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում ստեղծվեց փաստական երկիշխանության իրավիճակ, ինչն արագորեն խորանում էր՝ իշխանության մարմինների ձեւական եւ «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորած Շարժման իրական իշխանության ձեռքբերման ուղղությամբ:

7. Հայկական ժողովրդավարական շարժումը շարունակում էր արձանագրել Խորհրդային Միության ողջ քաղաքական պատմության մեջ աննախընթաց փաստեր: Մասնավորապես՝ 1988թ. աշնանը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի թափուր մնացած պատգամավորական տեղերում Շարժումը կարողացավ ապահովել իր թեկնածուների առաջադրումը եւ հաղթանակը: Հակառակ իշխանության արգելքի՝ Շարժումը կարողացավ ինքնուրույն հրավիրել Գերագույն խորհրդի նիստը, սահմանել դրա օրակարգը եւ ընդունել իր ցանկացած որոշումները: Սրանք ԽՍՀՄ պատմության մեջ անանախադեպ երեւույթներ էին՝ կոմկուսի քաղաքական պարտություններ եւ համակարգի հիմքերում բացված հերթական վտանգավոր ճեղքեր, եւ այդ ամենը՝ առանց օրենքի եւ օրինականության խախտման:

8. Հայկական ժողովրդավարական շարժումն ապացուցեց, որ համաժողովրդական պայքարի քաղաքականորեն գրագետ կազմակերպման եւ ղեկավարման դեպքում Կենտրոնը ստիպված է լինում նահանջել եւ զիջումներ անել: Հայկական ժողովրդավարական շարժումն ապացուցեց, որ կարելի է նաեւ խուսափել կենտրոնական իշխանության բռնի ուժի լայնամասշտաբ գործադրումից, բացահայտեց վերջինիս արդյունավետ հակազդեցության ձեւերն ու միջոցները: Այս ամենը կարեւոր կողմնորոշող եւ ոգեւորող հիմք էր, արժեքավոր փորձ՝ կայսրությունում կամ նրա ազդեցության ոլորտներում ապրող ժողովուրդների՝ ազատության համար մղվող պայքարի համար:

9. 1988 թվականի առաջին կեսին, փաստորեն, միայնակ վարելով խորհրդային բռնատիրության դեմ ժողովրդավարական պայքարը, Հայկական ժողովրդավարական շարժումը հետագայում էլ շարունակում էր մնալ ԽՍՀՄ-ում ծավալված ժողովրդավարական շարժումների մեջ առաջատարը, յուրատեսակ օրենսդիրը: Հայաստանի ժողովրդավարական շարժումը 1988 թվականի ամբողջ ընթացքում ԽՍՀՄ-ում եւ Արեւելյան Եւրոպայում ծավալված ժողովրդավարական շարժումների մեջ ամենահզորն էր եւ արմատականը: Հայկական Շարժումը չգնաց իշխանությունների հետ համաձայնության

ճանապարհով, ինչպես լեհական «Սոլիդարնոստը», իր օրակարգը չսահմանափակեց իրավական պետություն ստեղծելու խնդիրներով, ինչպես Մերձբալթյան երկրների շարժումները, նաեւ չշտապեց անմիջապես անկախության խնդիր բարձրացնել, ինչպես արեց Վրաստանը: Հայկական Շարժումը մնաց որպես համընդհանուր ժողովրդավարական վերափոխումների համալիրի համար պայքարող ուժ՝ դրա վրա խարսխելով ու դրա մաս նկատելով ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ անկախության հասնելու խնդիրները: Կազմակերպվածության բարձր մակարդակով, պայքարի օրինական եւ արդյունավետ մեթոդներով, առաջադրած ու լուծած խնդիրների արմատականությամբ ու ժողովրդավարական բնույթով նա բացառիկ հեղինակություն ուներ, օրինակ էր ԽՍՀՄ եւ սոցիալիստական ճամբարի ժողովրդավարական շարժումների համար՝ շարունակելով մնալ նաեւ միջազգային հանրության սեւեռուն ուշադրության կենտրոնում ու նրա համակրանքի առարկան:

10. Խորհրդային իշխանության ողջ պատմության ընթացքում իրական իշխանությունը միշտ պատկանել է Կոմունիստական կուսակցության մարմիններին: Իշխանության սահմանադրական մարմինները՝ «խորհուրդները», բոլոր մակարդակներում եղել են նրա կցորդը եւ բացարձակապես զուրկ որեւէ որոշում կայացնելու իրավունքից: Դա էր կոմունիստական բռնապետական վարչակարգի հիմքը, բայց նաեւ յուրատեսակ «Աքիլլեսյան գարշապարը»: Ղարաբաղյան Շարժումն առաջինը սկսեց իշխանության սահմանադրական մարմինները աշխատեցնելու, նրանց իրենց լիազորությունները վերադարձնելու գործը: Կուսակցական մարմինները շրջանցելով խորհրդային իշխանության մարմիններն աշխատեցնելը, ընտրողների պատվիրանների հիման վրա որոշումներ կայացնելը, այլ խոսքով՝ նրանց իրական իշխանության մարմիններ դարձնելը Ղարաբաղյան շարժման հիմնական գործելակերպն էր, սահմանադրական պայքարի էությունը, միջոցը եւ քաղաքական վաստակը: Այս գործընթացը քիչ անց տարածվեց ամբողջ Խորհրդային Միությունով մեկ, այնքան, որ 1988-ի վերջին կատարվեցին համապատասխան Սահմանադրական փոփոխություններ, եւ ԽՍՀՄ առաջին պաշտոնը շուտով դարձավ ոչ թե Կոմունիստական կուսակցության ղեկավարի, այլ Գերագույն խորհրդի՝ իշխանության սահմանադրական մարմնի նախագահի պոստը: Խորհրդային կուսակցապետությունը, որպես համակարգ, դրանով ստացավ հերթական ծանր հարվածը:

11. Օգտվելով Հայաստանին պատուհասած հզոր երկրաշարժի ստեղծած խառնաշփոթ իրավիճակից, իշխանությունները որոշում կայացրին վճռական հակահարձակման անցնել եւ գլխատել Շարժումը: «Ղարաբաղ» կոմիտեն

շինծու մեղադրանքներով ձերբակալվեց եւ վեց ամիս պահվեց անազատության մեջ: Անազատության մեջ հայտնվեցին Շարժման տասնյակ այլ ակտիվիստներ: Չնայած հնարավոր ամեն տեսակի ճնշումներին, բռնություններին եւ քարոզչական ահաբեկչությանը՝ Շարժումը տեղի չտվեց: Կարճ ժամանակում, «Ղարաբաղ» կոմիտեի փոխարինող կազմի ղեկավարությամբ, հնարավոր եղավ ոչ միայն դիմակայել բռնություններին, այլեւ չեզոքացնել իշխանական քարոզչամեքենայի բուռն հարձակումները, միջազգային հուժկու շարժում ստեղծել ի պաշտպանություն Շարժման առաջնորդների: Մայիսի վերջին կենտրոնական իշխանությունը, տեղի տալով Շարժման, Խորհրդային Միության ժողովրդավարական ուժերի ու միջազգային հանրության բազմակողմանի ճնշումներին, Կոմիտեի անդամներին ազատ արձակեց:

12. Կոմիտեի ձերբակալումը եւ ազատազրկումը անհավասար մի գոտեմարտ էր Հայկական ժողովրդավարական շարժման եւ Մոսկվայի միջեւ, որ տեւեց վեց ամիս: Կոմիտեն ճիշտ էր հաշվարկել Շարժման ուժերն ու ռեսուրսները՝ 1988-ի ամռանը մտնելով ողջ խորհրդային համակարգին քաղաքական ընդդիմություն դառնալու վտանգավոր բեռի տակ: Այդ ռեսուրսները երեքն էին. **ա)** ժողովրդավարական պայքարի առաջամարտիկը լինելով՝ բազմապատկվել էր ԽՍՀՄ ժողովրդավարական շարժումների, ուժերի եւ գործիչների համակրանքը: **բ)** Նույն հանգամանքով բազմապատկվել էր միջազգային հանրության համակրանքն ու պաշտպանությունը: **գ)** Հաջողվել էր բարձրացնել Շարժման կազմակերպվածության ու քաղաքական պատրաստվածության մակարդակը, պայքարունակությունը: Հայկական ժողովրդավարական շարժման եւ խորհրդային կենտրոնական իշխանության վեցամսյա անհավասար գոտեմարտն ավարտվեց Շարժման հաղթանակով:

13. Կոմիտեի անդամների ձերբակալումը, որ որոշակի զգուշավորություն էր թելադրել ժողովրդավարական մյուս շարժումներին, նրանց ազատ արձակումը, ընդհակառակը՝ տասնապատկեց նրանց համարձակությունը: Ըստ այդմ՝ եթե հաջողվեր տեւական ժամանակ անազատության մեջ պահել Կոմիտեին, հաստատ էականորեն այլ ճանապարհով կընթանային հաջորդ տարիների իրադարձությունները: Այսինքն՝ դա, ըստ էության, որակական մի ջրբաժան էր, որից հետո ԽՍՀՄ-ի՝ որպես համակարգի պահպանումը կտրուկ դժվարանում էր: Կոմունիստական իշխանությունը ծանր սայթաքեց Հայկական շարժման եւ «Ղարաբաղ» կոմիտեի վրա, ինչը եւ ճակատագրական եղավ նրա համար:

Երրորդ բաժին

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՑՔԱԳԱՂԱՓԱՐ

1. ՓԱՍՏԱԿԱՆ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ա) Իշխանության նոր մարտավարության հիմքերը, հանրահավաքների արտոնումը

Եթե «Ղարաբաղ» կոմիտեն մայիսի վերջին ազատ արձակվեց, հասկանալի է, որ այդ մասին քաղաքական որոշումը կայացվել էր դրանից առնվազն մի քանի շաբաթ առաջ: Սկզբունքային որոշումը, թերեւս, կայացվել է ապրիլի վերջին տասնօրյակում, երբ նաեւ կալանավորվածներից երկու հոգու՝ Ալեքսան Հակոբյանին եւ Խաչիկ Ստամբոլցյանին ազատ արձակեցին՝ խափանման միջոցը փոխելով: Իշխանություններն, անշուշտ, հասկանում էին, որ Շարժումը Կոմիտեի ազատումն իրավացիորեն համարելու է իր կարեւոր հաղթանակը, դառնալու է ավելի անկաշկանդ եւ բորբոքվելու է նոր ուժով, իսկ «Ղարաբաղ» կոմիտեն այն գլխավորելու է արդեն բազմապատկված հեղինակությամբ: Չէին կարող չհասկանալ նաեւ, որ իրենց այդ նահանջը ընկալվելու է որպես թուլության նշան եւ, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Արեւելյան Եւրոպայում ոգեւորող նշանակություն է ունենալու ժողովրդավարական մյուս շարժումների համար, մեծացնելու է նրանց ինքնավստահությունը եւ պայքարի ինտենսիվությունը[648]: Սա նշանակում էր, որ **Կենտրոնի՝ Կոմիտեին անազատության մեջ պահելու պատճառները բազմապատկվել էին նրանց ազատազրկման պահի համեմատությամբ**: Եւ, այդուամենայնիվ, Կենտրոնը ստիպված եղավ կայացնել նրանց ազատ արձակելու քաղաքական որոշումը: Սա էլ, իր հերթին, վկայում է, թե որքան հուժկու ու անշրջանցելի են եղել Մոսկվայի վրա կատարված ճնշումները, որոնց, թերեւս, ոչ բոլոր դրսեւորումներն են եղել հրապարակային:

---

[648] *Նման նահանջի առարկայական դրսեւորումների թողած ոգեշնչող ազդեցությունը ծանոթ էր Շարժմանը. տասնյակ անգամներ էր եղել, երբ լրիվ հանդերձավորված պատժիչ զորքի հոծ շարքերը եւ ցուցարարների նույնպիսի անզեն շարքերը դեմ դիմաց էին հայտնվել Ազատության հրապարակում, Մատենադարանի մոտ, այլ տեղերում, եւ վերջին պահին զորքը նահանջել էր:*

Երբ այլեւս անխուսափելի դարձավ «Ղարաբաղ» կոմիտեի վերադարձը, եւ, դրա հետ կապված, նույնքան անխուսափելի՝ Շարժման նոր վերելքը, իշխանությունները ստիպված էին լրջորեն նախապատրաստվել Հայաստանում այդ վերելքը թույլ չտալու կամ դրա ազդեցությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ: Ընդ որում՝ այդ նախապատրաստությունների մեջ, հասկանալի պատճառով, արդեն առաջնային դեր չէին կարող խաղալ բացահայտ ուժային մեթոդներն ու հետապնդումները, այն պարզ պատճառով, որ դրանք նախորդ վեց ամիսներին հակառակ արդյունք էին տվել:

Եթե իշխանությունը ստիպված էր հրաժարվել Շարժման դեմ կոշտ ուժային միջոցների գործադրումից, ուրեմն պետք է ընտրեր երկրորդ՝ նրա դեմ քաղաքական հարթության վրա պայքարելու ճանապարհը: Խնդիրը հասարակական վստահություն շահելն էր կամ Կոմիտեի, Շարժման նկատմամբ եղած հասարակական վստահությունը խաթարելը, նվազեցնելը: Սակայն այս դեպքում էլ պետք էր նկատի ունենալ նաեւ շատ կարեւոր մի հանգամանք. նախորդ վեց ամիսների ընթացքում հաղթողի եւ դատապարտողի կեցվածք ընդունելու, բազմաթիվ հետապնդումներ եւ բռնություններ իրականացնելու հետեւանքով հանրապետության ղեկավարությունն, իր առաջին դեմքերով հանդերձ, էլ ավելի էր հեղինակազրկվել, դարձել համընդհանուր ատելության առարկա: Այդ վերաբերմունքն իր բարձրակետին էր հասել հատկապես Ժողովրդական պատգամավորների ընտրությունների ժամանակ իշխանական մարմինների թույլ տված բացահայտ ու ցինիկ ընտրախախտումների հետեւանքով:

Շարժմանը հակազդել կարողանալու համար կա՛մ պետք էր փոխել հանրապետության առաջին դեմքին (ինչպես դա արվեց 1988-ի մայիսին) ու հանդես գալ «նոր իշխանության» կերպարով, կա՛մ կրկին փորձել նրա համար նոր կերպար, նոր վարկանիշ ստեղծել: Կենտրոնն ընտրեց երկրորդ տարբերակը: Հաջորդող իրադարձություններից հետահայաց նայելով՝ կարելի է մակաբերել այս խնդրով ընդունված քաղաքական որոշման էությունը, որ հանգում էր հետեւյալին. երեւութապես ընդունել Շարժմանը համընթաց կեցվածք, ընդհուպ որդեգրել Շարժման օրակարգում եղած խնդիրները, դրանցից մեկ-երկուսը ինքնուրույն լուծելով՝ փորձել հաճոյանալ ժողովրդին, որոշակի միջոցառումներով ձեռք բերել «հույժ ազգային» դիմագիծ, անմիջականորեն կամ դրածոների միջոցով վերցնել նախաձեռնությունը եւ Շարժումը տանել իրենց համար ցանկալի, անվտանգ հունով, կամ գոնե պառակտել եւ թուլացնել այն: Համենայնդեպս, այս են հուշում իշխանության վարքագծում կտրուկ փոփոխությունները եւ դրանց ուղղվածությունը,

որ հստակ դրսեւորվեցին թե՛ նրա նախաձեռնություններում, թե՛ նրա կողմից ամբողջությամբ վերահսկվող մամուլում: Ընդ որում՝ այդ փոփոխություններով կարելի է վերականգնել համապատասխան քաղաքական որոշման ընդունման անգամ մեկնարկի պահը, ինչպես նաեւ այն միջոցառումները, որոնք նախատեսվել եւ մշակվել էին սույն խնդիրն իրականացնելու համար:

Ըստ երեւույթին, քաղաքական որոշման կատարման մեկնարկը տրվել է մայիսմեկյան երթի եւ հանրահավաքի հաջորդ օրերին, թերեւս՝ մայիսի 3-4-ին: Կարծես թե դրանով է բացատրվում, մի կողմից՝ մայիսմեկյան հանրահավաքից հետո իշխանության կողմից տրված սպառնալիքը (զինվորական պարետի բերանով) մայիսի 6-ին նշանակված հանրահավաքի կայացման դեպքում ուժ գործադրելու մասին, մյուս կողմից՝ դրան անհարիր հետագա քայլերը: Ինչպես արդեն ասվեց, հանրահավաքը գումարվեց, եւ դրա դեմ ոչ թե ուժ գործադրվեց, այլ իշխանությունները խոստացան այդուհետեւ պարբերաբար հանրահավաքների թույլտվություններ տալ: ՀԿԿ պաշտոնաթերթը նույն օրը ՀԿԿ ԿԿ-ի անդամ Հայկ Քոթանջյանի ստորագրությամբ սուր քննադատական հոդված տպագրեց Երեւանի քաղաքային իշխանությունների հասցեին՝ նրանց մեղադրելով այն բանում, որ անհրաժեշտ ճկունություն չէին հանդես բերել եւ չէին արտոնել մայիսմեկյան հանրահավաքը՝ դրանով իսկ «հարվածելով Հայկոմկուսի հեղինակությանը»[649]: Հոդվածը խիստ դրական էր գնահատում մայիսմեկյան հանրահավաքն ամբողջությամբ, ընդունում դրանում արծարծված հարցերի կարեւորությունը եւ «քաղաքական երկկողմանի կուլտուրայի անհրաժեշտության» կոչ էր անում[650]:

Մինչ այդ այս հանրահավաքին ընդհանուր առմամբ դրական արձագանքով հարկ էին համարել անդրադառնալ նաեւ կենտրոնական թերթերը[651]: Շարժման նկատմամբ նոր մարտավարության, Հայաստանի իշխանությունների՝ նոր կերպարի մեջ մտնելու քաղաքական որոշումը կայացվել էր

---

649 *Իրականում քաղաքային իշխանությունները չէին կարող նման հարց որոշել առանց ՀԿԿ ԿԿ-ի հետ համաձայնեցնելու: Իսկ այս հոդվածի հեղինակի ընտրությունը պատահական չէր: Հայկ Քոթանջյանը «նախկին» ղեկավարության օրոք կուսակցական վերնախավում դիտվում էր որպես «այլախոհ», մասնավորապես՝ հայտնի էր նրա պայքարը Կ. Դեմիրճյանի դեմ: Որպես այդպիսին էլ նրա անունը կարող էր որոշ վստահություն ներշնչել եւ անաչառության պատրանք ստեղծել:*

650 *«Խորհրդային Հայաստան», 06.05.1989 (1989թ. ապրիլի 14-ից այսպես սկսեց կոչվել «Սովետական Հայաստան» թերթը, քանի որ «սովետական»-ի փոխարեն մտցվեց «խորհրդային» հայերեն բառը):*

651 *Տե՛ս «Известия» 02.05.1989.*

կա՛մ Մոսկվայում, կա՛մ նրա հետ համատեղ, կա՛մ նրա գիտությամբ: Ահա այս որոշման մաս է կազմել, ավելի ճիշտ՝ դրա հիմքում եղել է «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատելու քաղաքական որոշումը, կամ՝ այդ հեռանկարի հետ համակերպվելը: Այսինքն՝ նույն քաղաքական որոշմամբ հանրապետության ղեկավարության առջեւ դրվել է հետեւյալ խնդիրը. բռնության միջոցները Շարժման դեմ դադարում են հիմնականը լինելուց, իշխանությունն այսպես թե այնպես պարտադրված է Շարժումը համարել քաղաքական պարտնյոր եւ նրա դեմ պայքարը շարունակել հիմնականում քաղաքական հարթության վրա: Իսկ դրա համար հանրապետության իշխանությունը պետք է կարողանար հասարակական պատկերացումներում փոխել իր կերպարը՝ հնարավորինս ձերբազատվելով բռնությունների կիրառման ամիսներին իր դեմ կուտակված համընդհանուր ատելության եւ արգահատանքի բեռից: Այնպես որ, մայիսի 6-ին Շարժման ղեկավարների հետ հանրահավաքների հարցում ձեռք բերված համաձայնությունը իշխանությունն, իր հերթին, փորձ արեց ներկայացնել որպես իր կողմից բարեհաճության եւ քաղաքական երկխոսության պատրաստակամության ապացույց եւ գրավական:

Թեեւ մայիսի 11-ի հանրահավաքի համար իշխանության նախատեսած պլանն ու ծրագիրն ամբողջությամբ ձախողվեց, այդուամենայնիվ, մամուլով տարածվեց հանգամանալից եւ դրական շեշտադրումներով ընդարձակ մի հաղորդագրություն, որտեղ հանրահավաքում բարձրացված խնդիրներին՝ Ղարաբաղի, բնապահպանության, զանգվածային թունավորումների հետեւանքների եւ այլ հարցերին տրված գնահատականները համարվեցին արդարացի եւ առաջնահերթ լուծում պահանջող[652]: Հաղորդագրության մեջ ոչինչ չէր ասվում միայն հանրահավաքում քննարկված եւ հասարակությանը հուզող հիմնական խնդրի՝ «Ղարաբաղ» կոմիտեին կալանքից ազատելու հարցի մասին: Դրա հեղինակ եւ նախաձեռնող լինելու պատիվը թողնված էր հանրապետության առաջին դեմքի համար, ինչը եւ նա արեց մի քանի օր անց:

Այդ օրերին մամուլում անգամ քննադատական շեշտադրումներով ելույթներ հրապարակվեցին (մինչ այդ նույն մամուլով լայնորեն գովերգված) այնպիսի մի կարեւոր միջոցառման դեմ, ինչպիսին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունն էր[653]:

Շարժման մասին տեղեկատվություն հաղորդելու, ինչպես նաեւ սեփական հակաժողովրդավարական վարքագծի ու քայլերի մասին մամուլում

[652] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 13.05.1989:*

[653] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12.05.1989; 13.05.1989:*

հանդես գալու «ինքնաքննադատական» այս նախաձեռնությունը տեւեց մի քանի օր եւ, որպես այդպիսին, շարունակություն չունեցավ: Հավանաբար՝ դրանք այն մի քանի օրերն էին, երբ քաղաքական որոշման կայացումից հետո Մոսկվայից դեռ տեղ չէին հասել պարզաբանող եւ սահմանափակող շրջանակներ գծող համապատասխան հրահանգները: Ակնհայտ էր, որ որոշումը կայացվել էր ցայտնոտի մեջ, հապճեպ ու անկազմակերպ: Եւ, այնուամենայնիվ, սա սկիզբն էր, սկիզբը Հայաստանի կոմկուսի՝ հերթական անգամ նոր կերպարի մեջ մտնելու մարտավարության, որը թելադրված էր ստեղծված իրավիճակով, սպասվող իրադարձություններով եւ զարգացումներով: Այդ նոր կերպարի մեջ մտնելու հիմունքները պաշտոնապես ներկայացվեցին կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի՝ մայիսի 24-ին հրապարակված ընդարձակ հարցազրույցում[654]:

բ) Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի ճանաչումը

Հաջորդ քայլն, առաջին հայացքից, ավելի անսպասելի էր եւ իր վրա ավելի հստակ էր կրում ծայրահեղ հապշտապության կնիքը: Ընդամենը մեկ տարի առաջ Մայիսի 28-ի հիշատակումը կամ Եռագույն դրոշի՝ առաջին անգամ հայտնվելը Ազատության հրապարակում մեծ իրարանցում եւ անհանգստություն էր առաջացրել: Հետագայում էլ դրա երեւալը հանրահավաքներում եւ երթերում հատուկ արձանագրվում էր պետանվտանգության եւ ՆԳՆ-ի զեկուցագրերում որպես արտառոց երեւույթ: Բայց նմանօրինակ խնդիրներ արդեն Խորհրդային Միության մի քանի հանրապետություններ լուծել էին: Վրաստանի, Մերձբալթյան երկրների իշխանության մարմինները որոշումներ էին ընդունել ոչ միայն իրենց պետականության վերականգնման օրերը տոնելու եւ ազգային դրոշների, այլեւ հողի եւ ընդերքի նկատմամբ սեփականության իրենց իրավունքի, հանրապետական քաղաքացիության, արտաքին քաղաքականության բնագավառում հանրապետությունների լիազորությունների ընդլայնման մասին եւ այլն: Այնպես որ ՀԽՍՀ իշխանությունն այս հարցում առաջինը լինելու դժվարությունը չուներ:

Մայիսի 28-ը՝ որպես Հայաստանի անկախության վերականգնման օր, եւ Եռագույն դրոշը՝ որպես ազգային խորհրդանիշ ճանաչելու խնդիրն արձանագրված էր 1988-ի օգոստոսին հրապարակված ՀՀՇ Ծրագրի «մոտակա նպատակները» բաժնում: Հանրահավաքներում, մասնավորապես, մայիսյան հանրահավաքներում, հետեւողականորեն դրվում էին նաեւ այդ

[654] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24.05.1989:*

հարցերը, որոնց լուծումը Շարժումը պետք է համարեր իր ծրագրային երկու կարեւոր խնդիրների իրականացում: Մոտեցող անկախության օրվա տարեդարձը լրացուցիչ ազդակ էր դառնալու այս պահանջներն իշխանության առջեւ ավելի համառորեն դնելու համար, եւ վերջինս ստիպված էր լինելու տեղի տալ: Իշխանությունը գերադասեց վերցնել նախաձեռնությունը, ինքնուրույն կատարել այդ քայլը եւ այն ներկայացնել որպես «անցյալի սխալներից ձերբազատվելու», «պատմությունը վերարժեւորելու» իր կարողությունից բխող քայլ, որպես իր նոր համոզմունքների եւ կերպարափոխության ապացույց:

Պաշտոնական վարկածը ներկայացրեց ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարը՝ այն կապելով դեռ նախորդ տարվա սեպտեմբերյան պլենումի հետ, հիշեցնելով, որ դրանում «ընդգծվեց հայ ժողովրդի պատմության մի շարք իրադարձությունների վերաիմաստավորման անհրաժեշտությունը», որոնցից է, ահա, մայիսի 28-ի՝ անկախության օրվա վերականգնման եւ Եռագույն դրոշի ընդունման հարցը[655]: Մինչդեռ գլխապտույտ ու ռեկորդային արագությամբ իրականացված միջոցառումները ցույց են տալիս, որ այս քայլը սեպտեմբերյան պլենումի ընդունած որոշումների հետ որեւէ կապ չունի, ավելին՝ այն ընդհուպ մինչեւ վերջին պահը չէր անցել իշխանությունների մտքով: Միջոցառումը սկսվել էր միայն մայիսի 22-ին եւ իրականացվել սուր ցայտնոտի մեջ, շնչակտուր՝ միջոցառումների ժամկետային հետեւյալ տպավորիչ հաջորդականությամբ. ՀԿԿ Կենտկոմը, «Հաշվի առնելով հայ ժողովրդի պետականության վերականգնման տարեթվի հարցի քաղաքական եւ գիտական հրատապությունը որոշում է

Մայիսի 22-ին. հանձնարարում է կուսակցության կենտկոմի գաղափարախոսական հանձնաժողովին՝ «ուսումնասիրել Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի հարցը եւ համապատասխան առաջարկություններ ներկայացնել կենտկոմ՝ հարցը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը մտցնելու համար»[656]:

Մայիսի 22 – Հանձնարարում է Գիտությունների Ակադեմիային եւ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղին՝ գիտական նստաշրջան կազմակերպել Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի թեմայով եւ նախապատրաստել դրանց պաշտոնական ճանաչման հարցը[657]:

[655] *Տե՛ս նույն տեղում:*
[656] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.05.1989:*
[657] *Նույն տեղում:*

Մայիսի 23-25 – Գիտությունների ակադեմիան, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, Պետական համալսարանը եւ կենտկոմի գաղափարախոսական բաժինը, ընդամենը երեք օրվա ընթացքում, «ներգրավելով գիտական լայն հասարակայնությանը, համակողմանի ուսումնասիրում են հարցը»:

Մայիսի 26 – մեկ օրվա ընթացքում. **ա)** հրավիրվում է համապատասխան «գիտական նստաշրջանը»[658], **բ)** ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսական հանձնաժողովը հասցնում է «հարցն ուսումնասիրել»[659], **գ)** այս երկուսը միասին որոշում են դիմել ՀԿԿ ԿԿ՝ «Մայիսի 28-ը հայ ժողովրդի պետականության վերականգնման օր եւ Եռագույն դրոշը որպես ազգային խորհրդանիշ ընդունելու առաջարկությամբ», **դ)** կենտկոմն էլ, իր հերթին, այս հիմքի վրա դիմում է Գերագույն խորհրդի նախագահություն, **ե)** Գերագույն Խորհրդի նախագահությունն ընդունվում է համապատասխան հրամանագիրը[660]:

Կոմկուսի առաջին քարտուղարն իր վերոհիշյալ՝ մայիսի 24-ի հարցազրույցում հիշեցնում էր նաեւ, որ ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդն օրենք է ընդունել 1915թ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին եւ դիմել է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ՝ պաշտոնական ճանաչման առաջարկությամբ: ՀՀՇ ծրագրում արձանագրված եւ նրա ջանքերով 1988-ի նոյեմբերի 22-ին ժողովրդի հուժկու ճնշման տակ ձեռք բերված, այն ժամանակ չհրապարակված ու լռության մատնված այս որոշումը այժմ վերջապես հրապարակվեց՝ դարձյալ ներկայացվելով որպես իշխանությունների վաստակ եւ «նվաճում»[661]:

գ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակման «դափնիներին» տիրելու հարցը

Կոմիտեի ազատումն ամենակարեւոր եւ ամենահրատապ խնդիրն էր Շարժման համար: Նախաքննական մարմինները չէին կարողացել նրանց

[658] *«Խորհրդային Հայաստան», 28.05.1989: Ընդհանրապես՝ որեւէ թեմայով գիտական նստաշրջանների նախապատրաստումն ու անցկացումը տեւում է մի քանի ամիս:*
[659] *«Խորհրդային Հայաստան», 27.05.1989:*
[660] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 10, հոդվ. 45:*
[661] *Ժամանակին, երբ կայացվեց այս որոշումը, դրան որեւէ կերպ չարձագանքեցին նաեւ այս խնդրի ջատագով «հայդատական» սփյուռքյան կուսակցությունները, քանի որ այն ընդունվել էր իշխանության կամքին հակառակ եւ ՀՀՇ-ի շնորհիվ: Բայց ահա, երբ նույն այդ իշխանության ղեկավարը ընդամենը համարձակվեց խոսել 6 ամիս առաջ կատարված այդ փաստի մասին, դա գնահատվեց որպես Ս. Հարությունյանի կողմից կատարված աննախադեպ մի հերոսություն (տե՛ս «Դրոշակ», 21.06.1989, էջ 4):*

ներկայացված մեղադրանքների համար շատ թե քիչ լուրջ հիմքեր գտնել, եւ, փաստորեն, առկա էր հանցակազմի բացակայությունը: Ճիշտ է՝ ամեն ինչ տեսած խորհրդային արդարադատության համար խնդիր չէր նման հիմքեր հերյուրելը, սակայն Շարժման ջանադիր աշխատանքի շնորհիվ գործը միջազգային ահռելի հնչեղություն էր ստացել եւ միանշանակ գնահատվում էր ինչպես որ կար՝ որպես քաղաքական հետապնդման փաստ: Գլորվող ձնագնդի նման մեծանում եւ լրջանում էին նրանց ազատման պահանջով խորհրդային ղեկավարության վրա թե՛ ներսից, թե՛ դրսից, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ու նշանավոր գործիչների կողմից իրականացվող ճնշումները: Մայիսի 22-ին այդ հարցի առիթով որոշման նախագիծ էր ներկայացվել Եւրոպական խորհրդարան, ինչը եւ ընդունվեց մայիսի 23-ին[662]: Այս ամենի հետեւանքով հարցի լուծումն, ըստ էության, կանխորոշված էր: Եւ որպեսզի դա հենց այդպես չհնչի, չընկալվի որպես Շարժման բացարձակ հաղթանակ, բնական է, որ իշխանությունը պետք է աշխատեր նրանց ազատ արձակման այլ շարժառիթ ներկայացնել, ավելին՝ փորձեր հանդես գալ որպես դրա նախաձեռնող եւ հեղինակ, որպես իր ներողամտության եւ բարի կամքի արտահայտություն:

Հայաստանի կոմկուսի առաջին դեմքը, որ կես տարի առաջ անսահման ատելությամբ կոչ էր անում «խփել նրանց ատամներին», մայիսի 24-ի իր վերոհիշյալ հարցազրույցում գործը ներկայացնում է հետեւյալ կերպ. «Նրանց մեղադրանքներ են ներկայացված: Բայց հաշվի առնելով մի շարք աշխատավորական կոլեկտիվների, երիտասարդության ներկայացուցիչների եւ բնակչության այլ խավերի ցանկությունները, ես դիմել եմ ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարեւին՝ միջնորդելով մարդասիրական մոտեցում ցուցաբերել «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ: Կարծում եմ, որ մոտ օրերս ԽՍՀՄ դատախազությունը կարձագանքի իմ միջնորդությանը»[663]: Հասկանալի է, որ նման «միջնորդությունները» առանց նախնական պայմանավորվածության չէին կարող լինել, առավել եւս այդ մասին հրապարակավ չէր ասվի՝ առանց «միջնորդության» բավարարման հարյուրտոկոսանոց երաշխիքներ ունենալու: Իսկ ավելի հավանական է այն, որ նման միջնորդության նախաձեռնության հրահանգը եկած լիներ հենց Մոսկվայից:

[662] *ՀՀԱՆԱ, 15/23.05.89:*
[663] *«Խորհրդային Հայաստան», 24.05.1989:*

Ընդամենը վեց ամիս առաջ «Ղարաբաղ» կոմիտեին տրված «խիստ սկզբունքային գնահատականների» հախուռն գրոհից («ծայրահեղական», «արկածախնդիր», «իշխանություն տենչացող», «հակառուսական», «կաշառակերների հետ կապված» եւ այլն) հետո հաջորդ ամիսներին մամուլը նրանց մասին լռեց՝ մոռացության մատնելու համար: Այժմ կենտկոմի պաշտոնաթերթը հանկարծ տպագրում է տրամագծորեն հակառակ մի գնահատական՝ հայտնի դերասան Սոս Սարգսյանի բերանով. «Թբիլիսիի ցավալի դեպքերը ցույց տվեցին, թե որքան հեռատես էինք, որ հետ պահեցինք մեզ այդպիսի պատահարներից: Վրացիներն ընդամենը մի քանի օր փողոց դուրս գալով՝ կանգնեցին այդպիսի աղետի առջեւ: Իսկ մենք ամիսներով հարյուր հազարներով փողոցներում գտնվելով, կարողացանք զերծ մնալ դրանից, պրովոկացիայի չենթարկվեցինք: Սրա ամենամեծ ծառայությունը Կոմիտեինն էր: Ես պահանջում եմ, որ Կոմիտեի անդամներն ազատ արձակվեն»[664]: Սոս Սարգսյանի գնահատականն, անշուշտ, օբյեկտիվ էր, որեւէ մեկը չէր կարող վիճարկել, բայց անհասկանալի էր, որ մինչ այդ չէր հնչել եւ գրվում ու հրապարակվում էր հենց այդ ժամանակ, իշխանության բարեհաճ դարձած վերաբերմունքի կոնտեքստում: Այսինքն, Կոմիտեի անխուսափելի վերադարձի նախօրեին ոչ միայն իշխանությունն էր ամեն ինչ անում նոր դեմք ընդունելու, այլեւ իր դաշնակից «ազգային մտավորականներին» էր պարզերես լինելու եւ քաղաքական շահաբաժին հավաքելու հնարավորություն տալիս:

«Ղարաբաղ» կոմիտեի ազատման հարցը ձգվեց եւս մի քանի օր: Չի բացառվում՝ դա արվեց նրա համար, որ Հայաստանից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին եւս հնարավորություն տրվեր «լումա ունենալ» այդ գործում. «Հենց համագումարի առաջին օրերին մեզ հաջողվեց կատարել ժողովրդի պահանջը եւ «Ղարաբաղ» կոմիտեի մեր ազնիվ ընկերներին ազատել բանտից», գրում է Սերո Խանզադյանը Հայաստանից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների անունից[665]:

Ավելի ուշ՝ Կոմիտեի ազատ արձակման դափնիներին փորձ է արել տիրանալ անգամ Դաշնակցությունը. 1992թ. ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հ. Մարուխյանը (Հայաստանից արտաքսվելուց հետո) հայտարարեց, թե «Ղարաբաղ» կոմիտեն ազատ արձակվեց այն բանից հետո, երբ իրենք Լիբանանում Ռուսաստանի դեսպանից սպառնալիքներով պահանջեցին մեկ

[664] *«Խորհրդային Հայաստան», 25.05.1989:*
[665] *«Խորհրդային Հայաստան», 16.06.1989:*

ամսվա ընթացքում ազատել Կոմիտեի անդամներին: Եւ այդ սպառնալիքի շնորհիվ էր, որ «երկու-երեք ամսից հետո «Ղարաբաղ» կոմիտեի անդամները բանտից դուրս եկան»[666]:

դ) Մամուլի դիմափոխությունը

Դեռեւս 1988 թվականի դեկտեմբերի 3-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից փակ որոշում էր ընդունվել՝ «Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ում տպագիր նյութերի եւ ինֆորմացիայի միջոցների վրա ժամանակավոր գրաքննություն մտցնելու մասին»[667]: Այդ որոշմամբ ներկայացող պահանջների եւ հետագա ամիսների հայաստանյան մամուլի նյութերի համեմատությունը ցույց է տալիս, որ գրաքննությունը Հայաստանում իրականացել է շատ ավելի խիստ եւ արմատական, քան որոշման պահանջներն են: Այսինքն՝ հարցը միայն գրաքննությունը խստացնելու մասին միութենական կառավարության որոշումը չէր: Երկրաշարժից եւ Կոմիտեի ձերբակալումից հետո, հատուկ դրության, պարետային ժամի եւ Շարժման հարաբերական անկման պայմաններում, պարզապես, ի հայտ էին գալիս կոմունիստական իշխանությունների իրական բնութագիրը, իրական մտահոգությունները, եւ դրսեւորվում իրական կեցվածքը: Եւ այդ շրջանի մամուլը դա լավագույնս է անդրադարձնում: Իսկ հետագա ամիսների հետ համեմատությունը պարզորոշ ցուցադրում է իշխանության իրական դեմքը սքողելուն ուղղված ճիգերը:

* * *

«Ազգային» թեման մամուլում. դեկտեմբերից մինչեւ մայիս՝ վեց ամսվա ընթացքում, «Սովետական Հայաստան» թերթում, այսպես կոչենք, «ազգային» թեմայով հանդիպում է ընդամենը երկու հրապարակում: Առաջինը ՀՅԴ հիմնադիրներից մեկի՝ Սիմոն Զավարյանի մասին Հովհաննես Թումանյանից, Դանիել Վարուժանից եւ Գրիգոր Զոհրապից բնութագրումների ընդարձակ քաղվածքներ են[668], երկրորդը՝ նշանավոր պատմաբան

[666] *«Երկիր», 06.07.1992:*

[667] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.30 թ. 3-4:*

[668] *Տե՛ս «Սովետական Հայաստան» 29.03.1989: Այս հրապարակման առիթով ՊԱԿ-ի զեկուցագիրն արձանագրում է. «Վերջին տարիներին գիտական-ստեղծագործական մտավորականության մի շարք ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Ս. Կապուտիկյան, Ս. Խանզադյան, Հ. Հովհաննիսյան, Է. Ջրբաշյան, Վ. Պետրոսյան, Գ. Էմին, Ռ. Դավոյան եւ այլն, իրենց հրապարակումներում մեկ անգամ չէ, որ փորձել են արդարացնել դաշնակցական գործիչներին»: Զեկուցագրի հեղինակը նաեւ համարում է, որ այսօրինակ նյութերը կարող են նպաստել հետագայում ընդհանրապես այս կազմակերպության քաղաքական ռեաբիլիտացիային (տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35. թ.113): ՀԿԿ ԿԿ-ն այդ մասին, անշուշտ, գիտեր:*

Նիկողայոս Ադոնցի «Հայկական հարցը» կոչվող աշխատության հայերեն թարգմանության համար Զոն Կիրակոսյանի գրած առաջաբանը[669]: Սրան կարելի է ավելացնել նաեւ մի գործնական քայլ՝ որոշում «Սովետ» բառը հայերեն «Խորհուրդ» բառով փոխարինելու մասին:

Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի մասին կայացված քաղաքական որոշումով մամուլում սկսվում է «ազգային» թեմատիկայի մի իսկական հեղեղ: Ընդ որում, քանի որ այս քայլը խիստ հապճեպ էր կատարվել, գաղափարախոսական նախապատրաստության ժամանակ չէր մնացել, առաջին հոդվածները լույս տեսան հենց Մայիսի 28-ին[670]: Այստեղից սկսած՝ հաջորդ վեց ամիսների ընթացքում «ազգային-հայրենասիրական» թեմաներով (ֆիդայիներ, հերոսամարտեր, հայ ժողովրդի նկատմամբ պատմական անարդարություններ խորհրդային եւ ոչ խորհրդային տարիներին, Ցեղասպանություն, Հայ դատ, պանթուրքիզմի վտանգ, ազգային գործիչներ, պատմության «սպիտակ բծեր եւ այլն), ընդարձակ հոդվածների եւ հրապարակումների թիվն ավելի քան երկու տասնյակ է, այսինքն՝ տասն անգամ ավելի, քան նախորդ վեց ամսվա ընթացքում[671]: Եւ սա դեռ առանց Ղարաբաղի պատմությանը եւ հիմնախնդրին, հայոց լեզվին, 30-40-ական թվականների բռնադատումներին վերաբերող նյութերի, որոնք նույնպես նախորդ ամիսներին չկային, իսկ այժմ մեծ քանակությամբ սկսեցին հրապարակվել:

Ղարաբաղյան թեման մամուլում. Կոմիտեի ձերբակալումից հետո նույն վեց ամիսների ընթացքում մամուլում, փաստորեն, փակվել էր նաեւ ղարաբաղյան թեման՝ ե՛ւ Հայաստանի հետ վերամիավորման քաղաքական հիմնահարցի առումով, ե՛ւ դրա հետ կապված նրա պատմության եւ փաստարկման: Ղարաբաղը երբեմն հիշվում էր, բայց հիշվում էր հենց այնպես,

[669] *«Սովետական Հայաստան» 20.04.1989:*

[670] *«Խորհրդային Հայաստան», 28.05.1989, տպագրվեցին Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Քեռու, Գեւորգ Զաուշի, Մախլուտոյի դիմաքանդակների լուսանկարները:*

[671] *Հիմնականները տե՛ս «Խորհրդային Հայաստան», 01.06.1989; 13.06.1989; 17.06.1989; 18.06.1989; 22.06.1989; 04.07.1989; 15.07.1989; 18.07.1989; 16.08.1989; 03.09.1989; 21.09.1989; 03.10.1989; 18.10.1989; 31.10.1989; 01.11.1989; 14.11.1989; 29.11.1989; 30.11.1989 եւ այլն:*

որ նպաստեր նրա հիմնահարցի փակմանը: Այդ թեմայով հրապարակումները թարգմանություններ էին կենտրոնական մամուլից եւ վերաբերում են Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեին եւ նրա գործունեությանը[672]: Փաստորեն՝ նույն թեմային են վերաբերում նաեւ Հայաստանի կոմկուսի ղեկավար Ս. Հարությունյանի կողմից Ա. Վոլսկուն եւ ԼՂԻՄ-ի մտավորականության պատվիրակությանն ընդունելու մասին հաղորդագրությունները: Պաշտոնական այս տեղեկատվության հետ եւս երկու մելամաղձոտ ու կենցաղային ռեպորտաժ[673] ամբողջացնում են ղարաբաղյան ողջ թեմատիկան մինչեւ մայիս: Այս ամենը նպատակ ուներ համոզել ընթերցողին, որ շուրջ մեկ տարի ողջ հայությանը հուզած հիմնահարցն այլեւս չկա, այն, ըստ էության, լուծված է Կենտրոնի ընդունած որոշումներով: Ո՛չ մի պատմական անարդարություն, ո՛չ մի ինքնորոշում, ո՛չ մի «միացում»:

Ղարաբաղում վերսկսված գործադուլների մասին համառոտ հաղորդագրություններով եւ մայիսի 10-ին «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ» «Պրավդայի» հրապարակումով[674] փակվում է այս շրջանը: Հաջորդ օրերի մի քանի հրապարակումներ եւ հաղորդագրություններ վերաբերում են Հայաստանի շինարարների եւ գրահրատարակիչների ցուցաբերած օգնությանը[675], իսկ Ղարաբաղի հիմնախնդիրը մամուլում սկսում է վերակենդանանալ: Եւ այս դեպքում էլ՝ հաջորդ վեց ամիսների ընթացքում Լեռնային Ղարաբաղին, նրա պատմությանը, հարցի անարդարացի լուծմանը, ստալինյան կամայականություններին, «ինքնորոշման լենինյան սկզբունքին» նվիրված ընդարձակ հոդվածներն ու հրապարակումները միայն «Խորհրդային Հայաստանում» երեք տասնյակից ավելի են[676]՝ նախորդ վեց ամիսներին դրանց փաստացի բացակայության դիմաց:

Կոմունիստական մամուլի այսօրինակ հրապարակումների նպատակն, առաջին հերթին, իշխանություններին «ազգային» դիմագծի մեջ դնելու խնդիրն էր: Բայց լուծվում էր նաեւ երկրորդ մի խնդիր: Ինչպես նախորդ՝

[672] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 17.01.1989; 22.01.1989; 12.02,1989:*

[673] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 18, 19, 22.03.1989 եւ 08.04.1989:*

[674] *Հայերեն թարգմանությունը տե՛ս «Սովետական Հայաստան», 11.05.1989:*

[675] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 17.05.1989; 24.05.1989:*

[676] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17.05.1989; 18.05.1989; 10.06.1989; 15.06.1989; 16.06.1989; 16.06.1989; 20.06.1989; 23.06.1989; 23.06.1989; 24.06.1989; 18.07.1989; 21.07.1989; 19.08.1989, 27.08.1989; 01.09.1989; 14.09.1989; 17.09.1989; 20.09.1989; 05.10.1989; 05.10.1989; 21.10.1989; 14.11.1989 եւ այլն:*

«ազգային», այնպես էլ այս՝ «ղարաբաղյան» թեմատիկան ներկայացնողը, որպես կանոն, նոմենկլատուրային մտավորականությունն էր՝ Ջորի Բալայան, Հրաչիկ Սիմոնյան, Լենդրուշ Խուրշուդյան, Բագրատ Ղարիբջանյան, Շչորս Դավթյան, քաղաքագետ Հակոբ Հակոբյան եւ այլն: Նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչների համար նույնպես այժմ խիստ անհրաժեշտ էր ստեղծել «ազգային» մտավորականի իմիջ: Այս խավն էր, որ մնալու էր խորհրդային իշխանության ամենահուսալի հենարանը՝ ամենաղժվարին պահերին նրան կարեւոր ծառայություններ մատուցելով, մասնավորապես՝ ըստ անհրաժեշտության, «ազգային պլատֆորմի վրա» գաղափարական հակադրության մեջ մտնելու «Ղարաբաղ» կոմիտեի եւ Հայոց համազգային շարժման հետ:

Շարժումը եւ իշխանությունները մամուլում. Ի տարբերություն «ազգային-հայրենասիրական» եւ «ղարաբաղյան» թեմաների՝ Շարժման թեման չմտավ հետմայիսյան մամուլ: Ավելին՝ նույնիսկ նախորդ դեկտեմբեր–մայիս ամիսներին, թեկուզ Երեւանի պարետի զգուշացումների ու սպառնալիքների կամ ՆԳՆ հաղորդագրությունների տեսքով, Շարժման գոյության փաստն ավելի հաճախ էր արձանագրվում[677], քան մայիսին հաջորդած կես տարում: Մայիսի 11-ի առաջին արտոնված հանրահավաքի մասին շատ թե քիչ պատշաճ մի հաղորդագրությունից հետո, հաջորդ, եւ կարծես թե՝ միակ անդրադարձն արդեն նոյեմբերին էր՝ ՀՀՇ հիմնադիր համագումարի առիթով: Չնչին շեղումներով կամ տարբերություններով՝ նույն պատկերն ունեն «Երեկոյան Երեւանը», «Ավանգարդը» եւ այլն[678]: Միակ պարբերականը, որը հետեւողականորեն համարձակվում էր դուրս գալ գրաքննության կողմից գծված շրջանակներից եւ արձագանքում էր Շարժմանը, մանկապատանեկան «Պիոներ Կանչն»[679] էր:

[677] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 18.01.1989; 10.03.1989; 14.03.1989; 17.03.1989; 23.03.1989; 26.04.1989; 29.04.1989; 04.05.1989:*

[678] *Սրանցից առաջինը, Լ. Տեր-Պետրոսյանի, որպես պատգամավորության թեկնածուի մասին նախընտրական մի հոդված էր («Երեկոյան Երեւան», 24.08.1989) նախընտրական քարոզչության շրջանակներում, հրապարակել էր նաեւ ՀՀՇ Ծրագրի նախագիծը («Երեկոյան Երեւան», 17.10.1989): «Երեկոյան Երեւան» եւ «Ավանգարդ» թերթերը երբեմն նաեւ խախտում էին գրաքննության՝ իրենց համար գծված շրջանակները:*

[679] *Գլխավոր խմբագիր՝ Հմայակ Պետրոսյան:*

1988թ. դեկտեմբերի սկզբից միութենական կառավարության կայացրած՝ Հայաստանում խստացված գրաքննություն մտցնելու մասին որոշումը շարունակում էր գործել: Պարզապես, ըստ իշխանությունների որդեգրած մարտավարական նոր խնդիրների, փոփոխվել էին արգելանքի տակ դրված եւ խրախուսվող թեմաները: Այնպես որ, եթե 1989թ. մայիս ամսին հաջորդող շրջանի համար պատմաբանը նկատի ունենա միայն պաշտոնական մամուլը, ապա կունենա այսպիսի պատկեր. եղել են հասարակությանը հուզող կարեւոր խնդիրներ՝ ղարաբաղյան հիմնահարց, բնապահպանական, լեզվական, պատմական արդարության վերականգնման եւ այլ հարցեր: Հայաստանի իշխանությունը, կոմկուսի կենտկոմի եւ նրա ղեկավարի գլխավորությամբ, ընդունել է այս ամենը, եւ ինքն էլ ձեռնամուխ է դրանց լուծմանը: Ավելին՝ այդ բանը արվել է ինչպես ինքնուրույն, այնպես էլ կենտրոնական մարմիններում «հերոսաբար» կռիվ տալով: «Ազգային» մտավորականությունն իր հայրենասիրական ելույթներով ու հոդվածներով կանգնած է եղել պայքարող իշխանության կողքին: Երկրորդական դրվագներում երբեմն հայտնվում են ինչ-որ անծանոթ անուններ (Շարժման իրական ղեկավարներ) եւ դեպքեր (ինչ-որ հանրահավաքներ), որոնք անհասկանալի են ու դժվար են տեղավորվում այս ամենի ետնախորքում:

Եթե մամուլից դժվար է պատկերացում կազմել այս շրջանի բուռն իրադարձությունների եւ Շարժման գործունեության մասին, ապա նոր կերպարի մեջ մտնելու նպատակով կոմկուսի քայլերը ներկայացված են ամբողջությամբ: Կրկին փոխվեցին քարոզչական նյութերի եւ իշխանության ներկայացուցիչների բառապաշարն ու դիրքորոշումները: Հանրապետության առաջին դեմքը որոշ դեպքերում սկսեց մինչեւ անգամ կրկնել Շարժման կարգախոսներն ու առաջ քաշած հարցերը: Նա ԳԽ-ի նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ձեւն այժմ համարում էր մարզային հանրաքվեն, համարում էր, որ պետք է վերականգնել կուսակցական եւ խորհրդային մարմինների ֆունկցիաները, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն օժտել այնպիսի լիազորություններով, որ այն կարողանա ապահովել մարզի լիիրավ ինքնիշխանությունը եւ ենթակայությունը անմիջապես Կենտրոնին, խոսում էր պատմական արդարության վերականգնման մասին: Բնապահպանական վիճակը նա գնահատում էր «ծանր» եւ որպես իշխանությունների նվաճում էր արձանագրվում «Կաուչուկ-1»-ի փակումը, Կիրովականի քիմիական գործարանի, Ալավերդու լեռնամետալուրգիական երկու արտադրամասերի աշխատանքների դադարեցումը, արձանագրվում էր, որ «այս վիճակով չի կարելի շահագործել «Նաիրիտը» եւ այլն: Նա խոսեց նաեւ

1915թ. ցեղասպանության, ֆիդայիների՝ Ուջանում կառուցված հուշարձանների, Սփյուռքի հետ կապերի ամրապնդման մասին: Նույնիսկ պատրաստակամություն հայտնեց համագործակցել «ոչ պաշտոնական կազմակերպությունների» հետ[680]: ՀԿԿ ԿԿ-ի 2-րդ քարտուղար Օլեգ Լոբովն[681], իր հերթին, հայտարարեց, որ դրականորեն է վերաբերվում այն բանին, որ «ոչ ֆորմալ կազմակերպությունների» անդամները կարող են ներկա լինել հանրապետության ԳԽ-ում, որ 1915թ. ցեղասպանության ճանաչման հարցում (ԽՍՀՄ ԳԽ-ի կողմից) դժվարություններ չկան, իսկ Լեռնային Ղարաբաղում պետք է իրականացնել «յուրատեսակ պրեզիդենտական կառավարում»[682]: Շարժման տնտեսական ծրագրին որպես այլընտրանք՝ մամուլում թմբկահարվում էր «Ազատ տնտեսական գոտու» ստեղծման գաղափարը, նույնիսկ սուր քննադատության էր ենթարկվում Խորհրդային Միության տնտեսական համակարգը[683]:

Նոր կերպարով ներկայանալու համար իշխանություններն ընդհուպ մոտեցան սեփական կոպիտ սխալները խոստովանելու աստիճանին: Այդ բանն, իհարկե, պաշտոնապես կամ առաջին դեմքերի մակարդակով չարվեց: Այն կրկին հանձնարարվեց կուսակցական վերնախավից որպես «այլախոհ» ճանաչված Հայկ Քոթանջյանին: Ճիշտ է՝ վերջինս իշխանությունների սխալները չկարողացավ ներկայացնել այնպես, որ դա նպաստի նրանց վարկանիշի բարձրացմանը: Միայն այդ սխալների թվարկումը, որ բավականին տպավորիչ էր եւ համապատասխանում էր իրականությանը, ըստ էության, դարձավ Շարժման ու նրա ղեկավարության լավագույն գովազդը[684]:

---

680 *«Խորհրդային Հայաստան», 04.07.1989:*

681 *Այս պաշտոնյան մինչեւ վերջ մնաց որպես կենտրոնական իշխանության ռեզիդենտ:*

682 *«Խորհրդային Հայաստան», 04.07.1989:*

683 *Սուրեն Հարությունյանն այսպիսի հռետորական հարց էր տալիս. «Իմաստ ունի՞ արդյոք վերակենդանացնել այն իրավիճակը, երբ հանրապետության առաջատար ճյուղի՝ մեքենաշինության հարյուրից ավելի ձեռնարկություններ ու միավորումներ, ենթարկվելով 14 միութենական մինիստրությունների ու գերատեսչությունների եւ թողարկելով 130 խումբ անուն արտադրանք, գործում են իրարից մեկուսի» «Խորհրդային Հայաստան» 23.06.89):*

684 *Ահա այդ սխալների ցանկը. ա) երկխոսության հրավերներին պաշտոնական կողմի արհամարհանքը, բ) ԼՂԻՄ-ի հարցով նստաշրջանի հրավիրումը չորս ամիս ձգձգելը, գ) ԼՂԻՄ-ի, Սումգայիթի, 1915թ. ցեղասպանության հարցերի մասին միայն «ներքեւի» թելադրանքով ընդունված որոշումները, դ) ԳԽ-ի՝ նոյեմբերի 24-ի նստաշրջանի (Օպերային թատրոնի շենքում) որոշումները չճանաչելը, ե) հատուկ դրություն*

ե) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում

Հայաստանի իշխանությունները հրաժարվեցին թեկուզ շատ թե քիչ ընդհանուր գծերով ներկայացնել, թե Լեռնային Ղարաբաղի եւ հասարակությանը հուզող այլ հիմնախնդիրների հետ կապված՝ ինչ հարցադրումներով են մտնելու եւ ինչ խնդիրներ են փորձելու լուծել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում: Շարժումը (մայիսի 11-ի հանրահավաքում) պահանջում էր, որ մինչեւ մայիսի 20-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրվի, եւ քննարկվեն այդ հարցերը: Դա բնական եւ իրավացի պահանջ էր. հանրապետության իշխանության բարձրագույն մարմինը, որ Սահմանադրությամբ երկրի առաջին պատասխանատուն էր, առաջին անգամ հրավիրվող կարեւորագույն այդ ֆորումում պարտավոր էր հստակեցնել հանրապետության պաշտոնական դիրքորոշումները, պահանջները եւ խնդիրները: Նրա որոշումները հայաստանյան պատվիրակության համար կդառնային հստակ շրջանակներով յուրատեսակ պատվիրան: Այդ որոշումներով համագումարին ներկայանալը շատ ավելի ծանրակշիռ փաստարկ կլիներ, քան առանձին ժողովրդական պատգամավորների անհատական, կամ թեկուզ՝ ողջ պատվիրակության անունից ելույթներն ու հայտարարությունները: Դա կդյուրացներ պատվիրակության աշխատանքը, կդարձներ ավելի արդյունավետ եւ զերծ պատահական իմպրովիզացիաներից ու ինքնագործունեությունից:

Եւ, այնուամենայնիվ, իշխանությանը հաջողվեց խուսափել համագումարին ներկայացվելիք հարցերի քննարկման օրակարգով Գերագույն խորհրդի արտահերթ նիստ հրավիրելուց, իսկ Գերագույն խորհրդի նախագահությունը մայիսի 16-ին որոշում ընդունեց հաջորդ նստաշրջանը նշանակել հունիսի 27-ին[685]: Նույն պահանջները հնչեցին մայիսի 17-ի, 18-ի եւ 21-ի

մտցնելը եւ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը, զ) «Ղարաբաղ» կոմիտեի մասին իշխանությունների գնահատականները եւ նրանց հիշատակումը սրբապղծություն համարելը, է) ԳԽ երկու անդամների համար ձերբակալության թույլտվություն տալը, ը) լռելը, երբ հատուկ դրությունն ու պարետային ժամը մտցվել էր առանց հանրապետության ԳԽ-ի համաձայնության, թ) օրենսդիր մարմինը կես տարուց ավելի քաղաքական գործընթացներից դուրս թողնելը եւ այլն (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26.05.1989:

[685] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 10, հոդվ. 44:*

բազմամարդ հանրահավաքներում, սակայն այդ որոշումը հնարավոր չեղավ փոխել:

Ի պատասխան այս կոշտ եւ անհասկանալի դիրքորոշման՝ մայիսի 22-26-ին հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Նստաշրջան հրավիրելու եւ առաջարկված հարցերը քննարկելու՝ իշխանության մտավախությունը դժվար չէր հասկանալ: Արդեն թափ առած Շարժման՝ 100 հազար եւ ավելի մասնակիցներ հավաքող հանրահավաքների պայմաններում Գերագույն խորհուրդը ստիպված պետք է լիներ նրա ճնշման տակ ընդունել արմատական որոշումներ: Նման մի նստաշրջանում չէր կարող չքննարկվել Շարժման ղեկավարությանը բանտից ազատելու հարցը: Հնարավոր որոշումները ոչ թե կաշկանդելու իմաստով շրջանակների մեջ էին պահելու համագումարի հայաստանյան պատվիրակներին, այլ, ընդհակառակը՝ նրանց վրա պարտավորություններ էին դնելու, եւ նրանք կարող էին դժվարություններ ունենալ այդ պարտավորությունները բավարարելու, այդ որոշումների շրջանակներին մոտենալու առումով: Իսկ այդ դեպքում դժվար էր լինելու հերոսի կեցվածքով վերադառնալ, ինչպես որ նրանք վերադարձան, բայց, փաստորեն, անարդյունք եւ խաբված: Նույնիսկ որոշակի իրական արդյունքներով վերադառնալու դեպքում էլ պետք է ստացվեր, որ դրանում (թեկուզ միջնորդավորված՝ Շարժման ճնշման տակ Գերագույն խորհրդի կայացրած որոշումներով), իր նպաստն ուներ նաեւ Շարժումը եւ հասարակությունը: Իսկ դա կնսեմացներ այն վարկանիշն ու նոր կերպարը, որին հավակնում էին արագ տիրանալ ՀԿԿ-ն եւ նրա ղեկավարը: Նրանք հույս ունեին համագումարից վերադառնալ հերոսացած՝ որպես բարձրացված հարցերի ինքնուրույն եւ միակ հեղինակ, ստացված արդյունքի միակ դափնեկիր: Պատահական չէ, թերեւս, որ համագումարին ներկայացվելիք հարցադրումներն ու պահանջները ամենաընդհանուր ձեւով չքննարկվեցին (համենայնդեպս՝ այդ մասին որեւէ բան չհրապարակվեց) նաեւ համագումարի նախօրերին Հայաստանից ընտրված ժողովրդական պատգամավորների՝ տեղի ունեցած խորհրդակցությունում:

Առաջին եւ միակ փաստաթուղթը, որով կարելի էր պատկերացում կազմել, թե ինչ խնդիրներով, ինչպիսի հարցադրումներով է հայաստանյան պատվիրակությունը մտնելու համագումար, հասարակությանը մատուցվեց համագումարից մեկ օր առաջ, ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի՝ Մոսկվայում տված հարցազրույցով[686]: Այս հարցազրույցը, համագումարում նրա եւ

[686] *«Խորհրդային Հայաստան», 24.05.1989:*

մյուս պատգամավորների ելույթները եւ առաջարկների համադրումը ցույց են տալիս, որ նախապատրաստված (բնականաբար՝ ՀԿԿ ԿԿ-ում) հարցադրումներն ու առաջարկները ունեցել են հետեւյալ շրջանակները.

ա) Ղարաբաղի հիմնախնդիրը տարածքային վեճ չէ. հայկական եւ հայաբնակ այդ երկրամասը ժամանակին ստալինյան կամայականության հետեւանքով անարդարացիորեն միացվել է Ադրբեջանին: Դրա հետեւանքով նույն պետության շրջանակներում նույն ժողովրդի երկու հատվածները հայտնվել են միմյանցից արհեստականորեն անջատված վիճակում: Խորհրդային տարիներին էլ այստեղ իրականացվել են ազգային ճնշումներ:

բ) Ամբողջ հույսը Վերակառուցման վրա է, որը պետք է վերականգնի ազգերի ազատ ինքնորոշման «լենինյան սկզբունքը» եւ ուղղի ժամանակին այդ սկզբունքից թույլ տված շեղումը Ղարաբաղի հարցում:

գ) ԼՂԻՄ-ում հաստատված կառավարման հատուկ ձեւը, որպես փուլային լուծում, սկզբունքորեն ճիշտ է, բայց պետք է ընդարձակել Հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունները, որպեսզի վերջինս կարողանա ապահովել մարզի ամբողջական եւ անմիջական ենթակայությունը Կենտրոնին: Միաժամանակ՝ պետք է վերականգնել մարզային իշխանության մարմինների կասեցված գործունեությունը:

դ) Համագումարին առաջարկվում էր որոշում կայացնել մարզի տարածքում հանրաքվե անցկացնելու մասին եւ ըստ դրա արդյունքների՝ որոշել նրա կարգավիճակը:

Բացի լեռնային Ղարաբաղին առնչվող հարցերից համագումարում պետք է հնչեր նաեւ 1915թ. ցեղասպանության ճանաչման հարցը, որ պայմանավորված էր նախորդ տարվա նոյեմբերի 22-ին ընդունված որոշմամբ, ավելին՝ նույնիսկ պետք է խոսվեր Կարսի մարզի վերադարձման մասին (Վ. Համբարձումյանի ելույթում): Այսինքն՝ այս ամենի նպատակն էր ցույց տալ հասարակությանը, որ հանրապետության ղեկավարությունն ամբողջությամբ որդեգրել է համաժողովրդական Շարժման պահանջները եւ ինքնուրույն հանդես է գալիս դրանց նախանձախնդիր պաշտպանողի դերում:

Այս հիմքի վրա էլ, 33 պատգամավորների ստորագրությամբ, համագումարին առաջարկվեց որոշման նախագիծ, որը ներկայացրեց ԼՂԻՄ-ից ընտրված պատգամավոր Բորիս Դադամյանը: Այն նախատեսում էր՝ **ա)** ստեղծել պատգամավորական հանձնաժողով՝ «իրադրության բազմակողմ եւ օբյեկտիվ ուսումնասիրության» եւ ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան հոդվածների հիման վրա մարզում հանրաքվե նախապատրաստելու ու անցկացնելու համար, **բ)** մինչեւ հանրաքվե անցկացնելը Հատուկ

կառավարման կոմիտեին օժտել անհրաժեշտ լիազորություններով եւ մարզը ենթարկել անմիջապես Կենտրոնին, **գ)** «նպատակահարմար համարել տեղական մարմինների ֆունկցիաների վերականգնումը»[687] :

Համագումարն, իհարկե, նման որոշում չընդունեց: Նա ընդամենը հանձնարարեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ հանձնաժողով ստեղծել ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակն ուսումնասիրելու եւ եզրակացությունները Գերագույն խորհրդին ներկայացնելու համար: Ինչպես եւ սպասելի էր, եւ ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, սա ընդամենը հարցը քննարկումից հանելու ձեւ էր, պարզ խաբեություն[688]: Նույնիսկ Հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունները չորոշակիացվեցին: Իսկ հետագայում կազմված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքներն այդպես էլ երբեւէ չհրապարակվեցին: Այս ամենի բնական արդյունքը վեց ամիս անց նոյեմբերի 28-ի հայտնի որոշումն էր լինելու, որով, փաստորեն, ամեն ինչ վերադարձվելու էր զրոյական վիճակի:

Եւ այնուամենայնիվ, ՀԽՍՀ իշխանությունները եւ հայաստանյան պատվիրակությունը ներկայացրին, թե Մոսկվայից վերադարձել են կարեւոր հաղթանակով:

գ) Շարժման կազմակերպական կառույցի կարգավորման խնդիրը

Դեռ 1988-ի վերջին ամիսներին արդեն իսկ ստեղծվել էր յուրատեսակ երկիշխանության մի վիճակ, երբ ամբողջությամբ Շարժումն էր թելադրում ներքաղաքական օրակարգը: Իսկ Օպերային թատրոնում նոյեմբերի 24-ին հրավիրված ԳԽ նստաշրջանով ու ընդունած որոշումներով Շարժումը, «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորությամբ, դառնում էր փաստական իշխանություն, եթե դա չկանխվեր արտակարգ դրություն ու պարետային ժամ մտցնելու կոպիտ միջամտությամբ: Շատերը, նմանեցնելով հայտնի մի

---

[687] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 08.06.1989:*

[688] *Այնուամենայնիվ, կենտրոնական իշխանությունը խիստ անհանգստացած էր ծավալված ժողովրդավարական շարժումներից, մասնավորապես՝ որպես պայքարի միջոց անընդհատ ծավալվող գործադուլներից: Այդ է վկայում հուլիսի 25-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած ընդարձակ հայտարարությունը, որտեղ դատապարտվում են գործադուլները, միաժամանակ՝ խոստանում թոշակների բարձրացում եւ զանազան սոցիալական խնդիրների շուտափույթ լուծում (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 8, հոդվ. 186):*

ասույթի հետ, հաճախ էին կրկնում, թե՝ «Ղարաբաղ» կոմիտեն ուժ է՝ առանց իշխանության, կոմկուսը՝ իշխանություն է առանց ուժի»: Եւ դա համապատասխանում էր իրականությանը, եթե ուժ ասելով հասկանանք հասարակական հսկայական աջակցությունը: Ավելին՝ այնքան մեծ էր հասարակական պաշտպանությունը, որ Շարժման համար որեւէ դժվարություն չէր ներկայացնում իշխանության մարմինների բազմաթիվ օրինախախտումների եւ ընտրական հանձնաժողովների վրա նրա լիակատար վերահսկողության պայմաններում անգամ, Գերագույն խորհրդի թափուր մնացած ընտրատարածքներում իր թեկնածուներին դարձնել պատգամավոր: Բավարար էր «Ղարաբաղ» կոմիտեի մի կոչը, եւ նրա երաշխավորած թեկնածուն բազմակի ավելի շատ ձայն էր ստանում, քան իշխանության առաջադրածը: Ըստ այսմ՝ դժվար չէր պատկերացնել, թե ինչպիսին կլինեին, ասենք, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունների արդյունքները, եւ ինչպիսին կլիներ համագումարում հայաստանյան պատվիրակության կազմը, եթե «Ղարաբաղ» կոմիտեն՝ կալանքի տակ, եւ երկիրը հատուկ դրության ու պարետային ժամի պայմաններում չգտնվեին: Ձեւական իշխանության եւ իրական ուժի փոխհարաբերության ընդհատված իրավիճակը, որ մայիսի կեսերից սկսել էր վերականգնվել, բնականաբար, ավելի պետք է արագանար եւ խորանար Կոմիտեի վերադարձից հետո:

Ոմանք «Ղարաբաղ» կոմիտեի վերադարձից հետո առաջին ամիսների գործունեությունը գնահատել են սպասվածից պասիվ: Սակայն դա ունի իր պարզ եւ տրամաբանական բացատրությունը: Նախ՝ բոլոր նրանք, ովքեր հիշում են բանտից վերադարձածների առողջական վիճակը մատնող արտաքին տեսքը, չեն կարող չհամաձայնել, որ նրանք զուտ ֆիզիկական իմաստով ինտենսիվ եւ տեւական կազդուրման ու բուժման անհրաժեշտություն ունեին: Երկրորդ՝ նույնպիսի անհրաժեշտություն ունեին անցած ամիսների իրադարձություններին մանրակրկիտ տեղեկանալու եւ ներկա իրավիճակը ճշգրիտ հասկանալու համար: Երրորդ՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարն, այնուամենայնիվ, շարքային միջոցառում չէր, եւ դրա ընթացքն ու արդյունքները կարեւոր հիմք կարող էին տալ պատկերացնելու եւ գնահատելու ընդհանուր իրավիճակը եւ ըստ այդմ՝ որոշելու Շարժմանն առաջարկելիք քայլերն ու ծրագրերը: Մի քանի հարյուր հազարանոց անվերապահ հավատացող ժողովրդական զանգվածի հետ գործ ունեցող ղեկավարության համար այս զգուշավորությունը պատասխանատվության դրսեւորում էր եւ լիովին արդարացված: Եւ վերջապես, կար զուտ հոգեբանական գործոն. շատերին թվում էր, թե հաղթական

վերադարձից անմիջապես հետո նրանք պետք է որ միանգամից «պայթեցնեն» իրավիճակը, լուծեն բոլոր խնդիրները: Շարժումն արդեն իսկ նրանց վերադարձի նախօրերին Կոմիտեի փոխարինող կազմի ջանքերով հասել էր այն անհրաժեշտ մակարդակին, որ ի վիճակի էր լուծել իրատեսորեն ձեւակերպված օրակարգային ցանկացած հարց:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցում նրանց կողմից անմիջապես սրություն չմտցնելուն, դա եւս ինքնին հասկանալի է: Իշխանական քարոզչամեքենան հասարակությանը խոստումներ էր տվել, եւ նա, թեկուզ մասամբ, ինչ-որ հույսեր ուներ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարից, որտեղ հնչում էին նաեւ «մեր պատվիրակների խիզախ ելույթները»: Ինչ-որ հույսեր ուներ հասարակությունը Ղարաբաղի հարցով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կազմած հանձնաժողովից, որը պետք է տեղում ուսումնասիրեր հարցը եւ իր եզրակացությունները ներկայացներ քննարկման: Ոմանք նույնիսկ հույսեր ունեին ազգային հարցին նվիրվելիք ԽՄԿԿ կենտկոմի պլենումից եւ այլն: Պաշտոնական քարոզչության շնորհիվ շատերի կողմից սպասումների այս շրջանում Ղարաբաղի հարցի որեւէ լրացուցիչ սրում, գործադուլների կազմակերպում եւ այլն անիմաստ էր: Ավելին՝ դա ոմանց կողմից հիանալի կարող էր օգտագործվել հենց Կոմիտեի դեմ՝ որպես Շարժման խնդիրները «վերջապես որդեգրած» իշխանություններին «վանելու», դրանով իսկ փայփայված «ազգային միասնությունը» պառակտելու մեղադրանք, որպես մոսկովյան համագումարի հայաստանյան պատվիրակության ձախողումների պատճառ: Հայաստանի իշխանությունները, որ մայիսից ի վեր ամեն ինչ անում էին ներկայանալու համաժողովրդական խնդիրների կրողների եւ արտահայտողների դերում, անհրաժեշտ էր, որ, այնուամենայնիվ, ժամանակ եւ հնարավորություն ունենային, որպեսզի կամ ինչ-որ արդյունք արձանագրեին, կամ ցուցադրեին իրենց անկարողությունը եւ իրական նպատակները: Եւ վերջապես՝ գեթ Կոմիտեի համար ակնհայտ էր, որ Անկախության խնդիրն առանցքային գաղափար լինելուց վերածվելու է առանցքային խնդրի, ինչի համար լրացուցիչ շատ լուրջ նախապատրաստություններ են պետք:

Կոմիտեի առաջին գործնական քայլերից մեկը եղավ ոչ թե Ղարաբաղի հարցի սրումը, այլ Շարժման կազմակերպական կառույցի ամրապնդումը: Սա ճիշտ որոշում էր, քանզի դա էր այն գործիքը, որով կարելի պետք է լիներ լուծել ցանկացած խնդիր՝ Լեռնային Ղարաբաղից մինչեւ անկախություն: Շարժումը, որքան էլ զանգվածային, միակամ եւ հզոր, այնուամենայնիվ, ավելի արդյունավետ գործունեության համար կարիք ուներ

կազմակերպական առավել հստակության: Ոչ պակաս կարեւոր էր նաեւ որպես կազմակերպություն նրա պաշտոնական ճանաչումը: Հանրահավաքները, գործադուլները, երթերը եւ այլն, անշուշտ, մեծ ուժ եւ կարեւոր լծակներ էին, Շարժման ղեկավարության ունակությունն ու հեղինակությունն էլ բավարար էին այն ուղղորդելու համար, սակայն արդյունավետության առումով պայքարի այս ձեւը վաղուց մոտեցել էր իր հնարավորությունների սահմանագծին: «Մի հարվածով» հիմնահարց լուծելու՝ 1988-ի առաջին կեսի շրջանը վաղուց անցել էր: Ընդլայնված օրակարգով Շարժումը պայքարը շարունակելու էր մի ամբողջ շարք գործնական ու քաղաքական հարցերի համար՝ փախստականներ, աղետի գոտի, սահմանների պաշտպանություն, Ղարաբաղի սոցիալական, տնտեսական, պաշտպանական եւ այլ խնդիրներ, ժողովրդավարական ազատություններ եւ այլն: Եւ յուրաքանչյուր ոլորտում հաճախ անհրաժեշտ էր տասնյակ ու հարյուրավոր մարդկանց ամենօրյա ու համբերատար աշխատանք:

Ծառացած խնդիրները լուծելու համար շատ ավելի մեծ հնարավորություն կարող էր տալ իշխանության մարմիններում, մասնավորապես՝ Գերագույն խորհրդում անմիջական մասնակցությունը: Վերջինս, իր հերթին, նույնպես թելադրում էր Շարժման՝ որպես քաղաքական ընդդիմության կազմակերպական հանգամանքի անհրաժեշտություն, որպես կազմակերպություն՝ պաշտոնական ճանաչում: Եւ վերջին հաշվով՝ կազմակերպական հստակ կառույցներով օժտված ուժի դեմ, ինչպիսին էր կոմկուսը, տեւական պայքարի դեպքում (իսկ այդ հեռանկարն արդեն ակնհայտ էր 1988-ի աշնանը) դժվար էր հաջողության հույս ունենալ՝ առանց սեփական ուժերի նույն մակարդակի կազմակերպման:

Կար Շարժման կառույցների ամրապնդման խնդրին մասամբ առնչվող, նոր առաջացած ու շատ կարեւոր եւս մի հանգամանք:

Կոմիտեն ազատ արձակվելով, ժողովրդական խոսքով ասած՝ «բռնել էր բոլորի վախը»: Դրա հետեւանքներից մեկը եղավ այլազան հնչեղ ու հրապուրիչ «ազգային» եւ «հայրենասիրական» անուններով, «ավելի արմատական» կարգախոսներով «կազմակերպությունների» հոչակումն ու ստեղծումը: Նման նախաձեռնությունների մի մասը կարող էր լինել ինքնաբուխ՝ որպես տուրք բախտախուզությանը կամ ի բավարարումն մարդկանց անձնական հավակնությունների, որ մինչ այդ վտանգավոր էին համարել այդ կերպ դրսեւորել: Մի մասն էլ չէր կարող չլինել կազմակերպված, եթե նկատի ունենանք ժողովրդական շարժումների դեմ պայքարելու ՊԱԿ-ի մեզ ծանոթ մեթոդը. «Ստեղծել նույն գործով զբաղվող այլ կազմակերպություններ՝

շարժումները պառակտելու եւ ներսից քայքայելու համար»[689]: Եւ ոչ միայն ՊԱԿ-ը: Առավել «աչքաբաց» որոշ պաշտոնյաներ ու շահագրգիռ այլ կառույցներ նույնպես ձեռնամուխ եղան, «համենայն դեպս», որպես գործիք ունենալ այդօրինակ մի «կազմակերպություն»: Բնականաբար, նույնպիսի նախաձեռնություններ պիտի ունենային նաեւ Սփյուռքի կուսակցությունները[690]: Հասկանալի է, որ այս մտահղացումների հեղինակները, որպես իրենց կազմակերպությունների շարքերի համալրման հիմնական բազա, նկատի են ունեցել Շարժման մասնակիցներին:

Եւ վերջապես, Շարժման առավել ակտիվ մասնակիցներին չէր բավարարում հանրահավաքի, թեկուզ՝ ամենօրյա, մասնակցի կարգավիճակը: Որոշակի գործ անելու, հանձնարարություն ունենալու, ինքնադրսեւորվելու, ինքնահաստատվելու բնական ձգտումը բավարարել հնարավոր էր ոչ միայն մարդկանց կազմակերպական կառույցներում ձեւական ընդգրկելով, այլեւ ամենօրյա աշխատանքով, գործով ապահովելով, մանավանդ որ կար դրա կարիքը: Կոմիտեն, որպես առաջին գործ, ձեռնարկեց շուրջ մեկ տարի առաջ հայտարարված Հայոց համազգային շարժման կազմակերպական կառույցները հստակեցնելու, ամրապնդելու ու ավելի մարտական վիճակի բերելու գործին:

է) Շարժման մասնակցությունը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 23-ի նստաշրջանին

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1988 թվականի նոյեմբերի 22-ին ընդհատվել էր: Նոյեմբերի 24-ին Շարժման նախաձեռնությամբ

---

689 *Տե՛ս «Ավանգարդ», 24.06.1990թ.:*

690 *Նման հարցերում հավաստի աղբյուրը տեղեկացնում է. 1988թ. դեկտեմբերին Հայկական ԽՍՀ-ում է գտնվել ԱՄՆ-ի արեւմտյան նահանգների Դաշնակցության ԿԿ-ի անդամ, Լոս Անջելեսում հրապարակվող «Ասպարեզ» թերթի խմբագիր Աբրահամ (Աբօ) Պողիկյանը, որ Հայաստան էր եկել երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տվողների մի խմբի հետ: Նա հանդիպել է «Հայ դատի պաշտպանության ընկերության» ղեկավարներից մեկի հետ, որի ընթացքում առաջարկել է նրանց կազմակերպել «Դեպի հայրենիք» անունով թերթի հրատարակություն, «որի նյութերը խմբագրված վիճակում պետք է ուղարկվեն արտասահմանից»: Նա նաեւ խոստացել է վճարել այդ թերթի հրատարակության ֆինանսական ծախսերը եւ ուղարկել տպագրական սարքավորումներ: Եւ եզրակացնում է, որ Պողիկյանը «Հայաստան է եկել որպես էմիսար Դաշնակցության համար «հենման կետ» ստեղծելու եւ հանրապետություն գաղափարական թափանցման համար» (ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.10):*

Օպերային թատրոնում հրավիրված նստաշրջանի ընդունած որոշումները Գերագույն խորհրդի նախագահության կողմից չեղյալ հայտարարվեցին, իսկ մինչ այդ, նոյեմբերի 24-ին, ժամը 00-ից Երեւանում մտցվեց հատուկ դրություն եւ պարետային ժամ: Դրան հաջորդեց երկրաշարժը: Օրակարգում ունենալով հանդերձ կարեւորագույն հարցեր, որոնք, բնականաբար, բազմապատկվեցին երկրաշարժից հետո, Գերագույն խորհուրդը նիստեր չգումարեց ամբողջ յոթ ամիս: Իշխանության բարձրագույն մարմինը, կես տարուց ավելի զրկված լինելով Շարժման «օգնությունից», փաստորեն, դուրս էր թողնվել քաղաքական կյանքից, իսկ նրա Նախագահությունը, ՀԿԿ ԿԿ-ի հրահանգները կատարելուց բացի, ուրիշ որեւէ բանի ընդունակ չէր:

Խորհրդային տարիներին բնական, Հայաստանում անհասկանալի եւ ոչ նորմալ դարձած այս երեւույթն այլեւս դժվար էր երկարաձգել Շարժման նոր վերելքի եւ սպասվող զարգացումների պայմաններում: Մեծ ջանքերի գնով միայն իշխանությանը հաջողվեց տեղի չտալ նստաշրջան հրավիրելու՝ մայիսյան հանրահավաքների ու գործադուլների պահանջին: Եւ վերջապես, եթե կոմունիստական վարչակարգն իր նոր ղեկավարի գլխավորությամբ խնդիր ուներ ցույց տալ, որ նոր կերպարի մեջ է մտնում եւ «տեր է կանգնում» Շարժման բոլոր խնդիրներին, ապա Սահմանադրությամբ որպես իշխանության բարձրագույն մարմին հռչակված Գերագույն խորհուրդն այն կարեւոր օղակներից մեկն էր, որն իր գործունեությամբ պետք է ցուցադրեր դա: Եւ այնուամենայնիվ, կուսակցական իշխանությունները դեռեւս մտադիր չէին Գերագույն խորհրդին գործելու թույլտվություն տալ, եւ ամենամեծ մտավախություններից մեկն էլ այն էր, որ հանրահավաքներում նման պահանջ կներկայացվի: Կուսակցության կենտկոմում քննարկված եւ ընդունված այն գաղտնի փաստաթղթում, որը հավակնություն ուներ դառնալու մայիսի 11-ին արտոնված հանրահավաքի «պլան», անգամ նախատեսված էր, որ հանրահավաքում բարձրացվելիք անցանկալի «հնարավոր հարցերի» մեջ լինելու է նաեւ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջ[691]: Այդ պահանջն իրոք հնչեց, սակայն իրավասու պաշտոնյայի տված պատասխանը, թե դա կարելի է անել համապատասխան թվով պատգամավորների միջնորդագրերի դեպքում, այդ պահանջի փաստացի մերժումն էր: Մայիսյան հանրահավաքներն ի զորու չեղան ստիպել իշխանությանը Գերագույն խորհրդի նստաշրջան հրավիրել:

[691] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.30, թ.37:*

Բոլոր դեպքերում, հարցը Շարժման կողմից դրված էր, նույնիսկ այդ պահանջով հացադուլ էր հայտարարված: Գերագույն խորհրդի նախագահությունը մայիսի 16-ին հրամանագիր ընդունեց 11-րդ գումարման 9-րդ նստաշրջանը ավելի քան քառասուն օր անց՝ հունիսի 27-ին հրավիրելու մասին[692]: Օրակարգում նախատեսվում էր ընդհատված նախորդ նստաշրջանից մնացած՝ ԼՂԻՄ վերաբերյալ իշխանության կենտրոնական մարմինների որոշումների կատարման ընթացքի մասին եւ «Պետական կյանքի կարեւոր հարցերը ժողովրդական քննարկման դնելու մասին» հարցերը: Սրանց ավելացվում էր նոր հարց՝ կապված աղետի գոտու հետ. «Երկրաշարժի հետեւանքների վերացման վերաբերյալ ԽՄԿԿ կենտկոմի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի մասին»[693]: Մեկ ամիս անց ԳԽ նախագահությունը նստաշրջանի օրը հունիսի 27-ից տեղափոխեց հունիսի 23՝ պատճառաբանելով դա այն հանգամանքով, որ հունիսի 26-ին սկսվում են ԽՍՀՄ ԳԽ-ի աշխատանքները: Միաժամանակ՝ նստաշրջանի օրակարգում Շարժման ճնշման տակ ավելացվեց նոր հարց. «Հանրապետությունում էկոլոգիական վիճակի եւ այն բարելավելու միջոցառումների մասին»: Խոսքը «Նաիրիտի» մասին էր:

Այսպիսով՝ ԳԽ-ի նստաշրջանի օրակարգում արդեն նախատեսված էին չորս խոշոր եւ կարեւոր հարցեր, որոնք, միաժամանակ, գտնվում էին նաեւ Շարժման օրակարգում, եւ որոնց մասին իշխանության եւ Շարժման պատկերացումներն ու տեսակետները տրամագծորեն հակադիր էին: Համենայնդեպս՝ այդպես էր 1988-ի աշնանը, եւ դրանով էր պայմանավորված նոյեմբերի 22-ին նստաշրջանի ընդհատումը, ապա եւ նոյեմբերի 24-ին Օպերային թատրոնի դահլիճում հրավիրված նիստը:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ «մի խումբ դեպուտատների առաջարկով» որոշվեց նստաշրջանի աշխատանքներին մասնակից դարձնել «ոչ ֆորմալ կազմակերպությունների եւ ներգաղթած հայ բնակչության ներկայացուցիչների»[694]: Իրականում, իհարկե, դա արդյունք էր այն բանի, որ նստաշրջանի առաջին օրը հրավիրված հզոր հանրահավաքը, խիստ դժգոհ մնալով նրա աշխատանքներից եւ այնտեղ հնչած ելույթներից, պահանջել էր իր ներկայացուցիչների մասնակցությունը նիստերին[695]: Խորհրդակցական ձայնի իրավունքով Գերագույն խորհրդի

[692] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 10, հոդվ. 44:*
[693] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17.05.1989:*
[694] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25.06.1989:*
[695] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.82-83:*

նիստերին հաջորդ օրվանից մասնակցելու իրավունք ստացան Լեւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Արշակ Սադոյանը, Հրանտ Խաչատրյանը եւ Ադրբեջանից բռնագաղթած բնակչության մի ներկայացուցիչ:

ը) Լեռնային Ղարաբաղի հարցը ԳԽ նստաշրջանում

Նստաշրջանի օրակարգում հարցը ձեւակերպված էր «Հանրապետության խորհրդային եւ տնտեսական մարմինների կողմից ԼՂԻՄ վերաբերյալ ԽՄԿԿ ԿԿ-ի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի մասին»: Այս որոշումներից առաջինը կայացվել էր 1988-ի մարտի 24-ին (1988-95թթ. «ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու միջոցառումների մասին»), երկրորդը՝ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղում կառավարման հատուկ ձեւ մտցնելուն: Զեկուցող, ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանը որքան էլ նախապես հավաստիացնում էր, թե Լեռնային Ղարաբաղի հիմնահարցերը մշտապես գտնվել են ՀԿԿ կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ կառավարության ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, իր իսկ բերած փաստերը եւ տված գնահատականները հակառակն էին վկայում: Այսպես՝ ամենակարեւոր օբյեկտի՝ Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի համար նախատեսված 2,5 միլիոն ռուբլուց իրացվել էր ընդամենը 150000-ը: Մի այլ՝ Ստեփանակերտ-Մարտակերտ ճանապարհի կառուցման համար նախատեսված 2,2 միլիոն ռուբլուց ընդհանրապես դեռ ոչինչ չէր իրացվել: Եթե հաղորդման մեջ կար ինչ-որ դրական բան, ապա դա վերաբերում էր կա՛մ նախագծային հիմնարկների կատարած աշխատանքին, կա՛մ հումանիտար ոլորտին (պատմության հուշարձանների հաշվառում, ԼՂԻՄ-ի եւ Հայաստանի ստեղծագործական միությունների միջեւ շփումներ, ԼՂԻՄ-ից ուսանողների ընդունում, ուսուցիչների գործուղում եւ այլն), կա՛մ առանձին հիմնարկների ինքնուրույն նախաձեռնությունների: Բայց վերջիններս հաճախ նման նախաձեռնություններում ոչ այնքան իշխանության օժանդակության, որքան հենց թույլտվության կարիքն ունեին, իսկ բուն գործն արվել էր Շարժման մասնակիցների ջանքերով կամ պահանջով: Իր իսկ՝ զեկուցողի ընդհանուր գնահատականն այն էր, որ որոշումները կատարվում են «անբավարար եւ ոչ լրիվ ծավալով», եւ որ «ձախողվում են միջոցառումները»: Նույնքան եւ ավելի վատ էին կատարել Լեռնային Ղարաբաղի խնդրով

իրենց վրա դրված պարտականությունները միութենական նախարարությունները եւ գերատեսչությունները[696]:

Ըստ էության՝ նույն գնահատականները կրկնվում են նաեւ Գերագույն խորհրդի ընդունած համապատասխան որոշման մեջ: Թերությունները վերացնելու հանձնարարականների հետ միասին կառավարությանը հանձնարարվեց Լեռնային Ղարաբաղին օգնելու նոր միջոցառումներ մշակել: Որոշման կետերի մեծ մասն ուղղված էր կենտրոնական իշխանությանը. տեղյակ պահելով միութենական գերատեսչությունների անբավարար աշխատանքի մասին՝ առաջարկվում էր՝ «ԼՂԻՄ պրոբլեմի քննարկման եւ հետագա լուծման համար պատգամավորական հանձնաժողով ստեղծել», բարձրացնել ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի կարգավիճակը՝ ապահովելով, որ մարզը անմիջականորեն ենթարկվի Կենտրոնին, վերականգնել մարզային իշխանությունների գործունեությունը, ԽՍՀՄ Սահմանադրության մեջ կատարել փոփոխություններ, որոնք «հնարավորություն կընձեռեն սահմանադրական ճանապարհով լուծել ազգամիջյան վիճելի հարցերը» եւ այլն[697]: Ստեղծվեց նաեւ «ԼՂԻՄ-ի հետ տնտեսական, սոցիալ-կուլտուրական, հոգեւոր կապերի համակողմանի զարգացման ուղղությամբ աշխատանքի կոորդինացման եւ վերահսկողության համար» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի մի հանձնաժողով[698]:

Դժվար չէ նկատել, որ այս բոլոր հարցադրումներն արդեն արվել էին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում, իսկ հանձնաժողով կազմելու մասին նաեւ որոշում էր ընդունվել:

Միայն այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի զարգացման եւ նրան օգնելու վերաբերյալ կայացված որոշումից մոտ մեկուկես տարի հետո էր Գերագույն խորհուրդն անդրադառնում ողջ հասարակությանը հուզող այդ խնդրին, առավել եւս դրանց իրականացման խղճուկ արդյունքները բավարար էին ցուցադրելու ՀԽՍՀ իշխանությունների մտահոգությունների իրական աստիճանը: Լեռնային Ղարաբաղի հետ կապված հարցի քննարկումը եւ հենց ընդունած որոշումը հստակ ցուցադրեց, որ Շարժման մտահոգությունները, ՀԽՍՀ իշխանություններից դժգոհությունները եւ բուռն քննադատությունը ինչպես 1988-ին, այնպես էլ 1989-ին եղել են հիմնավոր եւ իրավացի: Անգամ այն սահմաններում, որ թույլատրվել եւ հանձնարարվել էր

---

696 *«Խորհրդային Հայաստան», 26.06.1989:*

697 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 54:*

698 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 55:*

կենտրոնական իշխանությունների կողմից ընդունված որոշումներով՝ օգնություն ցուցաբերել ԼՂԻՄ-ին, փաստորեն՝ ոչինչ չէին արել:

թ) Աղետի գոտու հարցը Գերագույն խորհրդի նստաշրջանի եւ ՀՀԾ-ի օրակարգում

Դեկտեմբերյան երկրաշարժը ոչ միայն տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր էր խլել, հսկայական նյութական վնաս պատճառել, այլեւ, բնականաբար, հարուցել էր տասնյակ ու հարյուրավոր սոցիալական խնդիրներ: Ուստի նույնքան անբնական էր, իսկ տվյալ դեպքում՝ բնութագրական, որ հանրապետության իշխանության բարձրագույն մարմինը հանդիսացող Գերագույն խորհուրդը երկրին պատուհասած այդպիսի մի արհավիրքից յոթ ամիս հետո էր միայն անդրադառնում խնդրին:

Նույնիսկ ըստ ներկայացված պաշտոնական ուռճացված տվյալների՝ չափազանց ծանր էր իրավիճակը, ու անբավարար վիճակում էին աղետի հետեւանքների վերացման աշխատանքները: 1989 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքներից կես տարվա ընթացքում կատարվել էր միայն 27%-ը: Գյուղական բնակավայրերի բնակարանների վերականգնման նախատեսված պլանը կատարվել էր ընդամենը 10%-ով: Վերականգնման համար նույն տարում նախատեսված 99 գյուղական դպրոցներից վերականգնվել էր միայն 2-ը, 530 հազար անօթեւան մնացած մարդկանցից տնակներով ապահովվել էր միայն 48 հազարը[699]: Կառավարության ղեկավար Վլադիմիր Մարգարյանցի այս զեկուցումից դժվար չէր տեսնել նաեւ, որ թերացումների ու ձախողումների հիմնական պատճառը ոչ միայն նյութական, այլ ավելի շատ կազմակերպական բնույթի են եղել, համակարգի անկատարության, պաշտոնյաների կողմից գործը կազմակերպելու անկարողության հետեւանք[700]:

[699] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26.06.1989:*

[700] *Իշխանությանը մտահոգում էր ոչ թե իրավիճակը ինչ-որ կերպ շտկելը, այլ այն, որ իրական, շատ ավելի վատ պատկերը կարող է հայտնի դառնալ օգնություն տրամադրող արտասահմանյան երկրներին: Օրինակ՝ մի զեկուցագրով հետախուզական ծառայությունները հանրապետության ղեկավարությանը նախապես տեղյակ էին պահում արտասահմանից սպասվող լրագրողների մի մեծ խմբի այցի եւ նրանց հետաքրքրող հարցերի մասին: Եւ այդ բոլոր հարցերն իրենց մեջ նաեւ, ըստ էության, պատասխան ու մեղադրանք են պարունակում. ա) ինչպե՞ս է նախապատրաստվում տուժած բնակչությունը ձմռանը (ըստ արտասահմանյան թղթակիցների գնահատականների՝ մոտ 200000 մարդ ձմռանը կշարունակի ապրել վրաններում), բ) ի՞նչն է աղետի գոտում ցեմենտի եւ այլ շինանյութերի պակասի պատճառը, գ) ինչո՞վ է բացատրվում Հայաստանի մի շարք ղեկավար աշխատողների արձակուրդ գնալը, երբ վերականգնողական աշխատանքը դանդաղ է ընթանում, դ) ինչպե՞ս է օգտագործվում բազմաթիվ արտասահմանյան երկրներից հավաքված օգնությունը, ե) ինչո՞ւ չեն դրված այն 1100 հավաքովի տնակների հիմքերը, որոնք տրամադրվել են Կարմիր Խաչի կողմից. տեղեկություններ կան, որ տնակները տրամադրվում են ոչ թե անհատույց, այլ 5000 ռուբլի վճարի դիմաց, զ) ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում որպես օգնություն առաքված բժշկական սարքավորումների թալանը կանխելու ուղղությամբ (տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.49):*

Այս ամենը՝ հրապարակային փաստաթղթերում:

Աղետի գոտում շատ ավելի տխուր է եղել իրական պատկերը, որ գտնում ենք հրապարակման ոչ ենթակա փաստաթղթում: ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի՝ ԽՍՀՄ կառավարության ղեկավարին ուղղված մի նամակում ասվում է. «... Ներգրավված կազմակերպությունների կողմից շատ օբյեկտների կառուցման աշխատանքները դեռ չեն սկսվել, իջեցվել են առաջին կիսամյակի եւ երրորդ եռամսյակի պլանները: Քաղաքներում ու շրջկենտրոններում պետք է 1989թ. կառուցվեր 1440000 քառ. մետր բնակելի տարածք, մինչդեռ առաջին կիսամյակի համար պլանավորված է միայն 124000, այսինքն՝ 10%-ից պակաս: Բայց նաեւ այդ պլանը չի կատարվի, սպասվում է 14500 քառ. մետր: Ավելի լավ վիճակում չեն գյուղերը, դպրոցների, հիվանդանոցների, մանկապարտեզների շինարարությունը: Բայց պլանները դրամական արտահայտությամբ, որպես կանոն, կատարվում են: Վագոններում եւ փայտե տնակներում 530000 անօթեւան մնացածներից տեղավորված են միայն 50000 մարդ: Շատերը չեն դիմանում եւ թողնում են հայրենի քաղաքները եւ գյուղերը»[701]: Ապա տեղեկացվում է, որ նախատեսված 72000 շինարարի փոխարեն աշխատում է 27000, իսկ այդ քանակն էլ գնալով կրճատվում է եւ վատ է օգտագործվում նյութատեխնիկական անբավարար մատակարարման պատճառով: Կազմակերպական առումով եւս վիճակը վատ էր. երկու ամիսը մեկ փոփոխվում էին շինարարական տեղամասերի ղեկավարները, ընդունվում էին միմյանց հակասող, միմյանց բացառող որոշումներ[702]:

Հանրապետության առաջին դեմքի կողմից արձանագրված խղճուկ թվերը, պլանների չկատարման փաստը ու դրանց կողքին՝ «բայց պլանները դրամական արտահայտությամբ, որպես կանոն, կատարվում են» միտքը կարծես թե այլ կերպ դժվար է մեկնաբանել, քան՝ որ վերականգնման

[701] *ՀԱԱ, ֆ.1, ց.127, գ.691, թ.8-9:*

[702] *Տե՛ս նույն տեղում:*

աշխատանքների համար տրամադրված միջոցների մեծագույն մասը, փաստորեն, թալանվում, յուրացվում էր «օգնության» եկած կազմակերպությունների եւ տեղական պաշտոնյաների կողմից: Փաստորեն՝ հենց այդ վիճակն էր ներկայացնում դեռ ապրիլի սկզբին Շարժման կողմից տարածված թռուցիկը, եւ դրանում ներկայացված փաստերում որեւէ չափազանցություն չկար. «Մինչեւ այժմ Լենինական քաղաքում շահագործման չի հանձնված ոչ մի բնակելի շենք: Մեզ օգնության հասածները զբաղված են հարբեցողությամբ, բոնաբարություններով, այլ քրեական հանցագործություններով: Դատախազությունը, դատարանը, միլիցիան ոչ մի միջոց չեն ձեռնարկում, քանի որ զբաղված են տնակների վաճառքով, ստացած օգնության թալանով: Միլիցիան մի բան լավ է յուրացրել՝ մահակներով զինված պղծել Սումգայիթի զոհերի հիշատակատեղին, ցրել երեքից ավելի հոգով կանգնածներին եւ «անկախություն գուզե՛ք» գոչելով քարշ տալ բաժանմունք: Կորսված 600 տնակներից ՕԲԽՍՍ-ի օգնությամբ գտնվել են 120-ը: Ստացված 87 անգլիական տնակներից 2-ը հանձնված է կոմերիտմիության քաղկոմին, իսկ 85-ը անհայտացել է: Մարտի 21-ին երրորդ հիվանդանոցում ստուգվել են 35 հարբած այլազգի վարորդներ: Մեքենաների վրա, պատերին գրում են. «այս անիծյալ քաղաքում կանայք չկան»[703]: Շարժումը շատ լավ գիտեր, թե ինչպիսի վիճակ է տիրում աղետի գոտում, բայց իր համար դժվարագույն ամիսներին դրա վրա էականորեն ազդել չէր կարող: Սակայն խնդիրը միշտ նրա ուշադրության կենտրոնում էր: Դրան անդրադարձ եղավ ապրիլի 24-ի հանրահավաքում, որտեղ հանրահավաքի մասնակիցների անունից ՀԽՍՀ ԳԽ նախագահությունից պահանջվում էր. «Աղետի գոտին հայտարարել սթափության գոտի», «Աղետի գոտու մեծաքանակ աշխատունակ բնակչությանն ապահովել աշխատանքով, դյուրություններ ստեղծել նրանց համար շինանյութեր հայթայթելու եւ սեփական ձեռքերով իրենց բնակարանները կառուցելու համար»[704]:

Շարժումը, որ անհանգստացած էր Աղետի գոտում տիրող իրավիճակով, կազմակերպական աշխատանքներից բացի՝ նստաշրջանում սուր քննադատության ենթարկեց վերականգնման ծրագրերի անբավարար գիտական հիմնավորվածությունը, Ռուսաստանից ոչ որակյալ աշխատուժի հսկայական զանգվածի ներմուծումն այն դեպքում, երբ տեղում հսկայական

[703] *ՀՀԱՆԱ, 07.04.89 ստորագրված՝ «Ղարաբաղյան շարժման Գյումրիի առաջամարտիկներ»:*

[704] *ՀՀԱՆԱ 15/24.04.89:*

թիվ էր կազմում աշխատուժի ավելցուկը, իր անհանգստությունը հայտնեց արտասահմանյան երկրներից ստացված վայլուտային միջոցների ճակատագրի մասին: Գերագույն խորհուրդը հունիսի 23-ին ընդունեց 21 կետից բաղկացած ընդարձակ մի որոշում, որի իրականացման հիմքերը, սակայն, ոչ մի կերպ չէին երեւում: Մինչ այդ, որպես գործնական քայլ՝ ՀՀԾ-ն ստեղծել էր «Ազգային կառույց» կոչվող իր շտաբը (ղեկավարում էր Ազատ Մարտիրոսյանը), որի կանոնադրությունը պաշտոնապես գրանցվեց հուլիսի 19-ին: Նրա անունից կոչ հղվեց ԽՍՀՄ-ում եւ արտասահմանում ապրող հայությանը՝ բոլոր ջանքերը միավորել աղետի գոտին վերականգնելու համար: «Ազգային կառույցը» ձեռնարկեց աշխատանքային ջոկատների կազմակերպումը, որոնք բարեգործական կամ պայմանագրային սկզբունքներով պետք է աշխատեին աղետի գոտում: Կառույցը նյութական միջոցներ էր հայթայթում, նյութական եւ իրավաբանական օգնություն էր տրամադրում աղետյալներին, համագործակցում էր իշխանության, տնտեսական մարմինների եւ այլ կազմակերպությունների հետ:

ժ) Բնապահպանական հարցերը նստաշրջանում, «Նաիրիտ»-ի փակման որոշումը

Ղարաբաղյան շարժմանը նախորդած բնապահպանական շարժման կենտրոնական խնդիրը «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման փակման հարցն էր[705]: Նրա թունավոր արտանետումներն ապականում էին շրջապատը, փաստորեն՝ ամբողջ քաղաքը, եւ խիստ վտանգավոր էին մարդկանց առողջության համար: Այդ փաստը շատ լավ հայտնի էր նաեւ իշխանությանը, եւ հայտնի էր շատ վաղուց: Բավական է ասել, որ ամբողջ 30 տարի զանազան որոշումներ էին կայացվել ծայրահեղ անհրաժեշտ համարված այդ խնդիրը լուծելու համար, սակայն դրանց միջոցով ոչինչ չէր փոխվել[706]: Ավելին, այդ շրջանին վերաբերող մի զեկուցագիր վկայում է, որ

[705] *Առաջին սուր հրապարակային ելույթները «Նաիրիտի» փակման անհրաժեշտության մասին միութենական մամուլում Զորի Բալայանինն էին. 1987թ. «Լիտերատուրնայա գազետա» թերթում հրապարակվեցին նրա «Օրհաս» եւ «Երեւանը դժբախտության մեջ է» հոդվածները:*

[706] *Ահա այդ որոշումների մի ժամանակագրություն՝ կազմված 1990թ հունվարին (տե՛ս ՀՀԱՆԱ 15/09.01.90). 1956թ.ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման համաձայն՝ Երեւանից պետք է հանվեին մթնոլորտն ապականող 76 ձեռնարկություն, այդ թվում նաեւ «Նաիրիտը», 1973թ. Մասիսում սկսվեցին «Նաիրիտի» նոր արտադրության շինարարական աշխատանքներ, սակայն չշարունակվեցին, 1981թ. ԽՄԿԿ ԿԿ-ի եւ*

բնապահպանական, եւ, մասնավորապես՝ «Նաիրիտի» հարցին, մատների արանքով են նայել. «Նախկին ղեկավարության կողմից նշանակվում էին ոչ կոմպետենտ կադրեր, որոնք չէին կարողանում կամ չէին ուզում լուծել քիմիական այս արտադրության հետ կապված էկոլոգիական խնդիրները: Դրա հետեւանքով առաջացած իրավիճակը ազատ արձակեց էկոլոգիապես վնասակար բոլոր արտադրություններն անվերապահ փակելու կողմնակիցների ձեռքերը»[707]:

Բնապահպանական շարժման խնդիրները եւս Ղարաբաղյան շարժումը ներառել էր իր օրակարգում, եւ նրա ճնշման տակ իշխանությունները ստիպված էին եղել շատ հարցեր լուծել: Գերագույն խորհրդի համապատասխան որոշման նախաբանում դրանք ներկայացվում են որպես իշխանությունների կողմից «վերջին տարիներին հանրապետությունում իրականացված բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումներ»: Այդ շարքում թվարկվում են՝ ԱԷԿ-ի աշխատանքի դադարեցումը, Սեւանա լճի շուրջ կոյուղու կոլեկտորի կառուցումը, Հրազդանի կառուցվող լեռնաքիմիական կոմբինատի եւ Քանաքեռի ալյումինի գործարանի վերապրոֆիլավորումը,

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի հուլիսի 18-ի հ. 567 որոշմամբ, բնապահպանական նկատառումներով արգելվել էր Երեւանում նոր ձեռնարկություններ կառուցել կամ ընդլայնել հները, 1984թ. հուլիսի 24-ի ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի հ.1456բ կարգադրությամբ 1986-1990թթ. ԽՍՀՄ-ում պետք է կառուցվեր տարեկան 100.000 տոննա հզորությամբ քլորոպրենային կաուչուկների նոր գործարան (բացի Հայաստանի տարածքից), որը պետք է փոխարիներ «Նաիրիտին», 1987թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի հանձնաժողովը առաջարկել էր 1987 թվականին փակել «Կաուչուկ-1»-ը, իսկ 1988թ. ընթացքում վերապրոֆիլավորել «Նաիրիտ»-ը ամբողջությամբ, 1987թ. հուլիսի 9-ին ՀԽՍՀ Պետական գլխավոր սան. բժշկի որոշմամբ 1987թ. սեպտեմբերի 1-ին պետք է դադարեցվեր «Կաուչուկ-1»-ի գործունեությունը, 1987թ. հուլիսի 29-ին ԽՍՀՄ Պետական գլխավոր սանիտարական բժշկի որոշմամբ... 1988թ. ընթացքում Երեւանից պետք է հանվեին «Նաիրիտի» բոլոր արտադրությունները, 1989թ.մարտի 17-ին ԽՍՀՄ բնության պահպանության կոմիտեի տեղեկանքը պահանջում էր դադարեցնել քլորոպրենի եւ կաուչուկի արտադրությունը, 1989թ. ապրիլի 21-ին ՀԽՍՀ բնության պահպանության պետական կոմիտեի որոշումը քլորոպրենային կաուչուկի արտադրությունը դադարեցնելու եւ «Նաիրիտի» վերապրոֆիլավորումն իրականացնելու մասին, 1989թ. ՀԽՍՀ բնության պահպանության պետական կոմիտեի որոշումը նույն թվականի հունիսի 16-ից դադարեցնել քլորոպրենային կաուչուկի արտադրությունը: Վերջին որոշումները, բնականաբար, կայացվել էին նաեւ բնապահպանական շարժման ճնշման տակ:

[707] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.119:*

«Կաուչուկ-1»-ի եւ Կիրովականի քիմիական գործարանում որոշ խիստ վնասակար արտադրությունների փակումը, Աբովյանի «Հայկենսատեխնոլոգիա» գործարանի շինարարության դադարեցումը եւ այլն[708]:

Եւ այնուամենայնիվ, համապատասխան զեկուցմամբ Գերագույն խորհրդին ներկայացված բնապահպանական սուր խնդիրներն անգամ (որ իրականի մի փոքր մասն էին) բավարար էին՝ հանցագործ ճանաչելու համար այն ռեժիմը, որը պատասխանատու էր նման իրավիճակ ստեղծելու համար: Իշխող քաղաքական ուժի՝ կոմունիստների կողմից «ինքնաքննադատաբար», սովորաբար «սխալ» բառով բնորոշվող ձեռնարկումների մի մասն, իրոք, դժվար էր այլ կերպ բնորոշել, քան դիտավորյալ հանցագործություն կամ վնասարարություն: Օրինակ՝ ժամանակին Սեւանի մակարդակը 20 մետրով իջեցնելու որոշում ընդունելը ինչպե՞ս կարող էր սովորական «սխալ հաշվարկ» համարվել, եւ չգիտակցվեին դրա կործանարար հետեւանքները: Կամ՝ Հրազդանի հանքաքիմիական կոմբինատը նախագծողները ինչպե՞ս կարող էին չհաշվել, որ անգամ հզորության կեսով աշխատելու դեպքում, ինչպես արդեն հենց իրենք խոստովանում էին, նրա հարեւանությամբ գործող Ծաղկաձորի հանգստավայրից «միայն հուշ կմնա»:

Այս ամենը բավարար էր եզրակացնելու, որ բնապահպանական շարժումն իր բոլոր պահանջներում բացարձակ իրավացի էր, իսկ Ղարաբաղյան շարժման կողմից էլ նրա նախաձեռնությունների պաշտպանությունը՝ հասկանալի եւ օրինաչափ: Այժմ Շարժման ճնշմամբ Գերագույն խորհրդի նստաշրջանի օրակարգ մտած բնապահպանական հարցերի մեխը «Նաիրիտի» խնդիրն էր: Ողջ բնակչությունը «Նաիրիտի» փակման հարցում միարժեք վերաբերմունք ուներ:

ՀԽՍՀ իշխանությունները «Նաիրիտի» հարցում Շարժման ճնշման տակ ինչ-ինչ զիջումների այնուամենայնիվ, գնացել էին, ինչի գործնական դրսեւորումներից մեկը 1988թ. մայիսին «Կաուչուկ -1»-ի փակումն էր, որ իրականացվել էր Մոսկվայի թույլտվությամբ: Կոմբինատի ամբողջական փակման քայլին նրանք առավել եւս չէին կարող գնալ առանց վերջինիս թույլտվության: Իսկ Մոսկվան ամենեւին չէր պատրաստվում այս հարցում որեւէ զիջման գնալ եւ հանձնարարել էր շարունակել «Նաիրիտի» շահագործումը: Ստեղծված պայմաններում Հայաստանի իշխանությունը կանգնած էր երկու հզոր ու անզիջում ճնշումների միջեւ: Մի կողմից՝ նա չէր կարող չկատարել Մոսկվայի հրահանգը, մյուս կողմից՝ համաժողովրդական

[708] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 70:*

պահանջի նկատմամբ կոշտ դիրքորոշում որդեգրելը առավել կմեծացներ իր առանց այն էլ խորացող վարկաբեկումը հասարակության մեջ (ինչը նա այժմ ամեն գնով աշխատում էր մեղմել), լրացուցիչ ուժ եւ լիցք կտար արագ թափով վերականգնվող եւ ահագնացող Շարժմանը եւ ընդհանրապես կզրկեր իշխանությանը քաղաքական որեւէ նախաձեռնության հնարավորությունից: Այսինքն՝ կողմերից որեւէ մեկին «չոր» մերժելը կործանարար կլիներ վարչախմբի համար:

Գերագույն խորհրդում ընդունելիք որոշման նախագծերը կազմվում էին ՀԿԿ կենտկոմում կամ համաձայնեցվում այնտեղ: Ըստ այդմ էլ կազմվում էր հարցի առիթով հիմնական զեկուցումը: Վերջինիս մեջ դժվար էր որսալ, թե իշխանությունը նախապես «Նաիրիտը» փակելու քաղաքական որոշում էր ընդունել: Ըստ հարցի հիմնական զեկուցողի (Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յու. Խոջամիրյան) «Նաիրիտը» արդեն ավելի քան 40 տարի գործում է պայթյունալի արտադրության անթույլատրելիորեն մեծ քանակությամբ վնասակար արտանետումներով եւ չմաքրված կեղտաջրերով», «ձեռնարկությունը փաստորեն չունի սանիտարական գոտի», ՀԽՍՀ Բնության պահպանության պետական կոմիտեի «գործիմաց հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումն ի վիճակի չէ ապահովել աղտոտվող նյութերի արտանետումների նորմատիվները, իսկ հանրապետական եւ միութենական պատասխանատուներն այդ ուղղությամբ ոչինչ չեն ձեռնարկում»: Եւ եզրակացությունը կարծես թե միանշանակ էր. «Դա հիմք է տալիս քլորոպրենի եւ դրանից պատրաստվող կաուչուկի արտադրությունը դադարեցնելու հարցադրման համար»: Սակայն դրանից հետո արվում էր լուրջ վերապահություն. «Այդպիսի արտադրության փակումը շատ բարդ հարց է», եւ բերվում էին Խորհրդային Միության մասշտաբով տնտեսական հիմնավորումներ[709]: Մինչ այդ, ՀԿԿ Կենտկոմի Առաջին քարտուղարն իր ելույթում, վկայակոչելով միութենական մի հատուկ հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները, արձանագրել էր, որ՝ «այս վիճակում այդ արտադրությունը շարունակել չի կարելի», բայց չէր ասել, թե ինչ պետք է անել[710]: Ավելի հասկանալի լեզվով, փաստորեն, ասվում էր հետեւյալը. «Նաիրիտի» աշխատանքը մեծ վտանգ է շրջապատի եւ ամբողջ Երեւանի բնակչության համար, բայց փակելը դժվար է, քանի որ դա տնտեսապես մեծ վնաս կբերի Խորհրդային Միությանը:

[709] *Խորհրդային Հայաստան» 27.06.1989:*
[710] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25.06.1989:*

Երկու դեպքում էլ վիճակի արձանագրումը եւ գնահատականը համընկնում էին իրականությանը, Շարժման եւ հասարակության պատկերացումներին, բայց հստակ չէր երեւում լուծումը: Վերջնական քաղաքական որոշման կայացումը, ըստ երեւույթին, թողնվել էր կողմնորոշվելու համար անմիջապես նստաշրջանում՝ կապված հասարակական ճնշման ուժգնության հետ: Ճնշումը եղավ բավարար արդյունավետ, եւ ընդունված որոշումը ձեւակերպվեց հետեւյալ կերպ. «Հաշվի առնելով «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման արտադրության խիստ վտանգավորությունը Երեւանի եւ մերձակա շրջանների համար, ինչպես նաեւ այն, որ մինչեւ այժմ այդ վտանգը վերացնելու համար ձեռնարկված միջոցները արդյունք չեն տվել, ընդառաջելով աշխատավորների բազմաթիվ բողոքներին ու պահանջներին, 1989 թվականի ընթացքում փակել «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը»[711]: Նման ձեւակերպմամբ, մի կողմից, բավարարվում էր հասարակական պահանջը, եւ հանրապետության իշխանությունը վարկանիշի նոր կորուստ չէր ունենում, մյուս կողմից՝ ժամանակ էր շահվում մշակելու եւ գտնելու արտադրությունը չփակելու ձեւեր եւ միջոցներ (ինչը հստակ բացահայտվեց հետագայում), դրանով էլ առայժմ բավարարվում էր Մոսկվայի պահանջը: Որոշման կատարման ժամկետային անորոշությունը լուրջ կասկածների տեղիք էր տալիս, այդ պատճառով Շարժման ներկայացուցիչների պահանջով ստեղծվեց Գերագույն խորհրդի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման փակման կազմակերպական, տնտեսական եւ արտադրության վերապրոֆիլավորման միջոցառումներ իրականացնող» մի հանձնաժողով[712]:

ԳԽ հանձնաժողովներ ստեղծվեցին նաեւ Լեռնային Ղարաբաղի հետ կապված որոշման կատարման, ինչպես նաեւ փախստականների գործերով զբաղվելու համար: Այս հանձնաժողովներում առաջին անգամ Շարժումն արձանագրեց իր լուրջ ներկայությունը: Տարբեր հանձնաժողովներում ընդգրկվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը, Սամվել Գեւորգյանը, Դավիթ Վարդանյանը, Ռաֆայել Ղազարյանը, Վազգեն Մանուկյանը, ինչպես նաեւ Դավիթ Շահնազարյանը, Արշակ Սադոյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Շահեն Պետրոսյանը, Հակոբ Սանասարյանը, Վահան Իշխանյանը եւ ուրիշներ[713]:

[711] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 70:*
[712] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 72:*
[713] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 55, 56, 58, 72:*

Չնայած «Նաիրիտի» փակումը զուտ բնապահպանական առումով էլ տվյալ պայմաններում լրիվ հիմնավորված էր, սակայն Ղարաբաղյան շարժման համար խնդիրը բնապահպանականից առաջ ուներ կարեւոր քաղաքական նշանակություն: «Նաիրիտը» Խորհրդային Միությունում քլորոպրենային կաուչուկ արտադրող միակ ձեռնարկությունն էր: Նրա փակման դեպքում խորհրդային տնտեսության վնասները հաշվարկվում էին շուրջ 14 միլիարդ ռուբլի: Այսինքն՝ այս գործարանի փակման իրական սպառնալիքը, կարող էր լինել մի լծակ, որով հնարավոր կլիներ ազդել Մոսկվայի վրա՝ զիջումների հասնելու հիմնական՝ Լեռնային Ղարաբաղի հարցում:

ժա) Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) պաշտոնական ճանաչումը

Որպես կազմակերպություն պաշտոնապես ճանաչվելու հարցը Շարժումը հետապնդում էր դեռ 1988-ի մարտից: Իշխանություններն այդ ժամանակ խոստացել էին առաջին «Ղարաբաղ» կոմիտեն ճանաչել որպես հասարակական կազմակերպություն, սակայն մի քանի օր անց, մարտի 24-ին, դրա փոխարեն ՀԽՍՀ ԳԽ նախագահությունը նրա գործունեությունը դադարեցնելու որոշում ընդունեց: Նույն թվականի օգոստոսի 19-ին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն հրապարակեց Շարժման Ծրագիրը եւ դրա շուրջ «Հայոց համազգային շարժում» անունով կազմակերպական կառույց ստեղծելու կանոնադրությունը: Կազմակերպությունը գրանցելու հետագա բոլոր դիմումները 1988-ի եւ 1989-ի ընթացքում մնացել էին անպատասխան: Պաշտոնապես ճանաչվելուն ուղղված վերջին նախաձեռնությունը կատարվել էր 1989թ. ապրիլի 8-ին, երբ շրջանային կազմակերպությունների ներկայացուցիչների ժողովի մասնակիցների ստորագրությամբ դիմում հղվեց կազմակերպության հիմնադիր համագումարը հրավիրելու եւ կազմակերպությունը գրանցելու հարցով: Կազմակերպության գրանցման պահանջը հնչում էր նաեւ մայիսյան հանրահավաքներում: Այժմ, այլ հարցերի թվում, Շարժումը պատրաստվում էր լուծել նաեւ այս հարցը եւ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախատեսված նստաշրջանը հարմար առիթ էր՝ հարուցելու համար ՀՀՇ-ի՝ որպես հասարակական կազմակերպության պաշտոնական ճանաչման հարցը:

Հունիսի 17-ին Երեւանի պետական համալսարանի մեծ դահլիճում հրավիրվեց «Հայաստանի հասարակական կազմակերպությունների եւ խորհրդագույն հիմնարկ-ձեռնարկությունների լիազոր ներկայացուցիչների»

միացյալ ժողովը: Այն որոշեց կազմակերպության Կանոնադրությունը ներկայացնել Գերագույն խորհուրդ՝ գրանցելու: Մոտ հազար պատվիրակների մեկօրյա քննարկումներից հետո ընդունած «Հռչակագիրը» հայտարարում էր «Հայոց համազգային շարժում» հասարակական կազմակերպության ստեղծումը: Հռչակագիրը հենվում էր 1988թ. օգոստոսի 19-ին «Ղարաբաղ» կոմիտեի կողմից ստորագրված եւ տարածված ՀՀՇ ծրագրի հիմնական դրույթների վրա[714]: Հիմնադիր ժողովն ընտրեց նաեւ ՀՀՇ հիմնադիր համագումարի հրավիրումը նախապատրաստող 12 հոգուց բաղկացած նախաձեռնող խումբ: Համագումարը ենթադրվում էր հրավիրել սեպտեմբերին:

Նստաշրջանում հունիսի 24-ին ունեցած իր ելույթում Լեւոն Տեր-Պետրոսյանը եւս մեկ անգամ առաջ քաշեց ՀՀՇ-ի՝ որպես հասարակական կազմակերպության պաշտոնական ճանաչման հարցը[715]: Համաժողովրդական ճնշման տակ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հունիսի 25-ին ստիպված էր օրակարգ մտցնել եւ քննարկել ՀՀՇ-ի ճանաչման հարցը եւ կայացնել հետեւյալ որոշումը.

«Նկատի ունենալով, որ «Հայոց համազգային շարժում» կազմակերպությունը նպատակ ունի, գործելով սահմանադրության շրջանակներում եւ առաջնորդվելով դեմոկրատիայի, սոցիալական արդարության սկզբունքներով, նպաստելու հայ ժողովրդի առջեւ ծառացած ազգային, սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր խնդիրների, հանրապետությունում բնակվող մյուս ազգերի եւ ազգությունների շահերի իրականացմանը, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1.Հայկական ԽՍՀ Սահմանադրության 49 հոդվածին համապատասխան «Հայոց համազգային շարժումը» ճանաչել որպես հասարակական կազմակերպություն:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ սահմանված կարգով գրանցել նշված հասարակական կազմակերպության կանոնադրությունը»[716]:

Ճիշտ է՝ Գերագույն խորհրդի նախագահությունը, հնարավորինս երկար ձգձգելուց հետո, միայն 1989-ի նոյեմբերի 1-ին, ՀՀՇ հիմնադիր համագումարի նախօրեին, կատարեց այդ հանձնարարությունը, սակայն այս որոշումն էլ արդեն բավարար էր, որպեսզի միահեծան իշխող կոմկուսն

---

[714] *ՀՀՇ հիմնադիր ժողովի Հռչակագրի տեքստը տե՛ս «ՀՀՇ լրատվական թերթիկ»-ի 1-ին համարում (ՀՀԱՆԱ, 01.08.89), ինչպես նաեւ՝ «Դրոշակ», 05.07.1989, էջ 11:*

[715] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 45:*

[716] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 71:*

այլեւս ստիպված լիներ հանրապետության կյանքին վերաբերող յուրաքանչյուր հարցում Շարժման հետ ունենալ պաշտոնական հարաբերություններ:

ժբ) Շարժման քաղաքական ներկայության ապահովումը ՀԽՍՀ Գերագույն խորհրդում

Դեռ 1988-ի աշնանը, ընդառաջելով ՀՀՇ տեղական կազմակերպությունների առաջարկներին, Գերագույն խորհրդի թափուր մնացած ընտրատարածքներում առաջադրվել էր Աշոտ Մանուչարյանի եւ Խաչիկ Ստամբոլցյանի թեկնածությունը: Իշխանությունը, չնայած գործադրած բոլոր միջոցներին, չկարողացավ հաղթահարել հասարակական բուռն պաշտպանությունը, եւ նրանք պատգամավորներ ընտրվեցին: 1989թ. ձմռանը փորձ արվեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ առաջադրել Կոմիտեի ձերբակալված անդամներին եւ Շարժման այլ ակտիվիստների: Սակայն հատուկ դրության եւ պարետային ժամի պայմաններում հնարավոր չեղավ հաղթահարել իշխանության ուժային ճնշումները եւ ապօրինությունները: 1989թ. օգոստոսի 27-ին նշանակված էին Գերագույն խորհրդի թափուր մնացած եւս հինգ տեղի մասնական ընտրություններ: Եւ այժմ բոլորովին այլ էր իրավիճակը: Բոլոր հինգ տեղերում Շարժումն առաջադրեց նաեւ իր թեկնածուներին, այդ թվում նաեւ շինծու մեղադրանքով կալանքի տակ գտնվող, Լեռնային Ղարաբաղում ստեղծված «Կոունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովին:

Ընտրություններին Հայոց համազգային շարժումն արդեն մասնակցում էր պաշտոնապես ճանաչված կարգավիճակով՝ որպես այդպիսին ընտրական տեղամասերում ունենալով նաեւ ընտրական հանձնաժողովների իր անդամները, ինչն էապես պիտի սահմանափակեր ապօրինությունների հնարավորությունը: Հասարակական բարձր ակտիվության պայմաններում անցկացված ընտրություններն ունեցան բնական եւ սպասելի արդյունքներ: Հինգ ընտրատարածքներից չորսում բացարձակ հաղթանակ տարան «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Ռաֆայել Ղազարյանը, ՀՀՇ-ի կողմից պաշտպանվող, «Կոունկ» կոմիտեի անդամներ Ռոբերտ Քոչարյանը եւ Արկադի Մանուչարովը: Միայն մի ընտրատարածքում հնարավոր չեղավ ճեղքել իշխանությունների ապօրինությունների պատնեշը, եւ հաղթեց կոմկուսի թեկնածուն՝ տեղի շրջկոմի քարտուղարը:

Բնութագրական էր ՀՀՇ-ի համառությունն ու հետեւողականությունը Արկադի Մանուչարովի հարցում: Նրան Զարենցավանի ընտրատարածքային

հանձնաժողովը գրանցել էր որպես պատգամավորության թեկնածու: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, վկայակոչելով ԽՍՀՄ Սահմանադրության 96-րդ հոդվածը, ըստ որի՝ ազատազրկման վայրերում գտնվող անձինք չէին կարող մասնակցել ընտրություններին, եւ որ ԽՍՀՄ Սահմանադրությունը գերակա ուժ ունի հանրապետությունների սահմանադրությունների նկատմամբ, պաշտոնապես չեղյալ էր հայտարարել Մանուչարովին գրանցելու մասին որոշումը[717]: Եւ այդուամենայնիվ, ընտրատարածքային հանձնաժողովը, Շարժման ճնշմամբ, անտեսելով ԳԽ նախագահության որոշումը, նրա թեկնածությունը մտցրել էր քվեաթերթիկ: Ընտրությունը կայացել էր, եւ Մանուչարովն առավելագույն ձայներ էր հավաքել ու ընտրվել: Գերագույն խորհրդի նախագահությունը, ընդունելով մյուս ընտրատարածքների ընտրությունների արդյունքները, ստիպված էր երկրորդ անգամ եւ նույն հիմնավորմամբ անվավեր հայտարարել Զարենցավանում կատարված ընտրությունը[718]: Սակայն եւս երկու շաբաթ անց, արդեն Գերագույն խորհրդի նստաշրջանում (որտեղ Հայոց համազգային շարժումն արդեն ոչ թե երկու, այլ հինգ պատգամավոր ուներ) հնարավոր եղավ հասնել հակառակ արդյունքի, եւ Ա. Մանուչարովի պատգամավորական լիազորությունները ճանաչվեցին: Հանրապետության Գերագույն խորհրդի համապատասխան որոշման մեջ նախ արձանագրվում է, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության՝ նույն խնդրին վերաբերող նախորդ զույգ որոշումները հենված են եղել ԽՍՀՄ Սահմանադրության վրա, որի նորմերը, ըստ նույն այդ Սահմանադրության, միատեսակ ուժ ունեն բոլոր հանրապետություններում եւ գերակա են հանրապետական սահմանադրությունների եւ օրենքների նկատմամբ, ուստի եւ մերժվել են Մանուչարովի թեկնածությունը գրանցելու եւ ընտրվելու փաստերը: Իսկ անմիջապես հաջորդ պարբերությամբ նշվում է, որ՝ «Ա. Մ. Մանուչարովի ընտրությունները չեն հակասում Հայկական ԽՍՀ սահմանադրությանը եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին օրենքին, եւ այդ հիմքի վրա ճանաչվում են նրա ընտրված լինելը եւ լիազորությունները»[719]:

Սա կարեւոր հաղթանակ էր եւ ցուցադրում էր ոչ միայն Ղարաբաղյան շարժման հանիրավի ձերբակալված ղեկավարներից ու առաջամարտիկներից մեկի ճակատագրի նկատմամբ Շարժման հետեւողական հոգատարությունը (ինչը նույն կերպ շարունակվեց՝ մինչեւ վերջինիս ստիպված եղան

---

[717] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի 1989, 15, հոդվ. 84:*
[718] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 16, հոդվ. 90:*
[719] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 105:*

բանտից ազատ արձակել): Այս հաղթանակը քաղաքական իմաստով շատ ավելի լայն, լուրջ ու հեռուն գնացող նշանակություն ուներ. **երկրի բարձրագույն իշխանության մարմինն այս դեպքում, փաստորեն, հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները գերակա համարեց միութենականի նկատմամբ** եւ հենվեց դրանց վրա:

Հոգեբանական մի կարեւոր պատնեշ եւս հաղթահարված էր:

ժգ) Իրադարձությունները ԼՂԻՄ-ում, Ղարաբաղի Ազգային խորհրդի կազմավորումը

Հատուկ կառավարման կոմիտեի եւ նրա միջոցով մարզն անմիջապես Կենտրոնի ենթակայության տակ դնելու հույսերը կարճ ժամանակ անց վերացան: Պարզվեց, որ Հատուկ կառավարման կոմիտեն օժտված չէ այդ խնդիրն իրագործելու համար անհրաժեշտ լիազորություններով: Իսկ իրականությունն այն էր, որ նրա առջեւ նման խնդիր չէր էլ դրված: Դատելով արդյունքներից՝ այս քայլով Մոսկվայի նպատակը նման պատրանք ստեղծելով կրքերը հանգստացնելը եւ ժամանակ շահելն էր[720]: Ապրիլի երկրորդ կեսից Ղարաբաղում սկսեց մեծանալ դժգոհությունն ու քաղաքական ակտիվությունը: Ապրիլի 22-ին Հատուկ կառավարման կոմիտեի մի քանի անդամների Բաքու կատարած այցելության առիթով Լեռնային Ղարաբաղում Հայաստանի ժողովրդին ուղղված մի դիմում ընդունվեց, որով ակնկալվում էր վերջինիս օժանդակությունը, եթե ստիպված լինեն դիմելու իրենց սահմանադրական իրավունքների իրականացման «ցանկացած այլ ձեւի»[721]:

Շարժման նոր վերելքն ու թափը, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում, ի շարս այլ գործոնների, պայմանավորված էր նաեւ մայիսի վերջին կայանալիք ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարով, որից կարելի էր ինչ-որ ակնկալիքներ ունենալ: Մայիսի 2-ին Ղարաբաղում հայտարարվեց համընդհանուր գործադուլ՝ ՀԽՍՀ-ի հետ միացման,

[720] *Փաստորեն՝ այդ է վկայում հենց այս կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին ԽՄԿ կկ-ի 1989թ. սեպտեմբերյան պլենումի իր ելույթում. «Գործնականում շատ բան չստացվեց: Ավելի քան չորս ամիս կաբինետից կաբինետ շրջեցին կառավարման հատուկ ձեւի մասին փաստաթղթերը, եւ արդյունքում դրանք հայտնվեցին այնպիսի վերապահումներով, խճճված վիճակում, որ հատուկ կառավարման նրա առավելագույն սկզբունքը դարձավ խիստ կերպով սահմանափակ: Մինչեւ հիմա որոշված չէ կոմիտեի կարգավիճակը, չկա նրա մասին կանոնադրությունը...» («Խորհրդային Ղարաբաղ», 26.09.1989):*

[721] *ՀՀԱՆԱ, 08/22.04.89: Դիմումը ստորագրված է «Արցախցիներ»:*

պարետային ժամի վերացման, մարզի ադրբեջանական բնակավայրերում մեծ ծավալով սկսված շինարարական աշխատանքների դադարեցման պահանջով (հայկական բնակավայրերում նման աշխատանքներ, ըստ էության, չկային): Քիչ անց, ոգեւորված Հայաստանում Շարժման բուռն աշխուժացմամբ եւ օժանդակությամբ, գործադուլը հայտարարվեց անժամկետ, եւ այն, փաստորեն, շարունակվեց ողջ ամռան ընթացքում: Հանրահավաքներից մեկը, կայացած հունիսի 13-ին, ընդարձակ մի դիմում հղեց «Աշխարհի ժողովրդավարական պետությունների ղեկավարներին, ժողովրդական եւ բանվորական կուսակցություններին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին»՝ խնդրելով պաշտպանել ինքնորոշման իրենց իրավունքը ոտնահարումից[722]: Հաջորդ օրվա հանրահավաքը մի այլ դիմում հղեց ՀԽՍՀ ԳԽ-ին՝ կոչ անելով առաջիկա նստաշրջանում ԼՂԻՄ-ը հանրապետության կազմի մեջ ընդունելու որոշում կայացնել[723]:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարից հետո, հունիսի 19-ին, Լեռնային Ղարաբաղի ղեկավարները հանդիպում ունեցան Մ. Գորբաչովի հետ: Ըստ Վաչագան Գրիգորյանի՝ Գորբաչովը համաձայնեց մարզային խորհրդի եւ մարզկոմի լիազորությունների վերականգնմանը, իսկ Հայաստանի հետ միավորվելու պահանջին դեմ էր: Դրա փոխարեն նա, իբր, առաջարկել էր մարզն իր տարածքով եւ բնակչությամբ հանել Ադրբեջանի կազմից եւ դնել միութենական կառավարության ենթակայության տակ[724]: Հանդիպման արդյունքներն ամենեւին հուսադրող չէին եւ գործադուլի դադարեցման հիմք չդարձան:

Միաժամանակ՝ սկսեց ակտիվանալ նաեւ ադրբեջանական կողմը, ծայր առան ազգամիջյան տարբեր բնույթի բախումներ: Դրանք Հայաստանից ԼՂԻՄ գնացող ավտոմեքենաների վրա հարձակումներ եւ քարկոծումներ էին, խառը բնակչություն ունեցող բնակավայրերում ընդհարումներ, տների հրկիզումներ, հովիվների միջեւ փոխհրաձգություն, ճանապարհները փակելու փորձեր եւ այլն: Շուշիի շրջանի մի շարք հայկական գյուղեր՝ Քարին տակ, Ծաղկաձոր, Եղծահող, Բերդաձոր, Կիրով, ադրբեջանցիների կողմից ճանապարհները փակելու պատճառով հայտնվել էին լիակատար մեկուսացման մեջ: Դրան ի պատասխան՝ հայերը փորձում էին փակել Աղդամ-Շուշի ճանապարհը:

[722] *ՀՀԱՆԱ, 08/13.06.89:*

[723] *ՀՀԱՆԱ, 08/14.06.89:*

[724] *«Խորհրդային Ղարաբաղ», 23.08.1989:*

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի կողմից ընտրված Գերագույն խորհուրդը կատարեց նրա հանձնարարությունը. Ազգությունների խորհուրդը հուլիսի 12-ին պատգամավոր Ս. Ի. Մանյակինի նախագահությամբ կազմեց մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակը եւ համապատասխան եզրակացություններ ներկայացներ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ[725]: Հանձնաժողովի կազմավորման, ապա նրա այցի ձգձգումը ավելի էր սրում իրավիճակը: Եթե հայ բնակչությունը դրա հետ հույսեր էր կապում եւ անհանգստանում ձգձգմամբ, ապա ադրբեջանցիները այդպիսի հանձնաժողովի կազմումը գնահատում էին որպես միջամտություն իրենց երկրի ներքին գործերին: Նույն կերպ նաեւ Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման փաստը ադրբեջանցիները դիտում էին որպես մարզը աստիճանաբար Ադրբեջանի կազմից դուրս բերելու եւ Հայաստանին միացնելու միջոց: Իր հերթին՝ հայ բնակչությունն էր նույն Կոմիտեից բարձրաձայն իր դժգոհությունը հայտնում, քանի որ վերջինս, ըստ էության, չէր կատարում մարզը Կենտրոնին ենթարկելու իր վրա դրված խնդիրը:

Փոխադրամիջոցների քարկոծումները, հրկիզումները, փոխադարձ ծեծկռտուքը, անասնագողությունը եւ այլն դարձան ավելի հաճախադեպ: Ստեփանակերտի Կրկժան կոչվող արվարձանում եղած ընդհարումից հետո փակվեց ադրբեջանական Մալիբեյլի գյուղով դեպի Մարտունի եւ մի քանի հայկական գյուղեր տանող ճանապարհը: Դրան ի պատասխան՝ ստեփանակերտցիները փակեցին դեպի Շուշի տանող ճանապարհը, ապա ընդհարում տեղի ունեցավ ադրբեջանական Ղաշչուլար եւ հայկական Շոշ գյուղերի միջեւ: Կենտրոնական լրատվամիջոցների ապատեղեկատվությունը ավելի էր սրում իրավիճակը: Շուշիում ադրբեջանցիները վայր գցեցին Հայրենական պատերազմի հերոս Նելսոն Ստեփանյանի արձանը եւ փորձեցին հրդեհել Ղազանչեցոց եկեղեցին: Երեւանում այս ամենին արձագանքեցին հզոր հանրահավաքներով[726]: Անգամ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման հետ կապված դիմում հղեց ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ղեկավարությանը, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիային եւ բոլոր հանրապետությունների ակադեմիաներին՝ արձանագրելով մարզում խորհրդային քաղաքացիների կյանքի եւ արժանապատվության վտանգվածությունը եւ խնդրի լուծման միակ ճանապարհը

[725] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 6, հոդվ. 151:*
[726] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.89-93:*

տեսնելով բարձրացված խնդրի լուծումը «ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքի կիրառման մեջ»[727]:

Ընդհարումները երբեմն ավարտվում էին նաեւ մարդկային զոհերով: Հուլիսի առաջին տասնօրյակում այսօրինակ երեւույթներն արագորեն ծավալվում էին եւ ընդգրկել էին մարզի ողջ տարածքը: Զինվորական ստորաբաժանումների կոպիտ միջամտության հետեւանքով մարդկային զոհեր եղան Ստեփանակերտում: Հուլիսի 12-ին իրավիճակը շտկելու նպատակով Լեռնային Ղարաբաղ ժամանեցին ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնյաներ, սակայն այս այցելությունները եւս քիչ բան փոխեցին: Հաջորդ օրերին հարձակումների ենթարկվեցին Մարտակերտի եւ Շուշիի շրջանի գյուղերը, Հադրութի շրջանն ամբողջությամբ կտրվել էր արտաքին աշխարհից: Այնուամենայնիվ, զինվորական իշխանությունները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի ժամանման նախօրյակին Ստեփանակերտում հանրահավաք անցկացնելու արտոնություն տվեցին, որը կայացավ հուլիսի 18-ին[728]:

Բռնություններ, հայ բնակչության նկատմամբ հալածանքներ եւ հետապնդումներ էին տեղի ունենում նաեւ ԼՂԻՄ սահմաններից դուրս՝ Բաքվում եւ հայաբնակ այլ վայրերում, որոնք եւս երբեմն հանգեցնում էին մարդկային զոհերի: Ընդհարումները երբեմն տեղափոխվում էին նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններ, ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Նախիջեւանի կողմից: Հուլիսի 31-ին Լաչինում հարձակման ենթարկվեց Հայաստանից ԼՂԻՄ շինանյութ տեղափոխող ավտոշարասյունը:

Շրջափակումը եւ մայիսի սկզբից ի վեր շարունակվող գործադուլը հյուծում էր Լեռնային Ղարաբաղը, արդեն էական դժվարությունների առջեւ էր կանգնում նաեւ Հայաստանի տնտեսությունը: Ընդ որում՝ եթե Ադրբեջանի կողմից շրջափակումը Մոսկվան կարծես թե չէր նկատում, ապա պատասխան գործողությունները Հայաստանի կողմից Նախիջեւանի նկատմամբ ԽՍՀՄ ներքին զորքերի կողմից կանխվում էին:

Մինչդեռ ադրբեջանական, ինչպես նաեւ կենտրոնական զանգվածային տեղեկատվության միջոցները հաճախ ուղղակիորեն նպաստում էին գերակտիվացած զանգվածների զգացումների բորբոքմանը եւ իրավիճակի սրմանը՝ նրանց փաստորեն մղելով չմտածված եւ վտանգավոր գործողությունների: Այդպիսիք էին, մասնավորապես, ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները՝

[727] *«Խորհրդային Ղարաբաղ», 19.07.1989:*
[728] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 98.*

փաստերի կեղծումներով, խեղաթյուրումներով ու միտումնավոր մեկնաբանություններով: Այդօրինակ հաղորդագրություններ հրապարակվեցին հունիսի առաջին օրերին եւ հուլիսի 11-ին: Վտանգավոր էր հատկապես վերջինը, որը կեղծ լրատվություն էր, իբր, հայերի հարձակումներից Ստեփանակերտի մոտ, Կրկժան գյուղում երկու ադրբեջանցիների սպանված լինելու մասին: Որպես բողոքի ծայրահեղ մի քայլ՝ կենտրոնական զանգվածային լրատվամիջոցների սադրիչ ապատեղեկատվության դեմ հուլիսի 12-ից դադարեց լույս տեսնել «Խորհրդային Ղարաբաղ» օրաթերթը:

Երկար ձգձգումներից հետո ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի չորս անդամները Ղարաբաղ ժամանեցին միայն հուլիսի 20-ին, իսկ մեկ շաբաթ անց եկան նաեւ մյուսները: Ղարաբաղում այս հանձնաժողովի հետ մեծ հույսեր էին կապում: Ամեն տեսակ օժանդակություն ցույց տրվեց, որպեսզի հանձնաժողովը կարողանա կարճ ժամկետում ավարտել իր աշխատանքը եւ մինչեւ նստաշրջանի փակումը հասցնի իր եզրակացությունները ներկայացնել Գերագույն խորհուրդ: Տասնօրյա աշխատանքից հետո հանձնաժողովը վերադարձավ Մոսկվա: Հանձնաժողովի հաշվետվությունը եւ առաջարկները օրակարգ մտցնելու հարցով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ Բ. Ի. Օլեյնիկի ելույթը, հասարակական սպասումների համեմատ չափազանց համեստ էր: Դրանում խոսքն այն մասին էր, որ ԼՂԻՄ-ում նախատեսված սոցիալ-տնտեսական միջոցառումները, նյութատեխնիկական պատշաճ ապահովվածություն չունենալով, ցանկալի արդյունք չեն տվել: Նա առաջարկում էր քննարկել մարզային իշխանությունների գործունեության վերականգնման հարցը՝ պահպանելով Հատուկ կառավարման կոմիտեն, եւ դիմում էր երկու կողմերին՝ ընդառաջ քայլ անել միմյանց նկատմամբ ու մեղմել իրադրությունը[729]: Նիստից հետո, հայ պատգամավորների հիասթափություններին ու բողոքներին ի պատասխան, Օլեյնիկը խոստովանել էր, որ «վարվել է այնպես, ինչպես հանձնարարված էր»[730]: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը մերժեց հարցը մտցնել ընթացող նստաշրջանի օրակարգ[731], ինչով դրա պաշտոնական քննարկումը հետաձգվեց մինչեւ աշնանային նստաշրջան:

[729] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 06.08.1989:*

[730] *Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 23.08.1989:*

[731] *Տարօրինակ է, որ հարցը ներկայացնելիս Մոսկվայում չեն եղել Լեռնային Ղարաբաղից ընտրված ժողովրդական պատգամավորները: Միայն որոշման մասին իմանալուց հետո է, որ Ջ. Բալայանը (իր իսկ վկայությամբ) եւ Բ. Դադամյանը շտապ մեկնում են Մոսկվա: Վերջինիս հաջողվում է նաեւ ելույթ ունենալ Գերագույն խորհրդում (որը ադրբեջանական կողմի պահանջով չի ցուցադրվում հեռուստատեսությամբ), սակայն որեւէ բան փոխել, իհարկե, չի հաջողվում (տե՛ս «Խորհրդային Հայաստան» 08.08.89):*

Կարեւոր իրադարձություն էր հուլիսի 26-ին Շահումյանի շրջանային խորհրդի կայացրած որոշումը, որով նա դիմում էր Ադրբեջանի Գերագույն խորհրդին՝ քննարկելու շրջանը ԼՂԻՄ կազմի մեջ մտցնելու հարցը, ինչպես նաեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ վերահսկողության տակ վերցնելու այդ որոշման կատարումը[732]: Պատմականորեն եւ աշխարահագրական առումով Լեռնային Ղարաբաղի մաս կազմող հայաբնակ այս շրջանը ժամանակին առանձնացվել էր եւ չէր մտել ԼՂԻՄ կազմի մեջ: Ջարգացող իրադարձությունների, տեղահանությունների հեռանկարների պայմաններում շատ ավելի վտանգված էին հայաբնակ այն տարածքները, որոնք դուրս էին գտնվում մարզի սահմաններից: Հատկապես այդ օրերին նման որոշում ընդունելը, թերեւս, պայմանավորված էր նաեւ այն հույսով, որ մոսկովյան հանձնաժողովի ուսումնասիրության եւ դրանից հետո հարցի որեւէ կերպ լուծման դեպքում այդ խնդիրը եւս կքննարկվեր միասին:

Ղարաբաղյան իրադարձությունները, որ վաղուց արդեն միջազգային հնչեղություն էին ստացել, երբեմն նաեւ պաշտպանական եւ քաջալերական արձագանքներ էին գտնում ժողովրդավարական շարժումների եւ մինչեւ անգամ երկրների պաշտոնական դիրքորոշումներում: Աջակցական նման միջոցառումներ էին ձեռնարկվում, մասնավորապես, Ռուսաստանում Ա. Սախարովի նախաձեռնությամբ:

Հուլիսի 19-ին ԱՄՆ-ի Սենատն ընդունեց թիվ 178 բանաձեւը՝ «Լեռնային Ղարաբաղի շուրջ վեճի հարցը համաձայն Սովետական Հայաստանի ժողովրդի ցանկության խաղաղ կարգավորման՝ ԱՄՆ-ի աջակցության մասին»: Այն, մասնավորապես, կոչ էր անում Գորբաչովին՝ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների եւ հայկական ժողովրդավարական շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեի հետ քննարկել ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու հարցը[733]: Սա քաղաքական լուրջ քայլ էր, եւ հարուցեց ինչպես Մոսկվայի, այնպես էլ Ադրբեջանի բողոքն ու անհանգստությունը: «Պրավդայում» անմիջապես այն որակվեց «գրգռիչ» քայլ[734], իսկ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը ԽՍՀՄ Արտաքին գործերի

[732] *Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 04.08.1989:*

[733] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 101-102 (համառոտված):*

[734] *«Правда», 22.07.1989.*

նախարարության միջոցով հայտնեց իր պաշտոնական բողոքը[735]: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ամենահզոր աջակիցը եւ ոգեւորության աղբյուրը, բնականաբար, մնում էր Հայաստանի Շարժումը, որն իր թափով եւ հզորությամբ այդ ամիսներին արդեն հասնում էր 1988-ի ամենաբարձր մակարդակին: Ղարաբաղյան իրադարձությունները օպերատիվորեն ներկայացնող «Խորհրդային Ղարաբաղ» թերթի նկատմամբ այնքան մեծ էր հետաքրքրությունը, որ այն հուլիսից սկսեց տպագրվել նաեւ Երեւանում 45000 տպաքանակով:

Օրավուր լարվող իրադրության, Կենտրոնի հստակ ադրբեջանամետ դիրքորոշման, Հատուկ կառավարման կոմիտեից հուսախաբության եւ նրա միջոցով Ադրբեջանի անմիջական ենթակայությունից դուրս գալու խնդրի լուծումը չտեսնելու պայմաններում անհրաժեշտ էր դառնում ստեղծված փակուղուց որեւէ ելք գտնել, որը լիներ ե՛ւ արդյունավետ, ե՛ւ տպավորիչ: Այդ անհրաժեշտությունը ավելի շեշտվեց եւ դարձավ հրատապ, մասնավորապես, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշեց չլսել ԼՂԻՄ հարցով իր իսկ կազմած հանձնաժողովի արդեն պատրաստ եզրահանգումները եւ հարցը տեղափոխեց աշնանային նստաշրջան: Արհեստական ձգձգման միտումը պարզ էր եւ ակնհայտ: Հատուկ կառավարման կոմիտեն, բնականաբար, չէր կարող, չէր էլ պատրաստվում ներկայացնել մարզի բնակչության կարծիքն ու դիրքորոշումները, եւ նրա հեղինակությունն էլ աստիճանաբար ընկնում էր: Նրա գործունեությունից անբավարարություն եւ դժգոհություն էր հայտնվում ոչ միայն հանրահավաքներում: Կոմիտեի աշխատանքի անբավարարության մասին հրապարակավ, պաշտոնապես հանդես եկան ԼՂԻՄ-ի մարզային եւ շրջանային ղեկավարները[736]: Ստեղծված իրավիճակում Ղարաբաղյան Շարժման օրակարգում դրված կարեւոր եւ լուծման առումով առավել հնարավոր հարցերից մեկը մարզային իշխանությունների գործունեության վերականգնումն էր, որը նույնպես Մոսկվան համառորեն չէր ուզում թույլատրել:

Ընտրվեց Կենտրոնի արգելքը շրջանցելու տարբերակ՝ որպես նախատիպ ունենալով 1918-20թթ. Լեռնային Ղարաբաղում իշխանության ձեւավորման մոդելը: Մարզի ամբողջ տարածքում (ներառյալ Շահումյանի շրջանում) տեղի ունեցան Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների ընտրություններ: Ընտրություններին մասնակցելու առաջարկ էր արվել

[735] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 103-104.*
[736] *Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ» 09.08.1989:*

նաեւ մարզի ադրբեջանական բնակչությանը, բայց նրանք հրաժարվեցին մասնակցել: Օգոստոսի 16-ին հրավիրվեց ընտրված լիազոր ներկայացուցիչների համագումար: Համագումարը ձեւավորեց մարզային իշխանության մարմին՝ «Լեռնային Ղարաբաղի ազգային խորհուրդ» անվամբ՝ կազմված 78 անդամից: Վերջինս, իր հերթին, ընտրեց 17 հոգուց բաղկացած Ազգային խորհրդի նախագահություն, որն ամենօրյա իր գործունեությամբ պետք է ղեկավարեր ընթացիկ աշխատանքները՝ ունենալով գործադիր մարմնի գործառույթ: Ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը, եւ տեղակալներ՝ Վլադիմիր Թովմասյանը եւ Վալերի Աթաջանյանը: Համագումարը նաեւ ընդունեց մի հռչակագիր, որտեղ կրկին հիմնավորվում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման եւ Հայաստանի հետ միավորվելու իրավունքը, անօրինական էր հայտարարվում մարզային խորհրդի եւ կուսակցական կոմիտեի գործունեության կասեցումը: Քննադատվում էր նաեւ Հատուկ կառավարման կոմիտեի աշխատանքը, արձանագրվում, որ այդպիսի լիազորություններով եւ գործունեությամբ այն չի կարող մարզը դուրս բերել ճգնաժամից[737]:

Ղարաբաղի Ազգային խորհուրդը ֆորմալ առումով խորհրդային գործող օրենքների շրջանակներում չէր տեղավորվում, սակայն «ներքին օգտագործման» համար լիովին բավարարում էր՝ որպես ժողովրդի կողմից իրական ընտրություններով գոյացած իշխանության մարմին, որն ընդունվում էր նրա կողմից, հեղինակություն ուներ, որի հորդորներին կարող էին ընդառաջել, նրա որոշումները կարող էին կատարել: Այսպիսի մի մարմին խիստ անհրաժեշտ էր հայաստանյան Շարժմանը որպես գործընկեր ունենալու եւ գործողությունների համակարգման համար: Քիչ անց, Ազգային խորհրդի կոչին անսալով, դադարեց արդեն շուրջ չորս ամիս շարունակվող համընդհանուր գործադուլը: Ազգային խորհուրդը կարող էր նաեւ պաշտոնապես հանդես գալ Ղարաբաղի բնակչության անունից, եւ եթե այլ տեղերում՝ վերապահությամբ, ապա Հայաստանի իշխանությունները Շարժման ճնշման տակ ստիպված էին նրան ընդունել որպես պաշտոնական մարմին:

[737] *«Խորհրդային Ղարաբաղ» 19.08.1989: Ազգային խորհրդի ընդունած մյուս փաստաթղթերը տե՛ս նույն տեղում:*

2. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇԱՐԺՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾ, ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ա) Ընդհանուր իրավիճակը եւ անկախության ուղեգիծը

Ժողովրդավարական շարժումները ծավալվում էին ԽՍՀՄ-ի ողջ տարածքում եւ Արեւելյան Եւրոպայում: Ազգային հանրապետությունները փորձեր էին անում լուծելու իրական ինքնիշխանության ընդլայնման խնդիրներ, իսկ որպես պայքարի տրամաբանական վերջնանպատակ, ավելի հստակ ու վստահ էր գծագրվում անկախության ձեռքբերման խնդիրը: Այս գործընթացները 1989 թվականին առավել ցայտուն եւ առարկայական էին Մերձբալթյան հանրապետություններում: Ի տարբերություն Հայկական ժողովրդավարական շարժման, որի Ծրագրում անկախության խնդիրը խարսխվում էր լայն ժողովրդավարական վերափոխումների վրա, Մերձբալթյան հանրապետությունները նույն խնդիրը լուծելու համար պայքարը տանում էին իրավական երկու ուղղությամբ: Առաջին՝ օրենսդրական փոփոխություններով հնարավորինս սահմանափակել իրենց երկրներում զգալի տոկոս կազմող ռուսալեզու բնակչության իրավունքներն ու քաղաքական ազդեցությունը, եւ երկրորդ՝ բացահայտել ժամանակին կնքված Խորհրդագերմանական չհարձակման պայմանագրի մաս կազմող գաղտնի փաստաթղթերի («Ռիբենտրոպ–Մոլոտով պակտ») ապօրինի լինելը՝ դա դարձնելով իրենց անկախությունների վերականգնման իրավական հիմք: Նրանց հաջողվեց այս հարցը մտցնել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարի օրակարգ, եւ հունիսի վերջին կազմվեց հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր եւ քաղաքական ու իրավական գնահատական տար 1939թ. կնքված Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրին[738]:

Մերձբալթյան հանրապետություններին հաջողվեց նաեւ քննարկման առարկա դարձնել երեք հանրապետությունների՝ տնտեսական ինքնուրույնության փոխադրվելու մասին օրենքի մի նախագիծ, որը ԽՍՀՄ ԳԽ-ը հուլիսի 27-ին ընդունեց առաջին ընթերցմամբ եւ պարտավորվեց քննարկու-

---

[738] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 1, հոդվ. 16:*

մը շարունակել հոկտեմբերին[739]: Էստոնիան իր Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցրեց, որով սահմանում էր ընտրելու եւ ընտրվելու իրավունքի նստակեցության ցենզ, ինչպես նաեւ ընտրական իրավունքի սահմանափակումներ՝ զինծառայողների համար: Փոփոխությունն ուղղված էր հանրապետությունում էական տոկոս կազմող ռուսալեզու բնակչության դեմ: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունն անմիջապես այդ փոփոխությունը ԽՍՀՄ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչեց[740]:

Օգոստոսի 22-ին Վիլնյուսում հրապարակվեց խորհրդա-գերմանական պայմանագրի եւ դրա հետեւանքների ուսումնասիրման՝ Լիտվայի ԳԽ-ի կազմած հանձնաժողովի եզրակացությունը: Պայմանագիրը հայտարարվեց ապօրինի եւ անվավեր. միաժամանակ՝ ապօրինի եւ անվավեր, իրավական ուժից զուրկ համարվեց Մերձբալթյան հանրապետությունների՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելու ԽՍՀՄ օրենքը: Դրանից հետո՝ օգոստոսի 23-ին, երեք հանրապետություններում միաժամանակ տեղի ունեցան ԽՍՀՄ-ից դուրս գալու պահանջով զանգվածային միջոցառումներ[741]: Կենտրոնական իշխանությունները շտապեցին այն անմիջապես դատապարտել. ԽՄԿԿ ԿԿ-ի հայտարարության մեջ այս ամենը բնութագրվեց որպես «ծայրահեղական», «ազգայնական», «անջատողական», «դեստրուկտիվ», «վանդալիզմ», «ազգայնական հիստերիա» եւ այլն[742]:

Պայքարը շարունակվեց նաեւ հետագա ամիսներին. նոյեմբերի 10-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահության որոշումը առաջարկում էր Ադրբեջանին, Լիտվային, Լատվիային եւ Էստոնիային իրենց որոշ օրենսդրական ակտեր, որոնք չեն համապատասխանում ԽՍՀՄ Սահմանադրությանը, համապատասխանեցնել դրան[743]: Իսկ Լիտվայի կոմկուսի՝ ԽՄԿԿ-ից դուրս գալու մասին որոշման առիթով Գորբաչովը հայտարարեց, որ այդ հարցի լուծումը միայն իրենց գործը չէ, այլ ամբողջ ԽՄԿԿ-ի, եւ, որ այդ հարցով պետք է պլենում գումարվի[744]:

739 *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 8, հոդվ. 187, 188:*

740 *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 11, հոդվ. 256:*

741 *Տպավորիչ էր 1989-ի օգոստոսի 23-ին Մերձբալթյան երկրների ժողովրդական ճակատների կազմակերպած յուրօրինակ բողոքի ակցիան՝ ձեռք ձեռքի բռնած շուրջ 2 միլիոն մարդու՝ 600կմ երկարությամբ շղթան՝ Վիլնյուսից մինչեւ Տալլին:*

742 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան»» 29.08.89:*

743 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 12.11.1989:*

744 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան» 24.12.1989:*

Իրադարձություններն, աստիճանաբար, բայց հետեւողականորեն, նոր եզրահանգումների էին բերում հասարակությանը, եւ ոչ միայն Հայաստանում, Վրաստանում ու Մերձբալթյան հանրապետություններում: Ժողովրդավարական շարժումներն ընդգրկել էին նաեւ Ռուսաստանը, եւ փորձ էր արվում դրանում ընդգրկել նաեւ բանվորական ավելի լայն շրջանների: «Արմատական» տրամադրված մտավորականների կողմից սեպտեմբերին Մոսկվայում հրավիրված մի համաժողով նպատակ ուներ ԽՍՀՄ արհմիությունների կենտրոնացված կառույցին այլընտրանքային մի այլ կառույց ստեղծել: Դրան մասնակցում էին Կուզբասի, Դոնբասի, Վորկուտայի գործադուլային կոմիտեների, Մերձբալթյան հանրապետությունների, Մոսկվայի, Լենինգրադի բանվորական շարժումների եւ ժողովրդական ճակատների ներկայացուցիչներ: Մասնակցում էր նաեւ Հայաստանի ներկայացուցիչը: Քննարկումների ընթացքում, ի թիվս այլոց, այստեղ առաջադրվել էին այսպիսի թեզեր ու կոչեր. «Վերակառուցումը վերաճել է տոտալ խորհրդային համակարգի եւ կայսերական Խորհրդային Միության դեմ ազգային-ժողովրդավարական հեղափոխության», «Մշակել գործադուլային գաղափարախոսություն եւ իշխանությունների ահաբեկչության ու բռնությունների դեմ հակազդեցության ձեւեր», «Գործադուլների քաղաքական նպատակը ԽՄԿԿ-ի հեռացումն է իշխանությունից», «Գործադուլն այն միջոցն է, որով բանվորական շարժումը պետք է դառնա ԽՄԿԿ-ին այլընտրանքային քաղաքական կուսակցություն» եւ այլն: Որպես հաջող օրինակ՝ հիշվել է լեհական «Սոլիդարնոստը»[745]:

Հայաստանում Ղարաբաղյան համաժողովրդական պայքարի հենց սկզբից բանվորական շրջանները գործուն մասնակցություն ունեին Շարժմանը: Այժմ խնդիրը նրանց հետ արդեն իսկ առկա կապերն ամրացնելն էր, կազմակերպվածության տարրեր մտցնելով՝ այն ամրապնդելը: Իշխանությունը հատկապես անհանգստացած էր ձեռնարկություններում գործող «Աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների» վրա Շարժման ազդեցության մեծացումից: Այս անհանգստությունն ամբողջությամբ փոխանցում է ՊԱԿ-ի վերլուծական մի զեկուցագիր. «Շարժման ղեկավարները երկար ժամանակ հետապնդում էին աշխատավորական կոլեկտիվների խորհուրդները մեկ կազմակերպության մեջ միավորելու գաղափարը եւ դրանով իսկ հանրապետության կառավարության տնտեսական գործունեությունը ձեւավորելու եւ վերահսկելու իրական հնարավորություն

745 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.123:*

ստեղծել»: 1989թ. սեպտեմբերի վերջին հրավիրվեց այդ հիմնադիր համագումարը՝ եւ ստեղծվեց «Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների միավորում», որը, զեկուցագրի ձեւակերպմամբ՝ «ըստ էության եւ խնդիրներով հանրապետության Մինիստրների խորհրդին այլընտրանք է հանդիսանում»: Անհանգստացնող էր համարվում հատկապես այն փաստը, որ համագումարի աշխատանքներն անցել էին առանց կուսակցական, արհմիութենական եւ խորհրդային մարմինների ներկայացուցիչների մասնակցության եւ «....վերածվել ոչ ֆորմալ կազմակերպությունների առաջնորդների գաղափարական հիմնադրույթների քարոզչության»: Համագումարի կողմից հաստատված Ծրագիրը նախատեսում էր ոչ միայն հանրապետության տնտեսական զարգացման հարցերին, այլեւ քաղաքական կյանքին վերաբերող խնդիրներ, նախատեսում էր սերտ կապ պահպանել ոչ ֆորմալ կազմակերպությունների (ՀՀՇ, «Ղարաբաղ» կոմիտե, «Միացում»), ինչպես նաեւ երկրի տարբեր տարածաշրջանների բանվորական կազմակերպությունների հետ:

Ըստ նույն փաստաթղթի՝ Շարժումը հնարավորություն է ստանում մերձենալ «ղեկավարման տնտեսական լծակներին, որի միջոցով մտադիր են ճնշում գործադրել իշխանության վրա՝ իրենց քաղաքական նախագծերն իրականացնելու համար...[746] Հայաստանի աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների միավորման կազմավորումը՝ որպես անկախ կազմակերպություն, առանց կուսակցական, արհմիութենական եւ խորհրդային մարմինների վերահսկողության, որը գործելու է գործադիր մարմիններին եւ արհմիություններին զուգահեռ, կարող է իրավիճակը լրջորեն ապակայունացնող լրացուցիչ գործոն հանդիսանալ եւ իրավիճակի էական բարդացման պայմաններում, գտնվելով ոչ ֆորմալ կազմակերպությունների ազդեցության տակ, վճռական դեր խաղալ իշխանության համար պայքարում: Այն զգալի չափով ամրապնդում է հանրապետության ոչ ֆորմալ կազմակերպությունների տնտեսական հիմքերը»[747],– անհանգստացած հաղորդում է Պետական անվտանգության կոմիտեի զեկուցագիրը:

[746] *Արձանագրվում է նաեւ, որ մի շարք տեղերում արդեն իսկ ՀՀՇ-ի ներկայացուցիչներ ընտրվել են աշխատավորական կոլեկտիվների խորհուրդների ղեկավարներ, եւ իրենք են ձեւավորում հասարակական կարծիքը:*

[747] *ԱԱ, ֆ1, ց.87, գ.35, թ.124-125:*

բ) Անկախության խնդիրը ու դրա հետ կապված՝ հայաստանյան որոշ յուրահատկություններ

Քանի դեռ Շարժման օրակարգում միայն Ղարաբաղի հարցն էր, ինչպես ցույց էր տալիս փորձը, իրոք կարելի էր ոտքի հանել ողջ ժողովրդին, եւ Շարժումն իրոք համաժողովրդական էր՝ բառիս բուն իմաստով: «Միացման» պարզ հարցին, եթե այն պետք է տեղի ունենար ԽՍՀՄ-ի եւ նրա օրենքների շրջանակներում եւ նրա որոշումներով, բնական է, որեւէ հայ մարդ դեմ լինել չէր կարող թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս: Այլ բան է, թե ով ինչ էր պատրաստ զոհաբերել, որքան եռանդ ներդնել դրա համար, երբ վերջնականապես պարզ դարձավ, որ այդ կերպ հարցը չի լուծվելու: Շարժման օրակարգում առաջին պլան եկավ համալիր ժողովրդավարական վերափոխումների հիմնահարցը՝ որպես ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման, այլ նաեւ Հայաստանի անկախության հասնելու միջոց, հիմք կամ ճանապարհ: Որպես այդպիսին՝ այն, ըստ էության, դրված էր արդեն ՀՀՇ՝ 1988թ. օգոստոսի 19-ին հրապարակված Ծրագրի նախագծում: Դրան հաջորդած մեկ տարում ընդհանուր իրավիճակում տեղի էին ունեցել որակական փոփոխություններ, որոշակի եւ հաստատուն ուղղվածություն էին ստացել Խորհրդային Միությունում ընթացող ներքաղաքական զարգացումները: Հայաստանյան հանրահավաքներում ես բաց խոսվում էր անկախության մասին[748]: Կոմիտեի վերադարձից հետո նախապատրաստվում էր ՀՀՇ Ծրագիրը առաջիկա հիմնադիր համագումարում՝ անկախության, որպես առաջնային խնդրի վերջնական հստակեցմամբ ընդունելու համար: Անկախության խնդիրը չէր փոխարինելու Ղարաբաղի հարցին եւ ավելի պակաս կարեւոր չէր դարձնելու այն: Պարզապես՝ մեկուկես տարվա պայքարի փորձը եւ առաջիկա հնարավոր զարգացումների հաշվարկները հուշում էին, որ ԽՍՀՄ պայմաններում այդ խնդրի առջեւ կոշտ ուղեփակոց է դրվում, ինչը եւ, իրոք, վերջնականապես արձանագրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստում, 1989թ. նոյեմբերի 28-ին:

Եթե ԽՍՀՄ շրջանակներում, որպես վարչական փոփոխության ներքին խնդիր, Ղարաբաղի հարցի հեռանկարը փակուղի մտնելն էր, եւ, ըստ էության, դատապարտված լինելը, ապա առաջանում եւ ուրվագծվում էր այն միջազգայնացնելու եւ որպես այդպիսին հետապնդելու միակը դարձող տարբերակը: Վերջինս, բնականաբար, հնարավոր էր միայն Հայաստանի անկախության պայմաններում: Սակայն անկախության ուղեգիծ որդեգրելը,

[748] *Տե՛ս ՀԱԱ ֆ1, ց.87, գ.39ա., թ.161:*

պարզ է, միայն Ղարաբաղի հարցով չէր պայմանավորված: Հայկական ժողովրդավարական շարժման հետ միասին, այլ երկրների հզորացող ժողովրդավարական ուժերի ճնշումների ու հարվածների տակ կայսերապետական ուժերի նահանջը եւ թուլացումը օր օրի մեծացնում էր Խորհրդային Միության փլուզման հնարավորությունը: Ընդ որում, չնայած մյուս հանրապետությունների համեմատ Հայաստանի՝ տնտեսական եւ այլ առումներով համեստ տեսակարար կշռին, նրա Ժողովրդավարական շարժումը մյուս շարժումների մեջ իր կշռով շարունակում էր մնալ առաջինը, ամենազանգվածայինը, ամենակազմակերպվածը, ամենահեղինակավորը, ընդօրինակելին, ուստիեւ՝ Կենտրոնի համար ամենավտանգավորը:

* * *

Բնական է, որ առաջին իսկ նպաստավոր պահին անկախության հասնելու խնդրով ժողովրդական շարժում առաջանալու էր, ինչպես դա եղավ մյուս հանրապետություններում: Այլ հարց է, որ դա կարող էր այլ պահի ու այլ առիթով սկսվել, այլ մասշտաբներ ունենալ, ավելի պակաս միատարր լինել, քան այդ հարցը որդեգրած Ղարաբաղյան Շարժումը: Այսինքն՝ Ղարաբաղի խնդրում 100%-ի մոտեցող համազգային համաձայնությունը, բնականաբար, չէր կարող նույնպիսի թվաբանական միասնականությամբ արտահայտվել անկախության հարցում: Եւ դա բնական էր: Առաջին դեպքում իշխանության հարց չէր դրվում, ուստի հասարակության մեջ ձեւավորված սոցիալական շերտերի սանդղակում եւ սոցիալական կառուցվածքում եւս այն որեւէ փոփոխություն չէր ենթադրում: Այն էական փոփոխություն, տեղաշարժ չէր ենթադրում նաեւ Սփյուռքում ու նրա ավանդական կուսակցությունների՝ տասնամյակներով քարացած ու սրբագործված ծրագրերի, գաղափարախոսությունների եւ գործելակերպի մեջ, դրանով նրա անդորրը չէր խաթարվելու: Այս տեսանկյունից բոլորովին այլ բան էր արմատական ժողովրդավարական վերափոխումների ու դրա վրա խարսխված անկախության խնդիրը: Վերջինս, բնականաբար, ենթադրում էր իշխանության, ուրեմն նաեւ իշխող քաղաքական ուժի փոփոխություն, եւ, որպես դրա հետեւանք, արմատական տեղաշարժեր իշխող խավի, նոմենկլատուրայի մեջ, ինչպես նաեւ վերադասավորություն հասարակության սոցիալական մյուս շերտերի ներսում: Առավել եւս՝ եթե դրան ավելանում էր նաեւ համակարգային փոփոխությունների հեռանկարը, ապա շատերի մեջ անհանգստությունը պետք է ավելի մեծանար: Որքան էլ անկախության գաղափարը կամ կարգախոսը հնչեղ լիներ ու հայրենասիրական, եւ դժվար լիներ դրան բացահայտ հակադրվելը, այնուամենայնիվ, այժմ շատերը մտքում նաեւ պարզ հաշվարկներ էին անելու, թե դրանից իրենք անձամբ ինչ են շահելու եւ ինչ կորցնելու:

Էթնիկապես միատարր Հայաստանում անկախության խնդիրը որոշակի յուրահատկություններ էր ունենալու, ասենք, Մերձբալթյան հանրապետությունների նկատմամբ, որտեղ մեծ տոկոս էր կազմում ռուսալեզու (ռուս) բնակչությունը: Այնտեղ անկախության հետեւանքով հնարավոր «շահողների» եւ «կորցնողների» սահմանագիծը էթնիկական էր եւ համարյա հստակ: Ըստ այդմ էլ՝ անկախության ձգտող ժողովրդական ճակատները կազմվում էին բնիկներից, դրա դեմ պայքարող «ինտերֆրոնտները»՝ հիմնականում ռուսալեզու (ռուս) բնակչությունից: Հայաստանում իրենց պոտենցիալ «կորցնողներ» էին համարելու կոմկուսը, ողջ կուսակցական եւ խորհրդային, արտադրական եւ մտավորական նոմենկլատուրան:

Անկախության հարցը խոռվելու էր նաեւ Սփյուռքի՝ խիստ պահպանողական եւ հարաբերական հանգստի ծանր իներցիային տրված քաղաքական կուսակցությունների անդորրը: Եւ դա՝ երկու պատճառով: Առաջին՝ նրանց ծրագրերն ու գործունեությունը, անգամ գաղափարախոսությունները, վաղուց հարմարեցված եւ խարսխված էին Հայաստանի՝ ԽՍՀՄ-ի մեջ գտնվելու իրողությանը եւ պայմանին: Երկրորդ՝ մի կողմից՝ նրանց խիստ հավակնոտ ինքնապատկերացումը «ազգային» որեւէ հարցում իրենց առաջնային իրավունքի, մենաշնորհի վերաբերյալ, մյուս կողմից՝ Հայաստանի ժողովրդի ունակությունների համեստ լինելու մասին ներարկված համոզմունքը:

Անկախության հարցը 1989թ. ամռանը եւ աշնանը կարող էր նաեւ այդքան սուր չդրվել Շարժման օրակարգում, եթե Կենտրոնի դիրքորոշումը միտված լիներ դեպի Ղարաբաղի հարցի «արդարացի լուծման» հայկական տարբերակը: Եւ դա Շարժման կողմից կլիներ տակտիկական առումով արդարացված: Սակայն այդ դիրքորոշումը բացահայտորեն հօգուտ հարցի լուծման ադրբեջանական, կամ որ միեւնույնն է, կայսերապետական տարբերակի էր: Անգամ Ադրբեջանը իր Ժողովրդական ճակատի ճնշման տակ սեպտեմբերի 23-ին ընդունեց «սուվերենության մասին» օրենք՝ որպես Կենտրոնի նկատմամբ Ղարաբաղի հարցում ճնշման միջոց: Այս պայմաններում օրակարգում, որպես առաջնահերթ հարց, անկախության խնդրի որդեգրումը ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող ամենահզոր ժողովրդական շարժման կողմից ավելի քան բնական էր, բխում էր մեկ տարի առաջ հրապարակված նրա Ծրագրից եւ թելադրված էր իրադարձությունների զարգացման տրամաբանությամբ: ԽՍՀՄ-ում ընթացող քաղաքական գործընթացների

ուղղվածությունը նկատի ունենալով՝ Հայաստանի ապագայի տեսակետից անկախության համար պայքարն այլընտրանք չուներ: Այն, միաժամանակ, կարող էր նաեւ ճնշամիջոց լինել Կենտրոնի վրա՝ փոխելու կամ հավասարակշռելու նրա դիրքորոշումը Ղարաբաղի հարցում:

գ) Կոմունիստական իշխանության տագնապները Շարժումից եւ նրա ձեռնարկումները

Շարժման նոր վերելքին եւ նրա ձեռք բերած հաջողություններին համընթաց՝ արագանում էր իշխանության վարկաբեկման եւ նրա մարմինների բարոյալքման ու աշխատանքների կազմալուծման գործընթացը: Դժգոհությունների կիզակետում հայտնված պաշտոնյաներից Շարժումը համարձակ պահանջվում էր նրանց հրաժարականները: Բնութագրական են հանրապետության դատախազի՝ ՆԳ նախարարին պարբերաբար արվող անօգնական թվացող դիմումները «իրավախատումների մասին նախազգուշացնելու ու դրանք կանխելու համար անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկելու մասին» բողոքով: Դրանցից մեկը տեղեկացնում է, որ օգոստոսի 28-ին 2 հազար ցուցարարներ 7 ժամ անընդհատ պաշարել էին դատախազության շենքը եւ պնդել, որ կատարվեն իրենց պահանջները: Ընդ որում՝ դատախազի եզրակացությունը ցուցադրում է, թե ինչպիսին էր իրավիճակը իրավապահ մարմիններում. «ՆԳՆ-ն եւ միլիցիայի օրգանները ինքնամեկուսացել են խմբային իրավախախտների դեմ գործուն եւ իրական պայքարից, սահմանափակվում են հասարակական կարգի տեղի ունեցող խախտումների նկատմամբ պասիվ հայեցողությամբ»[749]:

Շարժման նկատմամբ պետական մարմինների սարսափը եւ իշխանությունը կորցնելու տագնապը շատ ավելի մեծ էր, քան դա կարող էր երեւալ արտաքնապես: Սեպտեմբերի կեսերին ՆԳՆ-ում կազմված մի զեկուցագիր դա պատկերում է հետեւյալ կերպ.

«Ստացվող օպերատիվ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ.

- չի բացառվում, որ ՀՀՇ-ի պատգամավորական խմբի կողմից փորձ կարվի այլընտրանքային նստաշրջանի հրավիրում, մի շարք պատգամավորների հետկանչի կազմակերպում, «ժամանակավոր ժողովրդական կառավարության» ստեղծում.

[749] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.31, թ.73-74:*

- նստաշրջանի օրակարգում դրվելու համար կարող են բարձրացվել հետեւյալ հարցերը. **ա)** հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության կազմի փոփոխություն եւ այլընտրանքային թեկնածուների առաջադրում, **բ)** հանրապետության կառավարության կազմի փոփոխություն, **գ)** հանրապետության դատախազի պաշտոնից ազատում, միաժամանակ Հայկական ԽՍՀ-ի Սահմանադրության մեջ այնպիսի փոփոխություն, որը ԳԽ-ին կտա հանրապետության դատախազին նշանակելու իրավասություն, **դ)** 1920թ. նոյեմբերին 11-րդ Կարմիր բանակի Հայաստան մտնելու իրավականության հարցը»[750]:

ՆԳ նախարարն անհանգստանում է, որ այս նպատակներն իրականացնելու համար ՀՀՇ-ի կողմից պատգամավորների հետ աշխատանք է տարվում, ինչպես նաեւ միջոցներ ձեռք առնվում, որպեսզի նստաշրջանի օրը Շարժման մասնակիցները կարողանան շրջաններից հասնել Երեւան[751]:

Հիշեցնենք, որ «ՀՀՇ-ի պատգամավորական խումբը» ՀԽՍՀ ԳԽ-ում ընդամենը հինգ հոգի էր՝ 250-ից (Աշոտ Մանուչարյան, Խաչիկ Ստամբոլցյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, Ռաֆայել Ղազարյան, Ռոբերտ Քոչարյան (Արկադի Մանուչարովը դեռ ազատազրկման վայրում էր): Եւ, այդուամենայնիվ, ՆԳ նախարարը չէր չափազանցում. հասարակության ամենալայն պաշտպանությունն ունենալով՝ նրանք կարող էին նման հարցեր դնել ու հասնել դրանց լուծմանը: Իսկ սա նշանակում էր, որ Շարժումը, Կոմիտեի վերադարձից ընդամենը երեք ամիս անց, **կրկին հասել է երկիշխանության վիճակի**:

1989թ. ամռանը իրավիճակն այսպիսին էր: Նոր թափ առած եւ անկախության խնդիր հետապնդող Շարժման դեմ իշխանության հիմնական գործիքը՝ ուժային միջոցները եւ բռնությունները, ինչպես արդեն ասել ենք, այլեւս արդյունավետ չէին կարող լինել: Ապարդյուն եղան հանրապետության ղեկավարության՝ նոր կերպարով հանդես գալու եւ հասարակական կարծիքի վրա ազդելու փորձերը: Որեւէ արդյունք չտվեցին արհեստածին մանր կազմակերպությունների կողմից «ազգային միասնության» օրակարգով միջոցառումները եւ իրենց չմիանալու՝ Շարժմանն ուղղված մեղադրանքները: Շարժման հիմնական ռեսուրսը՝ ժողովրդական զանգվածները նվազեցնելու համար իշխող կուսակցության գաղափարախոսական դիրքերից քարոզչական պայքարը անիմաստ էր եւ կարող էր միայն հակառակ արդյունքի հանգեցնել:

[750] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.37, թ.55-56:*
[751] *Նույն տեղում, թ. 56:*

Իշխանությունը խնդիր ուներ.

ա) Գտնել Շարժման ու անկախության նրա ուղեգծի դեմ պայքարի արդյունավետ գաղափարական պլատֆորմ եւ գաղափարական այդ պայքարի՝ հասարակությանը վստահություն ներշնչող իրականացնողներ:

բ) Կազմակերպական իմաստով խաթարել կամ պառակտել Շարժումը՝ փոքրացնելով նրա ազդեցությունը զանգվածների վրա:

Ստորեւ այդ միջոցառումների համալիրը:

դ) Շարժմանը կազմակերպական այլընտրանքներ ստեղծելու կամ այն պառակտելու նախաձեռնություններ

Կոմիտեի վերադարձով Շարժման անխուսափելի նոր վերելքը դիմագրավելու միջոցառումներից էր իշխանությունների կողմից մամուլում հրապարակ նետված «Հայոց համազգային ծրագիր» խորագրով մի փաստաթուղթ հենց մայիսի 28-ին[752]: Ընդ որում՝ այդ փաստաթղթից պարզվում է, որ «ամենայն հայոց ցեղակրոն ծրագիրը օրվա հրամայականն» է համարվել դեռ ՀԿԿ ԿԿ-ի 1988թ. սեպտեմբերյան պլենումում: «Հրամայականը» ենթադրում է անհապաղ իրականացում, եւ անհայտ է մնում, թե ինչու էր այդ «հրամայականն» ավելի քան ութ ամիս ուշացումով իրականացվում: Անգամ խորագիրն ընտրված էր այնպես, որ նույնական երկու բառերը (Հայոց համազգային) շփոթություն առաջացնեին Շարժման ծրագրի հետ, իսկ դրա «ցեղակրոն» բնորոշումը եւ «Հայ դատի պաշտպանություն» ձեւակերպված կետերից մեկը պետք է տպավորություն ստեղծեին, թե այն «շատ ավելի ազգային» է, քան ՀՀՇ-ի ծրագիրը[753]: Խմբագրությունը հորդորում էր նոր առաջարկներով հարստացնել եւ ամբողջացնել փաստաթուղթը՝ այն համաժողովրդական քննարկման դնելու համար: Այն փաստը, որ այս փաստաթուղթը եւս մեկ անգամ հրապարակվեց նաեւ ՀՀՇ հիմնադիր համագումարի օրերին՝ նոյեմբերի 5-ին[754], վկայում է այն մասին, որ դա, իրոք, մտահղացված էր

[752] *«Ավանգարդ», 28.05.1989: Հրապարակված՝ «Ավանգարդ» թերթի խմբագրություն ստորագրությամբ:*

[753] *Դժվար է ասել՝ սույն փաստաթուղթը կազմողները հասկացել են «ցեղակրոն» բառի իմաստը, թե ոչ: Ակնհայտ է, որ այն վերցված է հայկական ֆաշիզմի գաղափարախոսության հիմնադիր Գ. Նժդեհից, որը դա օգտագործում է որպես «ռասիզմ» բառի հայերեն տարբերակ:*

[754] *«Ավանգարդ», 05.11.1989:*

որպես ՀՀՇ ծրագրին հակակշիռ եւ մրցակից կամ՝ հասարակության մեջ շփոթություն առաջացնելու համար[755]: Իսկ այն հանգամանքը, որ երկրորդ անգամ էլ այն հրապարակվեց առանց որեւէ փոփոխության ու մեկնաբանության, վկայում էր , որ այդ ընթացքում այն որեւէ մեկի ուշադրությանն անգամ չէր արժանացել:

Բացի Շարժման կազմակերպական կառույցից (ՀՀՇ)՝ կային նաեւ մանր այլ կազմակերպություններ, որոնցից մի քանիսը ստեղծվել էր 1988-ի ընթացքում: Նման «կազմակերպությունների» ստեղծման «բումն» առաջացավ Կոմիտեի ազատումից հետո, երբ նման բաներն այլեւս ակնհայտորեն անվտանգ էին համարում: Դժվար է խոսել դրանց հետեւորդների թվի մասին, «Ղարաբաղ» կոմիտեի կողմից ղեկավարվող համաժողովրդական պայքարի հորձանուտում տասնյակ այս «կազմակերպությունների» ներկայությունը պարզապես չէր նկատվում: Դրանք, կարծես, ստեղծվել էին, որպեսզի ժամանակ առ ժամանակ հանդես գային միեւնույն նախաձեռնություններով: Այսպիսի մի նախաձեռնությամբ նրանք հանդես եկան 1989թ. մայիսի երկրորդ կեսին, երբ արդեն ակնհայտ էր, որ Շարժումը հաղթահարել է ծանրագույն ճնշումների շրջանը, թեւակոխում է վերելքի նոր շրջան, եւ կանխորոշված է «Ղարաբաղ» կոմիտեի ազատագրումը: Մայիսի 20-ին «Հայ Դատի պաշտպանության ընկերակցություն», «Հայկաշեն ճակատ», «Նարեկ», «Հայ ուսանողական դաշինք», «Ջանգակատուն», «Ազգային դաշինք», «Ազգային ինքնորոշման միավորում» եւ այլ կազմակերպությունների ներկայացուցիչները հավաքվել էին ստեղծելու, այսպես կոչված, «Հայաստանի ժողովրդական խորհրդարան»[756]: Այսօրինակ նախաձեռնությունները, որ եղել եւ պարբերաբար կրկնվելու էին նաեւ հետագայում, նպատակ ունեին «ազգային միասնության» կարգախոսի տակ ներկայացուցչական մի մարմին ստեղծել՝ ՀՀՇ-ն համարելով որպես իրենց նման եւ համարժեք կազմակերպություններից մեկը, որպես հավասար միավորներ՝ համամասնական սկզբունքով կազմել նոր ղեկավար մարմին եւ այդ միջոցով փոխել Շարժման ղեկավարությունը եւ ուղղությունը: Անշուշտ, այս մտահղացման

[755] *Շատ նման է, որ այս փաստաթուղթը ստեղծված լիներ ՊԱԿ-ի աշխատանոցներում համաձայն վերջինիս աշխատաոճի: Համենայնդեպս՝ ՀԿԿ ԿԿ-ի 1988թ. սեպտեմբերյան պլենումին հղում անելը վկայում է, որ դա իշխանական նախաձեռնություն էր: Ավելի ուշ դաշնակցական մամուլը որպես դրա հեղինակ նշում է «հայրենի պաշտոնական շրջանակները» (տե՛ս «Դրոշակ», 22.11.1989):*

[756] *Սրանցից երկուսի մասին («Հայկաշեն ճակատ», «Ազգային դաշինք») արդեն գիտենք, որ ստեղծվել էին իշխանության անմիջական նախաձեռնությամբ:*

հեղինակները շատ լավ գիտեին, որ դա անհնար է, բայց այս դեպքում էլ կարելի էր թմբկահարել, թե ՀՀՇ-ն ձախողում է «ազգային միասնություն» ստեղծելու իրենց նախաձեռնությունները: Հենց այսպես էլ այն մեկնաբանվում էր: Այդ օրերի բուռն իրադարձությունները մի կողմ թողած՝ «Հայկական միասնական ճակատ կազմելու փորձերը կը ձախողին» պաթետիկ վերնագրով ներկայացվում է ոչ էական այս նախաձեռնությունը. «Նշենք, որ Հայոց համազգային շարժումը, որ «Ղարաբաղ» կոմիտեի գործը կշարունակե, բացարձակապես մերժած է մաս կազմել այս խորհրդակցություններուն: Հայոց համազգային շարժումը մերժած է նաեւ գործակցիլ «Ազգային ինքնորոշում միավորումին» հետ»[757]:

ՀՀՇ-ին այլընտրանքային կազմակերպություն ստեղծելու միջոցով Շարժման ուղղությունը փոխելու կամ այն պառակտելու փորձերը հետագայում էլ պարբերաբար կրկնվելու էին: Հաջորդ այդպիսի փորձը կատարվեց քիչ հետո՝ հունիսին, երբ հայտարարվեց «Ոչ պաշտոնական կազմակերպությունների խորհուրդ» ստեղծելու մասին: Եւ կրկին, շատ կարեւոր իրադարձություն համարելով, դրան անդրադարձավ դաշնակցական մամուլը՝ հրապարակելով վերջիններիս հայտարարությունը[758], իսկ քիչ անց ՀՅԴ բյուրոն պաշտոնապես ողջունեց դրա ստեղծումը[759]:

Ե) Շարժման դեմ հիմնական գաղափարական ճակատը

Մայիս-հունիս ամիսների իրադարձություններով առարկայացող՝ Շարժման ուղեգծի դեմ կոշտ ուժային պատնեշ դնելու, բռնություն ու ապօրինություն գործադրելու մեթոդն այլեւս անհեռանկարային էր: Շարժման դեմ մտահղացած միջոցառումները ցանկալի արդյունք չէին կարող տալ առանց արդյունավետ հրապարակային գաղափարական պայքարի:

Այդպիսի պայքար մղելու որոշակի ձեռնարկումներ եղել էին, մասնավորապես, ՀՀՇ Ծրագրի հրապարակումից հետո, 1988-ի աշնանը: Սակայն

[757] *Տե՛ս «Ասպարեզ», 24.05.1989: Ընդ որում այս խորհրդակցությանը մասնակցած երկու կազմակերպություններ եւս՝ ԱԻՄ-ը եւ «Մաշտոցը», նրանց առաջարկված ծրագիրը չընդունելով, հեռացել էին:*

[758] *«Դրոշակ», 19.07.1989:*

[759] *Հետագայում էլ այս «խորհուրդը» մնաց ՀՅԴ-ի ուշադրության կենտրոնում: Նա, ՀՀՇ հիմնադիր համագումարի առիթով «Ղարաբաղ» կոմիտեին քննադատելով, համարում է, որ այս համագումարում արժանի տեղ չտրվեց մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաեւ «Ոչ պաշտոնական կազմակերպությունների խորհրդին» (տե՛ս «Դրոշակ», 22.11.1989):*

«Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումից հետո իշխանությանը թվաց, թե վերացել է դրա անհրաժեշտությունը: Այժմ՝ Կոմիտեի վերադարձից եւ իրավիճակի կտրուկ փոփոխությունից հետո, անհրաժեշտ էր վերադառնալ այդ խնդրին, ինչի բացահայտ մեկնարկը տրվեց նույն՝ 1989-ի հունիսյան նստաշրջանում, հենց առաջին օրը:

Անկախական միտումների եւ ծրագրերի դեմ գոյություն ունեին երկու բնույթի փաստարկներ: Փաստարկների առաջին տիպը, որից օգտվել էին եւ շարունակելու էին օգտվել իշխանությունները, կարելի էր կոչել անմիջական հետեւանքների առաջացման կամ, բոլոր հանրապետություններում անկախության գաղափարի դեմ կիրառելի՝ ընդհանրական փաստարկներ: Դրանք հենվում էին կայսրությունում իշխող կոմունիստական գաղափարախոսության վրա եւ իրենց առարկայական դրսեւորումներում հնչում հետեւյալ կերպ. ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում կխզվեն տնտեսական բազմաթիվ կապերը, կկազմալուծի արտադրությունը, փոխադարձ պարտավորություններից հրաժարումը եւ միասնական տնտեսության քայքայումը կբերի սոցիալական դժվարություններ, հանրապետությունները կհայտնվեն անվտանգության համակարգերից դուրս, կխաթարի «ժողովուրդների եղբայրությունը», եւ որ կուտակված հիմնահարցերը լուծելի են ոչ այլ կերպ, քան միայն «Վերակառուցման» միջոցով եւ այլն: Սակայն այսօրինակ փաստարկները, բազմիցս օգտագործված լինելով, բարոյապես մաշված էին, եւ Շարժումը դրանց դեմ արդեն ուներ իր հզոր հակափաստարկները:

Անկախության վնասակար եւ անթույլատրելի լինելը ցուցադրելու համար անհրաժեշտ էին նոր, թարմ, քիչ օգտագործված, չմաշված եւ մանավանդ՝ յուրահատուկ, միայն մեզ վերաբերող «ազգային» բնույթի, ավանդաբար փոխանցված, հասարակական ընկալումներում դեռեւս չարժեզրկված հիմնավորումներ: Այդ ամենի համալիրը «Հայ դատն» էր: Դրա առաջին բաղադրիչը «պանթուրքիզմի վտանգի» փաստարկն էր, որ կոչված էր հավատացնելու, թե Հայաստանը միայնակ ապրել չի կարող եւ անմիջապես կուլ կգնա այդ վտանգին: Մյուսը «Միացյալ Հայաստան» ստեղծելու խնդրի թմբկահարումն էր, ինչը հնարավոր էր համարվում միայն որեւէ ուժեղ պետության, բնականաբար՝ ԽՍՀՄ-ի կազմում գտնվելով եւ նրա ուժերով: **Այսինքն, մի կողմից՝ անցյալի արհավիրքները հիշեցնելով եւ մեր անզորության ու զոհի բարդույթը խորացնելով՝ վախեցնել ժողովրդին արտաքին թշնամու, «պանթուրքիզմի» վտանգով, մյուս կողմից՝ վրեժխնդրության ու պատմական արդարության հասնելու ազգային զգացումի բորբոքմամբ նրան գայթակղել երրորդ ուժի օգնությամբ տարածքային ձեռքբերումների լուսավոր ապագայով:**

Անշուշտ, անկախության դեմ այս փաստարկներից կարող էր օգտվել նաեւ իշխող Կոմունիստական կուսակցության պաշտոնական քարոզչությունը: Սակայն վերջինս, նախ, որպես որեւէ փաստարկի հեղինակ, իր վարկանիշով այլեւս վստահություն չէր ներշնչում: Բացի այդ, կային նրա գաղափարախոսական դոգմաներից բխող անհարմարություններ: Առաջին՝ անկախության գաղափարի դեմ յուրահատուկ, միայն Հայաստանի համար կիրառելի փաստարկ բերելով, Հայաստանի կոմկուսն, ըստ էության, կնսեմացներ իր ընդհանրական բնույթ ունեցող փաստարկների կշիռը: Այսինքն՝ կստացվեր, օրինակ, որ «պանթուրքիզմի վտանգ» եւ ազգային «դատի» խնդիր չունեցող մյուս հանրապետությունները, ի տարբերություն Հայաստանի, կարող են դիմել այդ (անկախության ձգտելու) քայլին: Երկրորդ՝ նա դրանով նույնությամբ կրկնած կլիներ սփյուռքյան կուսակցություններին, մասնավորապես՝ Դաշնակցությանը, որին տասնամյակներ շարունակ տված գնահատականը եղել էր խիստ բացասական, եւ առայժմ արտաքուստ շարունակում էր պահել այդ իներցիան ու տպավորությունը:

Այդ էր պատճառը, որ ընտրվեց միջանկյալ մի ճանապարհ՝ «պանթուրքիզմի վտանգի» եւ «Հայ դատի» հեռանկարների փաստարկներն օգտագործել ոչ թե պաշտոնապես, այլ իշխանությանը հավատարմորեն ծառայող ու օրգանապես նրան կապված մտավորական նոմենկլատուրայի ներկայացուցիչների միջոցով, նրանց ընդարձակ պատմական եւ հրապարակախոսական ելույթների տեսքով: Դրա մեկնարկը տրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսյան նստաշրջանի հենց առաջին օրը՝ հունիսի 23-ին՝ Ջորի Բալայանի մի ելույթով: Այն Շարժման ու անկախության հեռանկարի դեմ գաղափարական պայքարը հայդատականության հիմքի վրա տեղափոխելու մարտավարության մեկնարկն էր նույն՝ Հայաստանը թշնամական մուսուլմանական երկրների շրջապատման մեջ գտնվելու, պանթուրքիզմի վտանգի, միայնակ որպես անկախ պետություն գոյատեւելու անհնարինության, հողային պահանջատիրության ելակետերով: Ըստ այդմ՝ Հայ դատի եւ պահանջատիրության հիմքի վրա պետք է մեկնաբանվեր նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցը: Հիշենք, սակայն, որ հենց այսպիսի մեկնաբանությամբ էին իրականացնում Շարժման դեմ քարոզչական պայքարը Ադրբեջանը եւ Մոսկվան, ըստ էության՝ այդպիսի մեկնաբանության հիման վրա մերժեց խնդիրը 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը:

«Ղարաբաղ» կոմիտեն նույն օրը նստաշրջանին ուղեկցող բազմամարդ հանրահավաքում անմիջապես անդրադարձավ այս վտանգավոր

ելույթին: Եւ մինչեւ գաղափարական հարթության վրա դրան հիմնավորապես անդրադառնալը նշվեց, որ այն խիստ վտանգավոր է հենց այդ օրերին Լեռնային Ղարաբաղի՝ Մոսկվայում քննարկվող հարցի առումով, քանի որ դրանով Հայաստանի դեմ կարող են տրամադրվել ոչ միայն Թուրքիան եւ Ադրբեջանը, այլեւ ողջ Միջին Ասիան, Թաթարիան, Բաշկիրիան, Ցակուտիան եւ այլն: Այն գնահատվեց որպես Մոսկվայի թելադրանքով արված դավաճանական քայլ[760]:

Հանրահավաքը վերջնագրային պահանջ ներկայացրեց. նստաշրջանի ամբիոնից այդ ելույթին պատասխանելու հնարավորություն ընձեռել: Իշխանությունը ստիպված էր տեղի տալ: Հաջորդ օրը, հունիսի 24-ին, «Ղարաբաղ» կոմիտեի անունից Գերագույն խորհրդի նստաշրջանում ելույթ ունեցավ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ ներկայացնելով Կոմիտեի հայտարարությունը: Այս հայտարարության մեջ եւս մեկ անգամ, առավել մանրամասն ու հստակ ձեւակերպված են Շարժման Ծրագրի քաղաքական ելակետերն ու հակափաստարկները.

ա) Այն մտայնությունը, թե Հայաստանը շրջապատված լինելով այլակրոն, թշնամի ազգերով՝ իր գոյությունը կարող է պահպանել միայն հզոր պետությունների հովանավորության շնորհիվ, հայ ժողովրդին մատնում է բարոյական ստրկության, նրան զրկում քաղաքական պարտնյոր դառնալու հնարավորությունից, առանց որի քաղաքականության մեջ անհնար է որեւէ հաջողության հասնել:

բ) Եթե Հայաստանը դիտվում է որպես «պանթուրքիզմի վտանգի» դեմ Ռուսաստանի շահերին ծառայող գործոն, ապա դրանով «Հայկական հարցը» կրկին մտցվում է միջազգային հարաբերությունների ոլորտ, ինչը հղի է մեզ համար վտանգավոր հետեւանքներով:

գ) Պանթուրքիզմն իր ծաղկումը ապրել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, իսկ ներկայումս կորցրել է քաղաքական գործոն լինելու իր բովանդակությունը: Եւ հենց դրա դեմ խաչակրաց արշավանքի կոչերը կարող են նպաստել նրա վերակենդանացմանը ու Հայաստանն իրոք դարձնել պանթուրքիզմի թիրախ:

դ) Օտար հովանավորի վրա հաշվարկներ չանելու եւ սեփական ուժերին ապավինելու քաղաքական սկզբունքը, ինչով առաջնորդվել է Շարժումը, արդեն ցույց է տվել, որ այն բերում է դրական քաղաքական արդյունքներ:

---

[760] *Այս մասին Վազգեն Մանուկյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ հունիսի 23-ի հանրահավաքում ելույթների համառոտ սղագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.82-83:*

Մասնավորապես՝ արդարացի ու ժողովրդավարական պայքարի շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ դաշնակիցներ՝ ի դեմս միջազգային հասարակական կարծիքի եւ ԽՍՀՄ-ում թափ առնող ժողովրդավարական ուժերի: Դա է այն ճանապարհը, որով կարելի է հասնել նաեւ Ղարաբաղի հարցի վերջնական լուծմանը:

Կոմիտեն համոզված էր, որ այդ պահին պանթուրքիզմի վտանգի, Թուրքիայի կողմից նվաճված հայկական հողերի վերադարձի խնդիրների արծարծումը կնշանակի շահարկման հիմքեր տալ՝ հայ ժողովրդին ներկայացնել որպես ռեւանշիստներ, վարկաբեկել Շարժումը եւ դրանով իսկ նրան զրկել իր դաշնակիցների համակրանքից: Որպես քաղաքական արկածախնդրություն գնահատելով կատարվածը՝ Կոմիտեն համարում էր, որ դա այլ բան չէ, քան Հայկական հարցը միջազգային հարաբերություններում «էժանագին խաղաթուղթ» դարձնելու հերթական փորձ, եւ համոզմունք էր հայտնում, որ՝ «մեր ազգային իղձերի իրականացման միակ ուղին երկրի դեմոկրատացման գործընթացի անշրջելիության ապահովումն է»[761]:

Քաղաքական օրակարգի հիմնական հարցերը ու դրանց լուծման ճանապարհը Շարժման համար պատկերանում էին հետեւյալ կերպ. սեփական ուժերին ապավինելով՝ ժողովրդավարական ազատությունների համար պայքարի ճանապարհով հասնել անկախության ձեռքբերման եւ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման:

Ակնհայտ էր, որ հիմնական գաղափարական պայքարը Շարժման քաղաքական ծրագրի ու նոր գաղափարների դեմ ընթանալու էր ոչ թե կոմունիստական գաղափարախոսության, այլ քաղաքական հստակության ու համակարգման չտրվող այն ավանդական քարացած պատկերացումների դիրքերից, որ պայմանականորեն կոչվում է հայդատականություն կամ պահանջատիրություն: Ըստ այդմ՝ որպես քաղաքական վարքագիծ՝ պարտադիր էր համարվում հզոր որեւէ ուժի ապավինելը, եւ միայն այդ կերպ հնարավոր համարում ազգային որեւէ խնդրի, առաջին հերթին՝ պատմական

[761] *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 43-44: Ինչպես Զորի Բալայանի, այնպես էլ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթները հրապարակեց ՀՅԴ բյուրոյի պաշտոնաթերթը («Դրոշակ», 05.07.89, էջ 18): Ընդ որում առաջինն անվերապահորեն ընդունելով (քանի որ այն կրկնում էր Դաշնակցության տեսակետը), երկրորդ ելույթի համար խոստանալով մանրամասն անդրադառնալ՝ «նման զարտուղի ու դատապարտելի կեցվածքի մը նկատմամբ»:*

հայկական հողերի վերադարձը[762]: Այս դեպքում ենթադրվում էր Հայաստանը ԽՍՀՄ կազմում եւ հիմնական խնդրի լուծումը վերջինիս օգնությամբ: Գաղափարական այս պայքարում առաջամարտիկի դերը Սփյուռքում ստանձնելու էին կուսակցությունները, մասնավորապես՝ ՀՅԴ-ն: Հայաստանում այդ պայքարը նույն ելակետերից մղելու էր նոմենկլատուրային մտավորականությունը, ինչպես նաեւ գաղափարական նույն հիմքի վրա առաջացած կամ ստեղծված մի շարք մանր կազմակերպություններ: Մամուլի վրա մենաշնորհ ունեցող իշխանությունը առավելագույնս նպաստելու էր այդ քարոզչությանը:

Ավելի լայն քաղաքական իմաստով դրվում էր մի ջրբաժան: Դրա մի կողմում իրատեսական քաղաքական միտքն էր, քաղաքական հաշվարկը եւ իրական քաղաքական հիմնադրույթները, ինչը հայ իրականության մեջ, գեթ վերջին հարյուրամյակում, երբեւէ չէր հաջողվել դնել գործնական քաղաքականության հիմքում: Մյուս կողմում՝ մարդկանց ազգային զգացումների ու թուլությունների վրա խաղացող քաղաքական արկածախնդրությունն էր, որ մի անգամ արդեն, 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին տասնամյակներում, դրված էր եղել գործնական քաղաքականության հիմքում՝ հայտնի աղետալի հետեւանքներով:

զ) «Մտավորականության համաժողովը»

Այս միջոցառումը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-10-ին Սունդուկյանի անվան պետական թատրոնի շենքում:

Որ մտավորականությանը պետք է անհանգստացնեին ազգի եւ երկրի ճակատագիրը, Շարժման օրակարգում ի սկզբանե եղած հարցերը՝ ավելի քան բնական էր: Եւ առաջին իսկ օրերից մտավորականությունը, լայն առումով, իր ամենաակտիվ մասնակցությունն էր բերել Շարժմանը, շատերը հրապարակավ արտահայտել էին իրենց դիրքորոշումները: Անբնական չէր լինի, ընդհակառակը շատ տեղին կլիներ, եթե 1988-ի փետրվարից ի վեր այդ անհանգստությունն արտահայտվեր նաեւ այս խավի ներկայացուցիչների ոչ թե մեկ, այլ մի քանի հանրապետական մասշտաբի նմանօրինակ համաժողովներով, այլ նախաձեռնություններով եւ գործողություններով:

[762] *Սրա դեմ ընդարձակ ու հիմնավոր հոդվածով հանդես եկավ պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը (Իշխանյան, Երրորդ ուժի բացառման օրենքը): Այն, բնականաբար, չէր կարող հրապարակվել ժամանակի մամուլում, ուստի տարածվեց «Գոյապայքար» երիտասարդական միության «Մաշտոց» լուսատիպ ամսագրով:*

Դա հատկապես տեղին եւ օգտակար կլիներ Շարժման համար առավել վտանգավոր եւ ճակատագրական պահերին: Նման նախաձեռնություններ չեղան ո՛չ ակադեմիական, ո՛չ բուհական, ո՛չ ստեղծագործական միությունների մտավորականության կողմից[763]: Նման մեծամասշտաբ նախաձեռնություններ չեղան ո՛չ Շարժման վերելքների պահերին, ո՛չ մի քանի անգամ հայտարարված արտակարգ դրության ու պարետային ժամի պայմաններում, ո՛չ արյունալի իրադարձությունների առիթով, ո՛չ էլ «Ղարաբաղ» կոմիտեի վեցամսյա բանտարկության շրջանում: Հատկապես այս վերջին դեպքում նման մի նախաձեռնությունը կարեւոր նշանակություն կունենար Շարժման եւ ձերբակալվածների համար:

Անբնականն այն էր, որ նման համաժողովի «անհրաժեշտությունը» ծագեց հանկարծակի, Շարժման սկզբից ավելի քան մեկուկես տարի անց, ընդ որում՝ իրադարձությունների համեմատաբար հանդարտ փուլում (համենայնդեպս՝ մինչ այդ եղել էին շատ ավելի սուր եւ վտանգավոր իրավիճակներ): Եւ այս հանգամանքն, անշուշտ, բացատրության կարիք է զգում:

Այս առիթով էլ կրկնենք, որ «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակումից հետո բոլորը հասկացան, որ դա Կենտրոնի պարտությունն էր եւ Շարժման հաղթանակը: Հասկացան, որ մեկ անգամ արդեն բռնության գործադրմամբ արդյունքի չհասնելով եւ ստիպված լինելով տեղի տալ ու ետ քայլ անել, Կենտրոնն այլեւս նույն մեթոդին չէր դիմի: Վախն ու մտավախությունը, վտանգավորության զգացումը սկսեցին տեղի տալ, եւ մինչ այդ մի կողմ քաշված շատերը համարձակություն ձեռք բերեցին: Մյուս կողմից՝ պարզ էր, որ կարեւոր հաղթանակից հետո Շարժումը պետք է շարունակվի նոր թափով, եւ ավելի ու ավելի իրական էին դառնալու նրա հաջողությունների հնարավորությունները: Հաղթահարված վախի զգացումի եւ գայթակղիչ հեռանկարների այս պայմաններում նաեւ մինչ այդ ոչ շատ ակտիվ շատերը պետք է շրջադարձ կատարեին դեպի Շարժումը: Ոմանց համար դա կարող էր պայմանավորված լինել օգտակար լինելու պարզ ցանկությամբ, մի մասի համար՝ թելադրված ապագայի համար սեփական հասարակական դիրքի ու հեղինակության պահպանման եւ ավելացման մտահոգությամբ: Այսպես

[763] *Խոսքը, բնականաբար, մտավորականության նոմենկլատուրային շերտի, տիտղոսակիր մտավորականության մասին է: Այլապես, Գիտությունների ակադեմիայի համակարգի գիտահետազոտական ինստիտուտների, զանազան բուհերի ոչ միայն ուսանողական, այլեւ դասախոսական կազմի, ուսուցիչների, բժիշկների եւ այլն մեծ մասը ներգրավված էր Շարժմանը առաջին իսկ օրվանից եւ շարունակում էր կազմել նրա առանցքային ուժերից մեկը:*

թե այնպես՝ այդ հոսքը մեծացնելու էր Շարժման թափը, մինչդեռ կարելի էր նաեւ դրան «տիրություն» անել եւ հենց նույն կարգախոսներով դարձնել Շարժմանը հակակշիռ կամ այլընտրանք, եւ իշխանությունը չէր կարող չնկատել այս հնարավորությունը: Գայթակղությունը մեծ էր մտավորականության հատկապես վերին շերտերի՝ նոմենկլատուրային մտավորականության համար, որը «Ղարաբաղ» կոմիտեի «ջահելների» ղեկավար դերն ընդունելու հարցում լուրջ հոգեբանական բարդույթներ ուներ (նրանք դեռ երեկ իրենց դռների առջեւ կարող էին նաեւ ժամերով ընդունելության սպասել), մինչդեռ հաճույքով կդառնար ամենահամարձակ եւ ամենաազգայնական տարրը, եթե նախաձեռնությունը կամ ազդակները գային իշխանությունից: Վերջին հաշվով՝ նրանցից յուրաքանչյուրն իր ունեցած դիրքի համար պարտական էր նույն Կոմկուսի կենտկոմին եւ դրանից նաեւ կարող էր զրկվել նույն այդ կենտկոմի քմահաճույքով: Իշխանություններն ի սկզբանե գիտեին նոմենկլատուրային մտավորականության այդ ներուժի մասին եւ այն օգտագործել էին նաեւ ողջ 1988թ. ընթացքում: Մասնավորապես՝ դրա ցայտուն դրսեւորումներից էին ՀՀՇ Ծրագրի հրապարակումից հետո դրան որպես հակակշիռ՝ «Ժողովրդական ճակատի» եւ «Ազգային ճակատի» կազմակերպման փորձերը: Դրանք նկատելի որեւէ դեր չխաղացին, իսկ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունից հետո սրանց գործունեությունը, փաստորեն, դադարեց:

Որպես մտավորականության համաժողովի նախաձեռնության հեղինակ ներկայացավ մտավորականների մի խումբ: Նախաձեռնությունն իրականում Հայաստանի կոմկուսի կենտկոմինն էր՝ նրա գաղափարախոսական բաժինը՝ ԿԿ-ի քարտուղար Գ. Գալոյանի գլխավորությամբ: Ընդ որում՝ կազմակերպիչները դարձյալ ժամանակի որոշակի սղություն էին ունեցել եւ, ըստ համապատասխան հաղորդագրության՝ «չէին հասցրել հրավիրել արտասահմանի հայ մտավորականության ներկայացուցիչներին»[764]: Ասել է թե՝ այս նախաձեռնության միտքը կամ անհրաժեշտությունը ծագել էր, կամ հրահանգը ստացվել էր անակնկալ: Նախորդող շաբաթներում, բացի ՀՀՇ հիմնադիր ժողովից, նրա կողմից ընդունած Հռչակագրից, պաշտոնական ճանաչումից եւ առաջիկայում համագումար հրավիրելու մասին որոշումից (հայտնի էր, որ այն ծրագրված է հրավիրել սեպտեմբերին), չկա ուրիշ որեւէ իրադարձություն, որը նման նախաձեռնության համար հրատապ անհրաժեշտություն առաջացներ: Գաղտնիք չէր նաեւ, թե ինչ

[764] *Տե՛ս «Երեկոյան Երեւան», 12.09.1989:*

ուղղությամբ է վերանայվում ՀՀՇ Ծրագիրը՝ առաջիկա հիմնադիր համագումարում ընդունվելու համար. դրանում անկախության առանցքագաղափարը վերածվում էր քաղաքական առաջնահերթ խնդրի:

Շարժման եւ նրա որդեգրած քաղաքական նոր խնդիրների դեմ բացահայտ պայքարն անիմաստ էր եւ հակառակ արդյունքի էր հանգեցնում: Ուրեմն՝ պետք էր փնտրել Շարժման դեմ արդյունավետ պայքարի այլ ձեւ: Վերջինս այլ բան լինել չէր կարող, քան՝ նախ գնալ Շարժմանը համընթաց, հայրենասիրական ու ազգասիրական կարգախոսներով փորձել անցնել նրա առաջին շարքերը, ստանձնել ղեկավարությունը եւ այն աստիճանաբար տանել ցանկալի «անվնաս» ուղղությամբ: Սա կլիներ խնդրի ամբողջական լուծումը: Նույն խնդրի մասնակի լուծման դեպքում, առնվազն, պառակտում կառաջանար Շարժման մեջ, եւ կդժվարանար դրված հիմնական՝ անկախության խնդիրը հետապնդելը: Նման նպատակ իրականացնելու համար անհրաժեշտ էր գտնել համապատասխան, հեղինակավոր, վստահություն ներշնչող սուբյեկտ: Դա, հասկանալի է, այլեւս ոչ մի կերպ արդեն չէր կարող լինել կոմկուսն ինքը (նման փորձ նա արդեն արել ու չէր հաջողել), դա չէր կարող լինել անհատ գործիչների խումբ, որքան էլ նրանք հայտնի եւ հեղինակավոր լինեին (այդ շրջանն արդեն անցել էր 88-ի առաջին ամիսներին): Այդպիսին չէր կարող լինել եղած եւ հընթացս արագ ստեղծվող մանր կազմակերպություններից որեւէ մեկը, ոչ էլ նրանց համախումբը (այդպիսի փորձերն էլ ձախողվել էին): Եւ ընտրությունը կանգ էր առել նոմենկլատուրային մտավորականության վրա, որը, սակայն, պետք է հանդես գար ողջ հայ մտավորականության դեմքով:

Մտահղացումն այսպիսին էր. հրավիրել մտավորականության խիստ ներկայացուցչական մի համաժողով, նրա անունից մի մարմին ստեղծել, արտաքուստ ներկայանալ Շարժման նույն կամ համարյա նույն ծրագրով, ինչին եւ ձեռնամուխ եղան կազմակերպիչները: Համաժողովին, ըստ երեւույթին, մեծ կարեւորություն էր տրվել, եւ դրա վարկը բարձրացնելու համար, թեկուզ կարճ ժամանակում, բայց նախապատրաստական որոշակի քայլեր էին կատարվել: Օգոստոսի 31-ին Ճարտարապետների տանը գումարված մտավորականության ներկայացուցիչների ժողովը քննության էր առել տարածաշրջանում տիրող իրավիճակը եւ մտավորականության խնդիրները: Եւ այդ քննության արդյունքում, նկատի ունենալով Ղարաբաղի հարցում, ազգամիջյան հարաբերություններում, հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակում «հրատապ միջոցառումների դիմելու անհրաժեշտությունը», ինչպես նաեւ՝ «մտավորականության դերը մեր

ժողովրդի առջեւ ծառացած անհետաձգելի խնդիրների լուծման համար, ազգի համախմբման եւ կոնսոլիդացման գործում, ժողովը որոշեց առաջիկա տասն օրում Երեւանում հրավիրել հայ մտավորականության առաջին համաժողովը՝ հանրապետության եւ ներքին սփյուռքի մտավորականների լայն մասնակցությամբ»: Այսպիսի շքեղ եւ խոստումնալից տեսքով է ներկայանում համաժողովի անհրաժեշտության մասին պաշտոնական հայտարարությունը[765]:

Նախօրյակին՝ օգոստոսի 30-ին, տեղի էր ունեցել մեկ այլ միջոցառում. «Խորհրդային Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անդամների եւ ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչների ժողով»: Այն նաեւ ընդունել էր ընդարձակ մի «Դեկլարացիա»[766], որը բովանդակությամբ պատասխանն էր Բաքվում գումարված նույնատիպ մի ժողովում ընդունված, բռնությունների դիմելու կոչ պարունակող մի փաստաթղթի (վերջինս հրապարակվել էր «Բակինսկի Ռաբոչի» թերթում օգոստոսի 17-ին): Որպես Ադրբեջանի ԳԱ-ին օպերատիվ պատասխան՝ այն փոքր-ինչ ուշացած էր, եւ, որպես քայլ, կարող էր բացատրվել միայն հայ մտավորականության առաջին համաժողովի նախապատրաստական միջոցառումների կոնտեքստում: Երկու միջոցառումներն էլ կոչված էին հասարակությանը ցույց տալ, որ մտավորականությունը, որպես ամբողջություն, խիստ մտահոգված է իրավիճակով եւ պատրաստվում է ինչ-որ մեծ նախաձեռնության:

Որոշակի նախապատրաստություններ էին ձեռնարկվել նաեւ բարձրացնելու համար նրանց վարկանիշը, ովքեր պետք է լինեին առաջին պլանում, վարեին համաժողովը: Կոմկուսի երկու ամենատարածված պաշտոնաթերթերը (հետաքրքիր է, որ տառացիորեն նույն օրերին) շարունակաբար հրապարակեցին ԽՄԿԿ կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Հրաչիկ Սիմոնյանի եւ պետական համալսարանի դասախոս Լենդրուշ Խուրշուդյանի խիստ ծավալուն հոդվածները[767]: Այն հանգամանքը, որ նրանց նոր, սուր եւ համարձակ «ազգայնական» տեսակետները եւ գնահատականները հաճախ տրամագծորեն

---

[765] *Տե՛ս «Երեկոյան Երեւան», 01.09.1989:*

[766] *«Երեկոյան Երեւան», 04.09 .1989:*

[767] *Առաջինը (հեղինակ՝ Հ. Սիմոնյան) վերաբերում էր 1918-23թթ. Ղարաբաղի հիմնախնդրի առաջացմանը, այն ժամանակ դրա անարդարացի լուծմանը («Խորհրդային Հայաստան», 23.08.89 եւ 25.08.89), երկրորդը (հեղինակ՝ Լ. Խուրշուդյան) նույն շրջանում Նախիջեւանում եւ Զանգեզուրում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց հետեւանքների մասին էր («Երեկոյան Երեւան», 23.08.89 եւ 24.08.89):*

հակադրվում էին այս նույն թեմաներով իրենց իսկ նախորդ գիտական ողջ ժառանգությանը, այդ ժամանակ որեւէ մեկին չէր հուզում: Ավելին՝ Շարժման մասնակիցները ուրախանում եւ ողջունում էին «հակառակ» (կոմունիստական) ճամբարից տիտղոսավոր մարդկանց անցումը Շարժման ճամբար, դա, իրոք, որոշակիորեն բարձրացնում էր նրանց հեղինակությունը, եւ նրանց նկատմամբ վստահությունը: Նախապատրաստության այս շրջանակներում էր, անշուշտ, Հ. Սիմոնյանի մեկ այլ հոդվածը՝ հրապարակված համաժողովի անմիջապես նախօրերին[768]:

Նախապատրաստական այս միջոցառումների համար նվազագույն անհրաժեշտ ժամանակը հաշվելով՝ կարելի է ենթադրել, որ Հայաստանի կոմկուսի կենտկոմում մտավորականության համաժողով հրավիրելու գաղափարը հղացվել է ՀՀՇ հիմնադիր ժողովից հետո, մոտավորապես օգոստոսի կեսին: Այսինքն՝ այն բանից հետո, երբ հստակ էր, թե քաղաքական ինչ ուղենիշ է պատրաստվում որդեգրել ՀՀՇ առաջիկա համագումարը:

Համաժողովի հրավիրումը, բնականաբար, չէր կարող ներկայացվել դրա իրական նպատակի հռչակմամբ, կամ Շարժման ղեկավարության դեմ անգամ թույլ որեւէ ակնարկով: Այդ դեպքում այն ի սկզբանե կտապալվեր: Խնդիրն այն էր, որ համապատասխան հիմնարկներից ու կոլեկտիվներից ընտրված՝ համաժողովի պատվիրակների թերեւս 99%-ը Շարժման գաղափարակիրներ եւ գործուն մասնակիցներ էին[769]՝ չհաշված նիստերի ընթացքում դրսում դրա ընթացքին բարձրախոսներով հետեւող բազմահազար ունկնդիրները: Այն պետք է լայն զանգվածների մեջ տպավորություն ստեղծեր, թե հայ մտավորականությունն ամբողջությամբ եւ կազմակերպված լծվում է Շարժման խնդիրների իրականացմանը:

Համաժողովին հրավիրված էր եւ մասնակցում էր նաեւ «Ղարաբաղ» կոմիտեն: Սակայն ակնհայտ երեւում էր, որ Կոմիտեի մասնակցությունն ավելի շատ հայեցողական է, եւ նա չէր փորձում առաջին պլանում երեւալ: Ելույթ ունեցողների թվում հիշատակվում են միայն Աշոտ Մանուչարյանը եւ

[768] *«Երեկոյան Երեւան», 06.09.1989:*

[769] *Տողերիս հեղինակը մասնակից է եղել Մատենադարանի կոլեկտիվի համապատասխան ժողովին, որտեղ որպես համաժողովի պատվիրակներ ընտրելու «չափանիշը» բոլորի համար ոչ թե տիտղոսը, այլ Շարժմանը առավել ակտիվ մասնակցելու հանգամանքն էր: Այլ կերպ չէր էլ կարող լինել. պատվիրակներն ընտրվել էին համապատասխան գիտական հիմնարկների կոլեկտիվների ժողովների կողմից, իսկ այդ հիմնարկների կոլեկտիվների մեծ մասը ՀՀՇ կոլեկտիվ անդամներ էին:*

Խաչիկ Ստամբոլցյանը[770]: Կոմիտեն, իր հերթին, անկախ ամեն ինչից, որեւէ բացասական ակնարկ չարեց այս միջոցառման դեմ. Շարժման լայն շրջանակները դա ընդունում էին որպես ամբողջ մտավորականության երկար սպասված կազմակերպված մուտք Շարժման մեջ:

Ի տարբերություն բուն Շարժման հետ կապված իրադարձությունների, որոնց մասին մամուլը բացարձակ լռություն էր պաշտպանում, մտավորականության այս համաժողովն, իհարկե, ներկայացվեց: Ըստ «Արմենպրեսի» հաղորդագրության՝ «Հայ մտավորականությունը հավաքվել է համախմբելու մեր ազգային բոլոր ուժերն ու ուղղությունները, այս պատասխանատու պահին առաջարկելու առավել արդյունավետ ձեռնարկումներ, որոնք կնպաստեն Ղարաբաղի հարցի արագ եւ արդարացի լուծմանը, Ադրբեջանում ապրող հայերի վիճակի թեթեւացմանը, Արցախի, նաեւ Հայկական ԽՍՀ-ի շրջափակման, սահմանամերձ շրջաններում հարձակման եւ ասպատակությունների դեպքերի վերացմանը»[771]:

Համաժողովին մասնակցում էր շուրջ հազար պատվիրակ: Ղեկավար մարմնի՝ Խորհրդի մեջ ընտրվեց 67 հոգի: Սա էլ, իր հերթին, կազմեց իր նախագահությունը՝ 15 անդամից: Չնայած Սփյուռքից պատվիրակների բացակայությանը, այնուամենայնիվ, «որոշվեց արտասահմանի հայ մտավորականության առավել աչքի ընկնող ներկայացուցիչներին ընդգրկել Համաժողովի ղեկավար մարմիններում»[772]: Իսկ թե ինչպես, ինչ չափանիշներով եւ ում ճաշակով էին ընտրվելու այդ «առավել աչքի ընկնողները», մնում էր անհայտ: Համաժողովն իրեն հռչակեց մշտապես գործող մարմին՝ «որի նպատակն է համախմբել Խորհրդային Հայաստանի, ԼՂԻՄ-ի, ներքին եւ արտաքին Սփյուռքի մտավորականության ուժերը համազգային իդեալների իրականացման համար»:

Համաժողովի ընթացքում, բնականաբար, չէին կարող հնչել Շարժման եւ նրա օրակարգում դրված հարցերի դեմ ելույթներ: Ընդհակառակը՝ բոլոր այդ հարցերի շուրջ պետք է հնչեին շատ ավելի «խոր ազգային» եւ համարձակ խոսքեր: Ավելին՝ համաժողովի ընդունած «Հռչակագրով» «Հայ մտավորականության համաժողովը» իրեն հայտարարում էր որպես «Հայոց համազգային շարժման շրջանակներում գործող մշտական մարմին», որի հռչակած 10 խնդիրներից առաջին երեքը հնչում էին այսպես.

[770] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 14.09.1989:*

[771] *Նույն տեղում:*

[772] *«Երեկոյան Երեւան», 12.09.1989:*

1. Համախմբել Խորհրդային Հայաստանի, ԼՂԻՄ-ի, ներքին եւ արտաքին Սփյուռքի մտավորականության ուժերը համազգային իդեալների իրականացման համար, որոնց առավել ամբողջական եւ արմատական արտահայտիչն է ՀՀՇ-ն:
2. Օգնել ՀՀՇ-ին իր առջեւ դրված նպատակների ու խնդիրների լուծման համակողմանիորեն կշռադատված եւ գիտականորեն հիմնավորված ստրատեգիա ու տակտիկա մշակելու գործում, կազմակերպել մտավորականության ուժերը այդ ստրատեգիայի ու տակտիկայի իրականացմանը նպատակամղելու համար:
3. Օգնել ՀՀՇ-ին մշակելու գիտականորեն հիմնավորված եւ իրավագիտորեն անխոցելի փաստաթղթեր հայ ժողովրդի ազգային խնդիրների ու պահանջների եւ դրանց միջազգային-քաղաքական առումների եւ միջազգային իրավունքի տեսակետից իրավազորության, երկրում տեղի ունեցող ազգային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ուղղությունների եւ դրանց հետ կապված՝ Հայաստանի առանձնահատուկ հարցերի վերաբերյալ...»[773]:

Համաժողովի «Հռչակագիրը» բազմաթիվ դրույթներով նույնանում էր ՀՀՇ-ի Ծրագրին եւ՝ արտաքուստ թվում էր, թե էական տարբերություն չկա: Սակայն իրականում կար երկու էական տարբերություն, որոնք ավելի էական էին դառնալու հետագայում:

Առաջինը վերաբերում էր Ղարաբաղի հարցին, երկրորդը՝ անկախության: Մտավորականների համաժողովի «Հռչակագրում» **Լեռնային Ղարաբաղի հարցը համարվում էր որպես «անցյալ դարի** (19-րդ դարի-Ա.Ս) **70-ական թվականներին միջազգայնացված Հայկական հարցի անբաժան մաս»**[774], ինչպես նաեւ շեշտադրում էր արվում **«պանթուրքիզմի»**[775] վրա: ՀՀՇ-ի Ծրագրում Ղարաբաղի հարցը չէր կապվում «Հայկական հարցի» եւ պահանջատիրության հետ[776], չէր ներկայանում որպես տարածքային

[773] *«Դրոշակ» 11.10.1989, էջ 36:*
[774] *Նույնը, էջ 27:*
[775] *Նույնը, էջ 31:*
[776] *Հետաքրքիր է, որ համաժողովի մասին առաջին հաղորդագրության մեջ ասվում էր՝ Հայ մտավորականության համաժողովի նպատակն է «Համախմբել Խորհրդային Հայաստանի, ԼՂԻՄ-ի, ներքին եւ արտաքին սփյուռքի մտավորականության ուժերը համազգային իդեալների իրականացման համար, որոնց առավել ամբողջական եւ արմատական արտահայտիչն է Հայոց համազգային շարժումը» «Երեկոյան Երեւան», 12.09.1989): Երկու օր անց հրապարակված հաղորդագրության մեջ (Արմենպրես)*

պահանջ, որպես փաստարկ չէր ընդունվում պանթուրքիզմի վտանգը, այդ ամենը համարվում էր Լեռնային Ղարաբաղի համար վտանգավոր:

Երկրորդ հիմնական տարբերությունը այն կարգավիճակի հարցն էր, որին պետք է ձգտեր Հայաստանը: Ըստ համաժողովի Հռչակագրի՝ Հայաստանի «ինքնիշխանության հարցը կարելի է համապատասխան ձեւով լուծել սոսկ այն դեպքում, եթե Հայաստանը **խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում** ստանա լիակատար ինքնուրույնություն ներքին կառավարման եւ դրա համար օրենսդրության մշակման գործում[777]»: Իսկ անկախության ձգտումը համարվում էր «**անջատողականություն**»: ՀՀՇ Ծրագրում արդեն հստակ ձեւակերպվում էր անկախ պետականության հաստատման խնդիրը: Այս երկու տարբերություններն էլ պատահական չէին, եւ երկրորդը տրամաբանորեն բխում էր առաջինից:

Այսինքն՝ մտավորականության այս համաժողովի ամբողջ նպատակը Ղարաբաղի հարցը եւ Շարժումը հայդատականության ու պահանջատիրական հարթություն տեղափոխելն էր, ինչով ինքնին կփակվեր նաեւ անկախության հարցը՝ որպես գոյատեւման միակ ձեւ թողնելով Հայաստանը Խորհրդային Միության կազմում: Սա, ըստ էության, նույն պլատֆորմն էր, ինչ հունիսյան նստաշրջանում ավելի մերկ ներկայացվեց Զորի Բալայանի ելույթով, նույն պլատֆորմը, որի վրա կանգնած էին Սփյուռքի կուսակցությունները, նույն պլատֆորմը, որի վրա Հայաստանում, հատկապես Կոմիտեի վերադարձից հետո, բազմանում էին նոր կազմակերպությունները:

Հայ մտավորականների համաժողովի ընդունած ընդարձակ «Հռչակագիրը» հայաստանյան կենտրոնական թերթերում չհրապարակվեց, իսկ երկրորդ համաժողով այդպես էլ չկայացավ:

Է) Սփյուռքի կուսակցությունները

Երրորդ ուժը, որ հակադրվելու էր Շարժման օրակարգում հայտնվող նոր հարցերին եւ անկախության ուղեգծին, Սփյուռքի կուսակցություններն էին: Երեք կուսակցություններն էլ դավանում էին նույն հայդատական գաղափարախոսությունը, որն, ինչպես ասվել է, ամրորեն խարսխվում էր Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում մնալու պայմանի վրա: Այսինքն՝ նույնքան

արդեն չկան այլեւս «Հայոց համազգային շարժում» բառերը, եւ համաժողովի վերջնական նպատակը ձեւակերպված էր այլ կերպ. «ի նպաստ Արցախի վերամիավորման, հայ դատի պաշտպանության» (տե՛ս, «Խորհրդային Հայաստան», 14.09.1989:
[777] *«Դրոշակ» 11.10.1989, էջ 35:*

շահագրգռված անկախության դեմ պայքարի խնդրում՝ նրանք խորհրդային իշխանության համար բնական դաշնակիցներ էին:

Եւ այսպես, մտավորական նոմենկլատուրայից հետո Սփյուռքի կուսակցություններն էին, որ կարող էին մեծապես օգտակար լինել իշխանությանը: Այդ է վկայում այն փաստը, որ մայիսի վերջից սկսած՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն, ՀԿԿ ԿԿ-ի գաղափարախոսական բաժինը, ապա նաեւ ՀԽՍՀ ՊԱԿ-ը մեկը մյուսի հետեւից հարց էին բարձրացնում այս կուսակցությունների ղեկավարների հետ խոստացված, բայց չիրականացված «բարձր մակարդակի» հանդիպումներն իրականացնելու համար: Խոսքը վերաբերում է «հայրենասիրական ճակատի» կազմակերպություններին, որոնց այդ խոստումը տրվել էր դեռ 1988-ի հոկտեմբերին: Ինչ վերաբերում է Դաշնակցությանը, ապա նրա հետ կապված այսօրինակ խնդիրները հանրապետական մարմիններում չէին քննարկվում: Նրանց հետ հարաբերությունները, ինչպես արդեն հայտնի է, իրականացվում էին Մոսկվայի միջոցով, եւ բնական է, որ այս կուսակցությունն էլ իր հավակնությունները այդտեղ էր ներկայացնում:

* * *

Սփյուռքի «հայրենասիրական» ուժերը. Խորհրդային իշխանությունները, որպես «յուրայիններ» համարելով, շարունակում էին ավելի վստահ մնալ այս ուժերի վարքագծի ու նաեւ ավելի պակաս ուշադիր՝ նրանց ակնկալիքների նկատմամբ: Դեռ 1988-ի հոկտեմբերին նրանց խոստացված պաշտոնական ընդունելությունը ձգձգվում էր շուրջ մեկ տարի: Իսկ Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի ընդունումը բացասական արձագանք գտավ նրանց կողմից. «Սփյուռքի առաջադիմական ուժերը շարունակում են բացասաբար վերաբերվել եռագույն ազգային խորհրդանիշներին եւ այն համարում են դաշնակցական ատրիբուտիկա՝ չնայած ՀԽՍՀ ԳԽ նախագահության համապատասխան որոշմանը»[778]: Ինչպես վկայում է ՀԿԿ ԿԿ-ում ստացված զեկուցագիրը (թվագրված հոկտեմբերի 19-ով), ռամկավարները եւ հնչակները խոր հիասթափություն էին ապրել ու բողոքել էին Եռագույն դրոշի ու Մայիսի 28-ի պաշտոնական ճանաչման դեմ: Նրանք համարել են, որ դա Դաշնակցության նկատմամբ վերաբերմունքի փոփոխության եւ նրանց ընդառաջ արված քայլ է, այն դեպքում, երբ տասնամյակներ շարունակ իրենք

[778] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.50:*

են կանգնած եղել ԽՍՀՄ-ի եւ Խորհրդային Հայաստանի կողքին[779]: Ընդ որում՝ Ռամկավար կուսակցությունն իր վերապահ վերաբերմունքն արտահայտեց անմիջապես, մայիսի 29-ին[780]: Սակայն այդ բողոքները որեւէ կերպ չէին ազդում նրանց հիմնական դիրքորոշման վրա: Հնչակյան կուսակցությունն իր պաշտպանությունն ու աջակցությունն էր հայտնում ԽՍՀՄ-ում տեղի ունեցող վերակառուցմանը, նրա ներքին եւ արտաքին քաղաքականությանը[781]: Մայիսի 29-ին տարածած նույն հայտարարության մեջ ՌԱԿ կենտրոնական վարչությունը համարում էր, որ Ապրիլի 24-ը որպես Օսմանյան կայսրությունում 1915 թվականի հայերի ցեղասպանության օր ճանաչելու եւ դատապարտելու մասին օրենքը (որ ընդունվել էր 1988-ի նոյեմբերի 22-ի նստաշրջանում Շարժման նախաձեռնությամբ եւ բուռն ճնշման շնորհիվ) համարում է հանրապետության իշխանության վաստակը: Հատկանշական է, որ այդ օրենքն ընդունելու ժամանակ կուսակցություններից ոչ մեկը հրապարակային արձագանք չտվեց: Այժմ, վեց ամիս անց, ՌԱԿ-ը շնորհավորում է այդ առիթով՝ այն վերագրելով հանրապետության իշխանությանը[782]:

Թերեւս պայմանավորված այն հանգամանքով, որ խոստացված «բարձր մակարդակի ընդունելությունը» ձգձգվում էր, տեւական մի շրջան հրապարակային հայտարարություններ ՌԱԿ-ը չունի, միայն սեպտեմբերի 23-ին նա միացել է երեք կուսակցությունների անունից Գորբաչովին ուղղված հերթապահ մի դիմումի, որում պահանջվում է վերացնել Հայաստանի շրջափակումը, երաշխավորել Լեռնային Ղարաբաղի բնակչության ապահովությունը, բավարարել նրանց արդար պահանջը[783]:

Իսկ այն, ինչ ակնկալվում էր իրենից, ՌԱԿ-ը ընդարձակ մի հայտարարությամբ ներկայացրեց հոկտեմբերի 17-ին: Դրանում ասվում է, թե Խորհրդային Միությունը բարեփոխվում է. «ենթադրվում է, որ Խորհրդային

[779] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.53:*

[780] *Մայիսի 28-ը գնահատվում է որպես «գոյատման թվականը հայկական նոր պետականության... իրագործված հայ քաղաքական բոլոր հոսանքներու համագործակցությամբ՝ որուն հաջորդող Մայր հայրենիք Հայաստանի խորհրդայնացումը 1920 թվականի նոյեմբերի 29-ին եղավ մեր ժողովրդին համար փրկության եւ վերածնունդի դարձակետ»: Ինչ վերաբերում է Եռագույն դրոշին, ապա ՀԽՍՀ Գերագույն խորհրդին առաջարկվում է «ներկա զարգացումներու լույսին տակ վերաքննության ենթարկել եւ հստակ դիրքորոշում որդեգրել» նրա նկատմամբ (Տե՛ս «ՌԱԿ-ի խոսքը», էջ 38-39):*

[781] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.35-36:*

[782] *Տե՛ս «ՌԱԿ-ի խոսքը», էջ 38-39:*

[783] *Տե՛ս «ՌԱԿ-ի խոսքը», էջ 39-40:*

Միությունն ընթանում է այնպիսի ուղղությամբ, որ «հանրապետությունների ձայնն ու կշիռը հստակորեն պիտի չափվին անոնց ներկայացուցած քաղաքական ու տնտեսական ուժին համապատասխան չափով մը»: Եւ այս՝ Հայաստանը տնտեսապես հզորացնելու անհրաժեշտության կոնտեքստում, **հիմնավորվում է Հայաստանի անկախության անհնարինությունը.** «Հայաստանը իրերու այս դրության մեջ, իր ներկայի կարողականությամբ, հեռու է առանձին մեր ժողովուրդին համար ապահովելե մեր ազգային ձգտումներուն եւ հիմնական շահերուն համապատասխան կշիռ մը, որ ինքն իր հերթին նա՛խ մեր ժողովուրդին ֆիզիկական ապահովությունը, ապա նաեւ անոր բարեկեցությունը: Ավելի՛ն, Արցախյան պահանջատիրական շարժման անդրադարձները անգամ մը եւս ցույց տվին, թե Հայաստանը կը գտնվի աշխարհաքաղաքական այնպիսի պայմաններու ներքեւ, ուր խնդրական կրնա ըլլալ նույնիսկ իր գոյության հարցը»[784]:

Շարունակում էր նույնը մնալ սփյուռքահայ կուսակցությունների մտահոգության հիմնական առարկան. մրցակցությունը երեք կուսակցությունների միջեւ, թե ով առաջինը պաշտոնական շփումներ կունենա հանրապետության իշխանությունների հետ (որ կնշանակեր նաեւ նրանց փաստական ճանաչում): «Հայրենասիրական ճակատը» համարում էր, որ Դաշնակցական կուսակցությունը իրենցից առաջ է անցել, եւ բողոքում էր դրա դեմ: Որպես «փոխհատուցում»՝ հոկտեմբերին Երեւան հրավիրվեցին այս կուսակցությունների ներկայացուցիչներ: Հավասարակշռությունը ինչ-որ կերպ վերականգնելու եւ «Սփյուռքում, ինչպես նաեւ հանրապետությունում նրանց հեղինակությունը բարձրացնելու համար» նախատեսվում էր նրանց ընդունել բարձր մակարդակով, մամուլում լուսաբանել նրանց այցը, ինչպես նաեւ հեռուստատեսությամբ կլոր սեղան կազմակերպել Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղարներից մեկի մասնակցությամբ[785]:

Դաշնակցությունը. Դաշնակցության բյուրոյի ներկայացուցիչներ Հ. Մարուխյանը եւ Հ. Տասնապետյանը 1989-ի օգոստոսին եղել էին Հայաստանում, եւ նույն տարվա ընթացքում դա նրանց երկրորդ այցելությունն

[784] *Տե՛ս «ՌԱԿ-ի խոսքը», էջ 42 :*

[785] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.53: Ռամկավարների պատվիրակության այցը տեղի ունեցավ նախատեսված ժամկետից ավելի ուշ՝ նոյեմբերի 6-12-ը (տե՛ս «Զարթոնք», 21.11.89), նրանք ներկա եղան նաեւ ՀՀՇ առաջին համագումարին, որին նույնպես հրավիրված էին եւ ընդունել էին այդ հրավերը:*

էր[786]: Այսինքն՝ Շարժման սկզբից ի վեր սա նրանց առնվազն չորրորդ վկայված այցելությունն էր Հայաստան: Ինչպես նախորդ տարում, այնպես էլ այժմ, այսօրինակ այցերի ժամկետները, կարծես թե, պատահական չէին եւ կապված էին առաջացած կարեւոր խնդիրների հետ: Նույն աղբյուրի համաձայն՝ բյուրոյի ղեկավարներն օգոստոսին հանդիպել են նաեւ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի հետ, եւ «ծանր ու երկար վիճաբանությունից հետո կողմերը բաժանվել են անարդյունք»[787]: 1989թ. ամռանն արդեն հստակ էր, որ Շարժումն իր Ծրագրով որպես նպատակ որդեգրած՝ երկրի անկախության հարցը դարձնում է օրակարգային, եւ ՀՀՇ նախապատրաստվող հիմնադիր համագումարը քննարկելու է այդ հարցը՝ որպես ծրագրային հիմնական խնդիր: Այսինքն՝ երկիրը գտնվում էր կարեւոր իրադարձության նախադռանը (ինչպես տեսանք՝ դրանով էր պայմանավորված նաեւ «մտավորականության համաժողովը»): Եթե սա ընդունենք որպես առիթ Դաշնակցության ղեկավարների օգոստոսին կատարած այցի, ապա այդ թվականին նրանց նախորդ այցը պետք է որ եղած լինի մայիսին, երբ այլեւս ակնհայտ էր, որ խորհրդային իշխանությունները ստիպված պետք է լինեն ազատ արձակել «Ղարաբաղ» կոմիտեն եւ հետագա պայքարի համար խորհրդակցության կարիք պետք է ունենային իրենց դաշնակցի հետ:

Սփյուռքի «հայրենասիրական ճակատի» կազմակերպությունների համեմատությամբ՝ խորհրդային իշխանությունները Դաշնակցությանը ակնհայտորեն ավելի մեծ կարեւորություն էին տալիս: Այս կուսակցությունն ամբողջ յոթ տասնամյակ կոմունիստական պատմագիտության եւ հրապարակախոսության սուր քննադատության թիրախ էր: Սակայն դա ունեցել էր նաեւ իր բնական հակազդեցությունը՝ հասարակական գիտակցության մեջ ձեւավորվելով նրա՝ որպես հայրենասիրության եւ ազգասիրության համար

[786] *Տե՛ս «Արմենիան Ռեպորտեր», 31.08.1989 (հղումը՝ ըստ **Մելիք-Հակոբյան Ս.**, Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը, էջ 32):*

[787] *Իրականում Երեւանում հանդիպումը եւ «ծանր զրույցը» տեղի է ունեցել միայն Վազգեն Մանուկյանի հետ, քանզի Լեւոն Տեր-Պետրոսյանն այդ ժամանակ բուժվում էր Փարիզում: Դրանից հետո Հ. Մարուխյանը մեկնել է Փարիզ եւ այնտեղ հանդիպել Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Վերջինիս վկայությամբ, սակայն, իրենց զրույցը դուրս չի եկել քաղաքավարական թեմաների շրջանակներից, ընդ որում Բյուրոյի ղեկավարը խիստ դժգոհություն է հայտնել Վ. Մանուկյանի հետ Երեւանում ունեցած իր հանդիպման առիթով՝ առանց մանրամասնելու այդ դժգոհության պատճառը (Լ. Տեր-Պետրոսյանի հետ անձնական զրույցից):*

հալածվածի, անկախության համար պայքարող առաջամարտիկի լեգենդը: Հազիվ թե որեւէ մեկին հնարավոր կլիներ համոզել, թե Դաշնակցությունը (իրականում նրա բարձրագույն ղեկավարությունը) կարող է աշխատել հօգուտ Մոսկվայի, ընդդեմ Հայաստանի անկախության: Շարժման ընթացքում Հայաստանում եւ Ղարաբաղում նա պաշտոնապես որեւէ կերպ հանդես չէր եկել: 1988թ. հոկտեմբերին երեք կուսակցությունների հայտարարությունը լայն արձագանք եւ մեկնաբանություն չէր ստացել, խիստ քննադատության չէր արժանացել եւ, փաստորեն, մոռացվել էր: Նրա հարաբերական լռությունը նույն հասարակական գիտակցության մեջ պահպանել էր ուժի եւ հնարավորությունների խորհրդավորության պատրանքը: Դաշնակցությունը հասարակական պատկերացումներում դեռեւս ամրորեն պահպանում էր նաեւ «հակախորհրդայինի» իր համարումը: Այս ամենով էլ՝ հասարակական կարծիքի վրա ազդելու առումով նրա պոտենցիալը շատ ավելի մեծ էր՝ մյուս կուսակցությունների համեմատ: Հայաստանի կոմկուսի ղեկավարության հեղինակության բարձրացման համար նա կարող էր էական ծառայություն մատուցել: Բայց դա չէր կարող լինել սոսկ հանձնարարության կատարում՝ ի վնաս սեփական հեղինակության եւ ծրագրերի: Պարզապես այս դեպքում հենց ամենակարեւոր եւ առանցքային հարցում կար երկու կողմերի տեսակետների եւ կենսական շահերի լիակատար համընկնում: Եւ այդ համընկնումը **Հայաստանի համար անկախության գաղափարը մերժելու, ԽՍՀՄ կազմի մեջ մնալու հարցում էր**:

Ինչո՞վ եւ ինչպե՞ս կարող էր օգնել Դաշնակցությունը խորհրդային իշխանություններին վերջինիս համար ամենադժվարին՝ ՀՀՇ-ի դեմ գաղափարական պայքարի բնագավառում: Ինչպես արդեն արձանագրվել էր 1989թ. հունիսյան նստաշրջանում Ջ. Բալայանի ոչ պատահական ելույթով, ՀՀՇ-ի դեմ արդյունավետ գաղափարական պայքարի համար որպես հիմք ընտրվել էր հայդատականության բաղադրիչներ «պանթուրքիզմի վտանգը» տարփոդելը եւ հողային պահանջատիրությունը: Առաջինը՝ որպես փաստարկ անկախ ու միայնակ ապրելու անհնարինության, երկրորդը՝ որպես պատմական հայկական հողերի ձեռքբերման միակ միջոց: Այդ պայքարը մղող ուժը պետք է լիներ Հայաստանի «ազգային մտավորականությունը», ավելի ճիշտ՝ նրա նոմենկլատուրային հատվածը: Սակայն անմիջապես տրված ջախջախիչ պատասխանը քիչ հույսեր էր թողնում, որ նոմենկլատուրային մտավորականությունը միայնակ, իր դյուրաբեկ հեղինակությամբ, կարող է քաշել այս լուծը: Այլ բան է, երբ այդ մասին խոսում է հասարակական պատկերացումներում դեռեւս իր շուրջ հյուսած լեգենդով հայտնի, «հակակոմունիստի», «հույժ

ազգայինի» եւ «անկախականի» լուսապսակ ունեցող Դաշնակցությունը, եւ այդ «պանթուրքիզմի» վտանգը ներկայացնում է ոչ թե որպես մերկ փաստարկ, այլ իր գաղափարախոսության եւ ծրագրերի համատեքստում՝ շաղկապած այնպիսի ժողովրդահաճ խնդիրների հետ, ինչպես Ցեղասպանության ճանաչումը, հողային պահանջատիրությունը եւ այլն:

Հիշենք, որ մայիսի առաջին շաբաթից հետո սկսվել էին մի շարք գործընթացներ, որոնց ներքին կապը միմյանց հետ հազիվ թե կասկածի ենթակա է: Դրանք ակնհայտ զիջումներ էին նոր թափ հավաքած Շարժմանը, որոնք, սակայն, ամեն կերպ ներկայացվում էին որպես իշխանության ինքնուրույն քայլեր եւ նպատակ ունեին բարձրացնել նրա վարկանիշը: Դրանցից էր Մայիսի 28-ը՝ որպես անկախության օր եւ Եռագույն դրոշը՝ որպես ազգային խորհրդանիշ ընդունելը: Այս խնդիրներն ի սկզբանե ամրագրված էին ՀՀՇ Ծրագրում, նաեւ մայիսյան հանրահավաքներում հնչող հիմնական պահանջներն էին: Դաշնակցությունը նույնպես դա անվերապահորեն վերագրեց ոչ թե Շարժմանը, այլ հանրապետության ղեկավարությանը, եւ գնահատեց որպես Հայաստանում իրականացվող ժողովրդավարական վերափոխումների ապացույց եւ կոմկուսի իշխանության վաստակ[788]:

Մայիսի վերջերից սկսած՝ ՀԿԿ ղեկավար Ս. Հարությունյանը ամբողջ մի տարի դարձավ ՀՅԴ Բյուրոյի օրգան «Դրոշակի» թիվ 1 «ազգային հերոսը»: Նրա հասցեին անցյալ ժամանակով հրապարակավ ասված մի քանի քննադատական խոսքերը վերաբերում էին նախորդ վեց ամիսներին, իսկ Մայիսի 28-ի եւ Եռագույնի ճանաչումից հետո ՀՅԴ մամուլը նրա գործողություններում այլեւս ոչ մի քննադատելի բան չէր տեսնում, ընդհակառակը, ըստ հրապարակումների՝ նա լավագույնս է պատկերացնում եւ ներկայացնում ազգային հարցերը եւ Շարժման խնդիրները եւ, ի տարբերություն Շարժման ղեկավարության՝ ամբողջությամբ «պահանջատիրական դիրքերու» վրա է: Նույն շրջանից սկսած՝ դաշնակցական մամուլը միանգամից հեղեղվում է անկախության հարցի քննարկման վաղաժամ լինելու եւ «պանթուրքիզմի» վտանգի մասին տարաբնույթ հոդվածներով:

Այս ամենի համընկնումը հազիվ թե պատահականության արդյունք կարող էր լինել: Դրան, անշուշտ, նախորդել էին կարեւոր քաղաքական որոշում եւ պայմանավորվածություններ, որոնք եւ, հավանաբար, ձեռք էին բերվել ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների հետ հիշյալ հանդիպումներում: Այս հիմքի վրա միայն հասկանալի եւ բացատրելի են դառնում Դաշնակցության

---

788 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ. 47:*

դիրքորոշումները հաջորդող ամիսներին եւ հետագայում ընդհանրապես: Դատելով նրա կենտրոնական մամուլի հրապարակումներից, այս կուսակցությունը ստանձնել էր երկու խնդիր. առաջին՝ հնարավորինս նպաստել Հայաստանի կոմունիստական իշխանության, մասնավորապես՝ Ս. Հարությունյանի «ազգային իմիջի» ստեղծմանը, երկրորդ՝ պայքարել անկախության ուղեգծի դեմ: Այս խնդրի իրագործման համար նա լայնորեն պետք է քարոզեր, որ բոլոր ծրագրերն ու գործողությունները պետք է հենված լինեն պահանջատիրության գաղափարախոսության վրա: Ղարաբաղի պայքարը պետք է դիտել միայն պահանջատիրության դիրքերից եւ այն տեղադրել «Հայ դատի ամբողջության մեջ, որպես նրա մի մասնիկը»[789]: Հայաստանի «ռազմաաշխարհագրական դիրքը» աննպաստ է, «տնտեսական եւ ռազմական կարելիությունները»՝ սուղ, մինչդեռ՝ «Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող փոփոխությունները կարելիություն են ստեղծում Հայաստանի հզորացման եւ ազգային պահանջատիրության արծարծումին»: Ուստիեւ, մի կողմից՝ անվտանգության, մյուս կողմից՝ Հայ դատի խնդիրների համար «մնում է համախմբվել «Ամբողջական Հայաստան, Ամբողջական Հայությամբ» նպատակի շուրջ՝ միաժամանակ լավագույնս օգտագործելով խորհրդային կարգերի ստեղծած նոր կարելիությունները»[790]: Սա էր անկախության դեմ գաղափարական պայքարի Դաշնակցության բանաձեւը, մեկնակետը: Եւ ըստ այդմ էլ նրանք իրենց զորակցությունը խոստանում էին Հայաստանում գործող այն ուժին, «որ իր ներդրումը կատարեց պահանջատիրական առումով Շարժումին ներքին միասնությունը ամրապնդելու գործին մեջ»: Իսկ այս ուղղությամբ, ըստ նրանց՝ «առաջին քայլը կնետեն Սուրեն Հարությունյանը եւ իր գործընկերները»[791]: Ըստ այդմ էլ՝ Դաշնակցությունն իր «բարձունքից» որոշում էր նաեւ իշխանության եւ Շարժման դերաբաշխումը. պահանջատիրությունը որդեգրած իշխանությունները պետք է հետապնդեն Ղարաբաղի հարցը, իսկ Շարժումը պետք է ստանձնի նրա «կոնակը» լինելու դերը: Ղարաբաղի հարցի լուծումից հետո «Արցախներ նվաճելու ճամփով ի վերջո պիտի հասնի իր հիմնանպատակին՝ Հայ դատի ամբողջական նվաճումին»[792]:

Հայաստանի կոմկուսի ղեկավարի անունը դաշնակցական մամուլում սկսում է հոլովվել եւ փառաբանվել բազմակի ավելի, քան Հայաստանի

[789] *Տե՛ս «Դրոշակ», 30.08.1989:*
[790] *«Դրոշակ», 07.06.1989:*
[791] *«Դրոշակ», 05.07.1989, էջ 3:*
[792] *«Դրոշակ», 30.08.1989:*

պաշտոնական կոմունիստական մամուլում: Պարզվում է՝ Դաշնակցությունը դեռ 1988-ի սեպտեմբերին «գրավ էր դրել» Ս. Հարությունյանի «դրական ղեկավարության վրա»[793]: Այժմ էլ նա «ոչ միայն շրջադարձ կատարեց դեպի 1988-ի իր հանձնառությունները», այլեւ... «պատմական շրջադարձի ուղի բռնեց դեպի ամենայն հայոց կառավարությունը ներկայացնելու... իր մոռցված հանձնառությունը»[794]: Նա «ցուցաբերեց հայ իշխանավորի օրինակելի կեցվածք՝ պետականորեն ընդունելով ազգային արժեքները, արծարծելով հայկական պահանջները: Միանձնյա նրան է վերագրվում «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակման պատիվը[795]: Հայաստանի թիվ 1 կոմունիստը «խիզախ ելույթ» ունեցավ ԽՄԿԿ ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումում, իսկ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում «տվավ ապացույցը Արցախյան պահանջատիրության հառաջապահ դիրքերուն վրա կանգնելու իր վճռականության»[796]: Նա ապրիլի 24-ի նախօրյակին «գզրոցներեն դուրս բերավ 1988-ի նոյեմբերին Գերագույն Խորհրդի որոշումը ապրիլի 24-ը պետական տոն հռչակելու մասին»[797]: Եւ ընդհանրապես՝ «Հայաստանի պետական-կուսակցական ղեկավարությունն իր ներկայացուցիչ Սուրեն Հարությունյանով Հայոց պատմության բաց էջերը լեցնելու եւ հայ ժողովրդին իր ազգային հիշողությունը վերադարձնելու հրավեր եւ պահանջ կուղղե»[798]: Այս ամենով Ս. Հարությունյանը «փաստորեն պատմական ամբողջ դարաշրջան մը կապեց իր անունին»[799]: Նման պատվի, մեծարանքի ու ներբողումի դաշնակցական կենտրոնական մամուլում, թերեւս, երբեւէ չէր արժանացել անգամ ՀՅԴ կուսակցության որեւէ հիմնադիր ու նշանավոր գործիչ:

Բայց ավելին. ՀՅԴ-ն, հակառակ Հայաստանի ավելի քան երեք միլիոն ականատեսների ու Շարժման մասնակիցների, հայտարարում է, որ Ղարաբաղյան շարժումն իրականում ղեկավարել է... Սուրեն Հարությունյանը.

[793] *«Դրոշակ», 21.06.1989:*
[794] *Նույնը:*
[795] *«Դրոշակ», 07.06.1989:*
[796] *Տե՛ս «Դրոշակ», 25.10.1989, էջ 20:*
[797] *«Դրոշակ», 21.06.1989: Իսկ թե ո՞վ, ինչո՞ւ ի՞նչ շար ուժեր էին այդ որոշումը (որ կայացվել էր միմիայն ՀՀՇ-ի համառ ջանքերի շնորհիվ, որպես իր ծրագրում արձանագրված խնդիրներից մեկը) ամիսներ շարունակ պահել «գզրոցներում»՝ կարեւոր չէր: Համենայնդեպս՝ նոյեմբերի 22-ին ընդունված բոլոր մյուս որոշումները հրապարակվեցին մամուլում (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26.11.1988)՝ բացի սրանից:*
[798] *«Դրոշակ», 21.06.1989:*
[799] *«Դրոշակ», 21.06.1989:*

«Ղարաբաղ» կոմիտեի հետ երկխոսության դուռը միշտ բաց ձգելու դիրքերեն **Արցախյան շարժումը ղեկավարող Հարությունյան»**[800]:

Բոլորովին այլ էր այս կուսակցության վերաբերմունքը Շարժման ու նրա ղեկավարության նկատմամբ: Դեռ 1989թ. հունիսի սկզբին բյուրոյի պաշտոնաթերթն արդեն իր անհանգստությունն էր հայտնում Շարժման օրակարգի ծավալվելու առիթով. «Շարժումն ընդարձակվելով իր մեջ առավ քաղաքական այլ հարցեր եւս... Շարժումի նպատակն ու ուղղությունը փոփոխության մեջ են: Արցախի գինուն ջուր էր խառնվում»,- ահազանգում էր ՀՅԴ բյուրոյի պաշտոնաթերթը[801] (ջուրն էլ ժողովրդավարական բարեփոխումներն ու անկախության խնդիրն էր): Ապա «Դրոշակը» ընդարձակ անդրադարձավ հունիսի 17-ին տեղի ունեցած ՀՀՇ հիմնադիր ժողովին, նրա կողմից ընդունած «Հռչակագրին», այդ առիթով նաեւ դեռ 1988-ի օգոստոսի 19-ին տարածված ՀՀՇ Ծրագրի նախագծին: Իրեն «Ազգային միասնության» ջատագով համարող կազմակերպությունը անընդունելի համարեց ՀՀՇ «Հռչակագրում» կազմակերպությանն անդամագրվելու՝ համայն հայությանն արված կոչը, վիճարկվեց կազմակերպության անունը: «Համազգային» կոչվելու եւ լինելու համար նրան առաջարկվում է բավարարել առնվազն երեք պայման.

ա) «Արցախյան պահանջատիրությունը» չսահմանափակվի սոսկ Արցախի վերամիացման պայքարի շրջանակներում:

բ) Հաշվի պետք է նստի հայ իրականության մեջ առկա կազմակերպված բոլոր ուժերի հետ, որոնցից Խորհրդային Հայաստանի մեջ կարեւորագույնը կուսակցական պետական մեքենան է, ընդ որում՝ «Ս. Հարությունյանի ղեկավարության քաղաքական շրջադարձը հուսատու է՝ ՀՀՇ-պետություն ներդաշնակ գործունեություն առաջացնելու իմաստով»:

գ) Չնայած ՀՀՇ Ծրագրում Սփյուռքին հատկացված տեղ կա, բայց դա հեռու է բավարար լինելուց: Սփյուռքը պետք է ներկայանա «իբրեւ քաղաքական կազմակերպ հավաքականություն... իբրեւ ճակատագրակցության վրա հիմնված պայքարի գործակցություն»: Մինչդեռ՝ «այս հասկացողությամբ ՀՀՇ պատկերացումը դրական հեռանկարներ չի բանար»: Սփյուռքն իր հերթին այդ դերը կարող է ստանձնել, եթե «առաջնահերթաբար նկատի առնվի հակաթուրք պայքարը իր ուժական, թե խաղաղ արտահայտություններով»:

[800] *«Դրոշակ» 15.03.1989, էջ 2:*

[801] *«Դրոշակ», 07.06.1989: Սա «Ղարաբաղը ծախելու» մեղադրանքի սկիզբն է, որը պետք է շարունակվեր հետագայում ամբողջ տասը տարի՝ նաեւ այն ժամանակ, երբ ազատագրվում էր ոչ միայն Արցախը, այլեւ նրա հարակից շրջանները:*

Այսինքն՝ Դաշնակցությունը սպառնում էր կանխել Սփյուռքի աջակցությունը Ղարաբաղյան շարժմանը, եթե դրան զուգահեռ չդրվի ե՛ւ «ուժական»[802], ե՛ւ խաղաղ մեթոդներով նաեւ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջները հետապնդելու խնդիր: Քննադատության թիրախ է դառնում սեփական ուժերի վրա հենվելու եւ հայության ճակատագիրը հզոր պետություններին չվստահելու՝ ՀՀՇ Ծրագրում արտահայտված դրույթը, ինչը, նրա կարծիքով՝ «փակուղի կմտցնե Արցախյան պահանջատիրության վրա բոլոր հայկական ուժերի համախմբումը»: Հակաթուրք պայքարը եւ պանթուրքիզմի վտանգի չընդունելու հարցերում «Ղարաբաղ» կոմիտեն եւ մասնավորապես Լ. Տեր-Պետրոսյանը խիստ քննադատության են արժանանում: Ապա նաեւ սպառնալիք է հնչում, որ եթե Շարժումը չհրաժարվի իր այդ դիրքորոշումներից, «անտեսվի թուրքական ազդակը», ապա Սփյուռքն ավելին չի կարող անել Ղարաբաղի հարցի համար, քան սովորական զորակցությունը: Եւ վերջապես, «Ղարաբաղ» կոմիտեի այդօրինակ (սեփական ուժերին ապավինելու եւ ուրիշների վրա հույս չդնելու) հայտարարությունները գնահատվում են որպես անհանդուրժողականություն այլ ուժերի (այդ թվում նաեւ կոմունիստների եւ դաշնակցականների) նկատմամբ, որպես «քաղաքական անհեռատեսություն եւ գաղափարական նեղմիտ ուղղադավանություն»: «Դրոշակը» վստահություն է հայտնում, որ այդ ամենի հետեւանքով լայն զանգվածները շուտով կհիասթափվեն ու կհեռանան Շարժումից[803]:

Քիչ անց, արդեն ՀՅԴ բյուրոյի ղեկավար Հ. Մարուխյանը փորձում է ցույց տալ, որ իրենց կանխատեսումներն, իբր, արդարացել են. «Այն իրական ուժը (Շարժումը – Ա.Ս), որը հայրենաբնակ մեր ժողովրդի իրավ մնայուն մեծամասնության վստահության աղբյուրը պիտի նկատվեր, փաստորեն գոյություն չունի»: Պատճառը համարվում է Շարժման ղեկավարության այն վարքագիծը, ըստ որի՝ «Թուրքիայի կողմե բռնագրավված Արեւմտահայաստանի հողերի պահանջը ներկայիս պետք չէ արծարծել»: Դրա հետեւանքով, իբր, ժողովուրդն սկսել է «հուսախաբության նշաններ ցույց տալ, ինչպես նաեւ որոշ ընդունելություն ձեռք բերած շրջանակների նկատմամբ վստահության թե հավատի խախտում դրսեւորել»: Հետաքրքիր է, որ այս եզրակացությունը հաստատելու համար որպես փաստարկ՝ մատնանշում է այդ օրերի հանրահավաքների մասնակիցների թվերը. «10-15 հազարը չէր

[802] *Այս բառի տակ, ինչպես սովորաբար, հասկացվում էին այն ահաբեկչական ակտերը, որ մինչ այդ իրականացվել էին թուրք դիվանագետների նկատմամբ աշխարհի տարբեր երկրներում, թե այլ մի բան, միեւնույն է՝ այն բացարձակ սադրիչ բնույթ ուներ:*

[803] *Տե՛ս «Դրոշակ», 05.07.1989, էջ 6-11:*

անցներ, ամենահաջող պարագային 25-30 հազար կհաշվեր, իսկ վերջինը 60 հազարի շուրջ գնահատվեցավ»[804]: Եթե անգամ համարենք, որ թվերը միտումնավոր նվազեցված չեն, ապա դրանք օգոստոսյան շոգ օրերի համար, կարծես թե, բոլորովին հակառակ եզրակացության հիմք պետք է տային: Այսինքն՝ ՀՅԴ ղեկավարը պարզապես տառապել է ՀՀՇ-ից անպայման հասարակական հուսախաբության նշաններ տեսնելու մտասեռումով: Եւ անհասկանալի էր մնում նաեւ, թե ինչու հիասթափված այս մասսաները չէին անցնում կոմկուսի դրոշի տակ, որի ղեկավարը «հաստատուն կանգնել էր պահանջատիրական դիրքերու վրա»:

ՀՅԴ Բյուրոյի ղեկավարը միայն չէր քննադատում, նա նաեւ խորհուրդ էր տալիս, թե ինչ պետք է անել չսխալվելու համար: Ըստ նրա՝ Շարժումը կարելի կլինի «լավ ձեռքերի մեջ» համարել, եթե «Լեւոն Տեր-Պետրոսյանի նման պատրաստված, շրջահայաց, քաղաքական թափանցող միտք ունեցող եւ պայքարունակ հայորդիներ... գլուխ-գլխի նստեն Սոս Սարգսյանի պես հավասարակշռված, Իգոր Մուրադյանի պես հանձնառու մարդկանց, «Անկախ կազմակերպությունների հայկական խորհրդի» ներկայացուցիչների հետ, մշակեն Հայ Դատի ամբողջական ռազմավարությունը»[805]: Հետաքրքիր է, որ այս մարդիկ քիչ անց բացահայտվեցին որպես Դաշնակցության անդամներ, այդ ժամանակ էլ, հավանաբար, նույն կուսակցության չբացահայտված անդամներ էին: Ինչ վերաբերում է «Անկախ կազմակերպությունների հայկական խորհրդին», ապա վերջինս, ինչպես եւ իր հետագա նմանակները, ստեղծվում էին անհայտ նախաձեռնությամբ, հիմնականում դաշնակցական-պահանջատիրական գաղափարական հիմքի վրա՝ որպես Շարժմանը հակակշիռ: Պատահական չէ, որ դրանց մի մասը հետագայում միացավ եւ ձուլվեց ՀՅԴ-ին: Այսինքն, դրանք էլ, ըստ երեւույթին, միմյանցից անտեղյակ (կամ տեղյակ)՝ ՀՅԴ չբացահայտված դուստր կազմակերպություններ էին կամ դարձան այդպիսին:

Դաշնակցությանն ամենից շատ անհանգստացնում էր անկախական տրամադրությունների տարածումը եւ այդ ուղղությամբ քաղաքական ծրագրերի առարկայացումը: Հանրահավաքում Աշոտ Մանուչարյանի՝ անկախության մասին արած մի կոչն, օրինակ, գնահատվում է որպես «անջատողական ծայրահեղություն»[806]: Իսկ ընդհանրապես՝ ՀՅԴ-ն համոզված էր, որ

[804] *Տե՛ս «Դրոշակ», 30.08.1989:*

[805] *Նույնը:*

[806] *«Դրոշակ», 27.09.89, էջ 4:*

անկախության գաղափարն ի՛ր մենաշնորհն է, եւ ինքը պետք է որոշի դրա պահը, ուստի համարում էր, որ՝ «մարդիկ, որոնք այսօր Հայաստանի անկախության դրոշը կուզեն **յուրացնել** (ընդգծումն իմն է – Ա.Ս) եւ կուզեն այսօր Հայաստանի անկախության պայքարը մղել իբրեւ քաղաքական այսօրվան խնդիր... մարտահրավեր կուղղեն հատկապես Հայ հեղափոխական դաշնակցության...»: Որպես այդպիսին էլ խստորեն զգուշացնում, ավելի ճիշտ՝ սպառնում էր. «Չէ հնչած ժամը Հայաստանի անկախության հռչակումին, եւ բոլոր անոնք, որոնք մերօրյա դոնքիշոտությամբ ատիկա կուզեն իբրեւ սուր ճոճել խորհրդային վարչաձեւի դեմ... ՀՅԴ անոնց ունի մեկ զգուշացում, այն՝ որ **այս ժողովուրդն անտեր չէ**... Հայաստանի անկախության ձգտումը իր հանգրվանները ունի... եւ այդ հանգրվանը խանգարող որեւէ ուժ գոյության իրավունք չունի հայ կյանքին հրապարակին վրա»[807]:

Բնականաբար, Դաշնակցության անվերապահ դրվատանքին էր արժանանում «Հայ մտավորականության համաժողովը». առաջին՝ որովհետեւ այն «Հայաստանի եւ հայ ժողովրդի վերջնական նպատակը հայտարարած է Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծումը», երկրորդ՝ որովհետեւ այս նոր կազմակերպությունը, ի տարբերություն «ծայրահեղության գիրկն ընկած ՀՀՇ-ի», հեռու է «ամեն քայլափոխի ընդդիմության դրոշ պարզելու եւ իշխանությունները ամեն գնով վարկաբեկելու» գործելակերպից, եւ երրորդ՝ քանի որ այն հեռու է նաեւ «անցյալի սխալներուն տակավին տուրք վճարող հայրենի պետական ղեկավարության թեւից»[808]:

Իշխանական քարոզչամեքենան շարունակում էր հավատարիմ մնալ Շարժման դեմ պայքարի իր որդեգրած սկզբունքներին՝ հարմար համարված պահերին վարկաբեկել եւ սպառնալ, այլ իրավիճակներում լռության մատնել Շարժումը, բայց միշտ խուսափել հրապարակային գաղափարական

[807] *«Դրոշակ», 21.06.1989: Իբեն «ժողովրդի տերը» հռչակող Դաշնակցությունը, սակայն, չգիտես ինչու, ո՛չ 1988-ին, ո՛չ 1989-ին, ոչ էլ 1990-ի առաջին կեսում չէր «բացահայտում իր կազմակերպական ներկայությունը» Հայաստանում, գործում էր անլեգալ եւ միայն Ամենքից խորհուրդներ, հորդորներ, կոչեր, զգուշացումներ, սպառնալիքներ էր ուղարկում Հայաստանի բնակչությանը, այն սերնդին, որը բացառիկ արժանապատվությամբ իր ուսերին էր տանում հայոց պատմության ամենապատասխանատու ու, հաստատ, ամենահերոսական դրվագի ծանրությունը:*

[808] *Տե՛ս «Դրոշակ», 13.09.89, էջ 20: Դաշնակցությունը համարում էր, թե Հայաստանի կոմունիստական իշխանությունը թեւերի է բաժանված, եւ Ս. Հարությունյանին համարում էին «առողջ» թեւի ղեկավարը: Իրականում նման ոչ մի բաժանում չկար, դա հորինված էր իշխանությունների սխալներն ու թերացումները Ս. Հարությունյանից հեռացնելու եւ նրան պատասխանատվությունից զերծ պահելու համար:*

բանավեճից, քանզի դրանում միշտ տանուլ էր տալիս: 1989-ի ամռանը եւ աշնան ամիսներին նույնպես մամուլը լուռ է կատարվող իրադարձությունների, հանրահավաքների մասին: Դրան հակառակ՝ ավելի հաճախակի սկսեցին երեւալ նյութեր, որոնցում վկայակոչվում էին Սփյուռքի, մասնավորապես Դաշնակցության տեսակետները եւ գնահատականները: Դրանք կամ ՀՀԾ-ի դեմ էին, կամ իշխանությունների օգտին: ՀՅԴ «Հորիզոն» պաշտոնաթերթի աշխատակցի հետ ընդարձակ հարցազրույցով ընթերցողին հայտնվում էր՝ «Դաշնակցությունը ամբողջովին կողմ է Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող փոփոխություններուն», դրանց շնորհիվ հայրենիքը կհզորանա, իսկ «հայրենի իշխանությունները առավել չափով մասնակից կդառնան Հայ դատի հետապնդման աշխատանքներուն»: Ապա հավաստիացնում է, որ Սփյուռքը, եւ հատկապես Դաշնակցությունը, շատ բարձր է գնահատել ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի զեկույցը սեպտեմբերյան (1988թ.) պլենումում, շատ կարեւոր է համարում նրա առաջ քաշած «ազատ տնտեսական գոտու» գաղափարը եւ այլն[809]:

«Ազգային» մտավորականները հեռուստատեսությամբ ու մամուլով փոխանցում էին ՀՅԴ ղեկավարների խոսքը այնպիսի խնդիրների շուրջ, ինչպես անկախության հարցը. «Դաշնակցությունը իր ղեկավար Հրայր Մարուխյանի բերանով հայտարարում է, որ այս պահին առանց նման դաշինքի (նկատի ունի ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնվելու – Ա.Ս.) Հայաստանը չի կարող ապրել»: Ընդ որում՝ Մարուխյանի ելույթը ձայնագրվել, բերվել եւ եթեր էր տրվել հեռուստատեսությամբ. «Այս ելույթը առաջին անգամ մեզանում հնչեց վերջերս... Սիլվա Կապուտիկյանը իր մի հեռուստաելույթի ժամանակ հնարավորություն տվեց ունկնդրելու դրա մի հատվածը»[810]:

Իրենց հերթին՝ խորհրդային պաշտոնյաներն էին գովազդում սփյուռքահայ կուսակցություններին: Ըստ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Կարլեն Դալլաքյանի՝ «Սփյուռքահայ կուսակցություններն իրենց դրսեւորեցին լավագույնս՝ միավորելով իրենց գործողությունները Հայաստանի անցյալ տարվա քաղաքական ամբողջ կացությանը ճիշտ արձագանքելով: Ես միանգամայն համամիտ եմ այն դիմումին, որ արեցին Սփյուռքի երեք ազգային կուսակցությունները: Նրանք միանգամայն ճիշտ գնահատելով հայ ժողովրդի պահանջատիրությունը, խստիվ դատապարտում էին անջատողական կարգախոսները, ճշտորեն

[809] *«Խորհրդային Հայաստան», 05.09.1989:*
[810] *«Խորհրդային Հայաստան», 06.09.1989:*

տեսնելով, թե ամեն մի հայ մարդ, որ նման քայլի առջեւ է կանգնում, եթե քարտեզին աչք գցի... »[811]:

Եւ այնուամենայնիվ, Շարժման նոր վերելքի պայմաններում ՀՅԴ-ն եւս խնդիր ուներ ինչպես իր շարքերին, այնպես էլ սփյուռքահայ զանգվածներին ներկայացնել, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցում ինքն ինչ-որ գործ է անում, ու ժամանակ առ ժամանակ այդպիսի «գործի» պատրանք ստեղծելու հրապարակային միջոցառումներ էր ձեռնարկում: Չի բացառվում, որ այդ միջոցառումները երբեմն նաեւ Դաշնակցության այս կամ այն կառույցի ինքնուրույն նախաձեռնություններն էին՝ ի հեճուկս կուսակցության բյուրոյի որդեգրած ուղեգծի: Այսպես՝ 1989թ. հուլիսի 4-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահ Գորբաչովի՝ Ֆրանսիա կատարելիք այցի առիթով տեղի դաշնակցական կառույցը ստեղծել էր «Հուլիսի 4-ի» ժամանակավոր մի կոմիտե եւ ծրագրել այդ առիթով ինչ-ինչ միջոցառումներ[812]: Մասնավորապես՝ նախատեսվում էր վարձակալել ֆրանսիական հայտնի թերթերից մեկի մի էջ եւ նյութեր հրապարակել ԼՂԻՄ-ի մասին՝ այն ՀԽՍՀ-ին միացնելու պահանջով, նույն խնդրին վերաբերող հատուկ մի թերթ հրապարակել այդ օրերին 25000 տպաքանակով, համապատասխան նյութեր ընտրել եւ ուղարկել զանազան այլ թերթեր եւ հեռուստաընկերություններ: Նախատեսվում էր նաեւ Փարիզում ԽՍՀՄ դեսպանության առջեւ լուռ հանրահավաք կազմակերպել՝ «Ղարաբաղը պատկանում է Հայաստանին» պաստառներով[813]: Հունաստանում ՀՅԴ հովանավորության տակ գտնվող «Հայկական ազգային կոմիտեի» նախաձեռնությամբ սեպտեմբերի 25-ին ցույց կազմակերպվեց ՄԱԿ-ի ներկայացուցչության շենքի մոտ «Ղարաբաղը հայկական է», «Ո՛չ նոր ցեղասպանությանը» կարգախոսներով եւ այլն[814]: Իրականում սրանք միայն ցուցադրական միջոցառումներ էին, իսկ Լեռնային Ղարաբաղի խնդրի համար նա պայքարում էր այնքանով եւ այնպես, որքանով այդ պայքարի առաջամարտիկ ու հիմնական դերակատար էր համարում Հայաստանի կոմկուսին ու նրա ղեկավար Ս. Հարությունյանին:

Ինչ վերաբերում է ՀՅԴ պաշտոնական դիրքորոշմանը խորհրդային իշխանությունների նկատմամբ, ապա նա շարունակում էր հավատարիմ մնալ ի սկզբանե իր ղեկավարների կողմից խոստացված եւ 1988-ի օգոստոսին 24-րդ համագումարի կողմից հաստատված սկզբունքին, այն է՝ կուսակցական

[811] *«Խորհրդային Հայաստան», 28.10.1989:*
[812] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.38:*
[813] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.40:*
[814] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.52:*

մամուլում լայնորեն լուսաբանել Խորհրդային Միությունում «Վերակառուցման» դրական արդյունքները՝ իրենց իրավունք վերապահելով քննադատել խորհրդային կառավարության այն որոշումները, «որոնք կհակասեն հայ ժողովրդի ազգային շահերին»[815]: Սակայն այդպիսի քննադատության հիմք Դաշնակցությունն առայժմ չէր տեսնում:

Այսպիսով, անկախության ուղեգիծը որդեգրած Շարժման դեմ պայքարը գաղափարական հարթության վրա հանգում էր հետեւյալին.

ա) Ցույց տալ, որ ԽՍՀՄ կազմում մնալը Հայաստանի համար այլընտրանք չունի, եւ անկախությունը դեմ է մեր ազգային շահերին ու վտանգավոր.

բ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտարկել ոչ թե որպես ինքնորոշման իրավունքի ժողովրդավարական խնդիր, այլ՝ հողային-պահանջատիրություն, «Հայ դատի» մաս:

Կազմակերպական հարթության վրա հիմնական խնդիրներն էին.

ա) Ամեն կերպ սատարել հանրապետության իշխանությանը՝ բարձրացնելու իր վարկանիշը:

բ) Կազմակերպական զանազան միջոցառումներով պառակտել կամ վարկաբեկել Շարժումը, փոքրացնել նրա սոցիալական բազան:

Հայոց համազգային շարժման եւ անկախության նրա ուղեգծի դեմ գաղափարական ու կազմակերպական պայքարում «Հայ դատը» դարձավ հիմնական պլատֆորմը, կոմունիստական իշխանության համար՝ վերջին փրկօղակը, նոմենկլատուրային մտավորականությունը եւ ափյուռքահայ կուսակցությունները՝ նրա հիմնական դաշնակիցները:

ը) Այլընտրանքային հանրահավաքներ եւ ուղղություններ

Կոմիտեի վերադարձից հետո ակտիվացան եղած մի քանի մանր կազմակերպությունները, եւ մեծ թափով ստեղծվեցին նորերը: Սրանք նույնպես հանրահավաքներ էին հրավիրում եւ, որպես կանոն, նախ իրենց հայտարարում էին ՀՀՇ-ի մաս, ապա, հանդես գալով «ավելի արմատական» կարգախոսներով, փորձ էին անում հասարակական ճանաչում ստանալ, ապա՝ «քննադատել» ՀՀՇ-ին:

Հետադարձ հայացքով նրանց քայլերն ու կարգախոսներն ավելի շուտ մանկական խաղեր են հիշեցնում: Այսպես՝ մայիսի 28-ին ԱԻՄ-ի ղեկավար

[815] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.24, թ.47:*

Մովսես Գեորգիսյանը առաջարկում էր հանրահավաքի անունից դիմում հղել ՄԱԿ՝ 1920թ. տապալված անկախ Հայաստանի կառավարության վերականգնման խնդրով, իսկ որպես առաջին քայլ՝ Պ. Հայրիկյանին ճանաչել որպես ապագա հանրապետության նախագահ՝ նրան տալով «բոլոր լիազորությունները»[816]: Իսկ երկու ամիս անց (հավանաբար՝ ՄԱԿ-ից պատասխան չստանալուց հետո) նա արդեն Պ. Հայրիկյանին «Անկախ Հայաստանի վարչապետ» էր հռչակում ԱԻՄ-ի անունից եւ առաջարկում էր նրան դիմել, որպեսզի նշանակի իր կառավարության անդամներին: Ավելին՝ հանրահավաքի մասնակիցներին կոչ էր անում 2-ական լուսանկար բերել «Անկախ Հայաստանի անձնագիր ստանալու համար»[817]:

Եթե ԱԻՄ-ը արդեն հռչակում էր Հայաստանի անկախությունը, վարչապետ նշանակում, կառավարություն կազմում եւ անկախ Հայաստանի անձնագրեր բաժանում, բնականաբար՝ պետք է առաջանար նաեւ այդ «անկախ պետության» բանակ ունենալու հարցը: Այդ գործն էլ իր վրա վերցրեց, այսպես կոչված, «Հայոց ազգային բանակ» (ՀԱԲ) անունով մի կազմակերպություն, որն իր գոյության մասին հայտարարեց օգոստոսի 4-ին՝ որպես «Շահումյանի (Ղարաբաղի-Ա.Ս) անկախ հայության» գլխավորող կառույց, իսկ «ծրագիրը» հրապարակեց օգոստոսի 8-ի հանրահավաքում: Սա իր նպատակն էր հայտարարում հռչակել Հայաստանի անկախությունը, հայտարարում էր, որ կենթարկվի միայն անկախ Հայաստանի պառլամենտին: ՀԱԲ-ն իր բոլոր անդամներին համարում էր անկախ Հայաստանի զինվորներ, կոչ էր անում զինվորագրվել 18-50 տարեկան բոլոր տղամարդկանց, պատրաստվում էր զորակոչիկների հաշվառում եւ ցուցակագրում անցկացնել հիմնարկներում ու ձեռնարկություններում եւ այլն[818]: Ընդ որում՝ իր կողմից հրավիրված հենց առաջին հանրահավաքում ՀԱԲ-ը նախ հայտարարեց, որ իրեն համարում է ՀՀՇ-ի անդամ մի կազմակերպություն[819] (այդպես էին սկսում բոլորը), քննադատության ենթարկեց երկրի ղեկավարությանը, մտավորականության մեծ մասին, որոնք չեն ուզում մտնել ՀՀՇ-ի մեջ եւ

[816] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.70:*

[817] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.99-101:*

[818] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, ց.39ա, թ.99-101:*

[819] *Չի բացառվում, որ դա հանձնարարություն էր, եւ, որ ՀԱԲ-ը մտահղացվել եւ ստեղծվել էր առաջին հերթին նպատակ ունենալով հարմար պահին ՀՀՇ-ին անօրինական զինված կազմավորումներ ունենալու մեջ մեղադրելու համար: Դա հնարավոր չեղավ, քանի որ ՀՀՇ-ն շատ արագ սահմանազատվեց նրանից, ինչից հետո ՀԱԲ-ի համար այլ գործառույթ մշակվեց:*

այլն: Ջինակոչիկներին կոչ արվեց խուսափել ԽՍՀՄ բանակում ծառայելուց եւ մտնել ՀԱԲ, սպառնաց շրջափակել Նախիջեւանը, բանակ դնել Թուրքիայի սահմանի վրա, «ջարդել թուրքական մռութը» եւ այլն[820]:

Որքան էլ այս ամենը կարող է հետին թվով զավեշտական թվալ եւ, իրոք, մանկական խաղ հիշեցնել, այդ օրերին հասարակության եւ հանրահավաքների մասնակիցների ինչ-որ մի շերտի համար դժվար էր ընկալել զավեշտը, մանավանդ, որ այսօրինակ կազմակերպությունները նախապես իրենց ՀՀՇ-ի մաս էին հայտարարում: Ըստ էության՝ այս ամենով իշխանություններին տրվում էին շատ հարմար առիթներ, իրավական հիմքեր՝ ինչպես Շարժման վրա գաղափարական գրոհների, այնպես էլ ուժային ճնշումներ գործադրելու համար: Ուստի ՀՀՇ-ն ստիպված էր հրապարակավ սահմանազատվել նրանցից. մասնավորապես՝ օգոստոսի 15-ին եւ 20-ին Թատերական հրապարակում հրավիրված հանրահավաքներում Համբարձում Գալստյանի, Սամվել Գեւորգյանի, Ալբերտ Բաղդասարյանի, Աշոտ Մանուչարյանի, Վանո Սիրադեղյանի ելույթներում մանրամասն ներկայացվեց նրանց կարգախոսների քաղաքական մանկամտությունն ու վտանգավորությունը[821]: Դրանից հետո նրանց հրավիրած հանրահավաքների մասնակիցների թիվը կտրուկ նվազեց՝ հասնելով մեկ-երկու հարյուրի:

Համակարգվո՞ւմ էր արդյոք որեւէ մեկի կողմից այսօրինակ կազմակերպությունների գործունեությունը, թե՞ իրոք բխում էր դրանց նախաձեռնողների պատկերացումներից, մակարդակից, այդ ամիսների համար դժվար էր ասել[822]: Սակայն նրանց հետագա գործունեությունը հստակ ցույց է տալիս, որ նպատակը Շարժմանն այլընտրանք դառնալն էր, խոչընդոտելը, ընդ որում՝ շարունակելով հասարակությանը ներկայանալ որպես ՀՀՇ-ին չհակադրվող, բայց նրանից «մի քայլ առաջ»[823] խնդիրներ առաջադրող եւ հետապնդող ուժ:

---

820 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.96-98:*

821 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.102-104, 107:*

822 *Հիշենք, որ ըստ ՊԱԿ-ի գեներալ Կալուգինի՝ ՊԱԿ-ը «ստեղծում էր նույն գործով զբաղվող այլ կազմակերպություններ՝ շարժումները պառակտելու եւ ներսից քայքայելու համար»:*

823 *Այս «մի քայլ առաջ» լինելու հանգամանքը հետագայում ՀՀՇ-ի դեմ իր ընդդիմադիր գործունեության ընթացքում միշտ կրկնում էր Պարույր Հայրիկյանը: Նա ամենայն լրջությամբ համարում էր, որ ԱԻՄ-ը, կամ անձամբ ինքն է անկախության, բանակ ստեղծելու, Սահմանադրություն ունենալու գաղափարների հեղինակը, ինչն իրենից «գողացավ» եւ իրականացրեց ՀՀՇ-ն՝ ոտնահարելով իր հեղինակային իրավունքները...*

Չկարողանալով Շարժման մաս կազմելով փոխել պայքարի կարգախոսներն ու ուղղությունը, այս կազմակերպությունները սեպտեմբերի 9-ին հայտարարեցին, որ 14 կազմակերպություններ հիմնում են նոր մի բան՝ «Նախախորհրդարան»[824] անունով մի կառույց, որի մեջ «պետք է» համախմբվեն բոլոր կազմակերպությունները ու ստեղծեն «ազգի կողմից ընտրված այլընտրանքային անկախ կառավարություն»: Քայլի նպատակը պարզ էր. համոզված լինելով, որ ՀՀՇ-ն չի մասնակցի այսօրինակ մի ձեռնարկումի, նրան քննադատել որպես «իրական հայրենասերների» (իրենց) եւ իշխանությունների միջեւ «միջին դիրք» գրավողի[825]:

Շարժման դեմ պայքարելու մի այլ մեթոդ էր զանազան հերյուրանքների ու կեղծ տեղեկատվության տարածումը[826], սադրանքներ հրահրելը: Այսպես, հուլիսի 12-ին մոտ հարյուր մարդ, Ղարաբաղում իրավիճակի սրված լինելու մասին ստացված լուրերը քննարկելուց հետո, դիմում են «Ղարաբաղ» կոմիտեին (այդ ամիսներին այն տեղավորված էր Աբովյանի անվան դպրոցում)՝ պահանջելով իրենց ուղարկել Ստեփանակերտի օդանավակայանը պաշտպանելու: Նրանք համոզված էին, որ իրենց զենք կբաժանեն: Լուրեր էին տարածվել այն մասին, իբր «Ղարաբաղ» կոմիտեն իտալական ավտոմատ զենքեր է ստացել, բայց չի բաժանում ժողովրդին: Դժվարությամբ համոզելով, որ այդ ամենը նախապատրաստված սադրանք է, Կոմիտեի անդամ Բաբկեն Արարքցյանին հաջողվում է ցրել նրանց[827]:

Արդեն 1988-ի աշնանը Շարժման դեմ արձանագրված չորս ճակատներին (Կենտրոն, հայաստանյան կոմունիստական իշխանություն, նոմենկլատուրային մտավորականություն եւ սփյուռքյան կուսակցություններ), ավելացավ հինգերորդը՝ ի դեմս 1989թ. ամռանից բազմացող այլազան կազմակերպությունների պարբերաբար տեղի ունեցող «համախմբումների»:

---

824 *Այս բառն արդեն հուշում է, որ նախաձեռնությունը հղացվել էր դաշնակցական խոհանոցում, գզրոցներից հանվել ու շրջանառության մեջ էր դրվել ռուսական էսեռների «պրեդպառլամենտ»–«նախախորհրդարանը»: 19-րդ դարում ստեղծված հայ հեղափոխական կուսակցությունները պատճենում էին ռուսական հեղափոխականների ոչ միայն անունները (այդպես է առաջացել «Հայ հեղափոխական դաշնակցությունը»՝ «Սոյուզ ռուսկիխ ռեւոլյուցիոներով»-ից, «Հնչակը»՝ Գերցենի «Կոլոկոլ»-ից, «Դրոշակը»՝ «Զնամյա»-ից), այլեւ գործելակերպը:*

825 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.126-130:*

826 *Հիշենք, որ (ըստ նույն Կալուգինի) ՊԱԿ-ը «ունեցել է հատուկ ստորաբաժանում, որը զբաղվել է ապատեղեկատվության հորինմամբ եւ տարածմամբ...»:*

827 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.84-88:*

3. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1989-Ի ԱՇՆԱՆԸ, ՇԱՐԺՄԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

ա) Շարժման գործունեության ձեւերը եւ հիմնական ոլորտները

Ժողովրդական զանգվածների հետ աշխատելու հիմնական ձեւը Շարժման ղեկավարության համար շարունակում էին մնալ պարբերաբար հրավիրվող հանրահավաքները: Դրանք ոչ միայն կատարվող անցուդարձի մասին տեղեկատվություն ստանալու միջոց էին, այլ նաեւ յուրատեսակ քաղաքական դպրոց: Հանրահավաքներում հավաստի տեղեկատվություն էր տրվում, որի մեծ մասը մամուլում չէր հրապարակվում: «Ղարաբաղ» կոմիտեի անդամների եւ Շարժման մյուս ղեկավարների կողմից դեպքերի եւ իրադարձությունների մեկնաբանությունները եւ գնահատականները համոզիչ էին: Շարժումը 1988-89թթ. չունեցավ իր թերթը: Այդ մասին արված դիմումները իշխանության կողմից մերժվեցին[828]: Մամուլը փակ էր Շարժման համար: Սակայն պարբերական հանրահավաքների տեղեկատվությունը ամենօրյա կենդանի կապի շնորհիվ արագորեն տարածվում էր հանրապետությունով մեկ: Այս առիթով իշխանական մամուլը զարմացած արձանագրում է. «Չնայած հանրահավաքների ու երթերի լայն աշխարհագրությանը, Երեւանում առաջ քաշած կարգախոսներն ու պահանջները տառացիորեն հաջորդ օրը հնչում էին հանրապետության մյուս քաղաքներում ու շրջաններում»[829]: Պատճենահանման պարզունակ տեխնիկայով, հաճախ ձեռքով

---

828 *Ի տարբերություն, օրինակ, Մերձբալթյան հանրապետությունների, որոնց ժողովրդավարական շարժումներին այդ հնարավորությունը տեղի իշխանությունները տվեցին անմիջապես: Էստոնիայի ժող. ճակատն, օրինակ, իր հիմնադրումից անմիջապես հետո՝ հունիսի 17-ին, հրապարակեց իր թերթի 1-ին համարը "Вестник Народного фронта":*

829 *«Коммунист», 11.01.1989.*

կամ գրամեքենայով բազմացվում եւ պարբերաբար տարածվում էին «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի» տեղեկատվական, վերլուծական եւ քարոզչական բնույթի թռուցիկները եւ այլ նյութեր, որոնք հաջողությամբ մրցում էին բազմատիրաժ պաշտոնական լրատվամիջոցների հետ: 1988-ի աշնանը ՀՀՇ-ի անունից հրապարակվեցին մի քանի ռուսերեն գրքույկներ, որոնցից մեկը վերաբերում էր Մասիս ավանում զանգվածային թունավորումներին, մյուսը՝ «Ջվարթնոց» օդանավակայանում հուլիսի 4-5-ին տեղի ունեցած իրադարձություններին, իսկ երրորդն ամփոփում էր անցած ամիսներին Շարժման կարեւոր փաստաթղթերը: Ռուսերենով հրապարակվող նյութերը նախատեսված էին հիմնականում հանրապետությունից դուրս տարածելու համար: Մեքենագրման եղանակով պատրաստվում, բազմացվում ու տարածվում էին «Ղարաբաղ» կոմիտեի «Տեղեկատվական թերթիկը» (խմբագրում էին Սամվել Գեւորգյանը եւ Երջանիկ Աբգարյանը), 1988-ի սեպտեմբերից «Լրատու» մեկամսյա պարբերականը (պատրաստում էր կոմիտեի լրատվական բաժինը), 1989-ի գարնանը կոմիտեի փոխարինող կազմի ջանքերով նույն կերպ պատրաստվեց «ՀՀՇ-ի խոսնակ» անունով թերթի մի քանի համար (պատրաստում էին Երջանիկ Աբգարյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Դավիթ Շահնազարյանը), օգոստոսից՝ հայերեն եւ ռուսերեն լեզուներով «Լրատվական թերթիկը» (խմբագրում էր Երջանիկ Աբգարյանը), ՀՀՇ-ի սկզբնական կազմակերպությունների «Ազդակ» թերթը (պատրաստում էին Վիկտոր Այվազյանը եւ Աշոտ Դաբաղյանը): ՀՀՇ-ի մեջ մտնող «Մաշտոց» կազմակերպությունը հրապարակում էր նույնանուն բրոշյուրը, պետական համալսարանի ՀՀՇ կազմակերպությունը՝ իր «Տեղեկատվական թերթիկը» եւ այլն:

Հասարակական կարծիք ստեղծելու եւ դրա վրա ազդելու արդյունավետությամբ հանրահավաքները եւ Կոմիտեի՝ ըստ անհրաժեշտության տարածվող թռուցիկներն ու գրավոր այլ նյութերը մի քանի անգամ գերազանցում էին իշխանության բոլոր կառույցներում առկա գաղափարախոսական բաժինների, մեծ տպաքանակով հրատարակվող թերթերի, զանգվածային լրատվության (իրականում՝ քարոզչության) մյուս միջոցների աշխատանքը՝ միասին վերցրած: Վերջիններս այդպես էլ չկարողացան հարմարվել նոր պայմաններին ու պահանջներին, իսկ հին, բոլորին քաջ ծանոթ եղանակներով ու կաղապարներով աշխատանքը միայն հակառակ ազդեցություն էր թողնում:

Այս ամենը հնարավոր էր դառնում հզոր մի մեխանիզմի շնորհիվ, որ գործում էր Շարժման ղեկավար մարմնի եւ ժողովրդական զանգվածի միջեւ: Դա 1988-ի առաջին ամիսներին ձեւավորված «Ղարաբաղ» ենթա-

կոմիտեների հիմքի վրա ընդարձակված՝ Հայոց համազգային շարժման տեղական կազմակերպությունների լայն ցանցն էր: Կային ՀՀՇ տարածքային կառույցներ՝ հանրապետության բոլոր վարչական շրջաններում: Կային սկզբնական կազմակերպություններ՝ գործնականում հանրապետության բոլոր բնակավայրերում: Տարածքային կառույցները շրջաններում կարողանում էին հասնել նույնպիսի երկիշխանական վիճակի, ինչպես «Ղարաբաղ» կոմիտեն՝ կենտրոնում: ՀՀՇ կազմակերպություններ կային հիմնարկ-ձեռնարկությունների մեծագույն մասում, որոնք երբեմն իրենց մեծությամբ հավասար էին շրջանային կառույցներին, բարձր հեղինակություն ունեին աշխատողների, եւ լուրջ ազդեցություն՝ ձեռնարկության ղեկավարման հարցերում: Ամբողջ հանրապետությունն ընդգրկող, ըստ էության, ինքնաբուխ ձեւավորված այս մեխանիզմի շնորհիվ է, որ Կոմիտեի՝ մի քանի օրինակով տրվող թռուցիկները եւ այլ նյութերը մեկ օրում կարող էր դառնալ հարյուր հազար՝ ծածկելով հանրապետության ողջ տարածքը: Այս մեխանիզմի միջոցով է, որ, եթե դա անհրաժեշտ էր, մեկ-երկու ժամում հնարավոր էր 10-20 հազարանոց, եւ մեկ օրում՝ մինչեւ հարյուր հազարանոց հանրահավաք հրավիրել:

Շարժումը շարունակում էր առաջնորդվել ի սկզբանե իր որդեգրած գործելակերպով. հանրահավաքները, առաջին հերթին, ճնշամիջոցներ էին՝ իշխանության պաշտոնական, սահմանադրական մարմինները (խորհուրդներն) աշխատեցնելու միջոցով հասնելու անհրաժեշտ որոշումների ընդունմանը: Այդ ճնշման շնորհիվ հրավիրվեցին ՀԽՍՀ ԳԽ-ի տասներորդ արտահերթ նստաշրջանի բոլոր նիստերը, որոնք ընդունեցին կարեւոր որոշումներ:

Լեռնային Ղարաբաղի հետ միասին արդեն շրջափակման էր ենթարկվել նաեւ Հայաստանը: Ձեռնարկված քայլերը, ինչպես, օրինակ, երկու հանրապետությունների կուսակցական բյուրոների անդամների հանդիպման կազմակերպումը Մոսկվայում եւ այլն, որեւէ արդյունքի չհանգեցրին: Շարժումը պահանջում էր Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրել, քննարկել առաջացած հրատապ հարցերը եւ ընդունել համապատասխան որոշումներ: Իշխանությունների դիմադրությունը ստիպում էր դիմել ավելի ազդու միջոցների: Այդպիսին էր սեպտեմբերի 11-ին հրավիրված հանրահավաքը: Այստեղ հրապարակվեց «Ղարաբաղ» կոմիտեի հայտարարությունը, որը եւ ընդունվեց բոլոր մասնակիցների կողմից: Դրանում դրված՝ հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության եւ կառավարության հրաժարականների պահանջը ստիպեց, որպեսզի հենց նույն օրը նշանակվի արտահերթ նստաշրջան, եւ դրանում, որպես օրակարգային հարցեր՝ ընդգրկվեն հայտարարության մեջ առաջ քաշված պահանջները:

Անաչառ ու սուր քննադատությունը ստիպում էր նաեւ գործադիր իշխանությանը որոշակի աշխատանքներ կատարել, սակայն դա ավելի քան անբավարար էր: Ուստիեւ՝ Շարժումը ստեղծել էր նաեւ իր զուգահեռ կառույցները, որոնք իրենք էին զբաղվում նույն բնագավառներով՝ կատարելով գործադիր իշխանության գործառույթներ: Ուղղաթիռային կապ էր հաստատվել Կամո, Հադրութ, Գետաշեն, Մարտակերտ, Շահումյան երթուղիներով: Անհրաժեշտ օգնությունն ուղարկվում էր հիմնականում Խաչիկ Ստամբոլցյանի ղեկավարած «Գթություն» բարեգործական ընկերության միջոցներով: Շարժման «Ազգային կառույցը» զբաղվում էր աղետի գոտու շինարարության հարցերով (ղեկավարում էր Ազատ Մարտիրոսյանը), առանձին կառույցներ զբաղվում էին փախստականների (Շահեն Պետրոսյան, Գագիկ Ներսիսյան), խորհրդային բանակից հարկադրաբար հեռացած զինվորների եւ զինակոչիկների (Երջանիկ Աբգարյան) հարցերով, սահմանամերձ շրջանների պաշտպանության հարցերը համակարգում էր Վազգեն Սարգսյանը, ՀՀՇ-ի մեջ մտած «Մաշտոց» կազմակերպությունը զբաղվում էր լեզվի, կրթության հարցերով եւ այլն: «Սահմանադրական խմբերը» զբաղվում էին պատգամավորների հետ աշխատանքով, պատգամավորների հետկանչի եւ ընտրությունների հետ կապված հարցերով եւ այլն: ՀՀՇ-ի կառույցում գործում էին նաեւ իրավաբանական բաժինը՝ Հայկ Մարգարյանի եւ Մարդու իրավունքների բաժինը՝ Աղասի Արշակյանի ղեկավարությամբ, որոնք անվճար խորհրդատվություն էր մատուցում քաղաքացիներին՝ շատ դեպքերում կարողանալով վերականգնել նրանց իրավունքները: Դեռ 1988թ. ամռանից գործում էր «Գենոցիդ» հանցանքի դեմ պայքարող՝ պատերազմի եւ աշխատանքի վետերանների նախաձեռնող խումբը»՝ Սամվել Պողոսյանի գլխավորությամբ: Պաշտոնեության շրջանում զգաստություն էին առաջացնում բյուրոկրատիզմի, կաշառակերության, չարաշահումների դեմ հնչող սուր ելույթները: Բոլոր դեպքերում՝ աննախանձելի էր այն պաշտոնյաների վիճակը, որոնց ոչ օրինական գործողությունները կամ վարքագիծը հիշատակվում էին հանրահավաքներում:

բ) Ճնշումների նոր ալիքը Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանային գոտում

Զբավարարվելով հուլիսի 21-ից սկսված՝ Լեռնային Ղարաբաղից բացի նաեւ Հայաստանի շրջափակմամբ, Հայաստանում եւ Ղարաբաղում Շարժման ակտիվացման հետ մեկտեղ, Ադրբեջանը նույնպես հակաքայլերի

էր դիմում՝ իր հերթին ավելացնելով ճնշումը ինչպես Ղարաբաղի եւ Հայաստանի, այնպես էլ Կենտրոնի վրա: Մարզում եւ նրա շրջակայքում ապրող ադրբեջանական բնակչությունն ավելի ագրեսիվ դարձավ հատկապես Ադրբեջանի մտավորականության օգոստոսյան համաժողովից եւ նրա սադրիչ հայտարարությունից հետո: Օգոստոսի կեսից ակտիվացան նաեւ Ժողովրդական ճակատի հանրահավաքները: Սեպտեմբերի սկզբներին նրանք պահանջում էին իրենց իշխանություններից արտահերթ նստաշրջանի հրավիրում եւ հանրապետության սուվերենության մասին հռչակագրի ընդունում: «Տեղի տալով» այդ ճնշումներին՝ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը սեպտեմբերի 15-ին ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեի լուծարման, հանրապետության սահմանները միայն հանրաքվեի միջոցով փոփոխելու մասին որոշումներ[830], իսկ սեպտեմբերի 23-ին՝ Ադրբեջանի սուվերենության մասին օրենք եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի լուծարման մասին հրամանագիր [831]: Այս ամենը նաեւ յուրատեսակ նախապատրաստություններ էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանին, որտեղ նախատեսվում էր քննարկել նաեւ Ղարաբաղի հարցը:

Լեռնային Ղարաբաղի հայությանը հատկապես անհանգստացնում էին ադրբեջանական բնակավայրերում իրականացվող ապօրինի շինարարությունները, բնակչության էթնիկական կազմի հարաբերակցությունը փոխելու նպատակով այլ տեղերից ադրբեջանցիների եւ մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումները մարզում: Իրավիճակի սրումն ավելի հաճախադեպ էր դարձնում զանազան ընդհարումները: Միայն օգոստոսի վերջին երկու շաբաթում Լեռնային Ղարաբաղի ՆԳ վարչության տեղեկագրում արձանագրվել էին էթնիկական հողի վրա կատարված մեկուկես տասնյակից ավելի դեպքեր՝ մեքենաների քարկոծումներ, տների հրկիզումներ, անասնագողություն, ծեծկռտուք, հրազենի օգտագործմամբ ահաբեկումներ: Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկու եւ հատուկ շրջանի պարետ Վ. Սաֆոնովի՝ բնակչությանն ուղղված դիմումները մնում էին անարդյունք[832]: Ընդ որում՝ այս երկու մարմիններն էլ չէին կարողանում կամ չէին ցանկանում կատարել իրենց պարտականությունները: Ադրբեջանցիները դրանք համարում էին միջամտություն իրենց հանրապետության ներքին գործերին, հայերը դժգոհ էին Հատուկ կառավարման կոմիտեի թուլությունից եւ

---

830 *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, с. 204.*

831 *Տե՛ս նույն տեղում, էջ 226:*

832 *Տե՛ս նույն տեղում, էջ 158-174:*

զինված ստորաբաժանումների ու զինվորական պարետի ադրբեջանամետ դիրքորոշումներից:

Ոչ միայն բարոյական, այլեւ նյութական իմաստով կարեւոր էր Լեռնային Ղարաբաղին Հայաստանի կողմից օգնության եւ օժանդակության տրամադրումը: Իշխանության հանրապետական մարմիններն, իհարկե, այս ուղղությամբ ոչինչ չէին ձեռնարկում: Ընդհակառակը՝ Շարժման նախաձեռնությամբ պարբերաբար կատարվող այդօրինակ նախաձեռնությունները հաճախ խոչընդոտվում էին նաեւ նրանց կողմից: Այսպես, սեպտեմբերի 7-ին փորձ արվեց օգնություն տանող բեռնատարների շարասյուն անցկացնել Լեռնային Ղարաբաղ, որը, սակայն, տեղ չհասավ: Դա ավելի մեծացրեց օգնությունը տեղ հասցնելու, շրջափակումը ճեղքելու վճռականությունը: Այդ նպատակով տարբեր ձեռնարկություններից բեռնավորված մեքենաները հավաքվում էին Գորիսում: 11 մեքենայից բաղկացած մի շարասյուն ներքին գործերի աշխատակիցները կանգնեցրին Երասխում: Արարատի շրջանի շուրջ 150 բնակիչներ չեզոքացրին իրավապահների արգելքը: Ապա մեքենաների այս շարասյունը կանգնեցվեց եւ արգելափակվեց Եղեգնաձորում: Այստեղ էլ հավաքված շուրջ 300 հոգի ուժով բացեցին դարպասները եւ մեքենաները ճանապարհեցին Գորիս[833]: Բազմազան խոչընդոտները որեւէ արդյունք չունեցան, վերջապես երկու հիմնական շարասյուն շարժվեց դեպի Լեռնային Ղարաբաղ, մեկը՝ Իջեւանով, մյուսը, հիմնականը՝ բաղկացած շուրջ 300 բեռնատարներից, Գորիսով[834]:

Լարվածության մեծացման համար նոր ազդակ հանդիսացավ սեպտեմբերի կեսերից սկսված՝ Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն իր վերոհիշյալ սադրիչ որոշումներով: Ադրբեջանական զինված խմբավորումների կողմից հարձակումներ տեղի ունեցան Հադրութի շրջանի Սպիտակաշեն, Արփագյադուկ, Պետրոսաշեն, Մելիքաշեն, Դոլանլար գյուղերի վրա: Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի վրա կրակեցին ուղղաթիռից, Մարտունու շրջանում հրկիզվեց հայ բնակչի տուն, որտեղ հայտնաբերվեցին ընտանիքի բոլոր ութ անդամների դիակները: Ստեփանակերտում պայթեցվեց Եվլախ-Լաչին ճանապարհի կամուրջը եւ այլն[835]:

Սրվում էին հակասությունները նաեւ զինվորականների հետ: Աղդամում ադրբեջանցիների կողմից սպանվեցին խորհրդային բանակի երկու

[833] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1., ց.87,գ.37, թ. 54-55:*

[834] *Իջեւանի շարասյան պատասխանատուն Դավիթ Վարդանյանն էր իսկ Գորիսինը՝ Բաբկեն Ալարքցյանը եւ Վանո Սիրադեղյանը:*

[835] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2 с. 158-174.*

սպա, եւ երեք հոգի վիրավորվեցին[836]: Մինչ այդ, Շուշիում ադրբեջանցիները պարզապես պատանդ էին վերցրել ԽՍՀՄ Ներքին գործերի փոխնախարար, գեներալ Վ. Շատալինին եւ նրան փոխանակել խորհրդային բանակի կողմից ձերբակալված իրենց երկու ազգակիցների հետ: Հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում, այս անգամ հենց խորհրդային ներքին զորքերի կողմից հայ բնակչության դեմ կատարված սադրանքով, տեղի ունեցավ իսկական ողբերգություն: Շուշիից Կիրովաբադ ուղեւորվող զինվորական ավտոշարասյունը, չնայած կարող էր անցնել շրջանցիկ ճանապարհով, սակայն, առանց նախապես տեղյակ պահելու մարզի ներքին գործերի մարմիններին, ընտրեց քաղաքի կենտրոնով անցնող ճանապարհը: Ըստ զինվորականների վարկածի՝ մեքենաների վրա քարեր են նետվել, որից հետո զինվորները սկսել են կրակել ամբողջ ճանապարհի երկարությամբ՝ քաղաքի կենտրոնական փողոցներում: Հետագայում պարզվեց, որ ինքնաձիգներից եւ ատրճանակից արձակվել է ավելի քան հինգ հարյուր կրակոց: Դրա հետեւանքով մեկ մարդ սպանվեց, եւ հինգ մարդ վիրավորվեց[837]: Արյունալի այս իրադարձության հաջորդ օրը, բնականաբար, հետեւեց բազմամարդ հանրահավաք, բողոքի հեռագրեր Մ. Գորբաչովին, ԽՍՀՄ Ներքին գործերի նախարար Վ. Բակատինին եւ այլն:

Ստեփանակերտում կատարվածի լուրը, բնականաբար, մեծ անհանգստություն եւ զայրույթ առաջացրեց նաեւ Հայաստանում: Բազմամարդ հանրահավաքը պահանջեց անմիջապես հրավիրել Գերագույն խորհրդի նիստ՝ Ստեփանակերտում կատարված ողբերգական իրադարձությունների հարցը քննարկելու եւ քաղաքական գնահատական տալու համար: Գերագույն խորհրդի նախագահությունը ստիպված էր հոկտեմբերի 15-ին արտահերթ նստաշրջանի նիստ նշանակել: Գերագույն խորհրդի համապատասխան որոշման մեջ արձանագրվեց, որ Լեռնային Ղարաբաղի բազմամսյա շրջափակման, հայ բնակչության վատթարացող վիճակի, ազգամիջյան հարաբերություններում աճող լարվածության, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման ուղղությամբ կենտրոնական իշխանությունների իրավասու մարմինների կողմից ժամանակին միջոցներ չձեռնարկելու հետեւանքով պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծվել տարածաշրջանում: Դատապարտվեց խաղաղ բնակչության դեմ ներքին գործերի ստորաբաժանումների կողմից զենքի գործադրումը: ԽՍՀՄ ՆԳ եւ պաշտպանության նախարարությունների

[836] *Տե՛ս նույն տեղում, էջ 207-217:*

[837] *Տե՛ս նույն տեղում, էջ 261-263:*

առջեւ հարց բարձրացվեց հանրապետության տարածքում զորամիավորումների տեղաշարժերը կատարել՝ նախապես տեղյակ պահելով տեղական իշխանության մարմիններին: Որոշվեց ստեղծել հանձնաժողով՝ դեպքի մանրամասներն ուսումնասիրելու եւ հասարակությանը տեղյակ պահելու համար[838]: Այդ հանձնաժողովի մեջ Հայոց համազգային շարժման կողմից ընդգրկվեցին Բաբկեն Արարքցյանը եւ Ռաֆայել Ղազարյանը[839]: Պահանջվեց, որ նման մի հանձնաժողով ստեղծի նաեւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը՝ ՀԽՍՀ եւ ԼՂԻՄ ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանձնաժողովի աշխատանքների արդյունքներին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն անդրադարձավ միայն 1990թ. մայիսի 3-ի նիստում[840]:

Իրավիճակը սրվում էր նաեւ Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Շրջափակման հետ միաժամանակ Ադրբեջանը Հայաստանի սահմանամերձ շրջաններում սկսեց ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք վաղուց կիրառվում էին Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ: Այսպես՝ օգոստոսին Սիսիանի ամառային արոտավայրերում սպանվեց երկու հայ հովիվ[841]: Փաստորեն, փակվեց Գորիս-Կապան ճանապարհը, որի 2-3 կիլոմետրանոց մի հատվածն անցնում էր Ադրբեջանի տարածքով: Այստեղ տեղադրված երեք «ստուգման կետերում» ճանապարհով անցնել համարձակվողները կամ կողոպտվում էին, կամ ծեծվում,

838 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 19, հոդվ. 116:*

839 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 19, հոդվ. 117:*

840 *Համապատասխան որոշման մեջ արձանագրվեց, որ հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում խաղաղ բնակչության դեմ ԽՍՀՄ ՆԳՄ զորքերի կողմից զենքի գործադրումը չէր բխում անհրաժեշտությունից, իրադրության բացառիկությունից, իրենց անվտանգության նկատմամբ հնարավոր ոտնձգություններից: Այն գնահատվեց որպես հանցագործություն, քաղաքացիների կյանքի, իրավունքների եւ շահերի նկատմամբ կամայականության դրսեւորում, որը նաեւ դարձավ վտանգավոր նախադեպ. դրան հաջորդեցին նմանատիպ փաստեր 1990թ. հունվարի 2-ին եւ ապրիլի 26-ին: Միջնորդություն ներկայացվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարեւին՝ նախաքննությունն արագացնելու եւ թույլ տալու ՀԽՍՀ-ից մի խումբ իրավաբանների մասնակցելու տվյալ դեպքի առթիվ հարուցված քրեական գործի հետաքննությանը: Կրկին դիմում հղվեց նաեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ պատգամավորական հանձնաժողով ուղարկել հոկտեմբերի 10-ի, ինչպես նաեւ զինծառայողների կողմից խաղաղ բնակչության նկատմամբ զենքի ապօրինի կիրառման այլ փաստերն ուսումնասիրելու համար (տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1990, 9, հոդվ. 114):*

841 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.08.1989:*

կամ պատանդ էին վերցվում[842]: Նույնպիսի իրավիճակ էր նաեւ Հայաստանի հյուսիսային եւ հարավային սահմանամերձ շրջաններում: Ընդ որում՝ հաճախ որպես ավազակային հարձակումների եւ ճանապարհներ փակելու հարմար վայրեր էին ծառայում հենց այն հողակտորները, որոնք, 1929թ.-ից սկսած՝ Հայաստանի կոմունիստ ղեկավարները տարբեր չափերով «բարեկամաբար» նվիրել էին Ադրբեջանին[843]:

Իշխանությունների ձեռնարկումները (հանդիպումներ, պայմանավորվածություններ եւ այլն) որեւէ նշանակություն չէին ունենում վիճակը մեղմելու համար: Եւ անգամ կոմկուսի պաշտոնաթերթը ստիպված էր իրեն ոչ բնորոշ լեզվով խոսել. «կոնկրետ հայրենասիրությունը պահանջում է ամառային արոտավայրերում հայ քաջեր ունենալ եւ մեր հողն ու ապրանքը ոչ ոքի չզիջել»[844]:

Ճնշումների ու ապօրինությունների անընդհատ մեծացման պայմաններում Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստիպված էր դիմել ծայրահեղ քայլերի: Նա համապատասխան որոշմամբ դիմում է ՀԿԿ ԿԿ-ին եւ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին: Դրանում տեղեկացվում է, որ Բաքվից գալիս են միլիցիայի համազգեստով քողարկված զինված խմբեր, որ ԽՍՀՄ ներքին զորքերը վստահելի չեն, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն ի վիճակի չէ լուծել անօրինականորեն բերված զինված խմբերին դուրս քշելու հարցը: Ազգային խորհուրդը Հայաստանի իշխանություններից խնդրում էր հանրապետության ներքին գործերի նախարարությունից անհապաղ անհրաժեշտ ուժեր ուղարկել մարզի հայ բնակչության կյանքի անվտանգությունն ապահովելու համար[845]: Նույնպիսի մի այլ փաստաթուղթ դիմում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին. «Չնայած բազմաթիվ դիմումներին՝ ուղղված մեր երկրի ամենաբարձր ինստանցիաներին, մեր երկրի ղեկավարությունը վճռական միջոցներ չի ձեռնարկում ապահովելու մեր տարածաշրջանի բնակչության անվտանգությունը: Խնդրում ենք անել ամեն ինչ, ընդհուպ ՄԱԿ-ի զինված ստորաբաժանումներ մտցնել՝ Ղարաբաղի բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Վաղը կարող է ուշ լինել»[846]:

Դեպքերին անմիջապես արձագանքում է սեպտեմբերի 7-ին «Ղարաբաղ» կոմիտեի տարածած հայտարարությունը, որն այնուհետեւ հրապա-

842 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19.08.1989:*

843 *Այս մասին տե՛ս **Խոջաբեկյան Վ.**, Արցախը փորձության ժամին, Երեւան, 1991, էջ 183:*

844 *«Խորհրդային Հայաստան», 23.08.1989:*

845 *«Խորհրդային Ղարաբաղ», 05.09.1989:*

846 *Նույն տեղում:*

րակվում է սեպտեմբերի 11-ի հանրահավաքում: Այն պահանջում էր սեպտեմբերի 15-ին արտահերթ նստաշրջան հրավիրել եւ որոշումներ կայացնել Ղարաբաղի Ազգային խորհրդի ճանաչման, ԼՂԻՄ-ի շրջափակման վերացման եւ անվտանգության երաշխիքների ապահովման, Հայաստանի եւ ԼՂ-ի ինքնապաշտպանության կազմակերպման, ինչպես նաեւ՝ որպես պետական լեզվի՝ հայոց լեզվի լիարժեք գործածության, աղետի գոտու, զինակոչիկների՝ Հայաստանում ծառայելու, փախստականների հարցերի մասին: Իսկ արտահերթ նստաշրջանը պետք է շարունակեր աշխատել այնքան, քանի դեռ չէր կարգավորվել իրավիճակը: Պահանջվում էր նաեւ կառավարության եւ ԳԽ նախագահության հրաժարական, որոնք ոչինչ չարեցին նախորդ շրջանում[847]: Նույն օրը ԳԽ նախագահությունը ստիպված էր որոշում կայացնել սեպտեմբերի 16-ին արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին[848]:

Նստաշրջանի նախօրյակին հանրահավաքում հրապարակվեցին բազմաթիվ աշխատավորական կոլեկտիվների ընդունած որոշումները՝ ԳԽ նախագահության հրաժարականի պահանջով, իսկ Վանո Սիրադեղյանը ԳԽ նախագահության նախագահ Հ. Ոսկանյանի հրաժարականը հռչակեց որպես «ազգի պատվի գործը»[849]: Հանրահավաքում հայտարարվեց նաեւ, որ պատգամավորներին կանչել են Կոմունիստական կուսակցության ԿԿ եւ վախեցրել, իսկ նստաշրջանին, որպես հրավիրյալ մասնակցելու համար՝ ՀՀՇ-ին տրամադրվել է ընդամենը 15 տեղ, երբ կոմկուսին տրվել է 150 տեղ[850]: Հանրահավաքը շարունակվեց ԳԽ նախագահության շենքի դիմաց, որտեղ հնարավոր եղավ հասնել Արկադի Մանուչարովի պատգամավորական մանդատի ճանաչմանը, որը մինչ այդ մերժվել էր: Իսկ հաջորդ օրվա համար բոլորը հրավիրվեցին Ազատության հրապարակ՝ «ապահովելու համար նստաշրջանի որոշումները»[851]:

գ) Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման խնդիրը

Երկաթուղային ճանապարհներով ՀԽՍՀ մտնող բեռների 85%-ը բաժին էր ընկնում ադրբեջանական երկաթուղուն, որը Հայաստան է մտնում

[847] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 87, գ.39ա, թ.131-133:*
[848] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 17, հոդվ. 95:*
[849] *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.39ա, թ.142:*
[850] *Տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.39ա, թ.147:*
[851] *Տե՛ս ՀԱԱ, ֆ1, ց.87, գ.39ա, թ.148:*

հյուսիսից՝ Ղազախով, եւ հարավից՝ Նախիջեւանով: Երկրաշարժից հետո, կապված Աղետի գոտու շինարարության եւ աղետյալ բնակչության սպասարկման ծավալների ավելացման հետ, կտրուկ ավելացել էր Հայաստան առաքվող բեռների քանակը: Ադրբեջանով էին Հայաստան մտնում նաեւ գազատարը եւ կարեւոր ավտոմոբիլային ճանապարհները:

Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, որպես նրա քաղաքական պահանջների դեմ ճնշամիջոց, Ադրբեջանը ձեռնարկել էր դեռ Շարժման սկզբից: Փաստորեն, փակված էին ինքնավար մարզ մտնող երկաթուղին եւ ավտոճանապարհները, կամ դրանցով երթեւեկելը դարձել էր չափազանց վտանգավոր: 1989-ի ամռանը Հայաստանում Շարժումը սկսեց նոր վերելք ապրել, դրա շնորհիվ Ղարաբաղի հիմնահարցը կրկին քննարկման առարկա դարձավ միութենական իշխանության բարձրագույն մարմիններում, այդ հարցով հանձնաժողով ստեղծվեց: Բնականաբար, ակտիվացան նաեւ Ադրբեջանի հակազդեցությունը եւ ձեռնարկումները: Եւ այդ ձեռնարկումներից հիմնականը արդեն մեկ անգամ Ղարաբաղի նկատմամբ անպատիժ կիրառված տնտեսական շրջափակումն էր, որ նա տարածեց նաեւ Հայաստանի վրա:

ՀԽՍՀ-ի ամբողջական շրջափակումը սկսվել էր 1989թ. հուլիսի 21-ից: Նման գործողությունը ԽՍՀՄ հանրապետություններից մեկի կողմից մյուսի նկատմամբ աննախադեպ երեւույթ էր: Ըստ միջազգայնորեն ընդունված նորմերի՝ այն հավասարազոր էր պատերազմի հայտարարման եւ կիրառվում էր միմյանց դեմ պատերազմական վիճակում գտնվող երկրների կողմից: Եւ այնուամենայնիվ, արտառոց այս փաստը ոչ միայն կենտրոնական, այլ նաեւ հայաստանյան մամուլում եւ պաշտոնական շրջանակներում չնկատելու տրվեց եւ որեւէ արձագանք չգտավ: Առաջին տեղեկությունը շրջափակման մասին հրապարակավ հայտնվեց միայն օգոստոսի 3-ին, երբ հանրապետությունն արդեն պակաս էր ստացել 11.179 վագոն բեռ[852]: Դրանից հետո մինչեւ սեպտեմբերի կեսը, երբ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը Շարժման բուռն ճնշման տակ ստիպված էր արտահերթ նստաշրջան հրավիրել ու քննարկել նաեւ այս հարցը, միակ անդրադարձը «Խորհրդային Հայաստանում» հանդիպում ենք օգոստոսի վերջին, որտեղ տեղեկացվում է, թե արդեն երկրորդ շաբաթն է, ինչ երկաթուղիները սկսել են գործել[853]: Իսկ սեպտեմբերի 14-ին հաղորդվում է, որ վերջին գնացքը Երասխ է մտել 10 օր առաջ՝ ջարդված, գործածության համար արդեն անպետք տնակներով[854]:

[852] *«Երեկոյան Երեւան», 03.08.1989:*
[853] *«Խորհրդային Հայաստան», 26.08.1989:*
[854] *«Խորհրդային Հայաստան», 14.09.1989:*

Շրջափակման հարցին որեւէ արձագանք չունի նաեւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը (որն այդ ընթացքում բազմաթիվ այլ որոշումներ էր կայացրել) ընդհուպ մինչեւ սեպտեմբերի 11-ը: Միայն դրանից հետո եւ հենց նույն օրը ԳԽ նախագահությունն ընդունում է շրջափակման վերաբերյալ համառոտ մի դիմում՝ ուղղված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի եւ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահություններին[855]: Մինչ այդ որեւէ արձագանքի չենք հանդիպում հանրապետության ղեկավարության կողմից նաեւ այնպիսի դեպքերում, երբ, թվում է, թե դժվար էր այդ թեման շրջանցել: Այսպես՝ օգոստոսի 22-ին ՀԿԿ ԿԿ-ում աղետի գոտու աշխատանքներին նվիրված խորհրդակցության մասին տեղեկատվության մեջ ներկայացվում է վերականգնման աշխատանքների նույն տխուր եւ անհույս պատկերը (ինչ Գերագույն խորհրդի հունիսյան նստաշրջանում), խոսվում է աշխատանքների բնականոն ընթացքը խոչընդոտող հանգամանքների մասին, եւ դրանց մեջ չի հիշատակվում շրջափակման փաստը[856]: Նույն կերպ այս մասին ոչ մի խոսք չի ասվում ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի օգոստոսի 29-ի հեռուստաելույթում[857]: Այս ամենը վկայում են, որ չնայած շրջափակման ահավոր հետեւանքներին, Հայաստանի իշխանություններն, այնուամենայնիվ, մտադիր չէին դրան լուրջ արձագանքել կամ լայն քննարկման առարկա դարձնել: Տարօրինակ այս դիրքորոշումը դժվար է այլ կերպ բացատրել, քան որպես Կենտրոնից ստացված հրահանգ:

Մինչդեռ շրջափակման հետեւանքով ստեղծված դժվարին, իսկ դրա շարունակման դեպքում սպասվող էլ ավելի ծանր վիճակը հանրահավաքներում քննարկվող ամենասուր խնդիրներից էր: Շարժումը պահանջում էր Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրել այդ, ինչպես նաեւ մի քանի այլ հրատապ հիմնախնդիրներ քննարկելու համար: Շարժման նախաձեռնած՝ անխուսափելիորեն աղմկոտ քննարկման նախօրյակին կենտրոնական եւ հանրապետական իշխանությունները եւ լրատվամիջոցները մթնոլորտը լիցքաթափելու եւ իրենց լռության համար սպասվող քննադատությունը մեղմելու համար ստիպված էին միաժամանակ պաշտոնապես ճանաչել փաստը եւ ներկայացնել իրենց «անհանգստությունը»:

[855] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 17, հոդվ. 97:*
[856] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23.08.1989:*
[857] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 31.08.1989:*

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սեպտեմբերյան արտահերթ նստաշրջանը, որ ոչ միայն նախաձեռնվեց Շարժման կողմից, այլեւ ընթացավ նրա ակտիվ հանրահավաքային «աջակցության» պայմաններում, առաջինն էր, որ տեղի էր ունենում արդեն պաշտոնապես ճանաչված ՀՀՇ-ն ներկայացնող նորընտիր պատգամավորների մասնակցությամբ: Համապատասխան որոշումներ ընդունելու համար դրսից կատարվող ճնշմանն այժմ գումարվելու էր շատ ավելի արդյունավետ՝ «ներսից» ճնշումը: Պատգամավորների ընդհանուր թվի համեմատությամբ որքան էլ փոքրաթիվ (Շարժումը ներկայացնում էին 5 հոգի), սակայն արդեն լիարժեք ձայնի իրավունքով օրենսդիր մարմնի աշխատանքներին մասնակցող Շարժման ներկայացուցիչների ներկայությունը եւ աշխատանքը հստակ կարելի է նկատել ընդունված որոշումների վրա:

Շրջափակման հարցի մասին ընդունված որոշումը ներկայացնում էր Շարժման տեսակետը: Այն, փաստորեն, առաջին անգամ պաշտոնապես արձանագրում էր, որ արդեն երկու տարի է, ինչ ԼՂԻՄ-ը, եւ երկու ամիս՝ ՀԽՍՀ-ն գտնվում են Ադրբեջանի կողմից տնտեսական շրջափակման մեջ: շրջափակման նպատակը համարվում էր քաղաքական. թույլ չտալ ժողովրդավարական եւ իրավական ճանապարհով լուծել ԼՂԻՄ հիմնահարցը: Այն գնահատվում էր որպես «պատերազմի ակտ»՝ անհամատեղելի ԽՍՀՄ կազմավորման պայմանագրին, գործող Սահմանադրությանը, ՄԱԿ-ի կանոնադրությանը, Հելսինկյան եզրափակիչ ակտին եւ այլ միջազգային պայմանագրերի: Որպես շրջափակման հետեւանք՝ նշվում էր աղետի գոտու աշխատանքների եւ ընդհանրապես երկրի տնտեսության կազմալուծումը: Ընդունված որոշումը դատապարտում էր շրջափակման փաստը եւ դիմում կենտրոնական իշխանության մարմիններին մի շարք պահանջներով. ռազմական դրություն հայտարարել Ադրբեջանով Հայաստան մտնող երկաթուղում եւ ավտոճանապարհների վրա, Հայաստան չբերված բեռները համալրելու համար ներգրավել ռազմական եւ քաղաքացիական ավիացիայի միջոցները, Ադրբեջանի բյուջեի հաշվին փոխհատուցել նրա տարածքում թալանված բեռների արժեքը, քրեական գործեր հարուցել շրջափակման կազմակերպիչների նկատմամբ եւ այլն: Առանձին կետով պահանջվում էր, ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան, հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար՝ Հայաստանի շրջափակումը վերացնելու նպատակով արտակարգ միջոցառումներ ընդունելու համար: Նաեւ բողոք էր հայտնվում կենտրոնական մամուլի, ռադիո եւ հեռուստատեսային հաղորդումների ապակողմնորոշիչ, կողմնակալ, միտումնավոր տեղեկատվության դեմ, ինչն ավելի էր սրում եւ պայթյունավտանգ

դարձնում իրավիճակը[858]: Վերջին մտահոգությունն ավելի քան տեղին էր, չնայած՝ նաեւ ապարդյուն:

Կենտրոնական զանգվածային լրատվության միջոցները, հավատարիմ ի սկզբանե իրենց որդեգրած մեթոդներին, դիտավորյալ աղավաղված ներկայացրին նաեւ այս նստաշրջանի եւ նրա ընդունած որոշումների մասին «Արմենպրեսի» տարածած պաշտոնական տեղեկատվությունը: Եւ այնուամենայնիվ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդում հարցի հիմնավոր քննարկմամբ եւ ընդունված որոշմամբ շրջափակման թեման պաշտոնականացվեց, հայաստանյան մամուլում այն դուրս եկավ գրաքննության շրջանակներից ու հետագա ամիսներին դարձավ հիմնականներից մեկը: Արդեն սեպտեմբերի 19-ին այդ առիթով համատեղ հայտարարությամբ հանդես եկան կենտրոնական լրատվամիջոցների հայաստանյան թղթակիցները[859]: Կենտրոնական մամուլի եւ հեռուստատեսության աղավաղված եւ սադրիչ հաղորդագրությունները քննադատվեցին «Խորհրդային Հայաստան» թերթի «կոլեկտիվ թղթակցի» կողմից[860] եւ այլն: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած որոշմամբ շրջափակման խնդրի պաշտոնականացումից հետո ՀԿԿ ղեկավար Ս. Հարությունյանը, բնականաբար, չէր կարող այդ հարցը չարծարծել մի քանի օր հետո հրավիրված ԽՄԿԿ ԿԿ-ի պլենումում, նաեւ տեղեկացնելով, որ ստեղծված իրավիճակի պատճառով նստաշրջանում դրվեցին ոչ միայն նախագահությանը, այլ նաեւ միութենական մարմիններին անվստահություն հայտնելու հարցեր[861]:

Բողոքի բարձրացված ալիքի շնորհիվ սեպտեմբերի 25-ից ճանապարհները կարճ մի ժամանակով բացվեցին, բայց օրական ստացվում էր նախատեսված բեռների 40-41%-ը: Ընդ որում՝ մինչեւ Հայաստան մտնելը վագոնները տեսակավորվում էին, դրանց միջից հանվում էր վառելիքը, դեռեւս պիտանի պարենամթերքը, իսկ շինանյութը հասնում էր օգտագործման համար, փաստորեն, ոչ պիտանի վիճակում[862]: Շրջափակման հետեւանքների առիթով մեծ տագնապ կա անգամ ՀԿԿ ԿԿ-ի երկրորդ քարտուղար Օ. Լոբովի՝ ԽՄԿԿ ԿԿ ուղարկած մի զեկուցագրում: Նա, մասնավորապես, հայտնում էր, որ սեպտեմբերի ընթացքում հանրապետություն չի մտել 32000 վագոն, կամ մեկուկես միլիոն տոննա բեռ, որի կեսից ավելին նախատեսված է եղել

[858] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 106:*
[859] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20.09.1989:*
[860] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19.09.1989:*
[861] *Տե՛ս «Ավանգարդ», 24.09.1989:*
[862] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 10.10.1989:*

աղետի գոտու համար: Դրա հետեւանքով շինարարների մի մասը կամ պարապուրդի մեջ է, կամ արդեն իսկ ստիպված է հեռանալ, որ «լուրջ խնդիրներ են առաջացել բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու հարցում, հանրապետությանը պատճառվել է հարյուրավոր միլիոն ռուբլու վնաս»[863]:

Ձեռքի տակ ունենալով հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի որոշումը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հայկական պատվիրակության համար Մոսկվայում շատ ավելի հեշտ պետք է լիներ աշնանային նստաշրջանում բարձրացնել շրջափակման հարցը եւ էական արդյունքների հասնել: Սակայն նրանց չհաջողվեց այն քննարկման դնել եւ ստանալ անանախադեպ ու բացահայտ այդ երեւույթի իրական քաղաքական գնահատականը եւ այն վերացնելու գործնական որոշումներ: Հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում ձեւակերպվեց եւ հոկտեմբերի 3-ին քննարկվեց որպես «Երկաթուղային տրանսպորտի եւ ժողովրդական տնտեսության բազային ճյուղերի անխափան գործունեության ապահովման անհետաձգելի միջոցառումների մասին» ընդհանուր խնդիր: Ընդունված համապատասխան որոշմամբ էլ ընդամենը նախատեսվում էր՝ հատուկ ուշադրություն դարձնել Անդրկովկասի երկաթուղիներում ստեղծված անհանդուրժելի վիճակին... այդ երկաթուղիների ղեկավարությունը անհրաժեշտության դեպքում վերցնել ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների նախարարության վրա, արգելել գործադուլները (ադրբեջանական կողմը շրջափակումը ներկայացում էր որպես երկաթուղայինների գործադուլի արդյունք), մշակել արտակարգ միջոցառումների եւ երկաթուղային տրանսպորտի մասին օրենքների ինչ-որ նախագծեր: Վերջում արձանագրվեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դատապարտում է բռնի մեթոդների ու գործողությունների կիրառումը երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարցերի լուծման ժամանակ[864]: Հայկական պատվիրակություններին չհաջողվեց հարցը ներկայացնել եւ քննարկել իր անվան տակ՝ որպես Ադրբեջանի կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի տնտեսական շրջափակում, որքան էլ որ երթեւեկության խափանման միակ վայրը Ադրբեջանն էր, իսկ դրա հետեւանքով տուժողները՝ ՀԽՍՀ-ն եւ ԼՂԻՄ-ը:

ԽՍՀՄ ԳԽ-ի հոկտեմբերի 3-ի որոշումը գործնականում որեւէ նշանակություն չունեցավ անգամ անմիջապես հաջորդ օրերի համար: Հոկտեմբերի

[863] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.33. թ.119-120:*
[864] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 17, հոդվ. 331:*

10-ին, առանց նախապես այդ մասին տեղեկացրած լինելու, անակնկալ ձայն տրվեց Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Լ. Վորոնինին՝ տեղեկացնելու ադրբեջանական երկաթուղիներով բեռնատար գնացքների երթևեկի, բեռների տեղափոխման վիճակի մասին, որը եւ ներկայացրեց նույն անմխիթար վիճակը: Չնայած հայաստանյան պատգամավորների պահանջներին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն այս առիթով էլ հրաժարվեց հարցը քննարկման առարկա դարձնել եւ ընդամենը ընդունեց հերթապահ մի այլ որոշում, որի հիմնական կետը, կարծես, ավելի շատ միտված էր վիրավորելու շրջափակման հարցը բարձրացնողներին. «Եւս մի անգամ պահանջել երկու հանրապետությունների պետական կառավարման մարմիններից՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները եւ խնդրել Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովրդական պատգամավորներից՝ առավելագույն մասնակցություն բերել ազգամիջյան լարվածությունը հանելու միջոցառումներին»[865]: Սա, ըստ էության, այլ բան չէր, քան իրավիճակի հետ համակերպվելու, իրականում՝ այն խրախուսելու վարքագիծ: Հայաստանյան պատվիրակությունը ստիպված էր դիմել պասիվ քայլի՝ հայտարարությամբ լքել նիստերի դահլիճը[866]:

* * *

Կենտրոնն իր դիրքորոշումը շրջափակման հարցում, ձեւի առումով, փորձում էր պահել միջին ինչ-որ դիրքում, արդյունքների եւ հետեւանքների առումով այն, փաստորեն, դառնում էր քաջալերող՝ Ադրբեջանի եւ սադրիչ՝ հայկական կողմի համար: Շրջափակումը համարվում էր երկկողմանի, հրապարակվում էին ինչ-որ զենքեր տեղափոխելու մասին անհիմն խոսակցություններ, կողմերը հավասարապես մեղադրվում էին, նրանց ներկայացվում էին նույն պահանջները: Հայաստանից գնացած պաշտոնական տեղեկատվությունը աղավաղվում էր, դրանից դուրս էին թողնվում շրջափակմանը վերաբերող մասերը, Ադրբեջանի ղեկավարներին կենտրոնական հեռուստատեսությամբ եթեր էր տրամադրվում՝ առանց նրանց ելույթները մեկնաբանելու: Հայաստանում տեղի ունեցող գործադուլների առիթով մի ժամանակ կենտրոնական զանգվածային լրատվության միջոցները հսկայական աղմուկ էին բարձրացնում՝ համարելով, որ դրա պատճառով տուժում են «բանվոր դասակարգի բազմաթիվ ներկայացուցիչներ» ԽՍՀՄ տարբեր վայրերում: Այժմ, երբ շրջափակման պատճառով էին խզվում արտադրական

[865] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 343:*
[866] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 13.10.1989:*

կապերը, եւ շատ ավելի մեծ էին փոխադարձ վնասները, այդ անհանգստության մասին այլեւս ոչ մի խոսք չկար: Զափազանց կոպիտ արված այս քայլերը սրում էին Հայաստանում առանց այդ էլ շիկացած իրավիճակը, բորբոքում միմյանցից դեռեւս չտարբերվող հակախորհրդային եւ հակառուսական տրամադրությունները[867]:

Կենտրոնական իշխանությունների դիրքորոշումն ու վարքագիծը Հայաստանի շրջափակման հարցում նպատակադիր քաղաքական որոշման արդյո՞ւնք էր, թե՞ պարզապես նա անում էր այն, ինչը հազիվ ի վիճակի էր անել: Հարցին պատասխանելու համար պետք է նկատի ունենալ, որ շրջափակման խնդիրը ոչ թե հիմնական կենտրոնական հարց էր, այլ ածանցյալ էր հիմնական՝ Լեռնային Ղարաբաղի խնդրից: Ըստ այդմ էլ՝ Կենտրոնի մոտեցումը դրա նկատմամբ չէր կարող տրամաբանական կապի մեջ չլինել ու չբխել քաղաքական այն դիրքորոշումից, որը նա իր համար բավականին հստակ ուներ Ղարաբաղի խնդրում: Վերջինս, իր հերթին, նույնպիսի եւ ավելի անմիջական կապի մեջ պետք է գտնվեր եւ բխեր քաղաքական այն սկզբունքներից, որոնք հենց այդ օրերին երկար քննարկումներից հետո վերջնականապես ձեւակերպվեցին եւ ընդունվեցին ԽՄԿԿ ԿԿ-ի պլենումի կողմից՝ որպես «ազգային քաղաքականության պլատֆորմ»: Իսկ սա հստակ ցույց էր տալիս, որ կենտրոնական իշխանությունները հիմնականում, եթե ոչ՝ ամբողջությամբ, պետք է շարունակեին կառչած մնալ կայսրությունը պահելու հին սկզբունքներին ու մեթոդներին: Այլ հարց է, թե այլեւս որքանով էին այդ միջոցներն ու մեթոդները արդյունավետ գործելու:

Շրջափակումն, անշուշտ, պրոբլեմ էր նաեւ Կենտրոնի համար, գեթ այնքանով, որ անպատիժ խախտվում էին սեփական օրենքները, սահմանադրական նորմերը, չէին կատարվում կայացված որոշումները, իսկ այս ամենը վնասում էր նրա վարկանիշը ե՛ւ ներսում, ե՛ւ դրսում: Նա, անշուշտ,

[867] *Կենտրոնական իշխանությունների դիրքորոշումը շրջափակման հարցում եւ գործողությունները, իսկ ավելի ճիշտ՝ դրանց բացակայությունը, քննադատության էր արժանանում ռուսական ժողովրդավարական ուժերի կողմից: Այսպես՝ Անդրեյ Սախարովը համարում էր, որ շրջափակումը քաղաքական իրադարձություն է եւ որպես այդպիսին՝ առաջին հերթին ուղղված է հենց կենտրոնական իշխանության դեմ: Իսկ որ դրան չեն ուզում քաղաքական գնահատական տալ, ուրեմն կառավարությունն արդեն ի վիճակի չէ... Մի այլ ժողովրդական պատգամավոր՝ Գավրիլ Պոպովը, նույնպես քաղաքական իմաստով այն գնահատում է որպես ոտնձգություն ֆեդերացիայի սահմանադրության եւ քաղաքական կառուցվածքի դեմ (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 24.10.1989:*

կարող էր խնդիրը կարգավորել ուժի գործադրմամբ: Ինչպես քիչ հետո ցույց տվեցին մի շարք օրինակներ Մերձբալթյան հանրապետություններում եւ հենց Ադրբեջանում ու Վրաստանում, երբ վտանգը անմիջականորեն էր սպառնում իր քաղաքական շահերին, Մոսկվան չէր խորշում նաեւ կոպիտ ռազմական միջամտությունից: Ուժային լծակներով նա, անշուշտ, ի վիճակի էր վերացնել կամ թեթեւացնել շրջափակումը: Բայց դա կունենար անցանկալի հետեւանք: Դա կոգեւորեր եւ նոր թափ կհաղորդեր ժողովրդավարական շարժմանը Հայաստանում: Վերջինս, սակայն, արդեն իսկ «վատ» օրինակ էր մյուս հանրապետություններում նմանատիպ շարժումների համար: Այսինքն՝ դրանով ակամա կնպաստեր սեփական քաղաքական հիմքերի դեմ ուղղված ուժերի հզորացմանը: Մինչդեռ շրջափակմանը մատների արանքով նայելով՝ նա, փաստորեն, ոգեւորում ու խրախուսում էր Ադրբեջանին, որն այս դեպքում Հայկական ժողովրդական շարժման դեմ պայքարում մի մահակ էր իր ձեռքին: Երկրորդ՝ ռազմական կամ ուժային միջամտությունը շրջափակումը վերացնելու համար, բնականաբար, ինչ-որ հակազդեցություն կառաջացներ նաեւ Ադրբեջանում, որ այս դեպքում Մոսկվային ամենեւին պետք չէր: Այս հանգամանքներից յուրաքանչյուրն առանձին վերցրած, թե՛ քաղաքական իմաստով, թե՛ իրենց առարկայական հետեւանքներով ավելի վտանգավոր ու անցանկալի էին Կենտրոնի համար, քան իմիջի այն կորուստը, որ նա ունենում էր Ղարաբաղի ու Հայաստանի շրջափակման փաստը կոծկելու իր քաղաքականությամբ:

Հարցն, իհարկե, ուներ նաեւ տնտեսական կողմ, գուցե՝ ոչ այնքան կարեւոր, որքան քաղաքականը: Ապաշրջափակում իրականացնելը եւ ճանապարհների վրա վերահսկողություն սահմանելը նյութական միջոցների զգալի հատկացումներ էր պահանջելու արդեն իսկ վատ վիճակում գտնվող կենտրոնական բյուջեից: Մյուս կողմից՝ շրջափակման պատրվակով կարելի էր խնայել աղետի գոտու համար նախատեսված հսկայական ռեսուրսներն ու միջոցները, իսկ ապա վերականգնման ծրագրերի՝ արդեն մինչ այդ էլ եւ առանց դրա էլ առկա ձախողումը բացատրել հենց շրջափակմամբ:

Այսպիսով, թե՛ քաղաքական, թե՛ նույնիսկ տնտեսական առումով սեփական շահերը կենտրոնական իշխանություններին պետք է թելադրեին շրջափակման երեւույթի եւ այդ առիթով հայկական հարցադրումների հետ վարվել հենց այնպես, ինչպես եւ վարվեցին: Դրան որոշակիորեն նպաստեցին նաեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում հայկական պատվիրակության համեստ քաղաքական ունակությունները եւ Հայաստանի կոմկուսի կողմից նրանց ուղղորդվող վարքագիծը:

դ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը ՀԽՍՀ ԳԽ սեպտեմբերյան նստաշրջանում

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը եւ դրան հաջորդած՝ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, փաստորեն, խուսափեցին Ղարաբաղի հիմնահարցի՝ ըստ էության քննարկումից: Դա հնարավոր եղավ նաեւ Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից ընտրված պատգամավորների ավելի շատ զգացմունքային, քան քաղաքական դիրքորոշման, պահանջների հիմնավորվածության մեջ խոցելի փաստարկների օգտագործման, հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի՝ համապատասխան որոշումներով զինված չլինելու, ընդհանրապես ոչ պատշաճ նախապատրաստվածության հետեւանքով: Միակ արդյունքը եղավ հարցի ուսումնասիրման համար ստեղծված ժամանակավոր հանձնաժողովը, որի եզրակացությունները նույնպես ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հրաժարվեց լսել եւ այն փոխանցեց աշնանային նստաշրջան: Այսինքն՝ աշնանը, բացի շրջափակման ամենասուր ծառացած հարցից, շարունակում էր օրակարգում մնալ նաեւ Ղարաբաղի հիմնահարցը, որն իր քննարկմանն էր սպասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում, եւ որին պետք էր նախապատրաստվել:

Այն, ինչ Շարժումը, չնայած բոլոր ջանքերին, չհաջողեց անել մայիսին, պետք է կարողանար անել հիմա, այն է՝ ապահովեր, որ Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ մտներ ոչ թե առանձին պատգամավորների կամ թեկուզ Հայաստանից ընտրված պատգամավորական խմբի անունից՝ հաճախ զանազան անհարկի իմպրովիզացիաներով, այլ՝ հանրապետության բարձրագույն իշխանության մարմնի հստակ որոշումների կարգավիճակով: Այսինքն՝ խնդիրը պետք է ներկայացվեր որպես հանրապետության իշխանության դիրքորոշում, ոչ թե ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների՝ Հայաստանից ընտրված մի խմբի ճաշակով եւ նրանց անունից: Այդպիսի որոշումը վերջիններիս համար, մի կողմից, ապահով հիմք եւ ուղենիշ կլիներ, մյուս կողմից՝ կսահմանափակեր ինքնագործունեությունը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը հենց այդպես էլ կոչվում էր. «ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ներկայացվող առաջարկությունների մասին»: Դրա առաջին կետով նախատեսվում էր. «Դիմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն խորհրդին՝ սույն թվականի սեպտեմբերին կայանալիք նստաշրջանում ճանաչել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման

իրավունքը, որն արտահայտված է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 12-ի նստաշրջանների որոշումներում»: Իսկ որոշման արձանագրային մասում ամփոփված են դրա համապատասխան իրավական հիմքերը կամ փաստարկները.

ա) ԼՂԻՄ մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի հայտնի որոշումը,

բ) ժողովուրդների իրավահավասարությունը եւ ազատ ինքնորոշման իրավունքը,

գ) ազատ ինքնորոշման սկզբունքի ամրապնդված լինելը ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրով եւ ԽՍՀՄ Սահմանադրությամբ,

դ) խորհրդային ֆեդերացիայի իրավահավասար համարվող ժողովուրդներից մեկին մյուսի տիրապետության տակ բռնությամբ պահելու անթույլատրելիությունը, հատկապես՝ ազգամիջյան հարաբերությունների վերակառուցման պայմաններում,

ե) ՄԱԿ-ի կանոնադրությունից եւ միջազգային այլ փաստաթղթերից բխող պարտավորությունը՝ հարգանք ցուցաբերել իր քաղաքական ստատուսի հարցում ժողովրդի կամքի ազատ արտահայտման նկատմամբ,

զ) ժամանակին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու որոշումը կայացվել է ոչ իրավասու մարմնի՝ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ,

է) ԼՂԻՄ հարցը Հայաստանը չի հարուցել, այլ ԼՂԻՄ ժողովուրդը՝ որպես ինքնորոշման խնդիր, եւ այն չի կարող երկու հարեւան հանրապետությունների միջեւ վիճելի հարց համարվել[868]:

Սա էր Շարժման արգումենտացիան եւ քաղաքական դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնահարցում, որ ի դեմս սեպտեմբերի 17-ին ընդունված ՀԽՍՀ ԳԽ-ի որոշման՝ հաջողվեց ամբողջությամբ դարձնել հանրապետության պաշտոնական դիրքորոշում: Սա կարեւոր հաղթանակ էր նաեւ գաղափարախոսական պայքարի ու դրա սադրանքներից խույս տալու առումով. դրանով Շարժումը կարողացավ **Լեռնային Ղարաբաղի հարցը զերծ պահել պատմական իրավունքների, հողային պահանջատիրության հիմքի վրա մեկնաբանման որոգայթից**՝ «հայրենասիրական» համարվող մի մեկնաբանություն, որին այնպես ջանադիր լծված էին հայ ավանդական քաղաքական մտքի կրողները, որը ոչ բացահայտ խրախուսվում էր հանրապետության իշխանությունների կողմից, եւ որը, որպես մեղադրանք ու իրենց

[868] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 107:*

գործողությունների արդարացման հիմք, վկայակոչում էին Ադրբեջանը եւ Մոսկվան:

Նույն որոշման երկրորդ կետով կատարվեց եւս մի կարեւոր քայլ. ԼՂԻՄ բնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումարում ընտրված Ազգային խորհուրդը ճանաչվեց որպես ժողովրդաիշխանության մարմին՝ մինչեւ ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի վերականգնումը: Շարժման պահանջով կայացված այս որոշումը կարեւոր նշանակություն ուներ նաեւ որպես բարոյական աջակցություն Ղարաբաղի բնակչությանը: Դրանով Գերագույն խորհուրդը, փաստորեն, պարտավորեցնում էր հանրապետության իշխանության մարմիններին հարաբերություններ ունենալ Ազգային խորհրդի հետ՝ որպես մարզը ներկայացնող իրավասու պաշտոնական մարմնի: Ղարաբաղի Ազգային խորհուրդը ֆորմալ առումով դուրս էր գործող օրենքների շրջանակներից, եւ նրա պաշտոնական ճանաչումը երկրորդ դեպքն էր, երբ Հայաստանի իշխանության բարձրագույն մարմինը որոշում էր ընդունում ի հեճուկս հանրապետությունների ինքնուրույնությունը կաշկանդող խորհրդային օրենքների:

Հիշյալ որոշման երրորդ կետով նախատեսվում էր. «Նկատի ունենալով, որ ռեգիոնում ծագած ազգամիջյան պրոբլեմների արմատները 1920-1921 թվականներին ապօրինաբար եւ միջազգային իրավունքի տարրական նորմաների կոպիտ խախտմամբ ընդունված պայմանագրերի եւ որոշումների մեջ են, ստեղծել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հատուկ հանձնաժողով՝ այդ պայմանագրերն ու որոշումներն ուսումնասիրելու եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հաջորդ նստաշրջանին առաջարկներ ներկայացնելու համար»[869]:

ե) Անվտանգության եւ այլ հարցերի մասին որոշումներ

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ ուղարկվող որոշումների փաթեթում, բացի շրջափակման եւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի քաղաքական կարգավորման մասին առաջարկներից, կար եւս մեկ որոշում՝ «Ադրբեջանական

[869] *Տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 107: Հանձնաժողովն իր աշխատանքի արդյունքները Գերագույն խորհուրդ ներկայացրեց դեկտեմբերի 1-ին: Քննարկման առարկա դարձավ միայն «ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրամասային կոմիտեի բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշման անօրինական ճանաչման մասին» որոշման նախագիծը», որը եւ ընդունվեց առաջին ընթերցմամբ (տե՛ս Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 150):*

ԽՍՀ-ում, ԼՂԻՄ-ում, Հայկական ԽՍՀ սահմանային շրջաններում հայ ազգաբնակչության եւ խորհրդային բանակում հայազգի զինծառայողների անվտանգության ապահովման խնդիրների մասին»[870]: Որոշումը պայմանավորված էր վերջին ամիսներին իրավիճակի կտրուկ փոփոխություններով: Ադրբեջանի այն շրջաններում, որտեղ դեռեւս կար հայ ազգաբնակչություն՝ այդ թվում նաեւ մայրաքաղաքում, նոր թափ էին ստացել բռնությունները, հալածանքները եւ ահաբեկումները: Դրան մեծապես նպաստեցին, մասնավորապես, Ադրբեջանի մտավորականության՝ օգոստոսի 17-ին կայացած համաժողովի կողմից ընդունված սադրիչ կոչերը, որոնք զանգվածային հոգեխանգարման մթնոլորտ ստեղծեցին՝ մեծացնելով հայ բնակչության նկատմամբ ճնշումները: Դեպի Հայաստան սկսվեց բռնագաղթի նոր ալիք՝ ծանրացնելով առանց այդ էլ տնտեսական եւ սոցիալական դժվարին վիճակում հայտնված հանրապետության վիճակը:

Նույն կերպ մեծացել էին ադրբեջանական կողմի ճնշումները եւ կամայականությունները Լեռնային Ղարաբաղում եւ հատկապես մարզի վարչական սահմաններից դուրս գտնվող հայաբնակ Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի բնակավայրերում: Վերջիններս, որ պաշտպանական առումով առավել խոցելի էին ինքնավար մարզի համեմատությամբ, վտանգվածության եւ բռնագաղթի ենթարկվելու իրական վտանգի տակ, տեղական իշխանության մարմինների որոշումներով հայտարարել էին ԼՂԻՄ-ի մեջ մտնելու մասին:

Անպատժելիությունը, Կենտրոնի խրախուսական լռությունն ավելի էին խորացրել Ադրբեջանում կրկին գլուխ բարձրացրած ազգայնական մոլուցքը: Սկսել էին հարձակումների եւ ավարառության թիրախ դառնալ նաեւ ՀԽՍՀ-ի սահմանամերձ բնակավայրերը: Ընդհարումները եւ հարձակումներն ավելի հաճախ էին ուղեկցվում հրազենի գործածմամբ, հաճախադեպ էին դարձել մարդկային զոհերը: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն իր վերոհիշյալ որոշմամբ՝ «նկատի ունենալով, որ հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի տարածքում կատարվող բռնությունները, հալածանքներն ու սպանությունները մինչեւ այժմ ձեռնարկված միջոցառումներով չեն կանխվում»՝ եւս մեկ անգամ պահանջում էր հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար՝ այդ հարցը քննարկելու եւ «հայ բնակչության կյանքի անվտանգության ապահովման համար գործուն միջոցներ իրականացնելու նպատակով»: ԽՍՀՄ Գերագույն խորհրդին

[870] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 18, հոդվ. 108:*

առաջարկվում էր քննության առնել նաեւ ԼՂԻՄ կազմի մեջ մտնելու մասին Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների որոշումները, որոնք «պայմանավորված են տեղի հայ բնակչության կյանքին սպառնացող իրական վտանգով»:

Սուր խնդիրներից մեկն էլ խորհրդային բանակում գտնվող հայ զինծառայողների հարցն էր: Հակամարտության մթնոլորտը տարածվել էր նաեւ խորհրդային բանակում՝ հայ եւ ադրբեջանցի զինծառայողների շրջանում: Բախումների հետեւանքով լինում էին մարմնական վնասվածքներ եւ սպանություններ: Դրա պատճառով ծայր էր առել եւ խորանում էր զորամասերը լքելու, զորակոչից խուսափելու երեւույթը: Նույն որոշմամբ կենտրոնական իշխանություններից պահանջվում էր նաեւ միջոցներ ձեռնարկել ԽՍՀՄ տարբեր վայրերում իրենց ծառայությունն անցկացնող հայ զինծառայողների կյանքի անվտանգությունն ապահովելու համար[871]: Մեկ այլ որոշմամբ (արդեն սեպտեմբերի 23-ին) ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը կրկին անդրադառնում է այս հարցին՝ մատնանշելով նաեւ խնդրի լուծման տարբերակը: ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանն առաջարկվում էր 1989-92 թթ. հանրապետությունից զորակոչվողներին միավորել զինվորական շինարարական ստորաբաժանումներում եւ նրանց ծառայությունը կազմակերպել աղետի գոտում՝ դրանով լուծելով նաեւ վերականգնման եւ շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ աշխատուժի պահանջարկը[872]:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այս որոշումները, որոնք, փաստորեն, ամբողջությամբ արտահայտում էին Շարժման տեսակետները ու կայացվել էին նրա նախաձեռնությամբ, ուղեկցվում էին նաեւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված հանգամանալից մի «Դիմումով», որտեղ մանրակրկիտ եւ սպառիչ ներկայացվում էին այն իրավիճակը եւ հիմքերը, որոնք առիթ էին տվել հիշյալ որոշումներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին եւ իշխանության այլ մարմիններին ուղղված առաջարկություններին ու պահանջներին[873]:

Սեպտեմբերյան այս նստաշրջանում Շարժումը կարողացավ հասնել քաղաքական առումով նոր որակական արդյունքի: Ընդամենը մի քանի ամիս առաջ՝ մայիսին ո՛չ Գերագույն խորհրդում, ո՛չ էլ որեւէ այլ մակարդակով հնարավոր չեղավ կազմակերպել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Ղարաբաղի հարցով ասելիքի քննարկում: Այն ժամանակ ոչ մեկին, բացի, թերեւս, Հայաստանի կոմկուսի ղեկավարից, հայտնի չէր,

[871] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989,18, հոդվ. 108:*
[872] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 18, հոդվ. 110:*
[873] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 18, հոդվ. 109:*

թե ինչ հիմնական թեզերով այն պետք է ներկայացվեր: Այդ մասին որոշ մանրամասներ հայտնի դարձան միայն համագումարի նախօրյակին վերջինիս տված հարցազրույցից: Եւ ընդհանրապես ընդունված չէր, որ հանրապետության կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարը որեւէ հաշվետվություն տա, կամ նրա դիրքորոշումն ու ելույթը նախապես քննարկվի կամ գնահատվի Գերագույն խորհրդում: Հակառակը կարող էր լինել: Այժմ, ահա, հանրապետության օրենսդիր իշխանության մարմինն առաջին անգամ լսեց եւ հավանության որոշում կայացրեց Ս. Հարությունյանի այն ելույթի մասին, որը նա պետք է ներկայացներ ԽՄԿԿ ԿԿ-ի 1989թ. սեպտեմբերյան պլենումում[874]: Չի բացառվում, որ դա, ապահովության համար, արդեն անհրաժեշտ էր նաեւ հենց իրեն՝ կենտկոմի առաջին քարտուղարին:

Խորհրդային իշխանության բարձրագույն մարմինը՝ Գերագույն խորհուրդը, հանրապետությունում, հենց Շարժման շնորհիվ եւ նրա ջանքերով, աստիճանաբար տեր էր կանգնում ի սկզբանե հռչակված, Սահմանադրությամբ ամրագրված, բայց երբեք չունեցած իր իշխանությանը:

Շարժումը պահանջում էր չընդհատել արտահերթ նստաշրջանի աշխատանքները, քանի դեռ չէր կարգավորվել իրավիճակը: Սակայն միայն մեկ անգամ՝ հոկտեմբերի 15-ին, հաջողվեց նիստ հրավիրել՝ Ստեփանակերտում հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած ողբերգական փաստերի առիթով: Հոկտեմբերի 21-ին նշանակված հաջորդ նիստը նախագահությունը հետաձգեց՝ նախ՝ հոկտեմբերի 27-ին[875], ապա՝ «ավելի ուշ ժամկետի»[876], ապա՝ նոյեմբերի 30-ին[877]:

Եւ այնուամենայնիվ, սեպտեմբերյան նստաշրջանը, նրա արդյունքները եւ Շարժման գործնական հաջողությունները որոշակի դեր խաղացին տեղից շարժելու մի խնդիր, որը տարվա սկզբում դրվել, սակայն այդ ուղղությամբ գործնական որեւէ քայլ չէր կատարվել: Խոսքը վերաբերում է ԼՂԻՄ-ում հաստատված Հատուկ կառավարման կոմիտեին, որը հաստատվելու պահին ներկայացվեց որպես մարզը անմիջապես Կենտրոնի ենթակայության տակ առնելու, նրա տնտեսական ինտեգրումը նաեւ Հայաստանի հետ ապահովելու միջոց: Իր չորոշակիացված լիազորություններով այս մարմինն ավելի շատ դեկորատիվ նշանակություն ուներ եւ բացի մի քանի ցուցադրական եւ քարոզչական նպատակներ հետապնդող միջոցառումներից,

[874] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 18, հոդվ. 111:*
[875] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 20, հոդվ. 127:*
[876] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 20, հոդվ. 132:*
[877] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 21-22, հոդվ. 136:*

ոչինչ չէր արել: Այդ գործին իր հնարավորությունների շրջանակներում ձեռնարկեց Շարժումը եւ հասնում էր որոշակի արդյունքների: Առաջին մի քանի փաստաթղթերը, որոնք վերաբերում են նույն խնդրի հետ կապված՝ Հատուկ կառավարման կոմիտեի քայլերին, թվագրված են միայն 1989թ. հոկտեմբերի 4-ով: Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկին իր մի գրությամբ տեղեկացնում է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Մարգարյանցին, որ Ստեփանակերտի շինարարական նյութերի կոմբինատը սեպտեմբերի 8-ին որոշում է կայացրել մտնել Հայաստանի «Արթիկտուֆ» կոմբինատի մեջ, իսկ սեպտեմբերի 11-ին վերջինս էլ տվել է իր համաձայնությունը: Վոլսկին խնդրում է քննարկել այդ հարցը[878]: Մեկ այլ գրությամբ նա տեղեկացնում է, որ Հայաստանի հանրապետական սպորտդպրոցը ցանկություն է հայտնել Ստեփանակերտում եւ ԼՂԻՄ շրջաններից մեկում կառուցել մարզական-առողջական երկու համալիր եւ խնդրում է օժանդակել այդ խնդրում[879]: Նույն ամսաթվով մի այլ պաշտոնական գրությամբ նա Հայաստանի կառավարության ղեկավարին հայտնում է, որ Լեռնային Ղարաբաղում մեծ թվով ազատ աշխատուժ կա, եւ խնդրում է ՀԽՍՀ-ի 1990թ. սոցիալ-տնտեսական զարգացման պլանը կազմելիս նկատի ունենալ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասնաճյուղեր ԼՂԻՄ-ում ստեղծելու հարցը: Ընդ որում՝ առաջարկվում է ստեղծել 30 այդօրինակ մասնաճյուղ, ինչպես նաեւ սկսել 8 ենթակառուցվածքային նշանակության օբյեկտների կառուցում, այդ թվում նաեւ Լաչինը շրջանցող ճանապարհ[880]: Այսինքն՝ միայն այն բանից հետո, երբ ԼՂԻՄ-ի եւ Հայաստանի տարբեր հիմնարկների ու ձեռնարկությունների ինտեգրման՝ «ներքեւից» եկող նախաձեռնություններն այլեւս անհնար էր կանխել, նույն խնդրով ստիպված է լինում զբաղվել նաեւ Հատուկ կառավարման կոմիտեն: Սեպտեմբերի 28-ով թվագրված մի գրությամբ էլ ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահության նախագահ Վ. Թովմասյանը մի գրությամբ հայտնում է այն մասին, որ սեպտեմբերի 9-ին ԼՂ Ազգային խորհուրդը քննարկել է Հայաստանում մշտական ներկայացուցչություն ունենալու հարցը եւ խնդրում է ՀԽՍՀ կառավարության նախագահ Վ. Մարգարյանցին՝ համաձայնություն տալ եւ դրականորեն լուծել այդ հարցը[881]: Իսկ Հայաստանի իշխանությունն առայժմ պասիվ դերում էր. նրան դեռեւս խնդրում էին ձեռնարկել այն, ինչի

[878] *ՀՀԱՆԱ, 08/04.10.89 (գրություն հ. 1/362):*
[879] *ՀՀԱՆԱ, 08/04.10.89 (գրություն հ. 1/361):*
[880] *ՀՀԱՆԱ, 08/04.10.89 (գրություն հ. 1/360):*
[881] *ՀՀԱՆԱ, 08/28.09.89:*

շահագրգիռ, նախանձախնդիր կողմը եւ նախաձեռնողն, առաջին հերթին, ինքը պետք է լիներ:

զ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական եւ գաղափարաբանական հարթություններում

Գոյություն ուներ Լեռնային Ղարաբաղի խնդրի երկու՝ քաղաքական եւ գաղափարաբանական ընկալում: Առաջինը Հայկական ժողովրդավարական շարժման ելակետն էր, երկրորդը՝ հայկական պահանջատիրության («հայդատականության»):

Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական հարթության վրա. Այս դեպքում ԼՂԻՄ-ի խնդիրն առանձին, ինքնաբավ, ժողովրդի **ինքնորոշման, մարդու իրավունքների** ապահովման ժողովրդավարական հարց է: Ուստի հարցի նախաձեռնող կողմը, որպես իր ճակատագիրը տնօրինող սուբյեկտ, պետք է լիներ Լեռնային Ղարաբաղն իր բնակչությամբ: Լուծումը կարող էր կապվել իրականանալի այլ խնդիրների հետ, որոնք, իրենց հերթին, կնպաստեին բուն խնդրի լուծմանը: Բայց այն չպետք է կապվեր ուրիշ, հատկապես՝ տեսանելի ապագայում լուծման չտրվող խնդիրների, հետ, ինչպիսին, ասենք, «հողային պահանջատիրությունն» է:

1987 թվականի վերջին եւ 1988-ի սկզբին Լեռնային Ղարաբաղի՝ որպես լուծելի քաղաքական խնդրի հարուցման պայմաններն ապահովված էին, մասնավորապես.

- Բուն Լեռնային Ղարաբաղում առկա էր հարցի լիակատար պաշտպանությունը ոչ միայն հասարակության, այլեւ իշխանության բոլոր մակարդակներում:
- Նախորդ շրջանում կատարված ուսումնասիրությունները (ստորագրահավաքներ եւ այլն) ցույց էին տվել, որ այն նույնպիսի համընդհանուր պաշտպանություն կգտնի նաեւ հայաստանյան հասարակության կողմից:
- «Վերակառուցման» կարգախոսները, մթնոլորտում տեղի ունեցած էական տեղաշարժերը, «ազգային հարցերում» թույլ տրված սխալների ուղղման մասին բարձրագույն իշխանության տված խոստումներն ու որոշ նախաձեռնություններ ցուցաբերելը:
- Լեռնային Ղարաբաղից Մոսկվա մեկնած պատվիրակությունների հետ բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումները որոշակի հույս էին ներշնչել:

- Հարցը հարուցվում էր գործող օրենքների եւ Սահմանադրության շրջանակներում, եւ նման խնդիրների լուծման նախադեպեր եղել էին ԽՍՀՄ պատմության ընթացքում:

Այսինքն, սկզբից եւեթ Լեռնային Ղարաբաղի խնդիրը հարուցվեց **որպես քաղաքական խնդիր** կամ՝ դրվեց քաղաքական հարթության վրա[882]: Այն հանգում էր մարզի հայ բնակչության անվտանգ ու ապահով ապրելու եւ ազատ զարգանալու երաշխիքների ձեռքբերմանը: Ադրբեջանը դա երբեւէ չէր կարողացել ու չէր ուզում ապահովել, եւ նախորդ տասնամյակներում եւս տարբեր նախաձեռնություններով նույն խնդիրը, պարբերաբար, Մոսկվայի առջեւ բարձրացվել էր՝ որպես միջոց համարելով Խորհրդային Միության ներքին վարչական սահմանների փոփոխությամբ մարզը Ադրբեջանի կազմից ՀԽՍՀ-ի կազմ տեղափոխելը: 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզային խորհրդի որոշմամբ դիմում հղվեց երեք իրավասու հասցեներով, նույն խնդրանքով: Թեեւ այս փաստաթղթում չի օգտագործված **ինքնորոշում** բառը, սակայն խոսքն, ըստ էության, այդ իրավունքի իրականացման մասին է (դրան փոխարինող «**ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկությունները**» այլ բան չի նշանակում)՝ նույն պետության ներսում երկու հանրապետությունների միջեւ վարչական սահմանների փոփոխության միջոցով:

Ճիշտ է՝ Շարժման առաջին ամիսներին ձեռագիր ու մեքենագիր վիճակով տարածվող հարյուրավոր թռուցիկների ու «նյութերի» մեջ հաճախ էին բերվում նաեւ պատմական բնույթի հիմնավորումներ, սակայն դրանք, վերջին հաշվով, ոչ այնքան պատմական իրավունքների խնդիր էին բարձրացնում, որքան ժամանակին ստալինյան կամայականությամբ կատարված սխալի ուղղման, նույն ժողովրդի՝ արհեստականորեն բաժանված երկու հատվածների միավորման հարց: Որպես այդպիսին էլ դրանք այլ բան չէին, քան նույն՝ վարչական սահմանների փոփոխության միջոցով ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիմնավորմանն օժանդակող փաստարկներ: Համենայնդեպս, առկա միակ պաշտոնական փաստաթղթում՝ ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման մեջ, պատմական բնույթի հիմքերի մասին ակնարկ անգամ չկա: Հենց որպես ԽՍՀՄ ներքին վարչական սահմանների փոփոխման հարց՝ դրա լուծումն, իրոք, հնարավոր էր, քանզի այդօրինակ նախընթաց

---

[882] *Այսինքն՝ երբ դրա լուծման կամ բարեհաջող հետապնդման համար արդեն առկա էին բավարար պայմաններ: Պատկերացնելու համար ասենք. եթե նույն խնդիրը նույն կերպ հարուցվեր ընդամենը երեք, երկու, նույնիսկ մեկ տարի առաջ, ապա այն դատապարտված կլիներ:*

տասնյակ դեպքեր եղել էին ԽՍՀՄ պատմության ընթացքում[883]: Իսկ Կենտրոնի՝ «Վերակառուցման» շրջանակներում անցյալի սխալները, այդ թվում նաեւ ազգային հարցում թույլ տված սխալներն ուղղելու մասին խոստումները դա դարձնում էին առավել հնարավոր: Այսինքն՝ խնդիրը բարձրացնողները հաշվարկել էին, որ դրա լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները բավարար են, իսկ պահը՝ նպաստավոր, ուստիեւ՝ ցանկության դեպքում Մոսկվան, ունենալով ավելի քան բավարար հիմքեր ու հիմնավորումներ, կարող էր լուծել հարցը: Երբ դա չարվեց, քիչ ավելի ուշ այն պաշտոնապես ավելի հստակ հիմնավորվեց որպես միջազգային իրավունքի եւ ԽՍՀՄ Սահմանադրության՝ ազգերի ինքնորոշման իրավունքը երաշխավորող դրույթից բխող պահանջ՝ պահպանելով խնդրի քաղաքական բնույթը:

Եւ, այնուամենայնիվ, Շարժման առաջին շրջանում խնդրի ընկալման այս տարբերակումը ոչ միայն լայն զանգվածների, այլեւ դրա ղեկավարներից շատերի մոտ տարանջատված ու հստակ չէր: Շարժման առաջին ղեկավարության կորիզը, 2-3 ամիս անց, փակուղային թվացող որոշակի դժվարությունների առջեւ ճեղքեր տվեց: Նրանցից ոմանք համարեցին, թե պետք է բավարարվել խնդիրը Մոսկվայի առջեւ հարուցած լինելու փաստով ու դադարեցնել պայքարը, ուրիշները՝ սկսեցին ավելի շատ ու կտրուկ խոսել պատմական իրավունքների, հայկական պատմական այլ հողերի ու պահանջատիրության մասին: Ոմանք Լեռնային Ղարաբաղի կողքին սկսեցին խոսել նաեւ Նախիջեւանի նկատմամբ Հայաստանի պահանջատիրական իրավունքի մասին, նույնիսկ եղավ երկաթյա ձողերով ու բենզինի շշերով զինվելու ու Նախիջեւանի վրա հարձակվելու կոչ:

Այն ռեսուրսները, որոնք նկատի էին ունեցել խնդրի առաջին բարձրացնողները եւ կազմակերպիչները, առավելագույն չափով դրսեւորվել, սակայն հասել էին միայն կենտրոնական իշխանության կողմից հանձնաժողովների ստեղծման եւ խնդրի քննարկման տարտամ խոստումների: Այսինքն՝ ակնկալված արագ լուծումը չստանալով, խնդիրն ակամա մղվում էր դեպի հայդատական գաղափարախոսության վրա հենվող հողային պահանջատիրության հարթություն՝ ոչ այնքան այդտեղ նոր ռեսուրսներ, որքան պայքարի դադարեցման «հերոսական» հիմքեր գտնելու ակնկալությամբ: Շարժման ղեկավարների մի մասը, հատկապես՝ «ավագ սերունդը», համոզված էր, որ այդքանով պետք է բավարարվել, խնդիրը վստահել

[883] *Վարչական սահմանների այսօրինակ ավելի քան 3 տասնյակ փոփոխությունների ցանկը տե՛ս «Правда о Нагорном Карабахе», Степанакерт, 1989, с. 100-104.*

իշխանություններին, դադարեցնել պայքարը եւ սպասել: Դրանով հարցը կարող էր կորցնել քաղաքական խնդրի իր բնութագիրը, այն է՝ լուծելիության հատկանիշը, ու տապալվել: Նույն կերպ՝ հարցը կարող էր կորցնել իր լուծելիության հատկանիշը եւ տապալվել նաեւ այն դեպքում, եթե այն մեկնաբանվեր որպես հողային պահանջատիրություն՝ լավագույն հիմքը այն ոչ միայն մերժելու, այլեւ դատապարտելու համար:

Շարժման ղեկավարության մեջ կար մի այլ ուղղություն, որը պայքարի այլ ճանապարհ էր տեսնում՝ **խնդիրը քաղաքական հարթության վրա պահելու** եւ պայքարը շարունակելու հեռանկարով: Հենց այդ հիմքի վրա էլ մայիսի վերջին ձեւավորվեց Շարժման նոր ղեկավարություն՝ «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն», որը վերջնականապես հստակեցրեց խնդրի քաղաքական բնութագիրը՝ պահելով դրա ժողովրդավարական ընկալումը ու նախանշելով այն շարունակելու ուղղությունը: Եռամսյա իրադարձությունների քննությունը ցույց էր տվել, որ պայքարի շարունակման համար կարելի է հաշվարկներ անել իրական նոր ռեսուրսների ընդգրկման եւ եղածի ավելացման վրա: Մասնավորապես, ակնհայտ էր դարձել, որ ի դեմս ԽՍՀՄ-ի առաջադեմ մտավորականության եւ գործիչների, արդեն ձեւավորվող ժողովրդավարական ուժերի, նաեւ միջազգային հանրության արդեն ցուցաբերած դրական վերաբերմունքի, կարելի է ձեռք բերել հզոր դաշնակիցներ: Վերջիններիս արձագանքներում **Լեռնային Ղարաբաղի բարձրացրած խնդիրը պաշտպանվում ու խրախուսվում էր այնքանով, որքանով դրված էր եւ ընկալվում էր ժողովրդավարության ու մարդու իրավունքների ապահովման կոնտեքստում**: Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը միայն այս կերպ՝ ժողովրդավարական այլ խնդիրների համալիրի վրա խարսխվելով, կարող էր պահել իր կենսունակությունը եւ լուծելիության հատկանիշը: Ակնհայտ էր դարձել նաեւ, որ, իր հերթին, Կենտրոնի մերժման փաստարկները կաղում էին կամ պարզապես գոյություն չունեին, երբ խնդիրը ներկայացվում էր որպես ժողովրդավարության ու մարդու իրավունքների հարց, ուստիեւ մերժողականությունը հիմնավորելու համար նա ստիպված շրջանցում, նենգափոխում էր խնդրի էությունը՝ մե՛րթ հանգեցնելով սոցիալ-տնտեսականի՝ ինչ-ինչ խոստումներ էր տալիս, մե՛րթ որակում որպես հենց անընդունելի հողային պահանջատիրություն, «սահմանների վերաձեւում», ծայրահեղականություն ու նացիոնալիզմ:

Շարժման բուռն ճնշման տակ 1988-ի հունիսի 15-ին հրավիրված ՀԽՍՀ ԳԽ-ի՝ Լեռնային Ղարաբաղի հարցով ընդունած որոշումը, որպես հիմք, վկայակոչում էր **ազգերի ինքնորոշման իրավունքը** եւ դա արձանագրող

սահմանադրական նորմը: Խնդիրը լուծելիության տիրույթում պահելը, երկրի բարձրագույն իշխանության որոշման տեսքով դա արձանագրելը ապահովեց պայքարի շարունակման հնարավորությունն ու արդյունավետությունը:

Լեռնային Ղարաբաղի խնդիրը գաղափարաբանական հարթության վրա. Այս ընկալումը բխում էր հայ քաղաքական մտքի ավանդական պատկերացումներից եւ հանգում հետեւյալին. Լեռնային Ղարաբաղը պատմականորեն հայկական տարածք է, եւ Հայաստանն այն պահանջելու եւ ստանալու իրավունք ունի, ինչպես որ իրավունք ունի պահանջելու պատմական Հայաստանի մաս կազմած մնացած հողերը: Այս դեպքում խնդիրն անմիջականորեն հանգում էր **հողային պահանջատիրության** գաղափարախոսությանը եւ այդ հարթության վրա ձեւակերպված «ներքին հողային խնդիրներին»: Այս ընկալումը ենթադրում էր, որ հարցը պետք է հարուցվի որպես ընդհանուր հողային պահանջատիրության խնդրի մի մաս, ինչպես նաեւ՝ որ նախաձեռնող եւ ակտիվ կողմը պետք է լինի Հայաստանը:

«Հաշվարկը» կամ «ծրագիրը» այս դեպքում այն էր, որ ԽՍՀՄ-ը մի օր ինչ-որ կերպ Թուրքիայից ետ կբերի պատմական հայկական հողերը, դրանք կմիացնի Հայաստանին: Նույն ԽՍՀՄ- ը պետք է լուծեր նաեւ «Հայ դատ» համակարգի «ներքին հողային խնդիրը» (Վրաստանից եւ Ադրբեջանից), ինչի մի բաղադրիչն էր Լեռնային Ղարաբաղը:

Այս բանաձեւն էր դրված Սփյուռքի կուսակցությունների դավանած գաղափարախոսության ու ծրագրերի հիմքում՝ բարձրացված կրոնական հավատալիքի մակարդակի: Ահա թե ինչու՝ Սփյուռքի կուսակցական մամուլի համար առաջին իսկ օրից մինչեւ վերջ խոսքը «Արցախյան» կամ «Ղարաբաղյան **պահանջատիրության**» մասին էր, խորագիր, որի տակ հարյուրավոր նյութեր տպագրվեցին: Եւ խոսքը միայն ձեւակերպմանը չէր վերաբերում, այլ, առաջին հերթին՝ բովանդակությանը: Մի կողմից՝ այն կապվում էր ընդհանրապես «Հայ դատի» հետ[884], մյուս կողմից՝ տարփողվում էր «պանթուրքիզմի» կամ «համաթուրանական վտանգը»[885]:

---

[884] *Տե՛ս, օրինակ, «Դրոշակ», 01.03.1989, էջ 6. «Հայ դատի վախճանական լուծումը կանցնի Արցախը Հայաստանին վերամիավորելու հայ ժողովրդի մղած պայքարի հաջող արդյունքով նվաճված հանգրվանն: Ահա այդ գիտակցությամբ է, որ պետք է մոտենալ Արցախի պահանջատիրական պայքարին...»:*

[885] *Տե՛ս «Դրոշակ» 04.01.1989, էջ 3. «Հայ ժողովուրդն իրավունք չունի անտեսելու անցած ամիսներուն պարզված համաթուրանական վտանգի նորագույն ապացույցները»:*

Գաղափարաբանական հարթության վրա խնդրի ձեւակերպումը, բնականաբար, շոյում էր մարդկանց ազգային ու հայրենասիրական զգացումները ու դրանով իսկ, ավելի գայթակղիչ էր: Բայց նաեւ, բնականաբար, չուներ որեւէ, անգամ տարածքային հստակություն, ինչպիսի հստակություն որ չուներ «հայ դատն» ընդհանրապես: Թե երբ ԽՍՀՄ-ը կկատարեր հայկական հողերը ետ բերելու իր «պատմական առաքելությունը», եւ արդյո՞ք նա նման խնդիր ուներ իր առջեւ՝ մնում էր անհայտ: Իսկ եթե ինչ-որ պահի նա կկատարեր այդ «առաքելությունը», Լեռնային Ղարաբաղում մնացած կլինե՞ր հայ բնակչություն, թե ոչ (ինչպես որ արդեն չկար Արեւմտյան Հայաստանում եւ Նախիջեւանում)՝ այս դեպքում ոչ մի նշանակություն չուներ:

Քաղաքական եւ գաղափարաբանական մոտեցումների պայքարը. Շարժման պարտադրանքով ընդունված՝ ՀԽՍՀ ԳԽ-ի հունիսի 15-ի որոշումն ամենեւին չէր նշանակում խնդրի քաղաքական ընկալման վերջնական հաղթանակ գաղափարախոսականի նկատմամբ: **Դա ընդամենը նշանակում էր քաղաքական ջրբաժանի հստակեցում, հիմնական պայքարի նոր մեկնակետ եւ Շարժման որակապես նոր ղեկավարություն**:

Առաջին կես տարում հայդատականությունը, որի կազմակերպական կառույցները Սփյուռքում էին, իր հակազդեցությունը Շարժմանն ավելի շատ արտահայտում էր լռությամբ ու անտարբեր ձեւանալով: Այդ ընթացքում, որպես պաշտոնական դիրքորոշում, նա, ինչպես ասվել է, բավարարվեց 1988թ. սեպտեմբերի վերջին արված հրապարակային մի հայտարարությամբ, որը պաշտպանում էր Հայաստանի կոմունիստական իշխանություններին եւ ուղղված էր Շարժման դեմ: Որքան խոսուն ու բնութագրական էր այդ հայտարարության բովանդակությունը, նույնքան խոսուն ու բնութագրական էր երեք հայդատական մրցակից, հաճախ թշնամական հարաբերություններով հայտնի կուսակցությունների՝ նույն փաստաթղթի տակ ստորագրելու ոչ հաճախադեպ փաստը: Դա, նախ եւ առաջ, վկայում էր, որ նրանցից յուրաքանչյուրն առանձին՝ ընդհանուր վտանգի շատ մեծ զգացողություն է ունեցել, ինչը եւ ստիպել է մոռանալ միմյանց նկատմամբ ավանդական հակակրանքը ու միասնական հանդես գալ նոր՝ ընդհանուր վտանգի դեմ:

Ո՞րն էր այդ ընդհանուր վտանգը:

Շարժումը (մայիսի վերջից՝ ավելի հստակ) Լեռնային Ղարաբաղի «ազգային հարցը» չէր դնում հայդատականության գաղափարախոսական կոնտեքստում, չէր դիտում որպես հողային պահանջատիրություն, այլ շարունակում էր հետապնդել որպես այդ ամենից անկախ, ինքնորոշման իրավունքի

իրականացման քաղաքական, լուծելի խնդիր: Ավելին՝ Լեռնային Ղարաբաղի «ազգային խնդիրը» դնում էր ընդհանուր ժողովրդավարական խնդիրների, ընդհուպ անկախության համար պայքարի կոնտեքստում՝ պայմանավորելով դրանց համալիր լուծմամբ: ՀՀՇ առաջին ծրագիրը, որ հրապարակվեց 1988թ. օգոստոսի 19-ին, այս ամենն ամրագրեց հստակորեն: Սա բացահայտ մարտահրավեր էր հայդատականությանը, նրա գաղափարախոսական ու ծրագրային հիմնասյուներին, դրանով իսկ՝ այդ գաղափարախոսությունը դավանող կուսակցությունների գոյապայմաններին: Վտանգը մեծանում էր հատկապես նրանով, որ Շարժումն այդ ճանապարհով նաեւ քայլ առ քայլ աննախադեպ հաջողություններ, դրական առարկայական արդյունքներ էր արձանագրում, մինչդեռ Հայ դատի հարյուրամյա պատմությունն արդյունքների առումով միայն սահմոկեցուցիչ իրողությունների, ծանր ձախողումների եւ անվերադարձ կորուստների տխուր մի շարան էր:

Այսինքն՝ խնդիրն ամենեւին «ազգային կուսակցությունների» պարզ նախանձը չէր, որ իրենք անմասն են այդ ամենին: Պարզապես, այդպես շարունակվելու դեպքում բոլորին ակնհայտ կդառնար, թե «ազգային հարցերը» (ինչպիսին դիտվում էր նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը) լուծելի են ոչ թե ավանդական քաղաքական պատկերացումների, հայդատական գաղափարախոսության եւ առաջարկած մեխանիզմների, այլ բոլորովին ուրիշ՝ ժողովրդավարության հարթության վրա: Դա գլխիվայր կշրջեր կուսակցությունների ավանդական արժեքային համակարգը, կցուցադրեր հայդատականության՝ որպես «ազգային գաղափարախոսության» քաղաքական սնանկությունը, կխարխլեր նրա հիմքերը, կսասանվեր դրա սպասավորների հասարակական դիրքը, համայնքներում ունեցած յուրատեսակ իշխանությունը, կնվազեցներ ազդեցության ոլորտները, լայն իմաստով՝ կենսական տարածքը կամ պայմանները:

Շարժումը, ձեռքի հետ, դատապարտեց սփյուռքյան կուսակցությունների՝ 1988թ սեպտեմբերի 29-ի հայտարարությունը, սակայն, այդ պահին, գտնվելով իր բարձրակետերից մեկում՝ դրա վրա շատ չծանրացավ: Իսկ քիչ անց, երբ «Ղարաբաղ» կոմիտեն բանտարկվեց, շատերին թվաց, թե դրանով ամեն ինչ կավարտվի: Առժամանակ հանգիստ շունչ քաշեցին նաեւ սփյուռքյան կուսակցությունները:

* * *

Լեռնային Ղարաբաղի հարցում Շարժման քաղաքական ուղեգծի դեմ հայդատականության պայքարը նոր թափով վերսկսվեց «Ղարաբաղ»

կոմիտեի ազատվելուց անմիջապես հետո, եւ հաջորդ ընդամենը վեց ամսվա ընթացքում կարելի է արձանագրել հայդատականության լարած երեք որոգայթ՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական հարթությունից հայդատականության գաղափարախոսական հարթություն տեղափոխելուն ուղղված երեք փորձ.

ա) Առաջինը բացահայտ էր ու անսքող, բոլորի համար տեսանելի ու ընկալելի: Շարժման ղեկավարության ազատ արձակումից ընդամենը երեք շաբաթ անց, 1989թ. հունիսի 23-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստում մտավորական նոմենկլատուրայի կամ, այսպես կոչված, «ազգային մտավորականության» ներկայացուցիչ Ջորի Բալայանը ընդարձակ ելույթով փորձեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը հայդատական գաղափարախոսության դաշտ տեղափոխել՝ այն որակել որպես հողային պահանջատիրություն, հիշատակելով թշնամական մահմեդական շրջապատը, «պանթուրքիզմի վտանգը» եւ այլն: Կոմիտեն տեղնուտեղը ամենակտրուկ արձագանքը տվեց ակնհայտ սադրանքին՝ դրա վտանգները ներկայացնելով զուգահեռ ընթացող հանրահավաքում: Իշխանությունը, բազմահազարանոց հանրահավաքի պահանջով ու հուժկու ճնշման տակ, ստիպված եղավ հաջորդ օրն իսկ նույն ամբիոնը տրամադրել «Ղարաբաղ» կոմիտեին, որի անունից Լեւոն Տեր-Պետրոսյանի պատասխան ելույթը վճռական ու բեկումնային նշանակություն ունեցավ Շարժման մասնակիցների ու ընդհանրապես հասարակական պատկերացումների հստակեցման համար: Լարված որոգայթը ճիշտ հակառակ արդյունքը տվեց:

Հայկական ժողովրդավարական շարժման դեմ գործող ուժերի մեջ ներքին դերաբաշխում կար, որը նրանք պահպանեցին ամբողջ ընթացքում, մինչեւ կոմունիստական իշխանության վերջը: Կոմունիստական քարոզչամեքենան պետք է խուսափեր Շարժման գաղափարները վիճարկելուց, քանզի մաշված ու վարկաբեկված կոմունիստական գաղափարախոսության դիրքերից դա անիմաստ էր, ուստի չարձագանքեց Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթին: Դերաբաշխման համաձայն՝ գաղափարական պայքարը Շարժման դեմ պետք է մղվեր հայդատականության (ավանդական «հայրենասիրական» համարվող պատկերացումների) դիրքերից: Լեւոն Տեր-Պետրոսյանի այս ելույթին, եւ Շարժման խնդիրներին ու գաղափարներին՝ ընդհանրապես, անդրադառնալու ու «ջախջախելու» գործը հրապարակավ իր վրա վերցրեց դաշնակցական մամուլը, մասնավորապես՝ ՀՅԴ բյուրոյի պաշտոնաթերթ «Դրոշակը»[886]: Վերջինիս հետագա ամիսների ու տարիների

[886] *«Դրոշակ», 05.07.1989, էջ 18:*

նյութերի կեսից ավելին, ուղղակի կամ միջնորդավորված, այդ նպատակին են ուղղված: Գաղափարական պայքարում սա Շարժման դեմ կազմված հիմնական ճակատն էր:

բ) Ինչպես ասացինք, Հայաստանի կոմունիստական իշխանությունը չէր կարող կոմունիստական գաղափարախոսության դիրքերից պայքարել Շարժման քաղաքական ծրագրի դեմ: Մյուս կողմից, հասկանալի պատճառով, նա չէր կարող դա անել նաեւ հայդատականության դիրքերից՝ շատ լավ հասկանալով հանդերձ, որ դա կարող է լինել «հայրենասիրության» ավանդական պատկերացումների կրող հասարակությանը մոլորեցնելու ամենագործուն միջոցը: Իսկ Սփյուռքում Դաշնակցության մղած պայքարը ցանկալի ազդեցություն չէր թողնում Հայաստանում: Ուստի Հայաստանի կոմկուսը փորձեց ավելի արդյունավետ օգտագործել տեղական ուժերը՝ հասարակական դիրքով իրեն պարտական այն խավը, որը կարող էր ստանձնել Շարժմանը գաղափարական այլընտրանք դառնալու դերը: Դա նոմենկլատուրային մտավորականությունն էր: Հենց նրանց նախաձեռնությամբ էլ իրականացվեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը հայդատականության ու պահանջատիրության գաղափարախոսական հարթություն տեղափոխելու հաջորդ փորձը, որը շատ ավելի մասշտաբային էր, սակայն առավելագույնս քողարկված: Օգոստոսի վերջերին նախաձեռնվեց եւ սեպտեմբերի 9-10-ին կայացավ, այսպես կոչված, «Հայ մտավորականների 1-ին համաժողովը», որի իրական նախաձեռնությունը ՀԿԿ ԿԿ-ինն էր, իսկ կենտրոնական դեմքերը՝ նույն մտավորական նոմենկլատուրայի, «ազգային մտավորականության» ներկայացուցիչները: Ընդունված պաշտոնական փաստաթուղթը Լեռնային Ղարաբաղի հարցը համարում էր Հայ դատի՝ «անցյալ դարի (19-րդ դարի-Ա.Ս.) 70-ական թվականներին միջազգայնացված Հայկական հարցի անբաժան մաս»: «Ղարաբաղ» կոմիտեի հայեցողական ու փոքր-ինչ սառը վերաբերմունքը, սակայն, բավարար եղավ, որպեսզի 2-րդ այսօրինակ համաժողովի անցկացումն անիմաստ համարվի: Գաղափարական պայքարում սա Շարժման դեմ կազմավորված երկրորդ ճակատն էր՝ նույն հայդատականության հիմքի վրա, որը նույնպես որեւէ արդյունք չտվեց:

Լեռնային Ղարաբաղի՝ որպես ինքնորոշման իրավունքի վրա հարուցված խնդրի ամրապնդման ու դրա հայդատական նենգափոխման դեմ ուղղված մի քայլ էր Հայոց համազգային շարժման ճնշման տակ ՀԽՍՀ ԳԽ-ի սեպտեմբերյան նստաշրջանում ընդունված որոշումներում հետեւյալ լրացուցիչ արձանագրումը. «...**ԼՂԻՄ-ի հարցը Հայաստանի հարուցած**

հարցը չէ, այլ բարձրացրել է ԼՂԻՄ-ի ժողովուրդը, եւ այն պետք է դիտել որպես միայն ժողովրդի ինքնորոշման հարց»[887]:

գ) Հայդատական գաղափարների տոտալ քարոզչության շնորհիվ 1989թ. աշնանը, երկարատեւ ու ամենօրյա պայքարի թոհուբոհում, հասարակության պատկերացումներում սկսել էր տարածվել այն մտայնությունը, թե քաղաքական պայքարը Լեռնային Ղարաբաղի համար մտել է փակուղի, եւ միակ քայլն այն է, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, ի հեճուկս խորհրդային գործող օրենքների ու Սահմանադրության, որոշում ընդունի այն Հայաստանի «անբաժանելի մաս» հայտարարելու մասին: Տեղի տալով նույն մտայնությանը կամ չկարողանալով խորանալ քաղաքական նրբությունների մեջ հենց այսպիսի խնդրով էր հոկտեմբերի 26-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդին դիմել նաեւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը: Սա պահանջատիրության վրա հենված մոտեցում էր՝ հստակ կանխատեսելի ընդհանուր տապալման վերջաբանով: Շարժման եւ Հայաստանի ռեսուրսներն ակնհայտորեն անբավարար էին՝ իրավական նման որոշման կենսագործման համար: Արտաքուստ գայթակղիչ, սակայն, մի կողմից՝ ԽՍՀՄ Սահմանադրությանը կոպիտ հակադրվող, մյուս կողմից՝ միջազգային հանրության համար անընդունելի նման քայլից հետո Մոսկվան հիանալի իրավական հիմք կստանար Հայաստանում Շարժման դեմ ամեն տեսակ բռնությունների կիրառման համար, իսկ Շարժման դաշնակիցների՝ ժողովրդավարական շարժումների եւ միջազգային հանրության համար անհնար կլիներ նման քայլը պաշտպանելը: Շարժումը գտավ վիճակից դուրս գալու, հարցը լուծելու քաղաքական ու անվտանգ ճանապարհը[888]:

Այսինքն, 1989թ. ամռանից արդեն վերջնական ու հիմնական դարձավ գաղափարաբանական պայքարի ջրբաժանը, որի մի կողմում Հայոց համազգային շարժումն էր՝ Լեռնային Ղարաբաղի հարցը որպես ինքնորոշման խնդիր ընդհանուր ժողովրդավարական խնդիրների խարսխած իր ծրագրով, մյուս կողմում՝ հայ ավանդական մտածողության ու պատկերացումների վրա

---

[887] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 18, հոդվ. 107: Հակառակ դրան՝ դաշնակցական մամուլը լայնորեն գովերգում էր «հայրենի իշխանությունների», մասնավորապես՝ ՀԿԿ ԿԿ-ի քարտուղար Ս. Հարությունյանի «պահանջատիրությունը» Ղարաբաղի հարցում: Ո՛չ Հայաստանի իշխանությունները, ո՛չ Ս. Հարությունյանը երբեւէ հրապարակավ չդժգոհեցին իրենց վերագրված «պահանջատիրության դիրքերու վրա լինելու» դաշնակցական գովեստներից:*

[888] *Խոսքը վերաբերում է 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշմանը, որը կայացվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստով (տե՛ս ստորեւ):*

հենվող հայդատականությունը՝ նույն խնդիրը հողային պահանջատիրություն համարող իր դիրքորոշմամբ: Նաեւ պարզ էր, որ հայդատականության դիրքերից Շարժման քաղաքական ծրագրերի դեմ որպես առաջին ճակատ Սփյուռքից պայքարելու են ավանդական կուսակցությունները, իսկ Հայաստանում, որպես երկրորդ ճակատ՝ նոմենկլատուրային մտավորականությունը:

Սակայն սա եւս բավարար չէր: Շարժման քաղաքական ծրագրերի դեմ պայքարելու համար կազմավորվեց նաեւ երրորդ ճակատը՝ գաղափարախոսական նույն հայդատական հիմքի վրա օր օրի բազմացող ու բարգավաճող այլազան մանր կազմակերպություններ, որոնք ժամանակ առ ժամանակ տասնյակներով պետք է «միավորվեին» հանուն «ազգային միասնության», եւ բոլորով միասին ՀՀՇ-ի ռեսուրսի 1%-ն անգամ չունենալով՝ նրան մեղադրեին «ազգը պառակտելու», «ազգային խնդիրներից խույս տալու» մեջ: Բնական է, որ այդ երեք ճակատների գաղափարական պայքարը Շարժման դեմ խրախուսվելու, համակարգվելու էր իշխանության կողմից, եւ դա՝ ի հեճուկս Շարժման թելադրանքով իր իսկ ընդունած՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումների:

Պարզ էր նաեւ, որ Շարժման համար ներքին այդ պայքարն ավելի բարդ էր լինելու, քան Հայաստանի կոմունիստական իշխանությունների, Ադրբեջանի եւ Մոսկվայի դեմ պայքարը: Ավելի բարդ էր լինելու, քանզի քաղաքական հարթության վրա խնդիրներն արտաքնապես ավելի զուսպ են ու համեստ, պակաս հնչեղ ու գրավիչ, մինչդեռ գաղափարախոսական հարթության վրա դրանք իրենց առավելապաշտությամբ հնչում են «առավել հայրենասիրական», «առավել հերոսական», «առավել ազգային» եւ դրանով իսկ կարող էին ոգեւորել, գայթակղել ու շեղել հասարակությանը կամ նրա մի մասին: Գաղափարախոսական հարթության վրա խնդիրը հեշտությամբ վերածվում է մտքի շարժ ու տրամաբանություն չպահանջող պարզունակ ու գայթակղիչ մաքսիմալիստական կարգախոսների, որոնք շոյում են բոլորի ինքնասիրությունը, ազգային զգացումները, բավարարում ազգային պատվախնդրությունն ու վրեժխնդրությունը, արտասանողին դարձնում հերոս: Քաղաքական խնդիրը դժվարությամբ է հնչեղ կարգախոսի վերածվում, քանզի այն իր ձեւակերպումից մինչեւ իրականացում հաշվարկի եւ տրամաբանական բազմաքայլ կոմբինացիայի արդյունք է, դրա ըմբռնումը պահանջում է մտքի որոշակի լարում, վերլուծելու ունակություն, ուստիեւ իր մանրամասներով ու յուրահատկություններով ոչ բոլորին է մինչեւ վերջ ընկալելի ու մարսելի:

«Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական բաց համալսարանն անցած Շարժումը կարողացավ չտրվել գայթակղությունների եւ մնալ իրական քաղաքական պայքարի դիրքերում:

է) Հայկական «պահանջատիրությունը»՝ որպես կենտրոնական եւ ադրբեջանական իշխանությունների փաստարկների հիմք

Շարժման շարքային մասնակցի համար, թերեւս, ոչ մի նշանակություն չուներ՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կմիացվի ինքնորոշման իրավունքի ժողովրդավարական սկզբունքի կիրառմա՞ն հիմքով, թե՞ պատմական իրավունքների վկայակոչմամբ՝ Հայաստանի հողային պահանջի: Երկրորդը՝ հենված ծանոթ պատմության ու այդ հիմքի վրա բորբոքված ազգային զգացումների վրա, նույնիսկ շատ ավելի գայթակղիչ էր, քանզի կարող էր պատրանք ստեղծել, թե այդ կերպ հարցը լուծվելու դեպքում դուռ կբացվի նույն հիմունքով հայտ ներկայացնելու նաեւ պատմական հայկական այլ հողերի նկատմամբ: Հայաստանի շարքային քաղաքացու համար սա, անշուշտ, բնական մտածողություն էր, եւ Շարժման դեմ գաղափարական պայքարում շահարկվում էր հենց այս հանգամանքը: Այլ հարց է, թե դրանցից որը կարող էր իրական հիմք դառնալ խնդրի լուծման, եւ որը՝ նրա տապալման համար: Սա արդեն քաղաքական գործչի, քաղաքական ուժի եւ քաղաքական մտածողության խնդիր էր: Շարժման ղեկավարության ծանրությունն ու պատասխանատվությունը ստանձնած «Ղարաբաղ» կոմիտեն պարտավոր էր առաջնորդվել ոչ թե զգացական, այլ քաղաքական, իրատեսական հիմքերով՝ խնդիր ունենալով խուսափել փակուղիներից ու տապալումից, գտնել պայքարի շարունակման եւ նպատակին հասնելու արդյունավետ եւ իրատեսական ճանապարհ:

Շարժման եւ նրա թելադրանքով նաեւ Հայաստանի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումներում եւ ձեւակերպումներում Լեռնային Ղարաբաղի հարցը ներկայանում էր ոչ թե որպես տարածքային պահանջ, այլ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի խնդիր: Ադրբեջանում եւ Մոսկվայում հենց սկզբից շատ արագ կողմնորոշվեցին, եւ առաջին իսկ հակազդեցությունը հենվում էր Շարժմանը հողային պահանջատիրության մեղադրանք ներկայացնելու փաստարկի վրա: Ինքնին հասկանալի է, որ մեղադրանքի ու պիտակավորումների հիմք չէին կարող լինել «նույն ժողովրդի արհեստականորեն բաժանված երկու հատվածների միավորում», «ստալինյան

կամայականություններից մեկի ուղղում», «մարդու իրավունքների ապահովում», «ինքնորոշման լենինյան սկզբունք» դրույթները: Ուստիեւ՝ հաջորդ ամիսներին էլ ադրբեջանական եւ կենտրոնական քարոզչամեքենան Ղարաբաղյան շարժմանը «ծայրահեղականության» ու «նացիոնալիզմի» պիտակները փակցնում, առանցքային մեղադրանքները ձեւակերպում էր նույն՝ «սահմանների վերաձեւման», «հողային պահանջատիրության» հիմքով:

Նույն հիմքի վրա է, որ Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ու նրա նախագահությունը կայացրել էին 1988թ. հունիսի 13-ի եւ 17-ի որոշումները, որոնցում մերժվել էր ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի դիմումը: Նույն՝ հողային պահանջի մեկնաբանությունը դրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի որոշման հիմքում՝ հղելով ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը: Հայաստանը տնտեսական շրջափակման ենթարկելու՝ Ադրբեջանի բացատրություններն ու պաշտոնական վարկածները նույնպես դրա վրա էին հենվում. նա հայտարարում էր, որ դա ոչ թե շրջափակում է, այլ Ժողովրդական ճակատի[889] կողմից կազմակերպված գործադուլների հետեւանք, իսկ գործադուլները տեղի են ունենում ի պատասխան Հայաստանի կողմից Ադրբեջանին ներկայացված «**հողային պահանջների**», Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը խախտելու փորձերի:

Նույն հիմնավորմամբ Ադրբեջանը պատասխանում էր նաեւ հայկական կողմի օրենսդրական եւ այլ գործողություններին՝ այդ առիթով հզորացնելով «ադրբեջանական գործոնը» եւ դրանով մեծացնելով ճնշումը Կենտրոնի վրա: Այսպես, իբր, ադրբեջանական Ժողովրդական ճակատի պահանջով, մի «դաշնագիր» է ստորագրվում Ժողովրդական ճակատի եւ Ադրբեջանի կոմկուսի ղեկավար Վեզիրովի միջեւ: Դրանով, որպես երկաթուղում գործադուլները դադարեցնելու պայման, Վեզիրովը պարտավորվում է պաշտոնապես ճանաչել Ադրբեջանի Ժողովրդական ճակատը, ինչպես նաեւ օրենք ընդունել Ադրբեջանի սուվերենության մասին: Ըստ այդ օրենքի՝ Ադրբեջանն իրեն իրավունք էր վերապահում լուծարել ինքնավար մարզը եւ դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Վերջինը, որ սպառնալիք էր Մոսկվային, կիրականացվեր այն դեպքում՝ «**եթե մեզնից ուզեն պոկել Ադրբեջանի մի մասը**»[890]:

[889] *Ադրբեջանի ժողովրդական ճակատը ստեղծվել էր 1989թ. հուլիսին եւ գրանցվել նույն թվականի աշնանը:*

[890] *Տե՛ս «Ավանգարդ» 25.10.1989:*

Այսպիսով, ինչպես Ադրբեջանի, այնպես էլ կենտրոնական իշխանության ողջ քարոզչության ու գործողությունների հիմնական մեկնակետը Լեռնային Ղարաբաղի խնդրի՝ որպես հողային պահանջատիրություն մեկնաբանությունն էր: Հողային պահանջատիրությունը խոտելի էր ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության համար: Ղարաբաղյան խնդրի պահանջատիրական մեկնաբանությունը դառնում էր նաեւ այն լավագույն հիմքը, ինչի վրա հենվելով՝ Ադրբեջանը հաջողությամբ հզորացնում էր բռնության իր գործոնը եւ արդյունավետ ճնշումները Կենտրոնի վրա: Դա ձեռնտու էր նաեւ Մոսկվային, քանի որ դրանով նա հիմնավոր փաստարկ էր ստանում Ղարաբաղի հարցը մերժելու համար:

Եթե երբեմն միջազգային մամուլում լինում էին Ադրբեջանի օգտին հոդվածներ, ապա դրանց հիմքում, որպես փաստարկ, դարձյալ Ղարաբաղի հարցը որպես Հայաստանի կողմից հողային պահանջատիրություն ներկայացնելն էր: Եւ հետաքրքիր է, որ Հայաստանի իշխանական քարոզչամեքենայի կողմից դրանց պատասխանը տրվում էր՝ կրկնելով Շարժման տեսակետները: Ահա իշխանական պատասխանի այդպիսի մի օրինակ. «Կարդալով արտասահմանյան որոշ պարբերականներ, աչքի է զարնում հետեւյալը. մամուլի այդ օրգանները աշխատում են տպավորություն ստեղծել, թե այն, ինչ այժմ կատարվում է Ադրբեջանում, «հայերի տարածքային պահանջների» հետեւանք է: Թե իբր, Խորհրդային Միության կազմից դուրս գալու պահանջը Ղարաբաղի հարցում Մոսկվայի բռնած դիրքից զայրացած լինելու արտահայտություն է, որովհետեւ Մոսկվան «հակահարված չի տալիս Ադրբեջանի նկատմամբ հայերի տարածքային պահանջին»: Եթե մեկ բառով գնահատելու լինենք նման դատողությունը, ապա պետք է ասենք, որ դա կեղծիք է: Հայերը, առավել եւս Խորհրդային Հայաստանը երբեք տերիտորիալ պահանջներ չեն ներկայացրել: ԼՂԻՄ խնդիրը ոչ թե տարածքային, այլ Ղարաբաղի ժողովրդի ազգային ինքնորոշման խնդիր է»[891]:

Իսկ ընդհանրապես, ներքին լսարանում իշխանությունը խրախուսում էր Ղարաբաղի հարցի պահանջատիրական մեկնաբանությունը, այնքանով, որքանով այն ծառայում էր որպես անկախության գաղափարը մերժելու բանաձեւի հիմք:

Այսպիսով, ստացվում էր, որ Շարժման դեմ գործող գաղափարական ճակատները՝ նոմենկլատուրային մտավորականություն, սփյուռքյան կուսակցություններ, այլազան մանր կազմակերպություններ եւ այլն, որոնք

[891] *Նույն տեղում:*

նույն կերպ Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտարկում էին որպես «Հայ դատի» մաս եւ հայ ժողովրդի պատմական իրավունքի վրա հենված հողային պահանջատիրություն, օբյեկտիվորեն գործում էին հօգուտ Ադրբեջանի եւ ի վնաս Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հնարավորության:

Գիտակցո՞ւմ էին նրանք դա: Ո՞րն էր նրանց քաղաքական խնդիրը:

Այս հարցերի պատասխանն անիմաստ է փնտրել քաղաքական հարթության վրա, քաղաքական մտածելակերպով, Ղարաբաղի խնդրի կամ հայ ժողովրդի շահերի մեկնակետից, արժեքային հայտնի համակարգում: Դրանց պատասխանը կրոնականի վերածված գաղափարաբանական հարթության վրա է՝ որպես ունեցած իշխանությունը, դիրքն ու համարումը պահպանելու միջոց: Կոմունիստների համար գերագույն արժեքն իրենց գաղափարախոսությունն էր, ինչը Հայաստանում նրանց իշխանության անսակարկելիության հիմքն էր ԽՍՀՄ կազմում: Հայդատականության համար գերագույն արժեքն իրենց գաղափարախոսությունն էր, ինչը նրանց ազդեցության, յուրատեսակ իշխանության հիմքն էր հայկական համայնքներում: Թե՛ մեկը, թե՛ մյուսը պատմության ընթացքում ապացուցել էին, որ իրենց իշխանությունն ապահովող «գերագույն արժեքներին» պատրաստ են զոհաբերել ամեն բան՝ թե՛ տարածքներ, թե՛ անկախություն, թե՛ մարդկային կյանքեր: Ընդհանուր ժողովրդավարական խնդիրների հիմքով, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարցով եւ դեպի անկախություն գնացող Համաժողովրդական շարժումը հավասարապես **սպառնում էր թե՛ կոմունիստական, թե՛ հայդատականության քաղաքական հիմքերին, ուստի եւ նրանց գոյությանն ընդհանրապես**: Նրանց կենսական շահերը համընկնում էին մեկ՝ ԽՍՀՄ պահպանման հարցում, ու նրանց անմնացորդ, կենաց-մահու պայքարը Շարժման դեմ բացատրելի է միայն այս հիմքով:

4. ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ա) Նախապատրաստական շրջան եւ միջոցառումներ

Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի՝ Շարժմանը կազմակերպական ավելի հստակ ձեւ տալու առաջին մտահղացումն իր հիմքում, բնականաբար, ունեցել է հեռահար եւ բանական մի մտավախություն: 1988-ի ամռանն արդեն պարզ էր, որ Ղարաբաղի հարցը «մի հարվածով» չի լուծվելու, եւ սպասվում է տեւական, դիրքային պայքար: Այն աննախադեպ ուժը, թափը եւ զանգվածայնությունը, որ ուներ Շարժումն առաջին օրից ի վեր, կարող էր նաեւ այդ ծավալով չպահպանվել եւ աստիճանաբար տեղի տալ: Շատերը պարզապես կարող էին հոգնել կամ հիասթափվել խնդրի լուծման ուշացումից: Կարելի է չկասկածել, որ խորհրդային Կենտրոնը եւս դրա վրա լուրջ հաշվարկներ ուներ իր անընդհատ ձգձգումների մարտավարության մեջ: Եւ դա, ընդհանրապես ասած, շատ ավելի բնական կլիներ. դժվար էր պահպանել համազգային շարժման այդօրինակ թափը, ծավալն ու պայքարի խտությունը ամիսներ շարունակ, երկու-երեք տարի: Այդ դժվարությունը կարելի էր հաղթահարել, եւ հաղթահարվեց Շարժման պոտենցիալը կազմակերպական կառույցի մեջ դնելու միջոցով:

Կար եւս մի հանգամանք. առնվազն Շարժման հիմնական ղեկավարության համար պարզ էր, որ «Միացման» գլխավոր հարցի կողքին օրակարգում ներառվելու են նաեւ այլ, գուցե ոչ նույնքան դյուրընկալելի հարցեր, որոնց Շարժման բոլոր մասնակիցները չէ, որ կարող էին նույն կերպ վերաբերվել: Նկատի չունենք բնապահպանական, լեզվական, սոցիալական անարդարության, կաշառակերության դեմ պայքարի եւ նմանօրինակ այլ խնդիրները, որոնք ի սկզբանե կային: 1988թ. մայիսի վերջին Շարժման նոր ղեկավարությունը ձեւավորվեց այն գիտակցության հիմքով, որ հիմնական՝ Ղարաբաղի խնդրի հետապնդման շարունակականության ապահովման համար պետք է ընդլայնվի քաղաքական օրակարգը ընդհանուր ժողովրդավարական խնդիրներով՝ ներառյալ երկրի քաղաքական եւ տնտեսական

ինքնուրույնության ընդլայնման, ընդհուպ անկախության ձգտման հիմնախնդիր, որն արտաքուստ կարող էր «մրցակից» դիտվել Ղարաբաղի խնդրին: Ավելին՝ այս նոր հիմնախնդիրը ինչ-որ պայմաններում կարող էր նաեւ առաջին պլան մղվել թե՛ լուծելիության ժամկետի, թե՛ կարեւորության առումով: Շարժումը գործող իշխանությունների գոյություն ընդունողի եւ նրանից պահանջողի դերից աստիճանաբար անցում պետք է կատարեր վերջինիս հարկադրողի եւ նրա քաղաքական ընդդիմության, ավելի ուշ՝ այլընտրանքի դերի: Դժվար էր վստահ լինել, թե Ղարաբաղի հարցում արտահայտված նույն, կարելի է ասել՝ բացարձակ, ինքնաբուխ միասնականությունը կպահպանվեր նաեւ «ընդլայնված» օրակարգի դեպքում: Կազմակերպական կառույցով, բնականաբար, ավելի հեշտ կլիներ նմանօրինակ անցում կատարելը կամ այդ անցումն ապահովելը:

Եւ վերջապես՝ Շարժման դեմ գործում էին եւ գործելու էին կազմակերպված կառույցներ ունեցող ուժեր, որոնք փորձում էին հենց Շարժման մեջ ու նրա պոտենցիալից մաս պոկելով՝ համալրել իրենց կառույցները, ստեղծել այլ կազմակերպություններ: Վերջիններս արդեն իսկ կային եւ բազմանալու էին, ավելի արդյունավետ էին գործելու որքան ձգվեր ժամանակը, կամ տեղատվության նշաններ ցույց տար Շարժումը: Կազմակերպված ուժի դեմ հաջող պայքարել հնարավոր էր միայն կազմակերպված կառույցների միջոցով:

Հայոց համազգային շարժման հիմնադիր համագումարը, թերեւս, կարող էր կայանալ 1988-ի ընթացքում (այդպես էլ նախատեսված էր), երբ «Ղարաբաղ» կոմիտեն օգոստոսի 19-ին արդեն հրապարակել էր Հայոց համազգային շարժման ծրագրային փաստաթուղթը, եւ դրա հիման վրա բազմաթիվ հիմնարկներում, ձեռնարկություններում ու բնակավայրերում ստեղծվել էին տեղական կազմակերպություններ: Սակայն, նախ՝ հրապարակված ծրագրային փաստաթղթի քննարկման համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ հատկացնել: Մյուս կողմից՝ միմյանց էին հաջորդում կարեւոր իրադարձություններ, ծագում էին բազմաթիվ օրախնդիր հրատապ հարցեր, որոնցով անմիջապես ստիպված էր զբաղվել «Ղարաբաղ» կոմիտեն: Համագումարին գործնական նախապատրաստվելը եւ անցկացնելն այդ իրավիճակում ֆիզիկապես անհնար էր ու ժամանակի եւ հնարավորությունների առումով շռայլություն կլիներ: Բոլոր դեպքերում՝ 1988-ին դա տեղի չունեցավ: Բացի այդ՝ Շարժման առաջին շաբաթներին, փաստորեն, բոլոր հիմնարկներում, ձեռնարկություններում, բնակավայրերում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեների եւ ենթակոմիտեների ցանցը, փակում էր

Հայաստանի ողջ տարածքը: Ինքնաբուխ ստեղծված այս կառույցները, որոնք Ծրագրի հրապարակումից հետո վերածվեցին ՀՀՇ տեղական կազմակերպությունների, «Ղարաբաղ» կոմիտեն ճանաչում էին որպես բացարձակ հեղինակություն, որպես ղեկավար մարմին: Այսինքն՝ Շարժման կազմակերպական կառույցը, փաստորեն, կար եւ հստակ գործում էր: Ստեղծված փաստական երկիշխանության պայմաններում որպես կազմակերպություն՝ պաշտոնապես ճանաչված չլինելն անգամ քիչ էր խանգարում Շարժման գործունեությանը: Այնքան հզոր էր նրա ուժն ու հեղինակությունը, որ կարողացավ թափուր ընտրատարածքներում ոչ մեծ ջանքերով իր թեկնածուներին պատգամավոր դարձնել եւ սեփական նախաձեռնությամբ իրականացնել նույնիսկ այնպիսի մի աննախադեպ միջոցառում, ինչպիսին Օպերային թատրոնի շենքում Գերագույն խորհրդի նոյեմբերի 24-ի նիստն էր, որն ընդունեց ՀՀՇ-ի կողմից պատրաստված օրինագծերը եւ որոշումները:

1988-ի դեկտեմբերյան երկրաշարժը, որին անմիջապես հաջորդեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությունը, շատ բան փոխեց: Սակայն ՀՀՇ համագումարի հրավիրման ու պաշտոնական ճանաչման հարցը մնաց Շարժման օրակարգում: Այս ուղղությամբ Կոմիտեի փոխարինող կազմը որոշակի ջանքեր գործադրեց, սակայն հաջողության չհասավ: Համագումարի նախապատրաստումը եւ հրավիրումը հնարավոր չէր նաեւ Կոմիտեի անդամների ազատ արձակումից հետո առաջին ամիսներին: Բանտային ծանր պայմաններից հետո նրանք կարիք ունեին եւ՝ ֆիզիկական, եւ՝ հոգեբանական առումով լուրջ կազդուրման եւ վերականգնման, ինչպես նաեւ ծանոթանալու եւ տիրապետելու նոր իրավիճակին: Եւ այնուամենայնիվ, 1989թ. ամռանից սկսած՝ ձեռնարկվեցին եւ իրականացվեցին համագումարի մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Կարեւորագույն քայլը 1989թ. հունիսի 25-ին Գերագույն խորհրդի կողմից ՀՀՇ-ի պաշտոնական ճանաչման հասնելն էր[892]: Իսկ մինչ այդ՝ հունիսի 17-ին, կայացել էր ՀՀՇ հիմնադիր ժողովը շուրջ 1000 պատվիրակների մասնակցությամբ: Այստեղ ընտրված կազմկոմիտեին հանձնարարվել էր նախապատրաստել կազմակերպության հիմնադիր համագումարը: Վերջինս ձեռնարկեց Շարժման Ծրագրի վերամշակումը՝ նկատի ունենալով դրանում արձանագրված խնդիրներից մի մասի լուծված լինելը, իրավիճակում կատարված որակական փոփոխությունները: Նոյեմբերի 1-ին, հիմնադիր համագումարի

---

[892] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 12, հոդվ. 71:*

նախօրյակին, ՀԽՍՀ ԳԽ նախագահությունը վերջապես կատարեց ԳԽ-ի հունիսի 25-ի որոշումը եւ գրանցեց ՀՀՇ կանոնադրությունը[893]:

Եւ այնուամենայնիվ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հետագայում պետք է խոստովանեին, որ այլ հարցերով զբաղվածության պատճառով համագումարին չկարողացան պատշաճ կերպով նախապատրաստվել[894]: Հայաստանի սահմանամերձ շրջաններում լարված, փաստորեն՝ կիսապատերազմական վիճակ էր: Փախստականների հսկայական զանգված էր տեղափոխվել Հայաստան, եւ շարունակվում էր հոսքը, որի հետ կապված՝ ամենօրյա եւ ամենաբազմաբնույթ պրոբլեմներ էին առաջանում: Իսկ ամենամեծ հարցը մնում էր իրավիճակը Ղարաբաղում: Ինչպես այնտեղ, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում, նաեւ Ադրբեջանում, դեռ սեպտեմբերին բնակչությանը բաժանվել էին մինչ այդ առգրավված որսորդական հրացանները, վերադարձվել էր նաեւ համապատասխան հիմնարկների ուսումնական զենքը: Եւ հենց սեպտեմբերից սկսած, նախորդ ամիսների համեմատաբար հանդարտ շրջանից հետո, նորից ակտիվացել էին զանազան բախումներն ու սադրանքները: «Ղարաբաղ» կոմիտեն Շարժման գործիչներից ստեղծած իր հանձնախմբերով ստիպված էր զբաղվել բոլոր հարցերով, որովհետեւ բոլորն այստեղ էին դիմում: Մասնավորապես՝ Ղարաբաղին ամենաբազմատեսակ օգնություն եւ օժանդակություն էր անհրաժեշտ ապահովել՝ սկսած յուրաքանչյուր բնակավայրի մանր, կենցաղային խնդիրներից, մինչեւ քաղաքական, պաշտպանական, տնտեսական հարցերը: Կոմիտեի որեւէ միջոցառում, ձեռնարկ, որ դուրս էր (կամ թվում էր, թե դուրս է) Ղարաբաղի հետ կապված հարցերից, նրա «ընդդիմության» կողմից իսկույն շահարկվում էր որպես Ղարաբաղը «մոռանալու», «այլ նպատակներ» ունենալու մեղադրանք: Այս ուղղությամբ համակարգված եւ մեթոդիկ աշխատում էին այն ուժերը, որոնք, համագումարի մոտենալուն զուգահեռ, ջանքեր էին գործադրում, թշնամական մթնոլորտ ստեղծելու համար[895]:

Նախապատրաստությունների շրջանում մամուլում հաջողվեց հրապարակել նաեւ «Հայոց համազգային շարժման» ծրագիրը (նախագիծը)[896]:

---

[893] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 21-22, հոդվ. 138:*

[894] *Համագումարից հետո նման կարծիք հայտնեց Վանո Սիրադեղյանը («Հայք», 25.03.1990):*

[895] *Տե՛ս «Հայք», 25.03.1990:*

[896] *«Երեկոյան Երեւան», 17.10.1989:*

բ) ՀՀՇ համագումարի քաղաքական իմաստը: Համագումարը վիժեցնելու ջանքերը, հայկական «ինտերֆրոնտ»

Դժվար է ասել՝ «Ղարաբաղ» կոմիտեն եւ Շարժման մյուս ղեկավարնե՞րն էին ավելի շատ ջանք ու եռանդ ներդրել համագումարը նախապատրաստելու եւ հաջողությամբ անցկացնելու գործում, թե՞ այն տապալելու նպատակ ու խնդիր ունեցող ուժերն ու կազմակերպությունները: Առաջինները, համենայնդեպս, նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ՝ ստիպված էին ավելի շատ զբաղվել ամենօրյա շտապ կարգավորում պահանջող հարցերով: Հակառակ կողմը, նման խնդիրներ չունենալով, ամբողջությամբ կարող էր նվիրվել սպասվող համագումարը տապալելու գործին:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ կողմի համար հստակ էր, որ հաջող ընթացքի դեպքում համագումարն ունենալու էր հետեւյալ քաղաքական արդյունքները.

ա) ՀՀՇ-ն դառնալու էր ոչ թե մյուս կազմակերպությունների համար ձեւական հովանոց (ինչպիսի նպատակ այն երբեք իր առջեւ չէր դրել, եւ ինչը «հանուն ազգային միասնության» նրան վերագրում ու նրանից պահանջում էին նրա գաղափարական հակառակորդները), այլ որոշակի ծրագրով, տարբերակիչ հատկանիշներով եւ հստակ կառույցներով օժտված ինքնատիպ եւ հզոր քաղաքական միավոր:

բ) «Ղարաբաղ» կոմիտեն եւ Շարժման ղեկավարների երկրորդ դասը դառնալու էին այդ ուժի ղեկավար մարմինը, եւ Շարժման ողջ ներուժը, այժմ՝ ավելի արդյունավետ, ուղղվելու էր հաստատված ծրագրային նպատակների իրականացմանը:

գ) ՀՀՇ-ն ձգտելու էր վերցնել իշխանությունը (ինչի համար նրա ուժերը լրիվ բավարար էին) եւ իրականացնելու ժողովրդավարության խորացման միջոցով դեպի անկախություն տանող ծրագրով նախանշված հստակ քայլերը:

դ) Միշտ օրինականության շրջանակներում պայքարելու իր սկզբունքով նա լինելու էր դժվար խոցելի, իսկ անկախության տանող ճանապարհին նրա հաջողությունները, ի հեճուկս Կենտրոնի, շարունակելու էին վտանգավոր օրինակ ծառայել մյուս հանրապետությունների համար:

Եւ այս ամենը դեպքերի ընթացքին ուշադիր հետեւողների համար (իսկ ուշադիր հետեւողներ կային եւ՝ ի պաշտոնե, եւ՝ սեփական շահերից ելնելով) պարզ էր արդեն համագումարից մի քանի ամիս առաջ: Ըստ այդմ՝ դժվար չէ ենթադրել, թե ինչ ուժեր եւ ինչ հիմքի վրա պետք է ամեն ինչ անեին

համագումարը տապալելու համար, որ (դարձյալ դժվար չէ նկատել) միայն համագումարի տապալում չէր նշանակի: Դա կնշանակեր տապալումը մի մեկնարկի, որն ավելի մեծ սպառնալիք էր դառնում՝

ա) Կենտրոնին, կայսերապետական ուժերին, խորհրդային համակարգին.

բ) Հայաստանում իշխող Կոմունիստական կուսակցությանը եւ ողջ կոմունիստական նոմենկլատուրային.

գ) այն ուժերին, որոնք համոզված էին ազգը ներկայացնելու եւ նրա խնդիրները տնօրինելու իրենց մենաշնորհի մեջ (Սփյուռքում գործող կուսակցություններ), եւ որոնց ծրագրերը կառուցված էին Հայաստանի՝ ԽՍՀՄ-ի մեջ մնալու պարտադիր պայմանի վրա.

դ) հասարակության այն շերտին, որը կոմունիստական իշխանության պայմաններում այս կամ այն կերպ հայտնվել էր արտոնյալ կամ էլիտար խավի մեջ եւ օգտվում էր որոշակի արտոնություններից.

ե) խորհրդային հասարակարգում ձեւավորված եւ իշխանության ու պաշտոնեության հետ անմիջական կամ միջնորդավորված կապի մեջ գտնվող քաղքենիական խավին, որի անդորրը խաթարվելու էր:

Համագումարի տապալմամբ շահագրգռված ուժը, ինչպես տեսնում ենք, փոքր չէր, մանավանդ՝ եթե նկատի ունենանք, որ նրա ձեռքին էին իշխանության բոլոր լծակները, զանգվածային լրատվության միջոցները եւ այլն: Ու նաեւ՝ Շարժումը, որքան էլ հզոր ու զանգվածային՝ կազմակերպական իմաստով բաց էր ամբողջությամբ, այնտեղ ազատ կարելի էր մտնել ու գործել թե՛ բացահայտ, թե՛ քողարկված «ավելի ազգային»՝ ժողովրդահաճ անունների, կարգախոսների ու ծրագրերի տակ: Այսինքն՝ նրանց բոլորի պայքարը չէ, որ Շարժման դեմ լինելու էր բացահայտ ու ճակատային:

Խորհրդային Միության մյուս բոլոր այն հանրապետություններում, որտեղ անկախության հարց էր հարուցվում, դրա հետ մեկտեղ եւ դրա դեմ ստեղծվում էին հայտնի «ինտերֆրոնտները»: Վերջիններս ստեղծվում էին տվյալ հանրապետություններում առկա ռուսալեզու բնակչության հիմքի վրա, հասկանալի է՝ Կենտրոնի կամ ՊԱԿ-ի նախաձեռնությամբ: Հայաստանում էթնիկական այդ հիմքը չկար (ռուս բնակչության տոկոսը չափազանց փոքր էր), բայց կար նույն գործառույթով «ինտերֆրոնտ» ստեղծելու նույնքան սուր անհրաժեշտություն: Հայկական «ինտերֆրոնտը», բնականաբար, պետք է ձեւավորվեր այլ՝ ոչ էթնիկական հիմքի վրա: Դարձյալ բնականաբար՝ նրա պայքարը անկախության դեմ չէր կարող նույնքան եւ նույն կերպ բացահայտ եւ ուղղագիծ լինել, ինչպես, ասենք՝ Մերձբալթյան

հանրապետություններում: Այն պետք է էական յուրահատկություն ունենար թե՛ գործունեության ձեւի, թե՛ փաստարկների առումով:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամներից Վանո Սիրադեղյանը վկայում է. «Համագումարի ընթացքն ու ավարտը դեռ հայտնի չէին, համագումարը տապալելու կամպանիան արդեն սկսվել էր կազմակերպությունների ձեռքով»[897]: Խոսքն այն կազմակերպությունների մասին է, որոնք կա՛մ ստեղծվել էին հակաանկախական ուժերի կողմից, կա՛մ ծառայում էին նրանց, եւ, օգտվելով ՀՀՇ անդամ դառնալու անարգել ու բացարձակ հնարավորությունից՝ իրենց հայտարարել էին նրա կոլեկտիվ անդամ եւ պատվիրակներ ուղարկել համագումար:

Հայկական «ինտերֆրոնտի» խնդիրը պետք է լիներ ոչ թե տրամագծորեն հակադրվել Շարժմանը (ինչը նրանց համար կնշանակեր արագ ձախողում), այլ կա՛մ պառակտել այն, կա՛մ փորձել գլխավորել եւ տանել իրեն ցանկալի ուղղությամբ: Այսինքն՝ գեթ համագումարում այս ուժի բերած փաստարկներն ու կարգախոսները պետք է բխեին նույն «ազգային խնդիրների» ավանդական ընկալումներից եւ մատուցվեին որպես ազգի լավագույն ապագայի համար մտահոգություն: Քննարկվող հիմնադիր փաստաթուղթն, օրինակ, նրանց կողմից պետք է քննադատվեր ոչ թե անմիջապես հակաանկախականության դիրքերից, այլ, ըստ քաղաքական մտքի ավանդույթով եկած պատկերացումների, պետք է մեղադրեին, որ այն չի նպաստում «ազգային միասնությանը», չի հենվում «ազգային գաղափարախոսության» վրա, անտեսում է «պանթուրքիզմի վտանգը», զանց է առնում ազգային վրեժխնդրության դերը, բավարար չափով «ազգային» չէ եւ այլն: Վերջին հաշվով, այդ պայքարը հենվում էր նույն հայդատական, պահանջատիրական գաղափարախոսական ֆրազների՝ «համազգային խնդիրների» եւ անկախության քաղաքական խնդրի միջեւ հակադրություն տեսնելու դեմագոգիայի վրա: Առաջինը համարվում էր գերագույն արժեք, երկրորդը կարող էր լինել միայն նրա սպասարկուն:

ՀՀՇ հիմնադիր համագումարն իրականում դարձավ այն փորձաքարը, որի շնորհիվ ավելի հստակ ուրվագծվեցին քողարկված հայկական «ինտերֆրոնտն» ու նրա բաղկացուցիչները: Դա արտահայտվեց ոչ միայն համագումարից առաջ եւ նրա ընթացքում, այլ նաեւ դրանից հետո նրանց վերաբերմունքում, գնահատականներում ու գործողություններում:

---

[897] *«Հայք», 25.03.1990:*

գ) Համագումարի պատվիրակները

Հայոց համազգային շարժման հիմնադիր համագումարը մեծ հնչեղություն ունեցող կարեւորագույն միջոցառում էր քաղաքական կյանքում: Համագումարին ՀՀՇ-ն միայն շրջանային տարածքային կառույցներով չէր ներկայանում: Համագումարին պատվիրակներ էին ուղարկել նաեւ Շարժման՝ տարբեր ձեռնարկությունների, հիմնարկների ՀՀՇ կազմակերպությունները (որոնց մի մասը շրջանային կառույցների կարգավիճակ ունեին) այդ թվում՝ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը, ԳԱ համակարգի գիտահետազոտական ինստիտուտները, Բյուրականի աստղադիտարանը, Մատենադարանը, Գրողների միությունը, Կինեմատոգրաֆիստների եւ մյուս ստեղծագործական միությունները, Երեւանի պետական համալսարանը եւ մյուս բուհերը՝ հաճախ նաեւ առանձին ֆակուլտետների մակարդակով, գրանցված ու չգրանցված տասնյակ հասարակական կազմակերպություններ:

Հայոց համազգային շարժման՝ 1988թ. օգոստոսին հրապարակված ծրագրային փաստաթղթի «Կազմակերպական ձեւերը» բաժնում նախատեսված էին կազմակերպության կառուցվածքը եւ անդամության ձեւերը: Կազմակերպությանը կարելի էր անդամակցել միայն որպես կոլեկտիվ անդամ: Յուրաքանչյուր հիմնարկ կամ ձեռնարկություն աշխատակիցների ժողովում պետք է քննարկեր առաջարկված ծրագիրը, եւ այն ընդունողներն իրենց հայտարարեին ՀՀՇ կոլեկտիվ անդամ ու տեղյակ պահեին «Ղարաբաղ» կոմիտեի (որն այս դեպքում հանդես էր գալիս որպես նախաձեռնող խումբ) ներկայացուցչին: Կոլեկտիվ անդամներն, իրենց հերթին, կարող էին միավորվել միությունների մեջ՝ տարածքային կամ ճյուղային սկզբունքով: ՀՀՇ կոլեկտիվ անդամ դառնալու հայտ կարող էին ներկայացնել նաեւ արդեն գոյություն ունեցող կամ նոր ստեղծվող հասարակական եւ ոչ պաշտոնական կազմակերպությունները: Որեւէ մեկի հայտը մերժելու հիմք կամ մեխանիզմ չէր էլ նախատեսված: Անհատները կարող էին անդամագրվել միայն կոլեկտիվ անդամ հանդիսացող կազմակերպությունների միջոցով: Նույնը կարելի էր անել նաեւ Հայաստանից դուրս՝ հայաբնակ վայրերում: Որեւէ սահմանափակում կամ չափանիշ, որը անհրաժեշտ էր բավարարել (բացի ՀՀՇ Ծրագիրն ընդունելու մասին հայտարարությունից), ըստ էության՝ չկար: Ընդ որում՝ որեւէ անհատ կամ կազմակերպություն ազատ էր ինքը որոշելու իր գործունեությունը, իր մասնակցության ձեւն ու չափը: Այսինքն՝ տեսականորեն ամբողջ ժողովուրդը, եւ ոչ միայն Հայաստանում,

այլեւ Հայաստանից դուրս ապրող հայությունը, կարող էր իրեն հայտարարել մի կազմակերպության անդամ, եւ ՀՀՇ-ն կարող էր նույնանալ հայ ազգի հետ: Սա, անշուշտ, ծայրահեղություն էր, որպես այդպիսին վտանգավոր՝ ձախողելու համար որեւէ կազմակերպության ստեղծման ամեն մի գաղափար եւ ձեռնարկում[898]:

Բնական է, որ Շարժման եւ նրա հիմնական քաղաքական նպատակների դեմ աշխատող ուժերը պետք է ամեն կերպ աշխատեին օգտագործել այս հիանալի հնարավորությունը: Ընդ որում՝ նրանք կարող էին հանդես գալ եւ՝ «ավելի հայրենասիրական», եւ՝ «ավելի ազգային», ե՛ւ ավելի արմատական կարգախոսներով ու կոչերով, կարող էին լինել միաժամանակ ե՛ւ ՀՀՇ-ի ե՛ւ կոմկուսի ե՛ւ ցանկացած այլ կազմակերպության անդամ, նույնիսկ ՊԱԿ-ի աշխատակից եւ այլն: Շարժման ղեկավարման նախաձեռնությունը խլելու սեպտեմբերյան անհաջող փորձից հետո («մտավորականների համաժողով») այս հիմքի վրա առկա էր նույն փորձը հենց ՀՀՇ համագումարում նորից կրկնելու հնարավորություն: Կարող էր հավաքվել պատվիրակների այնպիսի կազմ, որը մեծամասնությամբ մերժեր հիմնական փաստաթղթերի ընդունումը: Արդեն իսկ շրջանային կոնֆերանսներում պատվիրակների ընտրության ժամանակ այդ վտանգն ակնհայտ էր: Դեռ մի կողմ թողած Շարժման ծպտված, չբացահայտված հակառակորդներին, նույնիսկ գործող կոմունիստ պաշտոնյաները դառնում էին համագումարի պատվիրակ: Շատերին համակած նույն՝ «ազգային միասնության» չլքող պատրանքը պայմանավորում էր, որպեսզի ըստ «անձնական ավանդի»՝ համագումարի պատվիրակներ ընտրվեն կոմունիստական շրջկոմների եւ գործկոմների ղեկավար աշխատողներ, որոնք նույն Շարժման ճնշման տակ երբեւէ «մի քանի պարկ ալյուր էին ուղարկել Ղարաբաղ» եւ դա այժմ ներկայացնում էին որպես հզոր փաստարկ: Մինչդեռ Շարժման իրական ավանդ ունեցող

---

[898] *Իրավացի էր Ղարաբաղ կոմիտեի անդամ Վանո Սիրադեղյանը, որ դա ժամանակին եղել է տուրք «ազգային միասնության պատրանքով տառապող զանգվածների պահանջին» (տե՛ս «Հայք», 25.03.1990:): Սակայն 1988-ի ամռանը, երբ դեռ հասարակական պատկերացումներում մինչեւ վերջ չէին սպառվել Լեռնային Ղարաբաղի խնդիրը ԽՍՀՄ պայմաններում ու նրա միջոցով լուծելու հնարավորությունները, այս հանգամանքն էական վտանգ չէր ներկայացնում, ավելին՝ ապահովում էր Շարժման զանգվածայնությունը եւ ուժը: Մեկ տարի անց, երբ հիմնական հարցի լուծման այդ հնարավորությունը, ըստ էության, սպառվել էր, իսկ ներքաղաքական իրավիճակը՝ որակական փոփոխություններ կրել, «ազգային միասնության պատրանքը» իրոք դարձել էր հաջորդ քայլերի հիմնական խոչընդոտը:*

մասնակիցների զգալի մի մասը զրկվեց համագումարի մանդատից[899]: Պատվիրակների ձեւավորված կազմը հուշում էր, որ համագումարում կարող են նաեւ տհաճ անակնկալներ լինել: Օրինակ՝ կարող էր ձախողվել Ծրագրի եւ Կանոնադրության ընդունումը, կամ՝ ՀՀՇ ղեկավար մարմնում մեծամասնություն կարող էին կազմել նրանք, ովքեր իրականում դեմ էին Շարժման հռչակած հիմնական սկզբունքներին եւ նպատակներին:

Առաջին անգամն էր, որ Շարժումն իր կարեւոր միջոցառումն անց էր կացնում «չորս պատերի մեջ», որտեղ, բնականաբար, տեղը սահմանափակ պետք է լիներ: Լուրջ խնդիր առաջացավ նաեւ հրավիրվածների հարցում: Դահլիճում հրավիրվածների համար նախատեսված ֆիզիկապես հնարավոր 300 տեղի պայմաններում ներկայացված էր հրավիրատոմս ստանալու մոտ 10000 հայտ: Եւ առաջին անգամ բոլոր արժանիները, առավել եւս՝ ցանկացողները, չէին կարողանալու մասնակցել երկար սպասված կարեւոր այդ միջոցառմանը:

դ) Համագումարի ընթացքը եւ ընդունած որոշումները

Հայոց համազգային շարժման առաջին համագումարը, որին մասնակցում էր 1400 պատվիրակ, աշխատանքները սկսեց նոյեմբերի 4-ին Ստ. Շահումյանի անունը կոչվող պալատում (հետագայում՝ Ամերիկյան համալսարանի շենք): Նույն օրը հրատարակվեց եւ բաժանվեց Շարժման «Հայք» թերթի առաջին համարը[900]՝ պարունակելով նաեւ կազմակերպության Ծրագրի եւ կանոնադրության վերամշակված նախագիծը[901], որը պետք է քննարկվեր ու հաստատվեր համագումարում:

Համագումարին մասնակցելու պաշտոնական հրավեր էին ստացել խորհրդային հանրապետությունների, Մոսկվայի եւ Լենինգրադի ժողովրդական ճակատները, ժողովրդավար հայտնի գործիչներ, ներքին եւ արտաքին Սփյուռքի մշակութային եւ բարեգործական կազմակերպություններ, հայ համայնքներ, կուսակցությունները եւ այլն: Հետաքրքրությունը, ինչպես եւ սպասվում էր, չափազանց մեծ էր Խորհրդային Միության մեջ փաստորեն

899 *Տե՛ս «Հայք», 25.03.1990: Ընդ որում երբեմն Շարժման իրական մասնակիցներ ու գործիչներ համագումարի պատվիրակների մանդատները իշխանության ներկայացուցիչներին զիջելը համարում էին իրենց կողմից մեծահոգության եւ ինքնազոհողության դրսեւորում հանուն նույն «ազգային միասնության» ապահովման:*

900 *«Հայքը» պաշտոնապես գրանցվեց ավելի ուշ:*

901 *Տե՛ս «Հայք», հ. 1, 04.11.1989:*

առաջին, ամենահուժկու, ամենազանգվածային, ամենակազմակերպված, ամենահեղինակավոր ժողովրդավարական շարժման առաջին համագումարի նկատմամբ, եւ շատերն էին եկել դրան մասնակցելու:

ՀՀՇ համագումարին հրավիրված էր նաեւ հանրապետության ղեկավարությունը: Համագումարը ողջունեց Հայաստանի կոմկուսի ղեկավար Սուրեն Հարությունյանը: Վերջինիս մտահոգությունը ոչ թե իր ունեցած հեղինակությունը եւ համարումը պահելն էր. դրանք 88-ին եւ, մասնավորապես, 89-ի առաջին կեսին Շարժման դեմ բացահայտ պայքարում վաղուց հատել էին բացասականի սահմանագիծը: Նա պարզապես ստիպվա՛ծ էր ընդունել հրավերը՝ չբազմապատկելու համար իր նկատմամբ հասարակական դժգոհությունը: Ավելին՝ համագումարի պահանջով դահլիճ ներկայացավ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը՝ մանրակրկիտ հաշվետվություն տալու երկրի ներքին իրավիճակի եւ կառավարության աշխատանքների մասին, իսկ ապա համբերատար պատասխանեց պատվիրակների կոշտ հարցադրումներին: Կառավարության ղեկավարն այդ բանն անում էր միայն իշխող Կոմունիստական կուսակցության համագումարներում: Այս ամենը Հայոց համազգային շարժման կարեւորագույն այս միջոցառման քաղաքական կշռի մասին վկայող փաստեր էին:

Համագումարը ողջունեցին Լատվիայի, Հունգարիայի, Ֆրանսիայի, Լենինգրադի ներկայացուցիչները՝ արժեւորելով Հայկական ժողովրդավարական շարժումն ու նրա քաղաքական կառույցի գործունեությունը:

Եղան նաեւ մեղադրական ելույթներ, որոնց որակի ու մակարդակի մասին պատկերացում է տալիս այնպիսի մի մեղադրանք, ինչպես, օրինակ այն, որ «Ղարաբաղ» կոմիտեն Շարժումը «հրապարակներից տեղափոխեց պալատներ»:

Համագումարը երեք հարց ուներ լուծելու. Ծրագրի եւ Կանոնադրության ընդունում, ղեկավար մարմնի ընտրություն, բանաձեւերի ընդունում:

Հիմնական ելույթը Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լեւոն Տեր-Պետրոսյանինն էր, որում վերլուծվում էր հայկական ժողովրդավարական շարժման անցած ուղին, ԽՍՀՄ ժողովրդավարական շարժումների եւ գործընթացների ետնախորքում գնահատում նրա տեղը եւ ամփոփում ձեռք բերված արդյունքները[902]:

902 *Այն տպագրեց «Երեկոյան Երեւանը» (14.11.1989), սակայն ոչ որպես համագումարում հնչած ելույթ, այլ որպես հոդված: Այս հանգամանքն է պատճառը, որ վերջին նախադասությունը՝ «Հայոց համազգային շարժման, համայն հայության խնդիրն է ամրապնդել եւ ավելի եւս խորացնել նվաճված բնագծերը՝ հետեւողականորեն*

Շարժման առաջին համագումարի օրակարգը խնդիրների շատ լայն շրջանակ էր ընդգրկում: Ուստիեւ լիագումար նիստից հետո այն իր աշխատանքները շարունակեց մեկ տասնյակից ավելի հանձնախմբերում՝ Արցախի, աղետի գոտու, մարդու իրավունքների պաշտպանության, ներքին եւ արտաքին սփյուռքի հետ կապերի ամրապնդման, լեզվի եւ ազգային դպրոցի զարգացման, տնտեսական եւ հողային ռեֆորմի իրականացման, փախստականների տեղավորման, գոյապահպանության, սահմանադրական եւ ընտրական իրավունքի, ազգային-ազատագրական եւ ժողովրդական շարժումների, հավատի եւ բարեգործության[903]: Հանձնաժողովների աշխատանքների արդյունքում ստեղծվեցին համապատասխան բանաձեւեր, որոնք եւ ընդունվեցին համագումարում:

Հիմնական հարցն, իհարկե, Ծրագրի եւ Կանոնադրության քննարկման եւ ընդունման խնդիրն էր, որի շուրջ էլ ծավալվեց բանավեճը, ապա համագումարը հանձնարարեց առաջարկները գրավոր ներկայացնել խմբագրական հանձնաժողովի քննարկմանը: Առաջարկների հոսքը խմբագրական հանձնաժողով մինչեւ ուշ գիշեր չէր դադարում: Դրանց տարօրինակորեն մեծ քանակությունը սկսեց հանձնաժողովի անդամների տարակուսանքը հարուցել: Որքան էլ հասկանալի լիներ պատվիրակների շահագրգիռ ակտիվությունը, այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ դա մեծ մասամբ կազմակերպված էր՝ փաստաթղթի ընդունումը ձախողելու միտումով:

Ընտրվեց ղեկավար մարմին՝ Հայոց համազգային շարժման վարչություն: Առաջին վարչությունն ուներ հետեւյալ կազմը. Երջանիկ Աբգարյան, Վիտյա Այվազյան, Լեւոն Անանիկյան, Բաբկեն Արարքցյան, Հրանտ Բագրատյան, Ալբերտ Բաղդասարյան, Աշոտ Բլեյան, Համբարձում Գալստյան, Սամվել Գեւորգյան, Վարդան Ջուռնաչյան, Ավետիք Իշխանյան, Ռաֆայել Իշխանյան, Տեր-Հուսիկ Լազարյան, Ալեքսան Հակոբյան, Սմբատ Հակոբյան, Հենրիկ Հովհաննիսյան, Արամ Հովհաննիսյան, Ռաֆայել Ղազարյան, Սամսոն Ղազարյան, Արամ Մայիլյան, Վազգեն Մանուկյան, Աշոտ Մանուչարյան, Յուրի Մովսիսյան, Այդին Մորիկյան, Ռաֆայել Պապայան, Շահեն Պետրոսյան, Արշակ Սադոյան, Վազգեն Սարգսյան, Կտրիճ Սարդարյան,

կենսագործելով այն ծրագիրը, որի քննարկմանն է նվիրված սույն համագումարը» միտքը հրապարակված տարբերակում մասնակի փոփոխության է ենթարկվել, ինչի հետեւանքով թվում է, թե այն գրվել է համագումարից հետո. «... հետեւողականորեն կենսագործելով այն ծրագիրը, որը հաստատեց ՀՀՇ-ի համագումարը» (տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 53):

903 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05.11.1989:*

Հրաչիկ Սիմոնյան, Վանո Սիրադեղյան, Խաչիկ Ստամբոլցյան, Դավիթ Վարդանյան, Կամո Վարդանյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան[904]: Հետեւելով «Ղարաբաղ» կոմիտեի՝ մինչ այդ իրեն արդարացրած ավանդույթին՝ ՀՀՇ վարչությունն առայժմ նախագահ չընտրեց, սակայն որոշ ժամանակ անց Հայոց համազգային շարժման վարչության նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը[905]:

Ե) ՀՀՇ քաղաքական Ծրագիրը

«Ղարաբաղ» կոմիտեի եւ Շարժման ղեկավարության դեմ քողարկված եւ անսքող պայքարի պատճառների ամբողջացման համար անհրաժեշտ է մի փոքր ավելի մանրամասն անդրադառնալ ՀՀՇ ծրագրի եւ կանոնադրության վերամշակված այն նախագծին, որը ներկայացվել էր համագումարի քննարկմանը եւ հաստատմանը, եւ որը դառնալու էր Շարժման քաղաքական ուղեգիծը:

1988-ի օգոստոսին հրապարակված ՀՀՇ ծրագրի ու կանոնադրության տարբերակի վրա մանրակրկիտ աշխատել էին, կատարվել էր շեշտադրումների էական փոփոխություն, խնդիրների եւ առանցքագաղափարի վերջնական հստակեցում: Եւ դա բնական է: Անցած շուրջ մեկուկես տարին չափազանց հագեցված էր եղել իրադարձություններով: Ստեղծվել էր որակապես նոր քաղաքական իրավիճակ, ինչում իր առաջնային դերն էր ունեցել նաեւ Հայկական ժողովրդավարական շարժումը: Նոր, կարեւոր տեղաշարժեր էին տեղի ունեցել ամբողջ Խորհրդային Միությունում, որտեղ ծավալված քաղաքական գործընթացները եւ իրադարձությունները էականորեն փոխել էին հասարակական պատկերացումները, կենտրոնական իշխանությունները սկզբունքային շատ հարցերում նահանջել, ավելի թուլացել, ժողովրդավարական շարժումները հզորացել էին: Արեւելյան Եւրոպայի երկրները դուրս էին եկել Մոսկվայի ենթակայությունից, Մերձբալթյան հանրապետություններն ավելի հստակ ու անվերապահ էին կանգնել իրենց անկախության ձեռքբերման ճանապարհին: Որակական տեղաշարժեր էին եղել նաեւ Հայաստանում: Այս ամենն արդյունավետորեն ազդել էր ինչպես Շարժման

904 *Տե՛ս «Հայք», 04.03.90 (ՀՀՇ առաջին վարչության կազմը):*

905 *Սկզբում, այդ մասին չհրապարակելու պայմանով, վարչության նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը, որը սակայն մոտ մեկ ամիս հետո հրաժարվեց՝ պատճառաբանելով դա իր ծանրաբեռնվածությամբ: Դրանից հետո վարչության նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:*

մասնակիցների, այնպես էլ ամբողջ հասարակության քաղաքական կողմնորոշումների հստակեցման, նոր հետեւությունների հանգելու ընթացքի վրա: Որակապես նոր իրավիճակը, բնականաբար, պետք է խնդիրների առաջնահերթությունների եւ այլ փոփոխությունների անհրաժեշտություն առաջացներ մեկ տարի առաջ հրապարակված քաղաքական ծրագրում:

Նախ, ամբողջական փաստաթուղթը բաժանվել էր երկու մասի՝ Ծրագրի եւ Կանոնադրության: Ծրագրային դրույթներն ամփոփված էին երեք՝ «Մուտք», «Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները» եւ «Հայոց համազգային շարժման մոտակա նպատակները» բաժիններում:

Ծրագիրը պետք է բավարարեր մի շարք պայմանների: Չէր կարելի առիթ տալ, որպեսզի որեւէ հարց պառակտման առիթ դառնար կամ բացասաբար անդրադառնար Շարժման ուժի եւ թափի վրա: Մանավանդ, որ շահարկման առիթներ փնտրողները բազմաթիվ էին եւ ուշադիր հետեւում էին ամեն մի «վրիպումի»: Դա նշանակում էր, որ փաստաթուղթն իր մեջ նվազագույն անհրաժեշտ չափով պետք է ներառեր նաեւ հասարակական գիտակցության մեջ նստած «ազգային» հարցերի եւ խնդիրների մասին ավանդական պատկերացումների հիմնական սպեկտրը: Ծրագրում առաջադրված խնդիրները կարելի էր բաժանել մի քանի հիմնական խմբերի:

Լեռնային Ղարաբաղ եւ դրանից ածանցված հարցեր. «Մոտակա նպատակները» բաժնում առաջին տեղում դրված էր «Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ» խնդիրը: Այս նպատակի իրականացման համար չէր նշվում որեւէ մեխանիզմ կամ ճանապարհ: Ծրագրում դրանք չմանրամասնելը, թերեւս, պայմանավորված էր նախապատրաստած քայլերը ժամանակից շուտ չհայտարարելու, ըստ հարափոփոխ իրավիճակի՝ օպերատիվ կողմնորոշվելու, ճկունության հնարավորության ապահովման տակտիկական նկատառումներով: Այդ են վկայում քիչ անց այս ուղղությամբ արված համարձակ եւ արմատական քայլերը (Գերագույն խորհրդի դեկտեմբերի 1-ի Միացյալ հանրապետության հռչակման որոշումը, Հայաստանի Գերագույն խորհրդի առաջիկա ընտրություններում Ղարաբաղի թեկնածուներին ընդգրկելը եւ այլն):

Այստեղ պետք է մտցնել Ղարաբաղյան շարժման հետ կապված կամ այդ ընթացքում առաջացած հարցերը, որոնք Ծրագրում ներկայացված էին որպես առանձին խնդիրներ: Դրանք էին՝ Սումգայիթում եւ Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերում կատարված բռնությունների մեղավորներին պատժելու, փախստականներին օժանդակելու եւ տեղավորելու, «Զվարթնոց» օդանավակայանում զինվորականների կատարած վայրագությունների, զանգվածային թունավորումների, աղետի գոտու վերականգնման եւ այլ հարցերին հետամուտ լինելը, ինչպես նաեւ բնապահպանական այն խնդիրները, որոնց բարձրացումը նախորդել էր Ղարաբաղյան շարժմանը եւ որդեգրվել վերջինիս կողմից:

«Ազգային» հարցեր. Այսպես ենք կոչում պայմանականորեն: Դրանց մի մասը նպատակաուղղված էր խորհրդային տարիներին իրականացված կոպիտ ազգային ճնշման հետեւանքները վերացնելուն: Այդպիսիք էին՝ հայերեն կրթության համընդհանուր եւ պատշաճ մակարդակի, հայերենի՝ որպես պետական լեզվի լիակատար գործառույթի, Հայ առաքելական եկեղեցու ազատ գործունեության ապահովման, պատմական տեղանունների վերականգնման խնդիրը եւ այլն: Ազգային հարցերի մյուս մասն ավանդական էր, ըստ ընդունված եւ տարածված պատկերացումների՝ ուղղված պատմական արդարության վերականգնման նպատակին: Այս շարքում էին՝ ՄԱԿ-ի կողմից 1915թ. ցեղասպանության ճանաչման, 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի[906]՝ Հայաստանին վերաբերող կետը եւ Կովկասյան Բյուրոյի՝ նույն թվականի հուլիսի 5-ի Ղարաբաղին վերաբերող որոշումը անօրինական ճանաչելու խնդիրները:

Անկախության խնդիրը. Ծրագրի առանցքային խնդիրը անկախ պետականության ստեղծման հարցն էր, որ դրված էր որպես մոտակա գործնական նպատակ:

1988-ի օգոստոսի 19-ին հրապարակված Ծրագիրն ընդհանրապես չուներ «անկախություն» կամ «անկախ պետականություն» արտահայտությունները: Բայց խնդիրը միայն ֆորմալ՝ բառերի օգտագործման մեջ չէր: Այն կար բովանդակային առումով: Այնտեղ համապատասխան տեղում, որտեղ պետք է խոսք լիներ երկրի կարգավիճակի մասին, ձեւակերպումներն այսպիսին էին. «Անժխտելի է, որ հայերը, ինչպես եւ ամեն մի ազգ, լավագույն

---

[906] *Քանի դեռ Հայաստանը ԽՍՀՄ կազմի մեջ էր, նման հարց, վերջին հաշվով, կարելի էր բարձրացնել ու այն օգտագործել որպես քաղաքական լծակ կենտրոնական իշխանության հետ հարաբերություններում: Անկախության պայմաններում այս հարցի բարձրացումը, այս պայմանագիրը չճանաչելը արդեն քաղաքականապես նպատակահարմար չէր, չէր բխում անկախ պետականության առջեւ ծառացած խնդիրների լուծման տրամաբանությունից: Ընդհակառակը՝ այն կդառնար անիմաստ ու վտանգավոր, կնշանակեր միայնակ պատերազմական վիճակի մեջ հայտնվել Թուրքիայի դեմ:*

ձեռով կարող են դրսեւորել իրենց ընդունակությունները եւ նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ ապրելով ազատ ժողովրդավարության պայմաններում, առանց արտաքին ճնշման, ինքնուրույն որոշելով իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքի ձեւերը»: Եւ ըստ այս «գաղափարական սկզբունքի» էլ, հանրապետության կարգավիճակի հարցում որպես «մոտակա նպատակ»՝ դրված էր «ընդլայնել մեր հանրապետության սուվերենությունը» (հասկացվում էր՝ ԽՍՀՄ շրջանակներում) ձեւակերպումը: Վերջինս, իր հերթին, ենթադրում էր երեք խնդիր.

- տնտեսաշվարկի եւ ինքնաֆինանսավորման միջոցով ապահովել հանրապետության տնտեսական ինքնուրույնությունը.
- վերականգնել հայկական ազգային զորամիավորումները.
- հիմնվելով ՍՍՀՄ Սահմանադրության 80-րդ հոդվածի վրա՝ դիվանագիտական կապեր հաստատել եւ հյուպատոսություններ փոխանակել այն երկրների հետ, որտեղ կան սփյուռքահայության խոշոր կենտրոններ:

Համագումարին ներկայացված նախագծում այս հիմքի վրա կատարված նոր քայլով Ծրագրի առանցքագաղափարը վերածվել էր անկախ պետականության ստեղծման հիմնական եւ առաջնահերթ խնդրի: Ընդ որում՝ այդ գաղափարը ներկայանում էր երեք մակարդակում: Նախ՝ տրվում էր անկախության անհրաժեշտության հիմնավորումը՝ որպես «գաղափարական սկզբունք», ապա՝ դրան հասնելու մեխանիզմը, եւ վերջապես՝ ստեղծվելիք պետության քաղաքական եւ տնտեսական հիմունքների ուրվագիծը: Ըստ նոր հիմնական խնդրի, բնականաբար, կարեւոր փոփոխություններ էին կրել Ծրագրի բոլոր բաժինները:

Հիմնական խնդրի մատուցման նախապատրաստությունն արված էր Մուտքում, հետեւյալ ելակետային դրույթով. «Երբ ազգն իր խնդիրները լուծելիս ապավինում է արտաքին ուժի, ապա, ինչպես ցույց է տալիս մեր պատմական փորձը, դա ոչ միայն հաջողություն չի բերում, այլեւ ամեն մի անհաջողություն ու հարված թուլացնում է ազգի վճռականությունը, խարխլում հավատը արդարության նկատմամբ, հանգեցնում ճակատագրով դատապարտված լինելու գաղափարին եւ ի վերջո կազմալուծում ազգը.... Արդարությունը չեն մուրում, արդարությունը նվաճում են»: Եւ սրան անմիջապես հաջորդում է. «Շարժման ընթացքում մեր ժողովուրդը սկսեց գիտակցել, որ **ազգային շատ խնդիրների լուծումը հնարավոր է միայն անկախ պետականության պայմաններում**: Հայ ազգն այժմ աստիճանաբար ազատվում է տասնամյակների ընթացքում իրեն պարտադրված ստրկամտությունից»:

Այսպիսով՝ ժողովրդավարական խնդիրների վրա խարսխված անկախության հարցը, դրվելով որպես հիմնական նպատակ, ներկայանում էր նաեւ որպես միջոց, բանալի՝ բոլոր խնդիրների, այդ թվում նաեւ Ղարաբաղի խնդրի լուծման համար:

Այնուհետեւ անկախության գաղափարը մտցված է «գաղափարական սկզբունքների» մեջ՝ մեզ արդեն ծանոթ առաջին սկզբունքի էական խմբագրմամբ. «Հայ ժողովուրդը լավագույն ձեւով կարող է դրսեւորել իր ընդունակությունները եւ կարողությունները, լուծել ազգի առջեւ ծառացած խնդիրները եւ նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ **վերականգնելով իր ազգային անկախ պետականությունը**: **Ունենալով իր անկախ պետականությունը,** ապրելով առանց արտաքին ճնշման...»:

Հռչակումից եւ համապատասխան գաղափարական սկզբունքի ներկայացումից հետո, որպես երրորդ քայլ, «Մոտակա նպատակները» բաժնում արդեն ներկայացվում էր այն խնդիրների մանրամասն ցանկը, որոնք ընկած են դեպի անկախություն տանող ճանապարհին. «Հասնել ԽՍՀՄ-ի եւ ՀԽՍՀ-ի միջեւ միջպետական նոր պայմանագրի կնքմանը, դրա մեջ ներառելով հետեւյալ կետերը.

ա) Հայաստանում պետական իշխանության եւ կառավարության մարմինների կառուցվածքի ընտրության եւ գործունեության ինքնուրույնություն.

բ) ԽՍՀՄ կազմում մնալու եւ նրանից դուրս գալու ՀԽՍՀ-ի լիակատար իրավունքի ճանաչում՝ դրա գործնական կիրառման եղանակի նշումով.

գ) հայ ազգային զորամիավորումների վերականգնում.

դ) տնտեսական քաղաքականության լիակատար ինքնուրույնության, ներառյալ արտաքին առեւտուրը.

ե) այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման իրավունք.

զ) միջազգային կազմակերպություններին անդամակցելու իրավունք.

է) ԽՍՀՄ ֆեդերալ իշխանությունները չպետք է միջամտեն հանրապետության ներքին գործերին: Հանրապետության տարածքում կարող են գործել միայն միութենական այն օրենքներն ու որոշումները, որոնք վավերացնում է հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը:

Սրան պետք է ավելացնել նաեւ Ծրագրում ձեւակերպված մի քանի այլ խնդիրներ, ինչպես՝ «մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերի, Հելսինկիի եւ Վիեննայի եզրափակիչ վավերագրերի» վրա հենված, հայ ժողովրդի իրական շահերն արտահայտող նոր Սահմանադրության

ընդունումը, էներգիայի եւ շինանյութերի գծով կենսականորեն անհրաժեշտ ինքնապահովման հասնելը եւ այլն:

Դժվար չէ նկատել, որ այս խնդիրների լուծումը համարժեք կլիներ փաստական անկախության, որից հետո, ունենալով ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու իրավունքի՝ պայմանագրով վավերացված «գործնական կիրառման եղանակը», կամ համապատասխան միութենական օրենքը[907], ցանկացած ժամանակ անկախությունը կարելի էր արձանագրել նաեւ իրավականորեն:

Այսինքն՝ անկախության խնդիրը Հայոց համազգային շարժման Ծրագրում մերկ կարգախոս չէր, **այն դնում էր խնդիրներ եւ ուղենշում ճանապարհ, որոնց միջոցով Հայաստանը պատրաստ էր լինում թե՛ ԽՍՀՄ-ի առժամանակ գոյատեւման, թե՛ նրա անակնկալ փլուզման դեպքերում հնարավորինս նախապատրաստված, նվազագույն կորուստներով եւ նվազագույն ռիսկերի դիմելով՝ լուծել անկախ պետականության հաստատման հարցը**:

Սրանով ՀՀՇ-ի անկախության ծրագիրն այնքան տարածված քաղաքական պոպուլիզմն ու արկածախնդրությունը մերժելու, հնարավոր բոլոր իրավիճակներին նախապատրաստված լինելու քաղաքական իրատեսության եւ պատասխանատվության, ժողովրդին վտանգներից հեռու պահելու մտահոգության, մարդակենտրոն արժեքային համակարգ դավանելու խոսուն ապացույց էր:

Պետականության հիմնադրույթներ. Ծրագրում հստակ ուրվագծվում էր նաեւ ապագա անկախ պետության քաղաքական եւ տնտեսական հիմքը: Դա արտահայտված էր «գաղափարական սկզբունքները» բաժնում: Ժողովրդավարական հիմնական նորմերի թվարկումը՝ իշխանությունների ձեւավորումը ազատ ժողովրդավարական ընտրությունների միջոցով, խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, բազմակուսակցական համակարգը, ազատ արհմիությունների գործունեության հնարավորությունը եւ այլն, մատնանշում էին, որ ստեղծվելիք պետությունը պետք է լիներ միջազգային չափանիշներով ժողովրդավարության սկզբունքների հիմքի վրա: Ինչ վերաբերում է նրա տնտեսական համակարգին, ապա՝ այնպիսի հասկացությունների

[907] *ԽՍՀՄ կազմից հանրապետությունների դուրս գալու սահմանադրական իրավունքի իրականացման մեխանիզմի պահանջը շուտով առաջարկեցին նաեւ ուրիշները, եւ ԽՍՀՄ-ն ստիպված էր մշակել եւ ընդունել այդպիսի գործընթաց կարգավորող օրենք (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ, 1990, 15, հոդվ. 252):*

օգտագործումն, ինչպես՝ «սեփականության ձեւերի բազմազանությունը», «ազատ ձեռներեցությունը», «հողը ժառանգական օգտագործման իրավունքով գյուղացուն տալը», վկայում էին, որ ապագա պետության տնտեսակարգը լինելու է շուկայական հարաբերությունների վրա հիմնված ազատական տնտեսություն, եւ մերժվելու է խորհրդային սոցիալիստականը: Դրանք, ըստ էության, «մոտակա նպատակների» իրականացումից՝ անկախության ձեռքբերումից հետո եկող խնդիրներ էին, ուստի Ծրագրում առայժմ ավելի շատ ներկայացվում էին որպես ուրվագիծ:

Կանոնադրությունը. Էական փոփոխություններ էին կատարվել նաեւ 1988-ի փաստաթղթի կազմակերպական սկզբունքներին վերաբերող բաժնում: Ավելի ճիշտ՝ «ՀՀՇ գործելակերպը» եւ «ՀՀՇ կազմակերպական ձեւերը» բաժինների հիման վրա ստեղծվել էր նոր փաստաթուղթ, կազմակերպության Կանոնադրությունը: Սկզբունքային փոփոխությունները պայմանավորված էին Ծրագրում կատարված փոփոխություններով, խնդիրների եւ նրանց առաջնահերթությունների հստակեցմամբ: Վերջիններս նշանակում էին, որ ՀՀՇ-ն իր ծրագրային խնդիրները լուծելու համար ոչ թե շարունակելու է միայն ճնշումներ գործադրել իշխանությունների վրա, այլ գնալու է իշխանափոխության՝ որպես իշխանություն իրականացնելու համար իր քաղաքական ծրագրերը:

Առաջնահերթ դարձած նոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր որոշակիորեն հստակեցնել Շարժման քաղաքական կառույցը:

Ծրագրից արդեն իսկ հանվել էր «համայն հայությանը ՀՀՇ-ի մեջ ընդգրկելու» դրույթը: Դեռեւս մեկ-մեկուկես տարի առաջ օրակարգային հիմնական հարցի համար օգտակար այդ դրույթը նոր պայմաններում այլեւս անիմաստ էր: Նոր պայմաններում խոսքը մեկ հարց հետապնդող ազգ-կազմակերպություն ստեղծելու մասին չէր, այլ իշխանության հավակնող քաղաքական կազմակերպության, ինչպես եւ ձեւակերպված էր Կանոնադրության սկզբում, որը պետք է տվյալ երկրի ժողովրդին, ոչ թե ողջ ազգին, առաջարկեր ինքնուրույն պետական համակարգի, հարեւանների հետ համակեցության եւ զարգացման քաղաքական ծրագիր եւ ճանապարհ:

Ըստ այդմ՝ հաջորդ կարեւոր փոփոխությունը կազմակերպության անդամակցության հարցն էր: Նախկին՝ կոլեկտիվ անդամության հնարավորությունը չէր բացառվում, սակայն դրանից առաջ եւ որպես հիմնական՝ դրված էր անհատական անդամագրության սկզբունքը: Առանձնացված էր սկզբնական եւ շրջանային կազմակերպությունների մակարդակ: Ճիշտ է՝

ելումուտը կազմակերպության մեջ դեռեւս, այլ կազմակերպությունների համեմատ, մնում էր անհամեմատ ազատ, իրավունքներն՝ առավելագույն, եւ յուրաքանչյուրն ինքն էր որոշում իր պարտականությունների ձեւը եւ չափը, սակայն գոնե ծայրահեղ դեպքերի համար (եթե խախտել է Կանոնադրությունը կամ վարկաբեկել ՀՀՇ անդամի անունը) նախատեսվում էր նաեւ կազմակերպությունից վտարման հնարավորություն:

Հանված էր այն դրույթը, ըստ որի՝ կազմակերպության անդամ կարող են լինել Հայաստանից դուրս ապրող, ՀԽՍՀ քաղաքացի չհանդիսացող հայերը: Նոր ձեւակերպմամբ՝ կազմակերպության անդամ կարելի էր դառնալ «անկախ ազգային պատկանելությունից, կրոնական համոզմունքներից, այլ կազմակերպությունների հարելուց»: Չնայած մեծ հնարավորություններին, այդ եւ հետագա տարիներին օրենսդրական արգելքների բացակայությանը, **ՀՀՇ-ն ի սկզբանե սկզբունքորեն մերժեց իր կառույցները նաեւ հանրապետության սահմաններից դուրս եւ ազգային հատկանիշի հիման վրա ստեղծելու ավանդական գայթակղությունը**: Հասարակական ավանդական պատկերացումներին, նաեւ հենց սեփական այսօրեական շահերին դեմ արված այս քայլը, որքան էլ աշխարհում ընդունված ու սովորական մի նորմ, հայ քաղաքական մտքի պատմության մեջ արձանագրված աննախադեպ եւ որակապես նոր աստիճան էր, որ, բնականաբար, պետք է բախվեր կարծրացած ավանդականի իներցիային:

Եւ այնուամենայնիվ, Կանոնադրությունը շարունակում էր մնալ չափազանց ազատական, ՀՀՇ-ն դրանով դեռեւս չէր դառնում դասական առումով քաղաքական կուսակցություն, շարունակում էր մնալ որպես համաժողովրդական շարժում՝ իր առջեւ դրված նոր խնդիրներին համապատասխան՝ օժտված միայն նվազագույն անհրաժեշտ կազմակերպական տարրերով:

զ) ՀՀՇ համագումարի նկատմամբ վերաբերմունքը եւ արձագանքները Հայաստանում

«Արմենպրես» լրատվական գործակալության անունից տարածվեց պատշաճ մի հաղորդագրություն ՀՀՇ համագումարի մեկնարկի մասին՝ արձանագրելով նաեւ, Սուրեն Հարությունյանի գլխավորությամբ ՀԽՍՀ բարձր պաշտոնյաների մի խմբի մասնակցությունը[908]: Հակիրճ մի հաղորդագրությամբ ծանուցվեց նաեւ համագումարի աշխատանքների ավարտի

[908] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05.11.1989:*



1988թ. Նոյեմբերի 7-ի ցույցը Լենինի հրապարակում
Լուս.՝ Մելիք Բաղդասարյանի

Սումգայիթի վերջին «Խոժոռոտ» մոմերով

Երկրաշարժ, դեկտեմբեր 1988թ.



«Ֆրանս-հայկական համերաշխություն» կոմիտեի՝ ի պաշտպանություն «Ղարաբաղ» կոմիտեի անդամ դարձանուսկայանների կազմակերպած



Հայոց համազգային շարժման առաջին համագումարը (04.11.1989թ.)
Լուս.՝ Ս. Բաղդասարյանի

Կոմիտեի խմբակային լուսանկար
Լուս. Հ. Երանյանի

մասին[909] ՝ երկու դեպքում էլ ձեռնպահ մնալով բովանդակային հարցերից: Դրական կամ բացասական որեւէ արձագանք դրանց չհետեւեց:

Չնայած գործադրված բոլոր ջանքերին՝ ՀՀՇ հիմնադիր համագումարը հնարավոր չեղավ վիժեցնել, եւ վերջինս կարողացավ իր հիմնական փաստաթղթերում վավերացնել հայ քաղաքական մտքի ավանդական պատկերացումներին հակադրվող գաղափարական սկզբունքները, դրանց վրա հենվող ծրագրերը, մասնավորապես՝ անկախ պետականության ստեղծման համար պայքարի ուղենիշը: Թեեւ համագումարը հսկայական քաղաքական կշիռ ուներ, հանրապետական լրատվամիջոցները հնարավորինս շրջանցեցին համագումարի թեման՝ բավարարվելով չեզոք ու համառոտ մի տեղեկատվությամբ[910]: Պաշտոնական քարոզչությունը եւ մամուլը, ինչպես միշտ, հնարավորինս ձեռնպահ մնաց արձագանքներից, հրապարակային քննադատությունից ու բանավեճից:

ՀՀՇ-ի հաղթարշավին հակադրվելու ու համագումարի տպավորությունը ցրելու համար հարմար չնկատվեց դիմել նաեւ այնպիսի մի խոշորամասշտաբ միջոցառման, ինչպես սեպտեմբերին կազմակերպված «Հայ մտավորականության համաժողովն» էր: Սակայն անհամեմատ համեստ նման միջոցառում, այնուամենայնիվ, կազմակերպվեց նոյեմբերի 17-ին՝ Երեւանի պետական համալսարանի դասախոսական կազմի եւ վարչատնտեսական մասի մի ժողովի տեսքով[911]: Ժողովի օրակարգի 6 հարցերից մեկը հենց այդպես էլ կոչվում էր՝ «ՀՀՇ-ի համագումարը»: Ժողովի համար նախապատրաստված որոշման ընդարձակ նախագծի հիմնական դրույթներն այլ բան չէին, քան այն ծանոթ արգումենտացիան, ինչը, բացահայտ կամ քողարկված, պարբերաբար ներկայացվում էր որպես Շարժման դեմ մեղադրանքների հիմք ու գաղափարական այլընտրանք: Որոշման այդ նախագծում ՀՀՇ ծրագրին հակադրվում են «Հայ մտավորականության առաջին համաժողովի» «Հռչակագրի» դրույթները: Դրանք համարելով «միանգամայն ճիշտ»՝ դրա հիման վրա էլ անհրաժեշտ էր համարվում

---

909 *«Խորհրդային Հայաստան», 08.11.1989:*

910 *Համագումարին լրացուցիչ նյութերով անդրադարձան «Երեկոյան Երեւանը» (06.11.1989, 07.11.1989), «Ավանգարդը» (12.11.1989) տարբեր նյութով եւ լուսանկարներով մի ամբողջ էջ նվիրեց համագումարին՝ Լենինի՝ «կա՛ այդպիսի կազմակերպություն» հայտնի խոսքը վերնագիր դարձնելով: Այս թերթերը երբեմն դուրս էին գալիս գրաքննության շրջանակներից:*

911 *Հատկանշական է, որ ժողովին մասնակից չեն դարձրել ուսանողներին, հակառակ դեպքում անհնար կլիներ նման փաստաթղթի քննարկումը:*

«համազգային ծրագրի» մշակում, ինչի համար էլ առաջ էր քաշվում «համահայկական համաշխարհային կոնգրես» հրավիրելու գաղափարը, առաջարկվում էր հանրապետության կառավարությանը կից ստեղծել «ամենալայն լիազորություններով օժտված ազգային փրկության կոմիտե», Լեռնային Ղարաբաղի հարցը հետապնդել ոչ միայն ազգերի ինքնորոշման իրավունքի, այլեւ «Հայ դատի» ու պահանջատիրության հիմքի վրա, իսկ Հայաստանի հեռանկարի մասին խոսելիս, իհարկե չէր օգտագործվում «անկախություն» բառը: Փաստաթղթում անհամաձայնություն էր հայտնվում ՀՀՇ Ծրագրի՝ Ղարաբաղի խնդիրը «Հայկական հարցի» ընդհանուր կոնտեքստից կտրելով միայն ազգի ինքնորոշման իրավունքին հանգեցնելու», «Թուրքիայից ակնկալություններ ունենալու», «հայ ազգի քայլերն իր ուժին եւ հզորությանը համապատասխանեցնելու» ծրագրային դրույթներին: «Ղարաբաղ» կոմիտեի ու ՀՀՇ-ի նկատմամբ կրկնվում էին ծանոթ մեղադրանքները. «Կոմիտեի եւ հայ մտավորականության համագործակցությունն առայժմ անբավարար է», «ՀՀՇ հիմնադիր համագումարի անցկացման եղանակը եւ ղեկավար մարմինների ընտրությունը հեռու էին դեմոկրատական լինելուց»[912], «համագումարը փաստորեն չստեղծեց համազգային շարժում, այլ ձեւակերպեց մի կազմակերպություն, որը չհիմնավորված կերպով կրում է ՀՀՇ անունը» եւ այլն[913]:

է) Սփյուռքի վերաբերմունքը. ՀՀՇ քաղաքական ուղեգծի դեմ հիմնական ճակատը

Ի տարբերություն Հայաստանի կոմունիստական մամուլի չեզոք եւ համառոտ հաղորդագրության՝ սփյուռքահայ մամուլը եւ քաղաքական համարվող շրջանակները լայնորեն անդրադարձան ՀՀՇ հիմնադիր համագումարին: Արձագանքների եւ տրված գնահատականների մասին ընդհանուր պատկերացում են տալիս դրանց ուշադիր հետեւող ՊԱԿ-ի զեկուցագրերը: Ըստ այդ փաստաթղթերի՝ համագումարը մեծ արձագանք է ունեցել եւ տեւական ժամանակ աշխույժ քննարկման նյութ է հանդիսացել: Եւ գնահատականները եղել են ոչ միանշանակ: Արձագանքող սուբյեկտները, ինչպես

912 *Այս պնդման հիմքն այն էր, որ համագումարին մասնակցած եւ ելույթներով հանդես եկած նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչներ Լենդրուշ Խուրշուդյանը, քաղաքագետ Հակոբ Հակոբյանը եւ ուրիշներ չէին ընտրվել ՀՀՇ վարչության կազմում:*

913 *ՀՀԱՆԱ, 15/17.11.89:*

միշտ, երեքն են. **ա)** «ծայրահեղական թեւի ներկայացուցիչներ», **բ)** «առաջադիմական թեւ», **գ)** Դաշնակցություն:

«Ծայրահեղական» թեւ. Թե ինչ ուժեր կամ կազմակերպություններ են մտնում «ծայրահեղական» որակվող թեւի մեջ, զեկուցագրերում չի որոշակիացվում: Մինչ այդ, այլ զեկուցագրերում այս շրջանակները կոչվում են «չեզոք»՝ նկատի ունենալով կուսակցական անմիջական վերահսկողությունից դուրս գտնվող կազմակերպություններ եւ անհատներ: Իսկ «ծայրահեղականության» դրսեւորումն այն է եղել, որ վերջիններս դրական են արձագանքել համագումարի մասին: Օրինակ, ԱՄՆ-ում այդ թեւի կարծիքն այսպիսին էր. «ՀՀՇ համագումարը հայ ազգային-ազատագրական շարժման զարգացման պատմության մեջ դարձավ կարեւոր փուլ, Հայոց պետականության իրական վերածնման սկիզբ»[914]: Դա նշանակում է, որ Սփյուռքում, կուսակցությունների ազդեցության ոլորտից դուրս, քիչ չէին նույն գաղափարներն ամբողջությամբ կիսող մարդիկ ու կազմակերպություններ, որոնք բարձր քաղաքական գնահատական էին տվել ՀՀՇ համագումարին:

«Առաջադիմական թեւ». Սրա մեջ մտնող ռամկավարները եւ հնչակները Սփյուռքի այլ կազմակերպությունների թվում ընդունել էին Հայոց համազգային շարժման համագումարին մասնակցելու հրավերը եւ ելույթներով ողջունեցին այն:

Իսկ իրական վերաբերմունքի եւ մտավախությունների մասին հետախուզության փաստաթղթերն այլ բան են վկայում: Ըստ դրանց՝ «առաջադիմական» թեւի դիրքորոշումը բացասական է եղել: Հետաքրքիր է, որ վերջիններիս միավորող ընդհանուր անհանգստությունը, առաջին հերթին, բխել է ոչ թե համագումարում քննարկված հարցերի եւ ընդունված որոշումների քաղաքական էությունից, այլ այն բանից, որ ՀՀՇ համագումարի պատվիրակները բացահայտ համակրանք դրսեւորեցին Դաշնակցության նկատմամբ[915]: Սիրիայում, օրինակ, «առաջադիմականները» դժգոհություն են հայտնում, որ «Ղարաբաղ» կոմիտեն եւ մի քանի այլ ոչ պաշտոնական

914 *ՀԱԱ, ֆ.1. ց.87, գ.34, թ.78:*

915 *Տե՛ս նույն տեղում: Երբ ՀԿԿ կգ-ի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի ելույթում հնչեց ՀՅԴ-ի անունը, համագումարը հոտնկայս բուռն ծափահարեց: Չնայած այն բանին, որ Սփյուռքում Դաշնակցությունն ի սկզբանե պայքարում էր Շարժման դեմ, սակայն շատերը դրան անտեղյակ էին, քանի որ Կոմիտեն երբեւէ հարկ չէր համարել դրան հրապարակավ անդրադառնալ:*

կազմակերպություններ, իբր, գիտակցաբար բարձրացնում են դաշնակների դերն ու հեղինակությունը: Նրանց հատկապես անհանգստացնում էր այն բանը, թե Հայկական ԽՍՀ-ի տարածքում այս կուսակցությունը կարող է լեգալ կառույցներ ստեղծել: Այդ բանը թույլ չտալու համար, ահա, «առաջադիմական» կազմակերպությունները միավորվում են՝ միասնական ճակատով թույլ չտալու, որ Դաշնակցությունը կուսակցական աշխատանք սկսի Հայաստանի տարածքում: Նրանք մտահոգված են, որ «Դաշնակցությունը, քողարկվելով ԽՍՀՄ-ի եւ ՀԽՍՀ-ի նկատմամբ լոյալ վերաբերմունքի կարգախոսներով, շարունակում է որոճալ իրենց ղեկավարությամբ «Ազատ եւ անկախ Հայաստան» ստեղծելու ծրագրեր»[916]: «Առաջադիմականների» հաջորդ մտավախությունը հայտնի է, այն կապված էր անկախության ծրագրերի հետ. նրանք նաեւ «դատապարտում են Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու ամեն մի կոչ (այստեղ արդեն նկատի ունի ՀՀՇ-ի Ծրագիրը – Ա.Ս), համարում, որ հայ ժողովրդի ծաղկումը հնարավոր է միայն ԽՍՀ Միության մեջ»[917]:

Մի այլ փաստաթղթից նույնպես տեղեկանում ենք, որ, օրինակ, ԱՄՆ-ի հայկական համայնքի «առաջադիմական թեւի» ներկայացուցիչներին եւս խիստ անհանգստացրել է ՀՀՇ համագումարի պատվիրակների բացահայտ համակրանքը ՀՅԴ-ի հանդեպ: Իսկ այն հանգամանքը, որ Դաշնակցության ներկայացուցիչները այստեղ ելույթ չունեցան, նրանք մեկնաբանել են ոչ այլ կերպ, քան՝ որպես նրանց կողմից ՀՀՇ-ի հետ «անդրկուլիսյան զրույցների վրա շեշտը դնելու տակտիկական քայլ, որի ընթացքում կարեւոր կապեր են հաստատել «հանրապետության ապագա ղեկավարների հետ»[918]: Այստեղ եւս «առաջադիմականների» երկրորդ անհանգստությունը վերաբերվում է Շարժման՝ անկախության ձգտման գաղափարներին ու ծրագրերին: Նույն փաստաթուղթը հաղորդում է, որ «գործնականում բոլոր շրջանակները տագնապով են վերաբերում ՀՀՇ համագումարում հնչած՝ Պ. Հայրիկյանին Հայաստան վերադարձնելու պահանջին»: Նրանց կարծիքով՝ դրանով ՀՀՇ-ում կուժեղանա Հայաստանը ԽՍՀՄ

[916] *Այս մտահոգությունն անտեղի էր, գուցե եւ արդյունք այս կուսակցությունների անտեղյակության կամ մտասեւեռումի, քանզի հենց ՀՅԴ-ն էր պայքարում եւ մինչեւ վերջ պայքարելու էր անկախության դեմ:*

[917] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.70:*

[918] *Բոլորովին այլ կոնտեքստում ասված այս խոսքը վկայում է, թե անգամ Սփյուռքում ոմանք արդեն հասկանում էին, որ Շարժումն այն ուժն է, որն ի զորու է վերջ դնել կոմունիստական 70-ամյա ռեժիմին եւ գալ իշխանության:*

կազմից դուրս բերելու կողմնակիցների թեւը[919]: Իրականում, իհարկե, դա ոչ թե «թեւի», այլ ամբողջ կազմակերպության հստակ դիրքորոշումն էր, սակայն ոչ թե կարգախոսների կամ կտրուկ քայլերի տեսքով, այլ մանրակրկիտ եւ իրատեսական քաղաքական ծրագրի հետեւողական իրականացման:

Դաշնակցությունը. Մինչ այդ, նախընթաց շրջանում արդեն իսկ արձանագրվել էին հիմնական քաղաքական հարցերում Շարժման եւ ՀՅԴ (նաեւ մյուս կուսակցությունների) ղեկավարության սկզբունքային դիրքորոշումների առանցքային տարբերությունները: Նկատի ունենալով, որ դրանք յուրատեսակ բանալի են, ինչպես մինչ այս, այնպես էլ առաջիկա շրջանի իրադարձությունները ճիշտ հասկանալու ու գնահատելու համար, եւս մեկ անգամ ամփոփ ներկայացնենք այդ պատկերը:

Ըստ ՀՀՇ-ի՝ **ա)** Ղարաբաղի հարցը ոչ թե հողային, այլ ինքնորոշման իրավունքի հարց էր, ինչը ժամանակին ոտնահարվել է: Նրա բնակչության անվտանգության եւ արժանապատիվ կյանքի ապահովումը տվյալ պայմաններում հնարավոր է նրանց իսկ բարձրացրած խնդրի՝ Հայաստանին միավորվելու միջոցով: **բ)** Անկախ պետականությունը յուրաքանչյուր ազգի համար գերագույն արժեք է եւ նպատակ է, եւ ստեղծված բարենպաստ իրավիճակում Հայաստանը կարող է եւ պետք է գնա անկախ պետականության հաստատման ճանապարհով: **գ)** Հայաստանը պետք է ապավինի միայն սեփական ուժերին, եւ պահանջատիրությունը չի կարող դրվել Շարժման օրակարգում որպես մոտակա նպատակ. այն առայժմ լուծման որեւէ հեռանկար չունենալով՝ միայն արգելափակոցի դեր կարող է խաղալ անկախության եւ ցանկացած այլ լուծելի հարցերի ճանապարհին:

Նույն հարցերի մասին ՀՅԴ պատկերացումները տրամագծորեն հակառակն էին. **ա)** Ղարաբաղի խնդիրը Հայ դատի, ընդհանուր հողային պահանջատիրության մի մաս է եւ չի կարող այլ կերպ մեկնաբանվել, **բ)** բացառում էր Հայաստանի անկախությունը, քանի դեռ ավելի հզոր պետության (ԽՍՀՄ-ի) կազմում գտնվելով՝ չեն լուծվել պահանջատիրության բոլոր հարցերը, **գ)** պահանջատիրության եւ «Հայ դատի» բոլոր խնդիրները պետք է անմիջականորեն լինեն օրակարգում եւ բոլոր ծրագրերն ու գործողությունները արտածվեն դրանից:

Այստեղից էլ բխում էր ՀՀՇ եւ ՀՅԴ-ի քաղաքական մոտեցումների տրամագծային տարբերությունը: Ըստ ՀՀՇ-ի՝ ժողովուրդն իշխանության

[919] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34,թ.78:*

սուբյեկտ է, որպես այդպիսին՝ այն կարող է լինել որոշակի տարածքում, հնարավորություն ունենա ընտրություն կատարել իրեն առաջարկված քաղաքական ծրագրերի մեջ եւ իշխանության իր մենաշնորհն իրականացնի ընտրական մեխանիզմի միջոցով: Այս պատկերացման հիմքում դրված էին հայկական անկախ, ժողովրդավարական պետության ու նրա քաղաքացու գաղափարները: Ըստ ՀՅԴ-ի՝ ժողովուրդն իշխանության օբյեկտ է (ինչպես ընկալվում էր ավանդաբար), որպես այդպիսին էլ որոշիչ չէ նրա բնակության վայրը: Ժողովրդի դերը հայեցողական է, նա ծրագրերի հումք է, իր իսկ «էլիտայի» սեփականությունը[920], իսկ նրան որպես էլիտա իշխելու իրավունքը կանխորոշված է եւ պատմությամբ տրված է ՀՅԴ-ին:

Հակադիր այս պատկերացումները պայմանավորում էին նաեւ գործելակերպի ձեւերը: Առաջին դեպքում անհրաժեշտաբար պետք է դրվեր հարեւան երկրների հետ նորմալ միջպետական հարաբերություններ ունենալու եւ վիճելի հարցերը երկկողմ հարաբերություններով լուծելու խնդիրը: Երկրորդ դեպքում՝ պահանջատիրական ծրագրերը անընդհատ թմբկահարելու եւ մշտական թշնամություն բորբոքելու համար անհրաժեշտ կլիներ գտնվել այլ, ավելի հզոր պետության կազմում ու որպես նրա քաղաքացի՝ պաշտպանված լինել:

Անհաշտելի այս մոտեցումներն էլ պիտի պայմանավորեին Դաշնակցության արձագանքները, որոնք տրվեցին նրա կենտրոնական մամուլում: Մի քանի բնորոշ մեջբերում՝ «Ինչո՞ւ հուսախաբություն պատճառեց ՀՀՇ հիմնադիր համագումարը» վերնագրով հոդվածից.

«Հաջորդաբար 17 հունիս 1989-ին գումարած «Հայոց համազգային շարժումի հիմնադիր ժողովին» Հռչակագրով եւ Գերագույն խորհրդի՝ 23 հունիս 1989-ի նիստին Լեւոն Տեր-Պետրոսյանի ունեցած ելույթով... այլապես համահայկական գնահատումի արժանացած «Ղարաբաղ» կոմիտեն կոնակ կը դարձներ ավելի քան հարյուրամյա պայքարով հայ ժողովուրդի ազատագրական շարժման բյուրեղացած գաղափարաքաղաքական դասերուն...»: «...հագնելով Հայոց համազգային շարժման պատմուճանը՝ «թե՛ օգոստոս 1988-ին հրատարակած իր ծրագրով, թե հունիս 1989-ին վերոհիշյալ

920 *Կրկնենք դաշնակցական գործիչներից մեկի բնորոշ սպառնալիքը նրանց, ովքեր խոսում էին անկախության մասին. «ՀՅԴ անոնց ունի մեկ զգուշացում, այն որ այս ժողովուրդը անտեր չէ» («Դրոշակ», 21.06.1989, էջ 25): Շատերն են նկատել, որ ի սկզբանե այս կուսակցությունն իրեն է համարել ամբողջ ժողովրդի «բնական տերը», այդ պատկերացումն անընդհատ ներարկել իր կազմակերպության անդամներին ու դրանից ոչ մի կերպ չի ուզում ազատվել:*

ելույթներով... ոչ մեկ եւ միացյալ Հայաստանի եւ ոչ այլ մեկ ու միացյալ հայության ի խնդիր պայքարելու, ինչպես նաեւ այդ ուղղությամբ միացյալ ճակատ կազմելու հանձնառության տակ կմտներ»: «Ղարաբաղ» կոմիտեն կշարունակեր, իր ծրագրային թե սկզբունքային հայտարարությանց մեջ, առավելագույն չափով հեռու մնալ Հայ դատը իբրեւ մեկ անբաժանելի ամբողջություն սահմանելու դիրքերեն, ինչպես նաեւ՝ հայրենիքի եւ սփյուռքի հայությունն իբրեւ միեւնույն տեսլականներուն համար պայքարող ամբողջություն պատկերացնելու հրամայականեն»[921]:

Նույնպիսի տեղեկություններ են հաղորդում նաեւ համապատասխան ծառայությունների կազմած զեկուցագրերը. «Իրենք դաշնակները... հիասթափված են համագումարի արդյունքներից. ամերիկյան դաշնակների մեծ մասը գտնում է, որ ներկայումս «չի կարելի կենտրոնանալ միայն Լեռնային Ղարաբաղի առիթով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության վրա»: Նրանց կարծիքով՝ ջանքերը հիմնականում պետք է կենտրոնացնել հանրապետության՝ երկրաշարժից ավերված տնտեսության վերականգնմանը, Սփյուռքի ռեսուրսներն օգտագործել դրա վրա եւ ուղիներ փնտրել արեւմտյան կապիտալի ներգրավման համար: Իսկ այդ նպատակով անհրաժեշտ է «***ժամանակավորապես սառեցնել ղարաբաղյան խնդիրը***՝ թողնելով միայն մեկ պահանջ՝ մարզի ենթարկումը անմիջապես միութենական իշխանություններին»: Եւ միայն 3-5 տարվա ընթացքում ճգնաժամից դուրս գալուց հետո «կարելի է վերադառնալ «հայկական հողերի խնդրին», բայց արդեն ավելի լայն ընդգրկումով»[922]:

ՀՀՇ հիմնադիր համագումարը նույնպիսի բացասական արձագանքի էր արժանացել նաեւ Իրանի դաշնակցականների կողմից: Նրանք դժգոհ էին մնացել, որ համագումարին Սփյուռքի ներկայացուցիչները հրավիրվել են միայն խորհրդակցական ձայնի իրավունքով: Նրանց համոզմամբ՝ «ՀՀՇ-ն պետք է հետապնդի «Միասնական Հայաստան» ստեղծելու, ընդհուպ հայկական հողերի վերամիավորման, խորհրդային իշխանության տարիներին անջատված տարածքները Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու նպատակ: Այդ նպատակին հասնելու համար ՀՀՇ-ն պետք է հենվի խորհրդային կենտրոնական իշխանությունների աջակցության վրա եւ պահանջի նրանց գործակցությունը այդ խնդրի լուծման համար: Այդպիսի հստակ ծրագիր չունենալով՝ ՀՀՇ-ն ընդունակ չէ դառնալ ողջ աշխարհի հայության շահերի

921 *«Դրոշակ», 22.11.1989, էջ 10:*
922 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.78-89:*

արտահայտիչը»[923]: Այսինքն, որքան էլ անհեթեթ, բայց Դաշնակցությունը համարում էր, որ ՀՀՇ-ն պետք է որդեգրի եւ իրականացնի իր՝ ՀՅԴ-ի ծրագիրը...

Ներկայացող պատկերը խիստ բնութագրական է «միասնական» եւ «հայրենասեր» Սփյուռքի համար: «Առաջադիմականների» առնվազն երկու մտահոգություններն անհիմն էին. նախ՝ Դաշնակցությունը բացահայտ դեմ էր անկախական որեւէ կոչի ու ծրագրի եւ իր այս դիրքորոշման մեջ, ի տարբերություն նույն «առաջադիմականների», հետեւողական գտնվեց մինչեւ վերջ: Երկրորդ՝ ճիշտ է, ՀՀՇ-ն բարյացակամ էր տրամադրված եւ որեւէ խնդիր չուներ ՀՅԴ-ի հետ, բայց դրա փոխարեն վերջինս լուրջ խնդիր ուներ ՀՀՇ-ի հետ. նա անգամ չէր ընդունել համագումարին մասնակցելու հրավերը եւ իր մամուլով սուր քննադատության էր ենթարկում նրա որոշումները եւ ծրագրերը:

Ավելին՝ Բյուրոն նախապես գաղտնի մի շրջաբերական էր ուղարկել իր բոլոր կառույցներին, որով արգելում էր որեւէ կարգավիճակով իր անդամներից որեւէ մեկի մասնակցությունը ՀՀՇ հիմնադիր համագումարին եւ որեւէ համագործակցություն նրա հետ[924]: Անգամ Հայաստանի կոմկուսը, որին քաղաքական ընդդիմություն էր դառնում ՀՀՇ-ն եւ ակնհայտորեն հավակնում իշխանության, ընդունել էր այդ հրավերը, եւ նրա Առաջին քարտուղար Ս. Հարությունյանը ողջույնի խոսք ասաց համագումարում՝ ներկայացնելով նաեւ իր նկատառումները: Ճիշտ է՝ այդ ժամանակ Երեւանում գտնվող մի քանի բարձրաստիճան դաշնակցականներ, որոնք այլախոհական տրամադրություններ ունեին կուսակցության բյուրոյի գծի դեմ, որպես մասնավոր անձինք ներկա էին համագումարի նիստերին: Բուռն ծափահարություններ հնչեցին երբ տրվեց Հայ հեղափոխական դաշնակցություն անունը (գուցե պատահական չէր, որ հենց Ս. Հարությունյանի ելույթում): Այդ ծափահարությունները նաեւ նրանց ելույթը լսելու հրավեր էր, սակայն ներկա դաշնակցականներից որեւէ մեկն, անգամ մասնավոր անձի կարգավիճակով, չհամարձակեց որեւէ խոսք ասել, քանի որ այդ արտոնությունը չուներ[925]:

---

[923] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.35, թ.127:*

[924] *Այս փաստի արձանագրումը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 1992թ. հուլիսի 29-ի ելույթում («Հայաստանի Հանրապետություն», 30.06.1992)*

[925] *Այնպես որ՝ այդ անձանց ֆիզիկական ներկայությունն, արդեն իսկ, կարելի է ասել, մեծ համարձակություն էր:*

Համագումարին մասնակցելու հրավերի մերժումը ՀՅԴ-ի կողմից բնական էր: ՀՀՇ համագումարին պաշտոնապես մասնակցելու դեպքում կար երկու տարբերակ: Դաշնակցությունը կարող էր սովորական ողջույնի խոսք ասել՝ առանց իր ունեցած տարաձայնություններին անդրադառնալու: Այս դեպքում անհասկանալի կմնային մինչ այդ ՀՀՇ-ի եւ «Ղարաբաղ» կոմիտեի դեմ ուղղված կոշտ ու անվերապահ քննադատությունը, ընդհուպ՝ մահացու մեղադրանքները: Բացի այդ՝ դրանով նա նաեւ իրեն կզրկեր համագումարից հետո ՀՀՇ-ին է՛լ ավելի սուր քննադատության ենթարկելու, պիտակավորելու հնարավորությունից, ինչը նրա կարեւորագույն խնդիրն էր: Կար երկրորդ տարբերակը. համագումարին մասնակցելու առիթն օգտագործելով՝ հայտներ նաեւ իր տարաձայնությունները (ինչը բազմիցս արել եւ անում էր իր մամուլով): Այս դեպքում, սակայն, Շարժման ղեկավարներին առիթ կտար պատասխան ելույթների: Եւ եթե համագումարում այդ բանավեճի հետեւանքով դրվեր յուրատեսակ «կա՛մ-կա՛մ»-ի հարց (իսկ այդ դեպքում դժվար կլիներ դրանից խուսափել), եւ հաղթող կողմը մնար Շարժման ղեկավարությունը (դա էլ ՀՅԴ լիդերներն անպայման հաշվարկել էին), Դաշնակցությունն էապես կկորցներ իր հեղինակությունն ու խորհրդավորությունը, որ դեռեւս նաեւ Շարժման մասնակիցների մի մասի պատկերացումների մեջ նստած էր: Այս պահին եւ այս առիթով նա չուզեց գնալ ռիսկի եւ բաց առճակատման:

ՀՅԴ-ն Հայաստանի անկախության եւ այդ անկախության ծրագիրը որդեգրած ՀՀՇ-ի դեմ պայքարի իր ստանձնած դերը Հայաստանում առայժմ պետք է կատարեր իր չբացահայտված անդամների եւ այլազան անուններով մանր կազմակերպությունների ձեռքով, իսկ բացահայտ՝ պաշտոնական իր մամուլի միջոցով պետք է գործեր Սփյուռքում: Ճիշտ է՝ այդ մամուլը սահմանափակ քանակությամբ էր հասնում Հայաստան եւ լայն տարածում չուներ, սակայն անհրաժեշտ նյութերը կոմունիստական մամուլը հաճույքով արտատպում էր, իսկ նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչները դրանք երկրորդում էին իրենց ելույթներում:

ՀՀՇ հիմնադիր համագումարին, ինչպես եւ սպասելի էր, Դաշնակցության պաշտոնական արձագանքը խիստ օպերատիվ էր եւ, իհարկե, խիստ բացասական: Այդ արձագանքը հնչեց ընդամենը հինգ օր անց, հենց այդ առիթով հրավիրված «ՀՅԴ մամլո ներկայացուցիչների խորհրդաժողովի» ընդարձակ մի «Հայտարարագրի»[926] եւ մի շարք հոդվածների տեսքով[927]:

---

[926] *«Դրոշակ», 22.11.1989, էջ 2-3:*

Մեղադրանքների եւ վերագրումների մեջ նորություն չկար, դրանք հատկապես վերջին կես տարում հաճախակի կրկնվում էին դաշնակցական մամուլում: Կային, սակայն, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ՝ վարկաբեկելու համար Շարժման ղեկավարությանը, օրինակ, որ՝ «Ղարաբաղ» կոմիտեն որոշապես համագումարեն հեռու պահած էր ներկայացուցիչները Արցախի թե Հայաստանի ժողովրդային շարժումներուն», կամ՝ «Ղարաբաղ» կոմիտեն պարզապես իր նախընտրած ցանկը պարտադրեց ժողովականներուն, Շարժումի ղեկավարութենեն դուրս ձգելով համագումարին մասնակից եւ վստահութեան մեծ դրամագլուխ վայելող քաղաքական գործիչներ եւ մտավորականներ»: Իրականում համագումարին Արցախից մասնակցում էր լուրջ պատվիրակություն, եւ նրանցից Սերժ Սարգսյանը եւ Ռոբերտ Քոչարյանը առաջադրվեցին ՀՀՇ վարչության կազմում, եւ վերջինը նաեւ ընտրվեց: Իսկ ՀՀՇ վարչության ընտրությունը տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկությամբ, առաջադրումների ժամանակ որեւէ սահմանափակում չկար, թեկնածուների թիվը մի քանի անգամ գերազանցում էր տեղերի քանակը: Պարզապես՝ «վստահության դրամագլխի» գնահատման չափանիշների տարբերություն կար, եւ համագումարի պատվիրակներն ընտրություն կատարելիս, բնականաբար, ելնում էին ոչ թե ՀՅԴ լիդերների, այլ գնահատման իրենց չափանիշներից ու պատկերացումներից:

Հաջորդ մեղադրանքը շատ ավելի խոսուն էր ներկայացնում Դաշնակցության մտահոգությունը. «Հայոց համազգային շարժման մեջ իր տեղը պետք է գտներ Հայաստանի համայնավար (կոմունիստական) իշխանությանց ազգային քաղաքական առումով առողջ տարրը»[928]: Եթե այդ «առողջ տարրը» ղեկավարում էր կոմկուսի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը, որ գեթ վերջին կես տարում դաշնակցական մամուլում ներկայացող «ամենաազգային եւ ամենաառողջ» գործիչն էր, ուրեմն խոսքը վերաբերում է ողջ Կոմունիստական կուսակցությանը եւ նրա նոմենկլատուրային, քանի որ այն, ինչպես այդ ժամանակ, այնպես էլ մինչեւ վերջ մնաց միասնական եւ «թեւերի» չբաժանվեց: Եւ հենց դա էլ նկատի ունի: Պարզվում է, որ ի տարբերություն «Ղարաբաղ կոմիտեի խարխափումներու», «Հայրենի պաշտոնական շրջանակները մայիս 1989-էն ետք կանգնած էին շատ ավելի համազգային դիրքերու վրա»: Որպես դրա ապացույց՝ հիշատակվում է մայիսի

927 *Նույն տեղում, էջ 6, նաեւ՝ Դրոշակ», 21.06.1989: էջ 7-12, նույնը, 06.12.89,էջ 7-13) եւ այլն:*

928 *«Դրոշակ», 22.11.1989, էջ 3:*

28-ին «Ավանգարդ» թերթում հրապարակված «Հայոց համազգային ծրագիր» խորագրով փաստաթուղթը[929]: Ըստ Դաշնակցության՝ շատ ավելի ճիշտ եւ համազգային դիրքերի վրա էր կանգնած եղել նաեւ նույն ժամանակ (հունիսին) ստեղծված «Ոչ պաշտոնական կազմակերպությունների խորհուրդը», ուստիեւ անմիջապես արժանացել էր ՀՅԴ Բյուրոյի հատուկ ողջույնին: Նույնպիսի դրական գնահատականի է արժանանում նաեւ «Հայ մտավորականության համաժողովը»: Ահա այս երեքը, ըստ ՀՅԴ-ի, ի տարբերություն «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ-ի, կանգնած են եղել ճիշտ գաղափարախոսական դիրքերի վրա, ինչի տակ, բնականաբար, այլ բան չի հասկացվում, քան գաղափարախոսական այն հիմնադրույթները, որոնք դավանում էին սփյուռքյան կուսակցությունները, որոնց վրա էր ի սկզբանե խարսխված Շարժման դեմ գաղափարական պայքարը[930]:

Համագումարի առիթով հարուցված մեղադրանքների մեջ էր հետագայում հաճախ կրկնվող «Ղարաբաղը ծախելու» այսպիսի մի նախատիպ. «ՀՀՇ-ի ղեկավարությունը վերապահության գիրկը նետեց Արցախի հայությունը»[931]: Դաշնակցությունը լուրջ առարկություն ուներ նաեւ «համազգային» բառի օգտագործման հարցում: Ըստ նրա՝ միայն Ղարաբաղի հարցն առանձին համազգային շարժման (եւ ջանքերի) խնդիր չի կարող լինել, այդպիսին լինելու համար այն պետք է մեկնաբանվի «Հայ դատի» եւ ընդհանուր պահանջատիրության ենթատեքստում, եւ դրա հետ միասին պահանջվեն նաեւ պատմական հայկական մյուս հողերը: Ավելին՝ **համազգային** շարժման հարց չի կարող լինել նաեւ անկախության հարցը, եթե դա ձեռք է բերվում միայն գոյություն ունեցող Հայաստանի ու նրա ժողովրդի համար եւ չի հաջորդում ընդհանուր պահանջատիրության իրականացմանը: Ըստ այդմ էլ՝ եթե առաջին դեպքում (Ղարաբաղի խնդրում) Սփյուռքը

929 *«Դրոշակ», 22.11.1989, էջ 10: Սա, ըստ էության, ուղղակի վկայություն է այն բանի, որ հիշյալ փաստաթուղթը մտահղացված էր իշխանության խոհանոցում (չի բացառվում ՀՅԴ-ի հետ համատեղ)՝ որպես ՀՀՇ Ծրագրին յուրատեսակ այլընտրանք, նույն՝ «հայոց համազգային» բառերի օգտագործմամբ՝ շփոթության միջոց, ինչը, սակայն, չաշխատեց: Հիշենք, որ «հայոց համազգային» էր կոչվում նաեւ 1988-ի աշնանը «Հայկաշեն»-ի համար Զորի Բալայանի գրած ընդարձակ ծրագիրը:*

930 *Սա կարեւոր փաստարկ է հաստատելու համար մեր նախապես արած այն ենթադրությունը, թե ՀՀՇ-ի դեմ պայքարն ինչպես գաղափարական, այնպես էլ կազմակերպական առումով իրոք համակարգվում էր, եւ այդ համակարգումն իրականացնում էր ՀԿԿ-ՀՅԴ տանդեմը:*

931 *«Դրոշակ», 22.11.1989, էջ 12:*

կարող էր ընդամենը որոշ զորակցություն ցույց տալ, ապա երկրորդը (անկախության խնդիրը) «պանթուրքիզմի վտանգի» պայմաններում համարվում էր անթույլատրելի: Ուրեմն՝ եթե ՀՀՇ-ի առաջադրած այս խնդիրները համազգային հնչեղություն չունեն, չեն կարող նաեւ **համազգային** շարժում առաջացնել: Իսկ եթե չեն կարող նման շարժում առաջացնել, ուրեմն՝ «Ղարաբաղ» կոմիտեն իրավունք չունի օգտագործել այդ բառը: Իսկ «իրավ հայոց համազգային շարժման» խնդիրը դեռ մնում է չլուծված: Անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ հարցն այդքան լավ պատկերացնող Դաշնակցությունը ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ հետո, ինքը ձեռնամուխ չեղավ այդ՝ «իրավ հայոց համազգային շարժման» խնդրի իրականացմանը:

Այսինքն՝ որպեսզի հնարավոր գտներ իր մասնակցությունը ՀՀՇ համագումարին, ՀՅԴ-ն երկու պայման ուներ: Առաջին՝ գաղափարական առումով ՀՀՇ Ծրագրում ամբողջությամբ կրկնված տեսներ իր ծրագիրն ու պատկերացումները: Երկրորդ՝ նա լուրջ առարկություններ ուներ կազմակերպական իմաստով: Իր գաղափարախոսներից մեկի բերանով այդ առարկությունը հնչում է հետեւյալ կերպ. «Համագումարի համար ոչ մեկ տարբերություն չկար հնչակեանի, ռամկավարի, դաշնակցականի եւ այլ կազմակերպությունների միջեւ: Նրանք բոլորը Սփյուռքի հավասար կազմակերպություններ էին... «Ղարաբաղ» կոմիտեն... չուզեց, կամ չհասկացավ Դաշնակցության դերը այդ շարժման մեջ»[932]: Այսինքն՝ Դաշնակցությունը վիրավորված էր առանձնաշնորհի չարժանանալու համար, եւ չէր կարող իրեն թույլ տալ նույն դահլիճում հավասար կարգավիճակով նստել ռամկավարների եւ հնչակյանների հետ:

ՀՅԴ-ն կարծում էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն ոչ թե պետք է Հայաստանում գոյություն ունեցող Շարժմանը կազմակերպական տեսք տար եւ դարձներ «պաշտոնական կառավարության մրցակիցը», ընդհակառակը՝ նա պետք է ամեն կերպ խուսափեր իշխանության հավակնելուց: Համագումարին պետք է հրավիրվեին արդեն գոյություն ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչները՝ ըստ ազգային հարցերում եւ հասարակության մեջ իրենց կշռի եւ համարումի: Դժվար է ասել, թե ինչ չափանիշներով պետք է որոշվեր այդ կշիռը եւ, ըստ այդմ էլ՝ պատվիրակների քանակը յուրաքանչյուրից: ՀՅԴ-ն այդ շարքում իրեն, իհարկե, առաջինն էր համարում, իրենից հետո (ըստ նրա կենտրոնական մամուլի քաղաքական գնահատականների), ըստ արժանավորության՝ նա տեսնում էր կոմկուսը՝

[932] *«Դրոշակ», 06.12.1989, էջ 12:*

Ս. Հարությունյանի գլխավորությամբ, ապա՝ «Հայ մտավորականության համաժողովը», ապա՝ «Ոչ պաշտոնական կազմակերպությունների խորհուրդը», հետո գուցե նաեւ «Ղարաբաղ» կոմիտեն եւ ՀՀՇ-ն: Ահա այս բոլորը միասին պետք է «ճշտեին» Շարժման գաղափարական հիմքը, որոշեին խնդիրները եւ ղեկավարեին այն: Մինչդեռ, նրա գնահատմամբ՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամ որոշ անձինք ինչ-ինչ հաշիվներից ելնելով... ճարպիկ կերպով եւ երկդիմի բանաձեւումներով պճնազարդեցին մի ինչ-որ խոտոր քաղաքական ուղեգիծ եւ նպատակ, որը փաստորեն առիթ տվեց մեծ դժգոհությունների»[933]: Ըստ այսմ էլ՝ «Ղարաբաղ» կոմիտեի գործը ստանում է «ինքնակենտրոն», «ինքնանպատակ», «հատվածապաշտ», «այլամերժ» քաղաքական գնահատականները:

Դաշնակցական մամուլի վերլուծություններում ամենից հաճախ կրկնվող միտքն այն էր, թե Հայաստանում եւ Սփյուռքում ժողովրդի լայն շրջանակները խոր «հուսախաբություն» ապրեցին: Թե Սփյուռքում գործնական ինչ հետեւանքներ ունեցավ այդ «հուսախաբությունը», մեզ հայտնի չէ, իսկ Հայաստանում դրա արդյունքը մի քանի ամիս հետո եղավ համաժողովրդական լայն պաշտպանությամբ ՀՀՇ-ի անկասելի ու համոզիչ հաղթանակը Գերագույն խորհրդի ընտրություններում ու նրա կողմից կոմունիստական 70-ամյա ռեժիմի տապալումը:

Եւ այսպես.

Հայկական ժողովրդավարական շարժման քաղաքական կառույցի՝ ՀՀՇ-ի հիմնադիր համագումարի ու նրա որդեգրած քաղաքական ուղեգծի նկատմամբ Սփյուռքի վերաբերմունքը տարաբնույթ էր.

Ինչպես ի սկզբանե, Շարժման ջերմ պաշտպան էին շարունակում մնալ Սփյուռքի՝ կուսակցական ազդեցություններից դուրս շրջանակները:

«Առաջադիմականները», ընդհանուր առմամբ շարունակելով մնալ հայդատականության հիմքերի վրա, ավելի շատ անհանգստացած էին մրցակից Դաշնակցության՝ ՀՀՇ-ի կամ Հայաստանի իշխանության ավելի բարեհաճ վերաբերմունքին արժանանալու հնարավորությունից:

[933] *«Դրոշակ», 22.11.1989, էջ 6: Իրականում դժգոհ մնացին բոլոր այն ուժերը, ովքեր ամեն ինչ արեցին Շարժման առաջին համագումարը ձախողելու կամ նրա ղեկավար մարմնում տեղ գրավելու համար, ու դա նրանց չհաջողվեց: Տրամագծորեն այլ էր ընդհանուր հասարակական վերաբերմունքը, հիմք՝ որի վրա առաջիկա օրերին, շաբաթներին ու ամիսներին ՀՀՇ-ն կարողացավ լուծել անլուծելի թվացող ճակատագրական խնդիրներ:*

Դաշնակցությունը, շարունակելով իր կոշտ, ըստ էության՝ թշնամական վերաբերմունքը, խստորեն քննադատում էր Հայոց համազգային շարժման որդեգրած անկախության ուղեգիծը, փաստորեն պահանջելով, որ «ժամանակավորապես» դադարեցվի Լեռնային Ղարաբաղը Հայաստանի միացնելու համար պայքարը, իսկ ՀՀՇ-ն առաջնորդվի իր՝ ՀՅԴ-ի ծրագրով:

Ընդհանրապես, կուսակցական շրջանակները չէին ընդունում ՀՀՇ-ի առանձին քաղաքական ուժ դառնալու փաստը: Դա խոչընդոտելու համար, շահարկելով «ազգային միասնության» երեւութական գաղափարը, նրանք համարում էին, որ ՀՀՇ-ն պետք է լինի ընդամենը յուրատեսակ մի «հովանոց», որի տակ պետք է հավաքվեն մնացած բոլոր կազմակերպություններն ու կառույցները, ընդհուպ իշխող Կոմունիստական կուսակցությունը, ու միասին «որոշեն ազգային հարցերը»:

5. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ՄԵՐԺՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋՐԲԱԺԱՆԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ

ա) Լեռնային Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հայաստանյան պատվիրակությունն աշնանային նստաշրջան գնաց՝ զինված հանրապետության Գերագույն խորհրդի որոշումներով: Այստեղ սպասվում էր Լեռնային Ղարաբաղի հարցի հիմնական քննարկումը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հուլիսի 12-ին կազմված հանձնաժողովի (Մանյակինի նախագահությամբ) ուսումնասիրության արդյունքների եւ առաջարկությունների հիման վրա: Այդ առաջարկությունները ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հրաժարվեց քննարկել գարնանային նստաշրջանում եւ հետաձգեց մինչեւ աշնանային նստաշրջան: Թվում էր, որպես ամենահրատապ հարցերից մեկը, այն այլեւս հետաձգելու պատճառներ չպետք է ունենար, մանավանդ որ իրավիճակը Լեռնային Ղարաբաղում օր օրի սրվում էր՝ ուղեկցվելով նաեւ մարդկային զոհերով:

Սակայն արդեն իսկ երկու կարեւոր հանգամանք հուշում էին, որ այդ քննարկումից որեւէ դրական արդյունք դժվար է ակնկալել: Առաջինը՝ Հայաստանի եւ Ղարաբաղի աննախադեպ տնտեսական շրջափակման հարցն էր, որի քննարկումից եւ քաղաքական գնահատականից նստաշրջանը, փաստորեն, հրաժարվեց, իսկ նրա որոշումները եւ տարտամ հանձնարարությունները այս հարցում գործնական որեւէ արդյունք չունեցան: Նման դիրքորոշումը շրջափակումն իրականացնող կողմի՝ Ադրբեջանի համար, վերջին հաշվով, խրախուսական էին: Երկրորդը ԽՄԿԿ ԿԿ-ի կողմից ընդունված, այսպես կոչված, «Ազգային քաղաքականության պլատֆորմն» էր, որի հիման վրա եւ որի շրջանակներում էլ, բնականաբար, պետք է լուծվեին երկրում բարձրացված եւ կուտակված ազգային խնդիրները: Այս փաստաթուղթը եւս, որ երկար քննարկումներից հետո վերջապես ընդունվել էր սեպտեմբերին, լավատեսության ոչ մի հիմք չէր տալիս:

Հարցի քննարկումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում, այնուամենայնիվ, կարեւոր էր՝ վերջնականապես պաշտոնապես արձանագրված ունենալու

համար Մոսկվայի դիրքորոշումը: Դա ամենից առաջ պարզություն էր մտցնելու իրավիճակի մեջ եւ հիմք էր տալու այնուհետեւ ավելի վստահ ձեռնարկել հետագա քայլերին: Կախյալ վիճակն անորոշ էր. որոշ ուժերի փաստարկը, իսկ հասարակության եւ Շարժման մասնակիցների մի մասի հույսը, թե քննարկումից, այնուամենայնիվ, ինչ-որ դրական արդյունք կարող է ստացվել, երկարաձգում էր անորոշությունը, թույլ չէր տալիս ծրագրել եւ իրականացնել հետագա քայլերը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման տեսքով Կենտրոնի դիրքորոշման հստակեցումը կցրեր այդ անորոշությունը, հետագա քայլերի եւ գործողությունների համար որպես հիմք եւ փաստարկ կծառայեր: Հենց դա էլ, անշուշտ, ամենեւին ձեռնտու չէր Կենտրոնին, եւ նա ամեն կերպ ձգձգում էր հարցի քննարկումը:

Առաջին իսկ օրից արված պնդումները եւ ակնկալիքները, որ գեթ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակման հարցը հրատապ քննարկման կարժանանա, չնայած հոկտեմբերի 3-ին եւ 10-ին ընդունված ձեւական որոշումների, մնացել էին անհետեւանք: Ավելին՝ այդ որոշումներով Կենտրոնը, փաստորեն, կարողացավ շրջափակման խնդիրն առանձնացնել Ղարաբաղի հարցից: Պատահական չէ, որ նախագահողը միաժամանակ նաեւ հայտարարեց, որ ԼՂԻՄ-ի հարցն էլ դարձյալ անորոշ ժամանակով հետաձգվում է: Հայաստանի եւ Ղարաբաղի պատգամավորները դրա դեմ որպես բողոքի նշան ստիպված էին հեռանալ նիստերի դահլիճից[934]: Դրանից հետո արված հայտարարությունը, սակայն, հստակ ցուցադրում է, որ հայկական պատվիրակության այս քայլը ոչ թե նրա վճռականության, այլ անճարակության հետեւանք էր. նրանք հայտարարեցին, որ իրենք դահլիճից հեռացան անզորությունից՝ հրավիրելու համար գործընկերների ուշադրությունը, եւ «խնդրում են» քաղաքական գնահատական, «խնդրում են» հայտնել ԼՂԻՄ-ի հարցի քննարկման մոտավոր ժամկետը[935]: Պատվիրակությունը վերադարձավ նիստերի դահլիճ, թերեւս, այն բանից հետո, երբ ինչ-որ կերպ խոստացան կատարել նրանց վերջին խնդրանքը: Նույն օրը մեկ այլ հայտարարությամբ հանդես էր եկել ԼՂԻՄ պատվիրակությունը՝ բողոքելով «Սուվերենության մասին» Ադրբեջանի ընդունած օրենքի դեմ[936]:

Հոկտեմբերի 20-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը, Մ. Գորբաչովի նախագահությամբ, քննարկեց «ԼՂԻՄ հարցով հանձնաժողովի

934 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 13.10.1989:*
935 *Տե՛ս նույն տեղում:*
936 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 13.10.1989:*

աշխատանքների արդյունքների մասին» հարցը: Սակայն այդ արդյունքները ներկայացրեց ոչ թե Գերագույն խորհրդի՝ Մանյակինի նախագահությամբ ստեղծված հանձնաժողովը, այլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգային քաղաքականության եւ ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գ. Տարազեւիչը: Իսկ համագումարի հանձնարարությամբ հունիսի 12-ին կազմված հանձնաժողովն այդպես էլ երբեւէ իր եզրակացությունները եւ առաջարկները պաշտոնապես ներկայացնելու հնարավորություն չունեցավ ոչ միայն Գերագույն խորհրդում, այլեւ նրա նախագահությունում: Ըստ Լեռնային Ղարաբաղից ընտրված պատգամավոր Բ. Դադամյանի՝ նրա անդամներից յոթը կողմնակից են եղել մարզը Ադրբեջանի կազմից հանելու եւ Կենտրոնին ենթարկելու, երեքը՝ Հայաստանին միացնելու տարբերակին[937]: Մինչդեռ, համաձայն ԽՍՀՄ ԳԽ նախագահության այս նիստում ներկայացված նախագիծի՝ Լեռնային Ղարաբաղը պետք է մնար Ադրբեջանի կազմում՝ ենթարկվելով Մոսկվային: Հատուկ կառավարման կոմիտեն նախատեսվում էր վերանվանել Լեռնային Ղարաբաղի կառավարման արտակարգ ժամանակավոր հանձնաժողով եւ այդ Հանձնաժողովի մեջ ընդգրկել ներկայացուցիչներ նաեւ Բաքվից: Սա մի քայլ նահանջ էր եղած իրավիճակից՝ հօգուտ Ադրբեջանի: Անմիջապես Կենտրոնին ենթարկելու նպատակի համար արդեն իսկ ստեղծված էր մարմին, որի իրավունքներն ու լիազորությունները ընդամենը պետք էր հստակեցնել: Փոխհամաձայնություն, բնականաբար, չգտնվեց, եւ հարցը Գերագույն խորհրդում քննարկման ներկայացնելը հերթական անգամ հետաձգվեց մինչեւ հոկտեմբերի վերջը[938]:

Հոկտեմբերի 29-30-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչների եւ Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների հետ ընդհանուր մի հայտարարի փորձեց հասնել նույն՝ Ազգային քաղաքականության եւ ազգամիջյան հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Տարազեւիչը: Այս միջոցառումը եւս անցավ ապարդյուն[939]: Գերագույն խորհրդում հարցի

937 *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 288.*
938 *Տե՛ս նույն տեղում, էջ 272-274:*
939 *Անհամաձայնության առարկա դարձավ ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի խնդիրը: Ադրբեջանական կողմը պահանջում էր կատարել իր Գերագույն խորհրդի սեպտեմբերի 25-ի որոշումը՝ վերացնել այդ կոմիտեն ու դրա փոխարեն ստեղծել ժամանակավոր կառավարման այնպիսի մի մարմին, որը կենթարկվի ադրբեջանական իշխանություններին: Ղարաբաղյան կողմը պնդում էր, որ Հատուկ կառավարման կոմիտեն պահպանվի ու, ինչպես որ ի սկզբանե մտահղացված էր, անմիջապես*

քննարկման օր էր նշանակված նոյեմբերի 1-ը, սակայն այս անգամ էլ Նախագահությունն առանց որեւէ պատճառաբանության այն հետաձգեց նոյեմբերի 13-ի նիստին: Մինչ այդ՝ նոյեմբերի 9-ին, այդ քննարկումը նախապատրաստելու համար Ստեփանակերտ ժամանեց նույն Տարազեւիչը՝ փորձելով համաձայնություն գտնել տեղում: Նա Ղարաբաղի ղեկավարներին ներկայացրեց կացությունը կայունացնելու մասին իր հանձնաժողովի առաջարկությունները, սակայն որեւէ համաձայնություն չստացավ[940]: Նշանակված օրը՝ նոյեմբերի 13-ին, քննարկումը հետաձգվեց եւս մեկ օրով, իսկ հաջորդ օրը հետաձգվեց մինչեւ նոյեմբերի 20-ը:

Խոստումների եւ հետաձգումների այս մարաթոնը, սպասումները, որ անընդհատ լարված վիճակում էին պահում հասարակությանը, տեղի էին տալիս անհանգստության եւ զայրույթի: Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ ինչ-որ մի համաձայնության գալու եւս մի փորձ արվեց նաեւ նոյեմբերի 25-ին Ա. Լուկյանովի նախաձեռնությամբ, որը նույնպես որեւէ արդյունք չտվեց: Այստեղ Ղարաբաղի պատվիրակներին տրվել էր որոշման այն նախագիծը, որը պետք է ներկայացվեր Գերագույն խորհրդի հաստատմանը[941]:

ԼՂԻՄ հարցի կարգավորման խնդիրը վերջապես Գերագույն խորհրդի նիստի քննարկմանը դրվեց նոյեմբերի 28-ին, նստաշրջանի վերջին օրը: Առաջարկությունները ներկայացված էին ոչ թե Մանյակինի հանձնաժողովի, այլ ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության անունից: Նիստն անցնում էր փակ դռների ետեւում: Կես ժամ անց Ղարաբաղի պատգամավորները լքեցին դահլիճը: Նրանք պահանջել էին հարցը օրակարգից հանել եւ հետաձգել, մինչեւ կգտնվի փոխզիջումային լուծում, բայց դա չէր ընդունվել: Ըստ Ջ. Բալայանի՝ իրենց այդ քայլը պայմանավորված էր նրանով, որ պրոբլեմի քննարկումը կրում էր հապշտապ բնույթ, բացակա էր երկրի ղեկավարը, եւ որ դա տեղի էր ունենում այն պահին, երբ խիստ սրված էին հակասությունները, իսկ հանձնաժողովի եզրակացությունը «արտաքին ճնշմամբ արմատական փոփոխությունների էր ենթարկվել»[942]: Եթե վերջին փաստարկը հասկանալի է, ապա «հապշտապության» մասին բողոքն անտրամաբանական էր. ԼՂԻՄ հարցով հանձնաժողով ստեղծելու պահից սկսած՝ ամեն ինչ արվում էր այս

ենթարկվի կենտրոնական իշխանության մարմիններին (տե՛ս ՀՀԱՆԱ, 08/10.02.90, թ. 10-11):

[940] ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 291-293.*

[941] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29.11.1989:*

[942] *Նույն տեղում:*

քննարկումն օր առաջ իրականացնելու համար: Քննարկման անմիջապես նախօրերին Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի պատգամավորների ստորագրությամբ Մ. Գորբաչովի անունով համատեղ հայտարարություն էր հանձնվել, որի մեջ հենց վկայակոչելով օրավուր սրվող իրավիճակը, անթույլատրելի էին համարում հարցն օրակարգից հանելը եւ պահանջում էին արագացնել «ԼՂԻՄ-ի պրոբլեմի քաղաքական լուծումը»[943]: Այսինքն՝ թե՛ Լեռնային Ղարաբաղից, թե՛ Հայաստանից ընտրված պատգամավորները պետք է վաղուց դրան պատրաստ լինեին:

Հայաստանից ընտրված պատգամավորները շարունակեցին մասնակցել փակ նիստին, նրանց, ճիշտ է, ելույթի հնարավորություն տրվեց (Ս. Հարությունյան, Հ. Ոսկանյան, Գ. Գալոյան, Գ. Ենոքյան, Ս. Խանզադյան), սակայն դա որեւէ նշանակություն չունեցավ: Նախագիծը քվեարկվեց եւ հաստատվեց այն տեսքով, ինչպես ներկայացրել էր ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը:

բ) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ նոյեմբերի 28-ի որոշումը

Որոշումը վերնագրված էր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին»: Դրա հիմքում պետք է դրված լինեին վեց ամիս առաջ՝ հուլիսի 12-ին, հատուկ այդ հարցով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի հանձնարարությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից կազմված հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները եւ եզրակացությունները, որոնք այդպես էլ երբեւէ չհրապարակվեցին եւ բաց չքննարկվեցին: Այսինքն՝ ի սկզբանե այս հանձնաժողովն ընդամենը միջոց եւ քող էր ծառայել հարցը ձգձգելու համար, եւ նրա ուսումնասիրությունների արդյունքները, եթե այդպիսիք կային էլ, որեւէ դեր չէին կարող խաղալ:

Հետագա իրադարձություններից, բազմաթիվ հանդիպումներից, «քննարկումներից», հետաձգումներից ու ձգձգումներից, վերջին հաշվով, պարզ էր Կենտրոնի դիրքորոշումը, պարզ էր նաեւ, թե հարցի քննարկման դեպքում վերջնական վճիռը մոտավորապես ինչ բովանդակություն էր ունենալու: Նույնիսկ այս՝ ոչ մեծ սպասումների ֆոնին, ընդունված որոշումը, որն անցավ ընդամենը չորս դեմով, ոչ միայն հիասթափեցնող էր, այլեւ բացահայտ սադրիչ: Նրա հիմնական դրույթներն էին.

[943] *«Խորհրդային Հայաստան», 26.11.1989:*

ա) ի գիտություն ընդունել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հայտարարությունը՝ երկաթուղային եւ ավտոմոբիլային ճանապարհների շրջափակումը վերացնելու մասին,

բ) հավանություն տալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հետեւություններին եւ առաջարկություններին,

գ) ԼՂԻՄ-ի հետ կողմերի հավասար հիմունքներով ստեղծել հանրապետական «Կազմկոմիտե» եւ վերականգնել ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդների եւ նրանց գործկոմների գործունեությունը, դրանցում հայերի եւ ադրբեջանցիների մասնակցությունը պահպանել ըստ նրանց թվի համամասնության,

դ) Ադրբեջանի Գերագույն խորհրդին հանձնարարել ընդունել այնպիսի օրենսդրական միջոցառումներ, որոնք ապահովեն ԼՂԻՄ-ի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացում,

ե) աննպատակահարմար համարել Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը,

զ) մինչեւ իրավիճակի վերջնական կարգավորումը ԼՂԻՄ-ում թողնել ԽՍՀՄ ներքին զորքերի ստորաբաժանումները՝ այն ենթարկելով միութենական վերահսկիչ դիտորդ հանձնաժողովին[944],

է) Ադրբեջանի Գերագույն խորհրդին հանձնարարել միջոցներ ձեռնարկել, որ չխախտվի մարզի էթնիկական կազմը,

ը) Հայկական ԽՍՀ-ին եւ Ադրբեջանական ԽՍՀ-ին հանձնարարել միջոցներ ձեռնարկել երկու ժողովուրդների բարեկամական կապը ամրապնդելու համար[945]:

Դժվար չէ նկատել, որ այս որոշմամբ ամբողջովին ի չիք էին դարձվում մինչ այդ Լեռնային Ղարաբաղի հարցով ձեռք բերված արդյունքները: Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը, որքան էլ անարդյունավետ, բայց մի կես քայլ էր, որ արվել էր մարզը Ադրբեջանի իշխանությունների ուղղակի ենթակայությունից ու ճնշումներից դուրս բերելու համար: Այդ կոմիտեի վերացումը եւ Բաքվի մասնակցությամբ «Կազմկոմիտեի» ստեղծումը նշանակում էր, որ մարզն ամբողջությամբ եւ անմնացորդ կրկին հանձնվում է Ադրբեջանի գերիշխանությանը: Այս պայմաններում մարզխորհրդի եւ նրա գործկոմի գործունեության վերականգնումը արդեն նույն նշանակությունը

[944] *Այսպիսի հանձնաժողով ստեղծվեց 1990թ. հունվարի 16-ին, որի նախագահ էր նշանակված ԽՍՀՄ ԳԽ նախագահության անդամ Վ. Ֆոտեեւը (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1990, 1, հոդվ. 16 եւ 44):*

[945] *Տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1989, 25, հոդվ. 494:*

չէր կարող ունենալ, մանավանդ որ՝ մարզային իշխանության մարմինների վերականգնման կետն այդպես էլ երբեւէ չիրականացվեց: Հայկական ԽՍՀ-ն այս որոշմամբ, ի տարբերություն նախորդների, «նորմալացման» այս ծրագրում բացարձակ որեւէ դեր չէր ստանում: Շրջափակման փաստը ոչ միայն չէր դատապարտվում, դրա վերացման համար որեւէ մեխանիզմ չէր նախատեսվում, թեկուզ չէր պահանջվում Ադրբեջանից վերացնել այն, այլ ընդամենը «ի գիտություն» էր ընդունվում Ադրբեջանի Գերագույն խորհրդի հայտարարությունը:

Այս ամենն իրականում նշանակում էր Հայաստանի եւ Ղարաբաղի նկատմամբ տնտեսական շրջափակման քաղաքականության քաջալերում: Ադրբեջանին տրված հանձնարարականներն, ըստ էության, ձեւական բնույթ ունեին: Նման որոշումից հետո Հայաստանի եւ Ղարաբաղի պատվիրակություններին այլ բան չէր մնում, քան հերթական անգամ լքել նիստերի դահլիճը (ինչպես եւ վարվեցին), եւ դժվար էր լինելու նրանց ետ բերելու առիթ ու հիմք գտնելը: Պատվիրակությունների համար էլ դժվար էր լինելու իրենց տեւական բացակայությունն ապահովելը: Թերեւս, պատահական չէր նաեւ, որ հարցը, բազմիցս հետաձգվելով, քննարկվեց հենց նստաշրջանի վերջին օրը, որպեսզի նաեւ ազատված լինեն վերջին երկու խնդիրներից էլ: Սա նշանակում է նաեւ, որ մինչ այդ եղած բոլոր քննարկումները, խորհրդակցությունները եւ այլն, ընդամենը քող են ծառայել, իսկ քաղաքական որոշումը վաղուց ընդունված է եղել՝ նախատեսված պաշտոնականացնելու հենց նստաշրջանի վերջին օրը:

Որոշումը, փաստորեն, նպատակ ուներ ի չիք դարձնել ամբողջ երկու տարվա պայքարի համարյա բոլոր արդյունքները, ամեն ինչ վերադարձնել 1988թ. փետրվարի 20-ից առաջ գոյություն ունեցող վիճակին: Ավելին՝ այժմ անմիջապես Ստեփանակերտում պետք է նստեր Բաքվից եկած «Կազմկոմիտեն» եւ ղեկավարեր մարզը: Ուստի հասկանալի էր զայրույթի այն պոռթկումը, որ անմիջապես բարձրացավ Հայաստանում եւ Ղարաբաղում: Հաջորդ իսկ օրը Ստեփանակերտում բազմամարդ հանրահավաք տեղի ունեցավ, որի ընդունած բողոքի բանաձեւով կայացված որոշումը համարվում էր անօրինական եւ անընդունելի, անվստահություն էր հայտնվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, նրա նախագահին, նախագահությանը եւ հայտարարվում, որ ըստ այդմ էլ կկառուցվեն հարաբերությունները Կենտրոնի հետ: Որոշվեց ամբողջական բոյկոտ հայտարարել որոշմանը, կոմունիստներին եւ կոմերիտականներին առաջարկվեց դադարեցնել անդամավճարների մուծումը, լիակատար անհնազանդություն հայտարարվեց Ադրբեջանին,

Ղարաբաղի Ազգային խորհուրդը հայտարարվեց միակ օրինական իշխանություն: Դիմում հղվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդին եւ հայ ժողովրդին՝ ՀԽՍՀ-ի եւ «անկախ խորհրդային տարածք Արցախի» միաձուլմամբ ստեղծել նոր Հայկական հանրապետություն: Որոշման մեջ արձանագրվեց, որ ՀԽՍՀ-ից եւ ԼՂԻՄ-ից ընտրված ժողովրդական պատգամավորները պետք է բոյկոտեն ԽՍՀՄ ժողովուրդների 2-րդ համագումարը: Ազգային խորհուրդն, իր հերթին, ամբողջությամբ հավանություն տվեց հանրահավաքում ընդունված որոշումներին[946]: Ղարաբաղի հայության անունից նամակ հղվեց ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշին՝ նրան կոչ անելով հրաժարվել Գորբաչովի հետ նախատեսված հանդիպումից[947]:

Որոշման հաջորդ օրը՝ նոյեմբերի 29-ին, որ նաեւ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման օրն էր, Երեւանում տեղի ունեցավ սգո երթ: Բայց դա կապված էր միայն օրվա խորհրդի հետ: Իրականում ժողովուրդը եւ ՀՀՇ-ն տրամադրված էին մարտականորեն: Նույնիսկ պաշտոնական մամուլը մի քանի օր իրեն թույլ տվեց անցնել իր համար գծված բոլոր սահմանները՝ իր որակումներում երբեմն գերազանցելով Շարժմանը. «Նոյեմբերի 28-ի որոշումը անընդունելի է,- ասում է հանրապետության աշխատավորությունը» խորագրի տակ տպագրված նյութերի միայն վերնագրերը տպավորիչ են. «Նահանջ Սահմանադրությունից», «Նորից հայոց թղթե շերեփը», «Դարձյալ խաբեություն», «Ապօրինի որոշում», «Ոչ մի քայլ առաջ, այլ մի քանի քայլ հետ», «Պայքար մինչեւ հաղթանակ»[948], «Արդարությունը սրի ծայրին», «Հուսախաբություն», «Աղաղակող անիրավություն»[949]: Հայաստանի կոմկուսի պաշտոնաթերթը մի քանի օր տալիս էր գնահատականներ, որոնք հազվադեպ էին հնչում անգամ հանրահավաքներում. «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տխրահռչակ որոշում», «ԽՍՀՄ ՆԳ զորամիավորումները ու Կովկասի արյունարբու թաթարների «սեւ բլուզավորները» նույն բանակի ջոկատներն են»[950] եւ այլն: Հետաքրքիր է, որ լայն տեղ տալով այսօրինակ՝ «աշխատավորության բողոքներին», մամուլը ոչինչ չի ասում ՀԿԿ-ի եւ իշխանության ղեկավար մարմինների պաշտոնական դիրքորոշումների ու արձագանքների մասին, ըստ երեւույթին, որովհետեւ այդպիսիք պարզապես չկային: Որեւէ արձագանք չէր տալիս նաեւ «Մտավորականության համաժողովը», որն իրեն

[946] *Տե՛ս **Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 337-338.*
[947] *Տե՛ս «Դրոշակ», 14.03.1990, էջ 119:*
[948] *«Խորհրդային Հայաստան», 01.12.1989:*
[949] *«Խորհրդային Հայաստան», 02.12.1989:*
[950] *Տե՛ս նույն տեղում:*

կոչված էր համարում. ի թիվս հայ ազգի բոլոր հիմնահարցերի. «պաշտպանել Արցախի հարցի արդարացի լուծումը»:

Պաշտոնական մամուլում բողոքի այս «ալիքը» տեւեց ընդամենը 2-3 օր: Ենթադրելի է, որ դրա թույլտվությունը Հայաստանի իշխանությունը ստացել էր Կենտրոնից՝ նոյեմբերի 28-ի որոշման առիթով անխուսափելի հասարակական զայրույթի ալիքը այդ կերպ մեղմելու ու սեփական դեմքը փրկելու համար:

Հետաքրքիր է եւս մի հանգամանք. բացի պաշտոնական եւ չոր հաղորդագրությունից, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նոյեմբերի 30-ից սկսված արտահերթ նստաշրջանի առիթով մամուլում ոչ մի խոսք չկա այնտեղ քննարկվող հարցերի եւ հնչած ելույթների մասին: Մինչդեռ «Խորհրդային Հայաստանը» նույն՝ դեկտեմբերի 1-ի համարում, որ համարյա ամբողջությամբ նոյեմբերի 28-ի որոշման քննադատության է նվիրված, «Սփյուռքահայ մամուլի էջերից» խորագրի տակ ընդարձակ քաղվածք է բերում ՀՅԴ Բյուրոյի օրգան «Դրոշակից», որտեղ վերջինս իր հիասթափությունն է հայտնում ՀՀՇ-ից, նրա հիմնադիր համագումարից, քննադատում «Ղարաբաղ» կոմիտեի «հատվածապաշտությունն» ու «այլամերժությունը», հավաստիացնում. որ «հայրենաբնակ զանգվածները ծարավի են Դաշնակցության խոսքին» եւ այլն[951]: Գերագույն խորհրդի եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նստաշրջանում, որտեղ ՀՀՇ-ի թելադրանքով ընդունվում էին կարեւոր որոշումներ, իշխանությունը, ինքը չունենալով այդ համարձակությունը, Շարժման դեմ դիմում էր իր դաշնակցի օգնությանը:

գ) Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միացյալ հանրապետության հռչակումը

Նոյեմբերի 28-ի որոշումը Հայաստանին, Լեռնային Ղարաբաղին եւ Ղարաբաղյան շարժմանը նետված կոշտ մարտահրավեր էր: Ի տարբերություն Մոսկվայի նախորդ որոշումների, որոնք խնդիրը նենգափոխելու, ձգելու նպատակ էին հետապնդում, նոյեմբերի 28-ի որոշումը Կենտրոնը եւ Ադրբեջանն ամեն կերպ աշխատելու էին իրականացնել: Դրա դեմ արդյունավետ որեւէ քայլ չանելու դեպքում կարող էր վտանգվել պայքարի ոգին. առիթ տար հասարակական հակազդեցության ծայրահեղ դրսեւորումների, իսկ «Կազմկոմիտեի» տեսքով Ադրբեջանի անմիջական իշխանության

[951] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 01.12.1989:*

վերահաստատմամբ եւ Կենտրոնի գործուն օժանդակությամբ չափազանց դժվարին կացություն կստեղծեր Լեռնային Ղարաբաղի համար:

Դժվար է ասել, թե, բացի մամուլում «աշխատավորության բողոքների» եռօրյա հրապարակումից, Հայաստանի իշխանություններն իրենք ի՞նչ էին պատրաստվում դրան հակադրել, ի՞նչ քայլերի էին պատրաստվում դիմել: Անհայտ էր նաեւ, թե բացի հերթապահ հայտարարություններից, առավելագույնը՝ նիստերի դահլիճը լքելու արդեն քանիցս կրկնված եւ արժեզրկված քայլից, իրենց զինանոցում ի՞նչ միջոցներ ու ծրագրեր ունեին Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները: Այդպիսիք ո՛չ հրապարակվեցին, ո՛չ էլ իրականացվեցին, որ նշանակում է, թե՝ դրանք պարզապես չկային:

Շարժումը ուներ իր ծրագիրը: Նա պահանջում էր անհապաղ վերսկսել Գերագույն խորհրդի ընդհատված արտահերթ նստաշրջանը, որպես Ղարաբաղի ժողովրդի օրինական ներկայացուցիչներ՝ դրա նիստերին մասնակից դարձնել նաեւ Ղարաբաղի Ազգային խորհրդի ողջ կազմը եւ համատեղ որոշում ընդունել Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Հանրապետության իշխանությունը, բնականաբար, բոլոր միջոցներով դիմադրում էր: Սակայն հարյուր հազարավոր մասնակիցներով հանրահավաքը, որ սկսվել էր նոյեմբերի 28-ի որոշումից անմիջապես հետո, մտադիր չէր տեղի տալ: Չնայած հերթական նստաշրջանն արդեն հայտարարված էր դեկտեմբերի 4-ին, հանրահավաքի անդիմադրելի ճնշման տակ արտահերթ նստաշրջան նշանակվեց նոյեմբերի 30-ին:

Իրադարձությունների ընթացքը, ներառյալ Մոսկվայի վատթարագույն որոշման հնարավորությունն ի սկզբանե կանխատեսելի էր Շարժման ղեկավարության համար: Ուստիեւ՝ երկու օր անց, նոյեմբերի 30-ին սկսված ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանին ՀՀՇ-ն ներկայացել էր համապատասխան որոշումների նախագծերի մի ամբողջ փաթեթով:

Առաջին հարցը, բնականաբար, վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի խնդրին:

Հոկտեմբեր – նոյեմբեր ամիսներին ինչ-որ տրամադրություններ սկսեցին տարածվել Լեռնային Ղարաբաղի խնդրով սահմանադրական պայքարի փակուղային իրավիճակում հայտնվելու մասին: Դրան, մի կողմից, նպաստել էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում շրջափակումների եւ Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման ձգձգումները, երբեմն սադրիչ բնույթի որոշումներն ու ելույթները, մյուս կողմից՝ Շարժման հակառակորդների քարոզչությունը: Թերեւս, տեղի տալով նաեւ այս մտայնությանը, ինչպես

նաեւ հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում իրականացված արյունալի սադրանքին, հոկտեմբերի 19-ին Ղարաբաղի Ազգային խորհուրդն ընդունել էր մի որոշում: Այն արձանագրում էր, որ, չստանալով 1988թ. փետրվարի 20-ի իր դիմումի դրական պատասխանը, Ղարաբաղը նույն թվականի հուլիսի 12-ին, հենվելով ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրա, իրեն դուրս է հայտարարել Ադրբեջանի կազմից: Իսկ այժմ, որպես այդպիսին, դիմում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդին՝ քննարկելու **Լեռնային Ղարաբաղը ՀԽՍՀ-ի մեջ ընդունելու** եւ դրա համար գործնական միջոցառումների ծրագիր մշակելու համար միացյալ հանձնաժողով ստեղծելու հարցերը [952]: Ազգային խորհրդի որեւէ դիմում, որքան էլ այն ուղղված լիներ Հայաստանի պաշտոնական իշխանությանը, բնականաբար, լուծելի էր միայն Շարժման ճնշմամբ, ուստիեւ խնդիրը դրվում էր նրա առջեւ: Մինչդեռ այս դիմումն իր ձեւակերպմամբ տուրք էր հայդատականությանը, եւ, որպես այդպիսին, վտանգավոր՝ Շարժման օրակարգում նույնությամբ ներառելու ու հետապնդելու համար:

Ղարաբաղի հարցում Հայոց համազգային շարժման հերթական քայլերի ծրագիրը ներկայացվեց քիչ ուշ, ՀՀՇ համագումարից հետո, Լեւոն Տեր–Պետրոսյանի՝ «Արցախյան խնդրի լուծման ուղին» հոդվածով: Այստեղ հիմնավորվում էր, որ սխալ են ոմանց մոտ հուսախաբություն ծնող այն պատկերացումները, թե սահմանադրական պայքարի միջոցները սպառվել են, եւ Լեռնային Ղարաբաղի խնդիրը փակուղի է մտել: Իսկ նույն հիմքով արդարացվող ծայրահեղական ձգտումները, միջազգային ատյաններին դիմելու հուսահատական կոչերը եւ այլն, միայն նպատակ ունեն վարկաբեկել Շարժումը եւ հարմար առիթ կարող են դառնալ բռնությունների կիրառման համար: Որքան էլ գայթակղիչ, սակայն խոցելի էր համարվում այն տեսակետը, ըստ որի՝ Հայաստանի Գերագույն խորհուրդը պետք է պարզապես Արցախը հայտարարի Հայաստանի անբաժան մաս, ինչը կմեկնաբանվի որպես ե՛ւ միջազգային հանրության համար անընդունելի հողային պահանջատիրություն ե՛ւ միջազգային իրավունքի խախտում: Թե՛ սահմանադրականության պահանջների ապահովման, թե՛ միջազգային իրավունքի առումով խնդիրը նույն կերպ լուծելու անխոցելի տարբերակը համարվում էր այն, որ ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի մարզը եւ Հայաստանը, որպես խորհրդային պետական կառուցվածքի երկու ինքնուրույն կազմավորումներ, միմյանց հետ պայմանագիր են կնքում ու հայտարարում մեկ միացյալ հանրապետություն: Իսկ դրան արդեն պետք է հետեւեն գործնական

---

[952] *Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 21.10.1989:*

քայլեր, ներառյալ՝ Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունը Լեռնային Ղարաբաղի ընտրատարածքներից[953] :

Նոյեմբերի 28-ի որոշումից հետո այս ծրագիրն անհրաժեշտ էր անհապաղ իրականացնել, հակառակ դեպքում անխուսափելի կարող էր լինել ինչպես հասարակության մի մասի մեջ հուսախաբության խորացումը, այնպես էլ ծայրահեղական ու դրանով իսկ վտանգավոր ու անկանխատեսելի հետեւանքներով հղի, չկշռադատված միջոցների դիմելու գայթակղությունը:

Հանրահավաքի ճնշման տակ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը արտահերթ նստաշրջան հայտարարեց նոյեմբերի 30-ին եւ խոստացավ նստաշրջանին մասնակցելու համար պաշտոնապես հրավիրել Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի ողջ կազմը՝ համատեղ նիստ անցկացնելու եւ վերամիավորման որոշումն ընդունելու համար: Սակայն շուտով պարզվեց, որ պաշտոնական հրավեր ուղարկվել է միայն երեք հոգու: Սա նշանակում էր, որ ԳԽ նախագահությունը, այնուամենայնիվ, հույս ուներ տապալել համատեղ նիստը եւ չընդունել հիշյալ որոշումը: Ակնհայտ խաբեությունն ավելի բորբոքեց կրքերը, եւ նոյեմբերի 30-ին այն շենքը, որտեղ պետք է ընթանար նստաշրջանը, շրջափակված մնաց այնքան ժամանակ, մինչեւ ժամանեցին Ղարաբաղի Ազգային խորհրդի բոլոր անդամները: Առաջին որոշումը, որ հասցրին կայացնել նույն օրը՝ վերաբերում էր հենց համատեղ նիստ անցկացնելուն:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 1-ին, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը ներկայացրեց հաղորդում ԽՍՀՄ Գերագույն խորհրդում Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման եւ դրա արդյունքների մասին: Հրապարակվեց Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դիմումը՝ ուղղված ՀԽՍՀ Գերագույն խորհրդին: Այս դիմումի կապակցությամբ Լեւոն Տեր-Պետրոսյանը հրապարակեց նաեւ Հայոց համազգային շարժման հայտարարությունը[954]:

Ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը՝ Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Որպես այդօրինակ քայլի հիմք՝ նշվում էր ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքը[955], հայ

[953] *Տե՛ս Տեր-Պետրոսյան, Ընտրանի, էջ 55-60: Այս հոդվածը հրապարակվեց թերթում. Տեր-Պետրոսյան Լ., Արցախյան խնդրի լուծման ուղին, «Ավանգարդ» 19.11.1989:*

[954] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 01.12.1989:*

[955] *Առաջին անգամ պաշտոնական փաստաթղթում այն այլեւս չկոչվեց «լենինյան»: Դա հնարավոր եղավ այն բանից հետո, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանն իր ելույթում ներկայացրեց այս սկզբունքի ծագման պատմությունը, հենց Լենինի օրոք ու նրա կամքով դրա զլացումը հայ ժողովրդին, ինչպես նաեւ վկայակոչելով ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ գործող Սահմանադրությունները, որոնցում խոսքը «ազգերի ինքնորոշման իրավունքի» մասին էր, առանց որեւէ բնորոշման:*

ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտումը: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում էր ԼՂԻՄ ինքնորոշման փաստը, որ արձանագրվել էր մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 12-ի նստաշրջանների, մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989թ. օգոստոսի 16-ի համագումարի եւ Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում: Լեռնային Ղարաբաղի լիազոր-ներկայացուցիչների համագումարը եւ նրա ընտրած Ազգային խորհուրդը ճանաչվում էին որպես մարզում գործող միակ օրինական իշխանություն: Որոշման 3-րդ կետով հռչակվում էր վերամիավորման փաստը, եւ Ղարաբաղի բնակչության վրա տարածվում էին ՀԽՍՀ քաղաքացիության իրավունքները: Նախատեսվում էր ստեղծել համատեղ հանձնաժողով՝ միավորումն իրականացնելու համար գործնական քայլեր մշակելու նպատակով: Պարտավորություն էր վերցվում ներկայացնել Հյուսիսային Արցախի՝ Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության շահերը: Գործադիր իշխանությանը հանձնարարվում էր գործադրել անհրաժեշտ միջոցառումներ՝ «իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում»[956]:

Նույն օրն ընդունված հաջորդ որոշումը, որ նույնպես ամբողջությամբ արտահայտում էր Հայոց համազգային շարժման տեսակետներն ու գնահատականները, վերաբերում էր ԽՍՀՄ ԳԽ-ի նոյեմբերի 28-ի որոշմանը: Ընդարձակ ներածականը վերջինիս քաղաքական գնահատականն էր: Այն գնահատվում էր որպես բռնակցման նոր ակտ՝ հակառակ ինքնավար մարզի հայ բնակչության հստակ եւ օրինական ձեւով բազմիցս արտահայտված միահամուռ կամքի: Այդօրինակ որոշումը հատկապես անընդունելի եւ վտանգավոր էր համարվում այն պայմաններում, երբ Ադրբեջանը համառորեն հրաժարվում էր ճանաչել Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության փաստը, խուսափում էր Շուշիում, Բաքվում, Կիրովաբադում եւ այլ վայրերում ջարդերի եւ սպանությունների քաղաքական եւ իրավական պատշաճ որակումից, ամբողջ երկու տարի շրջափակման մեջ էր պահում Լեռնային

[956] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 144:*

Ղարաբաղը՝ զրկելով նրան կենսագործունեության նվազագույն հնարավորություններից՝ գործողություններ եւ վարքագիծ, որոնց պատճառով վտանգված էր մարզի բնակչության նվազագույն ապահովությունը: Իսկ մի քանի շաբաթ առաջ իր ընդունած սահմանադրական օրենքով Ադրբեջանը նպատակ էր դրել ընդհանրապես ոչնչացնել հայկական ազգային-պետական այդ ինքնավար կազմավորումը: Արձանագրվում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ նոյեմբերի 28-ի որոշումն ընդունվել է ժողովրդավարական-պառլամենտական ընթացակարգի խախտմամբ. հարցը ուսումնասիրելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կազմած հատուկ հանձնաժողովին թույլ չի տրվել իր եզրահանգումների մասին զեկուցել նստաշրջանում, ցուցադրաբար եւ ամբողջությամբ անտեսվել է Լեռնային Ղարաբաղը եւ Հայկական ԽՍՀ-ը ներկայացնող պատգամավորների կարծիքը, որոշումն ընդունվել է առանց խնդրի պատշաճ քննարկման, ԼՂԻՄ-ից եւ ՀԽՍՀ-ից ընտրված պատգամավորների բացակայությամբ, որոնք, որպես բողոքի նշան՝ լքել են նիստերի դահլիճը: Ընդգծվում էր, որ նոյեմբերի 28-ի որոշումը «նահանջ է առանց այն էլ սահմանափակ այն միջոցառումներից, որոնց կատարումը ներկայացվում էր որպես իրավական հիման վրա Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական լուծման անհրաժեշտ պայման: Խոսքը վերաբերում էր Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության դադարեցմանը: Ժամանակին վերջինիս ստեղծումը ենթադրում էր մարզի դուրս բերում Ադրբեջանի անմիջական ենթակայությունից՝ հարցի օբյեկտիվ քննարկման նկատառումով:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ այս որոշման հիմնական դրույթներն էին.

ա) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի խնդրո առարկա որոշումը որակվում էր որպես մարզը Ադրբեջանին բռնակցելու նոր ակտ.

բ) Լեռնային Ղարաբաղի հայության, որպես հայ ժողովրդի՝ բռնությամբ անջատված մի մասի, ինքնորոշման իրավունքի ժխտումը համարվում էր որպես ամբողջ հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի անտեսում, ինչն ուղղակիորեն ոտնահարում էր խորհրդային ֆեդերացիայի կամավորության սկզբունքը, ԽՍՀՄ Սահմանադրությունը, ԽՍՀՄ միջազգային պարտավորությունները եւ միջազգային համապատասխան փաստաթղթերի հիմնական նորմերը (դրանք թվարկվում են).

գ) որպես այդպիսին՝ նոյեմբերի 28-ի որոշումը Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի համար հայտարարվում էր անվավեր եւ որեւէ իրավական հետեւանք չստեղծող.

դ) նախատեսվում էր բողոքով դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, բոլոր միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին, ՄԱԿ-ի անդամ պետությունների պառլամենտներին եւ այլն.

ե) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հետագա որոշումները՝ «հայ ժողովրդի իրավունքներին եւ շահերին դրանց չհամապատասխանելու դեպքում», համարվում էին չգործող[957]:

Վերամիավորման որոշումը կենսագործելու համար դեկտեմբերի 6-ին ստեղծվեց նաեւ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ հանձնաժողով: Վերջինիս մեջ, որպես ՀՀՇ-ի ներկայացուցիչներ, ընդգրկվեցին Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ Վազգեն Մանուկյանը[958]:

Հայոց համազգային շարժման նախաձեռնությամբ եւ համաժողովրդական գործուն պաշտպանությամբ, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ համատեղ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի հրավիրումը եւ ընդունված այս երկու համարձակ որոշումները կարծես թե ստեղծված իրավիճակում միակ, այլընտրանք չունեցող քայլերն էին: Ճիշտ է՝ դա նաեւ, եւ առաջին հերթին, նշանակում էր կտրուկ հակադրում Մոսկվային, բայց իրավիճակը, փաստորեն, ստեղծել էր հենց Կենտրոնը, եւ դրան համարժեք քայլ չանելը կարող էր վտանգել շատ բան, եւ առաջին հերթին՝ Ղարաբաղը:

Սակայն հարցը միայն ֆորմալ պատասխանը եւ դրանով Շարժման ոգեւորությունն ու թափը պահելը չէր: Հայաստանի իշխանությունները սեփական որոշման պարտադրանքով եւ Շարժման ամենօրյա ճնշման տակ ստիպված էին այլ օրենսդրական, ինչպես նաեւ ինչ-որ գործնական քայլեր անել ե՛ւ տնտեսական, ե՛ւ պաշտպանական խնդիրների լուծման առումով, կամ, համենայնդեպս, չխոչընդոտել Շարժման նմանօրինակ նախաձեռնությունները:

Նույն օրը՝ դեկտեմբերի 1-ին, նստաշրջանը, առաջին անգամ լինելով, իր որոշմամբ անդրադարձավ պաշտպանական հարցերի՝ լսելով Հայկական ԽՍՀ ներքին գործերի նախարարի հաղորդումը «Ադրբեջանական ԽՍՀ-ին սահմանամերձ Հայկական ԽՍՀ շրջանների եւ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության կյանքի անվտանգության ապահովման մասին»[959]: Մեկ այլ որոշմամբ Հայկական ԽՍՀ դատախազությանը եւ ներքին գործերի նախարարությանը հանձնարարվեց զբաղվել Ադրբեջանական ԽՍՀ բանտերում գտնվող հայ կալանավորների տեղափոխման

---

[957] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 23, հոդվ. 145:*
[958] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 23, հոդվ. 156:*
[959] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 23, հոդվ. 148:*

հարցերով[960]: Նորից հատուկ քննարկման առարկա դարձան նաեւ փախստականներին տեղավորելու եւ նրանց կենսապայմանների հետ կապված հարցերը:

դ) Արմատական ժողովրդավարական վերափոխումների՝ ՀՀՇ-ի օրենսդրական նախաձեռնությունը

Գերագույն խորհրդի նստաշրջանը հրավիրվել, դրանում ԼՂԻՄ Ազգային խորհրդի մասնակցությունն ապահովվել, վերամիավորման եւ մյուս բոլոր որոշումներն ընդունվել էին Շարժման ճնշման տակ, նրա պատրաստած նախագծերով՝ հաղթահարելով իշխանական պաշտոնեության համառ դիմադրությունը: Ճիշտ է՝ որոշումներն ընդունելուց անմիջապես հետո նրանք եւս սկսեցին թմբկահարել դրանք եւ ներկայացնել որպես նաեւ իրենց դիրքորոշում ու վաստակ: Սակայն այդ ամենը կմնար թղթի վրա, գործնական որեւէ արդյունք չէր ունենա, եթե չլիներ դրանց տրամաբանական շարունակությունը, այն մեխանիզմը, որով ընդունված որոշումները պետք է գործադրվեին եւ առարկայանային: Ահա այս բացն է, որ լրացնում էր ՀՀՇ վարչության օրենսդրական նախաձեռնությունների փաթեթում հաջորդ կարեւորագույն նախագիծը, որ կոչվում էր «Հայկական ԽՍՀ եւ ԽՍՀՄ պայմանագրով հաստատված պարտավորությունների կատարման եւ Հայկական ԽՍՀ-ում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին»:

Հայոց համազգային շարժման անունից այն ներկայացրեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Խնդիրը ներկայանում էր հետեւյալ կերպ: ԽՍՀՄ կազմավորման պայմանագրով Հայաստանը եւ ԽՍՀՄ-ը միմյանց նկատմամբ որոշակի պարտավորություններ են վերցրել: Կողմերից մեկը՝ Հայաստանը, իր իրավասությունների մի մասը զիջել է Կենտրոնին, որի դիմաց Կենտրոնը ստանձնել է որոշակի, այդ թվում՝ նաեւ նրա անվտանգությունը երաշխավորելու պարտավորություններ: Հայաստանը մինչեւ վերջ կատարել էր իր պարտավորությունները, Կենտրոնն, ահա, ի դեմս նաեւ նոյեմբերի 28-ի իր որոշման, հրաժարվում էր կատարել արտաքին ագրեսիայից (որ տվյալ դեպքում արտահայտվում էր շրջափակման տեսքով) եւ բնակչության կյանքի անվտանգությունը

[960] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 149:*

երաշխավորելու իր պարտականությունը: Բնական էր, որ նման պայմաններում տուժող կողմը պետք է օրակարգի հարց դարձներ հիշյալ պայմանագիրը: Հարցը ձեւակերպված էր այնպես, որ այն ոչ մի կերպ չէր կարելի մեկնաբանել որպես ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող ակտ: Ինչ վերաբերում է արմատական ժողովրդավարական վերափոխումների ընթացք վերցնելուն, ապա դա ոչ միայն կնպաստեր ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծմանը, այլեւ դրանով Հայաստանը կմեծացներ ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության համակրանքը, ինչն անհրաժեշտ էր Կենտրոնի ճնշումներից պաշտպանվելու համար:

Արմատական ժողովրդավարական վերափոխումների անցկացման այս վերջին խնդիրը Հայոց համազգային շարժման օրենսդրական նախաձեռնությունների փաթեթի ամենակարեւոր միավորն էր, այն մեխանիզմը, որով կարող էին կյանքի կոչվել մյուս, այդ թվում՝ նաեւ վերամիավորման որոշումները: Այդ էր պատճառը, որ տասնյակ հազարավոր մարդիկ շրջափակել էին այն շենքը, որտեղ ընթանում էր նստաշրջանը, եւ մինչեւ դեկտեմբերի լույս 2-ի ժամը 2-ը թույլ չէին տալիս պատգամավորներին հեռանալ առանց այդ որոշման ընդունման:

Կոմունիստական Գերագույն խորհուրդը կարողացավ խուսափել այդ փաստաթղթի քննարկումից՝ դիմելով հարցը մեջտեղից հանելու փորձված միջոցի. հանձնարարեց սոցիալիստական օրինականության հարցերի հանձնաժողովին՝ այն «մշակել եւ պատրաստ լինելուն պես ներկայացնել Գերագույն խորհրդի քննարկմանը»[961]: Սակայն այն, որպես ընդունված որոշումների փաթեթի անբաժանելի մաս, գործադրման միջոց, հրատապ էր, առանց դրա՝ մյուսները պարզապես կմնային թղթի վրա եւ գործնական որեւէ արդյունք չէին ունենա: Ուստի եւ՝ ընդամենը երեք օր անց, դեկտեմբերի 4-ին, արդեն Գերագույն խորհրդի հերթական՝ 11-րդ նստաշրջանը, ՀՀՇ-ի ճնշմամբ, ստիպված էր կրկին անդրադառնալ այդ փաստաթղթին: Այժմ ՀՀՇ վարչության կողմից այն ներկայացված էր որպես «Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին հոչակագիր» եւ ակնկալվում էր փաստաթուղթը Գերագույն խորհրդի որոշմամբ դնել համաժողովրդական քննարկման:

Հարցը կրկին ներկայացրեց Լեւոն Տեր-Պետրոսյանը, որի ներածական հիմնավորող ելույթն, ըստ էության, Շարժման պայքարի հստակ ռազմավարությունն էր: Դա հետեւյալն էր: Ժողովրդավարության բացակայությունն է,

[961] *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 151:*

որ նախորդ շրջանում պատճառ է դարձել բոլոր դժբախտությունների: Ժողովրդավարական բարեփոխումների նախաձեռնությամբ Հայաստանը ադրբեջանական կողմի բռնությանը եւ կենտրոնական իշխանությունների ահաբեկչական գործողություններին կհակադրի հայկական գործոնը: Ժողովրդավարական նոր նախաձեռնությունների իրականացմամբ Հայաստանը կտրուկ կմեծացնի իր դաշնակիցների՝ Խորհրդային Միության ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության օժանդակությունը: Եւ դա կհզորացնի հայկական գործոնը, որը կարող է հաջողությամբ հակադրվել ինչպես ադրբեջանական բռնության գործոնին, այնպես էլ պատնեշ լինել Կենտրոնի ճնշումների ու ահաբեկչական միջոցառումների դեմ: Դրանով Հայաստանը լուրջ աջակցություն կստանա Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման, ինչպես նաեւ երաշխիքներ ձեռք կբերի Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի բնակչության կյանքի անվտանգության ապահովման առումով, քանի որ որեւէ ոտնձգություն Հայաստանի նկատմամբ կդիտվի որպես բռնություն ժողովրդավարության դեմ[962]:

Բուն Հռչակագիրն իր ներածական մասում արմատական ժողովրդավարական վերափոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորում էր հետեւյալ փաստարկներով.

ա) Երկրում ընթանում են հակասական գործընթացներ. մի կողմից՝ խորհրդային կարգերի ժողովրդավարացմանն ուղղված միջոցառումներ, մյուս կողմից՝ վարչահրամայական մեթոդներին հավատարիմ ուժերը ձեռնարկում են հետադիմական քայլեր: Դրա հետեւանքով ստեղծվում է մի իրավիճակ, որը հղի է լայնամասշտաբ բռնությունների սանձազերծման վտանգով:

բ) Վերջին երկու տարիների ընթացքում հայ ժողովուրդը կենտրոնական իշխանությունների թողտվությամբ բազմիցս ենթարկվել է ադրբեջանական իշխանությունների եւ խորհրդային բանակի կողմից ձեռնարկված ահաբեկչական գործողությունների, որոնց նպատակն է բռնի ուժով ոտնահարել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը:

գ) Հայ ժողովրդի բնականոն զարգացման եւ նրա ազգային իղձերի իրականացման համար անհրաժեշտ են կայուն երաշխիքներ, որոնց առկայության դեպքում նրա բախտն այլեւս կախված չի լինի անցողիկ քաղաքական հանգամանքներից եւ հակամարտ ուժերի տեղաբաշխումից:

---

962 *Տեր-Պետրոսյան Լ., Արմատական դեմոկրատական վերափոխումների անցկացման անհրաժեշտությունը Հայաստանում (տե՛ս Ընտրանի, էջ 61-65):*

Այս երեք դրույթներն էլ՝ անցած երկու տարիների եւ հատկապես վերջին շրջանի թարմ իրադարձությունների ֆոնի վրա, կարծես թե կասկած չպետք է հարուցեին, դա բազմիցս ապացուցվել էր, նաեւ արձանագրվել պաշտոնական փաստաթղթերում: Այս հիմքի վրա Գերագույն խորհուրդը պետք է հաստատեր արմատական ժողովրդավարական վերափոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ նախատեսելով առաջիկայում իրականացնել հետեւյալ քայլերը.

1. «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխման հիման վրա, վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն:

2. Հանրապետության Սահմանադրությունից հանվում է Կոմունիստական կուսակցության ղեկավար դերին վերաբերող 6-րդ հոդվածը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ նաեւ քաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը:

3. Հանրապետությունում հաստատվում է խոսքի, մամուլի, խղճի լիակատար ազատություն, արվեստի, գրականության եւ հասարակական գիտությունների բնագավառում վերացվում է գրաքննությունը:

4. Բոլոր նախկին քաղբանտարկյալներին եւ քաղաքական նկատառումներով հալածված անձանց շնորհվում է լիակատար արդարացում՝ հատուցելով նրանց կրած վնասները:

5. Հանրապետության ընտրական օրենքում նախատեսվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի եւ շրջանային ու քաղաքային խորհուրդների նախագահների ուղղակի ժողովրդական ընտրություն, բացառվում է այդ եւ պետական-կուսակցական այլ պաշտոնների համատեղումը:

6. Հայկական ԽՍՀ տարածքում չեն գործում ԽՍՀՄ այն օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, որոնք չեն վավերացվում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից:

7. Հայկական ԽՍՀ-ում վերացվում է Կենտրոնից կուսակցական եւ պետական պաշտոնյաներ նշանակելու գաղութատիրական պրակտիկան»[963]:

---

963 *Հռչակագրի տեքստը տես՝ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, էջ 65-67: ՀՀՇ-ի այս Հռչակագիրը քննարկումից երկու շաբաթ հետո հրապարակեց «Երեկոյան Երեւան» թերթը («Հռչակագիր Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին», 20.12.1989)՝ ընդառաջելով 12 պատգամավորների անունով ստացված միջնորդություններին, եւ, հավանաբար, դրանում որոշ փոփոխություններ կատարելու պայմանով: Մասնավորապես՝ թերթային տարբերակում*

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ խնդիրը օրակարգ մտցնելու առաջարկն արդեն իսկ սուր վիճաբանություն առաջացրեց[964]: Գերագույն խորհրդի նստաշրջանը դեկտեմբերի 6-ին որոշում կայացրեց. «նպատակահարմար չգտնել նշված Հռչակագիրը ժողովրդական քննարկման դնելը»[965]:

Դժվար չէ նկատել, որ թվարկված քայլերն այն նվազագույն անհրաժեշտ նախապայմաններն էին, առանց որոնց չէր կարող խոսք լինել եւ ոչ մի ժողովրդավարության մասին: Չէր կարող խոսք լինել ժողովրդավարության մասին մի երկրում, որտեղ Սահմանադրության ուժով ոչ միայն նախասահմանված է մեկ՝ որոշակի կուսակցության իշխանությունը, այլեւ արգելված էր որեւէ այլ կուսակցության գոյություն: Ընդհակառակը՝ դա հենց այն հիմքն է, որի վրա հաստատվում են բռնապետությունները: Այս հարցն, անշուշտ, առաջին անգամ չէ, եւ միայն Հայաստանում չէ, որ «Վերակառուցման» տարիներին բարձրանում էր, սակայն համակարգը համառորեն դիմադրում էր[966]:

Համակարգը համառորեն դիմադրում էր նաեւ խոսքի, մամուլի եւ խղճի ազատություն հաստատելուն, գրաքննության խայտառակ երեւույթի վերացմանը: Դրանք եւս ամեն մի բռնապետության հիմքերի պահպանման կարեւոր երաշխիքներ էին: Ջանգվածային լրատվության բոլոր միջոցները ստեղծվել եւ պահվում էին մեկ՝ կոմունիստական գաղափարախոսության քարոզի համար, նրանք պետք է իրացնեին միայն գաղափարախոսական բազմաթիվ կառույցների արտադրանքը եւ կատարեին նրանց պատվերը:

*խմբագրության կողմից հանված է 1-ին կետն ամբողջությամբ եւ մեղմացված են որոշ որակումներ: Ամբողջական տեսքով հրապարակվել է հետագայում (տե՛ս **Դավթյան Վ.**, Առասպելի եւ իրականի սահմանագծին, Լեւոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին եւ քաղաքագետը, Երեւան, 1996, էջ 105-106):*

964 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05.12.1989:*

965 *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԽ-ի, 1989, 23, հոդվ. 157:*

966 *Իշխանական համակարգում արմատական վերափոխումների հարցն առաջինը բարձրացրել էր Անդրեյ Սախարովը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում քննարկման ներկայացնելով «Դեկրետ իշխանության մասին» իր հեղինակած հայտնի փաստաթուղթը: Վերջինս, մասնավորապես, նախատեսում էր ինչպես Սահմանադրության 6-րդ հոդվածի վերացում, այնպես էլ՝ որ ԽՍՀՄ օրենքները հանրապետություններում գործեն միայն վերջիններիս օրենսդիր մարմինների կողմից հաստատվելուց հետո: Սահմանադրության 6-րդ հոդվածի հարցը փորձ արվեց մտցնել նաեւ ԽՍՀՄ ժող. պատգամավորների 2-րդ համագումարի օրակարգ, ինչը չհաջողվեց միայն «անվայելուչ» քվեարկության պատճառով. պատգամավորների 100 քարտ չէր գործել, եւ կողմ ձայները գրանցվել էին բացակա (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 22.12. 1989):*

Գրաքննությունը պետք է աչալուրջ հետեւեր, որպեսզի գրականության եւ արվեստի գործերում, հասարակական գիտությունների արտադրանքում որեւէ ակնարկ չլիներ իշխող գաղափարախոսության դեմ: Նույն գաղափարախոսության, ուստի եւ համակարգի հիմքերն էր խարխլում նաեւ քաղաքական նկատառումներով դատապարտված անձանց արդարացման եւ նրանց կրած վնասների հատուցման պահանջը:

Բռնապետության, իշխող համակարգի համար նույնքան վտանգավոր եւ անընդունելի էին ուղիղ, մրցակցային ընտրությունները: Տասնամյակներ շարունակ ընտրությունների փոխարեն ընտրովի համարվող պաշտոններում իրականում տեղի էին ունեցել նշանակումներ կուսակցական մարմինների կողմից: Գերագույն խորհրդի թափուր մնացած մի քանի տեղերի համար այլընտրանքային ընտրություններում Շարժման ներկայացուցիչների բացարձակ հաղթանակը ցույց էր տալիս, որ մրցակցային ընտրությունների դեպքում իշխանությունը վերից վար պարզապես հեշտությամբ կարող է դուրս գալ կոմկուսի ձեռքից: Ժողովրդավարական վերափոխումների պայմաններում այդ հնարավորությունն անհամեմատ կմեծանար, իսկ մի քանի ամիս անց սպասվում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ամբողջ կազմի ընտրություններ:

Ինչ վերաբերում է վերջին երկու կետերին, ապա դրանք նույնպես այն նվազագույն պայմանների մեջ էին, որոնց առկայության դեպքում կարելի էր խոսել հանրապետության շատ թե քիչ սուվերեն իրավունքների մասին: Հռչակագրում անգամ չէր օգտագործված «անկախություն» բառը, ինչը Հայոց համազգային շարժման պաշտոնապես ընդունված ծրագրում հռչակվել էր որպես մոտակա հիմնական նպատակ: Այսինքն՝ այս փաստաթղթում ոչ միայն արտառոց եւ ծայրահեղական համարվող ոչինչ չկար, այլեւ ամեն ինչ մտածված էր, կշռադատված եւ ձեւականորեն լրիվ տեղավորվում էր անգամ «Վերակառուցման» հռչակած սկզբունքներում եւ տրամաբանության մեջ: Նշված քայլերի կատարումը անպայման չէր ենթադրում ԽՍՀՄ կազմից դուրս գալու ակտ, սակայն, մյուս կողմից, հանրապետությունը նախապատրաստում էր անհրաժեշտության դեպքում այդ քայլն անել նախապատրաստված, ավելի քիչ կորուստներով եւ ավելի պակաս ցավագին: Պատահական չէ, որ այդ դրույթները համարյա ամբողջությամբ հետագայում մտան նաեւ Հայաստանի անկախության մասին հռչակագրի մեջ:

Արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին նախաձեռնությունը ուղղակի կապ ուներ նոյեմբերի 28-ի վճռի եւ Ղարաբաղի հարցի հետ: Շարժման ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունների

փաթեթը ուղղված էր, առաջին հերթին Ղարաբաղի հարցում պարտություն եւ նահանջ թույլ չտալուն: Այս խնդրի լուծման համար տվյալ Հռչակագրի ընդունումը կամ այն համաժողովրդական քննարկման դնելն այդ փաթեթի ամենաառանցքային եւ կարեւոր նախաձեռնությունն էր: Դա նաեւ, որպես ճնշամիջոց՝ կզգաստացներ Կենտրոնին: Ադրբեջանի սուվերենության մասին հռչակող օրենքը, որ հետագայում չեղյալ հայտարարվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից՝ որպես հակասահմանադրական, այնուամենայնիվ, որպես ճնշամիջոց, գործնականում լուրջ նշանակություն ունեցավ Ղարաբաղի հարցի այն ելքի համար, որ արձանագրվեց նոյեմբերի 28-ին: Կենտրոնը նույն կերպ չէր կարող վարվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այսպիսի մի որոշման հետ, եթե վերջինս այս Հռչակագիրն ընդուներ կամ դներ համաժողովրդական քննարկման: Խնամքով կազմված այս փաստաթղթում գործող Սահմանադրությունը խախտող որեւէ դրույթ չկար, եւ բացի այդ՝ այն ընդամենը դրվում էր համաժողովրդական քննարկման: Մյուս կողմից, սակայն, դա հենց իրական սուվերենության հռչակում կամ նախապատրաստություն էր, եւ ուղղված էր այն հիմքերի դեմ, որոնց վրա հենվում էր ամբողջ խորհրդային բռնատիրությունը: Այսինքն՝ կենտրոնական իշխանության համար այն շատ ավելի վտանգավոր էր ոչ միայն իր արմատականությամբ, այլեւ իրավական անխոցելիությամբ: Այս փաստաթղթի ընդունման դեպքում, եթե Մոսկվան անգամ չվերանայեր Ղարաբաղի հարցում արդեն իսկ ընդունած որոշումը (որը նույնպես չէր բացառվում), այնուամենայնիվ, գործնական քայլերում ստիպված կլիներ ավելի հանդուրժողական եւ զգաստ վերաբերմունք որդեգրել այդ հարցում:

Հայաստանը, որ պետք է դառնար Ղարաբաղի գոյության հիմնական երաշխավորը, պարզապես չէր կարող կատարել այդ դերը, եթե նրա իշխանությունները շարունակեին մնալ որպես Կենտրոնի կամակատար, կայսրության հլու հնազանդ մի օղակ: Իսկ այդ իշխանությունները ինչպես որ կային, այդպիսին էլ կմնային, եթե երկրում չիրականացվեին ժողովրդավարական այն վերափոխումներ, չներդրվեին ժողովրդավարության այն տարրական նորմերը, որոնք եւ արտահայտված էին ՀՀՇ վարչության կողմից ներկայացված Հռչակագրում: Վերջինս խաղալու էր այն շարժիչի դերը, որը կարող էր վերամիավորման որոշումը դարձնել իրական գործընթաց: Եւ դա հաստատեցին հետագա իրադարձությունները:

ե) Քաղաքական ջրբաժանի վերջնական հստակեցումը

Այսպիսով՝ արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին ՀՀՇ վարչության Հռչակագիրը նպատակաուղղված էր երեք կարեւոր քաղաքական խնդիրների.

Առաջին. ընդլայնել հանրապետության ինքնիշխանության սահմանները, դրանով իսկ առավելագույնս նախապատրաստված լինել ԽՍՀՄ-ի հնարավոր փլուզման դեպքում ինքնուրույն կենսագործունեության եւ գոյատեւման համար:

Երկրորդ. մեծացնել ու հզորացնել այն բազան, որի վրա՝ որպես հենց ժողովրդավարական խնդիր, խարսխված էր Լեռնային Ղարաբաղի հարցը, քանզի միավորման կայացված որոշումը կենսագործելու ուղղությամբ այժմ անհրաժեշտ էր առավել արդյունավետ ու գործնական միջոցառումների դիմել:

Երրորդ. ժողովրդավարական շարժումների մեջ ամրացնել ու պահպանել առաջատարի դիրքերը՝ դրանով իսկ բազմապատկելով իր կարեւորագույն ռեսուրսը՝ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հասարակական կարծիքի աջակցությունն ու պաշտպանությունը:

Հայաստանի իշխանությունները Հայոց համազգային շարժման այս քայլի հանդիման կանգնած էին շատ ավելի լուրջ երկընտրանքի առջեւ, քան նույնիսկ Ղարաբաղի հետ վերամիավորման որոշումն ընդունելու դեպքում: Վերջին հաշվով՝ Մոսկվան կարող էր ֆորմալ առումով «հակասահմանադրական» պիտակով չեղյալ հայտարարել միավորման որոշումը, մինչդեռ արմատական ժողովրդավարական վերափոխումներ նախատեսող օրինագիծը չուներ այնպիսի մի դրույթ, որին հնարավոր լիներ, թեկուզ շինծու, այդօրինակ պիտակ փակցնել: Եւ հենց դրանում էր այդ փաստաթղթի վտանգավորությունը Հայաստանի կոմունիստական իշխանությունների համար. նրանք պետք է կա՛մ վերցնեին այս նոր քաղաքական ընթացքը եւ, որպես մեկնարկ, ճանապարհ տային այդ փաստաթղթի համաժողովրդական քննարկմանը՝ դրանով իսկ, փաստորեն, «ապստամբեին» համակարգի դեմ, կա՛մ, հավատարիմ մնալով Մոսկվային, ի հեճուկս սեփական ժողովրդի եւ առաջին հերթին հենց Ղարաբաղի, ամեն կերպ մերժեին այդ ուղին: ՀԽՍՀ կոմունիստական իշխանությունը, իր դաշնակից ուժերի գործուն պաշտպանությամբ, ընտրեց երկրորդ ճանապարհը:

Պաշտոնական մամուլը, որ նոյեմբերի 28-ի որոշումից անմիջապես հետո մեկ-երկու օրով թույլտվություն էր ստացել «աշխատավորության» անունից եւ մանր ու միջին մի քանի պաշտոնյաների կողմից խստորեն քննադատել

կենտրոնական իշխանության որոշումը, անմիջապես թողեց այդ զբաղմունքը եւ ամբողջ ճակատով հարձակման անցավ ժողովրդավարական վերափոխումների անցկացման ՀՀԾ-ի այս նախաձեռնության դեմ: Դրա դեմ կարող էին խոսել եւ խոսեցին պաշտոնյա եւ ոչ պաշտոնյա պատգամավորներ: Սակայն հասարակության վրա նրանց խոսքերն ու փաստարկները վաղուց արդեն հակառակ ազդեցությունն էին ունենում: Եւ իշխանությունն օգնության կանչեց իր դաշնակիցներին, ովքեր, հասկանալի պատճառով, չէին կարող ընդդիմանալ առաջին՝ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցում:

Այժմ արդեն, ի տարբերություն նախորդ օրերի, «աշխատավորության» հետ միասին ՀՀԾ-ի «հոչակագիրը» քննադատելու ասպարեզ մտավ մտավորական նոմենկլատուրան: Փաստարկները նույնն էին, ինչ մինչ այդ արդեն բազմիցս կրկնվել էին. ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհը գնահատվում էր ոչ այլ կերպ, քան որպես Ռուսաստանի դեմ ուղղված քայլ, այն դատապարտվում էր որպես ԽՍՀՄ-ից դուրս գալու նպատակ հետապնդող ուղի (որպես ծանր հանցանք), իսկ դրա հետ կապված էլ՝ վկայակոչվում էր «պանթուրքիզմի» վտանգը եւ այլն: Այս առումով բնութագրական էր տվյալ հարցի առիթով բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանի ելույթը Գերագույն խորհրդի նստաշրջանում[967]: Այդ ելույթին արժե միջանկյալ անդրադառնալ, քանի որ դրանում համակարգված է մերժման փաստարկների համախումբը, եւ արտահայտված են այն մտածելակերպը եւ գաղափարները, որ տվյալ խավի համար բնութագրական էր եւ ընդհանրական: Բանաստեղծուհուն անհանգստացրել էր այն հանգամանքը, որ «զանազան հոչակագրերով մենք ուզում ենք այստեղ անցկացնել Հայաստանի ինքնորոշման, նրա անվանումից «խորհրդային սոցիալիստական» բառերը հանելու, ասել է՝ ինչ-որ իմաստով անկախություն հայտարարելու որոշումները»: Եւ սա հնչում էր որպես ծանր մեղադրանք: Ամբողջությամբ մարդկանց զգացումների վրա խաղալու, ահաբեկելու միտված այս ելույթն առարկայական ընդամենը երկու փաստարկ էր պարունակում, երկուսն էլ՝ բացարձակ հիմնազուրկ: Առաջին՝ «հրաժարվել Մոսկվայից, այդ նշանակում է անհուսորեն մնալ այս անգամ արդեն վերջ չունեցող շրջափակման մեջ՝ իր բոլոր աղետալի հետեւանքներով»: Բայց Մոսկվան արդեն բազմիցս հաստատել էր, որ եթե ինքը չէ շրջափակումների անմիջական կազմակերպիչը, ապա իր

[967] *Նրա ելույթը, ի տարբերություն խնդրո առարկա փաստաթղթի, այն ներկայացնող եւ պաշտպանող ելույթների, իհարկե անմիջապես հրապարակվեց մամուլում («Խորհրդային Հայաստան», 08.12.1989):*

անտարբերությամբ հենց ինքն է դրանց ոգեշնչողը: Նրա երկրորդ փաստարկը հետեւյալն էր. «Այդ նշանակում է այսօր եւեթ հրաժարվել երկրաշարժի պատճառով մեզ տրված ավելի քան տասը միլիարդ ռուբլի հատկացումից, այսօր եւեթ ետ ուղարկել Միության բոլոր ծայրամասերից հանրապետության վերականգնմանը մասնակցող հիմնարկներն իրենց շինանյութերով եւ դրամական ֆոնդերով ու նաեւ՝ եթե ոչ խափանել, ապա անչափ բարդացնել արտասահմանից եկող օգնությունը»: Սակայն արդեն իսկ առաջին տարում երկրաշարժի գոտում նախատեսված աշխատանքները կատարվել էին ընդամենը 10%-ով, մինչդեռ շրջափակման հետեւանքով հանրապետության վնասը կազմել էր 1,5 միլիարդ ռուբլի[968]՝ բազմակի ավելի, քան կատարված ներդրումները: Ինչ վերաբերում է շինարարական բրիգադներին, ապա նրանք, նախ եւ առաջ, շրջափակման հետեւանքով առաջացած պարապուրդի պատճառով էր, որ զանգվածաբար սկսել էին հեռանալ: Արտասահմանից եկող օգնության տակ եթե հասկանանք Սփյուռքի օգնությունը, ապա այդ օգնությունը կդադարեր այնքանով, որքանով այն վերահսկում էին Հայաստանը միայն Խորհրդային Միության մեջ տեսնող կազմակերպությունները՝ կուսակցությունները, այսինքն՝ հետապնդում էին ոչ թե անշահախնդիր օգնության, այլ քաղաքական նպատակներ: Եթե խոսքը վերաբերում էր այն ֆինանսական օգնություններին, որոնք հավաքվում էին ԽՍՀՄ Արտաքին առեւտրային բանկում, ապա այդ փողերը հետագայում էլ հնարավոր չեղավ ստանալ: Այսինքն՝ հիշյալ փաստաթղթի առիթով առաջ քաշված մեղադրանքներն անհեթեթ էին, դրա համար բերված փաստարկները՝ բացարձակապես անհիմն:

Մերժելով ժողովրդավարական բարեփոխումները՝ որպես երկրի զարգացման ուղեգիծ, առաջարկվում էր սեփական, բազմիցս կրկնված դեղատոմսը. «Ամենամոտ ժամանակներս հրավիրել համահայկական վեհաժողով՝ Սփյուռքի բոլոր շրջանակների՝ դաշնակցության, ռամկավար եւ հնչակյան կուսակցությունների, Բարեգործականի ... մասնակցությամբ՝ համազգային եզրակացությունների հանգելու համար»: Իրականում այստեղ հերթական անգամ ակնառու ի հայտ է գալիս այն հանգամանքը, որը հնարավորինս փորձում էին քողարկել, այն է՝ դժվարին կացության առջեւ հայտնված Հայաստանի իշխանությունը օգնության էր կանչում մտավորականության՝ իրեն հավատարիմ այս խավին, վերջինս, իր հերթին՝ Սփյուռքը

[968] *Այս թվերն ըստ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի («Խորհրդային Հայաստան», 15.12.1989): Իրականում պատկերն ավելի տխուր էր:*

ներկայացնել հավակնող քաղաքական կազմակերպություններին: Շարժման եւ անկախության գաղափարի դեմ «համահայկական մի մարմնի համազգային եզրակացությունների» կամ «**ազգային միասնության**» այս խրտվիլակը անկախության գաղափարի եւ այն իրականացնելուն ուղղված գործողությունների դեմ դեռ օգտագործվելու էր նաեւ առաջիկայում: Դրանով շահագրգիռ այս երեք ուժերին միավորողն այն ելակետային հիմնադրույթն էր, ըստ որի՝ ԽՍՀՄ-ը պետք է ամեն գնով պահպանել, իսկ Հայաստանը պետք է անպայման մնա այդ միության մեջ: Առաջինի համար դա իշխանության հարց էր լուծում, երկրորդի համար՝ դիրքի եւ արտոնությունների, երրորդի համար՝ ե՛ւ իշխանության (Սփյուռքում), ե՛ւ դիրքի, ե՛ւ գոյության իրավունքի արդարացման:

Շարժումն ամուր էր կանգնած իր ներկայացրած կարեւորագույն այս փաստաթուղթը Գերագույն խորհրդում ընդունել տալու դիրքերում, եւ դարձյալ տասնյակ հազարավոր մարդիկ դեկտեմբերի 4-ին շրջափակել էին շենքը, որտեղ ընթանում էր Գերագույն խորհրդի նիստը: Պատգամավորները ստիպված եղան գիշերը մնալ շենքում եւ շրջափակումից կարողացան դուրս գալ միայն հաջորդ օրն առավոտյան ժամը 5-ին: Դեկտեմբերի 5-ին նստաշրջանի աշխատանքներն ընդհատվեցին քվորումի բացակայության պատճառով. 339 պատգամավորից ներկայացել էր միայն 41-ը: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 6-ին, հնարավոր եղավ քվորումն ապահովել, սակայն, քննարկվող խնդրում իրենց համար «կյանքի ու մահվան» հարց տեսնելով, իշխանություններն իրենց դաշնակիցների հետ անդրդվելի մնացին. դեկտեմբերի 6-ին Գերագույն խորհուրդը որոշեց. «Նպատակահարմար չհամարել նշված Հռչակագիրը համաժողովրդական քննարկման դնելը»: Եւ որպեսզի մերժումը շատ չոր չհնչի, նախատեսվեց. «Հանրապետությունում դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու նպատակով առաջարկություններ նախապատրաստելու համար ստեղծել հանձնաժողով՝ կազմված առաջատար տնտեսագետներից, քաղաքագետներից, իրավաբաններից, սոցիոլոգներից, հասարակական գիտությունների մյուս բնագավառների մասնագետներից, կուսակցական, խորհրդային մարմինների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից»[969]: Ավելին՝ կարծես ի պատասխան ներկայացված Հռչակագրի հիմնական կետերից մեկի՝ Սահմանադրության 6-րդ հոդվածը հանելու դրույթի, մամուլում հաջորդ

[969] *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 23, հոդվ. 157:*

օրերին հրապարակվեց «Պրավդայից» քաղված՝ «ԽՄԿԿ ավանգարդային դերի մասին» ծավալուն առաջնորդողը[970]:

Մի շարք «հայտնի մտավորականների» ելույթներով, Սփյուռքի «դիրքորոշման» վկայակոչմամբ, «աշխատավորության» կազմակերպված բողոքի կեղծ հեռագրերով եւ այլն, հասարակական կարծիքը, իբր, մշակելուց եւ նախապատրաստելուց հետո, փոքր-ինչ ուշացումով վերջապես ի հայտ եկավ նաեւ հանրապետության իշխանության մարմինների պաշտոնական դիրքորոշումը՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության եւ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի կողմից ստորագրված մի փաստաթուղթ[971]: Այսպիսի համատեղ ստորագրություններ դրվում էին, սովորաբար, խիստ կարեւոր համարվող փաստաթղթերի տակ եւ խիստ կարեւոր դեպքերում: Դրանում բառացիորեն կրկնվում էին քաղաքական գնահատականների ու որակումների նույն բառապաշարն ու մակարդակը, ինչ ուղիղ մեկ տարի առաջ՝ «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումից հետո: Հայտարարությունը նաեւ երեսպաշտության ցցուն հատանմուշ էր. Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նստաշրջան հրավիրելու եւ միավորման որոշում ընդունելու դեմ հնարավոր բոլոր միջոցներով մինչեւ վերջին պահը պայքարում էին Հայաստանի իշխանությունները՝ ի դեմս այս հայտարարությունը ստորագրող մարմինների[972]: Այժմ, ընդամենը տասն օր անց, այդ որոշումը սեփականացվում, իսկ նրա նախաձեռնողներն ու հեղինակները հայտարարվում են «հավակնոտ, «քաղաքականապես տհաս», վերամիավորման որոշման կատարման դեմ «ապակայունացման պատճառներ փնտրող»:

Այն խնդիրը, ինչը Շարժումն առաջարկում էր լուծել հանրապետության իշխանության հետ համատեղ, ստիպված եղավ լուծել մի քանի ամիս անց՝ մայիս-հուլիս ամիսներին, նրա դեմ պայքարում, նրա պարտությամբ եւ առանց նրա:

[970] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 09.12.1989:*

[971] *«Խորհրդային Հայաստան», 10.12.1989:*

[972] *Այս փաստը հայտնի էր այդ օրերի հանրահավաքների բոլոր մասնակիցներին: Այդ մասին հրապարակավ գրեց Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Հ. Սիմոնյանը (տե՛ս «Երեկոյան Երեւան», 18.12.1989):*

զ) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարում

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միացյալ հանրապետության հռչակումը, որին կարողացավ հասնել Հայոց համազգային շարժումը, կարեւոր քաղաքական ակտ էր: Սակայն, միայնակ մնալով, նրա գործնական հետեւանքներն ավելին լինել չէին կարող, քան Շարժման, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պայքարի ոգին պահպանելը, իրավիճակի ապակայունացում թույլ չտալը: Բուն որոշումը գործադրելու անհրաժեշտ մեխանիզմը, որ պետք է ստեղծվեր հաջորդ՝ արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին ՀՀՇ-ի կողմից ներկայացված փաստաթղթի ընդունմամբ, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը մերժեց: Դրանով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումար գնացող հայկական պատվիրակությունը զրկվեց կարեւոր հաղթաթղթից՝ հզորացած «հայկական գործոնից»: Առանց դրա՝ վերամիավորման եւ մյուս որոշումները Մոսկվային որեւէ չափով չէին անհանգստացնելու, չէին ստիպելու եւս մեկ անգամ լրջորեն անդրադառնալ նոյեմբերի 28-ի որոշմանը: Եւ պատահական չէ, որ Կենտրոնը, ի դեմս ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարի, շատ հանգիստ ընդունեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կայացրած մյուս որոշումները: Իսկ հայկական պատվիրակությունը, հավուր պատշաճի, «բնավորության» մի անհետեւանք ցուցադրանքից հետո հանգիստ շարունակեց մասնակցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի աշխատանքներին:

Համագումարը բացվեց դեկտեմբերի 12-ին: Նախօրեին հայտարարությամբ հանդես էին եկել ՀԽՍՀ-ից ընտրված պատգամավորները: Դրանում նոյեմբերի 28-ի որոշումը գնահատվում էր որպես Կենտրոնի կապիտուլյացիա Ադրբեջանի Ժողովրդական ճակատի առջեւ, հայտարարվում էր, որ դրանով ԼՂԻՄ-ը բռնի կերպով նորից դրվեց Ադրբեջանի իշխանության տակ, դիմում էր հղվում համագումարին եւ Մ. Գորբաչովին՝ հույս հայտնելով, որ համագումարի օրակարգում կդրվի ու կքննարկվի «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության պարզաբանումը ԼՂԻՄ բնակչության ճնշող մեծամասնության ինքնորոշման իրավունքի ոտնահարման եւ հայ ժողովրդի արժանապատվության շարունակական ոտնահարման կապակցությամբ» հարցը: Վերջում, իհարկե, կար հավաստիացում. «Մենք հավատում ենք արդարությանը, հավատում ենք վերակառուցմանը»[973]: Հատկանշական է,

[973] *«Խորհրդային Հայաստան», 10.12. 1989:*

որ այդ ընդարձակ հայտարարության մեջ որեւէ կերպ չէր հիշատակվում հանրապետության Գերագույն խորհրդի դեկտեմբերի 1-ի վերամիավորման որոշումը[974]: Եւ արդեն ոչ թե հետաքրքիր, այլ բնական էր, որ ոչինչ չէր ասվում, թե որը պետք է լինի պատվիրակության կամ հանրապետության քայլը, եթե իրենց արած այդ առաջարկը համագումարը չընդունի: Այդպիսի արդյունավետ քայլ նրանք պարզապես չունեին. այդպիսի քայլի հնարավորությունը պաշտոնապես մերժել էր հանրապետության Գերագույն խորհուրդը՝ չընդունելով արմատական ժողովրդավարական վերափոխումների անցնելու «Հռչակագիրը»: Իսկ հարցի ձեւակերպումը (որ իր պարունակած գնահատականներով արդեն իսկ որոշման նախագծի է նման) հուշում էր, որ դրա մտահղացողներն ի սկզբանե ոչ մի հույս չեն ունեցել, թե այն համագումարի օրակարգ կմտնի, եւ հետապնդել են ընդամենը քարոզչական, դեմքը փրկելու նպատակ: Հակառակ դեպքում՝ նման ձեւակերպմամբ հարց առաջադրելը մատնում է մի ամբողջ հանրապետության պատգամավորական կորպուսի քաղաքական ունակությունների խեղճությունն ու սահմանափակությունը:

Մեկ այլ հայտարարություն, այս անգամ՝ ԼՂԻՄ պատգամավորների հետ համատեղ, ներկայացվեց համագումարում, երբ հաստատվում էին օրակարգի հարցերը: Այստեղ արդեն (գուցե ԼՂԻՄ ներկայացուցիչների պնդմամբ) ասվում էր, որ հայ ժողովուրդը չի ընդունել նոյեմբերի 28-ի որոշումը, եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ համատեղ որոշում է ընդունել հայ ժողովրդի երկու հատվածների միավորման մասին: Այս փաստաթղթում չէր կրկնվում նախորդ հայտարարության մեջ ձեւակերպված հարցը, այլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունից բացատրություն էր պահանջվում ընթացակարգի եւ ժողովրդավարական նորմերի խախտմամբ կայացրած որոշման կապակցությամբ, որն ավելի սրեց իրավիճակը տարածաշրջանում, հույս էր հայտնվում, որ համագումարը «չեղյալ կհամարի Գերագույն խորհրդի սնանկ որոշումները»[975]: Այսինքն՝ կարծես թե առաջարկվում էր համագումարի օրակարգ մտցնել նոյեմբերի 28-ի որոշումը չեղյալ հայտարարելու հարցը: Սակայն օրակարգի քննարկման ժամանակ այդպես էլ նման հարց քվեարկության չդրվեց, եւ որեւէ մեկը դա չպնդեց[976]: Դրա փոխարեն քվեարկության դրվեց եւ հերթական անգամ մերժվեց Լենինգրադից ընտրված

[974] *Դրա մասին որեւէ խոսք չեղավ նաեւ հայկական պատվիրակության ղեկավար Ս. Հարությունյանի ելույթում (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 15.12.1989:*

[975] *«Խորհրդային Հայաստան», 13.12.1989:*

[976] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 369-380.*

ժողովրդական պատգամավոր Անատոլի Սոբչակի առաջարկը՝ օրակարգ մտցնել նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակման հարցը: Հայկական պատվիրակություններին այլ բան չէր մնում, քան նորից դիմել նիստերի դահլիճը լքելու քայլին: Բայց նույնիսկ դրանում նրանք այս անգամ էլ հետեւողական չգտնվեցին:

Հաջորդ օրը հայկական պատվիրակության անունից Մ. Գորբաչովին հանձնվեց մի նամակ, որի որոշ մտքեր արժե հիշատակել. «Մենք՝ Հայկական ԽՍՀ-ից եւ Լեռնային Ղարաբաղից ընտրված ժողովրդական պատգամավորներս, խորապես համոզված ենք, որ համագումարը չէր կարող մերժել պատգամավոր Ա. Սոբչակի՝ շրջափակման, որպես պատերազմի եւ բռնության էլեմենտ, վերացնելու իրոք մարդասիրական առաջարկը, եթե պատգամավորները... հանգամանալից տեղեկացված լինեին տարածաշրջանի իրավիճակի մասին... Հիշեցնենք, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հոկտեմբերի 3-ին հատուկ որոշում էր ընդունել շրջափակման վերացման անհետաձգելի միջոցառումների մասին... Բայց հենց այս որոշման ընդունումից անմիջապես հետո շրջափակումը ձեռք բերեց ավելի կատարելագործված ձեւեր: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, հավատալով Ադրբեջանի ղեկավարության պաշտոնական հայտարարություններին՝ նոյեմբերի 28-ի իր որոշումն ընդունեց շրջափակման ֆոնի վրա, որը չի դադարել մինչեւ այսօր: Այժմ, ինչպես տեսնում ենք, նաեւ ժողովրդական դեպուտատների 2-րդ համագումարն իր աշխատանքը սկսեց, երբ դեռեւս խուլ շրջափակված է Հայկական ԽՍՀ-ն, երբ արդեն մեկ տարի եւ տասը ամիս է Լեռնային Ղարաբաղը կտրված է արտաքին աշխարհից, գտնվում է ոչ միայն շրջափակման, այլեւ պաշարման մեջ: Մեզ համար առնվազն տարօրինակ է, մեր կարծիքով՝ չմտածված մերժումն այն առաջարկի, որ ընդամենը նախատեսում էր Գերագույն խորհրդի հանձնաժողով կազմել, որը կկարողանա համագումարի հանձնարարությամբ շտապ մեկնել եւ տեղում կողմնորոշվել իր իսկ որոշումների չկատարման պատճառներում: Վերջին տարիների պրակտիկայից մենք շատ լավ գիտենք, որ նման ոչ համարժեք լուծումները բերում են բռնության սաստկացման եւ շրջափակման խստացմանը»: Վերջում ասվում էր, որ պատվիրակությունը չի մասնակցի համագումարին, բայց կմնա Մոսկվայում այնքան ժամանակ, քանի դեռ Մ. Գորբաչովն ինքը «անձամբ չի ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ վճռականորեն վերացնելու Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի երկաթուղային եւ ավտոմոբիլային ճանապարհների շրջափակումը»[977]:

[977] *Նույն տեղում, էջ 379-380:*

Ընդարձակ այս մեջբերումն անհրաժեշտ էր՝ ցուցադրելու համար հայկական պատգամավորական խմբի իրական քաղաքական մակարդակն ու երեւակայությունը: Եթե համագումարի պատվիրակները իրոք տեղեկացված չէին իրավիճակին, ապա դա, առաջին հերթին հայ պատգամավորների մեղքն էր (նախապես կարելի էր անհրաժեշտ տեղեկանքներ կազմել եւ ուղարկել բոլորին): Բայց նրանք իրականում բավարար տեղեկացված էին եւ մի անգամ արդեն, հոկտեմբերի 3-ին, շրջափակումը վերացնելու մասին կցկտուր ու անհետեւանք մի որոշում էին ընդունել: Ինչ վերաբերում է մնացած մտքերին, ապա նրանք, փաստորեն, ասում են՝ մենք տեսնում, բայց չենք հավատում այն ամենին, ինչ եղել է, ինչ կատարվում է, ինչ տեսնում ենք ու լսում, այդ թվում՝ նաեւ այն ամենին, ինչ ասում եւ անում է ինքը՝ Գորբաչովը: Համարյա ամբողջությամբ Հայաստանի կոմկուսի կազմած ցուցակներով եւ հովանավորությամբ ընտրված հայաստանյան պատվիրակներն, անշուշտ, այդքան քաջություն չունեին գոնե կատարելու իրենց այս վերջին՝ համագումարին չմասնակցելու «սպառնալիքը»: Այս նամակն ավելի շատ իրենց ծանր վիճակից հանելու եւ համագումար վերադառնալու առիթ տալու խնդրանք էր՝ ուղղված երկրի ղեկավարին:

Պատահական չէ, որ Գորբաչովի հետ նույն օրը՝ դեկտեմբերի 13-ին, տեղի ունեցավ հանդիպում ոչ թե վերջինիս (ինչը բնական կլիներ), այլ հենց հայ պատվիրակների խնդրանքով[978]: Երկրի ղեկավարն անգամ բանավոր խոստումով չբավարարեց պատգամավորական խմբի՝ համագումար վերադառնալու համար դրած պայմանը: Միակ խոստումը, որից հետո Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պատվիրակներն անմիջապես վերադարձան նիստերի դահլիճ, վերաբերում էր համագումարից հետո Գերագույն խորհրդի փակ նիստում Լեռնային Ղարաբաղի եւ շրջափակման խնդիրները քննարկելուն: Մի հավաստիացում, որ տրվում էր նաեւ նախորդ օրը, եւ մի հնարավորություն, որը պահանջելով եւ ստանալով, հայ պատվիրակները տասն օր հետո հենց իրենք ինքնակամ հրաժարվեցին դրանից: Հազիվ թե որեւէ մեկը կասկածում էր, թե այդ քննարկումը որեւէ այլ արդյունք կարող էր խոստանալ: Թատերական այս ներկայացումը եւս անհրաժեշտ էր ինչ-որ կերպ դեմքը փրկելու համար: Սա Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունների բացարձակ եւ վերջնական պարտությունն էր, ըստ էության՝ «ղարաբաղյան ճակատում» նրանց գործունեության անփառունակ ավարտը:

[978] *Տե՛ս նույն տեղում, էջ 382-383: Նաեւ՝ «Խորհրդային Հայաստան», 15.12.1989:*

Հասարակության մեջ ավելի ու ավելի քչերն էին որեւէ հույս կապում կենտրոնական իշխանությունների նոր որոշումների հետ, եւ համագումարից հետո խոստացված փակ նիստի կանխատեսելի արդյունքները բոլորի համար անխտիր կկտրեին այդ հույսը: Բայց ոչ միայն: Դրանով հասարակության աչքում միանգամից եւ վերջնականապես քաղաքական որեւէ գործառույթից կզրկվեին նաեւ հանրապետության իշխանությունները՝ կոմկուսի ղեկավարությամբ, որն ամբողջությամբ վերահսկելով հայկական պատգամավորական կորպուսը, իրականացնում էր անմիջական կապը Կենտրոնի հետ: Ուստի պատահական չէ, որ երբ համագումարի ավարտի հաջորդ օրը (նախապես հենց այդպես էլ պահանջել էին հայ պատվիրակները)՝ դեկտեմբերի 25-ին, նշանակվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի խոստացված փակ նիստը, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու նաեւ... Ադրբեջանի պատվիրակների համատեղ խնդրանքով այն հետաձգվեց «ավելի ուշ ժամանակի»[979]: 1988-ի փետրվարի 20-ից հետո (ներառյալ նաեւ հաջորդ մի քանի տարիներին) սա, կարծես թե, միակ դեպքն է, որ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցչությունները ինչ-որ մի հարցում համաձայնության են եկել: Հետաձգում խնդրողները, անշուշտ, համոզված էին, որ նման քննարկում հետագայում այլեւս տեղի չի ունենա:

է) Լեռնային Ղարաբաղի հարցում Մոսկվայի քաղաքական վճիռը, դրա հիմքերը եւ նպաստող գործոնները

1989 թ. ավարտը վերջնականապես հստակեցրեց նաեւ Կենտրոն - Հայաստան - Ղարաբաղ - Ադրբեջան հարաբերությունները: Ղարաբաղի, ապա նաեւ Հայկական ԽՍՀ-ի շրջափակումների, սումգայիթյան եղեռնագործության նկատմամբ բացահայտ անհետեւողական վերաբերմունքի, խորհրդային ներքին զորքերի՝ Ղարաբաղում տեղադրված զորամիավորումների վարքագծի, Ղարաբաղի հարցի քաղաքական քննարկման ձգձգման, ապա նոյեմբերի 28-ի որոշման մեջ հստակ կարելի էր տեսնել

[979] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 394.* *ԽՍՀՄ Գեն պատգամավոր Կյուդմիլա Հարությունյանի վկայությամբ՝ «Հետաձգումը կատարվել է Ղարաբաղի դեպուտատների առաջարկությամբ, ըստ իս՝ դա ձեռնտու էր եւ ադրբեջանցիներին, եւ Կենտրոնին, ուստի եւ ընդունվեց» («Խորհրդային Հայաստան», 01.02.1990):*

այս հակամարտության մեջ Մոսկվայի որդեգրած քաղաքական ծրագիրը: Ղարաբաղն առանց անվտանգության որեւէ երաշխիքի հանձնվում էր Ադրբեջանի ողորմածությանը, եւ նրա ճակատագիրն այդ պայմաններում ուրվագծվում էր հայ բնակչության բռնագաղթի հեռանկարով, ինչպես դա արդեն եղել էր Ադրբեջանի մյուս հայաբնակ տարածքներում եւ բնակավայրերում: Խորհրդային Միության ներքին զորքերը հայ բնակչության համար ապահովության երաշխիք չէին դառնալու: Ընդհակառակը, ինչպես ցույց էր տվել նախընթաց շրջանում նրանց պահվածքը եւ, ինչպես շուտով պարզվեց ավելի ցայտուն օրինակներով, նրանք այդ գործում օժանդակելու էին Ադրբեջանին. նրանց հիմնական գործառույթը առավելագույնս պետք է լիներ այն, որ այդ գործընթացը կատարվեր հնարավորինս անարյուն, առանց այնպիսի ցնցումների, որոնք կարող էին միջազգային հնչեղություն ստանալ: Մոսկվան որոշել էր ղարաբաղյան խնդիրը լուծել հայ բնակչության ամբողջական տեղահանման ենթարկելու ճանապարհով:

Կենտրոնի նմանօրինակ դիրքորոշման, կամ կայացրած քաղաքական վճռի առաջին պատճառն, անշուշտ, վտանգավոր եւ վարակիչ նախադեպ թույլ չտալն էր: Սակայն Ղարաբաղի հարցը երկու ծայրային՝ Հայաստանին միացնելու, կամ հայ բնակչության բռնագաղթի միջոցով Ադրբեջանին թողնելու լուծումների միջեւ Կենտրոնը կարող էր ընտրել նաեւ կարգավորման միջանկյալ տարբերակներ, որոնց մասին այդ ընթացքում ոչ միայն խոսք էր եղել, այլեւ նախաձեռնություն՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման: Այսինքն՝ այդ լուծումը կարող էր լինել մարզը ժամանակավորապես, ոչ թե ձեւական եւ կիսատպռատ, այլ իրապես Կենտրոնի ենթակայության ու պաշտպանության տակ վերցնելով՝ երաշխավորել նրա բնակչության կյանքի անվտանգությունը եւ բնականոն զարգացումը, ինչը եւ Մոսկվայի սահմանադրական պարտավորությունն էր:

Բնական է, որ քաղաքական վճռի կայացման վերջնական տարբերակ ընտրելիս Կենտրոնի համար որպես երկրորդ կարեւոր ելակետ արդեն պետք է ծառայեր այն հաշվարկը, թե լուծումներից որն ինչ խնդիրներ ու դժվարություններ կհարուցի իր համար: Ինչպես ցույց էր տվել Մերձբալթյան հանրապետությունների ձգտումների նկատմամբ հակազդեցությունը, ամենավտանգավորն ու անցանկալին այս շրջանում Մոսկվայի համար որեւէ հանրապետության կողմից ինքնիշխանության, անկախության հարցի բարձրացումն էր: Ադրբեջանը մի անգամ արդեն ցույց էր տվել, որ իր Գերագույն խորհուրդը կարող է նման որոշում ընդունել («Սուվերենության մասին» սեպտեմբերին ընդունած օրենքը): Ադրբեջանի Ժողովրդական ճակատի եւ պաշտոնական

իշխանության միջեւ կարծես թե որոշակի ներքին դերաբաժանում կար, եւ հակասությունները երեւութապես ավելի սուր էին արտահայտվում, քան կար իրականում: Համենայնդեպս, Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ճնշմամբ Գերագույն խորհուրդ մտած՝ հանրապետության սուվերենության հարցը ընդունվեց միաձայն: Դրան, ըստ էության, դեմ չէր նաեւ Ադրբեջանի որեւէ հասարակական խավ, առավել եւս՝ նրանց մտավորականությունը: Այս հանգամանքն ուժեղացրեց «ադրբեջանական գործոնը»:

Բոլորովին այլ էր պատկերը Հայաստանում: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի հայկական պատվիրակությունը, նոյեմբերի 28-ի որոշումից հետո 2-րդ համագումարին մասնակցելով եւ այդտեղ իր դրսեւորած մեղկ վարքագծով, ոչ միայն դիմազրկվել, այլեւ, փաստորեն, ինքն իրեն քաղաքականապես եւ բարոյապես ոչնչացրել էր: Հայաստանի իշխանություններն, իրենց հերթին՝ դեկտեմբերի սկզբին կտրուկ մերժել էին ՀՀՇ վարչության կողմից Գերագույն խորհրդում քննարկման դրված շատ կարեւոր մի օրինագիծ՝ «Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին հռչակագիրը»: Մինչդեռ դրա ընդունումը կտրուկ կհզորացներ «հայկական գործոնը»՝ որպես Կենտրոնի վրա ազդելու լուրջ լծակ: Այս փաստաթղթի դեմ իշխանությունից բացի հանդես եկավ նաեւ հայ մտավորականության «առավել ազգային» մասը: Ընդ որում՝ որպես դեմ լինելու հիմք հստակ մատնանշվում էր հենց այն, որ դրանում ինքնիշխանության եւ անկախության մասին ակնարկներ կամ սաղմեր են նկատվում: Հայտնի էր, որ այս հարցում սկզբունքորեն նույն եւ նույնքան կոշտ դիրքորոշում ունեին նաեւ Սփյուռքի կուսակցությունները:

Այսինքն՝ Մոսկվան, ի դեմս Հայաստանի կոմկուսի եւ իշխանությունների, Հայաստանի՝ իրենց համարյա ամբողջությամբ ենթակա ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների կորպուսի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի բացարձակ մեծամասնության, նոմենկլատուրային մտավորականության, նույնիսկ սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների, այստեղ ուներ մինչեւ վերջ հավատարիմ եւ անվտանգ մի ուժ, յուրատեսակ մի «ինտերֆրոնտ», որը ոչ մի դեպքում Կենտրոնի համար անցանկալի եւ կտրուկ քայլերի չէր դիմելու, ավելին՝ պատնեշ էր կանգնելու նմանօրինակ քայլերի ու քաղաքական ուղեգծի դեմ՝ մի հանգամանք, որ բոլորովին բացակայում էր Ադրբեջանում: Հայաստանում դաշնակիցներ ու հենման կետ ունենալու հանգամանքը թուլացնում էր «հայկական գործոնը» եւ Կենտրոնին մղում էր Ադրբեջանի համար ավելի նպաստավոր դիրք գրավել, քանի դեռ վերջինս սպառնում էր արմատական քայլերով՝ այդ հարցում ունենալով, փաստորեն,

ամբողջ հասարակության եւ իշխանության մարմինների միակամությունը: «Ադրբեջանական գործոնի» այս հզորացմանը «հայկական գործոնը» հակակշիռ կարող էր լինել միայն այն դեպքում, եթե Հայաստանը ցույց տար, որ ինքն ավելի մեծ քաղաքական վտանգ կարող է հանդիսանալ Կենտրոնի համար: Կարելի է չկասկածել, որ «Արմատական ժողովրդավարական բարեփոխումների»՝ ՀՀՇ-ի ներկայացրած օրենսդրական նախաձեռնության ընդունվելու դեպքում Հայկական կողմը կբազմապատկեր իր հեղինակությունն ու կշիռը, կբազմապատկեր ինչպես ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի, այնպես էլ միջազգային հանրության պաշտպանությունը: Նման պայմաններում Կենտրոնը ստիպված կլիներ նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցում եւ հայ-ադրբեջանական հարաբերություններում ավելի հավասարակշռված դիրք գրավել ու ձեռնպահ մնալ ուժային ճնշամիջոցների գործադրումից:

Միակ ուժը՝ Հայոց համազգային շարժումը, իր համակիրներով, հասարակական լայն պաշտպանությամբ, մի շարք այլ կազմակերպությունների օժանդակությամբ, այդ բանն օրինական ճանապարհով չկարողացավ անել՝ Գերագույն խորհրդում մեծամասնություն չունենալու պատճառով: Հիմնական՝ ինքնիշխանության գնալու վճռականության հարցում Ադրբեջանի «անկանխատեսելիության» եւ Հայաստանի «կանխատեսելիության» այս արդեն պարզված պայմաններում Կենտրոնի կայացրած քաղաքական վճիռը՝ Ղարաբաղի հարցը լուծել հօգուտ Ադրբեջանի՝ հայ բնակչության բռնաթափի ճանապարհով, իր շահերի տեսակետից ավելի քան բնական էր: Հետագա գործողություններն, անմիջապես կամ միջնորդավորված, ուղղված էին այս նպատակի իրականացմանը:

* * *

Այսպիսով, 1989 թվականի վերջին վերջնականապես առարկայացած էր երկու իրողություն.

ա) Մոսկվան նոյեմբերի 28-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղի հարցը վերադարձնում էր նախնական վիճակին, ըստ էության՝ ետ կանգնելով նաեւ այն լուծելու ուղղությամբ մինչ այդ իր կատարած կեսքայլերից:

բ) ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, ցույց տվեց, որ, սպառել է՝ նաեւ Շարժման «օգնությամբ» առաջ գնալու իր հնարավորությունները: Կենսական քաղաքական նոր խնդիրները լուծելն ու մարտահրավերները դիմակայելը Շարժման համար այլեւս անհնար էր առանց իշխանական լծակների:

Նկատի ունենալով այս իրողությունները, Շարժումն, իր հերթին, արձանագրեց երկու պարտադրված խնդիր.

ա) Չափազանց ծանրացած ու բարդացած իրավիճակում, փաստորեն, ամբողջությամբ իր վրա վերցնել Ղարաբաղի անվտանգության, Հայաստանի սահմանամերձ շրջանների պաշտպանության, ամենօրյա այլ խնդիրների, ինչպես նաեւ՝ ժողովրդավարական բարեփոխումների համար պայքարելու ճանապարհով «հայկական գործոնի» հզորացման ողջ ծանրությունը:

բ) Նախապատրաստվել գարնանը սպասվող ընտրություններում սահմանադրական ճանապարհով իշխանությունը վերցնելուն, մինչ այդ, շարունակելով, ըստ հնարավորի, աշխատեցնել նաեւ իշխանության ծանրաշարժ մարմինները:

ը) Նոյեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 1-ի որոշումների արձագանքները Սփյուռքում

Որքան էլ Սփյուռքի մասին սպասելիքները շարունակում էին մնալ չարդարացված, սակայն հայաստանյան հասարակության մեջ Սփյուռքի մեծ ուժի եւ պոտենցիալի մասին պատկերացումները եւ նրանից սպասելիքներն, այնուամենայնիվ, շարունակում էին գոյատեւել: Այնտեղից եկող դրական ազդակներն ու քաջալերանքի դրսեւորումները կարող էին էական ազդեցություն ունենալ, Սփյուռքը կարող էր որոշ չափով նպաստել Շարժման միջազգային հնչեղության ավելացմանը: Այս էր պատճառը, որ համապատասխան մարմինները մեծ ուշադրություն էին դարձնում Սփյուռքի, մասնավորապես՝ այնտեղ գործող կուսակցությունների քաղաքական վարքագծին, թե՛ նրանց հետ աշխատելու, թե՛ նրանց մասին հավաքած օպերատիվ տեղեկատվությունը անմիջապես քաղաքական ղեկավարությանը տրամադրելու իմաստով:

Նման մի զեկուցագիր ավելի մասնավորեցված, ներկայացնում է նոյեմբերի 28-ի որոշման նախօրերին Ղարաբաղի հարցում տիրող իրավիճակին Սփյուռքի գնահատականները[980]: Ժամանակային այս համընկնումը վերոհիշյալ որոշման հետ հազիվ թե պատահական է: Ըստ այդ փաստաթղթի՝ Սփյուռքի «առաջադիմական ուժերի» ազդեցիկ հասարակական-քաղաքական գործիչներն անհանգստացած են Ադրբեջանի սուվերենության մասին ընդունված որոշմամբ, որը, հակադրվելով ԽՍՀՄ Սահմանադրությանը եւ ԽՄԿԿ ԿԿ-ի ազգային հարցի պլատֆորմին՝ նպատակ ունի Ադրբեջանը «փուլ առ փուլ դուրս բերել ԽՍՀՄ կազմից»: Ընդ որում՝ հիշյալ ուժերի մտահոգությունն այս դեպքում ոչ թե այն է, որ դրանով Ղարաբաղի հարցը կմտնի փակուղի, այլ որ նման փակուղու հետեւանքով Հայաստանում

[980] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.58-59:*

կուժեղանան հակառուսական եւ հակախորհրդային տրամադրությունները: Ապա հաղորդվում է, որ «Սփյուռքի ղեկավարությունը» (այս դեպքում նկատի ունի բոլոր ուժերին) հայ ժողովրդի ճակատագիրը կապում է Խորհրդային Միության՝ որպես միասնական ֆեդերացիայի հետ: Ըստ այդմ՝ նրանք անբավարար եւ մինչեւ վերջ չմշակված են համարում նաեւ ազգային հարցում ԽՄԿԿ ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումի ընդունած ծրագիրը. «Սփյուռքի ղեկավարության» կարծիքով՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի նոր մեկնաբանության մեջ անհրաժեշտ էր մշակել այնպիսի քաղաքական մեխանիզմ, որը **գործնականում անհնար կդարձներ** այս կամ այն հանրապետության դուրս գալը ԽՍՀՄ կազմից՝ «ուշադրություն չդարձնելով այն ձեւակերպումներին, որոնք կարող են մեկնաբանվել որպես հանրապետությունների իրավունքների սահմանափակում»: Դժվար չէ նկատել, որ նույնիսկ Հայաստանի կոմկուսի պաշտոնական տեսակետներն այս հարցում պակաս կոշտ ու պահպանողական էին:

Սփյուռքի նույն «ղեկավարները», ըստ հիշյալ փաստաթղթի, ծրագրում էին նաեւ ստեղծել «Խորհրդային Հայաստանի եւ Ղարաբաղի օժանդակության համաշխարհային կոմիտե», որի գործունեության հիմնական քաղաքական բովանդակությունը պետք է լիներ աջակցություն ցույց տալ Խորհրդային Հայաստանի կառավարությանը եւ նպաստել հայկական պետականության ուժեղացմանը «խորհրդային ֆեդերացիայի պայմաններում»: Այլ խոսքով՝ դրա նպատակն էր համախմբել Սփյուռքի կարողությունները՝ նպաստելու համար ԽՍՀՄ-ի պահպանման եւ նրա կազմում Հայաստանի մնալու քաղաքական խնդրին, կամ, որ միեւնույնն է՝ պայքարել անկախության ձգտումների կամ ուղեգծի դեմ:

Բնական է, որ Սփյուռքի տրամադրությունների եւ պատկերացումների մասին այս տեղեկատվությունը (եւ շատ ավելին) նաեւ Կենտրոնի սեփականությունն էր: Եւ եթե դրանք ինչ-որ նշանակություն պետք է ունենային Ղարաբաղի հարցում պատրաստվող վերջնական քաղաքական վճռի իմաստով, ապա որեւէ անհանգստություն չէին կարող հարուցել Կենտրոնի համար: Սփյուռքն իր բոլոր քաղաքական ուժերով, որոնք կարող էին ինչ-որ ակցիաներ կազմակերպել տարբեր երկրներում, կամ իրենց նախաձեռնություններով ու կոչերով լրացուցիչ ոգեւորություն առաջացնել Հայաստանում եւ Ղարաբաղում, կամ ազդել միջազգային հանրային կարծիքի վրա, Կենտրոնի համար, փաստորեն, անվտանգ էր: Անվտանգ էր, որովհետեւ միակ եւ ամենամեծ մտահոգությունն առաջացնող հարցում Սփյուռքի պատկերացումն աներեր էր՝ ԽՍՀՄ-ը ցանկացած գնով պետք է պահպանել, եւ

Հայաստանը պետք է մնա Միության կազմի մեջ: Եւ հիշյալ գնի մեջ հանգիստ կարող էր տեղավորվել Ղարաբաղի հարցում կենտրոնական իշխանության ցանկացած աննպաստ որոշում: Սրանով Սփյուռքը, գեթ ի դեմս այս տեսակետը պաշտպանող ուժերի, շարունակում էր մնալ Կենտրոնի բնական եւ անդավաճան դաշնակիցը, դրանով իսկ, ակամա, դառնալով նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրով Մոսկվայի կոշտ դիրքորոշումների հենակետ: Եւ դա ավելի քան հստակ արտահայտվեց նաեւ հետագա իրադարձությունների նկատմամբ նրա արձագանքներում:

Դեկտեմբերի 1-ին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման որոշումը ՀԽՍՀ Գերագույն խորհրդում ընդունվեց միաձայն, հոտնկայս, բուռն եւ երկարատեւ ծափահարություններով: Այսինքն՝ դրան կողմ էին քվեարկել եւ ծափահարում էին նաեւ նրանք, ովքեր ընդամենը մեկ-երկու օր առաջ դեմ էին այդ նստաշրջանի հրավիրմանը, դեմ էին օրակարգում նման հարց մտցնելուն, դեմ էին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդին լրիվ կազմով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստի հրավիրելուն: Եթե սրան ավելացնենք նաեւ նույն օրերին նոյեմբերի 28-ի որոշման դեմ պաշտոնական մամուլի հախուռն եւ անվերապահ ընդդիմադիր կեցվածքը, բուռն քննադատությունները եւ այլն, ապա այս ամենը անակնկալ էր, եւ այս ֆոնի վրա Սփյուռքի ուժերը միանգամից չէին կարող կողմնորոշվել: Այդ կողմնորոշումը հստակվեց քիչ անց, թերեւս այն բանից հետո, երբ Գերագույն խորհուրդը մերժեց համաժողովրդական քննարկման դնել ՀՀԾ-ի՝ «Արմատական ժողովրդավարական բարեփոխումների մասին հռչակագիրը», եւ երբ հայաստանյան պատվիրակությունն, առանց ամենաչնչին զիջում կամ հուսադրող խոստում ստանալու, շարունակեց մասնակցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարին: Պարզ դարձավ, որ Հայաստանի իշխանություններն իրականում շարունակում են մնալ իրենց նախկին դիրքերում, դեմ են ամեն մի ժողովրդավարական վերափոխման, եւ հանուն ինչի էլ լինի, ամենեին չեն պատրաստվում «ապստամբել» Կենտրոնի դեմ՝ ինչպիսի տպավորություն որ առաջին հայացքից կարող էին թողնել նոյեմբերի 28-ի որոշմանը պաշտոնական մամուլի եռօրյա սուր արձագանքները եւ դեկտեմբերի 1-ի՝ վերամիավորման որոշման առիթով համընդհանուր խանդավառությունը:

Պատահական չէ, որ Նոյեմբերի 28-ի որոշման առիթով Սփյուռքի առաջին արձագանքն, ըստ ՀԿԿ ԿԿ-ին զեկուցվող փաստաթղթերի, գնահատվում է «ոչ միանշանակ»[981]:

[981] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.81-82:*

Նոյեմբերի 28-ի որոշումը դատապարտել էին ԱՄՆ-ի ռամկավարները՝ համարելով, որ այն «խախտում է հայ ժողովրդի՝ խորհրդային Սահմանադրությամբ երաշխավորված ինքնորոշման իրավունքը»[982]: Ռամկավարները կարծում էին, որ «այդ որոշումը չվերանայելու դեպքում կստեղծվի ԼՂԻՄ-ում իրավիճակի հետագա սրման նախադեպ, եւ նոր զոհեր կլինեն, ինչի համար պատասխանատվությունը կընկնի խորհրդային իշխանության վրա»[983]: Սփյուռքի որոշ շրջանակներ ամբողջությամբ մերժում էին այն դրույթը, ըստ որի՝ մարզը անբաժանելի է Ադրբեջանից, բայց, միաժամանակ, նաեւ համարում էին, որ տվյալ որոշումը հիմնախնդրի կարգավորման որոշակի «կոմպրոմիսային» տարբերակ է, ունի դրույթներ, որոնք կարող են հեռանկարային լինել Ղարաբաղի համար: «Առաջադիմական եւ չեզոք» կազմակերպությունները, բացասական վերաբերմունք ունենալով հանդերձ, հայտարարել էին, որ՝ «այդ իրավիճակում նրանք չեն ծրագրում բողոքի որեւէ ակցիա, այլ կսպասեն իրադարձությունների հետագա զարգացմանը եւ խորհրդային իշխանությունների համապատասխան արձագանքին»[984]: Նման մեղմ գնահատական այդ օրերին (խոսքը դեկտեմբերի առաջին օրերի մասին է) Հայաստանում եւ Ղարաբաղում չտվեց ոչ մեկը, նույնիսկ իշխանության որեւէ ներկայացուցիչ: Բոլորի կողմից որոշումն անընդունելի եւ ապօրինի էր հայտարարվում ամբողջությամբ:

Եւ այնուամենայնիվ, մի կողմից՝ որոշման անակնկալության, մյուս կողմից՝ Հայաստանում եւ Ղարաբաղում այն միահամուռ անընդունելի եւ ապօրինի հայտարարվելու, ինչպես նաեւ դեկտեմբերի 1-ի վերամիավորման որոշման հանդիման, դեռեւս չկողմնորոշված Սփյուռքում եղան նաեւ սուր արձագանքներ: Ամենասուր արձագանք, ըստ ՀԽՍՀ ՊԱԿ-ի ունեցած տեղեկատվության, տվել էր ԱՄՆ-ի «Հայոց ազգային կոմիտեն», որը ծրագրել էր ի պատասխան կազմակերպել բողոքի ցույցեր, բոյկոտել ԱՄՆ ժամանող խորհրդային պատվիրակություններին, ստորագրություններ հավաքել եւ պահանջել Գորբաչովից եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդից վերանայել որոշումը: «Ծայրահեղական» գնահատվող դիրքորոշում ունեցողների թվին դասվում նաեւ մի շարք երկրների դաշնակցական կազմակերպություններ կամ նրանց առանձին միավորներ: Տեղեկացվում է, որ ՀՅԴ ԱՄՆ-ի

[982] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.86:*

[983] *Նույն տեղում: ՌԱԿ-ի դիրքորոշումը, փոքր-ինչ ուշացած, հրապարակվեց Գորբաչովին ուղղված նամակի տեսքով եւ տպագրվեց «Զարթոնքի» դեկտեմբերի 8-ի համարում (տե՛ս ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմեջեն, էջ 48):*

[984] *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.72:*

կազմակերպության «որոշ ջոկատներ» պահանջում են ակտիվացնել Հայաստանի եւ Ղարաբաղի վերամիավորման քայլերը[985]: Հունաստանում նրանք ծրագրել են բողոքի ցույց կազմակերպել Աթենքում գտնվող խորհրդային հիմնարկներից որեւէ մեկի մոտ: Կիպրոսի դաշնակները, որպես բողոքի նշան, հայտարարում են «Հայաստանի օգնության կոմիտեից» իրենց դուրս գալու նախապատրաստության մասին, քանի որ վերջինս հրաժարվում էր բողոքի ակցիաներ անցկացնել: Նիկոսիայում բողոքի ցույց էր կազմակերպել Դաշնակցության երիտասարդական կազմակերպությունը: Նոյեմբերի 28-ի որոշումը նույն կերպ էին ընդունել Իրանի դաշնակները, նրանց մամուլում աճել էր հակախորհրդային քարոզչությունը, նրանք ընդհուպ կարծում էին, որ Բյուրոն պետք է վերանայի ԽՍՀՄ-ում «Վերակառուցմանը» սատարելու այն որոշումը, որ ընդունել է այդ կուսակցության 24-րդ համագումարը: Իսկ Եգիպտոսի դաշնակցական կազմակերպությունը նոյեմբերի 30-ին նախապատրաստված տոնական միջոցառումը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման տարեդարձի առիթով, չեղյալ էր հայտարարել[986]:

Դժվար չէ նկատել, որ «ծայրահեղական» գնահատվող դիրքորոշումները վերաբերում են Դաշնակցության տեղական մի շարք կազմակերպությունների, եւ ոչ մի խոսք չկա այդ կուսակցության կենտրոնի՝ Բյուրոյի դիրքորոշման մասին: Վերջինս կա՛մ դեռ չէր հասցրել կողմնորոշվել եւ իր հրահանգներն ուղարկել տեղական կազմակերպություններին եւ շարքերին, կա՛մ չէր շտապում այդ անել, կա՛մ նրա տեղական կազմակերպությունների մի մասը պարզապես դուրս էր գալիս իրենց ղեկավար մարմնի գծած շրջանակներից: Բայց նույնիսկ տեղական կազմակերպություններն իրենց «ծայրահեղական» դիրքորոշումների մեջ, այնուամենայնիվ, չեն մոռանում շեշտել, որ իրենք պաշտպանում են Վերակառուցման քաղաքականությունը, բացասաբար են վերաբերվում ամեն տեսակ «աջ» եւ «ձախ» շարժումներին, որոնք արգելակում են այն: Նրանք միանշանակ բացասաբար էին ընդունում «զինված պայքարի դիմելու մի քանի անպատասխանատու մարդկանց կոչերը», ինչպես նաեւ՝ քաղաքական կարճատեսություն համարում ԽՍՀՄ կազմից դուրս գալու ծրագրերը[987]: Ավելին՝ ըստ նույն գերատեսչության զեկուցագրերից մեկի՝ Դաշնակցության ներկայացուցիչները (այստեղ, թերեւս, խոսքը Բյուրոյի ներկայացուցիչների մասին է) անհանգստացած էին նաեւ

985 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.72:*
986 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.75-76:*
987 *ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.88:*

«Միացյալ հայկական հանրապետության» հռչակման փաստով: Նրանք համարում էին, որ՝ «թեեւ այդպիսի հանրապետության ստեղծումը համապատասխանում է իրենց ծրագրային դրույթներին, սակայն տվյալ պայմաններում այդպիսի որոշումը գնահատվում է ո՛չ ժամանակին եւ ո՛չ տեղին»: Նրանք կարծում են, որ Կենտրոնը, կրքերը հանգստացնելու համար, մի կողմից՝ չեղյալ կհայտարարի դեկտեմբերի 1-ի որոշումը, մյուս կողմից՝ կփորձի վերացնել Հայաստանի եւ Ղարաբաղի շրջափակումը[988]:

ՀՅԴ Բյուրոյի իրական դիրքորոշման արտահայտությունները կարելի է գտնել նաեւ «Դրոշակում»: Ըստ այս կուսակցության գաղափարախոսներից մեկի (Է. Հովհաննիսյան)՝ դա ներկայանում է հետեւյալ կերպ. «Իսկ մենք գրեթե նույն օրը կայացրինք մեր որոշումը (դեկտեմբերի 1-ի – Ա.Ս): Մինչդեռ ուսումնասիրելու բան շատ կար: Մենք պետք է ուսումնասիրեինք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման (նոյեմբերի 28-ի) ամեն մի կետը եւ տեսնեինք, թե ինչպես կարող ենք օգտագործել դրանք մեր նպատակների համար: Նշենք միայն, որ եթե բոլոր այդ կետերը իրականացվեին, ապա Արցախի հայության պահանջները բավարարված կլինեին: Չէ՞ որ առայժմ մենք նրանց ճակատագրի մասին էինք մտածում, բայց ոչ սահմանների փոփոխության»[989]: Այսինքն՝ փորձ էր արվում դրական բան տեսնել այնտեղ, որտեղ որեւէ դրական բան չէին տեսնում անգամ Հայաստանի կոմկուսի ղեկավարները:

Նույն տեղում գտնում ենք նաեւ դեկտեմբերի 1-ի՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միացյալ հանրապետության որոշման նկատմամբ ՀՅԴ գնահատականը: Ըստ նույն Է. Հովհաննիսյանի՝ Բյուրոն այս որոշումը ողջունել է՝ անակնկալի եկած: Սակայն քիչ անց, ահա, նույն Է. Հովհաննիսյանի բերանով ասում է, որ իր «ողջունումը կրում է սկզբունքային, բայց ոչ քաղաքական բնույթ»: Ըստ նրա՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման՝ նման հայտարարություն կարող էր անել ՀՀՇ-ն, բայց ոչ պաշտոնական իշխանությունները՝ դրանով իսկ իրենց զուր տեղը դնելով «այլախոհական վիճակի մեջ»: Հեղինակի, նրա դեմքով եւ ՀՅԴ Բյուրոյի մտահոգությունն այն է, որ Հայաստանի իշխանությունները դրվում են վտանգի տակ. «Եթե ներկա իշխանությունները պաշտոնազրկվեն, եւ նրանց տեղը գրավի, օրինակ, ՀՀՇ ղեկավարությունը, մի՞թե այս վերջիններս ավելի բան պիտի կարողանան անել: Եթե այո, ապա խոսելու տեղ չունեմ»[990]:

988 *Տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.34, թ.81-82:*
989 *«Դրոշակ», 03.01.1990, էջ 47:*
990 *«Դրոշակ», 03.01.1990, էջ 47: Ապագան ցույց տվեց, որ, իշխանության գալով, ՀՀՇ ղեկավարությունը կարողացավ Լեռնային Ղարաբաղի համար անել ոչ միայն*

Այսպիսով, հայաստանյան իրականության մեջ (ներառյալ Ղարաբաղում) նոյեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 1-ի որոշումների առիթով ամբողջ հասարակության վերաբերմունքն ու դիրքորոշումը միանշանակ էր. առաջինն ամբողջությամբ մերժվում էր, երկրորդը՝ համարվում միակ ընդունելի եւ անհրաժեշտ քայլը: Ճիշտ է՝ ստիպված, բայց գեթ պաշտոնապես նույն դիրքորոշումն արտահայտեցին նաեւ իշխանությունները՝ ի դեմս պաշտոնական մամուլի արձագանքների եւ Գերագույն խորհրդում բուռն ծափահարություններով ընդունված միաձայն որոշման, ԽՍՀՄ Գերագույն խորհրդում եւ համագումարում հայկական պատվիրակության արած հայտարարությունների: Սփյուռքի քաղաքական ուժերը շարունակում էին հավատարիմ մնալ իրենք իրենց. երկու որոշումների նկատմամբ էլ իրական վերաբերմունքը տարտամ էր: Մասնավորապես՝ Դաշնակցությունը ուշադրության արժանի շատ բան էր տեսնում նոյեմբերի 28-ի որոշման մեջ եւ համարում, որ դրանում կարելի էր փնտրել հարցի լուծումը եւ Ղարաբաղի ապագան, իսկ վերամիավորման որոշումը համարում անժամանակ, իզուր եւ անհեռանկար: Այսպիսի դիրքորոշմամբ նրանք, ինչպես ի սկզբանե՝ 1988-ից, փաստորեն, շարունակում էին կանգնած մնալ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողքին, եւ սա էր իրականությունը:

թ) Հայկական ժողովրդավարական շարժման միջազգային արժեւորումը եւ աջակցությունը

Խորհրդային Միությունում ծավալված ժողովրդավարական շարժումներին միջազգային հանրությունը շարունակում էր համակրանքով վերաբերվել՝ նկատի ունենալով նրա առաջ քաշած հարցերի եւ գործելակերպի ժողովրդավարական բնույթը: Հայկական Շարժման նկատմամբ այդ համակրանքը ավելի մեծացավ ու ընդգծվեց, երբ Շարժումը աստիճանաբար ծավալվեց՝ իր օրակարգում ընդգրկելով ժողովրդավարական բոլոր հիմնախնդիրները, որոնք եւ արձանագրվեցին ՀՀՇ քաղաքական ծրագրում:

Շարժման միջազգային արժեւորումները եղել են ինչպես հընթացս, այնպես էլ հետին թվով: Որքան խորանում էր Ղարաբաղյան շարժման ժողովրդավարական բնույթը, այնքան բարձրանում էր նրա հեղինակությունն ու ծավալվում էր նրա ազդեցությունը: Հայկական ժողովրդավարական

ավելին, այլեւ այնքան, որ այդ ժամանակ ոչ մեկի մտքով անգամ չէր կարող անցնել: Բայց խոսողն, իհարկե, շարունակեց խոսել՝ մինչեւ վերջ ՀՀՇ-ին մեղադրելով «Ղարաբաղը ծախելու» մեջ:

շարժումն այդ տարիներին տրված քաղաքական գնահատականներով աներկբա ընդունվում էր որպես ժողովրդավարական գործընթացների սկզբնավորող եւ յուրատեսակ օրենսդիր: Դեռ միայն 1988 թվականի կտրվածքով, նույն թվականի վերջում տրված այդ արժեւորումներից մեկը (ֆրանսիացի վերլուծաբան Մերսյե) դրա վկայությունն է:

Մեծ էր նաեւ Շարժման ղեկավար մարմնի՝ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի միջազգային հեղինակությունը: Դրա փայլուն վկայությունն էին, օրինակ, դեկտեմբերյան երկրաշարժից հետո Կոմիտեի այն կոչի հետեւանքները, որով նա հորդորում էր միջազգային հանրությանը աղետյալների օգնություն ցուցաբերելու համար գումարներ չփոխանցել ԽՍՀՄ Արտաքին տնտեսական բանկ: Կոմիտեն առաջարկում էր ստեղծել երկու կենտրոն՝ Եւրոպայում՝ Շառլ Ազնավուրի, եւ Ամերիկայում՝ Ջորջ Դոքմեջյանի գլխավորությամբ, եւ օգնության գումարները փոխանցել այդ կենտրոններին: Այդ կոչին անսացին ե՛ւ Շառլ Ազնավուրը, ե՛ւ Ջորջ Դոքմեջյանը, ե՛ւ օգնություն տրամադրողների մեծ մասը: 1989 թվականի առաջին կեսին, Շարժման ղեկավարների ազատազրկման հետ կապված՝ միջազգային հուժկու գործուն հակազդեցությունը անձամբ նրանց ու ընդհանրապես Շարժման նկատմամբ լավագույն վերաբերմունքի ցցուն մի արտահայտություն էր:

Հայկական շարժման «ավագությունը» ընդունում էին Մերձբալթյան հանրապետությունների ժողովրդական ճակատները եւ լեհական «Սոլիդարնոստը»[991]:

Համակրանքը Հայկական ժողովրդավարական շարժման եւ Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ արտահայտվում էր նաեւ գործնական եւ բարոյական աջակցությունների տեսքով:

[991] Պարզվում է՝ «Սոլիդարնոստին» առանց «փողոցային հեղափոխության», իշխանության լեգալ մարմիններ մտնելու հնարավորություն ձեռք բերելու խնդիրը մտահղացնալուն մեծապես օգնել է հայկական փորձը. ըստ Աշոտ Մանուչարյանի՝ «Սոլիդարնոստի» մեծապես օգնել է հայկական փորձը. ըստ Աշոտ Մանուչարյանի՝ «Սոլիդարնոստի» ղեկավար անդամներից Ադամ Միխնիկը մի հանդիպման ժամանակ (1989թ. սեպտեմբերին, Ուկրաինայի ժողովրդական շարժման՝ «Ռուխի» հիմնադիր համագումարին) իրեն ասել է, որ Հայկական ժողովրդավարական շարժման ներկայացուցիչների ընտրվելը հայկական խորհրդարանի կազմում եւ նրանց աշխատանքը ընդօրինակելի է եղել իրենց («Սոլիդարնոստի») համար: (տե՛ս Գալստյան Հ., Ջուղարկված նամակներ, Երեւան, 2013, գրքի՝ Հարություն Մարությանի առաջաբանը, էջ 14): «Ղարաբաղ» կոմիտեի փորձից օգտվելու համար 1988-1989թթ. մի պատվիրակության հետ Հայաստան է ժամանել էստոնական ժողովրդական ճակատի ղեկավար Էդգար Սավիսաարը (հետագայում Էստոնիայի վարչապետ), նույն նպատակով Վրաստանից մի քանի անգամ իր խմբով Հայաստանում է եղել Զուրաբ Ժվանիան եւ այլն:

Այսպես՝ 1989թ. օգոստոսի 7-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը Ժնեւում Մարդու իրավունքների ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը այլ հարցերի թվում անդրադարձել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի խնդրին՝ նշելով, որ հայերի խաղաղ ցույցերը տեղիք են տվել հակահայկական ջարդերի 1988-ի փետրվարին եւ նոյեմբերին, ինչը հանգեցրել է զանգվածային բռնագաղթերի: Ենթահանձնաժողովը առաջարկել է դիմել ԽՍՀՄ կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղում հանրաքվե կազմակերպելու միջոցով պարզել բնակչության մեծամասնության կամքը, ինչպես նաեւ բացահայտել ջարդերի կազմակերպիչներին ու հեղինակներին[992]:

Աջակցության մի դրսեւորում էր ԱՄՆ-ի Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից ընդունված եւ Սենատի հավանությանն արժանացած՝ 1989թ. նոյեմբերի 19-ին Կոնգրեսի ընդունած թ. 178 բանաձեւի նորացված տարբերակը[993]: Դրանում ավելացվում էր Գորբաչովին ուղղված կոչ՝ անմիջապես վերջ դնել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակմանը: Փաստաթղթի սկզբում ասվում էր, որ այն ընդունվել է «հակամարտության խաղաղ եւ արդարացի կարգավորման՝ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ձգտմանը ԱՄՆ-ի կողմից աջակցելու նպատակով»[994]:

Մոսկվան, իհարկե, բավականին սուր արձագանքեց Միացյալ Նահանգների այս քայլին: Նույն օրը ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան Ջ. Մեթլոկը հրավիրվեց Արտաքին գործերի նախարարություն, եւ նրան հայտնվեց ԽՍՀՄ կառավարության պաշտոնական բողոքը[995]: ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությունն այն գնահատեց իբրեւ «սադրիչ գործողություն»: Հաջորդ օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միջազգային հարաբերությունների հանձնաժողովը դատապարտեց այն իբրեւ ԽՍՀՄ ներքին գործերին միջամտության փորձ[996]:

Հատուկ հայտարարությամբ ԱՄՆ-ի Սենատի բանաձեւը ողջունեցին Հայոց համազգային շարժումը[997], ԼՂԻՄ-ից եւ Հայաստանից ընտրված պատգամավորները[998]: Ղարաբաղի հայության անունից Արցախի Ազգային

---

992 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 03.10.1989:*

993 *Այս բանաձեւն ԱՄՆ-ի Սենատն ընդունել էր 1989թ. հուլիսի 19-ին:*

994 *«Խորհրդային Հայաստան», 23.11.1989:*

995 *Տե՛ս «Правда», 20.11.1989.*

996 *Տե՛ս «Коммунист», 22.11.1989.*

997 *Տե՛ս «Երեկոյան Երեւան», 22.11.1989:*

998 ***Арутюнян В.**, События в Нагорном Карабахе, часть 2, ст. 311.*

խորհուրդը նույնպես շնորհակալություն հայտնեց ԱՄՆ-ի Սենատին[999] եւ դատապարտեց այս բանաձեւի առիթով կենտրոնական իշխանությունների բողոքը[1000]:

Երեւանի պաշտոնական արձագանքը, որ բնական էր սպասել անմիջապես եւ կարող էր լինել Գերագույն խորհրդի նախագահության կամ արտաքին գործերի նախարարության անունից, հաջորդ օրերին չեղավ[1001]: Եթե այդ արձագանքը կարող էր որեւէ գործնական դեր խաղալ, ապա պետք է լիներ մինչեւ նոյեմբերի 28-ը, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում պիտի քննարկվեր Ղարաբաղի հարցը: Բայց դա տեղի ունեցավ միայն դեկտեմբերի 1-ին՝ Հայոց համազգային շարժման բուռն ճնշմամբ ու նրա ներկայացրած նախագծով՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի ընդունած համատեղ որոշման տեսքով: Դրանում Սենատի հավանությանն արժանացած բանաձեւը համարվում էր իբրեւ «ռեգիոնի ձգձգվող քաղաքական ճգնաժամի առթիվ ամերիկյան ժողովրդի մտահոգության արտահայտություն, ինքնորոշման մասին Լեռնային Ղարաբաղի բնակչության արդարացի պահանջի պաշտպանություն եւ ըմբռնում»: ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության դեմ հայտնվում էր անհամաձայնություն եւ վճռական բողոք, այն գնահատվում էր որպես համաշխարհային հասարակական կարծիքն ապակողմնորոշող փաստաթուղթ: ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունից նաեւ պահանջվում էր «բացառել հայ ժողովրդի շահերին վերաբերող կամ նրա անունից արվող որեւէ հայտարարություն՝ առանց համաձայնեցնելու Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարության հետ»[1002]:

ժ) Հայկական ժողովրդավարական շարժումը՝ որպես համաշխարհային պատմության ընթացքի վրա ազդող գործոն

Գորբաչովի ձեռնարկած «Վերակառուցմանը» սկզբից եւեթ վերապահությամբ էին մոտենում ամբողջ աշխարհում՝ դա համարելով ավելի շատ խորհրդային վարչակարգի հերթական քարոզչական հնարանք, քան

---

999 *«Խորհրդային Ղարաբաղ», 22.11.1989:*

1000 *«Խորհրդային Ղարաբաղ», 22.11.1989:*

1001 *Իշխանությունը բավարարվեց միայն մամուլում առանձին բողոքի արձագանքներ (տե՛ս «Коммунист», 22,11,1989) եւ Բանաձեւի տեքստը հրապարակելով:*

1002 *Տեղեկագիր ՀԽՍՀ Գխ-ի, 1989, 23, հոդվ. 146:*

իրական-քաղաքական լուրջ ձեռնարկումների ծրագիր: Այդ էր թելադրում, առաջին հերթին, պատմական փորձը եւ խորհրդային բռնատիրության այն կարծրացած կերպարը, որ ձեւավորվել էր յոթ տասնամյակի ընթացքում: Սակայն կատարված գործնական քայլերը, ինչպես՝ Աֆղանստանից զորքերի դուրս բերումը (1988-1989թթ.), զինված ուժերի եւ սպառազինության միակողմանի կրճատումը, ներքաղաքական կյանքում խորհրդային վարչակարգին ոչ բնորոշ ինչ-ինչ քայլեր եւ այլն, ստիպում էին նաեւ մտածել, որ հռչակված կարգախոսների տակ, այնուամենայնիվ, նաեւ ինչ-որ առարկայական բան կա:

«Վերակառուցման» շրջանակներում Գորբաչովը հայտարարություններ արեց նաեւ՝ ուղղված Արեւելյան Եւրոպայի սոցիալիստական ճամբարի երկրներին՝ հավաստիացնելով, թե նրանց չի պարտադրվի այն, ինչ տեղի է ունենում ԽՍՀՄ-ում, չի միջամտի նրանց ներքին գործերին, եւ որ նրանք ինքնուրույն կարող են որոշել իրենց հետագա զարգացման ճանապարհը: Թվում էր՝ սա անմիջապես բուռն ոգեւորություն եւ շարժումներ պետք է առաջացներ ստիպողաբար սոցիալիստական ուղի ընտրած եւ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մոսկվայի կոշտ վերահսկողության տակ գտնվող այս երկրներում: Սակայն վերջիններիս կողմից անմիջական արձագանք չհետեւեց, չհաջորդեցին պատասխան համարժեք հայտարարություններ, քայլեր կամ ձեռնարկումներ ո՛չ այդ երկրների ժողովուրդների, ո՛չ էլ դրանց իշխանությունների կողմից: Բացատրությունը պետք է փնտրել, նախ՝ թերահավատության ու անվստահության մեջ. այս ժողովուրդների հիշողության մեջ ամուր էին դրոշմված 1956թ. Հունգարիայում, 1968թ. Չեխոսլովակիայում եւ 1980-1981թթ. Լեհաստանում տեղի ունեցած դեպքերը, երբ նրանք փորձել էին շեղվել Մոսկվայի պարտադրած ուղուց: Ինչ վերաբերում է այդ երկրների գործող իշխանություններին, դրանք ամենեւին խանդավառությամբ չէ, որ պետք է վերաբերվեին «Վերակառուցմանը»: Այդ իշխանությունները ոչ միայն կազմվում էին Մոսկվայի համաձայնությամբ, այլեւ ապահով պահպանվում էին նրա կողմից: Մոսկվայի հովանավորության դադարեցումը, զարգացման ուղու ազատ ընտրության հնարավորությունը եւ ժողովրդավարությունը անխուսափելիորեն հանգեցնելու էին ինքնավերարտադրվող կոմունիստական ռեժիմներին ընդդիմադիր քաղաքական ուժերի առաջացմանը կամ ակտիվացմանը, որոնք եւ վիճարկելու էին իշխանության հարցը: Այս ամենով հանդերձ, կարծես թե տրամաբանական կլիներ, եթե «Վերակառուցման» հետ կապված ժողովրդավարական շարժումներն, սկսվեին, առաջին հերթին, հենց իրավական առումով անկախ ճանաչված, միջազգային կառույցների անդամ, եւ դրանով իսկ՝ խորհրդային

հանրապետությունների համեմատ Մոսկվայի ճնշումներից ու պատժիչ գործողություններից ավելի ապահովագրված սոցիալիստական ճամբարի՝ Արեւելյան Եւրոպայի երկրներից: Բայց դա տեղի չունեցավ:

Այն գործընթացները, որոնք հանգեցրին սոցիալիստական ճամբարի վերացմանը եւ Խորհրդային Միության մաս կազմող հանրապետությունների անկախացմանը, ծայր առան ու թափ հավաքեցին, նախ, ԽՍՀՄ-ի ներսում: Դրա անսակարկելի սկիզբը 1988թ. փետրվարի 20-ն էր՝ ԼՂԻՄ մարզային խորհրդի կայացրած որոշմամբ ու Հայաստանում ծավալված աննախադեպ հզորության համաժողովրդական շարժմամբ: Ընդ որում, այն ոչ թե լոկ ժամանակագրական սկիզբն էր՝ բռնապետության դեմ ուղղված պայքարի մեկուսի մի դրվագ, այլ իր վրա միշտ քաղաքական եւ բովանդակային ծանրություն կրող, առաջիկա տարիների պայքարում ուղի հարթող համաժողովրդական մի շարժման, որը տեւական մի շրջան՝ կես տարուց ավելի, նաեւ միայնակ էր իր ուսերին կրում այդ պայքարի ողջ ծանրությունը, իսկ դրանից հետո՝ այդ ծանրության մեծ մասը: Ճիշտ է՝ Շարժման սկզբից արդեն մեկ ամիս անց Երեւանի փողոցներում հայտնվեցին տանկեր ու զինվորներ, երկնքում՝ ռազմական ուղղաթիռներ, սակայն Շարժումը հնարավոր չեղավ կասեցնել: Ամենափոքր հանրապետություններից մեկում, Խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ, արձանագրվեցին մի քանի հարյուր հազարանոց, երբեմն՝ կես միլիոնից ավելի, պարբերաբար կրկնվող զանգվածային քաղաքական ցույցեր ու հանրահավաքներ, համընդհանուր ու տեւական քաղաքական գործադուլներ: Հետագա ամիսների ընթացքում, դարձյալ՝ առաջին անգամ, ոչ թե կուսակցական մարմինների, այլ «ներքեւի» թելադրանքով հանրապետության Գերագույն խորհրդի կողմից կայացվեցին որոշումներ, այլընտրանքի հիման վրա տեղի ունեցան Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ եւ դրանցում այլընտրանքային թեկնածուների հաղթանակներ: Ստեղծվեց փաստական երկիշխանության մի վիճակ, իսկ պայքարի 10-րդ ամսում արդեն ժողովրդավարական շարժման կողմից սեփական օրակարգով ու նախաձեռնությամբ հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանի հրավիրում, որոշումների ընդունում եւ այլն: Երկարատեւ մեկուսացման նպատակով «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալումը, ապա ստիպողական ազատ արձակումը բազմապատկեց ժողովրդավարական շարժումների համարձակությունը եւ վճռականությունը: ԽՍՀՄ ամենափոքր հանրապետություններից մեկում ծավալված համաժողովրդական շարժումը խորհրդային կենտրոնին մի քանի անգամ ստիպեց հետքայլ անել, նահանջել ու տեղի տալ:

Այս ամենից հետո միայն գերիշխող դարձավ այն համոզմունքը, թե Մոսկվան իր հակազդեցությամբ այլեւս այնքան էլ նման չէ իրեն, եւ նրա դեմ գրագետ քաղաքական պայքարում հնարավոր է արդյունքի հասնել: Հայկական ժողովրդավարական շարժումը դարձավ այն խմորիչը, որը սկիզբ դրեց այլ ժողովուրդների ազատության համար շարժումներին ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Արեւելյան Եւրոպայում: Նրա փորձը կարեւոր եզրահանգումների հիմք էր Մոսկվայի հնարավոր գործողությունները կանխատեսելու համար, եւ դա չէին կարող նկատի չունենալ ե՛ւ ԽՍՀՄ-ում, ե՛ւ Արեւելյան Եւրոպայում: **Հայկական ժողովրդավարական շարժման շնորհիվ այլեւս, պատկերավոր ասած՝ բոլորի «վախը բռնված» էր, կամ՝ Մոսկվայի «ատամները հաշվված էին»**:

Սոցիալիստական ճամբարի երկրներում քաղաքական ընդդիմությունները 1988-ի երկրորդ կեսին միայն հիշեցրին իրենց գոյության կամ կազմավորման մասին: Իսկ հիմնական իրադարձությունները տեղի ունեցան 1989-ին:

Խորհրդային Միության փլուզման այս շրջանին վերաբերող տարբեր ուսումնասիրություններում ժամանակին ընդունվում էր, որ դրա սկիզբը Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում ծավալված Շարժումն էր: Ստորեւ բերենք այդ գնահատականներից մի քանիսը.

1. Ըստ իտալացի հայտնի պատմաբան եւ լրագրող Բոֆա Ջուզեպեի՝ «Շղթայական քաղաքական ռեակցիան, որը հանգեցրեց ԽՍՀՄ-ի անկմանը, սկսվեց կովկասյան երկու ժողովուրդների՝ հայերի ու ադրբեջանցիների միջեւ Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքի շուրջ ծագած հակամարտությամբ»[1003]:

2. Ֆրանսիացի քաղաքագետ Մերսյեն համարում է, որ Հայկական ժողովրդավարական շարժումը «ինչ- որ չափով հենց ինքն էր կյանքի կոչել» ժամանակի մյուս ժողովրդավարական շարժումները[1004]:

3. Ֆրանսիական ակադեմիայի նախագահ Էլեն Կարեր-դ'Անկոսը համարում էր, որ՝ «Խորհրդային Միության դեմոկրատացումը սկսվեց Ղարաբաղի լեռներում»:

4. Գործնական քաղաքականությամբ զբաղվող հետազոտողի տեսանկյունից գնահատականներն ավելի բարձր են: Ահա ԱՄՆ Սենատի անդամ Ջոզեֆ Լիբերմանի գնահատականը այդ շրջանի մասին. «Պատմաբաններն

[1003] ***Боффа Джузеппе**, От СССР к России. История неоконченного кризиса, 1964-1994, М. 1996, ст. 178.*

[1004] ***Մերսյե Ֆ.**, Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, էջ 60:*

իրավամբ կարող են արձանագրել, որ Կոմունիզմի փլուզումը Խորհրդային բլոկի ներսում սկսվեց ոչ թե Ռուսաստանի սրտից կամ Կենտրոնական Եւրոպայից, այլ Հայաստանից: 1988 թվականի փետրվարին հայ ժողովուրդը բողոքի խիզախ ալիք բարձրացրեց կոռումպացված կոմունիստական վարչակարգի դեմ, որը նրան պարտադրվել էր Կրեմլի կողմից: Կոմունիստական տիրապետության դեմ այս ըմբոստությունը որպես մոդել եւ ոգեշնչման օրինակ ծառայեց նույն տարում ավելի ուշ Կենտրոնական Եւրոպայում տեղի ունեցած ապստամբությունների համար»[1005]:

5. Ըստ էության՝ նույն բանն է ասել նաեւ այդ տարիներին ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ն. Ռիժկովը. «Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ Կենտրոնը չցանկացավ կամ, այնուամենայնիվ, չկարողացավ լսել Ղարաբաղյան «զանգը»[1006]:

Սպասելի էր, որ Արեւելյան Եւրոպայում առաջիններից մեկը ժողովրդավարական շարժում կսկսվի Լեհաստանում, քանի որ այստեղ կար դրա ընդհատված նախապատմությունը՝ ի դեմս 1980-81թթ. «Սոլիդարնոստի» ծավալած շարժման:

Առաջին գործադուլները Լեհաստանում սկսվեցին 1988թ. ապրիլի վերջից, որ ժամանակավոր դադարից հետո վերականգնվեցին օգոստոսից: Սեպտեմբերից սկսվեցին իշխանության հետ նոր երկխոսության նախաձեռնությունները: Դրանց շնորհիվ 1989 թ. հունվարին ճանաչվեց «Սոլիդարնոստի» ազատ գործելու իրավունքը եւ հիմնական բանակցությունների համար որոշվեց հրավիրել «Կլոր սեղան»: Փետրվարի 6-ից ապրիլի 5-ը տեւած «Կլոր սեղանի» բանակցությունների արդյունքում հաստատվեց Լեհաստանում նախագահի ինստիտուտ՝ 6 տարի այդ իրավունքը վերապահելով գործող կոմունիստական իշխանության առաջին դեմք Յարուզելսկուն, ինչի դիմաց ձեռք բերվեց խորհրդարանի ընտրությունները մասամբ այլընտրանքային դարձնելու հնարավորություն: 1989-ի հունիսին կայացած «կիսազատ» ընտրություններում «Սոլիդարնոստը» վճռական հաջողության հասավ: Լեհաստանում ձեւավորվեց առաջին ոչ կոմունիստական կառավարությունը:

[1005] *Քաղվածքը Լիբերմանի նախաձեռնած՝ Հայաստանի վերաբերյալ բանաձեւի նախագծից է, որն ԱՄՆ Սենատում ընդունվել է 1991թ. նոյեմբերի 12-ին: Ելույթի անգլերեն բնագրի պատճենը՝ ՀՀԱՆԱ, 13/12.11.91:*

[1006] ***Рыжков Н.**, Перестройка. История предательства, М., 1992, с. 208. Քաղվածքը եւ հղումը ըստ Ռ.Ազիզբեկյանի (տե՛ս **Ազիզբեկյան Ռ.**, Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, 2, էջ 58):*

Նույն ժամանակ հսկայածավալ ցույցեր ու հանրահավաքներ սկսվեցին նաեւ Չեխոսլովակիայում: Այստեղ նույնպես հնարավոր եղավ երկխոսություններով ու համաձայնությամբ լուծել հարցերը, եւ կոմունիստները խաղաղ ճանապարհով զիջեցին իշխանությունը: Առաջին ժողովրդավարական ընտրություններում 1989թ. դեկտեմբերին կոմունիստները պարտություն կրեցին Հունգարիայում, իշխանության եկան ժողովրդավարական ֆորում կազմող ուժերը: Բուլղարիայում, որտեղ շատ թույլ էր ժողովրդավարական շարժումը, կոմունիստները կարողացան պահպանել իշխանությունը: Ռումինիայում կոմունիստական ռեժիմը Չաուշեսկուի գլխավորությամբ որոշեց դիմադրել մինչեւ վերջ, եւ այդ վերջը նույն Չաուշեսկուի գնդակահարությունն էր 1989թ. դեկտեմբերին:

Արեւելյան Եւրոպայում ամենակարեւորն, անշուշտ, Գերմանիայի հարցն էր, նրա երկու մասի միավորումը: Այստեղ կոմունիստական ռեժիմի դեմ 1989թ. սկսեց ձեւավորվել «Քաղաքացիների շարժում» կազմակերպությունը: Պայքարի միջոցները, սակայն, պասիվ էին, եւ դա արտահայտվում էր դեպի Արեւմտյան Գերմանիա մարդկանց փախուստով, ինչը նույն թվականին զանգվածային բնույթ կրեց, եւ փախչողների թիվը հաշվվում էր հարյուր հազարներով: Երկրի՝ ատելի դարձած ղեկավար Հոնեկերը վերջապես պաշտոնազրկվեց, եւ նոր կառավարությունը 1989թ. նոյեմբերի 9-ին որոշումներ ընդունեց, որոնցով դյուրացվում էր Բեռլինի Արեւելյան եւ Արեւմտյան մասերի բնակիչների անցուդարձը մի կողմից մյուսը: Հենց դա էլ առիթ հանդիսացավ, որպեսզի տասնամյակների լարված զսպանակը միանգամից բաց ընկնի. նույն օրը գիշերը հազարավոր մարդիկ համապատասխան գործիքներով հարձակվեցին Բեռլինի հայտնի պատի վրա եւ սկսեցին այն քանդել: Որեւէ մեկը չհամարձակվեց դիմադրել այս ինքնաբուխ գործողությանը[1007]:

[1007] *Ընդամենը մեկ տարի տեւեցին համապատասխան բանակցությունները. 1990թ. հոկտեմբերի 3-ին ստորագրվեց Գերմանիայի վերամիավորման համաձայնագիրը, եւ լուծվեց միջազգային հարաբերություններում ամենադժվար թվացող հարցերից մեկը: Այս տարիների իրադարձությունների արագությունը բազմակի անգամ գերազանցում էր անգամ ամենափորձված գործիչների հնարավոր բոլոր քաղաքական կանխատեսումները: Գերմանիայի օրինակն այս առումով ամենացայտունն է: Գորբաչովը հետագայում խոստովանում է, որ 1989թ. հուլիսին ԳՖՀ-ի կանցլեր Հելմուտ Քոլի հետ հանդիպման ժամանակ այս հարցը քննելիս երկուսն էլ հանգել են այն եզրակացության, որ դա պետք է տեղափոխել 21-րդ դար (տե՛ս «Հայկական ժամանակ», 09.11.2004»):*

* * *

Ավելի ուշ, մի առիթով, որպես Ղարաբաղյան շարժման արժեւորում ու գնահատական, Հայաստանի Հանրապետության հիմնադիր-նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատկերավոր արձանագրեց. **«Բեռլինի պատը քանդվեց Լեռնային Ղարաբաղում»**[1008]:

Իսկ Բեռլինի պատի քանդվելը խորհրդանշում էր համաշխարհային պատմության շրջադարձ, շրջադարձ՝ որի մեջ ամենավճռական դեր էր խաղացել հայկական գործոնը՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ժողովրդի, ի դեմս՝ Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման[1009]:

Հրեա մտածող եւ գրող Մ. Բերդիչեւսկին ազգերի կենսունակության համար ունի ընդհանրական մի արձանագրում. «**Դեպի ապագա շարժվելու համար պետք է ապստամբել անցյալի դեմ**»:

Ղարաբաղյան կամ Հայկական համաժողովրդական շարժումը ամենահզոր ապստամբությունն էր սեփական անցյալի դեմ, ավանդական հասարակական պատկերացումների ու հակաքաղաքական կարծրատիպերի մերժումը, ինչով ապահովվում էր ժողովրդի՝ դեպի ապագա շարժվելու ընթացքը:

Հաջորդ տարիներին Շարժումը շարունակելու էր համաշխարհային պատմության վրա ազդող գործոնի իր այս դերակատարությունը եւ

[1008] *Սա արձանագրված է գերմանացի մի լրագրողի տված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցում, ընդ որում՝ լրագրողը համաձայնում է այս արձանագրմանը:*

[1009] *Հայկական պատմագիտությունը, չտրվելով քաղաքական շահարկումների՝ սա կարող էր դարձնել այդ տարիների մեր պատմության առանցքը: Շարժման տարիների մասին մեզ հանդիպել է այսօրինակ ընդամենը երկու կարճառոտ գնահատական. «Հայ ժողովրդի ողջ բազմադարյա պատմության, թերեւս, ամենավեհաշուք, հազվագյուտ էջերից մեկը, աշխարհում հայոց ազգի հետագա ընթացքի որակական մակարդակը պայմանավորող, Հայաստանում ազգային կենսական շահերով պայմանավորված ինքնիշխանության ծավալման ուղիով անկախ պետականության հաստատման բազմաբնույթ գործընթաց» (Ստեփանյան Գեւորգ. գրախոսական. Էդուարդ Պողոսյանի «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.)» աշխատության, ՊԲՀ 2014, 1., էջ 274: «Շարժման նշանակությունը Հայաստանի, մասամբ եւ աշխարհի համար 20-րդ դարի վերջի կտրվածքով ունի նույն դերը, ինչ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը Ֆրանսիայի եւ աշխարհի համար 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի առաջին կեսին» (Մարության Հարություն, Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը եւ Ղարաբաղյան շարժումը, Երեւան, 2009, էջ 313): Նույն միտքը նա հայտնել է նաեւ այլ առիթով (Տե՛ս Գալստյան Հ., Զուղարկված նամակներ, (Նախաբան), էջ 17):*

շարունակելու էր «ապստամբական» պայքարը սեփական անցյալի դեմ՝ հանուն ապագայի:

ժա) Շարժման երրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները

Հայկական ժողովրդավարական շարժման, ժողովրդավարական այլ շարժումների, ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության ճնշումների տակ «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակումը Կենտրոնի կատարած, իր ծանոթ կերպարին ոչ բնութագրական ետքայլերի մեջ, թերեւս, ամենամեծ քաղաքական տարողությունն ուներ: Այն, ըստ էության, ցուցադրեց Մոսկվայի՝ բռնության դիմելու իրական կարողությունների սահմանափակությունը՝ ոգեշնչող նշանակություն ունենալով բոլոր ժողովրդավարական շարժումների համար եւ ծառայելով որպես նոր քաղաքական հաշվարկների եւ գործողությունների ելակետ:

1. 1989 թվականի կեսից, ունենալով լայն զանգվածների ակտիվ պաշտպանությունը՝ Շարժումը շարունակեց հավատարիմ մնալ պայքարի սահմանադրական, օրինական մեթոդներին: Այն շարունակեց ամրացնել իր կազմակերպական կառույցը՝ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), կարողացավ հասնել իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվելուն: Հեշտությամբ հաղթելով Գերագույն խորհրդի պատգամավորների եւս մի քանի թափուր ընտրատարածքների մասնական ընտրություններում, օրենսդիր մարմնում, փաստորեն, ձեւավորվեց ՀՀՇ-ի փոքրաթիվ, բայց ազդեցիկ խմբակցություն: Հայոց համազգային շարժումը, ժողովրդի ամենաբուռն աջակցությամբ, ինքն էր թելադրում ողջ քաղաքական օրակարգը՝ Լեռնային Ղարաբաղին, շրջափակմանը, աղետի գոտուն, փախստականներին, բնապահպանության եւ այլ հարցերին վերաբերող իր տեսակետներին կարողանում էր օրենսդրական տեսք տալ՝ դարձնել օրենքներ եւ Գերագույն խորհրդի որոշումներ: Այդպես ծնվեցին ՀԽՍՀ ԳԽ-ի հունիսյան եւ հաջորդ նստաշրջանների տասնյակ կարեւոր քաղաքական որոշումները:

2. Իր խաթարված վարկանիշը բարձրացնելու նպատակով իշխանությունը Կոմիտեի ազատ արձակումից հետո փորձեց երեւութապես որդեգրել քաղաքական նոր կեցվածք, հանդես գալ որպես Ղարաբաղյան շարժման խնդիրներն ընդունող ու հետապնդող ուժ: Սակայն նրա չափազանց ակնհայտ երկդիմի պահվածքը, անհետեւողականությունը, վճռական պահերին գործելու անընդունակությունը, Մոսկվայի գծած շրջանակներից դուրս գալու անկարողությունը կանխորոշեցին նրա դերը: Որեւէ արդյունք չտվեցին նաեւ իր դաշնակիցների՝ նոմենկլատուրային մտավորականության միջոցով Շարժման ղեկավարությանն այլընտրանք ստեղծելու, զանազան արհեստածին կազմակերպությունների միջոցով Շարժումը պառակտելու, Սփյուռքի կուսակցությունների օգնությամբ Շարժման որդեգրած գաղափարական հիմնադրույթները եւ քաղաքական ծրագիրը վարկաբեկելու փորձերը: Շարժումը կարողացավ պահպանել իր միասնականությունը, ղեկավարությունը, վերածվեց իշխանությանը զուգահեռ գործող եւ նրանից շատ ավելի ազդեցիկ ու հզոր կազմակերպված քաղաքական ուժի:

3. Հանրապետության իշխանության տարտամ պահվածքի, նրա գործադիր օղակների բարոյալքման, անտարբերության, անկարողության պայմաններում Հայոց համազգային շարժումը «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորությամբ, կրկին ստիպված էր տարբեր բնագավառներում իր վրա վերցնել գործադիր իշխանության գործառույթներ: Շարժման ստեղծած կառույցները գործուն զբաղվում էին շրջափակված Ղարաբաղին քաղաքական, նյութական, տնտեսական, պաշտպանական, բարոյական եւ այլ բնույթի օգնություն կազմակերպելու, Աղետի գոտում աշխատանքների կազմակերպման եւ վերահսկման, փախստականների տեղավորման եւ նրանց հարցերի լուծման, սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովման, ազգամիջյան ընդհարումների եւ ճնշումների պատճառով խորհրդային բանակի զորամասերը լքած եւ հանրապետություն վերադարձած զինվորների եւ զորակոչիկների իրավական պաշտպանության եւ այլ հարցերով: Դրանով իսկ շատ արագ վերականգնվեց ու սկսեց խորանալ 1988թ. աշնանը ձեւավորված եւ դեկտեմբերին Կոմիտեի ձերբակալմամբ խզված երկիշխանական դրությունը՝ Շարժման փաստական ու իրական, եւ պաշտոնական իշխանության ձեւական դերակատարմամբ:

4. Ի դերեւ ելան հասարակության մի մասի մոտ մնացած, հանրապետության իշխանությունների ու նրանց համախոհ մտավորականության եւ Սփյուռքի կուսակցությունների կողմից քարոզվող՝ ԽՍՀՄ իշխանություններ-ի կողմից Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման հույսերը: Կենտրոնի՝ հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակման նկատմամբ հանցավոր թողտվությունը, Ադրբեջանում եւ այլ վայրերում հայազգի քաղաքացիների կյանքի անվտանգության եւ մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ դրսեւորած անտարբերությունը, զանգվածային տեղեկատվության միջոցներով կողմնապահ քարոզչությունը եւ փաստերի համակարգված ու նպատակադիր խեղաթյուրումը ոչ միայն Շարժման

մասնակիցներին, այլեւ հասարակության ավելի ու ավելի լայն շերտերի էր բերում այն համոզման, որ օրակարգում ծառացած բոլոր խնդիրների լուծման միակ ճանապարհը անկախ պետականության հաստատումն է, ինչը եւ Շարժման Ծրագրում դրված առանցքային գաղափարից աստիճանաբար վերածվեց առաջնային խնդրի: Խորհրդային Միությունում ծավալված ընդհանուր քաղաքական գործընթացներն ավելի էին ընդգծում «Վերակառուցման» անվան տակ Կենտրոնի իրականացրած կոսմետիկ փոփոխությունների սնանկությունը, կայսրությունն ու կոմունիստական մենատիրությունը պահելու դրանց իրական նպատակը: Մյուս հանրապետություններում եւս ամբողջատիրության դեմ պայքարում ժողովրդավարական շարժումներն ավելի ու ավելի հաճախ էին առաջ քաշում հանրապետությունների ինքնիշխանության, ընդհուպ լիակատար քաղաքական անկախության գաղափարը՝ որպես առաջնային օրակարգային խնդիր:

5. Անկախության խնդիրը որպես քաղաքական օրակարգի առանցքային եւ առաջնահերթ հարց ձեւակերպած ժողովրդավարական շարժումների մեջ պայքարի մեթոդաբանությամբ Հայկականը շարժումը շարունակում էր պահպանել իր ցայտուն արտահայտված յուրահատկությունը: Մերձբալթյան երկրների ժողովրդավարական շարժումները հիմնական նպատակի՝ անկախության ձեռքբերման ճանապարհը տեսնում էին որոշակի պատմա-իրավական խնդիրների լուծման մեջ: Այդ պայքարը որքան էլ անհանգստացնում էր Մոսկվային ու հանդիպում նրա կոշտ դիմադրությանը, սակայն դա, ըստ էության, չէր հարվածում խորհրդային համակարգի քաղաքական հիմքերին: Այդ հիմքերին անմիջականորեն չէր սպառնում նաեւ այն հանրապետությունների պայքարը, որոնք փորձում էին անկախության խնդիրը բարձրացնել մեկուսի: Հայկական շարժումը անկախության խնդիրը խարսխել էր լայն, ընդհանուր արմատական ժողովրդավարական վերափոխումների վրա եւ ընտրել պայքարի անխոցելի սահմանադրական ուղին: Նրա ամեն մի հաջողություն ցնցում էր համակարգի քաղաքական հիմքերը, իշխանության ամեն մի նահանջ մի նոր ճեղք էր առաջացնում համակարգում, եւ դրանով իսկ հարյուրապատիկ ավելի վտանգավոր էր:

6. Անկախության ուղեգիծ որդեգրած հանրապետություններում, մասնավորապես՝ Մերձբալթյան հանրապետություններում, Մոսկվայի նախաձեռնությամբ էթնիկական հիմքի վրա ստեղծվեցին, այսպես կոչված՝ «ինտերֆրոնտներ», որոնց պայքարը հենվում էր խորհրդային, կոմունիստական գաղափարախոսության վրա: Էթնիկապես միատարր Հայաստանում, «ինտերֆրոնտի» համար սոցիալական նման ռեսուրս դարձան իշխանական

պաշտոնեությունը, նոմենկլատուրային մտավորականությունը եւ նման փոփոխություններ չընդունող քաղքենիական խավը: Հայկական «ինտերֆրոնտի» բաղադրիչները դարձան նաեւ 1989թ. ամռանից Հայաստանում արագ բազմացող այլազան «կազմակերպությունները», Սփյուռքում՝ ավանդական կուսակցությունները: Որպես «հայկական ինտերֆրոնտի» բաղադրիչներին միավորող ընդհանրական գաղափարախոսական հիմք՝ ընտրվել էր հայդատականությունը՝ անկախության ուղեգծին հակադրելով պատմական իրավունքների, հողային պահանջատիրության, «պանթուրքիզմի վտանգի», անվերապահ հակաթուրքականության, երրորդ ուժի (իմա՛ ԽՍՀՄ-ին) ապավինելու անհրաժեշտության, որպես անկախ պետություն գոյատեւելու անհնարինության եւ ավանդաբար հայ հասարակականքաղաքական մտքի մաս կազմող պարզունակ այլ պատկերացումներ ու գաղափարներ:

7. Շարժման գաղափարական ընդդիմությունը պահանջում էր Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտել ու հետապնդել միայն որպես Հայ դատի, պատմական իրավունքների եւ հողային պահանջատիրության բաղկացուցիչ եւ մեղադրում էր Շարժմանը այդպես չվարվելու համար: Ունենալով հանդերձ սեփական շահերն ու նպատակները՝ հայդատականությունը սրանով, ակամա, օբյեկտիվորեն մեծ օժանդակություն էր մատուցում Մոսկվային եւ Ադրբեջանին, քանզի Լեռնային Ղարաբաղի խնդրի մերժման վերջիններիս փաստարկները, քարոզչությունը եւ ճնշամիջոցները առաջին իսկ օրից նույնպես հենվում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի՝ հենց որպես տարածքային պահանջ ներկայացնելու մեղադրանքի վրա: Լեռնային Ղարաբաղի խնդիրը, Հայոց համազգային շարժման ջանքերով, համապարփակ փաստարկման հիմքով եւս մեկ անգամ բյուրեղացվեց որպես ինքնորոշման իրավունքի հարց՝ այս անգամ ՀԽՍՀ 1989թ. սեպտեմբերյան նստաշրջանի որոշումներով:

8. Քանի դեռ մինչեւ վերջ չէին սպառվել խորհրդային համակարգի պայմաններում Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման միջոցները, ՀՀՇ-ն շուրջ մեկ տարի դիտվում էր որպես համահայկական կառույց: Երբ վերջնականապես հստակվեց, որ այդ լուծումը հնարավոր չէ ԽՍՀՄ պայմաններում, փոխվեց նաեւ մարտավարությունը: Շարժման առաջին համագումարի նախապատրաստման շրջանում Ծրագիրը վերամշակվեց՝ սահմանելով քաղաքական օրակարգի նոր առաջնահերթություններ, մասնավորապես՝ անկախության խնդիրը Ծրագրի ընդհանուր գաղափարական հիմքից վերածվեց առաջնային քաղաքական խնդրի: Շարժումը գերագույն իշխանության սահմանադրական մարմինը համաժողովրդական ճնշմամբ

աշխատեցնելու սկզբնական մակարդակից, անհաղթահարելի խոչընդոտների հանդիման, պետք է անցում կատարեր հաջորդ՝ ամբողջական իշխանության հավակնելու մակարդակի: Որակական նոր՝ իշխանության հավակնողի կարգավիճակում ՀՀՇ-ն հետեւողականորեն խույս տվեց այլ երկրներում էթնիկական հիմքի վրա կազմակերպական կառույցներ ունենալու գայթակղությունից՝ հետեւելով այն տարրական քաղաքական կանոնին, ըստ որի՝ քաղաքական կազմակերպության համար անընդունելի է օտարերկրյա քաղաքացի անդամներ կամ այլ երկրում կառույցներ ունենալը:

9. ՀՀՇ հիմնադիր համագումարը կարողացավ հաղթահարել ամեն կարգի ծայրահեղություններն ու որոգայթները եւ որպես հիմնական ծրագրային դրույթ՝ անվերապահորեն հաստատեց պետական անկախության ձեռքբերման խնդիրը: Սա, մի կողմից, նպաստեց քաղաքական դաշտում ջրբաժանների հստակեցմանը, մյուս կողմից՝ դարձավ ծրագրային խնդիրների իրականացման համար պայքարն ավելի վճռական փուլ տեղափոխելու մեկնարկ: Հետագա շրջանում, ընդհուպ մինչեւ ընտրությունների ճանապարհով իշխանության ստանձնումը, Շարժումը համաժողովրդական ճնշման իրականացմամբ կարողացավ բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններ անցկացնել գործող Գերագույն խորհրդում:

10. Հանրապետությանը հուզող խնդիրները եւ, առաջին հերթին, Ղարաբաղի հարցը կենտրոնական իշխանության բարձրագույն մարմիններում հետապնդելու կոչված, Հայկական ԽՍՀ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները, գործելով Հայկոմկուսի անմիջական հրահանգներով, անկարող եղան որեւէ արդյունքի հասնել: Հանրապետության իշխանությունն, իր հերթին, բացի Շարժման կողմից պարտադրված մի քանի կարեւոր որոշումներից, ինքնուրույն երբեւէ, որեւէ հարցում դուրս չեկավ Մոսկվայի՝ իրենց համար գծված շրջանակներից: Այս ամենի տրամաբանական արդյունքն էր Ղարաբաղի հարցի քննարկման ձգձգումները ամբողջ կես տարի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոյեմբերի 28-ի որոշումը: Այդ որոշմամբ եւ դրան հաջորդած դեկտեմբերյան իրադարձություններով, մի կողմից՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների հայկական կորպուսը կնքեց իր անփառունակ քաղաքական մահկանացուն, մյուս կողմից՝ հանրապետության իշխանություններն ապացուցեցին, որ ազգային ամենակենսական շահերն անգամ պատրաստ են ստորադասել խորհրդային կոմունիստական գաղափարախոսությանը, կենտրոնական իշխանության շահերին:

11. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումով վերջնականապես հրաժարվում էր ճանաչել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման

իրավունքը, ավելին՝ ի չիք էր դարձնում շուրջ երկու տարվա համաժողովրդական պայքարի միջոցով ձեռք բերված հիմնական արդյունքները, ինչի հետեւանքը, վերջին հաշվով, կարող էր լինել մարզի դատարկվելը հայ բնակչությունից: Մոսկվայի այս վերջնական քաղաքական վճիռը, որ բխում էր համակարգի էությունից, պայմանավորված էր եւս երկու հանգամանքով. **ա)** Ադրբեջանի կողմից իրականացվող միասնական («իշխանություն եւ «ժողճակատ») ճնշմամբ՝ ընդհուպ ԽՄՀՄ-ից դուրս գալու սպառնալիքով (Ադրբեջանի սուվերենության մասին օրենք), **բ)** Հայկական կողմում հայդատական գաղափարախոսության հիման վրա ձեւավորված յուրատեսակ «ինտերֆրոնտը» որպես դաշնակից եւ վստահելի հենարան ունենալով:

12. Հայոց համազգային շարժման համառ ջանքերի շնորհիվ նոյեմբերի 30-ին հրավիրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ արտահերթ նստաշրջան, որը դեկտեմբերի 1-ին ընդունեց Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման որոշում: Դրանով կանխվեցին նոյեմբերի 28-ի որոշումից հետո հնարավոր ծայրահեղ զարգացումները, Շարժումը եւ պայքարը հնարավոր եղավ պահել կառավարելի եւ սահմանադրական հունի մեջ՝ հաջողությամբ դիմակայելով Կենտրոնի եւ Ադրբեջանի կողմից նախաձեռնվող բազմաթիվ ճնշումներին եւ սադրանքներին:

13. Վերամիավորման որոշման կենսագործման լավագույն պայմանների ստեղծման, «ադրբեջանական գործոնի» դեմ «հայկական գործոնի» հզորացման համար ՀՀՇ վարչությունը արտահերթ նստաշրջանի քննարկմանը ներկայացրեց նաեւ «Արմատական ժողովրդավարական վերափոխումների մասին հռչակագիր» կոչվող փաստաթուղթը: Հանրապետության կոմունիստական իշխանությունն իր դաշնակից նոմենկլատուրային մտավորականության եւ այլ ուժերի օգնությամբ ու մեծագույն ճիգերի գործադրմամբ առայժմ կարողացավ խուսափել այդ փաստաթուղթն ընդունելուց, անգամ դրա քննարկմանն ընթացք տալուց: Սակայն դա հայկական «ինտերֆրոնտի» ժամանակավոր հաղթանակն էր. հաջորդ ամիսներին՝ մեկ առ մեկ, իսկ 1990թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրով՝ ամբողջությամբ, ժողովրդավարական այդ վերափոխումներն օրենքի ուժ ստացան եւ իրականացվեցին:

14. Ցուցաբերելով քաղաքական հստակ հետեւողականություն՝ Շարժումը կարողացավ անընդհատ հզորացնել «հայկական գործոնը», ձեռք բերել ու ամրապնդել իր նպատակների ժողովրդավարական բարձր վարկանիշը: Որպես այդպիսին՝ այն շարունակեց մնալ ինչպես ԽՍՀՄ ժողովրդավարական շարժումների եւ ուժերի, այնպես էլ միջազգային հասարակական կարծիքի ակտիվ պաշտպանության տակ՝ դրանով իսկ պահպանելով պայքարի

շարունակման ու դրված խնդիրների լուծման ամենաարդյունավետ ուղին եւ ռեսուրսը: Քաղաքական գործընթացների, կողմերի եւ քաղաքական ուժերի դիրքորոշումների վերջնական հստակեցումն, իր հերթին, նպաստեց նաեւ հասարակական պատկերացումների վերջնական բյուրեղացմանը՝ ցույց տալով, որ օրակարգում եղած եւ առաջացող հարցերի ճանապարհին անցնում է Հայոց համազգային շարժման ծրագրում ամրագրված խնդիրների իրագործման միջով, ինչը, սակայն, արդեն անհնար էր առանց իշխանական լծակների: **Հայաստանի Գերագույն խորհրդի՝ մայիսին սպասվող ընտրություններում իշխանության համար պայքարելը, իշխանափոխության հասնելը դարձավ այլընտրանք չունեցող առաջնային խնդիր**:

15. Ղարաբաղյան շարժումը, վերաճելով հզոր ու համընդգրկուն ժողովրդավարական պայքարի, տեւական մի շրջան միայնակ, ապա՝ որպես առաջատար, ճանապարհ հարթեց ինչպես խորհրդային հանրապետություններում, այնպես էլ Արեւելյան Եւրոպայի երկրների ժողովրդավարական շարժումների համար: Հայկական ժողովրդավարական Շարժումն իր փորձով տվեց խորհրդային համակարգի դեմ պայքարի հիմնական մեթոդները, տեխնոլոգիան, այն է՝ իշխանության սահմանադրական մարմինները՝ սովետները դուրս բերել կուսակցական ապարատի ենթակայությունից ու անմիջական վերահսկողությունից, նրանց օժտել իրական իշխանությամբ, առնել համաժողովրդական վերահսկողության տակ եւ դրանց միջոցով քայլեր անել: Կուսակցապետական համակարգը սկսեց փլուզվել, երբ իշխանության սահմանադրական մարմինները ստացան իրենց՝ գրված, սակայն երբեւէ չունեցած իշխանությունը, երբ իրականություն դարձավ խորհրդային իշխանության ստեղծման ժամանակ հռչակած, բայց երբեք չաշխատած՝ «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը: Հայկական ժողովրդավարական շարժումը, որպես յուրատեսակ փորձաքար, իր վրա բացահայտելով Խորհրդային կենտրոնի հնարավոր հակազդեցությունների ամբողջ սպեկտրը եւ փարատելով ավանդական մտահոգությունները՝ մեծապես նպաստեց Արեւելյան Եւրոպայի երկրներում ժողովրդավարական շարժումների առաջացմանն ու ակտիվացմանը: 1989թ. ընթացքում Արեւելյան Եւրոպայի երկրներում կոմունիստական իշխանություններին փոխարինեցին ժողովրդավարական ուժերը, որոնք եւ իրենց երկրները դուրս բերեցին Խորհրդային Միության քաղաքական ու տնտեսական վերահսկողությունից:

1988թ. իր սկզբնավորումից ի վեր Հայկական ժողովրդավարական շարժումը դարձավ եւ շարունակում էր մնալ որպես համաշխարհային պատմության վրա ազդող քաղաքական գործոն:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ[1]

(նոյեմբեր 1989 թվական)

«Ղարաբաղ» կոմիտե[2]

Արարքցյան Բաբկեն, Գալստյան Համբարձում, Գեորգյան Սամվել, Հակոբյան Ալեքսան, Ղազարյան Ռաֆայել, Ղազարյան Սամսոն, Մանուկյան Վազգեն, Մանուչարյան Աշոտ, Սիրադեղյան Վանո, Վարդանյան Դավիթ, Տեր-Պետրոսյան Լեւոն:

ՀՀՇ հանրապետական խորհուրդ[3]

ՀՀՇ վարչություն. Աբգարյան Երջանիկ, Այվազյան Վիտյա, Անանիկյան Լեւոն, Արարքցյան Բաբկեն, Բագրատյան Հրանտ, Բաղդասարյան Ալբերտ, Բլեյան Աշոտ, Գալստյան Համբարձում, Գեորգյան Սամվել, Ջուռնաչյան Վարդան, Իշխանյան Ավետիք, Իշխանյան Ռաֆայել, Լազարյան Տեր-Հուսիկ, Հակոբյան Ալեքսան, Հակոբյան Սմբատ, Հովհաննիսյան Հենրիկ, Հովհաննիսյան Արամ, Ղազարյան Ռաֆայել, Ղազարյան Սամսոն, Մայիլյան Արամ, Մանուկյան Վազգեն, Մանուչարյան Աշոտ, Մովսիսյան Յուրի, Մորիկյան Այդին, Պապայան Ռաֆայել, Պետրոսյան Շահեն, Սաղոյան Արշակ, Սարգսյան Վազգեն, Սարդարյան Կտրիճ, Սիմոնյան Հրաչիկ,

---

1 *Ցանկերը ըստ Հայ ազգային կոնգրեսի (նախկին ՀՀՇ) ընթացիկ արխիվի փաստաթղթերի (թղթապանակ՝ «ՀՀՇ 1-ին համագումար»): Ցավոք, ոչ բոլոր փաստաթղթերն են պահպանվել: Մի քանի դեպքում հարցումներով եւ այլ հիմքերով արված վերականգնումները նշված են աստղանիշով:*

2 *«Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն» ՀՀՇ հիմնադիր համագումարից հետո էլ 1990 թվականին որպես մարմին շարունակում էր գործել:*

3 *ՀՀՇ Հանրապետական խորհուրդը կազմված էր համագումարում ընտրված Վարչությունից եւ շրջանային ու ճյուղային կառույցների նախագահներից:*

Սիրադեղյան Վանո, Ստամբոլցյան Խաչիկ, Վարդանյան Դավիթ, Վարդանյան Կամո, Տեր-Պետրոսյան Լեւոն, Քոչարյան Ռոբերտ:

Տեղական խորհուրդների նախագահներ (թերի). Աթոյան Մհեր (Սպիտակ), Ասրյան Ասատուր (Չարենցավան), Ավետիսյան Ռուբեն (Արարատ), Արիստակեսյան Գարեգին (Երեւանի Մյասնիկյանի շրջան), Արշակյան Աղասի («Մարդու իրավունքների պաշտպանության» միություն), Բաղդասարյան Արմեն (Կալինինո), Բաղդասարյան Մասիս (Սիսան), Բեգլարյան Սամվել (Նոյեմբերյան), Բուտաեւ Ալեքսանդր (Արտաշատ), Գեւորգյան Սամվել (Սեւան), Գրիգորյան Յուրիկ (Արթիկ), Գրիգորյան Սեյրան («Ազգային կառույց»), Գրիգորյան Սուրիկ (Ղափան), Եղոյան Ռուբիկ (Հոկտեմբերյան), Էլյա (Կամո), Թամազյան Սարգիս (Հրազդան), Թովմասյան Ազատ (Երեւանի Սպանդարյան շրջան), Իշխանյան Ավետիք («Մաշտոց» միավորում), Լարիսա («Արցախ» միություն), Խաչատրյան Դերենիկ (Վարդենիս), Խաչատրյան Հարություն (Ամասիա), Կարախանյան Սմբատ (Աբովյանի «Գոյատեւում» միություն), Կիրակոսյան Արմեն (Երեւանի Մաշտոցի շրջան), Կիրակոսյան Վարուժան (Մասիս), Հարոյան Վաչագան (Երեւանի Խորհրդային շրջան), Հարությունյան Դերենիկ (Մարտունի), Հարությունյան Դոնարա «ՀՀՇ կանանց միություն»), Հարությունյան Յուրա (Երեւանի Լենինյան շրջան), Հարությունյան Վլադիմիր (Գյումրի), Հովհաննիսյան Ալբերտ («Կոոպերատիվների միություն»), Հովհաննիսյան Մանյա («Վետերանների միություն»), Ղազարյան Վոլոդյա (Ղուկասյան), Ղազարյան Ֆեդիկ (Ազիզբեկով), Ղամբարյան Սարգիս (Երեւանի 26 կոմիսարների շրջան), Ղանադյան Արմեն (Կարմիր), Ղարագեբակյան Ստեփան («Սահմանադրական խմբերի միություն), Մանուկյան Վանիկ (Կիրովական), Մատինյան Հովհաննես (Կիրովական), Մելիքյան Վալտեր (Ուտիք), Մկրտչյան Արմեն (Ջերմուկ), Մնացականյան Կարապետ (Նաիրի), Նահատակյան Համլետ, (Էջմիածին), Ներսիսյան Գագիկ («Փախստականների տեղավորման եւ օգնության խումբ»), Շահբազյան Քաջիկ (Բաղրամյան), Շառոյան Լենա («Հայ կանանց դաշինք»), Շիրխանյան Վահան (Աշտարակ), Չախոյան Հայկ (Երեւանի Օրջոնիկիձեի շրջան), Պառավյան Հովիկ (Ստեփանավան), Պողոսյան Մերուժան (Ապարան), Սարգսյան Համլետ (Երեւանի Շահումյանի շրջան), Սարգսան Վահան (Աբովյան), Սաֆարյան Խաչիկ (Թալին),

Սիրունյան Սուրիկ («Հայ զինակոչիկների պաշտպանության խումբ), Ստեփանյան Արմեն (Դիլիջան), Վարազդատյան Վարազդատ (Գորիս), Վարդանյան Վահան (Եղեգնաձոր), Վերմիշյան Վիլիկ (Գուգարք), Քոչարյան Արտիկ (Թումանյան):

ՀՀՇ տարածքային կառույցների խորհուրդներ[4] եւ 1-ին համագումարի պատվիրակներ

Աբովյանի շրջան, պատվիրակներ. Սարգսյան Վահան, Սարգսյան Ջուլինե, Տորոզյան Էմմա, Գասպարովա Մարիա, Սերոբյան Մաքսիմ, Ալեքսանյան Տարոն, Գեւորգյան Գագիկ: **Գառնիի ենթարշջանից.** Աղաջանյան Էդիկ Թեմուրի, Թովմասյան Դավիթ Թեւոսի:

Ազիզբեկովի շրջան, պատվիրակներ. Ղազարյան Ֆերդինանտ Կարապետի, Հակոբյան Էդիկ Գուրգենի, Գեւորգյան Վարդիթեր, Խաչատրյան Օնիկ Արտավազդի, Հովհաննիսյան Եփրեմ Արսենի, Ավետիսյան Համլետ Գրիգորի, Ղազարյան Ֆեդիկ Կարապետի:

Ալավերդի քաղաք, պատվիրակներ. Ղազինյան Ռաֆիկ, Նալբանդյան Սերգո, Բեկթաշյան Սամվել, Ամալյան Հովհաննես, Աթանեսյան Սեյրան, Մաշինյան Լիլիա, Ալավերդյան Սպարտակ:

Ամասիայի շրջան, ՀՀՇ խորհուրդ. Մելիքյան Ջոնիկ Շահենի, Մարկոսյան Ջոհրապ Հովհաննեսի,Ղազարյան Նինա Վալիկի, Առաքելյան Հարություն Հովհաննեսի, Մկոյան Գագիկ Սերգեյի, Թադեւոսյան Արթուր Ջալիկի, Խաչատրյան Հարություն Մկրտչի, Արշակյան Մյասնիկ Վարազդատի, Բաղդիշյան Երջանիկ Վարազդատի, Կարապետյան Կարապետ Թադեւոսի, Կարապետյան Մարսել Խաչիկի, Առաքելյան Սուրիկ Գեւորգի,Վանոյան Գագիկ Վազգենի, Հարությունյան Հարություն Հովսեփի, Մանուկյան Վալյա Խանաեի, Հարությունյան Աշոտ Կարապետի, Ասրյան Վլադիմիր

---

[4] *ՀՀՇ տարածքային կառույցների խորհուրդները, որպես կանոն, կազմվում էին տվյալ տարածքում գործող սկզբնական կազմակերպությունների ղեկավարների ընդգրկումով:*

Վարդանի: **Պատվիրակներ.** Մելիքյան Ջոնիկ Շահենի, Մարկոսյան Ջոհրապ Հովհաննեսի, Խաչատրյան Հարություն Մկրտչի, Կարապետյան Մարսել Թադեւոսի, Մանուկյան Վալյա Խանաեի, Առաքելյան Հարություն Հովհաննեսի, Արշակյան Միյասնիկ Վարազդատի, Գասպարյան Լեւոն Վարդանի:

Անիի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ուռության Հարություն Վազգենի, Հակոբյան Դավիթ Հովհաննեսի, Մանուկյան Մկրտիչ Հմայակի, Առաքելյան Սամվել Միսակի, Ավետիսյան Ալիկ Օնիկի, Արիստակեսյան Մելսիկ Եղնիկի, Հակոբյան Վարդգես Արենի:

Աշտարակի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Գրիգորյան Սիմոն Դրաստամատի, Թովմասյան Սարգիս Արիստակեսի, Սարգսյան Ռազմիկ Հովհաննեսի, Գալստյան Կարապետ Գալուստի, Ավագյան Դավիթ Վազգենի, Բոյախչյան Թորոս Գեւորգի, Մխիթարյան Անդրանիկ Սուրենի, Շիրխանյան Վահան Գրիգորի, Շահբազյան Յուրա Լեւոնի: **Պատվիրակներ.** Գրիգորյան Սիմոն Դրաստամատի, Թովմասյան Սարգիս Արիստակեսի, Սարգսյան Ռազմիկ Հովհաննեսի, Գալստյան Կարապետ Գալուստի, Ավագյան Դավիթ Վազգենի, Բոյախչյան Թորոս Գեւորգի, Մխիթարյան Անդրանիկ Սուրենի, Շիրխանյան Վահան Գրիգորի:

Ապարանի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Այվազյան Սուրեն Արիստակեսի, Սահակյան Հենրիկ Հրաչի, Երանոսյան Ռուբեն Լյուդվիգի, Ավետիսյան Ալեքսան Արտաշի, Մալխասյան Մյասնիկ Ժորայի, Գեւորգյան Գեւորգ Նուրիջանի, Գրիգորյան Հարություն Պողոսի, Պողոսյան Մերուժան Գարեգինի: **Պատվիրակներ.** Այվազյան Սուրեն Արիստակեսի, Սահակյան Հենրիկ Հրաչի, Երանոսյան Ռուբեն Լյուդվիգի, Ավետիսյան Ալեքսան Արտաշի, Մալխասյան Մյասնիկ Ժորայի, Գեւորգյան Գեւորգ Նուրիջանի, Գրիգորյան Հարություն Պողոսի:

Արարատի շրջան, պատվիրակներ. Ավետիսյան Ռուբեն, Սարգսյան Արմեն, Ջադոյան Դավիթ, Ղազարյան Արտուշ, Դավթյան Բորիս, Ադամյան Սուրիկ, Ջուռնաչյան Պետրոս, Տեր-Մկրտչյան Կամո, Ղազարյան Վազգեն, Հովհաննիսյան Ավետիք:

Արթիկի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Հարոյան Վահան Պետրոսի, Տեր-Կարապետյան Գեւորգ Կարապետի, Նազարեթյան Ժորա Նորիկի, Իգիթյան Համլետ Լեւիկի, Շմավոնյան Լաուրա Լեոնիկի, Սարգսյան Վաղարշակ, Ներսիսյան Ներսես Միհրանի, Աբրահամյան Տարիել Ջարզանդի, Գեւորգյան Մկրտիչ, Կուրղինյան Պարգեւ Աբրահամի, Գրիգորյան Յուրա Աշոտի, Դավթյան Հովհաննես Սայադի, Գրիգորյան Վարդան Վարազդատի, Վարդանյան Մուշեղ Վազգենի, Հայրապետյան Գարեգին, Կարախանյան Գոհար Ռուբիկի, Աբրահամյան Կառլեն Հակոբի, Գալստյան Յուրիկ Սուրենի, Վարդանյան Ժյուլվեռն Անուշավանի, Մինասյան Արմեն Ռաֆիկի, Երանոսյան Ռուբեն Արարատի, Զախոյան Ռոբերտ Լեւոնի, Տոնականյան Ռազմիկ, Գեւորգյան Արսեն, Ասլանյան Ջիվան Մերուժանի, Ռեհանյան Աշոտ Կորյունի, Բաղեյան Հարություն Ալբերտի, Մանուկյան Արամ Սուրենի, Մկրտչյան Վարդան Վազգենի, Հովհաննիսյան Մխիթար Մնացականի, Մակարյան Աշոտ Հմայակի, Մկրտչյան Գեւորգ Լեգրանի, Մկրտչյան Սամվել Լեոնիկի, Բաբոյան Սերյոժա Վաղինակի, Վիրաբյան Աշոտ: **Պատվիրակներ.** Կուրղինյան Պարգեւ Աբրահամի, Դավթյան Հովհաննես Սայրադի, Հարոյան Վահան Պետրոսի, Բաբոյան Սերյոժա Վաղինակի, Գրիգորյան Յուրա Աշոտի, Հովհաննիսյան Մխիթար Մնացականի, Գրիգորյան Վարդան Վարազդատի, Աբրահամյան Կառլեն Հակոբի, Իգիթյան Համլատ Լեւիկի, Բաղեյան Հարություն Ալբերտի:

Արտաշատի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ասատրյան Համբարձում, Բուտաեւ Ալեքսանդր, Գասպարյան Վիկտոր, Գրիգորյան Սեյրան, Թադեւոսյան Թադեւոս, Թադեւոսյան Խաչիկ, Թարվերդյան Հերոս, Կտրակյան Հայկ, Հախվերդյան Սոկրատ, Հակոբյան Վահան, Մարգարյան Մնացական, Հարությունյան Նինա, Մելիքյան Գրիգոր, Միերյան Արշալույս, Նազարյան Գագիկ, Պետրոսյան Յուրա, Սարգսյան Սեդրակ, Սաղաթելյան Լաերտ, Վալանյան Մերուժան, Վարդանյան Էդվարդ: **Պատվիրակներ.** Բուտեւ Ալեքսանդր, Հախվերդյան Սոկրատ, Նազարյան Գագիկ, Թարվերդյան Հերոս, Դավթյան Ստեփան, Վալանյան Մերուժան, Գրիգորյան Ռաիսա:

Բաղրամյանի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Գեւորգյան Արտաշ, Էվոյան Արամ, Դավթյան Հայկուշ, Մուրադյան Մուրադ, Սահակյան Խորեն, Հարությունյան Լեոնիկ, Պետրոսյան Սուրիկ, Գասպարյան Անուշավան, Աթոյան

Գագիկ, Սիցյան Սերժիկ, Խաչատրյան Պերճ, Թովմասյան Մամիկոն, Շահինյան Սերգեյ, Գրիգորյան Սերգեյ, Ալիյան Մերալի, Ենգիբարյան Պետիկ, Պողոսյան Համբարձում, Կիրակոսյան Մուրադ, Սարգսյան Գալուստ, Շահբազյան Քաջիկ, Սարգսյան Հունան: **Պատվիրակներ.** Շահբազյան Քաջիկ, Սարգսյան Գալուստ, Թովմասյան Մամիկոն, Արոյան Ռազմիկ, Մուրադյան Մուրադ, Սարգսյան Հունան, Կիրակոսյան Մուրադ:

Գորիսի շրջան, պատվիրակներ. Սուքիասյան Սերգեյ, Մկրտչյան Համլետ, Վարդազարյան Վարազդատ, Սոնյան Հրանտ, Առաքելյան Սեյրան, Հարությունյան Սամվել, Հայրապետյան Խաչիկ:

Գուգարքի շրջան, ՀՀԾ խորհուրդ*. Վերմիշյան Վիլիկ, Սահակյան Վանիկ, Ղարաքեշիշյան Կորյուն, Քոսյան Հրաչիկ, Պողոսյան Նորիկ, Խաչիկյան Մայիս, Ղարաքեշիշյան Մեխակ: **Պատվիրակներ.** Ղարաքեշիշյան Կորյուն Կառլենի, Ղալթախչյան Սամվել Երվանդի, Վերմիշյան Վիլիկ Լիպարիտի, Գրիգորյան Լեւոն Վազգենի, Գրիգորյան Էդվարդ Վազգենի, Գյուլզադյան Նելլի Սաշայի, Նուխիկյան Հայկ Վաչագանի:

Դիլիջան, ՀՀԾ քաղաքային խորհուրդ. Անանյան Սուրիկ, Աթանեսյան Ռուդիկ, Ավանյան Յուրիկ, Ավետիսյան Էդիկ, Առաքելյան Սուսաննա, Ավագյան Սուրիա, Գրիգորյան Սրբուհի, Գուլինյան Միշա, Գեւորգյան Լենա, Դավթյան Աշոտ, Դերձյան Լեւոն, Վերդյան Սուրեն, Երիցյան Նորիկ, Ջավարյան Լյովա, Թամամյան Համլետ, Թամամյան Գայանե, Խանամիրյան Էդուարդ, Խաչատրյան Տոլիկ, Հակոբյան Մարինե, Հովհաննիսյան Ռաֆիկ, Հովսեփյան Արծրուն, Հովսեփյան Բաբկեն, Ղալումյան Սերգեյ, Ճաղարյան Ժորա, Մարտիրոսյան Արսեն, Մաիլյան Մարգո, Մադաթյան Ժորա, Պետրոսյան Էդիկ, Սարգսյան Օնիկ, Սահակյան Տիգրան, Սեդրակյան Ազատ, Ստեփանյան Արմեն, Ուլիխանյան Գոհար, Ֆրանգուլյան Վիլեն, Ղուկասյան Գեւորգ: **Պատվիրակներ.** Դերձյան Լեւոն Լյուդվիգի, Հովհաննիսյան Ռաֆիկ Սիրեկանի, Ճաղարյան Ժորա Մովսեսի, Սեղբեյան Ազատ Թեւանի, Ստեփանյան Արմեն Ռոբերտի, Գուլինյան Միշա Լեւոնի, Խանամիրյան Էդուարդ Գուրգենի, Մադաթյան Ժորա Համազասպի, Պետրոսյան Էդիկ Վոլոդի:

Եղեգնաձորի շրջան, պատվիրակներ. Վարդանյան Վահան, Մարգարյան Դավիթ, Կարապետյան Նորիկ, Ավետիսյան Ավետ, Ավագյան Ալեքսան, Ղազարյան Արմեն, Աբրահամյան Աբրահամ:

Երեւան, Լենինյան շրջան, ՀՀԾ խորհուրդ*. Մինասյան Ժորա, Վարդանյան Յուրա, Հովհաննիսյան Վոլոդիա, Հարությունյան Յուրա, Չալյան Լորիկ, Մնացականյան Սուրիկ, Մարգարյան Ֆելիքս, Անդրեասյան Բագրատ, Գրիգորյան Աշոտ, Միրզոյան Հրաչիկ, Մանուկյան Մարտին, Սարգսյան Արա, Նավասարդյան Վազգեն, Ավետիսյան Ավետիս, Ջուլհակյան Ռոզա, Մարտիրոսյան Ֆրիդա, Հակոբյան Արփիկ, Ռուբինյան Կարապետ, Կոստանյան Գագիկ, Գեւորգյան Գրիգոր, Քացախյան Պետրոս, Խուրշուդյան Էդմոն, Գեւորգյան Կարինե, Խաչատրյան Խորեն, Խլղաթյան Սավետ, Սարգսյան Սերժիկ, Մկրտումյան Սեյրան, Այվազյան Բորիս, Հովհաննիսյան Ջոհրակ, Եղիազարյան Արծրուն, Ալեքսանյան Հարություն, Ներսիսյան Գագիկ, Ավանեսյան Սեյրան: **Պատվիրակներ.** Մինասյան Ժորա, Գեւորգյան Գրիգոր, Մխոյան Ղազարոս, Մարտիրոսյան Ժորա, Սարգսյան Մեդեա, Հովհաննիսյան Աշոտ, Մովսիսյան Ստեփան, Օհանյան Միշա, Դավթյան Խաչիկ, Հարությունյան Յուրա, Ավետիսյան Ռազմիկ, Վարդանյան Յուրիկ, Քելեշյան Ռոլանդ, Սադյան Իվան, Մեսրոպյան Էդիկ, Հախվերդյան Սոնա, Չալիկյան Լորիկ, Մնացականյան Սուրիկ, Ադամյան Իրա, Բադամյան Մարտին, Ղազարյան Գայանե, Մարգարյան Ֆելիքս, Անդրեասյան Բագրատ, Կարապետյան Կարեն, Վարդապետյան Սաշա, Գրիգորյան Սամվել, Շատվորյան Գրիգոր, Գրիգորյան Աշոտ, Միրզոյան Հրաչիկ, Մանուկյան Մարտին, Սարգսյան Արա, Նավասարդյան Վազգեն, Մարտիրոսյան Ֆրիդա, Ջուլհակյան Ռոզա, Ներսիսյան Գագիկ, Ավետիսյան Ավետիս, Հակոբյան Արփիկ, Հովհաննիսյան Վոլոդյա, Մուդուրյան Վարդան, Մանուկյան Ռոբերտ, Ռուբինյան Կարապետ, Հարությունյան Ռոբերտ, Հովհաննիսյան Անահիտ, Կոստանյան Գագիկ, Պետրոսյան Ժորա, Նարինյան Արամ, Ջաքիյան Հենրիկ, Քացախյան Պետրոս, Գեւորգյան Կարինե:

Երեւան, Խորհրդային շրջան, պատվիրակներ. Մարկոսյան Վարդան, Ղարաբեկյան Հակոբ, Ջաքարյան Ժորա, Թադեւոսյան Սուսաննա, Մարկոսյան Հենրիկ, Ասատրյան Երջանիկ, Պրուտյան Միքայել, Հարոյան Վաչագան, Վերմիշյան Ռաֆայել, Հովսեփյան Արտաշես, Ադիլյան Պապ,

Ղազարյան Ֆելիքս, Հովսեփյան Ռոբերտ, Ջանփոլադյան Հայկ, Հովասափյան Սամվել, Սողոյան Մարատ, Տեր-Ազարյան Գրիգորի, Սարգսյան Ալբերտ, Հարությունյան Էլմիրա, Հովհաննիսյան Սամվել, Անթաբլյան Օնիկ, Երանոսյան Գագիկ, Սիմոնյան Արմեն, Խաչատրյան Գեորգի, Հովակիմյան Կարեն, Ղազարյան Պավլիկ, Նազարյան Լյուդմիլա, Մելիքյան Աշոտ, Գիմիշյան Սոս, Մարտիրոսյան Յուրա, Դադաշյան Էդվարդ, Համզոյան Էդվարդ, Երզնկյան Պարույր, Մինասյան Խաչիկ, Ավետիսյան Հրաչիկ, Փաշիկյան Ալվարդ, Ասլանյան Լեոն, Եղիազարյան Լեոն, Ալեքսանյան Գոհար, Բաղդասարյան Գագիկ, Ջեյնալյան Իվան, Պետրոսյան Դավիթ, Չիլինգարյան Խաչիկ, Բաղդասարյան Սյոմա, Եղիազարյան Հրաչյա, Սրապիոնյան Վահրամ, Վարդանյան Մարտին, Օհանյան Սասուն, Սաղումյան Արա, Անտոնյան Հայկ, Փիրումով Լյովա, Կարապետյան Վարդիշաղ:

Երեւան, Մաշտոցի շրջան, ՀՀՇ խորհուրդ. Հովհաննիսյան Անդրանիկ Վահանի, Գեորգյան Պետրոս Գուրգենի, Մանուկյան Մարգարիտա Սերգեյի, Բալասանյան Գեորգ Գագիկի, Մելքոնյան Գեորգ Վարդանի, Կաղինյան Լավրենտ Ասքանազի, Մկրտչյան Հունան Ալագյազի, Ասլանյան Պապ Ցեզարի, Երոյան Ամալյա Հովակիմի, Ղուկասյան Սանասար Մակեդոնի, Կիրակոսյան Արմեն Արամի, Հովհաննիսյան Սամվել, Սարգսյան Լիդա, Մովսիսյան Արմեն, Խաչատրյան Գեորգ, Ջաքարյան Արտավազդ, Եգորյան Էդուարդ, Գրիգորյան Ստեփան, Մնացականյան Յուրա, Եղիազարյան Անատոլի, Մեհրաբյան Ղուկաս, Փիլոսյան Ռոմիկ, Գեորգյան Մեսրոպ, Ազիզբեկյան Արթուր, Խաչատրյան Արբակ, Մակարյան Աիդա, Մանուկյան Յուրիկ, Ազիզբեկյան Գրիշա: **Պատվիրակներ.** Գասպարյան Վալերի, Բաղդասարյան Ռ., Մակարյան Աիդա, Այվազյան Ռուբեն, Ղազարյան Դավիթ, Ղուկասյան Սանասար, Հովհաննիսյան Սամվել, Սարգսյան Լիդա, Մովսիսյան Արմեն, Մարտիրոսյան Ռաֆիկ, Բարսեղյան Սարգիս, Ավագյան Վիկտոր, Գյուլզադյան Սամվել, Խաչատրյան Գեորգ, Բարսեղյան Լյովա, Գասպարյան Օլեգ, Խաչատրյան Ալեքսանդր, Գրիգորյան Արսեն, Մոսոյան Հովհաննես, Սարգսյան Արմեն, Մելիքյան Սերգո, Հովհաննիսյան Ժորա, Կիրակոսյան Արմեն, Ջաքարյան Արտավազդ, Մանուկյան Յուրիկ, Եգորյան Էդուարդ, Ասատրյան Հրաչյա, Հարությունյան Սվետլանա, Շահազիզյան Սիմոն:

Երեւան, Մյասնիկյանի շրջան, պատվիրակներ. Արիստակեսյան Գարեգին, Հովհաննիսյան Հակոբ, Բուրխաջյան Սուրեն, Հարոյան Շավարշ, Օհանյան Վարդգես, Փանոսյան Արամայիս, Լոքյան Նիկոլայ, Աբովյան Միքայել, Գալստյան Համազասպ, Եսայան Աշոտ, Բոյաջյան Թելման, Ղազարյան Բագրատ, Հարությունյան Ալբերտ, Նազարյան Արմեն, Հակոբյան Վահան:

Երեւան, Շահումյանի շրջան, պատվիրակներ. Մաթեւոսյան Ռոբերտ, Գրիգորյան Կարեն, Ղահրամանյան Մարտին, Ղարաբաղցյան Իլուշ, Մկրտչյան Մարիետա, Թամազյան Սամսոն, Սոսյան Գագիկ, Հակոբյան Վահան, Կալիջանյան Գագիկ, Երանոսյան Վրեժ, Ղազարյան Ամատունի, Խաչատրյան Արմեն, Ղարաջյան Վարդան, Մանուկյան Մանուկ, Մարտիրոսյան Հայկ:

Երեւան, Սպանդարյան շրջան, ՀՀՇ խորհուրդ*. Թովմասյան Ազատ, Միքայելյան Գեղամ, Մարգարյան Էդիկ, Ջուրաբյան Արարատ, Խաչատրյան Հրաչ, Սարգսյան Ատոմ, Բաբայան Ռուբեն, Աղայան Յուրա, Այվազյան Մասիս, Մինասյան Գագիկ, Թորոսյան Ռուբեն, Հարությունյան Լեոն, Ավետիսյան Ռոբերտ, Միքայելյան Մկրտիչ, Ղազարյան Վաղինակ, Գրիգորյան Սամվել, Հովհաննիսյան Արագեղեցիկ: **Պատվիրակներ.** Ավետիքյան Լեոն, Աղասյան Յուրա, Այվազյան Մասիս, Բաբայան Ռուբեն, Վարդանյան Գարուշ, Գրիգորյան Սամվել, Ջուրաբյան Արարատ, Թանդիկյան Տանյա, Թովմասյան Ազատ, Թորոսյան Ռուբեն, Խաչատրյան Հրաչ, Կոստանյան Գագիկ, Հարությունյան Լեոն, Մատինյան Գառնիկ, Մարգարյան Էդիկ, Մելիքսեթյան Փիրուզա, Միքայելյան Գեղամ, Շմավոնյան Վալերի, Սարգսյան Ատոմ, Սահինյան Ռուբեն, Քեչյան Նորայր:

Երեւան, Օրջոնիկիձեի շրջան, պատվիրակներ. Զախոյան Հայկ Գարեգինի, Գեորգյան Գագիկ Վաղարշակի, Մանուկյան Համլետ Մնացականի, Միրզոյան Լեոնիդ Եգորի, Պետրոսյան Սիրանուշ, Բաղդասարի, Սիմոնյան Պավել, Գեորգյան Սարգիս, Մինիչյան Անահիտ, Ղահրամանյան Բարսեղ Արամայիսի, Առաքելյան Գուրգեն Արամայիսի, Բախկալյան Հայկ Սարգսի, Հովհաննիսյան Արշակ Հենրիկի, Գինոսյան Վալերի Եղիշի, Թութխալյան Աշոտ Հոկտեմբերիկի, Հարությունյան

Համբարձում Եղիազարի, Բոյախչյան Սերգեյ Գրիգորի, Ավետիսյան Ավետիս Վազգենի, Գեորգյան Էդիկ Գարեգինի, Ղազարյան Մամիկոն Սամվելի, Վասիլյան Պարույր Հարությունի, Մելքոնյան Վիոլետա Վահրամի, Մկրտչյան Մկրտիչ Խաչիկի, Սերոբյան Վահագն Մկրտչի, Պողոսյան Հարություն Ռաֆիկի, Սարգսյան Սիմոն, Պետրոսյան Հրանտ Արմենակի, Խաչատրյան Ալբերտ Խորենի, Պետրոսյան Վարդան Ալեքսանդրի, Խաչատրյան Ալեքսան, Նիկոյան Գագիկ Արարատի, Թադեւոսյան Տատյանա, Հովհաննիսյան Հայկ Ռուբենի:

Երեւան, Քսանվեց կոմիսարների շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ղամբարյան Սարգիս Ջարիֆի, Հաբեթյան Նելլի Կարոյի, Իշխանյան Արթուր Սուրենի, Մանուկյան Կարինե Շավարշի, Հակոբյան Գուրգեն Բենիամինի, Առաքելյան Արտակ Գրիգորի, Սողոմոնյան Ռաֆիկ Ռազմիկի, Ղազարյան Էմմա Հայկի, Հարությունյան Հովիկ, Պողոսյան Ժորա, Բեդեյան Դիաննա, Հովհաննիսյան Արամ: **Պատվիրակներ.** Աղաբաբյան Կարեն, Ղալեչյան Բորիկ, Նազարեթյան Ռոբերտ, Լազյան Սպարտակ, Այվազյան Մարգո, Հակոբյան Գուրգեն, Սաֆարյան Սամվել, Թումասյան Բենիամին, Արամյան Միքայել, Գալաջյան Անահիտ, Եղյան Կարմեն, Բաբայան Գրիգոր, Կոստանյան Սպարտակ, Ղարիբյան Հենրիկ, Խաչատրյան Մաղլենա, Կարապետյան Վիլիելմ, Հակոբյան Հրաչիկ, Հարությունյան Հովիկ, Սարգսյան Գեորգի, Սողոմոնյան Ռաֆայել, Ղուշչյան Ռաշիդ, Աբրահամյան Ժաննա, Շահբազյան Ալբերտ, Գեորգյան Սուսաննա, Պետրոսյան Դերենիկ, Մելիքսեթյան Արսեն, Մուշեղյան Տիգրան, Սարգսյան Դորա, Քոչարյան Խաչիկ, Կարապետյան Սվետլանա, Իվանյան Վարդան, Ղազարյան Վաչագան, Հաբերյան Նելլի, Ջուհարյան Սաշա, Ֆրանգյան Միշա, Սեդրակյան Տիգրան, Սարգսյան Լեոն, Արիստակեսյան Միլետա, Մանուկյան Ռոզա, Բաղեյան Դիանա, Ղազարյան Սերգեյ, Հայրապետյան Արկադի, Գասպարյան Վարազդատ:

Էջմիածնի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Նախատակյան Համլետ Համազասպի, Ավանեսյան Ռոբերտ Երվանդի, Սարգսյան Նարեկ Վաղարշակի, Հակոբյան Հակոբ Ղազարի, Միքայելյան Արտավազդ Մարտիրոսի, Կոստանյան Արմեն Մանուկի, Վարդանյան Վիթխար Խաչատուրի, Եղիազարյան Հրաչիկ Դավիթի, Մովսիսով Սիմոն Վլադիմիրի: **Պատվիրակներ.** Նահատակյան

Համլետ Համազասպի, Հայրապետյան Ոսկեհատ Մեսրոպի, Միքայելյան Արտավազդ Մարտիրոսի, Աբելյան Հենզել Հրայրի, Եղիազարյան Հրաչիկ Դավիթի, Ասատրյան Կորյուն Արմենակի, Սարգսյան Նարեկ Վաղարշակի, Միրզոյան Էդիկ Մարտիրոսի, Խոյլունց Արմիկ Անդրանիկի, Ջոհրաբյան Գեորգ Մաթեւոսի:

Թալինի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ֆահրադյան Գագիկ, Լազգիյան Տիտալ, Աթանեսյան Հայկ, Մարգարյան Ֆուրման, Մանուկյան Ռուբիկ, Հովսեփյան Ցուրա, Հարությունյան Տիգրան, Խլոյան Գարիկ, Ղազարյան Արմեն, Ենոքյան Ագնեսիա, Դանիելյան Աղասի, Բաղդասարյան Բաղդասար, Սաֆարյան Խաչիկ, Զոփիկյան Արայիկ, Խաչոյան Մելիք, Հակոբյան Աբուզեր, Քոչարյան Ռուստամ: **Պատվիրակներ.** Ֆահրադյան Գագիկ, Միրաքյան Թագուհի, Խաչոյան Մելիք, Աթանեսյան Հայկ, Զոփիկյան Արայիկ, Ենոքյան Ագնեսիա, Սաֆարյան Խաչիկ:

Թումանյանի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Քոչարյան Արտակ, Պապոյան Ալբերտ, Բեկթաշյան Սամվել, Սիմոնյան Սասուն, Ղազինյան Ռաֆիկ, Նալբանդյան Սերգեյ, Աթանեսյան Սեյրան, Էվոյան Գարեգին, Մաշիկյան Լիլիա, Ալավերդյան Սպարտակ, Ամալյան Հովիկ:

Իջեւանի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ղուկասյան Ֆրեդերիկ Նիկոլի, Մխիթարյան Համլետ Խաչատուրի, Ամիրխանյան Անդրանիկ Վանիկի, Դավթյան Հրայր Վահանի, Մելիքբեկյան Աշոտ Վարդգեսի, Մալխասյան Վարդան Երվանդի, Խաչատրյան Ժենյա Թումանի, Սարգսյան Սվետլանա Ցոլակի, Ղալումյան Մուշեղ Գուրգենի, Քալանթարյան Հրաչիկ Աղասիի, Ղալումյան Արծրուն Սուրենի, Սարգսյան Բորիս Հրանտի, Ասիրյան Սանդրիկ Սուրենի, Հովակիմյան Ռոբերտ Նիկոլի, Մովսիսյան Ռոմիկ Սուրենի, Խեչյան Համլետ Լյուբեկի, Օհանյան Սարիբեկ Շամիրի, Ղազարյան Սպարտակ Ռուդիկի, Ջարգարյան Հրաչիկ Ներսեսի, Մելիքբեկյան Արտուշ Վարդգեսի, Բլբուլյան Հրաչիկ Սուրենի, Մարդանյան Աշոտ Նովիկի, Բալասյան Վանիկ Վոլոդիայի, Մովսիսյան Սերյոժա, Այդինյան Վահրամ, Մանուչարյան Սամվել, Քալանթարյան Էդիկ, Փաշինյան Գառնիկ Տիգրանի, Ամիրխանյան Արտավազդ, Ճաղարյան Արմեն Կառլենի, Շահինյան Աղվան, Ավալյան Համլետ Սարիբեկի, Վարդանյան Վանիկ, Մեհրաբյան Ռաֆիկ,

Մելքումյան Սամվել, Օթարյան Դավիթ Իսակի, Ավետիսյան Արծրուն Անուշավանի, Պողոսյան Համլետ Սերյոժայի, Հարությունյան Վարդգես Գրիգորի, Ներսիսյան Խաչիկ Մնացականի, Անտոնյան Սամվել Սեյրանի, Մխիթարյան Անուշավան, Ակինյան Նորիկ Եղիշի, Նազինյան Արմեն Ցոլակի: **Պատվիրակներ.** Ղուկասյան Ֆրեդերիկ Նիկոլի, Ղալումյան Մուշեղ Գուրգենի, Պողոսյան Համլետ Սերյոժայի, Մելիքբեկյան Աշոտ Վազգենի, Խաչատրյան Ժենյա Թումանի, Հայր Վահան Դավթյան, Ասիրյան Սանդրիկ Սերյոժայի, Քալանթարյան Էդիկ, Գեորգյան Հրանտ, Քալանթարյան Հրաչիկ:

Լենինական քաղաք, պատվիրակներ. Մանուկյան Գագիկ, Գրիգորյան Ժորա, Քյուրքչյան Սուրեն, Մաթեոսյան Խաժակ, Խաչատրյան Սեդրակ, Մելոյան Ռազմիկ, Բաղալյան Ստեփան, Հակոբյան Հակոբ, Կարապետյան Գոռ, Շաբոյան Սամվել, Գալստյան Հենրիկ, Պետրոսյան Մարտին, Թումասյան Վահան, Փաշալեզյան Տիգրան, Բժշկյան Աղասի, Մութաֆյան Լեոն, Իզմիրյան Սեդրակ, Հարությունյան Վոլոդյա, Գեորգյան Անդրանիկ, Պապոյան Արտուշ, Խաչատրյան Լեոն, Ավոյան Վարոս, Առաքելյան Արտաշես, Գեորգյան Արա:

Կալինինոյի շրջան, պատվիրակներ. Բաղդասարյան Արմեն Գրիշայի, Հովհաննիսյան Աղասի Հրանտի, Իգիթյան Կամո Սողոմոնի, Սոլոյան Գոհար Անդրանիկի, Օգանեսով Արկադի Սարգսի, Կարապետյան Տիգրան:

Կամոյի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Դադոյան Սպարտակ, Հովեյան Գրիշա, Ավետիսյան Գեորգ, Ենգիբարյան Խաչիկ, Ենգիբարյան Ռաֆիկ, Սարգսյան Հակոբ, Ղեոնդյան Մարտին, Ղոեջյան Ավետիք, Հայթյան Ստեփան: **Պավիրակներ.** Ղազանչյան Անուշ, Աղաբաբյան Էլյա, Ալմոյան Արտավազդ, Մաղաքյան Արմեն, Խոստեղյան Միշա, Մարտիրոսյան Գայանե, Հովակիմյան Սերոբ:

Կապանի շրջան, պատվիրակներ. Ավանեսյան Կարո Սուրենի, Հովհաննիսյան Սուրեն Աղալոյի, Գրիգորյան Սուրիկ Միսակի, Հայրապետյան Սլավիկ Ստեփանի, Սարուխանյան Ռադիկ Ռուբենի, Թադեոսյան Գրիգոր Ցոլակի, Դավթյան Լեոնիկ Տիգրանի, Մարտիրոսյան Սամվել Ասատուրի, Համբարձումյան Ցուզիկ, Բաղդասարյան Սլավիկ:

Կարմիրի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Թորոսյան Հարություն Սպարտակի, Ղանադյան Արմեն Վաչագանի, Երիցյան Սամվել Սարգսի, Առաքելյան Սերգեյ Սեւանի, Գրիգորյան Սերգեյ Մակիչի, Թորոսյան Խաչատուր Սարգսի, Երեմյան Վլադիկ Սուրենի, Լազարյան Հայկ Բագրատի, Ստեփանյան Վարդգես Արշակի, Բրուտյան Աքսենյա Ազատի, Մուսայելյան Լիդա Սարգսի: **Պատվիրակներ**. Ղանադյան Արմեն Վաչագանի, Երիցյան Սամվել Սարգսի, Թորոսյան Հարություն Սպարտակի, Առաքելյան Վոլոդիա Մովսեսի, Ստեփանյան Վարդգես Արշակի, Դեմիրճյան Սահառունի Հայկի, Երեմյան Վարդիկ Սուրենի:

Կիրովական քաղաք, ՀՀԾ խորհուրդ*. Մանուկյան Աշոտ, Մանուկյան Արամ, Բեգլարյան Մարտուն, Ադամյան Նորիկ, Ալիխանյան Գառնիկ, Ամիրբեկյան Նիկոլայ, Առաքելյան Գեորգի, Ավետյան Ֆելիքս, Գասպարյան Վոլոդիա, Գրիգորյան Լեոն, Գրիգորյան Էդիկ, Գրիգորյան Կոստան, Հարությունյան Հրանտ, Գրիգորյան Ֆերդինանտ, Մանուկյան Վանիկ, Մանուկյան Վալտեր, Մանուսաջյան Ռաֆայել, Մատինյան Հովիկ, Մարգարյան Սոկրատ, Մերջանյան Վարդան, Նազարյան Արամ, Պետրոսյան Վրույր, Սարգսյան Կամո, Սարգսյան Հայկազ, Քոչարյան Տիգրան: **Պատվիրակներ.** Նազարյան Արամ, Գրիգորյան Լեոն, Մանուկյան Աշոտ, Մանուկյան Վանիկ, Սարգսյան Հայկազ, Մերիջանյան Վարդան, Մարիկյան Գագիկ, Առաքելյան Գեորգ, Մանուկյան Գեորգ, Քոչարյան Տիգրան, Ղուկասյան Հակոբ, Մատինյան Հովիկ, Ամիրբեկյան Կոլյա, Մարգարյան Սոկրատ, Գրիգորյան Ֆերդինանտ, Մանուկյան Արամ, Քեշիշյան Վարդգես, Առաքելյան Լարսեն, Մանուկյան Վալտեր, Էվոյան Ռազմիկ, Ասլոյան Վարդան, Քոչարյան Գառնիկ, Սարուխանյան Քերոբ, Քեշիշյան Վարդգես, Ավետյան Ֆելիքս:

Հոկտեմբերյանի (Արմավիրի) շրջան, ՀՀԾ խորհուրդ. Եղոյան Ռուբիկ Վաչիկի, Ներսիսյան Մեսրոպ Ներսեսի, Ղազարյան Սասուն Արամի, Հովհաննիսյան Սեդրակ Մնացականի, Մաթեոսյան Համլետ Լեոնի, Հարությունյան Տիգրան Լենդրուշի, Աբրահամյան Պողոս Շավարշի, Սարգսյան Գարեգին Բաշխիի, Հայրապետյան Ջալալ Արտեմի, Միքայելյան Վահան Ազատի, Կիրակոսյան Սուրիկ, Մնոյան Նորիկ Հենրիկի, Գրիգորյան Ալբերտ Գարսեւանի, Անտոնյան Էդիկ Գառնիկի, Մկրտչյան Ալիկ Սերգոյի,

Խաչատրյան Էդիկ Տիգրանի, Իբոյան Ջոհրապ Ամիրի: **Պատվիրակներ.** Եղոյան Ռուբիկ Վաչիկի, Հովհաննիսյան Սեդրակ Մնացականի, Ներսիսյան Մեսրոպ Ներսեսի, Ղազարյան Սասուն Արամի, Հարությունյան Տիգրան Լենդրուշի, Դարբինյան Արմեն Հրաչի, Մխիթարյան Ռոբերտ Ղազարի:

Հրազդանի շրջան, պատվիրակներ. Մարտիրոսյան Վաչագան, Թամրազյան Սարգիս, Մանուկյան Ջոչար, Հակոբյան Հովիկ, Միրումյան Վիկտոր, Ավագումյան Հակոբ, Մանվելյան Կարեն:

Ղուկասյանի շրջան, պատվիրակներ. Ջորյան Շալիկո Հմայակի, Ղազարյան Վոլոդյա Արամայիսի, Ալեքսանյան Անդրանիկ Լեոնի, Մկրտչյան Տիգրան Սամվելի, Դավթյան Վահան Դեկարտի, Ուրիշանյան Արագան Վարդգեսի, Ավետիսյան Արմեն Հոկտեմբերիկի:

Մասիսի շրջան, պատվիրակներ. Սարգսյան Հրաչիկ, Սահակյան Ալլա, Իսագուլյան Գառնիկ, Կիրակոսյան Վարուժան, Մկրտչյան Հայկազ, Ծատուրյան Ավետիս, Սուվարյան Սուրեն, Հովակիմյան Վաղարշակ:

Մարտունու շրջան, պատվիրակներ. Առաքելյան Գագիկ, Հարությունյան Դերենիկ, Մուրադյան Մանվել:

Նաիրիի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Գրիգորյան Արմեն, Կարապետյան Հրաչիկ, Ղազարյան Նիկողոս, Խաչատրյան Լեւիկ, Խլղաթյան Աղվան, Մնացականյան Կարապետ, Գալստյան Գոռ, Հովհաննիսյան Գագիկ, Թադեւոսյան Վահագն, Հակոբյան Սամվել, Պետրոսյան Լեոն, Միասարյան Արտակ, Պետրոսյան Մանուշակ, Պետրոսյան Ալիկ, Գեւորգյան Ռուբիկ, Գեւորգյան Սուրեն, Սուլթանյան Արամ, Սարգսյան Ազատ, Հարությունյան Արամ, Ավետիսյան Ալեքսան, Սիմոնյան Ժորա, Սարգսյան Վահան, Գեւորգյան Ռուբիկ, Սարգսյան Սաշիկ, Պետրոսյան Վարդգես: **Պատվիրակներ.** Գրիգորյան Արմեն Շահենի, Խլղաթյան Արամ Քյարամի, Մկրտչյան Ռաֆիկ Սերգոյի, Պետրոսյան Ալիկ Ավետիքի, Խաչատրյան Լեւիկ Մանուկի, Սարգսյան Սարգիս Վոլոդիայի, Պետրոսյան Վարդգես Կորյունի, Դավթյան Վահագն Ջավենի, Ավետիսյան Դավիթ Ջաքարի, Առաքելյան Սաշիկ Միքայելի:

Նոյեմբերյանի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Ասլանյան Ռաֆիկ, Ազիզբեկյան Սերժիկ, Ազարյան Լյովա, Բեգլարյան Սամվել, Խաչատրյան Պողոս, Խասիկյան Վոլոդյա, Շարոյան Գարիկ, Պապյան Գերասիմ, Ավետիսյան Գագիկ, Ազիզբեկյան Կարինե, Բաղալյան Սարո, Բեգլարյան Հովհաննես, Գրիգորյան Անաստաս, Հարությունյան Վահագն, Ղարաքեշիշյան Սայադ, Ղազարյան Վարդան, Ղուլիջանյան Կարո, Մուսյան Ռաշիդ, Միկիչյան Արարատ, Միսկարյան Սերգեյ, Չիլինգարյան Ռեւիկ, Ջանվելյան Գառնիկ, Վարդանյան Դարչո: **Պատվիրակներ**. Ասլանյան Ռաֆիկ, Ազիբեկյան Կարինե, Ավետիսյան Գագիկ, Բեգլարյան Սամվել, Հարությունյան Ռոման, Ղուլիջանյան Կարո, Հարությունյան Վահագն, Դովլաթյան Նուբար, Նազարյան Վարդան, Շարոյան Գարիկ:

Շամշադինի (Տաուշի) շրջան, ՀՀԾ խորհուրդ. Աթոյան Հովիկ, Ասատրյան Սերժիկ, Միրզոյան Արթուր, Ղարսայան Խաչիկ, Օհանյան Արթուր, Մելիքյան Վալտեր, Խաչատրյան Ղուկաս, Գասպարյան Ռուբիկ, Բաղալյան Էդիկ, Մանուչարյան Կոլյա, Օհանյան Աշոտ, Գալստյան Սերյոժա, Նավասարդյան Մովսես, Խաչատրյան Վարդան, Ներսիսյան Անժելա, Բաղալյան Գագիկ, Անտոնյան Արամ, Նիգոյան Մհեր, Ասրյան Մուշեղ, Մելիքյան Սուրեն, Սաղումյան Արա: **Պատվիրակներ.** Մելիքյան Վալտեր, Օհանյան Աշոտ, Աթոյան Հովիկ, Միրզոյան Արթուր, Խաչատրյան Ղուկաս, Ներսիսյան Անժելա, Մելիքյան Սուրեն:

Չարենցավան քաղաք, պատվիրակներ. Ասրյան Արարատ, Խաչատրյան Խաչիկ, Գաբրիելյան Գագիկ, Կոնջորյան Արամ, Բաղդասարյան Մարտին, Նազլուխանյան Նադեժդա, Կոստանյան Մարատ:

Ջերմուկ քաղաք, պատվիրակներ. Օհանյան Լեոն Աղվանի, Խաչատրյան Գագիկ Կոլյայի:

Սեւանի շրջան, ՀՀԾ խորհրուրդ. Հովակիմյան Մուրադ Գուրգենի, Սարգսյան Սուրեն Գարուշի, Կարապետյան Պայծառ Կարապետի, Շահնազարյան Նիկոլայ Սերգեյի, Ավագյան Ռոբերտ Աշոտի, Առաքելյան Մանվել Վարդանի, Ղազարյան Աշոտ Լեոնի, Գեւորգյան Սամվել Մամիկոնի, Ստեփանյան Գուրգեն Աշոտի, Թումանյան Արարատ Միքայելի, Գեւորգյան Վարդազար

Մամիկոնի, Խաչատրյան Ցուրիկ Գրիշայի, Բարսեղյան Նվեր: **Պատվիրակներ.** Կարապետյան Պայծառ Կարապետի, Հովակիմյան Մուրադ Գուրգենի, Գեւորգյան Սամվել Մամիկոնի, Խաչատրյան Ցուրիկ Գրիշայի, Առաքելյան Մանվել Վարդանի, Շահնազարյան Նիկոլայ Սերգեյի, Սարգսյան Սուրեն Գարուշի:

Սիսիանի շրջան, պատվիրակներ. Պողոսյան Մայիս, Սյունի Թաթուլ, Ոսկանյան Վուրգ, Մուրադյան Արշակ, Եսայան Արտաշես, Ավագյան Աշոտ:

Սպիտակի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Աթոյան Մհեր, Հերթեւցյան Արծվիկ, Օթարյան Արամայիս, Եղիազարյան Հայկ, Սահակյան Ռոբերտ, Ներսիսյան Ցուրա, Միրզոյան Մնացական, Պապոյան Լյովա: **Պատվիրակներ.** Աթոյան Մհեր, Հերթեւցյան Արծվիկ, Օթարյան Արամայիս, Եղիազարյան Հայկ, Սահակյան Ռոբերտ, Ափուջանյան Ֆահրադ, Միրզոյան Մնացական:

Ստեփանավանի շրջան, պատվիրակներ. Պառավյան Հովիկ Հայկազի, Մարիկյան Սարգիս Դանիելի, Առաքելյան Վեհարի Սարգսի, Հովհաննիսյան Արծրուն Շավարշի, Պապյան Սպարտակ Սերգոյի, Մեսրոպյան Դավիթ Խլղաթի, Ուլուբաբյան Հրայր Բագրատի:

Վարդենիսի շրջան, ՀՀԾ խորհուրդ. Խաչատրյան Դերենիկ Քարամի, Հովհաննիսյան Սոկրատ Ռուբենի, Պետրոսյան Ալբերտ Բաղիշի, Հարությունյան Ռոբերտ Արամայիսի, Բաղալյան Լուքսեմ Արամայիսի, Մաիլյան Վեսմիր Վաղարշակի, Ղազարյան Ավետիք Թեւոսի, Հարությունյան Ռուբեն Արամայիսի, Հայրունի Աշոտ Նորայրի, Ղարիբյան Արծրուն Արշավիրի, Պետրոսյան Արկադի Պետրոսի, Խաչատրյան Ռոլանդ Հովհաննեսի, Խլոյան Արիս Հմայակի, Հարությունյան Վանո Մելքոնի, Ավետիսյան Մնաց Սողոմոնի, Ենգոյան Գեւորգ Վանիկի, Խլոյան Միշա Երվանդի, Մաթեւոսյան Թամարա Հրանտի, Հովհաննիսյան Լարուրա Վարազդատի, Դավթյան Գարսեւան Գեւորգի, Ծիրանյան Սուրեն Թեւոսի, Ասատրյան Թաթուլ Արամի, Աբրահամյան Լեւոն Անուշավանի, Մանուկյան Խաչիկ Ժորայի, Մարտիրոսյան Ստյոպա Սարիբեկի, Աթոյան Սաշիկ Բարեղամի, Մինասյան Սաթենիկ Ռուբենի, Հովհաննիսյան Աշոտ Խաչիկի, Սաֆարյան Լյովա Գուրգենի, Աղաբեկյան Գնել Պարույրի, Գրիգորյան Տիգրան Հովհաննեսի,

Գրիգորյան Գուրգեն Սողոմոնի, Մելքոնյան Լեոնիկ Սարիբեկի, Բարսեղյան Վիգենտիկ Հայրիկի, Կարապետյան Ասյա Ալեքսանի, Գասպարյան Լեւոն Եղիազարի, Տեր-Արամ քահանա Հունանյան, Հայրունի Սուրեն Թաթուլի, Սահակյան Հրաչիկ Օհանջանի, Ավետիսյան Մարատ Հրանտի, Մանուկյան Գառնիկ Արսենի, Թովմասյան Արմեն Գուրգենի, Հակոբյան Մերուժան Սերգեյի, Հակոբյան Գայանե Սուրենի, Ստեփանյան Մարատ Խաչիկի, Շաբոյան Վեմիր Լեւոնի: **Պատվիրակներ.** Խաչատրյան Դերենիկ Քարամի, Հովհաննիսյան Սոկրատ Ռուբենի, Պետրոսյան Ալբերտ Բաղիշի, Բաղալյան Լուքսեմ Արամայիսի, Մաիլյան Վեսմիր Վաղարշակի, Հարությունյան Ռոբերտ Արամայիսի, Ղազարյան Ավետիք Թեւոսի:

Լեռնային Ղարաբաղ, պատվիրակներ. Քոչարյան Ռոբերտ, Սարգսյան Սերժիկ, Պետրոսյան Գարիկ, Շիրինյան Վիգեն, Առաքելյան Ռուբեն, Աբրահամյան Էմիլ, Մկրտչյան Արթուր, Դաղալյան Ռոմիկ, Մկրտչյան Առնո, Հարությունյան Լորենց, Սարուխանյան Ռաֆիկ:

Հիմնարկ-ձեռնարկություններ

«Արմենպրես», ՀՀԾ խորհուրդ. Դուլյան Ա., Ցուզբաշյան Մ., Հակոբյան Ս., Բաղալյան Գ., Խաչատրյան Ա.:

Բյուրականի աստղադիտարան, պատվիրակներ. Բարսեղյան Լ., Թովմասյան Հրանտ Մուշեղի, Մովսիսյան Տիգրան:

«Գրանիտ» ՀԿԲ, պատվիրակներ. Ջաքարյան Աշոտ Ջավենի, Մանուկյան Աշոտ Աբախանի:

Երեւանի բժշկական ինստիտուտ, պատվիրակներ. Ղազարյան Տ. Գ., Ուլիխանյան Ղ. Ի., Մուրադյան Մ. Տ., Օհանյան Ա. Ա., Մելիքյան Հ. Ս.:

Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ, պատվիրակներ. Մադոյան Ռազմիկ Մելիքսեթի, Համբարձումյան Արմենակ Բեգլարի:

Երեւանի մանկավարժական ինստիտուտ, պատվիրակ. Ղուշչյան Ալեքսանդր Խաչատուրի:

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ, պատվիրակներ. Մկրտչյան Սամվել, Սահակյան Գեորգի, Միքայելյան Մարտին, Ազատյան Կարո, Լազարյան Ֆելիքս, Ավետիսյան Սամվել, Ծովյան Ռոբերտ, Մինասյան Հայկ, Կոստանյան Գարեգին, Մացակյան Լեւոն, Հակոբյան Ռոբերտ, Կիրակոսյան Արտակ, Սահակյան Արմեն, Կարապետյան Աշոտ, Առաքելյան Գագիկ, Իգիթյան Հովհաննես, Հովսեփյան Էմիլ, Ավետիսյան Ռոբերտ, Գրիգորյան Ֆրիդրիխ, Գրիգորյան Արամ, Հակոբյան Լեւոն:

Երեւանի ռուսաց եւ օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ, պատվիրակներ. Արարատյան Մ. Գ., Ղահրամանյան Մ. Մ., Թոխմախյան Լ. Մ., Հարությունյան Ջ. Հ., Ալեքսանյան Լ. Ս.:

Երեւանի պետական կոնսերվատորիա, պատվիրակներ. Հարությունյան Վաղարշակ Վիդոկի, Անտոնյան Արամ Գառնիլայի, Մարության Ռուբեն Պավլիկի:

Երեւանի երկաթգծի կայարան, պատվիրակներ. Իսպիրյան Ա., Խաչատրյան Ա.:

Երեւանի մետրոպոլիտեն, պատվիրակներ. Մաղաքյան Լեռ-Լեւոն, Բուդաղյան Մարտին, Գյուլնազարյան Լեւոն, Կարագյոզյան Վահագն:

Երեւանի քաղաքային տրանսպորտի վարչություն, պատվիրակներ. Կարապետյան Տիգրան Հակոբի, Թորոսյան Արսեն Ջավենի, Մաիլյան Ֆարադ Ջավենի, Նիկողոսյան Վարուժան Հմայակի, Կարապետյան Գագիկ Արշալույսի, Միրզոյան Նորիկ Սուրենի, Մարտիրոսյան Մավրիկ, Մելքոնյան Պարգեւ, Վասիլյան Սուրեն Գրիգորի, Կարապետյան Վաչագան Ամոյի:

ԵՊՀ փիլիսոփայության եւ սոցիոլոգիայի ֆակուլտետ, ՀՀԾ խորհուրդ. Հովսեփյան Արամայիս, Աբրահամյան Լեւոն, Սողոմոնյան Գագիկ, Ոսկանյան Աշոտ, Հովհաննիսյան Վահան, Բրուտյան Վահրամ, Հովհաննիսյան Գնել: **Պատվիրակ.** Արամայիս Հովսեփյան:

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, պատվիրակ. Դիլոյան Վալտեր Արտաշեսի:

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, պատվիրակ. Սարգսյան Է. Ս.:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, պատվիրակ. Ռոստամյան Արմեն Եզնակի:

ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետ, պատվիրակ. Ռաֆայելյան Սպարտակ Գեորգի:

ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետ, պատվիրակ. Բաբաջանյան Գեորգ Համազասպի:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, պատվիրակ. Փանոսյան Գարեգին Հարությունի:

ԵՊՀ հայագիտական կենտրոն, պատվիրակ. Բաղդասարյան Ա. Հ.:

ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետ, պատվիրակ. Սահակյան Մելս Արտավազդի:

ԵՊԻ ինժեներա-շինարարական ֆակուլտետ, պատվիրակ. Ազատյան Կարո Գուրգենի:

Էլեկտրոն գործարան, պատվիրակներ. Մելիքյան Արամայիս, Սարգսյան Համլետ, Մանսուրյան Ավետիս, Մխիթարյան Կարեն, Հայրապետյան Դերենիկ:

Ինժեներա-գեոդեզիական նկարահանումների ինստիտուտ, պատվիրակներ. Ուլիխանով Վ. Ա., Պողոսյան Մ. Ռ., Ավալյան Բ. Ս., Մկրտչյան Մ. Գ., Դավթյան Ս.:

Խաղողագործության, գինեգործության ինստիտուտ, պատվիրակներ. Առաքելյան Արտավազդ Հովհաննեսի, Սաֆարյան Դերենիկ Լեւոնի, Հարությունյան Վյաչեսլավ Սամսոնի:

«Ծիծեռնակ» ամսագրի խմբագրություն, պատվիրակներ. Միլիտոնյան Էդիկ, Պողոսյան Տաթեւիկ, Կիլիկյան Անդրանիկ, Կարվազյան Կատյա, Սահակյան Ասյա:

Կոոպերատիվների հանրապետական միություն, պատվիրակներ. Հովհաննիսյան Ալբերտ Սիմոնի, Սիմոնյան Ցուրա Աղասու, Բաղմանյան Լեւոն Նիկոլի, Հարությունյան Խաչիկ Գեւորգի, Վարդանյան Լեւոն Հրաչիկի, Հարությունյան Գագիկ Աշոտի, Նաղդալյան Հերմինե Միքայելի:

Հայէլեկտրոմեքենա ԳԱՄ, պատվիրակներ. Բարսեղյան Սոնա, Օհանյան Անահիտ, Ջաքարյան Ավագ, Մկրտումյան Սեյրան, Ռուշանյան Մայիս, Հովսեփյան Թելման, Կարապետյան Սուրեն:

«Հայաստան» հրատարակչություն, պատվիրակ. Ասատրյան Ռազմիկ Սամվելի:

Հայկական ատոմակայան, պատվիրակներ. Զախոյան Աշոտ Սմբատի, Հարությունյան Մանուկ Արամի:

Հեղափոխության պետական թանգարան, պատվիրակներ. Գալստյան Անահիտ Անդրանիկի, Փիանջյան Ալլա Աբելի:

ՀԽՍՀ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, պատվիրակներ. Պողոսյան Կ. Պ., Սանթրոսյան Ե. Ռ.:

ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, պատվիրակներ. Ղարիբջանյան Բագրատ Գեւորգի, Սարգսյան Սվետլանա Աշոտի, Ղաղախեցյան Նունե Վլադիմիրի:

ՀԽՍՀ ԳԱ նախագահություն, պատվիրակներ. Սիմոնյան Աբել, Սեդրակյան Դավիթ, Շահնազարյան Կարինե:

ՀԽՍՀ ԳԱ ՀԿ, պատվիրակներ. Սարուխանյան Հակոբ Գեւորգի, Գյուլումյան Սոս Միքայելի:

ՀԽՍՀ ԳԱ ՀԿԲ, պատվիրակներ. Ավետիսյան Արամայիս, Մկրտչյան Երվանդ:

ՀԽՍՀ ԳԱ աստրոֆիզիկական սարքերի կոնստրուկտորական բյուրո, պատվիրակներ. Շահբազյան Ցուրա Լեւոնի, Շիրխանյան Վահան Գրիգորի:

ՀԽՍՀ ԳԱ ՌՖԷԻ, պատվիրակներ. Բոցինյան Ռազմիկ, Վարդանյան Վահան:

ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, պատվիրակներ. Հարությունյան Գագիկ Աշոտի, Ոսկերչյան Գրիգոր Հարությունի, Զալտիկյան Մերի Թեւոսի:

ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտ, պատվիրակներ. Վահրադյան Վ. Գ., Մկրտչյան Ա.:

ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտ, պատվիրակներ. Մուրադյան Պարգեւ Լեւերգի, Աչիքգյոզյան Սիմոն Հովհաննեսի:

ՀԽՍՀ ԳԱ ագրոքիմիական պրոբլեմների եւ հիդրոպոնիկայի ինստիտուտ, պատվիրակներ. Մանվելյան Վ., Նահապետյան:

ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտ, պատվիրակներ. Մարդանյան Սոնա Սմբատի, Ասատրյան Ռուզան Մանվելի:

ՀԽՍՀ ԳԱ արեւելագիտության ինստիտուտ, պատվիրակներ. Փափազյան Արշալույս, Կարամանուկյան Շահեն:

ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ, պատվիրակներ. Պողոսյան Էդիկ, Գրիգորյան Տիգրան:

ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, պատվիրակներ. Շմավոնյան Գարեգին, Բագրատյան Հրանտ, Ասատրյան Բագրատ, Ավետիսյան Ժոզեֆ:

ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտ, պատվիրակներ. Բատիկյան Բ., Արզումանյան Վ.:

ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտ, պատվիրակներ. Կիզոկյան Լ. Հ., Թերզյան Ս. Հ.:

ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, պատվիրակներ. Սարգսյան Նվեր, Ջիհանյան Վռամ:

ՀԽՍՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, պատվիրակներ. Մարության Հարություն, Աբրահամյան Լեւոն:

ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտ, պատվիրակներ. Հովհաննիսյան Հ., Բեգլարյան Գ.:

ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտ, պատվիրակներ. Բալոյան Սամվել Արամայիսի, Օգանեզովա Գոհար Հրանտի:

ՀԽՍՀ ԳԱ փորձառական կենսաբանության ինստիտուտ, պատվիրակներ. Գալստյան Հրաչյա Գալուստի, Խաչատրյան Հարություն Թորգոմի:

«Հրազդան» գործարան, պատվիրակներ. Առաքելյան Արմեն, Մամաջանյան Հովիկ, Փամբուկչյան Վազգեն:

Նո. 1 ՏԱՏՁ, պատվիրակ. Խաչատրյան Էդիկ Նորիկի:

Չարենցի անվան գրականության թանգարան, պատվիրակներ. Խանաղյան Ք., Մելքումյան Մ., Ասատրյան Ա.:

Սարքաշինական արդյունաբերության գիտատեխնիկական ընկերություն, պատվիրակներ. Գալստյան Ժաննա Հայկազի, Շեխյան Ստեփան Հրանտի:

«Սիրիուս» գործարան, պատվիրակներ. Փիրումյան Հենրիկ, Հակոբյան Գագիկ, Բալասանյան Սվետա, Ադամյան Բաթ, Աբրահամյան Սամվել:

Վավերագրական ֆիլմերի «Հայկ» ստուդիա, պատվիրակ. Հակոբյան Հակոբ Սմբատի:

Քաղաքացիական ավիացիայի հայկական վարչություն, ՀՀԾ խորհուրդ. Անտոնյան Սերգեյ Հուսիկի, Բաղդասարյան Սեյրան, Գրիգորյան Յուրի Սարգիսի, Եղիազարյան Իշխան Անուշավանի, Ջուլյետով Վլադիմիր Պետրոսի, Հակոբյան Ժիրայր Հարությունի, Հարությունյան Գեորգ Միքայելի, Ղազարյան Լեւոն Գոմեդիկի, Մինասյան Լեւոն Բենիամինի, Տեր-Հովհաննիսյան Անդրեյ Ջիգֆրիդի, Դանիլյան Վաչիկ Կարապետի, Մնացականյան Ալբերտ Անուշավանի, Խաչատրյան Անահիտ Ավետիսի, Գրիգորյան Մելս Գուրգենի, Առաքելյան Անատոլի Ստեփանի, Մեժլումյան Կարինե Սուրենի, Սաֆարյան Յուրի Վազգենի, Մելքոնյան Սերյոժա Արշալույսի, Խոջոյան Վարդուհի Գալուստի, Պողոսյան Սահականույշ Սարիբեկի, Պողոսյան Հայկ Մինասի, Մարտիրոսյան Գագիկ Հովհաննեսի, Պեդոյան Կարինե Արտյոմի, Մալխասյան Կարինե Կարապետի, Հունանյան Բորիս Բախշիի, Այդինյան Վրեժ Հարությունի, Խաչատրյան Արմեն Ռազմիկի, Սարգսյան Վանիկ Ադիբեկի, Գասպարյան Վալերիկ Ամիրբատի, Գրիգորյան Ալբերտ Արամայիսի, Ավետիսյան Նորիկ, Աբրահամյան Հենրիկ, Ղազարյան Գեորգ, Պողոսյան Սամվել, Սարգսյան Մաղլեն Իշխանի, Մարկոսյան Արիստակես Բորիսի: **Պատվիրակներ.** Մինասյան Լեւոն, Սարգսյան Վանիկ, Ղազարյան Լեւոն, Բաղդասարյան Սեյրան, Խոջոյան Վարդուհի, Ավետիսյան Նորիկ, Մնացականյան Ալբերտ, Հակոբյան Ժիրայր, Մարտիրոսյան Գագիկ, Գրիգորյան Յուրի:

Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտ, պատվիրակներ. Ամիրյան Բերկրանք Գարեգինի, Չաթալբաշյան Սեդա Պետրոսի, Թորոսյան Ռաֆիկ Մամիկոնի, Առաքելյան Ազատ Սեդրակի:

Կազմակերպություններ

«Ազգային կառույց», պատվիրակներ. Մարտիրոսյան Ազատ Քյարամի, Գրիգորյան Սեյրան Ամբակումի, Ղազարյան Արշակ Գագիկի:

Ամբերդի վերականգնման խումբ, պատվիրակներ. Պետրոսյան Տիգրան Մնացականի, Հարությունյան Սեդա Առաքելի, Բաղդասարյան Ալեքսանդր Ժորայի, Նազարյան Ջավեն Արծրունու:

«Արցախ» հայրենակցական միություն, պատվիրակներ. Ալավերդյան Լարիսա Ասատուրի, Մանասյան Ալեքսանդր Սարգսի:

Արցախի «Ամարաս» բարեգործական միություն, պատվիրակներ. Մարտիրոսյան Պարգեւ, Ալեքսանյան Արթուր:

«Գթություն» բարեգործական միություն, պատվիրակներ. Աբգարյան Ռաֆիկ Սուրենի, Նավասարդյան Ջուլիետա Լեւոնի, Ամատունի Վլադիմիր Գրիգորի, Պապիկյան Խաչիկ Հայկի, Ավագյան Աշոտ:

«Գենոցիդ» հանցանքի դեմ պայքարող պատերազմի եւ աշխատանքի վետերանների միություն, պատվիրակներ. Պողոսյան Սամվել Թեւոսի, Հովհաննիսյան Մանյա Արշակի:

«Դեմոկրատական վերակառուցում» (Վրաստան, Բոգդանովկայի շրջան), պատվիրակներ. Թանգամյան Վաղինակ, Բդոյան Կառլեն, Երանոսյան Սեւակ, Անտոնյան Կլիմենտ, Ղարսլյան Ավթանդիլ, Մկոյան Կամո:

Երեւանի անգլիական ակումբ, պատվիրակ. Խաժակյան Գուրգեն:

Կասկադյորների ոչ ֆորմալ խումբ, պատվիրակ. Մնացականյան Ռուբեն Շամիրի:

«Հայ ազգային միություն», պատվիրակներ. Սարգսյան Սոս, Հակոբյան Ռոբերտ, Մելքումյան Արիս, Միքայելյան Հմայակ, Հախվերդյան Հովիկ, Պետրոսյան Օհան, Մկրտչյան Սենիկ, Մանսուրյան Տիգրան, Ջեյթունցյան Պերճ, Հովսեփյան Ռուբեն, Վերմիշեւա Սեդա, Ջոլյան Սուրեն, Քեշիշյան Սահակ:

Հայաստանի նկարիչների միություն, պատվիրակներ. Սարգսյան Բաղդասար, Կարգանյան Նորայր, Մանուկյան Գուրգեն:

Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն, պատվիրակներ. Վաթինյան Ռուդոլֆ, Հասմիկյան Սուրեն, Ներսիսյան Գեւորգ:

Հայաստանի գրողների միություն, պատվիրակներ. Հովսեփյան Ռուբեն, Վերմիշեւա Սեդա, Շահմուրադյան Սամվել, Վարդանյան Աղվան, Պետրոսյան Վաչե, Տոնյան Ռազմիկ:

«Հայ դպրություն» ընկերություն, պատվիրակ. Միրիջանյան Լեւոն Վարդանի:

Հայ զինակոչիկների իրավունքների պաշտպանության երիտասարդական կազմակերպություն, պատվիրակներ. Սիրունյան Ս., Ադիլխանյան Ա.:

«Հայ կանանց դաշինք», պատվիրակներ. Շառոյան Լենա, Աղաբեկյան Մելադա:

Հայ մտավորականների խորհուրդ, պատվիրակներ. Հակոբյան Հակոբ Վահանի, Վարդանյան Կամո Սիրակի, Խուրշուդյան Լենդրուշ Արշակի, Շահմուրադյան Սամվել Սարգսի, Հարությունյան Տիգրան, Ավագյան Գրիգոր Երեմի, Հովհաննիսյան Ալբերտ Սիմոնի, Ջոլյան Սուրեն Տիգրանի, Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, Մկրտումյան Յուրի, Աբրահամյան Լեւոն Հարությունի, Գեւորգյան Համլետ, Խոջաբեկյան Վլադիմիր, Արեւշատյան Սեն, Ջեյթունցյան Պերճ:

ՑԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբյուրներ

Արխիվներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահի արխիվ (ՀՀԱՆԱ)
Մոսկվայի «Ժամանակակից փաստաթղթերի պահման կենտրոն» (ԱՀՀԴ)
Հայ ազգային կոնգրես կուսակցության ընթացիկ արխիվ

Պաշտոնական տեղեկագրեր

ՀԽՍՀ (ՀՍՍՀ) Գերագույն խորհրդի տեղեկագիր (1988-1990թթ.)
ԽՍՀՄ (ՍՍՀՄ) Գերագույն խորհրդի տեղեկագիր (1988-1990թթ.)

Հրապարակված փաստաթղթեր

Գալստյան Հ., Չուղարկված նամակներ, Երեւան, 2013:
Գեորգիսյան Մ., Մեղադրվում են, Երեւան, 1989:
Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, փաստաթղթերի ժողովածու, կազմեցին՝ Բաբկեն Արարքցյանը, Աշոտ Սարգսյանը, օժանդակությամբ՝ Գոհար Խաչատրյանի, Երեւան, 2016:
Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988-1989), կազմողներ՝ Հրանտ Աբրահամյան, Կարեն Խաչատրյան, Երեւան, 2014:
Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Կարեն Խաչատրյանի եւ Հրանտ Աբրահամյան, Երեւան, 2011:
Հովհաննիսյան Է., Մի խումբ մտավորականների պատվիրակության այցը Լեռնային Ղարաբաղ 1988թ., Բանբեր Հայաստանի արխիվների, 2014, էջ 358-371:

Հովհաննիսյան Է., Սփյուռքահայ համայնքների եւ օտարերկրյա լրատվամիջոցների դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման նկատմամբ (ՀԽՍՀ ԱԳ նախարարության տեղեկանքների հրապարակում), Բանբեր Հայաստանի արխիվների, 2013, հ. 1, էջ 126-151):
Մանուկյան Վ. Գնացքից թռչելու ժամանակն է, Երեւան, 2002:
Ցազրճյան Գ., Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթղթերու մեջ (1945-1991), Երեւան, 2016:
ՌԱԿ-ի խոսքը մամուլի ընդմէջէն (1988-1991), կազմեց **Եղիա Գայայեան,** Նիկոսիա, 2003:
Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երեւան 2006:
Տեր-Պետրոսյան Լ., Վերադարձ (ելույթներ, հոդվածներ, մամլո ասուլիսներ), Երեւան, 2009:
Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 1, февраль 1988г.-январь 1989г., Ереван, 1990.
Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть 2, 1989г., Ереван, 1993.
Погосян В. Советские ученые о Карабахском конфликте, Вестник общественных наук, 2010, 3, ст. 338-342.
Прада о Нагорном Карабахе, состовители В.А. Товмасян, Ю.Б. Нерсисян, Степанакерт,1989.
Gerard J. Libaridian (Editor)., Armenia at the Crossroads, Natertown, Massachusetts, 1991.

Մամուլ
«Ասպարեզ» (1989)
«Ավանգարդ» (1988-1989թթ.)
«Դրոշակ» (1988-1990)
«Երեկոյան Երեւան» (1988-1989թթ.)
Երկիր» (1992թ.)
«Խորհրդային Հայաստան» (1988-1989թթ.)
«Խորհրդային Ղարաբաղ» (1988-1989թթ.)
«Հայկական ժամանակ» (2004թ.)
«Հայք» (1989-1990թթ.)

«Ցառաջ» (1989թ.)
«Պիոներ կանչ» (1988-1989թթ.)
«Իլուր» (Ilur.am) կայք (2017)
«Առաջին լրատվական» (1in.am) կայք
Бюллетень «Московской Трибуны», 1, М. 1989 (տե՛ս ՀՀԱՆԱ, 15/04.02.89,- մեքենագիր օրինակը).
«Известия» (1988-1989гг.)
«Коммунист» (1988-1989гг.)
«Молодежь Эстонии», 19.08.1988.
«Правда» (1988-1989гг.)
«Советский Карабах» (1988-1989гг.)
«Советский Молодежь», 25.03.1989 (Латвия).

Գրականություն

Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչեւ անկախություն, Երեւան, 1992:
Ազիզբեկյան Ռ., Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, 2:
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երեւան, հ. 3, 1977:
«Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի վերջին օրերը», Անհայտ գրողի օրագիրը, Երեւան, 1993:
Արշակյան Ա.,Արցախյան գոյամարտը (1985-1992թ.), Երեւան, 2004:
Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., Երեւան, 2002:
Գերաս Ժ., Հայերի դեմոկրատական երազանքը (**Jean Gueyras**, Le reve democratique des Armeniens, Le Monde, 22.10.1988. (հայերեն թարգմանությունը՝ ՀՀԱՆԱ, 15/22.10.88):
Դավթյան Վ., Առասպելի եւ իրականի սահմանագծին, Լեւոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին եւ քաղաքագետը, Երեւան, 1996, էջ 105-106:
Թոմաս դե Վաալ, Սեւ այգի, Երեւան, 2014:

Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917-1920թթ., աշխատասիրությամբ Ա. Բ. Սարգսյանի, Երեւան, 2008:
Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երեւան 1999:
Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Երեւան, 1999:
Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երեւան, 1991, էջ 183:
Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, Երեւան, 1997:
Կարագյուլյան Մ., Հայաստանը պաշարված ամրոց, թարգմանություն ֆրանսիական «Լը Մոնդ»-ից, 17.12.1988 (ՀՀԱՆԱ, 15/17.12.88):
Հակոբյան Ա., հարցազրույց hambardzum.am կայքին, 11.09.2015թ.:
Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, Երեւան, 1991, հ. 3, էջ 521:
Հարությունյան Ս., Անցյալի եւ ներկայի մասին, Երեւան, 2008:
Ղազարյան Ռ., Հաշվետու եմ, Երեւան, 2003:
Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994) հանրագիտարան, Երեւան, 2004:
Մաթեւոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երեւան, 1984:
Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը եւ Ղարաբաղյան շարժումը, Երեւան, 2009:
Մարության Հ., Ղարաբաղյան շարժման կամ Հայկական հեղափոխության (1998-1990) հիմնական առանձնահատկությունները (տե՛ս **Գալստյան Հ.**, Չուղարկված նամակներ, Երեւան, 2013, էջ 9-17):
Մելիք-Հակոբյան Ս., Հայաստանի երկրորդ հանրապետության հիմնումը եւ Դաշնակցությունը, Երեւան, 1995:
Մերսյե Ֆ. Ռ., Սոցիալական պայքարի բնույթը ԽՍՀՄ-ում, Փարիզ, 1989, (**Mercier P. R.** Aspects des luttes sociales en U.R.S.S., Paris, 1989):
Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, նմանահանություն, լրացուները՝ Ա. Բ. Սարգսյանի, Երեւան, 1991:
Մսերլյան Ջ., Երեք դաշնագիրեր, Բեյրութ, 1979:
Մսերլյան Ջ., Հայկական հարցի մասին, Բեյրութ, 1978:
Շահմուրադյան Ս., Զմոռանալ ոչինչ, Երեւան, 2005:

Չորմիսյան Լ., Կուսակցությունները, Երեւան, 1995:
Սարգսյան Ա., Հայաստանի նորագույն պատմության ուրացումն ու կեղծումը (1988-1998թթ.), Երեւան, 2015:
Ստեփանյան Գ.. Գրախոսական՝ Էդուարդ Պողոսյանի «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.)» աշխատության, ՊԲՀ 2014, 1:
Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երեւան,1993:
Տեր-Մինասյան Ա., Մուրադյան Կ. Հայկական Սփյուռքը երկրաշարժի ժամին (տպագրվել է ֆրանսիական «Մոնդ» ամսագրում), հայերեն թարգմանությունը՝ ՀՔԿՊԿԱ, 1.87.700, էջ 6-7:
Տեր-Ստեփանյան Ք., Մենք փոխվել ենք, Հայաստանն էլ է փոխվել - ՀՀԱՆԱ, 15/07.11.89, անտիպ):
Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997:

Армения: Проблемы независимого развития, Российский институт стратегических исследований, Москва, 1998.
Боффа Джузеппе, От СССР к России. История неоконченного кризиса, 1964-1994, М. 1996.
Григорян В. Армения 1988-1989, Ереван, 1999.
Историческая справка - Нагорный Карабах, историческая справка, Академия наук Армянской ССР, Ереван, 1988.
Рыжков Н., Перестройка. История предательства, М., 1992.
Шахмурадян С. Сумгаитская трагедия в сведениях Очевидцев, Ереван, 1989.
Gueyras Jean, Le reve democratique des Armeniens, Le Monde, 22.10.1988.
Gaidz Minassian, Guerre et terrorisme armeniens 1972-1998, Paris, 2002.
P. R. Merzcier, Aspects des luttes sociales en URSS. — Le mouvement democratique des Armnniens. — Les Balts et la question de l' ntat de droit, Paris, 1989.
Pierre Verluise, Armnnie, La fracture, ldition Stock, 1989.
Joseph R. Masih, Robert O. Krikorian, Armenia at Crossroads, Harwood academic publishers, Amsterdam, 1991.
Shireen T. Hunter, The Transcaucasus in Transition. Nation – Building and Conflict, Washington D.C., 1994.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբգարյան Երջանիկ 60, 233, 287, 302, 450, 452, 500
Աբեղյան Մանուկ 17
Աբովյան Խաչատուր 182
Աբրահամյան Խորեն 306
Աբրահամյան Կ. 138
Աբրահամյան Հրանտ 14, 31
Ադոնց Նիկողայոս 367
Ազիզբեկյան Ռուբեն 13, 105, 106, 571
Ազնավուր Շառլ 227, 565
Աթաբեկով Ի. Գ. 54
Աթաջանյան Վալերի 403
Աթոյան Ռոբերտ 279
Ալիեւ Հեյդար 40
Ալյոշինա Յու. Ե. 313
Աղալովյան Լենսեր 39, 109
Աղայան Էդուարդ 60
Աղայան (քննիչ) 236, 237
Աղանբեկյան Աբել 32
Աղաջանյան Ռոլեռ 36
Աճառյան Հրաչյա 26
Այվազյան Վիկտոր 450
Այվազյան Վիտյա 287, 500
Անանիկյան Լեւոն 500
Անդրանիկ (զորավար) 367
Անղալադյան Ռուբեն 60
Առաքելյան Արտաշես 60
Առաքելյան Յու. 67
Առաքելյան Վարագ 108
Առուշանյան Բորիս 36
Ավագյան Ջ. 197
Ավետիսյան Ժոզեֆ 60
Ավետիքյան Հակոբ 334
Ավունդյան Ալեքսան 79
Արաբո 367
Արարքցյան Բաբկեն 105, 121, 137, 230, 277, 290, 317, 382, 391, 447, 454, 456
Արզումանյան Ալեքսանդր 302, 450
Արեւշատյան Սեն 109
Արծրունի Սարգիս 16
Արշակյան Ա. 39
Արշակյան Աղասի 452
Աֆանասեւ («Պրավդայի» խմբագիր) 77
Աֆանասեւ Յուրի 313

Բ

Բաբայան Սեմյոն 319
Բաղամյանց Վալերի 263, 278, 283, 312
Բալայան Ջորի 11, 39, 45-46, 47, 48, 66, 88, 91- 94, 102, 109-110, 118, 128, 185, 247, 254, 369, 387, 400, 418, 420, 429, 481, 519, 526
Բալայան Վազգեն 32
Բակատին Վադիմ 218, 320, 455
Բաղդասարյան Ալբերտ 231, 279, 287, 302, 446
Բաղդասարյան Գագիկ 85
Բաղդասարյան Էդուարդ 60
Բաղդասարյան Ռոբերտ 36
Բաղիրով Ջ. 36, 37, 114
Բանուչյան Արշակ 60
Բատկին Լեոնիդ 311, 313
Բարխուդարյան Վլադիմիր 109
Բեգլարյան Հրաչյա 36, 239
Բերդիչեւսկի Մ. 573
Բիչախչյան Դավիթ 289
Բլեյան Աշոտ 85, 500
Բլեյք Բիլ 317
Բեյքեր Ջեյմս 318
Բորովիկ Գ. 76, 85
Բուշ Ջորջ 530
Բուրցեւ Յու. Ա. 236-237, 308

Գ

Գաբրիելյան Գուրգեն 36, 239
Գալստյան Ժաննա 33, 36
Գալոյան Գալուստ 243, 245, 281, 306, 331, 337, 423, 527
Գալստյան Համբարձում 10, 14, 36, 39-40, 41, 91, 104-105, 137, 204, 228, 232-233, 236, 243, 245, 277, 306, 446, 500, 565, 573
Գալստյան Սվետլանա 121
Գամազյան Գալուստ 60
Գայայեան Եղիա 12
Գառնիկյան Աիդա 315
Գասպարյան Լեո 39, 109
Գեղամյան Արտաշես 79, 141
Գերաս Ժան 102, 256
Գարեգին Ա (կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո) 339
Գեորգիսյան Մովսես 11, 146, 286, 289, 445
Գեորգյան Նիկոլայ 60
Գեորգյան Սամվել 39, 91, 104, 105, 137, 172, 230, 391, 446, 450, 500
Գյոնջյան Արշավիր 334, 339
Գոզման Լ. Յու. 313
Գորբաչով Միխայիլ 22, 31, 40, 45-48, 51-52, 67-68, 74, 77, 89, 111, 118, 156-158, 185, 200, 208, 218, 228-229, 236, 239, 241, 245, 254, 256-257, 267, 306-307, 313, 315, 317, 321-322, 397, 401, 406, 431, 443, 455, 524, 527, 530, 550, 552-553, 561, 566, 568, 572
Գրիգորյան Արամ 77
Գրիգորյան Արծվին 306
Գրիգորյան Էմանուել 86
Գրիգորյան Համլետ 36
Գրիգորյան Ստեփան 79
Գրիգորյան Վաչագան 397, 403
Գրիգորյան Վլադիմիր 12, 33, 78, 84, 91, 104, 126, 242, 243, 294
Գրիգորյանց 75
Գրոմիկո Անդրեյ 68, 85, 218

Դ

Դաբաղյան Աշոտ 233, 450
Դադամյան Բորիս 374, 400, 525
Դավթյան Վահագն 204

Դավթյան Վարդգես 542
Դալլաքյան Կարլեն 112, 264, 442
Դավոյան Ռազմիկ 310, 367
Դեմիչեւ Պյոտր 32, 37
Դեմիրճյան Կարեն 42, 46, 51, 67, 104, 112, 114, 359
Դյատլով Ի. 319
Դոլգիխ Մ. 41, 42, 46, 114
Դոքմեջյան Ջորջ 158, 227, 565
Դրո 28
Դուդին Մ. 156

Ե

Եգորյան Էդուարդ 79
Եգորովա Մ. Ս. 313
Եսիկոլոպով Ն. Ս. 54
Ենոքյան Գոհար 527
Եպիսկոպոսով Ռոմեն 279
Երեմյան Սուրեն 200

Ջ

Ջավարյան Սիմոն 366
Ջարոբյան Հակոբ 31
Ջաքարյան Լուսինե 200
Ջաքարյան Խաչիկ 138
Ջոլյան Սուրեն 85
Ջոհրապ Գրիգոր 366
Ջուռնաչյան Վարդան 500

Է

Էլեն Կարեր դ' Անկոս 3, 570,
Էտկինդ Ա. Մ. 313,
Էմին Գեւորգ 200, 366,

Թ

Թաթիկյան Շահեն 128
Թախտաջյան Ա. 156
Թամանյան Ալեքսանդր 60
Թամրազյան Հրաչ 60, 200
Թարխանյան Արթուր 60
Թոմաս դե Վալ 117
Թովմասյան Վլադիմիր 11, 319, 403, 473
Թումանյան Հովհաննես 366
Թումյան Հարություն 27, 28, 30, 31
Թուրիկյան Հրաչ 345

Ժ

Ժվանիա Ջուրաբ 565

Ի

Իշխանյան Ավետիք 233, 287, 302, 500
Իշխանյան Եղիշե 27-28
Իշխանյան Ռաֆայել 104, 108, 190, 421, 500
Իշխանյան Վահան 391
Իշխանյան Վարդուհի 104
Իսրայելյան Սերգեյ 86, 306

Լ

Լազարյան Տեր-Հուսիկ 500
Լախտին Վ. 55
Լաճիկյան Սամվել 60
Լենին 40, 207, 509, 535
Լեվադա Յու. Ս. 313
Լիբերման Ջոզեֆ 3, 570, 571
Լիգաչով Եգոր 89, 117

Լիպարիտյան Ժիրայր 11, 14, 259, 265
Լոբով Օլեգ 278, 281, 283, 371, 462
Լվով Անդրե 317
Լուկյանով Ա. 41, 218, 234, 526

Խ

Խաչատրյան Հրանտ 382
Խաչատրյան Կարեն 14, 31
Խաչատրյան Լյուդվիգ 310
Խաչատուրով Տ. Ս. 54
Խանզադյան Սերո 39, 60, 244, 310, 365, 366, 527
Խանջյան Աղասի 31
Խոջաբեկյան Վլադիմիր 13, 457
Խոջամիրյան Յու. 390
Խորենացի Մովսես 17
Խրուշչով Նիկիտա 31
Խուրշուդյան Լենդրուշ 109, 186, 369, 425, 510

Կ

Կադիմիրով Ջ. 67
Կալուգին Օլեգ 183, 446
Կանայան Բագրատ 279
Կանավալով Վ. 35
Կապուտիկյան Սիլվա 11, 39, 45-48, 66, 77, 88, 91- 96, 102, 109-110, 112, 141, 146, 148, 184, 186, 189, 254, 265, 310, 343, 366, 442
Կասյան Սարգիս 29
Կատուսեւ Ա. Ֆ. 42
Կարագուլյան Մ. 316
Կարապետյան Արամայիս 77
Կարապետյան Արկադի 36
Կարապետյան Շավարշ 204
Կարապետյան Ս. 286
Կերկերյան Ժիրայր 315
Կեւորկով Բորիս 35, 36, 37
Կիրակոսյան Ալբերտ 310
Կիրակոսյան Ալեքսան 60
Կիրակոսյան Ջոն 367
Կոզմանյան Արա 60
Կոչետկով Յու. 208, 278
Կրյուչկով Վ. 218, 263
Կուպրեեւ Ս. 319,

Հ

Հակոբյան Ալեքսան 10, 39, 91, 104, 105, 107, 108, 112, 231, 331, 357, 500
Հակոբյան Դանիել 289
Հակոբյան Թաթուլ 36
Հակոբյան Հակոբ 369, 510
Հակոբյան Ս. 286
Հակոբյան Սմբատ 287, 302, 500
Հակոբյան Վարդան 36, 239
Համբարձումյան Սերգեյ 60
Համբարձումյան Վիկտոր 39, 60, 110, 112, 307, 374
Հայրիկյան Պարույր 75, 146, 264, 300, 445, 446, 512
Հարությունյան Գ. 332
Հարությունյան Գրիգոր 31
Հարությունյան Լյուդմիլա 49
Հարությունյան-Կոզակ Բելլա 310
Հարությունյան Հուսիկ 204, 236, 300
Հարությունյան Շանթ 119
Հարությունյան Սեթ 17

Հարությունյան Սուրեն 112, 114, 117, 121-122, 126-127, 130, 148, 202, 207, 209, 232, 245, 263, 278, 280, 282, 292, 294, 299, 303, 306, 309, 330, 334-336, 343-344, 361, 363, 368, 371, 436-437, 438, 441-, 443, 462, 483, 508, 511, 516, 518, 521, 527, 551
Հարությունյան Վահան 14, 35, 38, 53, 55, 114-115, 129, 157, 198, 213, 320-321, 401-402, 453-454, 525-526, 530, 551, 554, 566
Հոնեկեր 572
Հովհաննիսյան Աղասար 60
Հովհաննիսյան Արամ 500
Հովհաննիսյան Արմեն 39, 91, 148, 343
Հովհաննիսյան Էդգար 12, 55, 158, 246
Հովհաննիսյան Էդիկ 563
Հովհաննիսյան Հենրիկ 500
Հովհաննիսյան Հ. 36, 366
Հովհաննիսյան Հրաչյա 85, 306, 366

Ղ

Ղազարյան Արշակ 60
Ղազարյան Ռաֆայել 10, 39, 48, 104-105, 128, 207, 233, 245, 287, 298, 317, 391, 394, 456, 500,
Ղազարյան Սամսոն 39, 91, 104-105, 130, 137, 231, 298, 500
Ղամբարյան 197,
Ղարիբջանյան Բագրատ 75, 369
Ղարիբյան Աշոտ 60
Ղափլանյան Հրաչյա 60, 86

Մ

Մագուն Վ. Ս. 313
Մաթեւոսյան Արտաշես 25
Մաթեւոսյան Հրանտ 310
Մաթեւոսյան Սեյրան 60
Մալխասյան Ժիրայր 265, 315
Մախլուտո 367
Մակաշով 137, 230, 306
Մակարով Ան. 245, 307
Մահե Ժան Պիեռ 316
Մայիլյան Արամ 500
Մանասյան Գառնիկ 125
Մանյակին Ս. Ի. 398, 523, 525, 526
Մանսուրյան Տիգրան 200
Մանուկյան Էմանուել 86
Մանուկյան Լուզ Սիմոն 347
Մանուկյան Վազգեն 11, 39, 41, 64, 91, 104-105, 107, 121, 127, 146, 172, 190, 208, 230, 290, 317, 391, 419, 433, 500-501, 537
Մանուչարյան Աշոտ 39, 85, 91, 104-105, 112-113, 119, 121, 147, 204, 210, 218, 233, 239, 245, 298, 344, 391, 394, 426, 440, 500, 565
Մանուչարով Արկադի 35-36, 208, 233, 310, 320, 394-395, 458
Մարգարյան Ա. 286
Մարգարյան Հայկ 452
Մարգարյան Մարո 200, 310
Մարգարյանց Վլադիմիր 223, 278, 330, 384, 473, 499

Մարյան Միշել 315
Մարտիրոսյան Ազատ 387, 452
Մարության Հարություն 14, 565, 573
Մարության Վալերի 36
Մարուխյան Հրայր 262-263, 343, 365, 432, 433, 439, 442
Մաքսիմով Վ. Վ. 56
Մեդվեդեւ Ռոյ 156
Մելիք-Հակոբյան Ս. 14, 33, 343, 344, 433
Մեհրաբյան Ղուկաս 79
Մեսրոպյան Սեդա 2
Մետլոկ Ջ. 566
Մերսյե Ֆ. Ռ. 14, 180, 251, 254, 255, 265, 266, 570
Միխայլով Վ. 32
Միխնիկ Ադամ 565
Մինասբեկյան Մ. 197, 281, 291
Մինասյան Հայկ 60
Մինասյան Կայծ 34
Միշին Վ. 319
Միտերան Ֆրանսուա 157, 256, 316, 345,
Միրզոյան Էդուարդ 86, 306
Միրզոյան Մաքսիմ 36
Միրսկի Գ. 160
Մկրտչյան Անատոլի 204
Մոլոտով 405
Մովսիսյան Ցուրի 500
Մովսիսյան Ռ. 123
Մովսիսյան Վլադիմիր 198, 382
Մորիկյան Այդին 500
Մսըրլյան Ջավեն 29, 31
Մութալիբով 55
Մուրադյան Իգոր 35, 38-40, 47-48, 66, 83, 87, 91, 93-95, 102-104, 108-111, 113, 118-119, 121, 190, 277, 310, 440
Մուրադյան Կլեր 273
Մուրադյան Սարգիս 39, 60, 298, 310

Ց

Ցազրճյան Գեւորգ 12, 273
Ցակովլեւ Ա. Ն. 46, 48, 114, 160, 234, 239, 263
Ցաշին Վ. 36
Ցարուզելսկի 571
Ցուզբաշյան Մ. 262, 263, 278

Ն

Նազարյան Վլադիմիր 128, 148, 218, 236, 283, 306, 313, 331
Նազիմովա Ա. Կ. 313
Նահատակյան Համլետ 298
Նարիմանով Նարիման 29, 30
Ներսիսյան Գագիկ 452
Ներսիսյան Ցուրի 11, 36
Նժդեհ Գարեգին 28, 30
Նոտկինա Տ. Ա. 313

Շ

Շաբան-Դելմաս Ժակ 317
Շահազիզյան Սիմոն 60
Շահինյան (ՀԽՍՀ ՆԳ նախարար) 78
Շահինյան Կարեն 60
Շահմուրադյան Սամվել 47, 52, 66, 104

Շահնազարյան Դավիթ 233, 287, 302, 391, 450
Շահումյան Ամալյա 180
Շատալին Վ. 455
Շեկոյան Արմեն 200, 310
Շեյնիս Վ. Լ. 313
Շիշով Հ. Դ. 56
Շիրազ Արա 86, 306
Շիրակ Ժակ 157, 316

Ո

Ոսկանյան Հրանտ 112, 130, 197, 209-210, 307, 329-330, 344, 458, 527, 534

Չ

Չաուշ Գեւորգ 367
Չաուշեսկու 572
Չեբրիկով 234
Չելիկովա Վ. Ա. 313
Չեքիջյան Հովհաննես 39, 130
Չորմիսյան Լեւոն 260

Պ

Պապայան Ռաֆայել 500
Պապոյան Արտուշ 60
Պետրոսյան Հմայակ 369
Պետրոսյան Մանուշակ 60
Պետրոսյան Շահեն 279, 391, 500
Պետրոսյան Պ. 186
Պետրոսյան Ռազմիկ 36
Պետրոսյան Վարդգես 60, 366
Պիշչեւ 329
Պլասով Վ. 319
Պոբերեժնի Վ. 320
Պողիկյան Աբրահամ (Աբո) 379
Պողոսյան Արթուր. 111, 136, 140
Պողոսյան Ալբերտ 79
Պողոսյան Էդուարդ 573
Պողոսյան Վ. 156
Պողոսյան Հենրիկ 37, 126, 127, 320
Պողոսյան Սամվել 452
Պողպատյան Գրիգոր 60
Պոպով Գավրիլ 465
Պրիստավկին Անատոլի 313
Պուգաչով 108

Ջ

Ջաֆարով Վ. 319
Ջրբաշյան Էդվարդ 109, 366
Ջուզեպե Բոֆա 570

Ռ

Ռազումեեւ Է. 55
Ռազումովսկի Գ. Պ. 37, 114, 234
Ռեկունկով 85
Ռեյգան Ռոնալդ 118
Ռիբենտրոպ 405
Ռիժկով Նիկոլայ 232, 304, 571
Ռոզենբաում Ա. 295
Ռոստ Ցուրի 311

Ս

Սաղոյան Արշակ 124, 231, 286-287, 298, 302, 382, 391, 500
Սախարով Անդրեյ 22, 156, 258, 289, 311-313, 401, 465, 542
Սահինյան Անահիտ 310
Սանասարյան Հակոբ 391

Սավիսաար Էդգար 253, 565
Սարգսյան Աշոտ 2, 15, 17, 27, 28, 60
Սարգսյան Ա. Գ. 54
Սարգսյան Արամայիս 77
Սարգսյան Գագիկ 7, 109
Սարգսյան Լեւոն 121
Սարգսյան Մանվել 39, 91, 105
Սարգսյան Սերժ 518
Սարգսյան Սոս 39, 66, 109, 148, 187-188, 200, 204, 298, 301, 310, 440
Սարգսյան Սուրիկ 79
Սարգսյան Վազգեն 452, 500
Սարգսյան Վիգեն 315
Սարգսյան Ֆաղեյ 278
Սարդարյան Կտրիճ 500
Սարկիսով Մ. Ռ. 54
Սարուխանյան Վաչե 39, 91, 104
Սաֆարյան Գագիկ 38, 39, 91
Սաֆարյան Խաչիկ 108
Սաֆոնով Վ. 453
Սեդրակյան Ռուբեն 121
Սեպուհ (զորավար) 28
Սերոբ Աղբյուր 367
Սիդորով Վ. 319
Սիմոնյան Կարեն 186, 280, 298, 301, 310
Սիմոնյան Հրաչիկ 15, 109, 113, 369, 425, 501, 549
Սիրադեղյան Վանո 39, 47, 71, 91, 104-105, 128, 137-138, 147, 231, 236, 301, 317, 391, 446, 454, 458, 492, 495, 497, 501
Սլեզկո Պ. 55
Սլյունկով 46
Սոբչակ Անատոլի 552
Ստամբոլցյան Խաչիկ 60, 137, 199, 200, 203-204, 231, 239, 310, 331, 357, 391, 394, 427, 452, 501,
Ստարովոյտովա Գալինա 289, 301, 311, 312, 313
Ստեփանյան Գեւորգ 573
Ստեփանյան Հովհաննես 79
Ստեփանյան Մելիք 121
Ստեփանյան Նելսոն 398
Սրապիոնյանց Ռ. Ա. 54
Սուխարեւ Ա. 313, 364, 456
Սուքիասյան Սահակ 315

Վ

Վազգեն Ա կաթողիկոս 141
Վանոյան Մ. 286
Վասիլկով Ա. 75
Վասիլյան Ալեքսանդր 277
Վարդանյան Դավիթ 105, 233, 391, 454, 501
Վարդանյան Կամո 112, 116, 186, 501
Վարդյան Ռոս 318
Վարուժան Դանիել 366
Վեզիրով Ա. Խ. 114, 126, 202, 486
Վեյ Սիմոնա 317
Վոլսկի Արկադի 144, 195, 210, 220, 234, 319, 396, 453, 473
Վոսս Ա. 144, 202
Վորոնին Լ. 464
Վրացյան Սիմոն 28, 29

Տ

Տասնապետյան Հրաչ 262, 432

Տարազեաիչ 525, 526
Տեր-Գաբրիելյան Սահակ 28
Տեր-Մինասյան Անահիտ 272, 273
Տեր-Մինասյան Ռուբեն 273
Տերեբիլով 208
Տեր-Պետրոսյան Լեոն 3, 10, 25, 60, 72, 73, 76, 85, 105, 107, 125, 129, 131, 137, 147, 151, 156-157, 162, 172, 191, 193-194, 197, 203, 208, 212, 230, 277, 280, 287-289, 298-299, 316-317, 342, 344, 369, 382, 391, 393-394, 419-420, 433, 439, 440, 481, 499, 501, 514, 533-534, 537-542, 573,
Տեր-Պետրոսյան Լյուդմիլա 308
Տեր-Ստեփանյան Քրիստիան 260, 315
Տիտով Վ. Ա. 237
Տոնապետյան Պատրիկ 315
Տրուշին Պ. Վ. 42, 130

ՈՒ

Ուզունյան 334
Ուլուբաբյան Բագրատ 15, 112, 156, 239
Ուլուբաբյան Հրայր 39, 91
Ուտիե Բեռնար 316

Փ

Փափազյան Միհրան 265, 345

Ք

Քեռի 367
Քոթանջյան Հայկ 112, 359, 371
Քոլ Հելմուտ 572
Քոչարյան Ռոբերտ 35, 36, 394, 501, 518
Քրքորյան Քըրք 227

Օ

Օլեյնիկ Բ. Ի. 400
Օկուջավա Բուլատ 313
Օվչարենկո Գ. 67, 75
Օվչյան Բենիկ 36
Օրուջեւ 55, 56
Օրջոնիկիձե Սերգո 28

Ֆ

Ֆոտեեւ Վ. 528,

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ցանկի մեջ ներառնված չեն առավել շատ հաճախ հանդիպող՝ Խորհրդային Միություն (ՍՍՀՄ, ԽՍՀՄ), Մոսկվա, Հայաստան (ՀՍՍՀ, ՀԽՍՀ), Երեւան, Լեռնային Ղարաբաղ (ԼՂԻՄ, Արցախ), Ադրբեջան (Ադրբեջանական ՍՍՀ, ԽՍՀ) անվանումները:

Ա

Աբովյան (շրջան, քաղաք) 38, 289, 389
Ազատության հրապարակ 43, 86, 117, 119, 123, 125, 127, 128, 130, 139, 357, 446
Աթենք 441
Ալավերդի 370
Աղդամ 36, 37, 198, 202, 397
Աղվանք 25
Ամասիայի շրջան 213,
Ամերիկա 226,
ԱՄՆ 227, 333, 379, 401, 511, 512, 530, 561, 565, 567
Ամստերդամ 14
Անդրկովկաս 156
Աշտարակի շրջան 117
Ապարանի շրջան 117
Առան 25
Առանի Պաղին (գավառ) 25
Ասկերան 27, 37, 38, 58, 202
Ավստրալիա 347
Արարատի շրջան 213, 214, 454
Արեւելյան Եւրոպա 167, 238, 246-247, 257, 259, 270, 332, 357, 405, 501, 568, 570- 572, 580
Արեւմտյան Եւրոպա 315
Արեւմտյան Գերմանիա 572
Արեւմտյան Հայաստան 72, 98, 210, 217, 439, 479
Արտաշատի շրջան 215, 220
Աֆղանստան 21, 568,

Բ

Բաղրամյանի շրջան 117,
Բաղրամյան պողոտա 86, 125
Բայկանուր 256
Բաշկիրիա 419
Բաքու 35, 66, 86, 114-117, 145, 214-217, 224, 396, 399, 525, 528
Բեյրութ 31, 264
Բեռլին 3, 572, 573
Բերդաձոր 397
Բյուրական 43, 60, 127
Բորդո 317
Բուլղարիա 572

Գ

Գետաբեկ 216
Գետաշեն 216, 452, 470-471, 535
Գերմանիա 572
Գորիսի շրջան 213, 226, 382, 454, 456

Գրենոբլ 317
Գուշչուլա 321,

Դ
Դաշքեսան 215, 216, 224
Դեղձուտ 215
Դետրոյթ 347
Դոնբաս 407

Ե
Եղեգնաձորի շրջան 213, 454
Եղծահող 397
Երասխ 254, 459
Եւրոպա 226, 227

Զ
Զանգեզուր 26, 29, 30, 425
«Զվարթնոց» օդանավակայան 136-138, 140, 450, 502

Է
Էջմիածին 217, 225
Էստոնիա 173, 182, 211, 251, 314, 406, 449

Թ
Թաթարիա 419
Թալինի շրջան 117
Թատերական հրապարակ (տե՛ս Ազատության հրապարակ)
Թբիլիսի 295, 323, 365
Թուրքիա 29, 98, 176, 185, 215, 217, 363, 419, 420, 439, 503, 510

Ժ
Ժնեւ 271, 272, 318

Ի
Իջեւանի շրջան 118, 454
Իրան 515

Լ
Լաչինի շրջան 213, 226, 382, 399, 473
Լատվիա 314, 315, 406, 499
Լիբանան 267, 333, 365
Լեհաստան 44, 568
Լենինական 125, 220, 223, 229, 299, 386
Լենինգրադ 156, 407, 499, 551
Լենինի հրապարակ 293
Լիոն 317
Լիտվա 314, 406
Լոզան 98
Լոնդոն 32

Խ
Խանլար 215, 224
Խոջալու 198, 202, 203

Ծ
Ծաղկաձոր 389, 397
Ծիծեռնակաբերդ 81, 290, 324

Կ
Կալիֆորնիա 227
Կամո 220, 452
Կանադա 265, 267, 317, 333, 345
Կապան 456

Կարսի մարզ 374
«Կասկադ» 87
Կենտրոնական Եւրոպա 3, 571
Կիլիկիա 225
Կիպրոս 562
Կիրով 397
Կիրովաբաղ 58, 115, 210, 213, 215-216, 219, 224, 455
Կիրովական 126, 220, 223, 370, 389
Կրկժան 398, 400
Կուզբաս 407

Հ
Հադրութ 399, 452
Հայր Մակար (լեռ) 25
Հելսինկի 505
Հյուսիսային Արցախ 535
Հրազդան (շրջան, քաղաք) 22, 117, 220, 388, 389
«Հրազդան» մարզադաշտ 139
Հունստան 256
Հունգարիա 44, 499, 568, 572

Ղ
Ղազախի շրջան 118, 459,
Ղազանչեցվոց եկեղեցի 398,
Ղաշչուլար 398,
Ղրիմ 24,

Մ
Մալիբեյլի 202, 321, 398
Մաշտոցի շրջան 289
Մասիսի (շրջան, ավան) 136, 142, 195, 213, 215, 295, 387, 450
Մարշալ Բաղրամյան (կայարան) 23, 119
Մարսել 272
Մարտակերտ 382, 399, 452
Մարտունի (ԼՂ) 202, 398, 403
Մերձբալթյան հանրապետություններ 156-157, 179, 254, 257, 314, 317, 352, 361, 405-406, 407, 411, 449, 466, 495, 501, 555, 565, 576
Միջին Ասիա 419
Մոնպելյե 317

Ց
Ցակուտիա 419

Ն
Նախիջեւան 29, 74, 103, 213, 251, 399, 425, 446, 459, 476, 479
Նաիրիի շրջան 117
Նիկոսիա 12

Շ
Շահումյանի շրջան (ԼՂ) 445, 453, 470, 471, 535
Շամխոր 23, 58, 213, 215, 216
Շիդլու 215
Շիրազլու 215
Շիրակամուտ 228
Շոշ 398
Շվեյցարիա 271
Շուշի 27-28, 114, 143, 196, 198, 202, 214, 214, 397, 398-399, 455

Զ
Զարդախլու 23
Զարենցավան 220, 276, 289, 395
Զեխոսլովակիա 44, 568, 572
Զեռնոբիլ 21, 303

Ռ
Ռուսաստան 3, 12, 77, 116, 139, 142, 176, 188, 192, 311, 318, 365, 401, 407, 546, 571

Ս
Սեւանա լիճ 22, 302, 388, 389
Սիդնեյ 348
Սիսիանի շրջան 117, 456
Սիրիա 511
Սպանդարյանի շրջան 277
Սպիտակ 223, 228
Սովետաշեն 331
Ստեփանակերտ 11, 27, 31-32, 35-36, 53, 56, 93, 114-115, 127, 198-199, 201-202, 382, 398-399, 399-400, 447, 455-456, 472-473, 526, 529, 533
Ստեփանավան 223
Սումգայիթ 44, 50-51, 53, 58, 62, 72, 77, 86, 95, 116, 127, 138-139, 203, 207, 214, 256, 289-290, 371, 502

Վ
Վայքի շրջան 213
Վաշինգտոն 14, 318, 347
Վարարակն 27
Վիեննա 505
Վիլնյուս 406
Վորկուտա 407
Վրաստան 26, 352, 361, 407, 466, 565

Տ
Տալլին 406

ՈՒ
Ուկրաինա 565

Փ
Փարիզ 14, 32, 34, 272, 316, 317, 347, 433, 443
Փոքր Ասիա 210

Ք
Քանաքեռ 388
Քարին տակ 397

Օ
Օսմանյան կայսրություն 72, 98, 209, 363, 431

Ֆ
Ֆրանսիա 256, 270, 272, 316-317, 344-345, 443, 499

HISTORY OF THE KARABAGH MOVEMENT, 1988-1989

Nagorno-Karabagh, a region predominantly populated by ethnic Armenians, was transferred to Azerbaijan in a status of an autonomous region (province) in 1921, as a result of an arbitrary decision by Stalin. The Armenian population of Karabagh never reconciled with that fact, especially because of the ethnic discrimination it had to endure. Neither did Soviet Armenia accept the status quo as its leaders periodically appealed to Moscow pleading for the transfer of the region's jurisdiction to Armenia.

The issue exploded anew under Gorbachov's policy of "Perestroika". On February 20, 1988, the NKAO regional legislature adopted a resolution, applying to Armenian, Azerbaijani and Soviet Supreme Councils for transferring the province from Azerbaijani to Armenian jurisdiction. This was the first such case in the history of the Soviet regime, when a constitutional body of the local authorities adopted an independent, bottom-up decision, circumventing the higher rungs party and state hierarchy and indeed defying them despite their hardline position on the issue. A nationwide movement soon emerged in Nagorno-Karabakh and Armenia, with large-scale demonstrations and strikes with the number of demonstrators reaching 700,000 in the span of a few days.

With deception and force used in response, Moscow succeeded in suppressing the demonstrations for a while. Shortly thereafter, having found itself in a deadlock, the first generation of the Movement's leaders split along the lines of two strategies: one was the strategy of trusting Moscow's good will; the other was the strategy of adopting a more nationalistic stance. A third strategy, which rejected both dead-ends of appeasing Moscow and turning toward nationalism, and which embraced democratization as the core agenda soon emerged and became dominant.

The problem of Karabagh was subsumed in it as one of self-determination and human rights. The Karabagh Movement Committee of Armenia ("Karabagh Committee"), which had 11 members, and which led the Movement till the end was formed on the basis of this platform.

Further developing the democratic quality and organizational mechanisms that the movement had acquired during the preceding months, the Committee laid out a political program and a new structure named the Armenian National Movement (ANM). On August 19, 1988, the ANM platform was published to become the first in the history of the USSR in terms of challenging the Soviet political system with its broadly democratic principles. As such, it was also a sound indication of the Committee members' political audacity and their willingness to accept personal risks. The platform, rejecting the political primitivism and traditional notions of irredentist nationalism, was the first in the Armenian reality as well, having been created in Armenia and being commensurate with the nation's potential and resources.

Under the leadership of the "Karabagh" Committee, the Armenian democratic movement, remaining within the framework of the existing Constitution and laws, succeeded in:

- turning the constitutional body of the highest authorities in power – the Supreme Council, which for 70 years had served as the smokescreen for the communist one-party state into a relevant insitution and forcing it to adopt dozens of decisions;
- achieving a situation for lengthy periods of time when it shared power, even performing functions of the executive;
- succeeding in forcing the authorities to allow competitive elections and having its own representatives elected to the Supreme Council;
- convening a full session of the Supreme Council in its headquarters in the face of the resistance of the authorities and adopting resolution;
- successfully resisting the propaganda attacks and the coercion of republican and central authorities, as well as their henchmen and allies.

As a result, the Armenian democratic movement gained unprecedented international recognition and support, including on the issue of unifying Nagorno-Karabagh with Armenia. Moscow had no choice but to release the leaders of the Movement imprisoned at the end of 1988 following a six month detention, in part thanks to the vigorous pressure from the international community.

The movement's solitary six-month struggle against the Soviet regime and the effectiveness of the methods it used in 1988-1989 gave an impetus to and paved the way for the other liberation movements in the USSR and Eastern Europe. Up until the collapse of the USSR, the Armenian democratic movement remained an important actor, leaving its imprint on world history and international politics - a fact recognized at the time also by famous foreign political scientists, academics, and politicians.

ИСТОРИЯ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ, 1988-1989

Нагорный Карабах, компактно населенный армянами край, в силу сталинского произвола с 1921 года был присоединен к Азербайджану в качестве автономной области. С таким положением никогда не смирилось армянское население Карабаха, особенно по причине осуществляемых здесь притеснений на национальной почве. С этим также не смирились и в Советской Армении, руководители которой время от времени обращались к Москве по вопросу присоединия Нагорного Карабаха к Армении.

В условиях горбачевской «Перестройки» проблема взорвалась. 20 февраля 1988 года Областной Совет народных депутатов Нагорно-Карабахскй автономной области принял постановление обратиться к Верховным Советам Армении, Азербайджана и СССР с ходатайством о выводе НКАО из состава Азербайджана и передачи его в состав Армении. Это стало первым случаем в истории Советской партократии, когда законодательный орган власти принял самостоятельное решение «снизу», в не зависимости от вышестоящих партийных и советских органов и вопреки чинимым ими жестким препонам. В Нагорном Карабахе и Армении началось всенародное движение, сопровождающееся повсеместными политическими забастовками и изо дня в день проводимыми митингами, число участников которых уже через несколько дней достигло 700000.

Уловками и силовыми методами Москва сумела на время пристановить митинги. Спустя некоторое время, в кажущейся тупиковой ситуации, в первом руководстве Движения сформировались два подхода: с одной стороны, довериться Москве и прекратить Движение; с другой – перевести его в русло ярко выраженного национализма. Победил третий подход: отвергая ведущие к действительному тупику курсы на соглашательство или нациоанализм,

поставить в повестку дня всенародного движения полный комплекс всеобщих вопросов демократии, и в этом ключе поднять проблему Карабаха, как вопрос самоопределения и Прав Человека. На этой базе в конце мая 1988 года был сформирован состоящий из 11-ти членов «Комитет Карабахского Движения Армении» («Комитет Карабах»), который и бессменно возглавлял Движение.

Развивая приобретенные в предыдущие месяцы демократические качества и организационные механизмы, Комитет разработал политическую программу и создал политическую структуру – «Армянское Общенациоальное Движение» (АОД). 19 августа 1988 года была опубликована Программа АОД, которая своей широкой демократической платформой стала открытым вызовом политическому строю СССР и явилась первой подобной в его истории. Будучи таковой, она также стала свидетельством политического мужества членов Комитета и осознания ими личного риска. Эта программа, отказывающаяся от политического примитивизма и традиционного ирредентизма, беспрецедентна и для армянской действительности – программа, созданная в самой Армении и с учетом потенциала ее народа и имеющихся ресурсов.

Под руководством Комитета «Карабах», Армянское демократическое движение, оставаясь при этом в рамках действующих законов и Конституции, сумело:

- задействовать высший законодательный орган власти – Верховный Совет (который на протяжении всех 70-ти лет являлся лишь ширмой для коммунистической партии) и посредством его принять десятки постановлений;
- на протяжении длительного времени не раз достичь продолжительного положения двоевластия, осуществляя при этом функции и исполнительной власти;
- добиться проведения альтернативных выборов и иметь своих представителей в Верховном Совете;
- вопреки властям созвать в своей штаб-квартире полноценное заседание Верховного Совета и принять ряд решений;

- успешно противостоять центральным и республиканским властям, пропагандистским и силовым атакам их ставленников и союзников и выйти победителем в этой борьбе.

Всем этим Армянкое демократическое движение получило беспрецедентное мировое звучание и сыскало международную поддержку – вплоть до содействия по вопросу присоединения Нагорного Карабаха к Армении. Москва была вынуждена, спустя всего шесть месяцев, освободить арестованных в конце 1988 года руководителей Движения, в том числе благодаря и мощному давлению со стороны международного сообщества.

Армянское движение, ведущейся им в одиночку целых шесть месяцев борьбой с советским режимом, как и эффективностью используемых в 1988-89гг. методов, послужило импульсом и проложило дорогу освободительным движениям народов СССР и Восточной Европы.

Вплоть до развала СССР, Армянское демократическое движение своей ролью и воздействием на происходящие переломные геополитические события, являлось действенным фактором, влияющем на мировую историю – реалия, которую в свое время отмечали также известные политологи, ученые и политические деятели зарубежных стран.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

Առաջին բաժին. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ՎԵՐԱՃՈՒՄԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 19

1. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ 21

ա) Խորհրդային Միության մայրամուտը 21
բ) Լեռնային Ղարաբաղի հարցի համառոտ նախապատմությունը 24
գ) Խնդրի բարձրացման նախապատրաստական շրջան 31
դ) ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը, Շարժման պոռթկումը Հայաստանում 35
ե) Փետրվարյան հանրահավաքների խաբեությամբ կասեցումը 44
զ) Սումգայիթյան ոճրագործությունը 49
է) Շարժումը հանգցնելու միջոցառումներ 53
ը) Պայքարի շարունակումը Հայաստանում առանց հանրահավաքների 57
թ) Հանրահավաքների նոր ալիքի կանխումը 65
ժ) Անհավասար քարոզչական գոտեմարտը 71
ժա) Շարժումը ոչնչացնելու իշխանության ջանքերը 77

2. ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ 83

ա) Մայիսմեկյան ցույցը, հանրահավաքների վերականգնումը 83
բ) Նոր իրավիճակը՝ զգաստացման ու վերանայումների հիմք 88
գ) Շարժման առաջին ղեկավարությունը 90
դ) Ղարաբաղի խնդրի ընկալման՝ Շարժման ուղեգծի հստակեցման խաչմերուկում 96
ե) Շարժման նոր ղեկավարությունը. «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե» 101
զ) Հանրապետության ղեկավարության փոփոխությունը 111
է) Համաժողովրդական ճնշման մեծացումը, հիմնական հարցերը 114
ը) Շարժման առաջին նշանակալի նվաճումը. ԼՂԻՄ դիմումին համաձայնություն տալու՝ ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 15-ի որոշումը 119
թ) Շարժման դեմ սադրանքներ, «Ջվարթնոց» օդանավակայանի դեպքերը 134
ժ) ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի որոշումը, Շարժումը խեղդելու հերթական փորձը 142
ժա) ՊԱԿ-ը՝ որպես կոմկուսի իշխանության պատվար 152

ժբ) Ղարաբաղյան շարման արձագանքներն առաջին կես տարում 155
ժգ) Շարժման առաջին փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները 162

Երկրորդ բաժին. ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ 169

1. ՇԱՐԺՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ, ՓԱՍՏԱԿԱՆ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 171

ա) Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) Ծրագիրը 171
բ) Իշխանության կազմակերպական հակազդեցությունը 181
գ) Շարժման դեմ ուղղված հիմնական մեղադրանքները եւ դրանց հերքումը 190
դ) Փաստական երկիշխանության առաջացումը 195
ե) Երկիշխանության բարձրակետը. Գերագույն խորհրդի նոյեմբերի 24-ի նիստը 205
զ) Ազգամիջյան հակասությունների սրումը, բռնագաղթ Ադրբեջանից եւ ադրբեջանցի բնակչության հեռանալը Հայաստանից 213
է) Կենտրոնական իշխանության նոր ձեռնարկումները Շարժման դեմ 218
ը) Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը 223
թ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատազրկումը 229
ժ) Կոմիտեի դեմ գաղտնի հարուցված քրեական գործը 233
ժա) Անհավասար քարոզչական գոտեմարտը 240
ժբ) Հայկական ժողովրդավարական շարժումը՝ ժողովրդավարական շարժումների հիմնադիր եւ առաջատար 246
ժգ) Ղարաբաղյան շարժումը եւ Սփյուռքը 1988 թվականին 259

2. ՇԱՐԺՈՒՄԸ «ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ 275

ա) Շարժման դեմ ճնշումների սաստկացումը 1989-ի ձմռանը 275
բ) «Ժամանակավոր» Կոմիտեն ու նրա խնդիրները 286
գ) Ջանգվածային միջոցառումները հատուկ դրության պայմաններում 290
դ) Շարժման մասնակցությունը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններին 295
ե) Հայկական ատոմակայանի փակման որոշումը 302
զ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատության համար պայքարը Հայաստանում 305
է) ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերի եւ միջազգային հանրության պաշտպանությունը Կոմիտեին 311
ը) Հատուկ կառավարման կոմիտեն Լեռնային Ղարաբաղում 319
թ) Շարժումը վերանվաճում է ազատ գործելու հնարավորությունը 322
ժ) Սփյուռքի դերակատարությունը 333
ժա) Շարժման երկրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները 348

Երրորդ բաժին. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՑՔԱԳԱՂԱՓԱՐ 355

1. ՓԱՍՏԱԿԱՆ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 357

ա) Իշխանության նոր մարտավարության հիմքերը, հանրահավաքների արտոնումը 357
բ) Մայիսի 28-ի եւ Եռագույն դրոշի ճանաչումը 361
գ) «Ղարաբաղ» կոմիտեի ազատ արձակման «դափնիներին» տիրելու հարցը 363
դ) Մամուլի դիմափոխությունը 366
ե) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում 372
զ) Շարժման կազմակերպական կառույցի կարգավորման խնդիրը 375
է) Շարժման մասնակցությունը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 23-ի նստաշրջանին 379
ը) Լեռնային Ղարաբաղի հարցը ԳԽ նստաշրջանում 382
թ) Աղետի գոտու հարցը Գերագույն խորհրդի նստաշրջանի եւ ՀՀՇ-ի օրակարգում 384
ժ) Բնապահպանական հարցերը նստաշրջանում, «Նաիրիտ»-ի փակման որոշումը 387
ժա) Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) պաշտոնական ճանաչումը 392
ժբ) Շարժման քաղաքական ներկայության ապահովումը ՀԽՍՀ Գերագույն խորհրդում 394
ժգ) Իրադարձությունները ԼՂԻՄ-ում, Ղարաբաղի Ազգային խորհրդի կազմավորումը 396

2. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇԱՐԺՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾ, ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 405

ա) Ընդհանուր իրավիճակը եւ անկախության ուղեգիծը 405
բ) Անկախության խնդիրը ու դրա հետ կապված՝ հայաստանյան որոշ յուրահատկություններ 409
գ) Կոմունիստական իշխանության տագնապները Շարժումից եւ նրա ձեռնարկումները 412
դ) Շարժմանը կազմակերպական այլընտրանքներ ստեղծելու կամ այն պառակտելու նախաձեռնություններ 414
ե) Շարժման դեմ հիմնական գաղափարական ճակատը 416
զ) «Մտավորականության համաժողովը» 421
է) Սփյուռքի կուսակցությունները 429
ը) Այլընտրանքային հանրահավաքներ եւ ուղղություններ 444

3. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ 1989-Ի ԱՇՆԱՆԸ, ՇԱՐԺՄԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ 449

ա) Շարժման գործունեության ձեւերը եւ հիմնական ոլորտները 449

բ) Ճնշումների նոր ալիքը Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանային գոտում 452

գ) Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման խնդիրը 458

դ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը ՀԽՍՀ ԳԽ սեպտեմբերյան նստաշրջանում 467

ե) Անվտանգության եւ այլ հարցերի մասին որոշումներ 469

զ) Լեռնային Ղարաբաղի խնդիրը քաղաքական եւ գաղափարաբանական հարթություններում 474

է) Հայկական «պահանջատիրությունը»՝ որպես կենտրոնական եւ ադրբեջանական իշխանությունների փաստարկների հիմք 485

4. ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ 489

ա) Նախապատրաստական շրջան եւ միջոցառումներ 489

բ) ՀՀՇ համագումարի քաղաքական իմաստը: Համագումարը վիժեցնելու ջանքերը, հայկական «ինտերֆրոնտ» 493

գ) Համագումարի պատվիրակները 496

դ) Համագումարի ընթացքը եւ ընդունած որոշումները 498

ե) ՀՀՇ քաղաքական Ծրագիրը 501

զ) ՀՀՇ համագումարի նկատմամբ վերաբերմունքը եւ արձագանքները Հայաստանում 508

է) Սփյուռքի վերաբերմունքը. ՀՀՇ քաղաքական ուղեգծի դեմ հիմնական ճակատը 510

5. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴՐԻ ՄԵՐԺՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋՐԲԱԺԱՆԻ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ 523

ա) Լեռնային Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում 523

բ) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ նոյեմբերի 28-ի որոշումը 527

գ) Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միացյալ հանրապետության հռչակումը 531

դ) Արմատական ժողովրդավարական վերափոխումների՝ ՀՀՇ-ի օրենսդրական նախաձեռնությունը 538

ե) Քաղաքական ջրբաժանի վերջնական հստակեցումը 545

զ) Ղարաբաղի հարցը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարում 550

է) Լեռնային Ղարաբաղի հարցում Մոսկվայի քաղաքական վճիռը, դրա հիմքերը եւ նպաստող գործոնները 554

ը) Նոյեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 1-ի որոշումների արձագանքները Սփյուռքում 558

թ) Հայկական ժողովրդավարական շարժման միջազգային արժեւորումը եւ աջակցությունը 564

ժ) Հայկական ժողովրդավարական շարժումը՝ որպես համաշխարհային պատմության ընթացքի վրա ազդող գործոն 567

ժա) Շարժման երրորդ փուլի բնութագիրն ու հիմնական արդյունքները 574

ՀԱՎԵԼՎԱԾ 581

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՌՈՒՑԸ 583

ՑԱՆԿԵՐ 609

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 611

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ 616

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 625

HISTORY OF THE KARABAGH MOVEMENT, 1988-1989 629

ИСТОРИЯ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ, 1988-1989 632

8556

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1988–1989

Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ խմբագիր՝ Սեդա Մեսրոպյան
Էջադրումը եւ կազմը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի

«Անտարես» հրատարակչատուն
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am

ԱԿԱԴԵՄԻԱ ԱՍՏԱՂՈՒՅՑ
ՄԱՅԻՍ 26.27.28.29.30.31.
ՀՈՒՆԻՍ 1.2.3.4.5.6.7.8.9.10.11